Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ԸՆՏԻՐ

Գեղարքունիք
Գանձասարի հրաշալիքներով

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ—1978

АР₁
Р—35

Р $\frac{70303(357)}{705(01)78}$ 78«S»

© «Սովետական գրող» հրատարակչություն, 1978

Արկածներ վերջին
ռուս-թուրքական
պատերազմի
հայ ուղղությամբ

Խենթը մի քար գլորեց փոսը, հարյուր խելոքներ հավաքվեցան, չկարողացան դուրս հանել։

Մինչև խելացին կմտածե, խենթը գետից անց կկենա։

Խենթից—ուղիղ պատասխան։

Ազգ. առածներ

Ա.

Բայազեդը պաշարված էր։

Թուրք, քուրդ, բոշա, ջուլո և ավելի քան քսան հազար խառնիճաղանջ բաշիբոզուկներ, խառն տաճկաց կանոնավոր զորքերի հետ, շրջապատել էին կիսավեր քաղաքը։ Նա ծխում էր կրակի մեջ, որպես մի ընդարձակ խարույկի տարածություն։ Քրիստոնյա հայերի տները դատարկվել էին բնակիչներից։ Բարբարոսի սուրը և գերությունը սպառել էր նրանց։ Հայերից մի փոքրիկ մաս միայն ազատվել էր, կանխապես փախչելով սահմանակից Մագու քաղաքի կողմերը, որ պարսից հողի վրա է գտնվում։

Բայազեդի միջնաբերդը դեռ մնացել էր անառիկ։ Փոքրաթիվ ռուս զինվորներ, հայ և թուրք կամավոր միլիցիայի հետ, ամրացել էին այնտեղ, և օրհասական հուսահատությամբ, սպասում էին մի սարսափելի վախճանի։ Բերդը չորեք կողմից սեղմված էր, կարծես, մի երկաթի օղակի մեջ, որը հետզհետե նեղանալով, կամենում էր միանգամից խեղդել և մահացնել հուսաբեկ պաշարվածներին։ Հարաբերությունը դրսի հետ՝ բոլորովին կտրված էր։

Պաշարումը պատահեց 1877 թվի հունիսի 6-ին և տևեց ամբողջ 23 օր։ Դա այն ժամանակն էր, երբ ռուսաց հաջողակ սրի բախտը Հայաստանում հանկարծ փոխվեցավ։ Տեղային մահմեդականությունը, որ սկզբում այնքան հոժարությամբ ընդունեց ռուսաց տիրապետությունը, կրկին ապստամբվեցավ և միացավ Սմայիլ փաշայի զորքերի հետ։ Գեներալ Տեր-Ղուկասովը, երևանյան զորաբաժնի հրամանատարը, այդ միջոցում

գտնվում էր Զեյդեգանի և Դալի-Բաբայի մեջ, և իր փոքրաթիվ գունդերով քաջությամբ պատերազմում էր Մուխթար փաշայի հինգ անգամ ավելի ուժի դեմ։ Նա, երևի, տեղեկություն չուներ, թե ինչ էր պատահել դժբախտ Բայազեդի հետ, որին թողել էր բերդապահ (կոմենդանտ) Շտոկվիչի պահպանության ներքո։

Գիշեր էր։

Կիսալուսնի եղջյուրը դեռ նոր չքացել էր հորիզոնից, թողնելով իր ետևից մթին խավար։ Կարծես, այդ խավարը, այդ մութը ավելի ախորժ լիներ պաշարվածների համար։ Կարծես լուսինը, տիեզերքի սիրելին, իր արծաթափայլ ճառագայթներով մատնում լիներ նրանց։ Բայց գիշերի մթությունը դարձյալ չկարողացավ արգելք լինել բարբարոսների կատաղի հարձակմանը։ Բայազեդի միջնաբերդը, որպես մի մռայլ կետ, անորոշ կերպով նկարված էր բլուրների բարձրավանդակի վրա։ Եվ ամեն կողմից կրակը մազվում էր այդ կետի վրա, և ամեն կողմից թնդանոթների ռումբերը և հրազենների գնդակները կարկտի նման թափվում էին այնտեղ։ Բերդը մոնչում էր որպես մի վիթխարի գազան, որին ամեն կողմից հարվածում էին։ Նա դեռևս համառությամբ մաքառում էր օրհասի և մահվան դեմ։ Նա վճռել էր մեռնել, բայց փառքով մեռնել։ Մոտ 1000 ռուս զինվորներ, նույն չափով հայ և թուրք կամավորների հետ, կռվում էին Սամսիլ փաշայի քսան հազարի դեմ։ Բերդից խիստ սակավ էին պատասխանում, որովհետև հրազենների պաշարը խնայում էին, որը սպառվելու մոտ էր։ Միայն երբեմն արձակում էին մի կամ երկու թնդանոթ, որոնց բերանը դարձնում էին այն կողմը, ուրկից հայտնվում էր թշնամու կրակը։

Նույն գիշերը, բերդի խարխուլ շինվածքներից մեկի մեջ, որ մի ժամանակ ծառայում էր որպես զինվորանոց, և ռուսների տիրելուց հետո, օսմանցիները թողել էին կիսավեր և հեռացել,— նույն գիշերը այստեղ գետնի վրա տարածված էր մի բազմություն, մի ուժաթափ և ուշակորույս բազմություն, որ սարսափելի տագնապի մեջ ներկայացնում կատաղության բոլոր զարհուրանքը։

— Մի կաթիլ ջո՛ւր... նվազեցա ծարավից...— լսվում էին զանազան դառն հառաչանքներ։

— Մի պատառ հա՛ց... մեռնում եմ սովից...— աղաղակում էին զանազան խուլ ձայներ։

Այդ ողորմելիները մի ամբողջ շաբաթ համարյա ոչինչ չէին կերել, ոչինչ չէին խմել։ Պաշարումը այն աստիճան շուտափույթ և անակնկալ կերպով կատարվեցավ, որ բերդի մեջ բավական պաշար վեր առնելու ժամանակ չգտան։ Այժմ պաշարվածները ստիպված էին պատերազմել երեք հզոր ոսոխների դեմ. ներսից՝ սովի և ծարավի դեմ, իսկ դրսից՝ թշնամու կրակի դեմ։

Ամսի 8-ից զինվորները զրկվեցան տաք կերակրից։ Բերդապահի ձին և արտիլերիայի ձիաները բոլորը մորթել և կերել էին։ Ձիաների գարին մնաց զինվորների համար, որը նույնպես սպառվեցավ։ Վերջապես ուտեստը այն աստիճան նվազեցավ, որ յուրաքանչյուր զինվորին տալիս էին օրեկան 1/8 ֆունտ կամ 4 լոտ պաքսիմաթ և մի-մի գդալ ջուր։ Իսկ հունիսի տոթը այդ ժամանակ անտանելի էր։ Հիվանդանոցում հիվանդների վիճակը, ուտել խմելու կողմից, շատ չէր զանազանվում առողջներից։

Բերդի մեջ ջուր չկար։ Բերդից դուրս, 300 քայլ հեռավորության վրա գտնվում էր մի աղբյուր, որը փակել էին թուրքերը։ Ամեն գիշեր փորձում էին ցած իջնել բերդից ջուր բերելու հաստատ, բայց 20—30 գնացողներից շատ անգամ մեկն էլ չէր վերադառնում։

— Հա՛ց... ջո՛ւր...— կրկին լսելի եղան օրհասական հառաչանքները։

Ահա կրկին և կրկին որոտաց թնդանոթի բոմբյունը և խլացրեց թշվառականների ձայները...

Այդ այն րոպեներից մեկն էր, որ մարդը կորցնում է իր կարեկցությունը դեպի ընկերը,— կորցնում է, որովհետև ոչինչով օգնելու հնար չունի։ Այդ պատճառով, ոչ ոք ուշադրություն չէր դարձնում սովյալների վրա, ոչ ոք հոգ չէր տանում ծարավներին։ Ամեն մարդ, ընդհանուր խռովության մեջ, սպասում էր մի վճռական րոպեի, երբ թշնամին հեղեղի նման ներս կթափվեր, և սուրը ձեռքում կհանդիպեին իրանց պատվավոր վախճանին։

Միջնաբերդի ներսից, պատրաստված վերնապաբսպի ետևում, շուրջանակի շարված էին պահապան զինվորներ, և հրացանների համար բացված ծակերից դիտում էին թշնամու շարժումը։ Նրանք չէին համարձակվում գլուխները վեր բարձրացնել պարսպից։ Բերդի չորս կողմի բարձրավանդակներից անխնա

նետում էին, և գնդակները շվշվալով սլանում էին աջ ու ձախ, զարկելով պահապանների երեսին մի անախորժ տաք օդ։

Այստեղից տեսնվում էր քաղաքը, որ ներկայացնում էր մի սոսկալի տեսարան։ Նա լուսավորված էր, կարծես, մի մեծ տոնախմբության համար։ Լուսավորված էին և քաղաքի շրջակա բարձրությունները։ Կատարվում էր մարդկային անգթության եղեռնական տոնը։ Դա գազանների մի տոն էր, որ հանդիսացնում էին մուսուլմանները։ Տարտարո՛սը, միայն տարտարոսը, իր կրակի բոցերով, իր չար ոգիներով և իր բոլոր զարհուրանքով կարող էր պարծենալ մի այսպիսի անգթության առջև։ Այրվում էին հայերի տները։ Յուրաքանչյուր տան լուսամուտներից և դռներից հոսում էին, կարծես, հրեղեն գետեր, և խառն ծխային թանձրության հետ, բարձրանում էին օդի մեջ, սփռելով դեպի ամեն կողմ կայծերի հորդ և առատ հեղեղ։ Հրդեհը հետզհետե սաստկանում էր, ճարակելով հայերի ամբողջ թաղը։ Այժմ տների կտուրներից դուրս էին ցայտում հրեղեն լեզուներ։ Վառված գերանները խորտակվում էին, և ամբողջ կտուրը դղրդալով, գոռգոռալով փուլ էր գալիս, և հրակեզ վերմակով ծածկում էր բնակիչներին, որոնք ամեն կողմից կրակով փակված լինելով, դուրս գալու հնար չունեին։ Թշվառ զոհերի աղաղակների և հառաչանքների ձայները խառնվում էին բոցերի որոտմունքի հետ, որոնք վիթխարի վիշապների նման գալարվում էին և պտտվում էին օդի մեջ, տարածելով դեպի ամեն կողմ մի սարսափելի լուսավորություն։ Այդ լուսավորության մեջ, որպես մի հսկա պանորամայի մեջ, մինը մյուսի ետևից հանդիսանում էին ավելի և ավելի զարհուրելի պատկերներ։ Մուսուլմանները կոտորում էին հայերին... կոտորում էին կրակից դուրս փախչողներին, չխնայելով ոչ սեռի և ոչ հասակի... Մանկահասակ աղջիկներին ծամերից բռնած քարշ էին տալիս տներից... Ամեն կողմից լսելի էին լինում ցավալի աղաղակներ... Բայց թշվառների լացը և արտասուքը չէր կարողանում ամոքել գազանների սիրտը...

Այս բարբարոսությունների մեջ մասնակցում էին ոչ միայն քրդերը, այլև տաճկաց կանոնավոր զորքը, և որ ավելի սարսափելին է՝ քրդերի կանայքը... Այդ վերջինները, կատաղի ֆուրիաների նման, մոռացած կնոջ գութը և սերը, խլում էին երեխաներին մոր գրկից և ձգում էին կրակի մեջ... Մի փոքրիկ ընդդիմադրությունն անգամ պատժվում էր սրով...

Մի քանի հայ կամավոր զինվորներ, բերդից նայելով այդ դժոխային տեսարանին, լաց էին լինում... Կոտորածը շարունակվում էր ամբողջ երեք օր և երեք գիշեր։

— Ա՜խ, ինչպես մորթում ե՜ն...— ասում էին նրանք հառաչելով։

Դրանց մոտ կանգնած էր մի ուրիշ հայ երիտասարդ, որ նույնպես նայում էր քաղաքում կատարվող բարբարոսությունների վրա։ Նրա աչքերում արտասուք չէր երևում։ Տխրության մի նշույլ անգամ չէր կարելի տեսնել նրա զայրացած դեմքի վրա։ Նրա սիրտը նույն բոպեում լցված էր մի դառն ատելությամբ՝ ոչ դեպի այն գազանները, որ այրում էին, որ մորթում էին, այլ դեպի այն վախկոտները, որ ոչխարի նման թույլ էին տալիս իրանց մորթել։

— Նայեցե՛ք, նայեցե՛ք,— ասաց նա,— այսքան բազմության մեջ մի մարդ էլ չեք տեսնի, որ ձեռք բարձրացներ իր սպանողի վրա... էլ դրանից ավելի ինչ կարող է լինել, որ շարժեր մարդու կատաղությունը, որ բորբոքեր մարդու վրեժխնդրությունը։ Տունը աչքի առջև այրում են, զավակները կրակի մեջ խորովում են, կինը, աղջիկը քաշում տանում են... Տղամարդը տեսնում է այդ բոլորը, և ինքը ամենայն խոնարհությամբ պարանոցը դեմ է անում թշնամու սրին... Տո, անիծյա՛լ, դու էլ մարդ ես, դու էլ սպանիր, հետո մեռիր...

— Վարդան, դու միշտ այսպես անգութ ես...—նկատեց նրան ընկերներից մեկը։

Վարդանը ոչինչ չպատասխանեց և հեռացավ։ Կարծես, նրան խիստ ծանր էր նայել այն տեսարանին, որի մեջ տեսնում էր հայի ամոթալի պատկերը... «Այդ ազգը պատվով մեռնել չգիտե»...— մտածում էր նա։

Դրանցից փոքր-ինչ հեռու, բերդի մի խուլ անկյունում, մի ուրիշ խումբ հայ կամավորների մեջ, անց էր կենում հետևյալ խոսակցությունը.

— Եթե Պետրոսն էլ ետ չդառնա, այս գիշեր հինգ հոգի կկորցնենք...

— Շատ ուշացավ, երևի խեղճ տղան...

— Չէ՛, ականջ դրեք, այդ նրա սիգնալն է, լսում ե՞ք ագռավի կռնչյունը...

— Նա է, իջեցնենք թոկե սանդուղքը։

Սանդուղքը ցած թողեցին և քանի րոպեից հետո բերդի վերնապարսպի վրա հայտնվեցավ մի երիտասարդ, բեռնավորված մի ահագին տիկ ջրով։ Ընկերները օգնեցին ջրբերին, և նա վեր եկավ բերդի մեջ։ Բոլորը գրկեցին և նրա երեսը սփոեցին համբույրներով։ Մեկը զարհուրելով հոտ քաշեց և ասաց.

— Այդ ինչո՞ւ է երեսդ թաց, Պետրոս։

Այդ միջոցին հրդեհի բոցերը ավելի բարձրանալով, լուսավորեցին Պետրոսի ներկված դեմքը։

— Արյուն է հոսում...— գոչեցին բոլորը։

— Վնաս չունի...— պատասխանեց Պետրոսը ծիծաղելով,— քանի օր էր, որ երեսս չէի լվացել. այս գիշեր մի լավ լվացվեցա...

Պետրոսը կարճ կերպով պատմեց, թե հասնելով ջրի աղբյուրի մոտ, գտավ այնտեղ մի քանի քուրդ պահապաններ, որոնք հսկում էին, չիցե թե պաշարվածները, բերդից իջնելով, ջուր տանեին։ Նրանք հարձակվեցան իր վրա, և մինչև կարողացավ բոլորի «ձայնը կտրել», ինքը գլխից վերք ստացավ։

— Ի՞նչ եղան Հանեսը, Թոմասը, Ադամը, Ներսոն,— հարցրին նրանից։

— Գրո՞ղը տանե նրանց,— պատասխանեց Պետրոսը իր սովորական հեգնական եղանակով։— Կարծես, այդ անիծյալները մեկ մեկու խոսք էին տվել, որ հենց այս գիշեր շնորհը տանեին իրանց հանգուցյալ պապերի մոտ։ Մեկը պարսպի ներքև ընկած էր, երևի, հենց ցած իջնելու միջոցին գնդակ էր կերել... մյուսը կես ճանապարհի վրա թավալվում էր, խեղճը դեռ չէր հանգստացել... մեկը աղբյուրի մոտ գերանի նման անշարժ պառկած էր... բայց խեղճ Թոմասը, նրանցից մի փոքր հեռու, կողքի վերքը բռնած, անիծում էր քրդերին. իսկ ես նրանց ջիգրը առեցի...

Այս չորս հայ երիտասարդները, որոնց մասին խոսում էր Պետրոսը, մինը մյուսի ետևից ուղարկված էին ջուր բերելու, բայց և ոչ մեկը չվերադարձավ։ Այսպիսի դեպքեր այնքան հաճախ էին կրկնվում, որ մահը, սպանությունը դարձել էր նրանց համար մի սովորական բան։ Այս պատճառով Պետրոսի պատ-

մությունը մի առանձին տպավորություն չգործեց ընկերների վրա։ Նրանք մինչև անգամ չէին մտածում շուտով փաթաթել Պետրոսի գլխի վերքը, որից արյունը անդադար հոսում էր։ Ինքը Պետրոսն էլ չէր մտածում այդ մասին։

— Սատանան տանե այդ քրդերին,— շարունակեց նա,— կարծես, այդ անիրավների աչքերը գայլի նման մթնումն էլ տեսնելիս լինեն։ Որ կողմից որ մի շշնջոց են լսում, իսկույն գընդակը հասցնում են. տեսար, զոհը դողդողաց և գլորվեցավ գետին...

Այսպես խոսում էին խավարի մեջ, հետո մտաբերեցին փաթաթել Պետրոսի գլխի վերքը, և ապա վեր առնելով ջրի տիկը, որ պարունակում էր իր մեջ հազարավոր անձինքների կյանքը, նրանք սկսեցին դիմել դեպի բերդի բակը։

— Տղերք,— ասաց նրանցից մեկը,— թուրքերին մի կաթիլ անգամ պետք չէ տալ. հանաք բան չէ. այս գիշեր մենք չորս հոգի կորցրինք այս մի տիկ ջրի համար, բայց նրանցից ոչ մեկը չուզեց բերդից դուրս գալ։

— Չէ՛, լավ բան չէ,— ասաց Պետրոսը,— պետք է նրանց էլ տալ։

— Ի՞նչ վատ բան է,— պատասխանեց առաջինը,— մի քանի օր առաջ նրանք էլ ջուր բերեցին, բայց գողի նման թաքցրին և իրանք միայն խմեցին։

— Նրանք վատ վարվեցան, բայց մենք պետք է ցույց տանք, թե ինչ բան է զինվորական եղբայրությունը։

Նրանք մտան զինվորանոցի բակը։

— Ջո՞ւր... ջո՞ւր...— լսելի եղան ամեն կողմից ուրախության աղաղակներ, և բազմությունը հավաքվեցավ մեր երիտասարդների շուրջը։

Անկարելի է նկարագրել այն հոգեկան բերկրանքը, այն կատաղի ուրախությունը, որով այդ ծարավի բազմությունը դիմեց դեպի ջրի տիկը։ Բոլորը իրար խառնվեցան, և մինը մյուսի գլխովն էր ուզում թռչել, որ առաջ ինքը խմե։

— Մի ճրագ վառեցեք և մեզ մի խանգարեք, ամենքիդ բաժին կհասնի,— ասաց ջուր շալակող երիտասարդը և տիկը դրեց գետին։

Վառեցին մի ջահ, որի գունատ-կապտագույն լույսը տա-

բածվեցավ խռովված, և ուրախությունից իրան կորցրած, բազմության վրա։

Հայ երիտասարդը առեց իր ձեռքը արաղի մի ամենափոքրիկ բաժակ և սկսեց նրանով բաժանել ջուրը։ Նա խիստ սաստիկ զզվելի հոտ ուներ, իսկ համը չափազանց անախորժ էր։ Մի քանիսը խմեցին և ոչինչ չնկատեցին։ Մեկը բացականչեց.

— Այդ ի՞նչ գույն ունի ջուրը։

— Խմի՛ր,— խոսեց Պետրոսը, որ այնտեղ կանգնած էր.— քրդերը հիմա ջուրը այսպես ներկած են տալիս մեզ...

— Ինչպե՞ս ներկած...— ձայն տվեցին ամեն կողմից։

— Ներկում են մեր արյունով... դուք մի տեսնեիք, թե քանի դիակներ էին ընկած այն աղբյուրի մեջ, որտեղից ես գողացա այդ ջուրը։

Բազմությունը սոսկաց, բայց դարձյալ ուշադրություն չդարձնելով, խմեց պղտոր կարմրագույն հեղուկը, որի մեջ թափված էր այնքան մարդկային արյուն... որի մեջ լուծված էին այնքան մարդկային մարմիններ... Մեկը մինչև անգամ իրան թույլ տվեց ասել մի այսպիսի բարբարոսական սրախոսություն.

— Դա շա՜տ լավ է... ջուրը կպարարտանա և ավելի ուժ կտա։

Ուրախացած զինվորների կատակները շուտով ընդհատվեցան։ Թնդանոթների խուլ որոտը կրկին լսելի եղավ հեռվից, և կրկին ռումբերը սկսեցին մռնչելով սլանալ բերդի վրայից։ Նրանցից մեկը ընկավ զինվորներից մի փոքր հեռու, և պայթելով տարածեց դեպի ամեն կողմ իր մահաբեր հարվածները...

Այդ միջոցին ամրոցի սենյակներից մեկի մեջ, ուր մի ժամանակ կենում էր օսմանցի բերդապահը, այժմ ռուս բերդապահը, Շտոկվիչը, մի քանի օֆիցերների հետ կազմել էին զինվորական խորհուրդ։ Խորհրդին մասնակցում էին հայ և թուրք միլիցիայի գլխավորները։ Փոքրիկ սեղանի վրա վառվում էր լամպա և աղոտ կերպով լուսավորում էր նրանց տխուր և բազմահոգ դեմքերը։

Վերջին օրերում անդադար նամակներ էին ստացվում Թշնամի բանակից, որոնցմով հայտնում էին անձնատուր լինել։ Նամակները գրում էր ռուսաց հին ոխերիմ, երևելի Շամիլի որդի գեներալ-լեյտենանտ Շամիլը, որ այժմ թշնամու բանակի մեջն էր գտնվում և նորին մեծության սուլթանի սվիտայի համ-

հարզն էր։ Վերջին նամակը լի էր սպառնալիքներով և խոստումներով։ Զինվորական խորհրդի առարկան այդ նամակն էր. մտածում էին, թե ինչ պետք է պատասխանել։

— Անձնատուր չենք լինի,— խոսեց բերդապահը,— քանի որ դեռ կենդանի ենք։

— Եթե մի քանի օր ևս տևե պաշարումը, մեզ անհնարին կլինի դիմանալ,— խոսեց մի օֆիցեր։

— Մեր դրությունը հենց այս օրից անտանելի է,— խոսեց մի ուրիշը,— ոչ ուտելու հաց ունենք և ոչ կռվելու պատրաստություն։ Չգիտեմ ինչո՞ւ այդ հիմար քրդերը միանգամով վրա չեն տալիս, ինչո՞վ կարող ենք պաշտպանվել,— ավելացրեց նա մի փոքր վրդովված ձայնով։

— Այո՛. շատ անխոհեմ վարվեցանք...— ասաց մի այլ օֆիցեր։

— Անցյալը ուղղել չենք կարող, խոսենք ներկայի վրա,— նկատեց բերդապահը, որ նախագահում էր խորհրդին, և զինվորական օրենքի համեմատ, պաշարման ժամանակ էր բոլորի բարձրագույն հրամանատարը, խիստ ընդարձակ իրավունքներով։

— Անձնատուր չենք լինի, քանի դեռ կենդանի ենք,— կրկնեց նա իր առաջին խոսքը։

— Եթե դրսից մեզ օգնություն չհասնե, կորած ենք,— պատասխանեց մի խան, որ թուրք կամավորների գլխավորն էր։

— Օգնություն սպասելու զորություն չէ մնացել,— խոսեց մի բեկ,— իմ կարծիքով պետք է բաց անել բերդի դռները, պատռել մեզ շրջապատող թշնամու շղթան և անցկենալ, կա՛մ կհաջողվի ազատվել, կա՛մ կընկնենք թշնամու ձեռքը։

— Վերջինն ավելի հավանական է,— պատասխանեց հայ կամավորների գլխավորը,— բայց հետևանքը սարսափելի կլինի։ Այս բերդը այժմ, գոնե որպես պատնեշ, պահում է օսմանցի զորքերի առաջ գնալը, երբ սրան կորցնենք, այն ժամանակ բաց կանենք Սմայիլ փաշայի բաշիբոզուկների ճանապարհը, և նրանք մի քանի օրվա մեջ անարգել կերպով կտիրեն Երևանը, Նախիջևանը և գուցե շատ հեռու կգնան։ Տեղային մահմեդականությունը, որքան ինձ հայտնի է, անհամբեր սպասում է այդ ինքնակոչ հյուրերին, իսկ քրիստոնյա հայերի ձեռքում զենք չկա։ Մեր երկիրը պահպանելու համար խիստ աննշան թվով

զորք է թողած, որովհետև մեր գլխավոր ուժերը այժմ կենտրոնացած են Ղարսի մոտակայքում։ Մինչև նրանց հասնելը, օսմանցիք ամեն ինչ ոչնչացրած կլինեն։

Հայ աստիճանավորի խոսքերը գրգռեցին Թուրք խանի բարկությունը, և նա խոսեց խռովված կերպով.

— Դուք մահմեդականների մասին կասկած եք հայտնում։

— Իմ կասկածը անտեղի չէ, որովհետև ինձ հայտնի են փաստեր, որ հաստատում են ասածս։ Հենց այս րոպեիս մեզ պաշարող քրդերի թվում գտնվում են շատ զիլանցիներ, որոնք պատերազմից առաջ ռուսաց հպատակներ էին։ Իսկ Նախիջևանի կողմերում մի ցնորված մոլլա ամեն գիշեր երազներ է տեսնում, թե շուտով իսլամը կտիրե այդ երկրին։

Նախագահը դադարեցրեց վիճաբանությունը, ասելով.

— Պետք է սպասել և մինչև վերջին շունչը դիմադրել։ Ես հուսով եմ, որ շուտով օգնություն կստանանք։ Գեներալ Տեր-Ղուկասովը շատ հեռու չէ մեզանից։ Նա հենց որ իմացավ մեր դրությունը, կշտապե Բայազեդը ազատելու։ Միայն պետք է շուտով նրան իմացում տալ։

— Ի՞նչ միջոցով,— հարցրին նրանից։

— Նամակո՛վ,— պատասխանեց նա։

— Ո՞վ կտանե։

— Կարծեմ, մեր այսքան բազմության մեջ կգտնվի մի տիրտ ունեցող տղամարդ։

— Դիցուք թե գտնվեցավ, բայց ինչպե՞ս կարող է անցկենալ, թշնամին մեր բոլոր կողմերը բռնել է։

— Կփորձենք։

Խորհուրդը վճռեց նամակ գրել Տեր-Ղուկասովին, և քառորդ ժամից հետո բերդապահը, պատրաստ նամակը ձեռին, մյուսների հետ դուրս եկան խորհրդարանից։

Թմբուկի թեթև ձայնը հավաքեց զինվորներին բերդի հրապարակի վրա։ Բերդապահը բարձր ձայնով խոսեց.

— Տղե՛րք, ձեզ հայտնի է մեր դրությունը, այդ մասին խոսալը ավելորդ է։ Այժմ մեր հույսը մնացել է աստուծո վրա և նրա հաջողությամբ դրսից գալու օգնության վրա։ Եթե օգնությունը ուշացավ, մենք կորած ենք։ Ուրեմն պետք է շտապենք մեր վիճակի մասին շուտով իմացում տալ, ուր որ հարկն է։ Ահա այդ նամակը պետք է հասցնել գեներալ Տեր-Ղուկասովին, որը մեզանից շատ հեռու չէ գտնվում։ Նա այդ նամակը ստացածին պես, կշտապե մեզ ազատելու։ Հիմա ո՞վ կլինի ձեզանից այն քաջը, որ հանձն կառնե կատարել այդ մեծ ծառայությունը, թո՛ղ մոտենա և ընդունե նամակը։ Ես խոստանում եմ, որ նա կստանա մի այնպիսի պարգև, որը վայել է մի անձնազոհ տղամարդի, որ այսքան բազմության ազատության պատճառ է լինելու։ Թո՛ղ ձայն տա, ով որ ցանկանում է տանել նամակը։

Տիրեց ընդհանուր լռություն և բազմության միջից ոչ մի ձայն լսելի չեղավ։

— Կրկնում եմ,— շարունակեց բերդապահը ավելի զգալի ձայնով,— որ այս նամակի հետ կապված է մեր ամեն փրկությունը. ո՞վ է ցանկանում վայելել այդ փառքը և մեր բոլորի ազատիչը լինել։

Դարձյալ ոչ մի ձայն լսելի չեղավ։

— Մի՛թե ձեր մեջ չկա՞ սիրտ ունեցող մի տղամարդ,— կոչեց նա դողդոջուն ձայնով.— ո՞վ է հանձն առնում տանել նամակը։

— Ես,— լսելի եղավ բազմության միջից մի ձայն և մի հայ երիտասարդ մոտեցավ, ընդունեց նամակը։

Այս երիտասարդը Վարդանն էր[1]։

Բ

Հետևյալ ավուր առավոտյան պահուն, երբ արեգակի առաջին ճառագայթները տարածվեցան երկրի վրա, Բայազեդի մեջ և նրա շրջակայքում բացվեցավ մի սարսափելի տեսարան։ Այժմ պարզ տեսնվում էր հետևանքը այն կոտորածի, որ ամբողջ երեք օր և երեք գիշեր կատարվել էր բարբարոսի ձեռքով։ Քաղաքում տիրում էր գերեզմանական լռություն, որ երբեմն ընդհատվում էր ագռավների կռնչյունով, որոնք խումբերով սավառնում էին այստեղ և այնտեղ՝ մեռելոտիք ուտելու համար։ Փողոցները այդ ղժբախտ քաղաքի, ներկայացնում էին խիստ տխուր և սրտաշարժ պատկեր,— տները դարձել էին մոխրի կույտ... տեղ-տեղ

[1] Երիտասարդի անունը Սամփսոն էր, բայց ես իմ վեպի հերոսից ստեղծեցի մի առանձին տիպ. դրանով թեև փոքր-ինչ շեղվեցա պատմական ճշտությունից, բայց թող ներվի ինձ, եթե ես իսկությունը մասնավորապես զոհել եմ բանաստեղծական ազատությանը։

ծխրտում էին դեռ չվառված նյութերը, համարյա ամեն մեկ տան մոտ ընկած էին ծերերի, երիտասարդների, կնիկների և երեխաների դիակներ... սոված շները ագահությամբ քարշ էին տալիս դիակները, և մրթմրթալով, գոռոալով աշխատում էին վանել խումբերով ցած իջնող ագռավներին... Ամեն կողմից, ամեն տնից, ամեն բակից և շուկայից փչում էր լուծվող դիակների խեղդիչ գարշահոտությունը...

Այսպիսի մեռյալ քաղաքի մեջ կանգնած էր Բայազեդի միջնաբերդը և սպասում էր իր ցավալի օրհասին...

Պաշարումը հետզհետե սաստկանում էր։ Սար, ձոր, բլուր, դաշտ և տափարակ պատած էին բաշիբոզուկների բազմաթիվ, միևնույն ժամանակ խառնափնթոր հրոսակներով։ Բանակները զետեղված էին առանձին խումբերով, և յուրաքանչյուր խումբի մեջ տեսնվում էր շարժում, իրարանցում և աղմուկ։ Կրոնական մոլեռանդությունը, խառնված զինվորական անգթության հետ, անցնում էր բարբարոսության ամեն չափից և սահմանից։ Մարդը, գազան դարձած, կեղեքում էր, մահացնում էր իր նմաններին։

Արյունից կշտանալուց հետո, նրանք սկսել էին այժմ հագեցնել իրանց ընչասիրության ծարավը։ Մի տեղ գետնի վրա տարածել էին քաղաքումը հարուստ համարված հայերին և զանազան տանջանքներով չարչարում էին, որ նրանք հայտնեն, թե որտեղ են թաքցրել իրանց փողերը։ Թշվառները լացում էին, աղաղակում էին, ասելով, թե ինչ որ ունեին՝ տվեցին, այլև ոչինչ չէ մնացել։ Նրանց չէին հավատում, և հոր առջև երեխաներին մորթում էին, որ ստիպեցնեն հայտնել իրանց պահեստը։ Մի այլ տեղ քրդերը բաժանում էին դիզված ավարը. նրանց կնիկները ուրախ-ուրախ բառնում էին ձիաների վրա, որ տանեն իրանց տները։ Մի փոքր հեռու բաժանում էին հայ գերիներին, բայց մի գեղեցիկ կնոջ կամ աղջկա վրա չէին համաձայնում, վիճում էին և սպառնում էին միմյանց սրերով։ Մի ուրիշ տեղում գայլերը, վայրենի կատուները, գիշակեր թռչունների հետ, հավաքված անթաղ դիակների վրա, իրանց առավոտյան նախաճաշիկն էին անում։ Դրանցից ոչ այնքան հեռու, կրոնասեր մահմեդական զինվորը, խորին ջերմեռանդությամբ իր վաղորդյան նամազն էր անում, և արյունոտ ձեռքերը դեպի երկինք բարձրացնելով, փառաբանում էր իսլամի ալլահին...

Այդ բոլորը կատարվում էր վառոդից և խարույկներից

բարձրացած ծխի ու մխի մեջ, որ թանձր մառախուղի նման պատել էին հորիզոնը, և արգելում էին արեգակի ճառագայթների թափանցելուն։ Թնդանոթները որոտում էին, վիթխարի բերդի կողքերը ռմբակոծում էին, բայց նա անշարժ, բլուրների բարձրության վրա նստած, տակավին արհամարհում էր թշնամու անդադար հարվածները։

Բայց մի տեղ ամբողջ բանակի ուշադրությունը գրավել էր մի մարդ։ Նա երբեմն թռչկոտելով, երբեմն ծափ տալով, անցնում էր բանակի միջից, և միևնույն ժամանակ եղանակում էր մի այսպիսի հիմար քրդերեն երգ.

«Պառավ տատը գորտ դարձավ,
Գորտ դարձավ, ծովը մտավ,
Ծովից ավազ դուրս հանեց,
Ավազը ոսկի դարձավ,
Ոսկին տվեց մի այծ առեց,
Կաղլիկ, քոսոտ այծ առեց.
— Այծի՛կ, այծի՛կ, ջան այծիկ,
Ջանս քեզ զուրբան, այծիկ,
Ասա՛, ինչու դու եղար
Այսպես քոսոտ ու կաղլիկ...»

Խե՜նթը... ձայն էին տալիս ամեն կողմից քրդերը, և հավաքվելով նրա շուրջը ստիպում էին կրկնել իր երգը։

Եվ իրավ, այդ մարդը խենթ էր, կամ գոնե այսպես ձևացնում էր իրան։ Նա հագնված էր այն կերպով, որպես հագնվում են մեզ մոտ լարախաղացների օգնականները, որոնց կոչում են «տակի մասխարա» և որոնք լարի ներքևում զանազան տեսակ խեղկատակություններով ծիծաղեցնում են հանդիսականներին։ Նույնը անում էր և այդ խենթը։ Նա մի բարձրահասակ երիտասարդ էր վայրենի դեմքով. գլխին դրած ուներ հին թաղիքի կտորից անշնորհք կերպով կարած մի երկայն գդակ, որ վերջանում էր քառանկյունի ձևով, և յուրաքանչյուր անկյունից քարշ էին ընկած մի-մի փոքրիկ զանգակներ, որոնք նրա ամեն մի շարժմունքից զրնգզրնգում էին և աններդաշնակ ձայներ էին հանում։ Երեսը մրոտած էր կոշկաներկով, որի վրա զանազան ուղղությամբ քաշված էին զանազան գույներով գծեր,— կարմիր, դեղին, կապույտ և այլն։ Բացի գդակից, ամբողջ հագուստը մի կտորից էր բաղկացած. դա զինվորի քրքրված մի վերար-

կու էր, որի մեջ փաթաթված էր նա բոլորովին մերկ մարմնով։ Մեջքը պնդած էր մի թոկի կտորով, որ գոտիի տեղ էր ծառայում։ Ոտքերը բոբիկ էին, ոտնամաններ չուներ։

— Ապա էշի նման մեկ զռա՛,— ասում էին նրան։

Խենթը մատերը կոխում էր ականջների մեջ, կռանում էր, բերանը լայն բաց էր անում և որքան ձայն ուներ սկսում էր էշի նման զռալ։ Բազմությունը ծիծաղում էր և ամեն կողմից ձգում էին նրան պղնձե դրամներ։ Նա վեր էր առնում դրամները, զարմացած նայում էր նրանց վրա, և մի կողմ էր ձգում, ասելով, թե ինձ հաց տվեցեք։ Նրան տալիս էին հաց, առնում էր, և ահագին պատառներով բերանը դնելով, առանց ծամելու կուլ էր տալիս։

— Դու, երևի, արջի նման պարել ևս գիտես,— ասում էին նրան,— ապա՛ տեսնենք քո հունարը։

Խենթը սկսում էր զանազան անճոռնի շարժումներ անել, չորս թաթիկների վրա սողալ, ոտները բարձրացնել, ձեռքերի վրա կանգնել, և ուրիշ տեսակ-տեսակ հիմարություններ անել։

Մի ամբողջ օր խենթը մնաց քրդերի բանակի մեջ. զվարճացնում էր բոլորին, խոսում էր քրդերեն, որպես մի քուրդ, հայհոյում էր, անիծում էր ռուսներին. գոռում և գոչում էր, թե բոլոր «գյավուրներին» պետք է կոտորել։ Մինչև կես գիշեր նրա ձայնը ամեն կողմից լսելի էր լինում։ Բայց մյուս առավոտյան խենթին բանակի մեջ էլ ոչ ոք չտեսավ...

Գ

Միջօրեի արեգակը սաստիկ այրում էր, տոթը խեղդելու չափ անտանելի էր։ Օրվա այն ժամն էր, երբ ճանապարհները դատարկվում են ուղևորներից, և ամեն մարդ քաշվում է մի հովանավոր տեղ զովանալու և մի փոքր ազատ շունչ առնելու համար։ Նույն ժամում Բայազեդից դեպի Ալաշկերտի կողմերը տանող ճանապարհով միայնակ գնում էր մի մարդ։ Ճանապարհը ոլոր-մոլոր պտույտներով անցնում էր լեռների միջով, և բարձրությունների անդադար ելևէջները սաստիկ դժվարացնում էին նրան։ Բայց ուղևորը, երևի, հոգնություն չէր զգում, թեև առանց երիվարի էր, թեև հետի էր գնում և հագին ոտնամաններ անգամ չուներ։ Նա գնում էր շտապ քայլերով, առանց կանգ

առնելու, առանց իր շուրջը նայելու, կարծես թե մի սաստիկ պահանջ մղում էր նրան դեպի առաջ, կարծես թե ամեն մի կորցրած րոպեն նրա համար շատ թանկ լիներ։

Ուղևորը մի երիտասարդ էր, համարյա միևնույն կերպարանքով, որպես հագնված էր նախընթաց գիշերում խենթը։ Միևնույն քրքրված զինվորի վերարկուն ծածկում էր նրա բոլորովին մերկ անդամները, միևնույն թոկի կտորով պնդած ուներ իր մեջքը։ Միայն պակաս էր բոժոժներով զարդարած թաղկյա գդակը, և կոշկաներկով սևացրած դեմքը, որի վրա այժմ գույնզգույն գծեր չէին երևում։ Նրա գլուխը, արեգակի կիզող ճառագայթներից պահպանվելու համար, այժմ ծածկված էր բոլորովին թարմ, և դեռ տերևները չթառամած պրտուներից հյուսած գլխարկով, որի նմանը իրանց ձեռքով հյուսելով, կրում են մշակները ամառը խոտ հնձելու ժամանակ։ Այդ նահապետական պարզ գլխարկը հովանավորում էր նրա այրական, բայց նույն ժամուն տխուր դեմքը, որի վրա նկարված էր խորին հուսահատություն, խառնված ներքին վրդովմունքի հետ... թեև իր օտարոտի հագուստի մեջ անգամ նա երևում էր խիստ տարապայման մի բնավորություն։

Նրա ականջներին զարկեց մի ձայն, որ ավելի նման էր ձիու խրխնջալու ձայնին։ Նա կանգնեց և ուշադրությամբ սկսեց նայել իր շուրջը։ Ձայնը կրկնվեցավ։ Նա ստուգեց, որ ձայնը լսվում էր մերձակա ձորից, և բոպեական մտածությունից հետո իր քայլերը ուղղեց դեպի այն կողմը, որ շեղվում էր ուղիղ ճանապարհից։ Փոքր ինչ առաջ գնալուց հետո, նա բարձրացավ մի բլուրի վրա, և արծվի սրատեսությամբ սկսեց դիտել ձորի խորքը։ Այնտեղ շռայլաբար ածել էին զանազան տեսակ խոտաբույսեր, որոնց մեջ արածում էր մի թամքած ձի. երևում էին մի խումբ թուփեր, և ուրիշ ոչինչ։ Ուղևորն ավելի ուշադրությամբ նայելով, նկատեց, որ թուփերի մոտ ցցված էր մի երկայն նիզակ, որի ծայրը փայլում էր արեգակի ճառագայթներից։ «Ուրեմն այստեղ մարդ կա,— մտածեց նա,— և այդ մարդը մենակ պիտի լինի, որովհետև արածող միակ ձին նրան է պատկանում և այդ մարդը պետք է քուրդ լինի, որովհետև նիզակը քրդի է, բացի դրանից, ձիու ասպագենքը նույնպես քրդական են, և այդ քուրդը պետք է քնած լինի, որովհետև ձիու ոտները շղթայած

են, որ հեռու չգնա»։ Իսկույն նրա գլխում ծագեց մի միտք, և նա իջավ բլուրի գագաթից ձորի մեջ։

Ձորի միջով վազում էր մի փոքրիկ վտակ, որի եղերքը հովանավորված էին խիտ եղեգնաբույսերով։ Նա թաքնվեց եղեգների մեջ։ Այժմ նա սկսեց աննկատելի կերպով սողալ դեպի այն թուփերը, որոնց մոտ ցցված էր Նիզակը։ Օձը իր բոլոր առաձգական դյուրաթեքությամբ չէր կարող այնպես սողալ որպես այդ համարձակ և ճապուկ մարմինը գալարում էր խիտ եղեգնաբույսերի մեջ։ Մեղմիկ քամին նույն ժամուն օրորում էր բույսերի գլխիկները, և նրանցից առաջ եկած սոսափյունը խլացնում էր թաքնված դարանակալի սողալուց պատճառված խշշոցը, երբ նա անում էր մի անզգույշ շարժում։ Ամեն ինչ հաջողություն էր խոստանում...

Նա արդեն մոտեցավ թուփերին, որոնց մոտ ցցված էր Նիզակը։ Այստեղ նա մի քանի քայլ հեռավորության վրա կանգ առեց, և պահպանելով իր առաջին դիրքը, սկսեց եղեգների միջից նայել։ Եվ իրավ, թուփերի հովանու տակ պառկած էր մի մարդ, որ կիսով չափ երևում էր։ Նրա հագուստը ցույց էր տալիս, որ քուրդ է։ Միջօրեի տոթը քշել էր նրան այստեղ հանգստանալու համար։ Արդյո՞ք քնած էր նա, թե արթուն,— դժվար էր գիտենալ, որովհետև քրդի երեսը դարձած էր դեպի հակառակ կողմը, իսկ թիկունքը դեպի ուղևորի կողմը։ Նա ամբողջ մարմնով տարածվել էր խոտերի վրա, որոնք ծավալվելով նրա ծանրության ներքո, կազմել էին խիստ փափուկ օթոց։

Ուղևորը դեռ իր դարանից դիտում էր։ Քրդի արթուն, թե քնած լինելը սաստիկ հետաքրքրում էր նրան։ Եթե պառկած մարդու երեսը դեպի իր կողմը դարձած լիներ, նա կարող էր տեսնել, արդյոք աչքերը փակած էին, թե ոչ։ Ներքին վրդովմունքը սկսեց խռովել նրան և աչքերի մեջ հայտնվեցավ կատաղի բարկություն։ Մտատանջությունը ալեկոծում էր նրան, չգիտեր, թե ինչ պետք էր վճռել։ Ինքը անզեն և մերկ գործ պիտի ունենար մի ոտքից ցցլուխ զինված գազանի հետ։ Բայց պետք էր վերջացնել... Ժամանակը թռչում էր... Ամեն րոպե թանկ էր նրա համար... Բայց ինչո՞վ և ինչպե՞ս վերջացնել։

Մինչ նա այդ մտատանջության մեջ էր, նկատեց, որ քուրդը գլուխը վեր բարձրացրեց, նայեց իր շուրջը, նայեց իր ձիու վրա, և երբ տեսավ, որ նա շատ հեռու չէր գնացել, կրկին գլուխը

դրեց իր խուրջինի վրա, որ բարձի տեղ էր ծառայում, և պառկեց։ Ուրեմն նա քնած չէր և եթե քնած էր, այժմ զարթեցավ։ Խռովության նման մի բան կրկին ցնցեց ուղևորի դեմքը. նրա պնչերը սկսեցին լայնանալ և շրթունքը դողդողալ։ Բայց երբ նրա աչքը ընկավ Նիզակի վրա, տեսավ, որ Նիզակը բավական հեռու ցցած էր գետնի մեջ, և ուղիղ դեպի այն կողմի վրա, որտեղ թաքնված էր ինքը։ Այդ առիթը, կարծես, նրան մի փոքր հանգստացրեց, նրա դեմքը այժմ խաղաղ կերպարանք ընդունեց և աչքերի մեջ փայլեց ուրախության նման մի բան։ Զե՛նք,— այդ էր հարկավոր նրան իր դիտավորությունը կատարելու համար...։ Հանկարծ, որպես մի դարանակալ վագր, նա դուրս թռավ եղեգնաբույսերի միջից, խլեց Նիզակը և արձանացավ պառկած քրդի առջևը։

— Տուր զենքերդ,— եղավ նրա առաջին խոսքը։

Քուրդը տեսնելով այդ այլանդակ կերպարանքը, զինվորի քրքրված վերարկուի մեջ և իր ծաղրական գլխարկով, մի արհամարհական հայացք ձգեց նրա երեսին, և առանց փոխելու իր պառկած դիրքը, ձեռքը տարավ ատրճանակին, և ուղղելով դեպի խենթը, ասաց.

— Ա՛ռ, ահա՛...

Ատրճանակը որոտաց և գնդակը անցավ խենթի կողքի մոտից։

— Անիրա՛վ, դու ընդդիմանում ե՞ս,— գոչեց նա և Նիզակի ծայրը ուղիղ խրեց քրդի կոկորդի մեջ։ Տաք արյունը դուրս ցայտեց վերքից, նրա գլուխը դողդողաց և ընկավ գետին։

Կրկին բարձրացավ քուրդը և մի երկրորդ անօգուտ փորձ փորձեց, ձեռքը տարավ դեպի իր սուրը, կիսով չափ դուրս քաշեց պատենից, բայց ձեռքը թուլացավ և սուրը մնաց իր տեղում։

— Շո՛ւն, ինչո՞ւ ես սպանում ինձ...— հարցրեց նա մահվան տագնապի մեջ։

— Դու շատ ես սպանել իմ ազգից... դու շատ ես հափշտակել... ես ձեզանից սովրեցա սպանելը... ձեզանից սովրեցա հափշտակելը... ես հեռու ճանապարհ պիտի գնամ... տեսնո՞ւմ ես, ո՛չ հագուստ ունեմ, ո՛չ զենքեր և ո՛չ ձի։ Քո հագուստը, քո զենքերը և այդ գեղեցիկ ձին, որ արածում է խոտերի մեջ, ինձ պետք էին... Ես գիտեի, որ քանի շունչդ բերանումդ է, ոչինչ չես տա ինձ, դրա համար էլ քեզ հանգստացրի... Գուցե դու

զրկվեցար Բայազեդի կողոպուտից, բայց փույթ չէ, քո եղբայրները այնտեղ եռանդով գործում են...

Քուրդը ոչինչ չլսեց. նրա աչքերը արդեն փակվել էին... և անշունչ դիակը տարածվել էր գետնի վրա։

Այդ բոլորը կատարվեցավ մի քանի րոպեի մեջ։ Ուղևորը մերկացրեց իր զոհին. նրա դիակը քաշեց տարավ և թաքցրեց եղեգների մեջ. ծածկեց իր քրքրված վերարկուով և ինքը հագնելով նրա զգեստը, կրելով նրա զենքերը,— թռավ գեղեցիկ ձիու վրա և շարունակեց իր ճանապարհը...

Գ

Այդ անցքից մի օր հետո, մի ձիավոր, քրդի ձևով հագնված ծտի նման սլանալով մտավ Տեր-Ղուկասովի բանակը։ Նա հայտնեց, թե գեներալի անունով շատ կարևոր նամակ ունի բերած։ Նրան տարան դեպի գեներալի վրանը։ Մի օֆիցերի ձեռքով նամակը ներս ուղարկեց նա, իսկ ինքը վրանի դրսումը սպասում էր, հոգ տանելով իր ձիուն, որ շատ քրտնած էր։ Մի քանի րոպեից հետո նրան ներս կանչեցին։

Վրանի մեջ նստած էր միջահասակ մի զինվորական, լիքը կազմվածքով և առյուծի խրոխտ դեմքով։ Դա ինքը՝ Տեր-Ղուկասովն էր։ Նա ալևոր գլուխը թեքած ուներ գրասեղանի վրա, ուր ածած էին շատ նամակներ, որ նոր էին բացված։ Նա կրկին վեր առեց նրանցից մեկը, կարդում էր և անդադար ծխում էր։ Նրա անհանգիստ դեմքը արտահայտում էր ներքին խռովություն և խորին ցավակցություն։ Նա դարձավ դեպի նամակաբերը, հարցնելով.

— Դու հա՞յ ես։

— Բացի հայ լինելս, տերտերի տղա եմ,— պատասխանեց երիտասարդը։

Գեներալը մի սուր հայացք ձգեց նրա համարձակ դեմքի վրա և շարունակեց իր հարցուփորձը։

— Բերդում հա՞ց կար։

— Մի քանի օրից հետո կսկսեն մեկմեկու միս ուտել, եթե չեն ցանկանա քաղցած մեռնել։

— Ջուրը ինչպե՞ս։

— Չկա։ Պետք է դրսից բերել տալ. ցերեկով դուրս գալու հնար չկա. իսկ գիշերը երբ մթնում է հերթով տասը քսան մարդ իջեցնում են պարիսպներից, որ գնան ջուր բերեն. քրդերը այդ լավ են իմանում, հեռվից հրացանի են բռնում, և գնացողներից շատ անգամ մեկն էլ չի վերադառնում։

— Հրազենների պաշարը ինչպե՞ս է, վառոդ, գնդակ ունի՞ն։

— Սպառվել էր։ Բայց մի հայ—էլի մեր հայերի երեսը թող սպիտակ լինի—գտավ բերդի մեջ թուրքերից թաքցրած բավական զենքեր, վառոդ և գնդակ. հիմա նրանցով յոլա են գնում։

— Դու ինչպե՞ս կարողացար դուրս գալ բերդից։

— Առավոտյան, դեռ արևը չծագած, պարսպից ցած իջա և ուղիղ մտա քրդերի բանակի մեջ։ Մի ամբողջ օր նրանց ծիծաղացրի, ուրախացրի, երգեցի, պար եկա և հազար տեսակ օյիններ հանեցի, և այսպես ամեն տեղ մտա, ամեն բան իմացա, հետո մնաք բարով ասելով հեռացա։

Գեներալը զարմացած նայեց երիտասարդի երեսին, հարցնելով.

— Դու խե՞նթ ես, ինչ ա՞, այդ ինչե՞ր ես խոսում։

— Այո՛, տեր,— պատասխանեց երիտասարդը հանգիստ կերպով.— ինձ վիճակված է իմ ամբողջ կյանքում խենթի դեր կատարել... Վատ չէ, դա ազատում է շատ փորձանքներից... Ես հենց ինձ խենթի տեղ էի դրել և այնպես մտա քրդերի բանակը։

Եվ նա սկսեց նկարագրել իր հագուստը և այն բոլոր ծաղրական ձևերը, որով հայտնվեցավ քրդերի բանակի մեջ։

Գեներալի սառն դեմքի վրա անցավ մի թեթև ժպիտ, և նա ընկերաբար հարցրեց.

— Իսկ այդ հագուստը դու որտեղի՞ց գտար։

— Աստված հասցրուց։ Ճանապարհին մի քուրդ գտա, այդ հագուստը, այդ զենքերը և այն սիրուն ձին, որ դրսումը կանգնած է, նրանից խլեցի,— պատասխանեց երիտասարդը, իր սովորական եղանակով պատմելով, թե ինչ հնարքով կարողացավ սպանել քրդին։

— Դու քաջ տղա ես երևում,— ասաց գեներալը, և կրկին ընդունելով իր առաջվա մտախոհ կերպարանքը, շարունակեց հարցուփորձը։

— Շա՞տ են քրդերը։

— Ասում են, քսան հազարից ավել են, բայց բոլորը քրդեր չեն, նրանց մեջ խառն են ամեն տեսակ մահմեդական ցեղեր,

ով որ մի քանի կտոր զենք է ունեցել և մի ձի, վաղ է տվել դեպի Բայազեդ, և այսպես կազմվել է մի ահագին բազմություն։ Ես ճանապարհին տեսնում էի, թե ինչպես դիմում են այնտեղ միշտ նոր և նոր խումբեր։

— Թնդանոթներ ունե՞ն։

— Ունեն։

— Ի՞նչ դիտավորություն ունեն։

— Շտապում են Բայազեդի բերդը առնել, հետո անցնել Երևան և մի շաբաթից հետո Թիֆլիսում լինել, որովհետև սիրուն վրացուհիները և հայոց աղջիկ-պարոնները սաստիկ հետաքրքրքրում են նրանց։

Գեներալի դեմքի վրա դարձյալ երևաց ժպտի նման մի բան, և նա արհամարհական կերպով հարցրեց.

— Քսան հազարո՞վ պիտի Թիֆլիս գնան։ Այդ լինել չէ կարող...

— Քսան հազարը քիչ չէ, տեր, երբ առջևում հազար հատ սալդաթ չկա. բացի դրանից, շուտով կմիանան նրանց հետ Սմայիլ փաշայի բոլոր զորքերը։ Իսկ մեր կողմերի մահմեդականները գրկերը բացած, անհամբերությամբ սպասում են իրանց կրոնակից հյուրերին։

Կրկին մռայլ տխրությունը սև ամպի նման անցավ գեներալի դեմքի վրա, և նրա սիրտը, որ բախտի ձախողակի փոփոխությունից երբեք խռովել չգիտեր, այժմ սկսեց ալեկոծվել։ Նա ձեռքը տարավ դեպի ճակատը, սկսեց անգիտակցաբար շփել նրան, կարծես աշխատում էր վանել նրա վրա դիզված թախծությունը։ Եվ բոպեական մտածությունից հետո, ալևոր գլուխը վեր բարձրացրեց, հարցրուց.

— Բայազեդի քաղաքը մտա՞ր։

— Մտա։ Հայ-քրիստոնյայի մի շունչ անգամ չէ մնացել. ծերերին, պառավներին և երեխաներին կոտորեցին, լավ-լավ ջահել կնիկներին, աղջիկներին և պատանիներին գերի տարան, տները այրեցին, և ինչ որ ունեին կողոպտեցին։ Մի հարյուրի չափ ընտանիք միայն, որոնք առաջուց գիտեին, թե ինչ վտանգ է սպառնում Բայազեդին, դեռ քրդերը չեկած, փախան գնացին սահմանակից պարսից Մարդու քաղաքը։ Բայց դրանք էլ միայն իրանց գլուխը կարողացան ազատել, կայքերը թողեցին թշնամու

ձեռքը։ Ա՜խ, այդ մահմեդականները որքա՜ն անգութ, որքա՜ն անաղնիվ կերպով վարվեցան հայերի հետ...

— Որպե՞ս։

— Երբ պատերազմի սկզբներում ռուսները մոտեցան Բայազեդին, տեղային մահմեդականները սաստիկ երկյուղի մեջ էին, կարծում էին, թե ռուսները կգան, և թուրքերի նման նրանց կկողոպտեն, և կայքը կհափշտակեն։ Այս մտքով իրանց ունեցածը թաքցրին հարևան հայերի տներում, ասելով, թե «դուք քրիստոնյաներ եք, ռուսները ձեզ չեն դպչի, և մեր կայքը ձեր տներում ապահով կմնա»։ Ռուսները եկան, իհարկե, ոչինչ չարեցին, թե՛ մահմեդականի և թե՛ քրիստոնյայի հետ վարվեցան առանց խտրության։ Եվ մահմեդականները այդ տեսնելով, հանդգնեցան, և իրանց պահ տված իրեղենները ամբողջությամբ ետ ստացան հայերից։ Հիմա էլ, երբ ձայն դուրս եկավ, թե քրդերը գալիս են, թուրքերը ասացին իրանց հարևան հայերին. «Դուք մեզ լավություն եք արել, մենք էլ պետք է փոխարենը ձեզ անենք. քրդերը գալիս են. ձեզ կկողոպտեն, տվեցեք ձեր իրեղենները, մենք կպահենք»։ Հայերը հավատացին և ինչ որ ունեին, նրանց պահ տվին, և ոմանք իրանց կնիկներով ու աղջիկներով թաքնվեցան հարևան թուրքերի տներում։ Իսկ երբ քրդերը մտան քաղաքը, թուրքերը ասացին հայերին. «Դուրս եկեք մեր տներից. եթե քրդերը կհասկանան, որ մեր տներում հայեր կան պահված, մեզ էլ ձեզ հետ կկոտորեն»։ Եվ այսպես, խեղճ հայերին տվեցին թշնամու ձեռքը, և նրանց հարստությանը իրանք տիրացան։ Բայց երբ սկսվեցավ կոտորածը, տեղային թուրքերը առաջինը եղան, որ բաց արեցին իրանց տներից կրակը...այն թուրքերը, որ մի և կես ամիս առաջ՝ ձեզ մոտ երդվեցան, գեներալ, հավատարիմ մնալ ռուսաց իշխանությանը...հրացանները արձակում էին ամեն կողմից, արձակում էին մինչև անգամ թուրքերի կնիկները...

Գեներալը լուռ լսում էր։ Երիտասարդը շարունակեց.

— Ա՜խ, եթե գիտենայիք, տեր, թե որքան լավ տղամարդիկ փչացան այն կռվի մեջ, որ մենք ունեցանք քրդերի հետ նախքան Բայազեդը նրանց ձեռքը տալը։ Որպես ձեզ հայտնի է, տեր, ռերդի պահպանության համար թողած էին խիստ փոքր թվով ռուս զինվորներ, հայ և թուրք միլիցիայի հետ։ Շտոկվիչը, Բայազեդի այդ հերոսը, ռուս զինվորներով պահպանում էր բերդը,

իսկ միլիցիան պահպանում էր քաղաքը։ Մեզ վաղուց լուրեր էին հասնում, թե ահագին բազմություն թուրքերի, Շեյխ-Ջալալեդդինի և Շեյխ-Իբադուլլահի գլխավորությամբ, դիմում են դեպի Բայազեդ։ Այդ լուրերը հաղորդում էին մեզ վանեցի հայերը։ Մենք շտապեցինք, պահանջելով, որ վաղորոք բերդը ամրացնեին, և մեզ մոտ պատրաստվեին բավականաչափ ուժեր թշնամու առաջն առնելու համար։ Բայց գտնվեցան այնպիսիները, որ աշխատում էին հավատացնել, թե այդ բոլոր լուրերը սուտ են, թե ոչինչ պատրաստություն պետք չէ։ Թե ի՞նչ նպատակով այդ դավաճանները աշխատում էին մեզ անպատրաստ վիճակի մեջ պահել թշնամուն հանդիպելու ժամանակ, այդ ես չեմ կարող ասել. դուք, իհարկե, վերջը կտեղեկանաք, գեներալ, միայն այսքանը կասեմ, որ հայը եղել է միշտ հավատարիմ և կլինի։

Որպես երևում էր, երիտասարդի պատմության մեջ կային այնպիսի կետեր, որ նա դժվարանում էր պարզապես արտահայտել։ Գեներալը ընդմիջեց նրա խոսքը, ասելով.

— Դու այն պատմիր, թե ինչ արեցիք քրդերի գալուց հետո։

— Երբ քրդերը եկան, Շտոկվիչը մի քանի անգամ անհաջող կռիվներից հետո շտապեց ամրանալ բերդի մեջ, նրան պահպանելու համար։ Միլիցիայի մի մասը մնաց դրսում, որովհետև բերդի մեջ ոչ այնքան տեղ կար և ոչ պաշար բոլորի համար։ Մեր ընկեր թուրք կամավորներից ոմանք փախան Իգդիր և ոմանք Պարսկաստանի կողմերը։ Իսկ մենք, հայերս, վճռեցինք կամ կոտորվել, կամ քաղաքը չտալ թշնամու ձեռքը։ Թեև մենք փոքր էինք թվով, բայց քաղաքի հայ բնակիչներից շատերը պատրաստ էին միանալ մեզ հետ։ Այդ խեղճերը գիտեին, թե ի՞նչ վիճակ է սպասում իրանց, երբ թուրքերը կրկին կտիրեին Բայազեդին։ Ձեզ հայտնի է, գեներալ, թե հայերը որպիսի՞ ուրախությամբ ընդունեցին ռուսաց հաղթական զորքերին, երբ նրանց առաջին անգամ մտան այդ քաղաքը։ Հայերի մի այսպիսի համակրությունը չէին կարող մոռանալ օսմանցիք, և իրանց վրեժխնդրությունը պետք է թափեին այդ ժողովրդի վրա, որ ավելի բարվոք էր համարում հպատակել ռուսաց արծվին, քան օսմանցոց կիսալուսնին...

— Դու դարձյալ հեռանում ես հարցից,— երիտասարդի խոսքը կտրեց գեներալը,— դու այն ասա՛, թե ինչպե՞ս վերջացավ գործը։

Երիտասարդը զսպելով իր շատախոսությունը, որ հառաջ էր գալիս նրա սրտի վրա ծանրացած, տխուր անցքերի տպավորություններից, շարունակեց.

— Դուցե մեզ կհաջողվեր տեղային բոլոր հայերի հետ միանալով, ազատել քաղաքը, եթե առաջուց կտային նրանց բավականաչափ զենքեր։ Բայց զենքեր չտացան նրանք։ Այնուամենայնիվ, շատերը միացան մեզ հետ։ Կռիվը սկզբում, ճշմարիտ ասած, փառավոր էր։ Մի փոքրիկ խումբ պատերազմում էր թվով անհամեմատ ուժի դեմ։ Մեզ հետ մասնակցում էին կռվում մի քանի հարյուր թուրք կամավորներ։ Բայց հանկարծ տեսանք, որ մեր մահմեդական ընկերները թողեցին կռվի դաշտը և սկսեցին փախչել։ Կարծես նրանց շատ ախորժելի չէր գնդակներ արձակել իրանց կրոնակիցների դեմ... Մենք, հայերս, մնացինք մենակ և երկար համառությամբ պաշտպանվում էինք։ Այդ տևեց մի քանի ժամ. մինչև մեր հրազենների պաշարը սպառվեցավ։ Այն ժամանակ սկսվեցավ ձեռնամերձ կռիվը։ Շատերը ընկան, շատերը գերի բռնվեցան, և մնացածները, տեսնելով, որ ամեն ջանքեր իզուր են, թողեցին և փախան։ Այն ժամանակ թշնամին տիրեց քաղաքին։

— Հասկանալի է...— ասաց ինքն իրան գեներալը և վերկենալով մոտեցավ մի փոքրիկ արկղիկի, և նրա միջից դուրս բերելով մի խաչ, իր ձեռքով կախեց երիտասարդի կուրծքի վրա, ասելով.

— Դու արժանի ես դրան, ես կառաջարկեմ իշխանությանը, բացի դրանից, քեզ համար աստիճան և ոռճիկ։ Դու այսուհետև կմնաս ինձ մոտ, քեզ նման քաջերը պետք են ինձ։

Երիտասարդը շնորհակալությամբ գլուխ տալով, պատասխանեց.

— Այդ խաչը բավական է ինձ, գեներալ, դուք մեծ շնորհ արած կլինեիք, եթե հենց այս րոպեիս թույլ տայիք ինձ գնալ, ուր որ ես ցանկանում եմ։

Գեներալը զարմանալով երիտասարդի տնփառասիրության վրա, հարցրեց։

— Ո՞ւր պետք է գնաս։

— Ազատելու մեկի կյանքը, որ ամեն բանից թանկ է ինձ համար...

— Դու, երևի, մի գաղտնիք ունես, ընկեր,— հարցրեց գեներալը բարեսրտությամբ։

— Այո՛, այդ իմ սրտի գաղտնիքն է...

— Ուրեմն, ընդունիր այդ փոքրիկ ընծան, գուցե պետք կլինի քեզ,— ասաց գեներալը, տալով նրան թղթի մեջ փաթաթած ոսկիների մի ծրար։

— Ես մեծ պարգև կհամարեի, եթե շուտով կարձակեիք ինձ,— պատասխանեց երիտասարդը հրաժարվելով։

— Գնա՛, տերը թող քեզ հետ լինի,— ասաց գեներալը և սեղմեց երիտասարդի ձեռքը։

Նա գլուխ տվեց ու հեռացավ։

Ե

Անցնենք պատերազմից մի քանի տարի առաջ։

Բագրևանդի գավառում, Ս. Հովհաննու (Ուչ-Քիլիսայի) վանքից ոչ այնքան հեռու, Եփրատի վերին վտակներից մեկի ափի մոտ, գտնվում էր Օ...հայաբնակ գյուղը։ Նա դրված էր մի բավական ընդարձակ հովտի մեջ, ուր բնությունը չէր խնայած այն բոլոր նկարները, ինչ որ պետք էին նրան գեղազարդելու համար։ Հովիտը տարածվել էր երկու լեռնաշղթաների մեջ, որոնք ալիքավոր բարձրություններով շուրջանակի սեղմել էին նրան իրանց գրկում, տալով նրա տարածությանը ձվաձև կերպարանք։ Մեջտեղից ոլոր-մոլոր պտույտներով անցնում էր Եփրատի վտակը, որին տեղացիք կոչում էին Աղ-սու, այսինքն՝ սպիտակ ջուր։ Նա այնքան մաքուր էր, որ արժանի էր այդ կոչմանը։ Հովիտի չորս կողմի սարերը պատած էին ճոխ արոտամարգերով, որոնք առատ սնունդ էին տալիս այնտեղ բազմաթիվ անասունների հոտերին, իսկ տափարակի ամբողջ հարթությունը պատած էր ցորենի, գարու, կտավատի և զանազան ընդեղենների արտերով։ Այստեղ երկրագործի աշխատող ձեռքը չէր թողել ոչ մի կտոր հող անմշակ։ Հովտի մեջ, մինը մյուսից հեռու, գտնվում էին մի քանի հայաբնակ գյուղեր, որոնք թաքնված էին այգիների և ձեռատունկ ծառերի մեջ, և հեռվից նայողի աչքին ներկայանում էին որպես կանաչազարդ անտառիկներ, որոնք առանձին խումբերով որոշվում էին տափարակի մերկությունից, որ զուրկ էր ծառերից։

Հովիտի բոլորովին ծայրումն էր դրած Օ...գյուղը և գոգավորված ձորակի մեջ։ Տանուտեր Խաչոյի բնակարանը, նրա իսկական անունը Խաչատուր էր, այն տներից մեկն էր, որ թե՛ իր մեծությամբ և թե՛ հարստությամբ որոշվում էր մյուսներից։ Այս տնից ամեն առավոտ քշում էին դեպի նախիրը հարյուրի չափ անասուններ։ Նրա կովերը, գոմեշները, եզները և ձիաները էին ամենաընտիրները ամբողջ գյուղի մեջ։ Այս տանն էին պատկանում հազարի չափ ոչխարներ, որոնք սեփական հովիվների հսկողության ներքո արածում էին մերձակա լեռների վրա։ Այդ տանն էր պատկանում այն ահագին ձիթհանը, ձեթ դուրս բերելու գործարանը, որ գտնվում էր գյուղի մեջ։ Այս տանն էր պատկանում այն գեղեցիկ ջրաղացը, որ գտանվում էր գյուղից դուրս, որի անիվները տարվա բոլոր եղանակներում անդադար բանում էին։ Բայց այն, որ ավելի նշանավոր էր Խաչոյի հարստության մեջ, դրանք էին նրա յոթ որդիները, որոնք մինը մյուսի ետևից հասած, ներկայացնում էին նրա տան հարստության սյուները։ Որդիները բոլորը ամուսնացած էին և տունը լցված էր ամեն հասակի երեխաներով։ Ամուսնացած էին և նրա թոռներից մի քանիսը. նրանք նույնպես զավակներ ունեին։ Եվ ծերունի Խաչոն իր աչքի առջև տեսնում էր մի քանի սերունդ, որ ապրում էին միասին, որ կազմում էին մի փոքրիկ աշխարհ։ Գյուղում առակի ձև էր ստացել այն խոսքը, թե «Խաչոն այնքան զավակներ ունի, որքան անասուններ»։

Խաչոյի յոթն որդիներից առանց ամուսնանալու մնացել էր ամենակրտսերը, մանկահասակ Ստեփանիկը, որ դեռ նոր էր մտել իր տասն և վեց տարեկան հասակի մեջ։ Բայց նրա դեմքին նայելով, կարելի էր իսկույն նկատել, որ տարիները դեռ չէին տվել նրան այն պատանեկական հասունությունը, որ հատուկ էր այդ հասակին, մանավանդ մի այնպիսի տաք երկրում, որ պատանիները խիստ վաղ այրանում են։ Ստեփանիկի դեմքը դեռ կրում էր իր վրա մանկական նուրբ քնքշություններ իրանց հրապուրիչ թարմությամբ։ Նրա երեսը ավելի կանացի էր, քան թե այրացի։ Խաչոյի բոլոր որդիները դրսում իրանց առանձին պարապմունքները ունեին, թե՛ հողերի մշակության մեջ և թե՛ անասունների դարմանելու մեջ. և խիստ հազիվ էին տանը գտնվում։ Միայն Ստեփանիկն էր, որ շատ փոքր էր մասնակցում նրանց աշխատություններին։ Նա Խաչոյի Հովսեփ-գեղեցիկն էր, որին ծերունի նահապետը չէր հեռացնում իր աչքից։

Ստեփանիկի և Հովսեփ-գեղեցիկի մեջ կային շատ նմանու-

թյուններ, ոչ այն պատճառով միայն, որ նա Իսրայելի որդու պես սիրուն էր, հեզ էր, խելացի էր և համակրական էր, այլև այն պատճառով, որ ինչպես Հովսեփի, այնպես էլ Ստեփանիկի հագուստի և զարդարանքի վրա առանձին ուշադրություն էին դարձնում։ Նրա հագին միշտ կարելի էր տեսնել Հալեբի ծաղկավոր բեհեզից գույնզգույն գոլերով կարած պատմուճանը, որի վրա հագած ուներ ծիրանի մահուդից պատրաստած թիկնոցը, որը զարդարած էր ոսկի թելերով։ Մեջքը սնդած էր Քիրմանի շալէ գոտիով։ Լայն շալվարը պատրաստված էր Վանա նուրբ կերպասից։ Ոտներին հագած ուներ Արզրումի կարմիր կոշիկներ։ Գլխին ծածկած ուներ կարմիր ֆես մետաքսյա սև փունջով, որ փաթաթած էր գունավոր տուրբանով, նույնպես մետաքսյա նուրբ գործվածներից։ Ֆեսի տակից հիանալի կերպով թափվել էին նրա շագանակի գույն մազերը, որ սփռվել էին ուսերի վրա։ Մի բանով միայն որոշվում էր Հովսեփ-գեղեցիկից, որ Հովսեփի եղբայրները նախանձվում էին հորից սիրված որդու վրա, բայց Ստեփանիկի եղբայրները բոլորը սիրում էին նրան։

Ծերունի Խաչոյի տունը հեռվից բոլորովին հին և նախնական ամրոցի տպավորություն էր գործում։ Նա գտնվում էր մի բարձրավանդակի վրա, և թե՛ իր շինվածքով, թե՛ դիրքով ուներ այն բոլոր հարմարությունները, որ պետք էին մի բնակություն աղատ պահելու համար արտաքին թշնամիներից։ Այդ ամրոցը պատած էր չորս ահագին պարիսպներով, որոնք քառակուսի ձևով միմյանց հետ միանալով, թողնում էին իրանց միջավայրում բավական ընդարձակ տարածություն, որի վրա կառուցված էին զանազան շինություններ։ Դրսից ոչինչ չէր կարելի տեսնել, բացի չորս բարձր աշտարակներից, որոնք միացնում էին պարիսպների չորս անկյունները։ Ամրոցի շրջապատի մեջ զետեղված էին բոլոր բնակությունները, բոլոր ծածկոցները, որ պետք էին մի կանոնավոր տնտեսության համար։ Այստեղ էր ոչխարների գետնափոր գոմը, այստեղ էր ձիերի, կովերի և գոմեշների փարախը, որ, անասունների տեսակի համեմատ, առանձին-առանձին բաժանմունքներ ուներ։ Այստեղ էր սարայը երկրագործական անոթները պահելու համար. այստեղ էր մարագը, հարդանոցը, խոտանոցը, որոնց մեջ պահվում էր անասունները դարմանելու պաշարը. այստեղ կային զանազան մառաններ, զանազան ամբարներ մշակության բերքերի համար։ Այստեղ

այլին և մի քանի խուղեր, որոնց մեջ բնակվում էին ծերունի Խաչոյի հովիվները և ծառաները իրանց ընտանիքներով. դրանք բոլորն ազգով քուրդ էին, կնիկները ծառայում էին որպես աղախիններ, իսկ տղամարդիկը որպես նախրապաններ, հովիվներ կամ երկրագործական մշակներ։ Մի խոսքով, այդ ամրոցի մեջ բովանդակում էր մի փոքրիկ գյուղ, որի միակ տերը և պետը ծերունի Խաչոն էր։

Նրա գերդաստանի համար որոշված բնակարանները իրանց շինվածքով և բաժանումներով այնքան բազմատեսակ և բաղդրյալ չէին, որպես այդ հորինել է մեր նոր և քաղաքակրթված աշխարհը։ Այլ դեռևս պահպանել էին այն նախնական պարզությունը և ձևը, երբ մի ամբողջ ընտանիք ապրում էր մի վրանի տակ, այն զանազանությամբ միայն, որ այժմ այդ վրանին փոխարինում էր քարեղեն շինվածքը։ Նրա բազմաթիվ որդիների համար, որոնց յուրաքանչյուրը իր զավակներով մի մեծ ընտանիք կարող էր կազմել, առանձին սենյակներ չկային, այլ բոլորը ապրում էին միևնույն հարկի տակ, միևնույն սենյակում, որ ուրիշ ոչինչ չէր, եթե ոչ չորս պատ, ծածկած ահագին գերաններով։ Այստեղ վառում էին, այստեղ թխում էին, այստեղ կերակուր էին պատրաստում, այստեղ բոլորը միասին ուտում էին և այստեղ բոլորը միասին պառկում էին։ Այստեղ կարելի էր տեսնել նորածին հորթեր, փոքրիկ ուլեր, որոնք խառնված երեխաների հետ, վազվզում էին, թռչկոտում էին, աղաղակում էին և տունը լցնում էին կենդանի աղմուկով։ Այստեղ հավերը շատ անգամ ներս էին մտնում և հատակից քաղում էին փշրանքներ կամ ուրիշ այլ տեսակ բաներ, որոնք երեխաների ձեռքից անխընա ցած էին թափվում։ Մի խոսքով, դա Նոյի տապանն էր, ուր զետեղված էին ամեն տեսակ կենդանիներ։ Այդ բնակարանին կից էր մի երկրորդը։ Դա առաջինից զանազանվում էր նրանով միայն, որ առջևի ճակատը բոլորովին բաց էր և նայում էր բակին։ Դրան կոչում էին սրահ և ծառայում էր որպես ամառվա բնակարան։ Սրահի միջից բացվում էր մի դուռն գլխավոր սենյակի մեջ, և այսպիսով նա ներկայացնում էր բուն բնակարանի նախագավիթը։ Դրանց կողքին կար մի առանձին փոքրիկ սենյակ, որին կոչում էին օդա. նրա դռները բացվում էին այն ժամանակ միայն, երբ տանը հյուր էր գալիս և միշտ պահվում էր մաքուր և զարդարված։

Զ

Զնայելով կեցության այդ անշուք և պարզ ձևին, կյանքը այդ նահապետական տան մեջ սահում էր ուրախ և լի ամեն բավականություններով։ Աշխատանքը անդադար եռ էր գալիս և աստուծո օրհնությունը թափվում էր այստեղ իր բարություններով։ Ներունի Խաչոյի ամբարները միշտ լիքն էին լինում ցորենով, յուղով, ձեթով և գինիով։ Տարվա բոլոր եղանակներից օգուտ էր քաղում նա, թե՛ ցուրտ և թե՛ տաք օրվա համար։ Նա միշտ գործ և պարապմունք ուներ։

Ահա՛ լեռների ձյունը սկսեց հալվել, դաշտերը վաղուց ժըպտում են գեղեցիկ կանաչով։ Գարուն է։ Օդը տոգորված անուշահոտ ջերմությամբ կյանք է սփռում դեպի ամեն կողմ։ Զորերի միջից վազում են հարյուրավոր աղմկալի վտակներ և օձապըտույտ ընթացքով տարածվում են հովտի մեջ։ Նորեկ ծիծեռնակը հրավիրում է մշակին դեպի գործ։ Խաչոյի որդիները արդեն պատրաստել են արորը և գութանը։

Արևը դեռ նոր էր սկսել ծագել, դեռ նոր սարերի ձյունապատ գագաթները վառվում են վարդագույն ճառագայթներով։ Ներունին դառնում է առավոտյան ժամից, աջ և ձախ ամեն հանդիպած մարդուն «ողորմի աստված» ասելով։ Նրա որդիները այսօր առաջին անգամ պետք է դուրս բերեն եղներին և գոմեշներին, որոնք ամբողջ ձմեռը ախոռում կերել, գիրացել, հանգստացել են և ամենևին դրսի լույսը չեն տեսել։ Մեծ զվարճություն է գյուղացու համար այս տեսարանը, և այս պատճառով նրանց շատերը հավաքվել էին Խաչոյի տան դռան մոտ, որ տեսնեն, թե ինչպես էին պահվել և խնամվել նրա անասունները։

— Աչքդ լույս, տանուտեր Խաչո,—հարցրեց նրան գյուղացիներից մեկը,—այսօր տղերքը ուզում են «խամից հանե՞լ» գոմեշներին։

— Հա՛, ժամանակն է, մինչև ե՞րբ ներսումը պահենք. տերտերից հարցրի, ասաց «օրը բարի է». ես էլ կամեցա, որ այսօր դուրս հանեն,—պատասխանեց տանուտերը,՝ մի առանձին նշանակություն տալով քահանայի խոսքերին։

Այս միջոցին ներսից լսվեցան զանգակի ձայներ և բազմությունը ետ քաշվեցավ ճանապարհ բաց անելու համար։

— Այդ Զորան է,— լսելի եղավ ամեն կողմից։

Զորա կոչում էին տանուտերի նշանավոր գոմեշներից մեկին, որի ճակատը սպիտակ լուսնաձև պսակ ուներ և որը հռչակված էր իր ուժով և մեծությամբ։ Վիթխարի անասունը փռնչալով, մռնչելով, դուրս պրծավ տան դռնից։ Գետինը դողդողում էր նրա ոտների տակ։ Նա հանկարծ կանգ առեց դռան առջևի հրապարակի վրա և գլուխը վեր բարձրացնելով, սկսեց նայել իր շուրջը։ Նույն միջոցին ծերունի տանուտերը դարկեց նրա ճակատին մի ամբողջ անեփ ձու։ Զուն փշրվեցավ և դեղնագույն հեղուկը տարածվեցավ սպիտակ ճակատի վրա։ Այդ նրա համար էր, որ չարը խափանվի և նրան «աչք չառնե»։ Զորան այդ գործողությունից խրտնեցավ, և եղջյուրները թափ տալով, մի սարսափելի թռիչք գործեց և հարձակվեցավ այնտեղ հավաքված ամբոխի վրա։ Նույն միջոցին վրա հասան ծերունու որդիները և ահագին մահակներով աշխատում էին ետ դարձնել ամբոխի անասունին։ Մարդկային ուժը պատերազմում էր վայրենի ուժի դեմ։ Փարախի մթությունից դեպի լույս աշխարհ դուրս գալով, Զորայի անսովոր աչքերին ամեն առարկա անորոշ ձևով և մոայլի մեջ էր տեսնվում։ Նա այժմ մինչև անգամ չէր ճանաչում իր տերերին, որ ամբողջ ձմեռը նրան կերակրել էին և որոնց ձեռքերը շատ անգամ խոնարհությամբ լիզել էր նա իր հանգստության ժամանակ։ Կատաղի մոլեգնության մեջ հարձակվում էր նա այս կամ այն կողմ։ Ընդդիմադրությունը անհնարին էր։ Խաչոյի վեց որդիները ամեն կողմից հարվածում էին նրան։ Բայց ահագին մահակների հարվածները ընդունում էր նա որպես մի թեթև տաշեղի զարկ։ Ներունի տանուտերը, հեռու կանգնած, լի հրճվանքով նայում էր այդ սոսկալի կռվին, որ կարող էր պատիվ բերել ամենանշանավոր հռոմեական կրկեսին։ Նրա աչքերի առջև հանդիսանում էին երկու չափազանց ուժեր, մեկը իր քաջ որդիների ուժը, մյուսը իր վիթխարի անասունի ուժը։ Երկուսն էլ հավասար նշանակություն ունեին նրա համար։ Այդ երկու ուժերից կախումն ունեին նրա տնտեսության բոլոր աշխատությունները։ Այժմ կռիվը ավելի սաստկացավ։ Որովհետև կտրվեցավ Զորայի՝ վզի հաստ շղթան, որից քարշ էին տված մի ահագին գերանի կտոր, որպեսզի արգելեր նրա համարձակ քայլերը։ Գյուղացիները չվաններով վրա վազեցին, որ կաշկանդեն նրան։ Բայց ամեհի անասունի ամեն մի շարժումը բավական էր չվանները կտրատելու համար։ Նա հարձակվում էր դեպի

ամեն կողմ և ամբոխը ճանճերի նման փախչում էր նրա առջևից։ Այդ զարհուրելի խռովության միջոցին կատարվեցավ մի հրաշալի քաջություն։ Ներունի տանուտերի միջնակ որդին, որին կոչում էին Ապո, առյուծի ճարպկությամբ վրա վազեց և բռնեց Զորայի պոչից։ Կատաղած անասունը, նկատելով այդ արհամարհական հանդգնությունը, շտապեց գլուխը ետ դարձնել, որ իր եղջյուրներով պատժե անզգամին։ Գործվեցան մի քանի սաստիկ պտույտներ։ Զորան աշխատում էր ետ դառնալ, որ հարվածե իր հակառակորդին, բայց Ապոն նրա պոչից պինդ բռնած, պտույտվում էր նրա հետ։ Այդ մենամարտությունը տևեց մի քանի րոպե։ Ամեն կողմից լսելի էին լինում զարհուրանքի ձայներ։ Զայրացած դազանը մռնչում էր և գետնի մեջ ակոսներ էր ձգում իր ոտների շարժումներով։ Թանձր փոշին վեր էր բարձրանում և երկու կովողները կորած էին հողեղեն ամպի մեջ։ Նույն միջոցին վրա հասան Ապոյի եղբայրները և շղթաներով կաշկանդեցին Զորային։ Ամեն կողմից այժմ լսելի եղան ուրախության ձայներ։

Ներունի տանուտերը մոտեցավ Ապոյին, և նրա ճակատը համբուրելով, ասաց.

— Աստուծո աչքը թող քո վրա լինի, որդի, դու իմ երեսը սպիտակացրիր։

Այս խոսքերով նա կամեցավ հայտնել, որ Ապոն չթողեց հորը ամաչել ժողովրդի առջև։ Հետո նա մոտեցավ Զորային, որպես իր մյուս զավակին, և ձեռքով նրա գլուխը շոյելով, ասաց.

— Զարաճճի, ինչո՞ւ էիր այսպիսի գժություն անում։

Բայց Զորան այժմ հանգիստ էր. նրա աչքերի մռայլը փարատվել էր. նա այժմ ճանաչում էր իր տերերին, և, կարծես, փոշմանել էր իր գժության վրա։ Նրա պարանոցից կրկին կապեցին հաստ շղթան, կրկին շղթայից քարշ տվեցին ահագին գերանի կտորը, որի մյուս ծայրը հասնում էր գետնին և անցնում էր անասունի առջևի երկու ոտների միջից, և այնուհետև սկսեցին քշել դեպի գետը, որ լվանան, որ զովացնեն նրան սառը ջրի մեջ։

Գյուղացիների բազմությունը դեռ չէր հեռացել ծերունի խաչոյի տան դռնից, որովհետև Զորայից հետո պետք է դուրս բերեին մյուս գոմեշներին, որոնք մինը մյուսից ավելի ամեհի էին։ Բայց այս անգամ ծերունու որդիները ավելի զգուշությունները գործ դրեցին և մի առանձին անկարգություն չպատահեցավ։ Նրանք հերթով դուրս էին բերում գեղեցիկ, առողջ, գեր ու պարարտ անասուններին, որոնց յուրաքանչյուրը ամեն մի գյուղատնտեսական հանդիսարանի մեջ կարող էր առաջին մրցանակը ստանալ։ Տանուտերը հիացմունքով նայում էր նրանց վրա, և փշրում էր նրանց ճակատին կախարդական ձուն, որ աղատ պահե չար աչքից։ Բացի դրանից, նա տերտերին գրել էր տվել մի-մի թիլիսմանական աղոթք, և եռանկյունի ձևով կանաչագույն կաշու մեջ կապելով, քարշ էր տվել իր անասունների պարանոցից։ Գյուղացիները տեսնելով, գովում էին խաչոյի որդիներին, որ կարողացել էին այնպես լավ պահել իրանց անասուններին։ Հայրը, լսելով իր որդիների գովասանքը, ուրախանում էր։ Այսպես պետք է նրանք ամեն օր դուրս բերեին «խամ պահած» անասուններին, մինչև մի փոքր ընտելանային, մինչև մի փոքր սովորեին դրսի օդին և լույսին, որ այնուհետև սկսեին հերկը հերկել։

Է

Ապրիլ ամիսը բերեց իր հետ ավելի տաք և ավելի պայծառ օրեր։ Լեռների վրա կարմիր, դեղին և սպիտակ շուշանները վազուց արդեն ծաղկել էին և քրդերի աղջիկները քաղելով, փունջեր էին կապում, և հայերի գյուղերում մանածելով, փոխում էին մի կտոր հացի հետ։ Սունկը, բոխին, ծնեբեկը, մանդիկը, սիբեխը և լեռնային զանազան բանջարեղենները այս տարի այնքան առատ էին, որ մի ավանակի բեռը քրդի կանայք փոխում էին մի քանի ֆունտ ալյուրի հետ։

Ներունի խաչոյի որդիները արդեն սկսել էին դաշտում իրանց վարը վարել։ Աշխատությունը սկսվել էր ամեն տեղ։ Գյուղի մեջ մի անգործ մարդ չէր կարելի գտնել։ Ամեն ոք զբաղված էր իր մշակություններով։

Առավոտյան ժամն էր։ Ներունու տանը թոնիրները վառվում էին, մեկի վրա դրած էին պղնձե՝ ահագին կաթսաներ և խեցեղեն մեծ-մեծ պտուկներ, կերակուր էին եփում, մյուսի մեջ հաց էին թխում։ Հարսները, աղախինները հավաքված թոնիրների շուրջը, ընդհանուր շարժողության մեջ էին։ Տունը լցված

էր կերակուրների անուշ շոգիով, ներկայացնում էր մի հսկայական խոհանոց, որի մեջ տեսնողը կմտածեր, թե պատրաստվում է ճաշ մի ամբողջ բանակ կերակրելու համար։ Եվ իրավ, բացի ծերունու ահագին գերդաստանից, նրա սեղանից կերակրվում էին բազմաթիվ հովիվներ, մշակներ իրանց ընտանիքներով, որոնք ծառայում էին նրա տանը։ Դա մի ամբողջ լեգեոն էր։ Ամեն օր վառվում էին նույն թոնիրները, ամեն օր պատրաստվում էր կերակուրների նույն քանակությունը։ Եվ ծերունու ժրաջան հարսները մի րոպե հանգստություն չունեին։ Պետք էր ամենի մասին հոգ տանել, պետք էր ամենին գոհացնել։

Բացի դրանից, կային տնտեսական և ուրիշ զանազան հոգսեր։ Ահա այնտեղ, բակում հարսներից մեկը կովերին և ոչխարներին է կթում. մյուսը փոքրիկ օջախի վրա կաթ է տաքացնում մածուն շինելու համար. երրորդը պանիր է մակարդում, չորրորդը հարում է խնոցին կարագ պատրաստելու համար։ Նրանց շուրջը վազվզում են բազմաթիվ երեխաներ և խաղում են նորածին գառների ու հորթերի հետ։ Քա՜ղցր է նայել այդ գյուղական բախտավորության վրա։ Մանուկ և գառնուկ, երկուսն էլ աճում են միասին,— երկու հարստություններ, որոնցմով ուրախանում է, որոնցմով պարծենում է գյուղացին։

Բակի արևահայաց կողմում, պատի տակ, մինը մյուսի վրա, կարգով շարված են մի քանի հարյուր մեղրի փեթակներ։ Ապրիլյան արեգակը թափում է այստեղ իր ջերմ ճառագայթները։ Մինչդեռ հարսները մյուս կողմում զբաղված են իրանց գործով, ծերունի խաչոն այստեղ բաց է անում փեթակների դռնակները։ Ճանճերը ուրախ և զվարթ դուրս են թափվում ծակերից, սավառնում են նրա ալևոր գլխի շուրջը, պզզպզզում են, վզզվզզում են, թրթռռում են և օդը թնդում է միլիոնավոր միջատների ձայնից։ Գտնվում են նրանց մեջ և այնպիսի չարաճճիներ, որ կծու համբույրներ են մատուցանում ծերունու խորշոմած երեսին։ Բայց նա ամենևին ցավ չէ զգում, միայն ձեռքով քշելով, ասում է. «Ա՜յ, չար սատանա, ի՞նչ վատություն է արել քեզ խաչոն»։

Նույն ժամին Ստեփանիկը հեռու կանգնած, հետաքրքրությամբ նայում էր հոր աշխատություններին։

— Գնա՜, զավակս, ճանճերը կկծեն քեզ,— զգուշացնում է հայրը։

— Ապա ինչո՞ւ քեզ չեն կծում,— հարցնում է որդին։

— Կծում են, բայց ինձ այնքան չեն ցավեցնում։

— Ինչո՞ւ չեն ցավեցնում։

— Իմ մարմինը վաղուց սովորել է նրանց խայթոցներին։

— Թող իմն էլ սովորի,— ասում է պատանին ժպտելով։

Ծերունին ծիծաղում է և համբուրում է որդուն։

Նույն միջոցին հայտնվեցավ գյուղի գզիրը և ասաց, որ քուրդ Ֆաթթահ-բեկը մարդ է ուղարկել, թե գալու եմ տանուտերի մոտ հյուր, և ավելացրեց, թե գուցե շուտով կգա նա, որովհետև շատ հեռու չէ գտնվում, այլ մերձակա լեռների վրա որս է անում։ Կարծես մի սև թուխպ անցավ ծերունու պարզ ճակատի վրա, և նրա ուրախ դեմքը նսեմացավ տխրությամբ։ Բայց նա զսպելով իր ներքին տհաճությունը, պատվիրեց գզիրին, որ դաշտից կանչե իր որդիներից մի քանիսին, որ սպասավորություն անեն, իսկ ինքը խոտի և դարմանի պատրաստություն տեսնե նրանց ձիաների համար։

Ֆաթթահ-բեկի երթևեկությունը այնպիսի մի սովորական բան էր ծերունի խաչոյի մոտ, որ տանեցիք գիտեին, թե ինչ պատրաստություններ պետք էին նրան հյուրասիրելու համար։ Այս պատճառով հենց որ հարսները իմացան, թե նա գալու է, իսկույն մի քանի գառներ մորթել տվին, և սկսեցին մեծ կաթսաներով փլավ պատրաստել, որովհետև իմանում էին, որքան էլ սակավ լիներ, դարձյալ բեկը իր հետ մի քսան կամ երեսուն մարդ կունենար։

Ֆաթթահ-բեկը քրդերի մի ամբողջ ցեղի պետն էր, որոնց ոչխարները արածում էին Օ... գյուղի սահմանակից լեռների վրա։ Սակավ չէր պատահում, որ հայ և քուրդ հովիվների մեջ ծագում էին կռիվներ, երբ քրդերը կամ ոչխար էին գողանում, և կամ անցնելով սահմանից, սկսում էին իրանց հոտերը արածացնել հայերի արոտների վրա։ Բայց այդ կռիվները միշտ վերջանում էին առանց ծանր հետևանքների, որովհետև քրդերի ցեղապետ Ֆաթթահ-բեկը տանուտեր խաչոյի ոչ միայն լավ բարեկամն էր, բայց և քիրվան էր։ Նա կնքահայր էր դարձել տանուտերի թոռներից մի քանիսին մկրտության խորհրդի ժամանակ, իսկ տանուտերը փոխադարձաբար կնքահայր էր եղել բեկի մի քանի որդիների թլփատության ծեսը կատարելու ժամանակ։ Այսպիսով հայ տանուտերի և քուրդ բեկի մեջ կազմվել էր խիստ սերտ հարաբերություն։

Բայց ինչո՞ւ նա տխրեց, երբ լսեց բեկի գալուստը։ Խաչոն ժլատ մարդ չէր, որ վախենար նրան իր մի խումբ ծառաների հետ հյուրասիրելուց։ Խաչոյի սեղանը հայր Աբրահամի սեղանի նման ամեն մարդու առջև բաց էր։ Ամեն օր իրա տանը հաց էին ուտում բազմաթիվ պանդուխտներ և օտարականներ։ Խաչոն միշտ մի առանձին բավականությամբ էր արտասանում այն խոսքերը, թե իր կյանքում առանց հյուրի սեղան չէ նստել։ «Հացը, ասում էր նա, աստուծո տվածն է և նրան է պատկանում։ Աստուծո աղքատները պետք է կերակրվեն նրանից»։ Բայց ինչո՞ւ տխրեց նա, երբ լսեց բեկի գալուստը...

Նա լուռ մտածության մեջ դուրս եկավ տանից, այնտեղ դռանը կանգնած, սպասում էր, որ ընդունի հյուրին։ Մի քանի գյուղացիներ, տեսնելով տանուտերին, մոտեցան նրան։

— Ասացին, բեկը գալիս է,— խոսեց նրանցից մեկը։— Ով գիտե ինչ փորացավ կունենա։

— Քուրդը, երբ հայի տունն է գալիս, առանց փորացավի չի լինում,— պատասխանեց տանուտերը ներքին դժգոհությամբ։

Բլուրների ետևից երևացին նիզակների սուր ծայրերը, և մի քանի րոպեից հետո հայտնվեցան մի խումբ ձիավորներ։

— Գալիս են,— ասաց գյուղացիներից մեկը։

Տանուտերի աչքերը հեռվից լավ չէին տեսնում, նայեց դեպի այն կողմը և ոչինչ չնկատեց։

— Նրանք են,— ձայն տվեց մի ուրիշ գյուղացի։

— Տղերք,— ասաց տանուտերը իր մոտ կանգնած գյուղացիներին,— դուք այստեղ մնացեք, նրանց ձիաները բռնեցեք, խոտ և գարի տվեցեք, մինչև մերոնք կգան դաշտից։

Մոտեցավ բեկը մի խումբ զանազան տեսակ որսորդական շներով և քսանից ավելի ձիավորներով, որոնք իր հեռու և մոտ ազգականներն էին, և որոնց թիկնապահների նման իրանից չէր հեռացնում։ Նա այսօր նստած էր մի գեղեցիկ կապտագույն արաբական նժույգի վրա, որի բոլոր ասպազենը զարդարված էր արծաթով և փայլուն ակներով։ Ինքը՝ բեկը քառասուն տարեկան հասակից անցած մի տղամարդ էր, բայց տեսնողը կմտածեր, թե երեսուն տարեկան երիտասարդ է, վայելչակազմ, հսկայատիպ և այրական դեմքով։ Նրա հագուստը ոտքից ցգլուխ բաղկացած

բեհեղից, թանկագին կերպասից ասեղնագործած ոսկի թելերով, զենքերը նույնպես զարդարած էին ոսկով և արծաթով։

Տանուտերը, տեսնելով նրան, մի քանի քայլ առաջ գնաց և կանգնեց խրամի մոտ, որ փորած էր ջուր անցկացնելու համար։ Խրամի վրա ձգած էր մի կամուրջ, որտեղից պիտի անցկենար բեկը, բայց նա, փոխանակ կամուրջից անցկենալու, խթեց իր ձիու կողքը, ձին փռնչաց, ծտի նման թռավ ահագին խրամից, և մի քանի զարմանալի պտույտներ գործելով, սիդալով կանգնեց տանուտերի մոտ։

— Ինչպե՞ս է, հավանում ե՞ս, քավոր Խաչո,— հարցրեց բեկը, ձեռքով գգվելով նժույգի սիրուն բաշը,— դու ձիաներ ճանաչում ես, ինչպե՞ս է։

— Աստված թող հեռու պահի չար աչքից, շատ գեղեցիկ է, ինքը Քորոլլին էլ չէ ունեցել մի այսպիսի ձի, ուղիղ քեզ արժանի է,— պատասխանեց տանուտերը մոտենալով և իր ձեռքը քսելով նժույգի պարանոցին։— Որտեղի՞ց գտար, դու այսպիսի ձի չունեիր։

— Նոր ընծա եմ ստացել Արզրումի վալիից,— պատասխանեց ուրախացած բեկը։— Վալին այդ նժույգը իր զույգ աչքերու հետ չէր փոխի, բայց ուղարկեց իր բարեկամին. նա այդ ձին ընծա էր ստացել Հալեբի շեյխից։

— Գեղեցիկ ձի է,— կրկնեց տանուտերը։

Բեկը ոգևորված այդ գովաբանություններով, կրկին խթեց նժույգի կողքը։ Նա մի քանի զարմանալի թռիչքներ գործեց, մի քանի ճարպիկ պտույտներ տվեց տանուտերի դռան հրապարակի վրա, և այդ բոլոր գործողությունների մեջ երևում էր ազնիվ երիվարի գեղեցիկ հատկությունները և նրա սանձը կառավարող տղամարդի հմտությունը ամեհի ձիաներ զսպելու մեջ։

Հետո նա ցած իջավ, և սանձը հանձնելով իր ծառաներից մեկի ձեռքը, պատվիրեց, որ ման ածե, որովհետև ձին բավական քրտնած էր։

Տանուտերը իր պատվելի հյուրի ձեռքից բռնած, մտան օդան (հյուրանոցը), որ մինչև նրանց գալը, բավական զարդարած և կարգի էր դրած։

Հատակը սփռած էր պարսկական թանկագին գորգերով. պատերի մոտ մինը մյուսի վրա շարած էին փափուկ բարձեր

նստելու և թիկն տալու համար, և մի գեղեցիկ օթոց հատկապես պատրաստված էր բեկի բազմոցի համար։

Այժմ տանուտերը, հրավիրելով իր հյուրին նստել, ասաց իրանց երկրում ընդունված քաղաքավարական ոճով։

— Իմ տունը ձեր տունն է. աչքիս և գլխիս վրա տեղ ունիք, ես ձեր խոնարհ ծառան եմ. որդիքս ձեր ստրուկներն են, իսկ կանայքս՝ ձեր աղախինները, բարով և հազար բարով եք եկել, ամեն ինչ, որ ունեմ, ձեզ «փեշքեշ» է։ Հրամեցեք, հրամեցեք, նստեցեք, խնդրեմ։

Բեկը շնորհակալություն հայտնեց, և Խաչոյի որդիներից մեկը մոտենալով ոտներից հանեց նրա կարմիր կոշիկները, և նա առաջացավ, նստեց իր համար պատրաստված բարձի վրա, որ բռնում էր հյուրանոցի պատվավոր կողմը։ Նրա մոտ նստեցին որպես մերձավորներ իր հորեղբոր որդիներից երկուսը, և մի քանի ուրիշ ազգականներ։ Ծառաների մի մասը մնաց օդայի մեջ և ձեռքները իրանց գոտիներում խրած ատրճանակների վրա դրած, խոնարհությամբ կանգնել էին բեկի սպասում։ Իսկ ծառաների մյուս մասը դուրս գնաց, հոգ տանելու որսորդական շներին և ձիաներին, որ նույն ժամանակ վայելում էին տանուտերի մարագի բարիքները։ Թե՛ բեկը և թե՛ իր ծառաները բոլորը զինվորված էին սրերով, վահաններով, ատրճանակներով, հրացաններով և նիզակներով, որոնց իրանցից չհեռացրին, թեև բարեկամի տուն մտան։ Քուրդը թե՛ իր տնում և թե՛ դրսում, թե՛ խաղաղության ժամանակ և թե՛ կռվի ժամանակ զենքերը իր մարմնից չէ հեռացնում։ Զենքը քրդի մարմնի անբաժան անդամներից մեկն է։

Խաչոյի որդիներից մի քանիսը, որ այդ ժամանակ դարձել էին դաշտից, անդադար դուրս էին գալիս և ներս մտնում, կատարելով հոր զանազան պատվերները։ Բայց նրանց վրա զենքեր չկային։ Սկզբում փոքրիկ նախշուն ֆինջանների մեջ մատուցին սուրճ առանց շաքարի։

— Ո՞ւր է Ստեփանիկը, չէ երևում,— հարցրեց բեկը,— ես սովորել եմ այստեղ գալու ժամանակ սուրճը միշտ նրա ձեռքից ընդունել։

Տանուտերը, թաքցնելով իր ներքին տհաճությունը, հրամայեց, որ կանչեն Ստեփանիկին։

Ներս մտավ Ստեփանիկը, ուրախության ժպիտը փայլում

էր նրա անմեղ դեմքի վրա. նա մոտեցավ բեկին և համբուրեց նրա ձեռքը։ (Քրդի ցեղապետները իրանց ձեռքը համբուրել են տալիս)։ Բեկը շոյելով նրա մետաքսանման մազերը, ասաց.

— Դու գիտե՞ս, թե ինչ լավ բան եմ բերել քեզ համար։

— Գիտեմ,— պատասխանեց Ստեփանիկը կարմրելով,— մի գեղեցիկ այծյամի ձագ է, տարա խոտ տվեցի, չկերավ։

— Տեսնում ե՞ք, նա արդեն ստացել է իր ընծան,— ասաց բեկը դառնալով դեպի տանուտերը։

— Գիտեի, որ ինձ համար է,— պատասխանեց Ստեփանիկը,— ես էլ տարա։

— Դե՛, հիմա գնա՛, խաղա՛ քո այծյամի հետ,— ասաց բեկը։

Պատանին գլուխ տվեց և հեռացավ։

— Շատ խելոք տղա է,— խոսեց բեկը Ստեփանիկի գնալուց հետո։— Երևի, նա դժգոհ է մնում, երբ ամեն անգամ ես այստեղ գալու ժամանակ, ինձանից մի ընծա չէ ստանում։

— Նա մեղ չունի, դուք եք այդպես սովորացրել, բեկ,— պատասխանեց տանուտերը, ակամա ծիծաղելով։

— Ա՜խ, ինչ լավ սարեր են ձեր սարերը, քավոր Խաչո,— փոխեց բեկը իր խոսքը,— ամեն քայլում հանդիպում ես որսի, այծյամներ, եղնիկներ, եղջերուներ խումբերով են ման գալիս. կաքավներին և վայրենի աղավնիներին հաշիվ չկա։ Այդ այծյամը, որ ստացավ Ստեփանիկը. բարակները բոլորովին կենդանի բռնեցին։ Բայց մի տեսնեիք, ինչ լավ բարակներ ունեմ այժմ. մի զույգ նոր ստացա զելանցիների ցեղապետից. փոխարեն ես մի զույգ ջորի ուղարկեցի։ Բայց խոսքը մեր մեջ թող մնա, ջորիները մենք դեռ նոր էինք խլել Մեքքայի պարսիկ ուխտավորներից։ Բայց բարակները հրաշալի են, մտքից ավելի արագ են թռչում։

Բեկի խոսակցությունը ամբողջ ժամանակ վերաբերում էր իր շներին, որսորդություններին, ձիերին, ավազակություններին և զանազան տեսակ քաջագործություններին, որոնց մասին մի առանձին բավականությամբ էր խոսում։ Տանուտեր Խաչոյին, թեև ձանձրալի էին այդ «հիմարությունները», բայց նա համբերությամբ լսում էր և երբեմն իր կողմից համակրություն էր ցույց տալիս։

Արդեն ճաշի ժամանակ էր։ Հատակի վրա տարածեցին սե-

չանի սփոռոցը և նրա վրա շարեցին ահագին ափսեներով փլավ և խորոված ամբողջ գառներ։ Մի քանի ամանների մեջ դրած էին զանազան տեսակ քաղցր շերբաթներ, կամ մածունից պատրաստած թանապուր, որ խմում էին մեծ շերեփներով։ Ոգելից ըմպելիքներ չկային։ Սկսեցին ուտել և խմել։

— Դուք ձեր ոչխարները դեռ չե՞ք ուղարկել արոտ,— հարցրեց բեկը տանուտերից։

— Դեռ չենք ուղարկել,— պատասխանեց տանուտերը,— դեռ եղանակի վրա հույս չէ կարելի դնել. այդ մեր ապրիլ ամիսը իր վերջին գժությունները ունի, սպասում եմ, մինչև անցկենա։

— Ջերմ ու ցուրտը աստուծո ձեռքումն է, քավոր Խաչո, ինչ որ լինելու է, կլինի,— պատասխանեց բեկը։— Մեր ոչխարները մի շաբաթից ավել կլինի, որ տարել են արոտ։ Բայց գիտե՞ք այս տարի որքան շուտ սպառվեցավ մեր պաշարը. հովիվները քանի օր է ուտելու հաց չունեն։

Տանուտերը հասկանալով, թե ինչ է ուզում ասել բեկը, պատասխանեց.

— Մի՞թե մեր հացը ձերը չէ՞, հրամայեցեք, որքան ալյուր պետք է, ես կուղարկեմ։

— Թող շեն ու հաստատ մնա ձեր տունը,— ասաց բեկը,— իհարկե այդպես է. ո՛վ է մեր մեջ ջոկություն դրել։ Ինչ որ իմն է՝ քոնն է, ինչ որ քոնն է՝ իմն է։ Այդպես չէ՞, քավոր Խաչո։

— Աստված էլ գիտե, որ այդպես է... Որքա՞ն ալյուր ուղարկեմ։

— Առ այժմ մի տասն եզան բեռն բավական է, երբ սպառվի, էլի կտանենք, ձեր ամբարները խո պրծնելու չեն։

Տանուտերը մի ակամա ժպիտ գործեց իր տխուր դեմքի վրա, և գլուխը շարժեց, որ նշան էր նրա համաձայնությանը։

Ճաշից հետո Ստեփանիկը ձեռքերը լվանալու ջուր բերեց, բոլորը լվացվեցան, և ապա պատանին իր ձեռքով սուրճ տվեց։ Բեկը հրամայեց իր սպասում կանգնած ծառաներին, որ գնան դրսում իրանց ընկերների հետ ճաշեն, ուր պատրաստված էր առանձին սեղան, բակի մեջ տարածված կապերտների վրա։ Հյուրասենյակում մնացին բեկը, իր մի քանի ազգականները և տանուտեր Խաչոն։ Այժմ խոստակցության առարկան Արզրումի վալիի ընծայած ձին էր։ Բեկը պատմում էր նժույգի ցեղական

ազնվությունը և ասում էր, թե նրա տոհմային վիճակները հաշվում են մինչև երեքի Անթարի ժամանակներին, թե այդ ձին սերվում էր արաբական ամենաընտիր նժույգների տոհմից և այլն։

— Բայց շատ թանկ պիտի նստի իմ վրա այդ գեղեցիկ ընծան,— վերջացրեց բեկը իր պատմությունը։

— Ինչպե՞ս,— հարցրեց տանուտերը։

— Մի՞թե չե՞ս իմանում, ամենափոքրը՝ պետք է հարյուր ոսկի պարգևել վալիի ծառային, որ բերել է այդ ձին։

Տանուտերը այժմ հասկացավ բեկի «փորացավը», թե ինչ մտքով էր եկել իր տունը։ Բայց որպես ասում են, «խոսքը կըտուր գցելով», պատասխանեց.

— Ինչ կա,— ավելացրեց,— հարյուր ոսկին շատ չէ մի այդպիսի ձիու համար։

— Քրդին ով է տվել փող,— ասաց բեկը մի փոքր բարկացած ձայնով,— այդ անիծած արծաթը ձեր, հայերիդ մոտ է գտնվում միշտ։

Բեկի մոտ նստած ազգականները, որ բոլոր ժամանակ լուռ էին, խոստակցության մեջ մտան։ Նրանցից մեկը ասաց.

— Դուք էլ մի՞թե փողի դարդ եք քաշում, բեկ, քավոր Խաչոն ե՞րբ է թողել, որ դուք փողի կարոտություն ունենաք։

— Աստված վկա է, որ այդպես է,— ասաց մյուսը։

— Քավոր Խաչոն շատ լավ մարդ է,— ավելացրեց երրորդը,— նրա հատը բոլոր հայերի մեջ չկա։

Մերունի Խաչոն նկատեց, որ հակառակ իր հաճության և կամքին, իր վզին դրեցին հարյուր ոսկին, և կոստկածանքի տեղիք չտալով, պատասխանեց.

— Ես հազար ոսկու համար ևս բեկի սիրտը չեմ կոտրի։

— Շեն մնա ձեր տունը,— ձայն տվեցին քրդերը։

Տանուտերը վեր կացավ, և դուրս գալով օդայից, իր մոտ կանչեց մեծ որդուն և ասաց, որ ծածուկ գնա հարդանոցում թաքցրած ոսկիներից հարյուր հատ բերե։

— Ինչի՞ համար է,— հարցրեց որդին։

— Դու չե՞ս իմանում, որ անօրենները եկան, կերան, խմեցին, հիմա պետք է մի «դիշֆիրասի» էլ տանք, —պատասխանեց հայրը տխուր ձայնով։

— Աստված ձեր քոքը (արմատը) կտրե, անիծածներ,—

ասաց որդին և քթոցը վեր առնելով, դիմեց դեպի հարդանոցը, որպես թե գնում է հարդ բերելու։

«Դիշքիրասի» նշանակում է ատամների վարձ, մի այսպիսի վարձ ստանում էին քրդերը մի ժամանակ, երբ շնորհ էին անում հայի հացը ուտել, կամ նրա տանը հյուր լինել։ Հյուրընկալը պարտավոր էր վճարել, եթե չտար, գուցե կենթարկվեր իր հյուրի անգութ գանահարությանը։ Այժմ թեև այդ սովորությունը մասամբ վերացել էր, բայց ոսկիներ դարձյալ ստացվում էին, միայն ստանալու եղանակը փոխվել էր և ավելի քաղաքավարի ձև էր ստացել։

Մինչև ծերունու դառնալը, հյուրանոցում քրդերի մեջ անց էր կենում հետևյալ խոսակցությունը.

— Եթե չբերե ծերուկը ոսկիները, ես կհրամայեմ այս բոպեիս նրա տանը կրակ տան,— ասաց բեկը կատաղած կերպով։

— Հարկավոր չէ,— հանգստացնում էր նրան ազգականներից մեկը,— Խաչոն բարի հայ է, հարկավոր չէ նրան վշտացնել։ Նրա դուռը միշտ բաց է եղել մեր առջև, և ինչ որ կամեցել ենք, տարել ենք։ Խաչոն լավ մարդ է, պետք չէ նրա աղ ու հացը մոռանալ։

Նույն միջոցին ներս մտավ ծերունին և ոսկիների քսակը դնելով բեկի առջև, ասաց.

— Ասված է վկա, որ հոգուս համար էի պահել, որ Երուսաղեմ ուխտ գնամ և մուղդուսի դառնամ, բայց ձեր խաթրը չկոտրեցի, բեկ։

— Սուտ մի՛ խոսիր, քավոր Խաչո, շա՛տ ունես, շա՛տ, այդ ես իմանում եմ,— պատասխանեց բեկը, վեր առնելով քսակը և առանց համբարելու, իր գրպանը դնելով։

Երեկոյան զով ժամանակն էր արդեն։ Բեկը հրամայեց ձիաները պատրաստեն, որ ճանապարհ ընկնի։ Նա դուրս եկավ օդայից և բակում տանուտերի հետ ման էր գալիս, մինչև ամեն ինչ կպատրաստեին։ Նա տեսավ Ստեփանիկին, որ այծյամի հետ խաղում էր։ Մոտեցավ նրան։

— Լա՞վն է,— հարցրեց նրանից։

— Լավն է, բայց այդ մեկ ոտը շները կծել են, վիրավորվել է, այդ ոչինչ, ես կբժշկեմ։ Խեղճ անասուն, երևի, ցավում է, դրա համար ոչինչ չէ ուտում,— պատասխանեց պատանին, կապելով այծյամի վերքը։

— Ստեփանիկ, ես տեսնում եմ, դու անասուններ սիրում ես, դրա համար ես կուղարկեմ քեզ իմ նորահաս քուռակներից մեկը։

— Ձիաներ չեմ սիրում։

— Ապա ի՞նչ ես սիրում։

— Ահա այսպիսի այծյամներ, եղջերուներ, կաքավներ եմ սիրում։

— Շատ լավ, դրանից հետո իմ որսերից որն կենդանի մնացած կլինի, քեզ համար կուղարկեմ։

Ծառաները իմացում տվին, թե ձիաները պատրաստ են։

Բեկը շնորհակալություն հայտնելով տանուտերին, դուրս եկավ նրա տնից, դռան առջև կանգնեցրել էին գեղեցիկ նժույգը։ Ինքը ծերունի Խաչոն ձիու ասպանդակը բռնելով, նստեցրեց բեկին։ Դա պատվի մեծ նշան էր, որով տանուտերը ցույց էր տալիս իր ծառայությունը դեպի պատվելի հյուրը։ Նստելով ձիու վրա, քուրդ ցեղապետը շարժեց ձեռքի երկայն նիզակը, խաղացրեց ձին, և մնաք բարով ասելով տանուտերին, հեռացավ։ Ծերունին երկար անշարժ կանգնած, նրա ետևից նայում էր։ Նա տեսավ, թե որպես բեկը իր ձին կրկին թոցրեց խրամից, արհամարհելով կամուրջը, որի վրայից անց էին կենում, նրա կարծիքով, թույլ և անզոր արարածները միայն։ Նա տեսավ, թե որպես հետամուտ եղավ նա թփերի միջից հայտնվող նապաստակին, և արծվի արագությամբ նրա ետևից հասնելով, ցցեց նիզակը խեղճ անասունի կողքին։ Այդ բոլորը տեսնում էր նա, միևնույն ժամանակ նրա գլխում անց էին կենում այսպիսի մտածություններ. «Ինչո՞ւ այսպես է երկրի և երկնքի դատաստանը. քուրդը հաց չունի ուտելու, հայը վարում է, ցանում է և նրա համար պաշար է պատրաստում... քուրդը գեղեցիկ նժույգ ընծա է ստանում, նստում է, զվարճանում է, գետինը դողացնում է իր ոտների տակ, իսկ հայն է տալիս նրա փողը... հայը, որ բացի ավանակից մի ուրիշ անասունի վրա նստելու իրավունք չունի»...

Ը

Նույն ավուր գիշերային պահուն ծերունի Խաչոյի որդիները բոլորը դարձել էին դաշտային աշխատություններից։ Սրահի մի

անկյունում վառվում էր յուղային ճրագը և նրա բլկբլկվող լույսը տարածում էր իր չորս կողմը աղոտ ճառագայթներ։ Տանուտերը իր որդիների հետ բոլորել էին ընթրիքի սեղանի շուրջը, նրանք լուռ ուտում էին. խոսում էր երբեմն ծերունի հայրը միայն։ Գարնանային թարմ օդը անուշ զովությամբ թափվում էր սրահի մեջ, և հեռվից լսելի էր լինում ոչխարների բառաչելու ձայնը, որ դառնում էին արոտից։ Թոնրատնում հարսները ընթրիք էին պատրաստում հովիվների և մշակների համար։ Նրանք դեռ ոչինչ չէին կերել, պետք է բոլորին կերակրեին, հետո իրանք ևս սեղան նստեին աղջիկների հետ։ Փոքրիկ մանուկները խաղալուց հոգնած, վազուց քնած էին, առանց մի բան ուտելու։

Ընթրիքից հետո ծերունի Խաչոյի որդիները գնացին իրանց բանին։ Նրանք դեռ շատ գործ ունեին կատարելու, պետք էր անասուններին նայել, պետք էր արտը ջրել, որովհետև այս գիշեր ջրի հերթը նրանց էր պատկանում. պետք էր ջրաղացը գնալ ալյուր աղալու համար, մի խոսքով, հազար ու մեկ գործեր կային։

Սեղանը վեր քաղեցին։ Խաչոն դեռ նստած էր, իսկ նրա մեծ որդին, Հայրապետը, որ մնաց հոր մոտ, չիբուխ էր պատրաստում նրա համար։ Հոր և որդու մեջ տիրում էր խորին լռություն։ Կարծես այս գիշեր տխրության դեը իր սև թևքերով նստած լիներ այդ խաղաղ ընտանիքի սրտի վրա։

— Որքա՞ն ալյուր տարան քրդերը,— հարցրեց հայրը չիբուխը փոքր-ինչ ծխելուց հետո։

— Ուղիղ տասն և երկու բեռն,— պատասխանեց որդին վրդովված ձայնով։

— Ինքը բեկը ախար տասն բեռ խնդրեց։

— Ջվալները իրանց հետ էին բերել, շատ մեծ էին, մինչև բերանները լցրին, կարծես, փողը նաղդ էին տվել անիծածները։

— Ո՞ւմ եզներով տարան։

— Մեր եզներով. փառք տվեք աստծուն, երբ գոնե եզները կդարձնեն։ Ես վախենում եմ, որ եզներն էլ ալյուրի հետ ուտեն։

— Այդպիսի անազնվություն չի անի բեկը։

— Քրդին ազնվություն ո՞վ է տվել։ Միթե քի՞չ է պատահել, որ բեռն էլ տանող անասունի հետ կուլ են տվել։ Ես իրավն ասեմ, այնքան չեմ ցավում այսօրվա հարյուր ոսկու համար և տասներկու բեռ ալյուրի համար, բայց ինձ այն է նեղացնում,

որ ձրի հաց ենք տալիս և այդ հացը մեր ձեռքով, մեր անասուններով պետք է տանենք և հասցնենք նրանց տանը, որ վայելեն։ Այդ ի՞նչ աստուծո պատիժ է։ Ես չեմ իմանում մինչև ե՞րբ այդ քրդերը մեզ թալանեն։ Գալիս են, տանում են ու տանում են, և տարածը ետ չես կարող առնել։ Միշտ ուզում են, միշտ ուզում են, ոչ ամոթ ունեն և ոչ խղճմտանք։ Կարծես, մեզ աստված նրանց համար կերակրող է ստեղծել։

— Դու չե՞ս իմանում, որ այդպես է,— պատասխանեց ծերունին, ավելի թունդ կերպով ծխելով իր չիբուխը, կարծես թե աշխատում էր նրա ծխով խեղդել սրտի բարկությունը։— Ի՞նչ կարող ենք անել, որդի, եթե մեր կամքով, մեր ձեռքով չտանք, նրանք զոռով կտանեն։ Այդ էլ լավ է, որ խնդրելով և բարեկամության անունով են կողոպտում մեզ։

— Մենք ինքներս ենք սովորեցրել նրանց այդ ավազակությունը,— ասաց որդին,— կարող ենք չտալ, այն ժամանակ քուրդը ստիպված կլինի ինքն ցանել, և իր քրտինքով աշխատել իր հացը, բայց մենք սովորեցնում ենք նրանց ծուլություն, սովորեցնում ենք մեր հաշվով ապրել։

— Այդ ուղիղ է,— պատասխանեց հայրը տխուր ձայնով,— բայց մեզ դժվար է և շատ դժվար է միանգամով ոչնչացնել այն, ինչ որ մեր պապերը տնօրինեցին մեզ համար։ Մենք քաղում ենք նրանց ցանած հիմարությունների դառն պտուղը։ Հիմա լսիր, որդի, ես իմանում եմ, որ քո սրտի մեջ եփ է գալիս ատելությունը, ես իմանում եմ, որ ստրկությունը սաստիկ վշտացնում է քեզ. բայց դարձյալ հարցնում եմ, ի՞նչ ճար կա, ի՞նչ կարող ենք անել։ Եթե ինչ որ ուզում են, չտանք՝ կթշնամանան մեզ հետ. մեկ էլ տեսար, ոչխարների ամբողջ հոտը սարից հափշտակեցին, տարան։ Ո՞ւմը կարող ենք գանգատվել. ո՞վ կլսե մեր ձայնը։ Այն մարդիկը, որ նշանակվել են շարությունը բառնալու և արդարությունը պաշտպանելու համար, բոլորը ավազակներ են, սկսյալ վալիից, փաշայից, մինչև վերջին մուդիրը և գայմազամը։ Մի ավազակ մի ուրիշ ավազակի հետ քույր և եղբայրներ են, և ինչպես ասում են՝ «շունը շնից, երկուսն էլ մի տնից»։ Դու ինքդ քո աչքով տեսար, Արզրումի վալին, փոխանակ շղթաներ ուղարկելու, որ մի այսպիսի երևելի ավազակապետին, որպես Ֆաթթահ-բեկն է, տանեն և խեղդեն, փոխանակ այդ անելու, նրա համար մի գեղեցիկ ձի ընծա է

ուղարկում, մի եղեռնագործի համար, որ մեր ամբողջ գավառը լցրել է արյունով և արտասուքով։ Երբ որ վալին, երկրի նահանգապետը, այսպես է վարվում, էլ ո՞վ է մնում, որ մենք հայտնենք նրան մեր սրտի ցավը, մնում է միայն աստված, բայց աստված էլ մեր ձայնը չի լսում, երևի շատ են մեր մեղքերը...

Որդին ոչինչ չպատասխանեց, հայրը շարունակեց.

— Մենք հայ ենք. աստուծո անեծքը գրած է մեր ճակատի վրա. մենք մեր ձեռքով մեր տունը քանդում ենք։ Անմիաբանությունը, երկպառակությունը, նախանձը, թշնամությունը և հազար ու մեկ այս տեսակ չարություններ շատ ժամանակներից բույն են դրել մեր հոգու մեջ, և մենք կրում ենք այդ մեղքերի պատիժը։ Քուրդը մեղավոր չէ։ Եթե մեր մեջ միություն լիներ, եթե մեր մեջ սիրտ լիներ, քուրդը, հիմար և ծույլ քուրդը ի՞նչ կարող էր անել։

Նա հրամայեց կրկին վառել չիբուխը, և որդին կատարելով հոր ցանկությունը, խոսեց.

— Մենք վեց եղբայրներ ենք, հայր, եթե դու այսօր մի ակնարկություն արած լիներիր, մեր վեցը բավական կլիներ արտաքսելու մեր տնից Ֆաթթահ-բեկի մոտ երեսուն ձիավորներին, և նրանք մյուս անգամ չէին համարձակվի այսպես լրբությամբ ոտք կոխել մեր շեմքի վրա։

— Այդ ես իմանում եմ, որդի, բայց ի՞նչ շահ։ Դուք կկռվեիք նրանց հետ, գուցե մեկին, երկուսին, շատերին կսպանեիք, բայց էգուց քրդերի ամբողջ ցեղը կթափվեր մեր տան վրա, և մեզ մեր տան հողի հետ հավասար կանեին։ Ո՞ր հայը կգար մեզ պաշտպանելու։ Ոչ ոք։ Կարելի է շատերը կուրախանային։ Այդպես է հայը։ Բայց քուրդը այդպես չէ։ Եթե մի ցեղից մեկին սպանում ես, ամբողջ ցեղը վրեժխնդիր է լինում նրա արյան համար, որովհետև քրդերի մեջ միություն կա, ցեղի մեկ անդամի արյունը ամբողջ ցեղին է պատկանում, կարծես թե բոլորը մի ընտանիքի զավակներ լինեին։ Բայց մեր մեջ կա՞ այսպիսի միություն։ Ամեն մարդ իր գլխի դարդն է քաշում, ամեն մարդ իր անձի համար է մտածում. ուրիշին ինչ լինում է, թող լինի. նրան ինչ հոգ, երբ ինքը հանգիստ է, երբ իր մազին չեն դիպչում։ Բայց չեն իմանում տխմարները, որ «մեկը ամենի համար է, իսկ ամենը մեկի համար»։

Ներունի Խաչոն կարդացած մարդ չէր, բայց կյանքը, փորձը, աշխարհը շատ բաներ սովորեցրել էին նրան։ Բնական խելքը զարգացել էր կյանքի փոթորիկների մեջ, այս պատճառով նրա դատողությունների մեջ երբեմն գտնվում էին այնպիսի ճշմարտություններ, որ միայն կարող էին մատչելի լինել այն տեսակ անձերի, որոնք շատ խորին կերպով իմաստասիրել էին մարդկային կենցաղավարության պայմանները։ Նա խոսեց.

— Հանգամանքները մեզ այնպիսի դրության մեջ են դրել, որ ուրիշ կերպ գլուխ պահել չենք կարող. ստիպված ենք աշխատել, վաստակել և մեր աշխատանքով մեր թշնամուն կերակրել։ Ուրիշ ճար չկա։ Մենք պետք է բարեկամություն պահպանենք մեզ կողոպտողի հետ։ Ֆաթթահ-բեկը, իրավ է, մեզ կողոպտում է, բայց դարձյալ չենք կարող մերժել նրա բարեկամությունը, որքան էլ կեղծ լիներ։

— Ինչո՞ւ,— հարցրեց որդին։

— Նրա համար որ, մեծ ավազակի հետ բարեկամ լինելով, մարդ ազատվում է փոքր ավազակների ձեռքից։ Դրանք բոլորն միմյանց հետ կապված են։ Հիմա օտար քրդերը գիտենալով, որ Ֆաթթահ-բեկը մեզ հետ լավ է, էլ մեր ոչխարներին, անասուններին և վարուցանքին չեն դիպչում, և եթե մի բան գողանում են, նա գտնում է և ետ է դարձնում մեզ։

— Դրանից ի՞նչ շահ. հաշիվը միևնույնն է դուրս գալիս,— պատասխանեց որդին,— Ֆաթթահ-բեկը մեզ «մի ձու է տալիս, բայց փոխարենը մի ձի է ստանում»։ Նա չէ թողնում, որ մի ուրիշ քուրդ մեր ոչխարը գողանա, բայց ինքը, հարկավորած ժամանակ, հարյուրներով ոսկիներ է առնում մեզանից։ Մենք նրա կաթնատու կովն ենք, պահում է, պաշտպանում է նրա համար միայն, որ ինքը վայելե մեր կաթը։

— Այդ բոլորը ճշմարիտ է, որդի, ես հասկանում եմ,— պատասխանեց հայրը.— բայց պետք է այն ևս հասկանալ, որ հայը մեր պապերից շատ առաջ սովորել է այդ կերպով իր գլուխը պահել։ Ես, իհարկե, չեմ կարդացել, թե ինչ է գրված գրքերի մեջ, բայց մի ժամանակ Ուշքիլիսայի վանքում, կար մի վարդապետ, նա ինձ պատմում էր, թե ամեն ժամանակ, երբ մեր երկրի վրա հարձակվել են թշնամիներ, հայերը փոխանակ սրով և կրակով դուրս գալու նրանց առջև, հանդիպել են թշնամուն թանկագին ընծաներով՝ մատուցարանի մեջ լցրած ոսկիներով։ Նրանք մեզ սովորեցրին փոխանակ պատժելու, կաշառել մեր թշ-

նամիներին։ Նրանք սովորեցրին կայքը տալ գլուխը ազատելու համար։

— Բայց պետք չէ, որ մենք պապերի սխալը շարունակենք մինչև հավիտյան,— կտրեց որդին հոր խոսքը։

— Հին սխալը միանգամով ուղղել շատ դժվարին է, նա կատարվել է հարյուրավոր տարիների ընթացքում, և այսքան տարիներ պետք են նրան ուղղելու համար։ Եկ դու ժողովրդին հասկացրու, թե թշնամու հետ այլ կերպ կարելի է վարվել, թե նա էլ մեզ նման մարդ է, թե նրա մարմինը երկաթից շինված չէ, թե երբ նա զենքերով գալիս է մեզ կողոպտելու, կարելի է զենքով պատասխանել նրան. վերջապես հազար ու մեկ այս տեսակ քարոզներ կարդա, դու կարծում ես ժողովուրդը կհասկանա՞ քեզ։ Նա քեզ խենթի տեղ կդնե և կծիծաղե քո հիմարությունների վրա։ Բայց այս հասկացողությունը նրա մեջ նոր բան չէ, նա ժառանգել է իր պապերից։

Որդին չպատասխանեց, նա գտնում էր հոր խոսքերի մեջ մի ճշմարտություն, որ անհերքելի էր։ Բայց միևնույն ժամանակ մտածում էր, միթե չէ կարելի փոխել ժողովրդի նախապաշարմունքը։ Այս պատճառով հարցրեց նա.

— Լավ, դիցուք թե մեր պապերը այս ճանապարհով են գընացել, և մենք էլ հետևում ենք նրանց օրինակին։ Բայց պետք չէ՞ փոխել ճանապարհը, երբ տեսնում ենք, որ նա տանում է դեպի կորուստ։ Պետք չէ՞ հասկացնել ժողովրդին, որ նա մոլորված է։

— Հարկավոր է, բայց ո՞վ պետք է հասկացնե։ Այդ պետք է անեն այն մարդիկը, որոնք ընդունել են իրանց վրա ժողովրդին խրատելու, ճանապարհ ցույց տալու և բան հասկացնելու պարտավորությունը։ Այդ պետք է անեն մեր տերտերները, վարդապետները, բայց նրանք քարոզում են՝ «եթե աշ երեսիդ խփելու լինեն, ձախն էլ դարձրու»։ Այդ պետք է անեն մեր որդիների վարժապետները, բայց մեր ամբողջ գավառում մի հատ օրինավոր վարժապետ չկա։

— Այդ խոսքերի մեջ քեզ հետ չեմ կարող համաձայնվել, հայր,— ասաց որդին,— ապա ինչո՞ւ քուրդը, որ ո՛չ տերտեր ունի, ո՛չ վարդապետ ունի և ո՛չ էլ վարժապետ ունի, բայց իմանում է, թե մարդ ինչպես պետք է վարվի իր նմաններ հետ։ Ո՞վ սովորեցրեց նրան, թե մարդը առանց զենքի կույր հավի նման է լինում, ով հասնի, գլխին կտա։

— Քուրդը տերտեր, վարդապետ և վարժապետ չունի, բայց շեյխ ունի, նրա շեյխը, թեև հոգևոր գլուխ է, բայց ինքն է զենքը կրում, և իր ժողովրդի հետ միասին գնում է հափշտակելու անզեն մարդերի հարստությունը։ Նա երբեք չէ քարոզում, թե այդ բաները մեղք են։ Բայց ի՞նչ են քարոզում մեր տերտերները...

Որդին լուռ էր։ Հայրը շարունակեց.

— Այդ բոլոր անբախտությունների մեջ մի մխիթարություն կա, այն է, որ որքան էլ գողանում են մեզանից, որքան էլ հափշտակում են, դարձյալ մեր ամբարները լիքն են մնում, բայց քուրդը ուտելու հաց չէ գտնում։

— Գիտե՞ք, հայր, այն առածը, թե «գողը իր համար տուն չի կարող շինել, բայց տուն ունեցողի տունը կքանդի»։ Քուրդը թեև չէ վարում, չէ ցանում, չէ հնձում, իր տանը հաց չէ գտնում, միշտ քաղցած է մնում, բայց աշխատող հայի հացը ձեռքիցը խլելով, նրան էլ իր նման քաղցած է թողնում։ Դու մեր տունը օրինակ մի բեր, հայր, մտածիր, թե որքան հայեր կան, որոնք քրդերի պատճառով աղքատ են և ուտելու հաց չունեն։

— Այդ իրավ է, որդի, բայց մի ուրիշ բան էլ կա, այն էլ պետք է գիտենալ։ Դու տեսնում ե՞ս ոչխարներին, այսքան մորթում են, այսքան փչացնում են, բայց դարձյալ նրանք աճում են, բազմանում են և ահագին հոտեր են կազմում։ Իսկ գայլը, թեև կեղեքում է, ուտում է ոչխարներին, բայց միշտ քաղցած է մնում և երբեք չէ բազմանում։ Դու տեսե՞լ ես գայլերից մի հոտ։ Գայլը գազան է, այսօր հափշտակեց մի ոչխար, կերավ, կշտացավ, էգուց չգիտե, թե ինչով պետք է կերակրվի։ Նա պետք է միշտ որսա, բայց որսը ամեն անգամ չէ պատահում։ Որսով ապրողը մի օր կուշտ է լինում, մյուս օրը քաղցած։ Քուրդը— գայլ է, իսկ մենք— ոչխար։

Այսպես էր բացատրում ծերունին իր լեզվով այն բանը, որ գիտնականների լեզվում կոչվում է «կուլտուրական խաղաղ, անարյուն մրցություն»...

Որդին պատասխանեց նրան.

— Ես կարծում եմ, հայր, եթե ոչխարները հովիվներ և պահպանողներ չունենային, այսօր գայլերը ոչ մի ոչխար չէին թողնի աշխարհում, և դժվար կլիներ ոչխարներին հոտեր կազմել։ Մենք, իրավ է, ոչխարներ ենք, բայց առանց հովիվի։ Երբ

մեր վիճակը այդպես է, մնում է մեկ բան միայն գայլերից ազատվելու համար— որ մենք էլ գայլերի նման ատամներ և ճանկեր ունենանք...

Թ

Արզրումից դեպի Բայազետ տանող ճանապարհի մի կողմում, որ միակ քարավանի ճանապարհն է Տրապիզոնից Պարսկաստան, մի ձորի մեջ զետեղված էին քրդերի մի առանձին ցեղի չադրները։ Չադրների բազմությունից, որ ծածկել էին մի գեղեցիկ, կանաչազարդ դաշտի մեծ մասը, կարելի էր նախադուշակել ցեղի քանակության մեծ թիվը։ Ձիաների երամակներ, ոչխարների հոտեր, կովերի նախիրներ, սփռված շրջակա լեռների վրա, ցույց էին տալիս, որ այդ հովիվ ժողովուրդը վայելում էր հարստության հետ և բարօրություն։

Վերադառնալով ծերունի խաչոյի տնից, բոլորովին մութն էր, երբ Ֆաթթահ-բեկը իր խմբով հասավ հիշյալ չադրներին, որոնց մեջ բնակվող ցեղի պետը և գլխավորն էր ինքը։ Մի քանի վրանների առջև դեռ վառվում էին գիշերային խարույկները կաթ տաքացնելու և կերակուր պատրաստելու համար, և սփռում էին իրանց շուրջը գեղեցիկ լուսավորություն։ Երբ բեկի խումբը մոտեցավ, շները բարձրացրին մի խառնաձայն աղաղակ, և ամեն կողմից լսելի եղան գիշերապահ հովիվների խորհրդավոր ձայները, որով իմացում էին տալիս միմյանց, թե ձիավորներ են մոտենում։ Բեկի խումբի միջից պատասխանեցին նույն տեսակ ձայներով. հովիվները հասկացան միմյանց, և այժմ առանց տեսնելու գիտեին, թե եկողները ովքեր են։ Բեկը իր ձին քշեց ուղիղ դեպի այն վրանը, որ պատրաստված էր վալիից ընծա բերող հյուրի համար։ Դա մի թուրք ատիճանավոր էր, հասակն առած, փորձված և մխված ամեն տեսակ խարդախությունների մեջ։ Նա մի ժամանակ Վանի կողմերում մուդիրի պաշտոն է վարել և փոխված է եղել չափազանց կաշառակերության համար։

— Դուք ինձ բավական սպասել տվեցիք, բեկ,— ասաց մուդիրը տեղից վեր կենալով, երբ բեկը մտավ նրա վրանի մեջ,— ես միտք ունեի այս երեկո մնաք բարով ասել ձեզ։

— Շեյխի գլուխը վկա, որ դուք շատ անհամբեր մարդ եք, — պատասխանեց բեկը ծիծաղելով,— ես զարմանում եմ, թե

դուք ինչպես եք ինն ամիս համբերել ձեր մոր արգանդում։ Մենք դեռ բոլորովին չենք կշտացել մեկ-մեկուց—ինչո՞ւ եք շտապում, չլինի՞ թե իմ վրանը ձանձրացրեց ձեզ։

— Ամենևին ոչ. ինձ շատ քաղցր է ձեր հյուրասիրությունը. եթե ինձ մի օր դրախտը տանեին (որի վրա մեծ հույս չունեմ), ես կցանկանայի, որ այդ ձեր վրանը լիներ։ Այսուամենայնիվ, ես կխնդրեի, որ առավոտյան ինձ ճանապարհ դնեիք։

— Լավ, լավ, օսմանլիի խասիաթը ես իմանում եմ. սովորել են հոտած քաղաքներում, փափուկ բարձերի վրա առավոտից մինչև իրիկուն ձգվել, նարգիլե ծխել և զահվե խմել։ Բայց այդ անապատի մեջ ի՞նչ կա։ Իրավն ասեմ, ես ինքս եմ մեղավոր. ես չկարողացա ձեզ զբաղեցնել, որպես հարկն էր։ Ի՞նչ անեմ, որսորդություն չեք սիրում, ձիով ման գալ չեք սիրում, իսկ մեր սարերում ուրիշ զվարճություններ չկան։

Մուդիրը կրկին գործ դնելով իր թուրքական կոմպլիմենտները, պատասխանեց.

— Ձեր դեմքի լույսը ինձ համար ամեն զվարճություններից բարձր է. ես ինձ միշտ երջանիկ կհամարեմ, որ արժանացա ձեր տեսությանը։ Բայց մտածեցեք, բեկ, որ ձեր ծառան անկախ մարդ չէ, նրա ժամանակը իրեն չէ պատկանում։ Վալին ժամանակ նշանակեց, որ տասն օրից ավել չուշանամ։

— Ես կգրեմ վալիին, որ ինքս ուշացրի ձեզ. դուք խո իմանում եք, թե նա որքան պատվում է իմ խոսքը։

— Այդ ես իմանում եմ, վալին ձեզ իր երկու աչքերի հետ չի փոխի. ձեր խոսքը նրա մոտ մարգարիտի գին ունի։ Նա ամենի մոտ ասում է, թե սուլթանը Ֆաթթահ-բեկի նման քաջ և հավատարիմ ցեղապետ չունի, և այդ պատճառով առաջարկել է ձեզ համար մաջիդիեի առաջին կարգի շքանշանը։

Բեկը արհամարհական ժպիտ գործեց իր այրական դեմքի վրա և պատասխանեց.

— Ես այդ շքանշան ասած բաները չեմ սիրում, կնիկների զարդարանք են, և ավելի ոչինչ։

— Ապա ի՞նչ եք սիրում։

— Ես սիրում եմ ոսկի մաջիդիաներ[1]։

— Այդ էլ կլինի, բեկ, վալին մեծ շնորհ ունի ձեզ վրա։ Տեսա՞ք, նա նշանակել տվեց ձեզ համար ոռճիկ, որ այժմ ստա-

[1] Մաջիդիա և՛ շքանշանի, և՛ դրամի անուն է։

նում եք արքունի գանձից, որպես սահմանապահ և այս կողմերում խաղաղություն պահպանող։ Նա ընդունեց ձեր խնդիրքը, որով ցանկանում էիք, որ այս կողմերում ոչ մի մուղիր և գայմագամ չլինի, այլ բոլոր վարչությունները հանձնվին ձեր կառավարությանը։ Վերջապես ինչ որ պահանջել եք, կատարել է նա, և մի անգամ ևս ձեր խոսքը գետին չէ ձգել։

— Ես շնորհակալ եմ վալիից։

Այդ խոսակցության միջոցին բեկի ծառաները վրանի շուրջը պատած, և գետնի վրա նստոտած, զվարճանում էին բոլորովին այլ տեսակ խոսակցություններով։ Յուրաքանչյուրը պատմում էր իր կատարած քաջագործությունները, թե քանի մարդ է սպանել, որքան ավազակություններ է արել և որքան կնիկներ է փախցրել և այլն։

— Օսմանը իր գլխի մազերի համբարքով ոչխար է գողացել,— ասում էր Օմարը։

— Իսկ դու, Օմար, շատ բարի պտուղ չես,— պատասխանում էր նրան Օսմանը,— ես որքան ոչխարներ եմ գողացել, դու այնքան հայի աղջիկներ ես փախցրել։

— Շաբանը հայի աղջիկներ չէ սիրում, ասում է շուտով լաց են լինում,— մեջ մտավ մի ուրիշը։

— Այդ սուտ չէ,— խոսեց Շաբանը,— այդ քաջերի սիրաը կարծես շուշայից է շինած, հենց որ դիպչում ես, իսկույն կոտրվում է։ Բայց մերոնք, աստված է վկա, քարե սիրտ ունեն, գայլի, գազանի ճանկը գցի, էլի չեն լաց լինի։ Ես համբերել չեմ կարող, երբ կնիկները լաց են լինում, կարծես, արտասուքը նրանց է տված։

(Ի՞նչ բարբարոսական զգացմունք, հայ կնոջ արտասուքը բարկացնում է քրդին)։

— Մի ուրիշ բան էլ կա,— նրանց խոսքը կտրեց մի քուրդ, որ հասակով բոլորից ծեր էր.— այդ անհավատները երբեք ձեռը չեն վեր առնում իրանց անիծած կրոնից։ Ես, դուք գիտեք, որ երեք հատ պահում եմ, ուղիղն ասեմ, խիստ քիչ անգամ ծեծում եմ նրանց, բայց էլի տեսնում եմ, որ թաքուն ինչ-որ աղոթքներ են անում։ Բայց մի բան լավ է, որ նրանք եզան չափ գործ են կատարում, մերոնց նման շատ չեն քնում։

— Բայց ինչ սիրուն հարսներ ունի տանուտեր Խաչոն,— խոսեց մի երիտասարդ քուրդ առանձին ոգևորությամբ.— եթե այդ

հայը մեր բեկի քիրվան չլիներ, ես նրա հարսներից մեկին կգողանայի։

Ծառաների խոսակցությունը ընդհատվեցավ շների աղաղակով. հեռվից կրկին լսելի եղավ գիշերապահ հովիվների խորհրդավոր ձայնը։ Ծառաներից մի քանիսը զենքերը առած, վազեցին դեպի այն կողմը, որտեղից բարձրացավ աղմուկը։ Մոտենալով, խավարի միջից նրանք լսեցին հառաչանքներ— «ի սեր աստուծո, մեզ տարեք բեկի մոտ, մենք աղաչանք ունինք»... Շները փոքր էր մնացել, որ գզգզեին այդ ողորմելիներին, եթե ծառաները շուտով հասած չլինեին։ Գիշերով անհնարին է մոտենալ քրդերի օրաՀերին (օթևան, իջևան) առանց վտանգի հանդիպելու, մեկ էլ տեսար գիշերապահի նիզակը ցցվեցավ կողքիդ մեջ։

Անծանոթները մի քանի հոգի էին, նրանց բերեցին այն վրանի մոտ, որի մեջ բեկը նստած էր իր հյուրի հետ։ Վրանի առջև կախած լապտերների լույսով երևաց, որ նրանք վաճառականներ էին և բեռ տանող չարվադարներ, որոնց մեկի արյունաշաղախ գլուխը, մյուսի թևքը, երրորդի մարմնի մի այլ մասը, փաթաթած էին և արյունը դեռ հոսում էր վերքերից։

Բեկը լսելով դրսի աղմուկը, կանչեց ծառաներից մեկին և հարցրեց.

— Ի՞նչ է պատահել։

— Մի քանի վաճառականներ ձեզ մոտ խնդիրք ունին, ասում են, թե կողոպտեցին մեր քարավանը։

Տհաճության նման մի բան անցավ բեկի ուրախ դեմքի վրա, բայց նա ծածկելով իր ներքին վրդովմունքը, հրամայեց կանչել կողոպտվածներին։

— Զարմանալի բան է,— դարձավ նա դեպի մուղիրը,— «իմ ճողի» վրա երբեք այսպիսի անկարգություններ չեն պատահել. հիմա ի՞նչպես է եղել, որ կողոպտել են դրանց քարավանը։

Բեկը, սովորություն ուներ իր ցեղի բնակած երկիրն իր ճողը կոչել, թեև այնտեղ մի ափ հող անգամ որևիցե քրդի չէր պատկանում, այլ բոլորը անհաստատաբնակ բոշաների նման թափառում էին մի տեղից մյուս տեղ։

— Ավազակություններ ամեն տեղ պատահում են,— պատասխանեց մուղիրը հանդարտությամբ,— երկիրը առանց ավազակի չէ լինում։ Երկնքի մեջ էլ հայտնվեցան սատանաներ։

Արզրումի մեջ օր չէր անցնում, որ վալիի մոտ գանգատավորներ չգային։

Բեկը, խրախուսվելով մուդիրի շողոքորթություններից, ասաց.

— Հավատացեք, մուդիր, շեյխի գլուխը վկա լինի, որ ես այս կողմերը այնպես եմ պահում, որ երկնքի թռչունն էլ համարձակ չէ կարողանում «իմ հողի» վրայով անցկենալ։ Զարմանում եմ, ո՞ր սատանան պետք է կողոպտած լինի այդ խեղճերին։

Հայտնվեցան վիրավորված և արյունաշաղախ վաճառականները։ Նրանցից մեկը, որ փոքր-ինչ առողջ էր, առաջացավ և խոսեց.

— Ձեր ոտքերի փոշին համբուրելու ենք եկել, բեկ, վերևում աստծուն ենք ճանաչում, ներքևում ձեզ, մարգարեի սիրո համար, օգնեցեք մեզ. խեղճ վաճառականներ ենք. մեր քարավանը կողոպտեցին, մեր ընկերներից շատերին սպանեցին, մընացածներին ձեր բարի աչքերի առջև տեսնում եք, վիրավորված են, շատ չեն ապրի։ Ամենը, ինչ որ ունեինք, տարան, ոչինչ չթողեցին։

Վիրավորվածները, չկարողանալով իրանց ոտքի վրա պահել, նստեցին վրանի առջև, առողջները կանգնած մնացին։

— Որտե՞ղ կողոպտեցին ձեզ,— հարցրեց բեկը։

— Այստեղ, այստեղից ոչ այնքան հեռու լեռների մեջ կողոպտեցին մեզ. մեր քարավանը դուրս բերեցին ճանապարհից, քշեցին մի խուլ ձորի մեջ, այնտեղ մեր բոլորին կապկապեցին և ձգեցին մի փոսի մեջ, հետո սկսեցին հակերը ցրվել, ինչ որ լավ բան կար, բոլորը տարան։

— Օրվա ո՞ր ժամն էր։

— Կեսօրին մոտ էր։ Մենք մինչև իրիկուն կապված մնացինք այն փոսի մեջ։ Աստուծո ողորմությունը հասավ, մեզանից մեկը քանդեց իր կապերը և մեր կապերն էլ արձակեց, թե չէ պետք է մնայինք այն փոսի մեջ, և սովից մեռնելով, գազանների կերակուր դառնայինք։

— Դուք որտեղացի՞ եք, քարավանը որտեղի՞ց էր գալիս և ո՞ւր էր գնում,— շարունակեց բեկը իր հարցուփորձը։

— Ձեր ծառաները պարսկաստանցի վաճառականներ են. քարավանը բեռները ընդունեց Տրապիզոնում, որ Պոլսից նավով

էին բերված. անցանք Արզրումից մինչև այստեղ անվտանգ, պետք է շարունակեինք մեր ճանապարհը, և Բայազեդից Պարսկաստան գնայինք, բայց այստեղ այս դժբախտությունը պատահեց մեզ։ Մեր քարավանը բեռնավորված էր ամենաթանկագին ապրանքներով, բայց ոչինչ չթողեցին, ինչ որ տանելու էին, տարան, մնացածը այրեցին։

— Շեյխի գլուխը վկա լինի, որ այսպիսի բարբարոսություն ես առաջին անգամն եմ տեսնում,— դարձավ բեկը դեպի մուդիրը, որ հետաքրքրությամբ լսում էր վաճառականների պատմությունը։

— Դուք կարողացա՞ք ճանաչել ավազակներին,— հարցրեց մուդիրը ինքն ևս հարցուփորձի մեջ մտնելով։

— Ինչպե՞ս ճանաչեինք,— պատասխանեց խոսող վաճառականը.— բոլոր ավազակների երեսները կապած էին, միայն աչքերն էին երևում։ Եվ երբ մեզ բռնեցին, մեր աչքերն էլ կապեցին, հետո սկսեցին ապրանքները բաց անել։ Բայց այսքանը տեսանք, որ քրդեր էին։

— Քանի հոգի կլինեին,— դարձյալ հարցրեց մուդիրը։

— Հիսունի չափ։

— Դեպի ո՞ր կողմը գնացին։

— Մենք տեսնել չկարողացանք, ասեցի, որ մեր բոլորի աչքերը կապած էին, և մեզ ձգել էին մի փոսի մեջ, ձեռներից և ոտներից նույնպես կապված։

— Բավական է,— մեջ մտավ բարկությամբ բեկը ընդմիջելով մուդիրի հարցուփորձը,— ես բոլորը հասկացա։

Հետո նա դարձավ դեպի վաճառականները։

— Հիմա գնացեք և հանգստացեք, եթե ավազակները մեր կողմերի քրդերից լինեն, ես կաշխատեմ անպատճառ գտնել նրանց և ձեր մի չոփը (շյուղը) չի կորչի։ Իսկ եթե ուրիշ կողմերից եկած լինեն, այն ևս կարող եմ ցույց տալ. դուք անհոգ կացեք։ Ես չեմ ներում, որ «իմ հողի» վրա անիրավություններ գործվեն։

Վաճառականները գլուխ տվեցին բեկին և սկսեցին օրհնել բեկի կյանքը։

— Կրպո,— դարձավ նա իր ծառաներից մեկին,— տար այդ մարդերին քո վրանը և պատվիր, որպես արժան է պատվել աստուծո հյուրերին. շուտով կանչիր բժշկին, որ դրանց

վերքերը դարմանե. քեզ եմ հանձնում, եթե գանգատվելու լինեն, ձեռքիցս չես պրծնի։

Վաճառականները կրկին օրհնեցին բեկի կյանքը, կրկին գլուխ տվեցին և հեռացան։

Նրանց հեռանալուց հետո բեկը դարձավ դեպի իր հյուրը այս խոսքերով.

— Տեսնո՞ւմ եք, պատվելի մուդիր, ահա այսպիսի դեպքեր են պատահում, եկ դու հիմա իմացիր, թե ո՞ր սատանան է տարել դրանց ապրանքները։ Ես հավատացած եմ, որ ավազակները մեր կողմերի քրդերից չեն լինելու։ Ես սաստիկ պատժում եմ ավազակներին. իմ երկյուղից ոչ ոք չի համարձակվի այսպիսի բան անել. բայց գալիս են զանազան տեղերից, շատ անգամ Պարսկաստանից, և մեր կողմերում ավազակություն են անում։ Ո՞վ կարող է ճանաչել, երբ պարսիկը քրդի հագուստ է հագնում։ Այդ շատ անգամ պատահում է և մեզ գլխացավանք է պատճառում։ Այսուամենայնիվ, ես պետք է աշխատեմ. գուցե ինձ հաջողվի բռնել տալ ավազակներին։ Ահմե,— դարձավ նա իր հորեղբոր որդուն, որ ամբողջ ժամանակը այնտեղ լուռ նստած էր.— այս րոպեիս կվեր առնես քեզ հետ քսան ձիավոր մեր քաջերից, նախ քարավանի կողոպտված տեղը կգնաս, ավազակների ձիաների հետքերը կհետազոտես և շրջակա հովիվներից հարցուփորձեր կանես, մի խոսքով ամեն հնարք գործ կդրնես գտնելու չարագործներին, քեզ խրատներ պետք չեն, դու այդ բաները լավ ես իմանում։ Ես չեմ ների, որ «իմ հողի» վրա մարդիկ կողոպտեին, դա իմ անվանը պակասություն է բերում։

Ահմեն գիշերով ճանապարհ ընկավ կատարելու բեկի հրամանները։

— Ահմեն շան հոտառություն ունի, եթե ավազակները շատ հեռու գնացած չլինեն, անպատճառ կգտնի,— խոսեց բեկը։

— Երևում է...— պատասխանեց մուդիրը խորհրդավոր ձայնով։

Արդեն գիշերից բավական անցել էր, բեկը հրամայեց ընթրիք տան, կերան, խմեցին, հետո բարի գիշեր և հանգստություն մաղթելով իր հյուրին, նա խոստացավ, որ առավոտյան ճանապարհ կդնե մուդիրին, իսկ ինքը գնաց իր վրանը քնելու։

Բայց մուդիրը երկար անքուն մնաց և ինչ-որ բանի վրա մտածում էր...

Ը

Բեկի անձնական վրանը բաղկացած էր երկու մասներից, որոնցից մեկի մեջ զետեղված էր նրա կանանոցը, իսկ մյուս բաժինը նրա ընդունարանն էր։ Վրանի կազմվածքը պարզ էր, որպես առհասարակ լինում են խաշնարած քրդերի շադրները. նա կարված էր ամբողջապես սև կապերտից, որ գործված էր նրա կնիկների և աղախինների ձեռքով։

Բեկը մտավ ընդունարանը և հրամայեց իր հետ եկող ծառային, որ վարագույրները ցած թողնե ու գնա։ Այստեղ մենակ նստած, կարծես, մեկին սպասում էր նա։ Վրանի առաստաղից քարշ ընկած լապտերը ծխրտում էր աղոտ լույսով։ Կանանոցի բաժնից ձայն չէր լսվում, երևի բոլորը քնած էին։

Հայտնեցավ Կրպոն, այսինքն՝ նույն քուրդը, որին հանձնեց բեկը կողոպտված վաճառականներին հյուրասիրելու։

— Հանգի՞ստ են քո հյուրերը,— հարցրեց բեկը, մի խորհրդավոր ժպիտով նայելով ծառայի երեսին։

— Իմ բարի տիրոջ շնորհիվ հանգիստ են...— պատասխանեց խորամանկ քուրդը,— կերան, խմեցին, օրհնեցին քո կյանքը և քնեցին. գուցե երազի մեջ կտեսնեն, թե գտնելու են իրանց ապրանքները...

— «Դժոխքից մեռելը ետ չէ դառնում»...— ասաց բեկը հեգնությամբ,— որտե՞ղ պահեցիք ապրանքները։

— Մեր գյուղում, կաղ Ալոյի տանը։

— Լա՞վ բաներ են։

— Աստված ոչ մի անգամ այսպիսի թալան չէ ձգել մեր ձեռքը, բեկ, ոսկի, արծաթ, աբրեշումի և շալի գործվածքներ, մի խոսքով, ինչ որ ուզես, կգտնես։

— Ձեզ չտեսա՞ն գյուղը մտնելու ժամանակը։

— Ո՞վ պիտի տեսներ, գյուղում մարդ չի մնացել, բոլորը իրանց անասունների հետ գնացել են յայլաղ[1]. մնացել են մի քանի հայ ընտանիքներ, նրանք էլ կույր հավի նման, հենց որ մութը պատում է, երկյուղից իրանց խրճիթներից դուրս չեն գալիս, փակվում են, գլուխները դնում, քնում են։

— Որտե՞ղ պահեցիք ապրանքները։

[1] Յայլաղ նշանակում է անասունները արածացնելու տեղ, արոտատեղ։

— Ալոյի տանը, ասացի, այդ հին գայլի տան մեջ հարյուրավոր ծակեր կան, մեկի մեջ թրեցինք, դոնները կողպեցինք։ Սատանան էլ չի կարող գտնել։ Ահա բանալիները բերել եմ հետս,— ասաց նա և տվեց բեկին երկու բանալիներ։

— Ալոն մեր հավատարիմն է, վնաս չունի,— նկատեց բեկը,— առաջին անգամը չէ, որ նա այսպիսի ծառայություններ է անում մեզ։

Վերջացնելով իր կարգադրությունների պատմությունը, Կրպոն սկսեց նկարագրել, թե որպես հարձակվեցին քարավանի վրա, որպես կողոպտեցին, ով ինչ քաջություններ գործեց և այլն։

— Շատ ապրես, Կրպո, ես քո քաջությունները միշտ գնահատել եմ,— պատասխանեց բեկը։— Երբ այդ անպիտանին կհեռացնենք այստեղից (խոսքը մուդիրի մասին էր), ես կբաժանեմ կողոպուտը և ձեզանից ամեն մեկը կստանա իր արժանավոր բաժինը։

Կրպոն գլուխ տվեց և ոչինչ չխոսեց։

— Բայց ինձ տանջում է մի միտք,— ասաց տարավ բեկը ծանրությամբ,— ես կցանկանայի, որ այդ գործը չկատարվեր, քանի որ այդ մարդը այստեղ էր։

— Մուդիրի համա՞ր ես ասում։

— Այո՛, մուդիրի համար։

— Մեծ ցավ չէ,— խոսեց Կրպոն ծիծաղելով,— մենք մուդիր էֆենդիին այստեղից փառքով և ընծաներով ճանապարհ կդնենք, այնպես որ, նա շատ գոհ կգնա մեր մոտից։ Բայց ետևից երկու ձիավոր կուղարկենք, դեռ Արզրում չհասած, գլուխը կկտրեն և մեր տված ընծաները ետ կբերեն։ Եվ մուդիր էֆենդին էլ չէ կարող գնալ վալիի մոտ, որ պատմե, թե ինչ տեսավ այստեղ։ Լա՞վ եմ մտածել։

Բեկը իսկույն չպատասխանեց, նա լուռ մտածում էր։

— Սպանությունը, իհարկե, կկատարվի մեր երկրի սահմաններից դուրս, Արզրումի մոտակայքում,— ավելացրեց Կրպոն,— այն ժամանակ մեղքը մեզանից հեռու կլինի, ոչ ոք չէ կարող կասկածել մեր մասին։

— Հարկավոր չէ,— պատասխանեց բեկը բոպեական մտածությունից հետո,— եթե վալիին տեղեկություն տան, ես նրան ուրիշ կերպով կգոհացնեմ և նա սուս կկենա...

Կրպոն, որպես թե մի նոր բան միտը բերելով, ձեռքը տարավ իր լայն ծոցը և այնտեղից դուրս բերեց թաշկինակի մեջ փաթաթած մի արծաթե արկղիկ, որը զարդարած էր գեղեցիկ քանդակներով։ Արկղիկը տվեց բեկին, ասելով.

— Այդ բանը չթողեցի, որ Ալոյի տանը մնար, փոքր էր, կարող էր կորչել։

Բեկը բաց արեց արկղիկը, նրա մեջ իրանց պատշաճավոր տեղերում դարսված էին զանազան տեսակ կանացի զարդեր՝ մատանիներ, ապարանջաններ, մանյակներ— բոլորը ոսկուց և զարդարած թանկագին քարերով։

— Դրա տերը մի հրեա էր, ասում էր, որ այդ իրեղենները Պոլսում շինել է տվել մի պարսիկ իշխանի համար, որը այս ձմեռ պետք է հարսանիք աներ,— խոսեց Կրպոն ծաղրական կերպով։— Խեղճ հարսը զրկվեցավ իր զարդարանքից։ Հրեան շատ էր ճվճվում, որ իրեղենները նրան ետ տան. ես նրան հանգստացրի, որ ձայնը կտրի։

Հանգստացնելը Կրպոյի լեզվում սպանելու նշանակություն էլ ուներ։

— Հիմա կարող ես գնալ, Կրպո,— հրամայեց բեկը,— հյուրերիդ լավ պատիվ տուր։ Առավոտյան կմտածենք, թե ինչ պետք է անել։

Ավազակապետը գլուխ տվեց և հեռացավ։

Ընթերցողը նկատեց, որ Կրպոն նույն իսկ ավազակապետն էր, որ վաճառականների քարավանը կողոպտել էր, իսկ այժմ հյուրասիրում էր նրանց։ Եվ ավազակների այդ խումբը պատկանում էր Ֆաթթահ-բեկին, որի օգնությանը և պաշտպանությանը դիմել էին կողոպտված վաճառականները, որպես տեղային բարեկարգությանց վրա հսկողի և սահմանապահի։

Կրպոյի հեռանալուց հետո բեկը դեռ երկար նստած, զննում էր իր առջև դրած գեղեցիկ իրեղենները։ Նա ինքն էլ չէր հասկանում, թե ինչո՞ւ այն փայլուն գոհարները այնքան գրավում էին իրան։— «Ես այս արկղիկը կուղարկեմ Արզրումի վալիին. դրանից հարմար ընծա չեմ կարող գտնել նրա համար»,— մտածում էր նա։ Հանկարծ նրա միտքը փոխվեց, կարծես մի նոր արարած պատկերացավ նրա հիշողության մեջ, որ իր համար այս աշխարհի մեջ ամենից բարձր էր։ «Չէ՛, չէ՛, այդ գեղեցիկ մանյակը պետք է զարդարե «նրա» սիրուն պարանոցը. այդ թանկագին

զարդարանքները «նրա» հիանալի բազուկներին միայն արժանի են և այդ մատանիների համար են ստեղծված «նրա» հրաշալի մատները»,—ասում էր նա խորին զգացմունքով։

Վայրենի մարդը սիրո կախարդական ազդեցության ներքո փոխվել, աղնվացել և ավելի համակրելի էր դարձել։ Գաղանները ավելի կատաղում են, երբ սկսում են սիրել, բայց մարդը քընքշանում է, և դրանով այժմ բեկը որոշվում էր գաղաններից։

— Այդ զարդարանքները «նրա» համար, միայն «նրա» համար պետք է պահեմ...

Իր հափշտակության մեջ նա այն աստիճան մոռացել էր ինքն իրան, որ վերջին խոսքերը բոլորովին լսելի ձայնով արտասանեց, և բնավ չէր նկատում, որ մեկը կանանոցի վարագույրը բարձրացնելով, մոտեցավ նրան, արձանի պես լուռ կանգնած, հետազոտում էր նրա խորին հոգեզմայլությունները։ Դա նրա կինն էր, մանկահասակ Խուրշիդը, որ հայտնի էր ամբողջ ցեղի մեջ իր գեղեցկությունով։ Բայց մահը միայն կարող էր լինել այնքան գունաթափ, այնքան զայրացած, որպես այդ նազելի կինն էր այն րոպեում։ Կարծես, մի չար հրեշտակի նման, կանգնած իր ամուսնի ետևում, պատրաստվում էր մարմնից դուրս քաշել իր տղամարդի հոգին, երբ նա ետ նայեց, տեսավ նրան և սարսափեցավ։

Մի քանի րոպե երկու ամուսինները լուռ նայում էին միմյանց վրա, որպես երկու մենամարտողներ, որ կշռում են, թե դեպի ո՞ր կողմը պետք է ուղղել հարվածը։

Բեկի առջև դեռ դրած էր արծաթի արկղիկը իր փայլուն իրեղեններով։ Կինը մի հարևանցի հայացք ձգեց նրանց վրա և անցավ. նստեց վրանի մի կողմում, բարձի վրա։ Այդ իրեղենները, որ ամեն կնոջ կարող էին խելքից հանել, մանավանդ քրդի կնոջը, որ ամեն պսպղուն բանով երեխայի նման հրապուրվում է,—այդ գոհարները այժմ երևում էին նրան որպես ապակիի կտորտանքներ, որոնց սուր ծայրերը նշտարի նման ծակում էին նրա սիրտը։

Բեկը նկատելով նրա վրդովմունքը, ասաց։

— Ինչո՞ւ ես բարկացած, քեզ համար էլ բավին կհանեմ դրանցից։

— Ինձ համար մի պատան է հարկավոր, ուրիշ բան չեմ ուզում,— պատասխանեց կինը դողդոջուն ձայնով։

Լապտերի աղոտ լույսը ուղիղ թափվում էր նրա գունաթափ երեսի վրա, որ իր խռովության մեջ ավելի գեղեցիկ էր, որպես զայրացած հրեշտակի դեմքը։

— Ի՞նչ է պատահել, Խուրշիդ,—հարցրեց բեկը մեղմ ձայնով։—Չլինի՞ թե վատ երազներ ես տեսել։

— Ես երազներ չեմ տեսել, ես իմ աչքի առջև տեսնում եմ, թե ինչ է կատարվում...

Բեկը չէր կարող կասկածել, թե իր եղեռնական վարմունքը և իր ձեռքով կատարվող ավազակությունները և սարսափելի արյունահեղությունները կարող էին վրդովեցնել իր կնոջը։ Որովհետև նա գիտեր և համոզված էր, որ Խուրշիդը, որպես ամեն մի քրդի կին, նրան հանգստություն չէր տա, եթե իր ամուսին այրը կդադարեր ավազակություններ գործելուց։ Ուրեմն մի ուրիշ պատճառ պետք է լիներ, որ գրգռել էր նրա բարկությունը։

Խուրշիդը բեկի միակ կինն էր, թեև որպես մահմեդական, նրան արգելված չէր ունենալ մի քանի կնիկներ, բայց քրդերի սակավակնության սովորությունը մի կողմից, իսկ մյուս կողմից՝ կար մի այլ պատճառ, որ նա չկարողացավ երկրորդ-երրորդ կնիկներ ունենալ։ Խուրշիդը քրդերի շեյխի աղջիկն էր, մի հզոր մարդու, որի հոգևոր իշխանությունը տարածվում էր բոլոր ցեղերի վրա,—մի մարդու, որի մի խոսքը բավական էր ամենանշանավոր ցեղապետին իր պաշտոնից զրկելու։ Եվ բեկը իր բռնած դիրքով պարտական էր այդ մարդուն, որի միակ փեսան էր։ Ավելացնել շեյխի աղջկա վրա մի երկրորդ կին, դա կլիներ անպատվություն Խուրշիդի ազնվատոհմության դեմ։ Ահա այդ մտածությունները առաջ եկան բեկի մեջ, երբ նա տեսավ իր կնոջ տխուր-զայրացած դեմքը։

Բեկը այժմ բոլորովին գործնական և աշխարհային կետից էր նայում իր սիրտը լեցնող զգացմունքի վրա, բայց նրա հոգեբանական կողմը, կարծես թե, նա մոռացավ։ Նա այժմ անհընարին էր համարում իր կնոջ սերը փոխարինել մի ուրիշ սիրով, որովհետև նա շեյխի աղջիկն էր։ Բայց երբ նրա աչքերը կրկին հանդիպեցան իր առջև դրած փայլուն իրեղեններին—կրկին. նրա երևակայության մեջ պատկերացավ այն նազելի արարածը, որի համար մի քանի րոպե առաջ պատրաստում էր այդ իրեղենները։

Նա հասկացավ կնոջ վրդովմունքի պատճառը։ Այժմ նրա սրտին տիրեց միևնույն վայրենի կատաղությունը, որ հատուկ է գազաններին, երբ նրանք սիրահարված են լինում։

— Խուրշիդ,— ասաց նա զգալի ձայնով,— ի՞նչ ես պահանջում ինձանից։

— Ես պահանջում եմ, որ լուծված լինի մեր քաբինը (ամուսնական կապը),— ասաց նա հանդարտ կերպով,— ես այսուհետև քո կինը չեմ լինելու, առավոտյան ձի կնստեմ և կգնամ իմ հոր տունը։

— Ինչո՞ւ համար։

— Ես չեմ ների, որ շեյխի աղջկա տիկնությունը բաժաներ մի պիղծ հայ աղջիկ։

— Ես նրան կպահեմ որպես քո աղախին։

— Ես աղախիններ շատ ունեմ։

— Ես նրան սիրում եմ։

— Սիրի՛ր, որքան կուզես, բայց այդ սերը թանկ կնստի քեզ...

— Ի՞նչ կանես։

— Այդ ես գիտեմ...

— Դու ինձ սպառնալիքնե՞ր ես կարդում, անզգամ... Ես քեզ այս բոպեում ոտքերիս տակը կփշրեմ մի կավե ամանի նման։

— Մի՛ շարժվիր տեղիցդ. տեսնո՞ւմ ես...— ասաց կինը ցույց տալով ձեռքում բռնած փոքրիկ ատրճանակը։

Այժմ նա ոտքի վրա էր։

Բեկը սարսափեց։ Նա չէր սպասում մի այսպիսի վճռական քայլ իր կնոջ կողմից։ Մտքերի պատերազմը պահեց նրան բոպեական անշարժության մեջ, թեև նրա ձեռքը դրած էր գոտիում խրած դաշույնի վրա։

Այդ միջոցին կանանոցի բաժնից լսելի եղավ երեխայի լալու ձայն, որ նոր էր զարթնել քնից։ Դա մի խաղաղական ձայն էր, որ կարծես ամոքեց երկու ամուսինների կատաղությունը։ Մայրական սերը հաղթեց կանացի նախանձին, և նա շտապեց դեպի լացող մանուկը, ասելով այս խոսքերը.

— Ես դարձյալ վրեժխնդիր կլինեմ։

ԺԱ

Տանուտեր Խաչոյի ամուսինը իր վերջին զավակի՝ Ստեփանիկի ծնունդից հետո վախճանվեցավ։ Այնուհետև Խաչոն չամուսնացավ, թեև նրա հասակում դյուղացին առանց կնոջ չէ մնում։ Տան կառավարության մեջ հանդուցյալի տեղը բռնեց նրա մեծ հարսը՝ Սառան, որ հայտնի էր ամբողջ գյուղում որպես խելացի և լավ տանտիկին։ Ինքը ծերունին շատ անգամ դիմում էր նրա խորհուրդներին և տան բոլոր հարսները հպատակում էին նրա հեղինակությանը։

Մի առավոտ, երբ տան մեջ բոլորը զբաղված էին իրանց սովորական տնտեսությունով, մի աղախին, որ գնացել էր աղբյուրից ջուր բերելու, կուժը ուսին վերադարձավ, և մոտենալով Սառային, ասաց նրա ականջին. «Մի քուրդ աղջիկ դրսումը կանչում է քեզ»։

— Կանչիր այստեղ,— ասաց Սառան,— տեսնում ես, գործ ունեմ։

— Ներս չէ գալիս, ասում է շատ հաշկավոր խոսելիք ունեմ,— պատասխանեց աղախինը։

Սառան դուրս գնաց. աղջիկը կանգնած էր դռան մոտ։ Դա մի բարձրահասակ աղջիկ էր, ցամաք կազմվածքով և թուխ ու գրավիչ դեմքով։

— Մի քիչ հեռու գնանք. տե՛ս, այն ծառերի մոտ, այնտեղ մարդիկ ման չեն գալիս,— ասաց աղջիկը ձեռքը պարզելով դեպի այն կողմը։

Սառան նայելով անծանոթ աղջկա վառվռուն աչքերին, նրա սրտում ձգեց մի ակամա կասկած։ Ինչո՞ւ էր այդ վայրենին տանում նրան այն հեռավոր ծառերի մոտ, ուր մարդիկ չէին ման գալիս։ Ի՞նչ գործ ուներ իր հետ։

— Ներս եկ,— ասաց Սառան, բռնելով նրա ձեռքից,— գնանք մեր տունը, եթե ուզում ես, որ քո խոսքերը ուրիշները չլսեն, մեր տանը ծածուկ տեղեր շատ կան։

Անծանոթը առանց հակառակվելու ընդունեց տանտիկնոջ հրավերը։ Սառան տարավ նրան դեպի բակի մի կողմը, որ հովանավորված էր ուռենի ծառերով։

— Այստեղ կնստենք,— ասաց նա,— դու երևի ծառեր շատ ես սիրում։

Նրանք նստեցին միմյանց մոտ խոտերի վրա, որ խիտ կերպով աճել էին ածուի եզրում։

— Հիմա ասա, իմ սիրունիկ,— հարցրեց Սառան մտերմաբար բռնելով աղջկա ձեռքը,— ի՞նչ ունես ասելու ինձ։

— Ջավոյին ուղարկեց քեզ մոտ Խուրշիդի խանումը. դու խո ճանաչո՞ւմ ես Խուրշիդին, նա Ջավոյի տիկինն է։ Ջավոն ամեն օր փառք է տալիս աստծուն, որ այնպիսի լավ տիկին ունի։ Նա Ջավոյին չէ ծեծում ու ամեն անգամ իր հին շորերը տալիս է, ասում է, հագիր, Ջավո, դու լավ աղջիկ ես։ Բայց ո՞վ կասե հին շորեր են, տեսնո՞ւմ ես, բոլորը նոր է, բոլորը տիկինն է տվել։ Մի օր հագել է նա, մյուս օրը հին է տիկնոջ համար։

Եվ իրավ, քուրդ աղջիկը բավական մաքուր, և կարելի է ասել, բավական շքեղ կերպով էր հագնված։ Բայց նրա անկապ խոսքերից Սառան ոչինչ չհասկացավ։ Նա խոսում էր երրորդ դեմքով։ Այնքանը իմացավ Սառան, որ աղջկան կոչում են Ջավո, որ նա տիկին Խուրշիդի աղախինն է, որին ինքը առաջուց ճանաչում էր, որովհետև տիկինը իրանց տան բարեկամ Ֆաթ-թահ-բեկի ամուսինն էր։ Բայց թե ի՞նչ բանի համար էր ուղարկել տիկինը այդ կիսախելք աղախնին իր մոտ,— ահա այդ հարցը հետաքրքրում էր նրան։ Բայց ծանոթ լինելով գռեհիկ քրդուհիների բնավորությանը, Սառան թույլ տվեց նրան իր ձևով հաղորդել այցելության նպատակը։

— Քո անունը Ջավո է, հա՞, ի՞նչ սիրուն անուն է։

— Մայրս Ջավահիր էր կանչում, բայց տիկինը Ջավո է կանչում, ասում է Ջավահիրը շատ երկար է։

— Ես էլ քո տիկնոջ նման կկանչեմ. Ջավո, աղջիկս, ի՞նչ ասաց տիկինը, երբ քեզ ուղարկեց ինձ մոտ։

Բայց աղախինը միշտ շեղվում էր հարցին ուղղակի պատասխանելուց, երևի, նրա գլխում այնքան խառնված էին զանազան տարբեր մտածություններ, որ նա չէր կարողանում դասավորել, և չգիտեր, թե որը պետք է առաջ ասել և որը հետո։ Նա պատասխանեց.

— Ջավոյի տիկինը այս գիշեր կռվեց աղայի հետ։ Դու այդպես մի՛ մտիկ տուր, Ջավոն երեխա չէ, նա շատ սատանա է։ Երբ աղան տիկնոջ հետ կռվում էր, Ջավոն վարագույրի ետևում թաքնված բոլորը լսում էր։ Ա՜խ, որքան բարկացած էր

տիկինը, իր ծամերը փետում էր, շորերը պատառոտում էր։ Ափսո՜ս այն շորերը, Ջավոն էլ չէ կարող հագնել...

Նկատելով, որ թեթևամիտ աղջիկը հագուստի շատ սեր ունի, Սառան ասաց.

— Ջավոն խո կարել իմանում է կարկատեն, հետո կը-հագնե։

— Կարե՞լ, ինչպես չէ իմանում։ Տեսնում ե՞ս այդ մատները,— նա ցույց տվեց աջ ձեռքի մատները.— տեսնո՞ւմ ես, ա՜խ, քա՜նի անգամ Ջավոյի մայրը ասեղով ծակծկել է այդ մատները ու ասել, «գետինը մտնես, կար սովորիր»։

— Տեսնում եմ, որ շնորհալի աղջիկ ես, հիմա պատմիր, թե ի՞նչու համար էր կռվում աղան տիկնոջ հետ։

— Աղան ասում էր՝ պետք է մի նոր կնիկ բերեմ. տիկինը ասում էր՝ չէ՛, չպիտի բերես, ես ինձ կխեղդեմ, ասում էր, երբ նոր կնիկ կբերես։ Դա մեղք չէ՞. Խուրշիդի նմանը որտե՞ղ կա։ էլ ի՞նչ պետք է նոր կնիկը։

Սառայի համար փոքր առ փոքր պարզվում էր մթին հանելուկը։

— Խուրշիդի նմանը ոչ մի տեղ չկա,— պատասխանեց նա,— բայց դու այն ա՜սա, Ջավո, ի՞նչ նոր կին է ուզում բերել աղան։

— Ջավոյի տիկինը կմեռնի, երբ աղան նոր կին կբերե, և Ջավոն էլ նրանից հետո շատ չի ապրի...— ասաց աղախինը և նրա աչքերը լցվեցին արտասուքով։

— Ախար ո՞ւմը պետք է բերե,— կրկին հարցրեց Սառան, համբերությունը հատնելով։

— Դու այն հարցրու, թե տիկինը ինչ բանի համար ուղարկեց քեզ մոտ Ջավոյին, այն ժամանակ Ջավոն քեզ կասե, թե ումը կբերե։

— Լավ, ի՞նչ բանի համար ուղարկեց։

— Երբ գիշերը կռվեցին, առավոտը տիկինը ասաց. Ջավո, կգնաս մեր խաչո քիրվայի տունը, Սառային շատ բարև կանես, քեֆը կհարցնես ու կասես... (Ա՜խ, ես մոռացա, որ քո քեֆը հարցնեի)։

— Վնաս չունի։ Ի՞նչ ասաց տիկինը։

— Տիկինը ասաց. Սառային կկանչես մի ծածուկ տեղ ու

կասես... (Դրա համար էի քեզ կանչում այն ծառերի տակը, այնտեղ ծածուկ էր)։

— Այստեղ էլ ծածուկ է, մեզ ոչ ոք չի լսում։ Ի՞նչ ասավ տիկինը։

— Տիկինը ասաց, որ դուք Ստեփանիկին շուտով հեռացնեք և մի ուրիշ երկիր տանեք։ Թե որ մարդիկ չունեք, ասաց տիկինը, ես մարդիկ կտամ, որ տանեն, և ուր որ ուզում եք, այնտեղ հասցնեն։ Առավոտը ջեր չէր լուսացել, այդ խոսքերը ասաց տիկինը։ Երդվիր, ասաց, Ջավո, որ բերնումդ կպահես և ուրիշին չես ասի։ Ջավոն երդվեցավ։

Հետո աղջիկը պատմեց, թե տիկինը սպառնացավ, որ կսպանե Ջավոյին, եթե մի ուրիշ մարդու հայտնելու լինի այդ գաղանիքը և ավելացրեց, թե ինքը շատ է վախենում տիկնոջից, որովհետև նա կարող է սպանել, թե ինքը իր աչքով էր տեսել, որպես նա մի օր սպանեց սպասավորներից մեկին, բայց թե ի՞նչ բանի համար էր, Ջավոն այդ չի ասի... Բայց խեղճ Սառան չլսեց վերջին խոսքերից և ոչ մեկը։ Ստեփանիկի անունը լսածին պես, կարծես, կայծակով նրան հարվածեցին, նա սարսափեցավ, թուլացավ և ուշաթափ գետին պիտի գլորվեր, եթե քուրդ աղջկա զորեղ ձեռքը չբռներ նրան։ Միամիտ աղջկան թեև անհասկանալի էր ողորմելի կնոջ ցավալի խռովությունը, բայց զգաց, որ շատ դառն էր հաղորդած լուրը, և սկսեց մխիթարել նրան։

— Թո՛ղ Սառան դարդ չանի. Ջավոյի տիկինը քանի կենդանի է, չի թողնի, որ աղան այս տնից աղջիկ տանե։

— Ի՞նչ աղջիկ,— հարցրեց Սառան մի փոքր ուշի գալով,— մեր տանը հասած աղջիկ չկա։

— Աղան գիտե, որ Ստեփանիկը աղջիկ է։

Այդ միջոցին Ստեփանիկը բակում կերակրում էր իր այծյամին, որ մի քանի օր առաջ բեկը ընծայել էր նրան։ Արևի ճառագայթները ընկել էին պատանու գեղեցիկ դեմքի վրա, և հեռվից նկարվում էր նրա վայելչակազմ հասակը։ Սառան ցույց տվեց աղախնին, ասելով.

— Տեսնո՞ւմ ես, նա է Ստեփանիկը, լավ մտիկ տուր։ Նա աղջի՞կ է։ Ո՞վ է ասել աղային մի այդպիսի սուտ բան։

— Աղային ասել է ձեր քուրդ աղախիններից մեկը՝ Հիլո հովիվի կինը։ Տիկինը ասում էր, ես սպանել կտամ այն անզգամին։

— Հիլո.ի կինը սուտ է ասել. նա մեր տնից բան գողացավ, մենք նրան դուրս արեցինք. դրա համար սուտ է ասել։

Սառան նկատեց, որ Ջավոն թեև միամիտ աղջիկ էր, բայց այնքան հիմար չէր, որքան ինքը կարծում էր, բացի դրանից. տեսնելով նրա անկեղծ հավատարմությունը դեպի իր տիկինը, որ առհասարակ հատուկ է կիսավայրենի աղախիններին,— պատվիրեց նրան մի քանի խոսքեր, խնդրելով, որ հաղորդե իր տիկնոջը։ Նա ասաց, որ Ջավոն իր կողմից փոխադարձապես ուշչունե տիկնոջը և հարցնե նրա քեֆը։ Նա խնդրեց, որ Ջավոն հայտնե տիկնոջը Սառայի շնորհակալությունը այն տեղեկությունների համար, որ այսօր ստացավ։ Հետո Սառան խնդրեց հայտնել տիկնոջը, որ բոլորովին սխալ է կարծել, թե Ստեփանիկը աղջիկ է, այստամենայնիվ, քանի որ տիկինը ցանկանում է, որ Ստեփանիկին հեռացնեն այդ երկրից, նրա կամքը կատարված կլինի։ Հետո ավելացրեց Սառան, թե ինքը շատ կցանկանար մի անգամ գոնե տեսնվել տիկնոջ հետ, այդ բաների մասին լավ խորհրդակցելու համար, և խնդրում է, որ տիկինը ինքը կարգադրե, թե ինչ հնարքով կարող էր կատարվել այդ տեսությունը, որ բոլորովին գաղտնի մնար։ Վերջացնելով իր հանձնարարությունները, Սառան հարցրեց.

— Իմ խելացի Ջավո, կարո՞ղ ես այդ բոլորը առանց մոռանալու հաղորդել քո տիկնոջը։

— Ջավոն սուր միտք ունի, Ջավոն չի մոռանա,— պատասխանեց նա, աշակերտի նման մի առ մի կրկնելով Սառայի ասածները, թեև մի քանի սխալներ արեց, թեև նախադասությունները իր եղանակով ետ ու առաջ դարսեց։

Սառան ուղղեց նրա սխալները, և Ջավոն մի քանի անգամ կրկնեց իր դասը։

— Հիմա Ջավոն այնպես է ասում, որպես Սառան է ասում,— խոսեց ինքն իրան աղջիկը։— Ճանապարհին Ջավոն միշտ կկրկնե Սառայի խոսքերը, որ չմոռանա։

— Կարող են ուրիշները լսել,— նկատեց Սառան։

— Ջավոն այնքան անխելք չէ, Ջավոն մտքումը կխոսի։

Աղջիկը նայեց արեգակին, տեսավ, որ բավական թեքվել էր դեպի երեկոյան մուտքը։ Նա վեր կացավ, ասելով, որ այլևս

ուշանալ կարող չէ, որովհետև բավական երկար ճանապարհ ունի գնալու մինչև աղայի վրանները։

— Սպասիր, Ջավո, ես քեզ համար մի բան բերեմ, դու լավ աղջիկ ես։

Սառան դիմեց դեպի սենյակը։ Այդ միջոցին Ստեփանիկը, որ դեռևս իր այծյամով էր զբաղված, տեսնելով մենակ կանգնած աղջկան, մոտեցավ նրան։

— Դու գնո՞ւմ ես,— հարցրեց նրանից։

— Տեսնո՞ւմ ես՝ արևը շուտով կմթնի,— պատասխանեց աղջիկը ձեռքը դեպի երկինք տանելով։

— Դու մեր տունը եկար, բայց մի բան չկերար,— ասաց Ստեփանիկը։

— Ա՜խ, Ջավոն մոռացավ, որ քաղցած է. Ջավոն այսօր ոչինչ չի կերել։

— Ես քեզ համար ուտելու բան կբերեմ։

Քուրդ աղջիկը հափշտակվելով պատանու բարեսրտությամբ, գրկեց նրան և համբուրեց։ Ստեփանիկը վազեց դեպի տունը և բերեց նրա համար լավաշների մեջ փաթաթած մեղր և կարագ։

— Հիմա նստիր ու կե՛ր։

— Ջավոն ճանապարհին ուտելով կգնա։

Նույն միջոցին հայտնվեցավ Սառան, բերելով իր հետ մի գեղեցիկ մետաքսյա քող կարմիր գույնով, որ կազմում էր քուրդ կնոջ գլխի ամենաթանկագին զարդը։ Ջավոն տեսնելով՝ ուրախությունից մոռացավ ամեն քաղաքավարություն, և երեխայի նման վրա պրծնելով, խլեց Սառայի ձեռքից գեղեցիկ քողը։ Նա սկսեց նույն բոպեում նրանով փաթթել իր գեղեցիկ գլուխը, և որպես հայելու մեջ նայելով, դարձավ դեպի Սառան ու Ստեփանիկը, հարցրեց.

— Հիմա սիրո՞ւն է Ջավոն։

— Սիրուն է,— պատասխանեցին Սառան ու Ստեփանիկը։

— Դե՛, համբուրեցե՛ք Ջավոյին։

Սառան գրկեց և համբուրեց նրան։

— Դուն էլ, Ստեփանիկ։

Ստեփանիկն էլ հետևեց Սառայի օրինակին։

— Հիմա Ջավոն էլ ձեզ կհամբուրե։

Պարզամիտ քուրդ աղջիկը իր անկեղծ համբույրները մատուցանելեն հետո, ճանապարհ ընկավ դեպի բեկի վրանները։

ԺԲ

Ջավոյին ճանապարհ դնելուց հետո, Սառան դեռ նոր զգաց քրդուհու հաղորդած տեղեկությունների ամենասաստիկ զարհուրանքը։ Ստեփանիկը տակավին նրա մոտ կանգնած էր, և ամենևին չգիտեր, թե որպիսի վիճակ էր սպասում իրան։ Նա իր ձեռքը երեխայի նման դրեց Սառայի ուսին և հարցրեց.

— Ինչո՞ւ այդ քրդի աղջիկները այդպես անխելք են լինում։

— Նրանք անխելք չեն, զավակս,— պատասխանեց Սառան ծնողական գթով,— միայն կրթվում են ու մեծանում են այնպես, ինչպես սարերում աճում են վայրենի անասունները։

— Ինչպես իմ այծյամը,— ավելացրեց Ստեփանիկը։— Այդ քանի օր է ուտեցնում եմ, խմեցնում եմ, շատ անգամ գրկում եմ, համբուրում եմ, բայց էլի չի սիրում ինձ, երբ մոտն եմ գնում, փախչում է ինձանից։

Այդ խոսքերը ասելու միջոցին Սառան մի հայացք ձգեց բարեսիրտ պատանու վրա և նրա աչքերը լցվեցան արտասուքով։ Մինչև այսօր նա այնպես քննական աչքով դեռ չէր նայել այդ նազելի դեմքի վրա, այդ քնքուշ կազմվածքի վրա, որ ներկայացնում էր մանկության բոլոր գեղեցկությունները։ Նա երեսը շուռ տվեց և սրբեց արտասուքը, որ պատանին չնկատե։

Բայց պատանին դեռ հետաքրքրվում էր քուրդ աղջկանով։

— Նա քաղցած էր, Սառա, ասում էր, որ այսօր ոչինչ չէ կերել. ես մի կտոր հաց տվեցի մեղրի ու կարագի հետ, խնդրեցի որ այստեղ նստե և ուտե։ Բայց նա վեր առեց հացը, տեսա, ճանապարհին ուտելով գնում էր, երևի, շտապում էր, Սառա, այդպես չէ՞։

— Շտապում էր, նա շատ հեռու պիտի գնա։

— Մինչև որտե՞ղ։

— Մինչև կապույտ սարերը։

— Հիմա խո կմթնի՞, ինչպե՞ս պիտի անցկենա այնքան լեռներ, այն էլ ոտով, մենակ, առանց ընկերի... Սառա, ինչպե՞ս չէ վախենում նա։

— Չէ վախենում. նրանք այդպես սովորել են, գայլի ձագը ի՞նչ բանից պիտի վախենա...

Այդ միջոցին կանչեցին Սառային և նրանց խոսակցությունը ընդհատվեցավ։

Խեղճ կինը ամբողջ օրը անցկացրեց դառն մտատանջությունների մեջ։ Նա արբած կամ ուշքումիտքը ցրված մարդու նման, չգիտեր, թե ինչ էր անում. իր ուզած իրեղենը վեր առնելու տեղ մի ուրիշ բան էր վեր առնում, իր կամեցած կողմը գնալու փոխարեն՝ մի այլ տեղ էր գնում. անդադար սխալվում էր, անդադար հոգվոց էր հանում նա։ Ամբողջ օրը անցկացրեց տենդային անհանգստության մեջ։ Մորից որբ մնալով Ստեփանիկը, նրա սիրելին էր, նրա կուրծքի վրա և նրա ձեռքերի տակ էր մեծացել։ Այժմ սպառնում էր նրան մի ցավալի վիճակ։ Ո՞ւմ ասեր, ինչպե՞ս հայտներ այն բոլորը, ինչ որ լսեց այսօր քուրդ աղախնից։ Նա գիտեր և համոզված էր, որ Ստեփանիկի ծերունի հայրը, լսելով բեկի դիտավորությունները, չպիտի կարողանար դիմանալ այդ ցավին։ Ծերունին առանց դրան էս սրտումը մի անբժշկելի վերք ուներ... Մյուս կողմից, Սառան մտածում էր, որ թաքցնելը անհնարին և մինչև անգամ վնասակար է. պետք էր կանխապես հոգ տանել գալոց անբախտության առաջը առնելու համար։ Բայց ո՞ւմը հայտնել։

Այդ մտածություններով նա անցկացրեց ամբողջ օրը և տակավին մի վճռական եզրակացության չհասավ։ Երբ գիշերը նա առանձնացավ իր ամուսնի՝ Հայրապետի հետ, վերջինը հարցրեց.

— Սառա, դու այսօր ինչ-որ մի ուրիշ տեսակ ես երևում ինձ. ի՞նչ է պատահել, խո հիվանդ չես։

— Գլուխս մի քիչ ցավում է. այդ ոչինչ, կանցնի,— պատասխանեց կինը, չկամենալով սարսափեցնել իր տղամարդին մի ծանր հարվածով։

— Մի քիչ քացախ քսիր ճակատիդ։

— Ամեն բան փորձեցի...

Փոքր առ փոքր նախապատրաստելով իր ամուսնին, Սառան մտածում էր հաղորդել նրան իր այնօրվա տեղեկությունները. բայց չգիտեր, թե որպես պետք է սկսել, մինչև ինքը Հայրապետը առիթ տվեց, հարցնելով.

— Այսօր մի քրդի աղջիկ էր եկել մեր տունը, ո՞վ էր նա։

— Ֆաթթահ-բեկի կնոջ՝ Խուրշիդի աղախինն էր։

— Ամեն անգամ, երբ այդ անիրավը կամ նրա մարդիկը մեր տունն են գալիս,— խոսեց Հայրապետը դառն կերպով,— ես միշտ սպասում եմ մի չար բան։ Ա՜խ, ե՞րբ կլինի, որ այդ անպիտանների ոտքը մեր շեմքից կկտրվի...

— Բայց մինչև այսօր նրանցից կրած վնասները պետք է աստուծո բաթությունը համարել...— պատասխանեց կինը խորհրդավոր ձայնով։

Հայրապետը գունաթափվեցավ։ Սառան նկատելով այդ, ասաց.

— Բոլոր անբախտությունները մարդու համար են... ինչ ցավ, որ աստված ուղարկում է, մենք պետք է տանենք համբերությունով...

Խեղճ մարդիկ, ամեն անբախտության մեջ մխիթարություն են գտնում աստծուն և միայն աստծուն վերաբերելով այն բոլոր տառապանքները, որ կրում են այս աշխարհում։ Կարծես թե աստված անբախտությունների հեղինակ լիներ։

— Ի՞նչ կա,— հարցեց Հայրապետը սարսափելով.— ի՞նչ է պատահել։

Սառան սկսեց պատմել ինչ որ լսել էր քուրդ աղախնից։ Նրա պատմության ժամանակ խեղճ Հայրապետի դեմքը ամեն տեսակ գույներ և ամեն տեսակ արտահայտություն ընդունեց։ Նրա հոգեկան կրքերը փոփոխակի կերպով հաջորդում էին մինը մյուսին, և երեսի վրա կարելի էր նշմարել երբեմն սոսկում, երբեմն դառն ատելություն, երբեմն կատաղի բարկություն և երբեմն տխուր ափսոսանք...

— Ես այդ վաղուց սպասում էի...— խոսեց նա առժամանակյա խռովությունից հետո։— Խեղճ հայր, նա կմեռնի, երբ կլսե այդ բոլորը...

— Ես ամբողջ օրը դրա վրա էի մտածում,— ասաց Սառան.— նա կմեռնի, անպատճառ կմեռնի։

Երկու ամուսինների մեջ տիրեց լռություն. երկուսն էլ այն խորհրդածության մեջ էին, թե ինչ պետք էր անել։

— Հորս հայտնել հարկավոր չէ,— ընդհատեց Հայրապետը տիրող լռությունը։

— Բայց եղբայրներիցդ չէ կարելի ծածուկ պահել,— ասաց նրան Սառան։

— Եղբայրներիս ես կհայտնեմ։

— Ուրեմն ժամանակ կորցնելու չէ, հենց այս գիշեր հայտնիր,— շտապեցնում էր Սառան.— ամեն մի րոպե թանկ է մեզ համար, ինչ որ անելու եք, շուտով արեցեք, ո՞վ գիտե, էգուց ի՞նչ կպատահի։

Հայրապետի եղբայրներից մի քանիսը տանն էին, իսկ մի քանիսը դեռ չէին վերադարձել դաշտից։ Նա վեր կացավ, պատվիրեց իր կնոջը, որ հարսներից ծածուկ պահե իր տեղեկությունները, մինչև եղբայրների հետ խորհուրդ կանեին։ Նա առեց իր հետ տանը գտնվածներին և միասին դուրս գնացին։ Ճանապարհին հայտնեց նրանց, թե մի առանձին խոսելիք ունի, միայն պետք է բոլոր եղբայրները մի տեղ հավաքվեին։ Նա ընտրեց խորհրդի համար մի խուլ տեղ, իրանց ջրաղացի փոքրիկ անտառում, որովհետև տանը կարող էին խանգարել նրանց, և գուցե հայրը պատահմամբ կխառնվեր խոսակցության մեջ։

Երբ բոլորը հավաքվեցան, Հայրապետը հայտնեց նրանց ինչ որ լսել էր իր կնոջից։ Ինքնըստինքյան հասկանալի է այն դառն տպավորությունը, որ գործեց եղբայրների վրա հաղորդած լուրը։ Բոլորը քարացածի նման սառած մնացին իրանց տեղում։ Ոչ մեկը չգտավ մի բառ անգամ խոսելու։ Նրանց դրությունը նմանում էր այն տեսարանին, երբ ամառային զով երեկոյան պահուն, ճնճղուկների հազարավոր բազմությունը, կուշտ, ուրախ, օրական աշխատանքից հետո հավաքված ծառերի ոստերի վրա, ճլվլում են, չկչկում են և ամբողջ անտառը լցնում են մի կենդանի աղմուկով։ Հանկարծ նրանց մոտից սլանում է բազեն և ամբողջ խոռը միանգամից լռում է...

Այս տպավորությունը գործեց վեց եղբայրների վրա, երբ նրանք լսեցին Ֆաթթահ-բեկի անունը և նրա չար դիտավորությունը։

— Ահա՛ քրդի բարեկամությունը,— խոսեց եղբայրներից մեկը.— բեկը մեր երեխաների կնքահայրն է. նա էլ է մոռանում մեր տնում կերած աղ ու հացը։

— Ինչ բարեկամություն կարող է լինել գայլի և ոչխարի մեջ, աղվեսի և հավի մեջ,— խոսեց Հայրապետը զայրացած ձայնով։— Բայց մենք ոչխարից էլ վատ ենք, հավից էլ վատ ենք... ոչխարը գոնե եղջյուրներ ունե, երբեմն նրանցով կռվում է, հավը սուր եղունգներ ունե, երբեմն նրանցով ծվատում է... իսկ մենք մեզ պաշտպանելու համար ոչինչ չունենք... Մենք մարդկության կեղտն ենք, նրա կղկղանքն ենք, որ պետք է մաքրել, ոչնչացնել, որ մարդկությունը չապականվի...

Այդ խոսքերը այնպիսի մի մաղձային դառնությամբ արտասանեց նա, որ եղբայրները սարսափեցան։

— Ի՞նչ ենք մենք,— շարունակեց նա առաջին եղանակով.— ժիր և գործունյա մշակնե՞ր... և դրանով պարծենում ենք... բայց էշը, ձին, եզը, գոմեշը մեզանից ավելի ուժեղ են և մեզանից ավելի շատ են բանում... մենք բանվոր անասուններ ենք և ավելի ոչինչ...։ Քրդի նիզակը ավելի մեծ գործ է կատարում, քան թե մեր աշխատասեր արորը և գութանը... Մենք վաստակում ենք, նրանք ուտում են... մենք գեղեցիկ աղջիկներ ենք հասցնում, նրանք են վայելում մեր աղջիկների սերը... Ինչ որ գեղեցիկ է, ինչ որ լավ է, մեզ համար չէ... մեզ համար են պահված բոլոր տգեղությունները, որովհետև մի լավ բանի արժանավորություն չունենք...

— Քանի օր առաջ,— շարունակեց նա,— մի այսպիսի խոսակցություն ունեի հորս հետ. հայրս աշխատում էր ինձ համոզել, թե մեր դրությունը այնքան աննախանձելի չէ, որքան մենք կարծում ենք, և ցույց էր տալիս մեր օդի մեջ կանգնած հարբստությունը, որին բավական են մի խումբ քրդեր, մի արշավանք և ահա բոլորը ոչնչացավ։ Հիմա եկ, դու նրան ասա՛, թե տնից դուրս գալու, տանելու են քո սիրելի զավակը, և դու աչքերդ բացբաց պիտի նայես, և մի խոսք անգամ ասելու համարձակություն չպիտի ունենաս... Ա՞յդ էլ լավ դրություն է։ Այդպիսի դրության կարող է համբերել հայը միայն, անամո՞թ, անպատի՛վ հայը միայն... Ե՛կ, դու գնա՛, վագրի որջից քաշիր նրա ձագը, նա իսկույն քեզ իր բույնի մեջ պատառ-պատառ կանե։ Այսպես է և քուրդը։ Բայց մենք ի՛նչ ենք... մենք ոչինչ ենք...

Հայրապետի խոսքերը այն աստիճան բարկությամբ վառեցին իր եղբայրներից մի քանիսի սիրտը, որ նրանք միաձայն վճռեցին ընդդիմանալ, մեռնել և չտալ Ստեփանիկին քրդի ձեռքը։

— Այդ ոչինչ նպատակի չի հասցնի,— պատասխանեց խոհեմ և բազմափորձ Հայրապետը,— մենք կմեռնենք, բայց Ստեփանիկին դարձյալ կտանեն...

— Գոնե մեռնելուց հետո մենք չենք տեսնի մեր քրոջ անպատվությունը և հանգիստ կլինենք մեր գերեզմանում...— մեջ մտավ եղբայրներից մեկը, Ապոն։

Բայց մյուս կողմից հայտնվեցան հակառակորդներ։

— Մենք պիտի մեռնենք, այն էլ մի աղջկա համար, ու մեր երեխաներին անտեր պիտի թողնենք, դա ի՞նչ խելք է,— խո-

սեց եղբայրներից մեկը, որին կոչում էին Օհան... —Ես իմ ձեռները լվանում եմ այդ գործից. մեկ քույր ունենք, թող չլինի, դա մեծ ցավ չէ. ի՞նչու մենք մեր գլուխը պետք է մահի տանք նրա համար։

Եղբայրներից մի ուրիշը, որին կանչում էին Հակո, ավելի շահավոր և ավելի գործնական կետից նայելով Ստեփանիկի վիճակի վրա, սկսեց պաշտպանել Օհանի կարծիքը, ասելով.

— Ես դրա մեջ ոչինչ անբախտություն չեմ տեսնում, մի կողմից շատ լավ է, երբ մենք Ֆաթթահ-բեկի նման փեսա կունենանք, այն ժամանակ բոլոր հայերը մեզանից կվախենան։ Օրինակ ձեզ,— ավելացրեց նա,— մեր դրացի Մկոն, նա ի՞նչ մարդ է, տանը ուտելու հաց չունի, բայց որովհետև նրա աղջիկը մի քրդի կին է, դրա համար մենք ամենքս Մկոյից վախենում ենք, հետը խոսել չենք կարողանում, հենց որ մի բան ասենք, Մկոն կսովորեցնե քուրդ փեսային և քուրդը մի գիշեր կգա մեզ մեր տանը մեջ կմորթե։ Լավ չէ՞ մի այդպիսի փեսա ունենալ։

Այդ խոսքերը գրգռեցին Ապոյի բարկությունը, որ առաջարկում էր ընդդիմանալ, և մինչև անգամ մահ հանձն առնել, և պաշտպանել իրանց քրոջ պատիվը։ Նա ասաց.

— Հիսուս Քրիստոսը վկա, խելքդ կորցրել ես, Հակո, այդ ինչե՞ր ես խոսում, գիժն էլ այդպես չի խոսի։ Մենք պետք է մեր լույս հավատը կորցնենք, մեր քույրը անօրեն և անհավատ քրդի ձեռքը պետք է տանք, նրա համա՞ր միայն, որ հայերը մեզանից կվախենան և մեզ կպատվեն... Թո՛ղ չլինի այդպիսի պատիվը։ Բայց գիտե՞ս, որ երեսից կարելի է պատվեն, բայց սրտում ամեն մարդ կանիծե մեզ։ Ո՛վ է սիրում Մկոյին, որ աղջիկը քրդի տվավ։ Այդ ուրիշ բան է, որ նրանից վախենում են. շնից էլ, գայլից էլ վախենում են...

Եղբայրներից մեկը, որ բոլոր ժամանակը լուռ էր, իր հատուկ կրոնական փիլիսոփայությամբ, սկսեց հակառակել Ապոյին առաջ բերելով այն փաստերը, թե չէ կարելի փոխել աստուծո կարգադրությունները. ինչ որ լինելու է կլինի. թե աստված քուրդին քուրդ է ստեղծել, հային՝ հայ, քրդին զենք է տվել, հային՝ բահ. թե մեկը մյուսի տեղը բռնել չէ կարող, թե այդ բոլոր բաները աստուծո ձեռքումն են և վերջացրեց իր խոսքերը հետևյալ օրինակով.

— Ագռավը շատ կցանկանար սիրամարգի փետուրներ ունենալ, բայց ո՞վ կտա։ Աստված մեկին այսպես է ստեղծել, մյուսին՝ այնպես։

Ապոն պատասխանեց նրան.

— Դուն մոռանում ես, եղբայր, որ ագռավը և սիրամարգը զանազան թռչուններ են, բայց քուրդը և հայը երկուսն էլ մարդիկ են։ Քուրդը մորից զենքով չէ ծնվում. նա ծնվում է նույնպես մերկ, նույնպես թույլ, որպես հայը։ Ինչո՞ւ ես դու ամեն բան աստուծո վզին դնում, մի՞թե նա է քրդի ձեռքը զենք տվել, որ գա մեզ կոտորե, որ դա մեր աղջիկները մեր տնից քարշե ու տանե. մի՞թե նա է մեզ այդպես խեղճ և վախկոտ շինել։ Աստված այդ բաների մեջ չէ խառնվում. նա մեզ խելք է տվել, որ ընտրենք՝ ինչ որ լավ է, ինչ որ օգտավետ է։ Եթե դու կգնաս այս րոպեիս քեզ այդ գետը կգցես, աստված երբեք քո ձեռքից չի բռնի, որ արգելե, դու ինքդ ես քեզ կորցնում...

Հայրապետը, երեց եղբայրը, խորին լռությամբ լսում էր վիճաբանությունները։ Նա պատրաստ էր վեր կենալ և Ապոյի ճակատը համբուրել, բայց չկամեցավ վիրավորել մյուս եղբայրներին։

— Տեսնում եք,— ասաց նա ծանր կերպով.— մենք վեց եղբայրներ են հավաքված այստեղ, բայց միմյանց չենք հասկանում և միմյանց հետ չենք միաբանվում։ Բայց որքան դժվար է միաբանել մի ժողովուրդ և մի ամբողջ ազգ... Քանի որ մենք այսպես կլինենք, մեր վիճակը միշտ այսպես կմնա... Մեր գլխին կտան, մեր երեսին կթքեն, մեր կինը, մեր աղջիկը, մեր ապրանքը, մեր հողը մեր ձեռքից կխլեն... և մենք ստիպված կլինենք համբերել ամեն տեսակ անպատվությունների, ամեն տեսակ չարչարանքների, և մի ողորմելի գրաստի նման պետք է մեր թշնամու համար աշխատենք, որ նա գոհ և բախտավոր ապրի։ Իսկ մենք պիտի փառք տանք աստծուն, որ գոնե խնայում է մեր կյանքին, գոնե թույլ է տալիս մի չնչին զեռունի նման քարշ գալ երկրի վրա...

Խորին տխրությամբ վերջացնելով իր խոսքերը, Հայրապետը առաջարկեց, որ Ստեփանիկին հեռացնեն իրանց տնից և առժամանակ պահեն ս. Հովհաննու վանքում, մինչև հնար կգտնեն այնտեղից տանել, ռուսաց սահմանը անցկացնել, և այնտեղ ռուսաց հողի վրա նա ազատված կլինի։

Օհանը և Հակոն չհամաձայնվեցան մինչև անգամ այդ առաջարկությանը, ասելով, թե դա կլիներ մի ուրիշ տեսակ ընդդիմադրություն բեկի կամքին։— Թաքցնելով մեր քրոջը, ասացին նրանք, մենք պատճառ կտանք բեկի բարկությանը և հետևապես նրա վրեժխնդրությանը։

Նրանք առաջարկում էին թողնել Ստեփանիկին տանը, դարձյալ կրկնելով միևնույն խոսքերը, թե աստված ինչ որ կամեցել է, այն կլինի, թե աստուծո գրածը մարդ չէ կարող ջնջել և այլն...

Մի քանիսը պահանջում էին հայտնել իրանց հորը, և նա որպես տան մեծը և ընտանիքի գլխավորը, որպես կկամենա, թող այնպես կարգադրե։ Այսպես վիճաբանությունը երկարում էր և ոչ մի հետևանքի չէին հասնում։

Հանկարծ խորհրդի մեջ խառնվեցավ բուն, բոթաբեր և զզվելի բուն։ Ծառերի միջից լսելի եղավ նրա չարագուշակ ձայնը։ Բոլորը սարսափեցան։

— Լսեցեք, մենք ուղիղ էինք ասում,— ձայն տվեցին Օհանը և Հակոն,— ահա բուն ևս հաստատում է մեր խոսքը, վերջը վատ կլինի, եթե Ստեփանիկին հեռացնենք տնից։

Միայն Հայրապետն ու Ապոն մնացին հաստատ իրանց համոզմունքի վրա։ Խորհուրդը վերջացավ անորոշ կերպով, առանց մի վճռական եզրակացության հասնելու։

ԺԳ

Բայց ի՞նչ հանելուկ էր այդ. Ստեփանիկը առաջ տղա, իսկ այժմ աղջիկ։

Պարզենք այդ հանելուկը։ Բայց նրա բանալին թաքնված է մի փոքրիկ և տխուր պատմության մեջ։

Ծերունի Խաչոյի տան բակի մի խուլ կողմում, հովանավորված չորս կաղամախի ծառերով, գտանվում էր մի գերեզման։ Ոչ խաչ, ոչ տապանաքար, և ոչ մի տառ անգամ չկար նրա վրա։ Դա մի փոքրիկ քառակուսի թումբ էր, ծեփած գաչով, որ փոքրինչ բարձրացած էր գետնի մակերևույթից։ Շատ անգամ գիշերային լռության պահուն, կարելի էր տեսնել ծերունուն, տարածված այդ անշուք հողադամբարանի մոտ, թափում էր իր աչքերից հորդ արտասուքներ։ Տանեցիք նույնպես մի առանձին

տխրությամբ էին անցկենում այդ գերեզմանի մոտից, որ կարծես թե ամփոփում էր իր մեջ ամբողջ գերդաստանի ուրախությունը։ Ո՞վ էր թաղված այնտեղ։

Ծերունի Խաչոն ուներ մի աղջիկ Սոնա անունով. նա իր դեմքով շատ նման էր Ստեփանիկին։ Երբ Սոնան տասն և վեց տարեկան դարձավ, ամեն կողմից խնդրում էին նրա ձեռքը, ոչ միայն նրա համար, որ Սոնան մի հարուստ ընտանիքի զավակ էր, այլ առավել այն պատճառով, որ Սոնան շատ սիրուն էր։ Հայրը երկար տարուբերվում էր փեսաների ընտրության մեջ, չգիտեր որին տալ։ Բայց մի ցավալի անցք վերջ տվեց Սոնայի բախտավորությանը։ Մի անգամ գնաց նա դաշտ բանջար քաղելու, այլևս չվերադարձավ։ Շատ զրույցներ եղան նրա կորբստյան մասին, ոմանք ասում էին, թե գետումը խեղդվել է, ոմանք ասում էին, թե գազանները գիշատել են, ոմանք սնահավատությամբ հաստատում էին, թե չարքերը գողացել են, և ոմանք ասում էին, թե քրդերը հափշտակել են։— Ո՞րն էր ուղիղ, դժվար էր որոշել։ Շատ որոնեցին, շատ այս կողմ այն կողմ ընկան, բայց ոչինչ չօգնեց, և կորած աղջկա մասին ոչինչ տեղեկություն ստանալ չկարողացան, թեև նրա հայրը խոստացել էր լավ վարձատրություն, ով որ ճիշտ լուր կբերե։

Անցան մի քանի շաբաթներ։

Մի օր հայտնվեցավ Խաչոյի տանը մի քուրդ, բերելով իր հետ ջորու վրա բարձած մի դագաղ։ Նրա մեջը դրած էր Սոնայի մարմինը։

Քրդի պատմությունից երևաց, որ անբախտ աղջկան դաշտից առևանգել էր մի քուրդ ազնվական, որը թեև իր տոհմով այնքան երևելի չէր, բայց իր ցեղի մեջ հայտնի էր, որպես մի նշանավոր եղեռնագործ։ Սոնան ուրիշ հնարք չգտնելով այդ ատելի մարդու ձեռքից ազատվելու համար, իր գլխի արախչինի վրա կարած ոսկի դրամներից[1] մի քանիսը տալիս է մի պառավ քրդուհու, խնդրելով իր համար թույն գտնել։ Քրդուհին, կաշառված ոսկիներից, կատարում է նրա խնդիրքը։ Սոնան մեռնում է թույնից։ Քրդերը նրա մարմինը չեն ընդունում իրանց գերեզ-

[1] Ալաշկերտի և առհասարակ տաճկական Հայաստանի գյուղացի աղջիկների գլուխը ծածկված է լինում մի տեսակ արախչինով, որ ամբողջապես զարդարած է դրամներով. հարուստներինը ոսկով, իսկ աղքատներինը արծաթով։

մանատան մեջ, որովհետև հանդուցյալը մինչև իր վերջին շունչը ասում էր. «Ես քրիստոնյա եմ. ես հավատս չեմ փոխի»։ Մարմինը մնում է անթաղ։ Այդ հանգամանքից օգուտ է քաղում մի քուրդ, և իմանալով ում աղջիկն է նա, վեր է առնում նրա մարմինը և բերում հոր տունը, հույս ունենալով, որ մի բան կըստանա։

Ոչ սակավ մոլեռանդությամբ է վարվում անբախտի դիակի հետ և հայ եկեղեցականությունը։ Պատճառ բերելով, թե նա ինքնասպան է եղել, անօրենի ձեռքումն է մեռել, չէ խոստովանվել, չէ հաղորդվել և այլն, տերտերները թույլ չեն տալիս նրան թաղել հայոց գերեզմանատնում[1]։ Ահա այդ էր պատճառը, որ նրա գերեզմանը գտնվում էր հայրական տան մեջ։ Այն, որ հալածեց իր միջից եկեղեցին, ընդունեց իր մեջ ընտանիքը...

Ինքնըստինքյան հասկանալի է, թե այդ անբախտությունը ինչ դառնություն կբերեր Խաչոյի գերդաստանի վրա։ Բայց նա ունեցավ և ուրիշ ցավալի հետևանքներ։ Սոնայի մայրը, Ռեհանը, Ստեփանիկի ծնունդից հետո, չկարողանալով տանել իր դստեր այս օրինակ վախճանի դառն կսկիծը, օրըստօրէ հալվեցավ, մաշվեցավ և վերջապես մեռավ։ Եվ նույնիսկ Ստեփանիկի վիճակի վրա այդ անցքը ունեցավ իր առանձին ազդեցությունը։ Ստեփանիկը իսկապես աղջիկ էր, թեև տղայի անունով և տղայի հագուստով պահված։ Նրա մկրտության անունը Լալա էր։ Բայց ի՞նչ նպատակով նրան այսպես ծպտյալ կերպով էին մեծացնում։

Սոնայի մահը մի այնպիսի ցավալի տպավորություն թողեց հոր վրա, որ Ստեփանիկի ծնվելուց հետո, նա մի առանձին ոնահավատությամբ նախագուշակում էր նույնպիսի մի վախճան և այդ աղջկա համար։ Նրա կասկածանքը անտեղի չէր, մանավանդ իր երկրի վերաբերությամբ, ուր իր աչքով տեսել էր հարյուրավոր օրինակներ, ուր կույս աղջիկների հափշտակությունը մահմեդականներից համարյա սովորական էր դարձել։ Այդ պատճառով հայրը մտածեց Ստեփանիկին իբրև տղա ներկայացնել և տղայի անունով պահել, մինչև նրա չափահաս լինելը։ Հոր դիտավորության համաձայն էր և թշվառ մայրը, որ շուտով

[1] Այդ մոլեռանդությունը ինձ պատահել է տեսնել շատ տեղերում. զարմանալին այն է, որ ամբոխը այս կետի մեջ նույնպես համաձայնվում է կղերի կարծիքին։

վախճանվեցավ, և չկարողացավ սնուցանել իր զավակին։ Խաչոյի ընտանիքի մեջ այդ խորհուրդը պահվում էր որպես գաղտնիք ամենայն զգուշությամբ։ Օտարներից այդ գաղտնիքը գիտեին երեք հոգի միայն՝ գյուղի քահանան, կնքահայրը և տատը, որ վաղուց մեռած էր։

Լալան—մենք այսուհետև երբեմն իր իսկական անունով պետք է կոչենք Ստեփանիկին— այժմ տասն և վեց տարեկան էր. մի հասակ, որի մեջ մտնելուց հետո գյուղացի աղջկան երկար տանը չեն պահում։ Հայրը մտածում էր նրան մարդու տալ։ Բայց դժվարությունը նրանումն էր, որ Լալան իբրև տղա ճանաչված լինելով, իհարկե, ոչ ոք չէր խնդրելու նրա ձեռքը։ Բացի դրանից, հայրը ցանկանում էր, որ իր փեսան մի օտարերկրացի լինի, որ առնե, տանե և հեռացնե իր աղջկան, որպեսզի իր երկրում, իր ծանոթների մեջ չհայտնվի հոր գործ դրած խորամանկությունը Լալայի պահպանության մասին, թեև այդ երկրում այդ մի սովորական բան էր։ Բայց որտեղի՞ց պետք էր գտնել այդ պայմաններին հարմար մի մարդ Լալայի համար։

Հայրը աչք ուներ մի պարոնի վրա, որ իրան կոչում էր Թոմաս էֆենդի,— մի շատախոս, խաբեբա, կարճլիկ, կլորիկ մարդ, որ բացի մարդից ամեն բանի նման էր։ Որտեղացի՞ էր նա, հայտնի չէր. բայց իր ասելով, պոլսեցի էր և այնտեղ ամիրա ազգականներ ուներ։ Լալայի եղբայրները սաստիկ ատում էին այդ հրեշին, ոչ թե այն պատճառով, որ նա չափազանց այլանդակ դեմք ուներ, այլ առավել նրա համար, որ սաստիկ ժանտ և անգութ մարդ էր։ Նա բոլորովին իրան հեռու էր պահում հայ հասարակությունից, խոսում էր միշտ թուրքերեն և միշտ ընկած էր մուդիրների, գայմագամների և քուրդ բեկերի մոտ։ Նրանց անունով գյուղացի հայերին սպառնալիքներ էր կարդում և նրանց անունով պարծենում էր։ Թոմաս էֆենդին արքունի մուլթեզիմ էր, այսինքն՝ արքունի հարկերի և հասույթների կապալառու։

Մուլթեզիմը նույն նշանակությունը ունի գյուղացու համար, որպես հոգեհան հրեշտակը, դևը, սատանան մի անհավատի համար,— և որպես այն բաները, որոնցից դողում է, սարսափում է գյուղացին։ Բայց ինչ բանից ավելի վախենում է գյուղացին, նրան ավելի էլ հարգում է։ Եթե սատանան հայտնվեր գյուղացիների մեջ, նրան այնքան չէին ատի, կսկսեին շողոքորթել։ Մար-

դը միշտ այսպես վարվել է և վարվում է։ Մարդը իր ռամկության հասակում բարի և չար ոգիներին հավասար կերպով էր պաշտում, երկուսին էլ զոհ էր մատուցանում։ Զարմանալին այն է, որ չարը համեմատաբար ավելի շատ զոհեր էր ընդունում։ Բարին մերն է, մտածում էր ռամիկը, բայց չարին պետք է զոհացնել, որ չարություն չգործե...

Այս դատողությունները ի նկատի առնելով, կարելի է հեշտ բացատրել, թե ինչո՞ւ Թոմաս էֆենդին ընդունված էր ծերունի Խաչոյի ընտանիքի մեջ, որպես այս տան պատվավոր ծանոթներից մեկը։ Տանուտեր Խաչոն, որպես ժողովրդից ընտրված գյուղի գլխավորը, որպես պաշտոնական անձն, միշտ հարաբերություններ ուներ կապալառուի հետ, թե՛ տուրքերի, թե՛ հարկերի և թե՛ գյուղացոց մշակությունների տասանորդի պատճառով։ Եվ այս առիթով էֆենդին երթևեկություն ուներ Խաչոյի տանը, գալիս էր, շատ անգամ շաբաթներով մնում էր այնտեղ և հավաքում էր իր կապալառության վերաբերյալ արդյունքները։ Տանուտերի «օդան» այս տեսակ հյուրերի համար մի կատարյալ պանդոկ է գյուղերում։ Գայմագամը, մուդիրը, մուլթեզիմը, «հոգևոր պտուղ» հավաքող վարդապետը, վերջին զափթիան և մինչև անգամ վերջին մուրացկանը,— բոլորը այնտեղ էին վազում։ Այդ հասարակությունը իրանց հատկություններով շատ չեն զանազանվում միմյանցից...

Ջրաղացի անտառում, ծերունի Խաչոյի որդիների գիշերային անհաջող խորհրդի առավոտն էր, երբ հայտնվեցավ Թոմաս էֆենդին Օ... գյուղում, իր հետ բերելով երկու զափթիաներ, որոնք միշտ անբաժան էին լինում նրանից։ Նա եկել էր ոչխարների և այլ անասունների հարկերը նշանակելու, որովհետև արդեն դարուն էր և գյուղացիները պետք էր իրանց անասունները «յայլաղ» (արոտատեղ) տանեին արածացնելու և ամառվա տոթերից հեռու պահելու համար։ Վերջացնելով իր գործը, Թոմաս էֆենդին տանուտեր Խաչոյի հետ դիմում էին դեպի նրա տունը։ Սուլթանը երբեք այն հպարտությամբ չէ անցնում Կ. Պոլսի փողոցներով, երբ գնում է Այա-Սոֆիայի մզկիթը իր ուրբաթ ավուր աղոթքը մատուցանելու, որպես այդ փոքրիկ մարդը անց էր կենում Օ... գյուղի փողոցներով։ Մերկ փորը դուրս ցցած, քիթը դեպի վեր բարձրացրած, նա անդադար նայում էր այս և այն կողմը, տեսնելու, թե որքան գյուղացիներ գլուխ են տալիս

նրան։ Նա այսօր հագած ուներ մի տեսակ մունդիր, բազմաթիվ դեղին կոճակներով, և հավատացնում էր, թե վեզիրն է ուղարկել նրա համար։

Մտնելով տանուտերի օդան, նա առանց սպասելու, հրամայեց, որ սուրճ տան, և ինքը կարգադրեց, թե ինչ պետք էր պատրաստել ճաշի համար։ Արքունի կապալառուն ինչ տուն որ մտնում է, իրան տան տեր է համարում, եթե տանեցիք չկատարեն նրա հաճույքները, նա խստիվ պահանջել գիտե...

Երբ նստեցին, ծերունի Խաչոն ասաց նրան.

— Դուք, էֆենդի, իզուր այսօր ծեծել տվեցիք այն խեղճ գյուղացուն։

— Սխալվում եք, տանուտեր,— պատասխանեց նա իր կատվի ձայնով.— գյուղացուն պետք է ծեծել և շատ ծեծել. «էշին մինչև չծեծես, բեռը չի տանի»։

— Բայց գյուղացին մեղ չուներ։

— Այդ միևնույն է, մեղ ուներ, թե չուներ։ Այսօր մեղ չուներ, էգուց կարող է ունենալ։ Դու չե՞ս լսել Նասրադին խոջայի առակը. նրա էշերից մեկը կապը կտրեց ու փախավ, նա փոխանակ փախչող էշի ետևից վազելու, որ նրան բռնե և պատժե, եկավ, սկսեց ծեծել մյուս էշին, որ իր կապը չէր կտրել և իր տեղումը հանգիստ կանգնած էր։ Նրան ասացին, թե այդ խեղճը ի՞նչ մեղ ունի, որ ծեծում ես։ Խոջան պատասխանեց.— դուք չեք իմանում, եթե դա՛ իր կապը կտրելու լինի, ինչպե՛ս կփախչի։

— Բայց ինձ հայտնի է, որ գյուղացին սուտ չէր խոսում, ես գիտեմ, որ նրա ոչխարների մեծ մասը քրդերը տարան,— ասաց ծերունին, դարձյալ չհամոզվելով, թե հանգիստ և անմեղ էշին պետք էր պատժել հանցավորի փոխարեն։

— Այդ ես էլ գիտեմ, տանուտեր, որ նրա ոչխարների մի մասը քրդերը գողացել են,— պատասխանեց կապալառու էֆենդին ծանրությամբ։— Բայց եթե ընդունելու լինեմ այսպիսի հաշիվներ, «ջուրը կգա, ջրաղացը կտանե», և ես այն ժամանակ իմ գրպանից պետք է վճարեմ արքունի հարկը։ Անցյալ տարվա ցուցակում այդ գյուղացու անունով 100 հատ ոչխար է գրված, ես հարյուրի հարկը կպահանջեմ. բայց եթե նրանցից մի 50 կամ 60 հատ քրդերը գողացել են, ես ինչո՞վ եմ մեղավոր, քրդերը ամեն օր գողանում են, եթե մարդ են, թող թույլ չտան, որ գողանան։

— Պետք է խղճմտանքով խոսել, էֆենդի,— պատասխանեց նրան տանուտերը.— դուք իրավունք ունեք պահանջել գյուղացու այն ոչխարների հարկը միայն, որքան նա պատրաստ ունի իր ձեռքում. կորածի, մեռածի և կողոպտվածի համար նա պարտավոր չէ հարկ վճարել։

— Ես ինչո՞վ կարող եմ ստուգել, թե գողացել են,— պատասխանեց կապալառուն բարկացած նայելով.— գյուղացին կարող է թաքցնել իր ոչխարները և ինձ ասել, կորել են, գողացել են, մեռել են, ինչ գիտեմ, հազար ու մեկ այս տեսակ պատճառներ կարող է բերել։

Տանուտերը ոչինչ չխոսեց։

— Բայց դուք չեք տեսել այդ նոր ֆիրմանը, որ սուլթանը ուղարկել է ինձ. եթե գիտենայիք նրա մեջ ինչ է գրված, այսպես չէիք խոսի, տանուտեր։

Եվ նա դուրս բերեց իր ծոցից մի մեծ ծրար, հանեց նրա միջից թղթերի մի փաթոթ, և զգուշությամբ մինը մյուսի ետևից բաց անելով, վերջապես դուրս բերեց մի ահագին կարմիր թերթ, խոշոր և զանազան ձևի տառերով տպված։

— Ա՛ռ, կարդա՛,— տվեց նա տանուտերի ձեռքը։

Տանուտերը զարմացած նայում էր խոշոր տառերի վրա (ինչ որ մեծ է, ինչ որ խոշոր է ոամկի համար զարմանալի է) և եթե նա թուրքերեն կարդալ գիտենար, կհասկանար, որ այդ ահագին կարմիր թերթը ուրիշ ոչինչ չէր, եթե ոչ թատրոնական աֆիշա, որ տպված էր մի դերասանուհու բենեֆիսի համար։

Բայց Թոմաս էֆենդին նկատեց նրան.

— Տանուտեր, այսպես անքաղաքավարի կերպով չեն վարվում սուլթանի ֆիրմանի հետ, երբ ֆիրմանը ձեռք են առնում, նախ համբուրում են և ապա սկսում են կարդալ։

Ծերունին համբուրեց և խոնարհությամբ ետ տվեց ֆիրմանը։

— Հազար անգամ ասում ես գյուղացիներին, թե հիմա հրամանը այսպես է, թե հարկերը ավելացրել են, դարձյալ չեն հասկանում, դարձյալ իրանց գիտցածն են ասում,— խոսեց կապալառուն մի առանձին վրդովմունքով։— Ես էլ մարդ եմ, համբերություն հասնում է, սկսում եմ ծեծել։ Ախար էշը որ էշ է, մի անգամ ցեխումը խրվում է, մյուս անգամ եթե վիզն էլ կտրես, այնտեղից չի անց կենա։ Բայց այդ գյուղացիները էշի

խելք էլ չունեն։ (Թոմաս էֆենդին սովորություն ուներ իր օրինակները և համեմատությունները միշտ էշերի կյանքից վեր առնել)։ Լսիր, մի բան պատմեմ, տանուտեր Խաչո, դու խո իմանում ես, որ Ալաշկերտի շատ գյուղերը իմ ձեռքումն են. մի անգամ մի գյուղացի հունձը հնձել էր, կալը կալսել էր և ցորենի մաքուր շեղջը կիտել էր կալումը. ինձ կանչեց, որ չափել տամ և տասանորդը վեր առնեմ. ես պահանջեցի, որ տասանորդի փոխարեն զուտ փող տա։ Նա պատասխանեց, թե փող չի կարող տալ, և ավելացրեց, թե դուք ցորյան ստանալու իրավունք ունեք և ձեզ պատկանող ցորյանը ստացեք։ (Ես երբեք համբերել կարող չեմ, երբ էշ գյուղացին իրավունքի վրա է խոսում)։ Մտքումս ասացի, ես քո հերը կանիծեմ և քեզ ցույց կտամ, թե ինչ բան է իրավունքը։ Կալի ցորենը չչափեցի և թողեցի այնպես մնաց։ Անձրևները եկան, և ցորենը խոնավությունից ծլեց, այրվեցավ, փտեց և ոչնչացավ։ Այն ժամանակ գնացի և ասացի, թե ես իրավունքից չեմ անց կենա, տուր ցորենը։ Բայց որտեղի՞ց պիտի տար, ցորենը դարձել էր մի բորբոսած մոխրի կույտ։— Հիմա տասանորդի փոխարեն փող տուր,— ասացի նրան։ Փող չուներ, մի լավ ծեծ տվեցի, հրամայեցի՝ եզները ծախեցին և փողը ստացա։ Հիմա այն գյուղացին այնքան փափկացել էր, որ ձիու բեռը կտանե և մի հատ էլ չի կոտրի։ Ինձ տեսնելիս, մի վերստ հեռավորությամբ կանգնում է և գլուխ է խոնարհեցնում։ Այսպես պետք է վարվել մարդերի հետ։

— Դա խղճմտա՞նք է,— հարցրեց ծերունի Խաչոն այնքան ցած ձայնով, որ կարծես վախենում էր և չէր ուզում, որ իր ձայնը լսվի։

— Ի՞նչ ասել է խղճմտանք,— պատասխանեց կապալառուն արհամարհական կերպով.— կառավարությունը ուրիշ բան է, խղճմտանքը ուրիշ բան։ Դու թեև քառասուն տարի այս գյուղի կառավարիչն ես, բայց դեռ չես հասկացել, թե որպես պետք է կառավարել։ Դու խո լսեցիր Նասրեդին խոջայի առակը էշերի վերաբերությամբ. բայց ես քեզ մի ուրիշ օրինակ էլ կբերեմ։ Տեսնում ես, մի փաշա նշանակվել է մի գավառի կառավարիչ. հենց որ նա անցնում է իր պաշտոնի գլուխը, իսկույն բռնել է տալիս մի քանի հանդիպած մարդիկ, որպես հանցավորներ, բանտարկում է և մինչև անգամ գլխատել է տալիս։ Գուցե այն մարդիկը ամենևին հանցավոր չէին, բայց փաշային պետք էր մի

քանի մարդիկ ոչնչացնել ժողովուրդը վախեցնելու համար։ Ահա ի՞նչ է նշանակում կառավարություն։ Ժողովուրդը միշտ պետք է երկյուղի մեջ պահել։ Եթե ես այն գյուղացու կալի հետ այնպես չվարվեի, եթե նրա ցորենը չոչնչացնեի, մյուս գյուղացիներն էլ ինձ մարդու տեղ չէին դնի, և ես այնուհետև չէի կարող ուզածս առնել։

Թոմաս էֆենդին այնպես հասարակ կերպով էր խոսում իր վարմունքների մասին, որպես քուրդը պարծենալով պատմում է իր գործած ավազակությունները։ Ի՞նչ զանազանություն կար այդ հայի և Ֆաթթահ-բեկի մեջ։ Այն զանազանությունը միայն, որ մեկը ցած և խորամանկ հարստահարիչ էր, իսկ մյուսը — քաջ և մեծահոգի ավազակ։

Ահա այդ երկու անձինքներից մեկի հետ պիտի կապվեր Թշվառ Լալայի վիճակը։ Բայց նրանից ոչ ոք չէ հարցնում, թե ո՞ւմն է սիրում նա...

ԺԴ

Թոմաս էֆենդին դեռ մի քանի օր մնալու էր ծերունի Խաչոյի տանը. նա իր գործերը Օ... գյուղում բոլորովին չէր վերջացրել։

Ծերունի Խաչոյի տանը ամեն տարի մի քանի անգամ հայտնվում էր մի ուրիշ հյուր ևս. դա մի երիտասարդ էր Արարատա գավառից, որ գնում էր Խաչոյից ոչխարներ, եզներ, բուրդ, պանիր, յուղ և տանում էր Ալեքսանդրոպոլի կամ Երևանի կողմերում ծախելու։ Իսկ փոխարենը նա բերում էր այնպիսի վաճառքներ, որ այս կողմերում չկային, օրինակ, հագուստի համար զանազան տեսակ գործվածքներ, չիթ, կտավ, մահուդ, թեյ, շաքար, կոֆե և այլ զանազան մանրուքներ։ Քաղաքներից հեռու գտնված գյուղերի համար, որպես էր Օ... գյուղը, մեծ կարևորություն ունեն այս տեսակ մանր վաճառականները։ Նրանք տալիս են գյուղացուն այն, ինչ որ պետք է նրա համար, և փոխարենը առնում են այն, ինչ որ գյուղացին ինքը հեռու տեղեր տանելու և վաճառելու համար շատ արգելքներ ունի, մանավանդ մի այնպիսի երկրում, ուր քարավանի բանուկ ճանապարհներ չկային, և ավազակների երկյուղից հարաբերությունները համարյա կտրված էին։

Ամեն անգամ, երբ հայտնվում էր այդ երիտասարդը, մեծ ուրախություն էր պատճառում ծերունի Խաչոյի տանը։ Նա այն աստիճան ընտանեցած էր, որ բոլորը վարվում էին նրա հետ, որպես իրանց գերդաստանի անդամներից մեկի հետ։ Մտնելով Օ... գյուղը, նա իր փոքրիկ քարավանը, որ բաղկացած էր մի քանի բեռնակիր գրաստներից, ուղիղ քշում էր դեպի ծերունու տունը, բեռները ցած էր բերում և այնտեղ շաբաթներով մնում էր, մինչև իր առևտուրը վերջացնելով կրկին ճանապարհ էր ընկնում։

Թոմաս էֆենդու գալուց մի օր հետո հայտնվեցավ երիտասարդը, նա հանդիպեց կապալառուին Խաչոյի տան դռանը, երբ իր բեռները ցած էր բերում ձիաներից։

— Ա՜, դու այստեղ ե՞ս,— ասաց երիտասարդը մոտենալով էֆենդուն, և անդադար երեսը խաչակնքելով։— Ախ, սատանայի երես տեսա, էլ այս անգամ իմ գործը չի հաջողվի... հանուն հոր և որդվո...

Էֆենդին խիստ ախորժակով ծիծաղելով, բռնեց երիտասարդի ձեռքը, և ուղիղ նրա երեսին նայելով ասաց.

— Խե՜նթ ես, խե՜նթ, ես հազար անգամ ասել եմ, որ դու խենթ ես։ Լավ, դու այն ասա՛, ոռմ բերե՞լ ես ինձ համար։

— Մի քիչ զահրումար եմ բերել, որ խմես, և այդ խեղճ գյուղացիները քո ձեռքից ազատվեն,— պատասխանեց երիտասարդը նույնպես ծիծաղելով։

Այնտեղ հավաքված էին մի քանի գյուղացիներ, որոնք օգնում էին երիտասարդին բեռները ձիերից ցած բերելով և ներս տանելով։ Էֆենդին նկատեց, որ անպատշաճ էր խենթի հետ գյուղացիների առջև այս տեսակ կատակներ անել, շուտով հեռացավ, ասելով, որ գյուղումը գործեր ունի, և ավելացրեց, թե ճաշը միասին կուտեն։

— Քեզ հետ հաց ուտելը մեղք է,— ասաց նրան երիտասարդը։

— Ախար էշի պոչը ոչ կերկարի և ոչ էլ կկարճանա, քո խելքն էլ այդպես է,— պատասխանեց կապալառուն։— «Էշին Երուսաղեմ էլ տանես, էլի էշ կմնա», երբեք մուղդուսի չի դառնա,— ավելացրեց նա։

— Ա՜խ, երբ որ դու սկսեցիր քո էշավարի առակները, էլ վերջ չկա,— ասաց երիտասարդը և երեսը շուռ տվեց։

Էֆենդին հեռացավ։

Արդեն Ծերունի Խաչոյի տան մեջ մեծից մինչև փոքրը լսել էին, որ Վարդանը եկել է — այսպես էր երիտասարդի անունը — և անհամբերությամբ սպասում էին, մինչև նա իր բեռները կբաց աներ։ Ո՞վ ասես նրան մի բան չէր պատվիրել բերելու իր համար։ Նա բեռները տարավ և դարսեց տան սրահի մեջ, և ահա վրա թափվեցավ Խաչոյի տան ամբողջ բանակը։ Մեկը հարցնում էր. «Բերեցի՞ր իմ պատվիրած կոշիկները», մյուսը հարցնում էր. «Բերեցի՞ր իմ պատվիրած գլխարկը»— մի խոսքով, ամեն կողմից մի ձայն էր լսվում, և ամեն կողմից պահանջումներ էին անում, և մինչև անգամ փոքրիկ երեխաները, նրա փեշերից քոնած, զանազան բաներ էին պահանջում և հանգստություն չէին տալիս։

— Բերել եմ, բերել եմ,— պատասխանում էր երիտասարդը,— ամենիդ ուզածը բերել եմ։

— Դե՛ տուր, դե՛ տուր,— ձայն էին տալիս ամեն կողմից։

— Տո սատանի լակոտներ,— ասում էր երիտասարդը,— թողեք մի հանգստանամ, հետո բեռներս բաց կանեմ, ինչ որ ուզում եք կտամ։

— Հիմա, հիմա,— կրկնում էին ամեն կողմից։

Տանեցիք այնքան սովորել էին Վարդանին, որ այլևս ուշադրություն չդարձրին նրա վրա, և սկսեցին իրանք բաց անել հակերը։ Երբ կապերը և փաթոթները արձակեցին, այնուհետև բոլորը վրա թափված, սկսեցին խլել պահանջած իրեղենները։ Երիտասարդը հեռու կանգնած բարեսրտությամբ նայում էր նրանց ուրախության վրա և ծիծաղելով ասում էր.

— Ա՜, ձեր տունը չքանդվի, քրդերն էլ այդպես չեն թալանում վաճառականի ապրանքները։

Բայց միայն մեկը, որ մոտ չեկավ նրա հակերին, դա Ստեփանիկը կամ այժմյան Լալան էր։ Նա հեռու կանգնած, նայում էր և երբեմն ժպտում էր։ Երիտասարդը մոտեցավ նրան և հարցրեց։

— Դու ինչո՞ւ մի բան չես վեր առնում։

— Ի՞նչ վեր առնեմ...— պատասխանեց նա կարմրելով։

Եվ իրավ, ի՞նչ վեր առնի նա։ Նրա կեղծ և ծպտյալ տղայությունը վաղուց արդեն ձանձրացրել էր նրան, իսկ աղջկա պատկանող մի բան նա վեր առնել կարող չէր։ Վարդանը հասկացավ նրա միտքը և հազիվ լսելի ձայնով ասաց.

— Ես քեզ համար մի լավ բան եմ բերել։

— Ի՞նչ բան,— հարցրեց աղջիկը նույնպես մեղմ ձայնով։

— Հետո կտամ, բայց ոչ ոք պետք է չտեսնե...

Լալան կրկին ժպտաց և հեռացավ։

Վարդանը քսան և հինգ տարեկան երիտասարդ էր, բարձրահասակ, ամուր կազմվածքով և դեմքի խոշոր գծագրությամբ, որ չէր կարելի ասել, թե գեղեցիկ էր։ Նրա մեծ, սևորակ աչքերը ավելի ավազակային արտահայտություն ունեին, իսկ փոքր-ինչ ուռած շրթունքների վրա միշտ կարելի էր նշմարել մի դառն հեգնություն։ Նրա շարժվածքի համարձակությունը և ճարպիկությունները գործի մեջ իսկույն ցույց էին տալիս մի չափազանց մարմնական ուժ։ Իսկապես որտեղացի՞ էր նա, կամ ի՞նչ տեսակ անցյալ էր ունեցել,— այս կողմերում ոչ ոք չգիտեր։ Միայն նրա մասին խոսվում էին շատ բաներ, որ լավ վկայություն չէին տալիս նրա վարքի մասին։ Նրան համարում էին մի «թոկից փախած» մարդ, որ կյանքի ամեն մի մթին խորշերում մտել ու դուրս է եկել։ Մի ժամանակ նա մի վանքում էր եղել, որպես սարկավագ և միաբան, մի ժամանակ վարժապետ է եղել. բայց թե ի՞նչ պատճառով թողեց վանքը և դպրոցը,— հայտնի չէր։ Միայն նրա վանքային և դպրոցական կյանքից պատմվում էին այնպիսի անեկդոտներ, որ հատկանիշ էին մի տարապայման բնավորության։

Բայց ինչ որ ճշմարիտ էր, այն էր, որ Վարդանը հայտնի էր այս կողմերում, որպես մի նշանավոր մաքսախույս (կոնտրաբանդիստ)։ Նա ուներ այդ պարապմունքին հարմար բոլոր պայմանները՝ արիություն, ճարպկություն և սատանայական խելք։ Մշտապես վտանգների և արկածների հետ պատերազմելով, նա սեփականել էր իրան երկաթի հաստատամտություն աներկյուղ քաջասրտության հետ։

Կար մի ուրիշ բան ևս։ Ոչ միայն Թոմաս էֆենդին Վարդանին խենթ էր համարում, բայց թե՛ Օ.. գյուղում և թե՛ նրա շրջակայքում նա ճանաչված էր մականունով «խենթ»։ Ի՞նչ բանի մեջ էր նրա խենթությունը։ Վարդանը հիմար տղա չէր. նա շատ կարդացել էր, նա շատ բազմակողմանի գիտություններ ուներ։ Նա բավական ճանաչում էր կյանքը և գիտեր մարդկանց կենցաղավարության պայմանները։ Նա, չնայելով իր երիտասարդ հասակին, շատ փորձված էր և շատ տանջանքներ էր կրել մար-

դերից։ Ուրեմն ի՞նչ բանի մեջ էր նրա խենթությունը.— նրանո՞ւմ միայն, որ Վարդանը կեղծել չգիտեր, նա մարդիկների նախապաշարմունքներին դեմ էր գնում։ Վարդանը խիստ բացարձակ սիրտ ուներ, և ամենի երեսին կասեր, ինչ վատ բան նկատելու լիներ։ Նա մինչև անգամ չէր թաքցնում իր սեփական սխալները, բոլորը պատմում էր, և մարդիկ այս տեսակներին միշտ խենթ են համարում։ Նրանք պահանջում են, որ մարդը դրսից ուրիշ կերպարանք ունենար, իսկ ներսից ուրիշ, և սաստիկ ատում են ճշմարտախոսին։

Հին իմաստասերներից և մարգարեներից շատերը, և մինչև անգամ երեելի Պահլուլը և Նասրադին խոջան խենթեր էին համարվում, թեև նրանց խենթությունների մեջ մի առանձին իմաստություն կար։ Բայց Վարդանը ոչ իմաստասեր էր և ոչ մարգարե. միայն նրա դատողությունները, հասկացողությունը, մտածողության ձևը և օտարոտի վարմունքը ռամկի աչքում խորթ և խիստ տարապայման էին երևում։

Խոստանալով Լալային, թե «մի լավ բան է բերել նրա համար», և հայտնելով, թե այդ բանը միայն գաղտնապես պետք է հանձնել նրան,— այս դեպքում Վարդանը իր սովորության համեմատ աչքարա լինել չկարողացավ։ Կարծես, մի առանձին զգացմունք հարկադրում էր նրան ծածկամիտ լինել. կարծես նրա սրտում թաքնված էր մի նվիրական բան, որ պետք է անմատչելի մնար օտարներից։ Նա առիթ էր որոնում հանդիպել Ստեփանիկին և հանդիպել, որքան կարելի է, մի ծածուկ տեղում։ Առիթը ինքը իրան տեղի ունեցավ։

Ես բոլորովին մոռացա մի անգամ գոնե նկարագրել ծերունի խաչոյի տան բակի դիրքը։ Նրա ընդարձակության մեծ մասը ծածկված էր խիտ ծառերով և զանազան տեսակ թփերով։ Տունկերը այն աստիճան աճել էին, որ մի քանի քայլ հեռավորության վրա մարդուն անկարելի էր տեսնել։ Իր ապրանքները որտեղ պետք էր տեղավորելուց հետո, Վարդանը առանձնացավ պարտեզի մեջ։ Այնտեղ, այն հովանավոր ծառերի ստվերի ներքո կամենում էր հանգստություն գտնել։ Նրա սիրտը սաստիկ տանջվում էր. նրա հոգին գտնվում էր մի քաղցր խռովության մեջ... Այսպիսի բոպեներում ծառը, ծաղիկը, տերևների շշնջոցը խոսում են սիրահարվածին ավելի մխիթարական խոսքեր, ինչ որ չէր կարող ասել բանավոր մարդու լեզուն։ Նա պառկած փա-

փուկ խոտերի վրա, սաղարթախիտ ոստերի միջից երկար անխորհուրդ կերպով նայում էր դեպի կապուտակ երկինքը, հետազոտում էր, թե որպես սպիտակ ամպերի պատառները շտապով լողում էին օդի մեջ, միանում էին, կուտակվում էին միմյանց վրա, կազմում էին սև թուխպեր։ Դա մրրիկ էր գուշակում... Այսպես էր և Վարդանի սիրտը։ Նրա հոգում թաքնված անորոշ, անկերպարանք կրքերը, կարծես մի անգամից միախառնվեցան և ձևակերպեցին այն սրբազան զգացմունքը, որ հոգեբանների լեզվով կոչվում է սեր...

Վարդանը վաղուց գիտեր, որ Ստեփանիկը աղջիկ է։ Նրան հայտնի էին մինչև անգամ այն պատճառները, որ ստիպել էին նրա ծնողներին իրանց զավակին տղայի հագուստով և տղայի անունով մեծացնել։ Այդ իսկ հանգամանքները գրավեցան զգայուն երիտասարդի ուշադրությունը դեպի անբախտ աղջիկը, և այդ իսկ հանգամանքները լցրին նրա սիրտը մի հերոսական նախանձով, ազատելու նրան իր անբնական դրությունից։ Կարեկցության զգացմունքը տեղի տվեց սիրո զգացմունքին։ Բայց մինչև այն օր այդ զգացմունքը լուռ էր Վարդանի սրտի մեջ։ Մինչև այն օրը գոնե մի անգամ չէր ունեցել նրա հետ սիրային բացատրություններ, և ոչ որևիցե ցույցով ակնարկել էր նրան, թե իրան հայտնի էր նրա աղջիկ լինելը։ Թեև Ստեփանիկը խիստ մտերմաբար էր նրա հետ, թեև երբեմն բնությունը պահանջում էր իրանը և ծպտյալ օրիորդը, չնայելով իր բոլոր զգուշությանը, արտահայտում էր այն խորհրդավոր հատկանիշները, ինչ որ հատուկ են կնոջ, ինչ որ ծածկել չէ կարող հասակ առած աղջիկը...

Վարդանը երկար պառկած էր պարտեզի մեջ և անհանգստությամբ անդադար մի կողքից մյուսի վրա էր շուռ գալիս։ Հանկարծ նրա ականջին դիպավ խշխշոցի ձայն. ետ նայեց, տեսավ, որ Ստեփանիկը գալիս էր իր մոտ։ Խեղճ երիտասարդի սիրտը սկսեց դողդողալ. երբեք այնպես չէր բաբախել այն երկաթե սիրտը...

Ստեփանիկը մոտեցավ, և փոքր-ինչ երկչոտ կերպով մի քանի քայլ հեռավորության վրա կանգնելով, ասաց.

— Ճաշը պատրաստ է. հայրս կանչում է քեզ։

— Էֆենդի՞ն էլ այնտեղ է,— հարցրեց Վարդանը, պառկած տեղից վեր կենալով և նստելով մի թումբի վրա, որ շինած էր որպես հովանոց և շրջապատած էր կանաչ պատուտակներով։

Ստեփանիկը մի արհամարհական խոժոռ դրծելով իր սիրուն դեմքի վրա, պատասխանեց.

— Է՜հ, գրողը տանե նրան, այնտեղ է։

— Դու էլ չե՞ս սիրում էֆենդուն, Ստեփանիկ։

— Նրան ո՞վ է սիրում, որ ես սիրեմ։

Վարդանը մտածեց, որ ամենահարմար ժամանակն էր հանձնել Ստեփանիկին նրա համար բերած ընծան։ Եվ խնդրեց նրան, որ մի փոքր սպասե պարտեզում, մինչև ինքը կգնար և կբերեր։ Նա դիմեց դեպի սրահը, ուր բեռների մեջ դարսված էին նրա ապրանքները և մի քանի րոպեից հետո վերադարձավ, բերելով իր հետ մի կապոց։ Նա կրկին մտավ հովանոցի մեջ, հրավիրելով այնտեղ և Ստեփանիկին։

— Հայրս սպասում է քեզ,— ասաց Ստեփանիկը։

— Շատ չենք ուշանա, նստիր ինձ մոտ, Ստեփանիկ, դեռ ճաշի ժամանակ չէ։ Հիմա ես կտամ քեզ այն բանը, որ բերել եմ քեզ համար։

Ստեփանիկը ուրախացած նստեց նրա մոտ, իսկ Վարդանը սկսեց բաց անել կապոցը։ Նրա մեջ դրած էր մի փոքրիկ արկղիկ, շինված սև փայտից և զարդարած գեղեցիկ նկարներով։ Վարդանը հանեց իր գրպանից բանալին և բաց արեց արկղիկը։ Նրա մեջ դարսած էին զանազան կակացի գործիքներ՝ մկրատ, մատնոց, ասղաման և այլն, բոլորը արծաթով շինած և սիրուն կերպով պատրաստած։ Մի կողմում ամրացրած էր փոքրիկ հայելի, իսկ արկղի հատակում կար նվագարան, որը երիտասարդի լարելով սկսեց ածել։ Ստեփանիկը հիացմունքով նայում էր այդ առարկայի վրա, և նա իր կյանքում առաջին անգամն էր տեսնում մի այդպիսի գեղեցիկ բան։

— Լա՞վն է,— հարցրեց Վարդանը, ուղիղ նրա երեսին նայելով,— ա՜ռ. քեզ եմ տալիս։

Ստեփանիկը, որ սկզբում այնքան ուրախացավ Վարդանի ընծայով, հանկարծ տխրեց, կարծես մի բան մտաբերեց նա, կարծես նրան շատ դժվար լիներ այդ ընծայի ընդունելը։ Նա հրաժարվեցավ և ֆոպեական շփոթությունից հետո պատասխանեց.

— Ես ի՞նչ կանեմ մկրատը, մատնոցը և ասղամանը... դրանք աղջկա բաներ են... ինձ համար մի ուրիշ բան պետք է

բերեիր... ինձ համար տղայի բաներ պետք է բերեիր... ես աղջիկ չեմ։

Այդ խոսքերը արտասանեց նա մի այնպիսի դողդոջուն ձայնով, որ կարծես թե այրում էին նրա նուրբ վարդագույն շրթունքը։

Վարդանը չէր սպասում Ստեփանիկի կողմից մինչև այս աստիճան ծածկամտություն. նա բոլորովին շվարած մնաց, և չկարողանալով զսպել իր հոգեկան վրդովմունքը, ասաց.

— Դու էլ աղջիկ ես, Լալա...

— Ա՜խ, դու իմ անունն էլ իմանում ես...— գոչեց օրիորդը և ընկավ նրա կուրծքի վրա։

Երիտասարդը գրկեց նրան, որ ցած չընկնի։ Եվ Լալան իր սրտի սաստիկ խռովության մեջ, մի քանի անգամ մեղմ և արտասվախառն կերպով արտասանեց այդ խոսքերը. «Ես աղջիկ եմ... այո՛, աղջիկ եմ...»։ Այդ խոստովանությունը առաջին անգամ դուրս պրծավ նրա այնքան տարի փակված շրթունքներից մի օտար տղամարդի մոտ, որին սիրում էր և իր սերը մինչև այսօր հայտնել չէր համարձակվում...

Բայց երիտասարդը և օրիորդը իրանց քաղցր հափշտակության մեջ ամենևին չէին նկատում, որ մի զույգ աչքեր ծառերի միջից նայում էին նրանց վրա և ուրախանում էին։ Դա Սառան էր, որին կոչեց այստեղ նվագարանի ձայնը։

— «Այժմ Լալան ազատված է...»,— ասաց նա իր մտքում և հեռացավ։

Ժե

Մերունի խաչոյի օդայի մեջ արդեն պատրաստ էր ճաշի սեղանը։ Տանուտերը և Թոմաս էֆենդին սպասում էին Վարդանին։ Այնտեղ նստած էին և կապալառուի երկու զափթիաները, որ կառավարությունից տված էին նրան.— երկու անղգամներ, որ ծառայում էին էֆենդու ամեն տեսակ չարագործությունների մեջ։ Բացի դրանցից, օդայի մեջ ոչ ոք չկար, որովհետև խաչոյի որդիները երբեք չէին համարձակվի սեղանակից լինել, երբ ճաշի էին նստած այնպիսի պատվավոր անձինք։

— Հիմա կգա. այնքան կհաչի, որ հացներս հառամ կանե,— ասաց էֆենդին, խոսելով Վարդանի վրա։

— Նա թեև երբեմն կծու հանաքներ է անում, բայց խիստ բարի սիրտ ունի,— նկատեց տանուտերը։

— Այդ ես էլ գիտեմ, տանուտեր, որ նրա սիրտը չար չէ, բայց բերնումը օձի թույն ունի։ Ամեն մարդու հետ չէ կարելի հանաքներ անել։ Ես որ հազում եմ, մարդիկ դողում են ինձանից։ Պետք է գիտենալ, թե ով է Թոմաս էֆենդին։ Դու խո տեսա՞ր սուլթանի ֆիրմանը։ Բայց ես քեզ մի ուրիշ բան կասեմ։ Արզրումի վալին ինձ միշտ իր ծնկի մոտ էր նստեցնում, տե՛ս, եթե չես հավատում, դրանցից հարցրու,— նա ցույց տվեց երկու զափթիաների վրա։

«Աղվեսից վկա ուզեցին, իր պոչը ցույց տվեց»։ Այդ երկու խաբեբաները պատրաստի և երդվյալ վկաներ էին էֆենդու ամեն մի ստախոսությունների համար։

— Մի՞թե ես չեմ հավատում,— պատասխանեց տանուտերը։

Թոմաս էֆենդին զայրացած էր Վարդանի դեմ ոչ միայն նրա համար, որ երիտասարդի առավոտյան խոսքերը վիրավորեցին նրան, այլ ամեն անգամ, երբ նա պատահում էր կապալառուին, սովորություն ուներ նրան խայտառակել։

— Ես,— ասաց կապալառուն,— եթե ուզենամ մի բոպեում աշխարհը տակնուվրա կանեմ, և այդ անպիտանին ցույց կտամ, թե ո՛վ է Թոմաս էֆենդին։

— Ջահիլ է,— խոսեց բարեսիրտ ծերունին,— ջահիլի խոսքը կշեռքի մեջ չեն դնում։ Բայց ես դարձյալ կասեմ ձեզ, որ նա այնքան վատ տղա չէ, որքան դուք կարծում եք։

Այդ միջոցին ներս մտավ Վարդանը, բոլորովին գունաթափ, մտահույզ և լուռ։ Թոմաս էֆենդին, որ բոպե առաջ այնպես բարկացած խոսում էր նրա դեմ, ինչպես ասում են՝ «պոչը քաշեց», և իր հատուկ շողոքորթությամբ, ասաց նրան.

— Օրհնած, որքա՞ն սպասել տվեցիր ինձ, դու գիտես, որ առանց քեզ մի պատառ հաց անգամ Թոմաս էֆենդին բերանը չի դնի։

— Ես գիտեմ...— պատասխանեց երիտասարդը, և առանց նրա վրա նայելու, գնաց իր տեղը նստեց։

Ճաշի ամբողջ ժամանակը Վարդանը նույնպես շատ քիչ խոսեց, խիստ տխուր էր, և կարելի էր մտածել, թե կամ հիվանդ է և կամ մի տեղը ցավում է։ Այդ մշտածիծաղ բնավորությունը

այժմ մոայլվել և թխպել էր ամպամած երկնքի նման։ Սերը, որ շատերի մեջ ուրախություն էր և բավականություն է ծնեցնում, որ շատերին խելքից հանում է, շատերի սիրտը լեցնում է մի սրբազան զգացմունքով, և քաղցրացնում է նրանց կյանքի դառնությունները,— սերը տխրեցրել էր այդ մարդուն։ Նա սեղանի մոտ շատ փոքր կերավ, բայց չափազանց խմեց, կարծես թե, գինու բաժակներով աշխատում էր հանգցնել իր սրտի կրակը։

Թոմաս էֆենդին, իր սովորության համեմատ, շատախոսում էր։ Ինչե՞ր ասես չէր պատմում նա իր կյանքից և իր անցյալից։ Եվ նրա բոլոր խոսակցությունների մեջ երևում էր, որ Թոմաս էֆենդին մի նշանավոր մարդ է։ Ներսես պատրիարքը նրան միշտ «որդի» էր կոչում. Խրիմյանին չէր հավանում, որովհետև շատ հասարակ մարդ է և իրան թույլ է տալիս մշեցի և վանեցի համալների հետ «մասլահաթներ» անել. Նուբար փաշան իր նամակների մեջ նրան միշտ գրում է «ազնիվ բարեկամ»։ Թե Բոսֆորի ափերի վրա նա մի պալատ ունի, որ անգլիացիներին վարձով է տված, թե Երուսաղեմի տաճարին նրա պապերը ընծայել են մի մեծ գումար, որի համար ամեն օր ս. Հակոբա վանքում պատարագ են մատուցանում իրանց ազգատոհմի համար, թե իր և Օտյանի մեջ սառնություն ընկավ, պատճառն այն է, որ նա իր աղջիկը ուզում էր տալ, բայց ինքը չուզեց առնել և այլն, և այլն. հազար ու մեկ այս տեսակ առակներ էր պատմում նա, բայց Վարդանը համարյա չէր լսում, իսկ միամիտ տանուտերը հետաքրքրությամբ լսում էր և զարմանում էր։ «Որքա՞ն բախտավոր կլինի իմ Լալան, մտածում էր նա, երբ մի այսպիսի մարդու կինը դառնա, որը Օտյանի աղջիկը չէ առել, որը Բոսֆորի ափերի մոտ պալատ ունի»։

Հետո նա սկսեց խոսել պոլիտիկայից։ Այդ այն քաղաքական հուզմունքների ժամանակն էր, որ Բալկանյան թերակղզու վրա սլավոնական ժողովուրդը աշխատում էր իրա արյունով ազատություն ձեռք բերել. Կ. Պոլսում կոնֆերենցիա էր կազմվել նրանց վիճակը տնօրինելու համար, և Միթհադը, այդ երևելի դիպլոմատիկական ձեռնածուն, հրատարակել էր օսմանլիների սահմանադրությունը։ Թոմաս էֆենդին էլ գյուղական օդայի մեջ նստած, վճռում էր հայոց ազգի ապագան։

Խոսելով սլավոնների «խենթությունների» վրա, որ նրանք համարձակվեցան ապստամբվել մի «բարբար» ազգի դեմ, որ-

պես թուրքն էր, Թոմաս էֆենդին սկսեց սաստիկ հարձակվել հայերի վրա, հայտնելով, թե հայերի մեջ էլ գտնվում են այնպիսի «խենթեր», որոնք թուրքի լուծը ծանր են համարում և քաղաքական ազատության, ինքնավարության վրա են մտածում։ Նա հայտնեց, թե առանց թուրքերի հայերը մի կորած ժողովուրդ են, թե հայերը իրանք իրանց կառավարել չեն կարող։

Այդ ժամանակ միայն Վարդանը չկարողացավ համբերել։ Նա ասաց.

— Ձեզ նմաններին, որ ծծում եք հայի արյունը թուրք կառավարության անկարգությունների շնորհիվ, ձեզ նման մուլթեզիմներին, կապալառուներին, իհարկե, միշտ օգտակար է թուրքը և նրա անարդար ու անիրավ իշխանությունը։ Դուք ջրի պղտորության մեջ ձուկ բռնողներ եք. պարզությունը ատելի է ձեզ։ Դուք խավար եք սիրում, որովհետև գողերը ատում են լույսը։

— Պարո՛ն,— ձայն տվեց կապալառուն,— մտածի՛ր, որ քեզ մոտ դրկու զափթիաներ են նստած։

— Այդ զափթիաներով դու վախեցրու այն խեղճ և ողորմելի գյուղացիներին, որոնք այն աստիճան տխմար են, որ հավատում են, թե դու Բոսֆորի վրա պալատներ ունես, թե դու Օտյանի աղջիկը չառեցիր, կամ ս. Հակոբա տաճարում ամեն օր քո հոգու համար պատարագ են մատուցանում... Անե՜ծք, միայն անեծքի արժանի են ձեզպիսիները... Դո՛ւք եք հայի տունը քանդողները, սկսյալ գյուղական չնչին մուլթեզիմից, որի ներկայացուցիչն ես դու, մինչև Բարձր Դռան այն խոշոր ամիրաները, որոնք իրանց շահերի համար իրանց ազգի շահերը վաճառում են...

Թոմաս էֆենդին բարկանալ չգիտեր, այսինքն՝ կամենում եմ ասել, որ նա բարկանում էր այն ժամանակ միայն, երբ տեսնում էր, որ իր հակառակորդը իր ատամների հարմար մարդ է, որին կարող է գզգզել, կարող է ուզածին պես միսը ծամել։ Բայց նա Վարդանին վաղուց ճանաչում էր, այս պատճառով, իր անզգույշ սխալը ուղղելու համար նա աշխատեց բանին կատակի ձև տալ, ասելով.

— Տեսնում եմ, որ գինին շատ թունդ էր. օրհնած, ինչո՞ւ ես այսքան խմում, երբ խմելու շնորհք չունես։

Վարդանը խեթ աչքով նայեց նրա երեսին և ոչինչ չպատասխանեց։ Նրա երեսի վրա կարելի էր նշմարել զզվանք միայն դեպի այդ ցած շողոքորթը։

Ծերունին նույնպես լուռ էր. նա զգում էր Վարդանի խոսքերի ճշմարտությունը, բայց միևնույն ժամանակ չէր հավանում նրա համարձակությանը, մտածելով, որ մի պաշտոնական մարդու հետ անվայելուչ էր այսպես խոսել։ Այդ պատճառով նա շատ ուրախ եղավ, երբ ճաշը վերջացավ, բայց չէր սպասում, որ մի նոր խռովություն ևս պիտի ծագի։

Ճաշելուց հետո իսկույն ղահվե տվեցին. տեղային սովորության համեմատ, առանց շաքարի։ Թոմաս էֆենդին պատվիրած էր, որ ամեն անգամ, երբ ինքը այս տանը ղահվե խմելու լինի, պետք է նրանից հետո ծխելու չիբուխը Ստեփանիկը պատրաստի, «որովհետև Ստեփանիկի ձեռքով պատրաստած չիբուխը ավելի համով է լինում», ասում էր նա։ Մի զարմանալի գաղտնիք կար այս խեղճ պատանու ճակատագրի մեջ։ Ֆաթթահբեկը խաչոյի տանը հյուր եղած ժամանակը պահանջում էր նրա ձեռքից ղահվե ընդունել, ասելով, թե «շատ համով է լինում», իսկ Թոմաս էֆենդին նույն մտքով չիբուխ էր պատրաստել տալիս։ Գոնե քուրդ բեկը գիտեր Ստեփանիկի աղջիկ լինելը և սիրում էր նրան, բայց հայ էֆենդին նույնպես գիտե՞ր այդ գաղտնիքը, նույնպես սիրո՞ւմ էր նրան, որ նրա ձեռքով պատրաստած չիբուխը համով էր լինում...

Երբ Ստեփանիկը տաճկական երկար չիբուխը ներս բերեց, և մոտեցավ, կամենում էր տալ էֆենդուն, Վարդանը բոլորովին գժվեցավ։ Նրան հայտնի էր այդ թուրքական սովորության կեղտոտ նշանակությունը, այս պատճառով նա խլեց պատանու ձեռքից չիբուխը, և դուրս ձգելով օդայի պատուհանից, ասաց նրան.

— Հեռացի՛ր, Ստեփանիկ։

Պատանին շվարած դուրս դնաց։

Կարծես չիբուխը էֆենդու գլխին զարկեցին. նա կատաղեցավ։

— Այդպիսի հանաքներ ես չեմ սիրում,— ասաց նա,— դու անպատվում ես ինձ։

— Քեզ նման մարդիկ պատվի վրա խոսելու իրավունք չունեն։

— Ե՞ս, ե՞ս, այս ամբողջ գավառի մուլթեզիմը,— գոռաց կապալառուն։

— Այո՛, դուն, այս ամբողջ գավառի ավազակը։

Կապալառուն մի քանի շարժումներ գործեց, ցույց տալով, թե ուզում է տեղից վեր կենալ։

— Մի՛ շարժվիր, եթե ոչ շան նման կսատկացնեմ,— ասաց Վարդանը, ձեռքը տանելով դեպի իր սուրը։

Զափթիաներից մեկը մեջ մտավ.

— Իզուր եք բարկանում, պարոն, էֆենդին ձեզ խո մի վատ բան չասեց։

Վարդանը, առանց նրա վրա ուշադրություն դարձնելու, կրկին դիմեց կապալառուին, ասելով.

— Լի՛րբ, սովորել եք թուրքերի նման ամեն հայի տուն մտնել, նրա սեղանը լափել, նրա գինին լակել և նրա հարսին, աղջկան, ջահել տղային անարժան ծառայություններ անել տալ։ Լի՛րբ...

Ծերունի տանուտերը մնացել էր քարացած, նրա բերանը փակվել էր, իսկ երբեմն երեսը խաչակնքում էր և աստուծո անունն էր տալիս, որ չարը խափանվի։

Բայց էֆենդին որքան պոռոտախոս էր, որքան պարծենկոտ էր և որքան փքված սպառնալիքներ կարդալ գիտեր, այնքան էլ աղվեսի նման երկչոտ էր։ Նկատելով ռուսաստանցի երիտասարդի վայրենի կատաղությունը, հասկացավ, որ նրա հետ չէր կարելի վարվել, որպես վարվում են Ալաշկերտի հայ գյուղացու հետ. նա իր մոտ սուր ուներ և մոսկովների թագավորի հպատակն էր։ Այս պատճառով, իր «փասափուսեն» հավաքելով, խիստ մեղմ ձայնով ասաց.

— Աստված էլ գիտե, որ ես թուրքերի սովորություններին չեմ հետևում։ Դու իզուր զրպարտում ես ինձ, Վարդան։

Վարդանը պատասխանեց առաջվա խռովված ձայնով.

— Ե՞ս եմ զրպարտում... քե՞զ, որ թուրքերի մոտ նամազ ես անում, իսկ հայոց եկեղեցու սեղանի վրա պատարագ ես մատուցել տալիս ռամիկների համակրությունը գրավելու համար... քե՞զ, որ բոլոր թուրքերի մոտ ասում ես, թե բոլոր հայերը «գավուրներ» են, իսկ հայերի մոտ հայհոյում ես նրանց... քե՞զ, որ թուրքերի կառավարության առջև մատնում ես ամեն մի ազնիվ և իր ազգի շահերը մտածող հային... քե՞զ, որ ավազակների հետ ընկերանում ես և դատարանների առջև սուտ վկայություն ես տալիս, թե հայերը անիրավացի են բողոքում իրանց հարստահարությունների մասին... քե՞զ, որ տասը տեղ պատկվել ես, կին ես առել, քո կնիկները թողել ես և այստեղ կրկին ուզում ես ամուսնանալ... Դո՞ւ չես հետևում թուրքերի սովորությանը... Բայց ես կասեմ, որ թուրքը հազարապատիկ ազնիվ մարդ է, քան քեզ նման հայը, որովհետև դու ոչ հայ ես և ոչ թուրք...

Վերջին խոսքը, թե էֆենդին տասը տեղ պատկվել է և այստեղ կրկին ուզում է ամուսնանալ,— կայծակի նման հարվածեց խեղճ ծերունի Խաչոյին։ Ախար նա իր Լալային ուզում էր տալ այդ մարդուն, որ Կ. Պոլսում ամիրա ազգականներ ուներ, որ Բոսֆորի ափերի մոտ պալատ ուներ, որ Օտյանի աղջիկը չէր առել... «Ոչ, ոչ, մտածեց նա, Վարդանը զրպարտում է նրան. Թոմաս էֆենդին խաբեբա մարդ չէ»...

Վարդանը իր սրտի բոլոր մաղձը դուրս թափելուց հետո դուրս գնաց։ Նրա բացակայության ժամանակ էֆենդու լեզուն բացվեցավ.

— Ես անպատճառ կգրեմ սուլթանին,— ասաց նա մի առանձին նշանակություն տալով իր խոսքերին,— ես ռուսաց թագավորին էլ կգրեմ, և անպատճառ այդ անպիտանին Սիբիր կորցնել կտամ... Թոմաս էֆենդու հետ այս տեսակ հանաքներ անել չէ կարելի... «Էշին մինչև չծեծես, իր չափը չի ճանաչի»...

Թոմաս էֆենդին սովորություն ուներ միշտ մեծ մարդերի անունով սպառնալիքներ կարդալ, և ցույց տալ թե ինքը նրանց հետ հարաբերություններ ունի, և ինչ որ կամենա, կարող է կատարել։ Ծերունի Խաչոն, թեև հիմար մարդ չէր, բայց այնքան շատ հարվածներ էր կերել այս տեսակ մանր էֆենդիներից, որ մյուս գյուղացիների նման ինքն էլ հավատում էր, թե նրանք ինչ որ կամենան, կարող են կատարել։ Այս պատճառով, լսելով էֆենդու վերջին խոսքերը, թե նա Վարդանին Սիբիր կորցնել կտա, վեր կացավ, և կապալառուի ծնկները գրկելով, արտասուքը աչքերում սկսեց աղաչել.

— Ի սեր աստուծո, մի՛ կորցնեք նրան, իմ ալևոր գլխին բաշխեցեք, դուք գիտեք, որ նա խենթ է...

Էֆենդին առժամանակյա մտածությունից հետո պատասխանեց.

— Քեզ եմ բաշխում, ծերունի, որովհետև քո տան հացը կերել եմ։

Փորձանքը խումբերով է գալիս, երբ կամենում է խավարացնել մի խաղաղ ընտանիքի բարօրությունը։ Ամեն կողմից դժբախտությունը սկսել էր պաշարել ծերունի Խաչոյի տունը. ամեն կողմից սպառնում էին նրան զանազան տեսակ վտանգներ։

Վարդանի կռիվը Թոմաս էֆենդու հետ ծանր տպավորություն գործեց ամբողջ ընտանիքի վրա։ Տանեցիներից ոմանք խոսում էին և ծիծաղում էին էֆենդու երկչոտության վրա և գովասանում էին Վարդանին, իսկ ոմանք մեղադրում էին նրան, ասելով, որ նա խենթ է և իր լեզուն պահել չգիտե։ Առավել զայրացած էին Վարդանի դեմ Խաչոյի որդիներից մի քանիսը, Օհանը և Հակոն։ Նրանք ասում էին, թե ինչպե՞ս կարելի է կառավարության մարդուն այնպես խայտառակել։ Կառավարության մարդը ոչ միայն իր պաշտոնակատարության ժամանակ, այլև մասնավոր կյանքի մեջ, նրանց կարծիքով, պաշտոնական նշանակություն ուներ, նրան հակառակել անկարելի էր։

Ոչ սակավ անհանգիստ էր և ծերունի տանուտերը։ Նա թեև չէր մեղադրում Վարդանին, բայց որքան էլ իրավացի լիներ նա, այսուամենայնիվ, նրա վարմունքը էֆենդու վերաբերությամբ անպատշաճ էր համարում։ Ծերունի Խաչոն լավ էր ճանաչում էֆենդու հոգին. այդ հին չարագործը պիտի աշխատեր վնասել Վարդանին, և եթե վնասել չկարողանար, նրան շատ հեշտ էր իր վրեժխնդրությունը թափել խեղճ ծերունու տան՝ վրա։ Կապալառուն օրինավոր պատճառներ ուներ մատնելու տանուտերին կառավարության առջև, նրա համար, որ իր տանը ընդունում էր Վարդանի նման նշանավոր կանտրաբանդիստին։

Մյուս կողմից, ծերունի Խաչոն զրկվում էր մի մեծ հույսից։ Նրա մտատանջությանը չափ չկար, սկսյալ այն րոպեից, երբ լսեց Վարդանի բերնից, թե՝ Թոմաս էֆենդին մի քանի անգամ ամուսնացած է եղել և զանազան տեղերում կնիկներ է թողել։ Այդ մարդու համար էր նշանակել նա իր Լալային, հիմա նրա բոլոր հույսերը ոչնչացան։ Բայց ինչո՞վ և որպե՞ս կարելի էր ստուգել, թե Վարդանը ուղիղ էր ասում։ Թեև ծերունին նրան ստախոս չէր համարում, բայց ո՞վ է իմանում, կռվի մեջ հայտնված ամեն ճշմարտություն կասկածավոր է թվում։

Իսկ այդ գարշելի և անամոթ կապալառուի ի՞նչ էր գրավում ծերունի Խաչոյին, որ ցանկանում էր իր սիրելի աղջկա բախտը կապել մի այնպիսի խարեբայի հետ։ Ծերունին գիտեր, որ նա մի անգութ, անխիղճ և ցած հարստահարիչ է, թե նրա համար ոչինչ սուրբ բան չկար, թե նա պատրաստ էր իր շահերին ամեն բան զոհել։ Այսուամենայնիվ, ծերունին ամեն բան մոռանում էր, երբ իր առջև տեսնում էր իշխանություն։ Նա մի հին նախապաշարմունքով միշտ պատրաստ էր խոնարհվել մուդիրի առջև։ Նրա կարծիքով, արքունի մուլթեզիմի, այդ փոքրիկ պաշտոնական մարդու մունդիրի մեջ ծածկվում, անհայտանում և ոչնչանում էին ամեն տեսակ անազնվություններ։ Պաշտոնը սրբում էր կեղտերը։

Այս պատճառով ծերունի Խաչոյին խիստ հրապուրիչ էր ունենալ էֆենդու նման մի փեսա, որ բարձր էր հասարակ ամբոխից, որի առջև բոլորը խոնարհվում էին։ Ծերունին որքան էլ պարզ և արդարամիտ մարդ լիներ, բայց որպես տանուտեր, որպես մի ամբողջ գյուղի գլխավորը, ուներ իր փոքրիկ փառասիրությունները։ Նա դժվար կհամաձայնվեր իր աղջիկը տալ մի հասարակ գյուղացու, մանավանդ երբ այնպիսի խորհրդավոր պայմանների մեջ էր պահել և մեծացրել նրան։ Թոմաս էֆենդու ընտրության մեջ նա ուներ մի ուրիշ գործնական նպատակ ևս։ Ինքը որպես տանուտեր, անդադար հարաբերություններ ունենալով տեղային կառավարության հետ, էֆենդին կարող էր շատ դժվարությունների մեջ օգնել նրան։ Իսկ այժմ նրա հույսերը միանգամով ոչնչացավ...

Այդ բոլորի հետ, եթե նրան հայտնի լիներ, թե ի՞նչ վիճակ է սպասում իր սիրելի Լալային քուրդ Ֆաթթահ-բեկի կողմից այն ժամանակ գուցե գերեզմանը միայն կարող կլիներ՝ վերադնել խեղճ ծերունու ցավերին։ Բայց որդիները դեռ նրան ոչինչ չէին հայտնել։ Այդ գաղտնիքի կսկիծը ցեցի նման ուտում և մաշում էր նրա որդիների, մանավանդ Հայրապետի և Ապոյի սրտերը միայն, որոնք, իրանց եղբայրների հետ ունեցած անհաջող խորհուրդից հետո, չգիտեին, թե ի՞նչ պետք էր անել իրանց քրոջը կորուստից ազատ պահելու համար։ Ի՞նչ կլիներ խեղճ Լալայի վիճակը, երբ քուրդ բեկը կհափշտակեր, կտաներ նրան հոր տնից. կարո՞ղ էր նա մահմեդականի կին լինել, թե իր քույր

Սոնայի նման իր կյանքի դառնությունները կվերջացներ անձնասպանությամբ...

Այդ բոլոր մտատանջությունները, այդ բոլոր տխուր թախիծները Լալայի համար էին, բայց նա միայն էր, որ այն ժամանակ իրան ուրախ էր զգում և իրան բախտավոր էր համարում։ Իր սիրած տղամարդի ձեռքից խորհրդավոր արկղիկը ընդունելուց հետո, այժմ, կարծես, նրա այրական հագուստը այրում լիներ նրա մարմինը։ Նա աղջիկ էր, ցանկանում էր աղջկա նման հագնվել, ցանկանում էր կին լինել... Նա դեռ զգում էր իր շրթունքի վրա Վարդանի ջերմ համբույրները, և նրա ականջներին դեռ զարկում էին երիտասարդի քաղցր խոսքերը։ Բայց սկսյալ այն րոպեից, երբ նա իր աչքով տեսավ Վարդանի հաղթությունը էֆենդու դեմ, մի մարդու դեմ, որի առջև դողում էր ամբողջ գավառը,— Վարդանի նշանակությունը ավելի բարձրացավ օրիորդի աչքում։ Չգիտեմ ինչո՞ւ, կնիկները սիրում են տղամարդի մեջ տեսնել մեծություն, գերազանցություն և զորության անհամեմատ առավելություն։ Նրանք հիանում են, երբ տղամարդի մեջ նկատում են մի հատկություն, որ բարձր էր կանացի ուժից։ Վարդանը պաշտելի դարձավ Լալային, երբ իր զորության ներքո ճնշեց, ոչնչացրեց հպարտ կապալառուին, որին Լալան բոլոր սրտով ատում էր։ Լալային շատ անգամ պատահել էր համբերել այդ անամոթի լրբություններին, և ամեն անգամ, երբ նա իր հոր տունն էր գալիս, նա միշտ աշխատում էր փախչել և թաքնվել նրանից, բայց հայրը դարձյալ կանչել էր տալիս նրան, որ էֆենդու համար չիբուխ պատրաստե, որովհետև նրա ձեռքով պատրաստված չիբուխը համով էր լինում...

Լալան օդայի մեջ տեսած և լսած բոլոր բաները պատմեց իր երեց եղբորը՝ Հայրապետին, թե որպես վարվեցավ Վարդանը էֆենդու հետ։

— Շա՜տ լավ է արել,— պատասխանեց Հայրապետը,— պետք է սատկացներ այն գարշելիին, սովորե՞լ է խեղճ գյուղացիներին տանջել, կարծում է, թե ամեն մարդ նրանց նման կլինի։

Լալան պատրաստվում էր իր եղբոր պարանոցին փաթաթվել և նրա առջև բաց անել իր սիրտը, բոլորը պատմել նրան, թե ինքը սիրում է, վաղուց սիրում էր Վարդանին, և խնդրել, որ նա այդ մասին խոսե իր հոր հետ։ Բայց Հայրապետը շուտով տանից դուրս գնաց, կարծես մի շատ հարկավոր գործ դրսում սպասում էր նրան։

Նրա կինը՝ Սառան այսօր պետք է տեսություն ունենար Ֆաթթահ-բեկի կնոջ՝ Խուրշիդի հետ։ Վաղ առավոտյան հայտնվեցավ Ջավոն և ասաց, թե իր տիկինը ուխտագնացության պատրվակով պիտի գա Օ... գյուղին մերձավոր հին մատուռի մեջ մատաղ կտրելու, որովհետև նրա փոքրիկ որդին հազում էր, և նշանակել է այնտեղ տեսություն Սառայի հետ։ Այդ մատուռը հավասար կերպով պաշտվում էր թե՛ քրդերից և թե՛ հայերից։ Սառան շատ ուրախացավ, երբ տեսավ, որ Խուրշիդը կատարել է նրա ցանկությունը, որովհետև նա ինքը առաջուց Ջավոյի միջոցով խնդրել էր այդ տեսության մասին։

Բաժանվելով Լալայից Հայրապետը շտապում էր գնալ, տեսնել, թե ի՞նչ եղավ տեսության հետևանքը։ Նա դուրս եկավ գյուղից, և կես ճանապարհի վրա նստած, մի ահագին ժայռի հովանու ներքև անհամբերությամբ սպասում էր Սառային, որ մատուռից պիտի վերադառնար նույն ճանապարհով։

Խիստ հետաքրքիր տեսարան էր ներկայացնում այն տեղը, ուր նստած էր Հայրապետը։ Դա մի լեռան ստորոտ էր, որ ծածկված էր ժայռերի բեկորներով, որոնք ժամանակի խորտակիչ ձեռքով ջարդուփշուր եղել և թափվել էին ցած։ Նրա շրջակայքը պատած էր վայրենի մացառներով և զանազան տեսակ թփերով, որոնց միջից տեղ-տեղ բարձրանում էին ծառեր։ Հայրապետի ուշադրությունը գրավեց մի խնձորենի. նա տեսավ, որ ժիժքը[1] փաթաթվել էր նրա բունին, վեր էր բարձրացել և աճելով դեպի ամեն կողմը տարածել էր իր օձի նման ոլորուն ոստերը։ Նա, կարծես, աշխատում էր իր ծանրության ներքո ճնշել, խեղդել, մաշել և միանգամից կլանել խեղճ խնձորենուն, որի վերին ճյուղերը արդեն գոսացել, տերևներից զրկվել և չորացել էին... Լինում են րոպեներ, որ հասարակ մարդն անգամ փիլիսոփա է դառնում։ «Ահա՛ մի գեղեցիկ օրինակ, մտածում էր Հայրապետը, ահա մի վայրենի բույս, որ ինքը չէ գործում, չէ աշխատում, մայր հողի մեջ արմատներ չունի, այլ իր ճանկերի մեջ հափշտակելով մի ավելի քաղաքակրթված և պտղատու բույսին, ձրի

[1] Ժիժքը պատատուկների կամ պարազիտների մի տեսակն է. պարազիտները կերակրվում են օտար բույսերի հյութով։

կերակրվում է նրա հաշվով, ագահությամբ ծծում է նրա հյութը, և վերջապես սպառելով նրա կենսական ուժերը, սպանում է նրան... Միթե այսպես չէ՞ վարվում մեզ հետ քուրդը, միթե նա էլ մի այսպիսի ժիժք չէ՞, որ ապրում է խեղճ հայի հաշվով»։

Հայրապետը զգայուն մարդ էր և բավական պարզ հասկացողություններ ուներ։ Որտեղի՞ց նա սեփականեց իրան այդ հասկացողությունները։ Իհարկե, եթե նա իր հայրենի աշխարհի հորիզոնից մի անգամ ևս ոտքը դուրս դրած չլիներ, անտարակույս, կմեծանար, կզարգանար նույն սահմանափակ նախապաշարմունքներով, որպես էին նրա հայրենակիցները։ Բայց բախտը ուրիշ կերպ տնօրինեց նրա կյանքը։ Նա իր երիտասարդությունը անց էր կացրել օտար աշխարհներում։ Դեռ պատանի հասակում Հայրապետը, չգիտեմ ինչ պատճառով անբավականություն ունեցավ հոր հետ, և որպես այդ շատ անգամ պատահում է գավառներում, թողեց հոր տունը և սկսեց թափառել երկրե երկիր։ Ճակատագիրը նրան ձգեց Կ. Պոլսի մեջ, որ ներկայացնում է Եվրոպայի և Ասիայի հանդույցը։ Այստեղ անցավ նա կյանքի զանազան շրջաններից, և թեև մի հիմնավոր բան չսովորեցավ, բայց սեփականեց շատ լուսավոր գաղափարներ, որ ծանոթ չեն հասարակ գյուղացուն։

Հայրապետը երկար նստած այն քարաժայռի հովանու ներքո, սպասում էր կնոջը։ Արևը մոտ էր մայր մտնելու և նրա վերջին ճառագայթները գեղեցիկ կերպով լուսավորում էին լեռների գագաթները։

Վերջապես հայտնվեցավ Սառան։ Հայրապետը հեռվից նշմարեց նրա պայծառ դեմքը, որով նախագուշակեց, թե կինը բերում էր ուրախալի լուրեր։

— Տղա՞ է, թե աղջիկ,— հարցրեց Հայրապետը հեռվից։

— Տղա է,— պատասխանեց կինը ժպտալով, և նստեց ամուսնի մոտ, որովհետև շատ հոգնած էր։

Այդ ռամկական հարց ու պատասխանը նշանակում էր, թե ծնունդը որ սեռին է պատկանում, այսինքն՝ տեսության հետևմանքը ուրախալի է, թե տխուր, որովհետև գյուղացու հասկացողությամբ տղան ուրախություն է նշանակում, իսկ աղջիկը տխրություն։

Սառան սրբեց ճակատի քրտինքը, մի փոքր շունչ առեց, հանգստացավ, և ապա սկսեց պատմել, թե ինչ խոսեց և ինչ

լսեց քուրդ տիկնոջից։ Նրա պատմության բովանդակությունը այս էր։— Խուրշիդը հայտնել էր, թե բեկը այժմ շատ չէ մտածում Ստեփանիկի մասին, թե նա զբաղված է այնպիսի ծանր հոգսերով, որ առժամանակ գոնե նրան մոռանալ են տվել Ստեփանիկի սերը։ Նա ասել էր, թե բեկը հրահանգներ է ստացել Արզրումի վալիից և այժմ ինչ-որ պատրաստություններ է տեսնում,— իր ցեղի տղամարդերի անձնահամարն է հաշվում, նրանց զենքեր է բաժանում, փող է տալիս, որ իրանց համար ձիաներ առնեն, հագուստ պատրաստեն և այլն։— Բայց թե ի՞նչ ձեռնարկության համար են այդ պատրաստությունները, ինքը Խուրշիդը չգիտե։ Միայն նա դարձյալ խորհուրդ է տալիս, որ Ստեփանիկին կամ մի հեռու տեղ փախցնեն և կամ շուտով մի մարդու հետ ամուսնացնեն, որովհետև ինքը հաստատ գիտե, որ բեկը վերջ ի վերջո կկատարե իր մտադրությունը խեղճ աղջկա մասին։ «Թեև, ավելացրել էր տիկինը, ես այդ մասին խոսել եմ իմ հոր հետ, թեև իմ հայրը խոստացավ սանձ դնել բեկի կրքերին, բայց ինքը, Խուրշիդը, շատ չէ հավատում բեկի խոստմունքներին, և գուցե գործը այն հետևանքը կունենա, որ ինքը ստիպված կլինի թողնել իր ամուսնի տունը և բաժանվել նրանից»։

Հայրապետը խորին ուշադրությամբ լսում էր Սառայի պատմությունը, երբ վերջացրեց, նա ասաց.

— Դրանով վտանգը չէ կարելի անցած համարել։ Այս բոլոր պատմության մեջ միայն մի ուրախալի բան կա, այն է, որ գործը կհետաձգվի և մենք ժամանակ կվաստակենք Լալայի վիճակը տնօրինելու համար։

— Ես էլ այսպես եմ մտածում,— պատասխանեց Սառան.

— Ուրեմն ի՞նչ պետք է անել,— հարցրեց Հայրապետը։

— Ուրիշ ճար չկա, պետք է Լալային մեկի հետ պսակել։

— Այդ բոլորովին չի ազատի նրան։ Բեկը կարող է պսակված կինն էլ ամուսնի գրկից դուրս քաշել և տանել։

— Պետք է մի այնպիսի մարդու հետ պսակել, որ Լալային այստեղ չպահե, այլ վեր առնե և տանե մի ուրիշ երկիր,— ասաց Սառան։

— Շատ դեղեցիկ միտք է,— պատասխանեց Հայրապետը,— բայց որտեղի՞ց կարելի է գտնել մի այսպիսի մարդ։ Դու գիտես, որ մեր գյուղացիներից ոչ մեկը չի հանձն առնի մի այս-

պիսի ամուսնություն, նրա համար, որ կվախենա և կմտածի, եթե Լալային տանելու լինի մի ուրիշ երկիր, այն ժամանակ բեկը տունը կրակ կտա և նրա բոլոր ազգականներին սրից կանցկացնե։ Ո՞վ է այն մարդը, որ հանձն առնե այս տեսակ զոհաբերություններ։

— Մարդը պատրաստ է,— պատասխանեց Սառան ուրախ ձայնով։

— Ո՞վ է։

— Վարդանը։

Հայրապետի տխուր դեմքը ընդունեց խիստ ուրախ արտահայտություն, երբ Սառան սկսեց պատմել նրան, իր այն օրվա տեսածը տան պարտեզի ծառերի մեջ, թե ո՛րպես Վարդանը և Լալան գրկախառնվել էին միմյանց հետ, համբուրվում էին և խոստանում էին միմյանց մշտական սեր։

— Այդ լավ է,— ասաց Հայրապետը,— Վարդանը, միայն Վարդանը կարող է ազատել Լալային։

Արևը արդեն մայր էր մտել։ Երկու ամուսինները վեր կացան և սկսեցին շտապել դեպի տուն։ Ճանապարհին Հայրապետը մտածում էր այն բանի վրա, թե ի՞նչ պատրաստություններ է տեսնում բեկը, ինչո՞ւ համար է նա զենքեր բաժանում։ Մթթե այդ մի սարսափելի ձեռնարկության նախապատրաստություն չէ՞ր...

Ժէ

Բոլորովին մութն էր, երբ Հայրապետը և Սառան վերադարձան տուն։ Նրանք իմացան, որ Թոմաս էֆենդին Վարդանի հետ ունեցած անբավականությունից հետո դժգոհությամբ հեռացել էր իրանց տնից, և ծերունի Խաչոն այդ մասին շատ անհանգիստ էր, վախենալով, մի գուցե կապալառուն իրանց համար մի չար որոգայթ լարե։

Բայց Վարդանը, չնայելով իր դյուրաբորբոք և դյուրագրգիռ բնավորությանը, այնքան անքաղաքավարի չէր, որ իզուր տեղը անպատվեր մեկին։ Նա համարում էր էֆենդուն մի գարշելի մարդ, որ թուրք կառավարության ներկայացուցիչների ձեռքում գործիք դարձած, ծծում էր իր համազգիների արյունը, հարբստահարում էր և աղքատացնում էր նրանց։ Բացի դրանից, նրան

հայտնի էր կապալառուի անցյալը։ Այդ մոլաշրջիկ խաբեբան միևնույն պաշտոնով եղել էր Հայաստանի շատ կողմերում, և իրավ, շատ տեղերում պսակվել էր, կնիկներին թողել էր և շատ տեղերում խելքից հանել էր անմեղ աղջիկներին։ Այժմ միևնույն կեղտոտ նպատակներն ուներ և Լալայի վերաբերությամբ, և օգուտ քաղելով նրա հոր միամտությունից, կամենում էր մի զզվելի դեր խաղալ։ Այդ, իհարկե, տանել չէր կարող Վարդանը, մանավանդ մի աղջկա վերաբերությամբ, որին ինքը սիրում էր։

Բայց էֆենդու շուտափույթ կերպով ծերունի Խաչոյի տնից հեռանալու պատճառը միայն այն չէր, որ նա անբավականություն ունեցավ Վարդանի հետ և չկամեցավ մյուս անգամ տեսնել նրա երեսը։ Էֆենդին բավական համբերող էր դեպի վիրավորանքները. նա վաղուց սովորել էր լռությամբ տանել դրանից ավելի խիստ անարգանքներ։ Բայց նա այսօր մի առանձին սուրհանդակի ձեռքով թուղթ ստացավ, որով հրամայում էին նրան հավաքել իր ձեռքի տակ գտնված արքունի ցորենները և գարիները առանձին ամբարներում, և բնավ չծախել, որովհետև կառավարությանը պետք էին։ Կարծես, մի բանի գաղտնի կերպով պատրաստվում էր. այստեղ՝ պաշար, իսկ այնտեղ, Ֆաթթահ-բեկի բանակի մեջ՝ զենքեր...

Երբ տանը հյուր կար, ծերունի Խաչոն միշտ օդայի մեջ էր անցկացնում և իր հյուրի մոտից չէր հեռանում։ Վարդանին իսկապես հյուրի տեղ չէին դնում. նա տան տղա էր։ Բայց Թոմաս էֆենդու գնալուց հետո նրա տանը հայտնվեցավ մի նոր հյուր։ Դա մի երիտասարդ էր նիհար և գունաթափ դեմքով, և թույլ, ավելի քնքուշ կազմվածքով,— մի երիտասարդ, որի արտաքին կերպարանքը մտածել էր տալիս, թե երկար տարիներ մաշվել և թառամել էր դպրոցների նստարանի վրա։ Ի՞նչ կոչումի և ի՞նչ պարապմունքի մարդ էր դա, հայտնի չէր, միայն այսքանը հայտնի էր, որ պոլսեցի է, հայ է, և ծերունի Խաչոն պարտ էր համարում հարգել մայրաքաղաքից եկած հային։ Բացի ճանապարհորդական խուրջինից նա իր հետ ուրիշ ոչինչ չուներ, և կիսամաշ եվրոպական հագուստը ցույց էր տալիս, որ աղքատ մեկը պետք է լինի։ Նրա բերող շարվադարը ձգեց նրան գյուղի մեջ և հեռացավ։ Նա ման էր գալիս, որ իր համար գիշերելու օթևան գտնե, երբ հանդիպեց Վարդանին։ Ասում են, սրտերի մեջ մի գաղտնի ճանապարհ կա։ Այդ երկու երիտասարդները

կարճ խոսակցությունից հետո մտերմացան, և որպես մի գաղտնի աղանդի պատկանող երկու անդամներ, առանց նախապես միմյանց հետ ծանոթ լինելու, եղբայրական ձեռք մեկնեցին միմյանց։ Վարդանը նրան վեր առավ և բերեց ծերունի Խաչոյի տունը։

Նոր հյուրը իրան կոչում էր Միքայել Դուդուկջյան։ Որպես տաճկաստանցոց բոլոր տոհմանունները առած են լինում հոր կամ պապի արհեստից, պարոնի հայրն էլ դուդուկներ է շինելիս եղել, այսինքն՝ մի տեսակ շվիներ, որ երեխաները ածում են։ Իսկապես ծերունի Խաչոյին շատ դուր չեկավ ոչ նրա տոհմանունը, որ դժվարությամբ էր արտասանում, ոչ նրա հիվանդոտ և գունաթափ դեմքը, ոչ նրա անհանգիստ աչքերը իրանց տենդային փայլով և ոչ էլ նրա մթին ու ծածկամիտ բնավորությունը, որ իսկույն կասկած էր հարուցանում։ Բայց Վարդանը ծածուկ ասել էր ծերունուն, թե «լավ տղա է, երբ ճանաչես, կսիրես դրան»։

Մտնելով ծերունի Խաչոյի տունը, անծանոթ հյուրը միայն մի բան հարցրեց Վարդանից.

— Կարելի՞ է հավատալ դրանց...

— Կարելի է...— պատասխանեց Վարդանը։

Երբ օդայի մեջ ճրագը վառվեցավ, գյուղական սովորության համեմատ, իսկույն ընթրիք տվեցին։ Այս գիշեր սեղանակից էին ծերունի հոր հետ նրա բոլոր վեց որդիները, որովհետև Թոմաս էֆենդին այնտեղ չէր, և մի ուրիշ բարձրաստիճան հյուր չկար, որի պատճառով որդիները համարձակություն չունենային սեղան նստելու։ Վարդանը տան տղա էր համարվում, իսկ նոր հյուրի վրա նայում էին որպես մի մարդու վրա, որ այնքանով ևս գոհ պետք է լիներ, որ այս գիշեր կուշտ փորով հաց էր ուտելու։

Ընթրիքի ժամանակ խիստ տխուր անցավ։ Վարդանը և նոր հյուրը համարյա չէին խոսում։ Իսկ ծերունին նույնպես խիստ հազիվ անգամ խոսք էր փոխում իր որդիների հետ։ Սեղանակիցների սրտերը լցված էին զանազան տեսակ, միմյանցից տարբեր ցավերով։

Ծերունին կապալառուի վրա էր մտածում, թե նա դժգոհությամբ հեռացավ իր տնից։ Հայրապետը զբաղված էր քուրդ բեկով և Լալայի վիճակով. նա կրկին միտքն էր բերում Սառայի

պատմությունը և մտածում էր, թե ի՞նչ պետք է անել։ Ծերունու մյուս որդիները մտածում էին իրանց մշակությունների վրա, թե առավոտյան ով ի՞նչ գործ պետք է կատարե։ Վարդանի գլխի մեջ պտտվում էր Լալայի գեղեցիկ ուրվականը։ Իսկ նոր հյուրը, աստված գիտե, թե ինչ բանի վրա էր մտածում...

Երբ սեղանը հավաքեցին, Ստեփանիկը բերեց իբրիքը[1] և լագանը, իր ձեռքով ջուր ածեց, և տեղային սովորության համեմատ, նրանք լվացին իրենց ձեռքերը, գոհացան և փառք տվին աստծուն։ Ծերունին սկսեց ծխել իր երկայն չիբուխը, իսկ պարոն Դուդուկջյանը հանեց իր ծոցից մի գեղեցիկ պորտսիգար, որ ամենևին չէր համապատասխանում նրա հնամաշ հագուստին, և դուրս բերելով նրա միջից մի թանկագին սիգար, երկար եղունգներով ծայրը կտրեց, և սկսեց ծխել։ Փոքրիկ սենյակը լցվեցավ հավանյան ծխախոտի անուշահոտությամբ։ Երևում էր, որ այդ մարդը մի ժամանակ զուրկ չէ եղել կյանքի վայելչություններից, իսկ այժմ հանգամանքները ձգել էին նրան մի տարօրինակ կյանքի մեջ։

Ընթրիքից հետո խոսակցության առարկան Թոմաս էֆենդին էր։ Վարդանը մասնավորապես պատմել էր պարոն Դուդուկջյանին այդ մարդու մասին, և այդ պատճառով խոսակցության առարկան նրան բավական ծանոթ էր։ Ծերունի Խաչոն խիստ քաղաքավարի կերպով նկատեց Վարդանին, թե նրա այն օրվա վարմունքը էֆենդու հետ անխոհեմ էր։

— Ես,— ասաց նա,— դու գիտես, որ քեզ չեմ ջոկում իմ այս յոթն որդիներից,— նա ցույց տվեց վեց որդու վրա, որ նստած էին և Ստեփանիկի վրա, որ կանգնած էր։

Ծերունին սովորություն ուներ միշտ յոթն որդիների անունով խոսել և նրանց անունով երդվել, Ստեփանիկին ևս նրանց հետ հաշվելով, բայց չգիտեր, որ Վարդանին վաղուց հայտնի էր Ստեփանիկի աղջիկ լինելը։

— Այս յոթը որդիներիս արևը թող վկա լինի, եթե սուտ լինեմ ասելու,— շարունակեց նա,— դու էլ իմ որդին ես, իմ տունը քո տունն է, գալիս ես, գնում ես, և որքան սիրտդ ուզում է մնում ես։ Իմ դուռը քո առջև միշտ բաց է։ Բայց պետք է գիտենալ, որ այստեղ՝ ուրիշ երկրների նման չէ, այստեղ Թոմաս էֆենդու նման մարդիկը՝ մեծ մարդիկ են, շա՜տ մեծ մարդիկ...

1 Իբրիզ—մետաղե աման, որը գործածվում է ջուր լցնելու համար։

նրանք ինչ որ կամենան, կարող են կատարել։ Այս պատճառով, նրանց պետք է ակամա հարգել և երբեմն նրանց խոսքերի ու արարմունքների մասին պետք է լռել... Ի՞նչ կարող ենք անել։ «Մի չարագործի ձեռք, ասում է առակը, եթե չես կարող կտրել, պետք է համբուրես և գլխիդ վրա դնես»։ Էֆենդին, կարելի է, քեզ մի վնաս չկարողանա հասցնել, որովհետև այստեղացի չես, բայց մենք քո փոխարեն պիտի տուժենք նրա հասցրած վնասը։ Դու խո լսե՞լ ես Թուրքի առածը. «Էշից վախեցավ և սկսեց փալանին ծեծել»...

Ծերունու խոսքերը կրկին հավաքեցին խենթի իծանները[1]։ Նա պատասխանեց.

— Թուրքերի վերաբերությամբ մեր կողմի հայերը մի լավ առած ունեն, ասում են՝ «Թուրքին մինչև չծեծես, բարեկամ չի դառնա»։ Ես Թոմաս էֆենդուն թուրքերից չեմ զանազանում, և շատ ցավում եմ, թե ինչո՞ւ նրան մի լավ չծեծեցի, թեև նրա բարեկամությունը ինձ շատ հաճելի չէր կարող լինել։

Ծերունու երեսի խորշոմները ավելի կնճռվեցան, երևում էր պատասխանը նրան դուր չեկավ։ Իսկ Ստեփանիկի դեմքի վրա փայլեց մի պայծառ ժպիտ, որը չէր կարող չնկատել Վարդանը։ Նա դեռ կանգնած էր ոտքի վրա, և որպես տան փոքրիկը, սպասավորություն էր անում։ Վարդանը հիացմունքով նայեց նրա վրա, միևնույն ժամանակ նրա մտքից անցան այս խոսքերը. «Ահա միակ արարածը այս տան մեջ, որ համակրում է ինձ... որովհետև նա միայն է, որ զգացել է այդ գարշելի մարդու լրբությունը»...

— Դուք ինքներդ թույլ եք տալիս այս տեսակ ցած, անբարոյական, անիրավ մարդերին բռնանալ ձեզ վրա,— շարունակեց Վարդանը ավելի տաք կերպով.— որովհետև նրանց բոլոր չարագործությունների առջև աչքներդ փակած, համբերում եք։ Ես հասկանում եմ, երբ թուրքը, քուրդը հային հարստահարում է, ճնշում է, և նրա կենսական բոլոր ուժերը խլելով նրանից, մահացնում է։ Ես այդ հասկանում եմ, և մինչև անգամ բնական եմ համարում, որովհետև նրանք դարերով այսպես վարվել են հայի հետ և նույն կերպով շարունակում են։ Այդ դարձել է թուրքի և քուրդի համար մի տեսակ կենսական պահանջ, առանց որին նրանք հազիվ թե կարող են ապրել։ Բայց երբ որ հայը վարվում է իր համազգիների հետ ավելի վատթար, քան թե թուրքը և քուրդը, այդ եղեռնագործության դժվար է համբերել։ Ես այս խոսքերը էֆենդու երեսին ասեցի, և նա մի բառ ևս չգտավ պատասխանելու։

— Ես դրանից վատը կասեի նրան,— խոսակցության մեջ մտավ Հայրապետը,— բայց հայրս միշտ մեզ խրատում է, թե պետք է լուռ մնալ, թե պետք է զգույշ լինել... մի օր ազատություն կլինի մեզ... պետք է համբերել... չգիտեմ, մինչև ե՞րբ պետք է համբերել...

— Մինչև Հիսուս Քրիստոսի գալուստը...— հեգնորեն պատասխանեց Վարդանը,— բայց, ափսո՜ս, մինչև այն ժամանակը աշխարհի երեսին մի հայ էլ չի մնա, որ իր ազատությունը տեսնե. բոլոր քուրդ կամ թուրք դարձած կլինեն...

— Համբերությունը կյանք է...— խոսեց Ծերունին քարոզի ոճով։— Մեր տերտերները, մեր վարդապետները միշտ այդ են քարոզում մեզ։ Ախար մի օր կլինի, որ աստված կմտաբերե իր կորուսյալ ոչխարներին... Պետք է համբերել, զավակներս... «Համբերությունը կյանք է»...

— Համբերությունը մա՜հ է...— պատասխանեց պարոն Դուդուկչյանը, որ մինչև այն ժամանակ չէր խոսում և լուռ լսում էր նրանց վիճաբանությունը։ Երիտասարդի գունատ դեմքը այժմ բոլորովին դեղնեց և նրա նուրբ, նույնպես գունաթափ շրթունքները սկսեց դողդողալ։

— Համբերությունը մա՜հ է...— կրկնեց նա վրդովված ձայնով,— դերեզմանի մեջ միայն մարդը սովորում է համբերող լինել... Մի այսպիսի հրեական համբերությունը, որ ունենք մենք, տանում է դեպի անդառնալի կորուստը։ Հրեաները շատ համբերեցին, աշխարհի բոլոր հպածանքներին դիմացան, սպասելով, թե կհայտնվի մի Մեսիա, որ կվերանորոգե սուրբ Երուսաղեմը և կվերականգնե Իսրայելի հին փառքը... և մինչև այսօր սպասում են... Բայց մենք մի այսպիսի ակնկալություն ևս չունենք, չգիտեմ, էլ ի՞նչ բանի ենք սպասում...

— Մեր տերտերները, մեր վարդապետները համբերություն են քարոզում...— շարունակեց նա առաջվա մաղձոտ ձայնով։— Ախար նրանք քանդեցին մեր տունը և այս ստրկական վիճա-

[1] Իծաներ փոխաբերական մտքով դևի կամ չար ոգիների նշանակություն ունի ռամիկ ժողովրդի լեզվում։

կին հասցրին մեզ։ Եթե կա մի բան, որ կարող է փրկել հարբստահարված և ճնշված ժողովուրդներին, դա է՝ բողոքը, ինչ կերպով և հայտնվելու լիներ նա։ Դժգոհությունը, տրտունջը և իր վիճակից մի ավելի բարեբախտ վիճակի ցանկանալը՝ ահա այն փրկարար շարժառիթները, որ կարող են մեզ ազատել ստրկությունից։ Բայց համբերության մեջ խեղդվում են, մահանում են այս տեսակ բարձր ձգտումները...

Ծերունին ոչինչ չպատասխանեց։ Վարդանը և Հայրապետը բռնեցին երիտասարդի ձեռքը և բարեկամաբար սեղմեցին։ Ծերունու մյուս որդիները ոչինչ չհասկացան և իրանց մտքում ասացին— ահա մի ուրիշ խենթ ևս...

Ծերունին հրամայեց հյուրերի համար քնելու տեղ պատրաստեն, իսկ ինքը որդիների հետ, բարի գիշեր մաղթելով, հեռացան։ Տան հարսներից մեկը, երեսը կալած, եկավ անկողինները պատրաստեց։

Օդայի մեջ ճրագը դեռ վառվում էր։ Երկու հյուրերը իրանց անկողիններում երկար անքուն մնացին։ Պարոն Դուդուկչյանը կրկին վառեց իր կիսատ մնացած սիգարը և սկսեց ծխել։ Վարդանը նկատեց նրան.

— Բարեկամ, ձեր լեզուն անհասկանալի է, դուք հազիվ թե կարող կլինեք այստեղ մի գործ շինել... Ժողովրդի հետ խոսելու համար պետք է հարյուրավոր առակներ և առածներ գիտենալ... Քրիստոս իր առակներով ավելի գործ շինեց, քան թե բարձր վերացական քարոզներով։

— Այո՛, ես չսովորեցի ժողովրդի լեզուն...— պատասխանեց պարոն Դուդուկչյանը և լռեց։

ԺԸ

Օդայի մեջ յուղային ճրագը դեռ վառվում էր, տարածելով իր շուրջը աղոտ լույսը։ Վարդանը երկար մնաց անքուն։ Այն գիշերվա խոսակցությունները գրգռել էին նրա ուղեղը։ Նա հիշում էր Ծերունու որդիների սառնասրտությունը դեպի իր և նորեկ հյուրի «քարոզները»։ Նա զարմանում էր, որ այնպես կասկածանքով էին նայում այդ ոգելից և ազնիվ երիտասարդի վրա։ Մյուս կողմից, նրա սիրտը խռովում էր երկու սեր, որոնք շատ չէին տարբերվում միմյանցից իրանց բնավորությունով,— մեկը, հարստահարված գյուղացու սերը, մյուսը՝ Լալայի սերը, որ նույնպես բարոյական հարստահարության ենթակա էր...

Նա աչք ձգեց, տեսավ, որ նորեկ երիտասարդը քնած էր։ Ճրագի աղոտ լուսով նկարվում էր նրա գունաթափ և մաշված դեմքը, որի սուր գծերի մեջ արտահայտվում էր մի հաստատուն բնավորություն։ Նրա քունը անհանգիստ էր։ Տենդային զառանցության մեջ տանջվում էր նա։ Երբեմն նրա ցամաք շրթունքը շարժվում էին, և լսելի էին լինում խառն, կցկտուր խոսքեր, ֆրանսերեն և հայերեն լեզվով.

«Գյուղացիներ... հասավ ժամը... ձեր արյունով պիտի գնեք... ձեր ազատությունը... ներկան... ապագան.... մեզ է պատկանում... ցույց տվեք... քաջե՛ր, որ թուրքի... երկաթի գավազանը... բոլորովին չէ մահացրել... ձեր մեջ կյանքը... և... ազատության... զգացմունքը... Կրակի... և... սրի մեջ... պիտի գտնենք մեր... փրկությունը...։ Դեպ առա՛ջ... քաջե՛ր...»։

— Խե՜ղճ,— ասաց Վարդանը գլուխը շարժելով։— Երևի շատ գրքեր է կարդացել... Հայ գյուղացու ողորմելի օդայի մեջ իրան Փարիզի բարիկադների վրա է երևակայում և ճառ է խոսում... խե՜ղճ...

Այդ միջոցին Վարդանի ականջին զարկեց երգի մեղմիկ ձայն, որ տխուր հնչյուններով լսելի էր լինում գիշերային լռության մեջ։ Նա ճանաչեց նազելի ձայնը և դուրս եկավ օդայից։

Ծերունի Խաչոյի տանը մի երկրորդ արարած ևս այն գիշեր արթուն էր, նա իր անկողնի մեջ անհանգիստ կերպով այս կողմ և այն կողմ էր շուռ գալիս։ Նրա շուրջը, սրահի մեջ, այր և կին բոլորը ծանր քնով խոմփում էին։ Մշակի հոգնած և վաստակաբեկ անդամները գիշերվա արթնություն չգիտեն։

Միայն Լալան հանգիստ լինել կարող չէր։ Նա հագնվեցավ և կամաց դուրս եկավ սրահից։ Կատուն այնպես զգույշ, այնպես հեզիկ կերպով չէր կարող փոխել իր քայլերը, որպես այդ մանկահասակ աղջիկը, անցնելով սրահի միջից, հայտնվեցավ բակում։ Շունը նրան հեռվից տեսնելով սկսեց հաչել։ «Սո՜ւս»,— շշնջաց նա հազիվ լսելի ձայնով։ Շունը լռեց։ Խաղաղ գարնանային գիշեր էր։ Օդի զովությունը մրսեցնելու չափ ցուրտ էր. բայց նա ավելի կազդուրեց օրիորդին, ավելի հովացրեց նրա բորբոքված դեմքը։ Նա անցավ դեպի պարտեզ և մտավ ծառերի մեջ։ Այստեղ խավարը ավելի թանձր էր. այստեղ նրան չէին

տեսնի։ Նա նստեց թավիշյա խոտերի վրա, և ձեռքը ծնոտին դրած, սկսեց նայել դեպի երկինքը։ Լուսինը չէր երևում. «Որտե՞ղ է նա, մտածում էր օրիորդը, երևի քնած էր»։ Նրա շուրջը տիրում էր խորին լռություն։ Ծառերի վրա մի տերև անգամ չէր շարժվում։ Բոլորը հանգստանում էին, թե քամին, որ շատ անգամ օրորում էր այդ ծառերի ճյուղերը, և թե գետը, որի աղմկալի հոսանքի ձայնը նա միշտ լսել էր գիշերային՝ լռության ժամանակ։ Բոլո՞րը հանգստանում էին, միայն ինքը անհանգիստ էր, միայն ինքը արթուն էր։

Նա հիշեց մի երգ, որ սովորել էր պառավ տատից. և բոլորովին ակամա կերպով դուրս թռան նրա սեղմված շրթունքի միջից սիրելի երգի անուշ հնչյունները.

«Քնած է լուսնյակը երկնքի խորքում,
Քնած է թռչնակը իր փափուկ բընում,
Քնած է քամին, տերևը չէ շարժվում,
Քնած է գետը, ձայնը չէ լսվում։

Մայրիկ, ինչո՞ւ ես քնել չեմ կարում,
Ուզում եմ քնել, աչքս չէ փակվում.
Մայրիկ, այս ի՞նչ է, որ ինձ տանջում է,
Այս ի՞նչ կրակ է, որ սիրտս այրում է»։

Վերջացնելով երգը, նա գլուխը ցած թողեց ծնկների վրա, և երկու ձեռքով բռնելով իր բորբոքված երեսը սկսեց դառն կերպով լաց լինել։ Արտասուքը հեղեղի նման թափվում էր նրա սիրուն աչքերից։ Ինչո՞ւ էր լաց լինում։— Ինքն էլ չգիտեր։ Արդյոք նրա համար, որ միտը բերեց իր սիրելի մորը, որին չէր տեսել, որի բերնից մի անուշ խոսք անգամ չէր լսել։ Էլ ինչո՞ւ էր լաց լինում։ Այդ ի՞նչ անբացատրելի զգացմունք էր, որ խռովում էր նրա կուսական անմեղ սիրտը։

Բայց արտասուքը փոքր-ինչ հանգստացրեց նրան։ Նա գլուխը վեր բարձրացրեց նայեց իր շուրջը, և նրա աչքը ընկավ չորս կաղամախիների հովանու տակ հանգստացած գերեզմանի վրա, որ շատ հեռու չէր իր նստած տեղից։ Դա իր քրոջ՝ Սոնայի գերեզմանն էր, որին թեև չէր տեսել, բայց նրա ցավալի պատմությունը հազար անգամ լսել էր։ Հանգուցյալը նահատակի նշանակություն էր ստացել ռամիկ ամբոխի մեջ, և նրա գերեզմանի մոտ շատ անգամ բերում էին հիվանդներ։ Ծերունի

հոր պատվիրելով, նրա վրա ամեն կյուրակեմոտ դիշեր վառվում էր մի յուղային ճրագ։ Այս գիշեր ճրագը տակավին ծխըրտում էր, պլպլում էր և լուսավորում էր գերեզմանի դաջով պատած սպիտակ մակերևույթը։ Լալան սարսափով նայում էր նրա վրա։ Քրոջ ցավալի պատմությունը նրա բորբոքված երևակայության մեջ իրականություն ստացավ։ Նա այժմ տեսնում էր գերեզմանի փոխարեն մի քրդի սև շադր, լեռների մի խուլ ձորի մեջ կաղմված։ Նրա մեջ նստած էր Սոնան զարհուրելի հուսահատ դեմքով։ Նա իր ձեռքում բռնած ուներ թույնի բաժակը, մոտեցնում էր շրթունքին և ետ էր տանում։ Երկա՞ր նա մաքառում էր կյանքի և մահվան դեմ։ Ահա, մոտենում էր շադրին քուրդ ազնվականը՝ Սոնայի հափշտակողը։ Սոնան տեսավ նրան, կրկին մոտեցրեց իր շրթունքին թունալից բաժակը, խաչակնքեց և խմեց...

Տեսարանը փոխվեցավ։

Լալայի աչքի առջև դրած էր դարձյալ Սոնայի սպիտակ գերեզմանը։

Այժմ նրա երևակայության մեջ պատկերացավ երկու ուրիշ անձինք։ Մեկը, Թոմաս էֆենդին իր խորամանկ և գարշելի դեմքով, մյուսը՝ քուրդ Ֆաթթահ-բեկը իր վայրենի և գազանային դեմքով։ Նա բոլոր մարմնով դողաց։ Արդյոք գիտե՞ր, արդյոք հայտնի՞ էր նրան, թե ինչ փոս են փորում այդ երկու մարդիկը իր համար։— Նա ոչինչ չգիտեր. նա միայն զգում էր...

— Չէ՛,— բացականչեց նա սոսկալի ձայնով,— ես Սոնայի մոտ չեմ գնա... ես վախենում եմ գերեզմանից...

Այդ միջոցին մի ձեռք հեզիկ կերպով դրվեցավ նրա ուսի վրա, և լսելի եղավ նրա անունը։

— Լալա...

Օրիորդը ոչինչ չլսեց։

— Լալա՜... կրկնվեցավ ձայնը,— ես չեմ թողնի, որ դու Սոնայի մոտ գնաս... ես կաղատեմ քեզ...

Նա ետ նայեց, տեսավ, իր մոտ կանգնած էր Վարդանը։

— Հա՛, ազատի՛ր ինձ...— խոսեց նա, դեռ առանց սթափվելու իր առաջին խռովությունից,— ազատի՛ր, տա՛ր մի ուրիշ երկիր, այստեղ վատ է... այստեղ շատ վատ է...

Ծրիտասարդը նստեց նրա մոտ։

Նրանք մի քանի րոպե մնացին լուռ. խոսք չէին գտնում խո-

սելու։ Լալան տակավին խորին հափշտակության մեջ մտաբերում էր այն սոսկալի տեսիլքը, որ այնքան վախեցրեց նրան։ Վարդանը մտածում էր, թե ինչո՞ւ այդ անմեղ, անփորձ աղջիկը աղաչում էր հեռացնել իրան հայրենի աշխարհից, ուր նա այնքան սիրված էր ընտանիքից. ինչո՞ւ ցանկանում էր նա մի ուրիշ, հեռու երկիր գնալ։ Մի՞թե սերը, սիրած աղամարդի սերը ձգել էր նրան այս ցնորքների մեջ։ Բայց սերը դեռևս նրա համար մի անորոշ և մթին զգացմունք էր։ Երիտասարդը հարցրեց.

— Ինչո՞վ վատ է այդ երկիրը։

— Վա՜տ է, շա՜տ վատ է,— պատասխանեց նա տխրությամբ լի ձայնով.— տեսնում ե՞ս այդ գերեզմանը։

Նա ցույց տվեց Սոնայի գերեզմանը։

— Գիտե՞ս ով է դրած նրա մեջ։

— Գիտեմ...

— Գիտե՞ս ինչպես մեռավ նա։

— Գիտեմ...

— Ես չեմ ուզում Սոնայի պես մեռնել, Վարդան, ես վախենում եմ թույնից... վախենում եմ գերեզմանից...

Կրկին խեղճ աղջկա աչքերը լցվեցան արտասուքով։

— Ինչո՞ւ ես կարծում, Լալա, թե դու էլ Սոնայի պես բախտ կունենաս,— հարցրեց երիտասարդը նրա ձեռքից բռնելով։— Այդ մի ցավալի դեպք էր, որ ամեն աղջկա հետ չէ պատահում։ Ինչո՞ւ ես դու մտածում, որ միևնույնը կարող է և քեզ պատահել։

— Ես այդ միշտ մտածում էի... միշտ սպասում էի... հենց այն օրից, երբ սկսեցի հասկանալ թե ինչո՞ւ են ինձ տղայի հագուստով պահում... Այստեղ աղջիկ լինելը աստուծո պատիժն է... մի հանցանք է... մանավանդ սիրուն աղջիկ լինելը... Լսի՞ր, Վարդան, ես մի ծանոթ աղջիկ ունեի, որին շատ սիրում էի, նա շատ լավ աղջիկ էր և մեր դրացին էր։ Մայրը ամեն օր ծեծում էր նրան, թե ինչո՞ւ նա սիրուն ծնվեց, թե ինչո՞ւ նա օրըստօրե գեղեցկանում էր։ «Դու, ասում էր մայրը, մեր գլխին մի պատուհաս կբերես...» և Նարգիսը լաց էր լինում, այդպես էր նրա անունը։ Մայրը չէր թողնում Նարգիսին, որ նա իր երեսը լվանա, որ մազերը սանդրե և միշտ պատառոտած հագուստով էր պահում։ Վերջը քրդերը տարան Նարգիսին։ Քանի օր առաջ ես տեսա նրան, ա՜խ, որքան տգեղացել էր... այժմ նա սիրուն

չէր... Ասում էր, Ստեփանիկ, շատ վատ է քրդին կին լինելը... և լաց էր լինում...

Լալան ինքն էլ սկսեց լաց լինել։ Երբ մի փոքր հանգստացավ, հարցրեց.

— Վարդան, դու ինձ այստեղից կտանես, այնպես չէ՞։

— Կտանեմ, միամիտ կաց։

— Շուտ տա՜ր, կուզես, հենց հիմա տար, ես կգամ քեզ հետ, ուր որ տանելու լինես։

— Մի քանի օր սպասիր, Լալա, մինչև հորդ հետ կխոսեմ։

Այսպես նստած, նրանք երկար և երկար խոսում էին գիշերային մթության մեջ, մինչև տխրության զգացմունքը տեղի տվեց սիրո բերկրության զգացմունքին։

ԺԹ

Մյուս առավոտ Վարդանը զարթնեց շատ ուշ, որովհետև գիշերը մեծ մասը անց էր կացրել անքուն։ Մի գաղտնի ուրախություն փայլում էր նրա փոքր-ինչ գունաթափ դեմքի վրա։ Նա տեսավ, որ պարոն Դուդուկջյանը օդայում չէ, միայն մի անկյունում դրած էր նրա ճանապարհորդական խուրջինը։ Ո՞ւր էր գնացել այդ մարդը։ Վարդանը հենց առաջին օրից նկատեց, որ պարոնը մի անփորձ երիտասարդ էր, որին պետք էր պահպանել և աչքից հեռու չթողնել։

Ներունու տանը ամեն ոք զբաղված էր իր սովորական գործով։ Խաչոյի որդիները գնացել էին իրանց դաշտային մշակությունները հոգալու։ Ինքը՝ Ներունի հայրը դուրս էր եկել, որ տեսնե, թե ինչ են շինում որդիները։ Հարսները զբաղված էին տնային տնտեսությունով։ Ոչ ոք անգործ չէր։ Միայն Հայրապետը մնացել էր տանը։ Նա հարմար ժամանակ համարեց մտնել Վարդանի մոտ, մտածելով, գուցե նրանից մի բացատրություն կլսե Լալայի մասին և առիթ կունենա քրոջ մասին խոսելու։ Նրա մյուս եղբայրները, բացի Ապոյից, այլևս Լալայի մասին չէին մտածում, և համարյա մոռացել էին, թե ինչ վտանգ է սպառնում նրան քուրդ բեկից։ Նրանք թողել էին Լալային իր բախտին, կրկնելով այն ճակատագրական խոսքը, թե ինչ որ աստված կամեցել է այն կլինի։ Հայրը դեռ ոչինչ լսած չէր։ Նա

մտածում էր ստուգել Թոմաս էֆենդու անցյալը, որին համարում էր իր Լալայի ապագա փեսան։

Երբ Հայրապետը մտավ օդան, Վարդանը հարցրեց նրանից.

— Ո՞ւր է գնացել իմ նոր ընկերը։

Հայրապետը հասկանալով, որ պարոն Դուդուկչյանի մասին է հարցնում, պատասխանեց.

— Զարմանալի մարդ է այդ քո նոր ընկերը, վաղ առավոտյան դեռ արևը չծագած վեր կացավ, երկայն կոշիկները հագավ առանց լվացվելու, առանց սանրվելու և առանց նախաճաշիկ ուտելու, իր ծանր գավազանը վեր առեց, և տնից դուրս գնաց։ Մենք հարցրինք, ո՞ւր ես գնում, նա ոչինչ չպատասխանեց, գլուխը շարժեց և հեռացավ։

— Ո՞ւր գնաց,— հարցրեց Վարդանը անհանգստությամբ։

— Զղիտեմ, միայն ես գյուղի մեջ տեսա, նա հանդիպեց մի կիսամերկ և ոտաբոբիկ աղջկա, որ գնում էր գետից ջուր բերելու։ «Ինչո՞ւ ես այսպես հագնվել, հարցրեց նա աղջկանից, քո հասակում անվայելուչ է այսպես հագնվել»։ Աղջիկը պատասխանեց, թե իր ծնողները աղքատ մարդիկ են։ Նա հանեց իր քսակից մի ոսկի և տվեց աղքատ աղջկան։ Ես կարծում եմ, Վարդան, այդ վերջին դրամն էր, որ նա ուներ։

— Կարելի էր,— պատասխանեց Վարդանը մտահոգության մեջ,— բայց հետո ո՞ւր գնաց։

— Հետո մոտեցավ նա մի խումբ գյուղացիների, որ նոր էին դուրս եկել ժամից, և հավաքված եկեղեցու դռանը խոսում էին հարկերի բաժանման վրա։ Նա խոսակցության մեջ մտավ և սկսեց բացատրել գյուղացիներին, թե նրանք վճարում են կառավարությանը ավելի քան պետք է վճարել, բայց նրանց հասարակական գործերի մասին ամենևին հոգ չեն տանում։ Խոսում էր աղջկանց և տղայոց դպրոցների մասին, որոնցից զուրկ են մեր գյուղացիները. խոսում էր ինչ-որ ընկերության մասին, որ կարող էր բարվոքել գյուղացու տնտեսական վիճակը. խոսում էր ինչ-որ հասարակաց դրամարկղի մասին, որտեղից գյուղացին կարող էր էժան տոկոսով փող վեր առնել կարոտության ժամանակ, ո՞վ է իմանում, հազար ու մեկ այս տեսակի բաների վրա էր խոսում։

— Ի՞նչ պատասխանեցին գյուղացիները,— հարցրեց Վարդանը հետաքրքրվելով։

— Գյուղացիները ծիծաղեցին, հռհռացին և ոչինչ չպատասխանեցին։ Մեկը նրանցից ասաց իր ընկերին՝ այդ մարդը խենթ է։

— Փա՜ռք աստուծո, խենթը մենակ ես չեմ եղել,— ասաց Վարդանը ծիծաղելով,— ես կարծում էի, մենակ ինձ են խենթ համարում։ Հետո՞։

— Հետո գյուղացիներից մեկը հրավիրեց նրան մտնել իր հետ դահվեխանը մի բաժակ արաղ խմելու։ Նա ընդունեց հրավերը։ Այնտեղ գտնվում էր բոլորովին հարբած մի բազմություն։ Նա ինքը շատ փոքր խմեց, բայց վճարեց բոլորի համար։ Այնտեղ ևս սկսեց քարոզները գյուղացու բարօրության մասին և սկսեց բացատրել նրա թշվառության պատճառները։ Նա խոսում էր տաք և ոգևորված կերպով։ Ես առաջին անգամ զգում էի իմ մեջ, թե ինչ մեծ ներգործություն ունի խոսքի ուժը։ Բայց գյուղացիները արհամարհանքով լսում էին նրան։ Մեկը հարցրեց նրանցից, թե «ի՞նչ պաշտոն, ի՞նչ աստիճան ունիս», երբ պատասխան ստացավ, թե ծառայության մեջ չէ գտնվում, խիստ լրբաբար ասաց նրան. «էլ ի՞նչ ես դուրս տալիս»...

— Այո՛, այդ հասարակության վրա ազդելու համար անպատճառ պետք է կամ մուդիր, կամ գայմագամ և կամ Թոմաս էֆենդու նման մուլթեզիմ լինել։ Հասարակ գիտնականը ի՞նչ նշանակություն ունի նրանց աչքում...— խոսեց Վարդանը խորին տխրությամբ։— Պատմիր, Հայրապետ, շատ հետաքրքիր է։

— Ես,— շարունակեց Հայրապետը,— բռնեցի նրա ձեռքից և համարյա զոռով դուրս բերեցի դահվեխանից, վախենում էի, որ անկարգություն կպատահի։ Դրսում նա ինձ ասաց. «Այսպիսի տեղերում ավելի հեշտ է ճանաչել ժողովրդին. հարբած դրության մեջ նա բացում է իր սիրտը...»։ Մենք շարունակեցինք գնալ գյուղի միջով։ Նրա ուսից քարշ էր ընկած մի կաշյա պայուսակ, որ լիքն էր զանազան փոքրիկ տետրակներով։ Նա այդ տետրակները բաժանում էր հանդիպած գյուղացիներին, ոմանք չէին ընդունում, ասելով, թե կարդալ չգիտեն, իսկ ոմանք ընդունում էին, որոնք նույնպես կարդալ չգիտեին։ Այս վերջինների մեկից ես հարցրի, թե ի՞նչ պիտի անես, որ առնում ես։ Նա պատասխանեց. «Թուղթ է, կտանեմ տանը պետք կգա, մայրս բոնոթի (քթախոտ) կփաթաթե մեջը»։

Վարդանի դեմքը ավելի տխուր արտահայտություն ընդունեց, կարծես, մի ներքին ցավ սկսեց տանջել նրան։

— Դու ունե՞ս այդ տետրակներից,— հարցրեց նա։

— Ունեմ, երկու հատ ես վեր առա։

Վարդանը թերթեց տետրակները, մի փոքր կարդաց և ասաց վրդովված ձայնով.

— Այդպիսի տետրակների տարածելը տգետ ժողովրդի մեջ հիմարություն է... Հետո ո՞ւր գնաց նա։

— Ինձ հետ միասին դուրս եկավ գյուղից, խնդրեց, որ ես նրան մենակ թողնեմ։ Ես բաժանվեցա։ Նա բռնեց առաջին հանդիպած ճանապարհը և սկսեց դիմել դեպի մի ուրիշ գյուղ, որ հեռվից երևում էր։ Ես երկար կանգնած, նրա ետևից նայում էի, նա այնպես շտապում էր, կարծես այնտեղ սպասում էին նրան։ Ես կարող եմ երդվել, որ նա ինքն էլ չգիտեր, թե ուր է գնում. անդադար մոլորվում էր, անդադար ճանապարհից դուրս էր գալիս։

Վերջին խոսքերը Հայրապետը արտասանեց փոքր-ինչ ծաղրական կերպով։

—Նա, սիրելի Հայրապետ,— ասաց Վարդանը,— ձեր ձորի ոլոր-մոլոր ճանապարհին կարող է ծանոթ չլինել, բայց կյանքի ճանապարհի մեջ, հավատացնում եմ քեզ, նա մի հմուտ ուղեցույց է։

— Ես էլ մի այսպիսի բան նկատում եմ նրա մեջ,— պատասխանեց Հայրապետը զղջալով իր անտեղի ծաղրածության վրա,— երևում է, որ շատ է կարդացել։

— Բացի կարդալը նա խիստ բարի և ազնիվ մարդ է։

Հայրապետին այժմ շատ չէր հետաքրքրում անծանոթ երիտասարդը. նա առիթ էր որոնում խոսելու իր քրոջ մասին։ Սառայի պատմությունից հետո, թե Վարդանը և Լալան սիրում են միմյանց, նա միշտ սպասում էր, թե Վարդանը վերջապես կհայտնի իր սերը, որովհետև Հայրապետից ավելի մտերիմ մարդ չուներ նա այս տան մեջ։ Բայց Վարդանը այժմ, կարծես մոռացավ Լալային, և լսելով Հայրապետի խոսքերը պարոն Դուդուկչյանի մասին, նա սաստիկ մտատանջության մեջ ընկավ։ Նա վեր կացավ, կամենում էր դուրս գալ օդայից։

— Ո՞ւր ես գնում,— հարցրեց Հայրապետը։

— Գնում եմ պտռելու պարոն Դուդուկչյանին,— ասաց նա,—

դու իզուր բաց թողեցիր նրան, Հայրապետ, նա շատ անփորձ տղա է։

Երկուսը միասին դուրս եկան օդայից։

— Անցնենք ախոռատունը,— ասաց Վարդանը,— քանի օր է չեմ տեսել իմ ձիերին։

Նրանք սկսեցին դիմել դեպի ախոռատունը։ Բակում Վարդանը պատահեց Լալային, որ նստած պարտիզի միջով հոսող վրտակի ափի մոտ, լվացվում էր։ Երևի նա էլ նոր էր զարթնել քնից։

— Բարի լույս, Ստեփանիկ,— գոչեց հեռվից Վարդանը։

Լալան ոչինչ չպատասխանեց, միայն գլխի շարժումով ընդունեց նրա ողջույնը և խորհրդավոր կերպով ժպտեցավ։

Ախոռատան մեջ կապած էին Վարդանի երեք ուժեղ ձիանները, որոնցից մեկը իրանն էր, իսկ մյուս երկուսի վրա նստում էին նրա երկու ծառաները՝ Սաքոն և Եղոն,— երկու հսկա տղամարդիկ, որ միշտ անբաժան ուղեկիցներ էին Վարդանի հետ։

— Սաքո,— ասաց նա ծառաներից մեկին,— այսօր ձիանները նալել կտաս և ամեն ինչ կպատրաստես ճանապարհի համար, մենք երկար չենք մնալու այստեղ։

Հետո նա մոտեցավ ձիաներին, ձեռքը քսեց նրանց գեղեցիկ պարանոցի վրա, և լուռ նայում էր, կարծես, կամենալով գիտենալ, թե բավական հանգստացե՞լ են, կարո՞ղ են մի քանի օրվա ճանապարհը մի գիշերվա մեջ անց կենալ։

Հետո նա հրամայեց ձիաներից մեկը թամքել, որը շուտով պատրաստեցին, նստեց Հայրապետից հարցնելով.

— Ո՞ր կողմը գնաց պարոն Դուդուկչյանը։

Հայրապետը ցույց տվեց նրան գնացած տեղը, և Վարդանը քշեց ձին դեպի այն կողմը։

Նրա հեռանալուց հետո Հայրապետը ընկավ տխուր մտածությունների մեջ. «Ինչո՞ւ է նալել տալիս Վարդանը իր ձիաները, այս ի՞նչ ճանապարհի պատրաստություն է, մի՞թե նա պիտի թողնե և գնա առանց Լալայի մասին մի բան խոսելու, առանց նրան բախտավորացնելու, և վերջապես ինչո՞ւ նա այնպես սաստիկ հոգածության մեջ ընկավ, երբ լսեց պարոն Դուդուկչյանի «երեքայական» վարմունքը»,— այս մտածությունները այն աստիճան պաշարեցին նրան, որ բոլորովին շվարած մնաց։

Վարդանին ճանապարհ դնելուց հետո, երբ Հայրապետը վերադառնում էր տուն, նրան պատահեց իր կինը՝ Սառան, որ կաթի ահագին ամանը ձեռքում, գալիս էր փարախից։

— Ոչինչ չասա՞ց քեզ Վարդանը,— հարցրեց Սառան կանգնելով, և կաթի ամանը դնելով գետին։

— Չասաց,— պատասխանեց Հայրապետը տխուր ձայնով,— նա այժմ բավական ծածկամիտ է դարձել...

— Ես ամեն բան գիտեմ,— խոսեց Սառան ուրախությամբ,— նստիր, կպատմեմ քեզ։

Այր և կին նստեցին մի կամնասայլի վրա, որ ձգված էր բակի մեջ։

Սառան պատմեց, թե Լալան բոլորը խոստովանեց նրան, թե այս գիշեր, երբ տանեցիք քնած էին, նա պարտեզում գաղտնի տեսակցություն է ունեցել Վարդանի հետ։ Լալան չթաքցրեց այդ տեսության և ոչ մի մանրամասնությունը։ Վերջը Վարդանը ասել է Լալային, թե կխոսե նրա հոր հետ, եթե հայրը չհամաձայնվի Լալային իրեն տալ, կփախցնե և այնպես կտանե։

— Ուրեմն դրա համար հրամայեց ծառաներին պատրաստել ձիաները,— խոսեց Հայրապետը, մատը կծելով։

— Ի՞նչ կա, թող փախցնե, թող տանե, ավելի լավ,— պատասխանեց Սառան,— եթե նա չտանե, անօրեն քուրդը խո կտանե։

— Ես ընդդեմ չեմ...— պատասխանեց Հայրապետը,— բայց...

Խեղճ մարդիկ ուրիշ ժամանակ իրենց աղջկան կնահատակեին, կսպանեին, եթե գիտենային, որ նա գաղտնի տեսակցություններ է անում մի տղամարդի հետ, որ դեռ իր ամուսինը չէ։ Իսկ այժմ ակամա խոնարհվում էին դառն հանգամանքների առջև...

Ի

Վարդանը ամբողջ օրը ձիով ման եկավ, անցավ մի քանի գյուղեր, ամեն տեղ որոնելով Դուդուկչյանին։ Նրա հարցուփորձին պատասխանում էին, թե այո, տեսել ենք մի երիտասարդ երկայն կոշիկներով, եվրոպական հագուստով, լայն եզերյա սև գլխարկով, ահագին գավազանը ձեռին և տետրակներով լի պայուսակը կշտից քարշ գցած։ Եվ ամեն բերնից լսվում էր միևնույն կարծիքը, թե նա խենթ էր։

Երեկոյան Վարդանը վերադարձավ ծերունի Խաչոյի տունը առանց գտնելու թափառաշրջիկ երիտասարդին։

Ծերունի Խաչոյի հովիվներից մեկը պատմեց Վարդանին, թե նա տեսավ երիտասարդին հարևան գյուղում, և թուրք գյուղացիք հավաքված, նրան ծեծում էին. ինքը ճանաչեց, որ ծեծվողը իր աղայի հյուրն էր և ազատեց կատաղած գյուղացիների ձեռքից։

— «Ես մի այսպիսի բան սպասում էի»...— ասաց Վարդանը ինքը իրեն և դառնալով դեպի հովիվը հարցրեց.

— Ինչո՞ւ համար էին ծեծում։

— Ես չհասկացա,— պատասխանեց հովիվը,— ուզում էի նրան ավանակի վրա դնել և տուն բերել, բայց չընդունեց, ասաց, ես իմ ոտով կարող եմ գալ։ Ի՞նչ կգա, ոսկորների մեջ մի հատ էլ ողջ չի մնացել։

Այդ լուրը շատ տխրեցրեց Վարդանին. նա գիտեր, թե ինչ բան է թուրք գյուղացու մուշտին, մանավանդ երբ գործ է դրվում խեղճ հայի մարմնի վրա։

— Որտե՞ղ թողեցիր նրան,— հարցրեց հովիվից։

— Կես ճանապարհի վրա։ Օրորվելով գալիս էր։

Դեռ օդայի մեջ ճրագը նոր էին վառել, երբ հայտնվեցավ պարոն Դուդուկչյանը, հոգնած և ոտքից ցզլուխ ցեխոտված։ Վարդանը սպասում էր, որ նա իսկույն կսկսե պատմել գյուղացիների կոպիտ վարմունքը իր հետ, բայց այդ մասին նա ոչինչ չխոսեց, միայն նրա դեմքի վրա նկարված էր սաստիկ հուսահատություն դառն ատելության հետ։

Նա անցավ, և թեք ընկնելով պառկեց օդայի մի կողմում, թևքը դնելով բարձի վրա։

— Դուք կարո՞ղ եք տալ ինձ մի փոքր ծխախոտ,— խնդրեց նա Վարդանից։— Իմը սպառվել է։

— Իսկույն,— պատասխանեց Վարդանը և ծխախոտի տուփը տվեց նրան։

Նա դողդոջուն ձեռքով շինեց մի պապիրոս և սկսեց ծխել։

— Կատարյալ սֆինքս է, կատարյալ հանելուկ է այդ ժողովուրդը,— խոսեց նա ինքն իրան,— հա՛ մտածիր, հա՛ քննիր, դարձյալ չես կարող ճանաչել։ Նա կամ պատմություն չու-

նի, կամ պատմության մի տգեղ, մի այլանդակ արտադրությունն է...

Նա լռեց, անդադար թողնելով իր բերնից պապիրոսի թանձր ծուխը։ Կարծես նրա հետ աշխատում էր ցրվել սրտի վրա ծանրացած թախծությունը։

Վարդանը նույնպես լուռ էր։ Եվ խորին կարեկցությամբ նայում էր այդ եռանդով լի երիտասարդի վրա, որ երևում էր նրան, որպես մի անփորձ թիթեռնիկ, որ խաղում էր ճրագի հետ և իր անզոր թևիկների շարժումով աշխատում է հանդցնել նրա բոցերը...

Նույն միջոցին ներս մտավ ծերունի Խաչոն և քանի բոպեից հետո, ամեն գիշերվա սովորության համեմատ, հավաքվեցան նրա որդիները։ Թեև արևի մտնելուց դեռ մի ժամ էր անցել, բայց ընթրիքը շուտ տվեցին, որովհետև, իբրև մշակ մարդիկ նրանք պետք է շուտ ուտեին, շուտ քնեին և առավոտյան վաղ վեր կենային։

Ընթրիքի ժամանակ պարոն Դուդուկջյանը բավական խմեց և նրա սրտի տխուր տրամադրությունը փոքր-ինչ ուրախ կերպարանք ստացավ։ Նա մինչև անգամ երգեց «տեր, կեցո՛ դու զհայս» Թաղիադյանցի նշանավոր երգը։ Երբ սեղանը հավաքեցին, նա դարձավ ծերունի Խաչոյին, ասելով.

— Հրամայեցեք օդայի դռները փակեն և մեզ չխանգարեն, ես մի առանձին խոսելիք ունեմ։

Ծերունին զարմացավ, թե ի՞նչ առանձին խոսելիք պիտի ունենա, և ասաց որդիներից մեկին, որ դռները փակեն։ Բոլորը լռությամբ սպասում էին նրա խոսքին։

— Շուտով կհրատարակվի պատերազմ ռուսների և թուրքերի մեջ։ Գիտե՞ք այդ բանը,— հարցրեց նա։

— Մենք ոչինչ չենք լսել այդ մասին,— պատասխանեցին նրան ծերունին և իր որդիները։

— Ես գիտեմ,— ասաց Վարդանը,— մեր կողմերում ռուսները սաստիկ պատրաստություններ են տեսնում։

Այդ լուրը կայծակի նման հարվածեց խեղճ ծերունուն։ Նա իր կյանքում մի քանի անգամ տեսել էր ռուսների և թուրքերի մեջ եղած պատերազմները և դեռ չէր մոռացել նրանց սարսափելի հետևանքները հայերի վերաբերությամբ։ Իսկ Հայրապետը այժմ հասկացավ քուրդ կնոջ մի քանի օր առաջ Սառային հաղորդած խոսքերի գաղտնիքը, թե ի՞նչ նպատակի համար էր պատրաստում Ֆաթթահ-բեկը իր հեծելազորքը։

— Այո՛, պատերազմ կլինի,— խոսեց Վարդանը մի առանձին հեգնությամբ.— «ձին և ջորին պիտի կռվեն, իսկ մեջտեղում էշը կսատկի»...

— Այդպես է,— ասաց ծերունու մեծ որդին՝ Հայրապետը,— մեր կողմերի հայերը կտրորվեն, կոչնչանան պատերազմի փոթորիկի մեջ։

— Այդ ես էլ գիտեմ...— պատասխանեց ծերունին և նրա այնը խեղդվեցավ սրտի կսկիծից։

— Լսեցեք,— ասաց պարոն Դուդուկջյանը։ Նա աշխատում էր այս գիշեր իր խոսքերը ավելի ռամկացնել և նրանց ավելի հասկանալի ձև տալ։— Այս պատերազմը մինչև այսօր թուրքերի և ռուսների մեջ եղած մյուս պատերազմների նման չէ, դա բոլորովին ուրիշ միտք և ուրիշ նպատակ ունի։ Դուք լրագիրներ չեք կարդում, իհարկե, չեք կարող գիտենալ, թե այժմ ինչ է գործվում աշխարհի մի ուրիշ մասում, որին կոչում են Բալկանյան թերակղզի։ Այնտեղ նույնպես կան քրիստոնյա ազգեր, որոնք այստեղի հայերի նման թուրքաց հպատակներ են և որոնք այստեղի հայերի նման դարերով տանջվում էին թուրքերի բարբարոսություններից։ Բայց նրանք հայերի նման համբերել չկարողացան, ապստամբվեցան, և ահա մի տարուց ավելի է, որ կռվում են թուրքերի հետ նրանց լծից ազատվելու համար։ Հաղթեցին, հաղթվեցան, սարսափելի զոհաբերություններ արեցին, վերջը ռուսները մեջ մտան, և քրիստոնեից ազատության անունով, նրանց պաշտպան հանդիսացան։ Կ. Պոլսում եվրոպական պետությունների ներկայացուցիչները ժողով կազմեցին, որ այդ ճնշված քրիստոնյա ազգերին մի քանի արտոնություններ, մի քանի իրավունքներ տային, բայց համաձայնություն չկայացավ և խորհուրդը մնաց առանց հետևանքի։ Այժմ ռուսները կամենում են սրի ուժով ընդունել տալ թուրքերին այն, ինչ որ նրանք չհամաձայնվեցան ընդունել իրանց հպատակ քրիստոնյաների ազատության մասին։

Այս անցքերի պատմությունը, թեև այն ժամանակ աշխարհի ամենախուլ անկյուններում անգամ տարածվել էր, բայց հայ գյուղացիների համար բոլորովին նորություն էր. նրանք ոչինչ չէին լսել, և այդ պատճառով զարմացած լսում էին պարոն Դու-

դուկջյանի խոսքերը։ Հայ գյուղացին իր հորիզոնից դուրս, իր գավառի մյուս կողմում չգիտե, թե ինչ է կատարվում։ Նրանք այսքան միայն լսել էին, թե թուրքերը ինչ-որ պատերազմ ունեն, բայց թե ո՞ւմ հետ է և ի՞նչ բանի համար է պատերազմը, — այդ մասին տեղեկություն չունեին։ Եվ թուրքերի պատերազմ ունենալը հայտնի էր նրանց ոչ թե առիթով միայն, որ հարկերը խստությամբ պահանջում էին և ավելի շատ էին առնում, քան թե առաջ, անդադար կրկնելով, թե «հիմա տերությունը պատերազմ ունի, պետք է օգնեք»։

— Ռուսների այժմյան պատերազմը Թուրքիայի հպատակ քրիստոնյաների ազատության համար է, —շարունակեց պարոն Դուդուկջյանը։— Բայց պետք է գիտենաք, որ Թուրքիայի ավելի տանջված, ավելի հարստահարված քրիստոնյա հպատակը հայն է։ Այդ դուք ինքներդ լավ եք իմանում, որովհետև ձեր անձի վրա փորձել եք թուրքի ամեն տեսակ բարբարոսությունները։ Ուրեմն ժամանակ է, որ հայերն էլ մտածեն իրանց հանգստության համար։

— Մենք ի՞նչ պիտի մտածենք,— պատասխանեց ծերունի Խաչոն,— դուք ինքներդ ասում եք, թե ռուսները պատերազմելու են քրիստոնյաների ազատության համար. աստված հաջողություն տա, նրանք կգան և մեզ էլ կազատեն։

— Այդ իրավ է, միայն մի բան կա,— մեջ մտավ Վարդանը,— ասում են, «մինչև տղան լաց չլինի, մայրն էլ ծիծ չի տա»։ Հայերը իրանց լռությունով, իրանց համբերությունով և իրանց մեծահույս սպասելով ոչինչ չեն ստանա։ Հայերը պետք է բողոքեն։

— Այո՛, պետք է բողոքեն,— կրկնեց պարոն Դուդուկջյանը,— և այդ բողոքը պետք է հայտնվի նույն ձևով, որպես հայտնեցին մյուս քրիստոնյա ազգերը։

— Ուզում եք ասել, թե հայերն էլ պետք է կռվեն...— նրա խոսքը կտրեց ծերունին։

— Այո՛, այդ եմ ուզում ասել։ Հիմա աշխարհի կարգն այդպես է, և միշտ այդպես է եղել, ով որ զենք գործածել չգիտե, ով որ արյուն թափելու և մարդիկ կոտորելու ընդունակություն չունի, նրան ասում են՝ դու ազատ լինելու իրավունք չունես։ Ուրեմն, եթե հայերը ցանկանում են մի բան ստանալ և ազատ լինել, պետք է ցույց տան, թե իրանք ևս զուրկ չեն քաջությունից, թե իրանք ևս սպանել գիտեն։ Եվ այժմ ամենահարմար ժամանակն է։

Ծերունին մի դառն ժպիտ գործեց իր խորշոմած դեմքի վրա, պատասխանելով.

— Օրհնած, ինչո՞վ պետք է ցույց տան, թե քաջություն ունեն կամ սպանել գիտեն։ Թուրքերը հայերի մոտ մի դանակ անգամ չեն թողել, որ հարկավորած ժամանակ մի հավի վիզ կտրեն։

Պարոն Դուդուկջյանը դժվարացավ պատասխանել։ Վարդանը ասաց.

— Զենքեր, որքան կամենում եք, ես կտամ ձեզ, միայն կրռվողներ լինեին։ Ձեզ հայտնի է իմ պարապմունքը, ես կանտրաբանդիստ եմ, ինձ ծանոթ են բոլոր անցքերը, բոլոր գաղտնի ճանապարհները այստեղ զենքեր անցկացնելու համար։

— Միայն զենքը բավական չէ,— խոսեց խոհեմ ծերունին,— դուք կարո՞ղ եք տալ այստեղի հայերին այն սիրտը, այն քաջությունը, որ ունեն մյուս քրիստոնյա ազգերը, որոնք այժմ պատերազմում են իրանց ազատության համար։ Զենքը ի՞նչ գործ կարող է կատարել մի ստրկացած ժողովրդի ձեռքում։

— Հեշտ չէ այսպես դատել ժողովրդի վրա, տանուտեր Խաչո,— խոսեց պարոն Դուդուկջյանը,— մեր ժողովուրդը բոլորովին չէ կորցրել ո՛չ իր սիրտը, ո՛չ քաջությունը և ո՛չ ազատության զգացմունքը։ Մի շարժառիթ, մի հարմար ժամանակ պետք է, որ դրանք հայտնվեն նրա մեջ։ Այժմ ամենահարմար ժամանակն է։ Ռուսները պիտի պատերազմեն թուրքերի հետ, թող հայերն էլ մի կողմից գլուխ բարձրացնեն։ Ես հավատացած եմ, որ ռուսները ամեն կերպով կօգնեն մեզ։

Ծերունի Խաչոյի որդիները բոլորովին լուռ էին և ոչինչ չէին խոսում։ Նրանցից մեկը, որ կոչվում էր Հակո, որն իր եղբայրների հետ մի շաբաթ առաջ ունեցած խորհրդի մեջ հայտնեց այն միտքը, թե լավ է, որ իրանց քույր Լալան քուրդ բեկի կինը լինի, որովհետև դրանով կվայելեն իրանց հզոր փեսայի պաշտպանությունը,— այդ Հակոն, որ խորին տհաճությամբ լսում էր իր հոր և նրա երիտասարդ հյուրերի խոսքերը, դարձավ դեպի պարոն Դուդուկջյանը, ասելով.

— Եղբայր, քեզանից արյան հոտ է գալիս, մենք ոչ քո չարն ենք ուզում, ոչ քո բարին, էգուց առավոտյան շուտ վեր կաց,

բանը-մանդ հավաքիր, և հեռացիր մեր տնից, թե չէ մեր գլխին մի պատուհաս կբերես...

Ծերունի Խաչոն սաստեց որդուն, որ լռե, և ինքը դառնալով պարոն Դուդուկջյանին ասաց.

— Դուք մի նեղացեք իմ որդու խոսքերից. նա չգիտե, թե ի՞նչ է խոսում։ Լսեցեք ինձ, ես ոչ կարդացել եմ և ոչ էլ իմանում եմ, թե ուրիշ երկրներում ուրիշ ազգեր ի՞նչ են շինում։ Բայց որպես երկրագործ մարդ, ես մի բան գիտեմ. մենք՝ գյուղացիներս մինչև հողը չենք վարում, չենք փափկացնում և չենք պատրաստում, մեր սերմը չենք ցանում, որովհետև գիտենք, որ սերմը չի կանաչի, արմատ չի ձգի. միայն կծլի և ինքը իրան կչորանա։ Այս բանը Քրիստոսն էլ է ասում իր սուրբ Ավետարանի մեջ, ես շատ անգամ եմ լսել եկեղեցում։ Հիմա, որդի, հողը պատրաստ չէ։ Ուզում եմ ասել, ժողովուրդը պատրաստ չէ։ Պետք էր քսան, երեսուն և գուցե հիսուն տարի առաջ պատրաստել հողը։ Երբ այս նախապատրաստությունները կատարված կլինեին, այժմ ձեր սերմերը բարեբեր երկրի վրա կընկնեին, կբուսնեին, կկանաչեին, կաճեին, կհասունանային և մեկին հարյուր և մեկին հազար պտուղ կտային։ Ախար մի օրվա մեջ բան չի դառնա։ Ախար մենք գիտենք, որ ցանքի վրայից մի քանի եղանակներ են անցկենում, մի քանի տաք և ցուրտ եղանակներ, մինչև հունձքը հասունանում է։ Մենք գիտենք, որ ցանքը համբերում է եղանակների զանազան տեսակի խստություններին, երբեմն փոթորիկը նրան հանգստություն չէ տալիս, երբեմն կարկուտը ծեծում է և երբեմն հյունը սառցնում է, իսկ երբեմն արեգակի կենսատու ճառագայթները նրան շերմացնում են, մի խոսքով, ցանքը հազար ու մեկ փորձանքների միջից անցնելով վերջապես պսակում է երկրագործի բաղձանքը... Այսպես էլ ժողովրդի սրտի մեջ սերմանած ցանքի վրայից պետք է անց կենան ժամանակներ, մի քանի խաղաղ և փոթորկալի ժամանակներ, մինչև հունձը կհասունանար...

— Շատ գեղեցիկ օրինակ է, —պատասխանեց պարոն Դուդուկջյանը,— ես բոլորովին համաձայն եմ ձեզ հետ։ Բայց մի ուրիշ բան կա, այն ևս պետք է ի նկատի ունենալ։ Ես այժմ ձեզ հետ պետք է ձեր ձևով՝ երկրագործի և անասնապահի լեզվով խոսեմ, այդ լեզուն ավելի հասկանալի կլինի ձեզ։ Թողեք

մի անգամ ձեր ցանքը առանց քաղհան[1] անելու, և կտեսնեք, որ վայրենի խոտերը կաճեն, կբազմանան, կխեղդեն նրանց և իրանք կբռնեն նրանց տեղը։ Ձեր սերմանած բույսերը կոչընչանան։ Դա մի տեսակ կռիվ չէ՞, որով ավելի զորեղը սպանում է անզորին։ Բոլոր բույսերի մեջ նկատվում է այդ կռիվը, այդ պատերազմը, որով մինը մյուսին աշխատում է ճնշել, ոչնչացնել, որ կարողանա պահպանել իր գոյությունը։ Եվ որն որ կռվելու, մաքառելու և մրցելու ընդունակություն չունի, նա զրկվում է կյանքից։ Այդ ընդունակությունը ուրիշ խոսքով կոչվում է անձնապաշտպանություն։ Անձնապաշտպանության վարժարանը ինքը բնությունն է։ Բնությունը բոլոր էակներին, որոնք աճելու և բազմանալու ունակություն ունեն, տվել է իրանց նմանների հետ կռվելու ընդունակություն՝ մեկին շատ, մյուսին սակավ։ Ծառերը, խոտերը, անասունները և մարդիկ ևս ունեն այդ ընդունակությունը։ Միայն քարերը, փայտերը, մեռած մարմինները մնում են անշարժ և իրանց անձը պաշտպանել չգիտեն, որովհետև նրանք կյանք չունեն։ Բայց ուր կյանք կա, այնտեղ կա և այդ բնական կռիվը։ Դա կյանքի կռիվ է, որի մեջ ամեն մի էակ ոչ միայն աշխատում է պահպանել իր գոյությունը, այլ աշխատում է և ոչնչացնել իր թշնամիներին, որպեսզի իր աճելությունը ապահով և անարգել կերպով կատարվի...

— Այժմ, կարծեմ, դուք հասկանում եք իմ միտքը,— շարունակեց նա։— Բնության մեջ ինչ որ կատարվում է բույսերի և անասունների կյանքում, նույնը կատարվում է և մարդկային կյանքում։ Այստեղ ևս հանդիսանում է նույն կռիվը, միայն ավելի սաստիկ և ավելի բազմատեսակ կերպով։ Ազգերի կրթության և ընդունակության համեմատ փոփոխվում են նրանց անձնապաշտպանության զենքերը։ (Զենքեր ասելով, ես ի նկատի չունեմ միայն սուրը և հրացանը, արհեստը, գիտությունը նույնպես զենքեր են, որոնցմով մի ժողովուրդը աշխատում է տնտեսապես մրցել մի այլ ժողովրդի հետ)։ Ավելի անքաղաքակիրթ և վայրենի ազգերի մեջ այդ կռիվը կատարվում է միայն ֆիզիկական ուժով՝ սրով։ Այդ զենքերով քրդերը և թուրքերը կռվում են մեր հետ։ Անձնապաշտպանության օրենքները պահանջում են պատասխանել թշնամուն նույն զենքով, ինչ զենքով

1 Քաղհան անել նշանակում է ցանքի միջից ավելորդ և վնասակար խոտաբույսերը արմատախիլ անել։

որ նա ճնշում է և մահացնում է մեզ։ Հիմարություն կլիներ իմ կողմից ավելին պահանջել, պահանջել այն, որին ընդունակ չէ մեր ժողովուրդը։ Ես ցանկություն չունեմ ասելու, թե մենք պետք է սուր վեր առնենք քրդերին և թուրքերին ոչնչացնելու համար, որ մեր հայրերից մեզ մնացած հողի վրա մենք միայն բնակվինք։ Ես ասում եմ, որ պետք է սովորենք անձնապաշտպանություն, որպեսզի քրդերը և թուրքերը մեզ չոչնչացնեն։ Այդ երկու մտքերի մեջ մեծ տարբերություն կա։

Ներունի Խաչոն կտրեց պարոն Դուդուկչյանի խոսքը, ասելով։

— Ես հասկանում եմ, բոլորը հասկանում եմ, ինչ որ ասում եք դուք, բայց դարձյալ պիտի կրկնեմ նույն խոսքը, որ մի բոպե առաջ ասացի. միանգամով, մի օրվա մեջ այսպիսի մեծ փոփոխություն չէ կարող կատարվել, որ մեր ժողովուրդը մի հրաշքով թողնե իր ստրկական բնավորությունը և հասկանա, թե ի՞նչ բան է անձնապաշտպանությունը։ Դուք, պոլսեցիքդ, պետք է վաղ սկսեիք այդ գործը. դուք պետք է շատ տարիներ առաջ մեզ սովորեցնեիք, թե ինչ բան է անձնապաշտպանությունը, և այսօր, քրիստոնյաների այժմյան պատերազմների ժամանակ ձեր ցանած սերմերը ցանկալի պտուղ կտային։ Դուք չնախապատրաստեցիք մեզ։ Դուք ամբողջ ժամանակներ Պոլսում լուռ նստեցիք, և այսօր եկել մեզ ասում եք, թե սուր վեր առեք քրդի և թուրքի դեմ, ձեր անձը պաշտպանեցեք։ Ո՞ւմ կարող եք հասկացնել, թե դա կարելի բան է։

— Դուք իրավ եք ասում, մենք պոլսեցիքս ծույր և անհոգ գտնվեցանք, մենք չնախապատրաստեցինք ձեզ,— պատասխանեց պարոն Դուդուկչյանը անխռով կերպով։— Բայց ես չեմ խոսում այն բանի վրա, որ այստեղ հայերը կորցրել են իրանց մարդկային բարձր, ազնիվ և վսեմ ձգտումները, դրանք այնպիսի հատկություններ են, որ պահանջում են մի որոշ չափով կրթություն և զարգացում, և որոնց մատակարարելը մեր պոլսեցիներիս պարտքն էր։ Ես խոսում եմ անձնապաշտպանության վրա, դրա համար մեծ ուսում և կրթություն պետք չէ։ Անձնապաշտպանության զգացմունքը, որպես քանի բոպե առաջ բացատրեցի, այնքան բնական է, որ հատուկ է մինչև անգամ բույսերին, անասուններին և վայրենի մարդիկներին։ Մի՞թե հայը անասուններից էլ ստոր է, մի՞թե նա այն աստիճան մեռած է, որ քարի և փայտի նման ոչինչ զգացմունք չունի...

ԻԱ.

Ներունի Խաչոն իր որդիների հետ հեռանալուց հետո, Վարդանը և պարոն Դուդուկչյանը մնացին օդայի մեջ մենակ։

— Իրավ որ հողը պատրաստ չէ...— նկատեց Վարդանը նայելով պոլսեցու բոլորովին դեղնած և տխրամած դեմքի վրա։

— Ո՞վ է մեղավոր,— հարցրեց պարոն Դուդուկչյանը և նույն բոպեում կարծես, նրա սրտի մի մասը խորտակվեցավ ներքին վրդովմունքից։— Ներունին շատ խելոք է, և ավելի խելոք, քան թե մեզ նման հիմար թուղթ մրոտողները։ Նա բավական ճիշտ նկատեց, թե մեր՝ պոլսեցիներիս գործն էր վաղօրոք պատրաստել ժողովուրդը։ Բայց ի՞նչ արեցինք մենք։ Ոչինչ... Մենք ամենևին նախապատրաստության հոգ չտարանք, որովհետև մեզ չէր հետաքրքրում իրական Հայաստանը իր սարսափելի թշվառություններով։ Մենք շլացած էինք պատմական Հայաստանի անցյալ փառքովը միայն։ Մենք այժմյան Հայաստանը ամենևին չէինք ճանաչում, և ոչ մտածում էինք ճանաչել։ Մենք ճանաչում էինք նրան մի քանի հին պատմագիրներից, և երևակայում էինք, թե տիտանների այդ երկրում տակավին Տիգրաններ, Արամներ, Վահաղներ, Վարդաններ և Ներսես Մեծեր են բնակվում։ Մենք երևակայում էինք նրա բազմամարդ քաղաքները, որոնց մեջ արհեստը և վաճառականությունը հայ մարդու ձեռքում ծաղկելով, շնորհում էին նրան երկրի նյութական հարստությունը։ Մենք երևակայում էինք նրա շեն գյուղերը, նրա մշակված դաշտերը, որ լցնում էին հայ երկրագործի շտեմարանները աստուծո բոլոր բարիքներով։ Մենք հավատացած էինք, թե երկրի ազգաբնակության մեծամասնությունը բաղկացած է հայերից, որ ապրում են իրանց հայրենի հողի վրա բախտավոր ու խաղաղ կյանքով։ Բայց չգիտեինք, թե ամբողջ հայաբնակ գավառներ դատարկվել են հայերից, կամ չքավորությունից սպառվելով և կամ բռնի մահմեդականություն ընդունելով։ Չգիտեինք, որ կենդանի հայ մարդու տեղ կգտնենք կամ շարժուն դիակներ և կամ ընդարձակ գերեզմանատներ։ Չգիտեինք, որ կրոնը մեր կարծիքով՝ այդ ազգային հաստատության նեցուկը, խորտակվել է, և նրա տեղ մնացել են հոյակապ վանքերի և եկեղեցիների ավերակներ միայն։ Չգիտեինք,

որ լեզուն, ազգային այդ սրբազան ժառանգությունը, կորել է հայ մարդու բերանից, և այսօր նա խոսում է կամ քրդերեն և կամ թուրքերեն։ Չգիտեինք, որ այժմյան քաջ քրդերի մեծ մասը, որոնք հայի համար աստուծո պատիժ և պատուհաս են դարձել, մի հիսուն կամ հարյուր տարի առաջ մեր արյունակից եղբայրներն էին, մեր լեզվով էին խոսում և մեր եկեղեցում էին աղոթում։ Մի խոսքով, մենք ոչինչ չգիտեինք, մենք այժմյան Հայաստանի մասին խիստ անորոշ և խիստ մթին տեղեկություններ ունեինք, և տակավին հայտնի չէր մեզ, թե հայերից մնացած այժմյան ցիրուցան փշրանքները, դառն հանգամանքների պատճառով, ստրկության ծանր լծի տակ, այն աստիճան փչացել են, այն աստիճան այլանդակվել են, որ կորցնելով իրանց լավ հատկությունները, սեփականել են մի ցած, փոքրոգի, երկչոտ և նենգամիտ բնավորություն...

Վարդանը հետաքրքրությամբ լսում էր. պարոն Դուդուկչյանը շարունակեց.

— Բայց մեր ձեռքումն էին հավաքված բոլոր ուժերը, մենք կարող էինք մեծ գործ կատարել։ Մեզ մոտ էր ազգի պատրիարքը, ժողովրդի գլուխը, որ բնավ մարմնի վրա չէր մտածում։ Մեզ մոտ էր ազգային երեսփոխանական ժողովը, որ զբաղված էր ինտրիգաներով և չնչին հարցերով։ Մեզ մոտ էր ուսյալ երիտասարդությունը, որ թնդեցնում էր Բոսֆորի ափերը ազգային ոգեշնչության տարեդարձի երգերով, և բնավ չէր մտածում, որ նույն րոպեում Հայաստանում արյուն և արտասուք էր հոսում։ Մեզ մոտ էր տպագրությունը, որ ամենևին ուշադրություն չէր դարձնում, թե ի՞նչ վիճակի մեջ է ապրում հայը հայրենի հողի վրա, և միշտ զբաղված էր օտարների կյանքով։ Մեզ մոտ էին դպրոցները, որ չտվեցին Հայաստանին ոչ մի վարժապետ։ Մեզ մոտ էր թատրոնը, որ մի անգամ գոնե դուրս չբերեց իր բեմի վրա հայաստանցու թշվառ պատկերը, և կերակրում էր հասարակությունը ֆրանսիական խոհանոցի աղտեղություններով։ Մեզ մոտ էին ազգի պետերը, որ շողոքորթում էին Դռան կամայականությունները և իրանց համար փառք էին դիզում։ Մեզ մոտ էր նյութական ուժը— արծաթը, որ ամիրաների պալատներն էր միայն զարդարում և հայաստանցու բարօրության համար մի փարա անգամ չէր ծախսվում։ Մի խոսքով մենք մեր ձեռքում բռնած ունեինք ազգի հառաջադիմության դեկը, կարծես, մի չար մտքով նրան մոլորեցնելու և դեպի կորուստ տանելու համար...

— Ես,— առաջ տարավ նա,— իմ և իմ մի քանի համախոհների դիտավորությունը կատարյալ դոնքիշոտություն էր համարում։ Ի՞նչ կարելի է սպասել։ Ամբողջ ժամանակներ նստել Պոլսում բոլորովին անգործ, չհետազոտել Հայաստանի կյանքը, չուսումնասիրել երկիրը, չծանոթանալ ժողովրդի պետքերի և պահանջների հետ, չնախապատրաստել նրան մի լավ ապագայի համար, և հանկարծ հայտնվել նրա մեջ, նրա ձեռքը զենք տալ, որ կռվե իր անձնապաշտպանության համար, դա հազիվ թե կարող էր ընդունելություն գտնել։ Այսուամենայնիվ, ես չեմ վհատում, իմ հավատը բնավ չէ խախտվում, ես և գուցե իմ բոլոր համախոհներս կընկնենք, բայց մեր անկումը ճանապարհ կբացանե մեր հետևողների առջև. նրանք կանցնեն մեր դիակների վրայով...

Վերջին խոսքերը լսելու ժամանակ Վարդանը չկարողացավ զսպել իր սրտի զեղմունքը, նա գրկեց պարոն Դուդուկչյանին և համբուրեց նրան, ասելով.

— Այսպիսի գործը, այո՛, զոհ է պահանջում... փա՜ռք և պատիվ նրան, ով որ կլինի առաջին զոհը...

Դիշերի կեսից անցել էր արդեն։ Օդայի մեջ քնելու անկողինները վաղուց պատրաստ էին։ Բայց երկու երիտասարդները երկար մնացին անքուն։ Պարոն Դուդուկչյանը կրիտիկական անխնա քննադատությամբ խոսում էր Կ. Պոլսի ցնորամիտ երիտասարդության վրա, խոսում էր եկեղեցականների վրա, ասելով. «Եթե այդ երկրում գտնված վանքերի և եկեղեցիների տասնից մեկ մասի փոխարեն օրինավոր դպրոցներ լինեին, այժմ Հայաստանը փրկված կլիներ»։

Հանկարծ օդայի դուռը մեղմիկ կերպով զարկեցին։ Վարդանը գնաց և բաց արեց։ Հայտնվեցան Հայրապետը և Ապոն, երկու եղբայրները, որ որոշվում էին ծերունի Խաչոյի և մյուս որդիներից իրանց բոլոր հատկություններով։

— Մենք այսպես տարաժամ կերպով եկանք ձեզ մոտ, որ չնկատեն մեզ,— ասաց Հայրապետը իր եղբոր հետ նստելով։— Երևի անհանգստացրինք ձեզ։

— Ամենևին,— պատասխանեց Վարդանը,— մենք քնել չկարողացանք, դեռ խոսում էինք։ Երևի, ձեր տանը բոլորը քնած են։

— Բոլորը,— պատասխանեց Ապոն,— միայն հայրս անգրագետ էր և իր անկողնի մեջ անդադար հազում էր։ Երբ նա հազում է, կնշանակե, մի բանի վրա մտածում է։

Վարդանը և պարոն Դուդուկջյանը իսկույն նկատեցին, որ երկու եղբայրների այդ անագան պահուն իրանց մոտ գալը առանց նպատակի չէր լինելու, և սպասում էին, մինչև նրանք կհայտնեին իրանց խորհուրդը։

— Մենք մեր հոր և մյուս եղբայրների մոտ ոչինչ խոսել չկարողացանք,— ասաց Հայրապետը լուրջ կերպով,— և այս պատճառով շտապեցինք ձեզ հայտնել, որ մենք բոլորովին համակրում ենք ձեր մտքերին և ամեն կերպով պատրաստ ենք ծառայելու ձեր նպատակներին, ինչ գործում որ հարմար կհամարեք։

Պարոն Դուդուկջյանի սառն դեմքի վրա փայլեց ուրախության պայծառ մի նշույլ. դա միսիոնարի ուրախություն էր, երբ երկու հավատացյալ է ձեռք բերում և մտածում է, թե իր հոտը արդեն կազմված է, թե այդ երկուսը սկիզբ կդնեն հազարների։

— Բոլորովին սխալ է մտածել,— խոսեց Հայրապետը,— թե այստեղի հայերը հոգվով, սրտով և ամեն բարձր ձգտումներով մեռած են։ Բայց մի բան կա, որ հայերի ընդհանուր թերությունն է։ Ամեն մի հայ, առանձին վեր առած, զգույշ է, մտածող է, անվստահ է և սեփական կամք չունի։ Նա միշտ սպասում է օրինակի, որ ուրիշը սկսե, իսկ ինքն նրան հետևի։ Օրինակը, մանավանդ հաջողված գործի օրինակը, նրա վրա մեծ ազդեցություն է գործում։ Այս դեպքում հայը մի քանի պայմաններ միշտ աչքի առջև ունի։ Նա բնավ չէ հետաքրքրվում, թե ինչպես են ապրում, ինչ եղանակով են գործում օտար երկրներում։ Ուզում եմ ասել, որ հայը օտարներից օրինակ չէ վեր առնում, այլ սպասում է, որ օրինակը տար նրան իր նման մի հայ։ Ուրեմն մենք առաջին օրինակը կտանք, և ես հավատացած եմ, որ մեզ կհետևեն շատերը։ Ես լավ եմ ճանաչում մեր ժողովուրդը. նա այնքան շատ տանջվել է, որ հենց այս րոպեիս պատրաստ է թուրքի, քրդի միսը ուտել և արյունը խմել, եթե մի հնար կգտնե։ Նա սրտում սաստիկ ատելություն ունի, միայն այդ ատելությունը թաքնված է։

Վարդանը և պարոն Դուդուկջյանը ուրախությամբ լսում էին Հայրապետի ասածները։ Նրա մեջ խոսում էր ժողովրդի ձայնը։

— Երջանի՞կ է այն ժողովուրդը, որ ատել գիտե,— բացականչեց պոլսեցի երիտասարդը մի առանձին ոգևորությամբ։— Նա, որ ատել չգիտե, զուրկ է մնում սիրո զգացմունքից...

— Իմ հայրը ասում էր, թե հողը պատրաստ չէ,— խոսեց Հայրապետը։— Նա իսկապես խելացի մարդ է, նրա սրտում կան շատ ծածկված բարի խորհուրդներ։ Բայց նրա խելացի խրատները, նրա զգուշավորությունը հասնում է մինչև հանցավորության։ Նա իր համբերությամբ թմրեցրել է մեզ և պահել է քարացած անշարժության մեջ։ Մեր դրության մեջ, իմ կարծիքով, համարձակությունը, անձնավստահությունը և մինչև խենթության հասած հանդգնությունը ավելի գործ է կատարում, քան թե իմաստունների լուրջ և խոհեմ մտածությունները։

— Այո, «մինչև խելացին կմտածե, խենթը գետից անց կկենա»...— պատասխանեց Վարդանը ծիծաղելով։

— Այդ շատ ճիշտ է,— նկատեց պարոն Դուդուկջյանը։— Խելացիների խելքը շատ անգամ խաբում է իրանց, և խաբվածները այն ժամանակ միայն հասկանում են՝ թե հիմարվել են, երբ գժերը իրենց գործը արդեն ավարտած են լինում... Մի ժամանակ Կ. Պոլսի մեր խելացիները մտածում էին, թե հայերի համար ավելի նպաստավոր է թուրքաց անկիրթ և անկարգ կառավարությունը, քան թե մի բարեկարգ և քաղաքակրթված կառավարություն։ Մտածում էին, թե մի քաղաքակրթված կառավարություն իր կուլտուրական բարձր զգացումով կարող էր կլանել և ոչնչացնել հայերին. մինչդեռ խելացի հայերը, օգուտ քաղելով թուրքի հիմարություններից, գոյության կռվի մեջ կարող էին մրցել նրա հետ, կարող էին հաղթող հանդիսանալ։ Այդ ենթադրությունը թեորիայի կետից ուղիղ է։ Բայց ամենաճիշտ փիլիսոփայական թեորիան երբեմն կյանքի փորձի մեջ հայտնվում է սխալ։ Պատմությունը իր առանձին զարտուղություններն ունի։ Եթե մի քաղաքակրթված մեծ ազգություն կարող է կլանել փոքր ազգությունները, նույնը կարող է կատարել և մի անքաղաքակիրթ մեծ ազգություն իր մանր հպատակ ազգությունների վերաբերությամբ։ Տարբերությունը միայն գործադրած միջոցների և հնարների մեջն է, մեկը սպանում է բարբարոսական միջոցներով, մյուսը՝ կուլտուրայի միջոցներով։

— Ես ավելի պարզ կխոսեմ, —շարունակեց պարոն Դուդուկջյանը։— Մեզանից ոչ ոք մինչև այսօր չէր հասկացել թուրք

կառավարության գաղտնի քաղաքագիտությունը հայերի վերաբերությամբ։ Մեզանից ամեն մեկը երեխայական կարճատեսությամբ կրկնում էր, թե «մեր ապագան Թուրքիայումն է»։ Մենք նայում էինք կատարվող զեղծումների, անկարգությունների և բարբարոսությունների արտաքին մակերևույթի վրա, բայց թե որպիսի՞ դժոխային մեքենայություն էր թաքնված նրանց տակին, այդ մենք չէինք տեսնում։ Մենք միայն տեսնում էինք հարստահարություններ, սպանություններ, բռնի կրոնափոխություններ և զանազան տեսակ չարագործություններ, որ կատարում էին մեր հարևան բարբարոս ցեղերը։ Այդ բոլորը մենք առօրյա և պատահական էինք համարում, և չգիտեինք, որ հիշյալ անկարգություններին մի գաղտնի քաջալերող կա, չգիտեինք, որ այդ բոլորը կատարվում է բարձր աստիճանավորների թելադրությամբ։ Մենք մեղադրում էինք կառավարությանը այն մտքով միայն, որ նա թույլ է, որ նա անհոգ է, որ նա իր անզգամ հպատակները զսպել չգիտե։ Բայց չէինք հասկանում, որ կառավարության պաշտոնյաները իրանք այդ բարբարոսներին գրգռում էին հայերի դեմ, քրիստոնյա տարրը ոչնչացնելու համար։ Ինչո՞ւ, կհարցնեք ինձ։

— Թուրքիան շատ լավ է հասկացել, եթե նա մի օր կզրկվի իր եվրոպական և ասիական նահանգներից, այդ կորստի պատճառը լինելու են տեղային քրիստոնյա ազգաբնակությունները։ Նա հասկացել է, որ քրիստոնյա հպատակների գոյությունը իր պետության մեջ ամեն անգամ պետք է առիթ տա քրիստոնյա թագավորներին միջամտելու Թուրքիայի գործերի մեջ և բարձրացնել մի նոր արևելյան հարց։ Իր նահանգները չկորցնելու համար, քրիստոնյա թագավորների միջամտությունից ազատելու համար, Թուրքը ստիպված է ոչնչացնել քրիստոնյաներին։ Քրիստոնյաների պատճառով նա իր եվրոպական նահանգներից շատերը կորցրեց և մնացածը կորցնելու վրա է։ Իսկ ասիական երկրներից իր ամբողջությունը պահպանել է միայն Փոքր Ասիան։ Այստեղ գլխավոր քրիստոնյա ազգությունը, որ սպառնում է պետության այդ մասնի անջատմանը— են հայերը։ Ուրեմն եվրոպական տերությունների ձայնը կտրելու համար, պետք է ցույց տալ նրանց, որ Հայաստանում հայ չկա։ Այդ սպանության գործի մեջ Թուրքիան ընտրել է ամենահարմար դահիճներ՝ քրդերին և չերքեզներին։

— Եթե հավաքելու լինենք վերջին 20—30—50 տարիների ընթացքում կատարված փաստերը, կհամոզվենք, որ այդ բոլորը ճշմարիտ է։ Կհամոզվենք, որ հայերի վերաբերությամբ գործված հարստահարությունները, ճնշումները, հալածանքները, հափշտակությունները, մի խոսքով բոլոր բարբարոսությունները պատահական երևույթներ չեն։ Կհամոզվենք, որ այդ բոլորի մեջ թաքնված է մի նախապես մտածված, կարգադրված հիմք և նպատակ, որ ծառայում են հայկական տարրը հետզհետե տկարացնելու, սպառելու և վերջապես ոչնչացնելու համար։ Ես կհիշեմ մի քանի փաստեր միայն։ Հայերին անձնապաշտպանության բոլոր հնարներից զրկելու համար, խլեցին նրանց ձեռքից զենքը, կապեցին, կաշկանդեցին նրանց ձեռքերը, իսկ հայերի թշնամիների ձեռքում զենք տվեցին։ Հետո տեսան, որ այդ բավական չէ հայերին տկարացնելու համար, տեսան, որ այդ տարրը, որպես մի աշխատասեր և տնտեսագետ ժողովուրդ, կարողանում է մրցել իր հակառակորդների հետ, կարողանում է իր գոյությունը պահպանել իր նյութական զորությունով՝ իր հարստությունով։ Ուրեմն պետք է ամեն հնարք գործ դնել, որ նա աղքատանա, ուրեմն պետք է տնտեսապես մահացնել նրան։ Հարկերը ծանրացրին, շրջաբերության մեջ եղած արժեթղթերը ոչնչացրին (առանց նախապես հայտարարելու ժողովրդին), մի խոսքով զանազան տեսակ ֆինանսական խարդախություններ գործ դրեցին, որպեսզի ժողովրդի ձեռքում գտնված դրամը իր արժեքը կորցնի և հարկերը վճարելու անկարող լինի, որպեսզի առիթ ունենան նրա տնտեսության ամենաանհրաժեշտ պարագայքը հարկերի փոխարեն վաճառել տալու, նրան երկրագործության աշխատություններից զրկելու համար։ Այդ միջոցները դարձյալ չկարողացան լրացնել Թուրքիայի նպատակը։ Ժողովուրդը տոկուն էր. եթե իր հայրենի երկրում վաստակ չէր գտնում, պանդխտանում էր դեպի օտար աշխարհ, այնտեղ փող էր վաստակում և բերում, լցնում էր գանձարանը։ Ուրեմն ի՞նչ պետք էր անել։ Թուրքիան մտածեց միանգամից ցամաքացնել հայ ժողովրդի ապրուստի աղբյուրները. նա հնարեց իր կալվածական ամենախորամանկ օրենքները, և հայերը զրկվեցան կալվածատերության իրավունքից։ Հայերի ձեռքում գտնված հողերը անցան քուրդ դերբեյների, չերքեզների, մուֆթիների, ղադիների և զանազան վայրենի էշի-

բաթների ձեռքը։ Դրանք տեր դարձան, իսկ հայը, աշխատասեր և արդյունաբերող հայը, դարձավ այդ բարբարոսների հոտերը մշակող ստրուկը և ճորտը։ Հայաստանում հայերի և մահմեդականների մեջ եղած այժմյան անիրավ և անհամար կալվածական վեճերը ու դատերը կամ մնում են կառավարության կողմից առանց ուշադրության, կամ թե վճռում են, վճիռը կայանում է անպատճառ հօգուտ մահմեդականին։ Հազարավոր օրինակներ կան այդ մասին։ Եվ այդ վճիռների մեկի քննությունը բավական է ապացուցանելու համար, թե կառավարությունը չէ ցանկանում, որ հայի ձեռքում հող մնա, այլ ցանկանում է, որ նա զրկվի իր պապերի ժառանգությունից, որպեսզի դրանով կարողանա ավելի սաստկացնել հայերի գաղթականությունը, և Հայաստանը դատարկելով հայերից, նրանց տեղը լցնել քուրդերով և չերքեզներով։

— Այժմ տեսնո՞ւմ եք,— շարունակեց պարոն Դուդուկչյանը,— որ այդ բոլոր չարագործությունների մեջ մի ներքին կապ կա, մի գաղտնի և դժոխային նպատակ կա։ Ես ավելորդ եմ համարում խոսել մասնավոր երևույթների վրա և ցույց տալ, որ տեղական իշխանության պաշտոնյաները շատ անգամ աշխատել են արհեստական կերպով սով պատճառել հայաբնակ գավառներում, որպեսզի քրդերի և չերքեզների սրից ազատ մնացած հայերին կոտորեն քաղցածությունով։ Դա հրեշավոր մի սպանություն է, որին ընդունակ է անգութ, անողորմ թուրքը միայն։ Մաշել ժողովուրդը աղքատությունով, տնտեսապես սնանկացնել նրան, զրկել ապրուստի բոլոր միջոցներից, ահա գլխավոր զենքերը, որոնցմով թուրքը աշխատում է այժմ ոչնչացնել հայ տարրը։ Նա գիտեր, որ ուրիշ զենքով դժվար է մահաբեր մի ժողովուրդ, որի զորությունը կայանում է իր աշխատասիրության և նյութական կարողության մեջ։ Զեյթունի հույները վարուցանքի տեղ չունեն. նրանց ապրուստի և արդյունաբերության գլխավոր աղբյուրներն են երկաթի հանքերը, որ բովազործում են նրանք, պատրաստում են զանազան տեսակ գործիքներ, կամ այնպես անպատրաստ տանում են մերձավոր գավառները, և վաճառելով, փոխարենը դնում են ինչ որ իրանց պետք է։ Թուրքիան մի քանի անգամ փորձ փորձեց խլել զեյթունցիների ձեռքից այդ հանքերը, միայն թաց լեռնաբնակների սաստիկ ընդդիմադրությունը կարողացավ փրկել իրանց ապ-

ռուստի գլխավոր հարստությունը։ Վանա հրդեհը այդ տեսակ մեքենայությունների մի ճշգրիտ օրինակ կարող է համարվել։ Հայերը այս քաղաքում բավական հարստացած էին. մի գիշերվա մեջ նրանց բոլոր խանութները կրակի մատնեցին։ Չնայելով հայերի անդադար բողոքներին, տեղական իշխանությունը մինչև անգամ քննություն սկսել չկամեցավ, որ հայտնվեն չարագործները։ Որովհետև ինքն իր վրա քննություն սկսել չէր ցանկանում...

— Մեզ մինչև այսօր զարմացնում էր այն միտքը, թե ինչո՞ւ Թուրքիան այնքան շողոքորթում է քրդերի և չերքեզների ցեղապետներին, շողոքորթում է նրանց հոգևոր գլուխներին կամ շեյխերին, որոնք իրանց անկարգություններով ոչ սակավ հոգսեր են պատճառում կառավարությանը։ Դրանք շատ անգամ հարկեր չեն վճարում, շատ անգամ ահագին խումբերով ասպատակում են այս և այն գավառները։ Մի՞թե, մտածում էինք մենք, եթե իշխանությունը ցանկանա, չէ կարող զսպել այդ ավազակներին։ Հիմա հասկանում ենք, որ Թուրքիային պետք է իր ձեռքում ունենալ այսպիսի գործիքներ։ Նպատակը՝ բացահայտ է...

Պարոն Դուդուկչյանը, կարծես աշխատում էր այս գիշեր դուրս թափել բոլոր դառնությունները, որ ծանրացած էին նրա սրտի վրա։ Տառապյալ ժողովրդի ցավը, նրա անբախտ վիճակը, նրա տխուր ապագան, որ նկատվում էր նրա աչքի առջև իր սև գույներով, այդ բոլորը լցրել էին նրա հոգին մի արդար վրդովմունքով։

— Հանգամանքները, կյանքի պայմանները,— ասաց նա,— ստիպեցնում են մարդուն իր նմանների հետ վարվել այնպես, որպես վարվում են օտարները իր հետ—չարին չարով պատասխանել։ Ուրիշ հնար չկա։ Բոլոր արարածների մեջ մարդը միայն է, որ գազաններից ավելի անգութ և ավելի անիրավ կերպով է վարվում իր նմանների հետ։ Գազանը գոնե միանգամից մահացնում է և հանգստացնում է իր զոհին։ Բայց մարդը հաջորդաբար է վարվում։ Նա տանջում է— ճնշում է, բարոյապես և մտավորապես մաշում է, և իր զոհի կենսական բոլոր ուժերը սակավ առ սակավ սպառելով, այնպես է սպանում։ Դա մի սարսափելի սպանություն է։ Այսպիսի սպանություն գործելու ընդունակ է մարդը միայն։ Այսպիսի սպանություններ կատարվում են ոչ միայն մասնավոր անհատների վերաբերությամբ,

այլ ամբողջ ազգերի վերաբերությամբ ևս։ Մի այսպիսի սպանություն սպանում է մեզ։ Մի՞թե սուն նպատակով չեն վարվում մեզ հետ թուրքերը, քրդերը և չերքեզները։ Մի՞թե սուն պատճառներից չէ, որ այսօր Հայաստանը մեծ մասամբ դատարկվել է հայերից։

Պարոն Դուդուկչյանի երկար բացատրությունների միջոցին Վարդանը լսում էր խորին համակրությամբ։ Նա մի դառն, հեգնական ժպիտով պատասխանեց.

— Հայոց ժողովուրդը մի զարմանալի ժողովուրդ է. նրան սպանելը, եթե չասեմ անհնարին, կարող եմ ասել, որ շատ դժվարին է։ Նա այն բազմագլխյան առասպելական վիշապն է, որ կոչվում է Հիդրա, որի յուրաքանչյուր ջախջախված և կտրված գլխի տեղ բուսնում է մի նորը և ավելի զորավորը։ Դարերի ընթացքում, համաշխարհային դարբնոցի սալի վրա, հայը այն ասպիճան ծեծվեցավ, տաշվեցավ և կոփվեցավ, որ ստացավ երկաթի ամրություն։ Նրան ջախջախելը շատ հեշտ չէ. նա չափազանց տոկուն է... Հայը տարավ, հայը համբերեց ամենամեծ մոնղոլների բարբարոսություններին, որոնց համեմատությամբ Թուրքիայի այժմյան մոնղոլական սերունդը պետք է ճանաչեր համարել։ Հայի երկրի վրայով անցան Մանդուլխանի, Լենկ-Թեմուրի, Չինգիզ-խանի, Հուլավունի և դրանց նման մարդկային հրեշների արյունարբու հրոսակները։ Նրանք անցան հեղեղների և փոթորիկների նման, ջարդեցին, ջարդվեցան, և վերջապես անհետացան, բայց հայը դարձյալ մնաց։ Այժմյան մոնղոլական Թուրքիան, աշխատելով սպանել արդյունաբերող և տերության գանձարանը լցնող հայերին, անգիտակցաբար սպանում է ինքն իրան։ Նրա այժմյան ֆինանսական սնանկությունը այդ սպանության հետևանքն է։ Վաղեմի Թուրքիան ավելի լավ է հասկացել հայ տարրի օգտավետությունը իր պետության հաստատության համար։ Նա ոչ միայն առանձին հոգ էր տանում աշխատասեր հայ գյուղացու հանգստության համար, այլ պետության գանձային ամբողջ կառավարությունը հանձնել էր հայ դրամատերերի ձեռքը, և մեր սառաֆները ոչ սակավ անգամ ազատում էին պետությունը ֆինանսական ամենադժվարին ճգնաժամի ժամանակ։

Առավոտը մոտ էր լուսանալու, տակավին խոսում էին մեր տաք գլուխ խորհողները։ Հետո նրանք սկսեցին խոսել ինչ-

որ պատրաստությունների և կարգադրությունների մասին։ Երբ խորհուրդը ավարտված էր, պարոն Դուդուկչյանը հանեց իր ոսկի երեք այցետոմս, և տալով իր բարեկամներին, ասաց.

— Ես բոլորովին հավատում եմ ձեզ. այժմ դուք կարող եք իմանալ իմ ով լինելը և իմ իսկական անունը։

Այցետոմսի վրա ֆրանսիական դեղեցիկ տառերով տպված էր Լ. Սալման։

Պարոն Լևոն Սալմանի հայրը՝ Թորոս Չելեբին[1] մահմեդականություն ընդունած հայ կաթոլիկ էր։ Թե ինչ հանգամանքների պատճառով նա փոխեց իր կրոնը, դա մի երկար պատմություն է։ Մենք այսքանը միայն կասենք, որ Թորոսին մեղադրեցին մի թուրք օրիորդի հետ հարաբերություններ ունենալու մեջ, և նա սպանումից ազատ մնալու համար ստիպվեցավ մահմեդականություն ընդունել և ամուսնանալ դեղեցիկ Ֆաթիմայի հետ,— այսպես էր օրիորդի անունը։ Լևոնի ծնունդից հետո Ֆաթիման վախճանվեցավ և փոքրիկ երեխան մնաց հոր խնամակալության ներքո, որին սաստիկ տանջում էր այն միտքը, որ իր զավակը կկրթվի և կմեծանա իրան ատելի դարձած մի օտար կրոնի մեջ։ Սալմանը (մահմեդականացած Թորոս Չելեբին) թողեց իր հայրենիքը՝ Անգուրիան և տեղափոխվեցավ Կ. Պոլիս։ Այստեղ ոչ ոք չէր ճանաչում նրան։ Նա իր զավակին հանձնեց ֆրերների միաբանությանը, իսկ ինքը անհետացավ։ Փոքրիկ Լևոնը մեծացավ կաթոլիկների մի կուսանոցի մեջ, և հետո 12 տարեկան հասակում տարվեցավ Իտալիա։ Իր սկզբնական ուսումը ստացավ նա կղերի ձեռքից։ Նա անցկացրեց մի քանի տարի Վենետիկի ս. Ղազարի վանքում, և այստեղից հեռանալով մտավ Վիեննայի մխիթարյանների վանքը, բայց ոչ մի տեղ հիմնավոր գիտություն չսովորեցավ։ Վերջապես մի կնոջ սերը դուրս քաշեց նրան վանքային ապականված մթնոլորտից և ձգեց Փարիզի քաղաքի մեջ։ Այստեղ նա սկզբում անց էր կացնում զվարճություններով լի դատարկ կյանք, անդադար անցկենալով մի կուսակցությունից դեպի մյուսը, և մտնելով զանազան ընկերությունների մեջ, միայն խոսելու, բայց ոչ գործ շինելու համար։ Իսկ երբ սպառվեցան սիրուհու փողերը, այնուհետև աղքատությունը ստիպեց նրան ձեռք զարկել լուրջ աշխատանքի, գրում էր լրագրական զանազան հոդ-

[1] Չելեբի կոչում են թուրքերը հայ և հույն վաճառականներին։

վածներ արևելքի վերաբերությամբ և նրանով ապրում էր։ Բայց երբ հարուցվեցավ վերջին արևելյան հարցը, նա թողեց Փարիզը, թողեց իր սիրուհին և դիմեց դեպի Կ. Պոլիս։

ԻԲ

Պարոն Սալմանի Բագրևանդի գավառում հայտնվելուց դեռ մի ամիս առաջ, արզրումցի հաջի Միսաք անունով ջորեպանը բեռնավորեց իր քարվանը և ճանապարհ ընկավ դեպի Արզրում։ «Հաջի» մականունը ստացել էր նա այն պատճառով, որ երկու անգամ ս. Երուսաղեմ ուխտ էր գնացել, և եթե աստված արժանի կաներ, մի անգամ ևս գնալու նպատակ ուներ, որ խորհրդական թիվը լրանար։ Առհասարակ հաջի Միսաքը, բարի քրիստոնյա էր, և նրա ջերմեռանդությունը հասնում էր մինչև սնահավատության։

Ճանապարհների վրա բոլոր քաղաքներում, բոլոր գյուղերում և բոլոր իջևաններում ճանաչում էին հաջի Միսաքին։ Քսան տարուց ավելի կլիներ, որ այդ մարդը իր ջորիներով պտտում էր Փոքր Ասիայի և Հայաստանի մեջ, ու ծանրություններ էր տեղափոխում։ Հաջի Միսաքը մի հաստ ու պինդ մարդ էր, միջակ հասակով և սաստիկ արագաշարժ։ Նրա դեմքի գծագրությունը անհնարին էր ճշտապես որոշել, որովհետև ամբողջապես ծածկված էր խիտ մազերով, որոնց միջից երևում էր ահագին հայկական քիթը և բոցավառ աչքերը միայն, որոնց խորության մեջ միշտ կարելի էր նկատել նրա բարեսրտության պայծառ արտահայտությունը։

Ամեն տեղից երբ անց էր կենում հաջի Միսաքի քարավանը, միշտ ընդհանուր ուրախություն էր պատճառում։ Ո՞վ ասես, նրանից մի բան չէր սպասում ստանալ. վաճառականը ապրանք էր սպասում, կինը իր պանդուխտ ամուսնից նամակ էր սպասում, ճանապարհների վրա գտնվող մանր և խոշոր աստիճանավորները կամ պաշտոնատարները այս և այն իրեղեններն էին սպասում ուտելու, խմելու և հագնելու համար։ Շատ անգամ պանդուխտ, հիվանդ, ճանապարհների վրա նվաղած ու ընկած հայ գաղթականը սպասում էր, որ հաջի Միսաքի քարավանը կանցնի, և իրան մարդասիրաբար վեր առնելով, կտանե և ցանկացած տեղը կհասցնե։ Հաջի Միսաքի կամակատարությունը և նրա պատրաստականությունը ամեն մարդու օգնելու մեջ, նրան սիրելի էին արել իր բոլոր ծանոթներին։— «Հաջի Միսաք, վերադարձին ինձ համար մի քանի հոխա թամբաքու բեր»,— «Հաջի Միսաք, դահվես պրծել է, դահվե բեր»,— «Հաջի Միսաք, այս զեյթունի յուղը հասցրու մեր տանը»,— այսպիսի պատվերներ նա կատարում էր առանց մի փարա ընդունելու և մինչև անգամ իր գրպանից ծախսելով։ Այս պատճառով ճանապարհների վարչությունները շատ խիստ չէին վարվում հաջի Միսաքի հետ. մաքսատներից նրա քարավանը անցնում էր ամենայն ապահովությամբ և աստիճանավորները չէին նեղացնում նրան։

Բեռնակիրը, և մանավանդ ճանաչված բեռնակիրը, մեծ հավատարմություն ունի արևելքում։ Նրան հանձնում են ամենաթանկագին ապրանքների հակեր, նրան հանձնում են տոպրակներով լի ոսկի և արծաթ, առանց որևիցե թղթերի կամ պաշտոնական գրագրությունների, և նա իր ստացած ավանդները տանում է և անկորուստ հասցնում է պատկանած տեղը։

Ամեն քաղաքում գիտեին, թե երբ կհայտնվի հաջի Միսաքը։ Նրա քարավանի ընթացքը այնքան կանոնավոր էր։ Եթե մի արտաքո կարգի դեպք պատահելու չլիներ, նա մի ժամ ևս ետ չէր ընկնի սովորական օրից։ Բայց այս անգամ հաջի Միսաքի քարավանը բավական դանդաղ էր ընթանում։ Զնայելով նրա վեր առած հակերի փոքրիկ ծավալին, նրանք բավական ծանր էին երևում։ Հակերի մեծ մասը քառանկյունի, երկայնաձև արկղիկներ էին երկաթի կապանքներով ամրացրած, և որոնց վրա անգլիական տառերով դրոշմված էին «Պերսիա» և «Թեհրան» բառերը։ Քարավանը ըստ մեծի մասին ուղևորվում էր գիշերով։ Հաջի Միսաքը ասում էր, որ նա չէ ցանկանում ցերեկվա տոթերի ժամանակ իր ջորիները հոգնեցնել։

Քարավանի մեջ կար մի երկրորդ անձնավորություն ևս, որ իրան կոչում էր Մելիք-Մանսուր, դա վաճառական էր և իր ասելով պարսկաստանցի հայ։

Վերջին 20—30 տարիների ընթացքում պարսից կառավարությունը, բավական մեծ վերանորոգություններ անելով զենքերի փոփոխության մեջ, և նրանց եվրոպական ձևի վերածելով, հայերի առջև բացվեցավ վաճառականության մի նոր ասպարեզ, որոնք սկսեցին հայթայթել կառավարությանը պահանջ-

ված զենքերը։ Մելիք-Մանսուրը այս տեսակ վաճառականներից էր և ջորիների կրած ծանր արկղերը նրան էին պատկանում։ Մաքսատներում առանձին ուշադրություն չէին դարձնում այդ արկղների վրա, որովհետև իբրև տրանզիտ ապրանք, պետք է անցկենային Պարսկաստան։ Այս տեսակ ապրանքների փոխադրությունը Տրապիզոնի, Արզրումի և Բայազետի ճանապարհով դեպի Պարսկաստան մի նոր բան չէր։

Մելիք-Մանսուրը կլիներ 36 տարեկան, նա բավական համակրական դեմք ուներ, նրա միշտ ուրախ, միշտ ծիծաղկոտ բնավորությունը և փոքր-ինչ շաղակրատ լեզուն մի առանձին կյանք էին տալիս այդ մարդու անվերջ խոսակցություններին հաջի Միսաքի հետ, մանավանդ երբ նա սկսում էր պատմել իր կյանքի հետաքրքիր արկածները, որ կատարվել էին հեռավոր աշխարհներում։ Քարավանի ճանապարհորդության միակերպ ձանձրույթը փարատելու համար այս տեսակ խոսակցությունները անհրաժեշտ են լինում։ Ավելի հետաքրքիր էր այդ հայոց «թափառական հրեայի» ձախ ձեռքի երեք մատների կտրվելու պատմությունը, որ պատահել էր Հնդկաստանում մի կռվի մեջ, որ նա ունեցել էր վայրենիների հետ։

Մելիք-Մանսուրը խոսում էր շատ արևելյան և արևմտյան լեզուներով, և իր ամբողջ կյանքում մարդիկների հետ զարկվելով, գիտեր նրանց բոլոր խորամանկությունները, գիտեր, թե ինչպես պետք է վարվել մարդու հետ։ Եվ այս պատճառով, նա ներսից այն չէր, ինչ որ երևում էր դրսից։ Այսուամենայնիվ, հաջի Միսաքը մի առանձին հարգանքով էր վերաբերվում դեպի այդ խորհրդավոր անձնավորությունը, ոչ այն պատճառով միայն, որ ինքը իբրև բեռնատար պարտավոր էր պատվել իր վեր առած բեռների տիրոջը, բայց գտնում էր նրա մեջ մի ուրիշ բան, որ իսկապես հարգելի էր։

Ամեն մի խան (քարվանսարա) իջևանելիս պանդոկապետերը խիստ գոհ էին մնում Մելիք-Մանսուրից. նա բավական առատաձեռն էր և ոսկին շաղ էր տալիս աջ ու ձախ։

— Դուք դրանց փչացնում եք,— նկատում էր հաջի Միսաքը,— մյուս անգամ մեզ անհնար կլինի այդ ավազակներից մի բաժակ ջուր խնդրել։

— Վնաս չունի, —պատասխանում էր նա ծիծաղելով,— ոսկու փայլը կուրացնում է մարդկանց աչքերը...

Քարավանը անվտանգ անցավ Արզրումից և մի շաբաթից հետո մտավ Բայազետի գավառը։ Այստեղ Մելիք-Մանսուրի բեռները սկսեցին հետզհետե փոխվել։ Արկղները գիշերով անհետանում էին և նրանց փոխարեն ստացվում էին ուրիշ հակեր, բոլորովին այլ տեսակ մթերքներով։ Այդ փոփոխությունները պատահում էին, երբ քարավանը իջևանում էր այս և այն հայաբնակ գյուղի մեջ։ Երբեմն՝ հայտնվում էին Մելիք-Մանսուրի մոտ մի տեսակ անծանոթ մարդիկ— ինչ-որ անհասկանալի լեզվով խոսում էին նրա հետ և անհետանում էին։

Վերջապես քարավանը մոտեցավ Տաճկաստանի և Պարսկաստանի սահմանին։ Նա անցավ սահմանը և ոտք կոխեց պարսից հողի վրա։ Բայց մինչև այստեղ հասնելը և՛ «Պերսիա», և՛ «Թեհրան» մակագրությամբ արկղներից ոչ մեկը չէր մնացել հաջի Միսաքի ջորիների մեջքի վրա, և ինքը Մելիք-Մանսուրը՝ կեղծ վաճառականը անհետացել էր...

ԻԳ

Մերունի խաչոյի տան մեջ կյանքի սովորական եղանակը, որ ուներ նա վերջին օրերում, բավական փոփոխություն էր ստացել։ Պարոն Սալմանը (տանեցիք դեռ նրան պարոն Դուդուկչյան էին կոչում) շատ անգամ տանը չէր գտնվում։ Նա և Վարդանը երբեմն հեռանում էին Օ... գյուղից և օրերով չէին վերադառնում։ Հայրապետը և Ապոն այժմ խիստ մտախոհ և ծածկամիտ էին դարձել։ Նրանց մյուս եղբայրներին արդեն անտանելի էր դարձել երկու օտարական հյուրերը, որոնց վարմունքը, որոնց «խենթությունները» նրանց հաճելի չէին թվում։ Ինքը ծերունի խաչոն այժմ զբաղված էր գյուղային գործերով, որ օրըստ օրե ավելի ծանրանում էին և նրան շատ հոգսեր էին պատճառում։ Այս պատճառով տանուտերի օգան համարյա կորցրել էր իր կենդանությունը և նրա մեջ մեծ մասամբ դադարել էին գիշերային խոսակցությունները, վիճաբանությունները և անուղղակի դատողությունները, որ լինում էին առաջ։

Միայն անփոփոխ մնացել էր կանանոցի կյանքը։ Նա իր միակերպությունը պահպանել էր դարերով ու նույնպես շարունակվում էր։ Հայ ընտանիքի այդ կտրված, առանձնացած և տղամարդի հասարակությունից անջատված բաժինը ոչինչ

մասնակցություն չունի, թե ինչ են խոսում, ինչ բանի վրա են մտածում տղամարդիկը։ Իրանց տնտեսությունից, իրանց տնային հոգսերից դուրս, ոչ մի օտար միտք չէ կբաղեցնում նրանց։ Եվ այս պատճառով օդայի մեջ եղած խորհուրդների մասին նրանք ոչինչ չգիտեին։ Տանուտերի օգան, այդ գյուղական կլուբը, դեռ մատչելի չէր կանանց հասարակությանը։

— Դրանց կանանոցի չորս պատերի մեջ թողնված այդ ուժերին պետք է քաշել գործի մեջ, այն ժամանակ, անտարակույս, հաջողությունը մեր կողմը կլինի...— ասում էր շատ անգամ պարոն Սալմանը։

— Դեռ վաղ է,— պատասխանում էր նրան Վարդանը,— պետք է նախ և առաջ պատրաստել նրանց։

— Ոչինչ վերանորոգություն մի ժողովրդի կյանքի մեջ չէ կարելի կատարել առանց կնոջ մասնակցության։ Եթե մեր ժողովուրդը մնացել է անշարժ, դրա գլխավոր պատճառը այն է, որ կինը չէ մասնակցում հասարակական գործերի մեջ։ Այդ ուժը, այդ կենսատու զորությունը, կանանոցի չորս պատերի մեջ ոչնչանալով, ապարդյուն է դառնում մեզ համար։ Եթե պետք էր սկսել մեր ժողովրդի կրթության գործը, սկիզբը դնելու է անպատճառ կանանց կրթությունից։ Ես այս անգամ պտտեցա ամբողջ Հայաստանում և ամեն տեղ ուշի-ուշով ուսումնասիրում էի հայ կնոջը։ Իմ ստացած տեղեկությունները խիստ մխիթարական հետևանքի են հասցնում։ Որքան տղամարդը թուրքերի ազդեցության տակ խարդախված է, փչացած է, որքան նա կորցրել էր իր հայկական ինքնուրույնությունը, այնքան կինը պահպանվել է մաքուր, պահպանվել է իր բարք ու վարքի բարոյական անարատության մեջ։ Չկա չարիք առանց բարիքի։ Կանանոցի չորս պատերի մեջ փակված կինը, թեև դուրերով տանջվեցավ, բթացավ և զրկվեցավ հասարակական մարդ լինելուց, բայց մյուս կողմից, նա իր այդ բանտարկության մեջ պահպանեց հայությունը։ Դա մեծ գործ է։ Որքան տղամարդը դրսում մահմեդական տարրի ազդեցության ներքո կորցնում է իր ազգային առանձնությունները, այնքան կինը կանանոցի մեջ, հեռու մնալով այդ ազդեցությունից, պահպանում էր ազգայնությունը։ Այսպիսով անգիտակցաբար պահպանվում էր մի մշտական հավասարակշռություն։ Տղամարդի կորստի տեղը լցնում էր կինը։ Այդ կարելի է տեսնել ամենահասարակ մանրա-

մասնությունների մեջ անգամ։ Կնոջ զգվանքը դեպի մահմեդականությունը հասնում է սարսափելի մոլեռանդության. ամեն ինչ, որ դուրս է գալիս մահմեդականի ձեռքից, նա պիղծ է համարում. նրա մորթած միսը, նրա մակարդած պանիրը, նրա թխած հացը չէ ուտում։ Բայց տղամարդիկ այսպիսի խտրություններ չգիտեն։ Ես լսել եմ հարյուրավոր պատմություններ, որ մահմեդականներից հափշտակված կինը, աղջիկը կամ վերջապես փախչում է, կամ եթե չէ հաջողվում, անձնասպան է լինում։ Բայց տղամարդի վերաբերությամբ այս տեսակ օրինակներ խիստ սակավ են։ Կա մի ուրիշ բան ևս, որ ամենաղլխավորն է. շատ տեղերում, մանավանդ քաղաքներում, թուրքերեն լեզուն հայ մարդու բերանում բոլորովին սովորական է դարձել, բայց ես չտեսա մի կին, որ թուրքերեն խոսեր, կամ գոնե գիտենար այդ լեզուն։ Հայոց լեզուն ընտանիքի մեջ պահպանողը և իր զավակների բերանը դնողը կինն է։ Նա իր հեղինակությունը բանեցնում է մինչև անգամ օտարների վերաբերությամբ։ Հայերի տներում ծառայող քրդերը և քրդուհիները բոլորը հայերեն են խոսում։ Կինը տվեց մեզ լեզու, ազգություն և պահպանեց հայ ընտանիքի բարոյական հիմունքը։ Այժմ նա մի անարատ, չապականված և անմշակ նյութ է մեր ձեռքում, որից կարելի է հրաշալի բան շինել։

Այսպիսի և դրա նման մտածություններ վերջին օրերում պարոն Սալմանի սովորական խոսակցության առարկան էին։ Բայց չնայելով, որ նա այնքան լավ կարծիք ուներ հայ կնոջ մասին, ծերունի Խաչոյի տան կնիկները նրան չէին համակրում։ Հասկանալի՛ է, որ նրա ներքին, բարոյական և մտավոր արժանավորությունները նրանք ճանաչել կամ գնահատել անկարող էին, բայց պարոն Սալմանը իր արտաքին կեղևի մեջ նույնպես ուներ շատ բան, որ կարող էին գրավել ամեն մի կնոջ ուշադրությունը։ Բայց կինը զարգացման զանազան աստիճանի և ժողովրդի զանազան դասերի մեջ տարբեր ճաշակներ ունի տղամարդի արժանավորությունները գնահատելու և նրան գնելու վերաբերությամբ։ Այդ պատճառով, շատ զարմանալի չէր, որ ծերունի Խաչոյի հարսները Վարդանին ավելի բարձր էին դասում պարոն Սալմանից։

Մի անգամ, հետ-կեսավուր հանգստի ժամանակ, սրահի մեջ նստած էին հարսները, և յուրաքանչյուրը զբաղված էր իր

ձեռագործով, մեկը սանդերքի վրա բուրդ էր գզում, մյուսը իլիկով մանում էր գզած բուրդը, երրորդը ոստայնի վրա գործում էր մի գեղեցիկ գունավոր գորգ, չորրորդը իր երեխաների համար շորեր էր կարում, մի խոսքով, ամեն մեկը իր առանձին գործը ուներ։ Խոսակցության առարկան պարոն Սալմանն էր։

— Սառա,— հարցրեց նրա տեգերկինը՝ մանկահասակ Փարիշանը,— այդ մարդը մեր գյուղում ի՞նչ պիտի շինե։

— Ասում են, ուզում է վարժատուն բաց անել,— պատասխանեց Սառան։

— Նա խո տիրացու չէ,— ասաց Փարիշանը, որի կարծիքով վարժապետը պետք է անպատճառ տիրացու լիներ։

— Տիրացու է, Ստանպոլի տիրացու է,— կրկնեց Սառան։

— Ապա ինչո՞ւ ժամ չէ գնում, շարական չէ ասում։

Սառան ուրիշ պատասխան չգտավ, և առանց մտածելու ասաց.

— Դա էլ այդպիսի տիրացու է։

Մեջ մտավ Ապոյի կինը՝ գեղեցիկ Մարոն։

— Մարդս ասում էր, որ աղջիկներ էլ պիտի կարդացնե։

Մարոյի խոսքը բարձրացրեց ընդհանուր ծիծաղ։

— Աղջիկը ի՞նչ կանե կարդալը, աղջիկը խո տերտեր կամ վարդապետ չի դառնալու,— պատասխանեցին Մարոյին։

Հարսներից մեկը դարձավ դեպի փոքրիկ Նազլուն ասելով.

— Լսո՞ւմ ես, Նազլու, դրանից հետո պիտի գնաս վարժատուն և այբբեն սովորես։

Նազլուն Հայրապետի աղջիկն էր, նա բավական համարձակ կերպով պատասխանեց.

— Ի՞նչ կա, կսովորեմ, հետո ժամ կգնամ, ժամի շապիկ կհագնեմ ու տղերքի նման «փոխ» կասեմ։

— Հո՞ղը գլխիդ, էդ էր պակաս,— պատասխանեցին խեղճ աղջկան։

Փարիշանը, որ այդ խոսակցությանը առիթ տվեց, մի նոր հարց ևս առաջարկեց.

— Տիրացու Սիմոնը կարդացնում է մեր երեխերքին, էլ ի՞նչ կանենք ուրիշ վարժապետը։ Այդ մարդը խո նրանից շատ չէ՞ իմանում։

— Իհարկե, շատ չէ իմանում,— պատասխանեց Սառան,— տիրացու Սիմոնը շատ է կարդացել, բայց նա մեկ պակասություն ունի, որ հարբում է ու երեխերքին ծեծում է։ Հիշում ե՞ս մեր հարևան Կասպարի տղային, այնքան ծեծ էր կերել, որ շալակած տուն բերեցին և խեղճ տղան երկու օրից հետո մեռավ։

— Տիրացու Սիմոնը ինչո՞վ էր մեղավոր, առանց ծեծի երեխան ի՞նչ կսովորի։

Այս խոսակցությունները առանց պատճառի չէին։ Պարոն Սալմանը նույն օրերում բանակցում էր գյուղացիների հետ երկու դպրոցներ բաց անելու, մեկը աղջիկների համար, մյուսը տղաների համար։ Նա խոստանում էր, թե ինքը վարժապետներ բերել կտա և նրանց զավակները կսովորեն բոլորովին ձրի և մինչև անգամ գրքերը և այլ ուսումնական պարագայքը կստանան առանց փողի։ Բայց ինչ որ ձրի է, գյուղացու համար կասկածավոր է։ Այդ պատճառով մեծ աշխատություն պետք էր գյուղացիներին համոզելու համար, որոնց առավելապես բարկացնում էր օրիորդաց դպրոցը։ Ժողովուրդը սովորած լինելով կրթությունը տերտերների և տիրացուների ձեռքից ընդունել, ոչ միայն օտարոտի և խորթ էր համարում, այլ մինչև անգամ մեղք էր համարում իր զավակների դաստիարակությունը մի այնպիսի մարդու ձեռք հանձնել, որ ժամ չէր գնում, որ շարական չէր ասում, որ, ինչպես լսում էին, պաս էլ չէր պահում։

Ներսոնի խաչոն, որ մյուս բոլոր խորհուրդների մեջ հակառակ էր պարոն Սալմանին, դպրոցների վերաբերությամբ համաձայնվեցավ նրա հետ։ Որպես գյուղի տանուտերը և գլխավորը, նա կարողացավ համոզել գյուղացիներին, և պարոն Սալմանին տվեցին մի կտոր գետին, որի վրա նա հարմար էր համարում դպրոցների շենք կառուցել։ Գործը արդեն սկսված էր։ Հիմքը փորված էր։ Հանկարծ մի փոթորիկ բարձրացավ և մի առավոտ տեսան, որ գյուղացիները գիշերով հավաքվել և հիմքը հողով լցրել էին։ Այն օրը գյուղացիներից ոչ ոք չեկավ բանելու, չնայելով որ պարոն Սալմանը օրական վարձը ավելացրեց։

Ի՞նչ էր պատահել։

Որպես վերևում կանանց խոսակցությունից նկատեցինք, այդ գյուղում կար Սիմոն անունով մի տիրացու, որը միևնույն ժամանակ վարժապետություն էր անում, այսինքն՝ ձմեռը հավաքում էր երեխաներին մի գոմի մեջ, սաղմոս, ժամագիրք և դրանց նման գրքեր էր կարդացնում, բայց գարունքին, երբ գյու-

ղական աշխատությունները սկսվում էին, իր աշակերտներին արձակում էր, որոնք մինչև աշնան վերջը դպրոցի երես չտեսնելով, ինչ որ սովորել էին, բոլորովին մոռանում էին։ Այդ տիրացու Սիմոնը գյուղի ծխատեր քահանայի՝ տեր-Մարուքի փեսան էր, մի հարաժամ արբեցող, բայց միևնույն ժամանակ սաստիկ խռովարար մարդ էր նա։ Նոր դպրոցների շինությունը նա իր շահերին վնասակար գտավ և գրգռեց իր աներոջը խափանել գործը։

Մի խոսք բավական էր գյուղացիների մոլեռանդությունը բորբոքելու և գործը խափանելու համար։ Քահանան եկեղեցում պարոն Սալմանի մասին, իր քարոզի մեջ, հայտնեց ժողովրդին, որ այդ մարդը «ֆարմասոն» է, հայոց աստծուն չէ պաշտում և բոլոր երեխերքին հավատքից կհանե։ Նա ավելացրեց, որ աղջիկներին կարդացնելը մեղք է, որ Սողոմոն իմաստունը և Հովհաննես Մկրտիչը կնիկներին անիծել են, որովհետև մի կին Հովհաննես Մկրտչի գլուխը կտրել տվեց։ Հետո սուրբ գրքից շատ փաստեր բերեց, որ Սամսոն մարգարեի (?) մահվան պատճառն էլ մի կին դարձավ։ Ադամին էլ Եվան խաբեց և դրախտից դուրս գցել տվավ, մի խոսքով, իր քարոզի մեջ զանազան այս տեսակ վկայություններ բերելով տեր հայրը հաստատեց, որ աղջիկներին կարդացնելը վտանգավոր է, որովհետև նրանք շատ բան կսովորեն և սատանա կդառնան։

Բայց տիրացու Սիմոնը մեծ հեղինակություն ուներ գյուղի կանանց հասարակության մեջ, նրանց համար զանազան կախարդական թղթեր էր գրում, հմայում էր, գուշակություններ էր անում, և այսպիսով գրավել էր նրանց համակրությունը։ Կնիկները ավելի գրգռեցին իրանց ամուսիններին, որ տիրացուին օգնեն, որ նրա հացը չկտրվի։

Քահանան և տիրացու Սիմոնը իրանց հարուցած խռովությունների մեջ մեծ օժանդակություն գտան Թոմաս էֆենդուց, որը սաստիկ հակառակ էր դպրոց, դպրություն և ուսում կոչված բաներին։ Բացի դրանից, տիրացուն նրա անվարձ գրագիրն էր, գրում էր կապալառուի հաշիվները, և հունձի ժամանակ նրա զափթիաների հետ, գյուղից գյուղ ման էր գալիս և հավաքում էր գյուղացիների մշակության բերքի տասնորդները։

Այդ բոլորը մեծ հոգսեր պատճառեցին բարեսիրտ ծերունի խաչոյին, բայց բնավ չկարողացան խախտել պարոն Սալմանի

հաստատամտությունը։ Երեկոյան տուն դառնալով, նա ասաց Վարդանին.

— Ես այդ անպիտանների հետ միսիոնարի պես պիտի վարվեմ։ Միսիոնարը ինչ ժողովրդի մեջ որ մտնում է, նրա առաջին հակառակորդները լինում են կարդացողները և հոգևորականները։ Բայց միևնույն ժամանակ նրա առաջին հետևողները դառնում են նույն մարդիկը, որ սկզբում հակառակում էին։ Միսիոնարը հանձնում է նրանց զանազան գործեր, լավ ևս է ասել՝ ոչինչ գործ չէ հանձնում, միայն ոռճիկներ է տալիս։ Այսպիսով նոր աղանդը հալածող պողոսները դառնում են նրա ամենամոլեռանդ պաշտպանները։

— Այդ իրավ է,— պատասխանեց Վարդանը,— ի՞նչ ես ուզում անել։

— Պետք է գործնական լինել,— ասաց պարոն Սալմանը մի առանձին անձնավստահությամբ,— պետք է հասկանալ, թե ինչո՞վ են գրավվում մարդիկ։ Ինձ հետաքրքիր է գիտենալ, թե այդ հիմար տիրացուն որքան շահ ուներ իր աշակերտներից. ես կառաջարկեմ նրան կրկնապատիկը ստանալ ինձանից և իմ դպրոցներում մի պաշտոն վարել, այսինքն՝ ոչինչ գործ չկատարել։ Հավատացած եմ, որ այս առաջարկությունից հետո, առավոտյան ինքն կգա, բահը և բրիչը կվեր առնի և իմ բանվորների հետ կսկսե աշխատել դպրոցների շենքը կառուցանելու համար։

— Ես էլ այսպես եմ կարծում,— պատասխանեց Վարդանը,— բայց տերտերի բերանին էլ պետք է մի փոքր յուղ քսել։

— Այդ էլ կանեմ։

Չնայելով այնքան պատահած անախորժություններին, պարոն Սալմանը սովորականից ավելի ուրախ էր։ Գործի սկզբնավորության անաջողությունները բորբոքել էին նրա եռանդը, իսկ ապագայի պայծառ հույսերը լցրել էին նրա սիրտը մի անսահման բերկրությամբ։

— Գիտե՞ս, Վարդան, որքա՜ն բախտավոր, որքա՜ն ընդարձակ ապագա է խոստանում մեզ դպրոցը։ Նա կտա մեզ բոլորը ինչ որ մենք ցանկանում ենք։ Նա՛, միայն նա՛ կբուժե մեր դարևոր վերքերը և կպատրաստե նոր սերունդ մի առողջ և թարմ կյանքի համար։ Մեր նախորդների դարևոր անգործությունը թողեց մեզ համար, իրավ է, շատ աշխատանք։ Նրանք

կանխապես չհեշտացրին մեր այժմյան հոգսերը, բայց փույթ չէ։ Տակավին կարելի է հույս ունենալ, որ ապագան մեզ է պատկանում։ Միայն հաստատուն և տոկուն աշխատանք պետք է։ Իմ կարծիքով, բավական չէ միայն կրթել միտքը, աղնվացնել հոգին, պետք է կրթել և մարմինը։ Դու ինքդ, Վարդան, նկատած կլինես, թե այստեղի մանուկները մինչև որ աստիճան դանդաղկոտ են, մինչև որ աստիճան ծանրաշարժ են։ Պետք է ամրացնել նրանց մկանները, պետք է կազդուրել նրանց ջղերը։ Այս կետից, մարմնամարզությունը մեր դպրոցների մեջ պետք է ընդունե նպատակահարմար ձև և կերպարանք. նա պետք է քաջություն ազդե մեր մանուկների մեջ և պետք է ամրացնե նրանց թուլացած սրտերը...

— Ես քեզ մի ուրախալի բան պիտի պատմեմ, Վարդան, այսօր տեսություն ունեցա մի քանի քրդերի հետ, խոսում էի նրանց դպրոցի և կրթության օգտավետության մասին։ Մեծ եղավ իմ զարմանքը, երբ նրանք ցույց տվին ամեն տեսակ պատրաստակամություն, հայտնելով, թե սիրով կհանձնեն իրանց որդիները հայոց դպրոցներում, երբ ուսումը այդքան լավ բան է։ Նրանց խոսակցությունից երևում էր, թե իրանք էլ շատ գոհ չեն, որ իրանց որդիները ավազակներ են լինում։ Եվ իրավ, այդ ժողովուրդը ինչո՞վ է մեղավոր, որ մնացել է վայրենի, որ իր ապրուստը որոնում է ավազակության և մարդասպանության մեջ։ Մեղավորը մենք ենք, որ մինչև այսօր չաշխատեցինք կրթել նրանց։ Մեր սեփական շահերը պահանջում են անել այդ։ Եթե ցանկանում ենք ազատ մնալ գազանների կատաղությունից, պետք է աշխատենք ընտանեցնել, պետք է աշխատենք նրանց վարժեցնել ավելի խաղաղ և ավելի քաղաքակրթված կյանքի։ Թուրքիան հոգ չէ տանում քրդերի կրթության մասին, և այդ շատ հասկանալի է. որովհետև քրդի վայրենությունը ավելի նպաստավոր է նրան։ Բայց մենք պետք է հոգ տանենք, որովհետև վնասը մեզ է հասնում։ Մենք չենք դիպչի նրանց կրոնին, մենք միայն կկրթենք նրանց։ Այնուհետև «ջուրը իր բնական ճանապարհը կգտնե»...

ԻԴ

Թուրքաց կառավարության կողմից պատերազմական պատրաստությունների նշանները արդեն նկատելի կերպով երևում էին։ Եվ այդ կարելի էր տեսնել առավելապես Բագրևանդի գավառում, որ շատ հեռու չէր ռուսաց սահմանից։ Գյուղացիներից խստությամբ հավաքում էին ոչ միայն ներկա տարվա հարկերը, այլև պահանջում էին ապառիկներ և մի քանի ապագա տարիների հարկերը միասին։ Ժողովրդի հառաչանքներին և դժգոհությանը չափ չկար։ Ով որ փողով վճարել չէր կարողանում, բռնությամբ վաճառել էին տալիս նրա տան կայքը, անասունները, և մինչև անգամ չէին խնայում եզներին ու գոմեշներին, որոնք անհրաժեշտ էին գյուղացու երկրագործությանը, որոնք ծառայում էին նրա վարը վարելու և ծանրությունները տեղափոխելու համար։ Այդ բավական չէր, գյուղացիների վրա պարտք էին դնում պատրաստել այսքան հազար հոխա պաքսիմատ, և կամ խլում էին տներից իրանց ուտեստի համար պատրաստած բոլոր պաշարեղենները, որպես էին ձավար, կորկոտ, բրիշթա[1], յուղ, պանիր, բրինձ և այլն։ Գյուղացիների բոլոր արտասուքի, լացի և աղաղակների պատասխանը լինում էր այն, թե «տերությունը պատերազմ ունի»...

Հիշյալ անկարգությունները բաց արին Թոմաս էֆենդու առջև գործունեության մի նոր և ընդարձակ ասպարեզ։ Որպես արքունի մուլթեզիմ, նա հանձն էր առել հավաքել հարկերը և հայթայթել զորքերի համար պատրաստվելիք պաշարի մի մասը։ Թոմաս էֆենդու առջևը դրած էր մի լայնատարած հունձք, ուր նրա սուր մանգաղը եռանդով գործում էր... Այժմ փոխանակ երկու զափթիաների, նա ստացել էր իշխանությունից բույրուլթու (открытый лист) պահելու իր մոտ որքան պետք լինի զափթիաներ։

Եվ այդ բոլոր զրկողությունները հասնում էին հայերին միայն, որովհետև մահմեդականները պատրաստվում էին մասնակցել պատերազմին և նրանցից ուրիշ ոչինչ չէր պահանջվում։

Բացի նրանից, որ հայ գյուղացիները կողոպտվում էին և

[1] Բրիշթա վերմիշելի նման պատրաստած մի խմորեղեն է։

իրանց 10—20 տարիների ընթացքում ձեռք բերած կայքերից միանգամայն զրկվում էին,— բացի այդ դառն չքավորությունից, նրանց տիրել էր ընդհանուր սարսափ, նրանց սպառնում էր մի ընդհանուր և ավելի սոսկալի անբախտություն։ Մահմեդական տարրի մեջ նկատվում էր մի գազանային կատաղություն դեպի քրիստոնյաները, դեպի բոլոր «գավուրները»։ Ամենի բերնից լսելի էր լինում այն դժոխային բառը՝ «ջհաթ»։ Մոլլաները, մուֆթիները, ղադիները և շեյխերը բորբոքում էին խառնիճաղանջ ամբոխի մոլեռանդությունը, գրգռում էին նրան, քարոզելով, թե պատերազմը կրոնական է, թե Ստամբոլումը շուտով պիտի բարձրացնեն «սանջակ շերիֆը», և շուտով կհրատարակվի սրբազան պատերազմը, և ամբողջ իսլամը պետք է սուր բարձրացնե քրիստոնյաների դեմ...

Այդ բոլորը մեծ հոգսեր պատճառեցին պարոն Սալմանին, որին լավ հայտնի էր այդ կատաղի շարժումների նշանակությունը և նրանց սարսափելի հետևանքը տեղային հայերի վերաբերությամբ։

— Շուտով կկրկնվեն այստեղ Բոլգարիայի կոտորածները,— ասաց նա մի առավոտ Վարդանին,— պետք է շտապենք նախապատրաստել ժողովուրդը անձնապաշտպանության համար։

— Ես էլ մի այսպիսի բարբարոսության հոտը զգում եմ...— պատասխանեց Վարդանը։

Այսպես խոսելով, նրանք դուրս եկան ծերունի Խաչոյի տնից և դիմում էին դեպի տեր-Մարուքի տունը, որի հետ միտք ունեին վերջացնել դպրոցների վերաբերությամբ մի քանի օր առաջ կարգադրված խորհուրդը, այսինքն՝ որպես Վարդանը ասաց, ուզում էին տերտերի «բերնին մի փոքր յուղ քսել», որ նա լռե, նրա փեսա տիրացու Սիմոնին փորձել այժմ որպես հսկող բանվորների վրա, իսկ ապագայի համար խոստանալ մի պաշտոն նոր բացվելիք դպրոցների մեջ։

Նրանց ականջին զարկեց մի ձայն, գյուղի միջով անց էր կենում մի անծանոթ չարչի, և իր վաճառքների անունները մի առ մի կարդալով, գնորդներ էր հրավիրում։

— Սիրուն աղջիկներ, կարմիր հարսներ, ինձ բերեցեք ձեր փարաները, ես կտամ ձեզ լավ ասեղներ, դույն-դույն թելեր, ոսկի մատնոցներ։

Չարչին մի վիթխարի մարդ էր, ոտքից. ցգլուխ հագնված ցնցոտիների մեջ։ Նրա վաճառքների ահագին արկղը, որ կրած ուներ թիկունքի վրա, համեմատելով նրա մարմնի մեծությանը, նույն տպավորությունն էր գործում, որպես մի փոքրիկ մաղ քարշ ընկած լիներ ուղտի կողքից։ Չարչին ձախ ոտքից սաստիկ կաղում էր. և ամեն անգամ, երբ օրորվում էր նա դեպի ձախ կողմը, կարելի էր մտածել, որ իսկույն ցած կգլորվի այդ Գոլիաթը, բայց ձեռքի ահագին գավազանը նեցուկ տալով, պահպանում էր իր իրանի հավասարակշռությունը։

Պարոն Սալմանը, լսելով նրա ձայնը, կարծես մի էլեկտրական ցնցում զգաց իր սրտի մեջ, կարծես աշխարհի բոլոր բերկրությունները միանգամից լցրել էին նրա հոգին։ Ի՞նչ կապ կար որ Սալմանի և այդ թափառականի մեջ։ Չարչին դեռ շարունակում էր եղանակել իր վաճառքների անունները և ծանր անհավասար քայլերով անցնում էր գյուղի նեղ փողոցների միջով։ Պարոն Սալմանը անցավ նրա մոտից և երկու օտարականների հայացքները հանդիպեցին միմյանց։ Նրանց մեջ ամենևին խոսակցություն չեղավ, բայց հաղորդեցին միմյանց շատ բան... Վարդանը ոչինչ չնկատեց։

— Լա՜վ ժամանակ է գտել դա էլ իր թելն ու ասեղը ծախելու, խեղճ գյուղացիների մոտ մի փարա էլ չի մնացել, ինչո՞վ պիտի առնեն,— ասաց Վարդանը ծիծաղելով, երբ փոքր-ինչ հեռացել էին չարչու մոտից։

— Նրա արկղը, սիրելիս, ձեռնածուների արկղիկի նման երկու հատակ ունի,— պատասխանեց պարոն Սալմանը,— ստորին հատակի մեջ գտնվում են այնպիսի մթերքներ, որոնց սպառելու այժմ ամենահարմար ժամանակն է...

Վարդանը մի առանձին ուշադրություն չդարձրեց այդ խորհրդավոր խոսքերի վրա, նրա միտքը նույն րոպեում զբաղված էր մի բոլորովին այլ առարկայով։ Նա մտածում էր Լալայի վրա։ Իրերի հանկարծակի փոփոխությունը, շրջապատող խռովությունները սաստիկ անհանգստացնում էին նրան, և չգիտեր, թե ինչպես պետք էր տնօրինել իր Լալայի վիճակը, որտե՞ղ թաքցնել նրան, ի՞նչ անել նրա հետ, երբ ինքը այսօր կամ էգուց ստիպված կլիներ ընդունել մի բոլորովին այլ ձեռնարկություն...

— Լա՜վ ասեղներ, դույն-դույն թելեր, սիրուն հուլունքներ...— հեռվից կրկին լսելի եղավ կաղ չարչու խռպոտ և ձգական ձայնը։

Այդ միջոցին գյուղի մեջ հանդիպեցավ պարոն Սալմանին և Վարդանին Թոմաս էֆենդին։ Նրա մոտ կանգնեցրել էին իր գեղեցիկ ձին, որի վրա պատրաստվում էր նստել։ Նա շրջապատված էր մի խումբ գյուղացիներով, որոնց զանազան հրամաններ և պատվերներ էր տալիս։ Տեսնելով պարոն Սալմանին և Վարդանին, նա բաժանվեցավ խումբից, և իր սովորական դիվական ժպիտը երեսին, դիմեց դեպի երկու երիտասարդները, և դեռ չհասած, ասաց հեռվից.

— Ես ձեզ վաղուց էի ցանկանում տեսնել, պարոն Դուդուկջյան (նա դեռ չգիտեր պարոն Սալմանի իսկական անունը), ա՜խ, որքան բախտավոր եմ համարում ինձ, սիրելի հայրենակից, որ տրիթ ունեցա տեսնել ձեզ։ Դուք, երևի, չգիտե՞ք, որ ես էլ պոլսեցի եմ։

Պարոն Սալմանին ոչ միայն չափազանց զարմանալի, այլ շատ զզվելի թվեցավ էֆենդու այս տեսակ շողոքորթությունը, որին ամենևին չէր ճանաչում, որի հետ առաջին անգամ էր տեսնվում։ Նա ոչինչ չպատասխանեց։ Էֆենդին բռնելով նրա ձեռքը, ասաց.

— Հույս ունեմ, որ դուք իրավունք կտաք համբուրվել ձեզ հետ, որպես պոլսեցի, ես թույլ եմ տալիս այդ խնդրել ձեզանից։ Հայրենիքիս երկար տարիների կարոտը ցանկանում եմ ձեզանից առնել։

Վարդանը, հեռու կանգնած, լուռ նայում էր այդ կոմեդիայի վրա։ Պարոն Սալմանը չգիտեր, թե ինչպես պետք էր դուրս գալ իր նեղ դրությունից։ Այժմ էֆենդին դարձավ դեպի Վարդանը։

— Մոտ ե՜կ, իմ խենթ բարեկամ; դու գիտես, որ ես երեխայի սիրտ ունեմ, մի րոպե կբարկանամ, մյուս րոպեում կմոռանամ բոլորը։ «Քուրդը իր թանին թթու չի ասի»։ Դու էլի իմն ես, թե լավ, թե վատ, իմն ես։ Ես ամեն ինչ մոռացել եմ։ Տո՜ւր ինձ ձեռքդ։

Վարդանը հազիվ կարողացավ զսպել իր բարկությունը։ Բայց մտածելով, որ էֆենդու այդ բարեկամական արտահայտությունները առանց մի առանձին նպատակի չէին լինելու, մոտեցավ նրան և ձեռք տվեց։

Նա կրկին դարձավ դեպի պարոն Սալմանը։

— Ես խիստ բարկացած եմ ձեր դեմ, պարոն Դուդուկջյան, — ասաց նա իր խոսքերին ավելի լուրջ ձև տալով,— լսե՞լ եք Թուրքի առածը՝ «Տանուտերի հետ առաջ տեսնվիր, հետո գյուղը կողոպտիր»։ Թոմաս էֆենդին այդ երկրում մի մարդ է։ Եթե դուք սկզբից ինձ հետ խորհուրդ արած լինեիք, ես ձեր բոլոր դիտավորությունը այնպես կկարգադրեի, որ այսօր այս անախորժությունները չէին պատահի ձեզ։ Ա՜խ, ջահելներ, ջահելներ, լա՜վ սիրտ ունեք, բայց գործելու եղանակը չեք իմանում։ Ուղիղ չե՞մ ասում։

— Ես իրավ, չեմ հասկանում, թե դուք ի՞նչ բանի վրա եք խոսում,— պատասխանեց պարոն Սալմանը։

Էֆենդին այնպես ձևացրեց, որպես թե չլսեց պարոն Սալմանի խոսքերը և երեսը շուռ տալով դեպի գյուղացիների խումբը, որոնք հեռու կանգնած սպասում էին նրան, ասաց.

— Ա՜խ, ավանակներ, ավանակներ, դուք ե՞րբ պիտի խելքի գաք։— Նա կրկին դառնալով դեպի պարոն Սալմանը, շարունակեց.— Մարդ էլ իր ձեռքով իր աչքի լույսը կխավարեցնե՞. դրանք (գյուղացիները) այդպես են։ Ես այսօր լսեցի, ճշմարիտն ասեմ ձեզ, մազերս բիզ-բիզ կանգնեցան։ Մենք աշխատում ենք, որ դրանք դպրոց ունենան, ուսում առնեն, աչքները բացվի, կույր չմնան, աշխարհի լարն ու բարին ճանաչեն, բայց դրանք չեն հասկանում, էլի իրանց էշն են քշում...

«Մենք աշխատում ենք»...— կրկնեց իր մտքում պարոն Սալմանը,— բայց ովքե՞ր են այդ «մենք», որ առանձին կերպով շեշտեց Թոմաս էֆենդին։

Նա շարունակեց.

— Ես հոգով չափ ուրախացա, երբ լսեցի ձեր դիտավորությունների մասին, պարոն Դուդուկջյան, և այս պատճառով դիմեցի ձեզ հայտնելու իմ առանձին շնորհակալությունը։ Մեր ժողովուրդը խավարի մեջն է. պետք է դուրս բերել նրան դեպի լույս աշխարհ։ Դպրոցը միայն կփրկե նրան։ Մի քանի օր առաջ պատահած անկարգությունները թո՛ղ չվհատեցնեն ձեզ. ամեն բարի գործի սկիզբը դառնությամբ է լինում։ Դուք իմ մեջ, որպես ձեր հայրենակցի մեջ, կգտնեք համակրություն և ձեռնտվություն։ Ընդունեցեք իմ փոքրիկ ծառայությունները։ Ես այսօր մի գործով գնում եմ մերձակա գյուղը. առավոտյան կվերադառնամ, և ինքս անձամբ կկանգնեմ, բաց անել կտամ

Դպրոցների հիմքը։ Այստեղ ոչ ոք չի գտնվի, որ Թոմաս էֆենդուն ընդդիմություն գործե։

— Շնորհակալ եմ, էֆենդի,— պատասխանեց պարոն Սալմանը,— դուք այնքան շատ զբաղմունքներ ունեք, որ ես չէի ցանկանա խլել ձեր թանկագին ժամանակը։

— Այդ ոչինչ,— ասաց կապալառուն մի առանձին բավականությամբ,— բարի գործի համար ես միշտ ժամանակ ունեմ։

Նա ձեռք տվեց երկու երիտասարդներին և հեռացավ։

— Լի՜բբ... խաբեբա՜...— ասաց նրա ետևից Վարդանը։

— Կարելի է օգուտ քաղել այս տեսակ մարդերից,— պատասխանեց պարոն Սալմանը։

— Միթե հավատո՞ւմ եք նրա խոսքերին։ Ով գիտե ի՞նչ սատանայական նպատակներ ունի։

Երկու երիտասարդները արդեն հասել էին տեր-Մարուքի տանը և ծեծում էին դուռը։

— Սիրուն ասեղներ... գույն-գույն թելեր... լավ հուլունքներ...— լսելի եղավ կաղ շարշու ձայնը, որ անց էր կենում մյուս փողոցից։

— Վարդան, թողնենք այսօր տերտերի մոտ դնայր— ասաց նրան պարոն Սալմանը։

— Ինչո՞ւ,— հարցրեց Վարդանը։

— Ինձ պետք է այդ շարշուց մի քանի բաներ գնել...

Վարդանը սկսեց ծիծաղել իր ընկերի անտեղի ցանկության վրա։

— Եկեք, ուրիշ բան կա...— ասաց նրան պարոն Սալմանը, այնպիսի մի եղանակով, որ Վարդանը չէր կարող կասկածել նրա առաջարկության կարևորության վրա։

Երկու երիտասարդները թողեցին տերտերի տունը, անցան մյուս փողոցը և հեռվից սկսեցին հետևել շարշուն։ Նրա ետևից ընկած էին մի խումբ գյուղական երեխաներ և գոռում էին.— Մեղ մաստաք տո՛ւր, մաստաք տո՛ւր։ Նա հանեց մի կտոր մաստաք և բաժանեց երեխաներին։

— Ես այդ մարդուն մի շաբաթ առաջ տեսա, այսպես ման էր գալիս Վանա գյուղորայքում,— ասաց մի գյուղացի իր մոտ կանգնած հարևանին։

— Այդ շարշիները ամեն տեղ թափառում են,— պատասխանեց հարևանը,— բայց ինչ սարսափելի դեմք ունի, նայի՛ր,

Գրիգոր, ես չէի ցանկանա դրան գիշերով տեսնել, կարծես չար սատանա լինի։

Կաղ շարշին պտտելով բոլոր փողոցները՝ երբեմն կանչում էին նրան այս և այն տունը մի բան գնելու և ամբողջ ժամերով պահում էին, իսկ երբեմն հենց փողոցի վրա բաց էին անել տալիս նրա արկղը, և գյուղացի կնիկները հավաքված նրա շուրջը, երկար ու բարակ բազար էին անում։ Այսպես, մինչև երեկո նա հազիվ կարողացավ վերջացնել իր առևտուրը, և մութը պատել էր արդեն, երբ դուրս եկավ գյուղից։ Նա թողեց ուղիղ ճանապարհը, որ տանում էր դեպի հարևան գյուղը, և սկսեց դիմել դեպի մի խրամ, որ բավական խորն էր ընկած գարնան հեղեղներից, իսկ այժմ ցամաքել էր։ Նրա ընթացքի մեջ այժմ կարելի էր տեսնել մի նոր փոփոխություն, քայլերը դանդաղ էին որպես առաջ, որովհետև, ինչպես երևում էր, շալակած արկղը սաստիկ ծանր էր։ Բայց այդ մարդը ամենևին կաղ չէր, թեև ցերեկով այնպես էր ձևացնում։ Նա սկսեց իջնել խրամի մեջ։ Այնտեղ ցած դրեց իր բեռը, և ձախ ձեռքով երկու մատը շրթունքի վրա դնելով, խորհրդավոր ձայնով մի քանի անգամ շվացրեց։ (Ձեռքի մնացած մատները կտրած էին)։ Քանի րոպեից հետո խրամի մեջ հայտնվեցան Վարդանը և պարոն Սալմանը։ Վերջինը գրկեց շարշիին և երկար չէին բաժանվում միմյանցից։

— Հիմա նստենք,— ասաց պարոն Սալմանը,— պատմի՛ր, լա՞վ առևտուր ունեցար...

— Շա՜տ լավ...— պատասխանեց շարշին ուրախ ձայնով,— Վասպուրականի մեծ մասը հեղեղեցի իմ վաճառքներով...

— Իհարկե առանց փողի...

— Առանց փողի... ես իմ վաճառքները ձրի էի բաժանում...

Վարդանը ապշած լսում էր երկու բարեկամների խոսակցությունը և ոչինչ չէր հասկանում։

— Հիմա հասկանո՞ւմ ես,— ասաց նրան պարոն Սալմանը,— որ իմ բարեկամի արկղը ձեռնածուի արկղիկի նման երկու հատակ ունի։

— Հետաքրքիր է գիտենալ, թե ֆոկուսի գլխավոր հատակի մեջ ի՞նչ էր թաքցրած,— հարցրեց Վարդանը։

— Ձենքեր...

Վարդանը այժմ հասկացավ շարշու ով և ինչ մարդ լինելը։

որովհետև մի քանի օր առաջ նրա մասին լսել էր պարոն Սալմանից, և ինքը նույնպես գրկեց նրան։

Այդ մարդը Մելիք-Մանսուրն էր։

Իբ

Ամենամեծ մարդիկն անգամ ունենում են խոշոր թուլություններ։ Թոմաս էֆենդին թեև մեծ մարդերի կարգին չէր պատկանում, բայց Ալաշկերտի գավառում հսկա էր համարվում։ Առյուծ չդոնված տեղում աղվեսն էլ խոշոր գազան է։ Այդ մարդն էլ, որքան գործունյա, որքան ճարպիկ էր, դարձյալ ուներ իր փոքրիկ թուլությունները։ Ամբողջ ցերեկը անցկացնելով իր պաշտոնին վերաբերյալ աշխատություններով, գիշերները շատ անգամ լուսացնում էր նա զանազան տեսակ անբարոյական քեֆերով, և թուրք պաշտոնատարների մոլորություններին հետևելով, արաղ էր խմում, աղջիկներ ու տղաներ էր պար ածում, և իրան շրջապատում էր զանազան տեսակ «չալկիներով» (երաժիշտ)։ Ամեն մի գյուղ մտնելիս ամեն մի գյուղացու խրճիթի դռները բաց էին նրա առջև։ Ո՞վ կարող էր չընդունել այդ բարձրատիճան հյուրին։ Ընդհակառակն, գյուղացին պատիվ էր համարում իրան, երբ Թոմաս էֆենդին ոտք կկոխեր նրա շեմքի վրա, թեև նրանից չէր շահվում, ուտեցնում էր, խմեցնում էր, բայց այդ էլ բավական էր, որ Թոմաս էֆենդին կսկսեր այնուհետև «բարի աչքով» նայել իր հյուրասիրողի վրա։

Մի երեկո գզիրը մի աղքատ գյուղացու տանը լուր տվեց, թե էֆենդին պետք է հյուր լինի։ Տան տերը մի քանի գյուղերի միակ արհեստավորն էր, շինում էր երկրագործական անոթներ, նորոգում էր վնասված գութաններ, արորներ, սայլակներ և այլն։ Նա ըստ մեծի մասին իր տանը չէր գտնվում, որովհետև ման էր գալիս գյուղից գյուղ և իր համար գործ էր պտռում։ Այս երեկո նույնպես տանը չէր։ Արհեստավորի կինը պատասխանեց գզիրին, թե մարդս տանը չէ, ինչպե՞ս կարող եմ ընդունել էֆենդուն։

— Մարդդ տանը չէ, տունը յուր տեղն է,— ասաց գզիրը կոշտ կերպով։

Այդ գզիր կոչվածներն էլ մի առանձին պատիժ են խեղճ գյուղացու համար։ Դրանք պաշտոնական անձինքների որսորդական շներն են, սաստիկ հոտառություն ունեն, և խիստ վարժված են, թե ինչ ճանապարհներով պետք էր հետամուտ լինել որսին...

Արհեստավորի կինը շվարած մնաց և խոսք չգտավ պատասխանելու գզրին։

Գզիրը իր հրամանը կատարած համարելով, հեռացավ, ավելացնելով.

— էֆենդին կգա, երբ ճրագները կվառվեն։

Խեղճ կինը մի քանի րոպե, որպես քարացած, կանգնել էր իր խրճիթի դռանը և չգիտեր, թե ինչ պետք էր անել։ Նրա տղամարդը տանը չէր, նրան անվայել էր մի օտար և անծանոթ հյուր ընդունել իր մոտ։ Նա մտավ իր դրացի Օհոյի խրճիթը և խնդրեց նրան ասելով.

— Եղբայր Օհո, գզիրը լուր տվեց, թե էֆենդին այս գիշեր մեզ մոտ պիտի լինի, մարդս տանը չէ, ի սեր աստուծո, եկեք և կառավարեցեք նրան։

— Այս ի՞նչ բան է,— պատասխանեց Օհոն բարկանալով,— այս գյուղում էլ ուրիշ տուն չկա՞ր։

— Չե՞մ իմանում,— ասաց կինը վշտացած ձայնով,— գզիրը այսպես պատվիրեց։

Դրացի Օհոն խոստացավ, որ ինքը կընդունե հյուրին և կնոջը մենակ չի թողնի։

Թոմաս էֆենդին այնքան ծանոթ էր այս գավառի հետ, որ ամեն մի գյուղ մտնելիս, շատ լավ ընտրություն անել գիտեր իջևանների մեջ, թե որ տունը ավելի հարմար էր գիշերելու համար։ Նրա ճաշակը այդ մասին բավական զարգացած էր։ Գլխավորը պայմանները, որ համապատասխանում էին նրա պահանջներին, դրանք էին որ տան տերը աղքատ և փոքր-ինչ հիմար լիներ, և եթե հիմար չէր, պետք է գոնե խմելու հետ սեր ունենար (երկու հատկություններ, որ շատ չեն զանազանվում միմյանցից) և ամենագլխավորն այն էր, որ պետք է տան մեջ գտնվեր մի գեղեցիկ կանացի դեմք, որի վրա նայելը զվարճություն պատճառեր նրան։

Բայց այս գիշեր ընտրած իջևանը մասամբ չէր համապատասխանում էֆենդու պահանջներին, տան տղամարդը, վարպետ Պետրոսը, մի համեստ և աշխատասեր արհեստավոր էր, ո՛չ հիմար էր և ո՛չ խմելու հետ սեր ուներ։ Այսուամենայնիվ,

էֆենդին չէր սխալված իր ընտրության մեջ, որովհետև տղամարդը տանը չէ, կինը վատ չէր դեմքով, իսկ նրա հասած քույրը իր գեղեցկությունով գյուղի մեջ առաջին աղջիկն էր համարվում։

Գյուղի խրճիթների մեջ ճրագներ վառվեցան։ Արհեստավորի կինը, Սուսանը, թոնիրի վրա կերակուր էր պատրաստում։ Արհեստավորի քույրը, մանկահասակ Վառվառեն յուղի մեջ հավեր էր տապակում։ Դրացի Օհոն զանազան կարգադրություններ էր անում, որ ոչինչ պակաս չլինի և ամեն բան վայելուչ լինի պատվելի հյուրին ընդունելու համար։ Բոլորը պատրաստ էր, երբ հայտնվեցավ էֆենդին գզիրի առաջնորդությամբ։ Զափթիաները այս գիշեր նա իր հետ չէր վեր առել, նրանց մի ուրիշ տեղ հյուր էր տվել։

Դրացի Օհոն ընդունեց էֆենդուն ամենայն խոնարհությամբ և նա ծանր կերպով գնաց, նստեց իր համար պատրաստած օթոցի վրա։

— Ո՞ւր է վարպետ Պետրոսը, չէ երևում,— հարցրեց էֆենդին իր շուրջը նայելով,— ես նրան տեսնել էի ուզում. ես նրա հետ շատ հարկավոր գործ ունեի։

Դրացի Օհոն պատասխանեց, թե վարպետը գնացել է մերձակա գյուղը բանելու համար։

— Ափսո՜ս, շատ ափսո՜ս, որ տեսնել չկարողացա. ես նրա հետ հարկավոր գործ ունեի,— կրկնեց էֆենդին և սկսեց բացատրել, թե թագավորական զորքերին պաշար տեղափոխելու համար իրան պետք են շատ սայլեր, և ցանկանում է վարձել մի մշտական հյուսն, որ ճանապարհների վրա սայլերը վնասվելիս, նորոգեր նրանց, և վարպետ Պետրոսից ավելի հարմար մարդ չէ գտնում և կամենում է նրան «մի լավություն» անել, որ նա շահվեր այդ գործից, և մի քանի ամիսների համար շաբունակ պարապմունք ունենար։

Թեև էֆենդին առաջուց գիտեր, որ վարպետը տանը չէ, թեև նրան ամենևին վարպետը հարկավոր չէր, որովհետև զորքերի պաշար տեղափոխելու համար նա գյուղացիների սայլերը և անասուններն էր գործ ածում, բոլորովին ձրի, առանց մի փարա վճարելու, և եթե մի սայլ վնասվում էր, իրանք՝ տերերն էին շինել տալիս, բայց էֆենդին այս խոսքերը ասելու մեջ մի առանձին նպատակ ուներ։ Աղքատ արհեստավորի կինը, Սուսանը, լավ լսելով էֆենդու խոստմունքները, ուրախացավ, մտածեց թե այդ հյուրից մեծ շահեր կարող են ստանալ, թեև նրա ինքնակոչ հյուր լինելը սկզբում այնքան ծանր և անախորժ երևեցավ իրեն։ Պետք էր մի հույսով քաղցրացնել միամիտ տանտիկնոջ սիրտը, այդ էր հարկավոր էֆենդուն։

Էֆենդին միայն նստած էր։ Դրացի Օհոն դեռ ոտքի վրա սպասում էր, որ նրանից թույլտվություն ստանա, որ ինքն էլ նստեր։ Այդ շնորհը ստացավ նա։ Գզիրը ոտքի վրա մնաց, սպասավորություն էր անում, որովհետև արհեստավորի տանը ոչ ծառա կար և ոչ շափահաս տղա. նա մի քանի աշակերտներ ուներ, որոնց իր հետ էր տարել։ Տանտիկինը և արհեստավորի քույրը չէին երևում, նրանք առանձնացել էին խրճիթի մի կողմում, որ բաժանված էր հյուրի նստած տեղից ցած տախտակապատով, որի վերին մասը չէր հասնում առաստաղին և ծառայում էր որպես շիրմա։

Բայց նրանք պետք է իրանց հարգանքը հայտնեին պատվելի հյուրին, այս պատճառով երկուսն էլ, թե՛ Սուսանը և թե՛ Վառվառեն դուրս եկան իրանց թաքստի տեղից, դիմեցին էֆենդուն, և ձեռքերը սրտերի վրա դնելով, հեռվից լուռ գլուխ տվեցին։ Այդ նշան էր թե՝ «բարով եք եկել»։

— Շատ ապրիք,— ասաց էֆենդին, մի կողմնակի հայացք ձգելով նրանց վրա։

Տանտիկնոջ երեսը ծածկված էր քողով, իսկ մանկահասակ աղջկանը բաց էր։ Նրանք կրկին հեռացան և սկսեցին ընթրիքի սեղանը պատրաստել։

Փոքրիկ խրճիթի մեջ տիրում էր խորին լռություն, ոչ ոք չէր խոսում, բոլորը սպասում էին, որ էֆենդին խոսեր։

— Դու այժմ ինչո՞վ ես պարապվում,— հարցրեց նա դրացի Օհոյից։

— Անգործ եմ, աղա,— պատասխանեց Օհոն ծոծրակը քորելով,— աստված ինձ պատժեց, մի տարվա մեջ մի քանի անբախտություններ պատահեցան. մեծ որդիս «քո չարը տարավ»... անասուններս «քեզ մատաղ դարձան»... հիմա արորս էլ չէ բանում... մնացել եմ անգործ։

— Ափսո՜ս, շատ ափսո՜ս,— ասաց էֆենդին ցավակցելով,— դու լավ մարդ ես, Օհո, ես քեզ ճանաչում եմ, ես չեմ թողնի,

որ դու անդործ մնաս, քեզ գործ կտամ, ինձ համար շատ մարդիկ են հարկավոր։

Օհոյի ուրախությանը չափ չկար։

— Դուք միայն գործ հանձնեցեք, աղա, այն ժամանակ կտեսնեք, թե Օհոն որպես լավ ծառայել գիտե։

— «Էշը որքան լավ բանե, այնքան իր գարին կավելացնե»...

— Իհարկե, այդպես է։

Էֆենդին այն կարգի մարդերիցն էր, որ պատահած տեղը այն աստիճան կհպարտանար, կփքվեր և կբարձրացներ իրան, որ «դարվազի դռնովը չէր կարող ներս մտնել», իսկ երբեմն այնքան կփոքրանար, որ ասեղի ծակով անց կկենար։ Գյուղացու խրճիթում, երբեմն նա շատ մտերիմ էր լինում, և վարվում էր այնքան ընտանեբար, որպես մարդիկ վարվում են մի հայտնի տներում, որոնց թշվառ բնակիչներին փողոցում պատահելիս ամաչում են գլուխ տալ...

Պետք էր մի խոստմունքով կաշառել դրացի Օհոյին, նա այստեղ այս գիշեր տանտիրոջ պաշտոն էր կատարում։ Եվ միամիտ գյուղացին բոլորովին հավատալով նրան, հայտնեց իր խորին շնորհակալությունը, ասելով.

— Աստված քեզ երկար կյանք տա, աղա, աստված ձեր ձեռքը մեր գլխից անպակաս անե։

Ընթրիքի ժամանակ էր։ Հայտնվեցավ Վառվառեն, լվացվելու պարագայքը ձեռքին բռնած, և շնորհալի կերպով դրեց Էֆենդու առջև, նա սկսեց լվանալ իր ձեռքերը։ Հետո տարածեց նա սեղանի սփռոցը, հաց դրեց, և կերակուրները, որքան որ պատրաստված էին, բոլորը միանգամից շարեց սեղանի վրա, իրանց պատշաճավոր տեղերում։ Այդ բոլոր սպասավորությունների ժամանակ երևում էր անմեղ աղջկա անհամարձակությունը, խառն երկչոտության և ամոթխածության հետ, որ զարգացել էին նրա մեջ փակված կյանքից և օտար տղամարդերի հասարակության հետ հաղորդակցություն չունենալուց։

— Ջավակս,— հարցրեց Էֆենդին մանկահասակ աղջկանից,— քո անունը ի՞նչ է։

Նա կարմրեց, շփոթվեցավ և սկսեց այս կողմը և այն կողմը նայել, որ մեկը իր փոխարեն պատասխանե։ Դրացի Օհոն ասաց, թե անունը Վառվառե է։

— Ի՞նչ գեղեցիկ անուն է, ճշմարիտ, շա՜տ գեղեցիկ անուն է,— կրկնեց Էֆենդին հիացմունքով,— ես էլ մի քույր ունեմ, այսպես է կոչվում։

Այժմ Վառվառեի սառն դեմքի վրա փայլեց ժպիտի նման մի բան, երևի նա ուրախացավ, որ ինքը մի այնպիսի մեծ մարդու քրոջ անունն էր կրում, թեև Էֆենդին ամենևին քույր չուներ, բայց պետք էր Վառվառեին ևս մի բանով ուրախացնել։

Սեղանի վրա ուտում էին Էֆենդին և Օհոն միայն։ Կնիկները այս կողմերում տղամարդերի հետ սեղանակից չեն լինում։

— «Անջուր ջրաղացը ալյուր չի աղա»,— նկատեց Էֆենդին։

Դրանով նա հասկացրեց, թե պետք էր մի բան խմել և հրամայեց գզիրին, որ գնա, արաղ բերե։ Դրացի Օհոն ներողություն խնդրեց, որ այդ մասին չեն մտածել, և տանտիկինը, որ չէր խոսում, մի կերպով հասկացրեց, թե ինքը շուտով բերել կտա արաղը։

— Չէ,— պատասխանեց Էֆենդին,— այդ իմ սովորությունն է, ամեն տան մեջ հաց ուտելիս արաղը և գինին պետք է իմ հաշվով լինեն։

Այդ իրավ էր, Էֆենդին այս տեսակ աղքատ տներում գզիրի ձեռքով ինքն էր բերել տալիս խմիչքները, միայն հաշիվը անցնում էր գյուղի ընդհանուր ծախսերի մեջ։ Բայց նրա սատանայական խորամանկությունը այդ բանի մեջ այն էր, որ խմիչքները ինքը բերել տալով, կարող էր գործ ածել այնքան, որքան իր ցանկությունն էր։

Շուտով գզիրը վերադարձավ, բերելով իր հետ մի ահագին ման արաղով։

— Հիմա կարող ես նստել,— հրամայեց նրան Էֆենդին,— և մեզ սագիություն (մատռվակություն) անել։

Գզիրը նստեց ամենից ցած և արաղի ահագին ամանը դրեց իր մոտ։ Նրան հայտնի էր Էֆենդու սովորական պատվերը, թե «երբ մի տուն մտնում ես, և ուզում ես, որ ուրախ անց կենա, պետք է առաջ տանտիրոջ բամբակը բաց անել». նշանակում է՝ պետք է նրա ուղեղը թմրեցնել, պետք է նրան հարբեցնել։ Այստեղ թեև տան տեր չկար, բայց դրացի Օհոն նրա տեղն էր բռնում։ Այս պատճառով գզիրը զոռ էր տալիս, հաճախ արաղի բաժակը դեպի Օհոն դարձնելով։

Դրացի Օհոն փոքր-ինչ սեր ուներ խմիչքի հետ։ Մանավանդ

նրան պատահած վերջին անբախտություններից հետո, երբ նրա մեծ որդին մեռավ, երբ նրա անասունները կոտորվեցան,— Օհոն իր վշտերը մոռանալու համար բոլորովին անձնատուր եղավ արաղի։ Նա ընդունած բաժակը մինչև վերջին կաթիլը ցամաքեցնում էր։ Մի կողմից արաղի ազդեցությունը, մյուս կողմից էֆենդու խոստմունքները, թե նրան գործ և պարապմունք կտա, այն աստիճան տաքացրին, այն աստիճան ուրախացրին Օհոյին, մինչև իրան մոռանալով, նա սկսեց երգել զանազան թուրքերեն երգեր։

— Դրանով բան չի դառնա,— ասաց էֆենդին, և հրամայեց գզիրին, որ գնա, «չալկիներին» կանչե։

«Չալկիները» մի խումբ տեղային հայ երաժիշտներ էին, որ երգում էին և ածում էին զանազան ասիական նվագարանների վրա։ Դրանք անբաժան հետևում էին էֆենդուն, ինչ գյուղ որ գնում էր, որովհետև գիտեին, որ էֆենդին գիշերները առանց «քեֆի» չի անցկացնի, նրան կզվարճացնեն և նրանից փողեր կստանան։

Շուտով հայտնվեցան «չալկիները», գլուխ տվեցին և շարվեցան սեղանի շուրջը։ Տանտիկինը այժմ ստիպված էր կերակուրների քանակությունը ավելացնել։

Էֆենդին բարեհաճեց հարցնել «չալկիների» առողջությունը։

— Ձեր շնորհիվ ամենքս էլ լավ ենք,— պատասխանեցին նրան։

Երբ կերան, խմեցին, կշտացան, Վառվառեն կրկին դուրս եկավ իր թաքստի տեղից և սկսեց սեղանը հավաքել։ Բայց արաղի մեծ ամանը անշարժ մնաց իր տեղում։ Նա արդեն մի քանի անգամ դատարկ գինետուն էր գնացել և լիքը ետ դարձել։ Բաժակները շարունակ պտտվում էին։ «Չալկիների» գլուխներն էլ տաքացան։

— Հիմա սկսեցեք,— հրամայեց էֆենդին։

Նրանք սկսեցին։ Փոքրիկ խրճիթը կենդանացավ ասիական երաժշտության խառնաշփոթ և աղմկալի հնչյուններով։

Էֆենդին գտնվում էր իր սրտի ամենաախորժ տրամադրության մեջ։

Քանի րոպեից հետո արհեստավոր Պետրոսի խրճիթի շուրջը և կտուրի վրա հավաքվեցան դրացի կնիկները, աղջիկները և սկսեցին երդիկներից ու լուսամուտներից նայել և զվարճանալ նվագակցության ձայներով։ Ոչինչ այնքան չէ ուրախացնում գյուղացի կնոջը, որպես երաժշտությունը, որին նա շատ կարոտ էր մնում, միայն ձմեռը հարսանիքների ժամանակ լսելու բախտ ունենալով։

Փոքր առ փոքր «մեջլիսը» տաքացավ և ավելի բաղադրյալ կերպարանք ստացավ։ Արաղի Նարբեցության և «չալկիների» նվագածության ձայների հետ տիրեց ընդհանուր խառնակություն։ Ինչպես ասում են՝ «Շունը էլ իր տիրոջը չէր ճանաչում»։ Ամեն մարդ գլուխը կորցրել էր։ Միայն էֆենդին զգաստ էր, միայն նա իրան պահել էր իմանում։ Այդ միջոցին դրսում հավաքված կնիկների և աղջիկների բազմությունը համարձակություն ստացավ, և կամաց կամաց ներս մտնելով, նրանք նստեցին Սուսանի և Վառվառեի մոտ, և սկսեցին այնտեղից լսել երաժիշտներին։

— Պա՜ր, պա՜ր,— բացականչեց էֆենդին ծափ տալով,— պա՜ր եմ ուզում։

Այդ միջոցին դրացի Օհոն, որ հազիվ կարողանում էր իրան ոտքի վրա պահել, վեր կացավ, և հանդիսականների միջից բռնելով երկու փոքրիկ աղջիկների ձեռքից, համարյա զոռով քարշ տվեց, բերեց կանգնեցրեց խրճիթի մեջտեղում։ Երաժիշտները ածեցին տեղային պարի մի եղանակ։ Փոքրիկ աղջիկները մի փոքր ամաչեցին, մի փոքր կարմրեցան, մի փոքր «չենք կարող» ասացին, վերջապես սկսեցին պարել։

— Շաբա՜շ, շաբա՜շ[1],— գոռում էին երաժիշտները, ավելի թունդ կերպով ածելով։

Եվ էֆենդին դնում էր մի-մի արծաթի դրամ պարողների ափի մեջ, նրանք տալիս էին երաժիշտներին։

Պարը, որպես սովորաբար լինում է, սկսվեցավ փոքրիկ աղջիկներից և հետզհետե հանդիսացան ավելի հասակավորները։ Առաջին զույգը հոգնելուց հետո իրանց ձեռքի թաշկինակները ձգեցին ուրիշ երկու աղջկա վրա. այդ նշան էր, որ այժմ նրանք պետք է պարեին։ Այսպես հերթը հետզհետե փոխվում էր, և ամեն անգամ մեջ էին մտնում մի զույգ պարողներ։ Էֆենդին առատությամբ լցնում էր նրանց բուռը արծաթի «շաբաշներով», և երաժիշտները եռանդով ածում էին։

---

[1] Շաբաշ նշանակում է այն արծաթը, որ ստանում են պարողները հանդիսականներից և հետո տալիս են երաժիշտներին։

Հերթը հասավ Վառվառեին։ Գեղեցիկ աղջիկը գերազանցեց բոլորին իր շնորհալի պարով. նրա ամեն մեկ շարժումների մեջ նշմարվում էր գրացիա և կախարդիչ հրապուրանք։

— Մեր երկրում,— խոսեց. էֆենդին— հայերի մեջ մի լավ սովորություն կա, երբ աղջիկը իր պարը վերջացնում է, մոտենում է տան պատվավոր հյուրին, շոքում է նրա առջև, և գլուխը դնում է նրա ծնկի վրա, և այնքան ժամանակ չէ բարձրացնում, մինչև նրանից մի լավ ընծա չէ ստանում[1]։

— Այդ շատ լավ սովորություն է,— ձայն տվեցին երաժիշտները,— պետք է այստեղ էլ մտցնել այդ սովորությունը։

— Վառվառե, դու պիտի լինես առաջին օրինակը,— ասաց նրան էֆենդին,— դե՛ մոտեցի՛ր, զավակս։

Վառվառեն ամոթխածությունից բոլորովին շփոթվեցավ և անշարժ մնաց իր տեղում։ Նա ավելի բարվոք էր համարում, որ գետինը պատռվե և իրան կուլ տա, քան թե գլուխը մի օտար մարդու գրկում դնե։ Բայց ամեն կողմից նրան բռթեցին, քաշքշեցին ասելով, աղջի, գնա՛, մի ամաչիր, քեզ բան կտա, և վերջապես նրան տարան էֆենդու մոտ և նա ստիպվեցավ իր գեղեցիկ գլուխը դնել էֆենդու ծնկների վրա։ Էֆենդին փայփայեց Վառվառեի սիրուն գիսակները և դրեց նրա ափի մեջ երկու ոսկի։

Մինչև էֆենդին այսպիսի քեֆերով էր զբաղված, ներս մտավ նրա զափթիաներից մեկը, մոտեցավ և ականջին ասաց. «Այն մարդին, որի համար պատվիրած էիք, գտանք»։— «Բռնեցեք և ամենայն զգուշությամբ պահեցե՛ք մինչև ես առավոտյան կարգադրություն կանեմ», հրամայեց էֆենդին անլսելի ձայնով։

Զափթիան հեռացավ։

Ի՞նչ մարդու համար էր այդ կարգադրությունը,— ոչ ոք չհասկացավ։

Արդեն գիշերից բավական անցել էր։ Արհեստավոր Պետրոսի խրճիթը փոքր առ փոքր դատարկվեցավ։ Երաժիշտները հեռացան։ Դրացի Օհոյին արբեցությունից բոլորովին անզգա իր տունը տարան։ Բազմությունը ցրվեցավ։

Արհեստավորի խրճիթի մեջ մնաց միայն պատվելի հյուրը գզիրի հետ, որը այնքան խմել էր, որ ունեցած մի հատիկ աչքն էլ ոչինչ չէր տեսնում։ Սուսանը անկողին պատրաստեց էֆենդու համար, ճրագները հանգցրին և բոլորը հանգստացան։

Այն գիշեր ի՞նչ էր պատահել,— ասված գիտե։ Բայց առավոտյան Վառվառեն շատ տխուր էր, և արտասուքը խեղճ աղջկա աչքերից մի քանի օր չէր ցամաքում...

Նույն գիշերվա առավոտյան պահուն, դեռ լույսը չբացված, այս գյուղի մեջ կատարվեցավ մի ուրիշ ցավալի անցք. մի երիտասարդի շղթաներով կապած, տարան զինվորական գործակատարի մոտ, որ նոր էր եկել այս կողմերում պատերազմական կարգադրությունների համար։

Գյուղացիներից ոչ ոք չտեսավ նրան,— միայն Թոմաս էֆենդին խավարի միջից, նրա՛ ետևից նայելով,— մի առանձին դիվական հրճվանքով ասում իր իր մտքում. «Գնա՛ այսուհետև, որքան կարող ես, փչի՛ր քո դուդուկը»...

Այդ երիտասարդը պարոն Դուդուկչյանն էր, կամ մեր այժմյան պարոն Սալմանը։

ԻԶ

Ծերունի Խաչոյի տան մեջ ամենևին չգիտեին թե ինչ էր պատահել պարոն Սալմանի հետ, միայն շատ անհանգիստ էին, որ նա գիշերը չվերադարձավ։ Մանավանդ Վարդանը, Հայրապետը և Ասպոն խիստ տխուր էին, որովհետև զգում էին, որ անպատճառ մի չար դեպք պետք է պատահած լինի։ Առավոտյան նրանք երեքը միասին դուրս գնացին, գուցե մի բան կլսեին նրա մասին։

Կեսօրին անակնկալ կերպով հայտնվեցավ Թոմաս էֆենդին։ Նրա այս տեսակ գալուստը, մենակ առանց ծառայի, առանց զափթիաների խիստ օտարոտի թվեցավ ծերունուն։ Նա միշտ ման էր գալիս իր առանձին սվիտայով։ Նա բռնեց ծերունու ձեռքից, մի կողմը տարավ, որպես թե մի գաղտնի խոսելիք ունի նրա հետ։

—Գիտե՞ս,— ասաց նա կիսածաղրական և կիսալուրջ եղանակով.— այն «դուդուկ փչողին» կալանավորեցին, տարան «ի գոգն Աբրահամու»։

Ծերունին հասկացավ, թե ում մասին էր խոսքը, սոսկաց,

[1] Հայաստանում ոչ մի տեղ չկա այսպիսի սովորություն. միայն ասիական բոշաների տղաները և կնիկները պարելու ժամանակ գործ են ածում այս տեսակ հրապուրիչ ձևեր հանդիսականներից փող ստանալու համար։

բոլոր մարմնով դողդողաց և փոքր էր մնում, որ պիտի գլորվեր գետնի վրա։

— Սիրտդ պինդ պահիր, դողալու ժամանակ չէ,— շարունակեց էֆենդին,— դեռևս շատ բան պետք է լսես։

Նա պատմեց, թե ինքը տեղեկացավ, որ անցյալ գիշեր պարոն Սալմանը գնացել էր մի գյուղ, այնտեղ մի տան մեջ հավաքել էր իր շուրջը մի քանի երիտասարդ մշակներ, խոսում էր նրանց հետ «մարդկային անհատական իրավունքների մասին, խոսում էր մշակ մարդու աշխատանքի մասին, թե խոսում էր «բռնակալության» դեմ, խոսում էր ինչ եղանակով մարդիկ ձեռք են բերում ավելի ազատ և ավելի բախտավոր կյանք»,— ո՞վ է իմանում, զանազան այս տեսակ «խենթությունների» վրա էր խոսում։ Հանկարծ վրա են հասնում մի քանի ոստիկաններ և կալանավորում են։ Կառավարությունը վաղուց որոնում էր այդ «խենթին», որովհետև նրա մի քանի ընկերները զանազան տեղերում կալանավորված էին։ Այժմ այդ մուկիկն էլ ընկավ որոգայթի մեջ։— Թոմաս էֆենդին ամեն ինչ պատմեց, բայց չհայտնեց, թե ինքն էր մատնել պարոն Սալմանին։

Նա կրկին դարձավ դեպի ծերունին։

— Այժմ նոր առակ լուսարուք,— ասաց խիստ դառն ժպիտով, կարծես, աշխատում էր ավելի խոր խոցել ողորմելի ծերունու սիրտը։— Շուտով զափթիաները կգան քո տան մեջ խուզարկություն անելու, ես, որպես բարեկամ, եկա քեզ նախապես զգուշացնելու համար։

Նա մի առանձին կերպով շեշտեց բարեկամ բառը։ Այսուամենայնիվ, զափթիաների և խուզարկության անունը լսելով, ծերունին բոլորովին զարհուրեցավ։

— Դեռևս սղատվելու ժամանակ կա,— շարունակեց էֆենդին ավելի սառն կերպով.— դու ինձ միայն այն ասա՛, նրանից խո մի բան չի՞ մնացել քո տան մեջ։

Որքան սարսափելի լիներ հաղորդած լուրը, ծերունին դարձյալ փոքր-ինչ հանգստացավ, երբ նկատեց, որ էֆենդու նման «բարեկամը» մի այսպիսի վտանգավոր բոպեում օգնության ձեռք էր մեկնում իրան։

— Մի խուրջին է մնացել,— պատասխանեց նա, երկչոտությամբ իր շուրջը նայելով, միգուցե մի ուրիշը լսե նրա ձայնը։

— Հիմա եկ, այդ էշը ցեխից դուրս հան...— խոսեց էֆենդին ինքն իրան։— Մի խուրջին է մնացե՞լ... դա քիչ բան չէ...

Նա դարձավ դեպի ծերունին, իր սատանայական շիլ աչքերը լայն բացելով։

— Մի բոպեն անգամ թանկ է մեզ համար, շտապիր, գնանք, թաքցնենք այդ խուրջինը, քանի որ դեռ չեն հայտնվել զափթիաները։

Ծերունին բոլորովին հավատալով էֆենդու անկեղծությանը, տարավ նրան օդան, և ցույց տվեց պարոն Սալմանի այնտեղ պահված ճանապարհորդական խուրջինը։

— Դռները կողպեցեք,— պատվիրեց էֆենդին, և ինքը բաց անելով խուրջինը, սկսեց քրքրել նրա մեջ եղած իրեղենները։

Նրա մեջ կային զանազան հանձնարարական նամակներ այլև այլ հասցեներով, կային զանազան մարդկանց անունով փոխանագրեր, որոնցմով պարոն Սալմանը կարող էր հարկավորված ժամանակ փող ստանալ, կային զանազան հրահանգներ, ծրագրեր և այլն, կային մի քանի տետրակներ, որ երիտասարդ պրոպագանդիստը բաժանում էր գյուղացիներին,— մի խոսքով, բացի թղթերից ուրիշ ոչինչ չկար։ էֆենդին խորին ուշադրությամբ քննում էր բոլորը և խորհրդավոր կերպով շարժում էր իր գլուխը։

— Եթե իշխանության ձեռքը ընկնելու լինեն,— ասաց նա,— այդ թղթերից մեկը բավական է, որ քեզ, տանուտեր խաչո, քո որդիների հետ կախաղան բարձրացնեն, իսկ քո բոլոր հարստությունը հարքունիս գրավեն։

Ծերունին քարացած մնաց և ոչինչ պատասխանել չկարողացավ։ Վերջին խոսքերը ձգեցին նրան մի տեսակ մտավոր անզգայության մեջ։

— Այդ բոլորը պետք է այրել,— ասաց էֆենդին և կրկին թղթերը լցրեց խուրջինի մեջ։

— Ես ոչինչ չեմ հասկանում, իմ գլխում խելք չէ մնացել,— պատասխանեց ծերունին դողդոջուն ձայնով, և նրա շիլած աչքերը լցվեցան արտասուքով։

Հանկարծ միտքը փոխեց էֆենդին. «Ինչո՞ւ այրել, մտածում էր նա. պետք է լավ քննել այդ թղթերը. դրանք ինձ պետք կգան... ինչո՞ւ ոչնչացնել»։

Նա հարցրեց ծերունուց.

— Այս տան մեջ կա՞ մի այնպիսի գաղտնի տեղ, ուր կարելի լիներ առ ժամանակ թաքցնել այդ խուրջինը։

— Կա,— պատասխանեց Ծերունին։

Նրա տան մեջ կային մի քանի գաղտնի պահարաններ, որոնց մեջ վտանգի ժամանակ թաքցնում էին տան թանկագին իրեղենները։ Որովհետև վտանգը այս երկրում միշտ անպակաս էր, այս պատճառով պահարաններից մի քանիսը լիքն էին, և մեկը միայն մնացել էր դատարկ, որ կարելի էր ցույց տալ էֆենդուն։

Նրանք վեր առեցին չարագուշակ խուրջինը և դիմեցին ներքնատուն, որ ծառայում էր ձեթ, յուղ, գինի և ուրիշ այսպիսի մթերքներ պահելու համար։ Ներքնատան հատակը պատած էր սալերով։ Ծերունին մոտեցավ և բարձրացրեց այդ սալերից երկուսը. նրանց տակում հայտնվեցավ երկաթի փոքրիկ դուռ, որ հորիզոնական դիրքով փակում էր գաղտնի պահարանի մուտքը։ Ծերունին հանեց իր գրպանից մի բանալի, դրեց իր պատշաճավոր տեղում, մի քանի անգամ պտտցրուց, և երկաթի դուռը ինքն իրան բարձրացավ։ Այժմ նրանց առջև բաց էր ստորերկրյա վիրապի բերանը։ Նեղ սանդուղքներով նրանք իջան ցած։

Վիրապի մթին դատարկության մեջ ոչինչ չէր կարելի տեսնել։ Խոնավ օդը խեղդելու չափ ծանր էր։ Խուրջինը դնելով այնտեղ, նրանք շուտով դուրս եկան։ Ծերունին կրկին կողպեց երկաթի դուռը, կրկին սալերը դրեց իրանց առաջվա տեղում, և այժմ դժվար էր նկատել, որ նրանց տակում կար մի ստորերկրյա պահարան։

— Տուր ինձ բանալին,— ասաց էֆենդին,— ես կպահեմ։ Այժմ դու ինձնից ավելի հավատարիմ մարդ չունես։

Ծերունին առանց երկար մտածելու բանալին տվեց նրան։ Երկյուղը այն աստիճան պաշարել էր նրան, որ ամեն առաջարկություն էֆենդու կողմից պատրաստ էր ընդունելու։

— Ես շատ բաներ ունեմ քեզ հետ խոսելու, տանուտեր Խաչո, բայց ժամանակը կարճ է, գուցե շուտով կհայտնվեն խուզարկուները,— ասաց նա շտապելով։— Առայժմ մի քանի խրատներ կտամ քեզ, լսիր, ոչ ոք չպիտի դիտենա, որ ես քեզ հետ տեսնվել եմ, մեր բոլոր կարգադրությունները պետք է գաղտնի մնան մինչև անգամ քո որդիներից և քո բոլոր տանեցիներից։ Երբ կհայտնվեն խուզարկուները, դու աշխատիր, որքան

կարելի է, աներկյուղ, անվրդով և միամիտ ձևանալ։ Թող որտեղ ուզում են պտտեն, ման գան, վտանգավոր բանը մենք արդեն թաքցրինք, ինքը սատանան էլ չի կարող գտնել։ Մի ուրացիր, թե այն «դուդուկ փչողը» քո տանը եղել է, միայն ասա՛, որ դու նրան չես ճանաչում, և նրա ինչ նպատակով այս կողմերում թափառելը ոչ քեզ և ոչ քո որդիներին հայտնի չէ։

Վերջացնելով իր պատվերները, էֆենդին դուրս եկավ ներքնատնից։

— Հիմա ցույց տվեցեք ինձ մի ուրիշ ճանապարհ, որ ես հեռանամ,— ասաց նա իր շուրջը նայելով։— Ես պետք է աշխատեմ, որ ինձ չտեսնեն այստեղից դուրս գալու ժամանակ։

Ծերունին տարավ նրան դեպի տան ետևի դուռը, որ ծառայում էր անասունների երթևեկության համար։

— Այժմ մնացեք բարյավ, ես կրկին կվերադառնամ, երբ խուզարկուները եկած և իրանց գործողությունները վերջացրած կլինեն։ Ես նրանց մի կերպով կհանգստացնեմ, միամիտ կա՛ց։

Էֆենդին հեռացավ։ Ճանապարհին նա մի քանի անգամ կրկնեց իր մտքում այդ խոսքերը. «Հիմա հոգիդ իմ ձեռքումս է, տանուտեր Խաչո, ինչ որ ուզեմ կանեմ»...

Կեսօրից մի ժամ անցել էր։ Վարդանը, Հայրապետը և Ապոն տակավին չէին վերադարձել։ Ծերունու մյուս որդիները դաշտումը գործում էին։ Կնիկները զբաղված էին իրանց տնտեսությունով, որովհետև դաշտում աշխատողների համար պետք էր ճաշ ուղարկել։ Գյուղացիները ըստ մեծի մասի ճաշը ուտում են դրսում և գիշերը ընթրիքի ժամանակ միայն գալիս են տուն։ Դեռ ոչ ոք չգիտեր, թե ինչ էր պատահել։

Ծերունի Խաչոն անհամբերությամբ սպասում էր խուզարկուներին, որպես մի դատապարտյալ սպասում է մահվան պատժին, որովհետև գիտե, որ ազատվելու ոչ մի հնար չունի։ Նա տանեցիներին եղելության իսկությունը չհայտնեց, չկամենալով նախապես վախեցնել նրանց։

Վերջապես հայտնվեցավ մի հիսնապետ, մի խումբ զափթիաների, կավազների և զինվորների հետ։

Տանեցիները որովհետև տեղեկություն չունեին, թե ինչ էր պատահել, այս պատճառով զինվորների գալուստը սկզբում նրանց շատ չվախեցրեց։ Նրանք սովորել էին շատ անգամ ընդունել այսպիսի հյուրեր, որ գալիս էին, օրերով մնում էին,

ուտում էին, խմում էին և հետո գնում։ Թուրք զինվորների իջևանելը հայ գյուղացիների տներում, մանավանդ տանուտերի օդայի մեջ, մի սովորական բան էր։

— Ինձ հրամայված է այս տան մեջ խուզարկություններ անել,— ասաց հիսնապետը դառնալով ծերունի Խաչոյին։

— Իմ տունը ձեր առջևն է, որտեղ կամենում եք, նայեցեք,— պատասխանեց ծերունին, աշխատելով պահպանել իր սրտի խաղաղությունը։

Հիսնապետը տան դռները փակել տվել, ամեն կողմ պահապաններ կանգնեցրուց և սկսեց խուզարկությունը։ Նախ մտավ նա օդան, հետո մյուս սենյակները, ամեն ծակուծուկ նայեց, ամեն իրեղենները աչքից անցկացրեց և ոչ մի կասկածավոր առարկա չգտավ։ Կնիկները այս տեսնելով, հասկացան, որ մի անսովոր բան պատահած պետք է լինի, սկսեցին լաց լինել, և աղաղակ բարձրացնել։ Ծերունին նրանց սաստեց, որ լռեն, հանգստացնելով, որ վախենալու ոչինչ առիթ չունեն։

Խուզարկությունը վերջացնելուց հետո հիսնապետը սկսեց իր հարցուփորձը։

— Այս տանը բնակվում էր մի երիտասարդ Միքայել Դուդուկչյան անունով։

— Նա մի քանի գիշեր միայն մնաց այստեղ,— պատասխանեց ծերունին։

— Դուք առաջուց ճանաչո՞ւմ էիք նրան։

— Առաջին անգամն էր, որ տեսա նրան։

— Ուրեմն ինչո՞ւ ընդունեցիք ձեր տնում։

— Ես այս գյուղի տանուտերն եմ։ Ձեզ հայտնի է մեր երկրի սովորությունը, տանուտերի տունը մի տեսակ քարվանսարա է, մի տեսակ հյուրանոց է, ուր ամեն մի օտարական, ամեն մի անծանոթ մարդ օթևան է գտնում։ Ի՞նչ կարող եմ գիտենալ, թե ո՞վ է գալիս կամ ո՞վ է գնում։

— Նա չթողե՞ց այստեղ մի բան։

— Ոչինչ չթողեց։

— Դուք չհասկացաք, թե ի՞նչ դիտավորությամբ էր շրջում նա այս կողմերում։

— Նա մեզ ոչինչ չհայտնեց։ Այսքանը գիտեմ, որ նա վարժապետ էր։

— Դուք չգիտե՞ք, թե ում հետ էր տեսնվում, կամ ում հետ էր խորհրդակցում։

— Վարժապետը ամեն մարդու հետ տեսնվում էր աշակերտներ գտնելու համար։

— Այժմ գիտեք, նա որտե՞ղ է։

— Չգիտեմ։

— Կալանավորված է։

— Ավելի լավ, եթե վատ մարդ էր։

Այդ միջոցին զարկեցին տան դռան մուրճը։

— Ոչ ոքի ներս չթողնել,— հրամայեց հիսնապետը։

Ծառան հայտնեց, թե Թոմաս էֆենդին է։

— Նա կարող է գալ։

Ներս մտավ էֆենդին, և տեսնելով հիսնապետին իր խումբի հետ, իրան բոլորովին զարմացած ձևացրեց, որպես թե ինքը ամենևին տեղեկություն չունի, թե նրանք ինչու համար են մտել ծերունու տունը։

— Բարի լինի, ի՞նչ կա,— հարցրեց նա խորհրդավոր ձայնով։

Հիսնապետը հայտնեց նրան իր պաշտոնի նպատակը։ Էֆենդու կոշտ դեմքի վրա անցավ մի կեղծ ժպիտ, և նա բռնելով հիսնապետի ձեռքից, ասաց.

— Գլխովս երաշխավոր կլինեմ, եթե տանուտեր Խաչոյի մոտ մի կասկածավոր բան գտնվելու լինի։ Դուք չեք ճանաչում, թե նա որքա՞ն բարի և լավ մարդ է։

Նա տարավ հիսնապետին օդան, բայց զափթիաները, կավազները և զինվորները մնացին դրսում, դեռ պահպանում էին տան մուտքերը։

— Տանուտեր,— դարձավ դեպի ծերունին,— այդ մարդիկը քաղցած կլինեն, հրամայեցեք, որ ճաշի պատրաստություն տեսնեն։ Արաղը պետք է առատ լինի, հասկանո՞ւմ ես։

Վերջին խոսքը նա ասաց հայերեն լեզվով։ Տանուտերը ուրախացած դուրս եկավ օդայից։ Նա արդեն վտանգը անցած էր համարում։

Բայց ո՛չ, վտանգը տակավին անցած չէր, թուրքերը այնպես հեշտությամբ ծերունու օձիքը ձեռքից բաց չէին թողնելու. պետք է նրան շարշարեին, պետք է նրան տանջեին, պետք է

ամիսներով բանտերում մաշեին նրան։ Թեև ծերունու տնում չգտնվեցավ որևիցե կասկածավոր առարկա, որով կարելի լիներ նրան մեղադրել, թեև նրան հանցավոր համարելու հաստատ փաստ չկար,— բայց այդ էլ բավական էր, որ ծերունի Խաչոն հայ էր, և բացի հայ լինելը՝ հարուստ էր... Մի այսպիսի պարարտ որսը թուրք պաշտոնատարի համար խիստ հրապուրիչ բան է։

Թոմաս էֆենդին ինքն էր «եփել այդ ապուրը», նա էր մատնել պարոն Սալմանին նոր եկած զինվորական գործակատարի մոտ։ Նա՛ էր թելադրել ծերունու տան մեջ խուզարկություններ անել, և այդ պատճառով նրան հեշտ էր իր լարած որոգայթից ազատել խեղճ ծերունուն։ Բայց ո՛չ, իր սատանայական նպատակին հասնելու համար էֆենդին դեռևս աշխատում էր գործին ավելի բաղադրյալ ձև տալ։

Երբ ծերունին օդայից դուրս գնաց ճաշ պատվիրելու, հիսնապետը հարցրեց Թոմասից.

— էֆենդի, դուք ի՞նչ եք մտածում, ես կարծում եմ, այդ մարդը անմեղ պետք է լինի։

— Ձեզ հայտնի է, բեկ,— պատասխանեց խորամանկը,— որ Թոմաս էֆենդին այսպես հեշտ վճիռ տվող մարդերից չէ։ Ինձ համար տակավին մթության մեջ է գործը։ Ես հավատացած էի, որ այս տան մեջ կգտնվի որևիցե կասկածավոր առարկա, կամ որևիցե պատրաստություն, որոնցմով կարելի կլիներ բացատրել, թե մինչև ո՞ր աստիճան այդ մարդիկը դավակից են կալանավորի (պարոն Սալմանի) մտքերին, բայց զարմանում եմ, որ մեղադրանքի համար տակավին մի հաստատուն փաստ չհայտնվեցավ։ Այսուամենայնիվ, մենք հայերս մի ծածուկ բան ունենք, որին կոչում ենք «խոստովանություն», ես այդ մարդերին պետք է երկար խոստովանեցնեմ... Ես ավելի կասկած ունեմ ծերունու երկու որդիների և մի օտարականի վրա, որ նույնպես հյուր է այս տան մեջ։

— Ի՞նչ օտարական,— հարցրեց հիսնապետը։

— Մի ռուսաստանցի երիտասարդ, որ չափազանց վտանգավոր անձնավորություն է և սաստիկ ոխերիմ թշնամի մեր կառավարությանը։ Նա այս կողմերում թափառում է վաճառականի պատրվակով, բայց իսկապես ռուսաց լրտես է։

— Նրան կալանավորել մի փոքր դժվար է, եթե ռուսաց հպատակ է,— պատասխանեց հիսնապետը։

— Պատերազմի ժամանակ լրտեսներին միշտ կարելի է կալանավորել։ Ձեզ հայտնի է, որ պատերազմը շուտով հրատարակվելու է։

— Ես այդ գիտեմ...

— Այդ երիտասարդի մասին ես արդեն խոսացել եմ նորին գերազանցության զինվորական գործակատար՝ փաշա էֆենդու հետ, մի՞թե նա ձեզ ոչինչ չէ պատվիրել։

— Փաշա էֆենդին այսքանը միայն պատվիրեց, որ ես կատարեմ ձեր բոլոր կարգադրությունները։

— Շատ գեղեցիկ,— խոսեց էֆենդին ուրախ ժպիտով.— ես կկարգադրեմ ինչ որ պետք է։ Բայց մի բան էլ կա, ձեզ հետո կասեմ։

— Ես շատ անհամբեր եմ,— պատասխանեց թուրք աստիճանավորը,— ես «հետիններին» ազատել չեմ կարող։

— Ուրեմն ձեր ականջին կասեմ։

Հիսնապետը մոտեցրեց էֆենդուն իր ականջը, թեև օդայի մեջ բացի այդ երկուսից մի ուրիշ մարդ չկար, որ նրանց խոսակցությունը լսեր։ էֆենդին ասաց. «Մերուկը բավական հարուստ է, պետք է նրան կթել»...

Թոմաս էֆենդին բավական ծանոթ լինելով թուրք պաշտոնատարների թուլություններին, նա շատ լավ էր իմանում, որ այդ կաշառակեր գազաններին այնքան չէ հետաքրքրում գործի էությունը, կամ նրա բոլոր մանրամասնությունների ճիշտ քննությունը,— որքան գրավում է նրան այն միտքը, թե ի՞նչ ձև և ի՞նչ ընթացք պետք էր տալ գործին, որ կարելի լիներ մեղադրվածից ավելի փող դուրս բերել։ Թոմաս էֆենդին աշխատում էր օգուտ քաղել թուրքերի այդ թուլությունից և իր հորինած մեքենան իր նպատակին համեմատ պտույտ տալ։ Այս պատճառով նա շատ ուրախացավ, երբ նկատեց, որ հիսնապետը գրավվելով իր վերջին խոսքերից, հարցրեց.

— Ուրեմն ինչպե՞ս եք կամենում, որ կարգադրենք գործը։

— Դուք ձեզ հետ բավական մարդիկ ունեք, պարոն հիսնապետ, կհրամայեք հսկողության տակ առնել ծերունուն իր երկու որդիների հետ, որոնցից մեկը կոչվում է Հայրապետ, իսկ

մյուսը Ապու Բացի դրանցից, կհրամայեք կալանավորել ռուսաստանցի լրտեսին, որ կոչվում է Վարդան։

Հիսնապետը նշանակեց Ապոյի, Հայրապետի և Վարդանի անունները։

— Ձեր այսօր կատարած պաշտոնը,— շարունակեց էֆենդին,— լոկ խուզարկություն էր, բայց քննությունը տակավին վերջացած չէ։ Ուրեմն դուք պետք է հիշյալ անձինքներին հրկողության տակ առնեք, մինչև քննությունը կկատարվի նորին գերազանցություն փաշա էֆենդու մոտ։

— Հասկանում եմ,— պատասխանեց հիսնապետը։

— Իսկ ես պետք է միջնորդի դեր կատարեմ, ինձ ձևացնելով ավելի պաշտպան մեղադրվածներին՝ նրանցից գաղտնիքներ որսալու համար։ Հասկանո՞ւմ եք։

— Հասկանում եմ...— կրկնեց հիսնապետը։

Իէ

Մինչ օդայի մեջ Թոմաս էֆենդին և հիսնապետը զբաղված էին իրանց սատանայական կարգադրություններով, դրսում զինվորների մեջ անց էր կենում բոլորովին այլ տեսակ խոսակցություն։

— Մահմուդ,— հարցրեց զափթիաներից մեկը իր ընկերից,— եթե այս գիշեր այստեղ մնալու լինենք, դու այդ հայի հարսներից որի՞ն պիտի ընտրես։

— Ինձ շատ դուր եկավ այն կարմրաթշիկ պստլիկը,— պատասխանեց Մահմուդը մի առանձին ախորժակով։

— Բայց իմ խելքը տարավ այն սև աչքերով սիրունիկը,— խոսեց առաջինը ոչ պակաս ոգևորությամբ։

Զինվորները խուզարկության ժամանակ կանանոցը մտնելիս, երևի, ուշադրություն էին դարձրել ոչ այնքան իրանց խրնդրած առարկաների վրա, որքան ծերունի Խաչոյի հարսների վրա։ Կին եղած տեղը մահմեդականը ամեն բան մոռանում է։

Մի քանիսի ուշադրությունը գրավել էին ծերունու տան հարուստ իրեղենները։

— Իմ կնիկը գլուխս տարավ,— ասում էր մի ծեր զափթիա,— ամեն օր հանգստություն չէ տալիս, միշտ ասում է՝ մի մեծ պղինձ պիտի առնես կաթ տաքացնելու համար։ Այստեղ մեկը

տեսա, իսկ և իսկ նրա ուզածն է, երբ գնալու լինենք, անպատճառ պիտի հետս վեր առնեմ։

Մի մանկահասակ զինվոր ասաց.

— Ես տեսա մի գեղեցիկ խալիչա, շատ լա՜վ է նրա վրա պառկելը կուշտ ուտելուց և խմելուց հետո, և ծխել սիրուն կնոջ ձեռքով պատրաստված նարգիլեն։

Ծեր զափթիան, որ ավելի տնտեսական և կրոնական կետից էր նայում ավարի վրա, թույլ տվեց իրան մի նկատողություն անել մանկահասակ զինվորին։

— Այս տեսակ խալիչաները ավելի հարմար է դործ ածել որպես սաջջադա[1] նամազի համար։

Մի նախանձով և նախապաշարմունքներով լի զինվորը ասաց.

— Զարմացք բան է, «գավուր» լինել և այսպիսի սիրուն կնիկներ ունենալ... «գավուր» լինել և այսպիսի հարուստ տուն ունենալ... Մեր տանը մի փալասի կտոր չկա, որ երեխաներս գիշերը վրան պառկեն։ «Գավուրը» պետք է մի քրքրված, բարակ գոտի ունենա կապած մեջքին, որ հագելու ժամանակ տա՛սը տեղից կտրատվի...

Վերջին խոսքը յուրաքանչյուր մահմեդականի բերանի առածն է։ Արևելքում գոտիի հաստությունը և նրա շքեղությունը հարստության և փառքի նշան է։ Հայը, գավուր լինելով, մահմեդականի կարծիքով, պետք է այն աստիճան աղքատ լինի, որ բոլորովին քրքրված և մաշված գոտի ունենա, որպեսզի հագելու միջոցին չդիմանա և կտրատվի... Հայը սիրուն կնիկներ ունենալու ևս իրավունք չունի, որովհետև «գավուր» է, որովհետև, ինչ որ գեղեցիկ է, ինչ որ լավ է, պետք է մահմեդականի սեփականություն լինի...

Զինվորներից մի քանիսը մտել էին ծերունու տան գեղեցիկ պարտեզի մեջ, և որպես արջը կամ խոզը բանջարանոցի մեջ, այնպես ոտնակոխ էին անում, տրորում էին խնամքով մշակված գեղեցիկ ծաղիկները, որոնց համար այնքան աշխատել էին տանուտերի հարսները և աղջիկները։ Նրանք բռնում ՀԷին ծառերի ճյուղերից, քարշ էին տալիս, կոտրատում էին պտուղ-

[1] Սաջջադա կոչվում է այն սփռոցը, որի վրա մահմեդականները աղոթք են անում։ Դրա համար ընտրում են ամենագեղեցիկ սփռոցը, երբ աղոթքը տան մեջ է կատարվում։

ները քաղելու համար, հասածները ուտում էին, իսկ տհասները գցում էին հողի մեջ և կոխ էին տալիս։ Ծերունի Խաչոն այդ տեսավ հեռվից և նրա սիրտը խորին կերպով խոցվեցավ։ Նա այնքան էր սիրում իր ծառերին, որքան իր զավակներին։ Նա իր խելացի գլուխը շարժեց և նույն րոպեում նրա մտքից անցավ պարսկական վաղեմի առածը, «երբ որ զորապետը խլում է այգեպանից մի խնձոր առանց փողի, այն ժամանակ նրա զորքերը ամբողջ այգին արմատախիլ կանեն»։ Այսպիսի բարբարոսության ընդունակ է Թուրքը։ Ով որ գութ չունի դեպի կենդանի բույսերը, նա չի կարող գութ ունենալ և դեպի կենդանի մարդիկ։ Թուրքը ծառի պտուղը կուտե, իսկ ծառը կոչնչացնե։ Թուրքը մարդու ձեռքի վաստակը կառնե, իսկ նրան կմահացնե... Թուրքը որպես անխնայորեն սպառեց իր երկրում գտնված անտառները, նույնպես անխնայորեն ոչնչացրեց իր տերության այլազգի ցեղերը...

Ծերունին նույն բարբարոսությունն էր տեսնում իր տան մեջ, բայց լռում էր։ Նա մտավ խոհանոցը, ուր կնիկները ճաշ էին պատրաստում։ Խե՜ղճ մարդ, նա արդեն կալանավորված էր իր տնում, և իր բանտի մեջ իր պահպաններին ցույց էր տալիս հյուրասիրության սուրբ պարտքը։

— Այդ ի՞նչ մարդիկ են, ի՞նչ էին պտռում, ինչո՞ւ են քանդում մեր տունը,— հարցրեց Սառան արտասվալի աչքերով։

— Աստված գիտե...— պատասխանեց ծերունին տխուր կերպով և պատվիրեց, որ ճաշը շուտ տան։

Կնիկները գտնվում էին մի սարսափելի երկյուղի մեջ։ Նրանք քաշվել և տուն էին մտել զինվորների աչքից հեռու մնալու համար։ Նրանք հասկանում էին, որ մի տարօրինակ բան պետք է պատահած լինի, որ Թուրքերը այժմ այնպես անպատկառ կերպով էին վարվում իրանց տան հետ։ Մինչև այն օրը նրանք շատ անգամ տեսել էին այսպիսի հյուրեր, բայց միշտ ծերունու տան պատիվը պահպանված էր եղել։

Հայրապետը և Ապոն, որոնք առավոտյան Վարդանի հետ գնացել էին պարոն Սալմանին որոնելու, տակավին չէին վերադարձել։ Ծերունու մյուս որդիները, դաշտում լսելով Թուրքերի անկարգությունները, իսկույն տուն վազեցին։ Նրանք սաստիկ կատաղած էին ոչ թե Թուրքերի դեմ, այլ իրանց անմեղ հոր դեմ։ Ստրուկները միշտ տկար կողմի վրա են հարձակվում։ Նրանք բռնակալի գործած բարբարոսությունները բնական են համարում, բայց մեղադրում են իրանց նման ստրուկներին, թե ինչո՞ւ նրանք «աղային բարկացրին»... Այս պատճառով ծերունու որդիների իրանց հոր դեմ հայտնած նախատինքներին և հանդիմանություններին չափ չկար։ Նրանք դատապարտում էին իրանց հորը, թե ինչո՞ւ նա թույլ տվեց իր տան մեջ այնպիսի վտանգավոր մարդերին, որպես էին Վարդանը և Սալմանը, և պատրաստ էին գնալ և հայտնել հիսնապետին բոլորը, ինչ որ իրանք գիտեին, կարծելով թե այդ կթեթևացներ իրանց հանցանքը։

— Դու քո ձեռքով քո տունը քանդեցիր,— ասում էին նրան որդիները։

— Թո՛ղ քանդվի...— պատասխանեց ծերունի հայրը լի վերդովմունքով,— երբ այդ տան մեջ ձեզ նման անարժան որդիք են բնակվում... Անեծքի և ոչնչության արժանի եք դուք, քանի դեռ մեռած է ձեր մեջ անձնասիրության, պատվի և ազատամտության ամեն զգացմունքը։ Այն մարդիկը, որոնց դեմ բարկացած եք դուք, նրանք են իմ իսկական որդիները, և ես շատ չեմ ցավի, եթե նրանց պատճառով կկորցնեմ ամեն ինչ, որ ունեմ...

Ծերունու վերջին խոսքերը վերաբերում էին պարոն Սալմանին և Վարդանին։ Որդիները ավելի գրգռվեցան։ Խոհեմ հայրը մտածելով միջոցներ հիմարություն գործեն, կամ մի անզգույշ խոսք դուրս թողնեն իրանց բերանից, հանգստացրեց նրանց, ասելով, որ վախենալու ոչինչ առիթ չունեն, որ Թուրք պաշտոնատարների «բերանը միշտ կարելի է ցեխել» մի քանի ոսկիներով և ավելացրեց, որ Թոմաս էֆենդին խոստացել է գործադնել իր բոլոր ջանքերը և գալոց վտանգի առաջը առնել։ Որդիները մի փոքր հանգստացան։ Այսպիսիների վրա միշտ մեծ ազդեցություն է գործում խոշոր մարդկանց անունը։ Թոմաս էֆենդին խոստացել է, ուրեմն նա ամեն բան կարող է կատարել։

Այդ միջոցին օդայի դռանը հայտնվեցավ Թոմաս էֆենդին և հեռվից ձայն տվեց.

— Տանուտեր Խաչո, շուտ արա, այդ կծատողներին պետք է կերակրել։

— Պատրաստ է, էֆենդի,— պատասխանեց տանուտերը,— իսկույն կտան ճաշը։

Ծերունու որդիները սկսեցին ճաշի սեղանը պատրաստել և օդայի մեջ առանձին, իսկ դրսում ծառերի հովանու տակ առանձին սեղան ևս զինվորների համար։ Այդ վերջինները հետզհետե անտանելի էին դառնում։ Այդպիսի դեպքերում, հայի տան մեջ, թուրք զինվորը բավական պահանջող է լինում։ Նրա ճաշակը նրբանում է, նրա ախորժակը բացվում է. և նա պահանջում է այն տեսակ կերակուրներ, այն տեսակ խմիչքներ, որոնց անունն է լսել միայն, իսկ իր կյանքում մի անգամ ևս չէ տեսել։ Տան տիրոջ յուրաքանչյուր «չկան» պատասխանվում է հայհոյանքներով։ Թեև այսպիսի անկարգություններ չպատահեցան, բայց դարձյալ ծերունու որդիները սաստիկ տանջվեցան, մինչև կարողացան իրանց անամոթ հյուրերի այս և այն պահանջներին բավականություն տալ։

Հիսնապետը և Թոմաս էֆենդին ճաշում էին օդայի մեջ երկուսը միասին։ Ծերունի տանուտերը նրանց սեղանակիցը չեղավ, և սպասավորի նման մնաց ոտքի վրա, դրանով կամենալով ցույց տալ իր հյուրերին մի առանձին պատիվ։ Ծերունու որդիները ծառայում էին զինվորների սեղանի շուրջը։ Առժամանակ արաղը և տանուտերի խոհանոցի առատ խորտիկները զբաղեցրին նրանց։ Այդ դեպքից օգուտ քաղելով, ծերունին մոտեցավ Սառային և ծածուկ ասաց նրան.

— Զավակս, ա՛ռ այդ բանալիները և տանը ինչ լավ բան որ կա, բոլորը թաքցրու, դու խո իմանում ես, թե որտեղ պետք է թաքցնել։

— Իմանում եմ...— պատասխանեց խեղճ կինը և նրա աչքերը լցվեցան արտասուքով։ Այդ նախազգուշությունը արդեն նշան էր, որ սպառնում է մի մեծ վտանգ։

— Լսիր, և սիրտդ պինդ պահիր,— շարունակեց ծերունին,— մեր տունը շատ անգամ տեսել է այս տեսակ փորձանքներ։ Աստուծով բոլորը կանցնի, միայն պետք է համբերություն ունենալ։ Իրեղենները թաքցնելուց հետո հարսներին երեխաներին հետ կուղարկես իրանց ծնողների տները, իսկ դու Լալային քեզ հետ վեր առնելով, կգնաս մեր քավոր Զաքոյի տունը, այնտեղ կմնաք, մինչև տեսնենք, թե ինչով կվերջանա այդ փորձանքը։

Ծերունու հարսներից ոմանք Օ... գյուղից էին, իսկ մի քանիսը մերձավոր գյուղերից, այս պատճառով, նրանց առժամանակ իրանց ծնողների հետ պատսպարվելը դժվար չէր։

Միայն Սառան հեռու տեղից էր բերված, նրա ծնողները գտնվում էին Բայազեդում, դրա համար ծերունին առաջարկեց նրան քավոր Զաքոյի տունը, որի վրա մեծ հավատարմություն ուներ։

— Մի բան էլ կա, լսիր, Սառա,— շարունակեց ծերունին,— Հայրապետը, Ապոն և Վարդանը առավոտյան գնացին պարոն Դուզուկչյանին որոնելու. նրանք, երևի, չգիտեն, թե ինչ է պատահել մեզ հետ, տուն կվերադառնան և իրանք էլ կընկնեն փորձանքի մեջ։ Շուտով մի մարդ ուղարկիր, որ գոնե նրանց ասե, որ մի տեղում պահվեին և սպասեն իմ կարգադրություններին։

Վերջին խոսքերը ավելի խոր խոցեցին խեղճ կնոջ սիրտը, ուրեմն իր սիրելի ամուսնուն ևս վտանգ էր սպառնում, մտածեց նա, նա ինչո՞վ էր մեղավոր, նա ի՞նչ էր արել... Բայց Սառան այնքան խելացի էր, որ նրանից ծածուկ չէին կարող մնալ իր ամուսնի մի քանի դիտավորությունները, որոնցից նա միշտ ցավալի հետևանքներ էր սպասում։

— Ո՞վ կգնա... հարցրեց կինը վշտալի ձայնով և նրա բազմահոգ աչքերը կրկին լցվեցան արտասուքով։

Սառայի հարցմունքը անտեղի չէր։ Վտանգի ժամանակ երբ եղբայրը եղբորը ուրանում է, և մինչև անգամ նրա դեմ թշնամանում է— էլ ուրիշների վրա ի՞նչ հույս կարելի է դնել... Սառան իր ականջով լսեց, թե քանի բոպե առաջ Հայրապետի եղբայրները որպիսի բարկությամբ էին խոսում նրա մասին, և որքան գրգռված էին նրա դեմ։

Ծերունին հասկացավ Սառայի արդար դժգոհության պատճառը և տխրությամբ պատասխանեց նրան.

— Ես գիտեմ, որ ոչ ոք չի գնա... ես գիտեմ, որ վտանգի ժամանակ բոլորը կհեռանան մեզանից... Բայց Վարդանի երկու ծառաները՝ Սաքոն և Եղոն տանն են. դրանք համարձակ մարդիկ են և հավատարիմ։ Շտապիր շուտով հասկացնել նրանց գործի եղելությունը, իսկույն նրանք կգնան, կգտնեն Հայրապետին, Ապոյին և Վարդանին և ինչ որ պետք է՝ կհայտնեն նրանց։ Բավական է, որ ասեն թե պարոն Դուզուկչյանը կալանավորված է և մեր տան մեջ խուզարկություն արին, մնացածը նրանք կհասկանան։

Վերջացնելով իր պատվերները, ծերունին գուրս եկավ կա-

նանոցից, համոզված լինելով, որ խոհեմ և խելացի Սառան կկարգադրե իր ցանկության համեմատ։

Բակում ծերունին նկատեց, որ կառավարության, կարգի, օրենքի և արդարության ներկայացուցիչները,— զինվորները, վայելելով գյուղացու սեղանի առատ բարիքները, խմելով նրա գինին և արաղը, այժմ ներկայացնում էին անկարգության մի ամբողջ բաբելոն։ Նա աչքերը խփեց և անցավ։ Նա չկամեցավ տեսնել բացարձակ լրբություն, որ պատժել չէր կարող։

Թուրք ծառայողները շատ չեն հետևում իրանց կրոնի պատվերներին, այս պատճառով արաղի գործածությունը նրանց մեջ բոլորովին սովորական էր դարձել։ Արգելված պտուղը քաղցր է լինում։ Մահմեդականը խմելու ժամանակ գաղան է դառնում. արբեցության բերկրանքը նրա մեջ փոխվում է կատաղի մոլեգնության։ Եթե մի պատճառ կար համարել Մուհամմեդին մարգարեներից ամենամեծը, այդ էլ բավական է, որ նա արգելեց մուսուլմաններին խմել ոգելից ըմպելիքներ։

Միևնույն ժամանակ օդայի մեջ խոսակցությունը ոչ սակավ հետաքրքիր էր։ Հիսնապետը բավական խմեց, և ճաշից առաջ նրա էֆենդու հետ ունեցած պաշտոնական խոսակցությունը այժմ ավելի մտերմական, ավելի ընկերային ձև էր ստացել։

— Քանի՞ կնիկ ունես,— հարցրեց հիսնապետը։

Էֆենդին, մի անսովոր ժպիտ գործելով իր այլանդակ դեմքի վրա, պատասխանեց.

— «Էշից հարցրին քանի՞ կնիկ ունես, նա ցույց տվեց ամբողջ նախիրը»։

Երբ էֆենդին սկսում էր էշերի առածներով արտահայտել իր միտքը, դա արդեն նշան էր, որ նա գտնվում է իր սրտի ամենաուրախ տրամադրության մեջ։

— Բայց քրիստոնյաներին կարծեմ, արգելված է մեկից ավելի ունենալ,— նկատեց հիսնապետը։

— Մահմեդականներին նույնպես արգելված է գինի և արաղ խմելը, իսկ դուք ինձանից ավել խմեցիք,— պատասխանեց էֆենդին, ուրախանալով իր հարմար պատասխանի վրա։

Այդ միջոցին ներս մտավ ծերունի Խաչոն, իր ձեռքով բերելով երկու տուփերի մեջ դարսած ռահաթլոխում և Զմյուռնիայի թուզ, և դրեց սեղանի վրա, ասելով.

— Ճաշից հետո լավ է լինում բերանը մի բանով քաղցրացնել։

Նա կրկին շտապով դուրս գնաց օդայից։

— Բավական բարի մարդ է երևում այդ ծերուկը,— խոսեց հիսնապետը նրա հեռանալուց հետո,— ես զարմանում եմ, թե ինչպե՞ս է թողել դա իր տանը այնպիսի մարդերին, որպես ռուսաց լրտեսը, կամ որպես պոլսեցի խռովարարը։

— «Էշի ականջները երկար են լինում, բայց խելքը կարճ»,— պատասխանեց էֆենդին իր հատուկ ոճով։— Եթե կան աշխարհումս հիմար մարդիկ, դրանք այդ «բարի» կոչվածներն են։ Այդ ծերուկը նույն տեսակներից է։

Թուրք հիսնապետը համեմատաբար ավելի ազնիվ զգացմունքի տեր մարդ էր, քան հայ էֆենդին։ Նա ասաց ցավակցաբար.

— Ես կարծում եմ, որ զինվորական նոր գործակատարը այդ խեղճին լավ կկթե...

— Տարակույս չկա... Անխելք պետք է համարել այն մարդուն, որ չի աշխատի մի այսպիսի բարեբեր կովից օգուտ քաղել...

— Դու ճանաչում ես նրան, ինչպե՞ս մարդ է, ես առաջին անգամն եմ տեսնում։

— Շատ լավ եմ ճանաչում,— պատասխանեց էֆենդին գործագետ մարդու եղանակով.— ես նրան ճանաչում եմ դեռ այն ժամանակից, երբ Տիգրանակերտի գավառում գայմագամ էր։ Տասն տարուց ավելի կողոպտեց, հարստացավ, հետո Պոլիս գնաց և այնտեղ փաշա դարձավ։

— Ինչպե՞ս մարդ է։

— «Սատկած էշ է պտռում նալերը դուրս քաշելու համար»։

Մինչև էֆենդին և հիսնապետը զբաղված էին այս տեսակ խոսակցություններով, մինչև զինվորները արբեցության մոռացության մեջ երգում էին, հոհոում էին և պար էին գալիս, ծերունու տան կնիկները իրանց երեխաների՞ ձեռքից բռնած, տան ետևի դռնով դիմում էին դեպի իրանց ծնողների տները։ Արտասուքը հեղեղի նման թափվում էր այդ թշվառների աչքերից, որոնց այնպես էր թվում, թե դեպի գերություն են քարշվում, թե պետք է մյուս անգամ չտեսնեն այն տունը, ուր այնքան բախտավոր էին, ուր այնքան սիրված էին։

Այդ միջոցին Եղոն և Սաքոն, երկուսն էլ զինվորված, դուրս եկան նույն դռնից, և նստելով ձիերի վրա, հեռացան։ Թոմաս էֆենդին իր բոլոր սատանայական խորամանկությամբ չմտածեց կալանավորել այդ երկու ավազակներին, որոնք Վարդանի թև ու թիկունքն էին, որոնք կարող էին խանգարել նրա չար դիտավորությունները...

ԻԸ

Թոմաս էֆենդին դեռ մասամբ միայն հասած էր համարում իր նպատակին։ Նրա գլխավոր նպատակը տակավին մնացել էր անկատար։ Ստեփանիկի աղջիկ լինելը նա վաղուց գիտեր։ Նրան հայտնել էր մկրտող քահանան, տեր-Մարուքը, որ մի օր էֆենդու մոտ ճաշի հրավիրված լինելով և արբեցության մեջ իրան կորցնելով, հայտնեց գաղտնիքը, որի մասին ուխտել էր միշտ ծածուկ պահել։ Այն օրից Թոմաս էֆենդին սիրում էր Լալային։

Բայց ի՞նչ բան էր այդ բարոյապես փչացած մարդու մեջ տերը.— քաղցի և ծարավի բնական զգացմունք։ Կերավ, խմեց, կշտացավ,— և ահա՛ կարիքը անցավ։ Նա գոհ է, երբ կրքերը հագեցած են լինում։ Սիրո հոգեկան և իդեալական կողմերը անմատչելի էին Թոմաս էֆենդուն։ Սերը նրա մեջ լոկ անասնական ցանկություն էր։ Նա իր կյանքը թուրքերի հետ անցկացնելով, սեփականել էր նրանց բոլոր բարոյական հատկությունները։ Գեղեցիկ կինը, սիրուն աղջիկը մահմեդականի համար նույնպիսի գրավիչ առարկաներ են, որպես խաղալիքները երեխաների համար։ Երեխան հրապուրվում է, զվարճանում է իր խաղալիքով այնքան ժամանակ միայն, քանի չէ ձանձրացել, երբ ձանձրացավ, ձեռքի ունեցածը կկոտրե, դեն կգցե և մի ուրիշը կուզե։

Կինը Թոմաս էֆենդու համար իր էր, առարկա էր, որ սեփականում էր միայն իր առժամանակյա զվարճության, իր առժամանակյա բավականության համար,— տեսավ նրանից ավելի գեղեցիկը, նա պատրաստ էր թողնել առաջինը և աշխատել երկրորդը ձեռք բերելու համար։ Նրա վերջին վիճակը ընկել էր Լալայի վրա։ Բայց ինչո՞ւ այնպիսի անազնիվ և սատանայական ճանապարհներով էր աշխատում հասնել իր նպատակին։ Մի-

թե չէ՞ր կարող ուղղակի առաջարկություն անել նրա հորը և խնդրել աղջկա ձեռքը։

Թոմաս էֆենդին հաջորդաբար էր վարվում։ Կյանքի բոլոր պետքերի և պահանջների մեջ, նպատակին հասնելու համար, նա իր առանձին գործելու եղանակն ուներ։

Թոմաս էֆենդին հարստահարիչ էր։ Հարստահարիչը ուղիղ ճանապարհներով չի դիմում նպատակին։ Նա շրջում է ծուռումուռ շավիղների մեջ։ Հարստահարիչը այն տեսակ որսորդներիցն է, որ որոգայթներ է լարում, ցանցեր է դնում, ծուղակներ է կազմում իր որսը բռնելու համար։ Բարոյական հարստահարության մեջ Թոմաս էֆենդին նույն կերպով էր վարվում։ Նա աշխատում էր մի անմեղ աղջկա սերը որսալ դիվական խորամանկություններով։ Նա աշխատում էր Լալայի հորը մի այնպիսի անելանելի դրության մեջ դնել, որ հակառակ իր կամքին, ստիպված լիներ իր աղջիկը էֆենդուն տալ։

Թոմաս էֆենդին Լալայի վրա նայում էր, որպես իր հոր սեփականության վրա,— որպես նրա մշակության մի բերքի վրա։ Նա, իբրև կապալառու, գիտեր, թե ինչ միջոցներ պետք է գործ դնել գյուղացու մշակության բերքը ձեռքից խլելու համար։ Նա գիտեր, որ մինչև գյուղացուն չես տանջում, չես չարչարում, և նրա բոլոր ընդդիմադրության ուժերը նրանից չես խլում,— նա չէ հոժարվում իր աշխատանքի արդյունքը, իր ստացվածքը ձեռքից բաց թողնել։ Այդ մտքով Թոմաս էֆենդին կապեց, կաշկանդեց ծերունի Խաչոյին այնպիսի անլուծելի հանգույցներով, որ ինքը միայն կարող էր բաց անել։

Մատնելով նրան իր որդիների հետ որպես քաղաքական-հանցավորներ, որպես մի խռովարար մարդու դավակիցներ, որպես իրանց տնում պատերազմի ժամանակ լրտես պահողներ,— Թոմաս էֆենդին մի երկրորդ նպատակ ևս ուներ, այն է, դրանով ցույց տալ թուրք կառավարությանը իր հավատարմությունը և մատուցած մեծ ծառայությունը։ Մյուս կողմից, ասել ծերունի Խաչոյին՝ «Տե՛ս, եթե Լալային ինձ չտաս, դու և քո որդիներդ կախաղան կբարձրանաք, քո տունը կրակով կայրեն և քո հարստությունը կգրավեն... Ես միայն կարող եմ փրկել ձեզ և իմ վարձատրությունը պետք է լինի գեղեցիկ Լալան...»։

Այդ բոլորը կարող էր կատարել չարագործը։ Նա իր ձեռքում ուներ մի փաստ, որ ամենապարզ ապացույցն էր նրա մատնությունների համար.— դա էր ծերունի Խաչոյի տան պահարանի մեջ թաքցրած խուրջինը, որի մեջ պահված էին պարոն Սալմանի թղթերը։ Իսկ պահարանի երկաթի դռան բանալին էֆենդին իր գրպանումն ուներ։

Բայց նա դեռ չէր ցանկանում չարությունը իր ծայրահեղությանը հասցնել։ Նա համոզված էր, որ Լալայի հոր հոժարությունը ստանալ դյուրին էր։ Բայց նա տեսնում էր իր առջև մի ավելի հզոր ախոյան— Վարդանին։ Սկսյալ այն օրից, երբ օդայի մեջ Վարդանը խլեց Ստեփանիկի ձեռքից էֆենդուն մատուցանելու չիբուխը և բարկությամբ դուրս ձգեց լուսամուտից,— սկսյալ այն օրից, երբ Վարդանը Ստեփանիկի պատճառով այնպես կատաղի կերպով հարձակվեցավ էֆենդու վրա,— այս վերջինը հավատացած էր, որ Վարդանի և Ստեփանիկի մեջ կա մի ներքին կապ, թե այդ երկուսը սիրում են միմյանց։ Բացի դրանից, նա գիտեր, որ Վարդանը մեծ համակրություն է վայելում ծերունու ընտանիքի մեջ, և նրանք մեծ ուրախությամբ իրանց աղջիկը նրան կնության կտային։ Իսկ եթե չհոժարվեին տալ, բավական էր, որ աղջիկը սիրում էր, և Վարդանը, իբրև կանտրաբանտիստ, կվարվեր նրա հետ, որպես մի արգելված ապրանքի հետ, այսինքն, մի գիշեր կվեր առներ և կփախցներ։ Եվ այդ կատարելու համար Վարդանը բավական քաջություն և համարձակություն ուներ։— Այդ բոլորը մտածում էր էֆենդին։ Ուրեմն ի՞նչ պետք էր անել երիտասարդի դիտավորությունները խափանելու համար։— Պետք էր նրան մի կերպով այս երկրից հեռացնել, և հեռացնել կառավարության զինվորների հրսկողության ներքո, որ նա չկարողանա Լալային իր հետ տանել։ Այդ էր պատճառը, որ Թոմաս էֆենդին մատնեց Վարդանին որպես ռուսաց լրտես։

Բայց ինչո՞ւ նա պատվիրեց կալանավորել Խաչոյի որդիներից երկուսին միայն՝ Հայրապետին և Ապոյին։ Մի՞թե նրան հայտնի էր, թե այդ երկուսը միաբանվում էին պարոն Սալմանի հետ։ Մի այսպիսի կասկած նա չէր կարող ունենալ, թե հայ գյուղացին ընդունակ է մտածելու իր ազատության համար։ Նա միայն մի բան գիտեր, որ ծերունու մյուս որդիները հլու «ավանակներ» էին, իսկ եթե կային նրանց մեջ այնպիսիները, որ

կարող էին հակառակել Լալային իրան կնության տալու ցանկությանը,— դրանք պետք է լինեին Հայրապետը և Ապոն։ Որովհետև էֆենդին վաղուց նկատած էր այդ երկու եղբայրների մեջ մի սաստիկ հակակրություն դեպի ինքը, այդ պատճառով պատվիրեց նրանց ևս կալանավորել, որ ձայները կտրեն...

Ահա՛ այդ անորոշ դրության մեջ էր Լալայի վիճակը։ Երեք հոգի սիրում էին նրան։ Երեքն էլ իրանց հատուկ հնարքներով մտածում էին նրան ձեռք բերել։ Քուրդ Ֆաթթահ-բեկը, որպես աներկյուղ և հայտնի ավազակ, կամենում էր բացարձակ կերպով հափշտակել իր որսը, որպես համարձակ արծիվը սլանում է ամպերի միջից և հափշտակում է ժայռերի վրա արածող եղջերուի ձագը։ Իսկ հայ կապալառուն, Թոմաս էֆենդին, որպես հարստահարիչ, բոա օձի նման, մտածում էր գալարել իր թեփուկների մեջ իր զոհին, և ճնշել ու խեղդել նրան, որ կարողանա վերջը կուլ տալ։ Բայց Վարդանը, այդ անձնավստահ և հանդուգն կանտրաբանտիստը, ինչպես ասացինք, մտածում էր փախցնել նրան, եթե հոժարությամբ տալու կամք չունենային։ Իսկ որի՞ն էր սիրում Լալան,— այդ մենք գիտենք։

Բայց քուրդ բեկը այժմ զբաղված էր իր զինվորական պատրաստություններով, շատ չէր մտածում Լալայի վրա։ Վարդանը զբաղված էր պարոն Սալմանով։ Միայն Թոմաս էֆենդին այնպես էր սարքել գործը, որ նրան շատ հաջողություն էր խոստանում։

Ճաշելուց հետո հիսնապետը, չափազանց խմած լինելով, անմիջապես քնեց։ Նրա զինվորները դեռ բռնած էին իրանց պահնորդական դիրքը։ Ծերունու որդիներից Հայրապետը և Ապոն տակավին չէին վերադարձել տուն։ Թոմաս էֆենդին ամենահարմար ժամանակը համարեց խոսել Լալայի մասին նրա հոր հետ։ Նա թողեց քնած հիսնապետին օդայի մեջ, ինքը դուրս եկավ։ «Սկսեցի, պետք է վերջացնել,— մտածում էր նա, — էշի վրա նստելը մեկ ամոթ է, բայց վեր ընկնելը երկու ամոթ»...

Նա գտավ ծերունուն տխուր և հոգնած. միայնակ նստած բակի պատի մոտ, և հետ-միջօրեի արեգակով ջերմացնում էր իր սառած անդամները։ Նրա աչքի առջև զինվորները լրբաբար հոհոում էին, ծիծաղում էին, զզվելի հանաքներ էին անում։ Նրանք քաշում էին մոտից անցնող քուրդ աղախինների փեշից

և ստիպում էին, որ իրանց հետ խոսեն, որ իրանց հետ հանաքներ անեն, կամ ծեծում էին ծառաներին, որ այս և այն հրամանները կատարեն։ Ծերունի նահապետը տեսնում էր անամոթությունը այն տան մեջ, ուր միշտ պահված էր եղել ընտանեկան սրբությունը,— ուր օտար տղամարդի մի անհամեստ ժպիտն անգամ երբեք անպատիժ չէր մնացել։ Իսկ այժմ տեսնում էր իր աչքի առջև մի խումբ անառակներ, որոնք, որպես սեփական տան մեջ, զանազան պատվերներ էին տալիս... «Ի՞նչ վիճակ է այդ,— մտածում էր ծերունին,— ինչո՞ւ համար ենք ապրում... ինչո՞ւ գետինը չէ պատռվում և մեզ կուլ չէ տալիս... ինչո՞ւ երկինքը չէ փուլ գալիս ու մեզ տակովը չէ անում... այդ ի՞նչ կյանք է... տեսնել իր աչքի առջև անպատվությունը և լուռ մնալ... էլ ո՞ւմ համար է պատրաստել աստված դժոխքի կրակը... էլ ո՞ւմ համար են երկնքի կայծակները... ինչո՞ւ չեն պատժում անզգամին»... Այսպես հառաչում էր նա և իր արտասուքով լի աչքերը դարձնում էր դեպի երկինքը։ Բայց երկընքից ոչինչ պատասխան չէր լսում...

Նա տեսավ զինվորներից մի քանիսը տնից դուրս էին բերում զանազան իրեղեններ։ Իսկ Սառան, որ մյուս հարսներին ճանապարհ դնելուց հետո, դեռ մնացել էր տանը, աշխատում էր խլել զափթիայի ձեռքից ահագին պղնձե կաթսան։ Բայց նա զարկեց բռունցքով խեղճ կնոջ կուրծքին, և կինը ընկավ գետին... «Իմ տան կայքը իմ աչքի առջև բաժանում են, առանց տիրոջ կամքը հարցնելու... Եվ ինչո՞ւ համար, ինչո՞վ եմ ես մեղավոր։ Նրանով, որ ընդունել եմ իմ տան մեջ մի հյուր, որը բողոքում էր, թե գյուղացու աշխատանքը, գյուղացու սեփականությունը պետք է ապահովված լինի։ Ինձ պատժում են, թե ինչո՞ւ ես օթևան տվեցի մի այսպիսի մարդուն, որ բռնության, անխիղճ հարստահարության և գազանային անգթության հակառակն էր խոսում։ Որ քարոզում էր մեզ, թե պետք է աշխատենք մեր պապերից մնացած հողի տերը լինել, թե մենք ինքներս պետք է կառավարենք մեր գործերը, թե պետք է աշխատենք թոթափել օտարի լուծը... Ով է մտցնում մեր մեջ այդ մտածությունները, եթե ոչ ինքը՝ բռնությունը։ Եթե մեզ հանգիստ թողնեին, եթե մեր ընտանիքը չանպատվեին, եթե մեր վաստակը մեր ձեռքից չխլեին, եթե մեզ հետ մարդու նման վարվեին և անասունի պես չտանջեին, այն ժամանակ

մենք գոհ կլինեինք։ «Ազատասիրության հայրը,— ասում էր երիտասարդը,— բռնությունն է, իսկ մայրը՝ անիրավությունը»։ Ես հիմա եմ հասկանում այդ խոսքերի միտքը։ Բռնակալը ինքն է պատրաստում իր համար թշնամիներ... Եթե թուրքը այսպես չվարվեր մեզ հետ, մենք մինչև անգամ կսիրեինք նրան, թո՞ղ նա մեր մսից և արյունից չլիներ»։

Այսպես մտածում էր ծերունին և նրա սիրտը ծովի ալեկոծության նման տակնուվրա էր լինում։ Բայց ի՞նչ կարող էր անել ուժաթափ առյուծը այնքան գայլերին։ Նա զգում էր իր վիճակի դառնությունը և հնարների մասին հոգալու համարձակություն չուներ։ «Մի ձեռքը ծափ չէ տալիս»,— կրկնում էր նա հայտնի առածը։— Եթե մեր բոլոր գյուղացիները այսպես մտածեին, այն ժամանակ մեզ մի ճար կլիներ։

Այս հոգեկան խռովության մեջ գտավ ծերունուն Թոմաս էֆենդին, և լիրբը կամենալով նրա սիրտը ավելի խոր խոցել, հեռվից ասաց.

— Բանը վատ է գնում, շա՛տ վատ, տանուտեր Խաչո. «էշը այնպես չի խրվել, որ կարելի լիներ ցեխիցը հանել»...

Ծերունին չլսեց նրա խոսքերը, միայն հեռվից տեսնելով, կանգնեց ոտքի վրա։

— Նստիր,— ասաց էֆենդին, ձեռքը բարեկամաբար նրա ուսի վրա դնելով,— ես էլ քեզ մոտ կնստեմ, դրանից լավ տեղ չենք գտնի խոսելու համար։— Նրանք նստեցին միմյանց մոտ մի կտոր կապերտի վրա, որ ծառայում էր որպես օթոց։

— Այդ մարդիկը ե՞րբ պիտի գնան,— հարցրեց ծերունին, ձեռքը պարզելով դեպի զինվորները, որոնք դեռ չէին դադարել իրանց անիրավ վարմունքից։

— «Գժին տարան հարսանիք, ասաց այստեղ մեր տանից լավ է»։ Ո՞ւր պիտի գնան և ինչո՞ւ են գնում, ուտելներն է պակաս, թե խմելները,— պատասխանեց էֆենդին անհոգ ծիծաղելով։

Այս ծիծաղը ավելի վիրավորեց ծերունու առանց դրան ևս վշտացած սիրտը։ Էֆենդին նկատելով այդ, փոխեց իր խոսքը։

— Դարդ մի արա, տանուտեր Խաչո, քանի որ Թոմաս էֆենդին կենդանի է, չի թողնի, որ քո գլխից մի մազ պակսի։

— Էլ ինչպե՞ս չի պակսի...— պատասխանեց ծերունին մի փոքր զայրացած ձայնով,— չե՞ս տեսնում, իմ տունը իմ աչքի

առջև քանդում են... իմ կայքը իմ աչքի առջև բաժանում են... և ես արգելելու իրավունք չունեմ...

Նա կրկին ցույց տվեց զինվորներին։

— Այդ նրանց սովորությունն է։ «Շունը, երբ ղասաբխանան կմտնե, մի ոսկոր կվեր առնե»։ Դու ինքդ լավ գիտես, տանուտեր Խաչո, երբ Թուրքը հայի տունն է մտնում, ձեռքը դատարկ չէ դուրս գալիս։ Բայց բանը դրանումը չէ։ Պետք է փառք տալ աստծուն, երբ վնասը հասնում է մարդու ապրանքին և ոչ կյանքին...

Ծերունին ամբողջ մարմնով դողաց։ Նա այժմ այնքան զգայուն էր դարձել, որ յուրաքանչյուր խոսք սաստիկ ներգործում էր նրա վրա։

— Ի՞նչ կա, ի՞նչ,— բացականչեց նա համբերությունից դուրս գալով,— եթե կա մի ուրիշ բան, ասա՛, էլ ի՞նչ ես տանջում ինձ, եթե մեռնելու եմ, թող շուտ մեռնեմ։

— Կասեմ, բոլորը կասեմ, տանուտեր Խաչո, համբերություն ունեցիր,— պատասխանեց էֆենդին, այժմ ավելի հանգիստ և ավելի լուրջ կերպարանք ընդունելով։

Եվ նա սկսեց պատմել (դարձյալ էշերի կյանքից մեր նոր առածի վրա հիմնելով իր միտքը), թե «էշը չպիտի քացի տա խթանի դեմ», եթե չէ ցանկանում իր ոտը վիրավորել... Եվ այս առածից այն եզրակացությունը դուրս բերեց, թե հայերը պետք է զգույշ լինեն և չհակառակեն Թուրքերին, մանավանդ այդ պատերազմական օրերում։ Եվ օրինակ բերելով Վանի հրդեհը, նա սկսեց ապացուցանել, թե մեծ «խենթություն» է Թուրքերին անհավատարիմ լինելը։ Նա բացատրեց, թե ինչու Վանում Թուրքերը այրեցին մի քանի հազար հայոց խանութներ և կողոպտեցին նրանց ապրանքները։— Որովհետև, ասաց նա, այնտեղ հայերը ռուսների համար լրտեսություն էին անում։ Այդ բոլորից հետո, ավելացրեց նա, թե այս պատերազմից հայերը ռուսներից ոչինչ օգուտ չպիտի սպասեն։ Եվ կրկին դառնալով դեպի հավատարմության միտքը, նա ասաց, թե Թուրքերը այնքան վատ չեն, որքան մենք կարծում ենք, թե հայերի վիճակը կապված է Թուրքերի հետ, և այս պատճառով ամեն մի ապստամբական խորհուրդ պետք է «խենթություն» համարել։ Եվ դրա համար էֆենդին պարոն Սալմանի վարմունքը խելագարություն է համարում, և ամենևին չի վշտանալ, եթե նա սաստիկ կը-

պատժվի, միայն ցավում է, որ նրա պատճառով մի քանի մարդիկ ևս պետք է պատժի ենթարկվեն...

— Ի՞նչ մարդիկ,— կտրեց ծերունին նրա խոսքը, դունաթափվելով։

— Դու և քո երկու որդիները՝ Հայրապետը և Ապոն, և քո մյուս հյուրը— Վարդանը,— պատասխանեց էֆենդին։

Հարվածը սաստիկ էր, և կարող էր միանգամից անդամալուծել ողորմելի ծերունուն։ Բայց տանջանքներով լի կյանքը, մշտական վտանգը և տառապանքները այն աստիճան մխել էին նրա սիրտը, որ կարողացավ դիմանալ էֆենդու բոթալից խոսքերին, և պահպանելով իր հանգստությունը, հարցրեց.

— Մենք ինչո՞վ ենք մեղավոր։

— Օրհնած, այնպիսի միամիտ հարցմունք ես անում, որ երեխան էլ չի անի։ Կարծես, ինքդ չգիտես, թե ինչո՞վ եք մեղավոր,— պատասխանեց էֆենդին դառն հեգնությամբ։— Մի բոլորովին առողջ մարդ ինչո՞վ է մեղավոր, որ նրան հիվանդի տեղ են դնում, նրա համար միայն, որ նա դուրս էր եկել ծանոթախտով կամ քոլերայով վարակված մի հասարակության մեջից և կամենում էր մի օտար երկիր գնալ, որ ազատվեր այդ ախտերից։ Բայց նրան սահմանի վրա բռնում են, կոխում են մի ծակի մեջ և այնքան ծուխ ու մուր են տալիս, որ հոգին դուրս է գալիս...

— Ուրեմն մե՞զ էլ պետք է ծակը կոխեն,— հարցրեց ծերունին և նրա դեմքի խորշոմների մեջ երևացին սարսափելի ցնցումներ որ նշան էին սաստիկ բարկության։

— Այո՛,— պատասխանեց էֆենդին տառնասրտությամբ։

Բայց նա եկել էր Լալայի մասին առաջարկություն անելու, նրա ձեռքը խնդրելու և իր սերը հայտնելու։ Ինչո՞ւ բոլորը մոռացավ նա, ինչո՞ւ այսպես տանջում էր ողորմելի հորը։ Թոմաս էֆենդին, ինչպես վերևը ասացինք, աշխատում էր ծերունի տանուտերին այնպիսի մի անելանելի դրության մեջ դնել և այնպիսի մի համոզման բերել, որ ստիպված լինի մտածել, թե իրանց փրկությունը միայն էֆենդիով կլինի և Լալան պետք է զոհվի այդ փրկության համար։ Որովհետև էֆենդին գիտեր, որ ծերունին հեշտությամբ չի հոժարվի աղջիկը իրան կնության տալ, մանավանդ այն խոսքերից հետո, որ նա լսեց Վարդա-

նից, թե էֆենդին զանազան երկրներում կնիկներ է թողել, և ինքը անկարող եղավ հերքելու այդ ճշմարտությունը։

Բայց էֆենդին նկատելով, որ ինքը չափը անցավ, պետք չէր այս աստիճան հուսահատեցնել ծերունուն, սկսեց նրան մխիթարել ասելով.

— Ձեզ մի քանի օր բանտարկված կպահեն, իրավ է, բայց այդ միայն ձևի համար կլինի։ Թոմաս էֆենդին գործը այնպես է սարքել, որ ձեզ վնաս չի հասնի։

Ծերունին ոչինչ չպատասխանեց։ Նա տեսնում էր մեծ զանազանություն էֆենդու առավոտյան և այժմյան խոսակցության մեջ։ Նրա սրտում ծագեց մի մթին կասկած...

ԻԹ

Վարդանը, Հայրապետը և Ապոն, առավոտյան տնից դուրս գալուց հետո, ամենևին տեղեկություն չունեին, թե իրանց բացակայության ժամանակ ինչ էր պատահել այնտեղ։ Նրանք դեռ չգիտեին ո՛չ Թոմաս էֆենդու կատարած սատանայական կարգադրությունները, ո՛չ հիսնապետի խուզարկությունները և ո՛չ էլ զինվորների արած անկարգությունները։

Նրանք անցան մի քանի գյուղեր, որոնում էին պարոն Սալմանին, ամեն տեղ հարցուփորձ էին անում նրա մասին, և, վերջապես, մտան այն գյուղը, գտան այն տունը, ուր նա անց էր կացրել վերջին գիշերը։ Տան տերը բարի մարդ էր երևում, նա պատմեց, որ ինքը չգիտե, թե ինչ է պատահել խեղճ երիտասարդի հետ, միայն մինչև կես գիշեր, նա նստած գյուղի «ջահելների» հետ, ինչ որ բաների վրա խոսում էր։ Երբ «ջահելները» հեռացան, նա մնաց մենակ. նրան հաց տվեցին, անկողին տվեցին, նա պառկեց օդայի մեջ։ Վաղ առավոտյան տեսան, որ երիտասարդը այնտեղ չկար, ո՞ւր էր գնացել, չգիտեն։

Վարդանը իր ընկերների հետ մտան այն սենյակը, ուր գիշերել էր երիտասարդը։ Այնտեղ գտան, հատակի վրա ձգած մի թղթի կտոր, որի վրա մատիտով շտապ ձեռքով գրած էր մի տող միայն՝ «Ես կալանավորվեցա» և երկու գլխատառեր՝ Լ. Ս.։

Վարդանը կարդաց, և թուղթը տալով Հայրապետին, ասաց.

— Ես այդ սպասում էի...։

Երեքն էլ մնացին քարացած։ Անցքը սարսափելի տպավորություն գործեց նրանց վրա։ Երկու մեծ կորուստ իսկույն պատկերացավ նրանց աչքի առջև. մեկը, որ բարի ցանկություններով լի մի երիտասարդ զոհ գնաց իր անփորձություններին, մյուսը, որ նրա կալանավորությունը գուցե երևան կհաներ և կոչնչացներ այն խորհուրդը, որի իրագործելու համար նրանք ուխտել էին ամեն տեսակ զոհաբերություն։

Տան տերը զարմացած նայում էր այդ երեք մարդու վրա, թե ինչո՞ւ այն թղթի կտորը այնքան տխրություն պատճառեց նրանց։ Նրանք ոչինչ չհայտնեցին և դուրս եկան։

Արդեն երեկո էր։ Անասունների նախիրը, բառանչելով, թռչկոտելով, դառնում էր արոտից, բարձրացնելով փոշու թանձր մառախուղ։ Գյուղացիները նույնպես ուրախ, ծիծաղելով, միմյանց հետ հանաքներ անելով, տուն էին դառնում դաշտային աշխատություններից։ Նրանցից ոչ ոք չէր հետաքրքրվում, ոչ ոք չէր մտածում այն բանի վրա, թե այս գյուղի մեջ, նախընթաց գիշերում կատարվել էին երկու չարագործություններ,— մի երիտասարդ կալանավորված էր և մի աղջիկ անպատված էր... երկուսն էլ միևնույն մարդու ձեռքով, որ հայ անուն է կրում, և հայոց ամբոխից հարգանք է վայելում...

— Գյուղացին,— ասաց Վարդանը իր ընկերներին,— մի տեսակ երեխա է, միայն հասակը առած։ Տեսնում ես, երեխան գլորվում է, ընկնում է գետին, գլուխը դիպչում է պատին, նա այնքան ժամանակ լաց է լինում, որքան զգում է ցավը, իսկ երբ ցավը անցավ, նա բոլորը մոռանում է, որպես թե ոչինչ չէր պատահել, և կրկին սկսում է խաղը, կրկին սկսում է իր ծիծաղը...

— Շատ դժվար է այսպիսի մեծ երեխաների հետ գործ ունենալը...— ավելացրեց նա։— Դարերով միևնույն հարվածներն են ուտում, միևնույն պատին են դիպցնում իրանց գլուխները, միևնույն ցեխի մեջ են գլորվում, բայց ոչինչ չեն զգում, այսօրվա պատահածը վաղը մոռանում են... Դարձյալ ուրախ, դարձյալ անհոգ գործում են, աշխատում են, ամենևին չմտածելով, թե ո՞ւմ համար են աշխատում, կամ ուրախ լինելու ի՞նչ բան ունեն։

— Թոմաս էֆենդին,— ասաջ տարավ նա,— շատ լավ է ճանաչել այդ ժողովրդին, կոչելով նրան «էշեր», իսկ նրանց մասին մտածողներին— «խենթեր»... Ե՛կ դու պատմիր այդ

գյուղացիներին, թե այն երիտասարդը, որ գիշերը ձեզ այնքան խելացի խոսքերով բացատրում էր մարդու անհատական իրավունքը, խոսում էր, թե ի՞նչ բան է աշխատանքը և ինչո՞վ կարող է ապահովված լինել— այժմ այն երիտասարդը կալանավորված է, գուցե էգուց կախաղան կբարձրացնեն— և դու բոլորից կլսես միևնույն խոսքերը, թե «նա խենթ էր»...

— Բայց ես մի բան եմ մտածում,— փոխեց Վարդանը իր խոսքը,— պարոն Սալմանի մատնության մեջ պետք է իսոն լինի Թոմաս էֆենդու մատը։

— Ես էլ այսպես եմ մտածում,— պատասխանեց Հայրապետը։

— Պետք է ստուգել,— ասաց Վարդանը։

Արդեն սկսել էր մթնել։ Ծերունիները և պառավները դուրս էին գալիս երեկոյան ժամից։ Վարդանը իր ընկերների հետ շտապում էին հեռանալ այդ գյուղից։

— Լա՜վ ասեղներ... գույն-գույն թելեր... սիրուն հուլունքներ...— լսելի եղավ կաղ չարչու ծանոթ ձայնը։

Նա գալիս էր փողոցի հակառակ կողմից, նույնպես օրորվելով, նույնպես կաղալով, որպես տեսել էր Վարդանը մի քանի օր առաջ և ուսի վրա շալակած ուներ ահագին արկղը, իսկ ձեռքին բռնած ուներ հաստ մահակը, որ Հերքուլեսի լախտի նմանությունն ուներ։ Տեսնելով Վարդանին իր ընկերների հետ, նա ասաց.

— Լավ պարոններ, մի բան գնեցեք, երեկոյան ժամն է, էժան կտամ։

— Ի՞նչ ունես,— հարցրեց Վարդանը մոտենալով նրան։

— Ամեն բան ունեմ...— պատասխանեց չարչին և արկղը դրեց գետին։

Վարդանը, իբր թե նայում էր նրա իրեղենները, աննկատելի կերպով սողացրուց չարչու ձեռքը այն թղթի կտորը, որ գրել էր պարոն Սալմանը, և որ քանի րոպե առաջ գտնվեցավ գյուղացու օդայի մեջ, ուր կալանավորել էին նրան։ Չարչին խիստ ճարպիկ կերպով նայեց թղթի վրա, և հազիվ լսելի ձայնով պատասխանեց.

— Այդ ես գիտեմ...

— Ի՞նչ պետք է արած...

— Կտեսնվենք և կխոսենք...

— Որտե՞ղ...

— Հեռացե՛ք, ես ձեզ կգտնեմ...

Խոսակցությունը անցավ բոլորովին աննկատելի կերպով։ Հայրապետը և Ապոն, որ այնտեղ կանգնած էին, ոչինչ չլսեցին։

Չարչին կրկին շալակեց իր արկղը և սկսեց դիմել դեպի մի գյուղացու տուն, ինքն իրան խոսելով.— Այսօր բավական վաճառեցի, այժմ պետք է հանգստանալ...

Վարդանը իր ընկերների հետ շարունակեցին իրանց ճանապարհը։ Գյուղական խրճիթներում արդեն սկսել էին ճրագներ երևալ։

Նրանք անցան արհեստավոր Պետրոսի դռնից, այնտեղ կանգնած էր դրացի Օհոն։ Հայ գյուղացիները, երբ նկատում էին երեկոյան տարաժամ պահուն մի օտարական անցնում էր իրանց դռնից, թե՛ ծանոթ լիներ և թե՛ անծանոթ, սովորություն ունեն հրավիրել նրան, ասելով. «հյուր եղեք»։ Այդ հրավերը նրանք շատ գյուղացիներից լսեցին, և «շնորհակալ ենք» ասելով, հեռացան։ Բայց վարպետ Պետրոսի դռան առջև նրանք կանգնեցին ոչ այն պատճառով, որ դրացի Օհոն հրավիրեց նրանց հյուր լինել, այլ արհեստավորի տնից լսեցին մի օտարոտի ձայն, կարծես, մեկը օգնություն էր կանչում։ Նրանք խուսուն ներս մտան։ Ձայնը լսվում էր անասունների ախոռատնից, ուր բոլորովին մութ էր։ Ապոն շտապով խլեց ճրագը, որ վառվում էր խրճիթում, և երեքն էլ մտան ախոռատունը։ Նրանց աչքի առջև հանդիսացավ մի այսպիսի պատկեր. մի մանկահասակ աղջիկ, թոկի ծայրը վզովն անցկացրած կախված էր ախոռի առաստաղից. մի կին նրա ոտները գրկած, վեր էր բարձրացնում աղջկան, որ թոկը չխեղդե։ «Թո՛ղ տուր, թո՛ղ տուր»...— կրկնում էր աղջիկը նվաղած ձայնով։— «Վառվառե»...— կոչում էր կինը ցավալի ձայնով։

Նրանք շուտով կտրեցին թոկը և կիսաշունչ աղջկան ցած բերեցին իր ձեռքով պատրաստած կախաղանից։ Եթե մի րոպե ուշացել էին, ամեն բան վերջացած կլիներ, որովհետև կնոջ ձեռքերը արդեն սկսել էին թուլանալ և նրա մեջ այնքան ուժ չէր մնացել, որ կարողանար աղջկան ազատել։

Վառվառեին գրկած բերեցին խրճիթը։ Նա տակավին ուշքի չէր եկել։ Նա պառկած էր անկողնի մեջ, որ իսկույն պատրաստեցին նրա համար։ Նրա փոքր-ինչ կապտած դեմքի վրա եր-

բեմն երևում էին ցնցումներ, և նրա սեղմված շրթունքից լսելի էին լինում միևնույն խոսքերը՝ «թո՛ղ տուր»... Սուսանը լաց էր լինում և անիծում էր մեկին, որի անունը չէր հիշում։ Խեղճ կինը մի քանի անգամ մոտեցավ աղջկան, գրկեց նրա գեղեցիկ գլուխը, ասելով. «Վառվառե ջան, դու ինչո՞ւ էիր սպանում քեզ... դու ինչո՞վ էիր մեղավոր... թող ասված պատժե անըզգամին»...

Վարդանը իր ընկերների հետ հասկացան, որ մանկահասակ աղջկա վարմունքի մեջ թաքնված էր մի գաղտնիք։ Բայց գաղտնիքը լուծել դժվար եղավ, որովհետև Սուսանը ոչինչ չհայտնեց նրանց, և տան մեջ, բացի նրանցից և երկու փոքրիկ երեխաներից, ուրիշ ոչ ոք չկար։ Հայրապետը ծանոթ էր այդ ընտանիքի տղամարդի հետ։ Սուսանի ամուսինը՝ վարպետ Պետրոսը շատ անգամ գալիս էր ծերունի Խաչոյի տունը և նորոգում էր նրա երկրագործական անոթները։ Բայց նրա կնոջը Հայրապետը առաջին անգամն էր տեսնում։ Եվ եթե շատ անգամ ևս տեսած լիներ, և մինչև անգամ ծանոթ լիներ, դարձյալ գյուղացու կինը օտար մարդու հետ համարձակ չէր խոսում։ Նա միայն օրհնեց և շնորհակալություն հայտնեց, որ օգնեցին իրան, և խնդրեց, որ իր ամուսնին կանչել տան։

— Որտե՞ղ է նա,— հարցրեց Հայրապետը։

— Այս մոտիկ գյուղում,— պատասխանեց կինը,— գնացել է բանելու։

Նրանք կամենում էին դուրս գալ, որ մի մարդ գտնեն, ուղարկեն վարպետ Պետրոսին կանչելու։ Նույն միջոցին Վառվառեն աչքերը բաց արավ և ջուր խնդրեց։ Սուսանը իսկույն ջուր տվեց, որից բավական խմեց նա։ Աղջկա կապտագույն դեմքը այժմ գունաթափվել էր և աչքերի մեջ երևում էր կարմրություն, որը առաջ էր եկել արյան բորբոքումից։ Նա կրկին իր գլուխը դրեց բարձի վրա և վերմակը քաշեց երեսին։ Վերմակի տակից լսելի էր լինում նրա խուլ հեկեկանքը... Լացի այդ տխուր և գառն ձայնը, որքան և սրտաճմլիկ լիներ, այսուամենայնիվ, ուրախացրեց Վարդանին և նրա ընկերներին։ Նրանք այժմ մտածում էին, որ աղջկա կյանքը ազատված է։

Դրսում նրանք գտան մի տղա, որին մի քանի սև փող տալով ուղարկեցին վարպետ Պետրոսին կանչելու։ Դրացի Օհոն

դեռ կանգնած էր իր դռան մոտ։ Նա կրկին հրավիրեց Վարդանին իր ընկերների հետ, որ հյուր լինեն, ասելով.

— Հեր օրհնածներ, ո՞ւր եք գնում այդ մութ գիշերին։ Ա՜խ, թե գիտենայիք, երեկ գիշեր ի՜նչ քեֆ ունեինք,— ավելացրեց նա,— այս գիշեր էլ մի բան կսարքենք։

— Ի՞նչ քեֆ,— հարցրեց Հայրապետը։

Դրացի Օհոն խիստ ոգևորված սկսեց պատմել, թե Թոմաս էֆենդին հյուր էր վարպետ Պետրոսի տանը, ինքն ևս այնտեղ կանչված էր. «չալկիները» ածում էին, աղջիկները պար էին գալիս, շատ կերան, շատ խմեցին և շատ ուրախություններ արեցին, և վերջացրեց իր պատմությունը այս խոսքերով։

— Աստված վկա, շատ լավ մարդ է այդ Թոմաս էֆենդին, այնքան արաղ բերել տվեց, որ կարելի էր լողանալ մեջը։

— Եվ ձեր ամենիդ հարբեցրուց, այնպես չէ՞,— հարցրեց Վարդանը։

— Հեր օրհնած, այնքան խմելուց հետո ո՞վ չի հարբի,— պատասխանեց Օհոն ծիծաղելով,— քեֆն էլ հարբելու մեջն է։

— Տան տերը տա՞նն էր։

— Ես էի տան տիրոջ տեղը բռնել։

— Բայց դու հարբելուց հետո էֆենդին բռնեց քո տեղը... այնպես չէ՞։

— Ես ոչինչ չհասկացա, ինձ շալակած մեր տունն էին բերել։

Թողնելով Օհոյին, նրանք հեռացան։

Ճանապարհին Վարդանը ասաց Հայրապետին.

— Ես այժմ հասկանում եմ, թե այն խեղճ աղջիկը ի՞նչ պատճառով էր իրան խեղդում...

— Իսկ ես իմանում եմ, թե ո՞վ պետք է մատնած լինի պարոն Սալմանին...— խոսեց Հայրապետը։

— Կասկած չկա,— խոսեց Վարդանը,— որ Թոմաս էֆենդին մատնած կլինի։ Նա այն աստիճան խորամանկ մարդ է, որ անկարելի է նկատած չլիներ պարոն Սալմանի դիտավորությունները, և թուրք կառավարությանը մի ծառայություն անելու մտքով, նրան մատնած չլիներ։ Եվ գիշերը ինքն ևս այս գյուղում գտնվելով, շատ հասկանալի է, որ նրան բռնել տված կլիներ։ Եթե մենք ճանաչում ենք էֆենդու հոգին, այս բոլորը

այնպիսի ճշմարտություններ են, որ տարակուսելու պատճառ չկա։

Երեք ընկերների մեջ տիրեց լռություն։ Նրանք բավական դանդաղ քայլերով շարունակում էին ճանապարհը։ Ցուրքանչյուրը կենտրոնացած էր իր մեջ և մտածում էր, թե ինչ հնարքով կարելի էր երիտասարդի կյանքը ազատել։

— Բոլորը ինչ որ ասացիր ուղիղ է, Վարդան,— ընդհատեց Հայրապետը տիրող լռությունը,— հիմա ի՞նչ պետք է անել։

— Ես բավական ծանոթ եմ Թուրք աստիճանավորների Թույլ կողմերի հետ, թե որքան անհոգ են, որքան անճիշտ են, և որքան զանցառու են իրանց պարտականությունների մեջ,— պատասխանեց Վարդանը։— Եվ այս պատճառով, մտածում եմ, որ ինձ շատ հեշտ կլինի ազատել պարոն Սալմանին։ Ես ունեմ երկու ծառաներ, որոնց քաջությունը ձեզ լավ հայտնի է, մեր ձիաները պատրաստ են. հենց այս գիշեր կնստենք և կգնանք. ուր և տարած լինեն, մենք կարող ենք գտնել նրան. և եթե ուրիշ միջոցով հնար չլինի ազատել, գործ կդնենք մեր ուժը, Թուրք պահապանների երկչոտությունը ինձ վաղուց հայտնի է։

— Մենք էլ պատրաստ ենք քեզ հետ գալ,— պատասխանեցին Հայրապետը և Ապոն։— Մենք չենք Թողնի, որ դու մենակ գնաս։

— Ձեր ինձ հետ գալը ոչ միայն ավելորդ է, այլ մինչև անգամ վտանգավոր է,— պատասխանեց Վարդանը։ Եվ հիշելով շարշու խոսքերը, մտածեց փոքր-ինչ սպասել նրան, և ասաց իր ընկերներին.— Նստենք այստեղ, այսպես շտապ գնալով, դրժվար է խոսել կամ մտածել։

Կարծես, նա հոգնած էր, կարծես, վիշտը և տխրությունը ճնշել էին նրան իրանց ծանրության ներքո։ Եվ նրա սրտի մեջ հուզվում էր մի տեսակ ալեկոծություն, որ սկսել էր փոքր առ փոքր սաստկանալ...

Նրանք դուրս եկան ճանապարհից, քաշվեցան մի կողմը և նստեցին մի տաղավարի մեջ, որ շինված էր սեխանոցի մոտ։ Մշակներից ոչ ոք այնտեղ չէր մնացել սեխանոցը պահպանելու համար, որովհետև դեռ պտուղը հասած չէր և գողերից երկյուղ չկար։ Երկրագործի տաղավարը մի լավ մենարան է հոգնած ճանապարհորդի համար. այնտեղ կգտնե նա պատսպարան

Թե՛ ցերեկվա տոթի դեմ և Թե՛ հորդ անձրևների դեմ, որ այս կողմերում շատ են պատահում։

Գիշերը բավական պարզ էր, Թեև լուսին չկար։ Հեռվից նըշմարվում էին Օ... գյուղի խրճիթների ճրագները և երբեմն լսելի էին լինում շների խուլ, զգուշարար ձայները։

Վարդանը շարունակեց ընդհատված խոսակցությունը։ Նա կրկնեց, Թե պետք է ամեն հնարք գործ դնել պարոն Սալմանին իր կալանավորությունից ազատելու համար, որ անպատճառ կվերջանա մահվան պատիժով։ Բայց ինքը Հայրապետի և Ապոյի այս գործում մասնակցելը վտանգավոր է համարում գլխավորապես այն պատճառով, որ մի այսպիսի ձեռնարկություն կարող էր կամ հաջողվել և կամ չհաջողվել.— երկու դեպքում ևս Հայրապետը և Ապոն ազատ չէին մնալու Թուրքերի վրեժխնդրությունից։ Որովհետև այս գործը, ասաց նա, գուցե առանց արյան և առանց կռվի չի վերջանա, գուցե սպանություններ կլինեն, և եթե Հայրապետը և Ապոն մասնակցեն այն ժամանակ որպես տեղացիներ, անպատիժ չեն մնա, և բացի իրանցից, կպատժվեն այլև նրանց ազգականները ու ծերունի Խաչոյի ամբողջ ընտանիքը։ Բայց իր, Վարդանի համար այսպիսի երկյուղներ չկան։ Ինքը, որպես ուրիշ տերության հպատակ, որպես օտարական, կարող է իր դիտավորությունները կատարել և այնուհետև Թողնել ու հեռանալ այս երկրից. նրան ոչ ոք չէ կարող ըտնել, մանավանդ պատերազմական այդ խառն ժամանակներում։

Լսելով Վարդանի, որպես զանազան հանդուգն ձեռնարկությունների մեջ փորձված մարդու, երկար բացատրությունները, Հայրապետը և Ապոն պատասխանեցին.

— Մենք հագուստները կփոխենք և ոչ ոք չէ կարող ճանաչել մեզ։

— Միևնույն է, ինչ որ անելու լինեք, դարձյալ կհայտնվի։ Այստեղ պակաս չեն Թոմաս էֆենդու նման մարդիկ, որ ձեզ մատնեն։ Այստեղի հայերը, եթե մի առիթով կարող են շահել Թուրքի համակրությունը, չեն խնայի, Թեև նրանով վնասելու ևս լինեն իրանց ազգայիններին։ Հայը, ավելի քան օտարները, ինքն է իր Թշնամին։

Վերջին խոսքերը արտասանեց նա խորին վրդովմունքով։ Այն օրվա անցքերի տխուր տպավորությունները սաստիկ գրգռել

էին նրա ջղերը։ Մի կողմից իր հարգած երիտասարդի կալանավորությունը, մյուս կողմից ժողովրդի անտարբեր սառնասրտությունը, մի կողմից Թշվառ Վասվասեի անցքը, մյուս կողմից Թոմաս էֆենդու չարագործությունները, սաստիկ զայրացրել էին նրա սիրտը, Թեև այդ գարշելի մարդու ծերունի Խաչոյի տան մեջ կատարած վերջին ավուր բանսարկությունները նրան դեռ հայտնի չէին։ Այդ մատանջությունների և հուզմունքի մեջ նա համարյա մոռացել էր Լալային, այն նազելի էակին, որ նրա սրտում առաջին տեղն էր բռնում։ Հանկարծ աղջկա տխուր և աղաչավոր պատկերը երևեցավ նրան, և կարծես, ասում լիներ, «Ո՞ւր ես գնում. ինձ ինչո՞ւ ես Թողնում. գնում ես ազատելո՞ւ քո սիրած ընկերի կյանքը. ես էլ քո սիրելին եմ. ախար դու ինձ խոսք տվեցիր, որ կտանես, կհեռացնես այս երկրից. ախար այստեղ վատ է. ես վախենում եմ, շատ եմ վախենում քրդերից...»։

Վարդանի սրտում ծագեց զգացմունքների մի սաստիկ պատերազմ։ Երկու էակներ կանգնած էին նրա առջև. մեկը՝ սիրած աղջիկը, մյուսը՝ սիրած ընկերը։ Երկուսն էլ կարոտ էին օգնության, երկուսի կյանքն էլ վտանգի մեջ էր։

Քուրդ բեկից Լալային սպառնացող դժբախտությունը դեռ Վարդանին պարզապես հայտնի չէր։ Բայց նա գիտեր, Թե Թոմաս էֆենդին որպիսի Թակարդներ է լարում նրա առջև։ Նա գիտեր, որ այդ անբարոյական նպատակին հասնելու համար միջոցների մեջ խտրություն դնել սովոր չէ։

Փոքրիկ տաղավարի մեջ տիրեց առժամանակյա լռություն։ Նույնպիսի մի մտածություն այն րոպեում զբաղեցնում էր Հայրապետին։ Նրան հայտնի էր Լալայի և Վարդանի սերը. նա իր քույրը նշանակել էր այդ երիտասարդի համար։ Այժմ Վարդանը գնում էր, գնում էր իր ընկերին ազատելու համար։ Կամ կբսպանվեր և կամ կխլեր նրան Թուրքերի ձեռքից։ Երկու դեպքում ևս նա կկորցներ Լալային։ Գուցե մինչև նրա վերադարձը քուրդ բեկը հափշտակած և տարած կլիներ Լալային։ Եվ Վարդանը, երևի, չգիտեր այդ. և չէր էլ կարող գիտենալ, որովհետև նրան դեռ չէին հայտնել քուրդ բեկի դիտավորությունները։ Ինչո՞ւ այդ բոլորը չասել Վարդանին։ Բայց ինչպե՞ս ասել։ Վարդանը մինչև այն օրը ծերունի Խաչոյի ընտանիքից ոչ ոքի դեռ չէր հայտնել, Թե սիրում է Լալային և ցանկանում է, որ նա իր կինը

լինի։ Այդ գաղտնիքը գիտեր Սառան միայն, այն ևս պատահմամբ։ Իրերի հանկարծակի մինը մյուսի ետևից փոփոխությունը ժամանակ չտվեց Վարդանին իր սիրտը բաց անելու։ Այժմ մի նոր և վտանգավոր ձեռնարկություն բոլորովին բաժանում էր նրան Լալայից։ Այժմ միանգամից ոչնչանում էին Հայրապետի հույսերը, Թե Վարդանը կազատեր իր քրոջը և կվերառներ, կտաներ մի հեռու երկիր, ուր քուրդ բռնակալի ձեռքը այլևս չէր հասնի։

Մյուս կողմից, պարոն Սալմանի կորուստը ոչ սակավ տանջում էր Հայրապետին։ Նա այդ անձնվեր երիտասարդին սիրեց, համակերեց ավելի քան Թե Վարդանը։ Այժմ Թողնել նրան Թուրքերի ձեռքում, որ բանտերի խավարի մեջ մաշեն, տրորեն և սպանեն նրան,— այդ նույնպես անգթություն կլիներ։ Եվ այդ անգթությունը ավելի խիստ և ավելի դառն էր Թվում Հայրապետին, գլխավորապես այն պատճառով, որ ինքը պետք է առիթ տար Վարդանին ետ մնալու իր ձեռնարկությունից, որ ինքը պետք է խափաներ նրա բարի նպատակը պարոն Սալմանին ազատելու համար, երբ հայտնելու լիներ, Թե որպիսի վիճակ է սպասում իր քրոջը քուրդ բեկի կողմից։

Իրերի այսպիսի խճճված և խառնաշփոթ դրությունը ձգել էր Թե՛ Վարդանին և Թե՛ Հայրապետին նույնպիսի խառն մտածությունների մեջ։ Թե՛ Լալան և Թե՛ կալանավորված երիտասարդը շուտափույթ օգնություն էին պահանջում։ Բայց դեպի ո՞րը պետք է դիմել առաջ,— այդ հարցը դժվարացնում էր նրանց։

Բայց ի՞նչ էր մտածում այն րոպեում Ապոն, այդ շինական ընտանիքի չփչացած և քաջասիրտ որդին։— Նա իսկապես ոչինչ չէր մտածում։ Նա այն տեսակ մարդերից էր, որին դեպի որ կողմը քաշելու լինեն, այն կողմը կգնար, այն պայմանով միայն, որ դեպի վատ կողմը գնալու հակամտություն չուներ։ Ապոն մի լավ և հաջողակ գործիք էր կրակի միջից բաներ դուրս հանելու համար, գործածությունը կախված էր տիրոջ հմտությունից։

Վարդանի խոստովանությամբ փոքր-ինչ պարզվեցավ գործը։ Վարդանը, առանց մի կետ Թաքցնելու, հայտնեց երկու եղբայրներին իր սերը դեպի նրանց քույրը։ Հայտնեց, Թե ինքը խոսք է տվել Լալային, որ կփախցնե նրան և ստացել է աղջկա հոժարությունը։ Ասաց, Թե ինքը մի այդպիսի օտարոտի դի-

տավորությունը ստիպված է կատարել նրա համար միայն, որ հույս չունի, թե Լալայի հայրը կհամաձայնվեր աղջիկը իրան կնության տալու. որովհետև նա նկատել է և համոզված է, որ ծերունի Խաչոն աչք ունի Թոմաս էֆենդու վրա, և մտածում է նրան փեսայացնել։

— Այդ մարդու մասին ավելորդ է խոսել,— շարունակեց նա,— որովհետև դուք երկուսդ էլ նրան բավական ճանաչում եք, և ճանաչեցիք առավելապես այսօր։ Թոմաս էֆենդուն աղջիկ տալը միևնույն է, որպես գցել նրան գայլի կամ շան բերանը։

— Բայց ինձ տանջում է մեկ միտք,— հառաջ տարավ նա,— ես, որպես ձեզ հայտնեցի, պետք է գնամ պարոն Սալմանի ետնից, այդ ձեռնարկությունից ետ կանգնել ամենևին չեմ կարող։ Ցավակցությունը դեպի իմ այսպիսի բարեկամը և ընկերը ծանր պարտք է դնում ինձ վրա։ Բացի դրանից, ես ինձ մասամբ պատճառ եմ համարում, որ նա ընկավ այդ փորձանքի մեջ. ես նրան՝ խրախուսեցի, ես նրան հորդորեցի, ես ավելի վառեցի այն կրակը, որ բորբոքված էր նրա սրտի մեջ։ Դրանցով ես շտապեցրի նրա անկումը, ուրեմն պետք է աշխատեմ ազատել նրան։

— Մյուս կողմից,— հառաջ տարավ նա,— իմ առջև դրված է մի ահագին արգելք. չգիտեմ, թե ի՞նչ պետք է անել, արդյոք կարող եմ թողնել Լալային։ Գուցե այսօր կամ էգուց էֆենդին բանը այնպես կսարքե, որ Լալան այդ հրեշի կինը կլինի։ Ի՞նչ կլինի այնուհետև խեղճ Լալայի վիճակը։

Հայրապետը պատասխանեց, թե Լալան բոլորը պատմել էր իր կնոջը՝ Սառային և կինը հաղորդել էր իրան, և ինքը վաղուց գիտեր նրանց հոգեկան հարաբերությունները։ Եվ ինքը, և գուցե իր բոլոր եղբայրները շատ ուրախ կլինեին, եթե Վարդանը կըշտապեր օր առաջ փախցնել և տանել Լալային։

— Ոչ թե էֆենդու պատճառով,— ավելացրեց նա,— բայց կա մի ուրիշ և ավելի անհրաժեշտ պատճառ, որ ստիպում է շուտով հեռացնել Լալային մեր երկրից...

— Ուրիշ ի՞նչ պատճառ կա,— հարցրեց Վարդանը, և նրա աչքերը վառվեցան սրտի բարկությունից։

Հայրապետը մանրամասնորեն պատմեց քուրդ բեկի դիտավորությունը, պատմեց նրա տիկնոջ Խուրշիդի ընդդիմադրությունը իր ամուսնի կյանքի դեմ, պատմեց, թե ի՞նչ միջոցով Խուրշիդը հայտնեց Սառային բեկի նպատակը և խորհուրդ տվեց հեռացնել Լալային այդ երկրից,— մի խոսքով, Հայրապետը ասաց այն ամենը, ինչ որ մինչև այնօր կատարվել էր Լալայի վերաբերությամբ, և ինչ որ դեռ Վարդանին անհայտ էր։

Խորին դառնությամբ լսում էր Վարդանը Հայրապետի պատմությունը և նրա խոսքերը թունավոր նետերի նման ծակոտում էին խեղճ երիտասարդի սիրտը։

— Եվ դուք այդ ամենը գիտեի՞ք և ծածկում էիք ինձանից,— ասաց նա սաստիկ վրդովմունքով,— և դուք սպասում էիք, մինչև քուրդը գա, և օր ցերեկով ձեր քույրը հոր տնից հափշտակե ու տանե, և դուք աչքերդ բաց-բաց մտիկ տայիք, թե որպե՞ս են անպատվում ձեզ...

Այժմ Վարդանը հասկանում էր Լալայի այն տխուր և հուսահատական խոսքերի իմաստը, որ մինչև այն օր մնացել էր իր համար առանց բացատրության, հասկանում էր, թե ինչո՞ւ Լալան այն մութ գիշերային պահուն, երբ առաջին անգամ հանդիպեցավ իր հետ իր հոր տան պարտեզի մեջ, երբ պետք էր համբույրներով քաղցրացնել առանձնության ժամերը, երբ պետք էր սիրո և անսահման երջանկության վրա խոսել,— նա իր գեղեցիկ աչքերից արտասուք էր թափում, և օրհասական խռովության մեջ ասում էր այդ խոսքերը. «Ես Սոնայի մոտ չեմ գնա... ես վախենում եմ գերեզմանից... վախենում եմ քրդերից... ազատիր ինձ և տար մի ուրիշ երկիր»... Ուրեմն նա գիտեր, թե ինչ դառն վիճակ է սպասում իրան, և խորին ցավակցությամբ պատմում էր իր ընկերուհու՝ Նարգիսի անցքը, թե որպես հափշտակեցին, թե որպես տարան նրան քրդերը, որպես անբախտ ու տխուր էր այժմ Նարգիսը...

Լինում են րոպեներ, որ մարդը թշվառության, վտանգի և դառն պատահմունքների ամենասաստիկ հարվածների տակ ավելի քաջանում է, ավելի տոկուն, անխորտակելի սիրտ է ստանում և ավելի հանգստանում է։ Նա սկսում է այնուհետև արհամարհել շար բախտի հարվածները, երբ նրանք հասնում են մի հայտնի աստիճանի, որից ավելին սպասել չէր կարելի։

Նույն դրության մեջն էր գտնվում այժմ Վարդանը։ Նա այլևս չէր մաքառում մտքերի, զգացմունքների և հոգեկան տանջանքի խռովության հետ։ Նա այժմ հանգիստ էր։ Ամեն ինչ

միանգամով վճռվեցավ նրա մեջ։ Այժմ նա գիտեր, թե ինչ պետք էր անել։— Ընկերի սերը հաղթեց կնոջ սերին։—Ընկերի կորստյան մեջ սպանվում է զաղափարը, հարստահարված և թշվառ գյուղացու ազատության գաղափարը, որի մեջ բովանդակվում էր ոչ միայն Լալայի, այլ շատ հազարավոր կնիկների պատիվը և փրկությունը։ Ինչո՞ւ միայն Լալայի համար հոգալ, ինչո՞ւ թողնել ընդհանուրը և մասնավորի ետևից ընկնել... մտածում էր նա։

— Այս բոլորից հետո,—խոսեց Վարդանը,—ես պետք է կրկնեմ ձեզ միևնույնը, ինչ որ ասացի մի քանի րոպե առաջ։ Ես պետք է գնամ պարոն Սալմանի ետևից, և պետք է աշխատեմ, ինչ հնարքով և լինի, ազատել նրա կյանքը։ Իսկ Լալային, իհարկե, նույնպես անօգ թողնելու չէ. նրա մասին ևս պետք է մի կարգադրություն անել։ Ահա իմ խորհուրդը, լսեցեք...

— Ոչինչ կարգադրություն պետք չէ... լսելի եղավ մի ձայն և տաղավարի ետևից հայտնվեցավ կաղ շարչու հսկայական կերպարանքը։

Վարդանը, տեսնելով նրան, մի առանձին ուրախություն զգաց, բայց Հայրապետի և Ապոյի վրա խիստ անախորժ տպավորություն գործեց, երբ տեսավ, որ այդ թափառականը գաղտնի լսում էր իրանց խոսակցությունը։ Այդ օտարոտի մարդու մասին նրանք դեռ ոչինչ չգիտեին, բայց երբ նկատեցին, որ Վարդանը խիստ մտերմաբար բռնեց նրա ձեռքից և նստեցրուց իր մոտ, այն ժամանակ երկու եղբայրները փոքր-ինչ հանգստացան, մանավանդ երբ Վարդանը հայտնեց նրանց, ասելով՝ մի՛ կասկածեք, մեզանից է...

Բայց Մելիք-Մանսուրը այժմ այն չէր, որպես տեսել էին նրան մի քանի ժամ առաջ թափառական շարչու ցնցոտիների մեջ։ Ինքը՝ Վարդանը հազիվ կարողացավ ճանաչել նրան իր այժմյան նոր կերպարանափոխության մեջ։ Նա կրում էր լազերի ազգային համազգեստ և կատարելապես զինված էր։

— Ես ձեզ մոտ երկար մնալ չեմ կարող,—ասաց նա շտապելով,—ձեզ հայտնի է, որ մեր «դուդուկչին» ընկավ ծուղակի մեջ, պետք է ազատել նրան։

— Մենք էլ հենց այդ մասին էինք խոսում,—պատասխանեց Վարդանը։

— Դուք նրա մասին միամիտ կացեք, նա էգուց կամ մյուս

օրը ազատված կլինի,—ասաց նա կանգնելով։— Դուք միայն շարունակեցեք մեր ընդհանուր գործը։ Առայժմ բարի գիշեր։

— Դուք մենա՞կ եք գնում։

— Ոչ, իմ ընկերները այնտեղ սպասում են։

Նա ձեռքը պարզեց դեպի լեռան կողմը, ուր գիշերային խավարի միջից աղոտ կերպով երևում էին մի խումբ ձիավորներ։

— Ովքե՞ր են նրանք,—հարցրեց Վարդանը։

— Մի քանի լեռնցի երիտասարդներ։ Յտեսություն։

Վարդանը կամենում էր մի քանի բաներ ևս հարցնել, բայց նա հեռացել էր արդեն։

Հայրապետը և Ապոն բոլորովին ապշած մնացին։ Նրանք դեռ չգիտեին այդ գաղտնածածուկ անձնավորության ով կամ ինչ տեսակ մարդ լինելը։ Վարդանը հաղորդեց ինչ տեղեկություններ որ ուներ նրա մասին, և երկու եղբայրները այժմ համոզված էին, որ այդ հնարագետ մարդը կարող էր ազատել պարոն Սալմանին։

Նրանք վեր կացան և սկսեցին դիմել դեպի տուն։ Բայց Սաքոն և Եղոն՝ Վարդանի երկու ծառաները, որոնք ծերունի Խաչոյի խորհրդով ուղարկված էին, որ Վարդանին և իր որդիներին զգուշացնեն, որպեսզի նրանք տուն չվերադառնան,— Վարդանի այդ հավատարիմ արբանյակները, թեև ամբողջ օրը որոնեցին նրանց, բայց գտնել չկարողացան, որ հայտնեին, թե ի՞նչ էր սպասում նրանց ծերունի Խաչոյի տան մեջ։

— Եղո,— ասաց նրան իր ընկեր Սաքոն,— Բանը վատ է, մենք պետք է աշխատենք չբռնվել, որ եթե աղային մի բան պատահելու լինի, կարողանանք վրա տալ։

— Ես էլ այսպես եմ մտածում,— պատասխանեց Եղոն։

Երկու ընկերները վճռեցին հեռվից հսկել Վարդանի վրա և իրանց հեռու պահել ծերունու տնից։

Գիշերից բավական անցել էր, երբ Վարդանը, Հայրապետը և Ապոն վերադարձան տուն։ Նրանք դեռ չգիտեին, թե իրանց բացակայության ժամանակ ինչ էր պատահել տան մեջ։ Բոլորովին անկասկած կերպով ներս մտան և իսկույն նրանց ետևից դուռը փակվեցավ։ Երկու պահապան զինվորներ կանգնած էին այնտեղ։ Հիսնապետը իր անկարգ խումբով օդայի մեջն էր։ Մի քանի անզգամ զափթիաներ թափառում էին տան բակում, և որ-

սորդական շների նման, հոտ քաշելով որոնում էին մի բան ձեռք ձգել։

Տան հարսներին տարել էին դրացիների և ծնողների մոտ։ Այսպիսի դեպքերում—երբ մի տան վրա մեղադրանք է դրվում և նա գտնվում է զինվորների հսկողության ներքո, կնիկներին հեռացնում են տնից։

Տեսնելով այդ բոլորը, Վարդանը իր ընկերների հետ դարձյալ առաջին անգամից չհասկացան, թե ինչ է նշանակում այդ խառնիհաղանջ ամբոխը։ Որովհետև տանուտերի օդայում, որպես ամեն մի հայ գյուղացու տան մեջ, զինվորների խումբերով օթևանելը՝ այդ երկրում մի սովորական բան էր։ Եվ ամեն անգամ, երբ գյուղացին այս տեսակ հյուրեր է ընդունում, միշտ ստիպված է իր հարսին, կնոջը և աղջկան, իր հյուրի կրքերից աղատ պահելու համար, գիշերը դրացու տունը ուղարկել, եթե հյուրը այնքան բարի կլիներ, և իր սուրը տան տիրոջ կոկորդի վրա դնելով, չէր բռնադատի նրան, որ կնոջը տանը պահե իրան հյուրասիրելու և ծառայություն անելու համար։

Հայրապետի եղբայրներից մեկը, հանդիպելով նրան, զայրացած կերպով ասաց.

— Տեսա՞ր այն «պամպուլիկը» ինչ օյին բերեց մեր գլխին... հիմա եկ, դիվանի պատասխանը տուր...Ես հենց առաջին օրը, այն լայոտի վզակոթին տալով, դուրս կանեի մեր տնից, բայց դու սատանայի նման հակառակ եղար, և չթողեցիր... Հիմա եկ, պատասխան տուր...

Հայրապետը ոչինչ չխոսեց, նա հասկացավ, որ եղբոր հայհոյանքները վերաբերում են պարոն Սալմանին։ Նա հասկացավ տխուր եղելությունը...

— Մեր տղա, մենք էլ ընկանք ծուղակի մեջ...—ասաց նրան Վարդանը ծիծաղելով։— Այդ էր պակաս...

Իսկույն մի քանի զափթիաներ մոտեցան, և նրանց բռնելով, տարան օդան, հիսնապետի մոտ։ Թոմաս էֆենդին այնտեղ չէր։ Նա իր կարգադրությունները կատարելուց հետո հեռացել էր, և այս գիշեր, որպես հյուր, գտնվում էր գյուղի քահանայի տանը։ Օդայի մեջ, բացի ծերունի խաչոյից և հիսնապետից, ուրիշ մարդ չկար. միայն մի քանի զինվորներ կանգնած էին դռանը։ Վարդանը, ներս մտնելով, անցավ և նստեց տանուտերի մոտ, առանց

սպասելու, որ թուրք աստիճանավորը նրան թույլ տար նստելու Հայրապետը և Ապոն մնացին ոտի վրա։

Վարդանի վարմունքը հիսնապետին ծանր երևեցավ և նա բավական արհամարհական կերպով հարցրեց նրանից.

— Դուք որտեղացի՞ եք, հայ։

«Հայ» բառը գործ դրեց նախատական մտքով։

— Ռուսաստանցի,— պատասխանեց Վարդանը զսպելով իր վրդովմունքը։

— Ի՞նչ գործով եք եկել այստեղ։

— Առևտուր եմ անում այս կողմերում։

— Անցագիր ունե՞ք։

— Ունեի, բայց կորցրել եմ։

— Այդ հեշտ է ստուգել, դուք միայն ասացեք, թե սահմանագլխին ո՞ր մաքսատնից և երբ անցաք, մենք կհարցնենք, այնտեղ ձեր անցագրի համարը և անունը գրված կլինի։

— Ես կանտրաբանդիստ եմ, այս արհեստով պարապող մարդիկ մաքսատան չեն մոտենում։ Այն էլ կասեմ, որ ես հենց առաջուց անցագիր չունեի։

— Այդ գուցե ձեզ կներվեր, եթե դուք միայն կանտրաբանդիստ լինեիք, բայց դուք մեղադրվում եք մի ուրիշ հանցանքով ևս։

— Ինչո՞վ։

— Դուք լրտես եք։

— Ուղիղ է... երևի, Թոմաս էֆենդին է հաղորդել ձեզ... իսկապես նա շատ ճշմարտախոս մարդ է...—ասաց Վարդանը հեգնական եղանակով։

— Այդ միևնույն է, թե ով է հաղորդել,—պատասխանեց հիսնապետը, պահպանելով պաշտոնական մարդու սառնասրտությունը.—կասկածավոր մարդիկ, մանավանդ այս պատերազմական ժամանակներում, մենք մեր երկրում չենք թողնում։ Ձեզ այս գիշեր կպահեն այստեղ և առավոտյան կտանեն զինվորական գործակատարի մոտ։ Նա կկարգադրե ձեր վիճակը։

— Ուրեմն ի՞նչ հարկ կար այդ բոլոր հարցափորձերը անելու, երբ իմ վիճակը զինվորական գործակատարի մոտ պետք է վճռվի։ Դուք կարող էիք հենց սկզբից կալանավորել ինձ և ավելի ոչինչ։ Բայց ձեր սովորությունն է։ Այստեղ վերջին զափթիան անգամ, երբ ուղարկվում է մի հանցավորի ետևից, նա կա-

տարում է այն բոլորը, ինձ որ պետք է ձեր բարձր դատարանը։

Հիսնապետը թեև վիրավորվեցավ, բայց ոչինչ չպատասխանեց։ Նա կանչեց չորս զափթիաներ և հրամայեց, որ տանեն և պահեն Վարդանին։ Նա ամենևին ընդդիմադրություն գործ չդրեց և թույլ տվեց, որ կալանավորեն իրան։

Վարդանին տանելուց հետո հիսնապետը դարձավ դեպի Հայրապետը և Ապոն։

— Դրանցից ոչինչ հարցնել պետք չէ,—հրամայեց նա,— դրանց հանցանքը հայտնի է, տարեք, զգուշությամբ պահեցեք։

Ներունի Խաչոն խորին թմրության մեջ, որպես մի կիսաքուն և կիսարթուն մարդ, կարծես, երազի մեջ տեսնում էր այդ բոլորը։ Ինչո՞ւ էֆենդին խաբեց իրան։ Մի՞թե այդ բոլորը ձևի համար էր կատարվում, որպես հավատացնում էր էֆենդին։

Վարդանին, Հայրապետին և Ապոյին տարան և կողպեցին մի շինվածքի մեջ, որ ծառայում էր որպես ցորենի ամբար։ Նրա հատակը և պատերը կառուցված էին քարից։ Կրով ամուր կպցրած միմյանց հետ, որ մկները չկարողանան ծակել և ցորենը փչացնել. լուսամուտները նեղ էին և պատած ցանցատեսակ երկաթով, որ արգելում էին թռչունների ներս մտնելը։ Այս շինվածքը ամեն հարմարություն ուներ այս գիշեր բավական ամուր բանտի փոխարեն ծառայելու։ Մի անկյունում վառվում էր յուղային ճրագ և տարածում էր իր լույսը ամբարի խավարի կամարների մեջ։

Հայրապետը և Ապոն լուռ էին. նրանց դեմքի վրա նկարված էին խորին հուսահատական տխրություն դառն զարհուրանքի հետ։ Նրանց հայտնի էր թուրք աստիճանավորների անգթությունը, որ մի ամենաչնչին հանցանքը պատճառ բռնելով և շատ անգամ մեղադրությունները իրանք հեղինակելով, և արդարին հանցանքի մեջ զրպարտելով,—միշտ պատրաստ էին կեղեքել, մաշել և ոչնչացնել անմեղներին, մանավանդ երբ նրանք հայ էին և փոքրիշատե ունևոր մարդիկ էին։ Իսկ այժմ հանցավոր համարվելու համար բավական ապացույցներ կային։ Բայց որպե՞ս հայտնվեցան, ո՞վ պետք է մատնած լիներ։—Այդ մասին նրանք մի որոշ կարծիք կազմել չէին կարողանում։

Վարդանը, կարծես, հանգիստ էր։ Նրա հանգստությունը նմանում էր մրրկածուփ ծովի խաղաղությանը, որ տիրում է ալեկոծությունից հետո։

— Ես ձեզ մի առակով կբացատրեմ բոլորը,—ասաց նա իր բանտակիցներին.—անտառի ծառերը լուր տարան իրանց թագավորին, ասելով, թե հայտնվել է մի գործիք, որ մեզ անխնա կոտորում է։—«Ինչպե՞ս է կոչվում այդ գործիքը»,—հարցրեց թագավորը։—«Տապար»,—պատասխանեցին ծառերը։— «Ինչպե՞ս է կազմված նա»,—հարցրեց թագավորը։— «Գլուխը երկաթից է, բայց կոթը փայտից»,—պատասխանեցին ծառերը։— «Դա շատ վտանգավոր գործիք է,—պատասխանեց թագավորը։—երբ կոթը մեզանից է...»

— Կո՛թը մեզանից է...—կրկնեց Վարդանը շեշտելով առաջին բառը։—Մեզ հարստահարող, մեզ տանջող, մեզ ստրկացնող, մեզ ոչնչացնող, և մեր տունը քանդող գործիքի կոթը մեզանից՝ հայերիցս է։ Թոմաս էֆենդիները, սկսյալ գյուղական մուլթեզիմից մինչև Բարձր Դռան հայ ամիրան, այս տեսակ կոթեր են մեր թշնամիների ձեռքում։ Հայոց պատմության մեջ երբեք պակաս չեն եղել այս չար և վնասակար կոթերը։ Ուր կտեսնեք հայրենիքը և ազգը օտարի ձեռքը մատնելը— այնտեղ խառն է եղել հայի մատը։ Ուր կտեսնեք հայ թագավորի գահընկեցությունը և նրա գավազանը օտարի ձեռքը հանձնելը— այնտեղ խառն է եղել հայի մատը։ Ուր կտեսնեք հայ թագավորի դեպի աքսոր մատնություն և նրա մայրաքաղաքի դռները թշնամու առջև բաց անելը,— այնտեղ խառն է եղել հայի մատը։ Ուր կտեսնեք հայրենի հողը հայի արյունով ներկված, նրա բընակությունները կրակով ոչնչացրած և նրա զավակները գերի տարված,— այնտեղ խառն է եղել հայի մատը։ Ուր կտեսնեք կրոնի, ազգության և սուրբ եկեղեցու դավաճանություն,— այնտեղ խառն է եղել հայի մատը։ Մի խոսքով, ամեն թշվառությունների մեջ, ամեն հալածանքների մեջ, և մեր թշնամիներից կրած ամեն տեսակ եղեռնագործությունների և բարբարոսությունների մեջ միշտ գործել է հայի տապարը։ Հայը ինքն է փորել իր ազգային շինվածքի հիմքը և ինքն իր ձեռքով է կործանել իր սուրբ և նվիրական հաստատությունները... Ինչո՞ւ ենք մեղադրում օտարներին։

Ապոն և Հայրապետը խորին տխրությամբ լսում էին Վարդանի խոսքերը, վերջինը հարցրեց.

— Ուրեմն մեր բոլոր հույսերը ոչնչացան... ուրեմն մեր շին-

վածքը դեռ իր հիմքի մեջ, դեռ կատար չհասած, կործանվեցավ...

— Ես, կարծես մարգարեի հոգով նախագուշակում էի, որ այսպես կվերջանա, և մի ուրիշ վախճան սպասելը՝ հիմարություն կլիներ,— պատասխանեց Վարդանը։— Ինքը՝ պարոն Սալմանը նույնպես երկբայության մեջ էր, և հաղիվ հավատում էր իր սկսած գործին։ Ես բառ առ բառ հիշում եմ նրա հուսահատական խոսքերը, երբ մի անգամ այդ եռանդով լի երիտասարդը ասում էր ինձ.— «Երբ որևիցե ժողովրդական շարժման գաղափարը մի քանի անհատների երևակայության ցնորք է միայն, և տակավին չէ ընդհանրացել, չէ տարրացել ամբոխի գոնե մի մասի մեջ— մի հարվածով կարելի է ոչնչացնել բոլորը, երբ առաջնորդող անձինքը ոչնչացրած կլինեն։ Բայց ամբոխը ուրիշ բան է. ամբոխի մեջ միտքը սպանել անհնարին է»։

— «Մենք,— ասում էր նա,— այժմ միայն սերմնացանի պաշտոն պիտի կատարենք, բայց ոչ հնձողի։ Հունձը պիտի թողնենք ապագա սերունդին»։ Եվ այդ էր պատճառը, որ վերջին օրերում նա ձեռնարկեց կառուցանել ավելի հաստատուն, ավելի նպատակահարմար հիմնարկություններ, որպես էին դպրոցները։ Պարոն Սալմանի գործունեությունը ապստամբական նպատակ չուներ։ Նա կրում էր ավելի հեղափոխական բնավորություն, որ հետո ստացավ բոլորովին նախապատրաստական կերպարանք։ Մի անգամ դիմեց նա ինձ մի առանձին ուրախ ժպիտով, որ երբեք չէի նկատել նրա միշտ սառն դեմքի վրա։ «Վարդան,— ասաց նա,— մենք, որ հանձն ենք առել ժողովուրդ կրթելու գործը, դեռևս ինքներս անկիրթ ենք, դեռևս շատ բան պիտի սովորենք նույն իսկ ժողովրդից։ Ժողովուրդը մի մեծ վարժապետ է։ Նրա մի հատիկ առածի մեջ անհուն փիլիսոփայություն կա։ Լսիր,— ասաց նա,— թե ինչպես է ժողովուրդը արտահայտում իր հարաբերության պայմանները թուրքերի հետ. «Շան հետ հաշտ եղիր, բայց փայտը ձեռքիցդ բաց մի՛ թող»։ Եվ արդարև, այդ առածի մեջ բովանդակվում են զլխավոր պայմանները, թե որպես պետք էր վարվել մահմեդականների հետ։ Նրանք կծոտողներ են, նրանց ատամներից չվիրավորվելու համար, պետք է միշտ փայտը ձեռքում պատրաստ ունենալ։ Եվ այդ էր պատճառը, որ պարոն Սալմանը աշխատում էր զինվորել ժողովուրդը և նրան պաշտպանողական դիրքի մեջ դնել։

Հայրապետը և Ապոն խորին ուշադրությամբ լսում էին։ Նրանք, կարծես, մոռացել էին իրանց սեփական ցավը, մոռացել էին այն դառն վիճակը, որ առավոտյան սպասում էր իրանց, և այժմ մտածում էին մի ընդհանուր ցավի վրա։ Նրանք շատ անգամ լսել էին պարոն Սալմանից նույնպիսի մտքեր, բայց մինչև այսօր այնպես պարզ չէին ըմբռնում նրանց իմաստը, որպես այժմ։

Բանտը, կարծես, ոգևորել էր Վարդանին։ Նա խոսում էր առանց լռելու։ Նա իր կյանքում շատ անգամ բանտ էր մտել և դուրս եկել, բայց բանտը միշտ տխուր տպավորություն էր թողել նրա վրա։ Իսկ այժմ զգում էր մի տեսակ բավականություն։ Նա նմանվում էր մի դատապարտյալի, որ մահվան սյունի վրա, խորին արհամարհանքով նայում է դեպի անարդար աշխարհը և ծիծաղում է չար մարդերի թեթևամտության վրա, իր մտքի մեջ ասելով. «Ահա՛ ձեր բոլոր ուժը, դրանից ավելի էլ ի՞նչ կարող եք անել... դուք սպանում եք իմ մարմինը, բայց չեք կարող սպանել իմ սերմանած մտքերը...»։

— «Շան հետ հաշտ եղի՛ր, բայց փայտը ձեռքիցդ բաց մի՛ թող»...— հառաջ տարավ Վարդանը։— Այդ ուղիղ է։ Կենսական պայմանների այդ դրությունը ծնում է հրեշներ՝ ինձ նման հրեշներ... Դուք, բարեկամներ, երևի, դեռ այնքան չեք ճանաչել ինձ, որպես ես եմ իսկապես։ Բայց որովհետև, գուցե այդ վերջին գիշերը կլինի, որ կարող եմ խոսել ձեզ հետ, ուրեմն լսեցեք։ Ես այն մարդերից եմ, որ շատ վաղ սովորեցի չարը չարով վճարել։ Իմ ձեռքերը շատ անգամ շաղախված են եղել արյունով, բայց ոչ երբեք մի անմեղ արյունով։ Ես մի ժամանակ կրոնավոր էի և հին կտակարանից այսքանը միայն սովորեցա՝ «ակն ընդ ական»։ Երբ կարդացի, որ Մովսեսը, Եհովայի մարգարեն, ազգասիրությունից դրդված սպանեց հրեային հալածող եգիպտացուն և նրա մարմինը ծածկեց Նեղոսի ավազների մեջ, իմ սիրտը լցվեցավ մի անսահման ատելությամբ դեպի այն ազգերը, որ նույնպես հալածում են հայերին։ Երբ կարդացի, որ Մովսեսը, Եհովայի մարգարեն, ամբողջ ցեղեր ոչնչացրեց, մինչև կարողացավ ուխտյալ երկիրը մաքրել օտարներից և Իսրայելի որդիներին բնակեցնել նրանց տեղը, ես մտածեցի, թե նույնպես պետք է վարվել թուրքերի, քրդերի և չերքեզների հետ, որոնք բռնացել են մեր հայրերից մեզ մնացած ժառանգության վրա։

Դա բնության միևնույն օրենքն է, որ պարոն Սալմանը բացատրում էր բույսերի օրինակով։ Բույսերի մի տեսակը ճնշում է, խեղդում է, ոչնչացնում է մի ուրիշ տեսակին, և ինքը բռնում է նրա տեղը։ Եթե չենք ցանկանում, որ գոյության այդ կռվի մեջ ոչնչանանք, պետք է ընդդիմադրության ուժ և դիմադրություն ունենանք. և այդ հատկությունը կոչվում է անձնապաշտպանություն։ Պարոն Սալմանի գլխավոր նպատակը այն էր, որ ժողովրդի մեջ զարգացնի այդ հատկությունը։

— Ես վաղօրոք սեփականեցի այդ հատկությունը։ Գուցե բարոյագետը կանվանե ինձ անբարոյական, հեղինակագործ, գազան, գուցե քահանան մեղավոր կհամարե ինձ, բայց փույթ չէ, ես պետք է վարվեմ այնպես, ինչ որ պահանջում է կյանքը։ Իսկ երբ մարդիկ կդադարեն չար լինելուց, երբ խաղաղությունը և քրիստոնեական եղբայրասիրությունը կթագավորեն աշխարհի վրա, ես պատրաստ եմ լինել ամենաբարին և համբուրվել իմ թշնամիների հետ...

Այսպես դեռ երկար խոսում էին նրանք, մինչև ճրագի մեջ վառված եղը սպառվեցավ, մի քանի բոպե պլպլաց, ծխրտաց և ապա հանգավ։ Բանտի մեջ տիրեց մթին խավարը։

ԼԱ

Միևնույն գիշերը, երբ Վարդանը, Հայրապետը և Ապոն բանտի մեջ փիլիսոփայություններ էին անում, խորհում էին դժբախտ հայրենիքի դժբախտ ժողովրդի մասին,— Թոմաս էֆենդին գտնվում էր գյուղի քահանայի՝ տեր-Մարուքի տան մեջ, և ընթրիքից հետո ուրախ, զվարթ, շատախոսում էր և հանաքներ էր անում տերտերի հետ։

Դա միևնույն տերտերն էր, որ այնքան հոգսեր պատճառեց պարոն Սալմանին, իսկ այժմ լսելով նրա կորուստը, ցավում էր, ոչ այն պատճառով, որ ասպարեզից պիտի սնահետանար մի նշանավոր գործիչ, այլ առհասարակ հայի կորուստը ցավալի էր նրա համար։ Տեր հայրը չար մարդ չէր, և եթե նա ընդդիմություն էր գործում, կամենում էր խանգարել պարոն Սալմանի դպրոցների գործը,— այդ դարձյալ նրա բարի ցանկություններից էր առաջ գալիս, որովհետև վնասակար էր համարում։

Նա մի ժամանակ հասարակ գյուղացի էր, փոքրիշատե գրել-կարդալ սովորել էր իր մանկության ժամանակ ս. Հովհաննու վանքում։ Գյուղատնտեսության մեջ նրան չհաջողվեցավ, աղքատացավ և գնաց օտար երկիր բախտ որոնելու։ Պանդխտության մեջ նույնպես չհաջողվեցավ նրան. մի ժամանակ Վան քաղաքում դաճվեշի էր, գործերը վատ գնացին, վնասվեցավ, և առանց մի փարա վաստակելու, վերադարձավ իր հայրենիքը։ Այստեղ ապրուստի մի ուրիշ միջոց չդտնելով, տերտեր-դարձավ։

Այն գիշեր քահանայի տանը հրավիրված էր և գյուղի մանկավարժը, երևելի տիրացու Սիմոնը, որ տեր հոր փեսան էր։ Այդ մարդը մեծ կարծիք ուներ իր գիտության վրա (գյուղացիներն ևս նույն կարծիքն ունեին նրա մասին) և առավելապես հպարտանում էր նրանով, որ տեր հոր փեսան էր։

Խոսակցության առարկան այն օր ծերունի Խաչոյի տան մեջ պատահած անցքերն էին, որ մեծ սարսափ էին գցել բոլոր գյուղացիների վրա, առավելապես անհանգստացնում էին տեր հորը։

— «Էշը կդատի, ձին կուտի», տեր հայր,— շարունակեց էֆենդին ընդհատված խոսակցությունը,— աշխարհի կարգը միշտ այդպես է եղել և այդպես էլ կշարունակվի։ Այն որ աստված է կարգադրել, մարդը չի կարող փոխել։ Աստված մեկին աղա է ստեղծել, մյուսին մշակ։ Մեկը կդատե, մյուսը կուտե։ Հայը սովորել է աշխատանքին, քուրդը և թուրքը սովորել են ուտելուն։ Եթե աշխատողը չլինի, ուտողը չէ կարող ապրել։ Եթե ուտողը չլինի, աշխատողը չէ կարող ապրել։ Թուրքերը մեզ պահում են իրանց սրով, մենք էլ պետք է պահենք նրանց մեր աշխատանքով։ Աստված թուրքի ձեռքում սուր է տվել, իսկ հայի ձեռքում— բահ։ Մեկը մյուսի տեղը չի կարող բռնել։

— Այդ իրավ է,— պատասխանեց քահանան, երեսը խաչակնքելով,— տերն մեր Հիսուս Քրիստոս սուրբ Ավետարանի մեջ հենց այդպես է ասում, որ առանց աստուծո կամքին տերևն էլ ծառից ցած չէ ընկնում. առանց նրա կամքին մի մազ էլ մարդու գլխի վրա չէ սպիտակում. բոլորը նրա ձեռքումն է։

— Այդպես է, ճշմարիտ է...— հաստատեց և տիրացու Սիմոնը, նույնպես երեսը խաչակնքելով։

Հետո նրանք սկսեցին խոսել գյուղացիների, պատերազմի պատճառով ավելի սաստկացած, հարստահարությունների վրա։ Տերտերը, բոլորին իր անձնական շահերի կետից նայելով կատարվող հափշտակությունների վրա, գանգատվում էր, ասելով,

թե կառավարության հարկերը այն աստիճան ծանրացել են, որ բոլորովին սպառում են գյուղացիների արդյունաբերությունը, և եթե մի բան մնում է, այն էլ քրդերն են տանում, այդ պատճառով ինքը շատ վատ է վարձատրվում, շատ անգամ պսակ, մկրտություն և թաղում է կատարում, առանց մի փարա ստանալու։ Գյուղացիները խոստանում են, թե հետո կվճարեն, բայց կամ չեն կարողանում տալ, կամ խաբում են, և դրա համար տերտերը այժմ գյուղի մեջ շատ ապառիկներ ունի, և վճռել է այսուհետև չկնքել, չպսակել և չթաղել, մինչև վարձը սկզբում վճարելու չլինեն, որովհետև ինքն էլ մարդ է և ապրել է ուզում։

— Տեր հայր,— պատասխանեց էֆենդին գործագետ մարդու եղանակով,— գյուղացուն դուք այնքան չեք ճանաչում, որքան ես եմ ճանաչում։ «Աստված գյուղացուն մի հոգի է տվել, այն էլ չի կարողանում առնել», բայց երբ հոգեհոն հրեշտակը սուրը ձեռին կանգնում է նրա գլխին, այն ժամանակն է տալիս հոգին։ Դրանից պետք է մենք օրինակ վեր առնենք։ Գյուղացին առանց այն «օրհնյալ փայտը» տեսնելու, փող չի տա։ Դուք ձեր ապառիկների հաշիվը պատրաստեցեք, Բուղթը հանձնեցեք ինձ, ես կտամ իմ գափթիաներից մեկին, նա կհավաքե։ Ես չեմ թողնի, որ ձեր մի փարան էլ կորչի։

— Օրհնյալ եղերուք, ասված ձեզ երկար կյանս պարգևեսցե,— պատասխանեց քահանան,— հաշիվը այժմս էլ պատրաստ է։

— Կարդացեք, տեսնեմ որքան է։

Տերտերը դուրս բերավ ծոցից մի թերթ թուղթ, կեղտոտ, յուղոտած, դեղնած, և երկար տարիներ նրա ծոցում պահվելով բոլորովին քրքրված և իր վաղեմի գույնը կորցրած։ Դա նրա հաշիվագիրքն էր։ Թերթի չորս երեսների վրա, խոշոր տառերով, ծուռումուռ տողերով գրված էին տեր հոր ապառիկները։ Նա թուղթը մոտեցրուց աչքերին, փորձ փորձեց կարդալ, բայց կարդալ չկարողանալով, թերթը տվեց վարժապետին, ասելով.

— Ա՛ռ, տիրացու Սիմոն, դու կարդա, իմ աչքերը չեն ջոկում։

Տիրացու Սիմոնը առեց հաշիվը, մի քանի անգամ հազաց, ծոծրակը քորեց, ուղղվեցավ, և թերթը մոտեցնելով աչքերին սկսեց կարդալ այնպիսի մի ճառական եղանակով, որ կարծես, կոնդակ էր կարդում։

— «Զոլախ Մկոյի աղջիկը կնքեցի, փողը մնաց 5 ղուրուշ, աղջիկը մեկ շաբաթից հետո մեռավ, թաղեցի, փողը մնաց 7 ղուրուշ։ Խլոյի տղան պսակեցի, փողը մնաց 10 ղուրուշ ստացա 30 խուրձ խոտ. փողը կանե 3 ղուրուշ։ Փանոյի կնիկը հիվանդ էր, գնացի նրա տունը, երեք գլուխ բժշկական ավետարան կարդացի, փողը մնաց 3 ղուրուշ։ Սագոյի տղան խաչը ջրից հանեց. Բարսոն 30 ղուրուշ էր տալիս, որ ինքը հանե. ես Սագոյին խաթր արեցի, 20 ղուրուշով բարիշեցա, փողը մնաց 20 ղուրուշ. ասաց կալի ժամանակը ցորեն կտամ, գնացի, ուզեցի, չտվեց, գգիրն էլ վկա է»...

Եվ այսպես, մինը մյուսի ետևից գրված էր մի ահագին պատմություն։ Դա իսկապես հաշիվ չէր, այլ տեր հոր քահանայական գործունեության մի քանի տարվա ժամանակագրությունն էր, թեև խառնափնթոր կերպով նկարագրված, բայց բովանդակում էր իր մեջ բավական փաստեր, թե ինչով է զբաղվում գյուղական տերտերը։

— Օրինավոր հաշիվ է,— ասաց էֆենդին, ընդհատելով և չկարողանալով համբերել, մինչև տիրացուն կվերջացներ բոլորի «ընթերցանությունը»։— Դուք, տեր հայր, հանձնեցեք այդ թուղթը ինձ, ես բոլորը հավաքել կտամ։ Ն... շենի գյուղացիներն էլ վանքի «պտուղը» ուշացնում էին, իր ժամանակին չէին տալիս, վարդապետը մի նամակ գրեց ինձ, ես բոլորը մի օրվա մեջ հավաքել տվեցի, հետո վանքից օրհնության գիր ստացա։

Տերտերը այնքան բնական էր համարում այդ միջոցով իր ապառիկները հավաքելը, որ ոչ միայն համաձայնվեցավ էֆենդու առաջարկության, այլ կրկին շնորհակալություն հայտնեց և կրկին սկսեց օրհնել նրա թանկագին կյանքը։

Բայց ինչո՞ւ էֆենդին հանձն առեց կատարել այս ծառայությունը։ Նա այն տեսակ մարդերից էր, որ առանց նպատակի, առանց իր սեփական շահերի, ոչ ոքին լավություն չէր անի։ Այժմ ի՞նչն ստիպեց նրան այնքան բարի լինել, որ մինչև անգամ խոստացավ հավաքած գումարից տասանորդ չվեր առնել, որ սովորաբար ստացվում էր, երբ որևիցե գումար վճարվում էր կառավարության պաշտոնյաների հրամանով։

— Հայր Աբրահամի օրհնությունը թող ձեզ վրա լինի, զորանաք,— ասաց քահանան, լսելով էֆենդու վերջին խոստումը։

Ապառիկների մի այնպիսի ցուցակ էլ տիրացու Սիմոնի ծոցումն էր պահված, նա էլ իր աշակերտներից ստանալիքներ ուներ, և մտածում էր հաշիվը ներկայացնել էֆենդուն։ Բայց տերտերը նրա ականջին ասաց. «Թող իմը հավաքի, քոնը հետո»։

Տեր-Մարուքի ընտանիքը շատ փոքր էր թվով. նրա միակ որդին վախճանվեցավ, թողնելով իր կինը այրի երկու փոքրիկ երեխաների հետ։ Հարսը ամուսնի մահից հետո էլ մարդու չդրնաց. մնաց քահանայի տանը և խնամք էր տանում իր որդիներին։ Ինքը տեր հայրը վաղուց զրկված էր իր տիրուհուց և բոլորովին ամուրի կյանք էր վարում։

Այս գիշեր հարսը, հյուրերին ընթրիք տալուց հետո, զբաղված էր իր զավակով, որ սաստիկ հիվանդ էր։ Նստած նրա մահճի մոտ, ողորմելի կինը խորին տխրությամբ նայում էր հիվանդի երեսին, շոշափում էր նրա ջերմ թաթիկները և լսում էր նրա ծանր շնչառությունը։ Այդ զավակի մեջ նա գտնում էր պատկերը այն տղամարդի, որին սիրում էր. այդ զավակի մեջ գտնում էր դժբախտ մայրը իր մխիթարությունը կորցրած ամուսնի մահից հետո։ Նա համարյա չէր լսում, և ուշադրություն ևս չէր դարձնում, թե ինչ է խոսվում տան մեջ. այլ միանգամայն գութ և գորով դարձած, աչքի առջև իր հիվանդ մանուկին էր միայն տեսնում։

Բայց տերտերը, ուրախացած էֆենդու խոստմունքներով, կամեցավ իրանց ուրախությունը ավելի կատարյալ անել և հրամայեց հարսին լցնել արաղի շիշը, որ արդեն դատարկված էր, բացի դրանից մազա[1] պատրաստել։ Թեև ընթրիքը վերջացած էր, բայց տեղային սովորության համեմատ, հարգելի հյուրին մի առանձին պատիվ տրված կլիներ, եթե խմելը կշարունակվեր։

Հարսը այն աստիճան շփոթված էր, որ քահանան երկու անգամ կրկնեց իր հրամանը, մինչև նա կարողացավ հասկանալ, թե ինչ էր ուզում տերտերը։ Արաղ կարելի էր գտնել. նա շիշը լցրեց. այդ պաշարը միշտ անպակաս էր լինում տեր հոր տնից։ Բայց ինչո՞վ պատրաստել «մազան»։ Տանը քաղցրեղեն չկար։ Հայտնել այդ մասին՝ մինչև անգամ ամոթ էր։ Հայ մարդու տանը հյուրի համար ամեն բան պետք է գտնվի։ Նա մտածեց գնալ և հարևանից փոխ առնել։

Դրսում սաստիկ մութն էր և անձրևը հեղեղի նման թափվում էր երկնքից։ Խեղճ կինը դուրս եկավ բակը, անցավ ցեխի միջից, բարձրացավ կտուրի վրա, որ այնտեղից իջնե հարևանի տունը։ Այդ միջոցում նա լսեց, որ հարևանի դուռը սաստիկ ծեծում էին, և դրսից թուրքերեն լեզվով սպառնալիքներ էին կարդում, հրամայելով, որ բաց անեն. իսկ ներսից երդումներով պատասխանում էին, թե այստեղ չեն պահված նրանք, որոնց պտռում եք... Բայց ո՞ւմն էին պտռում. ի՞նչ թուրքեր էին դրանք, որ գիշերային այդ տարաժամ պահուն աշխատում էին ներս խուժել մի հայ տուն։

Զուլոն—այսպես էր տերտերի հարսի անունը— լսելով փողոցի աղմուկը, սաստիկ վախեցավ, և երկյուղից ոչ կարողացավ հարևանի տունը գնալ և ոչ իրենց տունը վերադառնալ, այլ շվարած և անշարժ մնաց կտուրի վրա։ Նույն րոպեում նրա ականջին հասավ խոսակցության հազիվ լսելի շշնջոց. կարծես, խոսողները բարձրանում էին հարևանի տան սանդուղքներից և չգիտեին որ կողմը պետք է փախչել։

— Կամաց, Ստեփանիկ...

— Ո՞ւր գնամ, Սառա...

Զուլոն ճանաչեց նրանց։ Նրա երկյուղը փարատվեցավ, նա այժմ բոլորովին այրական սիրտ ստացավ, երբ տեսավ, որ այդ ողորմելիները օգնության կարոտ էին։ Նրան արդեն հայտնի էր ծերունի Խաչոյի տան պչնօրվա ցավալի անցքը։ Նա գիտեր, որ նրա գերդաստանի կնիկները այն գիշեր գյուղի զանազան տներում թաքնվում էին։ Իսկ այժմ պտռում էին նրանց, ի՞նչ նպատակով,— այդ ևս հասկացավ Զուլոն... Ուրեմն փողոցում գտնվող հարևանի դուռը ծեծող թուրքերը, ոչ այլ ոք էին, եթե ոչ ծերունի Խաչոյի որդիներին կալանավորող զինվորներից մի քանիսը։

Սառան և Ստեփանիկը այժմ գտնվում էին տեր հոր կտուրի վրա, և որսորդներից հալածված եղջերուի նման, ամեն կողմից պաշարված, մոլորված, չգիտեին թե դեպի որ կողմը պետք է փախչել։ Անձրևը վերևից թափվում էր։ Գյուղացիների դռները փակ, և իրանք քնած էին։ Գիշերը կեսից վաղուց անցել էր արդեն։

Այդ միջոցին փայլատակեց կայծակը և նրա վայրկենական լուսավորության հաջորդեց որոտման սարսափելի գղրդյունը։ Կայծակի լույսով նկարվեցավ կտուրի վրա կանգնած Զուլոյի

[1] Մազա նշանակում է գեսերտ, պատրաստված չոր մրգեղեններից։

անորոշ կերպարանքը։ Ստեփանիկը, տեսնելով նրան, կարծեց, թե թուրքերից մեկը արդեն բարձրացել է կտուրի վրա։ Նա երկյուղից թուլացավ և ընկավ Սառայի կուրծքի վրա։ Զուլոն մոտեցավ նրանց։

— Ես եմ, մի՛ վախեցեք,— ասաց նա։

— Ա՜խ, Զուլո, դո՛ւն ես,— ասաց Սառան դողդողալով.— ի սեր աստուծո, մեզ մի տեղ, հիմա կբռնեն մեզ... հիմա կտանեն մեզ...

Զուլոն մնաց շվարած. որտե՞ղ տանել նրանց, որտե՞ղ թաքցնել նրանց. իրանց տանը կասկածավոր հյուրեր կային, և տերտերը հազիվ թե կընդուներ այս տեսակ փախստականներին։ Այսուամենայնիվ, մտածում էր Զուլոն, պետք էր օգնել այդ ողորմելիներին։ Նրան հայտնի էր բոլոր անպատվությունը, եթե նրանք թուրքերի ձեռքը կընկնեին։ Մյուս կողմից, նրան սպառնում էր մի ծանր պատասխանատվություն, եթե ինքը թաքստի տեղ կտար այդ հանցավորներին, որոնց հանցանքը նրա մեջն էր միայն, որ կին էին... Այդ բոլորը իմանում էր Զուլոն։ Բայց կարեկցությունը նրա մեջ գերակշռեց երկյուղի և վարանման զգացմունքին, իսկ մտալուտ վտանգը ծնեց նրա գլխում փրկության մի միջոց։

— Գնանք,— ասաց նա, բռնելով Ստեփանիկի ձեռքից, և Սառային օգնելով, երկուսը միասին գրկեցին խեղճ աղջկան, որ տակավին ուշագնացության մեջ էր։

Նրանք սկսեցին ցած իջնել կտուրից։ Այդ միջոցին լսելի եղավ մի սաստիկ շառաչյուն, որ իսկույն խլացավ անձրևի փոթորկի խռովության մեջ։ Դա հարևանի դռան ձայնն էր, որ խորտակեցին թուրքերը։

Տերտերի տանը կից էր մարագը, բակից մի փոքրիկ դուռ բացվում էր նրա մեջ. Զուլոն տարավ փախստականներին այնտեղ։ Սառան և Ստեփանիկը թաքնվեցան խոտերի մեջ։

— Ես էլի կգամ ձեզ մոտ,— ասաց Զուլոն, և մարագի դուռը կողպելով, հեռացավ։

Անձրևի ձայնից թե՛ տերտերը և թե՛ նրա հյուրերը չլսեցին, թե ինչ է կատարվում դրսում։ Իսկ Զուլոն վերադառնալով, նրանց ոչինչ չհայտնեց։ Նա միայն մոտեցավ տերտերին և նրա ականջին ասաց, թե հարևանի տանը բոլորը քնած էին, և ոչինչ փոխ առնել չկարողացավ «մազա» պատրաստելու համար։

— Ես մի բան կգտնեմ,— խոսեց տերտերը, և վեր կենալով, մոտեցավ պահարանին, սկսեց քրքրել այնտեղ դրված իրեղենները։

Էֆենդին օգուտ քաղելով քահանայի բացակայությունից, դարձավ դեպի Զուլոն և կամաց ասաց նրան.

— Դու ինքդ «մազա» ես... «մազան» էլ ի՞նչ կանենք...

Տիրացու Սիմոնը այնքան խմած էր, որ ոչինչ չլսեց։ Իսկ Զուլոն վշտացած էֆենդու ակնարկությունից, պատասխանեց նրան.

— Լի՛րբ...

Հայ կինը ամեն նեղության համբերող է, ամեն վիրավորանքի առջև լուռ է, բայց երբ դիպչում են նրա պատվին, այն ժամանակ նա անհամբեր է դառնում։ Զուլոն վրդովված գնաց և նստեց իր հիվանդ զավակի մոտ, որ այժմ զարթել էր քնից։ Երեխան հանգիստ էր, և տեսնելով մորը իր մոտ, ասաց նրան.

— Մայրիկ, Թորոսին ծեծիր, իմ ճաները խլում է։

Թորոսը հիվանդի մեծ եղբայրն է. երևի երազի մեջ խլել էր նրա ճաները։ Մայրը հանգստացրուց, ասելով.

— Տե՛ս, աչքիս լույս, Թորոսը ճաներդ տվեց, տե՛ս, այստեղ է։

Մայրը հանեց բարձի տակից երեխայի խաղալիքները և տվեց նրա ձեռքը։ Երեխան սկսեց իր թույլ ձեռքերով խաղալ նրանց հետ։ Մայրը նայում էր նրա վրա և ուրախանում էր։ Նա մոռացավ էֆենդուց կրած վիրավորանքը, նա մոռացավ ամեն բան, որովհետև զավակը այժմ լավ էր զգում իրան։ Բայց մի նոր անախորժություն կրկին վշտացրեց խեղճ մորը։ Տերտերը երկար պտռելով պահարանի մեջ իր թաքցրած բանը չգտավ և Զուլոյից հարցրեց, թե այնտեղ մի կտոր շաքար ուներ պահած, իսկ այժմ չէ երևում։ Հարսը պատասխանեց, թե ինքն է վեր առել. քանի օր առաջ նրանով շերբեթ պատրաստեց հիվանդի համար, որովհետև սաստիկ տաքություն ուներ և պետք էր մի զովացուցիչ բան խմացնել։

— Թո՛ղ զահրումար խմեր, թող լեղի խմեր...— գոչեց նա բարկացած ձայնով։— Դու չէի՞ր իմանում, որ շաքարը հյուրի համար էր, հիմա ի՞նչ անենք։

Զուլոն ոչինչ չպատասխանեց և լուռ արտասուքը սկսեց թափվել նրա տխուր աչքերից։

Տեր-Մարուքը իսկապես չարամիտ մարդ չէր, նա մինչև անգամ բարի էր, բայց բարությունը տգեղների մեջ երբեմն անգիտակցաբար չարության է փոխվում։ Բացի դրանից, նրա պարտոնը նրան փոքր-ինչ խստասիրտ էր շինել։ Տերտերները, բժիշկները և դահիճները, որոնք խիստ հաճախ գործ ունեն մեռելների հետ, շատ շեն խնայում կյանքին։ Այս պատճառով, իր թոռնիկի հիվանդությունը տեր Հորն այնքան չէր հետաքրքրում, որքան գրավում էր նրան հյուրասիրության բաղձանքը. էֆենդու նման մի մարդուն գոհացնելը, մանավանդ, որ նա խոստանում էր հավաքել տալ տեր Հոր բոլոր ապառիկները։

— Մայրիկ, ինչո՞ւ ես լացում,— ասաց հիվանդը կարեկցաբար նրա երեսին նայելով,— մի լաց, ես հիմա լավ եմ։

Մայրը մոռացավ իր բոլոր վիշտը և սրբեց աչքերի արտասուքը։ Ոչինչ այնքան մխիթարական չէ, որքան սիրելի զավակի մի քաղցր խոսքը, մի անմեղ թոթովանքը։ Այժմ Զուլոն մտածում էր Սառայի և Ստեփանիկի մասին, մտածում էր, ի՞նչ կլինի, եթե թուրքերը հանկարծ ներս կթափվեն, կորոնեն և կգրոնեն նրանց։ Բայց անտանելի հյուրերը տակավին շարունակում էին իրանց ախորժությունը. նա սպասում էր, որ՛ վերջացնեն, որ քնեն, որպեսզի ինքը կարողանա գնալ Սառայի և Ստեփանիկի մոտ։

Բայց պետք էր գոնե գիտենալ, թե ինչո՞վ վերջացավ հարևանի տնում։ Զուլոն համբերել չկարողացավ. այդ միտքը սաստիկ անհանգստացնում էր նրան։ Նա մի բան պատճառ որոնելով, վեր կացավ, մտավ մի փոքրիկ սենյակ, որին կոչում էին «գաղտիկ» և ծառայում էր որպես պահարան։ Այս սենյակից պատի միջով մի նեղ ծակ բացվում էր ուղիղ հարևանի տան մեջ։ Այսպիսի ծակեր գյուղի համարյա բոլոր տների մեջ կային և վտանգի ժամանակ ծառայում էին որպես գաղտնի հաղորդակցության խողովակներ։ Հարևանի տանը մի բան պատահելիս, ծակից ձայն էին տալիս և լսում էր մյուս հարևանը։ Ավելի մերձավոր կամ բարեկամ տների մեջ այս ծակերը այնքան լայն էին, որ նրանց միջով կարելի էր տալ և տանել փոքրիկ իրեղեններ։ Շատ անգամ վառած ճրագ էին տալիս միմյանց, երբ հարևանի տանը լուցկի չկար։

Զուլոն կանգնած էր ծակի առջև, տեսնում էր տան մի մասը և լսում էր հետևյալ ձայները.

— Կկոտորենք ձեզ, թե ցույց չտաք... ի՞նչ եղան... մեզ ասացին, որ այստեղ են... դուք թաքցրիք... տվեցեք... շուտ արեք... թե չէ ձեր կնիկները կտանենք...— այս սպառնալիքներն էին կարդում թուրքերը։

Հարևան Զաքոն նրանց ոտքերի առջև ընկած աղաչում էր և պաղատում էր, ասելով.

— Աստված, երկինք, գետինք թող վկա լինեն, որ այստեղ չեն... մի սպանեք ինձ... ահա իմ տունը ձեր առջևն է... ինչ որ ուզում եք, արեցեք...

Այս տեսարանը ներկայացնում էր միևնույն անցքը, որ հին ժամանակներում պատահեցավ Սոդոմի մեջ, երբ քաղաքի սրիկաները մոտեցան Ղովտի տանը և պահանջում էին նրանից, որ տա իրանց ձեռքը իր հյուրերին։ Իսկ բարեսիրտ նահապետը աղաչում էր նրանց, որ հանգիստ թողնեն իր հյուրերին և առաջարկում էր իր աղջիկներին... Բայց Իսրայելի Եհովան խստասիրտ էր և վրեժխնդիր, նա պատժեց մարդկային չարությունը. կրակով և ծծումբով այրեց այդ անբարոյական քաղաքը։ Իսկ Հայաստանի աստվածը տեսնում էր չարությունը, ավելի վատթար, քան թե Սոդոմի մեջ, և անպատիժ էր թողնում չարագործին։

Զուլոն ամբողջ մարմնով դողդողալով, դեռ նայում էր և ականջ էր դնում։ Նա լսեց մի շառաչյուն և տեսավ, որ հարևան Զաքոն գլորվեցավ և ընկավ հատակի վրա...Ճրագը հանգրին։ Զուլոն այժմ, էլ ոչինչ չէր տեսնում, միայն լսում էր խառնաձայն աղաղակներ։ «Ամա՜ն... վա՜յ... թո՛ղ, տո՛ւր... մի՛ սպանի՛ր... ես կմեռնեմ... ո՞ւր ես տանում»...

Դրանք հարևան Զաքոյի տան կնիկների և աղջիկների հառաչանքներն էին...

— Լռի՛ր, անզգամ...—լինում էր այդ հառաչանքների պատասխանը։

ԼԲ

Վերադառնալով իր տեղը, Զուլոն գտավ հյուրերին միևնույն դրության մեջ։ Դեռ խմում էին։ Տերտերը տաղ էր ասում, իսկ տիրացու Սիմոնը ձայնակցում էր նրան, էֆենդին էլ կամաց-կամաց քթի տակ մռմռում էր։ Նրանց ուրախությանը չափ չկար։ Ի՞նչ հոգ, թե հարևանի տանը ինչ էր կատարվում։ Զուլոն մտա-

ծեր հայտնել նրանց, դուցե մի օգնություն կհասցնեին, և մոտենալով տերտերին, նրա ականջին ասաց, թե ի՞նչ տեսավ Զաքոյի տանը։ Միայն նա թաքցրեց, թե Սառան և Ստեփանիկը պահված են իրանց տնում։ Մի անբացատրելի բնազդական զգացմունք փականք էր դրել Զուլոյի լեզվի վրա՝ լռել այդ մասին։

Նա հայ կնոջ սովորության համեմատ հյուրերի հետ չէր խոսում և տերտերին հաղորդածը այնքան համառոտ և անլսելի ձայնով կատարվեցավ, որ մյուսները ոչինչ չհասկացան։ Միայն տեսնելով քահանայի այլայլված դեմքը և այն անհանգստությունը, որ պատճառեց նրա մեջ հարբի խոսակցությունը, հյուրերը անհամբերությամբ հարցրին.

— Ի՞նչ է պատահել։

— Գաղանե՞ր, գաղանե՞ր...—գոչեց քահանան ձեռքերը դեպի երկինք բարձրացնելով,—տասներկու առաքելոց և երեք հարյուր վաթսուն ու վեց հայրապետաց անեծքը, թող ձեզ վրա լինի, նզովից արմատներ...

— Ի՞նչ է պատահել,—կրկնեց էֆենդին։

Տերտերը պատմեց ինչ որ հաղորդել էր նրան Զուլոն և խնդրեց էֆենդուն օգնել թշվառներին։

Կան մարդիկ, որոնք վտանգի, դժբախտության և ուրիշներին հասած նեղության ժամանակ, փոխանակ փրկության հնարների վրա մտածելու, փոխանակ շուտափույթ օգնության ձեռք մեկնելու, սկսում են քննադատել դժբախտության պատճառները, և իրանց խիղճը հանգստացրած են համարում, երբ մեղադրանքի մի նշույլ են գտնում։ Իհարկե, այդ դատաստանը կատարվում է յուրաքանչյուր մարդու հասկացողության համեմատ։ Էֆենդին ոչ միայն անիրավ և անբարոյական չէր համարում պատահած անցքը, այլ արդարացնում էր նրան, որպես հետևանք, որի պատճառը իր կարծիքով դատապարտելի էր։ Այս մտքով նա հարցրեց.

— Ասացեք, տեր հայր, գիժն էլ այդ բանը կանե՞ր, ինչ որ տանուտեր Խաչոն արեց, իր մոտ պահելով այնպիսի կասկածավոր մարդիկ, որոնք գյուղացիներին խելքից հանելով, զանազան հիմարություններ էին քարոզում։

— Հիմարություն է, շատ հիմարություն,—պատասխանեց քահանան,—բայց խեղճ գյուղացիները ինչո՞վ են մեղավոր, որ

մի քանի խենթերի պատճառով թուքերը բոլորին էլ կրակի մեջ են գցում։ Մեր հարևան Զաքոն շատ ողորմելի մարդ է. նա այնքան երկչոտ է, որ մինչև անգամ իր շվաքիցն էլ վախենում է. նրան ինչո՞ւ են շարշարում. նրա ընտանիքը ինչո՞ւ են բռնաբարում, այդ ի՞նչ անգթություն է։

— «Դալար ծառն էլ չորի հետ խառնված այրվում է»... աշխարհի կարգը այդպես է, տեր հայր, ո՞վ է ջոկում թացը չորից...— պատասխանեց էֆենդին, ինքն էլ զարմանալով իր բազմիմաստ խոսքի վրա։— Երբ աստված պատուհաս է ուղարկում մարդերին պատժելու համար, արդար երեխային մեղավոր ծերի հետ գերեզման է տանում, շարն ու բարին խառնվում են միմյանց հետ... Այսպես է լինում և կառավարությունների վրեժխնդրությունը, երբ պետք էր պատժել մի հասարակություն։ Գյուղացիներին վնաս կհասնի... ասում եմ ձեզ, տեր հայր, բոլոր գյուղացիներին...

Քահանան պատասխանելու մի խոսք ևս չգտավ։ Էֆենդու բերած ապացույցը շատ ղորավոր էր։ Քոլերայի կամ ժանտախտի ժամանակ, երբ մարդիկ պատժվում են իրանց մեղքերի համար, մի՞թե արդարների և մեղավորների մեջ խտրություն է դրվում,—չորն էլ թացի հետ այրվում է...—այդպես էր մտածում տերտերը։ Նա մինչև անգամ մոռացավ հարևան Զաքոյին, և էֆենդու վերջին խոսքերը հիշեցրին նրան մի բան, որ ավելի մոտ էր նրա սրտին։ Նա ասաց.

— Եթե բոլոր գյուղացիների տները այնպես կթալանեն, որպես այսօր կողոպտում էին ծերունի Խաչոյի տունը, իմ ապառիկները խո կկորչեն...

— Այդ մասին դուք անհոգ կացեք, տեր հայր,—պատասխանեց էֆենդին,— ես էգուց բոլորը հավաքել կտամ։ Բայց դուք այն ասացիք, տեր հայր, Խաչոն ինքը մեղավոր չէ՞, որ այսպես պատժվում է։

Խաչոյի այն օրվա անցքը իր վրա դարձրեց բոլոր գյուղացիների ուշադրությունը, թեև գործի մանրամասնությունը ոչ ոքին հայտնի չէր. այսուամենայնիվ, բոլորը մեղադրում էին նրան։ «Հային ի՞նչ սազ կգա զենքը,—ասում էին նրանք,—եթե կրակը տալու լինես երեխայի ձեռքը, առաջ իր մատը կայրե»... Քահանայի կարծիքը շատ չէր տարբերվում այս տեսակ մտածությունից։ Նա էֆենդու հարցին պատասխանեց.

— Ես մի բան գիտեմ, որդի, երբ ջհուդները սրոք և բրոք եկան տերն մեր Հիսուս Քրիստոսին բռնելու, Պետրոս առաքյալը սուրը քաշեց զարկեց և քահանայապետի ծառա Մաղքոսի ականջը կտրեց։ Այն ժամանակ տերն մեր Հիսուս Քրիստոս սաստեց Պետրոսին, ասելով, որ սուրը իր տեղը դնե, որովհետև սուր բանեցնողը սրով կկործանվի։ Այս խրատը մենք պետք է չմոռանանք, եթե ուզում ենք քրիստոնեական հավատի դեմ չմեղանչել։

— Փառավորիս, տեր հայր, լավ ես հասկացել,— ասաց էֆենդին,— իսկ այն տետրակները կարդացի՞ք։

— Կարդացի, մի հատ ընկել էր տիրացու Սիմոնի ձեռքը, բերեց ինձ մոտ, միասին կարդում ենք, կարդում ենք, ոչինչ չենք հասկանում։ Ասում եմ, օրհնածներ, գրում եք, օրինավոր բան գրեցեք, որ համ հոգու, որ համ մարմնի շահ լինի, որ մարդ կարդա, իր մեղքերը զղջա, այս տեսակ ծոտի-պոտի բաներից ի՞նչ օգուտ։ Տիրացու Սիմոն, դրուստ չե՞մ ասում, դու էլ խո կարդացիր։

— Ես չհավանեցի,— պատասխանեց մանկավարժը, որ առիթ ունեցավ իր գիտությունը ցույց տալու,— բոլորը սատանայական բաներ էին։ Եթե Այսմավուրքից կամ հարանց վարքից գրեին, ժողովուրդը կկարդար և կխրատվեր։ Բայց ես ուրախ եմ, որ Վարդանը պատժվեցավ. շատ հպարտ տղա էր։ Մի անգամ մտնում է իմ դպրոցը, ասում է. ի՞նչ ձեր գործն է կրթությունը, դուք երեխաներին փչացնում եք, գնացեք իշաներ արածացրեք։ Այդ ասելու խո՞սք է. կարծես, ինքը ինձանից շատ է կարդացել։

— «Էշի քացին ավելի է ցավացնում, քան թե ձիունը»,— խոսեց էֆենդին։— Այդ Վարդանը ինձ էլ շատ անգամ վիրավորել է։

Այսպես տերտերը, մանկավարժ տիրացուն և երկրի պաշտոնական մարդը, յուրաքանչյուրը իր դատողություններն էր հայտնում ցավալի անցքերի մասին, և նրանցից ոչ ոք չէր մտածում, թե ինչ էր կատարվում հարևան Զաքոյի տանը։ Նրանցից ոչ ոք չէր ցավակցում, թե ինչ դրության մեջ էր այս գիշեր տանուտեր Խաչոյի ընտանիքը։ Այդ մարդը, որի բարերարություններին այնքան պարտական էին գյուղացիները, այժմ բոլորի բարկությանը առարկա դարձավ, որովհետև նրա վարմունքը գյուղացիների կարծիքով դատապարտելի էր։ Ամեն մարդ պաշարված էր մի սարսափելի սոսկումով և սպասում էր մի դառն և զարհուրելի

վախճանի։ Միայն Թոմաս էֆենդին, այդ բոլոր չարագործությունների հեղինակը, ուրախ էր և մի առանձին դիվական հրճվանքով մեծ բավականություն էր գտնում սրտի մեջ, տեսնելով, որ իր ցանած սերմերը խոստանում էին տալ ցանկացած պտուղները։

— Կրկնում եմ,— ասաց նա գործի տեղյակ մարդու եղանակով,— որ շատ կվնասվեն գյուղացիները։ Ժամանակը վատ է. ամեն տեղ պատերազմի պատրաստություններ են տեսնվում, այդ խառն միջոցներում այդպիսի ցույցերը սաստիկ պատժվում են կառավարությունից։

Պատերազմի անունը լսելիս, տերտերը սարսափեցավ, ոչ այն պատճառով, որ պատերազմը զանազան նեղություններ և չքավորություններ էր սպառնում գյուղացիներին, այլ նա կրկին մտաբերեց իր ապառիկները։

— Եթե պատերազմը սկսվի,— ասաց նա,— գյուղացիներից այնքան տուրքեր կպահանջեն, որ դժվար կլինի հավաքել իմ ապառիկները։

— Դուք անհոգ կացեք, տեր հայր,— պատասխանեց էֆենդին,— ես չեմ թողնի, որ ձեր ապառիկները մնան մինչև պատերազմի սկսվելը։

Այդ միջոցին տիրացու Սիմոնը մոտեցավ տեր հոր ականջին և կրկին հիշեց նրան իր աշակերտներից ստանալիք ապառիկների մասին, և կրկին պատասխան ստացավ, որ համբերե։ Ում ինչ տեղը ցավում է, նրա վրա էլ խոսում է։ Տերտերին և տիրացուին հետաքրքրող հարցը այժմ նրանց ապառիկներն էին։

— «Էշը թեև ինքը մի բան չէ, բայց նրա մազը մախմուր է սրբում»[1],— ասաց էֆենդին,— դուք խո իմանում եք, տեր հայր, այդ առածը։ Գյուղացին էլ այդպես է։ Նա ինքը թեև հագին պատառոտած շորեր ունի, բոբիկ ոտներով է ման գալիս, բայց աղաների հագած մախմուրը նրա քրտինքի գնովն է առնվում։ Նա թեև քաղցած է մնում, շատ անգամ պատառ հաց չէ գտնում, բայց աղաների սեղանը նա է զարդարում ամեն տեսակ բարիքներով։ Իսկ դուք, տեր հայր, որպես երևում է, չգիտեք գյուղացիներից օգուտ քաղել, եթե գիտենայիք, այսքան ապառիկ-

1 Այդ առածը թուրքական է, արևելքում մահմեդականների մեջ խոզի մազը պիղծ համարելով, հագուստ կամ մի ուրիշ բան մաքրելու համար վրձինները պատրաստում են էշի մազերից։

ներ չէիք ունենա, և այս գիշեր մեզ արաղը առանց «մազայի» չէիք խմացնի։

Վերջին խոսքերը ազդեցին քահանայի վրա և նա առանձին դառնասրտությամբ պատասխանեց.

— Ի՞նչ ասեմ, էֆենդի, մեր՝ տերտերներիս՝ ձեռքերը կապված են, մեզ՝ ձեզ նման փայտ չէ տված, որ ծեծենք, որ գյուղացին վախենա։ Մեր զենքը շատ թույլ է... Ի՞նչ անեմ... Ուղիղն ասեմ, շատ անգամ սիրտս լցվում է, չեմ համբերում, սկսում եմ անիծել... բայց գյուղացիները այժմ այնքան թերահավատ են դարձել, որ անեծքից էլ չենք վախենում... էլ ուրիշ ինչ զենք ունենք։ Բայց նրանք էլ մեզ չունեն. քրդերը նրանց մոտ ի՞նչ են թողել, որ մենք կարողանանք մի բան պահանջել։ Ա՜խ, անիծվին այդ քրդերը, եթե նրանք չլինեին, ես այսքան ապառիկներ չէի ունենա։ Հիմա որ պատերազմը սկսվի, քրդերը բոլորովին կկատաղեն...

— «Էշը խո էշ է, բայց ջորին ավելի գեշ է»,—պատասխանեց էֆենդին իր սովորական ձևով,—քրդերը ջորու նման չար են, որովհետև անհարազատ են։

Ջորիների համեմատությունը քրդերի հետ, ոչ միայն էֆենդու, այլ առհասարակ հայերի կարծիքով, այն նշանակությունն ունի, որ քրդերը անիրավ և չարագործ են նրա համար միայն, որ ջորու նման անհարազատ և խառնածին են։ Անհարազատների վարքի մասին միշտ վատ համարում ունի մեր ժողովուրդը։ Բայց ինչ որ ճշմարիտ է, այն է, որ քրդերը խառնվելով հայերի հետ, թեև մի կողմից կորցրին իրանց ազգային բուն տիպը, բայց մյուս կողմից ստեղծեցին մի նոր և ազնիվ ցեղ։ Դարերով ընտրելով հայոց պատանիների և աղջիկների ամենագեղեցիկները և վայելչահասակները (քուրդը բարձրահասակ կինը շատ է սիրում), նրանք գեղեցկացրին իրանց ցեղը։ Որի ընդհակառակն, հայերը կորցնելով իրանց միջից ընտիր մասը, հետզհետե ագեղացան, հետզհետե այլանդակվեցան։ Ով որ լավ հետազոտել է Թուրքաց Հայաստանի քրդերի և հայերի ընդհանուր գծերը, նրանց մեջ մեծ նմանություն կգտնե, որովհետև քրդերը ուրիշ ոչինչ չեն, եթե ոչ հայերից առաջ եկած մի նոր ցեղ։

Գիշերից բավական անցել էր արդեն։ Ջուլոն, հեռու նստած էր հիվանդ մանուկի մոտ, տհաճությամբ էր լսում հյուրերի խոսակցությունը, որ նրա համար խիստ ձանձրալի էր։ Նա ան-

համբերությամբ սպասում էր, որ նրանք վերջացնեն, վեր կենան քնեն, որպեսզի ինքը կարողանա գնալ Սառայի ու Ստեփանիկի մոտ տեսնելու, թե ի՞նչ դրության մեջ են նրանք։

Բայց էֆենդին դեռևս քնելու նպատակ չուներ. նա տերտերի հետ բավական խոսելիքներ ուներ, միայն տիրացու Սիմոնի ներկայությունը արգելք էր լինում։ Այդ պատճառով ակնարկեց նա, թե ցանկանում է քնել, որովհետև առավոտյան շուտ պիտի վեր կենա և կարևոր գործեր ունի։ Տիրացուն բարի գիշեր մաղթելով, հեռացավ։ Նրա գնալուց հետո տերտերը ասաց.

— Ցոթը վարդապետից ավելի գիտե թշվառականը, ափսո՜ս, մի քիչ խմելու հետ սեր ունի—տեսա՞ք, ինչպես լավ կարդաց իմ ապառիկների հաշիվը։

— Տիրացու Սիմոնի համար եք ասում,—հարցրեց էֆենդին,—այո, շատ լավ կարդաց։

Բայց էֆենդուն չէր հետաքրքրում ո՛չ տիրացու Սիմոնը և ո՛չ էլ նրա ունեցած բարձր գիտությունը։ Նա առիթ էր որոնում խոսելու մի առարկայի մասին, որի համար հատկապես այս գիշեր եկել էր տերտերի տունը։

Այդ միջոցին քահանան կամեցավ հանել կիսամաշ վերարկուն, որովհետև մասամբ խմելուց և մասամբ տան տաքությունից բավական շոգ էր զգում։ Անզգուշությունից վերարկուի թևքը պատռվեցավ։ Էֆենդին ասաց նրան.

— Տեր հայր, վերարկուդ շատ է հնացել, ինչո՞ւ նորը չես դարել տալիս։

— Օրհնած, ինչո՞վ կարել տամ, դուք խո տեսաք իմ ապառիկները։ Այդ վերարկուն էլ լուսահոգի Կարապետ էֆենդունն էր. նա մեռավ, ինձ տվեցին որպես «կողոպուտ». յոթն տարի է, որ հագնում եմ։ Նրանից հետո, իմ մեղքից, հարուստներից ոչ ոք չի մեռել, որ վերարկուս նորոգեի...

— Ես քեզ համար մի լավը կարել կտամ, դուք լավ քահանա եք,—ասաց էֆենդին,—հագեք և միշտ օրհնեցեք ինձ։

— Երեք հարյուր վաթսուն ու վեց հայրապետաց օրհնությունը թող ձեզ վրա լինի, որդի,—ասաց քահանան և սկսեց «ապահպանիչ» կարդալ։

— Բայց մի ուրիշ խնդիրք էլ ունեմ, էֆենդի,—ավելացրեց նա,—դուք որ կաք, մեր թագն ու պարծանքն եք. մենք ուրախանում ենք և ամեն օր փառք ենք տալիս աստծուն, որ հայերից էլ

ձեզ նման աղաներ կան, որոնք մուդիրի, գայմադամի և փաշայի մոտ համարձակ նիստուկաց ունեն և ամեն բան կարող են խոսել։ Ի սեր ազգի և ի սեր մեր սուրբ հավատի աղաչում եմ ձեզ, մի թողեք տանուտեր Խաչոյին և ընտանիքը անօրենների ձեռքում. դուք որ կամենաք, կարող եք նրանց ազատել. խեղճ են, հայ քրիստոնյա են, օգնեցեք նրանց։ Ինչ էլ որ լինի նրանց հանցանքը, մենք պարտավոր ենք ծածկել, նրա համար, որ մեր մսից և մեր արյունից են։ Ես էլ չեմ հավանում նրանց գործածը, բայց «ո՞վ իցե, որ ոչ մեղիցե»։

Քահանայի խոսքերը, թեև մի առանձին տպավորություն չունեցան էֆենդու սրտի վրա, բայց նրան պատճառ տվեցին հայտնելու այն, ինչ որ վաղուց առիթ էր որոնում ասել տերտերին։

Էֆենդին պատասխանեց, թե ինքը պատրաստ է և կարող է ազատել տանուտերի ընտանիքին հասած դժբախտությունից և չի թողնի, որ նրա գլխից մի մազ անգամ պակասի, եթե տանուտերը իր կողմից կկատարե էֆենդու խնդիրքը։ Եվ հիշեցնելով քահանային նրա մի տարի առաջ հաղորդած զաղտնիքը Լալայի մասին, էֆենդին ասաց, որ այն օրից սիրում է այդ աղջկան, և կցանկանար, որ նա իր կինը լիներ։ Եթե տանուտերը կկատարե այդ ցանկությունը, էֆենդին պատրաստ էր օգնել նրան։ Բայց հակառակ դեպքում, նա ստիպված էր թույլ տալ, որ իշխանությունը վարվեր օրենքի և արդարության համեմատ, որ անտարակույս կվերջանար տանուտերի ամբողջ ընտանիքը բնաջինջ լինելով և նրա հարստության հարքունիս գրավվելով։ Եվ հիշելով քահանայի, որպես հասարակաց հոր պարտավորությունները, էֆենդին խնդրեց տերտերից, որ նա հանձն առնի դիմել ծերունի Խաչոյին և նրա հետ խոսել այդ մասին, քանի դեռ ուշ չէր, քանի որ դեռ կարելի էր գործը ուղղել և գալոց չարիքների առաջը առնել։

— Կարգս թող վկա լինի,— ասաց տերտերը մի առանձին ուրախությամբ,— ես էգուց առավոտյան կգնամ տանուտերի մոտ և բոլորը կարգի կդնեմ, որպես ձեր կամքն է։ Խաչոն պետք է փառք տա աստծուն և մի քանի մատաղներ թող կտրե սրբերին, երբ ձեզ նման մարդը ցանկանում է նրա փեսան լինել։

Էֆենդու դեմքի վրա երևաց մի խորամանկ ժպիտ, և կատակի ձևով պատասխանեց.

— Երբ կկատարեք այդ բոլորը, այն ժամանակ ձեր հին վերարկուն կնորոգվի...

— Իսկ իմ ապառիկնե՞րը...

— Այդ մասին անհոգ կացեք...

ԼԳ

Դառն և սոսկալի գիշեր անցավ։ Առավոտյան ծերունի Խաչոյի տունը նմանում էր այն սգավոր տներին, որտեղից մի քանի մեռելներ միանգամից պետք է դեպի գերեզման տարվեին։

Առաջ դուրս բերին Վարդանին։ Նա հանգիստ էր. նրա դեմքը չէր արտահայտում խռովության մի նշույլ անգամ, կարծես նրա հետ ոչինչ չէր պատահել. միայն շրթունքների վրա կարելի էր նկատել մի արհամարհական հեգնություն, որ արտասանում էին՝ «ի՞նչ են ուզում անել այդ հիմարները»... Հինգ զինվորներ պատրաստված էին Վարդանին տանելու փաշա էֆենդու մոտ։ Երբ որ նրան նստեցրին ձիու վրա և կամենում էին ոտները ձիու փորի տակով շղթայել, նա առանց ընդդիմադրության թույլ տվեց, թեև դա մի սարսափելի տանջանք էր՝ անշարժ կապված լինել ձիու մեջքի վրա։

— Այդ ավելորդ է,— նկատեց նա,— եթե ես ցանկանամ փախչել, ձեր շղթաները չեն օգնի...

Զինվորները ուշադրություն չդարձրին և կապեցին։ Դրանով ևս չբավականանալով, կապեցին և թևքերը ետևի կողմից մեջքի վրա, և պարանի ծայրերը երկու ձիավոր զինվորներ բռնած, պատրաստվեցան տանել։ Բացի երկու զինվորներից, կարգված էին և երեք պահապաններ։

Թեև ռամիկ ամբոխը հետաքրքրվում է այս տեսակ տեսարաններով, բայց գյուղացիներից ոչ ոք չհայտնվեցավ տեսնելու, թե ինչպես են աքսորում Վարդանին, այն մարդուն, որ այնքան աշխատել էր, որ այնքան գործել էր նրանց համար... Բոլորը այժմ խորշում էին ծերունու տնից, որպես ժանտախտով վարակված մի բնակարանից։

Կանանցից ոչ ոք չէր մնացել տանը, բոլորը թաքնված էին զանազան տեղերում։ Հայրապետը և Ապոն բանտումն էին։ Վարդանից հետո հերթը հասնելու էր իրանց։ Խաչոյի մյուս որդիները, որ ազատ էին, ցույց չտվեցին իրանց։ Միայն ծերու-

նի հայրը դուրս եկավ ճանապարհ դնելու Վարդանին։ Վերջին դժբախտություններից հետո խեղճ մարդը բոլորովին սպանված էր։ Դառն հալածանքը, բռնի անարգությունը և գազանային անդթությունները իսպառ մաշել էին նրան։ Նա մոտեցավ, գըրկեց Վարդանին և սրտի սաստիկ շարժմունքից մի բառ անգամ չդտավ հայտնելու իր ցավակցությունը։ Մի քանի կաթիլ արտասուք ասեցին շատ բան, ինչ որ չէր կարող ասել լեզուն։

— Սիրտդ պինդ պահիր, ծերունի հայր,— պատասխանեց նրան Վարդանը անխռով ձայնով,— ով որ ջրի մեջն է մտնում, թրջվելուց երկյուղ չպիտի ունենա... Մնացեք բարյավ։

Ընկերները ոչինչ չհասկացան, և Վարդանի ձին իրանց առջևը գցած, սկսեցին տանել։ Ծերունին երկար նայում էր նրանց ետևից, մինչև այնքան հեռացան, որ բոլորովին անհայտացան։

Նա խորասուզված տխուր մտածումների մեջ, վերադարձավ տուն։ Ինչո՞ւ Վարդանին միայն տարան, ինչո՞ւ Հայրապետին և Ապոյին թողեցին, ինչո՞ւ իրան ևս չէին կալանավորում, այլ պահում էին ազատ, թեև հսկողության ներքո, դրանց մեջ ի՞նչ գաղտնիք կար։ Այդ հարցերը անհանգստացնում էին նրան։ Ծերունուն դեռ հայտնի չէր Թոմաս էֆենդու ծրագրի բուն բովանդակությունը։ Նա այնպես էր կարգադրել գործը, եթե ծերունին չընդուներ նրա առաջարկությունը Լալայի վերաբերությամբ, այն ժամանակ միայն իր վրեժխնդրության լիակատար դառնությունը պիտի թափեր խեղճ ծերունու ընտանիքի վրա։ Նա Վարդանին աքսորել տվեց, նա պարոն Սալմանին մատնեց, որովհետև դրանց վտանգավոր էր համարում իր պաշտած թուրք կառավարությանը։ Բայց ծերունի Խաչոյի և նրա որդիների մասին այս տեսակ կասկած չուներ. նրանց խառնեց մեղադրության գործի մեջ այն մտքով միայն, որ մի մեծ և ծանր դժվարության մեջ դնելով նրանց, առիթ ունենա ինքը պաշտպան և ազատիչ հանդիսանալ, և դրանով պարտավորացնելով նրանց, հետո իրավունք ունենա որպես վարձատրություն փոխարենը խնդրել Լալայի ձեռքը։ Ահա որպիսի վաճառականական մտախոհություններ դրդեցին էֆենդուն գործել մի մեծ չարություն, որի թշվառ հետևանքը իր բոլոր սատանայական խելքով նախատեսել չկարողացավ։

Բայց Թոմաս էֆենդին այս առավոտ չհայտնվեցավ։ Ծերունին ցանկանում էր տեսնել նրան, ցանկանում էր լսել նրա վճռական խոսքը, թե ինչով կվերջանա այս բոլորը։ Նա դեռ հավատում էր էֆենդու խոստմունքներին, նա դեռ հիշում էր այն խոսքը՝ «տանուտեր Խաչո, չեմ թողնի, որ քո գլխից մի մազ անգամ պակսի»...

Էֆենդու փոխարեն հայտնվեցավ տեր-Մարուքը— նրա պատգամավորը, որ խոստացել էր առավոտյան գնալ տանուտերի մոտ և խոսել Լալայի մասին։ Դժբախտության բոպեներում քահանայի ներկայությունը թեև մխիթարություն է պատճառում, բայց ծերունու վրա խիստ անախորժ տպավորություն գործեց։ Նա քահանաների մասին մի առանձին նախապաշարմունք ուներ և նրանց երեսը տեսնելը միշտ համարում էր մի անհաջողության նախազգացություն։ Բայց տեր հայրը զգուշությամբ մի կողմը տարավ նրան, հայտնելով, թե կարևոր խոսելիք ունի, և այդ փոքր-ինչ հանգստացրեց ծերունուն։ Երկուսը միասին նստեցին պարտեզի մի խուլ կողմում, ծառերի հովանու տակ։

Տեր հոր դեսպանության հառաջաբանը եղավ մի շարք միխիթարական խոսքեր, մի շարք խրատներ, որ իր ձևով քարոզում էր նա և հաստատում էր սուրբ գրքից բերած օրինակներով։ Նա Հոբ Երանելիի չարչարանքները հիշելով, ասում էր թե աստված շատ անգամ իր ծառաների հավատը փորձելու համար, գցում է նրանց զանազան տեսակ նեղությունների մեջ, միայն պետք է համբերող լինել, պետք է չհուսահատվել, որովհետև նա վերջը կփրկե իր հավատացյալներին անօրենի չարությունից և հավիտենական փառքի կարժանացնե և այլն։

Վերջացնելով իր խրատները, տեր հայրը մոտեցավ բուն առարկային, որի մասին խոսելու համար եկած էր։ Եվ հարսնախոսության մեջ բանակցող միջնորդների սովորական եղանակով, նա նույնպես իր առաջարկությունը սկսեց մի առակով։

— Մի թագավորի որդի,— ասաց նա,— գնացել էր որսի. դիշերը վեր հասնելով, չկարողացավ վերադառնալ և մնաց անտառի մեջ մի հովիվի խրճիթում։ Հովիվի հյուրասիրությունից շատ գոհ մնաց նա, բայց առավել գրավեց նրա սիրտը հովիվի գեղեցիկ աղջիկը։ Մյուս օրը թագավորի որդին դարձավ իր պալատը, հայտնեց հորը, թե ցանկանում է հովիվի դստեր հետ ամուսնանալ։ Հայրը խենթի տեղ դրեց որդուն և սաստիկ բար-

Կացավ նրա վրա։ Բայց երկար ընդդիմությունից հետո երբ տեսավ, որ անկարելի էր որդուն համոզել, իր նախարարներից մեկին ուղարկեց, որ գնա հովիվի հետ հարսնախոսություն անե։ Նախարարը ետ դարձավ, պատասխան բերեց, թե հովիվը չընդունեց իր աղջիկը թագավորի որդուն տալ։ Թագավորը զարմացավ և ուղարկեց մի այլ նախարար ավելի բարձր աստիճանով, քան թե առաջինը։ Նա էլ նույն պատասխանը բերավ։ Հետո թագավորը ուղարկեց իր առաջին վեզիրին, նա էլ մերժում ստացավ։ Վերջապես թագավորը ճարահատվելով, ինքը անձամբ գնաց և մյուսների նման դատարկ վերադարձավ. հովիվը նրան ևս մերժեց։ Թագավորը զարմացավ, կանչեց իր մեծամեծներին, նրանց հետ խորհուրդ արավ։ Նրանցից մեկը, որ ավելի փորձված և խելացի մարդ էր, խորհուրդ տվեց թագավորին ուղարկել հովիվի մոտ իր նման մի հովիվ, ասելով, թե հովիվը կհասկանա հովիվի լեզուն և կարող կլինի համոզել նրան։ Ընտրեցին թագավորի հովիվներից մեկին և ուղարկեցին։ Հովիվը առանց պատրաստության, առանց փառավոր շքեղության, առեց իր հովվական ցուպը և ոտքով սկսեց դիմել դեպի աղջկա հոր խրճիթը։ Հայրը սիրով ընդունեց նրան, միասին ճաշեցին, կերան, խմեցին, ուրախացան, վերջը հովիվը հայտնեց թագավորի խնդիրքը, ասելով,— Ինչո՞ւ դու չուզեցիր աղջիկդ տալ թագավորի որդուն։ Հայրը պատասխանեց.— Օրհնած, ես էլ մի մարդ եմ, իմ անձնասիրությունը ունեմ, թագավորը ե՞րբ ուղարկեց ինձ մոտ քեզ նման մի օրինավոր մարդ, որ ես իմ աղջիկը նրա որդուն կնության տայի։

Վերջացնելով իր առակը, տեր հայրը ավելացրեց.

— Ես էլ հովիվ եմ, դու էլ հովիվ ես, տանուտեր խաչո, որովհետև մենք երկուսս էլ ոչխարների փոխարեն ժողովուրդ ենք կառավարում։ Ես գյուղի քահանան եմ, դու գյուղի տանուտերը, և եկել եմ քեզ մոտ նույնպիսի մի առաջարկությունով, որպես հովիվը հովիվի մոտ։

— Ի՞նչ առաջարկություն,— հարցրեց ծերունին տհաճությամբ, որին խիստ ծանր էր իր սրտի մի այնպիսի տխուր տրամադրության ժամանակ լսել քահանայի անտեղի խոսքերը։

Տեր հայրը պատասխանեց, թե աստված կամեցել է ծերունու այժմյան նեղության մեջ մխիթարել նրան և փրկության դուռը բաց անել նրա առջև։ Թոմաս էֆենդին խնդրում է Լալայի ձեռքը

և խոստանում է ազատել ծերունուն իր տան վրա հասած փորձանքից։— Պետք է փառք տալ աստծուն, որ էֆենդու նման մարդը բարեկամության և օգնության ձեռք է մեկնում։

Քահանան որքան ճարպիկ կերպով տարավ իր բանախոսությունը, այսուամենայնիվ սպասած աջողությանը չհասավ։ Դուցե մի ուրիշ ժամանակ և ուրիշ հանգամանքների մեջ նրա խոսքերը համակրություն կգտնեին, որովհետև ինքը ծերունի խաչոն վաղուց մտածում էր իր աղջիկը էֆենդուն տալ։ Բայց այժմ հանգամանքները տարբեր կերպարանք էին ստացել։— Այժմ, երբ նրա երկու որդիները բանտի մեջ էին, երբ ինքը պահապանների հսկողության ներքո էր, երբ նրա տան կնիկները անապաշտպան թաքնված էին օտարների մոտ, երբ իր երկու բարեկամները՝ Վարդանը և պարոն Սալմանը մատնվեցան իշխանության ձեռքը, երբ իր տան կայքը իր աչքի առջև թալանում էին,— մի այսպիսի ժամանակ նրան հայտնում էին չարագործի առաջարկությունը, որ ինքն էր պատրաստել հիշյալ դժբախտությունները։ Ծերունու մինչև այն րոպեն փակված աչքերը միանգամից բացվեցան։ Նա տեսավ իր առջև անդունդը, որ փորել էր էֆենդու խորամանկ ձեռքը։ Նա հիշեց Վարդանի խոսքերը, որ էֆենդին զանազան տեղերում խաբեությամբ ամուսնացել է և թողել է իր կնիկները։ Մի՞թե նույն խաբեությունները նա գործ չէր դնում և Լալայի վերաբերությամբ։ Նա մտաբերեց էֆենդու վարմունքը, որ սկզբից մինչև վերջը ուներ մի ներքին գաղտնի կապ, որ ներկայացնում էր մի շարք խորամանկ գործողություններ, որոնք բոլորը թեքվում էին դեպի այն նպատակը, որ նա հնար գտնե Լալային որսալու։ Էֆենդին առաջինը եղավ, որ հայտնեց նրան պարոն Սալմանի կալանավորվելը։ Որտեղի՞ց գիտեր նա։ Մինչդեռ այդ կատարվել էր ծածուկ, գիշերային մթության մեջ, և ամբողջ գավառում գյուղացիներից ոչ ոքին հայտնի չէր։ Էֆենդին առաջինը եղավ, որ լուր տվեց, թե նրա տանը խուզարկություն պետք է լինի, և իրան բարեկամ ու մտերիմ ձևացնելով, կարողացավ խաբել ծերունուն, կարողացավ պարոն Սալմանի թղթերը ձեռք բերել, և փակելով ծերունու տան գաղտնի պահարանի մեջ, բանալին պահեց իր մոտը։ Ի՞նչ մտքով։ Մի՞թե նա չէր կարող թղթերը իր հետ տանել և ոչնչացնել։ Բայց թողեց ծերունու տան մեջ, որ հարկավորած ժամանակ բաց անե գաղտնի պահարանը և թղ-

թերը ոստիկանության ձեռքը տալով, ասե. «Ահա՛ ձեզ ապացույց այդ մարդիկների դավակցության։ Ամբողջ անցյալը մի առ մի պատկերացավ ծերունու աչքի առջև, և նա սարսափելով նկատեց, որ ինքը խաբված է։ Եվ այս պատճառով բավական դառնությամբ պատասխանեց քահանային։

— Տեր հայր, ձեր առակը բավական անհարմար էր ձեր ընդունած միջնորդության, բայց Թոմաս էֆենդին եթե իսկապես թագավոր լիներ, դարձյալ այդ շանը աղջիկ չէի տալ։ Թող ինչ լինելու է լինի։ Ես իմ տան քանդվելը և իմ ամբողջ ընտանիքի կոտորածը ավելի բարվոք կհամարեմ, քան թե ազատություն գտնել այն չարագործի ձեռքով, որ բոլորը ինքը պատրաստեց մեզ համար։ Ես այդ հասկանում եմ... ես բոլորը հասկանում եմ... նա խաբեց ինձ... բայց դրանից հետո այլևս խաբել չի կարող...

Քահանային անհասկանալի էին թվում տանուտերի թե՛ բարկությունը և թե՛ նրա մթին խոսքերը, որովհետև բուն իրողությունից տեղեկություն չուներ։ Եվ տանուտերը հարկավոր չհամարեց նրա հետ երկար բացատրությունների մեջ մտնել, մանավանդ երբ մտածեց, որ նա Ստեփանիկի կնքահայրն էր և նրա աղջիկ լինելը, բացի քահանայից մի օտար մարդ չգիտեր, ուրեմն ո՞վ պետք է հայտնած լիներ էֆենդուն այդ գաղտնիքը, եթե ոչ ինքը քահանան։

Նա համարյա դժգոհությամբ հեռացավ ծերունու տնից, իր մտքում ասելով. «Աստված առաջ մարդու խելքը գլխից կառնե, հետո հարստությունը»...

Էֆենդին տերտերի տան մեջ անհամբերությամբ սպասում էր նրան։ Երբ վերադարձավ քահանան, նա իսկույն հարցրեց.

— Ի՞նչ լուր բերեցիք։

— Չգիտեմ, ինչ անեմ,— պատասխանեց քահանան շվարած կերպով.— այդ մարդը ցնորված է։

— Մերժե՞ց։

— Այո՛։

— Ես այդ սպասում էի...

Կարծես ամբողջ երկինքը փուլ եկավ էֆենդու գլխի վրա և ճնշեց նրան իր սարսափելի ծանրության ներքո։ Նրա աչքերի առջևը սևացավ, դողդողաց, և ընկավ գետին։ Երկար այնպես անմոռուն ընկած էր, և երբեմն անգիտակցաբար ձեռքը տանում

էր դեպի ճակատը, ծեծում էր գլուխը և փետում էր իր մազերը, ասելով. «Ի՞նչ անեմ... ա՜խ, ի՞նչ անեմ...

Ամբողջ տիեզերքի մեջ չկա մի բան, որ այնպես խոնարհեցներ մարդերին, որպես սերը։ Մարդկության ամենասարսափելի հրեշները, որ դղրդում են աշխարհները, որ ներկում են արյունով երկիրները, որ ահուդողի մեջ են պահում ազգերը,— խոնարհվում են, ծունկ են չոքում սիրած կնոջ առջև. այստեղ միայն նրանք մարդ են և հանդիսանում են մարդկային բոլոր թերություններով։

Թոմաս էֆենդին այժմ սիրում էր Լալային. սիրում էր ճշմարիտ և ջերմ սիրով։ Նրա բոլոր վայրենի և գազանային անգթությունները հալվում, մաշվում և ոչնչանում էին այդ սիրո առջև։ Դևը երբ սիրում է, հրեշտակ է դառնում։ Իսկ էֆենդին սիրելով, սկսեց զղջալ։

Նա իր կյանքում երբեք չէր սիրել. և դրանով կարելի է բացատրել նրա բնավորության այն սև կողմերը, որ կյանքի մեջ ոչինչ սուրբ բան չկար նրա համար։ Աշխարհային գործերի մեջ որքան խորամիտ էր նա, որքան ճիշտ հաշվվող էր, և նպատակին հասնելու համար որքան սատանայական վարպետություն ուներ,— այնքան հոգեկան շարժումների մեջ անզգա էր նա։ Լալայի սերը վառեց հանգած սիրտը, և կաթեցրեց այնտեղ այն հրեղեն շողը, որ խավար մտքի մեջ լույս է փայլեցնում։ Նա նայեց իր գործողությունների վրա և սոսկաց։ «Այդ ի՞նչ արեցի ես»...— մրմնջում էր նա, և դարձյալ փետում էր իր մազերը։

Մինչև այն րոպեն նա չէր հասկանում իր եղեռնագործության ահավորությունը, մինչև այն րոպեն նա կարծում էր, թե նպատակի համար ամեն միջոց կարելի է գործ դնել։ Բայց այժմ զգում էր, թե ինչ մեծ չարիք գործեց ինքը։ Սկզբում նա մտածեց մի փոքրիկ խաղ խաղալ ծերունու հետ և երևույթի նման առնելով իր ձեռքը կրակի մի փոքր կայծ, դրանով կամենում էր վախեցնել նրան, որ կատարե ինչ որ ինքը կպահանջե։ Հանկարծ այդ կայծից առաջ եկավ մի ահագին հրդեհ, որ հանգցնել ինքը անկարող էր։— «Ա՜խ, այդ ի՞նչ արեցի ես»... — դարձյալ բացականչեց նա։

Քահանան ահուդողով նայում էր էֆենդու տանջանքների վրա և կարծում էր, թե նա հոգեվարքի մեջ է գտնվում։ Եվ իրավ, նա թուլացած, ընկած էր, և մարմնի վրա երբեմն երե-

վում էին տենդային ցնցումներ, իսկ շրթունքը սարսափելի կերպով դողդողում էին։ Երկար այդ դրության մեջ շարշարվում էր նա, մինչև աչքերը բաց արեց, և դառնալով քահանային, ասաց.

— Ինչ որ ասաց ծերունի Խաչոն, բոլորը ճշմարիտ է, տեր հայր. ես անարժան եմ նրա աղջկան։ Ի՞նչ կապ կարող է լինել մի ինձ նման եղեռնագործի և մի անմեղ հրեշտակի մեջ։ Անիծիր ինձ, տեր հայր, ես անեծքի եմ միայն արժանի...

Նա դարձյալ ընկավ ուշագնացության մեջ։ Քահանան կարծեց, թե մեռավ նա։

— Ա՜խ, իմ ապառիկները...— կոչեց նա,— կորա՜ն իմ ապառիկները...

ԼԴ

Դառնանք դեպի մեր պատմության սկիզբը։

Այժմ ընթերցողը, կարծեմ, ճանաչում է, թե ով էր այն երիտասարդը, որ Բայազեդի բերդի սարսափելի պաշարման ժամանակ ընդունեց բերդապահ՝ Շտոկվիչի ձեռքից նամակը, և իրան խնամ ձևացնելով, մտավ պաշարող քուրդերի մեջ, անվտանգ անցավ թշնամու բանակից, և մի քանի օրից հետո նամակը հասցրուց գեներալ Տեր-Ղուկասովին։ Ընթերցողը նույնպես հիշում էր, որ երիտասարդը, չընդունելով գեներալի առաջարկությունը՝ մնալ իր մոտ, թիկնապահի պաշտոն վարել, փառքի և աստիճանի տեր լինել,— թողեց ռուսաց բանակը և շտապեց մեկի կյանքը վտանգից ազատելու համար։

Այդ երիտասարդը Վարդանն էր։ Տեսնենք ուր գնաց նա։

Հեծնելով իր ձին, որ խլել էր մի քրդից, որին սպանեց ձորի մեջ, Վարդանը սկսեց դիմել ուղիղ դեպի Ալաշկերտի գավառը։ Այնտեղ գտնվում էին նրա հոգու ամենամոտ առարկաները։ Այնտեղ էր ծերունի Խաչոյի ընտանիքը, որի մեջ անցուցել էր այնքան շատ բախտավոր ժամանակներ, այնտեղ էր գեղեցիկ Լալան, որին տվել էր իր ամբողջ սիրտը, այնտեղ էին իր սիրելի ընկերները, որոնց հետ ուխտել էր անձնազոհություն մի սուրբ գործի համար,— բոլորը այնտեղ էին, ինչ որ Վարդանի համար պաշտելի էր, ինչ որ նրա համար նվիրական էր...

Բայց ի՞նչ վիճակի մեջ թողեց Վարդանը այդ բոլորին, երբ ինքը շղթայակապ տարվեցավ թուրքաց զինվորական գործակատարի մոտ։— Ծերունի Խաչոն իր որդիների հետ բանտարկված էին. նրա ընտանիքը ցրիվ էր եկած և յուրաքանչյուրը մի տեղում թաքնված էր. Լալայի բախտը կախված էր երկու որսորդների՝ Թոմաս էֆենդու և քուրդ բեկի գաղտնային մրցությունից. պարոն Սալմանը կալանավորված էր. Մելիք-Մանսուրը իր խումբով գնաց նրան ազատելու. հաջողվեցա՞վ արդյոք, թե ոչ, այդ մասին ոչինչ չգիտեր Վարդանը։

Բոլորին թողեց նա մի թշվառ, օրհասական դրության մեջ։ Այն օրից անցել էր մի և կես ամիս, և նրանց մասին ոչինչ տեղեկություն չուներ։ Այդ մի և կես ամսվա մեջ ո՞րքան փոփոխություններ եղան, ո՞րքան անցքեր անցան։ Ռուսները պատերազմ հրատարակեցին թուրքերի դեմ։ Գեներալ Տեր-Ղուկասովի հաղթական զորքերը տիրեցին Բայազեդի և Ալաշկերտի ամբողջ գավառները և մոտեցան Էրզրումին։ Ճնշված, հարբստահարված հայ ժողովուրդը, անցնելով ռուսաց իշխանության ներքո, սկսեց ազատ շունչ քաշել։ Հանկարծ պատերազմի բախտը փոխվեցավ։ Գեներալ Տեր-Ղուկասովը ստիպվեցավ թողնել իր տիրած երկիրները և վերադառնալ ռուսաց սահմանի վրա։ Եվ նրա ապրիլի 18-ին տիրած Բայազեդը հունիսի 27-ին կրկին անցավ թուրքերի ձեռքը։

Վերջին անցքերից Վարդանը տեղեկություն չուներ։ Նա չգիտեր, թե գեներալ Տեր-Ղուկասովի զորքերի տեղատվության ժամանակ ինչե՞ր պատահեցան։ Նա չգիտեր ալաշկերտցոց թշվառ գաղթականությունը և այդ գաղթականությունը առաջ բերող տխուր պատճառները։

Անցքերը ամենակարճ ժամանակի մեջ զարմանալի փոփոխություն ստացան։

Վարդանը, երկու և կես ամիս առաջ, շղթայակապ, թուրք զինվորներով շրջապատված, ծերունի Խաչոյի տնից տարվեցավ թուրքաց զինվորական գործակատարի մոտ։ Դեռ չհասցրած, ճանապարհին վրա հասան Վարդանի երկու ծառաները՝ Սաքոն և Եղոն և մի հանդուգն կռվից հետո կարողացան ազատել իրանց տիրոջը։ Նույն կռվի մեջ վերք ստացավ Վարդանը և համարյա իր ծառաների ձեռքի վրա տարվեցավ ռուսաց հողի վրա, Սուրմալու գավառի հայոց մի գյուղի մեջ։ Հազիվ մի փոքր առողջացել էր նա, որպես կամավոր մտավ հայոց միլիցիայի մեջ։ Նույն ծառայությունը առեցին և նրա երկու ծառաները՝

Բաքոն և Եղոն։ Դրանք Բայադեդի պաշարման ժամանակ երկուսն էլ սպանվեցան։ Բայց ի՞նչ հնարքով դուրս եկավ Վարդանը բերդից,— այդ մենք գիտենք։

Այժմ տխուր և միայնակ մտավ նա այն հովիտը, ուր գըտնըվում էր Օ... գյուղը։ Ի՞նչ տեսարան էր ներկայացնում այդ հովիտը մի քանի շաբաթ առաջ։ Որքա՞ն կենդանի և գեղեցիկ էին այնտեղի դաշտերը, ձորերը և կանաչապատ լեռները։ Հովտի ամբողջ տարածությունը, պատած հասունացած հունձքի արտերով, ծփում էր, ալեկոծվում էր ոսկեղեն ծովի նման։ Լեռների կուրծքի վրա, մրջիմի նման ցրված, արածում էին անասունների հոտերը։ Անուշ և քաղցր մեղեդիներով լսելի էր լինում անհոգ հովիվի սրինգի ձայնը։ Հարուստ բնությունը և աշխատասեր մարդը, ձեռք ձեռքի տված, արտադրում էին երկրի հրաշալիքը։ Իսկ ա՞յժմ,— այժմ ամեն ինչ փոխվել էր։ Այժմ հովտի ամբողջ տարածությունը ներկայացնում էր մի սգավոր անապատ։ Կրակը հրդեհել էր և լափել էր հունձքի բոլոր արտերը, ծածկելով դաշտերի անհուն մակերևույթը սև մոխիրով։ Ո՞վ էր գործել այդ չարությունը, ո՞վ էր ոչնչացրել մշակ մարդու արդյունաբերությունը, որի վրա թափվել էր այնքան շատ քըրտինք և աշխատություն։ Վարդանը դժվարանում էր հասկանալ։ Նա աչք էր դարձնում մի ժամանակ գեղեցիկ և մարդաշատ գյուղերի վրա. դրանք նույնպես ներկայացնում էին մի-մի մոխրի կույտեր, այստեղ ևս կրակը և հրդեհը թողել էին իրանց կործանիչ հետքերը։ Կյանքը դադարել էր ամեն տեղ. դաշտերից չէր լսվում երկրագործի ուրախ երգը. արոտամարգերի վրա անասուններ չէին արածում. ամեն ինչ լռել էր, ամեն ինչ դտնվում էր խուլ մեռելության մեջ։ Կարծես ապականության կործանիչ դևը դեռ նոր անցել էր այդ թշվառ երկրի վրայով, ոչնչացրել էր բոլորը, ինչ որ ստեղծել էր մարդու աշխատասեր ձեռքը։ Ի՞նչ էր պատահել...

Հուլիսի արեգակը սաստիկ այրում էր... Կեսօրից բավական անցել էր, երբ Վարդանը մտավ Օ... գյուղը։ Նա նմանում էր այն լեգենդական բնակությունների, որ չար կախարդի անեծքով միանգամից ավերակ էին դարձել։ Տները, ուր մի ժամանակ կյանք էր շնչում, ուր մարդիկ էին ապրում, այժմ դարձել էին նրանց գերեզմանը։ Ամեն ինչ թաղված էր տխուր և այլանդակ փլատակների տակ։ Վարդանը ուշակորույս խելագարի նման

անցնում էր իր ծանոթ փողոցներով։ Տեղ-տեղ նա տեսնում էր մարդկային մարմնի մնացորդներ։ Անշուշտ այստեղ կատարվել էր մի սարսափելի կատաստրոֆա, մի աղետալի անցք։ Նա անցավ եկեղեցու մոտից. աստուծո տունը ոչնչով չէր որոշվում իր շուրջը գտնված ավերակներից։

Նա մոտեցավ ծերունի Խաչոյի ամրոցին։ Շրջապատի պատերն էին մնացել միայն, այն ևս տեղ-տեղ քանդված։ Ներս մտավ։ Նրա առջև բացվեցավ մի ցավալի տեսարան։ Տան պարտեզը բոլորովին մերկացել էր ծառերից, այն գեղեցիկ և ստվերախիտ ծառերից, որոնց հովանու տակ անցուցել էր նա այնքան քաղցրիկ ժամեր նազելի Լալայի հետ։ Այժմ որտե՞ղ էր նա... Նրա համար էր եկած Վարդանը... Նրան էր որոնում այդ տխուր ավերակների մեջ... Մի՞թե հափշտակեց, տարա՞վ նրան քուրդ բեկը... թե ընկավ նա տաճիկ զինվորի ձեռքը... Վարդանին տիրեց մի տեսակ սոսկում, մի տեսակ քարացնող սարսուռ, երբ հանկարծ բացվեցավ նրա առջև սարսափելի իրականությունը։ Երկաթի մարդը, կարծես, միանգամից փշրվեցավ մի դառն և ամենածանր հարվածի ներքո։ Արյունը սաստիկ հոսանքով զարկեց նրա գլխին, և լուսավոր աշխարհը մթնեց նրա առջև։ Նա այլևս ոչինչ չէր տեսնում. նա այլևս ոչինչ չէր զգում։ Նա իր մարմինը մեքենաբար ցած թողեց մի թումբի վրա և երկար, գլուխը երկու ձեռքով բռնած, գտնվում էր խորին-տենդային ապշության մեջ։ Հանկարծ նրան երևույթացավ նազելի պատկերը, նույնպես տխուր, նույնպես հուսահատ և նույնպես արտասվալից աչքերով, որպես տեսել էր նրան այն վերջին գիշերում, պարտեզի լռության մեջ, երբ նա իր աղաչավոր թևքերը փաթաթած սիրած երիտասարդի պարանոցին, ասում էր նրան. «Տա՛ր ինձ... հեռացրո՛ւ այդ երկրից... ես վախենում եմ քրդերից»... Ինչո՞ւ չտարավ նրան Վարդանը, ինչո՞ւ թողեց նրան Վարդանը... Վարդանը այժմ այդ խորհել չէր կարող. շվարման մեջ կաշկանդվում է, դադարում է միտքը։

Բայց ո՞րքան դառն հիշողություններ զարթեցնում էին նրա մեջ այդ տխուր ավերակները։ Շատ ժամանակ չէր անցել, որ նրանք շեն ու հաստատ էին, շատ ժամանակ չէր անցել, որ նրանց մեջ բնակվում էր մի հոյակապ ընտանիք՝ լի և խաղաղական կյանքով։ Ի՞նչ եղավ, ո՞ւր էր այժմ այդ ընտանիքը։ Նա աչք ձգեց կանանոցի վրա, որի ծխից և մուխից մրոտած չորս

պատերն էին միայն մնացել. առաստաղը իջած էր։ Այստեղ ծերունու բազմաթիվ հարսները, աղջիկները և թոռները, ամբողջ օրը մի կենդանի շարժողության մեջ, վժվժում էին, գործում էին, աշխատում էին, և միշտ ուրախ էին, որովհետև ապրուստի կարոտություն չունեին։ Այժմ այլևս չէր լսվում ո՛չ երեխաների աղմուկը և ո՛չ էլ հոգատար մայրերի զգուշավոր ձայնը։ Նա իր հայացքը դարձրեց ծերունի Խաչոյի օդայի վրա, որ բոլորովին կործանված էր։ Նա հիշեց այն աղմկալի գիշերները, երբ ինքը պարոն Սալմանի, տանուտերի և նրա որդիների հետ, այդ օդայի մեջ, ջերմ ոգևորությամբ վիճում էին, խորհում էին, և հարյուրավոր ծրագիրներ էին պատրաստում թշվառ ժողովրդին իր ներկա տառապանքներից ազատելու, և նրան մի բախտավոր կյանք ստեղծելու համար։ Իսկ այժմ բոլորը ոչնչացած էր տեսնում, թե՛ խորհողներին և թե՛ խորհուրդը...

Ահա այնտեղից մարդիկ են երևում։ Մինչև այն րոպեն ամբողջ գավառում ոչ մի մարդկային արարած չտեսավ Վարդանը։ Ավերակների մեջ մարդիկ էին երևում։ Այդ բավական ուրախացրեց Վարդանին։ Նա մոտեցավ։ Մի քանի ողորմելի քրդեր, բրիչները ձեռք առած, փորում էին տան փլատակների հողակույտերը։ Վարդանը ճանաչեց նրանց։ Դրանք ծերունի Խաչոյի հովիվներն էին իրենց կնիկների և երեխաների հետ։ Տղամարդիկը փորում էին հողը, իսկ կնիկները նրանց մեջ իրեղեններ էին որոնում։ Հրդեհից կործանված տան մեջ շատ բաներ մնացել էին հողի տակ առանց այրվելու։

— Աստված ուժ տա,— ասաց Վարդանը ողջունելով այն ձևով, որպես ողջունում են բանվորներին։

— Բարով եկար,— պատասխանեցին նրան։

— Ի՞նչ եք պտռում։

— Ձեր բարի աչքով տեսնում եք,— պատասխանեցին քրդերը, շարունակելով իրանց գործը։

Վարդանը դառնալով քրդերից մեկին, հարցրեց.

— Ճանաչո՞ւմ ես ինձ, խլո։

— Ինչպե՞ս չճանաչել քեզ, աղա, դու մեր տիրոջ՝ տանուտեր Խաչոյի բարեկամն էիր, շատ անգամ այս տանը ապրանք էիր բերում ծախելու, և ամեն անգամ չէիր մոռանում քո ծառա խլոյի երեխաներին մի բան բաշխել։ Տե՛ս, այդ էլ քո տվածն

է,— նա ցույց տվեց իր կնոջ հագուստը, որ կարված էր կարմիր զոլավոր շիթից։

Վարդանը սկսեց հարցնել, թե ի՞նչ պատահեց այս տանը հետ, ինչո՞ւ այս գյուղը այսպես ավերակ դարձավ, ի՞նչ եղան նրա բնակիչները։

Հովիվը բրիչը դրեց գետնին, սրբեց ճակատի քրտինքը և նստեց, կարծես, նրա պատմության համար բավական հանգստություն պետք էր։

— Թո՛ղ մեր թշնամիներին էլ չպատահի այն, ինչ որ պատահեցավ այս տան հետ,— ասաց նա ցավալի ձայնով։— Մենք, իրավն ասեմ, չգիտենք բոլորը. մենք այստեղ չէինք. մենք ոչխարները տարել էինք սարը արածացնելու։ Երբ մութը պատեց, հոտը քշում էինք դեպի գյուղը (այն գիշեր իմ կինը մի վատ երազ էր տեսել, ես միշտ սպասում էի, որ մի չար բան պիտի պատահի)։ Դեռ գյուղին չհասած, հանկարծ հարձակվեցան մի խումբ քրդեր և սկսեցին թալանել հոտը։ Ես իմ ընկերների հետ վազեցինք դեպի գյուղը օգնություն կանչելու։ Տեսանք կրակը բռնել էր բոլոր գյուղը և ամեն կողմից վառվում էր։ Տեսանք՝ քրդերով լցված էր ամեն տեղ։ Շտապեցինք դեպի այդ տունը, տեսանք, նույնպես վառվում էր. ոչ մի կողմից հնար չկար ներս մտնելու։

— Ի՞նչ եղան տանեցիք։

— Թող մեր որդիների գլխին գա, եթե նրանց մի բան պատահած լինի։ Տանուտեր Խաչոն Հայրապետի և Ապոյի հետ տանը չէին։ Նրանց դեռ շատ օրեր առաջ տարել էին դատավորի մոտ։ Ասում են, որ բանտումն էին։ Կնիկներից նույնպես տանը ոչ ոք չկար։ Տանը մնացել էին ծերունու մյուս որդիները. նրանց հետ ինչ պատահեց՝ մեզ հայտնի չէ։ Մենք եկանք և տունը կրակի մեջ տեսանք։

— Մեր տերը՝ ծերունի Խաչոն բարի մարդ էր,— շարունակեց հովիվը,— նա այնքան վախենում էր աստծուց, որ մրջիմ էլ կոխ չէր տա։ Ամենքը այս տան մեջ բարի էին, ճանճերին էլ չէին վշտացնում։ Մեզ պահում էին իրանց որդիների պես։ Բայց թո՛ղ անիծվեն էշիրաթները[1]. ամեն ինչ տակնուվրա արեցին... ամեն բան փչացրին...

[1] Էշիրաթ կոչվում են վայրենի, վրանաբնակ քրդերը, որոնք լավ համարում

— Ի՞նչ պատահեց գյուղացիների հետ։

— Գյուղացիների մեկ մասը կոտորեցին, մեկը մասը գերի տարան, շատերն էլ փախան և ազատվեցան։

«Ջրի մեջ խեղդվող մարդուն չոփից բռնվելն էլ մեծ մխիթարություն է»։ Հովիվի պատմությունը որքան ցավալի և որքան դառն լիներ, այսուամենայնիվ, ազդեց Վարդանի մեջ հույսի մի փոքրիկ նշույլ։— Դեռ ամեն ինչ կորած չէ...— մտածեց նա։ Վարդանին հայտնի էր, որ ծերունի Խաչոն իր երկու որդիների՝ Հայրապետի և Ապոյի հետ պետք է բանտարկված լիներ. բանտը կարող էր պատսպարան լինել նրանց քրդերի բարբարոսությունից զերծ մնալու, եթե նույնիսկ բանտի մեջ նրանց սպանած չլիներին։ Նրան հայտնի էր նույնպես, երբ խուզարկուները հոկտեմբերյան ներքո առին ծերունի Խաչոյի տունը, նա հեռացրեց իր տնից կանանց սեռը, որոնք անշուշտ պետք է ծածկված լիներին բարեկամների և ազգականների մոտ, և Լալային անտարակույս իրանց հետ տարած կլիներին, և այսպիսով ազատ կմնային ծերունու տանը հասած աղետալի դժբախտությունից։ Բայց ի՞նչ կլիներ նրանց վիճակը, եթե միևնույն դժբախտությունը պատահած լիներ և այն տների հետ, ուր պատսպարված էին նրանք...

Հովիվի խոսքերի մեջ մի մխիթարական կետ ևս կար. «Գյուղացիների մեկ մասը կոտորեցին, մեկ մասը գերի տարան, շատերն էլ փախան և ազատվեցան»,— ասաց նա։ Գուցե այդ փախչողների թվում լիներ Խաչոյի ընտանիքը,— մտածում էր Վարդանը,— գուցե Լալան ևս նրանց մեջ լիներ։ Բայց ո՞ւր գնացին, որտե՞ղ փախան, այդ հարցերը սկսեցին տանջել Վարդանին։ Հովիվները մի որոշ բացատրություն տալ չկարողացան։ Անցքերը պատահել էին գիշերով և այնքան հանկարծակի կերպով, որ ամեն ինչ թաքնված էր խավարի և մթության մեջ։ Բայց Վարդանը իր գալու ժամանակ նկատեց, որ Ալաշկերտի ամբողջ գավառը դատարկված էր հայերից։ Անկարելի էր, որ բոլորին կոտորած կամ գերի տարած լիներին, ուրեմն, պետք է տեղի ունեցած լիներ մի սարսափելի գաղթականություն,— դեպի ո՞ր կողմը, դեպի ո՞ր երկիրը...

չունեն իրանց հաստատաբնակ ցեղակիցների մոտ, որովհետև այս վերջիններիս հետ վարվում են նույնպես բարբարոսաբար, որպես օտարների հետ։

Հեռանալով ծերունի Խաչոյի տան ավերակներից, Վարդանը չգիտեր ուր գնալ։ Հովիվներից ստացած տեղեկությունները այն աստիճան անորոշ և մթին էին, որ նա դժվարանում էր մի վճռական քայլ անել։

Երեկոյան ժամն էր արդեն. արևը թեքվում էր դեպի իր գիշերային մուտքը։ Վարդանի աչքի առջև դրած էին միևնույն տխուր և տրտում տեսարանները.— ավերակ, անմարդաբնակ գյուղեր, մշակությունից զրկված դաշտեր, և ավելի ոչինչ։ Մի՞թե այդ ամբողջ գավառում մի հատ հայ չէ՞ մնացել,— մտածում էր նա։ Հանկարծ դատարկ անապատի մեջ երևաց մի մարդկային կերպարանք։ Նա դանդաղ և անհավասար շարժումներով բարձրանում էր դեպի լեռան զառիվերը, երբեմն կանգ առնելով, երբեմն իր շուրջը նայելով և երբեմն քարերից բռնելով, որ ցած չգլորվի։ Այսպես հասավ նա մինչև սեպացած քարաժայռի գագաթը, որ կախ էր ընկած անդունդի վրա։ Արևի վերջալույսով նկարված էր նրա փոքրիկ մարմնի գծագրությունը, որ անշարժ արձանի նման, քարաժայռի գագաթից նայում էր դեպի լայնատարած հովիտը, ուր մի քանի օրվա մեջ կատարվել էին այնքան շատ եղեռնագործություններ, այնքան շատ ավերումներ։ Երկար այնպես նայում էր նա, և կարծես, մտածում էր մի բան վճռել, որը խիստ ծանր էր նրան։ Վարդանի ուշադրությունը չէր կարող չգրավել այդ երևույթը, որ նախագուշակում էր մի տարօրինակ վախճան։ Նա իր ձիու սանձը քաշեց և սկսեց հեռվից նայել։

Վարդանը տեսավ, որ քարաժայռի գլխին արձանացած մարմինը մի քանի հուսահատական շարժումներ գործեց, կրկին նայեց դեպի լայնատարած հովտի ավերակները, հետո աչքերը ձեռքերով բռնելով, իրան ցած գցեց քարաժայռի բարձրությունից դեպի իր առջև բացված անդունդը։ Փոքրիկ մարմինը գնդակի նման գլորվելով, երբեմն քարերին զարկվելով, արագությամբ պտույտվում էր մի տեղ կանգ առնելու։ Վարդանը ձին առաջ քշեց, մի րոպեում հասավ լեռան ստորոտը, օգնություն հասնելու։ Մարմինը դեռ գլորվում էր, բայց նա բոլորովին չհասավ մինչև անդունդը։ Ժայռերի պատռվածքից բուսած թուփերը բռնեցին նրան։ Վարդանը այժմ ուրախ էր։ Նա

հույս ուներ ազատել անձնասպանի կյանքը։ Նա վեր նայեց, տեսավ, որ մարմինը գտնվում էր ավելի քան հիսուն ոտնաչափ բարձրության վրա, և անշարժ բռնված էր թուփերի մեջ։ Ինչպե՞ս ցած բերել նրան,— այդ եղավ երիտասարդի հոգածության առարկան։

Նա ցած իջավ ձիուց և սկսեց հետազոտել պարսպի նման վեր բարձրացած քարաժայռի մակերևույթը, որոնելով մի ճանապարհ, որ մատչելի լիներ թուփերին։ Ոչ մի կողմից ելք չկար։ Մարմինը տակավին անշարժ գտնվում էր իր տեղում, առանց կենդանության մի նշույլ անգամ ցույց տալու։ Արդյոք ի՞նչն էր ստիպել այդ թշվառին անձնասպանություն գործել։ Վարդանի տխուր շրջապատը այժմ այն աստիճան խորհրդավոր նշանակություն էր ստացել նրա համար, որ յուրաքանչյուր չնչին առարկայի մեջ անգամ գաղտնիքներ էր տեսնում։

Նա նկատեց, որ առանց իր կյանքը վտանգի ենթարկելու անկարելի էր ազատել թշվառին, որը գուցե դեռ մեռած չէր, որին գուցե դեռ կարելի կլիներ օգնել։ Կարեկցության զգացմունքը նրան մոռանալ տվեց իր անձը և հանձն առեց մի վտանգավոր ձեռնարկություն։ Նա նկատեց, որ ժայռի կուրծքի վրա բուսած թփերից, կամ ցցված քարերից բռնելով, կարելի էր վեր բարձրանալ, եթե նրանք այնքան ամուր էին, որ կարողանային պահել իր մարմնի ծանրությունը։ Վարդանը օձի դյուրաթեքություն և կատվի արագաշարժություն ուներ։ Նա ձեռքը տարավ, բռնեց առաջին սեպացած քարից, և ճանկռոտելով սկսեց վեր բարձրանալ։ Մի քանի արշին հազիվ էր բարձրացել գետնի մակերևույթից, հանկարծ ձեռքի բռնած քարի կտորը պոկվեցավ և ինքը ցած գլորվեցավ։ «Այստեղից հարմար չէ», — մտածեց նա, առանց ուշադրություն դարձնելու իր ձեռքերի վրա, որոնք քսվելով քարերի սուր ժանիքներին, քերթվեցան և արյունը դուրս ցայտեց վերքերից։

Վարդանը այն տեսակ բնավորություններից էր, որ դժվարությունները ավելի բորբոքում էին նրա եռանդը, և կարծես, վիրավորում էին նրա անձնասիրությունը, թե ինչո՞ւ հաղթել չէր կարողանում։ Նա շտապում էր։ Արեգակը մտնելու վրա էր։ Մի քանի րոպեից հետո խավարը կթանձրանար և արգելք կդներ նրա հաջողությանը։ Նրա գլխում ծագեց մի միտք։ Նա առեց երկայն պարանը, որ կապած ուներ ձիու թամբին։ Դա նրա զենքերից

մեկն էր և ծայրին կապված էր կապարյա մի ձվաչափ գնդակ։ Նա գնդակը վեր նետեց և պարանի ծայրը ամուր կերպով փաթաթվեցավ մի ծառի կոճղից, որ հեռու չէր անձնասպանի ընկած տեղից։ Բռնելով պարանի մյուս ծայրից, նա սկսեց սարդի արագությամբ վեր բարձրանալ, և մի քանի վայրկյանի մեջ գտնվում էր անշնչացած դիակի մոտ։ Նա գրկեց դիակը, և որքա՞ն մեծ եղավ նրա զարհուրանքը, երբ նկատեց, որ իր գրկում գտնվում էր Թոմաս էֆենդին։ Մի րոպեում բարկությունը, զզվանքը, ատելությունը և վրեժխնդրության կատաղի զգացմունքը փոփոխակի կերպով պաշարեցին նրա սիրտը։ Նա պատրաստ էր այդ գարշելի մարմինը կրկին ցած գլորել ժայռի բարձրությունից անդունդի մեջ, որ մնացած ոսկորներն էլ չախչախվեին, որ նա գազանների ու գիշակեր թռչունների կերակուր դառնար։ Բայց մի՞թե կարելի էր այսպես անգթությամբ վարվել անշնչացած մարմնի հետ.— այդ հեռու էր Վարդանի մեծահոգությունից։ Նա զգուշությամբ դիակը պարանով ցած թողեց և ինքն էլ նրա ետևից վայր իջավ։

Վարդանի առաջին հոգսը եղավ ստուգել՝ արդյոք նա մեռա՞ծ էր, թե տակավին կենդանի էր։ Ոսկորները մի քանի տեղ ջարդված էին, գլուխը և երեսը քարերին զարկելով, քերթվել, այլանդակվել և արյունով շաղախված էին, բայց շնչառությունը դադարած չէր, երևում էր, որ ուշագնացության մեջ է գտնվում։ Այդ չարագործը, որ այնքան վշտեր էր պատճառել Վարդանին, որ հազարավոր տների կործանման և մի ամբողջ գավառի ամայության պատճառ էր դարձել, իր այժմյան ողորմելի դրության մեջ շարժեց Վարդանի գութը։ Գուցե ավելի բարեբախտ վիճակի մեջ, եթե էֆենդին նրա ձեռքը ընկնելու լիներ, Վարդանը կսպաներ նրան, բայց այժմ նրա առջև դրված էր մի դիակ, որին պետք էր խղճալ, որը օգնության էր կարոտ։

Վարդանը շատ գործ էր ունեցել վիրավորների հետ. ինքը շատ անգամ վերք էր ստացել, և այդ մասին հարկավորելիք սպեղանիները նա միշտ իր հետ էր ման ածում։ Նրա առաջին հոգսը եղավ վիրաթաթել էֆենդու գլխի և երեսի վերքերը, և դադարեցնել արյան հոսումը։ Գիշերային խավարը պատել էր արդեն. երկինքը ծածկված էր սև թուխպերով, սաստիկ քամին և որոտը գուշակում էին մոտալուտ մրրիկ։ Վարդանը մտածում էր այժմ մի օթևան գտնել։ Նա վեր առեց դիակը, կապեց ձիու

Վրա, բայց չգիտեր դեպի ո՞ր կողմը դիմել։ Մերձակա հայոց բազմաթիվ գյուղերում մի հայ անգամ չէր մնացել։

Վարդանը մտաբերեց, որ այն տեղից ոչ այնքան հեռու պետք է գտնվեր քրդերի մի գյուղ, սկսեց դիմել դեպի այն կողմը, իր ետևից քաշելով ձիու երասանակը, որի վրա կապված էր վիրավորը։ Այժմ երիտասարդը աղոտ կերպով հասկանում էր, թե ի՞նչ պետք է հարկադրած լիներ էֆենդուն, որ նա անձնասպանությամբ աշխատում էր հանգստացնել իր խղճի խայթը։ Միթե զղջացնո՞ղ էր նա, որ այնքան արյան, արտասուքի և այնքան ավերմունքների պատճառ դարձավ...

Վարդանի հիշողությունը չխանգարեց նրան. խավարի միջից նշմարեց լույսի նշույլները. գյուղը պետք է այնտեղ լիներ, բայց դեռ բավական հեռու էր։ Անձրևը այժմ ավելի սաստիկ սկսեց տեղալ. նա հանեց իր վերարկուն, որի մեջ փաթաթված էր, և նրանով խնամքով ծածկեց էֆենդու մարմինը։ Գիշերից բավական անցել էր, երբ նա հասավ գյուղի մոտ։ Տները, որպես առհասարակ լինում են քրդերի գյուղերում, գետնափոր խրճիթներ էին։ Վարդանը մոտեցավ առաջին հանդիպած տանը, ձեռքը մեկնեց դեպի դուռը, տեսավ, որ բաց էր։— Ահա մի բախտավոր ժողովուրդ, որ գողերից երկյուղ չունի և քնում է առանց իր տան դուռը կողպելու,— մտածեց նա։

Խրճիթում ճրագ չէր երևում, տանեցիք պառկած էին։ Վարդանը սկսեց բախել դուռը։ Քանի րոպեից հետո ներսից լսելի եղավ կանացի ձայն.

— Ո՞վ ես։

— Աստուծո հյուր եմ։

Հյուրի անունը բավական էր, որ նրանց ներս թողնեին։ Կինը իսկույն ճրագ վառեց և ընդունեց նրանց։ Երևում էր, որ նա հանված և քնած էր, որովհետև հագին միայն կարմիր շապիկ ուներ, որ իջնում էր մինչև մերկ սրունքները։ Կնիկը օգնեց Վարդանին, երկուսը միասին ներս տարան էֆենդուն և պառկեցրին օթոցի վրա։

— Հիվա՞նդ է։

— Ոչ, վիրավորված է։

Մանկահասակ կինը իսկույն բերեց մի փոքրիկ արկղիկ, որի մեջ կային զանազան տեսակ սպեղանիներ և մի քանի, կոպիտ կերպով պատրաստված, վիրաբուժական գործիքներ։

— Ես մեր տան բժիշկն եմ,— ասաց նա բաց անելով արկղիկը,— երբ ամուսինս կռվի մեջ վերք է ստանում, ես եմ դարմանում նրան։ Առաջ սկեսուրս էր բժշկում, հիմա նա պառավել է. ես նրանից սովորեցա։

Վարդանը որքան մեծ հավատ ուներ քրդերի վիրաբուժական հմտությունների մասին, դարձյալ շնորհակալություն հայտնեց, թե ինքն էլ փոքր-ինչ հասկանում է այդ արհեստը և առաջուց հոգացել է վիրավորի մասին ինչ որ պե՛տք էր։

Այս պատասխանը թեև փոքր-ինչ դիպավ մանկահասակ կնոջ սրտին, որ ցանկանում էր ցույց տալ իր շնորհքը, այսուամենայնիվ, նա հանգստացավ, երբ տեսավ, որ հիվանդի վերքերը փաթաթված էին։

— Այժմ պետք է ձեր ձիուն խնամք տանել, խեղճը մնաց դրսում։

— Դուք նեղություն մի՛ կրեք,— ասաց երիտասարդը,— միայն ինձ ցույց տվեցեք, թե որտեղ պետք է կապել։

Մանկահասակ կինը առեց ճրագը, առաջնորդեց հյուրին և բակի մեջ ցույց տվեց մի տեղ։ Վարդանը նայեց իր շուրջը, տեսավ բակը շրջապատված էր խիստ ցածրիկ ցանկապատով։

— Այստեղ երկյուղ չկա՞,— հարցրեց նա։

— Ի՞նչ երկյուղ,— պատասխանեց կինը, ծիծաղելով,— գողը գողի տնից բան չի տանի։

— Երանի՜ ձեզ,— ասաց Վարդանը իր մտքում։

Վարդանը աչք ածեց իր շուրջը, տեսավ, որ խրճիթի մեջ բացի մանկահասակ կնոջից և մի քանի երեխաներից, որ պառկած էին հատակի վրա, ուրիշ ոչ ոք չկար։ Բայց նրանց ոտնաձայնը զարթեցրուց պառավ սկեսուրին, որ մնացել էր աննկատելի։ Նա գլուխը բարձրացրեց, նստեց իր-անկողնի մեջ, հարցնելով.

— Սարո, դո՞ւն ես, եկա՞ր, որդիս։

— Սարոն չէ,— պատասխանեց մանկահասակ կինը, մոտենալով,— հյուր է։

Պառավը լսելով, որ որդին չէ, գլուխը կրկին դրեց բարձի վրա և իսկույն քնեց։

— Աչքերը չէ ջոկում, կարծում է, որ որդին է վերադարձել— իմ ամուսինը։

— Որտե՞ղ է ձեր ամուսինը, —հարցրեց Վարդանը հետաքրքրվելով։

—Բայազեդի մոտ. գնացել է կռվելու, մեր գյուղում մի տղամարդ չես գտնի. բոլորը այնտեղ են։ Ես էլ երկու օր է, որ եկել եմ, գնացել էի ավար բերելու։

— Շա՞տ բերեցիր։

— Քիչ չէր, աստուծո տվածից պետք է գոհ լինել, թե շատ լինի և թե քիչ։

—Ազատ դո՜ւստր ազատ ժողովրդի,— մտածեց Վարդանը, — որքա՜ն կյանք, որքա՜ն պարզություն կա քո մեջ։ Դու ինչով ես մեղավոր, որ քեզ սովորեցրին նայել ավարի վրա, որպես մի արդար վաստակի վրա։ Եթե դու կրթված լինեիր կյանքի այլ պայմանների մեջ, քո այդ հարուստ ձիրքերով կլինեիր մարդկության հրաշալիքը։

Վարդանը այժմ դարձավ դեպի վիրավոր էֆենդին. մարմինը շոշափեց, բոլորովին տաք էր, շնչառությունը այժմ ավելի կանոնավոր էր. միայն երբեմն արձակում էր խուլ հառաչանքներ։ Քրդուհին կրկին սկսեց թախանձել, թե ցանկանում է նայել վիրավորին։ Վարդանը թույլ տվեց. նա գիտեր, որ վիրաբուժության արհեստը շատ առաջ է գնացել քրդերի մեջ, որոնց համար վերքը և արյունը սովորական դեպքեր են, և նրանց բժշկությունը կենսական անհրաժեշտություններից մեկն է։

— Երկյուղ չկա,— ասաց քրդուհին վերջացնելով իր գործողությունը,— վերքերը աննշան են, բայց ոսկորների մեջ ջարդվածներ կան, երևում է, որ հեվանդը մի տեղից պետք է ցած ընկած լինի։

Վարդանը ոչինչ չպատասխանեց։

— Այժմ ձեզ համար պետք է ուտելու մի բան պատրաստել։

Երիտասարդը այժմ միայն զգաց, որ քաղցած է, որ ամբողջ օրը ոչինչ չէր կերել։ Բայց լինում են րոպեներ, որ մարդը թեև քաղց է զգում, բայց ուտելու ախորժակ չունի։ Նա այդ դրության մեջ էր. վիշտը և սրտի ցավը կշտացրել էին նրան։

— Ոչինչ պատրաստություն պետք չէ,— պատասխանեց նա, — ինձ միայն տվեցեք մի կտոր հաց և պանիր։

Վարդանի համեստ պահանջը վիրավորեց քրդուհու հյուրասիրական զգացմունքը, որ ցանկանում էր նրա համար մի տաք կերակուր պատրաստել։

— Մի՛ խնդրեցեք մեզ,— ասաց նա ժպտալով,— մենք այժմ այնպես աղքատ չենք, որպես առաջ։

— Այո՛, Բայազեդը հարստացրեց ձեզ...

— Բացի Բայազեդից, մենք այստեղ հունձ ունեցանք... Անցյալ տարի հիվանդությունը մեր բոլոր անասունները կոտորեց, մնացինք առանց կտոր հացի, բայց այս տարի աստված փոխարենը տվեց։ Այստեղի բոլոր հայերը գաղթեցին, գնացին և իրանց հարստության մեծ մասը թողեցին քրդերին։

— Ուր գնացին։

— Չեմ իմանում, բայց այնքան շտապով և այնքան հանկարծ եղավ նրանց գաղթականությունը, որ ժամանակ չունեցան ամեն բան իրանց հետ վեր առնել, աշխատում էին շուտով փախչել, որ թուրքերը չկոտորեն նրանց։

— Ազատվեցա՞ն։

— Մնացածներից շատերին կոտորեցին.

Սարսափելի իրականությունը փոքր առ փոքր պարզվում էր Վարդանի համար։ Անշուշտ կատարվել էր հայերի մի ընդհանուր գաղթականություն այս գավառից։ Բայց դեպի ո՞ր կողմը և ի՞նչ պատճառով,— քրդուհին նրան որոշ բացատրություններ տալ չկարողացավ։ Վարդանը ընկավ դառն մտածությունների մեջ։ Նա բոլորովին մոռացավ իր քաղցածությունը, և մինչև անգամ չէր նկատում գեղեցիկ քրդուհուն, որ իսկույն օջախի մեջ կրակ վառեց և սկսեց նրա համար ձվածեղ պատրաստել։

Ուրիշ ժամանակ, սրտի ավելի ուրախ տրամադրության մեջ, որևիցե երիտասարդ չէր կարող առանց հիացմունքի նայել գեղեցիկ կնոջ դալար հասակի վրա, որ իր պարզ շապիկի մեջ դարձյալ սքանչելի էր։ Գիշերային անկողնից նոր վերկացած լինելով, գլխին քող չուներ նա, միայն թանձր և թուխ գիսակներ պսակի ձևով կապած ուներ սիրուն ճակատի վրա։ Այսպիսի գլուխ այսպիսի հարուստ մազերով, այսպիսի դեմք այսպիսի փայլուն աչքերով, կարող էին ունենալ լեռնային կիսամերկ հավերժահարսունքը միայն, որոնք աղբյուրների հստակության մեջ են տեսնում իրանց գեղեցկությունը։

ԼԶ

Գիշերը անցել էր կեսից։ Քրդի փոքրիկ խրճիթի մեջ ճրագը դեռ վառվում էր։ Պարզ նահապետական ընտանիքը քնած էր. բոլորը միևնույն հարկի տակ, բոլորը միևնույն չորս պատերի մեջ։ Մի կողմում պառավ սկեսուրը իր անկողնի մեջ խռմփում էր. նրա մոտ պառկած էին երեխաները և ցերեկվա անհանգստությունից խառն երազներ էին տեսնում և քնի քաղցրության մեջ անդադար խոսում էին ու ժպտում։ Իր զավակների շարքում պառկած էր մայրը։ Լեռնային աղատ և պարզամիտ աղջիկը բոլորովին բնական էր համարում անծանոթ հյուրի աչքի առջև անկողին մտնել։ Խրճիթի տաքությունից նա վերմակը մի կողմ էր ձգել և կիսով չափ երևում էր նրա գեղագրական կուրծքը, որ սքողած էր գլխի խիտ ծամերով։ Նրա քունը հանգիստ էր, որպես անմեղ այծյամի քունը։

— Այժմ հասկանում եմ, թե ինչու մարդկության առաջին զույգը բոլորովին մերկ էր ապրում,— մտածում էր Վարդանը,— նրանք սկսեցին ծածկվել այն ժամանակ, երբ զգացին, թե ինչ բան է մեղքը։ Այդ ժողովուրդը դեռ չգիտե, թե ինչ բան է մեղքը, և այդ պատճառով նրան անծանոթ է այն գաղափարը, որ աշխարհային լեզվով կոչվում է ամոթ, պատկառանք և պատշաճավորություն։ Ահա մի գեղեցիկ ժողովուրդ իր սկզբնական պարզության մեջ, դրանից կարելի է հրաշալի բան շինել։ Վայրենի տունկը, երբ պատվաստվում է մշակված և ավելի քաջաքարքաշված տունկի հետ. հիանալի պտուղներ է տալիս։ Ի՞նչ կլիներ, եթե այդ առողջ և կենդանի տարրը խառնվեր հայերի հետ...

Բոլորը քնած էին. Վարդանը միայն սրթուն էր։ Այսպես երկար նստած էր նա, և տխուր ու խառն մտածությունները անկապ կերպով ամբոխվում էին նրա սրտի մեջ։ Երբեմն նա իր բորբոքված երևակայության մեջ նկարագրում էր ալաշկերտցոց աղետալի դաղթականությունը։ «Փոփոխական ծառը արմատ չէ տարածում մայր հողի մեջ, և գոսանում է»։ Այդ ազգը իր պատմության ամբողջ ընթացքում մաշվեցավ, գոսացավ և մեծ մասամբ չնչացավ իր անմիտ գաղթականության թափառումների մեջ և տակավին խելքի չեկավ։— Ահա մի նոր գաղթականություն ևս։ Եվ շատ բնական է։ Մի ծառ, որ խորին և

հաստատուն կերպով արմատ չէ ձգել մայր հողի մեջ, չէ կարող դիմանալ աշխարհի փոթորիկներին,— փչեց քամին, կատաղի մրրիկը նրան դուրս կխլե արմատից և կձգե կորստյան անդունդի մեջ... Երբեմն նրա երևակայության մեջ պատկերանում էր պարոն Սալմանի եռանդուն դեմքը, կարծես, լսում լիներ ոգելից երիտասարդի գեղեցիկ խոսքերը. նա խոսում էր առանց լռելու, քաղցր և անընդհատ կերպով. թեև երբեմն խակ մտքեր էր հայտնում, բայց բոլորը հաստատ հավատքով, բոլորը ջերմ սրտից բխած։ Երբեմն մտաբերում էր նա Մելիք-Մանսուրին, այդ կոշտ, արկածախնդիր մարդուն, որ միշտ մի առանձին բավականություն էր գտնում կյանքի վտանգավոր և փոթորկալից աղմուկների մեջ։ Երբեմն նա մտաբերում էր ծերունի Խաչոյին, այդ առաքինի նահապետին, որ ուներ այնքան սեր և գութ դեպի իր կառավարության հանձնված ժողովուրդը, որը պատրաստ էր ընդունել ամեն զոհաբերություն, գեթ մի թշվառի աչքերից արտասուքը սրբված լիներ։ Երբեմն մտաբերում էր նրա որդիներին, որոնցից ոմանք ստրկության դառն լծի տակ կորցրել էին ամեն զգացմունք դեպի անհատական ազատությունը և դեպի կյանքի ավելի բարեբախտ պայմանները, իսկ ոմանք բողոք էին հայտնում տիրող անկարգությունների, անարդարության և բռնակալության դեմ։— Այդ բոլոր խորհրդածությունների մեջ նրա միտքը դեգերվում էր, պտտվում էր, և անցնելով անհուն մթությունների միջից, վերջապես կանգ էր առնում մի կետի վրա, որից այն կողմը չէր անցնում. այդ կետը Լալան էր։

Այժմ նրա ուշադրությունը գրավեց էֆենդին։ Նրա շնչառությունը հետզհետե ծանրանում էր, ձեռքերը անդադար շարժվում էին և սեղմված շրթունքների միջից լսելի էին լինում անորոշ խոսքեր խուլ հառաչանքների հետ։ Նա գտնվում էր տենդային զառանցության մեջ։ Վարդանը լսում էր նրան, բայց ոչինչ չէր հասկանում։ Երևում էր, որ նա տանջվում էր հոգեկան սաստիկ պատերազմի մեջ։ Այդ տևեց մի քանի րոպե, հետո փոքր առ փոքր սկսեց հանգստանալ։ Այդ միջոցին գլուխը վեր բարձրացրեց, ուղղվեցավ, նստեց անկողնի մեջ, աչքերը բաց արավ, և մի վայրենի հայացք ձգելով իր շուրջը, կրկին գլուխը դրեց բարձի վրա և կրկին փակեց աչքերը։

— Ա՜խ, եթե այստեղ մի հայ լիներ...— լսելի եղավ նրա խորին նվաղած ձայնը։

— Կա,— պատասխանեց Վարդանը մոտենալով։

— Տուր ինձ ձեռքդ։

Վարդանը զգվանքով ետ քաշվեցավ։

— Այժմ որտե՞ղ եմ ես... ո՞վ բերեց ինձ այստեղ... ինչո՞ւ այսպես շուտ դուրս բերեցին ինձ դժոխքից... այնտեղ լավ էր, այնտեղ շատ լավ էր։ Կրակի ալիքների մեջ, որպես մի հրեղեն օվկիանում ծփում էի ես... հազար գլխանի վիշապները իրանց սառը գրկի մեջ ճնշում էին, խեղդում էին ինձ... Հիմա էլ տեսնում եմ նրանց, ահա՛ այնտեղ հեռավոր բոցերի մեջ, գալարվում են, լեռների նման կուտակվում են միմյանց վրա... Որքա՜ն քաղցր է եղեռնագործին այդ հրեշների ճանկերի մեջ տանջվել, գիշատվել, բայց բողոքելու համարձակություն չունենալ, և իրան արժանի համարել ավելի սարսափելի չարչարանքների...

Նա կրկին բաց արեց իր պղտորված աչքերը, նայեց Վարդանի վրա, բայց չճանաչեց, և դառնալով նրան շարունակեց.

— Ինձ վիճակված էր, բարեկամ, ամենասոսկալի մասը արդարադատի գեհենի մեջ, և դրանով ես պարծենում եմ... Այս աշխարհում ես չկարողացա բարձր տեղ բռնել, իսկ այնտեղ այդ հաջողվեցավ ինձ... Ոչ ոք ինձ հետ մրցություն անել չկարողացավ։ Ես տեսա Վասակին, Մերուժանին, Վեստ Սարգսին, Կայենին և այլ դրանց նման չարագործներին, նրանք նախանձում էին իմ փառքին... Ա՜խ, որքան մեծ բավականություն է հրեղեն ալիքների մեջ լողալ, զգալ նրա զարհուրելի ջերմությունը, այրվել, խորովել և երբեք մոխիր չդառնալ... Այդ շատ լավ է, որ վախճան չունի, հավիտենականության մեջ ամեն ինչ լավ է...

Թե որպիսի երևակայական ցնորքների արտադրություն էին այդ խոսքերը, Վարդանին դժվար չէր հասկանալ։ Բայց նա այդ խոսքերի մեջ նկատում էր զղջացած սրտի ապաշխարանքը։ Այդ պատճառով նա մոռացավ իր բոլոր ատելությունը դեպի այդ թշվառ մարդը և բռնելով նրա ձեռքից, ասաց.

— Զգաստացեք, էֆենդի, դուք շուտով կառողջանաք, ձեր վերքերը այնքան վտանգավոր չեն։

— Ես լսում եմ մի ծանոթ ձայն։

— Վարդանի ձայնը։

Նա ամբողջ մարմնով դողաց, և հեռացնելով իրանից Վարդանի ձեռքը, գոչեց.

— Հեռացրեք ինձանից ձեր ձեռքը, ես կարող եմ պղծել նրան, հեռացեք ինձանից, ես կարող եմ թունավորել ձեզ... Վարդան, ես ճանաչում եմ ձեզ, դուք բարի, միևնույն ժամանակ անողորմ սիրտ ունեք։ Գործ դրեցեք ձեր բոլոր անգթությունը և հենց այս րոպեում սպանեցեք ինձ. դրանով մեծ բարերարություն արած կլինեք ինձ, ձգեցեք իմ դիակը Ալաշկերտի անապատների մեջ, որ ես ինքս ամայի դարձրի. թող գազանները գիշատեն նրան։ Կամ եթե այնքան բարի կլինեք, ձգեցեք իմ դիակը մի փոսի մեջ և ծածկեցեք հողով. այնտեղից ես ճանապարհ կգտնեմ դեպի անդունդը, դեպի անշեջ հրո և տանջանքների հավիտենական կայարանը։ Բայց, ոչ, ոչ, ես Հայաստանի հողին արժանի չեմ, իմ զարշելի դիակը կպղծի նրա սրբությունը...

— Զգաստացեք, էֆենդի,— կրկնեց Վարդանը,— դուք չեք մեռնի. ես ամեն խնամք գործ կդնեմ, որ դուք կենդանի մնաք։

— Ես կարծում էի, թե ինձ հեշտ կլինի մեռնել և աչքերս հավիտյան փակել գործած չարություններս չտեսնելու համար։ Բայց ոչ, երկնային վրեժխնդիրը ավելի զորավոր է, քան չնչին մարդը։ Նա ինձ թողեց, որ դեռևս երկար տեսնեմ այն երկիրները, որոնց ավերիչներին առաջնորդ դարձա, որ դեռևս երկար տեսնեմ թշվառ շինականների խրճիթները, որ ես դատարկեցի բնակիչներից, տեսնել և տանջվել խղճի դառն խայթից, դա սարսափելի տանջանք է... Ես ամբողջ գավառների սպանման գործիքը դարձա, բայց իմ անձս սպանել չկարողացա։

Վերջին խոսքերը արտասանեց նա խորին մաղձային դառնությամբ, որ արտահայտում էր նրա բարոյական տանջանքը, թե որ աստիճան ձանձրացել էր կյանքից և ցանկանում էր հանդրստություն գտնել գերեզմանի մոռացության մեջ։

Այդ միջոցին զարթնեց տանտիկինը։

— Ձեր հիվանդը անհանգիստ է երևում, —ասաց նա,— չե՞ք ցանկանա մի բան։

— Ոչինչ պետք չէ, նա ջերմի մեջ է, կարելի է շուտով կանցնի...

Քրդուհին մոտեցավ հիվանդին, և ուշադրությամբ նայելով նրա վրա, հարցրեց.

— Ես ճանաչում եմ այդ մարդուն. դա Թոմաս էֆենդին չէ՞։

— Նա ինքն է։

— Էհ՜ղմ, քանի օր առաջ տեսա բոբիկ, գլուխը բաց և պատառոտած շորերով թափառում էր մեր կողմերում։ Երբ մարդիկ մոտենում էին, ճչում էր, աղաղակներ էր բարձրացնում ու փախչում։ Ասում էին, ցնորված է։

Վարդանը նոր մտաբերեց, որ էֆենդուն հանդիպեց նույն դրության մեջ, որպես նկարագրում էր նրան քուրդ կինը։ Նրա մեջ երևում էին ցնորվածի բոլոր նշանները, դեռ այն ժամանակ, քանի որ նա իրան դեռ ցած չէր գլորել ժայռի բարձրությունից։ Բայց ինչո՞ւ խելագարվեցավ նա. մի՞թե էֆենդու նման մի փչացած բնավորության մեջ կարող էր բարոյական տանջանքը այն աստիճան հարված պատճառել։

— Պատմում էին, թե էֆենդին սիրելիս է եղել մի աղջկա, և ալաշկերտցոց գաղթականության ժամանակ կորել է աղջիկը, ասում էին, որ անհայտ մարդիկ գողացել են աղջկան։

— Ի՞նչ մարդիկ... ի՞նչ աղջիկ... գոչեց Վարդանը խռովյալ ձայնով և նրա դեմքը ընդունեց զարհուրելի արտահայտություն։

— Չեմ իմանում, այդպես էին ասում։

Վարդանի հարցը ավելորդ էր. նա առաջ եկավ ակամա հետաքրքրությունից, որ պատահում է հուսահատ մարդերի հետ։ Վարդանը գիտեր, թե ով էր էֆենդու ցնորքի առարկան, այժմ նրան կորցրել էր... այժմ նրան գողացել էին...— դրանով ոչնչանում էին Վարդանի մնացած հույսի նշույլները, թողնելով նրա հանգած սրտի մեջ տխուր հիշողությունների այրված մոխիրը միայն։

Գիշերը աննկատելի կերպով անցել էր, առավոտյան լույսը սկսել էր բացվել. դրսից լսելի էր լինում թռչունների ուրախ երգը. փոթորկալից և անձրևային գիշերին հաջորդել էր ամառային վարդակարմիր առավոտը։

Հանկարծ խրճիթի դռնից ուրախությամբ ներս վազեց մի աղջիկ. երևում էր, որ հեռու տեղից էր գալիս, որովհետև ոտքից գլուխ թրջված էր և Երկայն հագուստի ստորին մասերը թաթախված էին ցեխի մեջ։

— Ջավո՜...— կոչեց տանտիկինը և գրկեց նրան։

— Քո՜ւյրս...— գոչեց աղջիկը և իր կարմրած թշերը մոտեցրեց նրա շրթունքին։

Վարդանը, կարծես, առժամանակ մոռացավ իր ցավը և սկսեց նայել երկու քույրերի ջերմ գրկախառնության վրա։ Նկվորը մի բարձրահասակ աղջիկ էր ցամաք կազմվածքով և բավական գեղեցիկ դեմքով։ Նա կրում էր իր քրոջ սև, վառվռուն աչքերը, որոնք ուրախությունից ավելի անհանգիստ և ավելի շարժուն էին այժմ։ Նրա թե՛ դեմքը և թե՛ անունը ծանոթ էին երևում Վարդանին, բայց թե որտե՞ղ և երբ էր տեսել նրան,— դժվարանում էր հիշել։

— Գիտե՞ս ինչ կա,— խոսեց գեղեցիկ աղջիկը,— Ջավոն դրանից հետո քեզ մոտ կմնա, շատ ժամանակ քեզ մոտ կմնա, տիկինը արձակեց Ջավոյին։

Որքան ուրախ լինեին այդ խոսքերը, որքան քաղցր լիներ երեց քրոջը Ջավոյին երկար ժամանակ իր մոտ տեսնելը, այսուամենայնիվ, նա բոլորովին շփոթվեցավ, երբ լսեց, թե տիկինը արձակել է նրան։ Ի՞նչ պատճառով պետք է արձակած լիներ, քանի որ առաջ խիստ դժվարությամբ էր հեռացնում Ջավոյին, երբ նա ցանկանում էր երբեմն իր քրոջը տեսության գնալ։

— Ի՞նչ է պատահել։

— Մի՛ վախիր, չար՝ ոչինչ չէ պատահել։

Եվ Ջավոն սկսեց պատմել, թե տիկինը առժամանակ միայն արձակեց, որ բնակվի իր քրոջ մոտ մինչև կրկին կանչել կտա։ Տիկինը Ջավոյին փող տվեց, հագուստներ բաշխեց, շատ-շատ լավ բաներ ընծայեց, և բոլորը Ջավոն բերեց իր հետ։

— Տե՛ս, բոլորը ցույց կտամ քեզ։

Նա սկսեց բաց անել իր հետ բերած կապոցը, որ ցույց տա իր ստացած ընծաները։ Բայց երեց քույրը չբավականանալով Ջավոյի տված բացատրություններից, կրկին հարցրուց.

— Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ արձակեց քեզ։

— Ջավոն հետո կպատմի, դա շատ երկար է, այնքան երկար, որքան Լեյլիի և Մաջնունի հեքիաթը։— Հետո նա հայտնեց, թե ինքը խիստ հոգնած է, ամբողջ գիշերը ճանապարհ է եկել, անիծված անձրևը շատ տանջեց նրան, և այժմ սաստիկ քաղց է զգում, խնդրեց քրոջը, որ իրան քիչ կաթ տա խմելու։ Քույրը շտապով առեց կովկիթը, վազեց փարախը, որ կովը կթե և քրոջ համար թարմ կաթ բերե։

Ջավոն այժմ միայն նկատեց, որ տանը հյուր կա՝ և նրա

կրակոտ աչքերը հանդիպեցան Վարդանի հետաքրքրությունով լցված աչքերին։

— Նազելի Ջավո, դու Խուրշիդի աղախինն ես, այնպես չէ՞։

— Ուղիղ այդպես է։

— Ֆաթթահ-բեկի տիկնոջը։

— Հենց նրա։

Վարդանը այժմ գտավ խառնաշփոթ թելի ծայրը և դիտմամբ հարցրեց.

— Բեկը մի երկրորդ կին էլ ունե՞, այն հայ աղջկան։

— Կունենար, եթե Ջավոն սատանայի նման չգողանար նրան։

— Հայ աղջկա՞ն։

— Հայ աղջկան՝ Լալային, Ստեփանիկին, նա երկու անուն ունի։

Վարդանի սիրտը սկսեց ուրախությունից բաբախել։

— Ջավոն ո՞ւր տարավ գողացած աղջկան։

— Ջավոն տարավ իր տիկնոջ մոտ և տիկինը ծածուկ ուղարկեց նրան ռուսաց երկիրը։

Վարդանի դեմքը պայծառացավ մի աննկարագրելի բերկրությամբ, և մոռանալով իրան, գրկեց Ջավոյին և չգիտեր ի՞նչ կերպով հայտնել իր անհուն շնորհակալությունը։

— Համբուրիր Ջավոյին, Ջավոն ազատեց նրան։

— Ջավոն իմ քույրս է,— ասաց Վարդանը և եղբայրաբար համբուրեց նրան։

Ներս մտավ երեց քույրը, բերելով փրփրադեզ կաթնի ամանը։ Ջավոն առեց նրա ձեռքից և միանգամով մինչև կեսը խմեց։ Տաք կաթը կազդուրեց նրա հոգնությունը և քաղցը։

— Հիմա պատմիր,— ասաց նրան երեց քույրը։

Ջավոն իր հատուկ ձևով սկսեց պատմել, թե իր տիկնոջ ամուսինը՝ Ֆաթթահ-բեկը վաղուց սիրում էր մի հայ աղջկա, որը Օ... գյուղի տանուտեր Խաչոյի աղջիկն էր։ (Տանուտերը ծանոթ էր բոլոր հարևան քրդերին)։ Տիկինը չէր ցանկանում, որ հայ աղջիկը բեկի կինը լինի, որովհետև նա գեղեցիկ էր և կարող էր միանգամայն գրավել բեկի սիրտը։ Նախանձից և խանդոտությունից դրդված, տիկինը ամեն կերպով աշխատում էր, որ արգելե այդ ամուսնությունը։ Բայց բեկը սաստիկ ընդդիմանում էր նրան։ Եվ երբ բեկը դարձավ Բայազեդի կռվից,

պատրաստվում էր գնալ բերել հայ աղջկան, այն ժամանակ տիկինը Ջավոյին իր հավատարիմ սպասավորներից երկուսի հետ առաջուց ուղարկեց Օ... գյուղը, որ գնան, և դեռ բեկը այնտեղ չհասած, գողանան և ուրիշ երկիր տանեն Լալային (այսպես էր նրա անունը)։ Ջավոն գտավ Լալային նույն գյուղի քահանայի տան մեջ, իր եղբոր կնոջ՝ Սառայի հետ թաքնված։ Սառան վաղուց գիտեր բեկի նպատակը, և երբ Ջավոն պատմեց նրան Խուրշիդի դիտավորությունը, նա ուրախությամբ ընդունեց Լալային վեր առնել և գիշերով մեր սպասավորների հետ փախչել Օ... գյուղից։ Նրանք տարան Լալային ռուսաց երկիրը, և բեկը մնաց «վա՛յ կարդալով» և «իր գլխին տալով»։ Տիկինը սկսեց ծածուկ ծիծաղել և ուրախանալ, որ խլեց նրանից գեղեցիկ Լալային։ Մեր սպասավորները մի քանի օրից հետո դարձան և լուր բերեցին, թե անվտանգ տեղ հասցրին աղջկան։ Իսկ Ջավոյին տիկինը ասաց, որ գնա առժամանակ իր քրոջ մոտ մնա, մինչև բեկի բարկությունը անցնի։

Ջավոյի պատմությունը այն աստիճան գրավել էր իր քրոջը և մանավանդ Վարդանին, որ նրանցից ոչ ոք չնկատեց, որ հիվանդը նույնպես ուշադրությամբ լսում էր։ Երբ Ջավոն վերջացրեց, լսելի եղավ նրա ձայնը.

— Հիմա կարող եմ հանգիստ մեռնել, Լալան ազատված է...

Վարդանը մոտեցավ և բռնեց նրա տատանվող գլուխը, որ դողդողաց և ընկավ բարձի վրա։

— «Սոված էշը գարու հոտն առավ, մինչև գարին բերելը հոգին տվավ»...

Այդ եղավ էֆենդու վերջին խոսքը։ Քրդուհին և իր քույրը նույնպես մոտեցան հիվանդին։

— Նա մեռավ,— ասաց Վարդանը։

— Խե՜ղճ,— կրկնեցին երկու քույրերը։

Լե

Հուլիսի արեգակը սաստիկ այրում էր. կարծես մթնոլորտի ամբողջ տարածությունը լցված լիներ հրեղեն ասեղներով, որոնք կայծերի փոշու նման շողշողում էին, կիզում էին և մեղմ ալիքներով սփռվում էին դեպի ամեն կողմ։ Տոթը անտանելի էր։ Թռչունները հոգնած, թուլացած, ծածկվել էին ծառերի թա-

զուտներում, որոնց վրա մի տերև անգամ չէր շարժվում մեռած քամուց։ Միայն ճանճերը, մոծակները և մանր միկրոսկոպական մժեղները անամոթաբար ասպարեզ էին մտել, և միլիոնավոր խումբերով վժվժում էին, ծվծվում էին, շնչառության հետ մտնում էին մարդու բերանը, քիթը, ականջները, կամ իրանց թունավոր խայթոցներով ավելի էին այրում մարդու մարմնի բաց տեղերը, քան թե արեգակի հրեղեն ճառագայթները։

Ծերունի Վաղարշապատը այդ ժամանակ ներկայացնում էր մի տարօրինակ տեսարան։

Որ կողմը և նայում էիր, ամեն տեղ ամբոխված էր մի սարսափելի բազմություն։ Կին և աղջիկ, ծեր և երեխա,— բոլորը կիսամերկ, բոլորը աղքատ,— թափված էին այնտեղ։ Փողոցները լի էր մուրացկաններով։ Էջմիածնա վանքի պարսպի շուրջը և ներսը, Ներսեսի լճի շրջակա ծառերի հովանու տակ, մինչև Գայանեի վանքը, մինչև նույն կաթողիկոսից մենկարկված անտառի վերջը, ուր կար մի կտոր ստվեր, որ կարող էր պահպանել արևի կիզող ճառագայթներից,— ամեն տեղ կարելի էր տեսնել նույն թշվառ և ողորմելի բազմությունը։— Դրանք ալաշկերտցի գաղթականներն էին։

Երեք հազար ընտանիք, թողնելով իրանց հայրենիքը, թողնելով իրանց տունը, տեղը և բոլոր հարստությունը, թուրքերի սրից և կրակից ազատվելու համար փախել, ապաստան էին գտել այստեղ։ Վաղարշապատում չկար մի տուն, ուր 10—20 ընտանիք այդ թշվառներից միմյանց վրա ածված չլիներին։ Անասունների ախոռները, մարագները և բակերը լիքն էին նրանցով։ Բավական չէր, որ պետք էր կերակրել այդ ահագին բազմությունը, այլ պետք էր և դարմանել, և բժշկել նրանց։ Թողնելով Ալաշկերտի հովասուն լեռնադաշտերը, այդ անբախտ ժողովուրդը հուլիսի դժոխային տոթերի ժամանակ հանկարծ ընկել էր Արարատի մեջ, ենթարկվելով զանազան տեսակ հիվանդությունների։

Կեսօր էր. ամառային միջօրեի այն ժամը, երբ գյուղացու աշխատությունը դադարում է դաշտերում, մշակ մարդը և երկրագործական անասունները քաշվում են մի հովանավոր տեղ հանգստանալու համար։ Ավելի բախտավոր արարածները առատ ճաշից հետո քնած են լինում իրանց կոկիկ սենյակներում։ Օր-

վա այդ ժամին, բազմաթիվ ալաշկերտցի աղքատների թվում, որ դռնից դուռը ընկած մուրացկանություն էին անում, իր վրա առանձին ուշադրություն էր դարձնում առավելապես մեկը։ Դա մի մանկահասակ աղջիկ էր, որի տարիքը 16-ից ավելի չպիտի լիներին։ Նիհար և մաշված դեմքը, որ կորցնելով իր բնական գույնը, ստացել էր մի տեսակ դալկային դեղնություն, նայողի վրա այն ազդեցությունն էր անում, որպես թառամած վարդը, որ մոտ էր իր ցավալի վախճանին։ Սևորակ աչքերի մեջ նկարված էին խորին տխրություն։ Գունատ շրթունքը ցույց էին տալիս, որ նա դեռ ոչ բոլորովին առողջացել էր իրան մաշող հիվանդությունից։ Այդ սգավոր դեմքը, որ մի ժամանակ իր գեղեցկությամբ պետք է սքանչելի եղած լիներ, իր այժմյան նիհարության մեջ դարձյալ համակրական և կախարդիչ էր։

Կարծես թշվառության դեր կամեցել էր մի չար կատակ խաղալ այդ նազելի արարածի հետ, և պարուրելով նրան իր քըրքըրված ցնցոտիների մեջ աշխատել էր այլանդակել և նսեմացնել գեղեցիկը ու պատկառելին։ Բայց դրանով ավելի գրավիչ և ավելի կարեկցության արժանի էր շինել նրան։ Հնամաշ և պատառոտած հագուստը հազիվ սքողում էր կիսամերկ մարմինը, երևում էր, որ այդ հագուստի ամեն մի կտորը նա մի բարերար ձեռքից պետք է ստացած լիներ, որովհետև թե՛ իրանց ձևերով և թե՛ գույներով տարբերվում էին միմյանցից. բացի դրանից, մի կտորը լայն էր, մյուսը չափազանց նեղ, մեկը սովորականից կարճ էր, մյուսը շատ երկայն։

Նա դանդաղ դողդոջուն քայլերով գնում էր գյուղի փողոցների մեկի միջով. բոբիկ ոտները դժվարությամբ էր կոխում արեգակի ճառագայթներից տաքացած գետնի վրա, որ շիկացած երկաթի նման այրում էր։ Նա իր հետ ման էր ածում երկու փոքրիկ երեխաներ, որոնք երկու հրեշտակների նման քարշ էին ընկած նրա ձեռքերից։ Երկար նա գնում էր, և գլուխը ծռած, լուռումունջ կանգնում էր տների դռների մոտ, և առանց համարձակվելու ներս մտնել, ժամերով սպասում էր, մինչև տնեցիներից մեկը նրա վրա ուշադրություն կդարձներ և մի կտոր հաց կտար։ Երևում էր, որ նրա հպարտ շրթունքը չէին սովորած ողորմություն խնդրելու, երևում էր, որ նա սնվել և մեծացել էր ավելի բարեբախտ վիճակի մեջ, իսկ այժմ տխուր հանգամանքների պատճառով ընկած էր մի տարօրինակ կյանքի

մեջ։ Ընկճված անձնասիրությունը, սեփական արժանավորության վիրավորանքը, վաղեմի փառքի կորուստը, բարոյական տանջանքը,— բոլորը միախառնվելով, լցրել էին նրա սիրտը աննկարագրելի դառնությամբ, որ ավելի էր մաշում և տրորում նրան, քան թե այն ցավը, որ արդեն սկսել էր սպանել նրա մարմինը։

Նա դեռ անցնում էր մի դռնից մյուս դուռը, բայց նրա վրա ոչ ոք ուշադրություն չէր դարձնում։ Վերջապես նա զապելով իր ամոթխածությունը, ոտքը ներս դրեց մի տան շեմքից, և հանդիպելով տանտիկնոջը, երկչոտ ձայնով ասաց.

— Մի կտոր հաց...

Այդ ձայնի մեջ կային բոլոր հնչյունները, որ արտահայտում էին վշտալի սրտի դառն և ցավալի զգացմունքները։

Տանտիկինը կոպիտ ձայնով պատասխանեց.

— Կոտորվե՛ք դուք, ո՞ր մեկիդ տանք...

Աղջիկը նայեց իր շուրջը, տեսավ, իրավ, իր նման շատերը լցված էին այնտեղ։ Նա պատրաստ էր իսկույն հեռանալ, բայց նրան պահեց մի միտք։ Նա իր մասին չէր մտածում, թեև քաղցած էր, բայց մտածում էր այն երկու փոքրիկ երեխաների վրա, որ ոչինչ չէին կերել, մտածում էր նրանց հիվանդ մոր վրա, որ անոթի պառկած էր։

Նա արտասուքը սրբեց և կամենում էր կրկնել իր աղաչանքը։ Այդ միջոցին փոքրիկ շնիկը դուրս պրծավ դռան տակից և իր սուր ատամներով քարշ ընկավ խեղճ աղջկա փեշերից։ Նա սարսափով դուրս փախավ, իր հագուստի մի մասը թողնելով շան բերանում։ Երկու փոքրիկները ցավալի ճիչ բարձրացրին և փոքր էր մնում, որ սրտաճաք լինեին։

Նա, կապկպելով իր հագուստի ծվենները, այժմ սկսեց դիմել դեպի վանքը։ Երկու փոքրիկ երեխաները ուրախությունից մոռացան իրանց լացը և երկյուղը, երբ ճանապարհի վրա ընկած տեսան մի կտոր ձմերուկի կեղև։ Երեխաներից մեկը վազեց, վեր առավ կեղևը, և իր փեշերով հողն ու փոշին սրբելով, սկսեց կրծել։ Մյուս երեխան աշխատում էր խլել նրա ձեռքից, ասելով.— ինձ էլ տուր, ես էլ քաղցած եմ։ Երկուսի մեջ առաջ եկավ մի փոքրիկ կռիվ։ Մանկահասակ աղջիկը հանգստացրեց նրանց, և բաժանելով կեղևը, երկուսին էլ հավասար մասը տվեց։

Այդ միջոցին շտապով անցնում էր նրանց մոտից մի երիտասարդ։ Նա տեսնելով աղջկան երկու փոքրիկ երեխաների հետ, ճանաչեց նրանց և մոտեցավ։

— Դու դեռ ոչ բոլորովին առողջ ես, —ասաց նա,— ես պատվիրեցի քեզ դուրս չգալ, դու դարձյալ ման ես գալիս։

Աղջիկը շփոթվեցավ և չգիտեր ինչ պատասխանել։ Նա իրավ, առողջ չէր, նա այնքան տկար էր, որ հազիվ կարողանում էր իրան ոտքի վրա պահել։ Երիտասարդը նկատեց երկու երեխաներին, որոնք դեռ կրծում էին ձմերուկի կեղևը։ Նա խլեց կեղևը, և մի կողմ ձգելով ասաց.

— Ինչպե՞ս կարելի է ուտել այդ։

Երեխաները ավելի համարձակ գտնվեցան, քան շփոթված աղջիկը, և արտասուքը աչքերում պատասխանեցին.

— Քաղցած ենք։

— Մի՞թե վանքում ձեզ չեն կերակրում, —դարձավ երիտասարդը դեպի աղջիկը։

Մանկահասակ աղջիկը փոխանակ հարցին պատասխանելու, իր գեղեցիկ, նվաղած աչքերը դեպի գետին ուղղելով, մեծ դժվարությամբ ասաց.

— Եթե կարելի էր, մեզ համար ուրիշ տեղ ճարեիք, և մենք դուրս գայինք վանքից։

— Երևի այն անպիտան վարդապետը ձեզ վա՞տ է նայում։

Աղջիկը ոչինչ չպատասխանեց, և շարունակելով նայել դեպի ցած, կարծես, չէր ցանկանում իր բազմիմաստ հայացքը դարձնել դեպի հետաքրքիր երիտասարդը, զգուշանալով, որ նա իր դեմքից չգուշակեր այն, ինչ ինքը ակամա ստիպված էր թաքցնել սրտում։

— Հասկանում եմ...— պատասխանեց երիտասարդը խորին վրդովմունքով։ —Հիմա գնա, այդ շոգին լավ չէ ման գալ, դու հիվանդ ես, կարող ես բոլորովին տկարացնել քեզ, մեկ ժամից հետո ձեզ մոտ կլինեմ, և ամեն ինչ կկարգադրեմ, որ լավ հոգ տանեն ձեզ։ Ինչպե՞ս է եղբորդ կինը։

— Էլի այնպես է, այս գիշեր ավելի անհանգիստ էր,— պատասխանեց աղջիկը տխուր ձայնով։ Եվ այժմ, իր ամոթխած աչքերը դարձնելով դեպի երիտասարդը, հարցրեց.

— Դուք մեզ չեք թողնի վանքում, այնպես չէ՞, պարոն։

— Լավ, ես ձեզ համար մի ուրիշ բնակարան կճարեմ,—

ասաց երիտասարդը և շտապով հեռացավ, իր մտքում կրկնելով.— խեղճ արարած, ի՞նչ շուտ ձանձրացրեց ձեզ վանքը...

Երիտասարդը բժիշկ էր, մի հարուստ վաղարշապատցի կալվածատիրոջ որդի։ Նա նոր էր ավարտել իր ուսումը Ս. Պետերբուրգի համալսարանում, և որպես նոր օրդենի մեջ մտած ասպետ, ընկել էր աշխարհ, արկածներ էր որոնում, իր արհեստին վերաբերյալ հերոսությունները ցույց տալու համար։ Ալաշկերտցի գաղթականները, իրանց բազմաթիվ հիվանդներով, բաց արին նրա առջև գործունեության մի ընդարձակ ասպարեզ։ Թարմ, բարի ցանկություններով լի երիտասարդի անխոնջ եռանդը մեծ բավականություն էր գտնում այդ թշվառներին օգնելու գործում։ Նրա մեջ միացած էին արհեստը բժշկի առաքինության հետ։ Նա ոչ միայն անվարձ այցելություններ էր անում և ձրի դեղեր էր բաժանում հիվանդներին, այլ հոգ էր տանում և նրանց բնակարանների և լավ կերակրելու մասին։ Այդ էր պատճառը, որ մանկահասակ աղջիկը այնպես մտերմաբար դիմեց նրան, աղաչելով, որ իրանց համար մի այլ կացարան տնօրինելու հոգ տանե։

Բժշկի հեռանալուց հետո աղջիկը շարունակեց իր ճանապարհը դեպի վանքը։ Օրորվելով, տատանվելով, նա հազիվ կարողանում էր փոխել իր քայլերը։ Մի քանի անգամ կանգ առեց, մի քանի տեղ նստեց, մինչև հոգնությունը անցնի։ Վանքի հանդեպ գտնվող գինետներից նրան կանչեցին, խոստանալով, թե փող կտան։ «Այդ մարդիկը ավելի վատ են, քան թե քրդերը»...— ասաց նա իր մտքում և կանգնելով, շարունակեց իր ճանապարհը։

Նա անցավ պարտեզը, անցավ վանքի գլխավոր մուտքի մոտից, պտույտ տվեց պարսպի արևմտյան կողմով և դուրս եկավ այն դռան մոտ, որ տանում է դեպի լիճը և անտառը։ Այս դռնով նա մտավ Ղազարապատ։ Վանքի այդ մասը տոն օրերում ծառայում է որպես հյուրանոց բազմաթիվ ուխտավորների համար, իսկ այժմ լցված էր ալաշկերտցի հիվանդներով։ Նա մտավ ներքին հարկի խուցերից մեկի մեջ։ Այդ խոնավ խորշի մեջ, զրկված օդից և լույսից, կարմիր աղյուսներով պատած հատակի վրա, պառկած էր մի կին։ Ոչ մահիճ ուներ նա և ոչ մահճակալ, տակին ձգած ուներ մի խուրձ հարդ, իսկ վրան ծածկած ուներ մի փալասի կտոր։ Երկու երեխաները վազեցին

և գրկեցին հիվանդ մորը և սկսեցին համբուրել նրա ոսկրացած ձեռքերը։ Բայց նա չպատասխանեց սիրելի զավակների գգվանքին, որովհետև այդ բոպեում քնած էր, ավելի ճիշտ ասած, գտնվում էր մի տեսակ անզգայության մեջ։

Մանկահասակ աղջիկը նկատեց երկու փոքրիկ երեխաներին, որ չանհանգստացնեն հիվանդ մորը, այլ գնան դուրսը խաղալու։ Նրանք հնազանդությամբ դուրս եկան, և նստելով խուցի դռան մոտ, սկսեցին հողով, խճերով և չոփերով իրանց համար փոքրիկ տնակներ շինել և նրանցով զվարճանալ։ Իսկ ինքը՝ աղջիկը պառկեց մերկ հատակի վրա, և թևքը բարձի փոխարեն նեցուկ տալով գեղեցիկ գլխին, արտասուքով լի աչքերը դարձրուց դեպի հիվանդը և սկսեց նայել նրա վրա։ Նա այնքան հոգնած էր, այնքան թուլացած էր և այնքան հոգեպես տանջված էր, որ ցանկանում էր մի փոքր քնել, և մի փոքր հանգստանալ, բայց ակամա արտասուքը խեղդում էր նրան, վշտալի աչքերը փակել կարող չէր։ Նա այդ աչքերը կցանկանար հավիտյան փակել և չտեսնել լույս աշխարհը, որ այժմ խավար էր նրա համար։ Ի՞նչ դժբախտություններ ասես չկրեց նա, ի՞նչ չարչարանքներ չհամբերեց նա։ Նա կորցրեց հայր, եղբայրներ, հարուստ տուն, ազգականներ,— բոլորը, բոլորը ինչ որ թանկ էր նրա համար, ինչ որ սիրելի էր նրան։ Իսկ այժմ օտար երկրում, անտեր, անպաշտպան, հանձնված դառն ճակատագրի կամքին, թափառում էր նա դռնից դուռ։ Իր միակ նեցուկը, իր միակ պաշտպանը, որի վրա հույս էր դրել նա, այժմ հիվանդ էր. գուցե այսօր, գուցև վաղը կմեռներ նա, ի՞նչ կլիներ այնուհետև իր վիճակը, ո՞վ կպահեր անբախտ մոր անբախտ զավակներին։ Գոնե ինքը առողջ լիներ, գոնե կարողանար աշխատել, այն ժամանակ ամեն բան կաներ, ամեն տեսակ ծանր աշխատություն հանձն կառներ և կպահեր որբիկներին։ Բայց ինքը նույնպես ուժից ընկած, նույնպես թույլ և տկար, օրըստօրե հալվելով և մաշվելով, սպասում էր իր ըղձալի օրհասին, որ ուշանում էր մոտենալ իրան։— Այս տխուր մտածությունների մեջ ալեկոծվում էր թշվառ աղջիկը և արտասուքի ջերմ կաթիլները գլորվում էին նրա գունաթափ երեսի վրա, երբ դրսից մի ճիչ բարձրացավ և մի կոպիտ ձայն ավելի խռովեց նրա անհանգստությունը։

Երկու երեխաները խուցի դռան մոտ փոքրիկ տնակներ էին

շինում և զվարճանում էին։ Այդ միջոցին անցավ նրանց մոտից մի հաստափոր աբեղա սև վեղարով, սև փարաջայով և սև դեմքով.— սպիտակ նրա մեջ ոչինչ չկար։— Տեսնելով երկու փոքրիկներին, նա կատաղի կերպով գոռաց.

— Նե՛րս կորեք, լակոտներ, ինչո՞ւ եք փչացնում գետինը։

Երեխաները ուշ շարժվեցան, և աբեղան հարձակվելով նրանց վրա քիչ էր մնում, որ պիտի երկուսին էլ ջարդուփշուր աներ իր ոտների տակ, եթե նրանք աղաղակելով ներս չվազեին խուցը։ Զավակների աղաղակը ուշքի բերեց անզգայացած մորը։ Նա գրկեց երկուսին էլ, սկսեց հանգստացնել, առանց գիտենալու նրանց լացի պատճառը։ Այդ միջոցին խուցի շեմքի վրա երևաց աբեղայի դաժան կերպարանքը։

— Այս րոպեիս դուրս կորեք այստեղից,— գոչեց նա բարկացկոտ ձայնով,— քանի օր է ասում եմ, որ ձեզ համար տեղ ճարեք և հեռանաք այստեղից, դուք էլի մնում եք։

Ո՞ւմն էր ասում այդ խոսքերը, հիվանդ մայրը ոչինչ չէր լսում, նա միայն գրկած ուներ իր զավակներին, որոնց, կարծես, առաջին անգամն էր տեսնում։ Երկու ամբողջ օր գտնվում էր նա խորին ուշաթափության մեջ, այժմ սիրելի զավակների ձայնը արթնացրեց նրան։ Ո՞ւմ հետ էր խոսում աբեղան։ Այս խուցի մեջ ոչ ոք նրան լսել և հասկանալ կարող չէր։ Մանկահասակ աղջիկը նրա ձայնից սոսկաց, սարսափեցավ և միանգամայն կորցրեց իրան։ Իսկ փոքրիկ երեխաները երկյուղից կծկվել էին անբախտ մոր գրկում և դողդողում էին։

Աբեղայի բարկությունը ընդհատեց մի այլ ձայն.

— Այդ ի՞նչ շանթեր ես արձակում, հայր սուրբ։

— Բարով, պարոն բժշկապետ, ինչպե՞ս եք, լա՞վ եք, ինչպե՞ս է ձեր քեֆը,— ասաց աբեղան ժպտալով և ավելի խաղաղ կերպարանք ընդունելով։

— Իմ քեֆը հալա թող մի կողմը կենա,— պատասխանեց բժշկապետը ուղիղ հայր սուրբի աչքերի մեջ նայելով,— դու այն ասա՛, էլ ի՞նչ ֆանդեր ունես, հայր սուրբ, ինչո՞ւ էիր նեղացնում այդ խեղճերին։

— Քո արևը վկա, ոչինչ ֆանդեր չկա. ես միայն ասում էի, որ իրանց համար տեղ ճարեն և հեռանան այստեղից։ Քեզ հայտնի է, որ կարգադրել են երկու օրից ավել չպահել գաղթականներին վանքում։ Ամեն օր նոր գաղթականներ են գալիս, պետք է հները գնան, որ նորերը նրանց տեղը բռնեն։

— Ո՞ւր գնան, դու տեսնում ես, որ մեռնում են։

— Ես ի՞նչ անեմ, ինձ այսպես է հրամայված։

Հայր սուրբը վանքի հյուրընկալն էր, մի խեղկատակ և շաղակրատ աբեղա, որի հետ ամեն մարդ թույլ էր տալիս իրան հանաքներ անել, առավելապես պարոն բժշկապետը, որ մի առանձին հաճություն ուներ պարսավել կղերին։

— Այդ խոսքերով ինձ չես խաբի,— ասաց նա,— դրուստն ասա՛, հայր սուրբ, ի՞նչ փորացավ ունես։ Աղջկա աչքերում լույս կա, հա՞։

— Է՛հ, թող տուր, հեր օրհնած, ինչպե՞ս ես խոսում։

— Կոտորվե՛ք դուք, կոտորվե՛ք,— ասաց բժշկապետը և մտավ խուցի մեջ։

Բժշկապետի այցելությունը մի առանձին մխիթարություն ազդեց թշվառ ընտանիքին, երբ նա հարկավորված դեղերը և պատվերները տալուց հետո, հայտնեց, թե ինքը կարգադրել է, որ շուտով նրանց կտեղափոխեն մի առանձին բնակարան, ուր կգտնեն նրանք ամեն հարմարություններ թե՛ կացության և թե՛ ապրուստի համար։

— Միայն շուտ, եթե կարելի է, շատ շուտ,— խնդրեց հիվանդ մայրը շնորհակալությամբ լի ձայնով։

— Անհոգ կացեք, մի քանի բոպեից հետո կտանեն ձեզ,— պատասխանեց բժշկապետը և դուրս եկավ, վանքի մեջ գտնվող մյուս հիվանդներին նայելու համար։

— Լալա, տեսնում ե՞ս, զավակս,— դարձավ հիվանդը դեպի մանկահասակ աղջիկը, որ աչքերը բռնած հեկեկում էր,— աստված դժբախտության ամենադառն բոպեներում դարձյալ չի մոռանում թշվառներին և ուղարկում է իր հրեշտակը նրանց մխիթարելու համար։ Մի՛ լաց, զավակս, փոթորկալից և խավար գիշերին հաջորդում է լուսապայծառ առավոտը։ Կգա մի օր, որ դու կրկին գտնես քո ուրախությունը...

— Այդ բոլորից հետո՞, սիրելի Սառա,— պատասխանեց Լալան դառն արտասուքով,— այդ բոլորից հետո ինձ մնում է մեռնել միայն...

Խուցի դռնից ներս մտան երկու մարդ. Սառայի և Լալայի խոսակցությունը ընդհատվեցավ։ Եկվորները պարոն բժշկա-

պետի ծառաներն էին, որոնք բերում էին իրանց հետ հաց և կերակուրներ, բացի դրանցից մի կապոցի մեջ նրանք բերել էին կանացի հագուստներ Լալայի և Սառայի համար, այլև երեխաների հագուստներ երկու փոքրիկների համար։ Սառան և Լալան չմոտեցան կերակուրներին, նրանք ուտելու ախորժակ չունեին, բայց երկու փոքրիկները վրա պրծան և սկսեցին ագահությամբ ուտել։ Ծառաները դրսում սպասեցին, մինչև վերջացավ ճաշը։

Լալան ինքն հագնվեցավ և նույնպես փոխեց Սառայի ցնցոտիները, հագնվեցան և երկու կիսամերկ փոքրիկները, այնուհետև կերպարանափոխված ընտանիքը դուրս եկավ ապականված մթնոլորտից, և սկսեց դիմել դեպի բժշկապետի պատրաստած բնակարանը։

ԼԸ

«Լուսավորչի քամին» բարձրացավ և ցերեկվա դժոխային տոթը տեղի տվեց երեկոյան զովությանը։ Այդ բարերար քամին ոչ միայն Վաղարշապատի, այլ ամբողջ Արարատյան գավառի կենսատու ոգին է, որ ամառային օրերում շարունակ փչում է քամեն երեկո։ Եվ զուր չէ ասում ժողովրդական ավանդությունը, որ մեր Լուսավորիչ հայրը նրան սահմանեց իր ժողովուրդը հիվանդությունից ազատ պահելու համար։

Վանքի աբեղաները կեսավուր հանգիստ քնից հետո, դուրս էին եկել որջերից և զույգ-զույգ զբոսնում էին Ներսեսի լճի շուրջը, գեղեցիկ ճեմելիքների մեջ, որ հովանավորված էին ծառերի խիտ կամարների ներքո։ Իսկույն աչքի էր զարնում, որ զբոսնող հայրերը չէին կազմում խումբեր, այլ բաժանված էին առանձնացած զույգերի, կամ բոլորովին միայնակ էին ման գալիս։ Դրանք նմանում էին այն արարածներին, որոնք իրանց հեռու են պահում ընկերական կյանքից, այն պատճառով միայն, որ վախենում են միմյանց մոտենալ։ Կասկածը, անմիաբանությունը, անհավատարմությունը առանձնացրել էին նրանց,— և այդ կոչվում է վանական եղբայրություն։

Լիճը գտնվում էր մի արհեստական բարձրավանդակի վրա, որ կառուցված էր կոփածո քարերից։ Նրա ստորոտից մինչև Գայանեի վանքը տարածված էր հին գերեզմանատուն։ Մի քանի տեղ փորում էին նոր գերեզմաններ, մի քանի տեղ հողով ծածկում էին արդեն փոսերի մեջ դրած մարմինները։ Թիերը և բրիչները գործում էին։ Քահանան փրփրթալով, աղոթքներ կարդալով, ճիշտ ասած՝ ոչինչ չկարդալով, մի գերեզմանից դեպի մյուսն էր վազում և կատարում էր թաղման խորհուրդը։ Այդ բոլորը գործվում էր խորին լռության մեջ։ Ո՞չ բարեկամի լացը, ո՞չ ազգականի արտասուքը չէին առաջնորդում հանգուցյալներին դեպի ոգիների աշխարհը, կարծես նրանք շատ ուրախ էին, որ թշվառ մարդիկ, ազատվելով տաժանական կյանքից, գերեզմանի մեջ վերջապես պետք է հանգստություն գտնեին։ Թաղում էին ալաշկերտցի գաղթականներին։

— Որքա՞ն շատ մեռնում են,— ասաց աբեղաներից մեկը իր հետ ման եկող ընկերին։

— Միևնույն է,— պատասխանեց ընկերը սառնասրտությամբ,— այնտեղ քրդերը և թուրքերը պետք է կոտորեին, այստեղ գոնե իրանց մահով են մեռնում։ Բայց մենք հեռացանք հարցից,— շարունակեց նա ընդհատված խոսակցությունը,— կրկնում եմ քեզ, որ նրան պետք չէ հավատալ։ Նա մոտենում է մեզ, իրան բարեկամ և մտերիմ է ձևացնում, համակրություն է ցույց տալիս, և ուրիշ հազար ու մեկ օյիններ է հանում, բայց այդ բոլորը կեղծ է, նա այսպիսով աշխատում է մեզանից գաղտնիքներ որսալ և հայտնել ուր որ հարկն է։ Նա լրտես է, կատարյալ լրտես։ Եվ այդ պատճառով նա այնքան լավ ընդունված է «ի վերին Երուսաղեմի մեջ»։ Շատ հավանական է, որպես ինքը հույս ունի, շուտով եպիսկոպոս կդառնա և մի հարուստ թեմի առաջնորդ կլինի։

— Բոլորը, ինչ որ ասեցիր, ուղիղ է, բայց վերջին երկուսը չի ստանա։ «Զորրորդը» խոստանալու համար խիստ առատաձեռն է, բայց կատարելու մեջ չափազանց ժլատ։ Կամենում են միայն առժամանակ այդ տխմարի գլուխը թափ տալ, որքան իրանց պետք է, հետո պոչը կկտրեն և բաց կթողնեն, նրա պաշտոնը ավելի հարմար մեկին հանձնելով։ Տես, երկու նոր մեռելներ ևս հիմա բերեցին...

— Թող տուր, թե աստված կսիրես, այդ քո մեռելները, բայց նա այն տեսակ աղվեսներից չէ, որ շուտ խաբվի։

— «Խելացի աղվեսը երկու ոտքիցն էլ թալաքի մեջ է ընկնում»։

— Կամաց, թող անցնեն...

Ճեմելիքի հակառակ կողմից հայտնվեցան երկու ուրիշ աբեղաներ, որոնք մոտենալով առաջիններին, նույնպես դադարեցրին իրանց խոսակցությունը։ Դրանք երկուսն էլ սինոդի անդամներ էին։ Երբ փոքր-ինչ հեռացան, դարձյալ շարունակեցին խոսակցությունը։

— Աճուրդը հիմա պետք է նշանակել տալ. այժմ ամենահարմար ժամանակն է։

— Ինչո՞ւ։

— Նրա համար, որ մեզ հայտնի է, թե այդ եկեղեցական կալվածքները ովքեր են կապալով վեր առնում։ Պարոնները՝ Ն... Մ... և Խ..., որոնք միշտ այդ կալվածքների կապալառուներն են եղել, այժմ իրանց առանձին գործերով գնացել են մեկը Ալեքսանդրապոլ, մյուսը՝ Իգդիր, երրորդը՝ սատանան գիտե թե որ չհաննամը։ Դրանց բացակայությունից մենք կարող ենք օգուտ քաղել։ Եթե աճուրդը այժմ նշանակել կտանք, շատ պարզ է, որ կապալը կմնա Սաթայելյանի վրա, որը իր անունով կվեր առնի, իհարկե, մեզ հետ գաղտնի ընկերությամբ։

— Բայց, որքան ինձ հայտնի է, պարոն Սաթայելյանը այնքան պատրաստի փող չունի, որ կարողանա գրավական ներկայացնել։

— Այդ ես էլ գիտեմ, բայց դրանով գործը չի խանգարվի, գրավականը մենք կտանք, նա իր կողմից կներկայացնե։

— Դու պատրաստի փող ունե՞ս։

— Տոկոսաբեր արժեթղթեր ունեմ։

— Միևնույն է։ Ուրեմն էգուց ժողովի մեջ աճուրդի հարցը կբարձրացնենք։ Բայց ես վախենում եմ, որ «վերևից» կխառնեն գործը։

— Չեն կարող, միթե այդ «հոսոսները» իրանք միևնույնը չեն անում, ինչ բանի վրա որ մտածում ենք մենք։ Եթե «փոքր դեր» մատը կխառնի, ես նրա ականջին մի բան կասեմ և իսկույն կլռե։

Այսպես ոմանք միաբանության մեջ կատարվող ինտրիգաների վրա էին խոսում, ոմանք իրանց գաղտնի սպեկուլյացիաների վրա էին խոսում, բայց ոչ ոք ուշադրություն չէր դարձնում, թե ինչ է կատարվում իր շուրջը, ոչ ոք չէր մտածում այն բանի վրա, թե ինչպես ալաշկերտցիք, զրկված բնիկ երկրից, սլանդուխտ, անտեր և անխնամ, ճանճերի նման կոտորվում էին։ Ոչ ոք չէր հետաքրքրվում այն հարցով, թե ի՞նչ էր եղել այդ թշվառների գաղթականության պատճառը կամ ի՞նչ կլինի նրանց վախճանը մի օտար, անծանոթ երկրում։

Մի քանի աբեղաներ, հավաքված միասին, իրանց ամենօրյա երեկոյան սովորության համեմատ, նստել էին անտառում, գեղեցիկ պարսկական խալիչաների վրա և թեյ էին վայելում։ Մանկահասակ փոքրավորները, նրանցից սակավ ինչ հեռու, միմյանց հետ քրթմնջալով, ծիծաղելով և հանաքներ անելով, կարգի էին դնում թեյի ահագին պատրաստությունը։ Այնտեղ կար սեր, կարագ, սպիտակ հաց, ռոմ և ամեն ինչ։ Երեկոյան զովը և անտառի մաքուր օդը բաց էին արել սուրբ հայրերիախորժակը։ Նրանք խմում էին, ուտում էին, ուրախանում էին, առանց մտածելու, որ նույն անտառի ծառերի տակ, խոնավ գետնի վրա, այժմ ընկած էին հարյուրավոր քաղցած ընտանիքներ։

— Այդ ռոմը շատ լավն է, ինչ գեղեցիկ հոտ ունի, որտեղի՞ց ստացաք, հայր սուրբ,— հարցրեց աբեղաներից մեկը խորին զմայլության մեջ ճաշակելով ռոմով խառնած թեյի բաժակը։

— Որտեղի՞ց ստացա... —կրկնեց հայր սուրբը, որի խցից բերվել էր անուշահոտ ըմպելին,— դու չե՞ս իմանում, որ իմ խուցը այն ուխտատեղերից է, ուր մատաղը իր ոտքովն է գալիս...[1]։

— Իմանում եմ... լավ է այդպիսի ձգողական զորություն ունենալ։

Արևը մտել էր արդեն։ Անտառի մեջ մռայլը հետզհետե թանձրանում էր, թեև ոսկեզօծ ամպերը տակավին վառվում էին արեգակի վերջին ճառագայթներից։ «Լուսավորչի քամին» փոքր-ինչ մեղմացել էր և ծառերի տերևները հազիվ շարժվում էին մի

[1] Ամայի և ժողովրդից մոռացված տեղերում գտնված կիսավեր մատուռների և վանքերի մասին պավանդություններ կան, որ նրանց տոնի օրերում վայրենի անասունները իրանց հոժարությամբ գալիս են նրանց դուռը, և անապատի հովիվները բռնելով մատաղ են անում։

խուլ, կախարդական սոսափյունով։ Անտառի խորին լռությունը երբեմն ընդհատվում էր տխուր հառաչանքներով։ Գիշերը մոտենում էր։ Խավարի մեջ ավելի շուտ զարթնում են դառն հիշողությունները։ Բացօթյա, գետնատարած, մերկ և անոթի ալաշկերտցին, մի սարսափելի երազից սթափված մարդու նման, դեռ նոր սկսել էր զգալ իր վիճակի դառնությունը։ Նա մտածում էր, որ հարստություն ուներ, իսկ այժմ ստիպված է մուրացկանությամբ ապրել։ Նա մտածում էր, որ տուն և օթևան ուներ, իսկ այժմ բաց երկնքի տակ է ապրում։ Նա մտածում էր, որ զավակներ ուներ, իսկ այժմ չկան նրանք որտե՞ղ կորան, ո՞վ տարավ, ի՞նչ եղան, ինքն էլ չգիտեր։ Բոլորը կորավ մի խառնաշփոթ և սոսկալի խռովության մեջ, երբ մայրը որդուն մոռացել էր, երբ եղբայրը մոռացել էր իր քրոջը, երբ տղամարդը կորցրել էր ամուսնին, երբ ամեն մարդ, հալածված թուրքի սրրից և հրից, աշխատում էր իր գլուխը միայն ազատել։ Ամեն մարդ սրտումը անդարմանելի վերք ուներ, ամեն մարդ կորցրել էր մի բան, որ նրա համար աշխարհի բոլոր բաներից թանկագին և անփոխարինելի էր։ Այս էր պատճառը, որ ամբողջ Վաղարշապատը այս գիշեր թնդում էր գաղթականների հառաչանքներով, որոնք կատարում էին մի ընդհանուր սուգ, սո՛ւգ, որի համար մխիթարություն չկար...

Այդ միջոցին մի պարթևանձնյա տղամարդ, անցնելով անտառի ծառերի միջով, հետաքրքիր աչքերով նայում էր գաղթականների վրա, մոտենում էր նրանց, խոսեցնում էր և դարձյալ շարունակում էր իր ընթացքը։ Տխուր, մտահոգյալ կերպարանքը այդ տղամարդի, երեսի այրական արտահայտությունը, համարձակ և անձնավստահ շարժումները ակամա ուշադրություն էին դարձնում իր վրա։ Նա դուրս եկավ անտառից, անցավ Գայանեի վանքը և կանգնեց գերեզմանատան մոտ։ Այստեղ դեռ աշխատանքը չէր վերջացել... դեռ թաղում էին...

Նրա ականջին զարկեց երգի ձայն.

«Բլբուլն է հաքեր ի հոտին կոչիկ,
Զվարդն կփնտրե սիրով անուշիկ...»։

— Կոտորվե՞ք դուք,— ասաց իր մտքում անծանոթ տղամարդը և շարունակեց ճանապարհը։

Երգի ձայնը լսվում էր անտառի խորքից, ուր այժմ աբեղաները, ռոմից ստացած ոգևորությունից հետո, կատարում էին իրանց գիշերային արշավանքները։

Անծանոթ տղամարդը մոտեցավ լճին։ Այստեղ նույնպես մի քանի աբեղաներ սև ուրվականների նման դեռ զբոսնում էին։ Բայց մեկը նստած էր անշարժ, միայնակ, որպես առանձնացած սգավոր, որ իր մխիթարությունը գտնում է այն դրության մեջ, երբ ոչ ոք չէ հարցնում նրանից մի բան, և երբ ոչ ոք չէ դիպչում նրա սրտի վերքերին։ Արևից այրված, մռայլոտ դեմքը և հնամաշ հագուստը ցույց էին տալիս, որ այդ աբեղան պետք է պանդուխտ և աղքատ լինի։ Վանքի քնքուշ և կոկիկ հագնված միաբաններից ոչ ոք չէր մոտենում նրան, կարծես, վախենում էին պղծվել նրա հագուստներից, թեև այդ պարզ հովվական հագուստների մեջ ծածկված էր մի մարմին, որ կրում էր իր մեջ գեղեցիկ և ազնիվ հատկություններ։ Անծանոթ տղամարդը կիսախավարի միջից նկատելով անծանոթ աբեղային, մոտեցավ նրան։

— Ա՜խ, Հովհաննես հայր սուրբ, դո՞ւք եք։

— Ա՜խ, Վարդան,— գոչեց աբեղան և գրկեց նրան։

Աբեղան ս. Հովհաննու վանքի վանահայր և միևնույն ժամանակ Ալաշկերտի առաջնորդն էր, որ գաղթականների հետ եկել էր ռուսաց հողի վրա, չկամենալով բաժանվել իր ժողովրդից։

Վարդապետը և Վարդանը նստեցին մի քարի վրա, որ լճի մոտ ծառայում էր որպես նստարան։

— Ե՞րբ եկար,— հարցրեց վարդապետը։

— Այսօր, հենց այս ժամիս,— պատասխանեց Վարդանը իր շուրջը նայելով, որ նրան չլսեն։

— Ոչ ոքի չտեսա՞ր։

— Դեռ ոչ ոքի։ Այդ խառնիճաղանջ բազմության մեջ ո՞ւմը կարելի է գտնել։ Ես շատ կցանկանայի տեսնել Մելիք-Մանսուրին, լսեցի, որ նա էլ գաղթականների մեջն է։

— Ես նրան տեսա երկու օր առաջ,— պատասխանեց վարդապետը,— այժմ պետք է Երևանում լինի. կարծեմ պետք է տեսնվեր մի քանի պարոնների հետ, որոնք մտածում են մի մասնաժողով կազմել գաղթականների վիճակի համար հոգ տանելու։

— Թիֆլիսում արդեն կազմվել է մասնաժողով։

— Երևանինը պետք է նրա մի ճյուղը լինի։

— Այստեղ ինչպե՞ս են գնում գործերը։

— Շատ վատ,— պատասխանեց վարդապետը, տխուր ձայնով,— մի ամբողջ շաբաթ է, որ այստեղ վեր ընկած եմ. Ղազարապատի մի անկյունում տեղ են տվել. ոչ ոք ինձ վրա չի նայում, ոչ ոք չի էլ ուզում հարցնել, թե ի՞նչ և որպիսի՞ դառն հանգամանքներ բերեցին մեզ այստեղ։ Ինձ խոստացան, թե կտանեն վեհարանը և այնտեղ հարցմունքներ կանեն։ Բայց դժբախտաբար այսպես օրերը անցնում են։ Ստիպվեցա գրավոր կերպով ներկայացնել թշվառ ժողովրդի գաղթականության բոլոր պատմությունը և հույս ունեի, որ դրանից հետո կկանչեին ինձ և բերանացի բացատրություններ կպահանջեն։ Այդ փորձը նույնպես մնաց ապարդյուն։ Մի՞թե կարելի է մինչև այս աստիճան սառնասիրտ և մինչև այս աստիճան անգութ լինել։ Ես ցուցակ ունեմ, որ 3000 ընտանիքից մինչև այսօր 1500 հոգի մեռել են, որը հիվանդությունից, որը քաղցածությունից։ Մնացածները, անտարակույս, նույնպես կմեռնեն, եթե նրանց վիճակը այսպես կշարունակվի։

Վերջին տեղեկությունները որքան և ցավալի լինեին, այսուամենայնիվ, մի առանձին տպավորություն չգործեցին Վարդանի սրտի վրա. նա այդ բոլորը շատ բնական էր համարում, նա առաջուց գիտեր այս տեսակ գաղթականությունների կորբստաբեր հետևանքները։

— Բոլոր գաղթականները այստե՞ղ՝ Վաղարշապատում են միայն զետեղված,— հարցրեց նա։

— Ո՛չ, Իգդիրից եկան Վաղարշապատ և այստեղից տարածվում են ամեն կողմեր։ Այժմ Սուրմալու գավառից սկսած, գաղթականները ցրված են մինչև Նոր-Բայազետ, մինչև Հին-Նախիջևան, ամեն տեղ, ամեն գյուղերում կարելի է գտնել նրանց։

— Ժողովուրդը ինչպե՞ս է վերաբերվում դեպի իր պանդուխտ եղբայրները։

Ժողովուրդը խիստ մարդասիրաբար է վարվում, օթևան է տալիս, կերակրում է, հագուստ է տալիս, և չէ խնայում, ինչ բանով որ կարող է օգնել։ Պետք է ասած, որ այստեղի ժողովուրդը ինքն էլ սաստիկ կարոտության մեջ է, պատերազմի պատճառով այժմ ամեն ինչ թանկացել է։ Բայց գաղթականներին ավելի բժշկական օգնություններ են հարկավոր, քան թե հաց. զանազան հիվանդություններ անխնա կոտորում են։

Գիշերային մութը բոլորովին պատել էր վանքի շրջակայքը։ Աբեղաները քաշվել էին իրանց խուցերը։ Բայց խորհրդավոր Ներգի ձայնը կրկին լսելի եղավ անտառի խորքից։

«Բլբուլն է հաքեր ի հոտին կոշիկ,
Զվարդն կփնտրե սիրով անուշիկ...»։

— Դու այժմ ո՞ւր պիտի գնաս,— հարցրեց վարդապետը Վարդանից, ոտքի կանգնելով։

— Ինքս էլ չգիտեմ...

— Գնանք ինձ մոտ։

— Ես չէի ցանկանա, որ այստեղ ինձ տեսնեին։

— Վանքում այժմ քեզ ոչ ոք չէ կարող ճանաչել։

ԼԹ

Հովհաննես հայր սուրբի կացարանը գտնվում էր Ղազարապատի վերին հարկի սենյակներից մեկի մեջ։ Վարդանը իր ամբողջ մարմնի մեջ մի ցուրտ դող զգաց, երբ մյուս անգամ ոտ կոխեց վանքի շեմքի վրա։ Տասն տարուց ավելի կլիներ, որ նա հեռացել էր այստեղից։ Այժմ տխուր հանգամանքները կրկին բերեցին նրան այստեղ։ Ինչո՞ւ աշխարհից անջատված և իրանց անձը աղոթքի և ճգնության նվիրած հասարակության այդ մենարանը այնպես անախորժ տպավորություն գործեց անբախտ երիտասարդի վրա։ Նա հիշեց իր մանկությունը, այն հիմարություններով լի և դատարկ մանկությունը, որ անցուցել էր այնտեղ։ Նա հիշեց այն մթին անցյալը, որի վրա կրկին նայելը զզվանք և սոսկում էր ազդում նրա մեջ։

Վարդանի ակամա խռովությունը չէր կարող չնշմարել Հովհաննես հայր սուրբը, նա կարեկցաբար հարցրեց.

— Ի՞նչ կա, ինչո՞ւ այսպես լուռ ես։

— Ոչինչ, երբեմն ինձ հետ պատահում են անտեղի մտահուզություններ...

Փոքրիկ սենյակի մեջ կար մի մահճակալ, որի վրա նստած էին հայր սուրբը իր հյուրի հետ. մյուս կողմում դրած էր մի սեղան հասարակ փայտից, որի վրա վառվում էր ճրագուի մոմը.

իսկ նրա մոտ փոքրիկ սամովարը եփ էր գալիս։ Հայր սուրբը իր ձեռքով ածեց երկու բաժակ թեյ, մեկը տվեց Վարդանին, մյուսը սկսեց ինքը խմել։ Տաք ըմպելին կազդուրեց երիտասարդի գրգռված ջղերը։

Երկար երկու կողմից ևս տիրում էր մի տաղտկալի լռություն։ Խոսակցությունը չէր պատվաստվում, մինչև նա դարձավ այն առարկային, որ երկուսի սրտին ևս խիստ մոտ էր։

— Այստեղ ինչպե՞ս են նայում «գործի» վրա,— հարցրեց Վարդանը։

— Մի կարճ պատմությունից դու կարող ես հասկանալ բոլորը,— պատասխանեց հայր սուրբը։— Այնտեղ եկած էր մի տաճկաստանցի վարդապետ՝ եպիսկոպոս ձեռնադրվելու համար (նա դեռ այստեղ է, գուցե կհանդիպես նրան)։ Առաջին օրերում, երբ դեռ նոր էր եկել, խոսելով Թուրքիայի հայերի մասին, ամենասարսափելի գույներով նկարագրում էր նրանց դրությունը, պատմում էր քրդերի բարբարոսությունները, պատմում էր Թուրքերի հարստահարությունները և հազար ու մեկ փաստեր էր բերում, թե որպիսի եղեռնագործություններ են կատարում Հայաստանում։ Նրա խոսքերին անկարելի էր հավատ չընծայել, որովհետև բոլորը, ինչ որ ասում էր, հաստատում էր անհերքելի ապացույցներով։ Բայց հենց որ այդ մարդը տեսնվեցավ «հոսոսների» հետ, այնուհետև լեզուն փոխեց։ Այնուհետև սկսեց գովաբանել Թուրքերի մարդասիրությունը, պաշտպանել նրանց արդարությունը և հիանալ նրանց ազնվության և մեծահոգության վրա։ Ի՞նչ աներ խեղճը, եթե լեզուն չփոխեր։ Եթե իր խղճի և համոզմունքի դեմ չշատագովեր այն, որ իր համար գարշելի էր և ատելի, գուցե չէր ստանա ցանկացած եպիսկոպոսությունը։ Մի ուրիշ օրինակ ևս. մի այլ տաճկաստանցի վարդապետ, որի վանքը կողոպտված էր քրդերից, եկել էր այստեղ պաշտպանություն խնդրելու։ Այդ ողորմելին ավելի ցավալի կերպով նկարագրում էր իր ժողովրդի կրած նեղությունները թե՛ կառավարության պաշտոնյաներից և թե՛ քուրդ դերեբեյիներից։ Երբ նրա խոսքերը հասան «հոսոսներին», ոչ միայն ուշադրություն չդարձրին վարդապետի խնդիրքի վրա, որի համար նա եկած էր, այլ հրամայեցին դուրս անել վանքից։ Թշվառականը ստիպվեցավ նույնպես փոխել իր լեզուն, և այնուհետև պատվավոր ընդունելություն գտավ, մոռացավ իր վանքը, մոռացավ

իր ժողովուրդը և մյուս անգամ չհիշեց քրդերից կրած հարստահարությունները։ Ես ավելին կասեմ, այդ վարդապետը ավելի ևս հաճոյանալու համար, մի տոնախմբության օրում, սկսեց խմել սուլթանի կենացը, նույն իսկ ժամանակ, երբ Բայազետում և Ալաշկերտի մեջ Թուրքերը կոտորում էին հայերին։ Այդ բոլորից հետո, կարծեմ, շատ պարզ է, թե այստեղ որպես են նայում գործի վրա։

Վարդանը չէր հավատում իր ականջներին, նրան թվում էր, թե այդ բոլորը լսում է երազի մեջ։ Նա երևակայել չէր կարող այն աստիճան անգթություն, որ հասնում էր սարսափելի դավաճանության։ Ազգի սոսկալի ճգնաժամի րուպեում, երբ նրա կյանքը, երբ նրա ապագան կախված էր մի մազից, որ կարող էր կտրվել, և ձգել նրան հավիտենական անդունդի մեջ,— մի այդպիսի աղետալի րուպեում, երբ ամբողջ ազգի աչքը դարձրած էր դեպի փրկության Արարատը,— նա, ազգը, հանդիպում էր իր ծնողի սառնասրտությանը, և գտնում էր նրան թեքված իր թշնամու, իր սպանողի կողմը...

— Բոլո՞ր միևնույն համոզմունքի են,— հարցրեց Վարդանը խռովյալ ձայնով։

— Ոչ, «հոսոսները» միայն։ Դրանք Թուրքի կառավարության մեջ տեսնում են ամեն ինչ արդար և իրավացի։ Եվ եթե հայերը բողոքում են կամ դժգոհություններ հայտնում, բոլորը սուտ է և զրպարտություն։

— Շատ հասկանալի է, դրանք ևս մի տեսակ Թոմաս էֆենդիներ են. Թուրքի անկարգությունները միշտ նպաստավոր են Թոմաս էֆենդիներին։ Բայց գոնե Թող օրինակ առնեին Ներսես պատրիարքից, Խրիմյանից և Նարբեյից, որոնք հայոց պատմության մեջ պաշտելի անուն պիտի Թողնեն։

— Դու խիստ միամտաբար ես խոսում, բարեկամ,— պատասխանեց հայր սուրբը,— հավատացնում եմ քեզ, եթե հնար ունենան, հենց այսօր կոչնչացնեն Ներսեսի բոլոր գործողությունները, գուցե, աշխատում էլ են... Այստեղ ճգնում են հավատացնել, թե Ներսեսը և իր արբանյակները, բոլորը շաղատաններ են, թե նրանք խաբում են ազգին, թե նրանք հայի համար չեն մտածում և (մտածելու էլ առիթ չկա), թե նրանք Եվրոպական այլևայլ պետությունների ներկայացուցիչների ձեռքում անարգ գործիքներ են, որ աշխատում են նրանց քաղա-

քական շահերի համար, որպեսզի խեղճ Թուրքիայի վրին ավելի մեղքեր փաթաթեն։ Այստեղ ծիծաղում են հայերի թեթևամտության վրա, որոնք Ներսեսի «ձեռնածություններից» մի լավ բան են սպասում։ Այստեղ ասում են, թե Թուրքից մի նոր բան պահանջելը կատարյալ լրբություն կլիներ հայերի կողմից, թե Թուրքը տվել է հայ ժողովրդին ինչ որ պետք է, որից ավելին նա արժանի չէ։ Եվ եթե մի բան թերի է մնացել, ասում են, Թուրքը այնքան բարի է, որ ինքը կբարեհաճի շնորհել, էլ ի՞նչ հարկ կա ձանձրացնել ողորմած կառավարությանը։

— Մի՞թե ամբողջ միաբանությունը այդ սոսկալի տրամադրության մեջ է գտնվում,— գոչեց երիտասարդը բարկությամբ։

Հայր սուրբը իսկույն չպատասխանեց,՝ սենյակից դուրս եկավ, նայեց դեպի դրսի խավարի մեջ, և ներս մտնելով, նստեց իր առաջվա տեղը և բավական մեղմ ձայնով ասաց.

— Մենք բավական անզգույշ ենք խոսում, այստեղ պատերն էլ ականջ ունեն, վանքի հյուրընկալը կենում է հարևան սենյակում, սատանայի հոտառություն ունի, եթե մի բան լսեց, առավոտյան խաբարը կտանե...

— Ես հարցրի առհասարակ միաբանության տրամադրությունը,— կրկնեց Վարդանը, առանց ուշադրություն դարձնելու հայր սուրբի վերջին խոսքերի վրա։

— «Հոսոսները» միայն բացառություն են կազմում, թե չէ, ամբողջ միաբանությունը Թուրքամոլ չէ։ Նրանց մեջ կան ազնիվ մարդիկ ազնիվ ցանկություններով, և գուցե պատրաստ կլինեն ամեն զոհաբերություն հանձն առնել Թուրքիայի հայի արտասուքը սրբելու համար, եթե...

— Եթե «հոսոսները» Թույլ կտան։

— Այո՛։ Ի՞նչ անեն խեղճերը, նրանք այն աստիճան կաշկանդված են՝ խոսելու անգամ իրավունք չունեն, ուր մնաց գործելու։ Այստեղ կա մի Մանկունի, մի կատարյալ հրեշ, որ իր ծանրության ներքո ճնշում է, խեղդում է բոլորին։

— Ես դարձյալ չեմ հասկանում, այս ի՞նչ դժոխային քաղաքականություն է՝ տեսնել մի ամբողջ ժողովուրդ Թուրքիայի բռնակալության ներքո ճնշված, որ մոտ է ոչնչանալու, և դարձյալ պաշտպանել ոչնչացնողին։

— Ինձ համար էլ կատարյալ հանելուկ է այդ, ես էլ չեմ հասկանում,— պատասխանեց հայր սուրբը շվարած կերպով։

— Բայց ինչո՞վ են բացատրում ալաշկերտցոց գաղթականությունը կամ Բայազեդի հայերի կոտորածը։ Ինչո՞վ են բացատրում Վանի հրդեհը։

— Թուրքին արդարացնելու համար նրանք միշտ պատրաստի և սերտած բառեր ունեն իրանց բերանում։ Մեղքը գցում են հայերի վրա, ասելով, թե հայերը մի անհանգիստ, դժգոհ և անշնորհակալ ժողովուրդ են։ Ասում են, «գայլը մեղավոր չէ, երբ գառը նրան բարկացնում է»։ Եվ ալաշկերտցոց գաղթականության մեջ տեսնում են ոչ թե Թուրքի և քրդի սուրը և հուրը, որ ստիպեցին մի ամբողջ ժողովրդի թողնել իր հայրենիքը, այլ աշխատում են ցույց տալ մի գաղտնի և զորեղ ձեռք, որ դուրս քաշեց թշվառ ժողովրդին իր հայրենիքից։ Թե որքան սխալ է այդ, քեզ ավելի պետք է հասկանալի լինի, Վարդան, դու խո սկզբից մինչև վերջը «գործի» միջումն ես եղել...

— Այս բոլորից հետո, ինձ դարձյալ անհասկանալի է, թե դու ի՞նչ հույսերով ես այստեղ մնում, հայր սուրբ, ասա՛, խնդրեմ, ի՞նչ պաշտպանություն կամ ի՞նչ օգնություն կարելի է գտնել դրանցից։

— Ոչինչ, ես ինքս էլ համոզված եմ, ոչինչ։ Բայց ի՞նչ ճար ունեմ, ո՞ւմը դիմեմ, ո՞ւր գնամ, մնացել եմ շվարած։

— Դիմեցեք հայ հասարակությանը։

Հայր սուրբը ոչինչ չպատասխանեց և բոպեական մտածությունից հետո ասաց, կարծես, ինքն իր հետ խոսելով.

— Այժմ դժվար է բոլորը պարզել... բայց կգա մի օր, երբ ժամանակը կմերկացնե խայտառակ իրականությունը...

Կարծես, արյունի հետ դուրս բխեցան այդ խոսքերը անբախտ աբեղայի սրտից։ Նա այն աստիճան հուսահատված էր, այն աստիճան զայրացած էր, որ իրան զսպել չկարողացավ։ Եվ ի՞նչ հարկ կար Վարդանի մոտ ծածկամիտ լինել։ Վարդանը օտար մարդ չէր նրա համար։ Վարդանի հետ նա գործել էր։ Վարդանի հետ շատ խորհուրդների մեջ մասնակից էր եղել։

Խոսակցությունը կրկին դարձավ գաղթականների վրա։ Ալաշկերտցոց առաջնորդը պատմում էր իր վտարանդի ժողովրդի թշվառությունները, նկարագրում էր, թե որպիսի տառապանքներ են կրում նրանք, առաջարկում էր միջոցներ, որոնցմով կարելի կլիներ պահպանել նրանց կատարելապես ոչնչանալուց։

— Ինձ շատ զարմացնում է, որ այդքան ահագին թվով հիվանդներ կան գաղթականների մեջ,— կտրեց երիտասարդը հայր սուրբի խոսքը,— այդ հաշվով կեսից ավելին հիվանդ է։ Ընչի՞ց առաջ եկավ այդ։

— Եթե լսելու լինես գաղթականության սարսափելի մանրամասնությունները, կզարմանաս, որ այդ թշվառները դեռևս կարողացել են կենդանի մնալ։ Դա մի հրաշք է, կատարյալ հրաշք։ Բայց ինձ մոտ ոչ այնքան հիշողություն է մնացել և ոչ այնքան լեզվի զորություն, որ կարողանամ բոլորը պատմել քեզ։ Ես միայն կտամ մի քանի մասնավոր տեղեկություններ։

— Բայազեդի պաշարումից հետո, որի մանրամասնությունները քեզ հայտնի են, գեներալ Տեր-Ղուկասովն ստիպվեցավ ետ քաշել ռուսաց զորքերը։ Այդ միջոցին նա կատարեց երկու մեծ քաջագործություններ։ Մի կողմից իր փոքրաթիվ գունդերով նա պետք է պատերազմեր թուրքերի բազմաթիվ զորքերի հետ (իհարկե, նահանջման դիրք բռնելով), մյուս կողմից, նա պետք է ազատեր Ալաշկերտի և Բայազեդի գավառների հայ բնակիչներին թուրքերի կոտորածից։ Այդ երկուսն էլ ռազմագիտական մեծ ճարպիկությունների կարոտ էին, որոնց մեջ գեներալը ցույց տվեց իր հանճարը։ Նա այնքան ժամանակ կարողացավ բռնել թուրք զորքերի սարսափելի հոսանքի առաջը, որ մինչև նրանց հասնելը, հայերը շտապեցին գաղթել։ Բայց ժամանակը խիստ նեղ էր և ժողովուրդը բոլորովին անպատրաստ էր գաղթականության համար։ Հանկարծ լուր տվեցին, թե ռուսաց զորքերը պետք է թողնեն այդ երկիրը, գաղթեցեք, փախեք այդ երկրից, եթե մնալու լինեք, թուրքերը կկոտորեն ձեզ։ Այդ լուրը կայծակի արագությամբ անցավ բոլոր գավառների մեջ։ Սարսափը և տագնապը տիրեցին ժողովրդին։ Թշնամին կանգնած էր նրա գլխին։ Այլևս հեղգալ կամ հապաղել անկարելի էր. պետք էր թողնել սիրելի հայրենիքը։ Ինձ դժվար է նկարագրել այն սոսկալի գիշերը, երբ ժողովուրդը բաժանվում էր իր տնային օջախից։ Մի զարհուրելի խռովություն, մի աղետալի իրարանցում տիրել էր ամբոխի վրա։ Մի գիշերվա ընթացքում պետք է գաղթեին։ Անասունների մեծ մասը մնացին դաշտումը, տերերը ժամանակ չունեցան բերելու։ Հայրը չսպասեց որդուն, որը տնից բացակա էր։ Եղբայրը մոռացավ եղբորը։ Տների կարասիքը և ծանրությունները կամ մնացին իրանց տեղերում, կամ տերերը կրակ տվեցին և այրեցին։ Մայրերը շալակեցին փոքրիկներին, իսկ հայրերը, բեռնավորված մի քանի անհրաժեշտ իրեղեններով, բռնեցին իրանց որդիների ձեռքից և դուրս եկան։ Խիստ սակավ ընտանիքներ սայլեր ունեին, որովհետև սայլերը տարել էին պատերազմական մթերքներ տեղափոխելու։ Սպասելու ժամանակ չկար, որովհետև թշնամին ետևից հալածում էր։ Ով մնաց, զոհվեցավ բարբարոսի անգթությանը։ Ով եկավ, կարծեց, թե ազատվեցավ։ Բայց այստեղ ևս հանդիպեցան նոր դժբախտությունների, որ ավելի անողորմ են, քան թե քուրդը և թուրքը, ինչպես են քաղցածությունը և հիվանդությունը։

— Եվ այդ հիվանդությունը հետևանք էր այն դառն չարչարանքների, որ կրեց ժողովուրդը իր գաղթականության ժամանակ։ Ամբողջ շաբաթների ճանապարհը նա պիտի անցներ մի քանի օրվա մեջ, առանց հանգստանալու և առանց մի տեղ կանգ առնելու։ Կին, աղջիկ, երեխա, ծեր և մանուկ, բոլորը գալիս էին ոտով. խիստ սակավները գրաստ ունեին։ Շատերը նվաղեցան, թուլացան և մնացին կես ճանապարհի վրա։ Ո՞վ էր ուշադրություն դարձնում ազգականի, բարեկամի, մինչև անգամ սիրելի զավակի վրա։ Ամենին տիրել էր մի ընդհանուր խռովություն. ամեն մարդ կորցրել էր թե՛ սիրտը և թե՛ զգացմունքը։ Ավելացրեք դրա վրա քաղցը, ծարավը և օտար երկրի անսովոր կլիման, և դուք հիվանդությունը շատ բնական կգտնեք։ Թշնամուն չհանդիպելու համար մեզ բերեցին այնպիսի սատանայական և լեռնային ճանապարհներով, որ շատ դժվար էր կնիկների և երեխաների համար անցկենալ։ Եվ այդ էր պատճառը, որ մի քառորդ մասը գաղթականների մնացին ճանապարհների վրա և բոլորովին ոչնչացան։ Կարճ ասած, շահ Աբասի Սպահան տարած հայ գերիների պատմությունը, որը այնքան սարսափելի գույներով նկարագրում են մեր մատենագիրները, այս գաղթականության հետ համեմատելով, մի շատ հասարակ դեպք պետք է համարել։

Հայր սուրբի ցավալի պատմության ժամանակ Վարդանի միտքը զբաղված էր բոլորովին այլ առարկայով. նա համարյա չէր լսում նրան.— նա մտածում էր իր սիրելի Լալայի մասին։ Ախար նա էլ այդ գաղթականների մեջ պետք է լիներ։ Նա էլ պետք է ենթարկված լիներ նույն աղետներին, թեև Ջավոն

պատմել էր նրան, թե քուրդ բեկի կնոջ՝ Խուրշիդի կարգադրությամբ Լալան տարվեցավ ռուսաց երկիրը, բայց նրա ծառաները խո չէին կարող անցնել ռուսաց սահմանից, որովհետև իրանք քուրդ էին և թշնամի պետության հպատակ։ Ուրեմն, Լալային իր եղբոր կնոջ Սառայի հետ պետք է թողած լիներին գաղթականների խմբի մեջ։ Բայց ինչպե՞ս գտնել նրանց, արդյոք կենդանի՞ են,— այդ հարցերը սկսեցին տանջել անբախտ երիտասարդին։

— Հայր սուրբ, դու ոչինչ չգիտե՞ս ծերունի Խաչոյի ընտանիքի մասին,— հարցրեց նա,— իմ կարծիքով նրանք ևս պետք է գաղթականների մեջ լինեն, ո՞րտեղ կարելի է գտնել նրանց։

— Գտնել փոքր-ինչ դժվար է ձեզ համար, որովհետև գաղթականները զանազան տեղերում ցրված են։ Բայց նրանց հետ եկել են իրանց քահանաները և տանուտերները, ես հանձնել եմ այս վերջիններին կազմել իրանց ժողովրդի անվանական վիճակագրությունը, թե որքան թվով որտե՞ղ են բնակվում, որպեսզի նրանց դարմանելու համար հոգածություն լինի։ Այս ցուցակներից հեշտ կլինի գտնել, թե գաղթականների ո՞ր խումբի մեջն են գտնվում ծերունի Խաչոյի ընտանիքը։

— Գուցե վաղը, կամ մյուս օրը, ճիշտը չգիտեմ։

Այդ «վաղը» կամ «մյուս օրը» մի անսահմանություն էր խեղճ Վարդանի համար, այս պատճառով նա այն գիշեր անցկացրեց անտանելի տանջանքների մեջ։

Ի

Վանքի զանգակների մեղմ և չափավոր հնչյունները ծանուցին առավոտյան ժամը։ Ավելի բախտավոր աբեղաները դեռ քնած էին փափուկ սենյակներում, իսկ ավելի անբախտ աբեղաները շտապեցին աստուծո տաճարը աղոթելու համար։

Հովհաննես հայր սուրբը այս առավոտ խիստ վաղ զարթնեց, և թողնելով Վարդանին քնած, ինքը դուրս եկավ կացարանից։ Նա չէր գնում աղոթելու, այլ սովորություն ուներ ամեն առավոտ այցելել Վաղարշապատում գտնված գաղթականներին, և տեսնել, թե ինչ դրության մեջ են նրանք։ Այս առավոտ տեսած թշվառությունները այն աստիճան սիրտ կտրատող էին, որ նա այլևս ուժ չունեցավ բոլոր անբախտներին այցելություն

անելու։ Ամեն տեղ նկատում էր սարսափելի տեսարաններ, ամբողջ ընտանիքը հիվանդ, անխնամ, ընկած էին այս և այն ախոռատան անմաքրությունների մեջ, գոնե մեկը առողջ չէր մնացել, որ մյուսներին հոգ տաներ։

Տխուր հուսահատության մեջ դառնում էր նա դեպի վանքը, և մտքին դրած ուներ, այսօր, ինչ հնարքով և լինի, մտնել վեհարանը և մահամերձ ժողովրդի համար շուտափույթ օգնություն խնդրել։ Այդ միջոցին անցավ նրա մոտից մի ֆայտոն, նստողը, տեսնելով աբեղային հրամայեց կանգնել։

— Լա՜վ խաբար,— ասաց նա մոտենալով.— Երևանի նահանգապետը հաստատեց գաղթականներին օգնելու համար կազմված մասնաժողովը, անդամներ ընտրվեցան բավական հավատարիմ անձինք։ Թիֆլիսից նույնպես ուրախալի լուրեր ստացվեցան. այնտեղի մասնաժողովը եռանդով գործում է, խոստանում են շուտով փողեր և բժշկական դարմաններ ուղարկել։

— Ուրախալի է,— պատասխանեց աբեղան։— Այստեղ էլ մտածում են հրամաններ գրել հոգևոր իշխանության գործակալներին նվիրատվություններ հավաքելու։

— Որտեղի՞ց պիտի գրեն։

Աբեղան ձեռքը պարզեց դեպի վանքը։ Երիտասարդը սկսեց ծիծաղել։

— Այդ ոչինչ նշանակություն չի կարող ունենալ,— պատասխանեց նա,— նրանց հավաքածը ալաշկերտցու փորը չի մտնի...

Եկվորը Մելիք-Մանսուրն էր։

— Դու ինձ ուրախացրիր բերած լուրովդ,— ասաց աբեղան.— ես էլ քեզ պիտի ուրախացնեմ։

— Ինչո՞վ։

— Վարդանը այստեղ է։ Իմ սենյակում։

— Իրա՞վ, որտեղի՞ց դուրս եկավ այդ սատանան։ Ես չէի հավատում, որ մյուս աշխարհից մարդիկ կարող են վերադառնալ։ Գնանք։

Երկուսն էլ սկսեցին դիմել դեպի վանքը։

Ճանապարհին Մելիք-Մանսուրը հարցրեց աբեղայից.

— Դու լավ ճանաչո՞ւմ ես Վարդանին։

— Հինգ տարուց ավել կլինի, որ ես նրա հետ ծանոթ եմ։

Մեր կողմերում նա հայտնի է որպես մի քաջ կանտրաբանտիստ։ Բայց երկար ժամանակ ոչ ոք չկարողացավ հասկանալ, որ նրա պարապմունքը շահասիրական նպատակ չունի։ Նա միայն զենքեր էր տեղափոխում և շատ անգամ ձրի բաժանում էր գյուղացիներին, և եթե պատահում էր երբեմն ապրանքներ բերել, այդ անում էր նա իր բուն վաճառքի հետքերը թաքցնելու համար։ Նպատակը շատ բարի էր, բայց տխուր հանգամանքները բոլորը ապարդյուն արեցին...

— Ես մի քանի անգամ միայն կարողացա տեսնել նրան,— պատասխանեց Մելիք-Մանսուրը,— բայց մինչև այսօր ոչ մի մարդ իմ համակրությունը այն աստիճան չէ գրաված, որպես այդ եռանդոտ երիտասարդը։ Ես տեսա, որքան քաջ, որքան անգութ է նա արյունոտ գործերում, այնքան ավելի ազնիվ, բարի և հավատարիմ է բարեկամության մեջ։

— Բացի դրանից, Վարդանը նշանավոր է և իր սատանայական խելքով. նա իր կյանքում կատարել է շատ բան, որքան հազիվ կարող էր կատարել մի լավ գործիչ, հարյուր տարվա ընթացքում։ Միայն նա խիստ համեստ է իր գործունեության մեջ և սիրում է միշտ ծածկվել հասարակ մարդու կեղևի մեջ։

Վարդանը, առավոտյան զարթնելով գտավ իրեն հայր սուրբի սենյակի մեջ մենակ։ Արեգակի ճառագայթները ներս էին ծագել խուցի նեղ լուսամուտներից և լցրել էին նրան խիստ պայծառ լույսով։ Բայց տաքացած օդը խեղդելու չափ անտանելի էր։ Նա մոտեցավ լուսամուտներից մեկին և բաց արեց. դրսի թարմ և հովասուն օդը ախորժ հոսանքով զարկեց նրա բորբոքված երեսին։ Բայց մի բան, կարծես, ծանրացել էր նրա սրտի վրա, մի բան, դարձյալ խեղդում էր նրան։ Մի փոքր սպասեց, մինչև իր հյուրընկալը կվերադառնար։ Բայց ուշացավ նա. Վարդանը այժմ խիստ անհամբեր էր դարձել, նա դուրս եկավ մի փոքր ազատ օդ շնչելու։ Եվ որովհետև չէր ցանկանում, որ վանքում տեսնեին կամ ճանաչեին իրան, այս պատճառով ետևի դռնից դուրս եկավ դեպի լճի կողմերը։ Այնտեղ գտավ մի ծերունի եպիսկոպոս, որին իսկույն ճանաչեց։ Դա վանքի նշանավոր հնություններից մեկն էր։

— Բարով, պապի։

Ամբողջ միաբանությունը նրան «պապի» էր կոչում։ Պապին նստած էր ամառային արեգակի այրող ճառագայթների

հանդեպ և տաքացնում էր իր սառած անդամները։ Նա նմանում էր հնդկական ֆագիրներին, որոնք չեն լվացվում, չեն սանրվում, եղունգները չեն կտրում և լավ չեն հագնվում, որովհետև մեղք են համարում։ Լսելով երիտասարդի ձայնը, նա ձեռքը դրեց ճակատի վրա, որ աչքերից արգելե լույսի ուղիղ ճառագայթները, և վեր նայելով ասաց.

— Ձայնդ ծանոթ է գալիս, որդի, բայց աչքերս չեն ջոկում, թե դու ով ես, որդի։

— Ես Վարդանն եմ։

— Շատ ապրիս, որդի, եկ, համբուրեմ քեզ. որքա՜ն մեծացել ես, որդի։

Վարդանը թույլ տվեց իրան համբուրել։

— Նստի՜ր, որդի՛, այստեղ, ինձ մոտ, ահա այսպես լավ է։ Ի՜նչ լավ տղա ես դարձել, որդի։ Միտդ գալի՞ս է, որ կատվի նման մտնում էիր իմ խուցը և միրգ էիր գողանում։ Այն ժամանակ պստիկ էիր, շատ պստիկ։

— Միտս գալիս է, պապի,— պատասխանեց Վարդանը խորին հառաչանքով.— ես գողությունը այստեղ սովորեցա...

— Ո՞վ. չէ գողանում, հիմա ամենքը գողանում են։ Արդարությունը ծիծեռնակի կաթն է դարձել, ոչ մի տեղ չես գտնի։ Երկու օր չկա, որ անիծվածները իմ խուցեն գողացան մի քանի հարյուր ռուբլի։ Հոգուս համար էի պահել։ Ինչպե՞ս գտան. ես չեմ հասկանում. սատանան էլ չէր կարող գտնել։ Դրել էի առաստաղի տախտակամածի ետևը։ Բայց սատանաները դրանցից պետք է դաս առնեն... Ա՜խ, նզովյալներ, նզովյալներ...

Պապի սենյակից փողեր գողանալը այնպիսի մի սովորական բան էր, որ շատ չէր կարող հետաքրքրել Վարդանին։ Այդ մոտ հարյուր տարեկան ծերունին իր ամբողջ կյանքում ոչինչ չէր ծախսել, և ձեռքը ընկածը հավաքելու ու պահելու սովորություն ուներ։ Երբ նրա գանձը հարյուրների կամ հազարների կհասներ, հանկարծ մի աներևույթ ձեռք կհափշտակեր և կտաներ բոլորը։ Բայց վերջին ժամանակներում հաճախ կրկնվող գողությունները պապիին բավական վարպետ շինեցին։ Նա իր սենյակում հարյուրավոր ծակուծուկ ուներ, և փողերի ամեն մի մասը մի ծակում էր պահում։ Եվ այս պատճառով, երբեք չէր պատահում, որ նրա գանձը մի անգամով հափշտակվեր, թեև ինքը սովորություն ուներ երդվել և հավատացնել, թե բոլորը տարան։

Պապին խիստ տիպական ժլատներից էր, և Վարդանը ճանաչում էր նրան իր մանկության ժամանակից, նրա ժլատությունը միաբանության մեջ լեգենդական նշանակություն էր ստացել։ Պապին համարվում էր հարուստ աբեղաներից մեկը, այն զանազանությամբ միայն, որ ուրիշները իրանց հարստությունը դիզել էին ավելի մթին ճանապարհներով, իսկ պապին սաստիկ խնայողությամբ։

— Փող շատ ես սիրում, պապի, ի՞նչ պիտի անես այսքան փողը։

— Է՜հ, որդի, «աղվես կա, որ ուղտ է կուլ տալիս, բայց գայլի անունն է խայտառակ»։ Հիմա ո՞վ չի սիրում փողը, հիմա փողի բազար է, բոլորը փողի համար են աշխատում։

Նա դողդոջուն ձեռքով ծոցից հանեց քթախոտի տուփը, բաց արավ, տեսավ, որ դատարկ էր։ Գուցե հարյուր անգամ նա այսօր բաց էր արել այդ դժբախտ տուփը և ամեն անգամ տեսել էր, որ դատարկ է, բայց դարձյալ չէր հավատում իր աչքերին, և կարծում էր, թե գուցե մի հրաշքով լցված կլինի։

— Անիծվի Սիմոն վարժապետը, դու խո ճանաչում ես նրան, քսան կոպեկ տվեցի, թանիքայե ղութիս էլ տվեցի, որ տանե քաղաքից բուռնոթի առնե, տարավ, համ փողը կերավ, համ ղութին։ Դու բուռնոթի չունե՞ս, Վարդան։

— Ես չեմ գործ ածում, պապի։

Պապիի բախտին փոքր-ինչ հեռու ընկած էր մի կիսաքաշ պապիրոս։ Նա տեսավ, և վեր կենալով, մոտեցավ, վերառեց պապիրոսի կտորը, և թղթե փաթոթը պատառելով, մի կողմը գցեց, այնուհետև սևացած ծխախոտը փշրեց ափի մեջ, դողդոջուն մատներով մանրեց և կծու փոշին քաշեց պնչածակերի մեջ։

— Մի՞թե այդպես են պահում քեզ, պապի, որ բուռնոթու փող էլ չեն տալիս։

— Է՜հ, որդի, աշխարհս փոխվել է, ո՞ւր են Ներսես վեհափառի ժամանակները։ Այն ժամանակ սեր կար, միաբանություն կար, այն ժամանակ մեծ կար, փոքր կար։ Իսկ հիմա ամեն բան տակնուվրա է եղել։ Ով որ ճարտար սուտեր խոսել գիտե, ով որ խելացի կերպով խաբել գիտե, նա է առաջ ընկնում։ Մեր նմանների ոտքին ո՞վ է նայում։ Հիմա նոր հավեր են եկել ու երկաթե ձվաներ են ածում։

Պապին Ներսեսի ամենաջերմ պաշտողներից մեկն էր. այդ հավիտենական հիշատակի արժանի կաթողիկոսի անունը նրա լեզվում սրբության նշանակություն ուներ։ Ամեն մի զեղծում տեսնելու ժամանակ, երբ նրա սիրտը վշտանում էր, նա միշտ սովորություն ուներ հիշել Ներսեսի ժամանակները, որ նրա համար էջմիածնի ոսկեդարն էր։

Պապին այժմ մի առանձին հոգեզմայլությամբ դարձյալ հիշեց ոսկեդարը։ Նա ցույց էր տալիս գեղեցիկ լիճը, բացատրում էր, թե ինչ նպատակի համար էր շինել տվել այն մեծ մարդը այդ գեղեցիկ լիճը։ Ցույց էր տալիս լճի մոտ մի ավերակ, որ պետք է թղթի գործարան լիներ, որ վանքը ուրիշ տեղից թուղթ բերել չտար, իսկ այժմ այնտեղ վանքի գյուղացիները իշաներ էին կապում։ Ցույց էր տալիս լճի հանդեպ մի ուրիշ ավերակ, որ պետք է մետաքսի գործարան լիներ, որի համար տնկել տվեց վեհափառը անտառի մի ահագին մասը, որ բաղկանում էր թթենիներից։ Հիշելով անտառը, նա չկարողացավ իր արտասուքը զսպել, և պատմեց, թե վեհափառը իր տնկել տված ծառերը այնքան էր սիրում, որքան հայրը կսիրե իր զավակներին։ Երբ գնում էր անտառը, միշտ մի փոքրիկ կտրոց իր մոտ ուներ և իր ձեռքով կտրատում էր ծառերի ավելորդ ճյուղերը։ Եվ նա բոլոր ծառերը ճանաչում էր, և գիտեր, թե տարվա մեջ որը որքան է մեծացել։ Այդ տեսնելով վեհափառը ուրախանում էր, որպես հայրը, նայելով իր մանուկի աճող հասակին ուրախանում էր և այլն։

Վարդանը նկատելով, որ այդ պատմությունը շատ երկար կձգվի, կամենում էր հեռանալ։

— Ականջդ մոտ բեր, Վարդան,— ասաց պապին։

Վարդանը ականջը մոտ տարավ և լսեց հետևյալ խոսքերը.

— «Շուտ հեռացիր այստեղից, որդի, քեզ վրա խորթ աչքով են նայում»։

— Ինձ այստեղ դեռ ոչ ոք չի տեսել, պապի։

— Բավական է, որ մեկը տեսել է։ Ես վատ բաներ լսեցի քո մասին։

— Ձեր ականջները խո լավ չեն լսում, պապի, ինչպե՞ս լսեցիք։

— Պապիի ականջները այն ժամանակ միայն վատ են

լսում, երբ խոսքը իրան ձեռնտու չէ, բայց պետքական խոսքը նա իսկույն լսում է։

Վարդանը ծիծաղեց և հեռացավ։

Պապին նրա ետևից կանչեց.

— Լսի՛ր, Վարդան, եթե քաղաքը գնալու լինես, չմոռանաս ինձ համար մի քիչ բուռնոթի ուղարկել։ Դու խո տեսա՞ր, որ տուփս դարդակ էր։

Այդ միջոցին հայտնվեցան Մելիք-Մանսուրը Հովհաննես հայր սուրբի հետ։

— Ի՞նչ էիր խոսում պապի հետ,— հարցրեց վերջինը։

— Նա միակ ազնիվ մարդն է այստեղ,— պատասխանեց Վարդանը, և դառնալով Մելիք-Մանսուրին, ասաց.

— Ես կցանկանայի ձեզ հետ առանձին խոսել, դուք ունե՞ք այստեղ որևիցե ծանոթ տուն։

— Ունեմ։

Վարդանը ոչ թե պապիի խոսքերից կասկածի մեջ ընկավ, այլ առհասարակ աշխատում էր իրան հեռու պահել վանքից։ Բացի դրանից, նա անհանգիստ էր Լալայի մասին, պետք էր գտնել նրան, պետք էր մի տեղեկություն ստանալ նրա մասին։ Նա խնդրեց Հովհաննես հայր սուրբից, որ նա հաղորդե իրան, թե որևիցե տեղեկություն ստանալու կլինի քահանաներից։

— Ես լուր ստացա, որ այսօր մինչև ճաշը կգան քահանաները և ցուցակները կբերեն,— ասաց հայր սուրբը,— անմիջապես քեզ իմաց կտամ։

— Գիտե՞ք մեր տեղը,— հարցրեց Մելիք-Մանսուրը։

— Գիտեմ։

— Ուրեմն գնանք, Վարդան։

Այդ միջոցին հրապարակի վրա երևաց մի փոքրիկ խումբ, որ դանդաղ կերպով շարժվում էր դեպի գերեզմանատունը։ Մի քանի ալաշկերտցիներ տանում էին մի դագաղ։ Քահանա չկար, որովհետև քահանային կարող էին պատրաստ գտնել գերեզմանատանը։ Նա այնտեղից չէր հեռանում, ի նկատի ունենալով, որ ամեն րոպե նոր դագաղներ կարող էին բերվել։ Մի կին, հենած երկու ուրիշ կանանց թևքերի վրա, գնում էին դագաղի հետ։ Նա լաց չէր լինում, և ոչ արտասուք էր երևում նրա ցամաքած աչքերում։ Նա գտնվում էր մի տեսակ սարսափելի շվարման մեջ, որ հատուկ է հոգու այն տրամադրության, երբ բոլոր զգացմունքները խորտակվում են մի ծանր և անակնկալ հարվածի ներքո։ Երևում էր, որ այդ կինը հանգուցյալի մոտ ազգականը պետք է լինի։ Նրա փեշերից քարշ էին ընկած երկու փոքրիկ երեխաներ, դրանք լաց էին լինում։ Վաղարշապատցիներից ոչ ոք չէր գնում դագաղի հետ, բացի մեզ ծանոթ բժշկապետից, որ որոշվում էր այդ աղքատ կիսամերկ խումբի մեջ։

Վարդանը և Մելիք-Մանսուրը հեռվից տեսան այդ թշվառ հուղարկավորությունը, բայց ուշադրություն չդարձրին։ Ամեն օր, ամեն րոպե հանդիպում էին այսպիսի տեսարանների, որոնք արդեն սովորական երևույթների կարգն էին անցել։

ԽԱ.

Վարդանը, տեսնելով Մելիք-Մանսուրին, կարծես առժամանակ մոռացավ դառն ցավը, որ այնքան սաստիկ կերպով մաշում էր նրա սիրտը։ Բացի դրանից, Հովհաննես հայր սուրբի տված հույսը, թե գաղթականների հետ եկած քահանաներից և տանուտերներից կարելի է տեղեկանալ ծերունի Խաչոյի ընտանիքի որտեղ լինելու մասին,— այդ ուրախալի հույսը բավական հանգստացրել էր նրան։ Նա մտածում էր, թե այդ տեղեկություններով կարող է գտնել Լալային, և իր սիրով կթեթևացնե նրա պանդխտության տառապանքները։

Բայց այդ՝ սիրտ խոցոտող կսկիծների առժամանակյա բթություն էր միայն, երբ վշտերը գուլանում են, և սրտի վերքերին տիրում էր բոպեական թմրություն։

Տունը, ուր տանում էր նրան Մելիք-Մանսուրը, գտնվում էր Վաղարշապատի հին փողոցներից մեկի մեջ։ Շինվածքները թեև մանր էին և խիստ աղքատ, բայց որպես առհասարակ Վաղարշապատի տները, ունեին ընդարձակ բակեր, որ հովանավորված էին պտղատու ծառերով։

— Դու շատ գոհ չես լինի,— ասաց ճանապարհին Մելիք-Մանսուրը,— եթե գիտենաս, թե որտեղ եմ տանում քեզ։

— Ինձ համար միևնույն է,— պատասխանեց Վարդանը անփույթ կերպով։— Ես միայն ցանկանում էի մի քանի տեղեկություններ ստանալ պարոն Սալմանի մասին։ Այնտեղ խո մեզ խանգարող չի՞ լինի։

— Ոչ ոք։

Փոքրիկ դռան մուրճը զարկեցին, մի պառավ կին բաց արեց դուռը։ Նրանք ներս մտան և դուռ կրկին փակվեցավ նրանց ետևից։

— Ա՛յ նանի, քեզ համար մի նոր հյուր եմ բերել,— ասաց Մելիք-Մանսուրը։

Պառավը մի խորամանկ հայացք ձգելով Վարդանի երեսին, պատասխանեց։

— Աչքիս վրան...

— Դե շուտ, նանի, մեզ համար մի շիշ գինի, սաստիկ ծարավ ենք,— ասաց Մելիք-Մանսուրը։ Եվ մոտենալով, ավելացրեց.— Հոգիդ կհանեմ, եթե մի ուրիշ մարդ ներս ես թողել։

Պառավը խորհրդավոր կերպով գլուխը շարժեց և հեռացավ։

Երկու երիտասարդները մտան մի փոքրիկ, բայց բավական մաքուր սենյակ, որ կահավորված էր կիսասասիական և կիսաեվրոպական ճաշակով, և նստան փոքրիկ սեղանի մոտ, միմյանց հանդեպ։ Քանի րոպեից հետո մի մանկահասակ կին հուշիկ քայլերով ներս մտավ և լռությամբ դրեց սեղանի վրա մի շիշ գինի, երկու բաժակի հետ, և նույնպես լռությամբ հեռացավ։ Նրա գլխի հայկական պատճուճանքը բոլորովին քողարկել էր դեմքը, երևում էին միայն զույգ սևորակ աչքերը աղեղնաձև հոնքերի հետ։ Բայց ինչ որ երևում էր, այդ էլ բավական էր փոքրիշատե հասկացություն կազմելու նրա գեղեցկության մասին։

Մելիք-Մանսուրը, բաժակները լցնելով, մեկը ինքը խմելով, մյուսը Վարդանին տալով, ասաց.

— Ես միշտ ուրախ եմ, որ մեր վանքերը շինված են ըստ մեծի մասին մարդկային բնակությունից հեռու, լեռների, ձորերի և անապատների մեջ։ Ոչ մի տեղ չկան այնքան սրիկա և անբարոյական պատանիներ, որքան Վաղարշապատում։ Ոչ մի տեղ չկան այնքան թեթև վարքի տեր կնիկներ, որքան այստեղ։ Ահա այդ գեղեցիկ կինը, որ այնպես համեստ և ամոթխած կերպով ներս մտավ և խկուլն հեռացավ, մի աբեղայի սիրուհի է։ Վանքը, ես մտածում էի, գոնե պահպանում է կրոնական ջերմեռանդությունը, բայց այստեղ մարդիկ ոչինչի չեն հավատում։ Աբեղաների վարքը պատճառում է ժողովրդի մեջ գայթակղություն և թերահավատություն։ Այստեղ արդեն սկսվել է բորբոքվել բողոքականությունը։ Անցնելով փողոցներից, իհարկե, դուք տեսար բավական գեղեցիկ տներ, եթե քննելու լինիս, թե ովքեր

են նրանց տերերը, կտեսնես, որ համարյա բոլորը աբեղաների հեռու կամ մերձավոր ազգականներ են, որոնք առաջ աղքատ են եղել և հետո վանքի շնորհիվ հարստացել են։ Ես, իրավն ասեմ, տանել չեմ կարողանում, երբ նկատում եմ որ այստեղ հարյուր հազարներ են վատնվում, երբ այժմ մեր ամեն մի կոպեկը մեծ արժեք ունի մեզ համար։ Հազար ու մեկ պետքեր ունենք, ամենի համար փող է պահանջվում։ Կ. Պոլսում ազգային սնդուկը դատարկ է։ Պատրիարքը գրող չունի իր ամենաանհրաժեշտ ծախքերը լցուցանելու համար։ Բայց նրա վրա այժմ ծանրացած են այնպիսի գործեր, որոնց հապաղումը, որոնց հետաձգությունը հավիտենական կորուստ պիտի համարվի ազգի համար։ Այսուամենայնիվ, ես չեմ նկատում Կ. Պոլսի պատրիարքարանի և հայոց Մայր Աթոռի մեջ համերաշխության մի նշույլ անգամ։ Մանկունին Կ. Պոլսում քսան և հինգ հազար կորցրեց կոնսուլիտների մեջ, և որպես լսում եմ, երեսուն հազար այս մոտ օրերում ուղարկված է, սատանան գիտե, ինչ դժոխային նպատակների համար, բայց հայոց պատրիարքը, մեր միակ գործունյա մարդը գրող չունի...

— Այդ գինին փոքր-ինչ թթված է երևում,— ընդմիջեց Վարդանը։

— Դու չէի՞ր լսում ինձ,— գոչեց Մելիք-Մանսուրը վշտացած ձայնով։

— Լսեցի, պատրիարքը գրող չունի...

— Այսպես չէ կարելի խոսել...

— Ի՞նչ խոսել, ես միայն մի բան գիտեմ, ինչ ազգ, որ հույսը դրել է միայն եկեղեցականների վրա, նրա կործանման սկիզբը մոտ է վախճանին։

Մանկահասակ կինը կրկին ներս մտավ, հուշիկ քայլերով մոտեցավ սեղանին և դրեց նրա վրա մատուցարանի մեջ դարսած նախաճաշիկը։ Այս անգամ երեսի քողի ծալքը, որից առաջ երևում էին աչքերը և հոնքերը միայն, այս անգամ բավական ետ էր քաշված, և դուրս էին նայում նրա վարդագույն նուրբ շրթունքը։

— Մեզ համար մի ուրիշ շիշ գինի ևս, միայն դրանից չլինի,— ասաց Մելիք-Մանսուրը։

Կինը դարձյալ անխոս հեռացավ։

— Ես զարմանում եմ, որ դու մի այսպիսի իշխան ընտրեցիր քեզ համար,— հարցրեց Վարդանը։

— Եթե ուզում ես լավ ճանաչել աբեղային, բարեկամացիր նրա սիրուհու հետ,— պատասխանեց Մելիք-Մանսուրը ծիծաղելով։— Բացի դրանից, այստեղ ամեն գիշեր հավաքվում է մի հասարակություն, որոնք ինձ բավական հետաքրքրական տեղեկություններ են հաղորդում։

— Իհարկե, գլխավորապես վանքի վրա,— ավելացրեց Վարդանը հեգնական կերպով։— Բայց թողնենք առժամանակ վանքը և խոսենք մեր գործի վրա։ Ես կցանկանայի քեզանից տեղեկանալ, թե ի՞նչ վախճան ունեցավ պարոն Սալմանը, և ինչե՞ր պատահեցան իմ բացակայության ժամանակ։ Ես դեռ ոչինչ չգիտեմ, թեև Հովհաննես հայր սուրբը հաղորդեց շատ բան, բայց ինչ որ պետք էր ինձ, նա ինքն էլ չգիտեր։

Կարծես մի սև թուխպ անցավ Մելիք-Մանսուրի ուրախ դեմքի վրա և նրա կապտագույն շրթունքը սկսեցին դողդողալ, երբ հանկարծ հիշեց տխուր անցյալը, որ առժամանակ մոռացության էր տվել։ Նա վեր առավ իր առաջ դրած լիքը բաժակը և միանգամով խմեց։

— Կպատմեմ,— ասաց նա խռովյալ ձայնով,— քեզ պետք է գիտենալ և բոլորը գիտենալ, թեև այդ չի ուրախացնի քեզ։ Պարոն Սալմանը կալանավորվեցավ գիշերը. ես այդ իմացա նույն գիշերվա առավոտը։ Մատնիչը գործը այնպես էր սարքել, որ մինչև անգամ տան տերը ոչինչ չէր հասկացել, ուր նա այն գիշեր իջևանել էր։ Ինձ հայտնեց երիտասարդի ծանոթներից մեկը, որ պատահմամբ տեսել էր նրան տանելիս։ Իմ առաջին հոգսը եղավ հավաքել մեր մտերիմներից մի քանի ձիավորներ և հարձակում գործել։ Գուցե կհաջողվեր մեզ ազատել նրան, եթե ճանապարհին կհանդիպեինք։ Բայց նրան տարել էին ուրիշ ճանապարհով, որի մասին մենք դժբախտաբար չմտածեցինք։ Ինձ հետ կային քսանից ավելի ձիավորներ, որոնք պատրաստ էին ամեն տեսակ գործողության։ Երկար հարցուփորձից հետո ես կարողացա գտնել այն գյուղաքաղաքը միայն, ուր այն ժամանակ գտնվում էր զինվորական գործակատար փաշան, որի մոտ տարել էին խեղճ երիտասարդին։ Տեղեկացա, որ տարածինելես խեղդել էին։ Ինձ չհաջողվեցավ մինչև անգամ գտնել անբախտ երիտասարդի մարմինը։ Թե որպիսի բարբարոսությամբ

էին վարվել նրա դիակի հետ՝ այդ կարող են անել միայն գազանները։ Միայն այդ եղեռնագործությունը լցրեց իմ սիրտը կատաղի վրեժխնդրությամբ և անմեղ զոհի արյունով կնքվեցավ այն ուխտը, որի համար երդվել էինք մենք։

— Պարոն Սալմանից հետո, որպես քեզ հայտնի է, կալանավորվեցան ծերունի Խաչոն իր երկու որդիների՝ Հայրապետի և Ապոյի հետ։ Դրանց անմիջապես չսպանեցին, այլ պահում էին բանտում, սաստիկ հսկողության ներքո։ Որպես երևում է, աշխատում էին հարուստ տանուտերի պահած բոլոր ոսկիները առնել և հետո սպանել։ Բայց խեղճերը երկար չկարողացան դիմանալ անտանելի չարչարանքներին, և երեքն էլ մեռան բանտի մեջ։

— Այդ բոլորից հետո ես հասկացա, թե ինչ վիճակ էր սպասում Օ... գյուղին և անձամբ դիմեցի Իսմայիլ փաշայի մոտ, որին հանձնված էր Բայազեդի կողմերի զորքերի հրամանատարությունը։ Նա բավական խելացի մարդ է, և վստահություն ունեի, թե իմ տեսակցությունը ապարդյուն չի մնա։ Ես ամենևին չթաքցրի նրանից այն պատրաստությունները, որ կատարվել էին իմ և իմ ընկերների ձեռքով։ Ես հայտնեցի, թե ժողովրդին բաժանված է, այո՛, մի նշանավոր քանակությամբ զենքեր։ Բայց այդ պատրաստությունը, ասացի, ոչ թե ապստամբության նպատակ ունե, որպես սխալ հասկացրել են ձեզ,— այլ—անձնապաշտպանության։ Մահմեդական ամբոխի այդ կատաղի մոլեգնության ժամանակ, որ վառել էր նրա մեջ իսլամի հոգևորականությունը,— ասացի նրան,— կարող է բոլորովին զոհ գնալ քրիստոնյա տարրը, եթե նրան միջոց չտրվի պաշտպանվելու։ Այդ անհրաժեշտության մասին, ավելացրի, ինքը կառավարությունը պետք է նախապես հոգ տաներ, եթե չէ ցանկանում, որ այստեղ նույնպես կրկնվեին Բոլգարիայի տխուր անցքերը, որոնք Թուրքիային մեծ պատասխանատվության տակ ձգեցին։ Ուրեմն, կառավարությունը պետք է շատ գոհ լինի, որ մենք նրա հոգսերը թեթևացրինք, կատարեցինք այն, ինչ որ նրա պարտքն էր անելու, մենք քրիստոնյաների ձեռքը զենք տվեցինք, մահմեդականների մոլեռանդությունից պաշտպանվելու համար։

— Խորամանկ փաշան մեծ համակրություն ցույց տվեց, խոստացավ, որ ինքն էլ ամեն հնար գործ կդնի, որ հայերին վնաս չհասնի, խոստացավ, որ նրանց թե՛ կայքի և թե՛ կյանքի

ապահովության համար պետք եղած բոլոր միջոցները առանց հետաձգության կարգադրված կլինեն։ Այդ ժամանակ ռուսաց զորքերը ետ էին դառնում։ Եվ լսվում էր, թե հայերը ցանկանում են ռուսաց զորքերի հետ գաղթել։ Փաշան հանձնեց ինձ համոզել ժողովրդին, որ իրանց տեղից չշարժվեն։ Ես ուրախությամբ հանձն առա։ Բայց ինձ ճանապարհ դնելեն հետո, հենց ինքը ծածուկ հրաման տվեց քուրդ Ֆաթթահ-բեկին, որ իր արյունարբու հրոսակներով եկավ և Օ... գյուղը կրակ տվեց, այրեց և բնակիչների մեծ մասը կոտորեց։ Այդ անցքը սարսափ ձգեց ամբողջ գավառի վրա և ավելի խստացրեց գաղթականությունը։ Թե՛ իմ և թե՛ համախոհներիս բոլոր ջանքերը իզուր անցան երկյուղով պաշարված ժողովրդին պահել իր հայրենի հողի վրա։ Օրինակը արդեն աչքի առջև էր։ Այնուհետև, եթե երկնքից հրեշտակի ձայն ևս լսեին, դարձյալ չէին հավատա, թե Օ... գյուղի պատուհասը չէր հասնի բոլոր ժողովրդին։

— Բայց նենգավոր փաշայի խաբելը ինձ ավելի համոզեց այն կանխակալ կարծիքի մեջ, թե թուրք պաշտոնատարները կողմնակի կամ ուղղակի միջոցներով, իրանք են նպաստում քրիստոնյա տարրի ոչնչանալուն և Հայաստանի հայերից դատարկվելուն։

— Իմ և համախոհներիս բոլոր ջանքերը կարողացան ժողովրդի միայն մի մասը պահել հայրենի հողի վրա, բայց շատ աննշան մասը։ Այն ժամանակ Իսմայիլ փաշան թույլ տվեց թուրքաց թշնամի ռուսաց կողմը դիմող հայերի վրեժը մնացած հայերի վրա թափել։ Այդ միջոցին քրդերը գործ դրեցին իրանց բոլոր անգթությունները, և զանազան տեղերում սկսվեցավ սարսափելի կոտորածը...

— Ես մինչև այսօր համոզված եմ, և եթե ժողովուրդը տեղից չշարժվեր, կարող էր պաշտպանվել։ Թուրքաց կանոնավոր զորքերը, շատ հասկանալի է, որ չէին հարձակվի հնազանդ և խաղաղ ժողովրդի վրա։ Տեղային իշխանությունը մինչև այդ աստիճան ակներև բարբարոսություն չէր անի, մանավանդ, որ այդ ժամանակ Ալաշկերտի և Բայազեդի կողմերում լիքն էին անգլիական ագենտներ և եվրոպական լրագրների թղթակիցներ։ Տեղային իշխանությունը կաներ այն, ինչ որ արեց։ Այսինքն՝ ծածուկ քրդերին կգրգռեր հայերի դեմ և ինքը մատների միջից կնայեր գործող բարբարոսությունների վրա։ Բայց քրդերի դեմ

պաշտպանվելը շատ դժվար չէր լինի։ Մի փոքրիկ, բայց խիստ նշանավոր դեպք կապացուցանե, որ իմ ենթադրությունը սխալ չէ։ Ես համառոտ կերպով կպատմեմ քեզ։

— Գաղթականությունից հետո, երբ ռուսաց զորքերը բոլորովին թողեցին Բայազեդի և Ալաշկերտի գավառները, այսինքն՝ երբ այդ երկրները կրկին անցան թուրքաց ձեռքը, այն ժամանակ, որպես պատմեցի, քրդերը սկսեցին կողոպտել, կոտորել և տանջել մնացած հայերին։ Այդ միջոցին մի քանի հարյուր ընտանիք թողեցին իրանց բնակությունները և ամրացան լեռների մեջ։ Երևակայեցեք, մի քանի հազար քրդեր, մի քանի շաբաթ շարունակ կռվում էին այդ մի բուռն քաջերի հետ, որոնք ոչ միայն հանձն չառնցին անձնատուր լինել, այլ մի քանի հաջող հարձակումներ գործելով, կարողացան խլել թշնամուց հարուստ ավար և պատերազմական պատրաստություններ։ Իմ սիրտը և այս րոպեիս թնդում է մի անսահման ուրախությամբ, երբ մտաբերում եմ այն անմոռանալի օրերը։ Կռվում էին ոչ միայն երիտասարդները, այլև ծերերը, այլև կնիկները։ Ես այժմ համոզված եմ, որ ստրկությունը չէ կարող խլել մի ժողովրդի քաջությունը, որ նախնիքը թափել էին նրա երակների մեջ։ Ստրկությունը կարող է միայն ժամանակավորապես ճնշել և խեղդել քաջազնական ոգին, բայց սպանել — ո՛չ։ Զարկեց հաջող ժամը, նա կրկին կզարթնի իր վաղեմի ուժով և ավելի սաստիկ զորությամբ։ Ես այդ տեսա իմ աչքով։ Եվ միակ ուրախալի երևույթը, որ վերջին աղետների մեջ կարող է մխիթարել մեզ՝ այդ է։

Վարդանի մոայլված դեմքը փոքր-ինչ պայծառացավ և նա իր տխուր աչքերը ուղղեց դեպի վեր, կարծես, աղոթում էր, կարծես, փառք էր տալիս Վերին նախախնամությանը։

— Ինչո՞վ վերջացավ,— հարցրեց նա։

— Երկար պատսպարվել անմատչելի լեռների մեջ, թեև շատ դժվար էր, բայց դարձյալ կարելի էր, եթե մենք գործ ունենայինք միայն քրդերի հետ։ Բայց շուտով պաշարեցին մեզ կանոնավոր զորքեր։ Այդ վերջիններին նույնպես կարելի էր ընդդիմադրել, մեր կողմն էր մի անընկճելի զորություն, Հայաստանի լեռները, որ այնքան խնամքով պահում են իրանց մեջ ապաստանողներին։ Բայց պաշարի և ուտեստի պակասությունը վրա հասավ, որպես մի թշնամի, որին հաղթել անկարելի էր։ Թեև երբեմն գիշերով մերայինք իջնում էին լեռներից, և հարձակվե-

լով քրդերի մերձակա գյուղերի վրա, պաշար էին բերում, բայց այդ խիստ սակավ անգամ հաջողվում էր, ավելի այն պատճառով, որ քրդերի գյուղերը դատարկ էին և բնակիչները իրանց անասունների հետ գնացել էին հեռավոր արոտատեղիներ։ Իհարկե, մեր այդ դրությունը երկար շարունակվել չէր կարող, երբ մեր շրջակայքում չէր մնացել ոչ մի հայաբնակ գյուղ, որտեղից կարողանայինք օժանդակություն գտնել, գոնե պաշարի կողմից։ Բայց թշնամին հետզհետե մոտենում էր։ Այդ ժամանակ մերայինք կատարեցին մի հրաշալի քաջագործություն։ Մի գիշեր պատառելով պաշարող շղթան, անցան թշնամու ահագին բանակից։ Երևակայեցեք, որ դրանք կռվող տղամարդիկ չէին միայն, որոնց հեշտ լիներ մի այս տեսակ հանդուգն ձեռնարկություն, այլ իրանց հետ ունեին ամբողջ ընտանիքներ, կին, աղջիկ և երեխաներ։

— Հետո ո՞ւր գնացին,— հարցրեց անհամբերությամբ Վարդանը։

— Անցան Թուրքաց սահմանից և գնացին Պարսկաստան։ Բայց ճանապարհին ոչ պակաս վտանգների դեմ ստիպված էին պատերազմել։

— Ուրեմն դու Պարսկաստանից եկար այստեղ։

— Այո՛, Պարսկաստանից։

— Այժմ դու ի՞նչ դիտավորություն ունես այստեղ,— հարցրեց Վարդանը։

— Ես միայն մեկ դիտավորություն ունեմ, և կարծեմ, դու էլ կհամաձայնվես ինձ հետ,— պատասխանեց Մելիք-Մանսուրը, ավելի լուրջ դեմք ընդունելով.— պետք է աշխատել, որ այստեղ եկած գաղթականների կյանքը պահպանվի և նրանք իսպառ չոչնչանան քաղցածությունից և հիվանդությունից։ Ես հավատացած եմ, որ ռուսները կհավաքեն իրանց ուժերը և կրկին կտիրեն թողած երկրները։ Այն ժամանակ այն կողմերում խաղաղություն կտիրե, և այն ժամանակ պետք է աշխատել, որ ալաշկերտցիք և բայազեդցիք վերադառնան իրանց հայրենիքը։ Եթե ոչ, Հայաստանի ապագայի համար մեծ դժբախտություն կլինի, եթե այդ երկու սահմանակից գավառները, որպես են Ալաշկերտը և Բայազեդը, բոլորովին կդատարկվեն հայերից և նրանց տեղը կբռնեն վայրենի քրդերը։

— Դու կարծում ես, որ այդ գավառները մի՞շտ ռուսաց ձեռքը կմնան։

— Դիցուք թե պատերազմից հետո, երբ խաղաղության դաշինք կկապվի, այդ գավառները կրկին կանցնեն Թուրքաց ձեռքը։ Բայց այն ժամանակ ես հավատացած եմ, որ հանգամանքները կփոխվեն, և մյուս անգամ չեն կրկնվի այժմյան անկարգությունները. ջարդված Թուրքը խելքը գլուխը կհավաքե... Ես դեռ մի ուրիշ հույս էլ ունեմ...

Այդ միջոցին ներս մտավ պառավը, հայտնեց, թե մի օտարական քահանա խնդրում է տեսնվել։ Վարդանը մտածելով, թե դա Հովհաննես հայր սուրբի խոստացած քահանաներից մեկը պետք է լինի, հրամայեց ներս թողնել։

Հայտնվեցավ Օ... գյուղի քահանա տեր-Մարուքը։

ԽԲ

Նախաճաշիկը վերջացել էր և մի քանի շիշ գինի դատարկվել էր, երբ հայտնվեցավ քահանան։ Վարդանին խիստ ծանր էր թվում մյուս անգամ հանդիպել այդ մարդուն, որ Օ... գյուղում այնքան անախորժություններ և այնքան հոգսեր էր պատճառել թե՛ իրան և թե՛ իր բարեկամ պարոն Սալմանին։ Բայց հանգամանքները ակամա հաշտեցնում են մարդուն հին թշնամու հետ։ Քահանայի ողորմելի դրությունը, նվաղած կերպարանքը, մաշված և քրքրված հագուստը, որ ավելի նմանեցնում էին նրան մի մուրացկանի քան թե աստուծո տաճարի սպասավորի, խեղճ մարդու այդ բոլոր թշվառությունները մոռանալ տվեցին Վարդանին հին ատելությունը։ Բացի դրանից, այդ մարդու բերանից պիտի լսեր Վարդանը տեղեկություններ այն ընտանիքի մասին, որի վիճակը իրան սաստիկ հետաքրքրում էր։

— Ձեզ Հովհաննես հայր սուրբը ուղարկե՞ց,— հարցրեց Վարդանը քահանայից, խնդրելով նստել։

— Այո՛, Հովհաննես հայր սուրբը...— պատասխանեց նա և տեղավորվեցավ փոքրիկ սեղանի մոտ, որի վրա դեռ մնացել էր մի շիշ գինի։

Վարդանը լցրեց բաժակը և տվեց քահանային, որ օրհնելով, իսկույն խմեց։ Ոգելից ըմպելին կարծես կազդուրիչ ցող լիներ, որ թափվեցավ տոթից թառամած խոտաբույսերի վրա։ Քահա-

նայի անշարժ դեմքը փոքր-ինչ զվարթացավ։ Մելիք-Մանսուրը նկատելով այդ, հարցրեց.

— Կկամենայի՞ք մի բան ուտել։

— Երեկվանից ոչինչ չեմ կերել,— պատասխանեց քահանան այնպիսի մի ողորմելի ձայնով, որ չէր կարելի չխղճալ։

Նա ձայն տվեց պառավին նախաճաշիկ բերել տերտերի համար։

Վարդանը դժվարանում էր իսկույն սկսել հարցուփորձը։ Նրա դրությունը նմանում էր այն անբախտին, որի բացակայության ժամանակ, գողերը մտան տունը, կողոպտեցին և տարան բոլորը, ինչ որ ուներ։ Վերադառնալով տուն, գտնում էր նրան մերկ ու դատարկ։ Բայց մի տեղում նա թաքցրել էր իր գանձը, դեռ հույս ունի, որ չարագործների ձեռքը այնտեղ հասած չի լինի։ Մոտենում է խորհրդավոր պահարանին, և սիրտը դողդողալով կանգնում նրա առջև, բայց չէ համարձակվում բաց անել, չէ համարձակվում նայել։ Նախապես պաշարում է նրան մի կանխակալ սոսկում, մտածում է,— ինչ կլինի իր դրությունը, եթե գանձարանը դատարկ գտնե, նա խո կզրկվի իր վերջին հույսից, իր միակ մխիթարությունից։

Այդպիսի մի անվճռականության մեջ օրորվում էր, տարուբերվում էր Վարդանը։ Նա դեռ հույս ուներ, որ կգտնի Լալային։ Եվ այդ քահանայի մի խոսքից էր կախված նրա բախտը և ցմահ անբախտությունը։ Արդյոք ունե՞ր այնքան ուժ և այնքան սրտի զորություն, որ կարողանար դիմանալ քահանայի բոթաբեր խոսքին։ Ջարհուրելի նախազգացումներ տիրել էին նրա հոգին և նա ոչինչ հարցնել չկարողացավ, թեև շատ ցանկանում էր հարցնել։

Մելիք-Մանսուրին հայտնի չէին Վարդանի հոգեկան հարաբերությունները Լալայի հետ։ Նա մինչև անգամ ծանոթ չէր ծերունի Խաչոյի ընտանիքի հետ։ Բայց նկատելով իր բարեկամի անհանգստությունը, հարցրեց։

— Դու ունե՞իր մի բան խոսելու տեր հոր հետ, գուցե ես...

— Ոչ, քեզանից ծածուկ՝ ոչինչ չունեմ,— ասաց Վարդանը և դարձավ դեպի քահանան.

— Տեր հայր, դու հանձնեցի՞ր Հովհաննես հայր սուրբին քո ծուխի ցուցակը. ինձ նույնպես հետաքրքիր է գիտենալ, թե

Օ... գյուղից քանի ընտանիքներ կան գաղթականների մեջ և ո՞ր-տեղ են բնակվում նրանք։

— Օրհնած, իմ ծուխից ովքե՞ր են մնացել, որ նրանց համար ցուցակ կազմեի,— պատասխանեց քահանան այնպիսի մի եղանակով, կարծես, հավերի վրա էր խոսում։— Ես մատներով էլ կարող եմ համբարել ինչ որ մնացել է, կամ որտեղ թափառում են այժմ։

Վարդանը ամբողջ մարմնով դողաց։

— Մի՞թե բոլորին կոտորեցին,— հարցրեց նա, գունաթափվելով։

— Եթե չասեմ բոլորին, դարձյալ պետք է ասել, որ մարդ չմնաց։ Ի՞նչ եղան, ես ինքս էլ չգիտեմ, աստված ոչ մի քրիստոնյայի թող չտա այն պատուհասը, ինչ որ հասավ Օ... գյուղին։ Այդ մեր մեղքիցն էր։ Կարծես Սոդոմ և Գոմորի նման երկրնքից կրակ ու ծծումբ թափվեցավ և ամեն ինչ լափեց։ Ով որ ազատվեցավ կրակից, քրդերը կամ գերի տարան, կամ կոտորեցին։ Այդ բոլորը պատահեցավ մեկ գիշերվա մեջ։ Առավոտյան ամբողջ գյուղը նմանում էր մի հանգած խարույկի։ Կորա՞ն իմ ապառիկները, կորա՞ն... էլ հույս չկա մի բան ստանալու... Թոմաս էֆենդին, ասված թող հոգին լուսավորե, խոստացավ, որ կհավաքե իմ ապառիկները, բայց նա էլ ձեր շարը տարավ... Այսպես մնացի աղքատ և տնանկ, տեսնո՞ւմ եք ինչ վիճակի մեջ եմ ես...— և նա ցույց տվեց իր քրքրված հագուստը։

Արտասուքը սկսեց թափվել խեղճ քահանայի աչքերից և դառն կերպով հեկեկում էր նա։ Արդյոք նա հիշե՞ց իր հարս Ջուլոյին և նրա հրեշտակի նման երեխաներին, որոնք նույնպես չկային գաղթականների մեջ։ Արդյոք նա հիշե՞ց իր փեսա տիրացու Սիմոնին և նրա կնոջը, որ իր հարազատ աղջիկն էր, որոնք նույնպես անհետացել էին ընդհանուր խռովության մեջ։ Արդյո՞ք ժողովրդի ցավն էր տանջում քահանային, որի հովիվն էր ինքը, որի կորուստը այնպես սառնասրտությամբ նկարագրեց նա։— Դրանցից և ոչ մեկը չէր տեր հոր արտասուքի պատճառը։ Նա հիշեց միայն իր ապառիկները, որ պիտի ստանար իր ծուխից, իսկ այն ծուխը այժմ չկար. ապառիկները կորան... Բայց այդ դժբախտ ապառիկների մասին, որոնք այնքան հոգսեր էին պատճառել տեր հորը, Վարդանը ոչինչ չգիտեր, այդ պատճառով, մի առանձին ուշադրություն չդարձրեց։

Նա այլևս չէր համարձակվում հարցուփորձը առաջ տանել, և մասամբ ուրախ էր, որ տեր հայրը իր ապառիկներով հեռանում էր բուն հարցից։ Նա խմեց իր առջև դրած բաժակը, աշխատելով իր վշտերը ցրվել գինու թմրության մեջ։ Բայց գինին ավելի էր բորբոքում այրված սրտի տանջանքը, որպես յուղ, որ ածվում է բոցավառ կրակի վրա։

Վարդանին իր դժվար դրությունից ազատեց Մելիք-Մանսուրը։ Նա լսել էր շատ բան ծերունի Խաչոյի ընտանիքի մասին, նրան հայտնի էր այդ հոյակապ ընտանիքի գլխավորի և նրա երկու որդիների ցավալի մահը, բայց մնացածների մասին ոչինչ չգիտեր։

— Այդ ընտանիքից ո՞վ մնաց,— հարցրեց նա։

— Ոչ ոք,— պատասխանեց քահանան սառնասրտությամբ։— Ինքը տանուտերը իր երկու որդիների հետ մեռան բանտի մեջ։ (Այդ պետք է լավ գիտենաք)։ Մնացած որդիներին կոտորեցին, հարսներին և աղջիկներին գերի տարան...

— Բոլորի՞ն...— գոչեց Վարդանը սարսափելով։

Քահանան, նկատելով երիտասարդի սոսկալի դեմքը, այժմ միայն զգաց, թե իր պատասխանը որքան անզգույշ էր։

— Սառան այստեղ է,— ասաց նա,— իր երկու երեխաների և Լալայի հետ։

Վարդանի ուրախությանը չափ չկար։ Նա այժմ նմանում էր մի մարդու, որ սարսափելի նավաբեկությունից հետո, տարուբերվելով կատաղի ալիքների մեջ, մաքառում էր մահվան և օրհասի հետ։ Սպառված ուժերը այլևս չեն օգնում նրան։ Նա աչքերը գոցում է, որ մյուս անգամ բաց անե անդունդի մեջ։ Հանկարծ գտնում է իրան ցամաքի վրա։ Ինչպե՞ս հայտնվեցավ այնտեղ,— ինքն էլ չգիտե։ Ալիքների մի սաստիկ հորձանք ձգեցին նրան այնտեղ։

— Այստե՞ղ է Լալան... այստե՞ղ է Սառան... ուրեմն ես կտեսնեմ նրանց, փա՜ռք քեզ աստված,— գոչեց նա նստած տեղից վեր թռչելով։— Գնա՜նք, տեր հայր, դու խո իմանում ես, թե նրանք որտեղ են բնակվում։ Գնա՜նք, դու էլ, բարեկամ,— նա բռնեց Մելիք-Մանսուրի ձեռքից։

Երկու երիտասարդները քահանայի հետ դուրս գնացին։ Բայց Վարդանի ուրախությունը կարճատև եղավ։ Քահանան դեռ

չգիտեր վերջին անբախտությունը, որ պատահել էր այդ գաղթականների հետ։

Եթե Վարդանը այսօր առավոտյան, վանքից դուրս գալուց հետո, փոքր ինչ մոտից տեսներ այն տխուր հուղարկավորությունը, որ շարժվում էր դեպի գերեզմանատունը, այն ժամանակ նրա համար պարզված կլիներ դառն իրականությունը։ Բայց երևում էր, որ ճակատագիրը կամեցել էր ավելի խիստ պատժել նրան, որ նա երբեք չկարողանա տեսնել սիրած աղջկան...

Սառան և Լալան վանքից երկուսն էլ հիվանդ տարվեցան այն կացարանը, որ առաքինի բժշկապետը պատրաստել էր տվել նրանց համար։ Բարեսիրտ տանտիկինը, որի խնամատարությանը հանձնված էին երկու հիվանդները, մի առանձին գութ ունեցավ նրանց վրա, մանավանդ երբ իմացավ, որ դրանք մի հարուստ և բարեբախտ ընտանիքի զավակներ էին, և աղետալի պատահարները ձգել էին նրանց վերջին թշվառության մեջ։

Բարոյապես տանջված, ֆիզիկապես մաշված և բոլորովին ուժաթափ եղած աղջկա մեջ, հենց առաջին գիշերը հայտնվեցավ սաստիկ ջերմ։ Տանտիկինը իսկույն իմացում տվեց բժշկապետին, որը գալով, գտավ նրան վտանգավոր դրության մեջ։ «Հույս չկա»,— հայտնեց նա տանտիկնոջը, և ինքը գիշերի մեծ մասը մնաց հիվանդի մոտ, աշխատելով վերադարձնել սպառված կյանքը։ Կես գիշերից հետո նա բավական հանգիստ էր. այս պատճառով հեռացավ բժիշկը։ Նա մինչև անգամ խոսում էր, պատմում էր շատ բաներ իր մոտ նստող տանտիկնոջը։

Բայց առավոտյան, երբ բժշկապետը եկավ տեսնելու հիվանդին, նրան արդեն մեռած գտավ։ Սառան ոչինչ չէր հասկացել, թեև միևնույն սենյակում պառկած էր։ Իսկ երբ հյուսնի մուրճի ձայնը դրսից լսելի եղավ, երբ տեսավ դագաղը, նա բոլորը հասկացավ։ Խեղճ կինը մինչև անգամ լաց չեղավ։ Եվ լաց լինել կարող չէր նա։ Արտասուքի համար ևս առողջություն պետք է։ Կարծես, նա ուրախ լիներ, կարծես, նա հենց այդ էր ցանկանում, որ մեռնի Լալան, որ հանգստանա նա, որ ազատվի այդ աշխարհից, ուր նրա համար լավ օր չէր մնացել...

Երբ դագաղը դուրս էին տանում, նա խնդրեց, որ իրան թույլ տան թաղմանը ներկա գտնվել։ Եվ չնայելով բժշկապետի ընդդիմադրությանը, թե դրանով բոլորովին կկարացնե և կխանգարե իր առողջությունը, դարձյալ հնար չեղավ նրան ետ պա-

հելու։ Կարծես, այդ օտարոտի ցանկությունը կրկին վերադարձրել էր նրա սպառված ուժերը։ Նա իրան բավական զվարթ էր զգում և գտնվում էր կատարյալ ողջամտության մեջ։ Երբ դագաղը դրեցին գերեզմանի մեջ, նա ասաց. «Կցանկանայի քեզ հետ թաղվել, իմ նազելի Լալա...»։ Այդ միջոցին նրա աչքը ընկավ իր երկու զավակների վրա և ձայնը խեղդվեցավ...

Սառային գերեզմանատնից բոլորովին ուշաթափ տուն բերեցին։ Եվ նույն իսկ րոպեին, երբ բժիշկը զբաղված էր նրան ուշի բերելով, դռան մուրճը զարկեցին։ Ծառան դուռը բաց արեց, տեսավ, երկու անծանոթ երիտասարդներ և մի քահանա կանգնած էին այնտեղ։

— Ո՞ւմն եք ուզում,— հարցրեց ծառան։

— Մեզ ասացին, որ այս տանը կենում են երկու ալաշկերտցիներ,— հարցրեց Վարդանը,— մեկը կին, մյուսը աղջիկ։

— Այո՛, կենում են, բայց աղջիկը...

— Ի՞նչ եղավ։

— Մեռավ...

Վարդանը շանթահար ծառի նման խորտակվեցավ և ընկավ Մելիք-Մանսուրի ուսի վրա։

Ի

Մութ, խավարային գիշեր էր։ Շոգիներով լցված ամառային տաք օդը անախորժ ծանրությամբ նստում էր մարդու սրտի վրա։ Գիշերային լռության մեջ ոչ մի ձայն, ոչ մի շշունջ չէր լսվում։ Կարծես ամեն ինչ մեռած լիներ։ Միայն Գայանեի գերեզմանատան մի անկյունից լսվում էին խուլ հառաչանքներ։ Մի երիտասարդ, տարածված բոլորովին թարմ հողադամբարանի մոտ, դառն կերպով մրմնջում էր։ Արտասուքը հեղեղի նման թափվում էր նրա տխուր աչքերից և թրջում էր ցամաք հողը։ Երբեմն նա գրկում էր փոքրիկ հողադամբարանը և համբուրում էր նրան, երբեմն իր երեսը և աչքերը քսում էր նրա խոնավ մակերևույթին։ «Լալա՜... անբա՜խտ Լալա»... բառերը շատ անգամ հնչվում էին նրա շրթունքից, և կարծես, այդ բառերի հետ դուրս էին թռչում նրա սիրտը և հոգին։

Այդ երիտասարդը Վարդանն էր։ Երկար թափառումներից հետո, նա գտավ սիրած աղջկա գերեզմանը միայն։ Էլ ի՞նչ էր

մնում նրան։ Նյանքի ալեկոծությունների մեջ, անդադար մաքառելով դժվարին անհաջողությունների դեմ, նա ուներ մի վառ և պայծառ աստղ միայն, որի վրա հառած էր նրա աչքը, որը առաջնորդում էր նրան դեպի փրկության նավահանգիստը։ Իսկ այժմ այդ աստղը նույնպես հանգավ։ Էլ ի՞նչ էր մնում։ Մնում էր մի խորտակված և վիրավոր սիրտ, որի համար պակաս էր առողջարար բալասանը, որի մի կաթիլը բժշկում էր բոլոր վերքերը։ Կորուստը անփոխարինելի էր։ Վարդանը երբեք չէր սիրել։ Սառն և խստասիրտ երիտասարդը քնքուշ զգացմունքներ չուներ։ Բայց Լալայի սիրո առջև, փափուկ մոմի նման, հալվեցավ նրա բնավորության կոշտությունը։ Լալայի սերը կախարդեց նրան։ Բայց ո՞ւր էր այժմ մխիթարիչ հրեշտակը։ Այն հողադամբարանի տակ, որ գրկել էր ինքը, որ թրջում էր իր արտասուքներով։ Այն հողադամբարանի տակ թաղված էր և անբախտ երիտասարդի սիրտը։

Երկար այնպես տանջվում էր, մորմոքում էր և անմխիթար կսկիծների հետ մաքառում էր նա, մինչև մի տեսակ թմրություն, որ ոչ քուն էր և ոչ արթնություն, տիրեց նրա անդամներին։ Բորբոքված գլուխը ընկավ գերեզմանի վրա և աչքերը փակվեցան։

Նրա վառ երևակայության մեջ այժմ սկսեցին ամբոխել խառնափնթոր երազներ։ Ինչե՞ր ասես չէր տեսնում նա։ Երբեմն սարսափելի դժոխային տեսիլներ սոսկում և արհավիրք էին ազդում նրան։ Իսկ երբեմն գեղեցիկ մխիթարական երևույթներ հրապուրում էին նրան։ Կարծես դարերը մի քանի շրջան առաջ էին գնացել, և նա տեսնում էր Հայաստանը, ավերակ և անապատ դարձած Հայաստանը, այժմ բոլորովին կերպարանափոխված, բոլորովին վերանորոգված։ Այդ ի՞նչ հրաշալի փոփոխություն էր։ Մի՞թե կորած դրախտը կրկին վերադարձել էր այդ երկրի վրա։ Մի՞թե կրկին տիրում էին այն ոսկեղեն ժամանակները, երբ չարությունը և անիրավությունը տակավին չէին ապականել աստուծո անմեղ աշխարհը։ Բայց ո՜չ, Վարդանի տեսածը այն դրախտը չէր, որ հիմնեց Եհովան Հայաստանի չորս գետերի ակունքի մոտ, ուր մարդկային առաջին զույգը ապրում էր կատարյալ անմեղության և կատարյալ տգիտության մեջ։ Այդ այն դրախտը չէր, ուր մարդը չէր գործում, չէր աշխատում և չէր արդյունաբերում, այլ ապրում էր պտուղներով, կերակրվում էր

աստուծո ճոխ սեղանից, որ սփռել էր նրա առջև հրաշալի բնությունը։

Դա մի ուրիշ դրախտ էր, մի դրախտ, որ մարդն է ստեղծում իր համար իր աշխատություններով և իր արդար վաստակով։ Ուր անմեղության տեղ տիրում էր խելացի գիտակցությունը, իսկ անհոգ, պարզ նահապետական կյանքի տեղ՝ զարգացած քաղաքակրթությունը։

Այժմ, կարծես, կատարվել էր այն ճակատագրական խոսքերի իմաստը, որ ասաց արարիչը նախաստեղծ մարդուն. «Քո ճակատի քրտինքով պետք է վաստակես քո հացը»։ Այժմ մարդը ոչ միայն աշխատում էր, այլ մինչև անգամ հեշտացրել էր աշխատանքը և նրա համար շատ քրտինք չէր թափում։ Բայց աշխատում էր իր բարօրության համար. նրա վաստակը չէր հափշտակվում անգութ հարստահարիչի ձեռքով։

Ահա՛, Վարդանը տեսնում էր մի գյուղ։ Մի՞թե դա Ալաշկերտի Օ... գյուղը չէր։ Շրջակայքը նրան ծանոթ էին՝ նույն լեռները, նույն բլուրները, նույն գետը, նույն կանաչազարդ հովիտը — բոլորը նույնն էր։ Դարերի հոսանքը այստեղ ոչինչ չէր աղարտել, միայն կերպարանափոխել էր։ Բայց որքա՞ն փոխվել էր գյուղը։ Այլևս չէին տեսնվում այն ողորմելի գետնափոր խրճիթները, որոնք ավելի գազանների որջի էին նման, քան մարդկանց բնակարանների։ Այժմ տները քարաշեն էին, սպիտակ որպես ձյուն, և շրջապատված էին գեղեցիկ պարտեզներով։ Լայն և ուղիղ փողոցները հովանավորված էին մշտականաչ ծառերով, որոնց մոտով վազում էին բյուրեղի նման հստակ առվակներ։

Առավոտ էր։

Տներից խումբերով դուրս էին գալիս գյուղական մանուկները, առողջ, զվարթ և մաքուր հագնված։ Տղա և աղջիկ, խառն միմյանց հետ, գրքերը ուսերին շալակած, շտապով դիմում էին դպրոցը։ Վարդանը նայում էր իրանց վրա և հիանում էր։ Որքա՞ն լավ պահված էին այդ սիրուն երեխաները, որքա՞ն ուրախ էին նրանք։ Երևի, դպրոցը և վարժապետը չեն վախեցնում նրանց։ Մի՞թե դրանք այն կիսամերկ և հիվանդոտ երեխաներն էին, որոնց տեսել էր Վարդանը։

Վարդանը միայնակ կանգնած էր փողոցի մեջ, զարմացած

նայում էր իր շուրջը և չգիտեր դեպի ուր գնալ։ Նրա ականջին զարկեց մի անուշ ձայն, դա եկեղեցու զանգակի ձայնն էր։ Երևի, առավոտյան ժամը դեռ չէր վերջացել։ Սկսյալ այն օրից, որ նա թողեց վանքը և հեռացավ աբեղաների միաբանությունից, այդ առաջին անգամն էր, որ աստուծո տան հրավերքի ձայնը այնպես քաղցր կերպով հնչեց նրա ականջներին։ Քարացած սիրտը լցվեցավ մի սրբազան ջերմեռանդությամբ, նա դիմեց եկեղեցին, որի շեմքի վրա տասն տարուց ավելի ոտք չէր կոխել։

Նա զարմացավ։ Այդ ինչ պարզ, այդ ինչ անշուք եկեղեցի էր։ Ո՛չ բեմ, ո՛չ սեղան, ո՛չ զարդարած տաճար, ո՛չ ոսկեզօծ պատկերներ, ո՛չ արծաթյա խաչեր և ո՛չ թանկագին զգեստներ չկային այնտեղ։ Նա զուրկ էր հայկական եկեղեցու բոլոր շքեղություններից, մինչև անգամ դպիրներ, սարկավագներ և տիրացուներ չէին երևում։ Երկու պատկերներ միայն տեսավ այնտեղ. մեկը Հիսուս Քրիստոսի պատկերը, մյուսը սուրբ Գրիգոր Լուսավորչի պատկերը, երկուսն էլ հասարակ սև շրջանակի մեջ դրված։

Ժողովուրդը նստած երկայն նստարանների վրա այր և կին միասին, յուրաքանչյուրը ուներ ձեռքին մի փոքրիկ երգարան։ Քահանան կանգնած ամբիոնի վրա, սուրբ գիրքը առջև դրած, քարոզ էր կարդում։ Նա իր հագուստով չէր զանազանվում հասարակ ժողովրդից։ Նրա քարոզը այնքան պարզ, այնքան հասկանալի էր, որ բոլորը հասկանում էր Վարդանը։ Ինչպես մի վտակ, բխած կենդանի և մաքուր աղբյուրից, աստուծո խոսքը հոսում էր նրա բերանից։ Նա բացատրում էր սուրբ գրքի այն խոսքի իմաստը, թե «քո ճակատի քրտինքով պետք է վաստակես քո հացը»։ Վարդանը զարմանում էր քահանայի բացատրությունների վրա։ Այդ խոսքի իմաստը մինչև այնօր Վարդանին հասկացրել էին այն մտքով, որ դա մի անեծք էր, որով աստված դրոշմեց նախաստեղծ մարդու ճակատը, որ տարածվում էր նրա ամբողջ սերունդի վրա։ Իսկ այժմ հասկանում էր, որ դա մի խրատ էր, որ խլում է մարդուց ծուլությունը և պահում է նրան անվաստակելի, աշխատասեր ինքնագործունեության մեջ։

Քարոզը վերջացավ։ Բազմության միջից վեր կացավ մի հասարակ գյուղացի, և քարոզի մտքի համեմատ, հանպատրաստից կարդաց մի աղոթք։ Նա խնդրում էր աստծուց, որ շնորհե իրանց առողջություն, խելք և զորություն, որ կարողանան գործել, աշխատել և արդյունավորել նրա ստեղծած երկիրը, որ բովանդա-

կում էր իր մեջ անսահման բուրիքներ։— «Այդ ի՞նչ աղոթք է,— մտածում էր Վարդանը,— այդ ի՞նչ շահասեր մարդիկ են. դրանք հոգու համար ոչինչ չեն խնդրում. մի՞թե դրանք գերեզմանի մյուս կողմում ոչինչ սպասելիք չունեն և խնդրում են միայն այն, ինչ որ պահանջում է մարմինը, ինչ որ պահանջում է իրական կյանքը»։

Աղոթքը վերջացավ։ Բոլոր բազմությունը՝ այր և կին, ծեր և մանուկ, միաձայն սկսեցին երգել մի երգ։ Նրա բովանդակությունը առած էր Սաղմոսի հետևյալ տողերից, «շատերը ասում էին, թե ո՞վ ցույց կտա մեզ տերի բարությունը։ Մեզ վրա ծագեց քո երեսի լույսը և մեր սրտերին ուրախություն շնորհեցիր։ Ցորենի, գինիի և ձեթի պտուղների առատությունով լիացրիր մեզ»։— «Դարձյալ նույն նյութական նպատակը...— մտածում էր Վարդանը,— դարձյալ հոգեկան ոչինչ չկա... Մշակ մարդը երգում է երկրի առատությունները, որ մշակել էր իր ձեռքով, որ շնորհել էր նրան աստված։ Զարմանալի է, ինչպե՞ս այդ մարդիկը հարմարացրել են կրոնի վերացականությունը իրական կենցաղավարության պահանջների և պայմանների հետ»...

Բայց ի՞նչ գեղեցիկ երգ էր այդ, որին ներդաշնակում էին երգեհոնի անուշ հնչյունները, որքա՜ն քաղցր, որքա՜ն սքանչելի եղանակով թռչում էր նա հարյուրավոր մարդկանց բերանից։ Վարդանին այնպես էր թվում, թե մարդերի ձայնը, միացած անթիվ սերովբեների մեղեդիների հետ, վերամբարձնում էր դեպի հավիտենական աթոռը։ Նա իր կյանքում առաջին անգամն էր լսում մի այսպիսի սրբազան երաժշտություն։

Ժամերգությունը վերջացավ։ Ժողովուրդը սկսեց դուրս գալ եկեղեցուց։ Այժմ նույն ամբիոնի վրա, որտեղից քահանան քարոզ էր կարդում, կանգնեց վարժապետը և նույն նստարանների վրա, ուր ծնողները երգում էին, աղոթում էին, այժմ շարվեցան նրանց զավակները։ Աղջիկ և տղա, խառն միմյանց հետ սկսեցին լսել վարժապետի դասախոսությունը։— «Մի՞թե այդ դպրոց է եղել,— մտածում էր Վարդանը,— մի՞թե եկեղեցին միացրել են դպրոցի հետ։ Ա՜խ, այդ ի՞նչ խնայող մարդիկ են, որ չեն կամենում դպրոցի համար առանձին շենք կառուցանել։ Այստեղ ևս դարձյալ նյութականություն»։

Բայց վարժապետի դեմքը բավական ծանոթ էր երևում Վարդանին։ Մի՞թե դա տեղ-Մարուքը չէր։ Երեսի գծագրությունը, հասակը և մինչև անգամ ձայնը նրան շատ նման էին։ Իսկապես նա էր, թեև քահանա, բայց աշխարհականի հագուստով։ Վարդանը դժվարանում էր իր աչքերին հավատալ։ Մի՞թե դա այն մարդն էր, որ այնքան թշնամի էր դպրոցին, որ այնքան հոգսեր և ցավեր պատճառեց պարոն Սալմանին, իսկ այժմ ինքը կառավարում էր մի կանոնավոր դպրոց։ Մի՞թե դա նույն քահանան էր, որ եկեղեցու խորհուրդները փողով էր վաճառում և անդադար մտածում էր իր ապառիկների վրա։ Այդ երկբայությունները այն աստիճան պաշարեցին Վարդանին, որ նա չկարողացավ զսպել իր հետաքրքրությունը և մոտենալով, հարցրեց.

— Տեր հայր, դուք ի՞նչ արեցիք ձեր ապառիկների հետ։

Քահանան հիմարի տեղ դնելով անծանոթ երիտասարդին, խիստ սուր կերպով նայեց նրա երեսին և ոչինչ չպատասխանեց, միայն հասկացրուց, թե շուտով զանգակը կտան և իր դասը վերջացած կլինի։ Նրա դասը բնական գիտություններից էր, այդ նույնպես ոչ սակավ զարմացրուց Վարդանին։ Քահանան, աստվածաբան և միևնույն ժամանակ բնագետ,— դա իրավ որ զարմանալի էր։

Վարդանը չսպասեց մինչև դասի վերջանալը և դուրս եկավ եկեղեցուց, լավ ևս է ասել՝ դպրոցի բակը։ Այստեղ նա ոչ մի գերեզման չտեսավ, որպես սովորաբար լինում է հայոց եկեղեցիների բակերում։ Նա զարդարած էր հազվագյուտ ծառերով և ծաղիկներով։ Երկար նա կանգնած նայում էր ճեմելիքների գեղեցկությանը, մինչև գյուղացիներից մեկը տեսնելով, որ նա օտարական է, հրավիրեց իր տունը նախաճաշիկ անելու։

Նրա տունը այն կոկիկ տներից մեկն էր, որ իր փոքրիկ ծավալի մեջ բովանդակում է ընդարձակ բավականություններ։ Նա ամբողջապես կորած էր հովանավոր ծառերի մեջ։ Կային մի քանի սենյակներ, որ հարմարացրած էին կյանքի զանազան պահանջներին, բոլոր պարզ, մաքուր և իրանց պատշաճավոր կահասիներով զարդարված։ Տան տիրոջ մանկահասակ աղջիկը, շրթունքի միջից մի երգ մեղմիկ կերպով եղանակելով, ուրախ-ուրախ դիմավորեց հորը։ Կարծես տխրությունը, վիշտը, կյանքի դառնությունները երբեք չէին շոշափել այդ գեղեցիկ արարածի սիրտը։ Նա, հայ կնիկներին հատուկ ամոթխածությամբ, շվախեցավ, չթաքնվեցավ անծանոթ հյուրից, այլ շնորհալի կերպով խոսում էր Վարդանի հետ, ծիծաղում էր, կարծես վաղուց

բարեկամ լիներ։ Բայց որքա՜ն նման էր Լալային։ Այդ զարմանալի նմանությունը մի այնպիսի հոգեզմայլությամբ պաշարեց Վարդանին, որ ցանկանում էր գրկել նրան և ասել. «Վերջապես գտա քեզ»...

Նախաճաշիկը արդեն պատրաստ էր սեղանի վրա։ Տանտիկինը լցրեց ահագին գավաթներ սուրճով, թանձր սերի հետ, և դրեց հյուրի և իր ամուսնի առջև։ Իսկ մանկահասակ աղջիկը դրեց սեղանի վրա այն առավոտ ստացած լրագրի թերթը և ինքնաբավական ժպիտով ցույց տվեց մի հոդված։— Ա՜, քո հոդվածը արդեն դուրս է եկել, Լալա,— խոսեց հայրը, ակնոցները ուղղելով, թերթը մոտեցնելով աչքերին։

— «Լալա»,— գոչեց Վարդանը անզսպելի խռովության մեջ։

— «Այդ անունը,— պատասխանեց տանուտերը, —խիստ հաճախ է կրկնվում մեր տոհմի մեջ»։

Վարդանը փոքր-ինչ հանգստացավ, բայց դարձյալ չէր կարողանում հաշտվել այն մտքի հետ, թե նա Լալան չէր։ Եթե նա Լալան չէր, անտարակույս, նրա հարություն առած ուրվականը պետք է լիներ։ Իհարկե, հարությունից հետո մարդիկ փոխվում են, ուրիշ տեսակ կրթություն և ուրիշ տեսակ բնավորություն են ստանում, պահպանելով իրանց իսկական պատկերը։

Բացի գեղեցիկ օրիորդից Վարդանին գրավում էր այս տան խաղաղ և բախտավոր կեցությունը։ Նա սկզբում կարծում էր թե այդ մարդիկը գիշեր և ցերեկ հանգստություն չունին, աշխատում են և միշտ աշխատում են։ Իսկ այժմ տեսնում էր, որ դրանք էլ ունեն իրանց հանգստի և ուրախության ժամերը, դրանք էլ ունեն իրանց համեստ և լի բավականություններով ապրուստը։

— «Գյուղացու երջանկությունը,— ասաց տանուտերը,— չէ կայանում այնքան ծանր և անդուլ աշխատությունների մեջ, որքան գործի գիտենալու և նրան հեշտացնելու հնարների մեջ։ Բնության մեջ կան շատ ուժեր, որոնց պարգևել է աստված մեզ օգնելու համար, միայն պետք է ծանոթանալ նրանց հետ և գիտենալ թե ի՞նչ միջոցով կարելի է նրանցից օգուտ քաղել»։

— «Այդ իրավ է,— պատասխանեց Վարդանը,— բայց եթե քրդերը թողնեին գյուղացու վաստակը իր ձեռքում մնար, իմ կարծիքով, նա միշտ բախտավոր կլիներ»։

— «Ի՞նչ քրդեր,— հարցրեց տանուտերը զարմանալով»։

— «Այն քրդերը, որ ամեն օր ձեզ կողոպտում են»։

— «Հա՜, քրդերը...— պատասխանեց տան տերը, կարծես դժվարությամբ հիշելով վաղուց մոռացված մի ցեղի անուն։— Մեր երկաթի դարերի պատմության մեջ կարդացել եմ շատ բան քրդերի մասին, ճշմարիտ է, նրանք կողոպտում էին և մինչև անգամ կոտորում էին մեր պապերին։ Իսկ այժմ ո՞ւր են այդ բարբարոսները։ Նրանք սպառվեցան, այլևս չկան։ Մի այսպիսի ցեղ չէր կարող դիմանալ քաղաքակրթության լույսին և այս պատճառով լուծվեցավ, այլասերվեցավ։ Դեռ անցյալ դարու սկզբներում նրանք ընդունեցին մեր կրոնը, սկսեցին սովորել մեր դպրոցներում և հետզհետե խառնվելով մեզ հետ, անհետացան»։

Վարդանը, լսելով այդ խոսքերը, չէր հավատում իր ականջներին, նրան երազ էր թվում բոլորը, թեև իսկապես երազի մեջ էր լսում և երազի մեջ էր տեսնում։ Տան տերը շարունակեց.

— «Մեր տոհմագրության գրքի մեջ գտնում ենք շատ տողեր քրդերի մասին, որ կարծես, արյունով գրված լինեին։ Մեր նախապապը, որից սկսվեցավ մեր տոհմի հայտնի լինիլ, կոչվում էր Խաչո. նա հենց այս գյուղի տանուտերն էր. քրդերը նրա ամբողջ ընտանիքը կոտորեցին. ինքը երկու որդիների հետ մեռավ բանտի մեջ։ Նրա մեծ որդի Հայրապետից մնաց մի արու զավակ միայն»...

— «Որ ալաշկերտցոց գաղթականության ժամանակ իր մոր՝ Սառայի հետ տարվեցավ Վաղարշապատ»,— ընդհատեց Վարդանը։

— «Այո՜, այդ արու զավակից հառաջ եկավ մեր տոհմը»։

— «Եվ նրա անունը Հովակիմ էր. մի քույր ուներ, որ կոչվում էր Նազլու, վերջինս մեռավ իր մոր հետ, և որը մնացած Հովակիմին մի բժիշկ վեր առեց և մեծացրուց իր տան մեջ»։

— «Դրանք որտե՞ղ ես կարդացել»,— հարցրեց տան տերը, զարմանալով, որ իր տոհմի պատմությունը մանրամասն կերպով հայտնի է հյուրին։

— «Ես չեմ կարդացել, այլ իմ աչքովն եմ տեսել,— պատասխանեց Վարդանը։— Այդ բոլորը կատարվեցան այն ժամանակ, երբ քրդերը ոչնչացրին այդ գյուղը, ոչնչացրին և ամբողջ Ալաշկերտի գավառը»։

«— Իսկ այդ մոտ երկու հարյուր տարվա անցք է։ Իսկ դուք բավական երիտասարդ եք երևում, դուք Մաթուսաղայի տարիքը

չունե՞ք, որ կարողանայիք ձեր աչքով տեսնել»,— պատասխանեց տան տերը բարեսիրտ ժպիտով։

Վարդանը ոչինչ չգտավ պատասխանելու, նրան էլ այնպես էր թվում, որ այդ անցքերի վրայից դարեր էին սահել։

Սենյակի լուսամուտներից, ուր նստած էր Վարդանը, շրջապատված իր հյուրընկալի ուրախ ընտանիքով, երևում էր կանաչազարդ հովիտը, որ վերջանում էր գեղեցիկ լեռներով։ Լեռները պատած էին խիտ անտառներով, և հսկա ծառերը միախառնվելով երկնքի պարզ կապուտակության հետ, ստեղծում էին մի սքանչելի պատկեր։ Վաղորդյան արեգակը թափել էր այնտեղ իր ոսկեղեն ճառագայթները և նրա լույսով, արծաթե օձերի նման պտույտվելով և շողշողալով վազում էին զանազան գետեր և ճեղքելով անց էին կենում հովիտի հարթության միջից։ Վարդանը չէր կարողանում աչքերը հեռացնել այդ հրաշալի տեսարանից։ Վայրենի և անմշակ բնությունը մարդու աշխատասեր ձեռքի տակ այնպիսի գեղեցիկ կերպարանք էր ստացել, որպես կտավի կտորը պատկերահանի հրաշակերտ վրձինի տակ։

— «Դուք խոսում էիք քրդերի և թուրքերի տխուր ժամանակներից,— շարունակեց տան տերը մի առանձին ուրախությամբ,— բայց այն ժամանակներից հետո շատ բաներ փոխվեցան։ Տեսնում եք այդ սքանչելի լեռները. մի և կես դար առաջ դրանք բոլորովին մերկ էին, մի փոքրիկ թուփ անգամ չկար այդ սարերի վրա։ Այն ժամանակ բարբարոսների ձեռքը, որպես անգթաբար կոտորում էր մարդերին, այնպես էլ անխնա կոտորում էր ծառերին։ Բոլորը սպառված էր. ժողովուրդը վառելիքի համար գործ էր ածում աթարը, իսկ շինվածքի համար փայտ չկար. այդ պատճառով ստիպված էին բնակվել գետնափոր խորշերի մեջ։ Բայց երբ տիրեցին խաղաղության ժամանակները, այնուհետև ավերակ գյուղերը լցվեցան բնակիչների բազմությամբ, իսկ մեր լեռները ծածկվեցան անտառներով։ Այդ բոլորը տնկվել է գյուղացիների աշխատասեր ձեռքով։ Տեսնո՞ւմ եք այդ կանաչազարդ հովիտը, առաջ նա մի ցամաք և անջուր անապատ էր, մի փոքրիկ գետ միայն ուներ, որը բոլորովին ցամաքում էր ամառային տոթերից։ Իսկ այն օրից, երբ անտառները աճեցին, մեր հովիտը ստացավ ջրի առատություն։ Այժմ նա մեր գավառի պտղաբեր և ամենաարգավանդ երկրներից մեկն է։ Այո՛, շա՜տ բաներ փոխվեցան... Առաջ այստեղ ճանապարհներ

անգամ չկային, իսկ այժմ ամեն տեղ կտեսնեք հայելու նման հարթ ճանապարհներ, որ միացնում են մեր երկրի բոլոր քաղաքները, և այդ ճանապարհների վրա սլանում են կառքեր, որ տարվում են ոչ թե անասունների ուժով, այլ շոգու զորությամբ։ Մեր երկրի արդյունաբերությունները մենք վաճառահանում ենք հազարավոր մղոններ հեռու և փոխարենը ստանում ենք՝ ինչ որ մեզ պետք է»։

Վարդանը զարմացած լսում էր այդ բոլորը, բայց երբ նրա աչքը ընկավ գեղեցիկ Լալայի երեսին, հայտնի չէ թե ինչո՞ւ նրա խելքին եկավ հարցնել, թե որտե՞ղ է սովորել օրիորդը։

— «Մի շաբաթ հազիվ կլինի, որ ավարտեց Նոր-Վաղարշակերտի ճեմարանը. իսկ այժմ պատրաստվում է համալսարան մտնել բժշկություն սովորելու։ Առողջությունը թույլ է, ես կցանկանայի, որ մի քանի ամիս անցկացներ գյուղում, բայց նրան ոչնչով չես կարող համոզել»։

— «Իսկ քանի՞ որդի ունիք դուք»։

— «Մեր տոհմը միշտ բազմածին է եղել, մեր նախապապ տանուտեր Խաչոյի ընտանիքը բաղկանում էր ավելի քան հիսուն հոգուց, իսկ ես միայն հինգ զավակներ ունեմ։ Լալան միակ աղջիկ զավակս է, մնացած չորսը տղամարդիկ են»։

— «Ինչո՞վ են պարապվում»։

— «Մեկը անտառապահ է միենույն անտառների, որ տեսնում եք, մեկը պրոֆեսոր է Կարինի համալսարանում, երրորդը գնդապետ է Վանի զորաբաժնի մեջ, չորրորդը դեռ սովորում է Նոր-Թագրիվանդի գյուղատնտեսական ուսումնարանում»։

Վարդանին անծանոթ երևեցավ քաղաքի անունը և հարցրեց.

— «Այս կողմերում ես չեմ հիշում մի այս անունով քաղաք»։

— «Դա հին Բայազետն է, այժմ այս անունն է կրում։ Մեր քաղաքներից, գյուղերից և գավառներից շատերը փոխել են իրանց անունները, մի քանիսը իրանց վաղեմի պատմական անուններն են ստացել, իսկ մի քանիսը նոր անուններ են ստացել»։

Տան տերը կրկին ձեռքն առեց լրագրի թերթը և կարդում էր մի հոդված, որը, որպես երևում էր, սաստիկ անհանգստացնում էր նրան։ Վարդանը հետաքրքրությունից շարժված, հարցրեց.

— «Ի՞նչ նորություն կա»։

— «Առանձին ոչինչ... էգուց քաղաքում պիտի գումարվի երեսփոխանական ընդհանուր ժողով... մի բանի վիճելի հարցեր պետք է քննության ենթարկվեն... չգիտեմ ինչո՞վ կվերջանա... կուսակցությունները սաստիկ հուզված են երևում»...

— «Դո՞ւք ևս կլինեք այնտեղ»։

— «Չեմ կարող չլինել»։

Խոսակցությունից երևաց, որ Վարդանի հյուրընկալը, այդ հովտի գյուղացիներից ընտրված երեսփոխանն էր։

Նախաճաշիկը արդեն վերջացել էր. Վարդանը վեր կացավ, և շնորհակալություն հայտնելով, կամենում էր հեռանալ։

— «Եթե դուք կցանկանայիք տեսնել մեր գյուղում մի քանի հիմնարկություններ,— ասաց նրան տան տերը,— ես սիրով հանձն կառնեի առաջնորդել ձեզ»։

— «Շնորհակալ եմ, պարոն»,— պատասխանեց Վարդանը։

— «Եթե մյուս անգամ կպատահի ձեզ անցնել մեր գյուղից,— խոսեց տանտիկինը,— մեր դռները միշտ բաց կլինեն ձեր առջև»։

— «Շնորհակալ եմ, տիկին»,— ասաց Վարդանը գլուխ տալով։

— «Եվ մեր տունը չի ձանձրացնի ձեզ»,— ավելացրեց տանտիրոջ աղջիկը անկեղծ ժպիտով։

— «Շնորհակալ եմ, օրիորդ»,— ասաց Վարդանը, ավելի խոնարհ կերպով գլուխ տալով։

Վարդանը դուրս գալուց հետո, այժմ նոր սկսեց զգալ իր նեղված դրությունը գյուղական ընտանիքի մեջ։ Նա գտնում էր իրան որպես մի բոլորովին վայրենի, որը ավելի քաղաքակրթված հասարակության մեջ տանջվում է, թե ինչո՞ւ ինքը նստաշ և անկիրթ մնաց, թե ինչո՞ւ ինքը չէր կարող այնպես խոսել, այնպես դատել և այնպես պահել իրան, որպես մյուսները։ Այդ ի՞նչ հրաշք էր։ Տանուտեր Խաչոյի տոհմը, անցնելով դարերի բովի միջից, զտվել, մաքրվել և կերպարանափոխվել էր, ստեղծելով մի նոր և ազնիվ սերունդ։

Վարդանը և իր հյուրընկալը միասին գնում էին գյուղի փողոցով։ Նրանց մոտից անցնում էին մաքուր և պարզ կերպով հագնված շինական կնիկները. յուրաքանչյուրը ձեռքին հյուսելով մի բան և նրանց տղամարդիկը գործավորի հագուստով։ Ոչ մեկը անգործ չէր, ամեն մարդ իր զբաղմունքն ուներ։ Զարմանում

էր Վարդանը տեսնելով, թե որքա՜ն փոխվել էր կյանքը, թե որքա՜ն վայելուչ կերպարանք էր ստացել նա։ Առաջվա գռեհկական կոշտությունները այլևս չէին երևում, ամեն տեղ շնչում էր կրթության ոգին իր ջերմ, կենսագործող զորությամբ։ Մի բան, որ մնացել էր անփոփոխ, դա էր հայկական խոսքը — լեզուն։ Բայց որքա՜ն մշակվել, որքա՜ն կոկվել էր այդ լեզուն, և որքա՜ն գեղեցիկ դարձվածներով այժմ հնչում էր նա հայ մարդու բերանում։

Վարդանը իր հյուրընկալի հետ այժմ գտնվում էին գյուղից դրսում։ Դեպի ամեն կողմը, ուր և նայում էր Վարդանը, երևում էին հարուստ ագարակներ, գեղեցիկ այգիներ, լավ մշակված դաշտեր և ճոխ արոտամարգեր։

Նրանք անցան մի գործարանի մոտից, որտեղ տախտակներ էին սղոցում։ Այստեղ գործում էին գլխավորապես մեքենաներ և շոգին։ Սղոցարանը մատակարարում էր բոլոր գյուղերի և մերձակա քաղաքի համար տախտակներ զանազան ձևերով և զանազան մեծությամբ։

— «Այդ ո՞ւմն է պատկանում»,— հարցրեց Վարդանը։

— «Մեր գյուղում, ինչ գործարան որ տեսնելու լինեք, առանձին մարդու սեփականություն չէ,— պատասխանեց նրա հյուրընկալը,— գործարանները այստեղ պատկանում են գյուղական համայնքին, ամեն մի գյուղացի մասն ունի նրանց մեջ։ Գերանները ստացվում են մերձակա անտառներից, որոնք նույնպես գյուղացիների սեփականություն են»։

Նրանք անցան սղոցարանից։

— «Ահա այդ ահագին շինվածքը,— ցույց տվեց Վարդանին հյուրընկալը,— դա պանրագործության գործարան է. այստեղ պատրաստվում է մեր գավառի ամենաընտիր պանիրը. դա նույնպես պատկանում է գյուղական համայնքին։ Յուրաքանչյուր գյուղացի ներկայացնում է այստեղ իր անասուններից ստացած կաթը, և ընդհանուր արդյունքի բաժանման ժամանակ, նրա համեմատ ստանում է կամ պանիր, կամ արծաթ»։

Նրանք գտնվում էին այժմ դաշտում։ Հասունացած հունձքը արտերից քաղվում էր, բայց քաղվում էր ոչ թե գյուղացու մանգաղով կամ գերանդիով,— այստեղ նույնպես գործում էր մեքենան, որ մենակ հարյուրավոր մշակների գործ էր կատարում։

Ահա ի՞նչ էր նշանակում հեշտացնել աշխատությունը,— այժմ հասկանում էր Վարդանը։

Նրանք անցան մի ահագին շինության մոտից, դա աղորիք էր։ Այստեղ նույնպես հեշտացրած էր աշխատանքը և ջրի փոխարեն գործում էր շոգին։ Բազմաթիվ գյուղերի ցորենը այս հիմնարկության մեջ աղացվում էր, և մաքուր, ձյունի պես սպիտակ ալյուրը վաճառահանվում էր դեպի օտար երկրներ։ Դա նույնպես պատկանում էր գյուղական համայնքին։

Բայց մի բան, որ ավելի զարմացնում էր Վարդանին, այդ այն էր, որ բոլոր գյուղացի բանվորները որտեղ և հանդիպում էին նրան, աչքի էին ընկնում իրանց համարձակությամբ, անձնավստահությամբ և այրական անվեհերությամբ։ Կարծես դրանք սնվել և մեծացել էին կատարյալ ազատության մեջ, կարծես դրանք երբեք թուրքի ապտակը չէին կերել կամ քրդի նիզակը մի անգամ գոնե չէր վախեցրել նրանց։ Նա տեսնում էր որ այդ աշխատող բազմությունը ընդունակ է հարկը պահանջած ժամանակ, թողնել բահը և արորը, և նրանց փոխարեն զենք կրել, և նույնպես հմուտ, նույնպես հաջողակ կերպով գործ ածել։

— «Պատերազմի ժամանակ այդ մարդիկը զինվոր են դառնում,— ասաց Վարդանի հյուրընկալը,— աշխատանքը մեծ մասամբ դադարում է, և այս պատճառով պատերազմը միշտ կորստաբեր հետևանքներ է ունենում մեր երկրի համար, թեև նա ունենում է և իր առանձին օգուտները...»։

Անցնելով դաշտերից, նրանք դարձյալ մոտեցան գյուղին. Նրանց առջև դրած էր մի նոր հիմնարկություն։ Դա ավելի նման էր այն շենքերին, որ կառուցված են լինում օրինակելի ագարակների մեջ։

— «Այդ մեր գյուղատնտեսական դպրոցն է,— ասաց Վարդանի հյուրընկալը։— Այն, որ տեսաք առավոտյան, տարրական ուսումնարան էր»։

Այս ի՞նչ դպրոց էր, այսպիսի դպրոց Վարդանը երբեք չէր տեսել, թեև ինքն էլ մի ժամանակ վարժապետ էր եղել։ Նա բովանդակում էր իր մեջ գյուղային տնտեսության վերաբերյալ բոլոր պարագաները։ Նրա ահագին շինության առջև տարածված էր ընդարձակ ագարակ զանազան բաժանմունքներով, որ մշակվում էին աշակերտների և աշակերտուհիների ձեռքով։ Աշխարհի համարյա բոլոր բույսերի, տունկերի և ծաղիկների տեսակից կային

այնտեղ զանազան օրինակներ։ Այստեղ գիրքը և մեռած տառը ավելի չէին զբաղեցնում ուսանողներին։ Ամեն ինչ սովորում էին նրանք բնության հրաշալի գրքի մեջ։ Այստեղ որոշյալ ժամերում ուսանողները պարապվում էին մարմնամարզությամբ և զենք գործ ածելու վարժություններով։ «Ահա այսպիսի դպրոցը կպատրաստե լավ երկրագործ և լավ զինվոր»,— մտածում էր Վարդանը։

Վարդանը շնորհակալություն հայտնելով իր հյուրընկալին, բաժանվեցավ նրանից։ Այժմ ո՞ւր պետք էր գնալ, ինքն էլ չգիտեր։ Նա տեսավ հանրակառքի նման մի բան, որի երկու կողմերի վրա շարված էին մարդիկ։ Ինքն էլ նստեց, երբ իմացավ, որ տանում է դեպի երկաթուղու կայարանը։

Երկաթուղու կայարանում նա գտավ մեծ բազմություն, որ սպասում էին գնացքին։ Հանկարծ նրա ականջին դիպավ մի ծանոթ ձայն...

— «Վարդան»...

Վարդանը ետ նայեց, նրա առջև կանգնած էր պարոն Սալմանը։ Երկու վաղեմի բարեկամները գրկախառնվեցան։

— «Ահա այդպես, բարեկամ,— խոսեց պարոն Սալմանը չթողնելով Վարդանի աջը իր ձեռքից,— մենք դարձյալ տեսնվում ենք միմյանց հետ ուղիղ երկու հարյուր տարուց հետո... բավական երկար ժամանակ է... Դու դեռ նույնն ես մնացել, Վարդան, դու ամենևին չես փոխվել... Բայց այս երկու դարերի ընթացքում մեծ փոփոխություններ եղան մեր երկրում... Հիշում ես, Վարդան, մի անգամ քեզ ասում էի, թե Հայաստանը մարդկության տղայական հասակի օրորոցն է եղել, նրա անմեղության ժամանակների դրախտն է եղել — բայց մի օր կդառնա նրա այրական հասակի, նրա զարգացման ժամանակների դրախտը։ Այժմ բոլորը կատարվեցավ։ Այժմ հայ մարդու ապրուստը խիստ ապահով, ուրախ և խաղաղ է հայրենի հողի վրա։ Բայց եթե գիտենայիր, թե որքա՜ն աշխատեցինք մենք, մինչև նրան այս վիճակին կարողացանք հասցնել... շա՜տ աշխատեցինք... այս երկու հարյուր տարվա ընթացքում հազարավոր փորձանքների միջից անցանք... բազմաթիվ արյան և առատ քրտինքի գնով գնեցինք մեր հանգստությունը»...

— «Հիմա ո՞ւր ես գնում»,— հարցրեց Վարդանը։

— «Քաղաքը, այնտեղ երեսփոխանական ժողով պիտի գու-

մարվի, ես պատգամավոր եմ մեր գավառի կողմից։ Գնանք միասին, Վարդան, ես պիտի խոսեմ, մեր վիճաբանությունները գուցե կհետաքրքրեն քեզ»։

Հնչեց գնացքի վերջին շվվոցը։ Նրանք մտան վագոնի մեջ։ Գիշեր էր։ Առավոտյան լույսը չբացված, նրանք հասան քաղաքը։ Դեռ քնած էր գեղեցիկ, աղմկալի քաղաքը։ Փողոցներում երևում էին միայն բանվորներ, որոնք շտապում էին զանազան ֆաբրիկաներում աշխատելու։

— ««Նոյան Աղավնու» պանդոկը»,— հրամայեց պարոն Սալմանը կառապանին։

Կառքը սլանում էր ուղիղ և հարթ փողոցների միջով. երկու կողմից բարձրանում էին հոյակապ շինություններ զանազան գույներով։ Վարդանը կարծում էր, թե պալատների միջով է անցկենում։ Պարոն Սալմանը ցույց էր տալիս նրան նշանավոր տները.— «Ահա այդ համալսարանն է», «ահա այդ գիտությունների ակադեմիան է», «դա հին թագավորական պալատն է, որ այժմ ծառայում է որպես մուզեյում», «դա քաղաքի նշանավոր թատրոններից մեկն է», «դա մի հիվանդանոց է», «դրանք այն հերոսների արձաններն են, որ նշանավոր եղան վերջին հեղափոխության ժամանակ», «դա մի լրագրի խմբագրատուն է, ուր օրեկան 150,000 օրինակ է տպվում»— «դա»...

— «Զինվորանոց չկա՞»,— նրա խոսքը կտրեց Վարդանը։

— «Չկա, այստեղ ամեն քաղաքացի զինվոր է»։

— «Գեղեցի՜կ քաղաք... հրաշա՜լի քաղաք»...— բացականչեց Վարդանը խորին հափշտակության մեջ։

Կառքը կանգնեց «Նոյան Աղավնու» հյուրանոցի առջև։ Պարոն Սալմանը Վարդանի հետ մտան մի առանձին փոքրիկ սենյակ, որ կից էր հասարակաց դահլիճին։ Այստեղ Թոմաս էֆենդին Մելիք-Մանսուրի հետ սաստիկ վիճում էին։

— «Դա կատարյալ էշի մարտիրոսություն կլինի»,— ասում էր Թոմաս էֆենդին։

— «Իմ կարծիքով, դա ամենաուղիղ ճանապարհն է, որ կըհասցնե ցանկացած նպատակին»,— պատասխանեց Մելիք-Մանսուրը տաքացած կերպով։

— «Այդ ճանապարհը մեզ շատ հեռու կտանե և ցանկացած նպատակին կհասցնե գուցե էշի զատկին»,— ասում էր Թոմաս էֆենդին ծիծաղելով։

— «Ահա Սալմանը, լսենք նրա կարծիքը»,— ասացին նրանք, դադարեցնելով վիճաբանությունը։

Մեծ եղավ նրանց զարմանքը, երբ տեսան Վարդանին, որը, կարծես, գետնից դուրս եկավ։

— «Դու որտեղի՞ց լույս ընկար»,— հարցրեց Թոմաս էֆենդին իր հատուկ հեգնական ժպիտով։

— «Միևնույն երևույթը զարմացնում է և ինձ,— պատասխանեց Վարդանը նրա ձեռքը սեղմելով.— ես քո խորտակված դիակը գտա Ալաշկերտի լեռների ստորոտում և հետո թաղեցի քրդերի գերեզմանատան մեջ, իսկ ա՞յժմ»...

—«Այժմ ես կրկին հարություն առա,— պատասխանեց նա ծիծաղելով։— Մի՞թե դու չես հավատում հոգեփոխության վարդապետությանը։ Իմ թշվառ հոգին անցավ ամենաանմաքուր կենդանիների մարմնի միջից. մի քանի տասնյակ տարիներ գայլի մարմնի մեջ կեղեքում էի, հափշտակում էի, ապրում էի որսելով... մի քանի տասնյակ տարիներ շան մարմնի մեջ հաչում էի, քծնվում էի և պտույտ գալիս այն մարդիկների շուրջը, որոնք ինձ հաց էին տալիս... մի քանի տասնյակ տարիներ օձի մարմնի մեջ ոլորվում էի գետնի վրա և պատահած ժամանակ խայթում էի... մի քանի տասնյակ տարիներ էշի մարմնի մեջ զոռում էի, ականջներիցս այնքան քաշեցին, որ գլխումս խելք չմնաց... վերջապես իմ թշվառ հոգին մտավ առյուծի մարմնի մեջ, այստեղ բավական մաքրվեցավ և սրբվեցավ նա։ Այդ շրջանը կատարեց նա երկու հարյուր տարվա ընթացքում։ Եգիպտոսի մումիաները հազարավոր տարիներ մնում են պիրամիդների տակ, անհամբերությամբ սպասելով հոգիների վերադարձին, բայց իմ հոգին ավելի շուտ կատարեց իր շրջանը»։

— «Եվ ես բախտ ունեցա կրկին տեսնել կերպարանափոխված Թոմաս էֆենդուն»,— կտրեց Վարդանը նրա խոսքը։

— «Այո՜։ Ձեր տեսած առաջվա Թոմաս էֆենդին իր դարու հարազատ զավակն է, բայց ժամանակները փոխեցին նրան։ Այժմ նա ներկա սերնդի լավ ներկայացուցիչներից մեկն է։ Բայց ներկա սերունդը մե՜ծ հառաջադիմություն է գործել, սիրելի Վարդան։ Հիշում ե՞ս, Մելիք-Մանսուրը մի ժամանակ «լավ ասեղներ» էր կանչում, և թափառում էր Ալաշկերտի գյուղերում, բայց նա այժմ մի առանձին զորաբաժնի գեներալ է»։

Վարդանը դարձավ դեպի Մելիք-Մանսուրը և պատկառանքով սեղմեց նրա աչը։

— «Մենք ուշանում ենք, պարոններ, նիստը շուտով կսկըսվի»,— շտապեցնում էր պարոն Սալմանը։

— «Դա մեր կուսակցության ազատամիտների պարագլուխն է,— ասաց Թոմաս էֆենդին շշնջալով Վարդանի ականջին, և ցույց տալով պարոն Սալմանի վրա։— Մի երևելի ճառ է պատրաստել այսօրվա ժողովի համար։ Ա՜խ, որքան լավ է խոսում նա»...

— «Ինձ էլ տարեք, պարոններ, ես էլ ցանկանում եմ լսել»...— գոչեց Վարդանը ուրախությամբ։

— «Գնանք»...— լսելի եղավ նրա մոտ մի օտար ձայն։

Վարդանը աչքերը բաց արավ, զգաց, որ իր տեսածը բոլորը երազ էր։ Նրա շուրջը դեռ պատում էր գիշերային խավարը, և նա գտնվում էր անբախտ Լալայի հողադամբարանի մոտ։ Բայց այն ի՞նչ օտարոտի ձայն էր, որ զարթեցրուց նրան. այն ո՞վ էր, որ ասաց «գնանք»։

Հանկարծ չորս զորեղ ձեռքեր հափշտակեցին նրան և ամեն ինչ թաքնվեց գիշերային մթության մեջ...

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ԻՆՉ Է ԽԱՉԱԳՈՂԸ

Թողնել ընտանիքը անտեր, երկար ու ձիգ տարիներ թափառել աշխարհի մի ծայրից դեպի մյուսը, արծաթ որսալու համար չխնայել ամեն տեսակ անազնիվ միջոցներ,— այդ խաչագողի գործն է։

Խաչագողը ունի յուր արհեստին վերաբերյալ բոլոր հմտությունները։ Այլ և այլ երկրներում թափառելու համար նա գիտե զանազան ազգերի լեզուներ, ծանոթ է նրանց սովորություններին և ինչ ազգի մեջ որ մտնում է, խոսում է այնքան վարժ, որ դժվար է որոշել, թե նա այն ազգին չէ պատկանում։ Նա յուր ընկերների հետ խոսում է մի առանձին լեզվով, որը ոչ ոք հասկանալ կարող չէ, եթե խաչագողների հասարակությանը չէ պատկանում։ Դա մի խորհրդավոր, պայմանական լեզու է. դա ավազակների արգոն է։

Շատ անգամ խաչագողը չէ խոսում, բայց միտք է հայտնում։ Նրա աչքերի, հոնքերի, շրթունքի, երեսի, ձեռքերի, մի խոսքով, մարմնի զանազան մասերի այս և այն ձևով շարժմունքը հայտնում են ամբողջ նախադասություններ, որոնց նշանակությունը հասկանում է միայն խաչագողը։ Միմիկան նրանց դեմքի վրա սաստիկ զարգացած է։ Կապկի նման կարողանում են նրանք շարժեցնել երեսի այն մասերը, որոնք ուրիշների մոտ անշարժ են։ Ես տեսա մի խաչագող, որ ականջների նման շարժեցնում էր իր ականջները։ Մի այլը յուր քիթը զարմանալի կերպով ծռմռում էր այս և այն կողմ։ Խաչագողը խաչագողի ձեռքը բռնելով, առանց մի բառ արտասանելու, հայտնում է յուր միտքը։

Հարկը պահանջած ժամանակ խաչագողը միայն անորոշ ձայներ է արձակում կամ թռչունների ու գազանների բարբառով աղդարարություններ է կարդում։ Այդ նրանց գիշերային լեզուն է, մանավանդ այն ժամանակ, երբ մինը մյուսից հեռու է գտնվում։ Նրանց բոլոր նշանախոսությունները այն աստիճան ճշտությամբ պայմանավորված են իրանց մեջ, որ երբեք չեն վրիպում նպատակից։

Կերպարանափոխության մեջ խաչագողը սատանայական հնարագիտություն ունի։ Ծպտիլ, այլակերպվիլ այնպես, որ բոլորովին ուրիշ մարդ երևալ,— դրանք նրա համար այնպիսի խաղեր են, որոնց մեջ ոչ ոք կարող է նրա հետ մրցություն անել։ Խաչագողին չէ կարելի տեսնել յուր բուն պատկերի մեջ. այլ և այլ երկրներում, գործի և հանգամանքների այլ և այլ պայմանների համեմատ, նա միշտ նոր ձև և նոր կերպարանք է ընդունում։

Խաչագողը բովանդակում է յուր մեջ մարդկային ամբողջ հասարակության բնավորությունները։ Նա ընկերային կյանքի ամեն ելևէջների վրա զարմանալի ճարպկությամբ բարձրանում և իջնում է։ Նա հասարակության բոլոր ծալքերի մեջ մտնում և դուրս է գալիս։ Հարմարվելու անհամեմատ ընդունակություն ունի։ Ժողովրդի բարձր դասի հետ նա. հի հպարտ, փառասեր, թեթևամիտ, պերճախոս ազնվական է, ազնվականի բոլոր փայլով։ Ժողովրդի ստոր դասի հետ, նա մի բարի, միամիտ և անկիրթ ռամիկ է, բոլոր ռամկական պարզությունները։ Գիտնականի հետ նա մի գեղախոս հռետորի նման վիճում է, ամեն առարկայի վրա դատում է և հանրամարդկային բարձր ու վսեմ գաղափարներ է հայտնում։ Մոլլաների հետ նա խավարամիտ է, որպես գիշեր և մոլեռանդ, որպես հնդկական ֆագիր։ Խաչագողը մի օր լույս է, մյուս օրը խավար։ Մի օր բարի է, մի օր չար։

Խաչագողը մի զարշելի տիպ է։ Նա ավերված, փչացած, անբարոյականացած հասարակության հրեշավոր ծնունդն է։ Նա նեխած ջրի մրուրն է։

Երբեմն նա փողոցային սրիկա է. գիշերի մթության մեջ հանդիպող մենավոր անցորդը հազիվ կարող է ազատվել նրա ճանկերից։ Ցերեկով նա բարեպաշտ, երկյուղած քրիստոնյա է և պատահած աղքատին ողորմության ձեռք է մեկնում։ Մի

տեղ, ամենակեղտոտ գինետան ստորերկրյա նկուղների մեջ, կառապանների հետ նստած, արբեցողությամբ է անցկացնում։ Այդ ժամանակ նա մոլի ստահակ է։ Մի այլ տեղ, ամենափառավոր հյուրանոցում նա խիստ նուրբ ճաշակ ունի կերակուրների և ըմպելիքների ընտրության մեջ։ Այդ ժամանակ նա բարեկյաց քաղաքացի է։

Խաչագողը չափազանց առաձգական է և դյուրաթեք։ Նա դեպի ամեն կողմ ծռվում է։ Նա ամեն կաղապարի մեջ մտնում է և ամեն տեսակ ձևեր ընդունում է, բայց երբեք մի հատկանիշ ձև չէ պահպանում։ Նա կատարյալ քամելեոն է։ Նա այն առասպելական էակներից է, որ ամեն անգամին մի այլ տեսակ են երևում։

Խաչագողը գիտե կեղծել, գիտե խաբել, գիտե ձեռքից սպրդիլ և աներևույթ լինել։ Ոստիկանի ամենատես աչքերը չեն կարող նորա հետքերը հետազոտել։ Նա անհայտանում է որպես դև, և հայտնվում է որպես հրեշտակ։ Բայց երբ որ բախտը դավաճանում է նրան,— բանտը յուր պապենական օթևանն է։ Շղթաներից երկյուղ չէ կրում նա, իսկ դահճի առջև արհամարհանքով է խոնարհեցնում յուր պարանոցը։

Խաչագողը նայում է տիեզերքի վրա, որպես յուր հունձքի արտի վրա։ Նա գիտե կորզել մարդկային ընդհանուր աշխատանքից ինչ որ իրան պետք է։ Նա չէ ցանում, բայց հնձում է։ Նա չէ արդյունաբերում, բայց սպառում է։ Նա ապրում է ուրիշի վաստակով։ Իսկ այդ նպատակին հասնելու համար գործ է գնում յուր հնարագիտության ամենակարող հմտությունները։ Ուր չէ հաջողվում նրան խաբուսիկ միջոցներով որսալ,— այսպիսի գեպքերում պատրաստ է նրա արյունահեղ ձեռքը...

Խաչագողը ամեն բան ունի, բայց ոչինչ չունի։ Նա նմանում է այն գիշակեր մեծ գազանին, որ խորտակում է մի ամբողջ ցուլի մեջքը, լերդը ուտում է, արյունը խմում է, իսկ մնացածը թողնում և հեռանում է։ Այնուհետև օրերով մնում է սոված, երբ ուրիշ որս գտնել չէ կարողանում։ Խաչագողը մի օր կուշտ է, մյուս օր քաղցած։ Մի օր հարուստ է, մյուս օր աղքատ։

Ես նկատեցի խաչագողի մի քանի ընդհանուր գծերը միայն, իսկ մանրամասնությունները ընթերցողը կտեսնե նույն իսկ

«Խաչագողի հիշատակարանի» մեջ։ Այժմ դառնանք դեպի այն հարցը, թե ո՞ր երկրից հայտնվեցան խաչագողները։

Սալմաստա[1] մեջ եղած ժամանակս իմ գլխավոր զվարճություններից մեկն էր Սավրա գյուղը գնալը։ Այդ գյուղը նշանակություն է ստացել նրանով, որ այնտեղ են բնակվում այն հանրածանոթ մարդիկը, որ կոչվում են «խաչագողներ»։ Թողյալ այդ, Սավրան ուներ յուր մի քանի այլ գեղեցիկ կողմերը,— բնությունն այնտեղ հիանալի էր, կնիկները ավելի սիրուն էին, քան Սալմաստա մյուս գյուղերում, հագնվում էին մաքուր և շափազանց հրապուրիչ էին։ Մի քանիսը արդեն պարսից շահի կանանոցի զարդն էին դարձել և նրանց ազգականները մշտական թոշակ էին ստանում։ Սավրայի տները, հովանավորված սքանչելի պարտեզներով, պահվում էին ամենայն հստակությամբ։

Բայց ինձ ավելի գրավում էին խաչագողները։

Հշմարիտն ասած, շատ հետաքրքրական էր, այդ մոլաշրջիկների հյուրասեր սեղանի մոտ նստած, նրանց հետ գավաթներ դատարկել և լսել նրանց թափառական կյանքի երկար ու երկար պատմությունները, որոնք լի էին սարսափելի արկածներով։ Խաչագողը միշտ մի առանձին պարծանքով է պատմում յուր արարմունքը։ Նա յուր խաբեությունների, խարդախությունների և այլ չարագործությունների վրա նայում է որպես քաջագործության վրա։ Նա քաջություն է համարում անապնվությունը, նենգավորությունը, որովհետև նրանց միջոցով կարողացել է շատ անգամ ահագին գումարներ ձեռք ձգել, թե՛ խիստ հաճախ ենթարկել է յուր անձը սոսկալի վտանգների։

Սավրան խաչագողների որջն էր։

Սալմաստա մեջ թեև ամեն մի հայաբնակ գյուղում կարելի էր գտնել խաչագողներ, բայց չկա Սավրայի պես մեկը, ուր ամբողջ բնակիչները իրանց նվիրած լինեին մի այնպիսի կեղտոտ պարապմունքի։ Որտեղի՞ց էր մտել այդ արհեստը նրանց մեջ,— դժվար է բացատրել, միայն այնքան ընտելացել էին մի այնպիսի գործունեության, որ համարյա նրանց համար կենսական պահանջ էր դարձել։

[1] Սալմաստը Պարսկաստանի Ատրպատական կոչված նահանգի գավառներից մեկն է, գտնվում է Ուրմիո ծովակի արևմտյան ափերի վրա։

Մտնում ես Սավրա գյուղը։ Փողոցների մեջ խաղում է երեխաների բազմությունը։ Մտածում ես, թե ամբողջ աշխարհի երեխաներից մի-մի հատ այստեղ է բերված։ Նրանց վրա տեսնում ես ամեն երկրի, ամեն ազգերի հագուստները ու գլխարկները։ Այդ ի՞նչ հրաշք է։ Սկսյալ Չինաստանից, Հնդկաստանից, Աֆրիկա, Ամերիկա մինչև Եվրոպայի ամենախուլ անկյունները,— ամեն տեղի հագուստով երեխաներ ես տեսնում։ Տղամարդիկը նույնպես ման են գալիս բազմատեսակ հագուստներով։ Հետո հասկանում ես, որ այդ թափառականները օտար երկրներից վերադառնալու ժամանակ բերել են իրանց երեխաների համար նույն երկրների հագուստները։

Մտնում ես սավրեցու տունը։ Սենյակները զարդարած են ամեն երկրի ամեն տեսակ կարասիներով։ Պատերի վրա առանց ճաշակի, առանց դասավորության կպցրել են զանազան պատկերներ։ Տեսնում ես մի տեսարան Գարիբալդիի կռիվներից, նրա մոտ սգավոր աստվածամոր պատկերները, սրով խոցված սրտով, հետո «Թափառական հրեայի» պատկերը. հետո Հիսուս Քրիստոսը աղբյուրի մոտ խոսում է սամարացի կնոջ հետ, հետո մի տեսարան փարավոնների կյանքից։ Փարավոնը պատգարակի մեջ նստած է, մի խումբ ստրուկներ տանում են նրան ուսերի վրա. հետո մի քանի կիսամերկ գեղեցկուհիք լողանում են անտառում հոսվող վտակի մեջ, հետո Պիոս IX-ի պատկերը, և մյուսները այս կարգով։

Խիստ զգալի մի տեսարան է ներկայացնում, երբ աչք ես ածում Սավրայի ընտանեկան կյանքի վրա։ Տների մեծ մասում գտնում ես միայն հնացած, գործից ընկած, ծերունի խաչագողներ։ Այդ հմուտ, փորձված վարպետները հայրենական արհեստի մեջ զարգացնում են իրանց կանդիդատներին,— փոքրիկ, նորընծա խաչագողներին։ Բոլոր երիտասարդները պանդխտության մեջ են գտնվում. նրանց կնիկները մնացել են առանց ամուսինների։

Սավրեցի կինը համբերող է,— ողջախոհության պես համբերող է։ Նա սպասում է. երկար ու ձիգ տարիներ սպասում է։ Նա տանում է աղքատություն, միշտ հրապուրված այն քաղցր հուսով, թե մի օր յուր տղամարդը կվերադառնա գանձերով։ Նա ընդունում է յուր տղամարդին այն հպարտ պարծենկոտությամբ, որպես քուրդի կինը ընդունում է յուր հերոսին, երբ նա

վերադառնում է կովի դաշտից, յուր հետ բերելով անբավ ավար և կողոպուտներ։

Սավրեցի կնոջ մի այսպիսի վիճակը փոխել է նրա ոչ միայն բնավորությունը, այլև նրա հասարակական դրությունը։ Սավրեցի կինը ինքը տղամարդ է, երբ նրա ամուսինը տան չէ։ Նա Սալմաստա մյուս գյուղերի կնիկների նման փակված կյանք չէ վարում։ Նա ավելի աշխարհային մարդ է։ Նրա վրա է դրած բոլոր հոգսը, ընտանիքի բոլոր ծանրությունը, որովհետև տղամարդը տանը չէ։ Նա մինչև անգամ մասնակցում է իրանց գյուղային հասարակության բոլոր գործերի մեջ, որպես են՝ հարկերի բաշխումը, ջրի հերթով բաժանելը, վարը վարելը, ցանքը ցանելը,— մի խոսքով, լցուցանում է գյուղական տնտեսության բոլոր պահանջները։ Երևակայեցեք, մի այսպիսի կնոջ դրությունը, որը գերդաստանի մայր է, որը ապրում է Ասիայում, որի գործունեությունը ընտանեկան շրջանից դուրս կարող է հանդիպել հազար ու մեկ փորձությունների...

Սավրայի գերեզմանատունը մինչև անգամ զուրկ է տղամարդերից։ Նրանք մեծ մասամբ մեռնում են պանդխտության մեջ և թաղվում են օտար երկրների հողի տակ։ Սավրայի գերեզմանատան մեջ հանդիպում են անթիվ շիրիմներ, որոնց մեջ ամփոփված են ոչ թե այս և այն խաչագողի մարմինները, այլ նրանց գլխարկը կամ ճանապարհի ցուպը, կամ հողաթափները, վերջապես մի բան, որ հեռավոր երկրներից բերել էր մեռած խաչագողի ընկերը, որպես միակ հիշատակ նրա սիրելի ամուսնին։ Կինը տոհմային գերեզմանատան մեջ թաղել է տալիս յուր տղամարդի հիշատակի այն թանկագին նշանը, նրա անունով շիրիմ է կանգնեցնում։ Եվ ամեն տարի, երբ հանգուցյալների համար հոգեհանգիստ է կատարվում, անբախտ կինը օրհնել է տալիս այն գերեզմանը, խունկ է ծխում, և նրա մոտ նստած, արտասուք է թափում։ Ինձ ցույց տվեցին մի նշանավոր խաչագողի գերեզման, որի մեջ ամփոփված էր հանգուցյալի քթախոտի տուփը միայն, իսկ ինքը մեռել է Ճապոնիայում։

Բայց պատահում էին զարմանալի դեպքեր։

Շատ անգամ, դեռ առաջին մեղրամիսը չլրացած, տղամարդը թողնում էր յուր նորահարսին և հեռանում էր դեպի օտար աշխարհ։ Խեղճ կինը սպասում էր նրան։ Անցնում էին տարի-

ներ, տասն-քսան տարի, նա դեռ սպասում էր։ Վերջը լսում էր նրա մահվան բոթը, ստանում էր նրանից մի հիշատակ և թաղել էր տալիս տոհմային գերեզմանատան մեջ։ Բայց քիչ չէր պատահում, որ այսպիսի, արդեն մեռածների կարգը դասված պանդուխտը, մի քանի տասնյակ տարիներից հետո, հանկարծ հայտնվում էր, կարծես թե անդունդից դուրս էր գալիս նա, մաշված ալևորված, և բոլորովին հնացած։ Բայց նա թողել էր յուր ընտանիքը և յուր հայրենիքը, երբ տակավին առողջ ու թարմ էր հասակով։ Նա գտնում էր յուր ընտանիքը ցրիվ եկած, ամեն ինչ ոչնչացած... կինը ուրիշ մարդու գնացած և ուրիշ գերդաստանի մայր դարձած... յուր թողած տան հետքն անգամ չէր մնացել... միայն գերեզմանատան մի քարի վրա կարդում էր յուր անունը,— յուր մահվան արձանագրությունը...

Սավրա գյուղը ռուս-պարսկական 1826 թվի պատերազմից առաջ համարյա մի փոքրիկ քաղաք էր. նա ուներ մի քանի հազար տուն բնակիչներ։ Բայց երբ պատերազմից հետո ավելի քան 40 հազար հայեր Պարսկաստանից գաղթեցին դեպի Ռուսաստան, նրանց հետ և Սավրայի հայերի մեծ մասը թողեցին իրանց հայրենիքը։ Անցնելով Երասխ գետի մյուս կողմը, սավրեցիք բաժանվեցան և հիմնեցին չորս գյուղեր։— Հին-Նախիջևանի գավառում Թումբուլ և Յարըմջան գյուղերը, Դար-Ալադաղի գավառում՝ Փոռ գյուղը, իսկ Շարուրի մեջ՝ Դաշ-Արխ գյուղը։

Փոխելով իրանց հայրենիքը՝ Պարսկաստանը, և զետեղվելով Երևանա նահանգում, խաչագողների գաղթականությունը չփոխեց յուր հին արհեստը։ Կարճ ժամանակում նրանք տարածվեցան Ռուսաց կայսրության ամենահեռավոր գավառներում, սկսեցին գործ դնել իրանց խաբեությունները։ Ռուսներն այդ ժամանակ դեռ նոր էին տիրել Երևանյան նահանգը։ Կառավարությունը ուշադրություն դարձրեց յուր նոր հյուրերի՝ խաչագողների վրա։ Արգելվեցավ նրանց անցաթուղթ տալ[1] կամ բաց թողնել Անդրկովկասից դուրս դեպի կայսրության այլ կողմերը։ Իսկ այդ կարգադրությունը չէր արգելում խաչագողներին զանազան խաբուսիկ միջոցներով կեղծ անցաթղթեր ձեռք բերել և գնալ, ուր որ ցանկանում էին։ Նրանք հայտնվում

[1] Նույն արգելքը մնում է մինչև այսօր։

էին Ռուսաստանի ամենախուլ կողմերում, ըստ մեծի մասին հույն աբեղաների անունով, որպեսզի, ռուսների հետ կրոնակից ձևանալով, գրավեն նրանց համակրությունը։

Խաչագողները ոչ միայն իրանց վրա դարձրին կառավարության ուշադրությունը, այլ ռուսաց մամուլն անգամ մի ժամանակ զբաղվեցավ նրանցով։ Ն. Ֆ. Դուբրովինը, Անդրկովկասի հայտնի պատմագիրը, յուր էթնոգրաֆիկական նկարագրությունների մեջ հայերի վերաբերմամբ, խոսում է միևնույն ժամանակ խաչագողների մասին։ Պ. Պ. Մասլովսկին, Ե. Մելեշկոն և Զելինսկին իրանց գրվածքների մեջ նույնպես խոսում են խաչագողների մասին[1]։

Առհասարակ ռուս գրողների կարծիքը խաչագողների մասին այն է, թե դրանք իսկական հայեր չեն, այլ մի տեսակ հայ ցիգաններ են (միջին դարերի race maudite-ների նման). նրանք թեև խոսում են հայերեն, բայց ունեն իրանց առանձին լեզուն և սովորությունները. թե ըստ մեծի մասին վաճառում են ամբողջ աշխարհում քրիստոնեական սրբություններ, թափառում են Ռուսաստանում հույն կրոնավորների անունով, և պանդխտության մեջ միշտ խույս են տալիս իսկական հայերից, աշխատելով չհանդիպել նրանց, որպեսզի չճանաչվեն և այլն։

Թե խաչագողները հայ-ցիգաններ են և ոչ իսկական հայեր,— դա մի ենթադրություն է, որ դեռևս ապացուցված չէ, որը տակավին վիճաբանության ենթակա է։ Ես այդ կարծիքի դեմ ոչ ի նպաստ և ոչ հակառակ ասելիք չունեմ։ Միայն այսքանը ավելորդ չենք համարում նկատել, որ բոլորովին սխալ է, թե խաչագողները առանձին լեզու ունեն։ Նրանք ունեն, որպես վերևում հիշեցի, մի տեսակ շինծու, հնացած, պայմանական լեզու,— նրանք ունեն արգո։ Այդ է պատճառը, որ խաչագողների մի խումբի խոսակցությունը մյուս խումբին բոլորովին անհասկանալի է։ Եթե խաչագողը նույն լեզվով խոսե յուր կնոջ, յուր զավակների հետ, նրանք ևս ոչինչ չեն հասկանալ։ Եվ այդ լեզուն յուրաքանչյուր խումբի մեջ շուտ-շուտ փոխվում է, երբ նա փոքրիշատե հասկանալի է դառնում։

[1] Այդ տողերը գրելու ժամանակ ես ձեռքի տակ չունեի հիշյալ աշխատությունները, միայն օգուտ քաղեցի պ. Մ. Միանսարյանի «Բիբլիոգրաֆիայի» Ա հատորի 222, 228 և 229 երեսներից։

Ով որ փոքրիշատե ուսումնասիրել է, թե ինչ է նշանակում «ծտի լեզու»— «ճնճղկի լեզու»— «ագռավի լեզու»— կարող է գաղափար կազմել, թե նույնիսկ հայկական բառերի մեջ ավելորդ հնչյուններ մտցնելով (իհարկե կանոնավոր կերպով) կարելի է այնպիսի լեզու ստեղծել, որ մյուս հայը չէ կարող հասկանալ, եթե բառերի կազմության պայմանների հետ ծանոթ չէ։ Այդ տեսակ լեզվի գործածությունը մինչև այսօր սովորական է մեր գավառացի հայերից շատերի մոտ։

Ես չեմ հերքում, որ մենք ունեցել ենք հայ-բոշաներ և այժմ ունենք։ Բայց հայ-բոշաների և խաչագողների թե սովորությունների և թե կենցաղավարության պայմանների մեջ մեծ տարբերություն կա։ Հայ-բոշաները ասիական մյուս ցիգան (չինգանե) ցեղերի նման հաստատաբնակ չեն, թափառական կյանք են վարում, ընտանիքով, ամբողջ խմբերով գաղթում են մի տեղից մյուս տեղ, երկրագործությամբ չեն պարապում։ Հայ-բոշաների կնիկները պարապում են կախարդություններով, պար են գալիս, երգում են, իսկ տղամարդիկը կամ նվագածուներ են, կամ պարապում են մի քանի ողորմելի արհեստներով, որպիսին են՝ մաղ գործել, զամբյուղներ հյուսել և այլն։ Դրանք խարդախներ, խաբեբաներ չեն։ Դրանք աղքատ, բայց միևնույն ժամանակ սակավապետ մարդիկ են։ Հարստանալու բարձր ձգտումներ չունեն։ Դրանց տիպը կատարյալ բոշայական է և պահպանել են բոշաների կենցաղավարության ձևերը։ Որոնց ընդհակառակն, խաչագողը հաստատաբնակ է, նա յուր ընտանիքը յուր հետ ման չէ ածում, տղամարդիկ թափառում են, բայց կնիկները իրանց տեղից չեն շարժվում։ Նա յուր հայրենիքում գեղեցիկ տնտեսություն ունի. նրա տունը, պարտեզը, այգին, մշակության դաշտերը կարող են օրինակելի դառնալ ամենազարգացած երկրագործների համար։ Բայց երբ տանից դուրս է գալիս նա, այն ժամանակ միայն սկսում է աֆֆերաների մեջ մտնել։ Խաչագողը շատ անգամ ոչնչով սկսում է ահագին դրամական շրջաբերությունների մեջ դեր խաղալ։ Նա սակավով չէ բավականանում. նա սարսափելի անհագ ձգտում ունի մեծանալու, բարձրանալու և հարստանալու։ Իսկ այդ անսանձ բաղձանքը ձգում է նրան խաբեբայությունների և խարդախությունների մեջ։ Խաչագողը և կառավարչական աստիճանների վրա, անվաստակելի եռանդով, աշխատում է միշտ

դեպի վեր մագլցել։ Եղել են խաչագողներից այնպիսիները, որոնք անգլիացոց տիրապետությունից առաջ հնդկական թագավորների մոտ առաջին վեզիրի պաշտոն էին կատարում կամ ամբողջ նահանգների փոխարքաներ էին։ —Այդ բոլորը այն եզրակացության է հասցնում, որ խաչագողները եթե հայ բոշաներ չեն, իսկական հայեր ևս չեն։ Նրանք հայերի մի առանձին ցեղին են պատկանում։

Բայց ի՞նչ անուն է այդ—խաչագո՞ղ։— Ինչո՞վ ժառանգեցին նրանք այդ անունը։

Խաչագողները իրանց վարքուբարքով արժանացան մի քանի այլ անունների ևս, որպիսին են «պառավ խեղդող», «էշ ներկող», «սավրդեղցի» և այլն։ Ավելորդ չէր լինի այդ անունների համառոտ բացատրությունը հիշել։

«Խաչագող» ասում են նրանց այն պատճառով, որ շատ անգամ պատահել է, որ նրանցից մեկը իրան ձևացրել է որպես աբեղա և այս ու այն եկեղեցում կամ վանքում հոգևոր պաշտոն է ստացել։ Հետո աբեղան, տաճարի բոլոր խաչերն ու արծաթեղենները գողանալով, հանկարծ անհայտացել է։ «Պառավ խեղդող» կոչում են նրանց այն պատճառով, որ այդ մարդիկ շատ են սիրում մոտենալ հարուստ պառավներին, ծանոթանալ, բարեկամանալ նրանց հետ, իսկ երբ բոլորովին ընտանի են դառնում, մի օր խեղդում են պառավին, և բոլոր հարստությունը կողոպտելով, աներևութանում են։ «Էշ ներկող» կոչում են նրանց իրանց չափազանց ճարպկության համար գողության գործի մեջ։ Խաչագողը կարող է գողանալ մեկի, օրինակ մոխրագույն էշը, հետո ներկելով գույնը սևի փոխել, և յուր առաջվա տիրոջ վրա վաճառել։ Տերը երբեք չէ կարող ճանաչել, թե այդ անասունը մի ժամանակ իրան էր պատկանում։ «Սավրդեղցի» կոչում են նրանց իրանց բնիկ գյուղի՝ Սավրայի անունով, որը գտնվում է Պարսկաստանի Սալմաստ գավառում։

Պարսկաստանի հայերի 1827 թվի գաղթականներից հետո, թեև Սավրա գյուղի բնակիչների մեծ մասը, որպես ցույց տվի վերևում, տեղափոխվեցան դեպի Երևանյան նահանգը, բայց Սավրայի մեջ դարձյալ մնացին մի քանի հարյուր տուն խաչագողներ և մնում են մինչև այսօր։

Սալմաստում եղած ժամանակս ես հաճախ գնում էի խաչագողների գյուղը. իմ նպատակն էր ոչ միայն ուսումնասիրել

այդ բախտախնդիրների կյանքը, այլ ինձ առավել հետաքրքրում էր մի երևելի խաչագողի պատմությունը, որին կոչում էին Մուրադ։ Ինձ ցույց տվին նրա տունը, ես մտա այն գեղեցիկ սենյակը, որի մեջ մի ժամանակ ապրում էր այդ նշանավոր մարդը, որ թողել էր յուր արհեստակիցների հիշողության մեջ շատ և շատ զարմանալի պատմություններ։ Մուրադը վաղուց մեռած էր, ավելի ճիշտ կլիներ ասել՝ սպանված էր, առանց ժառանգ թողնելու։ Ես գտա նրա կնոջը միայն, յոթանասունամյա պառավ Նանային։ Դա մի կին էր խիստ բարի երեսով և խելացի աչքերով։ Նա շատ դժվարությամբ հանձն առեց պատմել ինձ մի քանի դեպքեր յուր ամուսնի կյանքից։ Բայց ինչ որ պատմեց, այն էլ բավական էր իմ հարցասիրությունը հագեցնելու համար։

Երբ ես փոքր-ինչ մտերմացա պառավի հետ, երբ նա հասկացավ իմ հարցասիրության նպատակը, ավելի համակիր եղավ դեպի ինձ։ Ես հարցրի՝ չէ՞ մնացել արդյոք հանգուցյալից որևիցե գրավոր բան։ Նա վեր կացավ, և մի հնադարյան պահարանից դուրս բերելով մի տետրակ, դողդոջուն ձեռքով տվեց ինձ։ Ավերակների մեջ թաքնված գանձ գտնողը այնքան ուրախ չէր լինի, որքան ուրախացա ես նույն րոպեում։ Այդ, հնությունից դեղնած, քրքրված տետրակը Մուրադի օրագիրն էր։ Նա գրված էր զանազան ժամանակ, զանազան գույնի մելաններով։ Մի քանի տեղերում պակասում էին ամբողջ երեսներ. մի քանի տեղերում ևս սկսված գլուխը մնացել էր առանց վերջացնելու։ Այսուամենայնիվ, տետրակը բովանդակում էր յուր մեջ խիստ հետաքրքիր տեղեկություններ թե հեղինակի և թե առհասարակ խաչագողների վերաբերությամբ։

Նրա թերությունները լրացրեց պառավը յուր պատմություններով։

Ես վաղուց դիտավորություն ունեի գրել մի բան խաչագողների կյանքից, և այդ բաղձանքը իրագործելու համար բավական էր ինձ օգուտ քաղել Մուրադի օրագրություններից։ Այդ օրագրությունը կոչվում էր «Խաչագողի հիշատակարան»։ Ես էլ այդ անունը տվեցի իմ վեպին։ Բարեկամներիցս ոմանք խորհուրդ էին տալիս ինձ չտպել այդ վեպը։ Բայց մինչև ե՞րբ պիտի ծածկենք մեր կեղտերը։ Դա նույնը կլիներ, ինչպես մի հիվանդ ամաչելով թաքցներ այն վերքերը, որոնք օրըստօրե

ավելի փտելով, նեխելով, վարակում են մարմնի ամբողջ կազմվածքը...

Պառավը, որի մասին հիշեցի վերևում, բանաստեղծական տիպ չէ, դա միևնույն Նանան է, որին կտեսնե ընթերցողը այս վեպի ընթացքում։ Նա մեռավ 1857 թվին, ապրելով որպես առաքինի կին և բարեպաշտ քրիստոնյա։ Իսկ Մուրադը, այդ վեպի հերոսը, նույնպես պատմական անձնավորություն է։ Նա վերջը Խաչագողների հասարակությունից հեռանալով, մտավ մի այլ խումբի մեջ, դարձավ անդամ մի այլ հասարակության, որի հետ կծանոթանա ընթերցողը, երբ կկարդա իմ «Կայծեր» կոչված աշխատությունը, որն այժմ մամուլի տակ է։

Վերջացնելով իմ նախաբանը, սկսում եմ «Խաչագողի հիշատակարան», պահպանելով նույն ձևը, և նույն դասավորությունը, որպես Մուրադը գրել էր յուր օրագրությունները։

Ա

ԹՈՒՅՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԱԹԻԼՆԵՐԸ

Ես հայր չեմ տեսել։ Մայրս ասում էր, որ ես դեռ չծնված, հայրս թողեց հայրենի երկիրը, դիմեց դեպի օտար աշխարհ և պանդխտության մեջ կորավ։

Երկար ժամանակ մենք նրա մասին տեղեկություն չունեինք. ոչ նամակ էինք ստանում և ոչ որևիցե լուր։ Մի անգամ հայտնվեցավ հորս պանդխտության ընկերը, բերեց նրա մատանին, և տալով մորս, հաղորդեց նրա մահվան բոթը։ Մեր դրացի կնիկները համոզում էին մորս, որ թաղել տա այդ մատանին գերեզմանատան մեջ և հորս համար մի հիշատակարան կանգնեցնե։ Բայց մայրս չկամեցավ, որովհետև նա ամենևին չէր հավատում, որ յուր ամուսինը մեռած է։ Նա վճռել էր սպասել երկար տարիներ, սպասել հորս վերադարձին։ Այդ պատճառով նա մերժեց հորս մահվան թոթը մեզ բերող մարդու ձեռքը, որ ցանկանում էր մորս հետ ամուսնանալ։

Մորս կոչում էին Նազանի. նա շատ գեղեցիկ կին էր և բարի, ո՞վ չէր սիրի նրան։ Բայց նա ասում էր, եթե յուր ամուսնի մահը ստույգ ևս լինի, դարձյալ ցանկություն չունի մարդու գնալու, որովհետև մտածում է յուր երեխաների համար։ Մենք, երեխաներս, չորս հոգի էինք,— մեկը ես, և երեք քույրեր։

Գյուղը, ուր բնակվում էինք մենք, կոչվում էր Սավրա։ Դա Սալմաստա ամենագեղեցիկ գյուղերից մինն էր։ Շրջապատված ընդարձակ այգիներով, նա, կարծես, թաքնված լիներ խիտ անտառների մեջ։ Նրա միջով հոսում էր Սոլա գետը և ոռոգում էր բոլոր այգիները։

Հորից զրկվելով, մենք մնացինք մեր քավոր Պետրոսի խնամակալության ներքո։

Քավոր Պետրոսը հայտնի էր մեր գյուղում որպես փորձված, խելացի և լավ մարդ։ Նա այնքան սիրելի էր ժողովրդին, որ բոլորը նրա անունով էին երդվում։ Դեռ ժամատան կոչնակի առաջին զարկի ձայնը չլսված, դեռ քահանաները չեկած, քավոր Պետրոսը եկեղեցու դռանը կանգնած էր լինում, սպասում էր, որ դռները բաց անեն, գնա յուր վաղորդյան աղոթքը կատարելու։ Նա այն տեսակ մարդկանցից էր, որ Սաղմոսը, Ավետարանը և Նարեկը ձեռքից բաց չեն թողնում, միշտ հոգու և աստուծո արքայության վրա են մտածում։ Մայրս շատ ուրախ էր, որ յուր զավակները մի այդպիսի բարեպաշտ մարդու հոգաբարձության էին հանձնված։

Բացի քավոր Պետրոսից մենք ուրիշ բարեկամ չունեինք։

Ես ունեի մի հորեղբայր միայն, որին կոչում էին Մինաս։ Նա մոտ հիսուն տարեկան մարդ էր։ Ես երբեք առանց սարսափելու չեմ կարող հիշել այդ մարդու միշտ ուրախ, միշտ անհոգ և վայրենի դեմքը։ Նա միանգամայն իրան տված էր զվարճության և ամբողջ օրերով տանը չէր գտնվում։ Մենք զարմանում էինք, թե որտեղի՞ց այնքան վատնում էր նա, որովհետև ոչ մի արհեստ կամ պարապմունք չուներ։ Նա երբեմն մի քանի ամիսներով, իսկ երբեմն մի քանի տարիներով անհետանում էր, չէր երևում, և հանկարծ հայտնվում էր ոսկիներով լի քսակով։ Ինչպե՞ս էր վաստակում, ի՞նչ հնարքով էր ձեռք բերում այդ ոսկիները,— ես հասկանալ չէի կարողանում, միայն տեսնում էի, որ նրա ոսկիների թվում կային ամեն պետության սիֆֆեներ։ Կնշանակե, նա շատ երկիրներ էր թափառել...

Բայց հայի առածն ասում է, որ «քամու՞ բերածն էլի քամին կտանի». այսպես էլ փայլուն ոսկիները նրա ձեռքում երկար չէին մնում. նա շուտով վատնում էր, դարձյալ մնում էր աղքատ, դարձյալ ապրում էր պարտքերով։ Պարտատերերը մեծ վստահություն ունեին իրա հաջողակության վրա, գիտեին, որ իրանց փողը չի կորչի, բավական էր միայն, որ Մինասը ոտքը դուրս դներ տանից, կրկին ձեռքն առներ պանդխտության գավազանը, այնուհետև փող վաստակելը նրա համար հեշտ էր...

Իմ հորեղբայրը շաբաթը մի քանի անգամ հյուրեր էր ունենում։ Ես երբեմն գնում էի նրանց տունը։ Հյուրերը ուտում էին, խմում էին, խոսում էին, ես միշտ մի առանձին հետաքրքրությամբ էի լսում նրանց խոսակցությունը։ Նրանք պատմում էին իրանց կյանքի զանազան արկածները այլևայլ երկրներում։ Սարսափելի և միանգամայն խիստ սոսկալի պատահարներով լի էին լինում այն արկածները, այսուամենայնիվ գրավում էին իմ սիրտը։ Ես այն ժամանակ անփորձ էի, և երեխայական պարզամտությամբ քաջություն էի համարում նրանց արարմունքը, այդ պատճառով մտածում էի. «Ա՜խ, ե՞րբ կլիներ, որ ես էլ մեծանայի, գնայի օտար աշխարհ և դրանց նման փող վաստակեի...»։

Այդ միտքը շատ անգամ տանջում էր իմ անմեղ սրտիկը։ Երբ իմ բաղձանքը հայտնում էի մորս, նրա աչքերը լցվում էին արտասուքով և միշտ պատասխանում էր ինձ միևնույն խոսքերով. «Աստված մի արասցե, որ դու նրանց նման փող աշխատես...»։

Ինչո՞ւ էր բարկանում մայրս, ինչո՞ւ էր անիծում ինձ, մի՞թե վատ էին նրանք, մի՞թե լա՞վ էր այնպես աղքատության մեջ ապրել, որպես ապրում էինք մենք։ Ես վրդովվում էի և սկսում էի մորս կոպտություններ ասել։

Նա միայն լաց էր լինում և ոչինչ չէր պատասխանում...

Մի անգամ միայն նա ասաց ինձ.

— Նրանք «խաչագողներ» են...

Այդ խոսքը, կարծես, այրեց նրա լեզուն։

Բայց ի՞նչ էր խաչագողը, այդ բառի նշանակության մասին ես ոչինչ գաղափար չունեի։ Մայրս նույնպես չբացատրեց։ Նա միայն խրատում էր, որ հեռու կենամ նրանցից, չհրապուրվեմ նրանց գործերով, որովհետև նրանք լավ մարդիկ չեն։

Մայրս մեր գյուղացի չէր. նա Վանի կողմերից էր, այդ պատճառով զզվում էր մեր գյուղացիներից։ Վերջին ժամանակներում նա արգելեց ինձ, որ այլևս հորեղբորս տունը չգնամ և նրա երեխաների հետ չխաղամ։ Եվ որպեսզի ինձ բոլորովին հեռացնե մեր գյուղից, մտածում էր այդ մասին մի հնար գտնել։ Մի անգամ ասաց ինձ.

— Մուրադ, որդի, քեզ պետք է մի արհեստ սովորել։

Նա սկսեց երկար ու երկար բացատրել ինձ, թե որքա՛ն

բախտավոր մարդ է, ազնիվ և աշխատասեր արհեստավորը, որքա՜ն ապահովված է նրա կյանքը, որքա՜ն ազատ և անկախ է նրա ապրուստը։

— Ի՞նչ արհեստ,— հարցրի ես։

Նա ասաց, որ քավոր Պետրոսի հետ խորհրդակցել է այդ մասին և վճռել են, որ ես սովորեմ դարբնություն։

— Դարբնությո՜ւն,— կոչեցի ես,— ես չեմ ուզում սևանալ երկաթի ու ածուխի փոշիների մեջ։

— Դու չես սևանա,— պատասխանեց մայրս յուր սովորական հանդարտությամբ։— Ածուխի սև փոշիներից դուրս է գալիս սպիտակ հաց և սպիտակ արծաթ, որ ընդհակառակն, միշտ սև են և միշտ սև կմնան այն մարդկանց երեսները, որոնք խարդախությամբ ուրիշի ոսկիները կողոպտում են, իսկ իրանք դարձյալ մնում են քաղցած...

Ես հասկացա. մորս ակնարկությունը խաչագողների մասին էր։

Ես մորս շատ էի սիրում. հորս անհայտանալուց հետո նա սնուցել էր ծնողական բոլոր քնքշությամբ։ Այդ պատճառով նրան հակառակել չկարողացա, միայն հարցրի.

— Ինչո՞ւ անպատճառ դարբնություն, մի՞թե ուրիշ արհեստները վատ են։

— Բոլորը լավ են, —պատասխանեց նա։— Աշխատանքը և աշխատությունը միշտ լավ է. վատ է միայն ծուլությունը, անգործությունը։

Հետո ավելացրեց, նրա համար է բարվոք համարում սովորել ինձ դարբնություն, որ այդ արհեստը ավելի հարմար էր իմ կազմվածքին։ Դարբնի համար հարկավոր էին ուժեղ մկնակներ, զորեղ բազուկներ և հաջողակ ձեռք,— այդ բոլորը ունեի ես։

— Քավոր Պետրոսն ևս այդ խորհրդի մեջ համաձայն է ինձ հետ,— ասաց մայրս։

Քավոր Պետրոսի հեղինակությունը այն աստիճան նշանակություն ուներ մեր ընտանիքի համար, որ մենք ամենքս խոնարհվում էինք նրա առջև և ընդունում էինք նրա տված խորհուրդները։

Մեր գավառի դարբնոցները գտնվում էին ըստ մեծի մասին Հին քաղաքում (Քոհնա Շրհարում), որը հեռու էր մեր գյուղից

մեկ մղոն հեռավորությամբ։ Երկու օր չանցած այդ խոսակցությունից, մայրս ինձ յուր հետ առնելով տարավ Հին քաղաքը, հանձնեց ուստա Գրիգորին։ Եվ որովհետև հեռավորության պատճառով դժվար էր ամեն օր գնալ այնտեղ և վերադառնալ մեր գյուղը, դրա համար ես ամբողջ շաբաթը գնում էի դարբնոցը աշխատելու, իսկ գիշերները կենում էի իմ մորաքրոջ տունը։ Կիրակի օրերը միայն գալիս էի մեր տունը, մորս և քույրերիս տեսնելու համար։

Թե՛ քավոր Պետրոսի և թե՛ մորս նախատեսությունը, իմ ընդունակության մասին դարբնության արհեստի մեջ, սխալ չէր։ Ես մի քանի ամիսների ընթացքում սովորեցի այնքան, ինչ որ ուրիշ աշակերտները սովորել էին տարիներով։ Մայրս չափուրիշ աշակերտները սովորել էին տարիներով։ Մայրս չափազանց ուրախ էր իմ հառաջադիմության համար. ոչ սակավ ուրախանում էր և քավոր Պետրոսը։ Նա մի օր ինձ տվեց մի բանալի, ասելով.

— Այդ բանալին փորձելու համար եմ տալիս քեզ, Մուրադ. եթե դու կշինես դրա նման մեկը, ես կհավատամ, որ դու քո արհեստի մեջ բավական առաջ ես գնացել։

Ես քննեցի բանալին, իսկույն հասկացա, որ դա մեր երկրի արհեստավորների գործ չէր, այլ Ֆրանգստանում կամ մի այլ տեղերում էր շինված, ուր արհեստը ավելի առաջ էր գնացել, քան թե Պարսկաստանում։

— Իսկ եթե ճիշտ դրա նման շինելու լինե՞մ,— հարցրի ես բանալին լավ զննելուց հետո։

— Քեզ համար կարել կտամ մի ձեռք բոլորովին նոր հագուստ,— ասաց քավոր Պետրոսը։— Շատ ժամանակ է, որ քեզ ոչինչ չեմ ընծայել։

Հետևյալ կիրակի օրը, երբ վերադարձա մեր գյուղը, արդեն պատրաստի բանալին տարա քավոր Պետրոսի մոտ։ Նա առեց ձեռքը, համեմատեց, այս կողմը շուռ տվեց, այն կողմը շուռ տվեց, հետո ասաց.

— Բոլորովին նման է...

Քավոր Պետրոսը կատարեց յուր խոստմունքը. ես հենց նույն օրը հագա նրա կարել տված նոր հագուստը։

— Մուրադ,— հարցրեց նա փոքր-ինչ մտածելուց հետո,— այդ բանալին շինելու ժամանակ դարբնոցում ո՞վ տեսավ.

երևի վարպետդ կամ մեծ աշակերտներից մեկը քեզ ցույց տվին շինելու կերպը։

— Ես ոչ ոքի ցույց չեմ տվել։

— Ինչո՞ւ։

— Մեր դարբնոցում արգելված է աշակերտներին իրանց համար բաներ շինել, այդ պատճառով ոչ ոքին ցույց չտվի, թաքուն շինեցի։

— Երբ որ այդպես է, ես էլ ոչ ոքին ցույց չեմ տա, դու էլ ոչ մեկին մի ասա։ Ես չեմ ուզում, որ քո վարպետը քեզ վրա բարկանա։

Ես այն աստիճան հրապուրված էի իմ նոր հագուստի ուրախությունով, որ ամենևին հասկանալ չկարողացա, թե ի՞նչ խորհուրդ ունեին քավոր Պետրոսի այդ նախազգուշությունները։ Դիցուք թե մեր դարբնոցում աշակերտներին արգելված էր իրանց համար իրեղեններ շինել, դիցուք թե իմ վարպետը հասկանար, թե ես մի բանալի եմ շինել, ի՞նչ պիտի աներ նա,— շատ-շատ ականջներիցս փոքր-ինչ ձիգ կտար, և դրանով կվերջանար պատիժը։

Բայց ես զարմացա, երբ քավոր Պետրոսը պատվիրեց, որ իմ մորն էլ չհայտնեմ, թե նրա համար մի բանալի եմ շինել։ Ինչո՞ւ չի պիտի հայտնեի, մայրս ավելի կուրախանար. դրա մեջ ի՞նչ ծածկելու մի բան կար։

Բայց ես քավոր Պետրոսին սուրբի նման պաշտում էի։ Երևի, մտածում էի, այնպես ավելի լավ կլինի. նա ինձանից թե՛ խելքով և թե՛ հասակով ավելի մեծ է, բաների կարգը ինձանից ավելի լավ է իմանում։

Անցան մի քանի ամիսներ, անցավ մի տարի։ Ես բոլորովին մոռացա բանալիի գոյության մասին։ Քավոր Պետրոսի ընծայած հագուստը մաշվեցավ, ես դարձյալ նոր հագուստներ ու ընծաներ ստացա նրանից։ Նա ինձ որդու պես սիրում էր, և ամեն անգամ, երբ տեսնում էր իմ շինած բաներից մի գեղեցիկ գործ, իմ հառաջադիմությունը առանց վարձատրության չէր թողնում։ Մայրս ուրախանում էր, երբ ես օրըստօրե գրավում էի մեր բարերարի համակրությունը և նրան սիրելի էի դառնում։

Ամբողջ չորս տարի ես աշխատում էի իբրև աշակերտ. վարպետս ինձ միայն հացի փող էր տալիս, բայց երբ տեսավ իմ աշխատանքն ու իմ շնորհքը, այն ժամանակ ռոճիկ նշանակեց։

Ռոճիկը ստանում էի յուրաքանչյուր ամսի սկզբում, ամեն անգամ երկու ոսկի։ Երբ առաջին անգամ ստացա երկու ոսկին, իսկույն շտապեցի մորս մոտ, տվեցի նրան իմ քրտինքի առաջին պտուղը։

Մայրս ուրախության արտասուքը աչքերում գրկեց ինձ և համբուրելով ասաց.

— Տեսնո՞ւմ ես, զավակս, որ երկաթի ու ածուխի փոշիներից փայլուն ոսկիներ դուրս կգան, տեսնո՞ւմ ես, թե որքան քաղցր է արդար աշխատության պտուղը։

Ես իսկույն հիշեցի, որ այդ միևնույն խոսքերը նա ասաց ինձ չորս տարի առաջ, երբ առաջին անգամ աշխատում էր համոզել ինձ, որ արհեստ սովորեմ։ Իսկ այժմ միայն հասկացա, որ ճշմարիտ էին նրա խոսքերը,— իրավ, որ քաղցր էր, շա՛տ քաղցր արդար աշխատանքի պտուղը։

Ես այնպես սիրով կպած էի իմ արհեստին, որ այլևս ուրիշ բանի վրա չէի մտածում։ Ես այնուհետև հորեղբորս տունը չէի գնում, և այնքան զզվում էի նրա ընտանիքից, որքան մայրս։ Մենք այժմ կարոտություն չունեինք հորեղբորս օգնությանը։ Վարպետս հետզհետե իմ վարձը ավելացնում էր, ես այնքան էի ստանում, որ բավական էր մորս և քույրերիս համեստ ապրուստի համար։

Վարպետս՝ զարմանալի ընդունակություն ուներ յուր աշակերտներին խրախուսելու, նրանց եռանդը բորբոքելու և նրանց միշտ թարմ աշխուժության մեջ պահելու համար։ Նա չափազանց լավ մարդ էր, ինձ որդու նման սիրում էր և միշտ բարի խրատներ էր տալիս։ Նա խոստանում էր, որ եթե մի տարի ևս կշարունակեմ գործել նրա արհեստանոցում, և բոլորովին կկատարելագործվեմ, այն ժամանակ կօգնե ինձ, միջոցներ կտա, որ ինձ համար սեփական արհեստանոց բաց անեմ։ Ես բոլորովին հավատում էի, որ նա կկատարե յուր խոստմունքը, այդ պատճառով ավելի եռանդով էի աշխատում։ Նա այնքան բարի և ճշմարիտ մարդ էր, որ երբեք չէր խաբի։ Ես արդեն մի քանի օրինակներ էի տեսել, թե որպես իր աշակերտներին բախտավորեցրել էր նա։

Բայց մի սարսափելի դեպք ոչնչացրեց իմ բոլոր գեղեցիկ ցնորքները...

Մի օր հանկարծ մտան մեր արհեստանոցը ոստիկանու-

թյան ֆերրաշները, վարպետիս կալանավորեցին, արհեստանոցը շրջապատեցին զինվորներով, սկսեցին խուզարկություններ անել։ Վարպետիս հետ կալանավորվեցին մեր աշակերտներից ու բանվորներից շատերը։ Ես փախա. ինձ բռնել չկարողացան։

Երեկո էր. արևը մայր էր մտել. գիշերային խավարը հետզհետե տարածվում էր երկրի վրա։

Ես առանց կանգ առնելու, վազում էի ինչպես մի սրընթաց եղջերու, բայց ինքս էլ չգիտեի, թե ո՞ւր էի գնում։ Երկյուղն ու սարսափը ինձ առաջ էին մղում։ Ես լավ գիտեի, թե ինչ բան է պարսկական ֆերրաշը, և ինչ սոսկալի հետևանք կարող է ունենալ մի քանի ժամ առաջ պատահած անցքը։

Երբ բոլորովին մթնեց, կանգնեցի, որ փոքր-ինչ հանգստանամ։ «Ո՞ւր գնամ»— այդ հարցը ծագեց իմ գլխում։ Մտածում էի, մտածում և ոչ մի ելք չէի գտնում։ Երբ մեր տուն գնայի, այնտեղ էլ կարող էին հայտնվել ֆերրաշները։ Հուսահատությունը խեղդում էր ինձ. ամբողջ մարմնովս դողում էի։

Մինչ այդ տագնապի մեջ էի, հանկարծ լսեցի իմ անունը. մեկը կոչում էր ինձ։ Զարհուրանքը բոլորովին տիրեց ինձ։ Նա մոտեցավ։

— Մուրադ,— ասաց նա,— ինչո՞ւ ես այդպես շփոթված, ի՞նչ է պատահել քեզ հետ։

Ես հանգստացա։ Ինձ հետ խոսողը իմ ծանոթներից մեկն էր։ Նա մի լավ պատանի էր, որին կոչում էին Ասլան։ Ես պատմեցի նրան մի քանի ժամ առաջ պատահած դժբախտությունը։ Նա փոքր-ինչ մտածեց, հետո ասաց.

— Եկ ինձ հետ, մենք չենք թողնի, որ դու ֆերրաշների ձեռքն ընկնես։

Այդ «մենք»-ից ես հասկացա, որ նա մենակ չէր, այլ ուրիշ ընկերներ ևս ուներ։

Նա տարավ ինձ յուր ընկերների մոտ. մեկի անունը Կարո էր, մյուսինը, Սագո։ Դրանք որբ պատանիներ էին, անտուն, անտեղ, անհայր և անմայր։ Ապրում էին երկնքի թռչունների նման, քնում էին այնտեղ, որտեղ մթնում էր օրը։ Երեքն էլ հասակակից էին ինձ հետ։ Ես առաջուց ծանոթ էի նրանց հետ և լավ ծանոթ։ Նրանք Հին քաղաքի դպրոցի աշակերտներից էին, սովորում էին մի քահանայի մոտ, որին կոչում էին տեր-

Թոդիկ։ Մի անգամ այդ երեքն էլ փախան նրա դպրոցից և բոլորովին անհայտացան։ Այդ օրից անցել էին մի քանի ամիսներ. այժմ առաջին անգամ կրկին հանդիպում էի վազեմի ծանոթներիս։

— Մուրադ,— ասաց ինձ նրանցից ավելի մեծը՝ Կարոն.— եթե մեզ մոտ մնալու լինես, դու ազատված կլինես վտանգից։

— Մուրադը մեզ հետ ընկեր կդառնա,— մեջ մտավ Սագոն։

— Ես էլ այդ նպատակով բերեցի նրան,— ավելացրեց Ասլանը։

Այդ ի՞նչ ընկերություն էր, ինչո՞վ կարող էի ես ընկեր դառնալ նրանց հետ,— այդ մասին ոչինչ չխոսեցին։ Բայց ես գիտեի, թե այդ մոլաշրջիկները ովքեր են կամ ինչ տեսակ տղերք են։ Նրանք դեռ տեր-Թոդիկի դպրոցում եղած ժամանակ, հայտնի էին իրենց ճարպկություններով և զանազան արկածներով։ Նրանց մասին մարդիկ լավ չէին խոսում, որովհետև նրանք փոքրիկ սրիկաներ էին...

Ես խոստացա նրանց մոտ մնալ, մինչև տեսնեինք, թե վարպետիս գործը ինչով կվերջանար։ Իմ նոր ընկերներս ուրախացան։

Ամառ էր։ Բաց երկնքի տակ ամեն տեղ կարելի էր օթևանել։ Ա՜խ, որքա՜ն լայն և ընդարձակ է աստուծո աշխարհը, որքա՜ն ախորժելի է երբ նրա մեջ ազատ ես և չար մարդիկ չեն նեղացնում քեզ...

Երբ հանգստացա, երբ բոլորովին ուշքի եկա, այն ժամանակ միայն հասկացա, որ մեր գյուղից շատ հեռու չեմ գտնվում։ Մեր գյուղը շրջապատված էր լայնատարած այգիներով և ձեռնատունկ անտառներով։ Այդ անտառներից մեկի միջումն էինք գտնվում։ Լուսնկա գիշեր էր։ Բայց ծառերի խտության մեջ չէր թափանցում լուսնի արծաթափայլ լույսը։ Իմ նոր ընկերները ծառերի ճյուղերից հյուսել էին այդ անտառում մի փոքրիկ տաղավար. նրա մեջ նստած էինք։ Նրանք ինձ հացի տվին, խմացրին, աշխատում էին ամեն կերպով մխիթարել ինձ։ Գիշերը քնեցի ես խիստ անուշ քնով։

Անցան մի քանի օրեր։ Ես գտնվում էի բոլորովին ապահով դրության մեջ և ամենևին երկյուղ չունեի, թե անտառների այն մոռացված խլության մեջ, ֆերրաշները կարող էին գտնել ինձ։ Բայց ինձ անհանգստացնում էր վարպետիս վիճակը. ես մտա-

ծում էի իմ մոր, իմ քույրերի մասին։ Ինձ հայտնի էին պարսից դատավորների անիրավությունները. ես գիտեի, երբ որևիցե հանցավոր փախչում է, ձեռք չէ ընկնում, այն ժամանակ նրա փոխարեն կալանավորում են նրա մերձավորներին, սկսում են չարչարել, մինչև հանցավորը հայտնվի։ Բայց ինչո՞վ էի հանցավոր ես, ի՞նչ էի արել, կամ ի՞նչ մեղ ուներ վարպետս։— Ինձ ոչինչ հայտնի չէր։

Ընկերներս հանգստացնում էին ինձ, խոստանում էին, թե ճիշտ տեղեկություններ կբերեն թե վարպետիս և թե մեր ընտանիքի դրության մասին, բայց դեռ որոշ ոչինչ չէին ասում։

Օրըստօրե ընկերներիս հետ ավելի մտերմանում էի և ավելի ընտելանում էի նրանց սովորություններին։ Այդ ուրախ, մշտազվարթ պատանիները այժմ այն չէին, որպես ես տեսել էի, որպես ես ճանաչում էի նրանց, երբ դեռ տեր-Թոդիկի դրպրոցում սովորում էին։ Այժմ բոլորովին փոխվել էին։ Այդ դրպրոցի աշակերտներից շատերի հետ ես ծանոթ էի, որովհետև դպրոցը գտնվում էր մեր արհեստանոցի մոտ։ Երբեմն ես գնում էի այնտեղ, որ տեսնեմ, թե ինչպես են սովորում աշակերտները։ Ես նրանց ուսման մասին դատել չէի կարող, բայց զարմանում էի, տեսնելով, որ համարյա բոլորը ապուշ, բթամտացած տղերք էին, կարծես նրանց մեջ շունչ և հոգի չկար։ Վարժապետի մշտական երկյուղը, շինել էր այդ ողորմելիներին կենդանի դիակներ։ Ես չէի տեսնում նրանց մոտ զվարթ երեսներ, ինձ թվում էր, թե արտասուքը միշտ հոսում էր նրանց աչքերից։ Երկյուղը միգուցե ընկերը մատներ իրան, շինել էր բոլորին կասկածոտ և կեղծավոր։ Մեծի և ճիպոտների ուժով աշակերտների գլուխներում միտք տարածելը շինել էր նրանցից մի տեսակ կապիկներ, որոնք չեն կարող որոշել իրանց խաղի ձևերը, մինչև խաղացնողը չէր շարժում ձեռքի գավազանը։

Բայց Կարոն, Ասլանը, Սագոն, թեև նույն դպրոցի աշակերտներն էին, բայց այժմ իրանց աշակերտակիցների նման չէին։ Դրանք կենդանի տղերք էին, համարձակ, միշտ ուրախ, միշտ անհոգ։ Անհոգ էին ինչպես երկնքի թռչունները և ապրում էին ճիշտ նրանց նման։ Դրանց մեջ կար սեր, անձնանվիրություն դեպի ընկերը և չափից դուրս անկեղծություն։ Ես շատ

շուտ ճանաչեցի նրանց, որովհետև այսպիսի մարդերին ճանաչելը հեշտ է և շուտ էլ կապվեցա նրանց հետ...

Մենք այժմ չորս հոգի էինք. մեզանից ամեն մեկը մի շնորհք ուներ. ես լավ ձայն ունեի, երգում էի, Ասլանը գիտեր ածել ջութակի վրա. Սագոն ածում էր թութակի վրա, իսկ Կարոն լավ ածել գիտեր դայիրա։ Գիշերները կազմում էինք մի ամբողջ երաժշտական խումբ։ Մեր սեղանը լի էր լինում ամենատեսակ ուտելիքներով, գինին խո այնքան էր, որքան կուզես՝ խմե։ Ես առաջին անգամ սովորեցա խմելը։ Պատահում էր, մեզ սեղանակից էին լինում սիրելի հյուրեր։ Ամառը գյուղացիների մեծ մասը մեր կողմերում անց են կացնում այգիներում, բոստաններում, մշակության դաշտերում, և գիշերներն այնտեղ են պառկում։ Շատ անգամ մեր նվագարանների ձայնը դուրս էր կոչում գյուղացի աղջիկներին այգիների խորքից. նրանք գաղտկուցում գյուղացի երիտասարդների հետ գալիս էին մեզ մոտ. քա՜ղցր էր նրանց անցկացնել ամառային գեղեցիկ գիշերները մանկահասակ սրիկաների հետ...

Այդ զվարճությունները այն աստիճան գրավել էին ինձ, որ ես համարյա թե մոռացա վարպետիս։ Ընկերներս թեև խոստացել էին նրա գործերի մասին ինձ տեղեկություն տալ, բայց, որպես հավատացնում էին, դեռ իրանք ևս ստույգ տեղեկություն չունեին։ Միայն ասում էին, որ երկյուղը դեռ չի անցել։

Ասացի, մենք ապրում էինք երկնքի թռչունների պես. թռչունները չեն վարում, չեն ցանում, նրանք վայելում են ուրիշի մշակության բերքը։ Այսպես էլ անում էինք մենք։ Գիշերային խավարի մեջ սատանան այնպես համարձակ չէր կարող լինել, որպես մենք։ Բոլոր այգիների լավ-լավ պտուղները մեզ էին պատկանում։ Շատ անգամ թաքուն մտնում էինք գյուղերը։ Ամառվա տոթերի պատճառով տանեցիք քնած էին լինում կտուրների վրա, բակերը և սենյակները թողնելով բոլորովին անմարդաբնակ։ Ներս էինք մտնում մի տուն, գողանում էինք հաց, պանիր, հավեր, ձվաներ և այլ ուտեստներ։ Երբեմն այսպիսի գողությունները անում էինք մեր բարեկամների կամ ազգականների տներից։ Բայց երբեք չէր պատահում, որ բացի ուտելիքներից, գողանայինք մի ուրիշ բան։ Մեր գյուղացիները գինու կարասները սովորաբար թաղում են այգիներում, գետնի տակ։ Մեզ հայտնի էին տեղերը, գիշերով գնում էինք, բաց էինք անում, վեր էինք առնում որքան մեզ պետք էր։ Մենք

խղճմտավոր և փոքրիկ գողեր էինք. մեզանից հասակով ամենամեծը քսան տարեկան հազիվ կլիներ։

Ես առաջ շատ երկչոտ էի. վախենում էի գևերից, սատանաներից և մինչև անգամ մաշկաթևիկներից։ Իսկ այժմ որտեղի՞ց էր այդ քաջասրտությունը, որ ես ոչ մեկ բանից էլ չէի վախենում։ Երևի, ազատ կյանքը մտցրեց իմ մեջ այդ երկաթի սիրտը։ Իմ ընկերները բոլորն էլ զենքեր ունեին. ես թեև չունեի, բայց մի տեղ գնալու ժամանակ նրանք իրանց զենքերից ավելորդը ինձ էին տալիս։

Զարմանալի ներգործություն է անում մարդու վրա վայրենի բնությունը։ Երբ գիշերը մութն է, երկինքը ամպած է, կայծակը երբեմն փայլատակում է, և որոտը որոտում է,— այդ բոլոր սարսափելի երևույթները այն աստիճան ախորժ են քո սրտին, այնքան ուռեցնում են քո կուրծքը, մինչև դու, ոգևորված մի քաղցր կատաղությամբ, ուզում ես խորտակել, ուզում ես զարհուրեցնել, որպես որոտը և կայծակը։

Բայց բոլորովին հակառակ ազդեցություն էր անում իմ վրա, երբ բնությունը խաղաղ էր, երբ երկինքը ուրախ էր, երբ լուսինը մեղմ ընթացքով սահում էր հստակ կամարի վրայով, երբ ամեն տեղ տիրում էր մի խուլ, խորհրդավոր լռություն։ Այսպիսի րոպեներում իմ սիրտը, կարծես թե ազնվանում էր, քնքշանում էր, ես փափագում էի սիրել... և իսկույն միտս էր գալիս գեղեցիկ Սառան։

Սառան մեր հարևանի աղջիկն էր. մենք միասին էինք մեծացել և մեր մանկական ամենաքաղցր րոպեները միասին էինք անցկացրել։ Այն օրից, որ փախստականի կյանք էի վարում, ամենևին չէի տեսել նրան։ Ա՜խ, ո՜րքան կտխրեր նա, ո՜րքան լաց կլիներ յուր կորած, մոլորված սիրելիի համար... Ես երևակայում էի Սառայի դրությունը. նա այնքան բարի, այնքան զգայուն աղջիկ էր, որ չէր կարող չցավել իմ վիճակի վրա։ Բայց ես այն աստիճան վայրենացել էի, իմ սիրտը այն աստիճան կոշտացել էր և իմ կամքի զորությունը այն աստիճան թուլացել էր, որ չէի կարողանում գնալ նրա մոտ, մխիթարելու նրան։ Ես մոռացել էի մինչև անգամ մորս, քույրերիս և հարգելի վարպետիս։ Իմ նոր ընկերները, կարծես, կախարդել էին ինձ, կարծես, մի աներևույթ զորությամբ կաշկանդվել էի նրանց հետ, և ամենևին բաժանվել չէի ցանկանում։

Մարդկային բնակությունը, մարդկային հասարակությունը ինձ խորթ էր թվում։ Ես սիրում էի ազատ դաշտերը, լեռները, անտառները և մթին ձորերի քարանձավները... Ես դարձել էի դիշերային բու, որ խավարի մեջ է որսում իր որսը...

Ոչ մի մարդկային արարած չէր անց կենում այն անտառի միջով, ուր թաքնվում էինք մենք։ Միայն երբեմն հայտնվում էր մի բարձրահասակ որսորդ, որը հրացանն ուսից քարշ գցած, մի զույգ շների հետ, որպես այն մթին անտառների ծերունի աստվածը, հանդարտ անց էր կենում, մտախոհությամբ յուր շուրջը նայելով։ Կարոն, Ասլանը և Սագոն բնավ չէին խորշում այդ տարբերության որսորդից։ Երբեմն նա մոտենում էր, նստում էր մեր տաղավարի առջև հանգստանալու համար։ Նա բաց էր անում յուր ահագին ճաղատ գլուխը, սրբում էր ճակատի քրտինքը, սկսում էր ծխել։ Նրա գագաթը պատած էր խորին սպիներով։ Երևում էր, այդ պատկառելի մարդը յուր կյանքը անց էր կացրել սոսկալի կռիվների մեջ։ Նրան ես ճանաչում էի. նա շատ անգամ գալիս էր վարպետիս արհեստանոցը, զանազան գործիքներ էր շինել տալիս։ Նրան կոչում էին Ավո։

Առաջին անգամ, երբ տեսավ ինձ, հարցրեց Կարոյից.

— Դա ո՞վ է։

— Խաչագողներից է,— պատասխանեց Կարոն ծիծաղելով։

— Խաչագողները շատ օգտավետ մարդիկ կլինեին,— ասաց նա մի առանձին խորհրդավոր ձայնով,— եթե իրանց խելքը, սրամտությունը և բոլոր զարմանալի ճարպկությունները, որ ունեն նրանք, գործ դնեին, փոխանակ խաբեությունների, ավելի լավ գործերի մեջ, մարդկային բարօրության համար։ Նրանք ամենակարող մարդիկն են. նրանք հրաշքներ կգործեին, եթե ազնիվ լինեին...

— Ես նրանց նման չեմ լինի,— պատասխանեցի կարմրելով։

— Տացե աստված, որ չլինես, որդի,— ասաց նա, ուղիղ նայելով իմ երեսին,— բայց հասկացի՞ր, որ դու ևս միևնույն ճանապարհի սկզբումն ես կանգնած, եթե փոքր-ինչ առաջ գնալու լինես, նրանց նման կլինես...

Ես ոչինչ չգտա պատասխանելու։ Միայն մտածում էի, ինչպե՞ս է պատահել, որ մի այսպիսի բարի մարդը, որը զզվում է խաչագողներից, ուզը ցանկանում է, որ նրանք ուղղվեին և

իրանց հմտությունները մարդկային օգտի համար գործ դնեին, մի այսպիսի մարդը բարեկամ է Կարոյի և նրա ընկերների հետ, ներում է նրանց զողությունները։ Գուցե, մտածում էի ես, այդ բարեկամությունը մանկահասակ սրիկաներին ուղղելու և նրանց ավելի հաստատ ու բարոյական ճանապարհի վրա կանգնեցնելու համար է։ Այդ ենթադրությունը սխալ չէր, որովհետև ես շատ անգամ լսում էի ծերունի որսորդի խրատները, որ կարդում էր մեզ, և այդ իմաստուն, խորախորհուրդ խրատները ես հիշում եմ մինչև այսօր։

Մինչ այդ խորհրդածությունների մեջ էի, հանկարծ մտաբերեցի վարպետիս. որսորդը նրա բարեկամը լինելով, կարող էր գիտենալ, թե ինչո՞վ վերջացավ նրա գործը։

Նա պատմեց սարսափելի բաներ։

Վարպետիս կալանավորելուց հետո, նրա ամբողջ արհեստանոցը գրավել էին և աճուրդով ծախել էին։ Այդ բավական չէր, նրան ենթարկել էին ահագին տուգանքի, և որովհետև վարպետս պատրաստի փող չուներ, փոխարենը վաճառվել էր նրա տունը, բոլոր կայքը և կալվածները։

— Այդ բոլորը դեռ տանելի է,— ավելացրեց ծերունի որսորդը ցավակցական ձայնով։— Դեռ սպասում է նրան ամենասարսափելին...

— Ի՞նչ բան,— հարցրի ես, ոչ սակավ սարսափելով։

— Երկու օրից հետո, հրապարակի վրա, դահիճը պիտի կտրե նրա աջ ձեռքի բազուկը...

Կարծես կայծակով հարվածեցին ինձ։

— Ինչո՞ւ համար, ինչո՞վ է հանցավոր,— գոչեցի ես խելագարի նման։

— Հանդարտվիր,— ասաց ծերունի որսորդը և շարունակեց, — թե ինչո՞վ է հանցավոր նա, հանցանքը հայտնի է, բայց թե որ աստիճանի ստույգ է այդ հանցանքը, դա մի գաղտնիք է, որ պատած է խորին մթությունների մեջ։ Ես համարում եմ վարպետ Գրիգորին շատ իստակ և արդար մի արհեստավոր։ Նա խաբեբա, ստախոս մարդ չէ։ Նա իրան թույլ չի տա մասնակից լինել անարդար գործի։ Բայց մի ապացույց, ոչ միայն նրան կասկածանքի ներքո է դնում, այլ հաստատում է նրա վրա դրած մեղադրանքը։

— Ի՞նչ ապացույց,— հարցրի ես անհամբերությամբ։

— Մի բանալի...

Ես սոսկացի։ Որսորդը չնկատեց իմ խռովությունը, շարունակեց.

— Ահա ինչումն է գործը. դու խո ճանաչում ես Հին քաղաքի հարուստ աղալարներին, դու խո գիտես, թե ի՞նչ տեսակ գազաններ են նրանք։ Քո վարպետի կալանավորվելու նախորդ գիշերը անհայտ շարագործները մտել էին այդ աղալարների ամրոցը, բաց էին արել մեծ երկաթե արկղը և նրա միջից գողացել էին շատ թանկագին իրեղեններ։ Ամրոցից այլևս ուրիշ բաներ չէին տարել։ Ավազակները մոռացությամբ թողել էին արկղի վրա այն բանալին, որով բաց էին արել նրա փականքը։ Քննելով այդ բանալին, ստուգվեցավ, որ շինված էր քո վարպետի արհեստանոցում։

— Ինչո՞վ ստուգվեցավ։

— Նրա վրա գրված էր արհեստանոցի փոքրիկ դրոշմը, որ կրում էր յուր մեջ մի մուրճ, հորիզոնաձև դրած, իսկ նրա ներքո երկու տառեր՝ Գ. և Մ... Այդ տառերը քո վարպետի անունի և ազգանունի սկզբնատառերն են, կարծեմ, քեզ պետք է ծանոթ լինի այդ դրոշմը։

— Ծանոթ է...— պատասխանեցի ես խեղդված ձայնով։

Ես մտաբերեցի այն բանալին, որը մի ժամանակ շինել էի քավոր Պետրոսի համար, և որի գոյության մասին բոլորովին մոռացել էի։ Որպես մի չար եղեռնագործ, ես զգացի այն բոլոր զարհուրանքը, թե իմ անգիտությամբ որպիսի սարսափելի դժբախտություն պատճառեցի իմ սիրելի վարպետին։ Իմ ձեռքն էր շինել այն բանալին. ես էի դրել նրա վրա արհեստանոցի փոքրիկ դրոշմը։ Իսկ այժմ իմ փոխարեն պիտի պատժվեր արդար և ազնիվ արհեստավորը։ Հրապարակի վրա դահիճը պիտի կտրեր նրա ձեռքը։ Ի՜մ, ի՜մ ձեռքը պիտի կտրեին, է՜ս էի արժան այդ պատժին, ինչո՞վ էր հանցավոր անմեղ մարդը...

Ես հիշեցի քավոր Պետրոսի խոսքերը, որոնցով աշխատում էր համոզել ինձ, որ ոչ ոքի չասեմ, թե նրա համար մի այսպիսի բանալի եմ շինել,— ես հիշեցի այն ընծան, որով նա խաբեց ինձ, ոտքից ցգլուխ նոր հագուստ կարել տալով ինձ համար... Ուրեմն, ես միջնորդ դարձա մի չարագործության, իսկ իմ փոխարեն պիտի պատժվեր այն ազնիվ մարդը, որը այնքան սիրում էր ինձ, որը այնքան ուրախանում էր իմ հա-

ռաջադիմությամբ, որը խոստանում էր ավելի և ավելի բախտավորացնել ինձ... Այդ դառը մտածությունները պաշարեցին ինձ, երբ բացվեցավ իմ առջև սարսափելի իրողությունը, և ես գոչեցի իմ խորվության մեջ.

— Ապա քավոր Պետրոսը... ապա քավոր Պետրոսին ի՞նչ պիտի անեն...

— Ո՞վ է քավոր Պետրոսը,— հարցրեց որսորդը զարմանալով։

— Մեր քավոր Պետրոսը...

— Հա, ճանաչում եմ... Նա ինչո՞վ է խառն այդ գործի մեջ։ Նա խաղաղ, հանդարտ շարունակում է յուր սովորության համեմատ ամեն առավոտ և երեկո եկեղեցի գնալ, աղոթել։ Եկեղեցուց դուրս գալուց հետո, փողոցներով անց կենալու ժամանակ, աջ ու ձախ ողջունում է մարդկանց, աշխատում է ճանճերին էլ չվշտացնել, որ յուր հոգին աստուծո դրախտներից չզրկվի...

Որսորդի խոսքերի մեջ կար խիստ դառը հեգնություն դեպի քավոր Պետրոսը, որոնք ավելի գրգռեցին իմ բարկությունը դեպի այն գարշելի մարդը, և ես պատրաստվում էի այն չարագուշակ բանալիի ամբողջ պատմությունը հայտնել որսորդին, և ցույց տալ, թե ինչով է քավոր Պետրոսը խառն աղալարների ամրոցի գողության գործի մեջ— բայց այդ րոպեում որսորդի ուշադրությունը գրավեց մի այլ արարած, նա թողեց ինձ և երեսը շուռ տվեց դեպի այն կողմը։

Նրա շունը, որ մինչև այն րոպեին, գլուխը առջևի թաթիկների վրա դրած, պառկել էր տիրոջ մոտ, հանկարծ վազ տվեց և մտավ մեզանից ոչ այնքան հեռու գտնված թփերի մեջ։ Վայրկենական խուզարկությունից հետո, գլուխը կրկին դուրս հանեց թփերի միջից, և մի առանձին հրավիրական հայացքով սկսեց նայել տիրոջ երեսին։

— Ի՞նչ կա, Ջեյրան,— հարցրեց տերը։

Ջեյրանը արձակեց մի քանի խուլ մռնչյուններ։

— Հասկացա,— ասաց որսորդը և վեր առեց յուր մոտ դրած հրացանը։

Մեզանից բավական տարածության վրա, մամռապատ քարաժայռի գլխին կանգնած էր մի վայրենի այծ, և զգույշ նայում էր յուր շուրջը։ Հեռվից երևում էր նա մի հավի չափ։

Ծերունի որսորդի սրատես աչքերը տեսան նրան, հրացանը որոտաց, այծը գլորվեցավ ցած։

— Տղերք, գնացեք վեր առեք, աստված ձեզ համար խորոված ածացու ուղարկեց։

Տղերքը վազեցին դեպի այն կողմը, իսկ ես քարացածի նման դեռ մնացել էի կանգնած, որպես մի կատաղի եղեռնագործ, որին հանկարծ տիրում է խղճահարության երկունքը։

Ծերունի որսորդը դարձավ դեպի ինձ, ասելով.

— Ընկեր, դու այստեղից դեռևս չպիտի հեռանաս. քեզ որոնում են, մնա այստեղ, մինչև անցնի վտանգը...

Նա այլևս չսպասեց իմ պատասխանին և մնաք բարյավ ասելով, հեռացավ։

Կարոն յուր ընկերների հետ վերադարձան, իրանց հետ բերելով այծը։

— Այն բոլորը, ինչ որ պատմեց որսորդը, մենք առաջուց դիտեինք,— ասաց Ասլանը։

— Դուք գիտեիք և թաքցնո՞ւմ էիք ինձանից,— գոչեցի ես վրդովված ձայնով։

— Մենք չէինք ուզում քեզ տխրեցնել։

Մինչև ընկերներս մորթեցին այծը, մինչև հոշոտեցին, մինչև կրակ վառեցին, գիշերից բավական անցավ։ Առատ խորոված մատակարարում էր նրանց սեղանին այն ճոխ ընթրիքներից մեկը, որի նմանը խիստ հազիվ անգամ նրանք վայելում էին անմարդաբնակ անտառում։ Գինին նույնպես առատ էր։ Զնայելով, որ ընկերներս ամեն կերպ աշխատում էին ուրախացնել ինձ, վանել իմ տխրությունը, բայց հնար չէր լինում։ Իմ սիրտը լցված էր անսահման դառնությամբ գլխումս պտտվում էին հազարավոր սատանաներ։ Ես ոչինչ ուտել չկարողացա, միայն խմում էի, աշխատում էի գոնե գինով թմրեցնել ինձ տանջող ցավերը։ Բայց նա էլ չէր օգնում։ Սալմաստա զորեղ գինին ինձ վրա ջրի ազդեցություն էր անում։

— Անհոգ կա՛ց, Մուրադ,— ասաց ինձ Կարոն,— մենք չենք թողնի, որ քո վարպետի ձեռքը կտրեն։

— Դո՞ւք,— հարցրեցի ես թերահավատությամբ,— դուք ի՞նչ կարող եք անել։

— Մենք շատ բան կարող ենք անել,— պատասխանեց Կարոն մի առանձին անձնավստահությամբ։

Ես չկամեցա ընկերներիս հպարտությունը վիրավորել և լուռ կացա։

— Հանաք չենք անում, Մուրադ,— շարունակեց Կարոն բավական լուրջ կերպով,— քո վարպետը առաջիկա գիշերում ազատված կլինի բանտից։ Մյուս առավոտը, երբ բանտի դռները բաց կանեն, որ տանեն նրան հրապարակի վրա ձեռքը կտրելու համար, կգտնեն նրան անհայտացած։

— Դա անկարելի բան է։

— Շատ հնարավոր բան է,— պատասխանեց Կարոն։— Ամեն ինչ կարգադրված է, ինքը ծերունի որսորդը կառաջնորդե մեզ. մենք ունենք ուրիշ ընկերներ ևս...

Վերջին բառերը, կարծես, սխալմամբ նա բաց թողեց բերանից, և շուտով խոսքը փոխեց։

— Դու էլ, իհարկե, մեզ հետ կլինես։

— Վարպետիս ազատության համար ես դժոխքն էլ կմտնեմ։

Ընթրիքից հետո ընկերները շուտով պառկեցան, քնեցին, երևի, առաջիկա գիշերվա արշավանքի համար ավելի կազդուրվելու մտքով։ Բայց ես քնել չկարողացա։ Ջով գիշեր էր. մեղմիկ քամին հագիվ օրորում էր քնած տերևները և անտառի լռությունը կենդանանում էր ծառերի խորհրդավոր սոսափյունով։

Ես միայնակ նստած էի տաղավարի մոտ, ականջ էի դնում։ Խառն մտածություններ անհանգստացնում էին ինձ։ Կարոյի խոսքերը անհավատալի էին թվում։ Ես ավելի հավանական էի գտնում, որ ոգևորված գինու ազդեցությամբ նա միայն կամեցավ առժամանակ հանգստացնել ինձ։ Եթե մի այսպիսի դիտավորություն լիներ, ծերունի որսորդը անպատճառ կասեր ինձ։ Բայց նա ոչինչ չհայտնեց և հեռացավ։

«Երկու օրից հետո հրապարակի վրա, դահիճը պիտի կտրեր նրա աջ ձեռքի բազուկը...», հիշեցի ես ծերունի որսորդի խոսքերը։— Անմեղ մարդը պիտի պատժվեր ինձ նման մի հիմար համբակի և մի նենգավոր չարագործի պատճառով... Ո՛չ, ո՛չ, մտածում էի ես, այդ անկարելի բան է... կգնամ քավոր Պետրոսի մոտ, հենց այս գիշեր կգնամ... Կասեմ նրան, դու ինձ խաբեցիր, այժմ քո չարագործության պատճառով պատժվում է մի արդար մարդ... կամ պիտի գնաս դատավորի մոտ և հայտնես, թե դու ես մեղավորը, որ ազատես նրան դատապարտությունից... կամ ես ինքս կգնամ և ամեն ինչ կհայտնեմ, ուր որ հարկն է...

Այդ մտածությունները, կարծես թե ինձ ուժ տվին, ես վեր կացա։ Իմ խռովության մեջ ես մինչև անգամ մոռացա այն խոսքերը, որ ընթրիքի ժամանակ Կարոն ասաց ինձ,— մոռացա և իմ խոստմունքը, թե նրանց հետ դժոխքն էլ կմտնեմ սիրելի վարպետիս ազատելու համար։

Տաղավարի մոտ դեռ վառվում էր կրակը և աղոտ լույսը տարածում էր քնած ընկերներիս վրա։ Մի անբացատրելի նախազգեցությամբ, կարծես, զգում էի, թե այլևս չպիտի տեսնեմ այդ կյանքով լի, եռանդոտ և անկեղծ բարեկամներիս։ Նրանք քնած էին տաղավարի մեջ։ Ես մոտեցա, խոնարհվեցա, և արտասուքը աչքերումս համբուրեցի երեքի երեսները, ապա դուրս եկա տաղավարից։ Եվ վերջին անգամ հայացք ձգելով այն անտառային մենավոր խրճիթի վրա, որ կապված էր իմ պատանեկության սրտի հետ անմոռանալի հիշատակներով,— «մնաք բարյավ, սիրելի ընկերներ», ասեցի և հեռացա...

Բ

ԿՐԿԻՆ ՄՈԼՈՐՈՒԹՅՈՒՆ

Դուրս գալով անտառից, սկսեցի դիմել մեր գյուղը։ Անդադար նայում էի դեպի «աղոթարանը», որ տեսնեմ, արդյոք չէ՞ ծագում օրը։ Դեռ բավական գիշեր կար։ Խավարը ինձ պետք էր. մթության մեջ ես շատ բան ունեի կատարելու...

Մտա մեր գյուղը։ Նա նիրհում էր խորին քնի մեջ. միայն երբեմն մի որևիցե անհամբեր շան անխորհուրդ աղաղակը ընդհատում էր գիշերային լռությունը։ Իմ սիրտը բաբախում էր և՛ուրախությունից, և՛ տրտմությունից։ Ուրախ էի, որ պիտի տեսնեմ մորս, քույրերիս և վերջապես Սառային։ Տրտում էի, երբ հիշում էի վարպետիս ցավալի դրությունը։

Ես վճռել էի մի սարսափելի դիտավորություն. նախ գնալ քավոր Պետրոսի մոտ, առաջարկել նրան, որ դիմե դատավորին և հայտնե, թե ինքն է կատարված չարագործության հեղինակը և ազատե անմեղ վարպետիս կյանքը։ Իսկ եթե քավոր

Պետրոսը այնքան ազնվություն չի ունենա, որ հանձն առնի իմ առաջարկությունը,— ես երդվել էի իմ սուրը ցցել նրա նենգավոր սրտի մեջ, և նրա դիակի վրայից անցնելով, ինքս անձամբ գնալ այն հրապարակի վրա, ուր պիտի կատարվեր վարպետիս դատապարտության վճիռը, և իմ ձեռքը մեկնել դահիճին, ասելով. «Կտրեցեք այդ բազուկը, այդ ձեռքով է շինված այն բանալին...»։

Այդ մտածություններով բորբոքված, ես արդեն գտնվում էի քավոր Պետրոսի դռան հանդեպ։ Սկսեցի դռան մուրճը զարկել։ Հայտնվեցավ ծառան, հայտնեց, որ աղան տանը չէ։

— Ինչպե՞ս տանը չէ, հիմար,— գոչեցի ես, և չհավատալով նրա խոսքերին, ներս մտա։

— Ասում եմ տանը չէ, էլի՛,— պատասխանեց նա մրթմրթալով,— գնա աչքովդ տես, թե կգտնես, այն ժամանակ ասա՛ ինձ հիմար։

— Իսկ քավորկի՞նը։

— Քավորկինը քնած է։

Բայց մեր ձայնից քավորկինը արդեն զարթնել էր, նա կիսահագնված, ճրագը ձեռին դուրս եկավ բակը, ուր ես վիճում էի ծառայի հետ։

— Ա՜խ, Մուրադ, զավակս, դո՞ւ ես,— ասաց նա դառն հառաչանքով և մոտեցավ, գրկեց ինձ։

Ես ապշած մնացի։

— Փա՜ռք քեզ աստված, փա՜ռք քեզ,— ասում էր նա արտասուքը աչքերում,— ես քեզ բոլորովին կորած էի համարում... դարձյալ փա՜ռք լինի մեր տեր Հիսուս Քրիստոսին, որ կարողացա տեսնել քեզ...

Քավորկնոջ գթասրտությունը ինձ բոլորովին զինաթափ արեց. իմ կատաղությունը բավական մեղմացավ, և ես հանդարտությամբ հայտնեցի, թե ցանկանում էի քավոր Պետրոսին տեսնել։

— Քանի շաբաթ է, որ նա տանը չէ, զավակս, ո՞ւր է գնացել մենք էլ չգիտենք։ Այն օրից, որ քավարպետի հետ պատահեց այն դժբախտությունը (ա՜խ, թող աստված ինքը ողորմություն անե այն խեղճին), Պետրոսը քուն և հանգստություն չուներ, ասում էր, սուրբ տիրամայր, այդ ի՞նչ պատահեց, միշտ քեզ վրա էր մտածում, միշտ քեզ համար էր աղոթում։ Հետո

ասաց ինձ, կնի՛կ, ես պիտի գնամ՝ գտնեմ Մուրադին, անփորձ տղա է, չլինի թե նա էլ վտանգի մեջ ընկնի։— Գնաց քեզ պտռելու, ա՜խ, հիմա ո՞րքան կուրախանա, երբ տեսնե, որ դու սղջ առողջ տուն ես եկել...

Ես ամենևին չէի կասկածում, որ քավոր Պետրոսը իմ մասին անհանգիստ կլիներ, ես բոլորովին հավատում էի, որ նա գնացել էր ինձ որոնելու, որովհետև իմ մի սխալ քայլից, իմ մի անզգույշ խոսքից կախված էր նրա կյանքը։ Այդ պատճառով կարճ կտրեցի քավորկնոջ հետ, որովհետև գիշերը անցնում էր, ջտապում էի մորս տեսնել։

— Մնա մեզ մոտ, զավակս,— թախանձում էր քավորկինը,— այդ ժամանակ ո՞ւր ես գնում։

Երբ ես հայտնեցի, թե գնում եմ մորս տեսնելու, նա ասաց.

— Գնա՛, զավակս, պետք է նրան էլ ուրախացնել, խե՜ղճ կնիկ, ո՞րքան լաց էր լինում նա քո համար, ասում էր՝ Մուրադս կորավ, էլ չեմ տեսնի նրան... հիմա կտեսնե, կուրախանա։

Երբ ես կամենում էի բակից դուրս գալ, քավորկինը խորհուրդ տվեց, որ ծառային ինձ հետ տանեմ,— գիշեր է, զավակս, ասում էր նա,— ո՞վ է իմանում, կարող է հազար չար ու բարի պատահել...

— Պետք չէ,— ասացի ես և հեռացա։

Դուրս գալով փողոցի խավարի մեջ, ինձ պաշարեցին նոր և ավելի ծանր մտածություններ,— քավոր Պետրոսին չգտա, ուրեմն նրա մասին իմ բոլոր նախապատրաստությունները ոչնչացան, իզուր անցան... Ի՞նչ էր մնում անել։ Վարպետիս դատապարտելու օրը մոտ էր.— երկու գիշեր ևս, այնուհետև նրան պիտի դուրս բերեին մեղապարտների հրապարակի վրա... Ի՞նչ պիտի անեի, եթե մինչև այնօր չգտնեի քավոր Պետրոսին։ Ահա մի հարց, որին վճիռ տալու մեջ ես դժվարանում էի։

«Եթե նրան չգտնեմ, ինձ կմնա կատարել իմ վերջին դիտավորությունը, այսինքն, անձամբ ներկայանալ դատավորի մոտ, խոստովանվել ճշմարիտ իրողությունը, և իմ աջը մեկնելով դահճի դանակի առջև, ասել՝ «Կտրեցեք այդ ձեռքը, որ յուր միամտությամբ մի չարագործի համար գործիք դարձավ...»։

Բայց պետք էր նախ և առաջ տեսնվել մորս հետ. նա կմեռներ կսկիծից, եթե հանկարծ կլսեր սիրելի որդու բոթը։

Ես մտա այն փողոցը, ուր գտնվում էր մեր տունը։

Պարսից վարչության կամայականությունները ինձ բավական հայտնի էին. ես գիտեի, եթե մի հանցավոր փախստական է դառնում, կառավարությունը կամ կալանավորում է նրա ազգականներին, կամ նրա տան վրա սարվազներ է դնում, սկսում են նեղացնել տանեցիներին, մինչև փախստականը հայտնվի։ Ի՞նչ պիտի անեմ, մտածում էի ես, եթե կմտնեմ մեր տունը և կտեսնեմ այնտեղ սարվազներով լցված։ Քավորկինը այդ մասին ինձ ոչինչ չասեց, և ես այնքան շփոթված էի, որ մոռացա հարցնելու, թե ինչ դրության մեջ է մեր տունը։

Վճռեցի նախ գնալ Սառայի մոտ, նրանից տեղեկանալ մեր ընտանիքի դրության մասին, հետո գնալ մորս տեսնելու։ Սառայենց տանը կից էր մեր տունը, նրան, իհարկե, հայտնի կլինի ամեն ինչ։

Զարմանալի բան է մարդու սիրտը, այն ևս հրաբորբոք, անփորձ պատանու սիրտը— շատ անգամ ինչ բանին որ փափագում է նա, խելքն էլ սատանայի նման այնպիսի ապացույցներ է առաջ բերում, որ անպատճառ կատարվի այդ փափագը։ Ես ցանկանում էի տեսնել և՛ մորս, և՛ Սառային։ Որին պետք էր տալ գերադասությունը։ Սիրտս ասում էր՝ Սառային, իսկ խելքս, փոխանակ հակառակելու նրան, իրան օգնության կանչելով զգուշությունը ու խոհեմությունը, հաստատում էր սրտիս բաղձանքը, ասելով ինձ, չէ՛, առաջ մորդ մոտ մի՛ գնա, այնտեղ կարող են սարվազներ լինել, ֆերրաշներ լինել, կառավարության մարդիկ լինել և այլն։ Այդ բոլորը երևակայում էի ես, որովհետև սրտիս շահերին նպաստավոր էին դրանք... Սառան կապված էր իմ հոգու հետ, ես նրան սիրում էի։

Չեմ կարող նկարագրել, թե ո՛րպիսի ոգևորությամբ մոտեցա ես նրանց տանը։ Երեք ամբողջ ամիսներ չէի տեսել նրան։ Կատուն այնպես արագությամբ չէր կարող թռչել, ինչպես ես բարձրացա նրանց կտուրի վրա։ Տարվա այն եղանակներում բոլոր գյուղացիները կտուրների վրա են պառկում։ Սառան քնած էր ինչպես մի երեխա։ Ես մոտեցա ձեռքով շոշափեցի նրա երեսը։ Նա զարթնեց մի անսովոր ճիչ արձակելով։ Ես փոշմանեցի, որ իմ անզգուշությամբ վախեցրի նրան։

— Ես եմ, Սառա։

Նա ճանաչեց իմ ձայնը և հանգստացավ։

— Ա՜խ, ինչո՞ւ եկար այստեղ... գնա... հիմա հայրս...

Ես ետ քաշվեցա, վախենալով, միգուցե զարթեցնեմ նրա հորը, որ աղջկանից մի փոքր հեռու պառկած էր։ Սառան մայր չուներ։ Երկու քայլ չէի փոխած, երբ ականջիս դիպավ նրա հազիվ լսելի ձայնը.

— Գնա՛, ներքև, այնտեղ սպասիր ինձ...

Որքա՜ն ուրախալի էր այդ ձայնը։ Ես իսկույն կտուրից իջա նրանց բակը, նստեցի սրահում և անհամբերությամբ սպասում էի։ Շատ չանցավ, Սառան բոլորովին հագնված, այնտեղ եկավ։ Նա հանդիպեց ինձ նույն հիացմունքով, որպես մեկի սիրելին գերեզմանից հարություն է առնում։ Այսպիսի դեպքերում սիրո զգացմունքը լուռ է մնում, տիրապետում է միայն ուրախության հրճվանքը, այն ևս արտասվախառն ուրախության, երկնչելով, միգուցե սիրելին կրկին դեպի գերեզման վերադառնա...

Սառան ճրագը վառեց, մենք մտանք նրա սենյակը։ Առաջին բանը, որ նրա աչքին ընկավ, էր իմ հագուստը։

— Ա՜խ, այդ ի՞նչ է, քո շորերը ինչպե՞ս պատառոտվել են... որքա՞ն կեղտոտվել է քո շապիկը... —ասաց նա ցավակցաբար։

— Անտառների մեջ այսպես է լինում, Սառա։

Նա պատրաստում էր թել ու ասեղ, որ կարկատե հագուստիս պատառոտած տեղերը։ Բայց ամբողջ ամիսներով մացառների և ծառերի մեջ նրանք այնպես էին քրքրվել, որ փոքրիշատե նորոգելը մի քանի օրվա գործ էր, թեև բարի Սառայի սիրտը ցավում էր ինձ այդ վիճակի մեջ տեսնել և մտածում էր նույն րոպեում նորոգել բոլորը։

Հանկարծ նա թելն ու ասեղը կողմ դրեց, կարծես թե մոռացավ հագուստիս վիճակը, և մի նոր բան մտաբերելով, ասաց.

— Ա՜խ, ո՛րքան լաց եմ եղել ես, Մուրադ... ո՛րքան տանջվել եմ...

— Ինչի՞ համար։

— Ասում էին, թե...

— Ի՞նչ էին ասում։

— Ա՜խ, շատ խոսքեր էին ասում... ասում էին քեզ բռնել են... ասում էին քեզ բանտն էին դրել...

— Հիմա ես ուրախ եմ։ Բայց...

— Դու կարծո՞ւմ ես ինձ դարձյալ կկալանավորեն։

— Ո՛չ... ես կարծում եմ, որ քեզ մյուս անգամ չեմ տեսնի...

— Իզուր ես այսպես կարծում, Սառա։ Աստված կօգնե ինձ, ինչպես մինչև այսօր չկարողացան կալանավորել, այսուհետև ևս աստված կպահպանե ինձ։— Ես սկսեցի մխիթարել նրան։

— Ո՞ւր էիր այդքան ժամանակ, որտե՞ղ էիր պահված,— հարցրեց նա։ Ես նկատեցի, որ ձայնը սկսեց դողալ։

— Այդ մի՛ հարցրու, Սառա։

— Ինչո՞ւ, ես չի՞ պիտի գիտենամ։

— Հետո կասեմ քեզ։

Նա լուռ կացավ, և հեկեկալով սրբում էր արտասուքը։

— Ինչո՞ւ ես լաց լինում։

— Ասում էին, որ դու գողերի հետ ես ապրում...

Խե՜ղճ աղջիկ, նա լաց էր լինում, նրա համար, որ ես գողերի հետ էի ապրում։ Խալագողի աղջիկը զզվում էր գողերից... դա հազվագյուտ երևույթ էր... դա մի մարգարիտ էր աղբի մեջ ընկած... Մի քանի րոպեից հետո հարցրեց նա։

— Դու մորդ տեսե՞լ ես։

— Դեռ չեմ տեսել, ուզում եմ գնալ նրա մոտ։

— Ա՜խ, եթե գիտենայիր, թե որքա՜ն մաշվել է, որքա՜ն հալվել է նա քո պատճառով... խե՜ղճ կնիկ, աչքերիցը արտասուքը չէր ցամաքում, միշտ լաց էր լինում... Ամեն օր գնում էի նրա մոտ, գրկում էր ինձ, համբուրում էր, ասում էր՝ «Մուրադիս կարոտությունը քեզանից եմ առնում, Սառա, դու որդուս նշանածն ես...»։ Ամեն անգամ խոսելիս, քո անունն էր հիշում, ասում էր, աստված այնքան ժամանակ հոգիս չառնե, մեկ էլ տեսնեմ որդուս, ու հետո մեռնեմ... Հիմա, ո՛րքան կուրախանա, Մուրադ, եթե քեզ տեսնելու լինի։

Ես հարցրի Սառայից, թե իմ բացակայության միջոցում ինչե՞ր էին պատահել մեր տանը։ Նա սարսափելի գույներով նկարագրեց այն բոլոր տանջանքները, որ կրել էր մայրս տեղային պարսիկ պաշտոնատարների, ֆերրաշների և սարվազների ձեռքից։ Պատմեց, թե ամեն օր գալիս էին, մորս ասում, ո՞ւր է որդիդ կամ որդուդ պիտի տաս մեր ձեռքը, կամ այսքան փող պիտի տաս մեզ, որ քեզ ժամանակ տանք, մինչև որդուդ

գտնես։ Եվ այսպես ամեն անգամ «ղուլլուղ» և «ռուշվաթ» էին անում, հետո գնում էին։ Մայրս փող չուներ, որ տար և ազատվեր։ Սառայի հայրը գնում էր, նրանց փող էր տալիս և ճանապարհ էր դնում։ Քույրերս-միշտ Սառայենց տանը թաքնված էին լինում, երբ նրանք գալիս էին, մայրս չէր ուզում, որ ֆերրաշները նրանց երեսը տեսնեն։ Այդպիսի շատ բաներ պատմեց ինձ Սառան, իմ սիրտը կտոր-կտոր էր լինում այդ բոլորը լսելու ժամանակ։ Եթե ես մի որևիցե հանցանք էի գործել, թող պատժեին ինձ։ Ինչո՞վ էր մեղավոր մայրս, ինչո՞վ էին մեղավոր քույրերս, բարեկամներս։ Բայց դա մեր երկրի կարգն էր, կորածի, մեռածի, հանցանքների համար մնացածներին պատժել...

Լույսը սկսել էր բացվել, լսելի եղավ գյուղական ժամատան կոչնակի ձայնը. այլևս Սառայի մոտ երկար մնալ անկարելի էր. շուտով նրա հայրը կիջներ կտուրից, կլվացվեր, որ եկեղեցի գնա աղոթելու։ Սառան չէր ցանկանում, որ յուր հայրը մեզ միասին նստած տեսներ։ Զարմանալի բան է սովորությունը։ Սառան իմ նշանածն էր, քանի տարի էր որ մայրս այդ նազելի աղջկան նշանել էր ինձ համար որպես հարսնացու։ Բայց մենք իրավունք չունեինք միմյանց հետ տեսնվելու, միմյանց հետ խոսելու, մինչև այն օրը, քանի որ դեռ քահանան աստուծո սեղանի առջև չէր ասել՝ թե նա իմ կինն է, իսկ ես նրա ամուսինը։ Եվ մեր երկրում՝ խիստ սրբությամբ էր պահպանվում այդ կարգը։

Ժամատան բարձրությունից լսելի եղավ կոչնակի երկրորդ անգամի զարկը։ Ամբողջ Սավրան այժմ ոտքի վրա էր։ Ծերունիները, պառավները պիտի գնային ժամ աղոթելու, իսկ ավելի մանկահասակները պիտի գնային դեպի մշակության դաշտերը գործելու։

Մեր տունը Սառայենց տնից բաժանված էր մի ցած միջնապարիսպով միայն։ Այդ միջնապարիսպը, գիշերային մթության ժամանակ, շատ անգամ եղել էր մի խորհրդապահ վկա իմ և Սառայի տեսություններին։ Նա կանգնած իրանց բակի կողմից, ես կանգնած մեր բակի կողմից, իսկ մեր մեջտեղում միջնապարիսպը, ամբողջ ժամերով խոսում էինք, խոսում ու չէինք կշտանում։ Իսկ ա՛յժմ։— Այժմ ես փախչում էի Սառայից, որպես մի հանցավոր, որ արժանի չէր նրա սերին։

Սառային դեռ հայտնի չէին իմ վարպետի արհեստանոցում պատահած անցքի մանրամասնությունները. նա դեռ չգիտեր, թե ի՞նչ պատճառով ոստիկանությունը որոնում էր ինձ, նա միայն մի բան էր լսել, թե ես «գողերի հետ եմ ապրում...»։ Այդ մասին նա մի քանի րոպե առաջ հարցրեց ինձանից, իսկ ես նրա հարցը թողեցի առանց պատասխանի։ Ամոթը խեղդում էր ինձ. ի՞նչ վատ բան է գողությունը... Սառան էլ ինձ չի սիրի, մտածում էի ես, նա բարի աղջիկ է, նա գողին չի սիրի...

Երբ ես կանգնեցա, պատրաստվում էի բաժանվել Սառայից, հարցրեց նա.

— Դու դարձյալ նրանց մո՞տ ես գնում։

— Ո՞ւմ մոտ։

— Այն գողերի մոտ...

— Եթե դու գիտենայիր, Սառա, թե ինչ տեսակ տղերք են նրանք, դու երբեք ինձ չէիր մեղադրի, որ ես անցուցի նրանց հետ մի քանի ամիսներ։ Նրանք այնքան սիրելի տղերք են, որ եթե դու տեսնելու լինեիր նրանց, ինքդ էլ կսկսեիր սիրել։ Նրանք վատ տղերք չեն, Սառա, և ես ցավում եմ, որ հանգամանքները բաժանեցին ինձ նրանցից...

Նա, կարծես թե, հանգստացավ։

— Հավատում եմ քո խոսքերին,— ասաց նա։— Բայց հիմա ո՞ւր ես գնում։

— Գնում եմ մորս մոտ։

Այդ միջոցին բակից լսելի եղավ Սառայի հոր ոտնաձայնը։ Նա իջել էր կտուրից, պատրաստվում էր եկեղեցի գնալու։ Սառան գունաթափվեցավ. նա իսկույն դուրս գնաց սենյակից, և հոր առաջը կտրելով, ասաց.

— Գիտես, հայրիկ, Մուրադը եկել է։

— Ե՞րբ, ո՞ւր է,— հարցրեց հայրը զարմանալով։

— Հենց այս րոպեիս, այստեղ սենյակումն է։

Ես նրանց խոսակցությունը լսում էի. Սառան խաբեց հորը. երկրի սովորությունը ստիպեց նրան սուտ խոսել։ Նա չկամեցավ ցույց տալ, որ մենք մի քանի ժամեր միասին ենք եղել։ Դա կարող էր համարվել հրեշտակի նման մաքուր աղջկա համար մի տեսակ անպարկեշտություն։

Հայրը շտապով ներս մտավ, գրկեց ինձ, համբուրեց և ավե-

տարանական խոսքերով հայտնեց յուր ուրախությունը, որ վերջապես գտավ յուր «մոլորյալ ոչխարին...»։

Նրա խոսքերի մեջ բովանդակում էր և՛ ուրախություն, և՛ հանդիմանություն։ Ես մոլորյալ ոչխար էի, հովիվը գտավ ինձ։ Բայց ո՞վ մոլորեցրեց ինձ, ի՞նչ բանումն էր իմ մոլորությունը,— այդ մասին նա ոչինչ չխոսեց։

Սառայի հայրը խելացի մարդ էր, նա ինձ խորհուրդ չտվեց գնալու մեր տունը, որովհետև կարող էր այնպես պատահել, որ ես այնտեղ եղած ժամանակ ֆերրաշները վրա հասնեին և կալանավորեին ինձ։ Նա ասաց, թե ոստիկանությունը մեր գյուղի տանուտերերից իլթիզամ է առել, տուգանք է նշանակել, եթե ես մեր գյուղում հայտնվելու լինեմ, իսկույն մատնե կառավարության ձեռքը, և «անպիտան» տանուտերը, մի լավ ծառայություն անելու համար, մեծ հաճույքամբ կկատարե այդ հրամանը։ Նա արդեն, ավելացրեց Սառայի հայրը, զանազան լրտեսների միջոցով հսկում է մեր տան վրա, որ ինձ բռնել տա և այլն։

Սառայի հոր խոսքերից ես հասկացա այն բոլոր պատճառները, թե ինչո՞ւ կառավարությունը ինձ ամենայն խստությամբ որոնում էր։ Որպես վարպետիս, նույնպես և մեր բոլոր աշակերտներին ու բանվորներին կալանավորել էին։ Միայն ես էի մնացել, որ փախստական էի։ Քրեական գործերի ժամանակ պարսից դատավորների քննությունը հարցմունքներով, վկաներով կամ այլ հետախուզություններով չէ կատարվում,— այլ միայն ծեծով։ Նրանք պատժում են նախքան հանցանքի հաստատվելը։ Կալանավորի ոտները դնում են ֆալախկայի մեջ, այնքան ծեծում են, կամ բանտի մեջ այնքան սարսափելի տանջանքներ են տալիս, մինչև նա խոստովանվի, թե ինքն է գործել հանցանքը։ Քանի որ դեռ չէ խոստովանվել, տանջանքները ավելի և ավելի սաստկացնում են։ Այդ բոլորը փորձել էին թե վարպետիս և թե նրա գործավորների վրա, բայց մի որոշ խոստովանություն չէին դուրս բերել։ Վարպետս ասել էր միայն, թե բանալիի վրա դրոշմը, իրավ է, յուր արհեստանոցի դրոշմն է, բայց թե ինչպես է շինվել այդ բանալին կամ ո՞վ է շինել,— այդ մասին տեղեկություն չունի։ Նույնը ասել էին և արհեստանոցի աշակերտներն ու բանվորները։ Մնում էի ես, որ փախստական էի, և իմ փախչելը ավելի կասկածավոր էր դարձրել

ինձ։ Այդ էր պատճառը, որ ինձ ամենայն խստությամբ որոնում էին, մտածելով, թե ինձանով կլուծվի մթին գաղտնիքը։

Այդ բոլորը լսելու ժամանակ, փոքր էր մնում, որ ես հայանեի դառն իսկությունը։ Բայց ես դարձյալ զսպեցի ինձ, որ ոչ ոքի չասեմ, մինչև քավոր Պետրոսին չտեսնեմ։ Բայց գուցե դա շատ ուշ կլիներ։ Մնում էր մի օր. մյուս օրվա առավոտը վարպետիս պիտի դուրս բերեին դատապարտության հրապարակի վրա... «Վնաս չունի, մտածեցի ես, եթե այսօր չկարողացա գտնել քավոր Պետրոսին, ես ինքս անձամբ կներկայանամ գլխավոր դատավորին, բոլորը մի ըստ միոջե կհայտնեմ, ինչ որ կատարվել է...»։

— Դու կմնաս այստեղ, մեր տանը,— ասաց Սառայի հայրը։— Այստեղ կան ապահով տեղեր քեզ թաքցնելու համար. ես կպահեմ քեզ, մինչև վտանգն անցնի։

— Ապա մորս, քույրերիս չի՞ պիտի տեսնեմ,— հարցրի ես։

— Հարկավոր չէ նրանց տեսնելու համար անպատճառ ձեր տունը գնաս, նրանց այստեղ էլ կարող ես տեսնել։

Նա դարձավ դեպի Սառան, ասելով.

— Գնա խնամի Նազանիին կանչիր այստեղ. չասես Մուրադը եկել է, ասա միայն, թե հայրս կանչում է։ Ո՞վ գիտե, կնամարդ է, սիրտը բարակ կլինի, կարելի է որդու անունը լսելով, կսկսե զանազան անզգույշ ձայներ բարձրացնել և հարևանների ուշադրությունը յուր վրա կդարձնե։

Սառան վազեց դեպի մեր տունը։

Իմ գրիչը անզոր է նկարագրելու այն անսահման ուրախությունը, որով մայրս հանդիպեց ինձ։ Մարդկային լեզուն դեռ չէ ստեղծել այն բառերը, որ ընդունակ լինեին արտահայտելու մոր սրտի զգացմունքները, մոր սրտի ցավերը։

Քույրերս նույնպես, քնից դեռ նոր էին վեր կացած, իսկույն ինձ մոտ վազեցին, երբ Սառայից իմացան իմ գալուստը։ Նրանց գգվանքը, նրանց հրճվանքը նույնքան հրեշտակային էր, որպես նրանց սիրտը։ «Դու այլևս չե՞ս գնա, դու մեզ մոտ կմնաս», անդադար հարցնում էին նրանք։ Ես ոչինչ չէի գտնում պատասխանելու։

Մայրս հավանեց Սառայի հոր կարգադրությունը, որ ինձ իրանց մոտ էր պահել և չէր թողել, որ մեր տունը գնամ, որովհետև գյուղի գզիրը (տանուտերի օգնականը) ամեն առավոտ գալիս էր մեր տունը ինձ որոնելու համար։

Զնայելով, որ այդ բոլորը ինձ մեծ ուրախություն էր պատճառում, կրկին տեսնում էի մորս, քույրերիս, կրկին գտնվում էի այն շրջանի մեջ, որ երեխայությունից ինձ սիրելի էր,— բայց միևնույն ժամանակ մի դառն, անախորժ զգացմունք տանջում էր ինձ, երբ մտաբերում էի, որ ես մի թշվառ հանցավոր եմ, ինձ որոնում են, ինձ կամենում են կալանավորել... Մորս և բոլոր բարեկամներիս ջանքն այն էր, որ ես չբռնվեմ, որ ինձ բանտը չնետեն։ Բայց մի՞թե ես կարող էի մոռանալ ա՛յն, ինչ որ գործել էի... ա՛յն որի պատճառով պատժվում էին անմեղ մարդիկ...

Մայրս սկսեց շնորհակալություն հայտնել Սառայի հոր մասին, թե նա ամեն կերպով պահում էր և պաշտպանում էր մեր ընտանիքը, եթե նա չլիներ, սարվազները և ֆերրաշները ավելի նեղություններ կտային։ Եվ ավելացրեց, որ իմ հորեղբայրը իրան այնպես հեռու էր պահում, որ ամենևին չէր ուզում լսել, թե յուր եղբոր ընտանիքը չարչարվում է բարբարոսների ձեռքում և այլն։

— Իսկ քավոր Պետրո՞սը,— հարցրի ես։

— Աստված նրան բարի՛ տա,— պատասխանեց մայրս մի առանձին զգացմունքով։— Այդ պատվական մարդը հանգստություն չուներ, օրը մի քանի անգամ գալիս էր մեզ մոտ, սիրտ էր տալիս, մխիթարում էր, ասելով, մի՛ վախեցեք, աստված ողորմած է, այդ բոլորը կանցնի։ Նա ասում էր, որ շատ անգամ աստված յուր ստեղծածներին փորձելու համար փորձանքի մեջ է ձգում. օրինակ էր բերում Հոբ Երանելիի կրած տանջանքները և ուրիշ շատ բաներ սուրբ գրքերից։

«Գարշելի...», ասացի մտքումս, և զսպելով իմ վրդովմունքը, հարցրի.

— Հիմա նա որտե՞ղ է։

— Քանի շաբաթ է, որ չէ երևում,— պատասխանեց մայրս։— Մի անգամ եկավ ինձ մոտ, ասաց, Նազանի, ես գնում եմ Մուրադին որոնելու, ջահել տղա է, անփորձ է, չլինի թե բռնվի. մենք նրան պետք է թաքցնենք, մինչև աստուծո բարկությունն անցնի։ Խե՜ղճ մարդ, արտասուքը հեղեղի նման թափվում էր

նրա աչքերից, կարծես յուր հարազատ որդու համար էր լաց լինում։

Այդ միևնույն խոսքերը ասաց ինձ քավորկինը։ Բայց ես շատ լավ էի հասկանում, թե քավոր Պետրոսը ինձ ի՞նչ մրտքով էր որոնում...

Սառայի հայրը գնաց եկեղեցի ոչ այնքան աղոթելու համար, որքան լսելու, թե մարդիկ դրսում ինչ են խոսում։ Մեր գյուղացիները սովորություն ունեին, ժամից դուրս գալուց հետո հավաքվել եկեղեցու բակում և զանազան բաների վրա խոսել։ Նա պատվիրեց ինձ, որ իրենց տանը մնամ, մինչև յուր վերադարձը։

Մորս սերը, քույրերիս հրճվանքը, Սառայի ներկայությունը առժամանակ մեղմացրին իմ մեջ այն կատաղությունը, որ տիրել էր իմ սրտին այդ տունը մտնելուց առաջ։ Թանկագին բարեկամներիս ջերմ գգվանքը, նրանց անկեղծ փաղաքշանքը, կարծես թե թմրեցրին իմ զգացմունքները մի տեսակ անբացատրելի արբեցության մեջ, մոռանալ տալով այն բոլոր նախամտածությունները, որ ես վճռել էի սիրելի վարպետիս ազատության համար։

Սառան ուրախ էր, ինչպես մի գարնանային ծիծեռնակ. նա անդադար ճախրում էր իմ շուրջը, աշխատելով կատարել մինչև անգամ իմ ամենափոքր հաճույքները։ Քույրերս չէին հեռանում իմ մոտից, անթիվ հարցեր էին առաջարկում, ուզում էին խոսել, անընդհատ կերպով խոսել ինձ հետ։ Մայրս նստած էր իմ մոտ, և իմ աջը բռնած յուր ձեռքի մեջ, զմայլած նայում էր իմ երեսին և երբեմն խուլ հառաչանքներ էր արձակում։ Եհ՜ղմ կնիկ, ո՞րքան ցավեր, ո՞րքան տրտմություններ թաքնված էին նրա բեկյալ սրտի մեջ... Սիրելի ամուսնի կորստից հետո նա միայն իմ մեջ էր գտնում յուր մխիթարությունը... ես էի նրա տան սյունը... ես պիտի վառ պահեի հայրենական օջախի կրակը... նրա բոլոր հույսերը ինձ վրա էին դրված... Իսկ ա՞յժմ։— Այժմ ամեն հույս պիտի խորտակվեր, այժմ մայրական բոլոր բաղձալի փափագները պիտի ոչնչանային... Նրա որդին մի սարսափելի հանցավոր էր, որին վաղ թե անագան գուցե կախաղան կբարձրացնեին...

Երևի այդ դառն մտածմունքներն էին պաշարել մորս, ոչ

նա այնքան տխուր էր։ Բայց նա ինձանից թաքցնում էր յուր վշտերը, որ ինձ ավելի ցավեր չպատճառե։

Սառայի հայրը վերադարձավ եկեղեցուց բավական ուշ. նա պատմեց մեզ շատ նորություններ և ի միջի այլոց հայտնեց, որ քավոր Պետրոսին տեսնողներ են եղել Հին քաղաքում, նա ասել է, որ երեկոյան կվերադառնա յուր տունը։ Այդ լուրը ինձ սաստիկ ուրախություն պատճառեց. «Վերջապես նա իմ ճանկը կընկնի, և ես գիտեմ ինչ կանեմ...», մտածում էի ես, և մեծ անհամբերությամբ սպասում էի երեկոյին։

Բայց երեկոյան մի քանի անգամ մարդ ուղարկեցինք նրա տունը, պատասխան ստացանք, թե դեռ չէ եկել։ Ես դարձյալ սկսեցի անհանգիստ լինել, դարձյալ դառն մտածություններ պաշարեցին ինձ. հուսահատությունը խեղդում էր ինձ, չգիտեի, թե ինչ պետք է անել։

Արևը մտավ. մութը պատեց աշխարհը։ Դա տագնապի վերջին գիշերն էր։ Եթե այդ գիշեր փրկություն չլիներ վարպետիս համար, առավոտյան ամեն հույս պետք էր կորած համարել։— Առավոտյան նրան պիտի դուրս հաներին դատապարտյալների հրապարակի վրա... Այդ միտքը սարսափեցնում էր ինձ։

Գիշերը ես անցկացրի կատարյալ տենդային դրության մեջ։ Ոչ քնել կարողացա և ոչ արթուն էի։ Ինձ տիրել էր մի տեսակ կատաղություն, որ պահում է մարդուն ալեկոծության մեջ, բայց միևնույն ժամանակ թույլ չէ տալիս շարժվել, ինչպես ծովը ծփում է յուր շրջանակի մեջ։ Ես նույն րոպեում պետք է թռչեի, վազեի, գնայի այնտեղ, ուր անմեղ մարդը պիտի դատապարտվեր։ Բայց կարծես, մի անտեսանելի ձեռք կաշկանդել էր ինձ. իմ կամքի, բնավորության զորությունը թուլացել էր...

Ես հիվանդ էի։ Գլուխս սաստիկ ցավում էր, ամբողջ մարմինս վառվում էր կրակի մեջ Մայրս, քույրերս, Սառան չհեռացան իմ անկողնից։ Նրանց խոսքերը ես լսում էի, հասկանում էի, բայց իմ պատասխանները լինում էին այն աստիճան անկապ, անտեղի և խառնաշփոթ, որ մայրս մեծ զարհուրանքով մտածում էր, թե սիրելի որդին խելագարված է...

Առաջին անգամն էր պատահում ինձ արթնության մեջ երազներ տեսնել։ Երբ աչքերս խփում էի, ինձ երևում էր, թե գտնվում եմ Հին քաղաքում։ Առավոտ է։ Փողոցներում տիրում է հուզմունք և իրարանցում։ Մարդիկ շտապով վազում են դեպի

դատապարտյալների հրապարակը։ Ես էլ այդ խռովյալ բազմության հետ վազում եմ դեպի այն կողմը։ Հրապարակի վրա ասեղ գցելու տեղ չկա. ամբողջ տարածությունը պատած է հետաքրքիր հանդիսատեսներով։ Հրապարակի շուրջը գտնված ծառերի ճյուղերն անգամ ծանրաբեռնված են մարդիկներով։ Նրանք երևում էին ինձ այնքան մանր, փոքրիկ ծառերի նման «Ի՞նչ կա, ի՞նչ բանի է սպասում այդ խուռն բազմությունը», հարցնում էի ես։— «Մի հանցավորի ձեռքը պիտի կտրեն», լինում էր պատասխանը։

Սարսափելով այդ խոսքերից աչքերս բաց էի անում, այլևս ոչինչ չէի տեսնում, ոչինչ չէր երևում։ Տեսնում էի միայն մորս տխրամած դեմքը, որը նստած էր իմ անկողնի մոտ, տեսնում էի Սառայի արտասվալի աչքերը, տեսնում էի յուղային ճրագը, որը աղոտ լույսով վառվում էր իմ քնարանում։ Քույրերս պառկած էին. ամբողջ տունը նիրհում էր. երկու հոգի միայն արթուն էին մնացել— մայրս և սիրող աղջիկը...

Այդ իրականություն էր. իսկ մնացածը երազ։

Աչքերս կրկին փակեցի, մտածելով, թե արդեն անցավ սոսկալի տեսիլքը։ Դարձյալ միևնույն երազի շարունակությունը,— նույն հրապարակը, նույն բազմությունը, նույն մարդիկը կախված ծառերի ճյուղից։ Բայց տեսարանն այժմ մասամբ փոխվել էր։ Հրապարակի կենտրոնում, դահիճը, ոտից ցգլուխ կարմիր հագած, ձեռքում սրում էր դանակը։ Նրա մոտ կանգնած էր թշվառ դատապարտյալը, գունաթափ, մաշված և կիսամեռ։ Բանտը խլել էր նրանից ամեն կենդանություն։ Ես հազիվ կարողացա հանաչել նրան։ Դա իմ վարպետն էր, այն բարի արհեստավորը, որ այնքան սիրում էր ինձ, այն մարդը, որ հոր նման ուրախանում էր, երբ տեսնում էր իմ հառաջադիմությունը արհեստի մեջ, այն մարդը, որ խոստանում էր բախտավորացնել ինձ, առանձին արհեստանոցի տեր շինել։ Բայց ինչո՞վ վարձատրեց նրա առաքինությունները ապերախտ աշակերտը,— դավաճանությամբ։ Այդ պատիժը, որ կրում էր անմեղ մարդը, իմ պատճառով էր։ Ես ձգեցի նրան այդ սոսկալի փորձանքի մեջ...

Այդ մտածությունների հուզմունքի մեջն էի ես, երբ դահիճը մոտեցավ դատապարտյալին։ Ամբողջ բազմությունը դղրդաց մի խուլ, գերեզմանական շշնջյունով։ Կարծես, բոլորի բերանից

լսվում էր «անմե՞ղ» բառը։ Ես համբերել չկարողացա։ Խելագարի նման ճչալով, աղաղակելով, պատառեցի խիտ ամբոխը, և մի ակնթարթում հայտնվեցա դահիճի մոտ։— «Կտրեցե՛ք իմ ձեռքը, գոչեցի ես որոտի ձայնով,— այդ ձեռքն է շինել այն բանալին...»։ Ամբողջ բազմության վրա տիրեց խորին ապշություն։

Այդ ձայնի հետ ես արթնացա։

Օրը լուսացել էր արդեն. արևի առաջին ճառագայթները անցել էին իմ քնարանի մեջ։ Մայրս դարձյալ նստած էր իմ անկողնի մոտ, իսկ փոքր-ինչ հեռու կանգնած էր մի մարդ։

Մայրս սարսափեց, երբ լսեց իմ վերջին խոսքերը, բայց կանգնած մարդը հանգստացրեց նրան, ասելով.

— Խեղճ տղան երազների մեջ է խոսում։

Երբ ուղիղ նայեցի այդ մարդու երեսին, տեսա, որ նա մեր քավոր Պետրոսն էր։ Նրա երևույթը ինձ բոլորովին սթափեցրեց իմ անրջային զառանցություններից։ Ես այժմ գտնվում էի կատարյալ արթնության մեջ, բայց դարձյալ կրկնեցի նույն խոսքը, որ ասել էի երազիս մեջ։

— Այո՛, ես եմ շինել այն բանալին...

Չգիտեմ քավոր Պետրոսը ի՞նչ ասաց, ի՞նչ ակնարկություն արեց դեպի իմ մայրը, միայն այսքանը տեսա, որ նա հեռացավ իմ քնարանից, ես և քավոր Պետրոսը մնացինք միայնակ։

Ես զգում էի ինձ բավական լավ. գլխիս ցավն անցել էր. մարմնիս ջերմությունը մեղմացել էր, միայն անդամներիս մեջ տիրում էր մի տեսակ հոգնածություն, մի տեսակ թուլություն։ Այնուամենայնիվ ես վեր կացա անկողնից և հագնվեցա։ Քավոր Պետրոսը օգնեց ինձ լվացվելու։ Սառը ջուրը բավական զովացրեց իմ գլուխը, բավական կազդուրեց իմ բորբոքված ուղեղը։

Մարդկային բնավորության մեջ երբեմն կատարվում են այնպիսի հոգեբանական փոփոխություններ, որ շատ դժվար է լինում բացատրել։ Կան մարդիկ, որոնց վրա որքան և զայրացած լինես, որքան և նախապատրաստված լինես նրանց հանդիմանելու, անարգելու և մինչև անգամ սպանելու, բայց հենց որ նրանց երեսը տեսնում ես, իսկույն կարծես մի մոգական ազդեցությամբ, քո սրտի և հոգու նախկին լարված տրամադրությունը թուլանում է, բարկության խստությունը մեղմանում

է, և դու ընկնում ես կատարյալ սառնասրտության մեջ։ Նույն ազդեցությունը գործեց ինձ վրա և քավոր Պետրոսը։

Ես նրա դեմ զայրացած էի։ Ես մահվան չափ ատում էի այդ գարշելի մարդուն, ես վճռել էի վարվել նրա հետ վրեժխնդրության բոլոր բարբարոսությամբ, բայց հենց որ նրա պատկառելի երեսը տեսա, իմ բոլոր սրտմտությունը, իմ բոլոր կրքերը փշրվեցան, խորտակվեցան այդ խորհրդավոր մարդու կախարդիչ զորության առջև... Չգիտեմ ինչի՞ն պետք էր վերաբերել այդ փոփոխությունը, արդյոք իմ պատանեկան բնավորության թուլությանը, թե իմ կամքի անհաստատությանը...

Բայց ես այնքան քաջություն ունեցա, որ պահանջեցի առանձնության մեջ խոսել նրա հետ։

— Ես էլ դրա համար հեռացրի քո մորը,— ասաց նա մեղմությամբ և նստեց իմ մոտ։

— Մուրադ, —շարունակեց նա, առանց թույլ տալու, որ ես խոսեմ։— Դու ցանկացար ինձ հետ առանձին խոսել. հասկացա քո միտքը և դրա համար գովում եմ քո խելացիությունը։ Բայց առանց քո խոսքերը լսելու, ես գիտեմ, թե դու ի՞նչ պիտի ասես ինձ։ Դու պիտի ասես, քավոր Պետրոս, այն բանալին, որ ես շինեցի քեզ համար, նրանով կատարվել է մի մեծ չարագործություն, գողացել են թանկագին իրեղեններ, և որպես հանցավոր, բռնվել են և պատժվում են անմեղ մարդիկ։ Դու պիտի ասես, քավոր Պետրոս, բանալին քո ձեռքումն էր գտնվում, ուրեմն, թե կասկածանքը և թե պատասխանատվությունը քեզ վրա է ընկնում։ Դու այնքան ազնիվ ես և բարեսիրտ, որ կպահանջես ինձանից, որ ես անպատճառ պատասխանատվությունը ինձ վրա առնեմ և ազատեմ անմեղ մարդիկներին դատաստանի բարբարոսություններից։ Իսկ եթե ես չլսեմ քեզ, դու այնքան անաչառ կլինես, որ չես թաքցնի չարագործությունը, կդիմես, որտեղ հարկն է, կմատնես ինձ, և կհայտնես բանալիի ամբողջ պատմությունը... Կարծեմ, ես նախագուշակեցի բոլորը, ինչ որ դու մտքումդ դրած ունեիր, այդպես չէ՞։

— Ուղիղ այդպես է։

— Սիրում եմ քո անկեղծությունը և ուրախանում եմ քո ճշմարտախոսության վրա։ Ես էլ, եթե քո տեղը լինեի, այդպես կվարվեի. ես էլ թույլ չէի տալ, որ չարագործությունը ծածկվեր, իսկ անմեղությունը նրա փոխարեն պատժվեր։

Ես չկարողացա իմ վրդովմունքը զսպել։

— Ուրեմն ինչո՞ւ թույլ տվեցիր, որ անմեղությունը պատժվի։ Մինչև այսօր ի՞նչ բանի էիք սպասում, որ ծածկեցիք չարագործությունը։ Մի՞թե ձեր պատճառով չէր, որ դժբախտ վարպետիս ամբողջ արհեստանոցը, կայքը, կալվածքը և բոլորը, ինչ որ ուներ, աճուրդով վաճառեցին, ու նրա ողորմելի ընտանիքը օրեկան հացի-կարոտ թողեցին։ Մի՞թե ձեր պատճառով չէ՞ր, որ խեղճ վարպետիս բանտի մեջ մաշեցին, իսկ հիմա, գուցե այս րոպեին, դատապարտյալների հրապարակի վրա, դահիճը կտրում է նրա ձեռքը։ Ինչո՞ւ թողեցիք, որ այդ բոլոր բարբարոսությունները կատարվեին, եթե դուք խիղճ ունեիք, եթե ձեր սրտումը աստուծո երկյուղը կար, եթե դուք հարգում էիք արդարությունը։ Իսկ այժմ, երբ բանը բանից անցել է, նոր եկել եք, ու իմ գլխին քարոզներ եք կարդում։

Նա պատասխանեց, պահպանելով յուր սառնասրտությունը.

— Իրավացի եմ համարում քո մանկական սրտի բարկությունը, շա՜տ իրավացի։ Դա մի լավ նշան է, որ դու բարոյապես փչացած տղա չես։ Բայց լսի՛ր, Մուրադ, լսի՛ր ցավալի իրողությունը։

Վերջին խոսքերը արտասանելու ժամանակ նրա զորավոր ձայնը սկսեց դողդողալ և աչքերումը հայտնվեցավ արտասուք։

— Այն խիթալի բանալին, որ դու շինեցիր ինձ համար, ես պահում էի իմ մոտ, իբրև մի անմոռանալի հիշատակ, որ հայրը կարող է ունենալ սիրելի որդուց։ Դա քո ձեռքի առաջին գործն էր և այդ պատճառով ինձ համար թանկագին էր։ Բայց երևում է, որ աստված կամեցել էր ինձ պատժել հենց այն բանով, որը իմ սրտին շատ մոտ էր։ Հանկարծ բանալին անհայտացավ։ Ո՞վ տարավ, որտե՞ղ կորավ,— մինչև այսօր մտածում եմ, մտածում և ոչնչով բացատրել չեմ կարողանում։ Նրա կորստից մի շաբաթ հետո կատարվեցավ քեզ հայտնի չարագործությունը։ Այն օրից ես ամեն տեղ ման էի գալիս, ամեն տեսակ հարց ու փորձ գործ էի դնում, գուցե մի հնարքով կարողանամ երևան հանել կատարված եղելության գաղտնիքը։ Բայց իմ բոլոր ջանքերը անցան ապարդյուն։ Այժմ ես մոլորված եմ տարակուսությունների մեջ. մտատանջությունը խեղդում է ինձ, չգիտեմ, թե ի՛նչ պիտի անեմ, չգիտեմ, թե ին-

չո՞վ կարող եմ քավել այն հանցանքը, որ ինքս չեմ գործել, այլ իմ միամտության պատճառով կատարվել է...

Նրա աչքերը դարձյալ լցվեցան արտասուքով։ Այդ խոսքերը արտասանում էր նա մի այնպիսի մեղմ, համոզիչ և անկեղծ եղանակով, որ կարծես, ինքը ճշմարտությունը խոսում էր նրա շրթունքներով։

Ես հավատացի։

Ես այն հասակում հիմար տղա չէի, բայց այնքան խելահաս ևս չէի, որ կարողանայի/նորին կերպով քննել քավոր Պետրոսի խոսքերը։ Ես գոնե այնքան հասկացողություն չունեի, որ հարցնեի նրանից,— լավ, դիցուք թե բանալին քո մոտից անհայտացավ, կամ մի ուրիշ մարդ գողացավ քեզանից։ Բայց այդ ուրիշ մարդը որտեղի՞ց կարող էր գիտենալ, որ քո մոտ մի այսպիսի բանալի էր պահված։ Դիցուք թե չգողացան, այլ դու կորցրիր։ Բայց գտնողը ինչպե՞ս կարող էր հասկանալ, որ այդ բանալին կբաց անե մի անհայտ երկաթե արկղի դռնակը, որը դրած է այսինչ ամրոցում։ Այդ հարցերից և ոչ մեկը չառաջարկեցի նրան, և ոչ հետաքրքիր եղա տեղեկանալու, թե այն ի՞նչ բանալի էր, որ դու առաջին անգամ տվեցիր ինձ և պատվիրեցիր նրա նմանը շինել։ Մի՞թե այդ բանալին հիշյալ արկղի իսկական բանալին չէ՞։ Ո՞վ տվեց քեզ իսկականը, կամ ի՞նչ նպատակով շինվեցավ երկրորդը։ Ինչո՞ւ էիր դու սկզբում ինձ ամենայն խստությամբ պատվիրում, որ իմ շինած բանալիի գոյության մասին ոչ ոքի հետ չխոսեմ, ոչ ոքի չհայտնեմ, մինչև անգամ իմ մորը։— Կրկնում եմ, որ այդ հարցերից և ոչ մեկը իմ մտքում չեկավ, որ առաջարկեի նրան։ Ես քարացածի նման մնացել էի ապշած, զարմացած, իմ ուղեղին տիրել էր մի տեսակ մթին թմրություն։

Նկատելով յուր խոսքերի ազդեցությունը, քավոր Պետրոսը մինչև անգամ ժամանակ չտվեց, որ ես կարողանայի մտածություններս ամփոփել և նրան մի բան ասել։ Նա շարունակեց.

— Այժմ, սիրելի զավակս, իմ խղճմտանքի վրա մի ծանր բեռն է դրված, ես քուն և հանգստություն չունեմ. գիշեր ու ցերեկ տանջվում եմ այն մտածությունով, որ իմ անխոհեմությամբ պատճառ եղա մի աղետալի գործի և շատերին դժբախտության մեջ ձգեցի։ Չգիտեմ, ինչո՞վ կարող եմ քավել այս մեղքը։

Ես սթափվեցա։

— Նրանով,— պատասխանեցի ես,— որ հենց այս րոպեիս պիտի գնանք դատավորի մոտ և հայտնենք նրան, թե մի՛ կորցրել տվեք այն անմեղ մարդու ձեռքը, որովհետև հանցավորը դուք եք։

— Ես այդ կանեի և մեծ հոժարությամբ կանեի, բայց նրա ձեռքը այլևս չեն կարող կտրել։

— Ինչո՞ւ։

— Այս առավոտ երբ գնացին, բանտից դուրս բերեն նրան և տանեն դատապարտյալների հրապարակի վրա վճիռը կատարելու, գտան բանտի դռները խորտակված, պահապաններից մի քանիսը սպանված, իսկ կալանավորը անհայտացած։

Իմ կյանքում ոչինչ ինձ այնքան չէ ուրախացրել, որքան ես ուրախացա, լսելով վարպետիս ազատության լուրը։ Ես իսկույն հիշեցի Կարոյի խոսքը, որ ասել էր ինձ, թե «մենք նրան կփախցրնենք...»։ Ընկերներս կատարեցին իրանց խոստմունքը, նրանք չխաբեցին ինձ։ Ես այդ մասին քավոր Պետրոսին ոչինչ չհայտնեցի, նկատելով, որ նա տեղեկություն չունի, թե ի՞նչ հնարքով կամ ո՞վքեր փախցրին նրան բանտից։ Միայն ասացի.

— Լավ, դիցուք թե նա փախչելով բանտից, դրանով կարողացավ յուր ձեռքը ազատել դահճի դանակից, բայց այնքան չարչարանքներ, այնքան վնասներ, որ կրեց նա, տունից, կայքից, հարստությունից զրկվեցավ,— այդ բոլորը ոչի՞նչ, դուք ձեզ մեղապարտ չե՞ք համարում այդ բոլորի մեջ։

— Համարում եմ, ինչպե՞ս չեմ համարում։ Ինձ այնպես է թվում, որ այդ բոլոր վնասները ես պատճառեցի նրան։ Եթե ես այն անիծյալ բանալին շինել չտայի, այդ վնասները նրան չէին հանդիպի։ Բայց միայն աստծուն հայտնի է, թե որքան անպարտ եմ ես...

Վերջին խոսքերի միջոցին նա ձեռքը տարավ դեպի մորուքը, և շապկի թևքը ետ քաշելով, երևան հանեց նրա մերկ բազուկը։ Ամեն անգամ այդ բազուկը տեսնելիս, ինձ տիրում էր մի սրբազան սարսուռ և սիրտս սկսում էր դողդողալ մի անբացատրելի հոգևոր երկյուղածությամբ։ Նրա վրա դրոշմված էր Երուսաղեմի վանքի սուրբ կնիքը, որը պատկերացնում էր յուր մեջ այն նվիրական տեղերը, որոնց հետ կապված են ամբողջ

քրիստոնյա աշխարհի սրտերը։ Իսկ ձեռքի վրա դրոշմված էր մի խաչ— սիրո և ողբերգության նշանը— Հիսուս Քրիստոսի ուխտի նշանը, որը պատվիրեց նա կրել, որպես մի հոգևոր զենք արդարության և ճշմարտության համար մարտնչելու։ Մի՞թե մի այսպիսի ձեռքը, որ կրում է յուր վրա այս քրիստոնեական զինվորության նշանը, ընդունակ կլինի չար գործելու։

Քավոր Պետրոսը մահտեսի էր։ Նա յուր կյանքում մի քանի անգամ այցելություն էր գործել Երուսաղեմի վանքը և յուր ձեռքերը, բազուկները դրոշմել էր սուրբ ուխտի կնիքով։

Երբ նրանից հարցրի՝ ուրեմն ի՞նչ հատուցում պիտի անեք այն անմեղ մարդուն, որին դուք թեև անգիտակցաբար դժբախտացրիք,— նա պատասխանեց.

— Ես այդ մասին մտածել եմ և վճռել։ Լսիր, Մուրադ, ես, ինչպես ասում են հեքիաթների մեջ, պետք է երկաթե ցուպ կրեմ ձեռքիս, պետք է երկաթե տրեխներ հագնեմ, վերջապես պետք է երկաթե շղթա անցկացնեմ պարանոցիս և երկրե-երկիր, աշխարհից-աշխարհ ման գամ, մուրացկանություն անեմ, փող հավաքեմ, որ նրա կրած վնասների փոխարենը վճարեմ, որպեսզի խիղճս հանգստացնեմ։

— Ուրեմն դուք վճռել ե՞ք գնալ օտար աշխարհ։

— Անպատճառ։

— Եվ ա՞յդ նպատակով։

— Այո՛, այդ նպատակով։

Ես հիացած մնացի նրա առաքինության վրա։

Ոգեկան մտածությունից հետո խոսեց նա.

— Ես քեզ խոստովանվեցա իմ բոլոր հանցանքը, խոստովանվեցա նաև, թե ինչով գիտավորություն ունեմ քավելու այդ հանցանքը։ Հիմա ես դառնում եմ դեպի քեզ, Մուրադ, դու խելացի տղա ես, դու հասկանում ես այնքան, որքան կարող է հասկանալ մի ազնիվ, հասակավոր մարդ։ Խոստովանվիր, քո խիղճը, քո սիրտը չէ՞ ասում քեզ, որ վարպետիդ դժբախտության մեջ դու նույնքան հանցավոր ես, որքան ես։ Այսինքն ուզում եմ ասել, որպես ես անգիտակցական պատճառ դարձա նրա անբախտությանը, այնպես էլ դու։ Կորստաբեր բանալին շինել տալու ժամանակ ես, իհարկե չգիտեի թե ո՛րպիսի չարիքների դուռն պիտի բաց անե նա. այնպես էլ դու չգիտեիր, երբ շինեցիր։ Ուրեմն մենք երկուսս էլ մեր անմեղությամբ՝

պատճառ դարձանք մի մեղավոր գործի։ Այդ մեղքը տարածվում է մեր երկուսի վրա։ Մի՞թե միասին չի պիտի քավենք նրան։

— Այո՛, միասին։ Բայց ես ի՞նչ կարող եմ անել։

— Ա՛յն, ինչ որ ես պիտի անեմ։ Դու անպատճառ պիտի գաս ինձ հետ, դու պիտի թողնես այդ երկիրը։ Լսիր, Մուրադ, քո վարպետը, իրավ է, ազատվեցավ պատժվելուց, փախավ բանտից, բայց դրանով գործը պետք է վերջացած չհամարել, ընդհակառակն, ավելի ծանրացավ։ Կառավարությունը այսուհետև ավելի խստությամբ կսկսե որոնել նրան և նրա մարդիկներին, որոնք նույնպես փախած են,— այսինքն քեզ։ Երբ քեզ բռնելու լինեն, այլևս փրկություն չկա, անպատճառ կախաղան կբարձրացնեն։ Այդ ես գիտեմ։ Քո անբախտ մայրը կմեռնի կսկիծից և քո հոր տան ճրագը իսպառ կհանգչի։ Եթե ցանկանում ես, որ քո կյանքը ապահով դրության մեջ լինի, պետք է անպատճառ հեռանաս այս երկրից։ Այստեղ պահվել չես կարող։ Կգնանք օտար աշխարհ, մի քանի տարի անց կկացնենք պանդխտության մեջ, փող կվաստակենք, հետո կվերադառնանք։ Մինչև մեր վերադարձը ամեն ինչ փոխված կլինի, ամեն բան մոռացված կլինի։ Պարսից դատարանների վճիռները ժամանակավոր են. փոխվեցան դատավորները, փոխվում են և վճիռները։ Ոչ ատենական դիվանագիտություն կա և ոչ որևիցե արձանագրություն։ Ներկա մարդը չգիտե, թե յուր նախորդի օրերում ինչեր են կատարվել։

Վերջացնելով յուր բացատրությունները, նա դարձավ դեպի ինձ, ուղիղ իմ երեսին նայելով.

— Ասա՛, համաձայն ես ինձ հետ գալու։

— Ես համաձայն եմ, բայց չգիտեմ, թե մայրս ինչ կասե։

— Մայրդ շատ ուրախ կլինի։ Նա գիտե, որ դու այստեղ մնալ կարող չես. միշտ պետք է թաքնված լինես, միշտ պետք է փախստականի կյանք վարես։ Իսկ այսպես ապրել անկարելի է։

— Ուրեմն դուք խոսեցեք մորս հետ։

— Ես անպատճառ կառնեմ նրա համաձայնությունը։

Գ

ՊԱՆԴԵՍՈՒԹՅՈՒՆ

Աշնան վերջը մոտեցավ։ Մեր գյուղը օրըստօրէ ստանում էր տխուր կերպարանք։ Տերևաթափ այգիները կորցրին իրանց գեղեցկությունը և մերկ դաշտերի գունաթափ երեսը ներկայացնում էր մի հիվանդոտ պատկեր։ Ամեն երևույթ տրամադրում էր դեպի տխրությունը։ Թռչուններն անգամ լուռ էին և շտապում էին շուտով թողնել այդ երկիրը, որ այլևս նրանց ուրախացնել կարող չէր։

Միևնույն զգացմունքներով լի էր և իմ սիրտը։ Հայրենի երկիրը ինձ համար բանտ էր դարձել։ Ինձ թվում էր, որ բոլոր շրջապատող առարկաները այնքան ծանրացել էին իմ վրա, որ ճնշում էին, խեղդում էին ինձ և շունչ առնելու հնար չկար։ Ես կորցրել էի իմ ազատությունը։ Ես մի անբախտ փախստական և դեռ չպատժված հանցավոր էի։ Դրսից նեղացնում էր ինձ օրենքի ահն ու երկյուղը, իսկ ներսից՝ խղճի խայթը...

Մայրս շուտով կարողացավ հասկանալ իմ դրությունը. նա խելացի կին էր, և մի օր դարձավ դեպի ինձ այս խոսքերով.

— Մուրադ, դու մեր երկրում անունդ կոտրեցիր... կեղծ դրամ դարձար... դու այլևս այստեղ չես մխսվի...

Այդ խոսքերի մեջ խառնված էր և՛ մոր սրտի կսկիծը, և՛ մի դառն հանդիմանություն, որի նմանը մինչև այսօր լսած չէի նրանից։

— Ես այդ զգում եմ, մայրիկ,— պատասխանեցի ես։— Ես այդ գիտեմ, որ կեղծ դրամը ճանաչված տեղում այլևս չի՛ մխսվի, բայց այդ դրությունից ազատվելու համար չգիտե՛մ, թե ինչ պետք է անեմ։

— Դու պիտի գնաս օտար աշխարհ, տացե աստված, որ այնտեղ օրինավոր մարդ դառնաս...

Արտասուքը թույլ չտվեց նրան շարունակել յուր խոսքը։ Նա թաշկինակը տարավ դեպի աչքերը, սկսեց դառն կերպով հեկեկալ։

Մայրս սկզբում ինձ բոլորովին անմեղ էր համարում. հավատացած էր, որ ես ոչնչով խառն չեմ վարպետիս արհեստանոցում կատարված գործի մեջ, և այդ պատճառով մխիթարվում էր, մտածելով, թե յուր որդին թեև հալածվում է, թեև կասկածանքի ենթակա է, բայց արդար է։ Իսկ սկսյալ այն րոպեից, երբ ես իմ անրջային տագնապի մեջ արտասանեցի այն աղետալի խոսքերը, թե «ես եմ շինել այն բանալին», այդ րոպեից նա համարում էր ինձ գող, ավազակ, կամ ավազակների ընկեր։ Ես առիթ չունեցա նրան բացատրելու գործի իսկությունը, որովհետև այդ մասին նա ինձ հետ չէր ախորժում խոսել, որովհետև նրա կոտրված սրտին խիստ ծանր էր լսել, յուր կարծիքով, արդեն փչացած, անբարոյականացած և հանցավոր որդու դառն խոստովանությունները... Այդ մասին նա խոսացել էր միայն քավոր Պետրոսի հետ, իսկ քավոր Պետրոսը ի՞նչ էր անել նրան, ինձ հայտնի չէր։ Միայն մորս վերջին խոսքերից, որ ասաց ինձ, թե «դու պիտի գնաս օտար աշխարհ, տացե աստված, որ այնտեղ օրինավոր մարդ դառնաս»,— ես հասկացա, որ արդեն վճռված էր իմ մասին հեռանալ հայրենիքից։ Ես հարցրի.

— Մինչև այսօր օտար երկիր չեմ տեսել. ո՞ւմ հետ գնամ։

Նա պատասխանեց.

— Մեր քավոր Պետրոսը գնում է, դու էլ պիտի գնաս նրա հետ։

Ես ուրախացա։ Իսկ այդ բառերը արյան հետ բխեցին մորս սրտից։ Մինչև այսօր հիշում եմ, թե որքան գունաթափ ու որքան տխուր էր նրա դեմքը այդ խոսքերը արտասանելու րոպեում։ Բարեսիրտ մայր, նրան խիստ դժվար էր բաժանվել, արդեն փչացած որդուց... Բայց մի՞թե փչացած էի ես։— Այդ հարցը դժբախտաբար մնաց անորոշ...

Մորս փոքրիշատե մխիթարում էր այն միտքը միայն, որ յուր որդուն հանձնում է մի փորձված և հավատարիմ բարեկամի ձեռքը, որպիսին քավոր Պետրոսն էր և հույս ուներ, որ մի այսպիսի մարդու ձեռքում օտարության մեջ ես կուղղվեի և «օրինավոր» մարդ կդառնայի։ Բացի դրանից, նա մտածում էր, որ թողնելով հայրենիքը (այսինքն իմ հանցանքի գործված տեղը) և առժամանակ գնալով հեռավոր աշխարհ, ես եթե «օրինավոր» մարդ ևս չդառնայի, գոնե իմ կյանքը կազատեի օրենքի և դատաստանի դատապարտությունից, որը, քավոր Պետրոսի ասելով, պիտի վերջանար կախաղանով։

Իմ մենտորի հետ մենք մի քանի օր առաջ արդեն վճռել

էինք իմ պանդխտության մասին։ Մեզ մնում էր միայն մորս համաձայնությունը։ Այդ ես այժմ կայացավ։ Էլ ի՞նչը կարող էր այնուհետև պահել ինձ հայրենի երկրում։ Բայց ես մոռացել էի մի բան— Սառայի սիրտը։ Մի՞թե կարող էի նրանից բաժանվել։ Այդ միտքը սկսեց տանջել ինձ։

Այն օրից, որ վերադարձել էի մեր գյուղը, ես պահվում էի Սառայենց տանը։ Սառան՝ ամեն կերպով մխիթարում էր իմ դժբախտությունը, գրկում էր, համբուրում էր ինձ, ծածկում էր ինձանից յուր տխրությունը, աշխատում էր միշտ ուրախ ձևանալ, որպեսզի ինձ ևս ուրախացնե։

Մինչև վերջին օրը նրանից ծածուկ էի պահում իմ օտար երկիր գնալու խորհուրդը։ Ես միշտ երևակայում էի, թե որքան ծանր ազդեցություն պիտի աներ խեղճ աղջկա սրտին, երբ հանկարծ կլսեր, որ ընդերկար բաժանվելու է ինձանից։ Բայց իմ ակնկալության հակառակ, նա շուտով հաշտվեցավ այդ մտքի հետ։

Այն գիշերը, որի առավոտյան ես պիտի ճանապարհ ընկնեի, նա մտավ իմ սենյակը։ Տխրամած դեմքից արդեն նշմարվում էր, թե սիրտը որպիսի ալեկոծության մեջ է։ Բայց աշխատում էր զսպել իր խռովությունը։ Կատարվող պատրաստություններից նա արդեն հասկացել էր բոլորը։

— Մուրադ,— եղավ նրա առաջին խոսքը,— դու գնում ես օտար երկիր և այդ մասին ինձ ոչինչ չե՞ս ասում։

— Դու որտեղի՞ց գիտես։

— Մանիշակն ասաց ինձ։

Մանիշակը իմ մեծ քույրն էր. երևում էր, մորիցս տեղեկանալով, հաղորդել էր Սառային։ Ես չթաքցրի նրանից, հայտնեցի, թե վաղ-առավոտյան, դեռ լույսը չծագած, պետք է ճանապարհ ընկնեմ։ Խորին ցավակցությամբ սպասում էի, որ նա կսկսեր լաց լինել, կսկսեր աղաչել, պաղատել, որ ես չբաժանվեմ, չհեռանամ նրանից։

Դրանցից ոչ մեկը չեղավ։ Սառան խելացի աղջիկ էր, ավելի խելացի, քան թե ներում էր նրա հասակը և կրթությունը։ Նա բոլորովին նախապատրաստված էր եկել ինձ մոտ, յուր սրտի բոլոր ամրությամբ և յուր հոգու բոլոր քաջությամբ։ Նրա արյունով լցված գեղեցիկ աչքերից նկատեցի ես, որ առաջուց թաքուն այնքան լաց էր եղել, այնքան տանջվել էր, որքան բա-

վական էր յուր սիրտը հանգստացնելու համար։ Իսկ ինձ մոտ աշխատում էր որքան կարելի էր սառնասիրտ երևալ, մխիթարել ինձ, որովհետև ես ավելի անբախտ էի, քան թե նա։

— Երևի, դու շատ պիտի տխրես, Սառա, որ ես գնում եմ օտար աշխարհ,— հարցրի ես։

— Ընդհակառակն, ես շատ ուրախ եմ,— պատասխանեց նա։— Օտար աշխարհ գնալով, դու միշտ իմը կլինես և ինձ համար կպահվես։ Իսկ այստե՞ղ...

— Այստեղ ի՞նչ կլինեմ։

— Այստեղ կարող եմ կորցնել քեզ...

Այդ երկյուղը հաշտեցնում էր Սառային ինձանից անջատվելու դրության հետ։ Նրա նշանածը մի հանցավոր էր, գատապարտության մատնված մի փախստական էր, բավական էր, որ բռնեին նրան, և Սառան այնուհետև հավիտյան պետք է զրկված լիներ սիրած տղամարդից։ Իսկ օտարության մեջ ես կպահվեի, այնտեղ չէր հասնի օրենքի և դատավորի ձեռքը. իմ կյանքը ապահովության մեջ կլիներ,— և այդ բավական էր Սառայի համար։

Նա միայն հարցրեց.

— Շա՞տ կուշանաս, Մուրադ։

— Աստված գիտե։ Կարելի է շատ...

Իմ պատասխանը չվախեցրեց նրան և խորին զգացմունքով պատասխանեց նա.

— Ես քեզ կսպասեմ, ես քեզ չեմ մոռանա... Ես քեզ միշտ կսպասեմ... եթե մինչև տասն տարի, քսան տարի էլ ետ չգալու լինես, ես դարձյալ կսպասեմ քեզ։ Իսկ դո՞ւ։

Ես երդվեցա, ասելով.

— Եթե ես քեզ մոռանալու լինեմ, Սառա, թող աստված էլ ինձ մոռանա։ Ես միշտ քոնն եմ եղել և քեզ համար կմնամ մինչև այն օրը, երբ աստված կրկին կարժանացնե մեզ միմյանց տեսնելու։

Նա մոտեցրեց ինձ յուր երեսը և մեր շրթունքը երկար չէին բաժանվում միմյանցից։ Հետո դրեց իմ գլխին յուր մատներով նախշած մի արախչին, տվեց մետաքսով բանված մի քսակ, որ նույնպես յուր ձեռագործն էր, և որը սովորաբար սալիս են հարսնացու աղջիկները իրանց ապագա ամուսիններին, երբ նրանք օտար աշխարհ են գնում իրանց բախտը փորձելու հա-

մար, որպեսզի նրանց աշխատանքն ու վաստակը արդյունավոր լինի։

— Ես ուրիշ բան չունեմ, Մուրադ,— ասաց նա խիստ զգալի կերպով.— դրանք քեզ մոտ հիշատակ եմ թողնում։

— Ապա ես ի՞նչ տամ քեզ հիշատակի համար։

— Քո սիրտը, այդ բավական է ինձ։

— Նա բոլորովին քեզ է պատկանում։

Աքաղաղները սկսեցին կանչել։ Գիշերի կեսից անցել էր արդեն։ Բայց Սառայենց տանը դեռ ոչ ոք չէր քնել։ Մայրս և քույրերս այնտեղ էին և Սառայի հոր հետ պատրաստում էին իմ ճանապարհի իրեղենները։ Նրանք գիտեին, որ Սառան ինձ մոտ է, բայց հակառակ տեղային սովորության, ծնողական բարի ներողամտությամբ թույլ էին տալիս մեզ, որ գոնե մեր բաժանման վերջին րոպեներում խոսեինք, երկար խոսեինք միմյանց հետ։

Երբ աքաղաղները երկրորդ անգամ սկսեցին կանչել, այդ միջոցին ներս մտավ Սառայի հայրը։

— Զավակս,— ասաց նա դառնալով դեպի ինձ, —ճանապարհ ընկնելու ժամանակ է։

Սառան այլևս չկարողացավ դիմանալ, թաշկինակով աչքերը բռնեց և դուրս եկավ սենյակից։ Հոր ներկայությամբ պարկեշտության կանոնները չէին ներում նրան ո՛չ ուրախանալ և ո՛չ լաց լինել սիրած տղամարդի համար։

Ես ապշած մնացի. չգիտեի ի՛նչ անել։

— Ճանապարհ ընկնելու ժամանակ է,— կրկնեց Սառայի հայրը։

— Այսպես վա՞ղ,— հարցրի ես մեքենայաբար։

— Դեռևս ուշ է,— պատասխանեց նա։— Դու այնպիսի ժամանակ պետք է ճանապարհ ընկնես, որ բոլոր գյուղացիները քնած լինեն, որ ոչ ոք քեզ չտեսնե։

Ես շուտով հագնվեցա և դուրս եկա այն սենյակը, ուր մայրս և քույրերս սպասում էին ինձ։ Այնտեղ եկավ և Սառայի հայրը։

— Ա՜խ, երանի թե գիտենայի, այսօր ինչպիսի օր է,— հարցրեց մայրս։

— Բարի է,— պատասխանեց Սառայի հայրը։— Տերտերից հարցրի, էֆեմերդիին մտիկ տվեց, ասաց բարի է, ճանապարհ

գնալու համար նոր հագուստ ձևել տալու համար, հրակներից արյուն բաց թողնելու համար և այլն։

Տեր հոր գուշակությունը բավական մխիթարեց մորս։ Նա մի ամբողջ շաբաթ զբաղված էր իմ ճանապարհի պատրաստություններով և սպասում էր մի բարի բոպեի, որ ես ոտքս դուրս դնեի հայրենական տնից։

Ոստիկանության ֆեդրաշները, սարվազները մեր տանը ոչինչ չէին թողել, բոլորը կողոպտել, բոլորը տարել էին։ Մնացել էր մի կով միայն, որի վրա մեր ընտանիքը դրել էր յուր ապրուստի հույսը։ Այդ կովը ևս մայրս վաճառել էր տվել և ինձ համար գնել էր մի ավանակ, որպեսզի ես ոտքով չճանապարհորդեմ, որպեսզի ես ճանապարհին չհոգնեմ։ Թանկագին մայր, տակավին որքա՜ն սեր, որքա՜ն գութ էր մնացել նրա սրտում դեպի անառակ, դեպի մոլորյալ որդին...

Կարգադրված էր, որ ես առանձին պետք է գյուղից դուրս գայի և մի նշանակյալ տեղում միանայի քավոր Պետրոսի հետ։ Այդ այն մտքով էր, որ քավոր Պետրոսին ճանապարհ դնողները կամ նրա բարեկամները ինձ չտեսնեին։

Իմ փոքրիկ խուրջինը դրեցին ավանակի վրա, և մենք դուրս եկանք բակի դռնից։ Գիշերային խավարը սարսափելի՜ էր։ Ամպամած երկնքի վրա ոչ մի աստղ չէր երևում։ Հանդարտ, առանց շշուկ բարձրացնելու մենք անցնում էինք դատարկ փողոցների միջով, աշխատելով չզարթեցնել դրացիներին։ Մայրս, քույրերս, Սառան և նրա հայրը երկար չբաժանվեցան ինձանից։ Նրանք եկան ինձ հետ, մինչև գյուղից դուրս եկանք և բավական հեռու գնացինք։ Վերջապես հասանք նշանակյալ տեղը, ուր քավոր Պետրոսը միայնակ կանգնած սպասում էր մեզ։ Ես երբեք չեմ մոռանա այն խոսքերը, որ բաժանման րոպեում մայրս արտասուքի հետ դուրս էր հղում.

— Հայրդ գնաց օտար աշխարհ և կորա՜վ, Մուրադ,— ասում էր նա ինձ յուր գրկում սեղմած ունենալով.— այժմ դու ես մնացել քո հոր օջախի միա՛կ հույսը... մի՛ մոռացիր, թե որքա՜ն թշվառություններ կրեցինք մենք... մի՛ մոռացիր, որ դու անբախտ մայր ունես և որբ մնացած քույրեր... Մեր ամենի հույսը քեզ վրա է դրված, Մուրադ, աշխատիր, որ մեզ խղճության մեջ չթողնես...

Հետո նա հանձնեց ինձ իմ մենտորին, ասելով.

— Որդուս քեզ եմ հանձնում, քավոր Պետրոս, նա հայր չունի, դու նրա վրա միշտ հայրական խնամք ես ունեցել։ Քո բարի խրատներով ուղղիր նրան, որ լավ մարդ դառնա, որ լավ անվան տեր լինի...

Քավոր Պետրոսը խոստացավ յուր աչքի լույսի պես կպահե, կպահպանե ինձ, և այնպիսի մարդ կդարձնե ինձ, որ ամեն մի տեսնող երանի կտա իմ հորն ու մորը, որ ինձ նման խելացի և շնորհալի զավակ ունեն։

Բաժանման րոպեն հասավ։ Ես մոտեցա Համբուրեցի Սառայի հոր աջը։ Նա ևս յուր կողմից շատ խրատներ տվեց ինձ և շատ բաներ ասաց։ Ես բոլորը մոռացա, միայն մի խոսք հիշում եմ մինչև այսօր, երբ նա յուր դատեր ձեռքը տալով իմ ձեռքի մեջ ասաց.

— Զմոռանաս դրան, Մուրադ, դրա սերը պետք է առաջնորդե քեզ հառաջադիմության ճանապարհի վրա. դրա սերը պետք է վառե քո եռանդը, պետք է ուժ և զորություն տա քեզ արիությամբ անցնելու այն բոլոր խոչընդոտները, որ պիտի հանդիպեն քեզ քո պանդխտության մեջ...

Մայրս կրկին և կրկին անգամ համբուրեց ինձ։ Քույրերս սկսեցին լաց լինել, երբ տեսան մայրը լաց էր լինում, ես նույնպես չկարողացա պահել իմ արտասուքը։ Համբուրեցի քույրերիս, համբուրեցի Սառային... Մենք բաժանվեցանք։ Նրանք երկար կանգնած նայում էին մեր ետևից, բայց գիշերային խավարը թույլ չէր տալիս միմյանց տեսնել...

Դ

ԿԵՂԾ ՀԱՋԻՆ

Քավոր Պետրոսը մոտ հիսուն տարեկան մարդ էր, բավական համակրական դեմքով։ Խորշոմը նրա լայն ճակատի վրա խորին ծալքերով իջել էր մինչև թավամազ հոնքերը, որ կիսով չափ ծածկում էին նրա սև և կրակոտ աչքերը։ Թխագույն, արևվելյան երեսը յուր խոշոր, բայց կանոնավոր գծագրությամբ, միշտ պատկառանք էր ազդում նայողի վրա։ Գլխի երկայն մազերը ալեխառն խտությամբ թափվում էին մինչև նրա ուսերը, այդ տալիս էր նրա դեմքին ավելի մի խստակյաց դերվիշի կերպարանք, որ յուր սրտի խաղաղությունը գտնում է միայն մշտական աղոթքի և ճգնությունների մեջ։ Սպիտակ մորուքը խիստ փառավոր էր, հովանավորում էր նրա ամբողջ կուրծքը։ Միջակ հասակ ուներ, բայց սաստիկ ամուր կազմվածքով։ Նրա շարժմունքը արտահայտում էր երիտասարդական առույգություն, թեև ինքը աշխատում էր միշտ թույլ և տկար ձևանալ։ Ձայնը զորավոր էր և ազդու, բայց նա դիտմամբ միշտ խեղդում էր յուր ձայնը։

Մենք երկուսս էլ գնում էինք ոտով. մեր ճանապարհի ծանրությունները տանում էին երկու ուժեղ ավանակներ, որոնցից մեկը ինձ էր պատկանում, իսկ մյուսը՝ նրան։ Քավոր Պետրոսը գլուխը խոնարհեցրած, դանդաղ քայլերով գնում էր ինձանից առաջ։ Նա բոլորովին լուռ էր. երևում էր, որ դառն մտածություններ տանջում էին նրան։ Շատ անգամ այդ ողորմելին ոտքը դուրս էր դրել հայրենական երկրից, իսկ այժմ ուղիղ տասներորդ անգամն էր, որ յուր ծերության հասակում կրկին ձեռքն էր առել պանդխտության գավազանը։

Ես նույնպես տխուր էի. ծնողներից, սիրելի բարեկամներից անջատվելը ինձ մեծ ցավ էր ազդում։ Արդյոք մյուս անգամ կտեսնեի՞ նրանց,— և ե՞րբ... Ուրախ էր միայն իմ մոխրագույն ավանակը. ճանապարհի եզերքից խոտեր արածելով, նա առաջ էր վազում, առանց սպասելու, որ ես նրան քշեի։ Մեր ճանապարհորդական զենքերը կազմված էին մի-մի հատ հաստ ցուպից, որ բռնած ունեինք ձեռքներիս։ Ավազակներից երկյուղ անգամ կրել ավելորդ էր, որովհետև բացի ավանակներից, նրանք չէին գտնի մեզ մոտ մի բան, որ փոքրիշատե արժեք ունենար։ Իսկ այդպիսի ստոր անասունները նրանք չեն տանում։

Ամբողջ օրը եղանակը պարզ էր, բայց երեկոյան սկսեց անձրև և ճանապարհի վրա գոյացավ սաստիկ ցեխ։ Ես իմ տրեխները հանեցի, գնում էի բոբիկ ոտքերով։ Խեղճ անասունները դժվարությամբ էին կարողանում փոխել իրանց քայլերը, որովհետև նրանց սուր-սուր սմբակները թաղվում էին կավի մեջ, էլ չէին դուրս գալիս։ Ես շատ տխրեցա, երբ նկատեցի, որ ավանակիս երկայն ականջները սկսեցին հետզհետե քաշ ընկնել։ Դա պարզ նշան էր, որ նա բոլորովին հոգնեցավ։

Գիշերից բավական անցել էր, երբ հասանք մի պարսկական գյուղ։ Բոլոր դռները կողպված էին, դրսում ոչ ոք չէր երևում։ Այստեղ պետք էր իջևանել, որովհետև թե մենք և թե մեր անասունները սաստիկ հոգնած էինք. այլևս առաջ գնալ անհնարին էր։ Բայց ո՞ր դռանը մոտենում էինք, թակում էինք, թակում, ոչ ոք չէր ուզում բաց անել, երբ իմանում էին, որ մենք քրիստոնյաներ ենք։ Անձրևը հեղեղի նման թափվում էր. ես մինչև ոսկորներս թրջված էի։ Այդ դրության մեջ քրիստոնյային անկարելի էր մտնել մահմեդականի տունը. յուր հպավորությամբ կարող էր ամեն ինչ պղծել։ Սառն քամին սկսեց սաստկանալ, ցրտից դողում էինք թե ես և թե քավոր Պետրոսը։

— Այդ անպիտանների հետ պետք է ուրիշ կերպ վարվել... — ասաց քավոր Պետրոսը և մոտեցավ մի մեծ տան դռանը, սկսեց սաստիկ կերպով բախել։

Ներսից հարցրին.— ո՞վ է։

Քավոր Պետրոսը բարկությամբ պատասխանեց.

— Մուսուլմաններ, մեղք չէ՞ ձեզ համար, որ իսլամի որդիքը անձրևից ու ցրտից մեռնում են, իսկ դուք ձեր դռները չեք բաց անում նրանց առջև։

Ես սարսափեցա, տեսնելով, որ իմ մենտորը իրան ձևացնում էր մահմեդական։ Նա ինձ հրամայեց ոչինչ չխոսել, միշտ լուռ մնալ և ձևանալ որպես խուլ ու մունջ։ Շուտով դռները բացվեցան. մեր չորքոտանիքը տարան ախոռը, իսկ մեզ հրավիրեցին մի բավական մաքուր սենյակ։ Տան սարքուկարգից երևում էր, որ մեր հյուրընկալը գյուղի հարուստներից մեկը պետք է լիներ։ Իսկույն բուխարին վառեցին, մենք տաքացանք և չորացրինք մեր թրջված հագուստները։ Հայտնվեցավ և տան տերը, խորին ներպով ողջունեց մեզ, որպես մահմեդականը ողջունում է մահմեդականին, և նստեց քավոր Պետրոսի մոտ։ Հետո տեղային քաղաքավարության ձևերով հայտնեց յուր ուրախությունը, որ մենք «բարով ենք եկել, հազար բարով, յուր տուն-տեղը մեզ փեշքեշ է (նվիրված է) և յուր որդիքը մեր ծառաներն են» և այլն։

Վերջացնելով յուր փոքրիկ ճառը, նա դարձավ դեպի քավոր Պետրոսը, ասաց.

— Ամոթ չլինի հարցնելը, ինչպե՞ս է ձեր անունը։

— Ձեր ծառա Հաջի-Ռահիմ,— պատասխանեց քավոր Պետրոսը։

Տեսնելով, որ յուր հյուրը հաջի է և ոչ հասարակ մահմեդական, տան տիրոջ հարգանքը ավելի ևս բազմացավ դեպի քավոր Պետրոսը։ Բայց ծիծաղը ինձ խեղդում էր. ես չգիտեի, թե ինչո՞վ կվերջանա այդ խայտառակությունը։ Իսկ քավոր Պետրոսը իրան այնքան ծանր էր պահում, որ չէր կարելի չհարգել նրան։ Ես ոչինչ չէի խոսում, որովհետև պատվիրված էր խուլ ու մունջ ձևանալ։ Տան տերը նկատելով իմ լռությունը, հարցրեց քավոր Պետրոսից.

— Դա ձեր ի՞նչն է։

— Ձեր փոքրիկ ստրուկը,— իմ որդին է։

— Աստված պահե, զորանա,— ասաց տան տերը, հետո դարձավ դեպի ինձ, հարցնելով.

— Դու, երևի, մրսեցա՞ր անձրևից, դեմքդ խիստ գունատ է երևում։

Ես ոչինչ չպատասխանեցի։ Քավոր Պետրոսը իմ փոխարեն ասաց.

— Նա խուլ ու մունջ է. ոչինչ չէ լսում։

— Խե՞ղճ տղա, աստված ողորմություն անե,— բացականչեց տան տերը ցավակցական եղանակով և ապա հարցրեց.

— Մորից այդպե՞ս է ծնված, թե հետո է պատահել։

— Մորից այդպես չէ ծնված, առաջ նա սոխակի լեզու ուներ, լսում էր, խոսում էր, ինչպես մենք ենք։ Ուղիղ երկու տարի է, ինչ որ պատահել է այդ անբախտությունը։ Թող աստված հեռու պահե քո զավակներից։ Իմ մեղքերի համար աստված պատժեց ինձ...

Հետո քավոր Պետրոսը հնարեց մի ամբողջ պատմություն, թե որպես չար սատանաները ամեն գիշեր երևում էին ինձ, սարսափելի տեսարաններ էին ներկայացնում իմ աչքերի առջև և սաստիկ վախենալուց իմ ականջները փակվեցան և իմ լեզուն կապվեցավ։

Այդ պատմության միջոցին, որի մեջ քավոր Պետրոսի ճարտար լեզուն ահ և սարսափ էր ազդում լսողի վրա, ես նկատում էի, թե որպես զարհուրած տան տիրոջ երկար մորուքը շարժվում էր, և նա լռությամբ կարդում էր աղոթքի նման մի բան։

— Հիմա ո՞ւր եք տանում դրան,— հարցրեց նա։

— Տանում եմ Սեիդ-Հաջինի մզկիթը,— պատասխանեց քավոր Պետրոսը։— Սուրբ Իմամը, ինձ երազի մեջ հայտնվելով, ասաց, որ որդուս փրկություն կլինի, եթե այնտեղ կտանեմ։

Սեիդ-Հաջինի մզկիթը մեծ համարում ուներ մահմեդականների մեջ յուր հրաշագործ զորությամբ։ Այնտեղ տանում էին ղխավորապես խելագարներին և խուլ ու մունջերին։ Բայց տան տիրոջ համարումը ավելի մեծ եղավ դեպի քավոր Պետրոսը, երբ լսեց, որ «սուրբ Իմամը» հայտնվել էր նրան երազի մեջ և խոսացել էր նրա հետ։

Բոլոր ժամանակ նրանք խոսում էին թուրքերեն։ Քավոր Պետրոսի թե արտասանության և թե բառերի դարձվածքների մեջ չէր կարելի նկատել, որ նա հայ էր. նա խոսում էր ավելի լավ, քան թե մի թուրք։ Եվ այդ իսկ պատճառով նա հրամայեց ինձ լռության դեր կատարել, միգուցե իմ մի անզգույշ խոսքով ես մերկացնեի մեր հայությունը։

Վերջապես տան տերը հրամայեց, որ ընթրիք տան։ Քավոր Պետրոսը հայտնեց, որ նա դեռ յուր երեկոյան նամազը չէ կատարել և չէ կարող առանց ազոթելու սեղան նստել։ Նրան տվեցին նամազ անելու համար պետք եղած պարագայքը, նա լվացվեցավ, և մաքրության ծեսեր կատարելուց հետո, սկսեց խորին ջերմեռանդությամբ, աղոթել։ Ես զարմանում էի, թե որտեղի՞ց գիտեր նա այդ բոլորը։ Մահմեդականի նամազը կատարվում է արաբական լեզվով։ Աղոթելու եղանակը, երկրպագությունները որոշված կարգեր ունեն։ Մաքրության կամ լվացվելու ծեսերը նույնպես առանձին կանոններ ունեն։ Պետք է բոլորի մեջ ճշտություն պահպանել։ Մի փոքրիկ սխալ կարող է «բաթիլ» անել (ոչնչացնել) նամազը։ Բայց որտեղի՞ց, ե՞րբ էր սովորել քավոր Պետրոսը այդ արարողությունները։

Քավոր Պետրոսի բարեպաշտությունը այն հետևանքն ունեցավ, որ ավելի գրավեց մեր հյուրընկալի համակրությունը։ Կրոնին և հավատքին հավատարիմ մարդիկ խիստ հարգելի են մահմեդականների մեջ։ Այդ հարգանքի արտահայտությունը ավելի նկատելի էր ընթրիքի ճոխության մեջ։ Բացի զանազան ուտելիքներից, մեզ համար պատրաստել էին և փլավ։

Երբ սեղանը պատրաստ էր, քավոր Պետրոսը հարցրեց տան տերից, թե յուր կյանքում սուրբ տեղերից ո՞րին ուխտ է

գնացել։ Երբ պատասխանը ստացավ, թե ոչ մեկին,— նա հրաժարվեցավ սեղանից, ասելով.

— Քո հացը հարամ (անսուրբ) է, ես ուտել չեմ կարող։ Դու մեղանչել ես շարիաթի դեմ։

Տանը տերը սաստիկ ամաչեց, սկսեց աղաչել, որ յուր սեղանը չանպատվե, խոստացավ, որ գարունքին անպատճառ կգնա Բաղդադ իմամների գերեզմանները համբուրելու և Քարբալայի ուխտը կատարելու։ Պատմեց, թե որպիսի արգելքներ մինչև այնօր զրկել էին նրան սուրբ տեղերի ուխտագնացությունից։

Քավոր Պետրոսը փոքր-ինչ հանգստացավ, ասելով.

— Ամեն մի ուղղափառ մուսուլմանի պարտականությունն է, երբ նրա նյութական միջոցները այնքան ներում են, որ կարող է հոգալ ճանապարհի ծախքը, պետք է անպատճառ կատարել սուրբ տեղերի ուխտագնացության խորհուրդը։

Այնուհետև սկսեց երկար բացատրել, թե ո՞րպիսի հոգևոր վարձատրություններ են սպասում Քարբալայի, Մեշեդիի և մանավանդ Մեքքայի ուխտավորներին,— պատմեց, թե ո՞րքան հյուրիներ (հրեղեն աղջիկներ) պիտի ստանան նրանք Մուհամմեդի դրախտում, և վերջացրեց յուր խոսքերը նրանով, թե «անհավատ քրիստոնյաները զրկվում են այդ բոլոր երկնային երանություններից...»։

Վերջին խոսքերը ինձ վրա այնպիսի վատ ներգործություն ունեցան, որ ուզում էի փակված լեզուս բաց անել և հայտնել, թե դա ինքը քրիստոնյա է, բայց խաբեությամբ իրան մահմեդական է ձևացնում։ Բայց վախեցա, մտածելով, թե ո՞րպիսի վտանգի կարող էինք ենթարկվել երկուսս էլ։

Քավոր Պետրոսը մեծ ախորժակով ուտում էր։ Ես սկզբում սեղանին չմոտեցա, ոչ այն պատճառով, որ տան տերը սուրբ տեղերը ուխտ չէր գնացել և ես նրա հացը հարամ էի համարում, ոչ, —այլ այն օր պաս էր, ես երբեք պասս չէի լուծել։ Կրոնի և եկեղեցու պատվերները ամենայն մաքրությամբ դեռ պահպանվում էին իմ մեջ։ Բայց քավոր Պետրոսը իմ վարմունքը նկատելով, ինձ այնպես խստությամբ աչքով արեց, որ ես ակամա ստիպվեցա ուտել...

Ընթրիքից հետո մեզ համար մաքուր անկողին պատրաստեցին, որ հանգստանանք։ Երբ մտա իմ մահիճը, երկար քնել

չկարողացա, թեև սաստիկ հոգնած էի։ Զանազան մտածություններ ալեկոծում էին իմ սիրտը։ Երբեմն մտածում էի, թե ի՞նչ կլինի մեր դրությունը, երբ տան տերը հանկարծ հասկանա, որ յուր սենյակում պառկած են երկու քրիստոնյաներ։ Նա այդ տեղաշորերը պղծված համարելով, այրել կտա, և գուցե մեզ ևս կայրեն նրանց հետ։ Եվ ինչի՞ համար ուրանալ կրոնը, ուրանալ ազգությունը։ Նրա համա՞ր միայն, որ մի կտոր հաց և պառկելու տեղ ստանալ։ Մի՞թե դրանք են պանդխտության, գաղթականության պայմանները,— ինչ ազգի մոտենալ, այն ազգից ձևանալ... Իմ ճանապարհորդությունը հենց առաջին իջևանից ինձ անտանելի դարձավ։ Մտածում էի, ավելի լավ չէ՞ր լինի, որ իմ հայրենի գյուղից չհեռանայի։ Թո՛ղ այնտեղ բրոնեին, չարչարեին, սպանեին ինձ։ Գոնե հայի անունով կմեռնեի։

Քավոր Պետրոսը նույնպես անքուն էր։ Նա, երևի, նկատեց իմ անհանգստությունը, թե ո՛րպես անդադար մի կողքից դեպի մյուսը շուռ էի գալիս, անդադար հառաչանք էի արձակում, ա՛խ ու վա՛խ էի անում և հոգվոց էի հանում։ Նա հարցրեց.

— Ինչո՞ւ չես քնում, Մուրադ։

Ես փոխանակ պատասխանելու, սկսեցի հեկեկալ։ Նա հասկացավ իմ լացի պատճառը և ասաց առածի ձևով.

— Չէ, դավակս, այսուհետև ինչ ազգի մեջ որ մտնելու լինես, պետք է այն ազգի փափախը ծածկես։ Այդպես է աշխարհի կարգը...

Ես հարցրի.

— Մեղք չէ՞ արդյոք, որ մարդ յուր սուրբ կրոնը, յուր ազգությունը ուրանում է։

Նա պատասխանեց ինձ Պողոս առաքյալի խոսքերով, թե ինչպես նա հրեաների մոտ հրեա էր ձևանում, իսկ հեթանոսների մոտ՝ հեթանոս, որ նրանց սրտերը շահեն։

Քավոր Պետրոսը կարդացած մարդ էր։ Ես նրա խոսքերը, որպես ասում են, հալած յուղի պես ընդունեցի։ Այն ժամանակ այնքան հասկացողություն չունեի, որ գիտենայի, թե ինչպե՞ս մարդիկ սուրբ գրքերի ամենապարզ ճշմարտությունները աղավաղում են և նրանցով բացատրում են ամենաանբարոյական մտքեր...

Ե

ՓՈՔՐԻԿ ՄԱՔՍԱՆԵՆԳԸ

Մեր ճանապարհորդության չորրորդ օրը հասանք Թաբրիզ քաղաքը, իջևանեցինք հայոց եկեղեցու բակում։

— Այժմ պետք է մտածել փողի մասին...— ասաց քավոր Պետրոսը, և կիրակի օրը վաղ առավոտյան, ինձ յուր հետ առնելով, սկսեցինք գնալ եկեղեցու երեսփոխանի տունը։

— Այնտեղ կարո՞ղ եմ խոսել, թե դարձյալ պետք է խուլ ու մունջ ձևանամ և թաքցնեմ իմ հայությունը,— հարցրեցի ես քավոր Պետրոսից։

— Կարող ես խոսել,— պատասխանեց նա ժպտալով,— և լավ հայ պիտի ձևանաս։

Բայց իմ խոսելը պետք չեղավ, որովհետև քավոր Պետրոսը ինձ ներս չտարավ երեսփոխանի մոտ, այլ հրամայեց սպասել դրսում, իսկ ինքը միայնակ ներս մտավ։ Չգիտեմ ի՞նչ խոսեց նրա հետ, ի՞նչ ասաց, միայն այդքանը հիշում եմ, որ այն օրը եկեղեցում քահանան մեր մասին ժողովրդին «ծանուցում» արեց, որի մեջ հայտնեց այն միտքը, թե մենք Մուշի երկրիցն ենք եկել, թե մեր կնիկները, զավակները «անհավատների» ձեռքում գերի են ընկած, այժմ բարեպաշտ քրիստոնյաներից ողորմություն ենք հավաքում, որ տանենք տանք «անհավատներին» և մեր գերիներին ազատենք և այլն։— «Դարձյալ խաբեբայությո՞ւն»...», մտածեցի ես խորին վրդովմունքով։

Որքան էլ սուտ լինեին այդ խոսքերը, այսուամենայնիվ, ժողովրդի վրա խորին տպավորություն գործեցին։ Տեր հայրը այնպիսի ազդու եղանակով նկարագրեց մեր գերիների ողբալի դրությունը, որ բոլոր լսողների մեջ ցավակցություն շարժեց։ Քարոզից հետո եկեղեցում գանձանակ ման ածեցին և մեզ համար փող հավաքեցին։ Իսկ մենք մուրացկանի նման, գլուխներս ծռած, կանգնած էինք եկեղեցու դռան մոտ. քավոր Պետրոսը աջ կողմում, իսկ ես ձախ կողմում։ Ժամավորները դուրս գալու միջոցին ձգում էին մեզ սև փողեր։ Այդ առաջին անգամն էր, որ ես, քավոր Պետրոսի հորդորանքով, ստիպված էի ձեռքս մեկնել և ողորմություն խնդրել... Ամոթը խեղդում էր ինձ։ Որքան ցածությո՞ւն էր։ Խաբե՛լ և մուրալ...

Այն օրը ես խելագարի նման էի և միշտ լաց էի լինում։ Բայց քավոր Պետրոսը մխիթարում էր ինձ,— ասելով,— «Ղաբիբի երեսը սև կլինի, իսկ ջիբը—լիքը...»։

Մյուս օրը մենք արդեն փող ունեինք։ Մեր ամենահարկավոր գնելիքը արտասահման գնալու համար՝ էր անցագիրը։

— Գիտե՞ս, Մուրադ,— ասաց ինձ քավոր Պետրոսը,— օտարության մեջ հաջողակ կերպով թափառելու համար ավելի լավ է մտնել ուրիշի մորթու մեջ։

Ես ոչինչ չհասկացա։ Նա բացատրեց.

— Պետք է անունդ, ազգանունդ, ծնած տեղդ, պարապմունքիդ անունը,— բոլորը փոխես։

Ես ապշած մնացի։ Նա շարունակեց։

— Քո անունը այսուհետև Մուրադ չէ, դու կոչվում ես Ամբրոսիոս։ Քո պարապմունքը, քո արհեստը դարբնություն չէ, դու այսուհետև եկեղեցու պաշտոնյա ես, դու սարկավագ ես։ Քո ծնված տեղը Սալմաստը չէ, դու երուսաղեմցի ես։

Եվ ուրիշ այսպիսի շատ բաներ ասաց նա, թե ի՞նչ էի ես և ի՞նչ պիտի լինեմ այսուհետև. բայց ես չթողեցի նրան վերջացնել, ընդհատեցի նրա խոսքը, հարցնելով.

— Լա՜վ, ինչպե՞ս կարող եմ ես սարկավագ լինել, որ ամենևին կարդալ չգիտեմ, և երբեք եկեղեցում չեմ երգել։

— Այդ միևնույն է,— պատասխանեց նա արհամարհանքով.— քեզ ինչ որ ասում են, այն լսի՛ր։

— Իսկ քո անունը և կոչումը ինչ պիտի լին՞։

— Իմ անունը Անտոնիոս է. ես հույն աբեղա եմ և Երուսաղեմի վանքի միաբան։

— Ե՞ս էլ հույն եմ։

— Դու էլ հույն ես։

Դարձյալ ազգուրացությո՞ւն...

Ես չհակաճառեցի։ Ես հավատացի նրան, որ օտարության մեջ թափառելու համար այդ բոլոր պայմանները անհրաժեշտ էին։ Այնօր Թուրքա հյուպատոսից անցագրեր ստացանք միևնույն անուններով, որ մեր մեջ որոշել էինք։ Բայց զարմանալին այն էր, որ քավոր Պետրոսը հենց առաջուց ուներ յուր մոտ երկու անցագրեր միևնույն անուններով. միայն հնացել էին, ժամանակները անցել էր։ Նա տարավ հյուպատոսի մոտ և նորը ստացավ։

Բայց քավոր Պետրոսը հիշյալ երկու անցագրով չբավականացավ։ Նա աշխատում էր ձեռք բերել զանազան անցագրեր զանազան անուններով, այլ և այլ պարապմունքներով։ Թաբրիզում, Ատրպատականի այդ մեծ մայրաքաղաքում, այդ բոլորը հնարավոր էր։ Այնտեղ կային եվրոպական պետությունների բոլոր ներկայացուցիչները, որոնցից կարելի էր անցագրեր ստանալ։ Այնտեղ կային այլ և այլ պետության հպատակներ, որոնք պարապվում էին զանազան գործերով, որոնք կարող էին իրանց անուններով անցագրեր վեր առնել, տալ ուրիշներին, որ ուրիշները նրանցից օգուտ քաղեին, իսկ իրանք դարձյալ կմնային Թաբրիզում։ Բայց քավոր Պետրոսը գնեց մեծ քանակությամբ պարսկական անցագրեր։ Դրանք վաճառվում էին այնպես, ինչպես վաճառվում են տերության դրոշմավոր թղթերը։ Բավական էր ուղարկել պատահած մարդու ձեռքով անունների մի ցուցակ (իհարկե, նշանակելով յուրաքանչյուր անունի ներքո տարիքը, հասակը, դեմքը և այլն) և նա կտաներ թեսքիրաջիի մոտ, և նույն անունների համեմատ կգներ զանազան անցագրեր։ Թեսքիրաջի կոչում էին անցագրերի կապալառուին։

Չնայելով, որ քավոր Պետրոսը մի քանի օր առաջ իբրև մուրացկան կանգնած էր հայոց եկեղեցու դռանը և ձեռքը մեկնում էր ամեն մի անցնողին, բայց երևում էր, որ նա առաջուց ուներ յուր մոտ մի փոքրիկ գումար։ Նա գնեց մեծ քանակությամբ զանազան տեսակ անցագրեր։ Ես զարմանում էի, թե ի՞նչ նպատակի կարող էին ծառայել դրանք։ Մեզ բավական էր երկուսը միայն, և ունեինք արդեն, իսկ մնացածները ո՞ւմ համար էին։ Երբ հարցրի նրանից, նա ինձ ոչինչ չպատասխանեց։ Մեկի վրա գրած էր՝ «սպահանցի ակնաբույժ Հաջի-Արդուլ-Հուսեին-Ղուլի-էֆենդի», մի ուրիշի վրա գրած էր՝ «խորասանցի ակնավաճառ Մաշադի-Մուհամեդ-Ղուլի աղա»։ Բայց ինձ շատ չէին հետաքրքրում այդ զանազան անունները, ինձ գրավեց մի այլ բան։

Մի օր քավոր Պետրոսը ինձ յուր հետ առնելով, գնացինք Թաբրիզի բազարը։ Այնտեղ գնեց նա զանազան տեսակի էժանագին իրեղեններ, որպիսիք են՝ թել, ասեղ, հասարակ մատանիներ, ապակուց շինած գույնզգույն հուլունքներ, երեխաների խաղալիքներ, կանանց երեսը ներկելու դեղեր և այլ տեսակ վաճառքներ։ Այդ բոլորը այնպես փայլուն և խայտաճաճուկ

ձերպով պատրաստված էին, որպես գիտե եվրոպացին ասիական ազգերի ճաշակին յուր վաճառքները հարմարացնել։ Ամբողջ մթերքը եղավ մի փոքրիկ արկղիկ, բացի դրանից, քավոր Պետրոսը գնեց մի պարկի մեջ բավական մաստաք։ Այդ ամենը շալակած, ես հասցրի մեր իջևանը, որ եկեղեցու բակումն էր։

Նույն օրվա գիշերը նա ասաց ինձ.

— Մուրադ, այն գումարը, որ եկեղեցում հավաքվեցավ մեր գերիների փրկության համար, ես բոլորը քեզ եմ ընծայում, թե իմ մասը և թե քո մասը։ Այդ գումարով ես գնեցի այն իրեղենները, որ դու այսօր բազարից տուն բերեցիր։ Այդ իրեղենների վրա դու պիտի փորձես քո բախտը, թե ո՞րքան կհաջողվի քեզ առևտրական գործունեությունը։

Ես զարմացա քավոր Պետրոսի առատաձեռնության վրա։

— Ես երբեք վաճառականություն չեմ արել,— ասացի նրան։

— Կսովորես...— ասաց նա և հրամայեց բերել մեր ավանակների փալանները։

Իսկույն վազեցի ախոռատունը և բերեցի փալանները։ Ես մինչև այսօր չեմ կարող զսպել իմ ծիծաղը, թե որպիսի խորամանկությամբ այդ հին մաքսանենգը սովորեցրեց ինձ, թե որպես պետք էր զանազան վաճառքներ փախցնել մաքսատնից։ Նա իմ ավանակի փալանի միջի եղած հարդը դուրս հանեց, և ինձ համար գնած իրեղենները մի այնպիսի ճարտարությամբ դարսեց հարդի տեղը, որ մաքսատան ամենահմուտ ծառայողն անգամ չէր կարող երևակայել, որ նրա մեջ կարող էին գտնվել թաքցրած ապրանքներ։ Բայց յուր ավանակի փալանի մեջ թաքցրեց նա ուրիշ իրեղեններ, որ ես տեսնել չկարողացա...

Մյուս օրը առավոտյան մենք թողեցինք Թաբրիզը։ Չորրորդ օրը հասանք Երասխ գետին, որ բաժանում էր պարսից հողը Ռուսաստանից։ Մենք պետք է անցնեինք Ջուլֆայի կարանտինից, որ ռուսաց հողի վրա էր գտնվում։ Այստեղ էր և ռուսաց մաքսատունը։

Քավոր Պետրոսը տեսավ մի քանի պարսկաստանցի աղքատ հայեր, որոնք նույնպես կամենում էին անցնել սահմանը, բայց անցագիր չունենալու համար մնացել էին պարսից հողի վրա։

— Ո՞ւր պիտի գնաք,— հարցրեց նրանցից քավոր Պետրոսը։

— Գնում ենք Նախիջևանի, Երևանի կողմերը,— պատասխանեցին նրանք։

— Ի՞նչ գործով։

— Մշակություն անելու։

— Ապա ինչո՞ւ եք մնացել այստեղ։

— Անցագրի փող չունենք։

Քավոր Պետրոսը ասաց, թե ինքը ունի մի քանի ավելորդ անցագրեր, կտա նրանց, միայն այն պայմանով, որ սահմանն անցնելուց հետո կրկին ետ դարձնեն իրան։

— Մեր դժվարությունը սահմանը անցնելն է,— պատասխանեցին նրանք,— այնուհետև ի՞նչ պետք է մեզ անցագիրը։

Քավոր Պետրոսը տվեց նրանց յուրաքանչյուրին մի-մի անցագիր, և մենք միասին անցանք Երասխ գետը։

Կարանտինի մաքսատնում բացի մեր անցագրերին նայելը և ձեռք քաշելը ուրիշ բան չեղավ։ Մեր ավանակների փալանների վրա ուշադրություն անգամ չդարձրին։

Մենք անցանք Երասխը առավոտյան և նույն օրվա երեկոյան պահուն հասանք Նախիջևան քաղաքը։ Մեզ հետ եկած մշակները մեծ շնորհակալությամբ ետ դարձրին քավոր Պետրոսից ստացած անցագրերը։ Եվ իրավ, այնուհետև նրանք անցագրի պետք չունեին, որովհետև պիտի գնային Պարսկաստանից գաղթած իրանց ազգայինների մոտ և մշակություն անեին։

Բայց ինձ զարմացնում էր մի բան. քավոր Պետրոսը այն տեսակ մարդիկներից չէր, որ առանց նպատակի մի գործ կատարեր, ուրեմն ի՞նչ խորհուրդ կարող էր ունենալ մշակներին անցագիր տալը։ Ավելորդ էր մտածել, թե նրանց վրա խղճաց և կամեցավ օգնել նրանց։ Երբ այդ մասին հարցրի, նա պատասխանեց.

— Ինձ պետք էր, որ այդ անցագրերի վրա լիներ մաքսատան կնիքը և ստորագրությունը։

— Դուք ինքներդ կարող էիք ներկայացնել, որ կնքեին և ստորագրեին։

— Բանը նրանումն է, որ ես չէի կարող. մի մարդ կարող է միայն մեկ անցագիր ներկայացնել։

— Բայց ի՞նչ հարկավոր է անպատճառ մաքսատան ստորագրությունը կամ կնիքը։

— Դա շատ հարկավոր է. դա նշանակում է, որ անցագրի

տերը սահմանից անցնելու ժամանակ հայտնվել է, որտեղ որ հարկն է։

— Եվ դուք մշակներից օգո՞ւտ քաղեցիք։

— Նրանք ինձանից օգուտ քաղեցին, իսկ ես՝ նրանցից։

Ես դարձյալ չհասկացա այդ բոլոր ձեռնածության նպատակը։ Քավոր Պետրոսը իմ հետաքրքրությունը հանգստացրեց նրանով, որ ասաց, թե հետո կհասկանամ, երբ շատ բան կսովորեմ։

Նախիջևանում երկար չմնացինք։ Մենք իջևանել էինք մի կեղտոտ քարվանսարայում։ Հենց առաջին գիշերը քավոր Պետրոսը հրամայեց ինձ դուրս բերել իմ ավանակի փալանի մեջ թաքցրած վաճառքը։

Երբ ամենը դուրս բերեցի, նա ասաց ինձ բավական փաղաքշական եղանակով.

— Այդ բոլորը քեզ է պատկանում, իմ փոքրիկ մաքսանենգ, առավոտյան մի մանրավաճառ կբերեմ, և բոլորը միանգամից կծախենք։

Ես երբեք այնքան ուրախ չեմ եղել, որպես այն գիշեր։ Մեծ անհամբերությամբ սպասում էի մինչև առավոտը լուսանար և մաքսատնից փախցրած իմ մթերքը վաճառվեր։ Արևը այն առավոտ ծագեց ինձ համար, որպես մի ավետաբեր հրեշտակ։ Քավոր Պետրոսը վաղուց գնացել էր փողոց՝ գնող հրավիրելու։ Վերջապես բերեց մի հայ մանրավաճառի։ Բավական խոսեցին, բավական բազար արեցին, հետո բարիշեցան։ Մանրավաճառը համրեց արծաթը և մթերքը առնելով հեռացավ։ Քավոր Պետրոսը փողերը ինձ տվեց, ասելով.

— Բախտդ հաջողակ է. մի հարյուրին երկու հարյուր վաստակ ունեցար։

Ես ուրախությամբ ընդունեցի փողերը և լցրեցի այն քսակի մեջ, որ ստացել էի Սառայից որպես հիշատակ։ Այդ փողերը ինձ տալով, քավոր Պետրոսը վարվեցավ ինձ հետ նույն վարպետությամբ, որպես վարվում է խորամանկ որսորդը յուր անփորձ, դեռևս որսորդության չսովորած շան հետ։ Նոր սովորող շան առաջին որսը տալիս է իրան ուտելու, որպեսզի նա ավելի քաջալերվի, ավելի վստահություն ստանա...։ Բայց նրա ավանակի փալանի մեջ թաքցրած մթերքը ես չտեսա, թե ո՞ւր տարավ կամ ինչ արեց...

Նույն օրը մենք դուրս եկանք Նախիջևանից և գնացինք Թումբուլ գյուղը։ Նախիջևանը կանգնած է մի բարձրավանդակի վրա, իսկ Թումբուլը գտնվում է համարյա նրա ստորոտում։

Մտնելով այդ գյուղը, ինձ թվում էր, թե իսկապես մեր գյուղումն եմ գտնվում։ Ոչինչ զանազանություն չկար։ Ես տեսնում էի տների նույն ձևը, որպես մեր գյուղումն էր, մարդկանց նույն բարբառը, նույն լեզուն, նույն ուրախ և անհոգ դիմքերը։ Հագուստների ձևն անգամ չէր փոխվել,— բոլորը նույնն էր։ Քավոր Պետրոսը ինձ ասաց, թե դրանք մեր գյուղացիներ են. ռուս-պարսկական 26 թվի պատերազմից հետո գաղթեցին և եկան հիմնեցին այդ գյուղը։

Թումբուլցիք չէին փոխել և՛ իրանց կենցաղավարության եղանակը, և՛ իրանց պարապմունքները։ Դրանց էլ այս կողմերում կոչում էին «խաչագողներ...»։ Նոր երկիրը չուղղեց նրանց. նրանք պահպանեցին այն բոլոր հատկությունները, ինչ որ բերել էին իրանց հետ Պարսկաստանից...

Ուղիղ տասն տարի էր անցել այն օրից, որ Թումբուլցիք գաղթել էին Պարսկաստանից։ Մի այսպիսի փոքր ժամանակում իրանց գյուղը դրախտ էին դարձրել։ Քավոր Պետրոսին ամենքը ճանաչում էին, իսկ ինձ ճանաչեցին հորս անունով։ Այստեղ գտնվեցան ինձ ազգականներ, որոնց թվումն էր իմ մորաքույրը։ Մայրս շատ անգամ խոսացել էր ինձ յուր քրոջ մասին և միշտ մեծ կարոտությամբ էր հիշում նրան։ Քավոր Պետրոսը տարավ ինձ նրանց տուն։ Երբ մորաքույրս դուրս եկավ մեզ ընդունելու, քավոր Պետրոսը ինձ ցույց տալով, ասաց նրան.

— Ես չեմ ասի թե ով է, տեսնեմ կճանաչե՞ս։— Մորաքույրս նայեց իմ վրա և խորին հրճվանքով գրկեց ինձ բացականչելով.— ինչպե՞ս չճանաչեմ... իմ Մուրադն է...

Նա երկար, անմռունչ մնաց իմ կուրծքի վրա։

Եթե կանայքը չլինեին, ես կարող էի համարձակ ասել, որ «խաչագողների» մեջ մարդկային սիրտ չկա։ Դրանց մոտ էր պահպանվել այն աստվածային ավանդը, որ կրում էր յուր մեջ բոլորը, ինչ որ գեղեցիկ է, ինչ որ լավ է, ինչ որ առաքինական է։ Դրանք սիրտ ունեին։

Մորաքույրս շատ նման էր մորս. կարծես, մի ձու լինեին մեջտեղից կես կիսած։ Նա տեսել էր ինձ յոթն տարեկան հա-

սակում. այն օրից անցել էր ամբողջ տասն տարի, և իմ պատկերը մնացել էր նրա հոգու մեջ անմոռանալի։ Ես չեմ կարող նկարագրել այն սրտաշարժ տեսարանը յուր ամբողջ հոգեբանական բնավորությամբ, թե որպիսի հիացմունքով ընդունեց նա ինձ։ Ամբողջ ժամերով նայում էր իմ վրա, գրկում էր, համբուրում էր և ուրախանում էր։— Իմ քույրը այժմ անբախտ չէ, ասում էր նա, որ ունի քեզ պես սիրուն տղա։

Քավոր Պետրոսը ինձ թողնելով մորաքրոջս տանը, ինքը հեռացավ, հայտնելով, թե մի քանի մարդկանց հետ գործեր ունի, պետք է վերջացնի։

Թումբուլցոց հյուրասիրությունը մեծ հռչակ է ստացել։ Երեք օր մեզ պահեցին այնտեղ, անդադար մի տնից մյուսը ման էին ածում։ Ամեն տեղ սփռված էր հացի սեղանը, ամեն տեղ կերուխումով և ուրախությամբ էինք անցկացնում։

Այդ խնջույքները ինձ հիշեցնում էին միևնույն զվարճությունները, որ կատարվում էին մեր գյուղում։ Այստեղ ևս, երբ հրավիրյալների գլուխները տաքանում էին, սկսում էին մի առանձին պարծանքով պատմել իրանց քաջագործությունները զանազան երկրներում։ Նրանք հիշում էին այնպիսի երկրների, այնպիսի քաղաքների և այնպիսի ազգերի անուններ, որ ես բնավ չէի լսել։ Կարծես թե, այդ մարդիկը աշխարհի մի ծայրից մինչև մյուսը արշավել էին։ Քավոր Պետրոսը բոլոր ժամանակը լուռ էր մնում։ Նա լսում էր նրանց արկածների պատմությունը խորին սառնասրտությամբ, որպես մի հսկա, որ լսում է գաճաճների դատարկախոսությունը իրանց քաջագործությունների մասին և ժպտում է միայն։

Գիշերները ես անց էի կացնում մորաքրոջս տանը։ Նա երկար նստած իմ անկողնի մոտ, չէր թողնում ինձ քնել, անդադար խոսում էր, հարցնում էր Սավրայի մասին։ Հայրենիքի սերը դեռ մնացել էր նրա սրտում անմոռանալի։ Նա դեռ հիշում էր բոլոր արտերը, այգիները, պարտեզները, մինչև անգամ մեր գյուղի նշանավոր ծառերը։ Հարցնում էր սուրբ Հովհաննու մատուռի ուխտագնացության մասին. պատմում էր, թե յուր ժամանակում՝ որպիսի բազմությամբ էր կատարվում նրա տոնախմբությունը։ Խոսում էր կնիկների, աղջիկների սովորությունների մասին, թե ինչ խաղեր էին խաղում, թե որպիսի հանգեսներ էին կատարում, երբ ուխտ էին գնում։ Հայրենական

երկրի, հայրենական կյանքի բոլոր սիրելի պատկերները կենդանի մնացած էին նրա հիշողության մեջ։

Հաղար անգամ հարցնում էր մեր ընտանիքի մասին միևնույն բաները, և նրա հարցասիրությունը չէր հագենում։— «Մորդ ծամերը խո չե՞ն սպիտակել»,— «Քույրերդ որքա՞ն են մեծացել»,— «Հիմա Նազլուն մարդու գնալու աղջիկ կլինի»,— «Ձեր սպիտակ Վանի կատուն մնո՞ւմ է»,— «Հիմա որտե՞ղ եք պահում ձեր չորացած մրգեղենները»,— «Քանի՞ կով ունեք, օրական որքա՞ն կաթ են տալիս»,— «Ո՞վ է կթում կովերը, ո՞վ է թխում հացը»,— «Ձեր հարևան պառավ Գոգեն մնո՞ւմ է»,— «Մայրդ ի՞նչ գույնով քող է կրում. քույրերդ ի՞նչ ճոթից հագուստ են հագնում» և այլն։

Ես նրա հարցերին գոհացուցիչ պատասխան էի տալիս, իհարկե չէի ասում, թե ֆերրաշները մեր տունը այնպես գատարկել են, որ ոչ կով է մնացել և ոչ Վանի կատուն...

Բայց այն գիշերը, որի առավոտը ես պիտի ճանապարհ ընկնեի, նա ավելի խրատներ էր տալիս ինձ, քան թե բաներ էր հարցնում։— «Գնա Մուրադ,— ասում էր,— սուրբ աստվածածինը թո՛ղ բարի ճանապարհ տա քեզ, գնա երկրե երկիր ման արի՛, փող աշխատի՛ր, և բարձրացրո՛ւ հորդ անունը։ Քո հայրը անհայտության մեջ կորավ. հիմա դու ես մնացել քո հոր տան միակ օյունը։ Մորդ, քույրերիդ, բարեկամներիդ հույսերը քեզ վրա են դրված։ Դու պետք է բոլորին ուրախացնես, դու պետք է բոլորին մխիթարես...»։

Ես հավատացած եմ, եթե մորաքույրս գիտենար, թե «խաչագողները» ի՞նչ միջոցներով են փող աշխատում, նա երբեք ինձ խորհուրդ չէր տա, որ ես օտար աշխարհ գնայի և նրանց հետ թափառեի։ Բայց նա չէր իմանում... ես նույնպես չէի իմանում...

Քավոր Պետրոսին խիստ սակավ էի տեսնում։ Նա ինչ-որ պատրաստություններով զբաղված էր։ Թումբուլը մի նշանավոր կայարան էր Պարսկաստանի «խաչագողների» համար, որտեղից վեր էին առնում իրանց գործունեության համար պետք եղած բոլոր պարագայքը, ինչ որ իրանց պակաս էր։ Բայց ես քավոր Պետրոսի վերաբերությամբ տակավին այդ կարծիքը չունեի։

Նա մի առավոտ բերեց յուր հետ մի թուրք և վաճառեց իմ

ավանակը։ Ճշմարիտն ասած, ինձ խիստ զգալի էր բաժանվել իմ խոնարհ և հավատարիմ ընկերից, որ այնքան ժամանակ ճանապարհորդել էր ինձ հետ և ամենայն հոժարությամբ կրել էր իմ ծանրությունները։ Բայց քավոր Պետրոսը հանգստացրեց ինձ, ասելով.

— Ավանակի փողը այն փողերի հետ, որ դու վաստակեցիր քո վաճառքներից, պիտի ուղարկես մորդ. դու գիտես, որ նա յուր մի հատիկ կովը ծախեց և գնեց քեզ համար այդ ավանակը։

— Այդ ես գիտեմ։ Բայց դրանից հետո ինչո՞վ կարող եմ շարունակել իմ ճանապարհորդությունը։

— Դու կնստես մի փառավոր կառքի մեջ։

Ես զարմացա։ Բայց իմ զարմանքը երկար չտևեց։ Քանի րոպեից հետո մի գեղեցիկ ճանապարհորդական կառք կանգնեց մորաքրոջս դռանը։ Երկու ուժեղ սև ձիաներ լծած էին կառքին։ Թումբուլցիք ունեին կառքեր, ունեին լավ ձիաներ, որ բերում էին իրանց հետ, երբ վերադառնում էին Ռուսաստանից։ Երբ իրանց պետք չէին, վաճառում էին։ Քավոր Պետրոսը այդ կառքը և ձիաները գնել էր մի «խաչագողից», որ նոր էր վերադարձել պանդխտությունից։

Կառքի մեջ տեղավորված էին զանազան մեծ և փոքր արկղներ։ Ի՞նչ կար նրանց մեջ,— ես չգիտեի։ Միայն քավոր Պետրոսը տվեց ինձ մի ձեռք լավ հագուստ, մի զույգ ուղևորի կոշիկներ, և հրամայեց հագուստս փոխել։ Այդ նորաձև հագուստին ես բոլորովին անսովոր էի. մորաքույրս օգնեց ինձ հագնելու։ Քավոր Պետրոսը նույնպես փոխել էր այն ցընցոտիները, որոնցով մի քանի օր առաջ մուրացկանի պես կանգնած Թաբրիզի եկեղեցու դռանը, ողորմություն էր ընդունում։ Այժմ մեր հագուստը բոլորովին համապատշաճ էր այն փառավոր կառքին, որի մեջ պիտի նստեինք։

Մորաքույրս տվեց ինձ մի նամակ, խնդրեց, որ հասցնեմ յուր ամուսնին։ Նրա ամուսինը պանդխտության մեջ էր։ Նամակի վրա միայն գրած էր ամուսնու անունը և ազգանունը. քաղաքի անուն չկար։ «Խաչագողները» միշտ այսպես են գրում իրանց պանդուխտների հասցեները, որովհետև չգիտեին, թե ո՞րտեղ են գտնվում նրանք։ Նամակատարը պահում էր յուր մոտ նամակը, եթե մի տեղում կհանդիպեն պանդուխտին, կտա։

Բայց խիստ հազիվ էր պատահում, որ նամակները տեղ հասնեին կամ տանողն էր կորչում, կամ ստացողը վաղուց արդեն կորած էր լինում...

Ավանակներով մտանք Թումբուլ և դուրս եկանք այնտեղից կառքով։ Դա ի՞նչ հրաշք էր...

Ժամատան դռանը քավոր Պետրոսի ծանոթները սպասում էին, որ մեզ ճանապարհ դնեն։ Մորաքույրս յուր երեխաների հետ եկավ մինչև գյուղից դուրսը։ Ամեն կողմից թափվում էին բարեմաղթություններ. ամեն բերան ցանկանում էր մեզ բարի ճանապարհ և բախտավոր վերադարձ։

Վերջապես հայտնվեցավ քահանան, կարդաց «տե՛ր ուղղյա զճանապարհս խաղաղությամբ» աղոթքը, և մեր կառքը շարժվեցավ...

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ա

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՆԵՎԻՐԱԿԸ

1840 թվականն էր։

Անցել էր հինգ տարի այն օրից, որ մենք թողեցինք Պարսկաստանը։

Ռուսաստանի հյուսիսային, հեռավոր գավառներից մեկում, անապատի մեջ ցրված գյուղերի միջով, անցնում էր մի ծածկված կառք։ Հինգ միագույն ուժեղ ձիաներ տանում էին նրան։

Այդ կառքը, այնպես ծածկված, անցել էր շատ նահանգներ, շատ գավառներ և ամեն տեղ, որտեղ հայտնվել էր նա ժողովուրդը խորին ջերմեռանդությամբ հանդիպել էր նրան և փոշին սրբել էր յուր համբույրներով։ Այժմ կառքը շարժվում էր դեպի մի մեծ գյուղ, որ չորս վերստ հեռավորության վրա էր։ Ծանապարհի ամբողջ երկարությունը, որ տանում էր դեպի հիշյալ գյուղը, պատած էր մարդիկներով։ Մեր, մանուկ, այր և կին կոխ էին տալիս միմյանց, առաջ էին մղվում, որ տեսնեն անցորդին։ Բայց անցորդը չէր երևում. ծածկված կառքի լուսամուտների վարագույրներն անգամ ցած էին թողած։

Կառապանի տեղը նստած էր և կառավարում էր ձիաները մի արիսինիացի խափշիկ, նիհար դեմքով և բաց ղահվեի գույնով։ Սառը հյուսիսը, կարծես, փոքր-ինչ փոխել էր տաք աշխարհի որդու բնական գույնը և խլել էր նրա սևությունը։

Կառքի ետևում նստած էր մի երիտասարդ արևելյան թուխ դեմքով և երկայն գանգրահեր մազերով։ Այդ մազերը սև սաթի նման փայլում էին։ Նրա ամբողջ հագուստը նույնպիսի սև գույն ուներ, որպես գլխի մազերը։ Պատրաստված էր կոշտ բուրդից։ Այսպիսի հագուստ արևելքում կրում են անապատա-

կան աբեղաները միայն, որոնք աշխարհ չեն մտնում, մարդկանց երես չեն տեսնում, այլ առանձնացած իրանց խցիկներում աղոթում են կամ սուրբ գրքեր են կարդում։

Կառքի մեջ նստած էր մի անձնավորություն միայն։ Նրան ոչ ոք չէր տեսնում։

Երբ կառքը մոտեցավ գյուղին, սկսեցին զանգակները հարկանել։ Այդ ժամանակ միայն կառքի փոքրիկ լուսամուտների վարագույրները բարձրացան, և աջ կողմի լուսամուտը բացվեցավ։ Այստեղից դուրս պարզվեցավ մի ձեռք և սկսեց խաչակնքել և օրհնություն տալ ամբոխին։

Ձեռքի երեսը և բազուկը (որ բոլորովին մերկ էր) դրոշմված էին մուգ-կապտագույն նկարներով (татуированный), որոնք ներկայացնում էին սերովբեներ, քերովբեներ և մի վանքի պատկերը, զարդարված խաչերով։ Մուժիկները մոտենում էին և ջերմեռանդությամբ համբուրում էին այդ խորհրդավոր ձեռքը։ Նրա շագանակի գույն ունեցող կաշուց երևում էր, որ կրողը ծնվել է տաք կլիմայի տակ, ուր մարդկանց կաշին արևի ջերմության ներքո կորցնում է յուր սպիտակությունը։

Կառքը մտավ գյուղը։

Այդ կառքը ամեն գյուղ, ամեն փոքրիկ քաղաք, ուր որ հասնում էր, կանգնում էր կամ եկեղեցու դռանը, եթե այնտեղ կար հարմար իջևան, կամ հոգևոր առաջնորդի դռանը և կամ ավագ քահանաների դռանը։ Նա իրան հեռու էր պահում աշխարհականների բնակարաններից։ Իսկ այսօր նրան ընդունելու համար պատրաստված էր գյուղի հարուստ կալվածատիրոջ տունը։

Կառքը դանդաղ էր շարժվում։ Ուժեղ ձիաները, հակառակ իրանց կամքի, գնում էին համբրնթաց քայլով։ Որովհետև նրանք իրանց ընթացքը պիտի հարմարեցնեին ահագին ամբոխի շարժման հետ, որ շրջապատել էր կառքը։ Երևում էր, այդ խելացի անասունները այնքան սովորած էին այսպիսի բազմության, որ բնավ չէին խրտչում, այլ մի առանձին կամակատարությամբ այնքան կամաց էին գնում, որ ամբոխը որքան կամենում է նայել և բավականացնել յուր փափագը։

Փողոցները, տների լուսամուտները բռնված էին մարդիկներով։ Կնիկները, իրանց երեխաներին գրկած, անց էին կենում

ձիաների երասանակների տակով։ Շատերը փորձում էին անիվների տակով անցնել։

Կառքը կանգնեց գյուղի կալվածատիրոջ տան դռանը։ Նրա նեռեում նստած գանգրահեր երիտասարդը ցած ցատկեց, և շուտով բաց անելով նրա դռնակը, օգնեց նստողին դուրս գալու։ Գյուղի երկու քահանաները և կալվածատեր պարոնը մտան սրբազան հյուրի թևքերի տակը և համարյա ձեռքերի վրա նրան ներս տարան։

Թեև երեկո էր, բայց տակավին բավական լույս կար։ Այսուամենայնիվ, բազմությունը դարձյալ զուրկ մնաց նրա դեմքը տեսնելուց։ Որովհետև երեսի վրա ձգած ուներ մի տեսակ խիստ օտարոտի քող, որի վրա նկարված էր վերջին դատաստանի սոսկալի պատկերը։

Երբ նրան ներս տարան յուր համար հատկապես պատրաստված սենյակը, երեսի քողը վեր առեց։ Հայտնվեցավ մի պատկառելի դեմք՝ փառահեղ սպիտակ մորուքով, երկայն ալեխառն մազերով։ Արդարությունը, հոգևոր խաղաղությունը, լուսավորված ջերմ հավատքով, դուրս էին ցոլանում նրա երեսի մեղմ գծերից։

Տունը գեղեցիկ կերպով զարդարված էր։ Նրա տերերը այն տեսակ ազնվականներից էին, որոնք իրանց կյանքի առույգ տարիները մայրաքաղաքների զեխության, շռայլության, անբարոյական շվայտությունների մեջ մաշում են, սպառում են, և երբ մոտենում են գերեզմանին, այնուհետև հոգնած, ձանձրացած, վերադառնում են դեպի հեռավոր գավառը և անձնատուր են լինում կրոնական բարեպաշտության։

Առանձնանալով մի հեռավոր գյուղի խուլ անկյունում, այդ տեսակ մարդիկ չեն զլանում, հին հիշողությունները պահպանելու համար, շրջապատել իրանց այն զարդարանքներով, այն խայտաճամուկ առարկաներով, որոնց մեջ մի ժամանակ լողում էին։ Այդպես զարդարված էր և հիշյալ կալվածատիրոջ տունը։

Մի գեղեցիկ դիվան, պատած մանիշակագույն ատլասով, սպասում էր, որ հարգելի հյուրը նստեր նրա վրա։ Երբ տան տերը հրավիրեց նստել, հարգելի հյուրը կանգ առեց գեղեցիկ դիվանի առջև և մի տեսակ զարմացական հայացք ձգելով նրա վրա, արտասանեց այդ խոսքերը.

— Մեր տեր Հիսուս Քրիստոսը Բեթղեհեմի մսուրի մեջ ծնվեցավ և առաջին անգամ աղքատ, խղճուկ հովիվների հետ տեսնվեցավ։ Այնուհետև շատ գիշերներ անց էր կացնում բացօթյա, մերկ գետնի վրա պառկելով։ Այժմ նրա անարժան աշակերտին ի՞նչ կվայելե այսպիսի փառավոր գահավորակի վրա բազմելը։ Այդ խոսքերը արտասանեց նա հունարեն լեզվով, իսկ գանգրահեր երիտասարդը թարգմանեց ռուսերեն։

Տան տերը չգիտեր, վիրավորվե՞լ, թե՞ ամաչել յուր քրիստոնեական սակավապետության հակառակ, շռայլ կենցաղավարության համար։

Գանգրահեր երիտասարդը, մասնավորապես ծանոթացնելով տան տիրոջը «վշտալի հոր» սովորությունների հետ, հայտնեց թե ավելի հարգած կլիներին, եթե թույլ կտային նրան շշեղվիլ յուր կյանքի սովորական եղանակներից։ Այդ խոսքերի հետ գանգրահեր երիտասարդը տարածեց դիվանի մանիշակագույն ատլասի վրա մի մաշված կապերտի կտոր, որ «վշտալի հոր» գործածական օթոցն էր։ Նրա վրա և՛ նստում էր նա, և՛ գիշերները քնում էր։

Նա յուր ծանր հոդաթափները հանեց դիվանի առջև և ասիական կերպով ծալապատիկ բազմեցավ նրա վրա։ Այդ հոդաթափները, երկու մատնաչափ հաստ տակերով, նույն ձևը ունեին, որպես մեր քահանաները հագնում են սուրբ սեղանի վրա պատարագ մատուցանելու ժամանակ։

Նրա անշուք, անպաճույճ զգեստը յուր վրա առանձին ուշադրություն էր դարձնում։ Դա կոշտ մազից գործված մի տեսակ մուգ-մոխրագույն հագուստ էր, որը անապատներում կոչում են «խարազն», իսկ հագնողներին՝ «խարազնազգեստ»։ Այդպես հագնվում են միայն իրանց անձը ամենախիստ ճգնությունների ենթարկող անապատական աբեղաները։ Գլխին կրած ուներ մուգ-լաջվարդի գունով ֆես, փաթաթած սև ապարոշներով, որոնց ծայրերը իջնում էին մինչև ուսերը։ Վերնազգեստը արևելյան կրոնավորների ֆարաջայի նմանությունն ուներ, մինչև կրունկները հասած լայն փեշերով և բավական ընդարձակ թևքերով։ Մեջքը սեղմված էր սև կաշուց պատրաստված լայն գոտիով։ Մի ահագին երկաթյա խաչ զարդարում էր նրա կուրծքը, որ կախված էր նույնպես երկաթյա հաստ շղթայից։ Գլխի և երեսի մազերը այնքան աճել էին, որ կարծես երբեք մկրա-

տի և ածելու հետ ծանոթ չեն եղել։ Այդ տալիս էր նրա դեմքին ֆերվիշի տպավորություն։

Այդ աբեղան Երուսաղեմի վանքի նվիրակն էր, իսկ գանգրահեր երիտասարդը, որ յուր հագուստի ձևերով շատ չէր տարբերվում յուր վարդապետից, նրա սարկավագն էր։

Մինչև այդ տունը հասնելը աբեղայի մասին ռամիկ գյուղացիների մեջ տարածվել էին շատ առեղծվածային պատմություններ, շատ առասպելներ։ Ասում էին, որ նա ոչինչ չէ ուտում, ոչինչ չէ խմում, այլ միայն աղոթքով է կերակրվում։ Ասում էին, որ նա կույրերի, կաղերի, հիվանդների վրա բժշկություններ է անում, և ուրիշ շատ այսպիսի բաներ էին ասում։ Բայց ինչ որ ճշմարիտ էր, այն էր, որ նա չափազանց պարզ և սակավապետ մարդ էր, խորշում էր ամեն տեսակ վայելչությունից, որոնք թուլացնում են հոգին, իսկ սնուցանում են մարմնականը և անասնականը մարդու մեջ։

Երբ աբեղան ծալապատիկ նստեց գիվանի վրա, գյուղի երկու քահանաները և տան տերը դեռ կանգնած էին նրա առջև, չէին համարձակվում նստելու։ Նա խնդրեց, որ նստեն, ասելով.

— Գուք նստեցեք, որպես սովոր եք։

Տան տերը տեղավորվեցավ բազկաթոռի վրա, իսկ երկու քահանաները նստեցին հեռու աթոռների վրա։

Հյուրանոցում, ուր գտնվում էին նրանք, տիրում էր մի տեսակ ծանր լռություն։ Տան տերը, չնայելով որ բավական զվարճախոս և մինչև անգամ՝ շատախոս մարդ էր, ինչպես լինում են առհասարակ շատ ման եկած, շատ բան տեսած և շատ բան լսած ծերունիները, այսուամենայնիվ, չգիտեր ի՞նչ առարկայի վրա խոսել յուր տարապայման հյուրի հետ։ Նա գտնվում էր մի տեսակ երկյուղածության մեջ, որ տիրում է մարդու սրտին, երբ զգում է գերբնական էակների ներկայությունը։ Իսկ քահանաները վախենում էին խոսել ավելի այն պատճառով, որ ցույց չտան իրանց տգիտությունը։

Վերջապես կից սենյակի դռնից ներս մտավ տան տիկինը յուր զավակների ահագին խումբով, և հյուրանոցի լռությունը փոքր-ինչ փարատվեցավ, փոքր-ինչ կենդանացավ։

Ամուսին այրը կանգնեց, սկսեց ներկայացնել նախ յուր տիկնոջը, հետո յուր աղջիկներին և որդիներին։ Բոլորը հերթով մոտեցան, համբուրեցին աբեղայի աջը և օրհնություն առին։

Տիկինը նստեց աբեղայի դիվանի մոտ, մեծ աղջիկները և մեծ որդիները տեղավորվեցան մյուս կողմում, իսկ փոքրիկները մի քանի բոպե ոտքի վրա մնացին. ձանձրացան և դուրս գնացին։

Հարգելի հյուրը, ինչպես երևում էր, կանանց զբաղեցնել չգիտեր, և կարծես թե, նրանց ներկայությունից նեղվում էր։ Այդ երևում էր այն անախորժ արտահայտությունից, որ նկատվում էր նրա տխուր դեմքի վրա, որը ամենայն ջանքով աշխատում էր թաքցնել։ Դա կուսակրոնի սովորական վրդովմունքն է, երբ հանդիպում է կնոջ։ Բայց ինչո՞վ բացատրել այդ։

— Ձեր սրբազնությունը, երևի, շատ հեռվից է գալիս,— տան տիրուհին սկսեց խոսակցությունը։

Աբեղան դարձավ դեպի գանգրահեր սարկավագը, որ կանգնած էր նրա մոտ։ Թարգմանը պատասխանեց.

— Այո՛, հեռվից, շա՛տ հեռվից։ Ամբողջ երեք ամիս ճանապարհ ենք անցել, մինչև հասել ենք այստեղ։

Այդ միջոցին ֆրակով և սպիտակ ձեռնոցներով ներս մտան երկու սպասավորներ և արծաթյա մատուցարանի վրա տվեցին թեյ։

Աբեղան հրաժարվեցավ ընդունելուց, ասելով, որ սուրբ տաճարի սպասավորները իրանց հեռու են պահում անուշ ըմպելիքներից։ Տան տիկինը երկար աշխատում էր բացատրել, համոզել նրան, թե դա հասարակ թեյ է, ուրիշ ըմպելիք չէ, թե դրան գործ են ածում իրանց երկրում մինչև անգամ էգզարխները։

Չկամենալով վշտացնել տան տիկնոջ բարեսրտությունը, աբեղան ընդունեց մի բաժակ և սկսեց առանց շաքարի խմել։ Երկու քահանաները հետևեցին նրա օրինակին և հակառակ իրանց սովորության, սկսեցին իրանք էլ կծովի խմել։

Տիկինը հետաքրքրվեցավ գիտենալ, թե ի՞նչ նպատակով է ճանապարհորդում «նորին սրբազնությունը»։ (Տիկինը միշտ նրան «սրբազնություն» էր կոչում, թեև հարգելի հյուրը եպիսկոպոս չէր, այլ Երուսաղեմի վանքի հունաց միաբանության աբեղաներից էր)։

Աբեղան համառոտ կերպով հայտնեց յուր ո՞վ լինելը կամ

ի՞նչ միաբանության կողմից իբրև Երուսաղեմի նվիրակ ուղարկ-
ված լինելը,— հայտնեց յուր ճանապարհորդության նպատակը։
Այնուհետև խիստ ցավալի կերպով սկսեց նկարագրել «սուրբ
տաճարի» թշվառ դրությունը,— նկարագրեց փրկիչի սուրբ գե-
րեզմանի հալածանքը մահմեդականներից,— նկարագրեց միա-
բանների կրած նեղությունները թուրքերից, նրանց աշքատու-
թյունը և ողորմելի վիճակը։ Նրա ամբողջ պատմությունը այն-
քան ազդու և ցավակցական էր, որ տան տիրուհին լալու ժա-
մանակ անդադար խաչակնքում էր յուր երեսը. վերջը նա այլևս
դիմանալ չկարողացավ, թաշկինակը տարավ աչքերին, սկսեց
դառն կերպով հեկեկալ։

Աբեղան նկատելով այդ, մխիթարեց նրան ասելով.

— Սուրբ տաճարի բոլոր թշվառություններին դարման
կտրվի բարեպաշտ հավատացելոց նվիրատվությամբ։ Ես ուխ-
տել եմ այնքան ժամանակ չուտել, չխմել, չքնել, և այդ երկա-
թե շղթան (նա ձեռքը տարավ դեպի հաստ շղթան, որից քարշ
էր ընկած ահագին երկաթյա խաչը նրա կուրծքի վրա) միշտ
իմ պարանոցին կրած պիտի ունենամ,— մինչև բարեպաշտ
հավատացելոց օժանդակությամբ չհավաքեմ այնքան նվերներ,
որոնցով կարելի լինի փրկչի սուրբ գերեզմանը գերությունից
ազատել։

— Մի՞թե գերության մեջ է նա,— բացականչեց տիկինը։

— Այո՛, գերության մեջ է, անօրենների ձեռքում... Վանքը
պարտքի տակ է ընկած... սրբությունները գրավ են դրված...

— Աստվա՜ծ իմ, աստվա՜ծ իմ,— բացականչեց տիկինը,
գարձյալ թաշկինակը տարավ դեպի աչքերը։

Տիկնոջ օրինակին հետևեց և նրա ամուսին այրը։ Երկու քա-
հանաները նույնպես փորձեցին զգացված ձևանալ։

Թեյի երկրորդ բաժակը ընդհատեց այդ տխուր խոսակցու-
թյունը. սպասավորները արծաթյա մատուցարանները ձեռ-
ներում կրկին ներս մտան։

Բոլոր ժամանակը աբեղան խոսում էր հունարեն, իսկ գանգ-
րահեր երիտասարդը թարգմանում էր նրա ասածները։ Այդ
վերջինը ռուսերեն նույնպես շատ փոքր գիտեր, և այդ ավելի
հետաքրքրական էր դարձնում նրա խոսքերը, երբ շատ բաներ
մնում էին անհասկանալի։

Թեյի երկրորդ բաժակից հետո խոսակցությունը ընդունեց
ուրիշ ուղղություն։ Տան տերը հարցրեց.

— Երուսաղեմի մեջ այժմ ի՞նչ սրբություններ են մնացել։

— Շատ սրբություններ են մնացել,— պատասխանեց աբե-
ղան,— որոնց թվումն է Հիսուս Քրիստոսի օրորոցը։ Իսկ այդ
սուրբ օրորոցը վաղուց է, որ թուրքերը խլել են մեզանից, պահ-
վում է Օմարի մեչիդում։ Երբ մի քրիստոնյա մտնում է այն-
տեղ, սուրբ օրորոցը սկսում է ինքն իրան օրորվել։ Այդ պատ-
ճառով քրիստոնյաներին թույլ չեն տալիս, որ այնտեղ մտնեն։

— Անիծյալնե՜ր...— բացականչեցին երկու քահանաները,
որ բոլոր ժամանակ լուռ էին։

— Այլևս ի՞նչ կա,— հարցրեց տան տերը։

— Հուդայի վիրապը,— պատասխանեց աբեղան, կարծես
թե դա էլ սրբությունների կարգումն էր։

— Հուդայի վիրա՞պը,— կրկնեց տան տիրուհին՝ երեսը խա-
չակնքելով։

— Այո՛, Հուդայի վիրապը։ Անիծյալ Հուդան դեռ կենդանի է
այն խոր վիրապի մեջ։

— Ինչպե՞ս չէ դուրս գալիս,— հարցրեց տան տերը զար-
մանալով։

— Խորի բերանը ստուգիր հրամանով հավիտյան ծածկված
է ահագին ժայռով։ Երբ գալիս է ավագ ուրբաթ գիշերը, այ-
սինքն այն գիշերը, որ անիծյալը մատնեց մեր տեր Հիսուսին,
խորի միջից լսվում են սարսափելի ձայներ, լսվում են նրա
տանջանքի հառաչանքները։

— Երևի սատանաները չարչարում են անիծյալին,— մեջ
մտավ երկու քահանաներից մեկը։

— Այո՛, չարչարում են... նա միշտ կչարչարվի և այնպես
կմնա մինչև Հիսուս Քրիստոսի սոսկալի դատաստանի օրը։

— Անիծյա՛լ Հուդա...— դարձյալ կրկնեցին ամեն կողմից։

— Այլևս ի՞նչ կա,— հարցրեց տիկինը։

— Մի սուրբ աղբյուր, որ գոյացած է Մարիամ Մագթա-
ղինացու արտասուքներից։ Կույրերը բժշկվում են, երբ լվաց-
վում են նրա ջրով։

— Ուղարկենք այնտեղ մեր Ֆեդկային,— ասաց տիկինը,
դառնալով դեպի յուր ամուսինը։

Ֆեդկան նրանց փոքրիկ որդին էր, որի աչքերից մեկը ծաղկից փչացել էր։

— Բժշկության համար հաստատ հույս և հավատ պետք է, — նրանց խոսքը կտրեց աբեղան։

Աբեղայի պատմությունները Երուսաղեմի նվիրական տեղերի մասին հետզհետե ավելի և ավելի հետաքրքրական էին դառնում։ Նա խոսեց «թափառական հրեայի» մասին. նա խոսեց «անբան մարգարեի» գերեզմանի մասին. նա խոսեց «Զիթենյաց լեռան» և «Գեթսեմանի ձորի» մասին. նա խոսեց «Վա՜յ-վա՜յ-գոլի» կոչված լճակի մասին և այլն։

— Այդ ի՞նչ լիճ է,— հարցրեց տիկինը։

— Դա այն լիճն է,— պատասխանեց աբեղան,— որի մեջ Հիսուս Քրիստոսը մանուկ հասակում մի անգամ լողանում էր ուրիշ շատ երեխաների հետ։ Չար երեխաները տանջում էին նրան։ Փոքրիկ Հիսուսը վեր առեց մի բուռ ավազ, ցրվեց չար երեխաների վրա, նրանք բոլորն էլ գորտեր դարձան և մնում են մինչև այսօր, անդադար աղաղակելով «վա՜յ-վա՜յ»,— այդ պատճառով էլ այդ լիճը կոչվում է «Վա՜յ-վա՜յ-գոլի», որ նշանակում է վայ-վայի լիճ։

Զարմացած տիկինը, դարձավ դեպի յուր որդիները, ասելով.

— Լսո՞ւմ եք, զավակներս, թե ինչպես է պատժվում չարությունը։

Նրանք կարմրեցին։

Սեղանատանը պատրաստված էր ճոխ ընթրիք։ Տան տերը մտավ այնտեղ տեսնելու միգուցե մի բան լիներ։ Նա կանչեց գանգրահեր երիտասարդին նրա հետ խորհրդակցելու։

— Ներեցե՛ք, խնդրեմ,— հարցրեց նրանից,— ձեր հայր սուրբը որպիսի՞ գինիներ, որպիսի՞ նախաճաշիկներ ավելի շատ է ախորժում։

Գանգրահեր երիտասարդը աչք ածեց հարուստ պատրաստության վրա, մի առանձին ափսոսանքով պատասխանեց.

— Այդ բոլոր գեղեցիկ պատրաստություններից իմ հայր սուրբը ոչինչ չէ կարող ուտել և ոչ խմել։

— Երևակայեցեք, պատվելի,— ասաց տան տերը ներողություն խնդրելով,— մենք համարյա անապատների մեջ ենք ապրում. հազարավոր վերստերով մեծ քաղաքներից հեռու դտնվելով, ամեն բանից զրկված ենք։ Ինչ որ տեսնում եք այստեղ, այն ևս հազիվ կարելի է գտնել. մենք բերել ենք-տվել Մոսկվայից։

— Ներեցեք, տեր իմ,— պատասխանեց երիտասարդը։— Ես լավ չկարողացա հասկացնել իմ միտքը։ Այդ բոլորը շատ գեղեցիկ է, չափազանց է և մինչև անգամ արքայավայել է, բայց իմ հայր սուրբի համար չէ։

— Ինչո՞ւ։

— Նա ամբողջ տարին պահեցողությամբ է անցկացնում, համարյա աղ ու հացով, իսկ այստեղ պահոց ոչինչ չկա։ Ուտում է միայն սուրբ հարության զատկին և սուրբ ծննդյան տոնին, այն ևս ոչ միս, այլ սակավ ինչ յուղեղեն։ Իսկ գինիներ ամենևին չէ խմում, միայն պարզ ջուր է գործածում։

— Այդ զարմանալի է, շատ զարմանալի։

Հյուրընկալը սաստիկ դժվարության մեջ ընկավ։

Գանգրահեր երիտասարդը նկատելով այդ, ասաց նրան.

— Սուրբ գերեզմանի պաշտոնյաները բոլորը այդպես են։ Դուք ավելի հարգած կլինեք ձեր հյուրին, եթե թույլ կտաք նրան յուր սովորություններին հետևել։ Մի պնակ խաշած սիսեռը խիստ ճոխ ընթրիք է նրա համար։ Եթե այդ էլ չգտնվի, նա շատ գոհ կլինի, եթե ցամաք հացով կերակրվի։

Ջնայելով ժուժկալության այդ բոլոր խստություններին, տան տերը պատվիրեց պահոց մի քանի տեսակ կերակուրներ, որոնք աբեղային բավական տհաճություն պատճառեցին, թեև նա այդ մասին քաղաքավարությամբ լռեց։

Ընթրիքը վերջացավ ավելի զվարճությամբ, քան թե սպասվում էր։ Հայր սուրբը շատ նոր և հետաքրքիր բաներ պատմեց Երուսաղեմի վանքի մասին, աբեղաների խիստ ու աշխարհազուրկ կենցաղավարության մասին, ուխտավորների տոնական հանդիսակատարությունների մասին և այն հրաշքի մասին, թե որպես սուրբ հարության զատկի օրը երկնքից լույս է իջնում փրկչի գերեզմանի վրա և սուրբ տաճարի բոլոր ջահերը, բոլոր մոմերը միանգամից վառվում են։

Նրա պատմությունները լցնում էին լսողների սրտերը կրոնական ջերմեռանդությամբ, վառում էին նրանց հավատքը և մի առանձին հոգեզմայլությամբ նրանց սրտերը ձգում էին դեպի այն հեռավոր բիբլիական աշխարհը, ուր ծնվել էին աստու-

ծ. Խարգարեները, ուր տիեզերքի փրկիչը կատարել էր նոր ուխտի աստվածային պատգամները։

Ընթրիքից հետո, որովհետև հայր սուրբը հոգնած էր, իսկույն սկսեցին մտածել նրա հանգստության համար։ Բարեպաշտ տան տիկինը ինքը անձամբ առանձին խնամք էր տանում նրա անկողնի պատրաստության մասին։ Այդ զանազան վարագույրներով, բազմաթիվ մեծ և փոքրիկ բարձիկներով, տեսակ-տեսակ վերմակներով և դոշակներով կազմված փափուկ, փեսրային անկողինը կարծես թե պատրաստված լիներ Մորփեոսի ձեռքով։ Եվ որպեսզի նույն անախորժությունները տեղի չունենային, ինչ որ եղավ ընթրիքի ժամանակ կերակուրների վերաբերմամբ, տիկինը կանչեց քնարանում գանգրահեր սարկավագին, տեղեկանալու համար նրա հայր սուրբի քնելու սովորությունների մասին։

— Այդ ի՞նչ է, հարգելի տիկին,— բացականչեց գանգրահեր երիտասարդը զարմանալով,— դուք, երևի, մտածել եք իմ հայր սուրբին մեղքի մեջ ձգել. ավելի շուտով նա հանձն կառնի պառկել Սադայելի գրկում, քան թե այս փառավոր անկողնու մեջ։

Տիկինը վիրավորվեցավ երիտասարդի երկմտանի նկատողությունից։ Երիտասարդը շուտով ուղղեց յուր սխալը ավելացնելով.

— Երուսաղեմի խստակյաց աբեղաները մեղք կհամարեն այս տեսակ փառավոր անկողինների մեջ քնելը։ Իմ հայր սուրբը ունի իր առանձին անկողինը, որ միշտ յուր հետ է մանածում. նրա մեջ կպառկի։

Այդ խոսքերի հետ երիտասարդը մտավ այն սենյակը, ուր դրած էին իրանց իրեղենները, և բերեց այնտեղից կոշտ մազից պատրաստված մի վերմակ և մի փոքրիկ բարձ, մեջը լցրած խոտով ու երեսը պատած սև սաֆիանով։ Դրանց հետ էր այն մաշված կապերտի կտորը, որ տարածված էր գեղեցիկ դիվանի մանիշակագույն ատլասի վրա, և որին հայր սուրբը գործ էր ածում և՛ իբրև օթոց, և՛ իբրև դոշակ քնելու ժամանակ։

— Ահա նրա մահճի բոլոր պարագայքը,— ասաց երիտասարդը, ցած դնելով ցնցոտիները,— այդ տեսակ մահիճը լավ է այն կողմից, որ նրա մեջ դժվար է երկար քնել, և այդ իմ հայր սուրբի համար շատ հարկավոր է։ Իսկ այն փառավոր

անկողինը հանգիստ քուն կբերե. դա շատ վատ է, վտանգավոր է։

Տիկինը չգիտեր զարմանա՞լ, թե ծիծաղել երիտասարդի միամտության վրա։ Վերջը չկարողանալով զսպել յուր համբերությունը, ասաց.

— Չէ՞ որ քնում են հանգստանալու համար։

— Այդ ուղիղ է, պատվելի տիկին, բայց ոչ ամեն մարդիկ։ Իմ հայր սուրբը գիշերվա մեջ մի ժամ հազիվ է քնում. հետո զարթնում է, ճրագը վառում է, սկսում է կարդալ։ Ամեն գիշեր պետք է ծայրեծայր վերջացնե Դավթի սաղմոսների ընթերցումը։ Հետո կարդում է Սողոմոն իմաստունի առակները, հետո մարգարեությունները, հետո Պողոս առաքյալի թղթերը, և մյուսները այդ կարգով։ Մի այսպիսի կոշտ անկողին անհրաժեշտ է, որ քունը չհաղթե մարդուն։ Բայց դարձյալ երբեմն շար սատանան հակառակվում է և քունը հաղթում է։ Դրա համար իմ հայր սուրբը հագնում է բոլորովին այլ տեսակ շապիկներ, քան թե հագնում են հասարակ մարդիկ։

Տիկնոջ զարմացումը այժմ փոխվեցավ հետաքրքրության։ Նա հարցրեց.

— Ի՞նչ տեսակ շապիկ։

— Եթե պատվելի տիկինը հետաքրքրվում է, ես այս րոպեիս կարող եմ ցույց տալ։

Երիտասարդը դարձյալ մտավ այն սենյակը, ուր դրած էին իրանց իրեղենները։ Բազմաթիվ մեծ և փոքրիկ արկղներից մեկը բաց արավ և այնտեղից դուրս բերեց տոպրակի պես մի բան, որը ֆուֆայկայի նմանություն ուներ այն կողմից, որ երկու նեղ թևքեր ուներ։ Տիկինը մինչև անգամ վախեցավ յուր ձեռքով շոշափել այդ օտարոտի շապիկը և միայն հեռվից սկսեց նայել նրա վրա։ Միայն ինկվիզիցիան կարող էր հնարել մի այսպիսի սատանայական զգեստ յուր դատապարտյալներին տանջելու համար։ Շապիկը գործված էր նույնպես կոշտ մազից, բայց նրա հյուսվածքի մեջ փայլում էին հագարավոր մանրիկ ասեղիկներ, որոնք իրանց սուր ծայրերը դարձրել էին դեպի այն կողմը, որ պիտի շոշափվեր մարմնի կաշու հետ։

— Դա կոչվում է «զգաստության շապիկ»,— սկսեց բացատրել երիտասարդը,— դա արթնության մեջ է պահում մարդուն։ Դա տանջում է մարմինը և զորություն է տալիս հոգուն։

Մեր վանքի բոլոր աբեղաները այս տեսակ շապիկներ են հագնում։

— Այդ սարսափելի է,— բացականչեց տիկինը։— Ուրեմն նա հիմա՛ էլ հագած ունի։

— Այո՛։ Ես էլ նույն տեսակ ունեմ հագած։

Երիտասարդը յուր օձիքը բաց անելով, ցույց տվեց յուր «զգաստության շապիկը»։ Տիկինը սոսկաց։

Մյուս օր, առավոտյան պահուն, այդ տան մեջ կատարվեցավ մի հանդիսավոր մաղթանք։ Հայր սուրբը ջուր օրհնեց մի խաչով, որի մեջ, ինչպես հավատացնում էր, ամփոփված էր «կենաց փայտի» մի մասը։ Ջրօրհնության միջոցին կարդացվեցավ ավետարան, երգվեցան զանազան հոգևոր երգեր։

Ամբողջ ընտանիքը, ծառաները, աղախինները և հարեվաններից շատերը հավաքված էին ընդարձակ դահլիճում, ուր կատարվում էր այդ հոգևոր ծիսակատարությունը։ Հայր սուրբը օրհնած ջուրը սրսկեց հանդիսականների վրա, և երբ վերջացրեց, նախ տան տիրուհին և նրա ամուսինը մոտեցան, համբուրեցին խաչն ու ավետարանը, հետո նրանց որդիները և ապա մնացած բազմությունը, բոլորը համբուրեցին և օրհնություն առին։

Երբ ամեն ինչ վերջացած էր, օտարները հեռացան, դահլիճում մնացին միայն տանեցիք։ Հայր սուրբի կառքը արդեն սպասում էր դռանը, նա շտապում էր ճանապարհ ընկնել։ Բայց տանտիկինը խնդրեց, որ մի փոքրիկ նախաճաշիկ անեն և հետո ճանապարհ ընկնեն։ Հայր սուրբը հարգեց նրա խնդիրքը։

Նախաճաշիկից հետո, երբ խմում էին վերջին բաժակները և ցանկանում էին հայր սուրբին հաջողություն ու բարի ճանապարհ, մոտեցավ տան տերը և կրկին անգամ համբուրելով հարգելի հյուրի աջը, տվեց նրան մի հաստ ծրար, ասելով.

— Համարեցեք այս փոքրիկ նվերը որպես այրի կնոջ լումա։ Ես քրիստոնեական պարտավորություն եմ համարում իմ կարողության չափով մասնակից լինել այն օժանդակությանը, որ նպատակ ունի թեթևացնելու Երուսաղեմի սուրբ տաճարի պետքերը։

Ծրարի մեջ կար 5000 ռուբլի արծաթ։

Հայր սուրբը օրհնեց նրա առատաձեռնությունը, խոստացավ հինգ անգամ պատարագ մատուցանել Երուսաղեմի սուրբ

տաճարի սեղանի վրա նրա և յուր տիկնոջ հոգիների քավության համար։ Բացի դրանից, ընծայեց տան տիրոջը մի «տերողորմյա», որ շինված էր ձիթապտուղի կորիզներից։ Ասաց, որ այդ ձիթապտուղները հասարակ տեսակից չեն, այլ քաղված են Ձիթենյաց լեռան նվիրական ծառերից, որոնց հովանիների ներքո շատ անգամ հանգստանում էր Հիսուս Քրիստոսը, ուր շատ անգամ խոսում էր նա յուր ամենանշանավոր քարոզները։

— Այն օրից անցել է տասն և ինը դար,— ավելացրեց աբեղան,— այն նվիրական ծառերը, որ արժանացել էին իրանց հովանու ներքո հյուրասիրելու մարդկության փրկչին, մինչև այսօր կենդանի են մնում։

Հետո նա ընծայեց տան տիրոջ երեխաներին մի-մի հատ սադաֆե փոքրիկ խաչեր։— Այդ սադաֆը,— ասաց նա,— հանված է այն ծովից, որտեղից անցավ Մովսեսը Իսրայելի որդիների հետ և ազատեց նրան փարավոնի գերությունից։ Եվ այդ պատճառով այդ խաչերը կրողները ազատ կմնան ամեն տեսակ չարից ու փորձանքից։

Տան տերը և տան տիրուհին շատ գոհ մնացին իրանց ստացած ընծաների մասին և մեծ շնորհակալությամբ ճանապարհ դրին հարգելի հյուրին։

Նա դարձյալ յուր օտարոտի քողը, որի վրա նկարված էր վերջին դատաստանի սոսկալի պատկերը, ձգեց դեմքի վրա, դուրս եկավ և նստեց ծածկված կառքի մեջ։ Կառքը մեկնեցավ։

Գյուղացիների բազմությունը դարձյալ չկարողացավ տեսնել այդ խորհրդավոր աբեղայի երեսը։ Բայց այդ բարի և կրոնասեր գյուղացիները երկար ժամանակ չէին մոռանում հայր Անտոնիոսի ու նրա սարկավագ Ամբրոսիոսի հետաքրքիր պատմությունները Երուսաղեմի նվիրական տեղերի մասին...

Բ

ՇԱՐԺԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆ

Կարծեմ ընթերցողը ճանաչեց հայր Անտոնիոսին և նրա սարկավագ երիտասարդ Ամբրոսիոսին։

Այն բոլոր սրբությունները, որ մենք վաճառում էինք Երու-

սաղեմի վանքի անունով, նրանցից և ոչ մեկը Պալեստինայի երկիրը տեսած չէր։ Մենք ունեինք մեզ հետ ամեն տեսակ նյութեր, որոնցից պատրաստում էինք հարկավոր եղած իրեղենները։ Այդ աշխատությունները կատարում էինք մենք գիշերով և այնպիսի խուլ անկյուններում, որ ոչ ոք մեր արհեստի մասին կասկած ունենալ չէր կարող։ Ես սովորել էի շինել գեղեցիկ սադաֆե խաչեր և ձիթապտուղի կորիզներից «տեր-ողորմյաներ»։ Մեր արիսինիացի խափշիկը գիտեր պատրաստել օրհնության թղթեր և զարդարել նրանց զանազան խորհրդավոր նկարներով։ Այդ պարոնը, որ ճանապարհորդության ժամանակ կառապանի պաշտոն էր կատարում, իսկապես արիսինիացի չէր, նա նույնպես «խաչագող» էր, բայց երեսի մուգ-դեղին կաշին և դեմքի գծագրությունը փոքր-ինչ աբիսինիացու նման լինելով, քավոր Պետրոսը պահում էր յուր մոտ իբրև մի ցույց։

Ինքը քավոր Պետրոսը գիտեր պատրաստել «քավության պատանքներ»։ Այսպիսի պատանքներ, ճշմարիտ է, պատրաստվում են Երուսաղեմի վանքում, և միաբանությունը մի-մի հատ ընծայում է այն ուխտավորներին, որոնք մի նշանավոր քանակությամբ նվերներ էին տված վանքի գանձարանին։ Իսկ մերը իսկականը չէր. մեր ունեցածը մեր ձեռագործն էր։ Բայց այնքան ճշտությամբ նմանեցրած էր իսկականին, որ կարող էր գրավել ամեն մի մոլեռանդի սնահավատությունը։ Այն սպիտակ կտավի վրա տպված էին գույնզգույն ներկերով փրկչի մարդեղության խորհրդի բոլոր նկարագիրները. նրա ծնունդը, մկրտությունը, խաչելությունը, հարությունը և այլն։ Բացի դրանցից, կային նրա վրա զանազան սուրբերի, հրեշտակների և հրեշտակապետների պատկերներ։

Մեր արհեստի ճյուղերից մեկն էր պատրաստել այդպիսի պատանքներ։ Կտավը և ներկերը կարելի էր ամեն տեղ գտնել. իսկ փայտի վրա փորագրած պատկերները մեզ հետ ունեինք։ Շատ գիշերներ անց էինք կացնում պատանքներ, խաչեր, «տեր-ողորմյաներ» և այլ դրանց նման իրեղեններ պատրաստելով։ Եվ այդ բոլորը Երուսաղեմի վանքի անունով վաճառելով, մեծ վաստակ էր բերում մեզ։

Այս բոպեիս էլ, այդ տողերը գրելու ժամանակ, սարսափում եմ ես, իմ մարմնի վրա դող է ընկնում, երբ մտաբերում

եմ մեր կատարած չարագործությունները։ Արդյոք, ո՞ր աստիճան բարոյապես ընկած էինք մենք, որքան մե՜ծ էր մեր մեջ անպատկառ անզգայությունը, որ համարձակվում էինք կրոնը, եկեղեցու սրբությունները մեր խաբեբայությունների, մեր շահասիրության առարկա դարձնել...

Մենք ման էինք ածում մեզ հետ մի ամբողջ շարժական մագազին։ Մեր սնդուկների մեջ կային ամեն տեսակ մթերքներ։ Որտեղ որը շահ էր բերում, այն էինք վաճառում։ Գնալով ավելի և ավելի ներս էինք մտնում կայսրության հեռավոր գավառները, միշտ խույս տալով մեծ քաղաքներից։ Այդ առանց պատճառի չէր։ Ուր ավելի տիրում էր մտավոր խավարը, ուր ժողովուրդը դեռ գռեհկության մեջ էր, այնտեղ ավելի առատ էր լինում մեր հունձքը...

Խաբել, սուտ խոսել, կողոպտել, ամեն տեղ մի նոր կերպարանք տալ իրան,— այդ խարդախությունների մեջն էր մեր գործունեությունը։ Մենք ունեինք մեզ հետ ամեն տեսակ պարագայք, ամեն տեսակ հարմարություններ, մի տեղ՝ իրան ձևացնելու որպես ասիացի վաճառական, մյուս տեղ՝ որպես կրոնավոր, մի այլ տեղ հասարակ արհեստավոր և երբեմն մուրացկան, բժիշկ, կախարդ, ձեռնածու և այլն։

Խաչագողը անդադար պետք է փոխե յուր կերպարանքը. նա միշտ միևնույն դերի մեջ մնալ չէ կարող։ Ես ուրախ էի, որ բավական վարժված էի այդ բոլորի մեջ և հպարտանում էի իմ ճարպկություններով... Քավոր Պետրոսը գովում էր իմ հառաջադիմությունը, ասելով.

— Մուրադ, զավակս, դու խելացի տղա ես, ամեն բան շատ շուտ սովորեցար...

Քիչ չէր պատահում, որ մեր ծուղակի մեջ ընկնում էին այնպիսի բարեպաշտ քրիստոնյաներ, որպիսիքը էին հարուստ կալվածատերերը և նրա միամիտ տիրուհին, որոնց պատկերները տեսանք նախընթաց գլխում։ Բայց զարմանալին այն էր, թե ինչպես էր հաջողվում մեզ գտնել այդպիսիներին։ Ահա ինչպես.

Ամեն մի քաղաք կամ մեծ գյուղ մտնելուց հետո, քավոր Պետրոսը ինձ յուր հետ առնելով, կգնայինք մի հյուրանոց։ (Այդպիսի տեղերը հաճախում էինք հասարակ արհեստավորի հագուստով)։ Առհասարակ ընտրում էինք այնպիսի հյուրանոց-

ներ, ուր հաճախում էր ժողովրդի ստոր, միևնույն ժամանակ անբարոյական մասը։ Ուր ամեն տեսակ մարդկանց կարելի էր գտնել, սկսյալ փողոցային սրիկաներից, ավազակներից, մինչև խաղամոլներ, գրպանահատներ, մոլարբուներ և այլն։ Այդ հասարակությունը գիտե քաղաքի բոլոր գաղտնիքները։ Առանց նպատակի չէր, որ քավոր Պետրոսը ընտրում էր այդպիսի անառակ տեղեր։ Կտեսնեիր, մեկին գտավ։ (Նա յուր նպատակներին հարմար մարդիկ գտնելու մեծ ընդունակություն ուներ)։ Կսկսեր նրա հետ ծանոթանալ, յուր հաշվով խմեցնել և թուղթ խաղալ։ Թղթախաղի մեջ ոչ ոք քավոր Պետրոսի հետ կարող չէր մրցություն անել։ Բայց այսպիսի դեպքերում, դիտմամբ միշտ տանուլ էր տալիս, որպեսզի յուր նոր ծանոթին ավելի ևս մտերմացնի յուր հետ։ Խաղը, խմելը տևում էր ամբողջ ժամեր։ Այդ միջոցում նա կարողանում էր թափ տալ յուր խաղակցի գլխից այն գաղտնիքները, ինչ որ իրան պետք էր։ Դա կատարվում էր այնքան անզգալի կերպով, մինչ նրա խաղընկերը ոչինչ չէր նկատում։

Մի այսպիսի հյուրանոցի մեջ, փոքրիկ գավառական քաղաքում, քավոր Պետրոսը տեղեկացավ մի պառավ տիկնոջ գաղտնիքների։ Հաղորդողը նույն տիկնոջ ծերունի սպասավորն էր, որ մանկությունից ծառայել է նրա մոտ, բայց ալևոր հասակում արտաքսված էր չափազանց արբեցողության համար։ Տիկինը այն պառավներից մեկն էր, որ իրանց մանկությունը անց են կացնում զանազան զվարճության փոթորիկների մեջ, իսկ գերեզմանին մոտենալու ժամանակ մտածում են առաքինի լինել։ Նա ապրում էր յուր կալվածներում, որոնց մեջ մի քանի հազար հոգի ճորտեր կային։ Կալվածները գտնվում էին քաղաքից երկու հարյուր վերստ հեռավորության վրա։

— Դա խիստ պարարտ որս է Երուսաղեմի առեղայի համար,— ասաց քավոր Պետրոսը, և մյուս օրը վաղ-առավոտյան պատրաստվեցանք այնտեղ գնալու։

Քավոր Պետրոսը շատ լավ գիտեր, թե ամեն մի տեղ գնալու համար ի՞նչ տեսակ պատրաստություններ էին հարկավոր, որպես հմուտ զորապետը իսկույն կշռում է, թե այս-ինչ բերդը գրավելու համար ո՞ր կողմից կամ որքան թնդանոթներով պետք է ռմբակոծել։ Բայց այն առավոտ այնքան շտապեց նա, որ մոռացավ մի քանի անհրաժեշտ բաներ։

Ծածկված կառքը յուր հինգ միագույն ձիաներով թողեց քաղաքում. հրամայեց լծել մի ճանապարհորդական թեթև սայլակ երեք ձիաներով։ Մեր սնդուկները մնացին նույն հյուրանոցում, որտեղ իջևանել էինք։ Աբիսինիացին մնաց այնտեղ մեր իրեղենները պահելու համար։ Մենք ճանապարհ ընկանք արևի ծագելուց շատ առաջ։ Ես կառավարում էի ձիաները, իսկ քավոր Պետրոսը, փաթաթված յուր աբեղայական լայն վերարկուի մեջ, նստած էր սայլակի վրա։

Երեկոյան պահուն մենք հայտնվեցանք պառավ տիկնոջ տանը հասարակ աբեղաների հագուստով, առանց որևիցե հանդիսավոր ձև տալու մեր այցելությանը։ Պառավը բարեսրտությամբ ընդունեց մեզ, որպես աղքատ օտարերկրյա կրոնավորների, և ավելի շարժվեց նրա գութը, երբ լսեց սուրբ Երուսաղեմի անունը։

Քավոր Պետրոսը հրամայեց ինձ փոքր-ինչ հիվանդ ձևանալ, որ առիթ ունենանք այն գիշեր մնալ պառավի տանը։ Տիկինը այնքան բարեսիրտ էր, որ խորին ցավակցությամբ խղճացավ իմ վրա, յուր ձեռքով խինա խմացրեց, պատվիրեց աղախիններին, որ իմ ոտների տակ տաք ջրով լցրած շշեր դնեն, որպեսզի ես քրտնեմ, որովհետև մրսած էի։

Թե ի՞նչ ասաց, ի՞նչ- խոսեց քավոր Պետրոսը տիկնոջ հետ, ես չգիտեմ, որովհետև ես պառկած էի մյուս սենյակում. ես հիվանդ էի։

Առավոտյան ինձ լավ էի զգում։ Քավոր Պետրոսը պատրաստվեցավ մի թեթև մաղթանք կատարելու, որ հետո հեռանանք։ Հայտնվեցավ, որ քավոր Պետրոսը մոռացել էր յուր հունարեն ավետարանը և նրա տեղը սխալմամբ վեր էր առել մի հաստ, մագաղաթյա գիրք, գույնզգույն ներկերով գրված։ Դա հայերեն հին բժշկարան էր, որից երբեմն օգուտ էր քաղում։ Նրա մեջ կային շատ բաներ. օրինակ, լոշտակի բույսը գտնելու աղոթքը, զանազան հոդվածներ «վեցհազարյակի» կախարդական արհեստից, տեսակ-տեսակ աստղագիտական աղյուսակներ, համաստեղությունների մարդկանց ճակատագրի վրա ունեցած լավ կամ վատ ազդեցությունը և այլն։

Քավոր Պետրոսը ամենևին շշփոթվեցավ, երբ նկատեց, որ հունարեն ավետարանի փոխարեն այդ գիրքն է վեր առել։ Նա սկսեց կարդալ։ Ցուր ընթերցանության մեջ գործ էր ածում

այնպիսի բառեր, այնպիսի խոսքեր, որ ոչ մի լեզվի մեջ չէր կարելի գտնել։ Բոլորը ինքն էր հնարում։ Ես էլ ոչինչ չէի հասկանում։ Բայց այնպիսի մի ջերմեռանդությամբ ձև էր տալիս թե յուր առոգանությանը, թե արտասանությանը և թե ձայնին, որ անկարելի էր կասկածել, թե նրա կարդացածը սուրբ գիրք չէ։

Ես էլ սկսեցի քավոր Պետրոսի օրինակին հետևել։ Բայց ո՞չ նրա նման հնարած, անմիտ խոսքեր կարդալ, այլ երգել զանազան «ջանգյուլումներ» և հայերեն ռամկական երգեր, որ սովորել էի մանկության ժամանակ։ Իմ ձայնը վատ չէր, հոգևոր երգերը ես էի երգում։

Մեր ամբողջ ծիսակատարությունը վերջացավ մի հիմար երգով, որի մեջ դարձյալ փոքրիշատե միտք կար։ Դա վերջին մեղեդին էր։

Քավոր Պետրոսը սկսեց.

«Մեր տղա, որսի ժամանակ է,
Մեր գործն այստեղ հաջողակ է,
Պառավի գլուխը դատարկ է,
Որքան կարող ես՝ հավաքե...

Ալելույա, ալելույա,
Սոխ ու սխտոր, ալելույա,
Կանաչ կիտոր, ալելույա»։

Ես պատասխանեցի նույն եղանակով.

«Վերջացավ մեր պատարագը,
Հիմա պարպենք պառավի քսակը,
Հիմարների այդ տեսակը,
Կկատարե մեր փափագը...

Ալելույա, ալելույա,
Սոխ ու սխտոր, ալելույա,
Կանաչ կիտոր, ալելույա»։

Մեր օրհներգությունը, որքան և խաբեական լիներ, այսուամենայնիվ, խորին ազդեցություն գործեց պառավի վրա, խաչագողները շատ անգամ զվարճության առարկա են դարձնում իրանց արհեստը. այսօր մենք նույնպես վարվեցանք։

Պառավը առաջարկեց նախաճաշիկ ուտել։ Այս անգամ քավոր Պետրոսը չէր խորշում կերակուրներից և թարգմանի բերանով չէր խոսում։ Նա անդադար հանաքներ էր անում, և ճրբեմն նուրբ սրախոսություններով ծիծաղեցնում էր պառավին։ Բայց երբ պառավը առաջարկեց նրան հարյուր ռուբլի «աջահամբույր», քավոր Պետրոսը այն ժամանակ միայն ընդունեց ծանր և մինչև անգամ խիստ կերպարանք, և մերժեց արծաթը, ասելով.

— Այդ բավական չէ ձեր մեղքերը քավելու համար, տիկին։

— Ի՞նչ մեղքեր,— հարցրեց պառավը վրդովված կերպով։

Քավոր Պետրոսը ինձ աչքով արեց, ես սենյակից դուրս եկա. նրանք մնացին մենակ։ Մյուս սենյակից ես լսում էի նրանց խոսակցությունը։

— Ի՞նչ մեղքեր,— կրկնեց պառավը։

— Մի՛ թաքցրեք, տիկին, ես բոլորը գիտեմ... Ձեր անցյալի նարսափելի պատկերը նկարված է իմ աչքի առջև։

— Որպե՞ս։

— Դուք մի ծեր գեներալի միակ զավակն էիք։

— Այդպես է։

— Հորից մեծ ժառանգություն ստացաք։

— Ուղիղ է։

— Պետերբուրգում ամուսնացաք մի մեծ աստիճանավորի հետ։

— Այդպես է։

— Դուք միմյանց հենց սկզբից չէիք սիրում. նա հրապուրվեցավ քո փողով, իսկ դու՝ նրա աստիճանով։

Վերջին խոսքերը լսածին պես պառավի երեսի խորշոմների մեջ նկատվեցան ցնցումներ։ Քավոր Պետրոսը շարունակեց.

— Դուք չսիրեցիք ձեր ամուսնին, որովհետև ձեր սիրտը ուրիշին էր պատկանում...

— Հետո՞։

— Ձեր ամուսնի խանդոտությունը առիթ եղավ նրա մահին...

— Աստվա՜ծ իմ։ Բավական է։

— Լսեցե՛ք, դեռ բոլորը չէ։ Դուք թունավորեցիք օրինավոր ամուսնին, որ ազատ կյանք վարեք սիրեկանի հետ։

Պառավը կրկին գոչեց զարհուրելով.

— Բավակա՜ն է, ի սեր աստուծո։

— Դեռ բավական չէ։ Ես բոլորը դեռ չեմ ավարտել։ Լսե՛ցեք.

— Դուք սպանեցիք ամուսնին, որ ավելի ազատ ապրեք սիրեկանի գրկում, և ձեր եղեռնագործությունը ծածկելու համար, նրա հետ միասին գնացիք արտասահման։ Այնտեղ սիրեկանը վատնեց ձեր փողերը, կողոպտեց ձեզ և մաշված լաթի նման մի կողմ ձգեց։ Դուք վերադարձաք Պետերբուրգ։ Այստեղ երկար մնալ չկարողացաք, որովհետև հանապազ ձեզ տանջում էր մի կողմից, սպանված ամուսնի ուրվականը, մյուս կողմից, խաբված սերը... Ձեր խիղճը հանգստացնելու համար, դուք տեղափոխվեցաք այս գյուղը, որ միակ կտորն էր մնացած ձեր հոր ահագին հարստությունից, և այնուհետև սկսեցիք մխիթարություն որոնել գյուղական առանձնության մեջ։

— Բավական է, դուք բոլորը գիտեք... Ես սարսափում եմ...

— Ես պետք է վերջացնեմ։ Այդպես է ձեր տխուր անցյալը։ Հիմա նայեցեք, ահա ձեր ապագայի սոսկալի նկարագիրը.— իմ առջև բացված է տարտարոսը... ծծումբի բոցերի միջից հազիվ նշմարում եմ ձեր սարսափած դեմքը... սատանաները բորբոքում են կրակը, ձեր տանջանքը ավելի և ավելի սաստկացնելու համար... Իսկ այնտեղ, հեռու, մի բարձրության վրա, տեսնում եմ կանգնած մի մարդ, որպես վրեժխնդրության բողոքավոր արձան կանգնած է նա, նայում է ահռելի դեմքով, և աղաչավոր ձեռքերը մեկնել է դեպի հավիտենականի աթոռը, արդարադատություն է խնդրում... Դա ձեր ամուսնի պատկերն է...

Վերջին խոսքերը համարյա թե լսեց պառավը, որովհետև նա արդեն ուշաթափ ընկած էր։ Քավոր Պետրոսի մոգական ազդեցությունը կրկին նրան ուշքի բերեց, և բռնելով նրա թևից, նստեցրեց դիվանի վրա։

Փոքր-ինչ հանգստանալուց հետո արտասուքը աչքերում, հարցրեց նա.

— Այդ դուք որտեղի՞ց գիտեք։

— «Աստուծո մարդը» ամեն բան գիտե,— պատասխանեց քավոր Պետրոսը ծանր կերպով։

Բավական մեծ քանակությամբ արծաթ արժեց պառավին, մինչև «աստուծո մարդը» հոժարեցավ քավել նրա մեղքերը և ազատեց դժոխքի տանջանքներից։ Բացի դրանից, տվեց նրան մի սուրբ պատանք, որպես Երուսաղեմի հիշատակ, և պատվիրեց մեռնելուց հետո նրանով թաղվել, ասելով, թե չար ոգիները երբեք չեն համարձակվի մոտենալ նրա մարմնին։

Պառավին ըստ կարգին կողոպտելուց հետո, վերադարձանք նույն հյուրանոցը, ուր թողել էինք մեր իրեղենները։ Այստեղ գտանք աբիսինիացուն անհայտացած։ Մեր հարցերին հյուրանոցի տերը ոչինչ բացատրել չկարողացավ, որից կարելի լիներ մի որոշ հետևանքի հասնել։ Բայց քավոր Պետրոսը իսկույն հասկացավ պատահածը, և մտավ այն սենյակը, որտեղ դրած էին մեր իրեղենները։ Նա սկսեց քննել արկղները։ Նրանցից մեկի կողպեքը կոտրած էր։ Դա միևնույն արկղն էր, որի մեջ սովորաբար պահում էինք մեր փողերը։ Պակաս էր հիսուն հազար ռուբլի։ Ես հիշեցի հայկական առածը.

«Գողը գողից գողացավ,
Աստված տեսավ, զարմացավ...»։

— Ես այդ վաղուց սպասում էի...— ասաց քավոր Պետրոսը և սկսեց ծիծաղել։

Զարմանալի բնավորություն ուներ այդ մարդը. ոչինչ նրան վրդովեցնել չէր կարող։ Դա այն տեսակ քարասիրտ մարդիկներից էր, որոնք ոչ դժբախտության ժամանակ տրտմել գիտեն և ոչ հաջողության ժամանակ ուրախանալ։ Ես չկարողացա համբերել և փոքր-ինչ կոպիտ կերպով ասացի նրան.

— Հիսուն հազար ռուբլի տարել է անպիտանը, և դուք դեռևս ծիծաղո՞ւմ եք։ Հենց այս րոպեից պետք է նրա հետևից ընկնել։

— Երբ խաչագողը անհայտանում է, նրա հետևից այլևս չեն ընկնում,— պատասխանեց նա, դարձյալ յուր ծիծաղը շարունակելով։

— Ինչո՞ւ։

— Նրա համար, որ անկարելի է գտնել։

— Ես այդ անպիտանին հենց այս գիշեր կարող եմ բռնել։

— Չես կարող։ Եթե նա իմ աշակերտն է, ես լավ եմ ճանաչում, թե ի՞նչ պտուղ է...

Աբիսինիացին քավոր Պետրոսի ամենաընդունակ աշակերտներից մեկն էր։ Նրա իսկական անունը Մաթոս էր, բայց չափազանց խորամանկության համար կոչում էին «շեյթան Մաթոս», որ նշանակում է սատանա Մաթոս։

Ես հարցրի քավոր Պետրոսից.

— Դուք ասում եք, թե վաղուց սպասում էիք մի այսպիսի վարմունք նրա կողմից, երբ այսպիսի կասկած ունեիք նրա վրա, ինչո՞ւ չէիք հեռացնում ձեզանից։

— Երբ խաչագողը կասկած ունի յուր ընկերի վրա, այդ դեպքում ոչ նրանից բաժանվում է և ոչ հեռացնում է իրանից։

— Ապա ի՞նչ է անում։

— Սպանում է...

Վերջին խոսքը ակամա թռավ քավոր Պետրոսի բերանից։

— Սպանո՞ւմ է...— կրկնեցի ես հետաքրքրությամբ։

— Ուրիշ ճար չկա։ Եթե կասկածավորին կենդանի հեռացնե, այնուհետև պետք է զանազան չարիքներ սպասե նրա կողմից։ Նա կարող է դավաճանել, կարող է մատնել, մի խոսքով, շատ վնասներ կարող է տալ, որովհետև յուր ընկերի գաղտնիքների մասին շատ տեղեկություններ ունի։

— Որպես աբիսինիացին մեր գաղտնիքների մասին...

— Այո՛։

— Ուրեմն ինչո՞ւ չսպանեցիք նրան։

— Խոստովանվում եմ, որ այդ դեպքում ես սաստիկ ծույլ գտնվեցա։ Միշտ այսօր էգուց ասելով, գործը այնքան հետաձգեցի, մինչև նա ավելի ճարպիկ գտնվեցավ...

— Այո՛, ճարպիկ գտնվեցավ. բացի հիսուն հազար ռուբլի հափշտակելը, տարավ յուր հետ մեր գաղտնիքների մեծ մասը։ Այսուհետև նա ամեն տեսակ խաղ կարող է խաղալ մեզ հետ։

— Կարող է...— ասաց քավոր Պետրոսը,— մանավանդ, երբ կմտածե, որ մենք նրան հանգիստ չենք թողնի...

Այդ ժամանակ միայն ես նկատեցի քավոր Պետրոսի դեմքի վրա վրդովմունքի նշաններ։ Նա առ ոչինչ էր համարում հիսուն հազար ռուբլու հափշտակությունը։ Փողի կորուստը նրան չէր կարող խռովություն պատճառել. փող նա միշտ կարող էր գտնել։ Բայց նրան վրդովեցնում էր յուր խաբված դրությունը։ Նա սաստիկ վիրավորանք էր համարում, որ գտնվեցավ աշխարհում մի մարդ, որը կարողացավ խաբել քավոր Պետրոսին,— այդ խաբեության մեծ հանճարին...

— Պետք է նրան «ներողամտության նշան» ցույց տալ,— ասաց քավոր Պետրոսը և վառեց երկու մոմ, դրեց լուսամուտի առջև ներսի կողմից։

Դրսում տիրում էր գիշերային խավարը։

— Ա՞յդ է «ներողամտության նշանը»։

— Այդ է։ Պետք է նրան միամտացնել, որ մենք ներում ենք, որ մենք այլևս չենք հալածի նրան։

Քավոր Պետրոսի վարմունքը ինձ բոլորովին ծիծաղելի երևվաց։ Ես ասացի.

— Նա կորավ, գնաց և գուցե այժմ մի քանի հարյուր վերստ հեռացել է այս քաղաքից։ Նա որտեղի՞ց պետք է տեսնե այդ «ներողամտության նշանը»։

— Նա գուցե այս րոպեիս պտտվում է մեր հյուրանոցի շուրջը։

Ես խլեցի մի տապար, որ այնտեղ դրած էր և դուրս վազեցի, կոչելով.

— Եթե այդպես է, ես հիմա նրա փոքրիկ գլուխը կջարդեմ։

Քավոր Պետրոսի զորեղ ձեռքերը բռնեցին ինձ։ Նա ասաց բավական հեգնական եղանակով.

— Ավելի լավ կանես, եթե նրա փոքրիկ գլխով ու փոքրիկ մարմնով չխաբվես։ Նա թեև պստիկ է, բայց ճստիկ է։ Նա վագրի սիրտ ունի և առյուծի ուժ։

Այդ խոսքերը սաստիկ վիրավորեցին իմ հպարտությունը և ես փոքր-ինչ տաքացած կերպով պատասխանեցի.

— Դուք կարծում եք, որ ձեր «ներողամտության նշանը» կօգնե՞, և նա կհավատա՞, որ դուք այսուհետև չե՞ք հալածի նրան և յուր անձը պաշտպանելու համար չի՞ մատնի ձեզ։

— Օրինավոր խաչագողը պետք է այնքան ազնվություն ունենա, որ հավատա։ Այդ նշանը մեր մեջ ընդունված է որպես մի սուրբ պայման, որի դեմ հագիվ թե կմեղանչե ամենաստոր խաչագողն անգամ։

Գ

ԵՐԿՐՈՐԴ ՔԱՅԼ
ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Քավոր Պետրոսը զարմանալի հոտառություն ուներ վտանգի ժամանակ։ Նա իսկույն հասկանում էր, երբ կարող էր պատահել որևիցե անհաջողություն։ Պառավին ըստ կարգին կողոպտե-

լուց հետո, աբիսինիացու անցքից հետո, մի անգամ ասաց ինձ.

— Մուրադ, պետք է առժամանակ փոխել մեր մորթը...

Ես հասկացա նրա միտքը։ Նա ասել էր ուզում, թե պետք է փոխել մեր կերպարանքը, մեր արհեստի ու պարապմունքի ձևը։ Ես շատ շուտ էի հասկանում նրա բոլոր փոխաբերական խոսքերը. օրինակ երբ նա ասում էր՝ «երկինքը ամպած է», ես գիտեի, որ դա նշանակում է, թե փոթորիկը մոտ է, սպառնում է վտանգ։ Այսպես մեր մեջ խոսքերի մեծ մասը պայմանավորված էին, ունեին առանձին միտք։

Պատրաստվեցանք փոխել մեր «մորթը»։

Նույն օրը թողեցինք մեր կեցած հյուրանոցը, գիշերով անցանք մի այլ հյուրանոց։ Այդ այն նպատակով էր, որ այստեղ մեր կերպարանափոխությունը ոչ ոք չնկատե, որովհետև առաջին հյուրանոցում բավական ճանաչված էինք։ Քավոր Պետրոսը կարճացրեց յուր փառահեղ սպիտակ մորուքը, որ ծածկում էր նրա ամբողջ կուրծքը, խուզել տվեց գլխի աբեղայական երկայն մազերը, հետո ներկեց սև գունով և համարյա թե երիտասարդացավ։ Նրա դեմքը դեռ բավական թարմ էր մնացել, միայն մազերը վաղուց սպիտակել էին։ Նույնը հրամայեց անել և ինձ։ Իմ սև սաթի պես փայլուն մազերը ներկելու պետք չունեին, ես միայն կարճացրի, իսկ երեսիս մազերը դեռ այնքան չէին աճել, որ հարկավոր լիներ կտրել։ Մենք ձգեցինք մեր աբեղայական հագուստը, մի կողմ դրեցինք խաչն ու ավետարանը, և ստացանք աղքատ, թափառաշրջիկ մանրավաճառների կերպարանք։ Անցանք մի այլ գավառ։ Այստեղ մեր ձիանները, ճանապարհորդական սայլակը, և ինչ որ ավելորդ ունեինք, բոլորը վաճառվեցան։ Մի քանի անհրաժեշտ իրեղեններ, որ կարող էին երբեմն մեզ պետք գալ, պահվեցան։ Ո՞ւմը պահ տվեց քավոր Պետրոսը, — ես հասկանալ չկարողացա։

Հագանք ճանապարհորդական կոշիկներ, ծնկներից վեր բարձր վզերով և սկսեցինք ոտքով թափառել գյուղից գյուղ։ Քավոր Պետրոսը կրած ուներ մի փոքրիկ արկղիկ, իսկ ես շալակել էի մի ահագին արկղ զանազան հարկերով, զանազան լուսնի անձուկ խորշերով, որոնց յուրաքանչյուրի մեջ դարսված էին առանձին տեսակ վաճառքներ։ Երբ մտնում էինք մի գյուղ, ես մանրավաճառների սովորական ձայնով եղանակում էի

«Մանդրո՜ւք ապրանք... մանդրո՜ւք ապրանք... լավ ասեղներ, թելեր, գուլպաներ, ձեռնոցներ, պատկերներ, հուլունքներ» և այլն։

Իսկ շատ անգամ նույն երկրի լեզվով երգում էի մի այսպիսի երգ.

«Վի՜քն է, լի՜քն է իմ արկղիկը
Գույնզգույն փարչաներով.
Թող գնե սիրուն աղջիկը,
Ես կտամ էժան գնով։

Չթեր ունեմ ես զանազան,
Ծաղիկներով զարդարած,
Մատնիք ունիմ, ապարանչան,
Շուրջը ակներով շարած։

Դուրս ե՜կ, դուրս ե՜կ, կարմիր աղջիկ,
Կզարդարեմ քո մատները.
Եթե կտաս ինձ մի պաչիկ,
Ձրի կառնես իմ չթերը»։

Իմ ձայնը վատ չէր։ Առհասարակ մանրավաճառի ձայնը այն ուրախալի ձայներից մեկն է, որ խիստ հազիվ լսելի է լինում քաղաքներից հեռու ընկած գյուղերի մեջ։ Այդ ձայնը մոգական ազդեցություն է գործում։ Իսկույն դուրս են վազում խրճիթներից կնիկներ, աղջիկներ, երեխաներ և հավաքվելով ցանկալի հյուրի շուրջը, թափում են քսակի մեջ իրանց տարիներով խնայած գրոշները։ Ա՜խ, ո՜րքան ուրախալի բան է առևտուր ունենալ մի այսպիսի միամիտ հասարակության հետ, որ ոչինչ տեղեկություն չունի վաճառքի թե արժողության և թե որպիսության մասին...

Ճորտությունը այն ժամանակ դեռ տիրում էր այդ երկրում։ Գյուղերում երբեմն պատահում էին մի-մի հարուստ տներ։ Դրանք ըստ մեծի մասին լինում էին կալվածատերերը, որոնց պատկանում էր գյուղը յուր ճորտերով։ Մեզ հրավիրում էին աղայի տունը։ Շատ անգամ ամբողջ ժամեր էին անցնում, մինչև տիկինը ընտրում էր յուր համար ձեռնոցներ, մանկահասակ օրիորդը՝ անուշահոտ յուղեր, աշակերտ որդին՝ մատիտներ, գրիչներ, երեխաները՝ խաղալիքներ, աղախինները՝ գլխի թաշկինակներ, մի խոսքով, ամեն մեկը ընտրում էր յուր պետ-

քերի համար զանազան բաներ։ Այնուհետև պետք է երկար ու բարակ բազար անել, երդվել, ստախոսել, գովաբանել վաճառքը և այլն։

Այդպիսի դեպքերում քավոր Պետրոսը առհասարակ ինձ էր թողնում առևտուրը առաջ տանել։ Իմ դեմքը բավական գեղեցիկ էր։ Ես ընդունակ էի գրավելու, հարկավոր ժամանակ հանաքներ և սրախոսություններ անելու։ Այդ պատճառով դեռահաս աղջիկներին ավելի ախորժելի էր ինձ հետ բազար անել, քան թե մոայլոտ քավոր Պետրոսի հետ գործ ունենալ։ Գեղեցկադեմ գործակատարը մի լավ գրավական է առևտուրի հաջողությանը, մանավանդ, երբ գնողները կանայք են։

Շատ անգամ ես դիտմամբ գործը երկարացնում էի, ավելի այն ժամանակ, երբ տեսնում էի, որ, ինչպես ասում են, մեկի «աչքումը լույս կար»։— Օրիորդ, ասում էի, ձեր գեղեցիկ գլխին շատ կսազի այդ հիանալի վարսակալը, հատուկ ձեր սիրուն մազերի համար պատրաստված է։ Օրիորդը ժպտում էր, խնդրում էր մորից գնել այն վարսակալը։

Ի՞նչ էր անում քավոր Պետրոսը։

Տեսար, մոտեցավ տան պառավին։ (Ըստ մեծի մասին այնպիսիներին, որոնց վրա տանեցիք ուշադրություն չեն դարձնում, միայն նայում են, որպես մի հնացած, գործածությունից ընկած կարասիքի վրա)։ Կսկսեր զբաղեցնել նրան, առածներ, առակներ կպատմեր, և արտասվելու չափ կծիծաղեցներ։ Նա առանձին ընդունակություն ուներ պառավներին գրավելու։ Այդ միջոցին ես առևտուրը ավելի ձգձգում էի, որպեսզի քավոր Պետրոսը ավելի երկար ժամանակ ունենա, որպես նա սովորաբար ասում էր՝ «տան հիմարի ուղեղը թափ տալու...»։

Այդ առանց նպատակի չէր։ Որովհետև քավոր Պետրոսը յուր հատուկ խորամանկությամբ, տեղեկանալով նույն տան հանգամանքներին, այնուհետև քիչ չէր պատահում, որ մի անգամ յուր արկղով այն տունը մտնող մանրավաճառը մյուս անգամ հայտնվում էր բոլորովին ուրիշ կերպարանքով,— խաչով, ավետարանով կամ սրով գիշերային մթության մեջ...

Եվ այդպես, մեր մանրավաճառությունը ուներ ոչ թե շահեկան նպատակ, այլ մենք գործ էինք դնում որպես մի միջոց, որ նրա պատրվակով կարողանայինք մեր ցանկացած տեղերը մտնել, հետազոտել, լրտեսել, առանց մեզ վրա կասկած հարուցանելու։

Ես մինչև այսօր սարսափելով հիշում եմ մի դեպք... մինչև այսօր զգում եմ իմ ձեռքերի վրա այն անմեղ արյան թացությունը...

Գտնվում էինք փոքրիկ գավառական քաղաքում։ Մենք մտանք մի տուն, իհարկե, իբրև մանրավաճառներ։ Քավոր Պետրոսը սովորություն ուներ հարկը պահանջած տեղերում ցույց տալ իրան կամ հիմար, կամ ապուշ և կամ չափից դուրս միամիտ։ Այդ տան մեջ նա ձևացրեց իրան սաստիկ երկչոտ։

Այնտեղ ապրում էին չորս հոգի միայն՝ երկու ալեոր ամուսիններ, մի սպասավոր և մի աղախին։ Ամուսին այրը ծխում էր յուր չիբուխը և անդադար գանգատվում էր ռևմատիզմից։ Պառավ տան տիկինը զբաղված էր յուր մոխրագույն թութակով և երկու սպիտակ կատուներով, որոնք նրա գլխավոր մխիթարությունն էին ներկայացնում։

Երբ որ մենք ներս մտանք, թութակը արտասանեց մի քանի մարդկային բառեր։ Քավոր Պետրոսը զարհուրեցավ... Այդ մարդը, որ հազար սատանաներից երկյուղ չուներ.— «սատանա՜ն... սատանա՜ն»...— աղաղակելով, ճիչ բարձրացնելով, դուրս փախավ։ Տանտիրոջ վրա ցավալի ներգործություն ունեցավ, երբ տեսավ, որ յուր թութակը անզգուշությամբ վախեցրեց խեղճ մարդուն։ Նա յուր սպասավորին ուղարկեց, մի կերպով ետ բերեցին քավոր Պետրոսին։ Պառավը երկար աշխատում էր համոզել, հանգստացնել նրան, հավատացնելով, որ յուր տեսածը սատանա չէ, այլ հասարակ թռչուն է, միայն սովորել է մի քանի բառեր արտասանել։ Քավոր Պետրոսը, որ մի քանի անգամ եղել էր թութակների հայրենիքում և ահագին խումբերով էր տեսել նրանց Հնդկաստանի կղզիներում,— վերջապե՛ս համոզվեցավ, որ յուր տեսածը սատանա չէր, մանավանդ, երբ պառավը դրեց նրան յուր ոսկրացած ձեռքի վրա և սկսեց շաքար ուտացնել։

Բարեսիրտ ամուսինները, քավոր Պետրոսին ավելի մխիթարելու համար, դիտմամբ թանկ վճարելով, գնեցին մեզանից զանազան իրեղեններ, որոնք գուցե նրանց ամենևին պետք չէին։ Մենք շնորհակալություն հայտնելով, և նրանց երկար կյանք բարեմաղթելով, հեռացանք։

Մենք իջևանել էինք մի կեղտոտ հյուրանոցում, որ ավելի նման էր գինետան, այն զանազանությամբ միայն, որ այստեղ կարելի էր գտնել խիստ վատ կահավորված սենյակներ։ Նրա ընդարձակ բակում՝ իրանց ձիաները հանդստացնելու համար կանգնում էին կառապանները։ Այդ պատճառով այդ հյուրանոցը այն տեսակներից էր, ուր ամբողջ գիշերը հաճախորդները չեն պակասում. անդադար շատերը մտնում են և դուրս են գալիս։ Եվ այդ հարբած, խելագարված խառնիճաղանջի մեջ տիրում էր այնպիսի բաքոսային խառնաշփոթություն, որ ոչ ոք միմյանց չէր հասկանում։ Այդ բոլորը մեզ համար շատ նպաստավոր էր։ Մեզ շատ հնարավոր էր գիշերվա մի որոշյալ ժամում դուրս գալ այնտեղից, գնալ ուր որ ցանկանում էինք, կատարել մեր գործը և կրկին վերադառնալ, առանց ոչ ոքից նկատելի լինելու։

Քավոր Պետրոսը մի գիշեր չգնաց հասարակաց սեղանատանը ընթրիք ուտելու, այլ պահանջեց մի ահագին կտոր սառն միս և մի շիշ արաղ, որ բերեցին մեր սենյակը։ Նա մի քանի մարդու չափ ուտել կարող էր, իսկ ամբողջ շիշ արաղը նրա սովորական խմիչքն էր ընթրիքի ժամանակ։ Ես արաղ չէի սիրում, պահանջեցի ինձ համար մի շիշ գինի։

Մենք տեղեկացել էինք, որ այն տունը, որտեղ թութակը վախեցրեց քավոր Պետրոսին, փոքրիկ քաղաքի հարուստ տներից մեկն էր։ Մենք գիտեինք, որ երկու ծերունի ամուսինները ունեին իրանց տան մեջ մի նշանավոր դումար, որ պահել էին սև օրվա համար։

Ընթրիքից հետո քավոր Պետրոսը հարցրեց ինձ.

— Մուրադ, դու ի՞նչ տեսակ զենք ավելի լավ գործածել գիտես։

— Ատրճանակներ։ Մի օր գրազ եկանք, ես հինգ անգամ մինը մյուսի ետևից կարողացա խփել օդի մեջ նետած խնձորը։

Քավոր Պետրոսին երբեք դուր չէր գալիս, երբ մեկը սկսում էր նրա մոտ պարծենալ։ Պարծենալու համար նրա կարծիքով պետք էր շատ մեծ գործ կատարած լինել։

— Այդ աղմուկ հանող զենքերը պետք չեն, երբ ուզում ես սուս ու փուս գործ կատարել,— ասաց նա։— Ավելի լավ են խուլ ու մունջ զենքերը, որ ձայն չհանեն։

Ես հասկացա նրա միտքը։

— Ուրեմն ես կարող եմ վեր առնել իմ տապարը։

— Վատ չէ։

Գիշերից բավական անցել էր, երբ մենք դուրս եկանք հյուրանոցից։ Անձրևը մանր կաթիլներով մաղվում էր։ Փողոցները դատարկված էին, մարդիկ չէին երևում։ Գիշերային թանձր խավարի մեջ մրափում էր քաղաքը։

Անցնելով մի քանի խուլ փողոցներ, մենք արդեն գտնվում էինք հիշյալ տան մոտ, որտեղ թութակը վախեցրեց քավոր Պետրոսին։

— Եթե շունը աղմուկ չբարձրացնե, լավ է,— ասացի ես։

— Ի՞նչ շուն,— հարցրեց քավոր Պետրոսը։

— Երբ ցերեկով մտանք այստեղ, ես նկատեցի մի ահագին շուն, որ շղթայով կապված էր բակում։ Գիշերը բաց են թողնում նրան։

— Նա հիմա հանգուցյալների կարգումն է դասված։

Քավոր Պետրոսի խոսքերից երևաց, որ նա մի անգամ ևս մտել էր այս տունը, այն անցքից հետո, որ թութակը վախեցրեց նրան։ Վերջին անգամ հայտնվել էր այնտեղ մուրացկանի կերպարանքով և միջոց էր գտել ոչ միայն թունավորելու շանը, այլ լավ հետազոտել տան դիրքը, մուտքերը և այլն։

Տան ընդարձակ բակը շրջապատված էր փայտյա ցանկապատով, որը այնքան ցածր էր, որ մի առանձին ընդդիմադրություն չարեց մեզ բակը իջնելու ժամանակ։ Այժմ հարկավոր էր մի կերպով ներս սողալ սենյակների մեջ։ Մի լուսամուտ, որ ցերեկով նկատել էինք, ուղղակի բացվում էր սպասավորների քնարանի մեջ։ Գիշերային տոթի պատճառով լուսամուտը բաց էր թողած։ Քավոր Պետրոսը Հերկուլեսի ուժ ուներ, իսկ ես թեթևաշարժ էի որպես առյուծ։ Երկու ահագին ջրի տակառները, որ կանգնած էին բակում անիվների վրա, միմյանց վրա դնելը և այդ սանդուղքներով լուսամուտից ներս մտնելը՝ մի րոպեի գործ եղավ։ Մենք գտանք սպասավորի սենյակում և աղախնին։ Երևում էր, այդ դեռահաս աղջիկը սովորություն ուներ երբեմն յուր տիրուհուց գաղտնի ծառայի քնարանը ներս սողալ...

Քավոր Պետրոսի երկաթի ձեռքերը երկուսին ևս ճնշեցին միևնույն անկողնի մեջ։ Նրանք քնած էին. աղջկա գլուխը դրած էր սիրեկանի թևքի վրա։ Նրանք զարթեցան։

— Սենյակների բանալինե՞րը,— հարցրեց քավոր Պետրոսը։

Նրանք փորձեցին ճիչ բարձրացնել։ Բայց քավոր Պետրոսի սպառնալիքը լռեցրեց նրանց։ Բանալիները իսկույն մեր ձեռքը անցան։

— Դու այդ նագելի սիրահարներին կպահես միմյանց գըրկում, մինչև ես գործը կվերջացնեմ...— ասաց քավոր Պետրոսը և հեռացավ։

Մանկահասակ աղախինը երկյուղից իսկույն ուշաթափ եղավ և դիակ դարձավ իմ ճանկերի մեջ։ Ես գործ ունեի այժմ միայն կատաղած սպասավորի հետ։ Ճշմարիտը խոստովանած, այդ Գոլիաթը այնքան ուժեղ էր, որ ես հազիվ կարողանում էի զսպել նրան։ Իմ դրությունը նախանձելի չէր։ Մենք կորած էինք, եթե նա դուրս պրծներ իմ ձեռքից։ Ուրիշ ճար չկար, պետք էր այդ գազանին հանգստացնել։ Իմ ծանր տապարի մի հարվածը գլուխից նրա գլուխը մահճակալից ցած։ Տաք արյունը դուրս փչեց պարանոցից սիրուհու կուրծքի վրա...

Դա եղեռնագործության ամենասարսափելին էր, որ ես կատարել եմ իմ կյանքում։ Գազանային անգթությունը այդ դեպքում անցնում է ամեն վայրենությունից։ Սպանե՞լ այն րոպեում, երբ երկու անմեղ արարածներ, իրանց հոգու բոլոր քնքշությամբ գրկախառնված, սիրում են միմյանց,— սպանե՞լ սերը,— դա սոսկալի չարագործություն է...

Մինչ ես Կայենի նման կանգնած էի իմ զոհի մոտ, լսելի եղավ քավոր Պետրոսի ձայնը.

— Հեռանանք...

Մյուս առավոտը քավոր Պետրոսը հանդարտ, հանգիստ տրամադրությամբ, ինձ յուր հետ առնելով, մտանք հասարակաց սեղանատունը նախաճաշիկ ուտելու։ Հյուրանոցի ամբողջ խոսակցությունը գիշերվա անցքի մասին էր։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց քավոր Պետրոսը յուր մոտ նստած մի արհեստավորից, որ դատարկում էր թեյի յոթերորդ բաժակը։

— Էլ ինչ պետք է լինի,— պատասխանեց արհեստավորը ցավակցաբար,— այս գիշեր անհայտ չարագործներ մտել են մի տուն, ծերունի տանտերերին, թե ամուսնին և թե կնոջը, երկուսին էլ խեղդել են, ծառայի գլուխը կտրել են, տանիցը ուրիշ բան չեն տարել, բացի զուտ փողերից։ Ասում են տասն հազարից ավելի կլինի։

— Անիծյալնե՞ր... այդ ի՞նչ անխղճություն է...— պատասխանեց քավոր Պետրոսը նույնպես ցավակցաբար։— Ինչպե՞ս աստված չէ պատժում այս տեսակ չարագործներին... խեղդե՞լ ծերունի մարդկանց,— դա որքա՞ն անգթություն է...

Մենք մի քանի օր ևս բոլորովին անվրդով կերպով շարունակեցինք մեր առևտուրը, հետո թողեցինք այդ քաղաքը։ Ոչ ոք կասկած ունենալ չէր կարող խեղճ մանրավաճառի վրա, որը թութակից անգամ վախենում էր, որը մի քանի օր առաջ մոնետելով նույն տունը, օրհնում էր, բարեմաղթություններ էր կարդում և երկար կյանք էր ցանկանում երկու ծերունիներին, որովհետև գնեցին նրանից բավական վաճառքներ ավելի թանկ գնով,— այո՛, ոչ ոք երևակայել անգամ չէր կարող, որ նույն «երկար կյանք» ցանկացողը ընդունակ կլիներ կարճելու նրանց կյանքը...

Թողնելով հիշյալ քաղաքը, մենք անցանք մի անծանոթ գավառ։ Առհասարակ ամեն մի հանցանք գործած տեղից երբ հեռանում էինք, թողնում էինք մեր ետևից ահագին տարածություն։ Այդ երկիրը այնքան ընդարձակ էր, որ ամեն տեղ բացվում էր մեր առջև մի նոր ասպարեզ։

Դ

ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ

Տասն և յոթ տարեկան էի ես, երբ ոտքս դուրս դրեցի հայրենական երկրից։ Այն օրից անցել էր յոթն տարի ևս, որ ես թափառում էի օտարության մեջ։ Այդ յոթն տարվա ընթացքում, կարծես թե, ես արբված լինեի մի տեսակ կախարդական ըմպելիքով, որ օրըստօրե ինձ թմրեցնում էր, խորասուզում էր մի անբացատրելի ինքնամոռացության մեջ։ Մի անգամ գոնե չզարթնեց իմ մեջ ինքնաքննության միտքը, որ ես խորհեի, թե ի՞նչ է իմ կոչումը, ի՞նչ նպատակի եմ ձգտում ես, դեպի ո՞ւր է տանում ինձ այդ տեղային եռանդը, ի՞նչ է իմ ներկան և ի՞նչ կլինի իմ ապագան...

Իմ ամբողջ մտավոր և հոգեկան զորությունը լարված էր դեպի չարը, դեպի անբարոյականը, դեպի վնասակարը։ Ես

մի առանձին դիվական հրճվանքով ուրախանում էի, երբ արյունոտ գործը հաջողվում էր ինձ իմ սոսկալի ձեռնարկությունների մեջ։

Ինչո՞ւ այսպես փոխվեցա ես, ո՞ւր մնաց իմ հոգու քնքշությունը, որտե՞ղ կորավ իմ բնավորության մեղմությունը...

Ես գործում էի ոչ թե խելքով, ոչ թե գիտակցաբար, այլ մի տեսակ վայրենի բնազդումով, որ միայն գազաններին է հատուկ։

Խաբել՝ խաբելու համար, կողոպտել՝ հափշտակելու համար, սպանել՝ արյուն թափելու համար, ոսկի և արծաթ դիզել՝ միայն ունենալու համար,— դրանք էին այն անհագ բաղձանքները, դեպի որոնք մղում էր ինձ վայրենի բնազդումը։

Ջարագործը մի տեսակ բարոյական խելագար է։— Այդ հիվանդության մեջ էի գտնվում ես։

Ես ոչ միայն մոռացել էի իմ անձը, այլ մոռացել էի և այն արարածներին, որոնք իմ սրտին խիստ մոտ էին։ Եվ մի անգամ գոնե մտքիս չբերեցի իմ հայրենիքը և այն ազգը, որի արյունն էի կրում և որից կտրված էի։ Ես մի անգամ գոնե մտքիս չբերեցի մորս, քույրերիս և վերջապես Սառային...

Որպիսի՜ խոստմունքներով բաժանվեցա նրանցից, որքա՜ն մեծ ակնկալություններ ունեին նրանք իմ մասին։ Պարսկաստանի սահմանից անցնելու ժամանակ իմ սիրտը դեռ թարմ էր, որդիական զգացմունքը դեռ ոչ բոլորովին հանգել էր նրա մեջ։ Այն ժամանակ ես մտածեցի մորս վիճակի վրա և այդ պատճառով ծախած ավանակիս արծաթը ուղարկեցի նրան։ Իսկ այնուհետև որքա՜ն գումարներ անցան իմ ձեռքը, բայց մի անգամ գոնե չմտածեցի, թե աղքատության մեջ ապրող մայր ունեմ և որբ մնացած քույրեր ունեմ։ Ջարմանալի՜ փոփոխություն։ Պանդխտությունը ինչպես քարացնում է մարդու սիրտը... Ինչպե՜ս կարծրացնում է բոլոր քնքուշ զգացմունքները։ «Աչքից հեռու, սրտից հեռու»,— ասում է հայկական առածը։ Դա կատարվել էր իմ հետ։

Այդ բոլոր մտածությունները զարթնեցան իմ մեջ այն ժամանակ, երբ հանկարծ ստացա մորիցս մի նամակ։ Ամբողջ յոթն տարի օտարության մեջ ապրելով, այդ առաջին նամակն էր, որ ստանում էի մոռացված հայրենիքից։ Նամակը հասավ ինձ մի խաչագողի ձեռքով, որ եկել էր Պարսկաստանից։ Նրա

թվականից անցել էր ավելի քան մի տարի։ Դա համարվում էր շատ նոր նամակներից մեկը, որ մեր դասակարգի պանդուխտները բախտ են ունենում ստանալու իրանց ընտանիքից։ Բոլոր ժամանակը նա մնացել էր նամակաբերի ծոցում, սպասելով, որ մի տեղում կհանդիպի ինձ և կհանձնի։

Կարծես, դառն արտասուքներով գրված լիներ այդ ողբալի նամակը։ Նրա մեջ նկարագրված էր մորս և քույրերիս կրած նեղությունները ինձանից հետո. նկարագրված էր կառավարության սարվազների ու ֆերրաշների գործ դրած բարբարոսությունները, նկարագրված էր մեր ընտանիքի թշվառ դրությունը, և իրանց կրած ցավերը իմ պանդխտության մասին և այլն։ Նամակը վերջանում էր այսպիսի խոսքերով. «Մուրադ, այդպե՞ս են վճարում զավակները փոխարենը այն կաթի, որով մայրը սնուցանում է որդուն... Դու մոռացա՜ր, բոլորը մոռացա՜ր... Դու մոռացար դժբախտ մորդ և թշվառ քույրերիդ... Դու մոռացար Սառային, որ մինչև այսօր էլ սիրում է քեզ... որին դու ա մի ժամանակ սիրում էիր...»։

Որքա՜ն ազդու է լինում մոր խոսքը։ Իմ բոլոր ապերախտությունները մի րոպեում նկարվեցան իմ աչքերի առջև։ Կարծես, իմ ականջներին զարկում էր մի դառն, հանդիմանական անեծք. «Դու անառակ որդի ես...»։

Իմ սիրտը լցվեց ցավերով։ Մի բան միայն մխիթարում էր ինձ, որ այդ նամակից տեղեկացա, այն արարածները, որ մի ժամանակ սիրելի են եղել ինձ, դեռ կենդանի են։

Ես հենց նույն օրը հայտնեցի քավոր Պետրոսին նամակի բովանդակությունը։ Նա ցանկացավ տեսնել խաչագողին, որի ձեռքով հասավ ինձ նամակը, բայց նամակաբերը արդեն անհայտացել էր։ Երկու տարբեր խումբերի պատկանող խաչագողներ երբեք միևնույն սահմանում չեն գործում։ Նա հենց որ տեսավ մեզ, իսկույն հեռացավ մեր գտնված տեղից։

Քավոր Պետրոսը կարգադրեց մի գումար ուղարկել մեր և իր ընտանիքների ծախքերի համար։ Երևում էր, որ նա էլ նոր հիշեց, որ ինքը նույնպես կին ունի, զավակներ ունի, կարոտության մեջ թողած ազգականներ ունի։

Այժմյան մեր իջած տեղը այն քաղաքն էր, որ ընտրել էինք մեզ համար որպես գլխավոր կենտրոն։ Պատահում էր, որ ամիսներով կորչում էինք, թափառում էինք զանազան երկրներ,

և մեր ձեռքը ընկած արծաթը հավաքում էինք այստեղ։ Այս քաղաքում կար մի բարեսիրտ և արդար սեղանավոր, որը քավոր Պետրոսի վաղեմի ծանոթն էր։ Մեր փողերը հանձնում էինք նրան։ Սեղանավորը ճանաչում էր մեզ իսկական անուններով։ Նա գիտեր, որ մենք ո՞րտեղացի ենք, ի՞նչ մարդիկ ենք, բայց չգիտեր մեր իսկական պարապմունքը։ Մենք հայտնի էինք նրան իբրև օրինավոր վաճառականներ, որ ասիական ապրանքների առևտուր են անում։ Բայց թե հեռու տեղերում ի՞նչ գործերով էինք զբաղված կամ ի՞նչ միջոցներով այդ գումարները հավաքվում էին մեր ձեռքում,— դրանց մասին նա ոչինչ տեղեկություն չուներ։

Երևում է, կյանքի մեջ ճշմարտությունը այնքան անհրաժեշտ է մարդու համար, որ ամենասարսափելի չարագործն անգամ պետք է ունենա գոնե մի բարեկամ, որի հետ պետք է անկեղծ լինի։ Քավոր Պետրոսի հարաբերությունները հիշյալ սեղանավորի հետ, թեև իսկությամբ այսպես չէին, բայց նա դարձյալ պահպանում էր բոլոր ճշտությունները, ինչ որ վայել են մի բարեկամի, մի ազնիվ մարդու։ Սեղանավորը մեծ վստահություն ուներ նրա հավատարմության վրա, մանավանդ այն պատճառով, որ համարում էր նրան միամիտ, բարի և ճշմարտասեր մարդ։ Ամեն անգամ, երբ հայտնվում էինք այդ քաղաքում, սեղանավորը մեզ հրավիրում էր յուր տունը։ Նրա կինը, երեխաները, աղախինները, սպասավորները՝ բոլորը ճանաչում էին քավոր Պետրոսին,— և բոլորի համար քավոր Պետրոսը ուներ անուշ խոսքեր, զբաղեցնելու, ծիծաղեցնելու և գրավելու համար։

Նրանք սիրում էին լսել քավոր Պետրոսի ճանապարհորդությունների պատմությունը։ Այդ «թափառական հրեան» համարյա ամեն երկրում եղել էր և ամեն երկրի մասին կարող էր պատմել նրանց շատ հետաքրքիր տեղեկություններ։ Թեև երբեմն նա առասպելներ էր պատմում, այսուամենայնիվ, մեծ ուշադրությամբ լսում էին։ Օրինակ, մի անգամ ասում էր, թե Հնդկաստանում մի կղզի կա, որտեղ ոսկին ծնեբեկի նման գետնից բուսնում է, աճում է և ճյուղեր է արձակում։

— Այդ լա՜վ է,— ասաց սեղանավորը զարմանալով,— կարելի է գնալ այնտեղ և քաղել մի ամբողջ ոսկու հունձք։

— Եթե հեշտ լիներ, ամեն մարդ կգնար,— պատասխանեց քավոր Պետրոսը ժպտալով։

— Ի՞նչ դժվարություն կա։

— Շատ դժվարություններ։ Կղզին կախարդված է։ Նավերը հազիվ կարող են մոտենալ նրա եզերքին։ Հենց որ մոտեցան, սոսկալի ալեկոծությունը կտանե նրանց դեպի օվկիանոսի հատակը։ Պատահել է, որ մարդիկ ալեկոծությունից ևս ազատվելով, դուրս են եկել նրա ցամաքի վրա։ Բայց այդ մարդիկ այլևս չեն վերադարձել. նրանք կերպարանափոխվել են, կապիկներ են դարձել և մնացել են այնտեղ։

— Ուրեմն ոչի՞նչ հնար չկա այնտեղ գնալու։

— Ինչպես չկա. միայն պետք է գտնել կախարդված կղզու թիլիսմանը։ Հազարավոր բրամիններ քննում են գրքերը, աշխատում են լուծելու թիլիսմանը, բայց դեռ ոչինչ հետևանքի չեն հասել։ Անգլիայից միլիոններ կտային, եթե մեկը գտնելու լիներ անմատչելի կղզու կախարդական բանալին։

Հետո պատմում էր նա, թե մի այլ կղզում (դարձյալ Հընդկաստանում) գտնվում են այնպիսի հսկա մրջիմներ, որ մարդիկ նրանց մեջքի վրա թամք են գնում, նրանց բերանը սանձ են գնում, և ձիու նման նստում են նրանց վրա, ուր որ կամենում են; գնում են։ Եվ քավոր Պետրոսը խիստ ծիծաղելի կերպով նկարագրում էր յուր մի հետաքրքիր ճանապարհորդությունը մրջիմի մեջքի վրա նստած։ Զարմանալին այն էր, որ նրա լսողները այնքան փոքր տեղեկություններ ունեին հեռավոր երկրների մասին, այնքան սակավ ճանաչում էին երկրագունդը, որ բոլորովին հավատում էին նրա պատմածներին։

Ահա այսպիսի և դրա նման պատմություններով էր զբաղեցնում քավոր Պետրոսը յուր ունկնդիրներին։

Յուր հաշիվների մեջ քավոր Պետրոսը վերին աստիճանի ճիշտ էր սեղանավորի հետ։ Շատ անգամ նրանից բավական խոշոր գումարներ էր փոխ առնում, իբր թե մի առևտրական ընդարձակ ձեռնարկության համար։ Բայց ինձ հայտնի էր, որ քավոր Պետրոսը ոչ փոքի կարողություն ուներ և ոչ առևտրական ընդարձակ ձեռնարկություններ։ Նա վեր առած գումարը այնպես անշարժ պահում էր յուր մոտ, մինչև լրանում էր յուր տված պարտամուրհակի ժամանակը։ Այդ միջոցին տանում էր փողը, յուր տոկոսով հետ էր տալիս, պարտքը վճարում էր և

ստանում էր պարտամուրհակը։ Այդ անում էր նա յուր վարկը պահպանելու համար։

Մի անգամ մեզ հարկավորեց վեր առնել սեղանավորից 15 000 ռուբլի։ Փողերը բերեցինք մեր իջևանը, կրկին համբարեցինք, տեսանք, որ 1000 ռուբլի ավել է։ Սեղանավորը փոխանակ 15 հազար ռուբլու, սխալմամբ տվել է 16 հազար ռուբլի, իսկ 15-ի պարտամուրհակ էր առել։ Քավոր Պետրոսը մյուս օրը հազար ռուբլի հետ տարավ, հանձնեց սեղանավորին այսպիսի գանգատներով.

— Այդ ի՞նչ արեցիք ինձ հետ, Արկադիյ Ֆադեիչ,— այսպես էին կոչում սեղանավորին։— Եթե ես այս գիշեր մեռնելու լինեի, ի՞նչ կլիներ իմ հոգու ճարը։ Երևի, դուք իմ հոգին կորցնել էիք ուզում...

Սեղանավորը մնաց զարմացած։

— Ի՞նչ կա, ի՞նչ է պատահել, Պյոտր Աբրամիչ,— հարցրեց նա, խնդրելով վրդովված քավոր Պետրոսին նստել։

Պյոտր Աբրամիչը ոչինչ չէ խոսում, լռությամբ դնում է սեղանավորի առջև 1000 ռուբլի։

— Այդ ի՞նչ փող է,— հարցնում է սեղանավորը։

— Այդ այն փողն է, որ դու ինձ ավել էիր տված,— պատասխանում է քավոր Պետրոսը դեռևս վրդովված կերպով։— Ավելի լավ կլիներ, որ համբարքի մեջ զգույշ լինեիք և ուրիշին մեղքի մեջ չգցեիք...

— Դու բարի ես, շա՞տ բարի, Պյոտր Աբրամիչ,— ասում է սեղանավորը, բարեկամաբար նրա ձեռքը սեղմելով։

— Ես բարի եմ նրա՞ համար, որ չզողացա ուրիշի փողը։ Այդ բարություն չէ, Արկադիյ Ֆադեիչ։

Չնայելով այդ համեստությանը, Արկադիյ Ֆադեիչը աշխատում է ապացուցանել, որ Պյոտր Աբրամիչը բարի մարդ է։

Ամեն անգամ, երկար թափառումներից հետո, երբ հայտնվում էինք սեղանավորի մոտ, նրա սովորական հարցմունքն այդ էր լինում.

— Լա՞վ վաստակ ունեցար, Պյոտր Աբրամիչ։

— Վա՞ղ են գնում գործերը, շատ վատ, Արկադիյ Ֆադեիչ։

— Ինչո՞ւ։

— Բոլորը մեր մեղքերից։

Սեղանավորը ծիծաղում է։

— Դուք ծիծաղում եք, Արկադիյ Ֆադեիչ։ Բայց տեսեք, ինչպես վատացել են ժամանակները. առանց երդվելու, առանց սուտ խոսելու չես կարող առևտուր անել... Բայց այդ մե՞ղք է, Արկադիյ Ֆադեիչ, շա՞տ մեղք է... Համարյա մարդ յուր հոգին է ծախում...

— Բայց շա՞հ, այսուամենայնիվ, լինում է։

— Ի՞նչ շահ... այսպիսի շահը Հուդայի արծաթն է, որ ստացավ և մատնեց մեր տեր Հիսուս Քրիստոսին։ Այսպիսի շահը սատանան կտանե...

Չնայելով հայտնած դժգոհությանը վատ ժամանակների և յուր առևտրական անհաջողության մասին, քավոր Պետրոսը դարձյալ համբարում է սեղանավորի առջև մի քանի հազարներ։

— Այս անգամ, երևի, սատանան չէ դիպել քո փողերին, Պյոտր Աբրամիչ։

— Քրտինքով է աշխատած, դա՞ն քրտինքով։ Արկադիյ Ֆադեիչ։ Արդար աշխատանքը Հիսուս Քրիստոսը կպահպանե,— պատասխանում է քավոր Պետրոսը և սկսում է ջերմեռանդությամբ խաչակնքել յուր երեսը։

Սեղանավորը երբեմն սիրում էր քավոր Պետրոսի հետ հանաքներ անել և զվարճանալ նրա պարզամտության վրա։

Բայց ինձ զարմացնում էր քավոր Պետրոսի հավատարմությունը, որ ուներ դեպի սեղանավորը։ Այդ մարդը, որի համար ոչինչ սուրբ բան չկար, վարվում էր նրա հետ ամենայն ճշմարտությամբ։ Ես կարծում էի, թե դա մի խորամանկ նախապատրաստություն է, սեղանավորին մեր ծուղակի մեջ գցելու համար, որի հարստությունը միլիոնների էր հասնում։ Մի անգամ հարցրի քավոր Պետրոսից.

— Սեղանավորի «հոգվոցը» ե՞րբ պիտի կարդանք։ Ուզում էի հասկացնել, թե ե՞րբ պետք է կողոպտենք նրան։

Նա պատասխանեց.

— Եթե ամեն աղբյուրները պղտորելու լինես, գոնե մեկը պետք է մաքուր թողնես, որ ինքդ խմես։

Ես տեսնում էի, որ քավոր Պետրոսը այս դեպքում ևս չէ ջեղվում յուր հիմնական կանոնից. «Ամեն ինչ ծառայեցնել յուր օգտի համար...»։

Խաչագողին ևս պետք է մի հավատարիմ մարդ ունենալ։ Դուք չգիտեք խաչագողի վիճակը։ Նա թափառում է երկրե երկիր

զանազան կերպարանքներով, զանազան անուններով, որոնց ոչ մեկը յուր իսկական անունը չէ։ Հանկարծ նա մեռավ. նրա ունեցածն էլ յուր հետ կմեռնի։ Որովհետև նա հայտնի է միայն կեղծ անունով, իսկ այդ կեղծ անունը կրողի ժառանգորդները գտնել անհնարին բան է։ Կիրակոսի թողած կայքը չեն տալ Մարկոսի ժառանգներին, թեև մեռնողը իսկապես Մարկոսը լիներ, և կեղծ անունով միայն իրան կոչելիս լիներ Կիրակոս։ Մի կենտրոն պետք է, որ խաչագողը հայտնի լինի յուր իսկական անունով և հավաքն այնտեղ յուր ունեցածը, որպեսզի, եթե մահ պատահելու լինի, հասցնեն նրա ընտանիքին։ Ահա այդ էր քավոր Պետրոսի հարաբերությունների պատճառը սեղանավորի հետ։ Նրա մոտ հավաքում էր քավոր Պետրոսը մեր բոլոր վաստակած փողերը։ Եթե մեզ մի բան պատահելու լիներ, սեղանավորը գիտեր, թե փողերը ումն էր պատկանում։ Մենք հայտնի էինք նրան մեր իսկական անուններով և հանձնած գումարների համար ստացական էինք առնում նույն անուններով։

Քավոր Պետրոսը հայտնի էր անունովս՝ պարսկաստանցի, այսինչ գավառից, այսինչ գյուղից, վաճառական Պյոտր Աբրամիչ Աղախանով։ Հայտնի էի և ես իմ անունով, տոհմանունով և տեղի անունով։

Այդ ձևը ուներ և այն հարմարությունը, որ դիցուք թե մեզ մահ չպատահեց, այլ մի տեղ կալանավորեցին մեզ։ Այսպիսի դեպքերում չէին կարող մեր կայքը գրավել, որովհետև մեզ կգտնեին մի որևիցե կեղծ անվան տակ, իսկ մեր կայքը մեր սեփական անունով կլիներ բոլորովին ուրիշ ձեռքում։

Ես այժմ հասկանում էի այն զանազան անցագրերի անհրաժեշտությունը, որ քավոր Պետրոսը Պարսկաստանից դուրս գալու ժամանակ առեց յուր հետ և միշտ նորոգել էր տալիս, որ ժամանակները չկորցնեն։

Հանձնելով մեր այս անգամվա բերած փողերը սեղանավորին, վերադարձանք դեպի մեր իջևանը։ Ճանապարհին քավոր Պետրոսի ուշագրությունը գրավեց մի օտարոտի մուրացկան, որը փողոցում կանգնած էր մի լուսամուտի հանդեպ և խզճալի ձայնով ողորմություն էր խնդրում։ Լուսամուտի հանդեպ նստած տիկինը ձգեց նրան մի քանի գրոշներ և փակեց լուսամուտը։ Մուրացկանը սկսեց որոնել, թե որտեղ ընկան գրոշները։

— Նայի՛ր, Մուրադ,— ասաց ինձ քավոր Պետրոսը,— կարո՞ղ ես ճանաչել, թե դա ինչ մարդ է։

Ես նայեցի։ Մուրացկանը հագած ուներ պատառոտած սև փարաջա. մեջքը սեղմված էր գունավոր լայն գոտիով. գլխին դրած ուներ մի ջարդված և հնությունից իսկական գույնը կորցրած հոգևորականի ցած շլյապա (երևի մեկը ընծայել էր նրան) և ձեռքին կրում էր երկայն գավազան, հասարակ ոսկրյա գլխիկով։

— Խաչագող է,— պատասխանեցի ես։

— Ոչ,— ասաց քավոր Պետրոսը։— Քահանա է և հայ քահանա։

Ես չհավատացի։ Մոտեցա մուրացկանին և հարցրի նրա ինչ մարդ լինելը։ Քավոր Պետրոսի նկատողությունը ուղիղ էր։ Նա հրավիրեց թշվառ քահանային մեզ մոտ։ Քահանայի ուրախությանը չափ չկար, երբ հեռավոր օտարության մեջ հանդիպեց երկու հայերի։ Մենք նրան հյուրասիրեցինք թեյով և իսկույն մի բան տվեցինք ուտելու։ Ողորմելին այնպիսի ախորժակով կերավ, որ երևում էր մի քանի օր քաղցած էր մնացել։ Երբ նա փոքր-ինչ կազդուրվեցավ, քավոր Պետրոսը հարցրեց, թե ի՞նչ դեպքով այս կողմերն է անցել։

Նրա պատմությունից երևաց, որ ինքը սպահանցի է։ Նրա ժողովրդի մի մասը Կասպից ծովի հարավ-արևելյան եզերքի վրա մի փոքրիկ գաղթականություն է հիմնել։ Նոր գաղթականները մեծ դժվարությամբ կարողացան իրավունք ստանալ պարսից կառավարությունից, որ իրանց համար մի եկեղեցի շինեն։ Եկեղեցին հիմնեցին, սկսեցին կառուցանել, բայց ավարտել չկարողացան, որովհետև սաստիկ աղքատ էին, իրանց միջոցները չէին բավականացնում։ Շինվածքը մնաց թերի։ Քահանան իմացավ, որ շուտով խմբվելու է*** քաղաքի մեծ տոնավաճառը, ինքն ևս դիմեց այնտեղ, այն նպատակով, որ տոնավաճառի առիթով հավաքված հայ վաճառականներից եկեղեցու շինության անունով նվիրատվություններ հավաքե։

— Հաջողվեցա՞վ,— հարցրեց քավոր Պետրոսը, թույլ չտալով քահանային ավարտել յուր պատմությունը։

— Հաջողվեցավ։ Աստված օրհնե բարեպաշտ հայերի առատաձեռնությունը, նրանք այնքան նվիրեցին, որով ոչ միայն կարելի էր ավարտել եկեղեցու շինությունը, այլ բավական

նշանավոր գումար ավելի կմնար եկեղեցին զարդարելու համար պետք եղած սրբություններով։

— Ուրեմն ի՞նչ է պատճառը, որ այդ ողորմելի դրության մեջն ենք գտնում ձեզ։

— Երբ ուղևորվեցա դեպի Պարսկաստան, ճանապարհին կողոպտեցին ինձ և բոլորը, ինչ որ հավաքել էի, տարան։ Այդ դժբախտությունից հետո ես չուզեցի դատարկաձեռն և ամոթալի երեսով վերադառնալ իմ ժողովրդի մոտ, ստիպվեցա մուրացկանությամբ շարունակել իմ ուղևորությունը, գուցե մի տեղ դարձյալ բարեպաշտ հայեր կգտնեմ և կդիմեմ նրանց գթասրտությանը։

— Այժմ որտե՞ղ դիտավորություն ունեք գնալու։

— Մոսկվա, ասում են այնտեղ ևս հայեր կան։

Խաչագողին հեշտությամբ չէ կարելի խաբել, մանավանդ քավոր Պետրոսի նման մարդուն։ Նա, թեև անզգալի կերպով, բայց բավական խստությամբ սկսեց զանազան հարցեր առաջարկելով քննել քահանային, ստուգելու համար, թե ո՞ր աստիճան ճշմարիտ էին նրա ասածները։

Ես չլսեցի նրանց բոլոր խոսակցությունը, որովհետև այդ միջոցին քավոր Պետրոսը հրամայեց ինձ, որ գնամ հյուրանոցը և մեզ համար ընթրիք պատվիրեմ։— «Բամբակը զալին լինի», ասաց նա։ Այդ նշանակում էր, որ արաղը շատ լինի։

Ընթրիքի ժամանակ քավոր Պետրոսը ավելի ուռիթ ունեցավ քննելու քահանային, որովհետև տեր հայրը ուրախությունից խմեց ավելի, քան թե պատշաճ էր։

Քահանան գիշերը մնաց մեզ մոտ։

Մյուս առավոտ, թեյից հետո քավոր Պետրոսը ասաց նրան.

— Ամբողջ յոթն տարի է, տեր հայր, օտարության մեջ ապրելով և օտար ազգերի հետ հարաբերություններ ունենալով, զուրկ եմ մնացել Հայաստանյաց եկեղեցու սուրբ հաղորդությունից։ Ձեզ ասված ուղարկեց ինձ մոտ, քավելու իմ մեղքերը և արժանի կացուցանելու Հիսուս Քրիստոսի կենարար մարմնին և արյանը։

Տեր հայրը, հայ քահանաների սովորության համեմատ, ճանապարհորդության առիթով, մի փոքրիկ արծաթյա մասնատուփի մեջ, վեր էր առել յուր հետ սուրբ հաղորդության նշխարներ։ Նա դուրս հանեց մասնատուփը, դրեց սեղանի վրա և

պատրաստվեցավ կատարելու սուրբ խորհուրդը։ Քավոր Պետրոսը և ես չոքեցինք նրա առջև։ Քավոր Պետրոսի խոստովանությունը կատարվեցավ հրապարակաբար, թեև ես ոչինչ չհասկացա, որովհետև գրաբար լեզվով էր։ Նա կարդաց հայոց ժամագրքի ամբողջ «մեղան»։ Նրա մեջ բովանդակում է բոլոր մեղքերի խոստովանությունը, ինչ որ կարող է մտածել, հնարել և գործել միայն չարագործ մարդը, և ոչ ուրիշ արարած։

Ես տեր հոր թելադրությամբ կրկնեցի մի քանի տուն նույն «մեղայից»։ Երբ նա, պահանջված աղոթքները կարդալուց հետո, մոտեցրեց իմ շրթունքին սուրբ հաղորդության նշխարը, իմ ամբողջ մարմնին տիրեց մի սոսկալի, հոգևոր սարսուռ։ Նույն ազդեցությունը ես նկատեցի և քավոր Պետրոսի դեմքի վրա։

Մենք չոքած տեղից վեր կացանք, երկուսս էլ համբուրեցինք տեր հոր աջը. նա օրհնեց մեզ և թողություն շնորհեց։

Հետո քավոր Պետրոսը տեր հորը յուր հետ առնելով, գնացին շուկան։ Իսկ ինձ տվեց մի տոմսակ և ուղարկեց Արկադիյ Ֆադեիչի մոտ։ Ես ստացա սեղանավորից 10 000 ռուբլի և վերադարձա մեր իշևանը։ Նրանք դեռևս չէին եկել։ Ես մինչև ճաշ սպասեցի նրանց։

Երբ հայտնվեցան նրանք, ես հազիվ կարողացա ճանաչել քահանային։ Նրա հագուստը ոտից ցգլուխ նորոգված էր և տեր հայրը յուր կարգին վայելուչ կերպարանք էր ստացել։

Երբ մտան սենյակը, քավոր Պետրոսը նայեց նրա վրա, և մի առանձին բավականությամբ ասաց ինձ.

— Տեսնո՞ւմ ես, Մուրադ, տեր հայրը այժմ մի բանի նման է։ Այն ի՞նչ էր առաջ։ Ճշմարիտ ասած, իմ սիրտը կտրատվեցավ, երբ առաջին անգամ տեսա հայոց եկեղեցու քահանան, պատառոտած հագուստով, փողոցում մուրացկանություն է անում։ Այդ ամոթը, այդ նախատինքը մեզ, բոլոր հայերիս է վերաբերում։ Ի՞նչ կարծիք կունենան մեր մասին օտարազգիները, եթե հասկանան, որ հայ քահանա է։

Փակագծի մեջ ասելով, պետք է խոստովանած, որ խաչագողները մի առանձին նախանձախնդրություն և պատկառանք ունեն դեպի հայոց եկեղեցին և եկեղեցականները։ Նրանք ամեն կրոնների (թե քրիստոնեական լիներ և թե հեթանոսական) հոգևորականի անունով հայտնվում են ազգերի մեջ, բայց երբեք

իրանց հայ-քահանա չեն ձևացնում, հայ քահանայի անունը չխայտառակելու համար։

Քավոր Պետրոսի սովորությունները ինձ հայտնի լինելով, ես արդեն նախաճաշիկը պատրաստել էի տվել։ Երբ կերան, խմեցին, քավոր Պետրոսը վեր առեց վերջին բաժակը, և զարկելով տեր հոր բաժակին, ասաց.

— Ցանկանում եմ ձեզ բարի ճանապարհ, տացե աստված, որ հաջողությամբ վերադառնաք ձեր տեղը և շարունակեք եկեղեցու շինության գործը։ Ամեն ինչ այս աշխարհում անցողական է և ունայնություն. միայն եկեղեցին և սուրբ հավատը կմնա հավիտյան։

Հետո նա դարձավ դեպի ինձ, հարցնելով.

— Բերեցի՞ր։

Ես սեղանավորից ստացած 10 000 ռուբլու կապոցը տվեցի նրան։ Նա տվեց քահանային, ասելով.

— Ահա, տեր հայր, այդ կապոցի մեջ դուք կգտնեք այն գումարը, որ ձեզ պետք է սուրբ տաճարի շինությունը ավարտելու համար։ Ես մի մեղավոր մարդ եմ, ընդունեցեք այդ մասնավոր գումարը, իբրև այրի կնոջ լումա։

Քահանան մեծ շնորհակալությամբ և օրհնություններով ընդունեց կապոցը, հարցնելով.

— Ես չի՞ պիտի դիտենամ իմ բարերարի անունը։

— Գիտենալու մի առանձին պետք չկա, տեր հայր, դուք միայն աղոթեցեք իմ հոգու համար։ Աստված առանց անուններ ի ևս ճանաչում է մարդիկներին։

Մեր իջևանի դռան առջև կանգնեց մի ճանապարհորդական սայլակ որի վրա նստած էր մի ուղեկից։ Քավոր Պետրոսը, կամենալով այնոր յուր հյուրին ճանապարհ գնել, գտել էր այդ ուղեկցին և բոլոր հոգսը հոգացել էր, որ տեր հոր ճանապարհորդությունը անվտանգ լինի և ապահով։

Նա յուր ձեռքով կապեց տեր հոր ճանապարհի մափրաշը և յուր նվիրած փողերը թաքցրեց նրա մեջ։ Հետո ասաց ինձ, որ տանեմ մափրաշը, տեղավորեմ սայլակի մեջ։ Ես հոժարությամբ կատարեցի այդ, ցանկանալով, որ իմ կողմից ևս մի ծառայություն արած լինեմ տեր հորը։

— Ամեն ինչ պատրաստ է,— ասաց քահանան,— օրհնյալ

լինիք, բայց ինձ պակասում է մի բան. ինձ կողոպտելու ժամանակ, թղթերիս հետ տարան և իմ անցագիրը։

— Դա մի մեծ կորուստ չէ,— պատասխանեց քավոր Պետրոսը ծիծաղելով,— ես կտամ ձեզ մի անցագիր, այն ևս քահանայի անցագիր, միայն դուք այսուհետև ձեզ պիտի կոչեք հայր Անաստասիոս։

— Դա հայի անուն չէ,— ասաց տեր հայրը դժվարանալով։

— Միևնույն է, մինչև սահմանը անցնելը կարելի է հայր Անաստասիոս լինել, իսկ Պարսկաստանում ձեզանից այլևս անցագիր չեն պահանջի։

Քավոր Պետրոսը նայեց տեր հոր դեմքին և հասակին, ասաց.

— Բոլորովին համապատասխանում է ձեր կերպարանքին։

Թե ես և թե քավոր Պետրոսը կրկին համբուրեցինք տեր հոր աջը և տարանք նրան, նստացրինք սայլակի վրա։ Նա երկար բարեմաղթություններ անելով յուր անծանոթ բարերարի համար, հեռացավ։

Այնոր քավոր Պետրոսը ինձ երևում էր իբրև մի հրեշտակ։ Ես երբեք չէի կարող երևակայել այդ գազանի մեջ այս աստիճան բարեպաշտական զգացմունք։ Գողը, ավազակը, սարսափելի խաբեբան ահագին գումար էր նվիրում եկեղեցի կառուցանելու համար։ Այդ ի՞նչ տարօրինակ զոհաբերություն էր։ Ինչպե՞ս կարող էին մարդու մեջ հաշտվել լույսը և խավարը, չարը և բարին, առաքինությունը և ոճրագործությունը։

Այդ ուրիշ բան է, եթե կատարած լիներ այդ զոհաբերությունը որևիցե նենգավոր և խորամանկ նպատակի համար։ Բայց ինձ զարմացնում էր այն, որ նրա վարմունքի մեջ գտնում էի կատարյալ անկեղծություն։ Ես բավական ուսումնասիրել էի քավոր Պետրոսին և հազիվ կպատահեր, որ նրա վերաբերությամբ սխալվեի իմ կարծիքների մեջ։ Կրկնում եմ, որ նրա վարմունքը բոլորովին անկեղծ էր։ Նրա հոգու և սրտի խորքիցն էր բխում այն ջերմեռանդ զգացմունքը, որով նա ցանկացավ նպաստամատույց լինել մի տաճարի կառուցմանը, ասիական մի խուլ երկրում, մահմեդականների մեջ։

Այնոր նա ավելի ուրախ էր, գտնվում էր ավելի խաղաղ տրամադրության մեջ, վայելում էր յուր բարեգործության բերկրանքը։ Այնոր յուր ապաշխարանքը վերջացրած քրիստոնյայի

նման, նա զգում էր յուր խիղճը մաքրված, զգում էր իրան թեթևացած մեղքերի ծանր բեռից։

Մի խորհրդավոր ցնցում տիրում էր իմ մարմնին, երբ մտաբերում էի, թե ո՛րպիսի հոգևոր հեզությամբ, թե ո՛րպիսի բորբոքված հավատով, ծունր իջած աստուծո սեղանի պաշտոնյայի առջև, այդ եղեռնագործը ընդունեց սուրբ հաղորդության խորհուրդը։ Մտածում էի և ուրախանում, թե այդ մարդը արդեն դարձավ չար ճանապարհից, թե դա այսուհետև այլևս չի շարունակի այն, ինչ որ մինչև այնօր գործել էր։

Ես սխալվում էի...

Կրոնական զգացմունքը միշտ վառ էր պահվել քավոր Պետրոսի մեջ։ Նա միշտ մնացել էր հավատարիմ եկեղեցու պատվերներին։ Դեռ Պարսկաստանում եղած ժամանակ, մեր գյուղում համարվում էր նա ամենաբարեպաշտ մարդիկներից մեկը,— ամեն օր, առավոտյան և երեկոյան եկեղեցի էր գնում, պաս էր պահում, և ամեն տարի մի քանի անգամ սուրբ հաղորդություն էր ընդունում։ Պանդխտության մեջ դարձյալ նա նույնն էր մնացել, բնավ չէր փոխվել։ Ես շատ անգամ տեսել էի (մինչև անգամ ամենասարսափելի չարագործություններից հետո), թե ինչպես նա առանձնացած մեր իջևանի մի անկյունում, արտասուքը աչքերում աղոթում էր։ Ինձ երբեք չէր պատահած տեսնել, որ նա անցկացներ յուր առավոտյան և երեկոյան աղոթքները։ Շատ անգամ, երբ պատրաստվում էինք մի որևիցե արշավանք կատարելու կամ, ինչպես նա սովորություն ուներ ասելու՝ երբ պատրաստվում էինք «գործի» գնալ,— տեսնում էի, որ նա ուշանում է։ Երբ շտապեցնում էի նրան, պատասխանում էր. «Փոքր-ինչ սպասեցեք, դեռ աղոթքս չեմ վերջացրել...»։

Դա փարիսեցություն չէր. դա նրա հաստատ հավատն էր։ Նա համոզված էր, որ ամեն գործ, թե բարի լիներ նա և թե չար, պետք էր աղոթքով սկսել և աստծուց օգնություն խնդրել։

Նա մինչև անգամ պաս էր պահում, կատարում էր հայկական եկեղեցու բոլոր տոները։ Նրա թղթապահի մեջ, կեղծ անցագրերի հետ միասին, կար մի փոքրիկ հայերեն օրացույց, շատ անգամ նայում էր նրա մեջ, որ չսխալվի, որ գիտենա, թե երբ պետք էր պաս պահել, երբ պետք էր ուտել կամ երբ պետք էր կատարել այս և այն տոնը։

Քավոր Պետրոսը յուր հոգևոր հասկացողությունների մեջ սաստիկ անհավատ էր, իսկ յուր կրոնական համոզմունքների մեջ վերին աստիճանի մոլեռանդ։ Նա հավատում էր, որ բացի լուսավորչի հոտից, ուրիշ քրիստոնյաներից և ոչ մեկը աստուծո արքայությունը չի վայելի։ Եվ այդ պատճառով սաստիկ նախանձախնդրություն ուներ դեպի հայոց եկեղեցին։

Բայց ինչպե՞ս կարելի է միևնույն ժամանակ և՛ խաչագող լինել, և՛ լավ քրիստոնյա։

Քավոր Պետրոսի կարծիքով կարելի էր։ Եկեղեցին ներող է։ Եկեղեցին հենց նրա համար է, որ սրբե մեղավորներին։ Եթե օրվա մեջ յոթանասուն և յոթն անգամ մեղանչելու լինես, նա դարձյալ կներե։ Խոստովանվի՛ր, զղջա՛, սուրբ ՝աղորդություն ընդունի՛ր,— այնուհետև դու արդար ես։ Այդ հավատը ունեն եկեղեցու վերաբերությամբ բոլոր խաչագողները։ Նրանց մոտ մինը մյուսին չէ խանգարում։ Կարելի է և՛ պաս պահել, և՛ աղոթք անել, և՛ սուրբերի բարեխոսությունը խնդրել,— կարելի է միևնույն ժամանակ և՛ նույն սուրբերի անունով սուտ երդվել, խաբել, գողանալ և այլն։

Խաչագողը ծիսապաշտ է։ Կրոնի հոգևոր, բարոյական մասը նրան անմատչելի է։ Եկեղեցու հրահանգները կատարում է նա որպես արարողություն,— իսկ խաբեությունը որպես գործ։

Քավոր Պետրոսը և նրա նմանները պատրաստ էին և՛ եկեղեցի կառուցանել, և՛ միևնույն ժամանակ հարյուրավոր ընտանիքների տունը քանդել, նրանց պատառ հացի կարոտ թողնել։ Նա սովորած էր մեկ շրթունքով աղոթել, իսկ մյուսով հայհոյել, սուտ խոսել։ Նա պատրաստ էր մեկ ձեռքով ողորմություն տալ, մյուսով հափշտակել աղքատի վերջին կոպեկը։

Գործողությունների այդ տարօրինակ հակառակությունը հաշտվում և ներդաշնակվում էր նրա մեջ ամենայն համաձայնությամբ։ Եվ նրա սիրտը միշտ խաղաղ էր, և նրա խիղճը միշտ անդորր էր, որովհետև ամեն մի մեղանչելու դեպքում նա ուներ մի ապաստարան՝ եկեղեցին, և մի միջնորդ իրան երկնքի հետ հաշտեցնելու համար՝ քահանան։

Քավոր Պետրոսը այսպես էր հասկանում կրոնի և եկեղեցու խորհուրդը։ Նա մի այլանդակ քրիստոնյա էր։ Բայց նրա հավատի անկեղծության վերաբերությամբ կասկածելը շատ սխալ կլիներ։

Ե

ԳՈՀԱՐՆԵՐ

Քահանային ճանապարհ դնելու հենց մյուս օրը քավոր Պետրոսը ինձ յուր մոտ կանչեց և ժպտելով ասաց.

— Մուրադ, մանրավաճառության համն էլ գնաց, պետք է մի ուրիշ բանով զբաղվել։

Խիստ սակավ էր պատահում, որ նա ինձ հետ հանաքներ աներ։ Ես հարցրի.

— Ապա ի՞նչ անենք։

— Պետք է մի փոքր զվարճանալ, շատ հոգնեցանք։

— Ինչո՞վ զվարճանալ։

— Դու խո իմանում ես երգել, ես էլ լավ ածել գիտեմ ջութակի վրա։ Այսօր մուժիկի մոտ մի լավ արջ տեսա, ծախում է, ես անպատճառ պետք է գնեմ այն արջը։

Ես ծիծաղեցի։

—Ինչի՞ համար,— հարցրի,— չլինի թե ուզում եք օլինրազություն անել։

— Մի այդպիսի միտք ունեմ...

Նա այնպես լուրջ կերպով արտասանեց վերջին խոսքը, որ անկարելի էր ասածը կատակ համարել։

— Լավ, ի՞նչ օգուտ դրանից։

— Օգուտը հետո կտեսնես...

Առաջին անգամն էր, որ քավոր Պետրոսը ինձ, որպես ասում են, մարդու տեղ էր դնում և ինձ հետ խորհրդակից էր լինում։ Նա ինձ հետ միշտ կարճ էր խոսում և ավելի հրամայում էր, քան թե խորհուրդ էր հարցնում։

Թողնելով քաղաքը, որտեղ գտնվում էինք, անցանք մի գյուղ։ Արջը արդեն պատրաստ էր։ Մեր նոր պարապմունքի համար ընտրած երաժշտական գործիքներով և հագուստի ձևերով մենք բոլորովին նմանում էինք թափառական ցիգաններին։ Թե ես և թե քավոր Պետրոսը խիստ ծիծաղելի էինք այդ նոր կերպարանափոխության մեջ։

Արջը վարժված էր։ Մնում էի ես։ Քավոր Պետրոսը երկու ամբողջ շաբաթ սովորեցնում էր ինձ բոլոր եղանակները, թե որպես պետք էր պար ածել նրան։ Ես այս գործի մեջ ևս ցույց

տվի իմ ընդունակությունը։ Քսան օրից հետո այն աստիճան պատրաստված էի, որ կարող էի ամենայն վստահությամբ հանդես դուրս գալ, որպես մի լավ արջ պար ածող։

Քավոր Պետրոսը, այդ երևելի շարագործը, օրըստօրե բարձրանում էր իմ աչքում յուր խաբեբայության հսկայական մեծությամբ։ Նա յուր արջ պար ածողի մուշտակի մեջ նույնքան մեծ էր, որքան Երուսաղեմի աբեղայի ֆարաջայի մեջ։ Նրա համբերությունը, նրա հեռատեսությունը սահման չուներ։ Ինձ թվում էր, որ նա նայում էր այն ընդարձակ երկրի վրա, որպես յուր մշակության դաշտերի, որպես յուր ագարակի վրա։ Արջ պար ածողի կեղևի մեջ պարաժածկված, կարծես թե, նա ցանում էր սերմերը, որոնց բեղմնավոր արդյունքը մի ժամանակ պիտի հնձեր... Թափառելով գավառից գավառ, քաղաքից քաղաք և գյուղից գյուղ, նա հետազոտում էր հողը, նշանակում էր յուր հիշողության մեջ այն տեղերը, ուր մի ժամանակ նրա մանգաղին հաջող հունձ էր սպասում...

Եվ արդարև, արջ պար ածողը, ռամիկ ժողովրդի ռամիկ ծաղրածուն, այնքան անմեղ, այնքան անվտանգ մարդ է, որ բոլոր տների բակի դռները բաց են նրա համար։ Տիկինները, պարոնները, իրավ է, նրա վրա ուշադրություն չեն դարձնում, բայց աղախինների, սպասավորների և տան երեխաների սիրելին է նա։ Ժամերով կանգնում է նա բակում, տասն անգամ կրկնել են տալիս միևնույն խաղը, մինչև ձգում են նրան մի քանի գրոշներ։ Այդ առիթով կարողանում է ամեն տուն մտնել, ամեն տան ծակուծուկը հետազոտել և ամեն գաղտնիք իմանալ։— Այդ բավական է «խաչագողի» համար...

Քաղաքից քաղաք, գյուղից գյուղ, մեր արջը պար ածելով, առաջ էինք գնում։ Ունեինք մեզ հետ մի ճանապարհորդական ողորմելի սայլակ, լծած մի ձիով միայն։ Նրա վրա տեղավորվում էինք ես, քավոր Պետրոսը և արջը։ Վերջինը նստում էր իմ կողքին, և ես երբեմն նրա ձեռքն էի տալիս ձիան երասանակները, երբ կամենում էի փոքր-ինչ նիրհել սայլակի վրա։

Վերջապես հասանք*** քաղաքը, ուր դեռ նոր սկսվել էր տարեկան տոնավաճառը։ Այնտեղ ամեն տեսակ ապրանքների հետ կարելի էր գտնել և ամեն տեսակ մարդիկ երեսների գույնզգույն կաշիներով և հագուստների զանազան ձևերով։ Սկսյալ

Միջին Ասիայի խորքերից մինչև Արևմտյան Եվրոպան, ամեն երկրից մարդիկ կային այնտեղ։

Շատ հասկանալի է, որ մեր արջով չէինք կարող մրցություն անել այն բազմաթիվ ձեռնածուների, լարախաղացների, մուլաշրջիկ երաժիշտների ու դերասանական խմբերի հետ, որոնք զանազան երկրներից հավաքվել էին այստեղ իրանց շնորհքը վաճառելու համար։ Այսուամենայնիվ, «ծիտը թեև փոքրիկ է, դարձյալ թռչուն է»։ Արջ պար ածողն էլ ունի յուր սիրողները։

Ամբողջ բազմությունը գտնվում էր սարսափելի խառնաշփոթության մեջ։ Ամեն ոք տենդային անհամբերությամբ շտապում էր, որպեսզի մինչև տոնավաճառի ավարտվելը, վաճառե յուր մթերքը։ Ամեն տեղ տիրում էր վազվզոց, աղաղակ և խռովություն։ «Շունը տիրոջը չէր ճանաչում»։ Գողությունները չափ չունեին։ Երկրի բոլոր արտիստները, որոնք սովոր են զարմանալի ճարպկությամբ ձեռքը տանել մարդկանց գրպանը, այստեղ էին։ Ես և քավոր Պետրոսը լրացնում էինք պակասը...

Այստեղ հասնելու ժամանակ քավոր Պետրոսը ինձանից բաժանվեցավ։ Նա խինայով ներկեց յուր մորուքը, մազերը և մատները, հագավ յուր ամենապատվավոր հագուստը, գլխին դրեց երկայն պարսկական մորթե գդակ, և ձևացնելով իրան խորասանցի ակնավաճառ, խիստ թանկ գնով վարձեց մի խանութ գլխավոր փողոցի վրա։ Ես այժմ միայն հասկացա այն անցագրի գաղտնիքը, որը մի քանի տարի առաջ ստացավ նա Թաբրիզում այս անունով. «Խորասանցի ակնավաճառ Մաշադի-Մուհամեդ-Ղուլի-աղա»։

Իսկ ես իմ արջի հետ կենում էինք վաճառահանդեսի մի ետ ընկած, կեղտոտ և մթին կողմում, ուր աշխատում էին ժամանակավոր տակառագործները, ուր կանգնեցրած էին բազմաթիվ ֆուրգոններ, սայլակներ և ապրանք կրող քարավաններ, ուր իջևանել էին ցիգաններ, թաթարներ և դրանց նման մարդիկ։ Երբեմն իմ արջի հետ դուրս էինք գալիս այդ խառնափնթոր բանակից, անցնում էինք տոնավաճառի միջով և փող էինք հավաքում։

Մի օր կանգնեցի քավոր Պետրոսի խանութի առջև, սկսեցի արջս պար ածել։ Նա ձեռքը պարզեց, որ տա ինձ մի քանի գրոշ։ Երբ մոտեցա ստանալու, հազիվ լսելի ձայնով ասաց.— «Գիշերը ինձ մոտ եկ...»։

Մենք ունեինք մեզ հետ զանազան տեսակ հագուստներ։ Որտեղ որը հարկավոր էր լինում, այն էինք հագնում։ Գիշերը հագուստս փոխեցի և գնացի քավոր Պետրոսի մոտ։ Նա հարցրեց.

— Քեզ մոտ կա՞ն անտեր, անծանոթ և ոչինչ պարապմունք չունեցող մարդիկ։

— Որքան ուզես։

— Որոնց կազմվածքը ինձ նման լիներ։

— Ես ճանաչում եմ մի խրոսրզ թաթար, որի, բացի գլուխը, ամբողջ մարմինը ձեզ նման է։

— Հենց մարմինն է հարկավոր,— ասաց նա։— Էգուց երեկոյան պահուն դու անցիր իմ խանութի մոտով և այն թաթարը թող քեզ հետ լինի։ Հիմա գնա՛։

Ես հեռացա, առանց հարցնելու այդ պատրաստության նպատակը։ Ես գիտեի, որ քավոր Պետրոսը աննպատակ ոչինչ չի անի։

Մյուս օրը, երեկոյան, ես թաթարին հրավիրեցի մի ստոր հյուրանոց, լավ ուտացրի, հետո փողոցը տարա, ասելով, թե գնելու եմ մի քանի բաներ։ Անցանք քավոր Պետրոսի խանութի առջևից։ Նա կանչեց մեզ։

— Ի՞նչ մարդիկ եք,— հարցրեց։

— Ես արջ պար ածող եմ,— պատասխանեցի։

— Իսկ այդ պարո՞նը։

— Ես եկած եմ այստեղ գործ գտնելու,— ասաց թաթարը։

— Դեռևս որևիցե գործ գտած չե՞ս։

— Ոչ։ Երեք օր է, որ եկած եմ։

— Ընկեր ունե՞ս։

— Մենակ եմ։

— Քեզ ո՞վ է ճանաչում այստեղ։

— Միայն այս պարոնը,— նա դարձավ դեպի ինձ,— ես այստեղ ուրիշ ծանոթ չունեմ։

— Ես ճանաչում եմ, աղա, լավ մարդ է,— ասեցի,— եթե կամենում եք գործ հանձնել, կարող եք հավատալ։

Թաթարը ամենևին չէր սպասում, որ ես այսպիսի վկայություն կտայի յուր մասին։ Աղան, այսինքն քավոր Պետրոսը, իմ խոսքերով բավականացավ, խոստացավ նրան ամիսը տասն և հինգ ռուբլի վճարել, որ յուր մոտ ծառայե։

— Քո ծառայությունները խիստ թեթև կլինեն,— ասաց նա,

— Քո գլխավոր գործը այն կլինի, որ գիշերները իմ խանութում պիտի պառկես, որքան կարելի է արթուն կերպով, որ հսկես դռան վրա։ Տոնավաճառի պատճառով գողերը բազմացել են։

Միամիտ մահմեդականի ուրախությանը չափ չկար։ Աղան շնորհեց նրան մի ռուբլի, հրամայեց, որ իսկույն բաղնիք գնա, մաքրվի, հագուստը փոխե և այն օրից սկսե ծառայությունը։

— Ես ուրիշ հագուստ չունեմ, բացի դրանցից, որ տեսնում եք,— ասաց թաթարը։

— Ես կտամ,— պատասխանեց աղան։

Թաթարը մեծ գոհունակությամբ հեռացավ։

Քավոր Պետրոսի խանութը, իրավ որ, առանձին հսկողության կարոտ էր։ Նրա մեջ գտնված հարստությունը կարող էր հրապուրել գողերի և ավազակների ախորժակը։ Շատերը նրան ճանաչում էին իբրև մի հայտնի ակնավաճառ, որի մոտ գտնվում էին խիստ հազվագյուտ գոհարներ։ Բայց որտեղի՞ց էին այդ գոհարները, ո՞վ տվեց նրան, ինչո՞ւ մինչև այժմ ես տեղեկություն չունեի նրանց գոյության մասին,— այդ հարցերը սաստիկ հետաքրքրում էին ինձ։

Թաթարի բաղանիք գնալուց հետո քավոր Պետրոսը կողպեց խանութը, և յուր երկայն շիբուխը թամբաքվի քսակի հետ տալով ինձ, ասաց.— հետևիր ինձ։

Արևը վաղուց մայր էր մտած. փողոցներում վառվում էին ճրագները։ Բազմության աղմկալի անցուդարձը փոքր-ինչ դադարել էր։ Ես այն գիշեր փոխել էի իմ արջ պարածողի մուշտակը և հագած ունեի պարսիկ սպասավորի հագուստ։ Քավոր Պետրոսի երկայն շիբուխը ձեռքիս բռնած, նրա հետևից գնալով, ես կատարում էի այն տեսակ սպասավորների պաշտոնը, որոնք արևելքում միայն շիբուխ կամ ղեյլան են պատրաստում իրանց պարոնների ծխելու համար, և մի տեղ գնալու ժամանակ հետևում են նրանց։

Քավոր Պետրոսը մտավ մի բուխարեցի վաճառականի մոտ։ — Համեցեք, համեցեք ասելով,— նրան նստացրին սենյակի ամենապատվավոր տեղում։

Ես իսկույն պատրաստեցի շիբուխը և, մատուցանելով իմ պարոնին, խոնարհությամբ կանգնեցի սենյակի մի անկյունում, դռան մոտ, և ձեռքերս սրտիս դրած, սպասում էի, մինչև նա ծխե ու վերջացնե։

Բուխարեցին մի երիտասարդ վաճառական էր, որ բերել էր ահագին քանակությամբ Բուխարայի թանկագին մորթիք, մետաքս և զանազան տեսակ ասիական ապրանքներ։ Յուր վաճառքները ծախած, վերջացրած լինելով, նա միտք ուներ նրանց փոխարեն գնել իրանց երկրին հարմար մի քանի տեսակ եվրոպական և Ռուսաստանի ապրանքներ, հետո վերադառնալ յուր հայրենիքը։

— Բերեցի՞ք,— հարցրեց նա քավոր Պետրոսից։

Քավոր Պետրոսը հանեց յուր ծոցից մի արծաթյա տուփ ասելով,— երդվում եմ Օմարի և Աբուբաքրի գլուխներով, որ ոչ Ստամբուլի Սուլթանը և ոչ պարսից Շահը չունեն այսպիսի գեղեցիկ գոհարներ իրանց գանձարանում։

Լսելով Օմարի ու Աբուբաքրի անունները, ես հասկացա, որ քավոր Պետրոսը իրան ներկայացրել է որպես մահմեդական ջիա աղանդից որին և պատկանում էր երիտասարդ բուխարեցին։

— Ես ձեզ հավատում եմ,— պատասխանեց բուխարեցին,— ճշմարիտ է, լավ գոհարներ են, բայց թանկ եք գնահատում, շատ թանկ։

— Լավ բանը լավ էլ գին կունենա,— պատասխանեց քավոր Պետրոսը։— Բայց թող ես կույր աչքերով ներկայանամ Մուհամմեդի դրախտում, և թող հավիտյան զուրկ մնամ մեծ մարգարեի լուսապայծառ դեմքը տեսնելուց, եթե սուտ լինեմ ասում։ Այդ պատվական գոհարները ես բոլորովին կես գնով եմ տալիս ձեզ։

Նա սկսեց արծաթյա տուփի միջից մեկ-մեկ դուրս բերել փայլուն գոհարները, որոնք ճրագի լույսի առջև աստղերի նման վառվում էին։ Ես շլացած մնացի։ Ոչ սակավ շլացավ և երիտասարդ բուխարեցին, բայց վաճառականական խորամանկությամբ յուր հիացմունքը թաքցնելով, պատասխանեց նա.

— Դուք հավատացնում եք, թե կես գնով եք տալիս, բայց ես բավական թանկ եմ գտնում։ Իմ առաջարկած գինը պակաս գին չէ։ Ավելի լավ կանեք, որ ընդունեք և այս րոպեիս վերջացնենք գործը։

— Ձեզանից, որպես մի հմուտ վաճառականից, աններելի է այդ լսել։ Մի՞թե կարելի է այս աստիճան ստորացնել իմ գոհարների արժեքը,— ասաց քավոր Պետրոսը և դժգոհությամբ սկսեց թանկագին քարերը կրկին դարսել արծաթյա տուփի մեջ։

Պետք է ասած, որ երիտասարդ բուխարեցին ամենևին հմտություն չուներ առհասարակ վաճառականության մեջ, մանավանդ գոհարներ ճանաչելու կամ գնահատելու մեջ։ Քավոր Պետրոսը կամեցավ միայն շողոքորթել նրան։ Հարուստ հոր միակ զավակը լինելով, նրան առաջին անգամ վաճառականությամբ օտար աշխարհ էին ուղարկել, նրա բախտը փորձելու համար։ Եվ որպես խորհրդատու, անփորձ երիտասարդի հետ դրել էին նրա ծերունի դայակին, որը այն գիշեր ուրիշ տեղ հյուր էր գնացած։ Բայց ծերունի դայակի ներկայությունը այժմ այնքան հարկավոր չէր, որովհետև գոհարների մասին բանակցությունը սկսվել էր մի քանի օր առաջ. և ծերունի դայակը զանազան հասկացող ակնավաճառների ցույց էր տվել, գնահատել էին գոհարները։ Տարբերությունը քավոր Պետրոսի պահանջածի ու նրանց առաջարկածի մեջ հինգ հազար ռուբլի էր միայն։ Քավոր Պետրոսը երկու հազար ևս զիջում արեց, և վերջապես գինը հայտնելով, ասաց.

— Քսան հազար ռուբլի, բոլորակ թիվ է, մի կոպեկ անգամ չեմ պակասեցնի։

Երիտասարդը համաձայնվեցավ և հրամայեց յուր գործակատարին իսկույն համբարել փողերը։ Քավոր Պետրոսը ստացավ և հանձնեց գոհարները, ասելով.

— Թող ես Մուհամմեդի սուրբ ատամը կոտրող չարագործներից մեկը լինեմ, եթե սուտ լինեմ ասում,— որ այդ-առևտրի մեջ ոչ միայն վաստակ չունեցա, այլ բավական վնաս եմ կրում։ Ես այդ գոհարները գնել եմ Հնդկաստանում մի հարուստ ռաջայից քսան և հինգ հազար ռուբլով։ Իսկ այժմ փոխարենը ստանում եմ միայն քսան հազար ռուբլի։ Ես վնասվեցա, բայց տացե աստված, որ դուք մեկին հազար օգուտ վեր առնեք։

— Հույս ունեմ,— ասաց երիտասարդը ինքնաբավական ժպիտով։— Դուք բարի մուսուլման եք, ձեզանից կարելի է «խեյր» սպասել։

— Հավատացեք, որ այդպես է, դուք չեք սխալվում, պատվելի պարոն,— պատասխանեց քավոր Պետրոսը մի առանձին ջերմեռանդությամբ։— Երբ հաջողությամբ կվերադառնաք ձեր հայրենիքը, իսկույն կտեսնեք իմ ձեռքի օրհնությունը. դուք այդ գոհարներից մի քանիսը կընծայեք Բուխարայի էմիրին, և նա

անպատճառ կտա ձեզ մի քանի գավառների նահանգապետության պաշտոնը և գուցե ձեզ յուր վեզիր կնշանակե։

Բուխարեցին սկսեց ուրախ-ուրախ ծիծաղել։ Գուցե այդ իսկ նպատակով գնեց նրա գոհարները։

Քավոր Պետրոսը (այսինքն խորասանցի ակնավաճառ Մաշադի-Մուհամմեդ-Ղուլի-աղան) բարի գիշեր ասելով, հեռացավ։ Ես չիբուխը ձեռքումս հետևեցի նրան։

Դրսում եղանակը բոլորովին փոխվել էր։ Անձրևը հեղեղի նման թափվում էր. այդ պատճառով փողոցներում մարդիկ հազիվ էին երևում։ Գիշերը այնքան խավար էր, որ եթե մատդ կոխելու լիներիր մեկի աչքը, բնավ չէր տեսնի։

Քավոր Պետրոսը հրամայեց ինձ հեռվից-հեռու հետևել իրան։ Նա գտավ նոր վարձված թաթար ծառային բաղանիքից վերադարձած, սպասում էր խանութի դռանը։ Աղան նրան ներս տարավ։ Ճրագները վառվեցան։

Այդ միջոցին ես անցա խանութի դռնից. ծառան տեսավ ինձ և ճանաչեց։ Իմ այն օրվա վկայությունը նրա հավատարմության վերաբերությամբ, երևում էր, այնքան գրավել էր նրա սերը դեպի ինձ, որ խեղճը մտածեց մի բանով երախտամատույց լինել։ Նա չկամեցավ, որ ես անձրևի տակ մնայի, հրավիրեց յուր մոտ։ Ես հրաժարվեցա պատասխանելով, թե չեմ կարող ներս մտնել, գուցե նրա աղային հաճելի չէր լինի այդ։ Նա ասաց, որ այդ մասին աղայից թույլտվություն կխնդրե։ Իհարկե, ստացավ թույլտվությունը։

Խանութը ուներ մի քանի բաժանմունքներ. մենք գտնվում էինք ծառայի սենյակում։ Այդ ժամանակ միայն ես մտածեցի հարցնել նրա անունը։

— Ասկեր, ձեր ոտքի հողը,— ասաց նա։

Ասկերը բոլորովին մաքրվել էր բաղանիքում. նրան հարկավոր էր մի լավ հագուստ, որ օրինավոր սպասավորի կերպարանք ստանար։ Աղան ընծայեց նրան նույն հագուստը, որով ինքը այն գիշեր հայտնվել էր երիտասարդ բուխարեցու մոտ։ Ծառայի համար տիրական իրանից առնված հագուստը ամենամեծ պարգևներից մեկն է։ Ասկերը ընդունեց այդ թանկագին պարգևը երեխայական հրճվանքով։ Խեղճ մարդը չգիտեր, թե որպես շնորհակալություն հայտներ յուր նոր աղայի բարեսրտության համար։ Աղան հրամայեց նրան, որ իսկույն հագնը-

վի։ Երբ բոլորովին պատրաստ էր նա, ասաց, որ գնա խոհանոցում դահվե պատրաստեւ։ Ասկերի հեռանալուց հետո քավոր Պետրոսը ինձ կանչեց յուր մոտ։

— Մուրադ, —ասաց նա, —ունե՞ս քեզ մոտ որևիցե զենք։

— Մեծ դանակս մոտս է։

— Այդ բավական է,— ասաց նա շտապով։— Ես գնում եմ, դու այդ հիմարի պարանոցը կկտրես... գլուխը կբերես քեզ հետ... իսկ մարմինը կթողնես այստեղ... այդ արկղը և խանութի կողպեքը կկոտրես... դուռը կիսաբաց կթողնես... ես գնում եմ քո արջի մոտ... այնտեղ կսպասեմ քեզ...

Այդ խոսքերը այնպիսի պարզությամբ արտասանեց նա, որ ես ժամանակ չգտա բացատրություն պահանջելու։ Վստահ լինելով, որ յուր պատվերները ճշտությամբ կկատարվեն, այլևս չսպասեց պատասխանի, Ասկերի շորերը հագավ և հեռացավ։

Երևում էր, որ Ասկերը սպասավորության մեջ բավական վարժված էր։ Տասն րոպե չանցած, դահվեի լիքը գավաթները մատուցարանի վրա դրած, ներս բերեց։ Տեսնելով յուր տիրոջ բացակայությունը, հարցրեց նա.

— Ո՞ւր գնաց աղան։

— Դրացի խանութից կանչեցին նրան, շուտով կվերադառնա,— պատասխանեցի ես։

Ասկերի սերը այն աստիճան վառված էր դեպի ինձ, որ մի առանձին մտերմությամբ տվեց դահվեի գավաթներից մեկը և խնդրեց խմել։ Երբ վերջացրի, իսկույն մտաբերեցի քավոր Պետրոսի սոսկալի պատվերը։ Ի՞նչ պետք էր անել։ Ես մնացել էի շվարած։ Մի մթին, անորոշ զգացմունք ներսից տանջում էր ինձ։ Գուցե դա հանգած խղճի մի փոքրիկ կայծը լիներ, որ դեռ վառ էր մնացել իմ սրտում։ Երբեք և ոչ մի ժամանակ ես այնպես կանգ չէի առել եղեռնագործության առջև, որպես այդ րոպեում։ Կյանքից զրկել մի անմեղ մարդու, դա սարսափելի չարագործություն էր։ Եվ ինչի՞ համար, ի՞նչ էր արել նա։ Բայց մի՞թե դահիճը իրավունք ունի քննելու, մի՞թե իրավունք ունի խղճալու։ Ես դահիճ էի, ես մի կույր, անսիրտ գործիք էի։ Հրամայում էին մորթել, պետք է մորթեի...

Ես կանգնեցի։ Ասկերը տեսնելով, որ մենք մենակ ենք, ելրախտագետ սիրտը այլևս չհամբերեց։ Նա մոտեցավ, գրկեց ինձ, և յուր կուրծքի վրա սեղմելով, ասաց.

— Ա՜խ, դու ո՜րքան լավ մարդ ես, շա՜տ լավ մարդ, աստված քեզ բարի տա։ Եթե ինձ այդ աղայի մոտ չբերեիր, ես սովից կմեռնեի։

— Դարձյալ կմեռնես...— պատասխանեցի ես, և դանակը ցցվեցավ նրա կոկորդի մեջ...

Խեղճը դողդողաց և գլորվեցավ ցած...

Ես ամենայն ճշտությամբ կատարելով իմ վարպետի պատվերները, հեռացա ինձ հետ տանելով ողորմելի Ասկերի կտրած գլուխը։

Գալով քավոր Պետրոսի մոտ, հարցրի.

— Ի՞նչ պետք է անել այդ գլխի հետ։

— Ջարդիր, տուր արջիդ, թող ուտե։

Ես կատարեցի և նրա վերջին հրամանը։

Քավոր Պետրոսը այրեց Ասկերի շորերը, որ հագնելով դուրս էր եկել յուր խանութից, և կրկին հագավ յուր արջ պար ածողի մուշտակը։

Մյուս առավոտ նա ուղարկեց ինձ փողոցը տեսնելու, թե ի՞նչ ձայն կա։ Դեռ նոր էին ուշադրություն դարձրել խանութի կոտրած կողպեքի վրա, դեռ նոր էին գտել մորթված դիակը և զոհարների խորտակված արկղիկը։ Ոստիկանությունը շրջապատել էր խանութը, ոչ ոքին չէին թողնում մոտենալ։

— Ի՞նչ է պատահել,— հարցնում էին մարդիկ միմյանցից։

— Այս գիշեր խորասանցի հարուստ ակնավաճառի գլուխը կտրել են, բոլոր զոհարները տարել են,— լինում էր պատասխանը։

— Աստված պատժեց նրան,— ամբոխի միջից լսելի եղավ մի ձայն,— այս գիշեր նա վաճառեց ինձ քսան հազար ռուբլու կեղծ զոհարներ...

Ոստիկանությունը իսկույն կալանավորեց այդ մարդուն։ Դա հրիտասարդ բուխարեցին էր։

Վերադառնալով քավոր Պետրոսի մոտ, ճանապարհին զանազան մտածություններ պաշարել էին ինձ։ Ես հասկանում էի, թե ինչ նպատակով խաղացվեցավ այդ ամբողջ դրաման։ Ես հասկանում էի, որ խեղճ Ասկերին խորասանցի ակնավաճառի հագուստի մեջ մորթել տալով, քավոր Պետրոսը կամեցավ կորցնել իսկական ակնավաճառի (այսինքն յուր) հետքերը։ Բայց ես չէի հասկանում մի բան։ Իրավ է, որ քավոր Պետրոսը,

օգուտ քաղելով երիտասարդ բուխարեցու միամտությունից, վաճառեց նրան քսան հազար ռուբլու կեղծ գոհարներ։ Բայց ինձ հայտնի էր, որ նա սկզբում ցույց էր տվել բոլորովին բնական գոհարներ, հետո բնականի փոխարեն տվեց կեղծը, արհեստականը, նմանեցրածը։ Այժմ գլխավոր հարցը նրանումն էր, թե որտեղի՞ց ուներ քավոր Պետրոսը այն բնական գոհարները, որ ուրիշ շատ մարդկանց վրա ևս վաճառեց։

Մի ակնթարթում ծագեց իմ հիշողության մեջ վաղուց մոռացված անցքը, որ սկիզբ դրեց իմ դժբախտությանը... Ես հիշեցի այն աղետալի բանալին, որ դարբնի աշակերտ եղած ժամանակս շինել էի քավոր Պետրոսի համար։ Ես հիշեցի նույն բանալիով մի ամրոցի մեջ պահված երկաթե արկղի բացվելը և նրա միջից մեծ քանակությամբ գոհարների և զանազան թանկագին իրեղենների կողոպտվելը։ Ես հիշեցի վարպետիս կրած տանջանքները, նրա արհեստանոցի հարքունիս գրավիլը։— Այդ բոլորը ինձ ասում էին, թե քավոր Պետրոսի այժմյան ակնավաճառությունը խորին կապ ուներ Պարսկաստանում մի ժամանակ կատարված գողության հետ։ Ես հիշեցի մի այլ փաստ, որ բոլորովին հաստատում էր իմ ենթադրությունները։ Երբ անցկացանք Երասխ գետից և առաջին անգամ ոտք դրեցինք ռուսաց հողի վրա, քավոր Պետրոսը մաքսատնից փախցնելու նպատակով յուր ավանակի փալանի մեջ թաքցրեց զանազան իրեղեններ, որ հետո ամենայն զգուշությամբ աշխատում էր ծածկել ինձանից։— Մի՞թե այն իրեղենները այժմյան գոհարները չէին, որ գողացվել էին հիշյալ երկաթե արկղից, իմ ձեռքով շինված բանալիով։

Երբ այդ մասին փորձեցի տեղեկանալ քավոր Պետրոսից, նա խիստ խոժոռ հայացքով նայեց իմ երեսին և լռեց...

Մենք մի քանի օր ևս մնացինք տոնավաճառում, պար ածեցինք մեր արջը և ապա հեռացանք։

Զ

ՌԱԲԲԻ ՇԻՄՈՆԸ

Թողնելով տոնավաճառը, մենք շարունակեցինք մեր արշավանքը դեպի կայսրության հարավ-արևմտյան գավառները։

Մի ամսից հետո գտնվում էինք*** քաղաքում։ Այստեղ քավոր Պետրոսը ծանոթացավ մի հրեա սեղանավորի հետ, որը, թանկագին իրեղեններ գրավ առնելով, փող էր տոկոսով տալիս, իհարկե, խիստ ծանր տոկոսով։

Փոքր միջոցում քավոր Պետրոսը կարողացավ այնքան գրավել հրեայի համակրությունը, որ նրանց հարաբերությունները, կարելի է ասել, բոլորովին բարեկամական էին։ Բայց պետք չէ մոռանալ, որ քավոր Պետրոսը իրան ձևացրել էր նույնպես հրեա, ոչ թե հասարակ հրեա, այլ մի գիտնական ռաբբի, որը Թովրաթը և Թալմուդը անգիր գիտեր։ Դրա մեջ կասկածել ոչ ոք կարող չէր, որովհետև նրա դեմքի գծագրությունը բավական նման էր Իսրայելի հալածված որդիների տխրամած դեմքին։ Բացի դրանից, նրան ծանոթ էին ոչ միայն երրայեցոց, այլ զանազան ասիական ազգերի սովորություններն ու լեզուները։ Քավոր Պետրոսը իրան ներկայացրել էր որպես Սպահանի և Համադանի հրեաների հովիվ։

Սեղանավորը եկած էր այս քաղաքը բոլորովին աղքատ. մի բան, որ բերել էր նա յուր հետ, էր նրա հրեական անվաստակելի եռանդը, և հրեական խելքը, որ զորավոր է հանդիսանում ավելի մթին ճանապարհների մեջ... Սկզբում նա ժամագործ և կնիքների փորագրող էր, բայց մի քանի տարուց հետո դառնում է բանկիր։

Սեղանավորը որքան և ջերմեռանդ փողապաշտ էր, այնքան էլ մոլեռանդ մովսեսական էր։ Արծաթի և հին Կտակարանի պաշտամունքը նրա մոտ համահավասար նշանակություն ունեին։ Նրա պապերը Սինա լեռան ստորոտում գուցե չէին պաշտի Ահարոնի շինած հորթին, եթե ոսկուց ձուլված չլիներ։

Սեղանավորը յուր հայրենական կրոնի նախանձախնդրություն ուներ։ Այդ էր պատճառը, որ նա խիստ հարգանքով ընդունեց քավոր Պետրոսին, որ հայտնվել էր նրա մոտ, որպես նրա թշվառ ազգակիցների քահանա, որոնք աղքատ, հալածված, ապրում էին Պարսկաստանի հեռավոր գավառներում։

Ռաբբի Շիմոնի (այսպես էր կոչում իրան քավոր Պետրոսը) ցավալի պատմությունները, արևելքի հրեաների աննախանձելի դրության մասին, ոչ միայն գրավեցին հարուստ սեղանավորի սիրտը, այլ շարժեցին այն քաղաքում գտնված բոլոր նշանավոր

հրեաների կարեկցությունը դեպի ուխտյալ աշխարհի հայրենազուրկ և տարագրված որդիները։

Գլխավորապես սեղանավորի հորդորանքով տեղային հրեաները մի նշանավոր գումար հանգանակեցին ի նպաստ Սպահանի և Համադանի մեջ բնակվող եղբայրների, որոնց կողմից քավոր Պետրոսը ներկայացել էր իբրև հոգևոր նվիրակ։

Իրան ձևացնել նվիրակ այս և այն դավանության, այս և այն եկեղեցու հոգևոր իշխանության կողմից, և ժողովրդից հավաքել բարեգործական օժանդակություններ,— դա խաչագողի արհեստի գլխավոր ճյուղերից մեկն է։ Խաչագողը գիտե մարդկային հասարակությունների թույլ կողմերից օգուտ քաղել։ Այդ թույլ կողմերից ավելի դյուրախաբը, ավելի հեշտ հրապուրվողը կրոնական զգացմունքն է։ Խաչագողը ամենայն ճարպկությամբ հարստահարում է այդ սրբազան զգացմունքը։

Հասկանալի է, որ այս և այն կրոնական համայնքի, այս և այն եկեղեցական պետի ներկայացուցիչ լինելու համար, պետք է ունենալ, յուր ձեռքում թղթեր կամ կոնդակներ զանազան բարձր հոգևոր իշխանություններից, որոնց ներկայացուցիչն են ձևանում։ Խաչագողները ունենում են այս տեսակ թղթեր, և այն աստիճան վարպետությամբ պատրաստված որ անկարելի է կասկածել նրանց անհարազատության մասին կամ ճանաչել, որ նրանք կեղծ են։ Խաչագողներից առանձին մարդիկ իրանց համար արհեստ են շինել պատրաստելու կեղծ կոնդակներ, որ վաճառում են ցանկացողներին խիստ թանկ գնով։ Քավոր Պետրոսը ուներ մի կոնդակ, եբրայեցոց լեզվով մագաղաթի վրա գրված, և Բաղդադի հրեից քահանայապետի ահագին կնիքով դրոշմված։ Քավոր Պետրոսը չէր գնած այդ նշանավոր կոնդակը, այլ փոխել էր մի ուրիշ թղթի հետ, որը իբր թե նա ստացել էր Մեքքայի շերիֆից, և որի շնորհիվ նա մի քանի տարի կողոպտեց Հնդկաստանի մահմեդականներին։

Խաչագողները ունենում են զանազան թղթեր, որոնք մեկի համար հնացած և գործածությունից ընկած են լինում, իսկ մյուսի համար նոր են համարվում։ Այսպիսի թղթերը նրանք փոխում են միմյանց հետ կամ վաճառում են միմյանց վրա։ Նոր թուղթ ստացող խաչագողը ման չէ գալիս երկրի այն կողմում և այն ժողովրդի մեջ, ուր նույն թղթով շրջան էր գործել

նրա նախկին ունեցողը։ Որպես ձկնորսը յուր ուռկանը չէ գցում գետի այն տեղը, ուր մի քանի օր առաջ որսացել էր մի ուրիշը։

Այդ քաղաքը մտնելուց հետո անցել էր երկու շաբաթ։ Ես ամենևին տեղեկություն չունեի, թե քավոր Պետրոսը ինչ բանի վրա է մտածում կամ ինչով է զբաղված, որովհետև նա շատ ժամանակ բացակա էր գտնվում մեր իջևանից։ Բայց հենց առաջին օրից ինձ պատվիրեց, որ մեր կացարանից դուրս չգամ և ամենևին ցույց չտամ, թե ես նրա ընկերն եմ։ Ինձ սկզբում անհասկանալի էր, թե ինչո՞ւ թաքստի մեջ էր պահում ինձ։ Բայց մի օր դարձավ դեպի ինձ այդ հարցով.

— Կամենո՞ւմ ես շատ փող ունենալ, Մուրադ։

— Ինչո՞ւ չէ։

— Ուրեմն ինչ որ ասեմ, պետք է կատարես։

— Ես միշտ հնազանդ եմ եղել ձեզ։

— Դու պետք է մտնես այդ մեծ սնդուկի մեջ, որ այսօր բերեցի բազարից։

— Կամենում եք, որ դա իմ դագա՞ղը լինի։

— Այո՛, դրա նման մի բան,— պատասխանեց նա ժպտալով և ապա շարունակեց.

— Լսիր, քեզ այս սնդուկի մեջ փակած, պետք է տանեմ մի հրեա սեղանավորի խանութը։ Սնդուկը այնտեղ պահ կտամ, ուր կմնա երեք օր։ Վերջին օրվա գիշերը դու կբացես քո դագաղը և հարություն կառնես նրա միջից։ Սնդուկը այնպես պատրաստված է, որ ներսից խիստ հեշտությամբ կբացվի։ Խանութում դու կգտնես երկաթյա ահագին արկղ։ Նա լիքն է ոսկիներով և զանազան թանկագին իրեղեններով։ Նրանց մեկ մասը, իհարկե մեծ մասը, քեզ հետ առած, կրկին կմտնես քո դագաղի մեջ։

— Ինչո՞ւ ոչ ամենը, այլ նրանց մեկ մասը։

— Այստեղ նպատակ կա...

Թեև նա չասաց, բայց ես հասկացա, որ քավոր Պետրոսի սակավապետությունը այն նպատակով էր, որ իսկույն ուշադրություն չդարձնեն հափշտակության վրա, երբ արկղը բոլորովին դատարկված կգտնեն յուր հարստությունից։ Ես պատասխանեցի.

— Ես էլ կընտրեմ, ինչ որ ավելի թանկագին է։

— Այդ թողնում եմ քո ճաշակին, միայն թուղթ փողերին չի պիտի դիպչես։

— Որովհետև թուղթ փողը բանացնում են, մյուս օրը իսկույն կնկատեն, որ պակաս է։

— Դու խիստ հասկացող տղա ես, գառնուկս,— ասաց նա ձեռքով փաղաքշաբար իմ մեջքին զարկելով։— Ահա քեզ երկու բանալիներ, որ շատ հեշտությամբ կբաց անեն երկաթյա արկղը։

— Եթե չբաց անեն, իմ դարբնության արհեստը այնտեղ պետք կգա...

— Ոչ, կբաց անեն, քո արհեստը հարկավոր չի լինի։ Միայն պետք է զգուշանաս, որ արկղի վրա կամ բանալիների տեղում որևիցե խանգարմունք չպատճառես։

— Հասկանում եմ։ Հետո՞։

— Այդ գործը կկատարվի, որպես ասացի, երրորդ օրվա գիշերը։ Չորրորդ օրվա առավոտյան պահուն ես սնդուկը կվերառնեմ հրեայի խանութից։

— Բայց ես նրա մեջ կմեռնեմ սովից։

— Դու կգտնես նրա մեջ բոլոր հարմարությունները, ինչ որ քեզ պետք կլինի։

Այդ միջոցին նա բաց արեց սնդուկը և ցույց տվեց նրա միջի պատրաստությունները։

— Ցերեկները,— ասաց նա,— դու պետք է անշարժ և լուռ մնաս քո դագաղի մեջ, որպես մի դիակ։ Իսկ գիշերները ազատ ես, կարող ես դուրս գալ, զվարճանալ, որքան կամենաս։ Խանութում ոչ ոք չի լինելու։

Նույն օրվա երեկոյան պահուն բեռնակիրը սայլով խորհրդավոր սնդուկը տարավ սեղանավորի խանութը։ Նրա միջից ես լսեցի հետևյալ խոսակցությունը։

— Այդ ի՞նչ է, ռաբբի Շիմոն,— հարցրեց սեղանավորը։

Ռաբբի Շիմոնը, այսինքն քավոր Պետրոսը, պատասխանեց։

— Բնակարանս ապահով տեղ չէ, Աբրաամ Իսայիչ, համարյա ամեն գիշեր գողություններ են պատահում։ Մի քանի բաներ գնել էի մեր այնտեղի սինագոգայի համար. շատ բաներ էլ նվիրեցին բարի մարդիկ, բոլորը, ինչ որ հավաքել եմ, դրել եմ այդ սնդուկի մեջ։ Վախենում եմ, չիցե թե մի դժբախտություն պատահի, և հազարով խեղճ իսրայելացիներ կզրկվեն

այն օժանդակությունից, որ շնորհեցին մեր այստեղի եղբայրները։ Մտածեցի սնդուկը ձեզ մոտ թողնել, Աբրաամ Իսայիչ, մինչև իմ գնալը։

— Լավ ես մտածել, ռաբբի Շիմոն,— ասաց սեղանավորը և հրամայեց սնդուկը դնել յուր խանութում։ Հետո հարցրեց.

— Ե՞րբ եք կամենում գնալ, ռաբբի Շիմոն։

— Եթե աստված հաջողի, մի երկու կամ երեք օրից հետո։ Շատ ուշացա, Աբրաամ Իսայիչ։ Այնտեղի գործերս կատարող չկա. խեղճ ժողովուրդը մնացել է բոլորովին անտեր, անխնամ։ Պետք է շտապեմ, որ նրանց օգնություն հասցնեմ։

— Պետք է շտապել, ռաբբի Շիմոն, երբ որ այդպես է,— ասաց սեղանավորը։

Ռաբբի Շիմոնը շնորհակալություն հայտնելով, հեռացավ։ Այնուհետև ամեն օր գալիս էր նա սեղանավորի խանութը, և ամեն անգամ իմ դարանի միջից լսում էի նորանոր խոսակցություններ։

Երկրորդ օր։

— Ռաբբի Շիմոն,— հարցնում է սեղանավորը,— դեռ երկա՞ր պետք է սպասենք մեսիայի գալստյանը։

— Ժամանակը մոտեցել է։

— Ինչպե՞ս կլինի մեր վիճակը, երբ նա կհայտնվի։

— Սուրբ քաղաքը (Երուսաղեմը) կվերականգնվի յուր ավերակների միջից։ Իսրայելի ցրիվ եկած որդիները կհավաքվեն աշխարհի ամեն կողմից։ Ավետյաց երկիրը կրկին կծաղկի յուր հին փառքերով։ Մեսիան կտիրե ամբողջ տիեզերքին։ Եվ երկրի ամենահզոր թագավորները, մեկ գոռհիկ հրեայի փեշից բռնած, նրանից ողորմություն կխնդրեն։

— Իսկ ե՞րբ կհայտնվի մեսիան։

— Բոլոր հեթանոսները կդիմեն դեպի նա. բոլորը հրեա կդառնան։

— Ուրեմն այդ հեթանոսները, որ այժմ մեզ հալածում են, էլ չեն լինի։

— Արևի ծագելու տեղից մինչև նրա մուտքը կտիրե Մովսեսի սուրբ օրենքը։

Երրորդ օր։

— Ռաբբի Շիմոն, ինչո՞ւ ընկավ Երուսաղեմը։

— Իսրայելի որդիների մեղքերի պատճառով։ Նրանք օրեն-

քը քանդեցին. Եհովայի փոխարեն կուռքեր պաշտեցին. օտար ազգի կանանց հետ ամուսնանալով, պոռնկություն գործեցին, սուրբ տաճարի խնամատարությունը և քահանաների հարգանքը մոռացան. իրանց զոհերի, իրանց նվերների մեջ ժլատ գտնվեցան. այրի կնոջ հացը խլեցին և որբերի ժառանգությունը հափշտակեցին։ Այդ բոլորը տեսնելով, աստված բարկացավ նրանց վրա, սուրբ քաղաքը կործանեց և Իսրայելին գերության մատնեց։

— Այժմս էլ մենք միևնույնն ենք գործում. ուրիշի հացը խլում ենք, նրա որդիներին քաղցած ենք թողնում։

— Դա ներելի է, երբ գործը օտարազգիների հետ է, բայց մի իսրայելացուն թույլ տված չէ յուր եղբորը հարստահարել։

— Ուրեմն օտարներին կարելի՞ է։

— Կարելի է։ Միթե չե՞ս հիշում Թովրաթի այն տեղը, երբ Մովսեսը մտածում էր Իսրայելը փարավոնների գերությունից ազատել և տանել նրանց իրանց հայրենի աշխարհը, նա խորհուրդ տվեց Իսրայելի կնիկներին, որ իրանց եգիպտացի հարևաններից արծաթյա և ոսկյա զարդեր փոխ առնեն, ասելով, թե ոչ այնքան հեռու մի տեղ ուխտ ենք գնում, երբ կվերադառնանք, կրկին ետ կտանք ձեզ։ Կնիկները կատարեցին այդ պատվերը, և եգիպտացիների հարստությունը իրանց հետ առնելով, անցան Կարմիր ծովը։

— Հիշում եմ Թովրաթի այն տեղը։ Բայց այդ խոբեբայություն չէ՞ր։

— Ոչ։ Եգիպտացիները շատ էին հարստահարել իսրայելացիներին, դրանք էլ փոխադարձաբար կողոպտեցին նրանց։ «Ակն ընդ ական»— դա օրենք է։

Չորրորդ օրվա առավոտյան պահում խանութի դռանը կանգնեց մի սայլակ։

— Ռաբբի Շիմոն, այդ ի՞նչ է,— հարցրեց սեղանավորը։

— Գնում եմ, Աբրաամ Իսայիչ, եկա սնդուկը վեր առնելու և իմ շնորհակալությունը ձեզ հայտնելու։

— Մի՞թե, այդպես շուտ, շատ ցավում եմ, ռաբբի Շիմոն։ Ես դեռ երկար հույս ունեի լսել ձեր բարի խրատները։

— Այո՛, գնում եմ, Աբրաամ Իսայիչ, Մովսեսի և Ահարոնի օրհնությունը ձեզ թողնելով։

— Թող Եհովան բարի ճանապարհ տա ձեզ,— ասաց սեղանավորը և հրամայեց սնդուկը տեղավորել սայլակի վրա։

Ռաբբի Շիմոնը կրկին և կրկին օրհնեց Աբրաամ Իսայիչին, նրանք համբուրվեցան, բարեմաղթեցին միմյանց շատ օրեր, երկայն կյանք և այլն։

— Ես մի հիշատակ պիտի թողնեմ ձեզ, Աբրաամ Իսայիչ, դուք շատ բարություններ արեցիք ինձ համար,— ասաց ռաբբի Շիմոնը և տվեց նրան մի բան։

Թե ի՞նչ էր այդ, ես, իհարկե, սնդուկի միջից տեսնել չէի կարող, միայն լսեցի, որ քավոր Պետրոսը ասաց նրան, թե այդ արծաթյա տուփի մեջ ամփոփված է «տապանակ ուխտի» մի մասը, և տուփը ինչպես շինված է, պետք է այնպես անձեռնամխելի և առանց բացվելու մնա։

— Պահի՛ր, քեզ մոտ,— ասաց նա,— և աստուծո օրհնությունը պակաս չի լինի քո տանից։ Քո զավակները կծլեն, կծաղկեն, և քո հարստությունը ծովի ավազի չափ կլինի։

Սեղանավորը չգիտեր ինչով հայտներ յուր շնորհակալությունը, մանավանդ երբ լսեց, որ այդ տուփի շնորհիվ յուր հարստությունը ծովի ավազի չափ կլինի։ Ես չտեսա, թե ինչ տվեց նա քավոր Պետրոսին, միայն լսում էի նրանց գրկախառնության, նրանց համբույրների ձայնը, լսում էի նրանց փոխադարձ գոհունակությունների ջերմ արտահայտությունները։

Սայլակը շարժվեցավ։ Ես իմացա, որ նրանք բաժանվեցան։

Սայլակը, որ տանում էր քավոր Պետրոսի մթերքը, մեր սեփականն էր։ Ինքը քավոր Պետրոսը կառավարում էր ձիաները։ Նա շարժվում էր շտապով և արագ կերպով։ Բայց դեպի ո՞ւր էր տանում, ես տեսնել չէի կարողանում, ես դեռ իմ դագաղի մեջն էի։

Մի քանի ժամից հետո քավոր Պետրոսը ինձ ձայն տվեց.

— Հիմա կարող ես դուրս գալ։

Սնդուկը պատրաստված էր ձեռնածուների սնդուկի նման, որի մեջ հեշտությամբ կարելի է մտնել և դուրս գալ առանց կողպեքը բաց անելու, առանց նրա խուփը բարձրացնելու։

Երբ դուրս եկա, նայում եմ իմ շուրջը, կեսօրից բավական անցել էր։ Գտնվում էինք մեծ ճանապարհի վրա, որը այդ միջոցին բոլորովին դատարկ էր։ Քավոր Պետրոսը հրամայեց

ինձ՝ նստել յուր տեղը և կառավարել ձիաները։ Ես կատարեցի հրամանը, ասելով.

— Ես կմեռնեմ սովից, եթե մի բան չուտեմ, հենց այս գիշեր պաշարս սպառված էր։

— Փոքր-ինչ առաջ գնանք, ճանապարհին կա մի իջևան, այնտեղ մի բան կգտնենք ուտելու։ Քշի՛ր, ձիաները շատ կամաց են գնում։

Ես հարցրի.

— Ի՞նչ պիտի անենք, եթե մեզ հետամուտ լինեն։

— Ոչ ոք հետամուտ չի լինի,— պատասխանեց նա հանդարտությամբ։— Ինձ հայտնի է, որ սեղանավորը այսօր զբաղված է մի դատաստանական գործով. նա խանութում չի մնա, ուրեմն և յուր արկղը չի բաց անի, որ նկատե, թե յուր հարբստության հետ ի՞նչ է պատահել։ Իմ բաժանվելու ժամանակ նրան կանչեցին դատարանը։

Իջևանը այնքան մոտ չէր, որպես ցույց տվեց քավոր Պետրոսը։ Երեկոյան, արևը մտնելուց հետո, հազիվ կարողացանք հասնել։ Սայլակը պահեցինք ճանապարհի վրա, քավոր Պետրոսը ցած իջավ, իսկ ինձ պատվիրեց մնալ ձիաների մոտ։ Նա մտավ իջևանը, մի քանի րոպեից հետո վերադարձավ, յուր հետ բերելով մի շիշ արաղ, հաց, պանիր և տասն հատ ձվաներ։ Ուրիշ բան չէր գտել։ Նույն միջոցին իջևանի ծառաներից մեկը բերեց և գարի ձիաների համար։

— Այստե՞ղ եք կամենում կերակրել ձիաները,— հարցրեց նա։

— Ո՛չ, մենք պետք է շարունակենք ճանապարհը,— ասաց քավոր Պետրոսը։

Այդ բոլոր պաշարը մեզ հետ առնելով, սկսեցինք առաջ գնալ։ Երեք վերստաչափ հազիվ էինք հեռացել իջևանից, երբ քավոր Պետրոսը հրամայեց դուրս գալ մեծ ճանապարհից և շեղվել դեպի աջ։

— Հիմա կանգնեցրեք,— ասաց նա։— Այստեղ կարող ենք հանգստացնել ձիաները, մենք ևս մի բան կուտենք։

Բայց ինձ ուտելու ոչինչ չէր մնացել, որովհետև ես իմ բաժինը գալու ժամանակ ճանապարհին բոլորը կերել էի։

Մեր գտնված տեղը մի տափարակ դաշտ էր։ Թեև շատ չէինք հեռացել մեծ ճանապարհից, բայց այնքան սաստիկ մութն էր,

որ անցորդները հազիվ կարող էին նշմարել մեզ։ Երբ ձիաները գարին կերան, փոքր-ինչ հանգստացան, քավոր Պետրոսը հրամայեց լծել։ Ես զբաղվեցա ձիերը լծելով, իսկ քավոր Պետրոսը այդ միջոցին փոխում էր յուր ռաբբիի հագուստը։ Երբ բոլորովին պատրաստ էինք, ասաց նա.

— Նստի՛ր, քշիր դեպի այդ կողմը։

— Այդ կողմով մենք դարձյալ կվերադառնանք քաղաքը,— նկատեցի ես։

— Ես էլ այդ եմ ուզում։

Մեծ պտույտ գործելով, զարտուղի ճանապարհներով, մենք լուսաբացին հազիվ կարողացանք հասնել քաղաքը։ Մեր սայլակը կանգնեց քաղաքի մի հեռավոր և խուլ անկյունում գտնըված տան հանդեպ։ Այդ տունը այն կասկածավոր բնակարաններից մեկն էր, որի դռները ցերեկով միշտ փակ են մնում, և գիշերները միայն մարդիկ այնտեղ ելումուտ են գործում։ Այստեղ քավոր Պետրոսը վարձել էր մի փոքրիկ մթին սենյակ, ուր հազիվ տեղավորեցինք մեր իրեղենները։ Բավական հոգնած էինք։ Ես պառկեցի բակում, սայլակի վրա, ձիաների մոտ, իսկ քավոր Պետրոսը քնեց փոքրիկ սենյակում։

Հեռանալ մեկ քաղաքից, գնալ ձևացնելով, և կրկին վերադառնալ նույն քաղաքը,— դա քավոր Պետրոսի փախստյան եղանակներից մեկն էր։ Դիցուք թե սեղանավորը հենց նույն օրը հասկանար յուր խանութում կատարված գողությունը, բայց մինչև կհայտներ ոստիկանությանը, մինչև մեր ետևից մարդիկ կուղարկեին, բավական ժամանակ կանցներ։ Մարդիկը կգային և մեզ ճանապարհի վրա չէին գտնի, որովհետև մենք արդեն մի այլ ճանապարհով կրկին վերադարձած կլինեինք նույն քաղաքը։

Ես զարթնեցա այն ժամանակ, երբ արևը մի ժամ առաջ ծագել էր և հնդկահավերը բակում կռնչում էին։ Բայց այդ հնացած, խոնավությունից բորբոսնած և գերեզմանի պես մթին տան մեջ դեռ մարդիկ չէին երևում։ Կարծես, դա ժանտախտով վարակված այն տներից մեկը լիներ, ուր մարդիկ չեն համարձակվում բնակվել։ Միայն ես նկատեցի քավոր Պետրոսին, յուր սենյակի դռան առջև կանգնած, հեռվից ձեռքով կանչում էր ինձ.

— Իսկույն թեյ կտան,— ասաց նա,— շուտով խմիր, որովհետև ուրիշ տեղ եմ ուղարկելու քեզ։

Ներս մտա սենյակը։ Նստեցի նույն սնդուկի վրա, որ ամբողջ երեք օր իմ դագաղն էր եղած։ Քանի որպեսզի հետո, թեյի մատուցարանը ձեռքում՝ ներս մտավ մի մանկահասակ, բայց սաստիկ կեղտոտ հագնված կին։ Նրա մի ժամանակ գեղեցիկ դեմքը այլանդակվել էր կարմիր բծերով, որ երևում էին երեսի վրա։

— Դա ո՞վ է,— դարձավ նա դեպի քավոր Պետրոսը, մի առանձին ուշադրությամբ իմ վրա նայելով։

— Իմ որդին է, —պատասխանեց քավոր Պետրոսը։

— Այդպիսի սիրուն որդի ունեիր, և ինձանից թաքցնո՞ւմ էիր, ա՜խ, դու ծերուկ, անխիղճ ծերուկ,— բացականչեց նա, և մոտեցավ ինձ, սկսեց փայփայել իմ մազերը։

— Լիզա, թո՜ղ տուր, լրբության ժամանակ չէ,— գոչեց քավոր Պետրոսը բարկությամբ։

Լիզան ինձ բաց թողեց, բայց քավոր Պետրոսին ավելի բարկացնելու համար ասաց.

— Հիմա՜ կգնամ քեզ համար սպիտակ հաց և կարագ կբերեմ։ Ես կարծում էի, որ միայն ծերուկն է այստեղ, այդ պատճառով թեյի հետ ոչինչ չբերեցի նախաճաշելու։

Նա շտապով դուրս վազեց սենյակից։

Լիզայի հարաբերությունները քավոր Պետրոսի հետ բավական ընտանեկան էին թվում ինձ։ Երևում էր, որ նրանք վաղուց ճանաչում էին միմյանց։ Բայց քավոր Պետրոսը այդ կարծիքը ցրելու համար ասաց ինձ, որ նրա «վերնատունը փոքրինչ դատարկ է», այսինքն հիմար է և այդ պատճառով իրան վայելուչ պահել չգիտե։

Բայց Լիզան այնքան հիմար չէր երևում, որպես կամենում էր ցույց տալ քավոր Պետրոսը։ Նա երևում էր այն տեսակ կնիկներից, որոնք վշտից և հուսահատությունից տանջված, աշխատում են իրանց սրտի ցավերը թմրեցնել արաղի շոգիներով։

Երբ վերջացրի իմ նախաճաշիկը, քավոր Պետրոսը ասաց.

— Դու ճանաչում ես հրեա սեղանավորի խանութը, կգնաս նրա մերձակայքում կպտտես և ինձ տեղեկություններ կբերես։

Ես գնացի, քավոր Պետրոսին թաքստի մեջ թողնելով, ինչպես նա առաջ ինձ թաքստի մեջ էր պահում։ Ոչ սեղանավորը և ոչ մի այլ մարդ այդ քաղաքում ինձ չէր ճանաչում։

Քավոր Պետրոսի ենթադրությունը ուղիղ հայտնվեցավ։ Սեղանավորը առաջին օրը չէր հասկացել, թե ի՜նչ էր պատահել յուր արկղի հետ։ Որովհետև այսպիսի սեղանավորները, որոնք ոսկի, արծաթ և գոհարներ գրավ առնելով, փող են տոկոսով տալիս, սովորաբար միշտ վեճեր են ունենում գրավատերերի հետ, և հետևաբար շատ անգամ գործ են ունենում դատարանների հետ։ Այն օրը, որի գիշերը կատարվեցավ հայտնի գողությունը, սեղանավորը մի տիկնոջ գանգատով կանչված էր դատարան։ Հրեան վաճառել էր տիկնոջ 5000 ռուբլի արժեք ունեցող օղամանյակը 1500 ռուբլի պարտքի փոխարեն։ Դատարանը գործը վճռել էր հօգուտ տիկնոջ։

Իսկ երկրորդ օրը, երբ ես գնացի քավոր Պետրոսի համար տեղեկություններ բերելու, գողությունը արդեն հայտնված էր։ Ոստիկանությունը քննություն էր անում և կազմում էր յուր տեղեկագիրը։ Խանութի դռները, կողպեքները, լուսամուտները գտան ամբողջ։ Երկաթյա արկղը նույնպես կոտրած չէր։ Ուրեմն որտեղի՞ց էր մտել գողը։ Ինքը հրեան նույնպես ցույց էր տալիս, որ նա յուր արկղը բոլորովին կողպված գտավ; և խանութի դռները փակված էին, երբ գործակատարները առավոտյան եկան բաց անելու։

— Ուրեմն սատանաներ պետք է մտած լինեն խանութը,— ծաղրում էին շատերը հրեային,— որովհետև սատանան կարող է անցնել փակ դռնից, պատի միջից, առանց հետք թողնելու։

Բազմության հետ հավաքված էին այնտեղ և գրավատերերից շատերը. նրանք աղաղակում էին.

— Սո՜ւտ է խոսում անիծված հրեան, սո՜ւտ է խոսում։ Նա ինքն է թաքցրել մեր իրեղենները, պատճառ բերելով, թե գողացել են։ Որտեղի՞ց մտավ գողը, ինչպե՞ս դուրս եկավ։ Ինչո՞ւ արկղի միջի թուղթ փողերը չտարավ, միայն մեր իրեղենները տարավ։

Ոստիկանությունը հավանական գտավ կասկածը և կալանավորեց հրեային։

Հրեան, երևի, մոռացել էր ռաբբի Շիմոնի սնդուկը, և երևակայել անգամ չէր կարող, որ նրան տապանակ ուխտի մեկ

Մասը ընծայող քահանան, և նրա հարստությունը ծովի ավազների չափ բազմացնելու ցանկություն հայտնող քահանան, կարող էր նրա արկղի հետ անբարեխղճաբար վարվել։

Մենք մի ամբողջ շաբաթ մնացինք Լիզայի մոտ։ Ես ամեն օր նոր տեղեկություններ էի բերում քավոր Պետրոսի համար։ Նա ցերեկները դրսում չէր հայտնվում, այլ գիշերները միայն դուրս էր գալիս յուր մթին սենյակից։ Արդյոք ո՞ւր էր գնում,— այդ մասին ինձ ոչինչ չէր ասում։

Լիզան օրըստօրե ավելի համակրելի էր դառնում։ Այդ դրժբախտ կինը զարթեցնում էր իմ մեջ ոչ այլ զգացմունք, այլ միայն ցավակցություն։ Երբ նա պատմում էր ինձ յուր կրած տանջանքները, յուր հետ պատահած անցքերը, ես սարսափում էի։ Նա մի կատաղի ավազակի սիրուհի էր, որից բաժանվել չէր կարող, որովհետև սաստիկ սիրում էր նրան, թեև օր չէր անցնում, որ չծեծվեր նրանից։

Որպես գիշերով մտանք Լիզայի տունը, այնպես էլ գիշերով դուրս եկանք այնտեղից։ Խեղճ աղջիկը պատրաստել էր ինձ համար բավական ճոխ պաշար ճանապարհին ուտելու համար։ Նա ինձ կոչում էր Նիկոլայ, որովհետև այդ անունով ծանոթացա նրա հետ։

— Նիկոլայ, հոգյակս,— ասաց նա մեզ ճանապարհ դնելու ժամանակ,— երբ կպատահի քեզ միանգամ ևս անցնել այս քաղաքով, չմոռանաս խեղճ Լիզային։

— Չեմ մոռանա,— պատասխանեցի ես, և մեր սայլակը հեռացավ։

Քավոր Պետրոսը բարկացավ։ Նա սաստիկ ատում էր, երբ մարդիկ քաղցրությամբ էին խոսում «քածերի» հետ, ինչպես սովորաբար արտասանում էր նա։

Է

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Գիշեր էր, երբ մենք դուրս եկան հիշյալ քաղաքից։ Լուսնյակի լույսով մեր սայլակը հանդարտ վազում էր հարթած ճանապարհով։ Երկու ուժեղ ձիաներ քաշում էին նրան ամենայն ա-

րագությամբ։ Ես կառավարում էի նրանց երասանակները։ Քավոր Պետրոսը մրափում էր սայլակի մեջ, որպես մի հսկա, որ հանգստանալու պետք է զգում մի մեծ հաղթությունից հետո։

Մեր ճանապարհը ձգվում էր անսահման անապատի միջով, ուր դեպի որ կողմը նայում ես, երկինքը միանում է հորիզոնի հետ։ Այսպիսի անապատները ոչ միայն ցերեկով, այլև գիշերով, այն ևս լուսնկա գիշերով, կախարդիչ կերպով ազդում են մարդու երևակայության վրա։ Եվ ինչպիսի՞ պատկերներ ասես, որ չեն գալիս ու չեն գնում նրա աչքերի առջևից...

Հանկարծ միտքը սլանում է հեռո՜ւ և հեռո՜ւ, և օտարական պանդուխտը տեսնում է իրան յուր հայրենիքում... տեսնում է ծանոթ երեսներ... տեսնում է ծանոթ տեղեր... տեսնում է յուր մանկության սրբավայրը և ուրախանում է... Բոլորը հետզհետե անհայտանում են։ Իսկ այն պատկերը, որ միշտ կիր է եղել նրա սրտին, նա մնում է, նա երկար ժամանակ մնում է...

Այդ իմ Սառայի պատկերն է...

— Նազելի Սառա,.. ո՜րքան մեծացել է նա... ո՞րքան գեղեցիկ է... ահա նա ժպտում է... ո՜րքան ուրախ է... ահա մոտ եկավ... ինչո՞ւ է գլուխը քարշ գցել... երևի ամաչում է... տե՜ս կարմրեց...— Սիրելի Սառա, մի՛ վախիր... ես քո Մուրադն եմ... գրկիր ինձ... համբուրիր ինձ... ա՜խ, ինչո՞ւ ես փախչում... Սառա ջան... իմ Սառա...

Վերջին խոսքերը այնպիսի բարձր ձայնով արտասանեցի ես, որ քավոր Պետրոսը յուր քնից զարթնեց։

— Ի՞նչ է, ի՞նչ է պատահել,— գոչեց նա շփոթվելով։

— Ոչինչ,— պատասխանեցի ես փոքր-ինչ հուշի գալով։

Նա կրկին աչքերը խփեց, քնեց։

Քավոր Պետրոսի խռովությունը առանց պատճառի չէր։ Ես ամբողջ գիշեր անցուցել էի զառանցության մեջ։ Մի կողմից անքնությունը, մյուս կողմից, սայլակի անդադար օրորվելը, այն աստիճան գրգռել էին իմ ուղեղը, որ ես ընկել էի հալուցինասիոնների մեջ...

Այդ ինձ հետ շատ անգամ էր պատահում։ Բայց երբեք չէր պատահել, որ ես ինձ բոլորովին մոռանայի։ Երբեմն, ամբողջ ժամերով, բոլորովին քնած դրության մեջ, ես կառավարում էի ձիաները, բայց գեթ մի անգամ չէր պատահել, որ կամ մտրակը, կամ երասանակները իմ ձեռքից ցած ընկնեին։ Ես իմ

կիսաքուն դրության մեջ՝ մինչև անգամ հետևում էի ճանապարհի ուղղությանը, նկատում էի կամուրջները, զգուշանում էի զառիվայրերից, և սայլակը վտանգի չէի ենթարկում։ Իսկ այս անգամ, ինձ այն աստիճան մոռացել էի, որ ձիաներին իրանց կամքին էի թողել և բոլորովին շեղվել էինք ուղիղ ճանապարհից։ Այդ նկատելի եղավ այն ժամանակ, երբ լույսը բացվեց և արևելքը սկսեց շառագունել։

— Այդ ճանապարհը, սատանան գիտե, թե ուր է տանում,— ասաց քավոր Պետրոսը, երբ զարթնելով սկսեց նայել յուր շուրջը։— Մենք մոլորվել ենք...

Այդ խոսքերը թեև արտասանեց նա հանդարտությամբ, բայց նրանց մեջ կար և՛ բարկություն, և՛ հանդիմանություն։

— Ետ դառնանք,— պատասխանեցի ես,— գուցե գտնենք ուղիղ ճանապարհը։

— Հարկավոր չէ, շարունակի՛ր, տեսնենք աստված ո՛ւր է տանում մեզ։

Քավոր Պետրոսը մեր մոլորվելու մեջ գտնում էր աստուծո կամքը։ Նա մտածում էր, գուցե ուղիղ ճանապարհի վրա մեզ մի վտանգ կպատահեր, գուցե այնտեղ հետամուտ էին լինում, որ կալանավորեն մեզ, իսկ շեղվելով ուղիղ ճանապարհից, ազատվեցանք։

Զարմանալի բան է աստուծո ներկայությունը ամեն գործի մեջ. թե գողը և թե կողոպտյալը միօրինակ հույս են դնում նրա վրա։ Սպանողը նրանից ուժ է խնդրում յուր բազկի համար, իսկ սպանվողը՝ ազատություն։ Բոլորը դիմում են դեպի նա։

Արևը բավական բարձրացել էր։ Մենք գտնվում էինք դեռ միևնույն հարթ-հավասար անապատի մեջ։ Դեպի որ կողմը և նայում ես, վերջ չկա։ Մի ծանր, ճնշող տպավորություն էր գործում այդ լայնատարած, մոայլոտ անապատը մարդու վրա։ Կարծում ես, թե հորիզոնը ամեն կողմից հետզհետե նեղանալով, պատրաստվում է խեղդել մեզ։ Տեղ-տեղ պատահում էին փոքրիկ գյուղեր, նույնպես փոքրիկ, ողորմելի խրճիթներով, բայց մենք կանգ չէինք առնում, անցնում էինք։ Մի տեղ միայն քավոր Պետրոսը ցած իջավ սայլակից, մտավ գյուղը, մեզ համար ճանապարհի պաշար գնելու, և մանավանդ տեղեկանալու, թե որտեղ ենք գտնվում կամ դեպի ո՞ւր է տանում մեր բռնած ուղին։

Ես սայլակը կանգնեցրի գյուղի գլխավոր փողոցի վրա, սպասում էի քավոր Պետրոսի վերադարձին։ Նա կանչել տվեց գյուղի տանուտերին, ինչ-որ խոսեց նրա հետ, և քառորդ ժամից հետո վերադառնալով, ասաց ինձ.

— Այստեղ անկարելի է մնալ։

— Ինչո՞ւ։

— Ոչ մեզ համար հաց կարելի է գտնել և ոչ ձիաների համար գարի։

— Ի՞նչ է պատահել։

— Այս կողմերում սարսափելի սով է տիրում. մարդիկ ամեն ինչ սպառելով, հետո կերել են իրանց անասուններին, այդ ևս սպառելով, այժմ ուտում են այն, ինչ որ անասունները պիտի ուտեին։

Ես սոսկացի։ Նա նստեց սայլակի վրա և հրամայեց քշել։

— Դեպի ո՞ր կողմը,— հարցրի ես։

— Դեպի աջ։

— Դուք հիմա գիտե՞ք, թե ո՞ւր է տանում այդ ճանապարհը։

— Գիտեմ։

Քավոր Պետրոսի պատմությունից երևաց, որ նախորդ տարվա երաշտության պատճառով այս կողմերում հունձը խիստ անհաջող է եղել, իսկ ներկա տարվա ցանքերը նույնպես մի առանձին բեղմնավորություն չէին խոստանում։ Գյուղացիները, որ առանց այդ դժբախտությունների ևս միշտ աղքատ են եղել, այժմ զրկվել էին ապրուստի ամեն միջոցներից։

— Իսկ մեզ մոտ ուտելու մի բան մնացե՞լ է,— հարցրեց քավոր Պետրոսը։

— Միայն հացը պակաս է։ Շա՛տ ապրի Լիզան, նրա առատաձեռնության շնորհիվ մենք այժմ ունենք մի ամբողջ բուդ խոզի ապուխտ, մի քանի կտոր երշիկներ և պանիր։

— Պանիրը պահիր ինձ համար, իսկ մյուսները դու կուտես։

Քավոր Պետրոսը խոզի միս ուտելու սովորություն չուներ, որովհետև մեղք էր համարում։

Առաջիկա գյուղը այնքան հեռու էր, որ մենք հասանք այնտեղ, երբ երեկոյան ճրագները վառվում էին։ Թեև քավոր Պետրոսին ասել էին, որ այստեղ ավելի հարմարություն կգտնենք իջևանելու համար, բայց հայտնվեցավ, որ սովը և չքավորությունը այստեղ ավելի սարսափելի էր։

Մեր սայլակը կանգնեցրինք առաջին հանդիպած խրճիթի դռանը։ Ճրագվի մոմ անգամ չգտանք վառելու համար, որովհետև ճրագվի մոմերը այժմ գործ էին ածում որպես կերակուր։ Մեր հեռվից տեսած ճրագները ուրիշ ոչինչ չէին, բայց միայն փայտի տաշեղներ, որ բանեցնում էին մոմերի տեղ։

Մենք ունեինք մեզ հետ «մոմպատ», այսինքն մոմով պատած թելի մի ահագին կծիկ, որ մարդիկ ճանապարհորդության ժամանակ ման են ածում։ Բայց այդ կծիկը մեզ ուրիշ շատ գործերում ևս հարկավոր էր լինում։ Վառեցինք «մոմպատը»։

Մտանք խրճիթը։ Դա մի կատարյալ հիվանդանոց էր. ընտանիքի մեծ մասը պառկած, հառաչում էր ցնցոտիների ներքո։ Ոտքի վրա էր մնացել միայն ծերունի տան տերը և մի փոքրիկ աղջիկ՝ նրա թոռնիկը։

— Այստեղ անկարելի է մնալ,— ասացի ես քավոր Պետրոսին։

— Ամեն տեղ այսպես է, պարոն,— մեջ մտավ ծերունի տան տերը,— ամեն խրճիթում հիվանդներ կգտնեք։

Ամառվա եղանակը և լուսնկա գիշերը նպաստեցին մեզ իջևանելու բակում, դատարկ ախոռատան հանդեպ։ Այստեղ հիվանդներ չկային, որովհետև և շնչավորներ չկային։

— Սամովար կգտնվի՞,— հարցրի ես տան տերից։

— Սամովա՞ր,— կրկնեց թավամորուս տան տերը ծոծրակը քորելով։

— Այո՛, սամովար։

Ռուս մուժիկին մի բան հասկացնելու համար պետք է տասն անգամ կրկնել։

— Սամովար եթե գտնվի, պարոն, պետք է տերտերի տանը գտնվի։ Մենք էլ առաջվա ժամանակներում ունեինք, պարոն, բայց մեր մեղքից ոչինչ չմնաց, բոլորը ծախվեցավ...

— Ինչո՞ւ ծախվեցավ։

— Ծախեցինք կերանք, պարոն։ Մեր մեղքերի համար աստված պատիժ ուղարկեց սովը։ Ոչինչ չկար ուտելու։

— Իսկ հիմա՞։

— Հիմա ավելի վատ է. սովի հետ ավելացավ և հիվանդությունը։

Ես ընդհատեցի տխուր խոստովանությունը և կրկին հիշեցրի նրան սամովարը։

— Օլյա,— ձայն տվեց նա իր փոքրիկ թոռնիկին,— վազի՛ր տեր հոր տունը, ասա, որ մեզ մոտ պարոններ եկան, թող փոխ տա մեզ սամովարը։

Եվ իրավ, նրա խրճիթում ոչինչ չէր մնացել. կամ առաջուց չէր ունեցել, կամ ունեցածը վաճառել էր։ Մի հասարակ սեղան, որի երեսի վրա սև փոսիկներ էին կազմվել սամովարի տակից ընկած կրակներից, մի քանի հատ կոտրած տաբուրետկաներ, մի հատ արույրա կաթսա, հնոցի մոտ դրած, որի մեջ վաղուց կերակուր չէր եփվել, մի քանի փայտյա գդալներ, մի քանի անկոթ դանակներ առանց պատառաքաղների, եթե ավելացնենք դրանց վրա երկաթյա անթրոցը (кочерга), կստանանք կարասիների ամբողջ թիվը։

Միակ առարկան, որ մնացել էր յուր տեղում անշարժ, որին սովի բոլոր սաստկությունը չէր կարողացել ստիպել վաճառելու, աստվածամոր պատկերն էր, փոքրիկ Հիսուսը գրկում, որ դրված էր խրճիթի մի անկյունում։ Մուժիկը նրանից չէր բաժանվում, մուժիկը ամեն բան նրանից էր սպասում և նրա համար էր զոհում։

Քավոր Պետրոսը այս գիշեր լուռ էր, ոչինչ չէր խոսում։ Նա նստած էր մեր սնդուկներից մեկի վրա և ծխում էր։ Խիստ հազիվ անգամ էր պատահում, որ նա ծխեր, բայց երբ որ ծխում էր, դա արդեն նշան էր կամ սաստիկ ուրախության և կամ սաստիկ տրտմության։ Վերջինը այս գիշեր ավելի հավանական էր։ Շրջապատող թշվառությունները դառն տպավորություն էին գործել նրա զգայուն սրտի վրա։

Օլյան վերադարձավ սամովարը յուր հետ բերելով, բայց սամովարի հետ եկավ և տեր հայրը, երևի, նրա համար, որ լսել էր, թե հյուրերը «պարոններ» են և ոչ հասարակ մարդիկ։ Քավոր Պետրոսը քաղաքավարությամբ ընդունեց նրան։

Քահանան հայտնվեցավ բավական բարեկիրթ մարդ, որ պիսիները խիստ հազիվ են պատահում գյուղերում։ Լսելով, որ մենք «պարոններ» ենք, նա կարծել էր, թե գուցե պաշտոնական անձինք ենք, եկել էր հայտնելու մի սարսափելի դեպք։ Մի սովատանջ կին, քաղցածության կատաղության մեջ, սպանել էր յուր երեխային և ուտելու փորձ էր արել...

Քավոր Պետրոսը զարհուրեցավ։ Ինձ վրա խիստ սոսկալի տպավորություն գործեց այդ լուրը։

— Սի՞թե այս աստիճան սաստկացել է սովը,— հարցրեց քավոր Պետրոսը։

— Մարդիկ այժմ համարյա ոչինչ չեն գտնում ուտելու,— պատասխանեց քահանան,— կերակրվում են բանջարներով, խոտերով, արմատներով և դեռ չհասունացած ցորենի հասկերով, իսկ դրանք ավելի շուտով են սպանում նրանց, որովհետև հիվանդանում են ու մեռնում են։

— Շա՞տ է մեռնողների թիվը։

— Շատ է։ Գյուղի բնակիչների համարյա կեսը չէ մնացել։ Տիֆը ավելի մեծ կոտորած է անում, քան թե քաղցածությունը։ Մնացածներից շատերը հիվանդ են։

— Գյուղական հասարակությունը ի՞նչ կարող է անել։ Սպասում են կառավարությունից հաց և բժիշկ ստանալ։ Մեզ խոստացել են։

— Շուտո՞վ կստացվի։

— Աստված գիտե։ Դեռ պետք է քննեն, դեռ պետք է տեղեկանան, թե ո՛ր աստիճանի օգնության կարոտ է մեր գրությունը, որ հետո օգնեն։

— Դուք ձեր դրության մասին տեղեկություններ չե՞ք տվել։

— Ի՞նչպես չենք տվել. մի քանի անգամ խնդիրներ ենք մատուցել, բայց դեռ խնդիրները չեն քննվել։

— Հաց ամենևին չէ՞ մնացել։

— Ձեզ հայտնի է, որ այսօր տերունական տոն է. ես պետք է պատարագ մատուցանեի, ամբողջ գյուղում այնքան ալյուր չգտնվեցավ, որ նշխարք պատրաստեինք։

— Իսկ մերձակա քաղաքում հաց գտնվո՞ւմ է։

— Գտնվում է, բայց գյուղացիների մոտ միջոցներ չեն մնացել բերել տալու համար։

Տխրության մռայլը պատեց քավոր Պետրոսի դեմքը, մի քանի րոպե մնաց լուռ մտածության մեջ, հետո նա դարձավ դեպի քահանան այդ խոսքերով.

— Խնդրեմ, նեղություն հանձն առեք, տեր Հայր, ես կամենում եմ անձամբ տեսնել մի քանի խրճիթներ, առաջնորդեցեք ինձ։

— Մեծ ուրախությամբ,— ասաց քահանան և վեր կացավ։

Նրանք գնացին։ Մեր հյուրընկալը վազեց գյուղի տանուտերին իմաց տալու, թե աստիճանավոր է եկել։ Քավոր Պետրոսի այցելությունը տալիս էին պաշտոնական նշանակություն։

Ես և փոքրիկ Օլյան մնացինք մենակ. պտտվում էինք սամովարի շուրջը, հոգս էինք տանում թեյի պատրաստության համար։

— Այսօր ի՞նչ ես կերել, Օլյա։

— Այն օրից, որ մայրս մեռավ, ես հաց չեմ կերել։

— Շատ ժամանա՞կ է, որ մայրդ մեռավ։

— Երկու շաբաթ է։ Հետո Սաշան մեռավ, հետո Միտկան մեռավ... երեկ թաղեցինք փոքրիկ Վերային...

Խեղճ աղջիկը չկարողացավ վերջացնել. նա սկսեց հեկեկալ։

— Գիտե՞ս, Վերան իմ քույրն էր,— ասաց նա արտասվախառն ձայնով։

Ես տվեցի Օլյային մի կտոր երշիկ և խնդրեցի, որ ուտե։ Խեղճ աղջիկը առաջին անգամ տեսնում էր մի այսպիսի բան։

— Այդ ի՞նչ է,— հարցրեց նա։

— Եփած միս է։

Նա չկերավ, թեև մոր մեռնելուց հետո հաց չէր կերել, այլ վազեց մտավ խրճիթը, երևի, հիվանդներից մեկին ուտացնելու համար։

Քավոր Պետրոսի այցելությունները երկար չտևեցին, որովհետև նա մտել էր մի քանի խրճիթներ միայն, և ամեն տեղ տեսնելով միևնույն զարհուրելի տեսարանները, միևնույն դժբախտությունները, այլևս համբերել չէր կարողացել և ետ էր դարձել։ Նա սաստիկ զգայուն մարդ էր, թշվառության համար դեռ պահված էին նրա աչքերում արտասուքի մի քանի կաթիլներ...

Նրա հետ էր և՛ քահանան, և՛ գյուղի տանուտերը։

Իսկ գյուղացիների մի խումբ, լսելով այդ անակնկալ այցելության համբավը, հավաքվել էր մեր կեցած տան դռանը։

Հենց որ նստեցին, քավոր Պետրոսը դարձավ դեպի քահանան այդ խոսքերով.

— Ես ձեզ կտամ մի գումար, տեր Հայր, դրանով դուք հաց, բժիշկ և դեղորայք բերել կտաք քաղաքից։ Ես հավատացած եմ, որ ձեր ծուխի թշվառությունը ձեզ համար նույնքան զգալի է և

ցավակցական, որքան եղավ նա ինձ համար, երբ այս գիշեր իմ աչքով տեսա ողորմելի մարդկանց կրած տառապանքը։

— Այդ փողերը գանձարանի՞ց են,— հարցրեց գյուղի տանուտերը։

— Այդ փողերը ես եմ տալիս ձեզ,— պատասխանեց քավոր Պետրոսը։

Նրանք զարմացած մնացին։ Նրանց վրա տիրեց մի տեսակ երկյուղ, մի տեսակ կասկած, թե ինչ նպատակ կարող էր լինել դրանում, որ մի անծանոթ մարդ, մի քանի ժամ իրանց գյուղում հյուր լինելով, նվիրում էր այդքան փող։

— Աստուծո և իմ հոգու համար եմ տալիս,— ասաց քավոր Պետրոսը։

Աստուծո և հոգու անունը տալու ժամանակ նրանց կասկածը փարատվեցավ, և ամեն կողմից օրհնությունները ու շնորհակալությունները չափ չունեին։

Քահանան, որպես երևում էր, բարեխիղճ մարդ էր. նա թույլտվություն խնդրեց քավոր Պետրոսից, որ ներս կանչե դրսում կանգնած գյուղացիներին ևս, որ մի քանի վկաների ներկայությամբ ստանա գումարը, որպեսզի վերջը տարաձայնությունների առիթ չմնա։

— Ես,— ասաց նա,— այդ գումարը մի քանի անձինքների գործակցությամբ կծախսեմ, և նրա գործադրության մասին մանրամասն հաշիվ կներկայացնեմ ձեզ։ Հետո խնդրեց նա քավոր Պետրոսի հասցեն։

— Այդ հարկավոր չէ, տեր հայր, ես ձեզ բոլորովին հավատում եմ։

Քավոր Պետրոսը մինչև անգամ չհայտնեց նրանց յուր անունը, թեև շատ խնդրեցին, և հանգստացրեց քահանային Ավետարանի խոսքերով, թե բարեգործությունները պետք է ծածուկ կատարվեն և միայն աստված պիտի գիտենա։

Հետո դարձավ նա դեպի ինձ և ներկա գտնվողներին անհասկանալի լեզվով ասաց.

— Պատրաստվիր, որ շուտով ճանապարհ ընկնենք, այս գյուղը մնալու տեղ չէ։

Քավոր Պետրոսը յուր ձեռքով մխիթարեց այն գյուղացու գժբախտությունը, որի տանը հյուրասիրվեցանք մենք։ Քառորդ

ժամից հետո մեր սայլակը արդեն գտնվում էր ճանապարհի վրա։

Սպահանցի քահանային եկեղեցու շինության համար հանգանակած գումարից հետո, քավոր Պետրոսի այդ երկրորդ բարեգործական վարմունքը ինձ ավելի զարմացնում էր։ Զարմանում եմ, գլխավորապես այն պատճառով, որ եկեղեցու շինության գործում նրան թելադրում էր հավատը, կրոնի զգացմունքը և վերջապես ազգային նախանձախնդրությունը։ Իսկ այստեղ ի՞նչ կար, որ զարթնեցներ նրա կարեկցությունը։ Մի՞թե մի ամբողջ սովատանջ բազմության թշվառությունը կարո՞ղ էր ազդել նրա քարացած սրտի վրա։

Այդ խորհրդածությունները զբաղեցնում էին իմ միտքը, երբ մեր սայլակը դանդաղ կերպով առաջ էր գնում։ Ձիաները ամբողջ օրը շարշարված լինելով, չէինք կամենում ավելի հոգնեցնել նրանց։ Այդ միջոց էր տալիս ինձ քավոր Պետրոսից բացատրություններ խնդրելու։

— Բարեգործությունը լա՞վ բան է,— հարցրի նրանից։

— Ես չեմ հասկանում՝ ի՞նչը առիթ տվեց քեզ հանկարծ մի այսպիսի հարց առաջարկել ինձ։

— Ինձ առիթ տվեց ձեր այսօրվա վարմունքը։

— Լավ բան է։

— Ուրեմն մենք ինչո՞ւ ենք խաբում, կողոպտում, սպանում և ամեն տեսակ եղեռնագործություններից ետ չենք մնում։

— Մենք կողոպտում ենք ժլատ հարուստներին։ Իսկ աղքատներին պետք է օգնել։

Գիշերային լռության պահուն, անապատի մեջ, ճանապարհի վրա, առանձնացած մի խստասիրտ մարդու հետ, այս տեսակ վիճաբանությունը կարող էր վտանգավոր հետևանքի հասցընել։ Իմ տապարը, որ միշտ սայլակի նստարանի տակ էր պահված լինում, հանեցի և խրեցի գոտիս մեջ։ Լուսնյակի լուսով քավոր Պետրոսը նկատեց այդ, իսկ ես նրա դեմքի վրա նկատեցի մի արհամարհական ժպիտ։

— Դուք ասում եք, թե աղքատներին և թշվառներին պետք է օգնել։ Շատ գեղեցիկ միտք է,— շարունակեցի ես։— Իսկ ողորմելի թաթար Ասկերը աղքատ և թշվառ չէ՞ր, ինչո՞ւ հրամայեցիք ինձ սպանել նրան։

— Ես միջոցների մեջ խտրություն չեմ դնում։ Եթե Ասկերին սպանել չտայի, չէի կարող կողոպտել բուխարեցի հարուստ վաճառականին։ Իսկ բուխարեցուն կողոպտելով, ես այսօր մի ամբողջ գյուղ ազատեցի սովատանջ մահից։

Քավոր Պետրոսի խոսքերը որքան էլ ինձ տարապայման թվեին, այսուամենայնիվ, նրանք բխում էին հաստատ համոզմունքից, որոնց համեմատ ևս գործում էր նա։ Նա յուր գաղափարների մեջ հաջորդաբար էր վարվում։ Այնքան ժամանակ նրա մոտ ծառայելով, ես վկա էի եղել շատ անցքերի և միշտ նկատել էի, որ նա մի առանձին կատաղի ատելություն ուներ դեպի ժլատ հարուստները, որոնց ընդհակառակն, նա երբեք չէր վշտացրել աղքատին և միշտ թշվառների բարերարն էր հանդիսացել։ Բայց ես հիշեցի մի պայման, որի մասին մինչև այսօր առիթ չէի ունեցել խոսելու նրա հետ։ Ես հարցրի.

— Դուք, որ միշտ բարի եք եղել դեպի աղքատը, դեպի հարստահարյալը և դեպի թշվառը, ինչո՞ւ մինչև այսօր չկատարեցիք ձեր խոստմունքը մի անձի վերաբերմամբ, որ ձեր պատճառով թշվառացավ։

— Ի՞նչ անձ։

— Իմ վարպետը։ Չե՞ք հիշում, երբ առաջին անգամ մենք վճռեցինք թողնել մեր հայրենիքը և օտար աշխարհ գնալ, մենք ուխտեցինք փող վաստակել և այդ մարդու կրած բոլոր վնասների փոխարենը վճարել։ Մոռացե՞լ եք։

— Չեմ մոռացել։ Երբ կհասնենք իշխանը, դու ինձ հիշեցրու, ես ցույց կտամ քեզ մի նամակ, որից դու կտեղեկանաս, որ ես վաղուց կարգադրություն արել եմ այդ մասին։ Ես ուղարկել էի մի գումար մեր գյուղի քահանային, խնդրելով, որ հասցնե քո վարպետին, բայց պատասխան ստացա, թե այն օրից, որ նրան փախցրին բանտից, նրա մասին ոչինչ տեղեկություն չկա, թե ինքը և թե յուր ընտանիքը անհայտացել են։ Բայց ինձ զարմացնում է մի բան, Մուրադ, ի՞նչը առիթ տվեց քեզ այսպես կասկածավոր կերպով վերաբերվել դեպի իմ գործունեությունը։

Ես ոչինչ չպատասխանեցի։

Ը

ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀՐԵՇՏԱԿԸ

Անցել էր ավելի քան մի ամիս այն օրից, որ մենք թողեցինք հրեա սեղանավորի գտնված քաղաքը։

Շատ երկար կլիներ, եթե մանրամասնաբար նկարագրեի մեր ամբողջ ճանապարհորդությունը։ Իմ հիշատակարանի այս գլուխը ես կիսով չափ համառոտում եմ,— համառոտում եմ, որովհետև շտապում եմ ծանոթացնել ընթերցողին մի նոր դեպքի հետ, որը իմ սրտին շատ մոտ է...

Կարճ կասեմ, անցնելով զանազան գավառներից և փոքրիկ քաղաքներից, մենք արդեն գտնվում էինք կայսերության հարավային գավառում Սև ծովի եզերքի մոտ։ Բնությունը այստեղ փոխվեցավ, անապատներից ազատվեցանք, երկիրը ավելի լեռնային էր։

Ամառային գեղեցիկ առավոտներից մեկն էր։ Մեր ճանապարհը գնում էր նեղ ձորի միջով, որ պատած էր խիտ անտառներով։ Ճանապարհի մեկ կողքով զուգընթաց կերպով ձգվում էր խորին անդունդ, որի հատակում հազիվ նշմարվում էր լեռնային գետակը։ Իսկ ճանապարհի մյուս կողքին բարձրանում էին ապառաժներ, որ ծածկված էին ծառերով։

Ինձ հայտնի չէր, թե ո՞ւր էր տանում այդ ճանապարհը կամ ի՞նչ էինք որոնում այդ վայրենի, համարյա անմարդաբնակ լեռների մեջ։ Ես միայն հիացած էի բնության գեղեցկություններով։ Երբեմն ես լսում էի առվակների խոխոջմունքը, որոնք թաքուն վազում էին թփերի միջով. երբեմն տեսնում էի նրանց ջրվեժը, որ նոր ծագող արեգակի առաջին ճառագայթներից ծիածանի նման կամար էին կապում կանաչազարդ լեռան վրա։ Տեղ-տեղ հանդիպում էին հին ամրոցների ավերակներ, որ մնացել էին թաթարների տիրապետության ժամանակներից։

Կրկնում եմ, որ ես ամենևին տեղեկություն չունեի, թե ինչ նպատակով էինք ճանապարհորդում։ Միայն քավոր Պետրոսը մի բան որոնում էր այն լեռների մեջ. նա շտապում էր, որքան կարելի է, շուտով հասնել ծովի ափերին։

Մինչև կեսօր մենք գնում էինք միևնույն նեղ ճանապարհով, որ երկու կողմից սեղմված էր ծառերով։ Բայց դեռ ոչ մի բնա-

կությունն չէինք հանդիպել և ոչ մի մարդու երես չէինք տեսել։ Շարունակել ուղին անհնարին էր, որովհետև ձիաները սաստիկ հոգնած էին։ Պետք էր փոքր-ինչ հանգստանալ։ Մենք կանգնեցրինք սայլակը մի տեղում, ուր ձորի միջով անցնող գետակը ավելի բարձրից էր հոսում և ջուրը բոլորովին մատչելի էր։ Իմ առաջին հոգսը եղավ ձիաները ջրել և նրանց կեր տալ։ Հետո սկսեցինք հագեցնել և մեր քաղցը։

Ճաշելուց հետո քավոր Պետրոսը նստած էր մի ծառի հովանու ներքո, լուռ մտախոհության մեջ էր գտնվում։ Սատանան գիտե, թե ի՞նչ էր մտածում նա։ Նրա այս տեսակ լռությունը միշտ նախագուշակում էր մոտալուտ փոթորիկ։ Ես ձանձրացա և մտա անտառը փոքր-ինչ ծառերի մեջ ման գալու համար։

— Հեռու չգնաս,— զգուշացրեց նա։

— Ինչո՞ւ։

— Այս տեղերը խիստ երկյուղալի տեղեր են։

— Ես ինձ հետ կվեր առնեմ տապարս։

Այս զենքը իմ մարմնի անբաժանելի անդամներից մեկն էր։

Զարմանալի բան է, լինում են այնպիսի րոպեներ, երբ հասակ առած մարդն անգամ երեխա է դառնում։ Իմ մանկության զվարճությունները միտս եկան. սկսեցի քաղել և ուտել վայրենի պտուղներ։ Նրանք անզգալի կերպով հրապուրում էին ինձ ավելի հեռու և հեռու դեպի անտառի խորքը։ Ես բոլորովին մոռացա քավոր Պետրոսի պատվերը։

Հանկարծ իմ ականջին զարկեց մի ձայն. նա ավելի նման էր խուլ հառաչանքի։ Ես մոտեցա։ Ձայնը կրկնվեցավ։ Պարզ որոշեցի, դա կանացի ձայն էր, որ լսելի էր լինում ոչ այնքան հեռվից։ Ես թաքնվեցա թուփերի մեջ և այնտեղից սկսեցի դիտել։ Ի՞նչ եմ տեսնում.— մեկ մանկահասակ աղջիկ, չոքած գետնի վրա, գրկել էր մի տղամարդու ոտքերը, աղաչում էր, պաղատում էր խնայել յուր կյանքին։ Տղամարդը կանգնած, բռնել էր նրա մազերից, և վայրենի կատաղությամբ պատրաստվում էր սպանել։ Հենց որ նա սուրը բարձրացրեց, ես կայծակի արագությամբ վրա հասա։ Իմ հասնելը և տապարիս զարկը կատարվեցավ միևնույն րոպեում։ Նա ընկավ գետնի վրա։

Աղջիկը ազատված էր։

Զարագործը լողում էր արյան մեջ։ Նա յուր գազանային դեմքը դարձրեց դեպի ինձ, արձակեց մի քանի հայհոյանքներ և լռեց...

Ես սարսափելի խռովության մեջ ընկա. լսածս հայոց լեզվի բառեր էին։ Ուրեմն իմ ձեռքը շաղախվեցավ մի հայի արյան մեջ, որը մահվան տագնապալի րոպեում, մոռանալով իրան, յուր հայհոյանքները արտասանեց մայրենի լեզվով։

Այստեղ անպատճառ պետք է մի գաղտնիք լինի, մտածեցի ես և դարձա դեպի աղջիկը, որ զարհուրած նայում էր իմ վրա։

— Ո՞վ ես դու։

— Իմ հայրն ու մայրը մեռան խոլերայից։

— Այդ մարդը ինչո՞ւ էր սպանում քեզ։

— Գյուղացիք ինձ հաց էին տալիս. ես նրանց համար գուշակում էի...

— Ես այդ չեմ հարցնում։ Այդ մարդը ինչո՞ւ էր սպանում քեզ։

— Նա լավ մարդ չէ... նա շատ վատ մարդ է...

— Ինչպե՞ս ընկար նրա ճանկը։

— Ինձ բռնեց, երբ մի օր դառնում էր գյուղից։

— Հետո՞։

— Տարավ անտառը... այնտեղ ընկերներ ուներ, բոլորը չար մարդիկ էին... բոլորը ավազակներ էին։

— Ի՞նչ արեցին քեզ։

— Չարչարեցին... շատ չարչարեցին...

— Էլ ինչո՞ւ էին սպանում քեզ։

— Ես ասեցի, եթե ինձ բաց չթողնեք, կմատնեմ ձեզ։

— Ի՞նչ բանում պետք է մատնեիր։

— Նրանք թուղթ փողեր էին շինում։

— Դու մատնեցի՞ր։

— Չմատնեցի։ Ինձ տվին այդ մարդու ձեռքը, որ սպանե ինձ։

Գաղտնիքը մասամբ պարզվեցավ։

— Այն մարդիկը հեռո՞ւ են կենում։

— Այդ անտառի մեջն են։

— Դու ճանաչո՞ւմ ես նրանց բնակարանը։

— Ճանաչում եմ։

— Կարո՞ղ ես ինձ ցույց տալ։

— Ա՜խ, ես չեմ գնա այնտեղ, ես վախենում եմ...

— Դու գիտե՞ս ինչ ազգից են նրանք։

— Ես շատ լեզուներով խոսում եմ, բայց նրանց լեզուն չէի հասկանում։

— Կարո՞ղ ես ինձ տանել նրանց մոտ։

— Մի՛ գնացեք նրանց մոտ. նրանք լավ մարդիկ չեն։

Վերջին խոսքերը մի այնպիսի զգալի կերպով արտասանեց խեղճ աղջիկը, որ ես համոզվեցա իսկույն չգնալ ավազակների բնակարանը և վճռեցի նախ այդ անցքը հայտնել քավոր Պետրոսին և ապա սպասել նրա կարգադրությանը։

Աղջիկը կլիներ հաղիվ տասն և ութ տարեկան։ Նա ցիգանուհի էր, բայց ոչ Ռուսաստանի ցիգաններից, այլ հեռավոր երկրներից եկած, բայց ի՞նչ երկրներից,— նա բացատրել չկարողացավ։ Նրան կոչում էին Նենե։ Նրա հայրը ածում էր արֆայի վրա, մայրը երգում էր, իսկ ինքը պար էր գալիս։ Այդ պարապմունքով թափառում էին և դրանով ապրում էին։ Ծնողները մինը մյուսից հետո, խոլերայից բռնվելով, մի շաբաթվա մեջ մեռան։ Նենեն մնաց որբ և անտեր։ Նա շարունակեց այնպես թափառել գյուղից գյուղ, քաղաքից քաղաք, մարդկանց համար զուշակություններ էր անում, հմայում էր և փող էր ստանում։

Նենեն յուր ցեղին հատուկ լղարիկ կազմվածք ուներ, բայց սաստիկ դյուրաթեք, սաստիկ առաձգական էր նա։ Առհասարակ մի գեղեցիկ նրբություն արտափայլում էր նրա մարմնի յուրաքանչյուր գծերից։ Աչքերը սև և կրակոտ էին. գույնը նույնպես թուխ էր, որպես մազերը։ Բայց որքա՜ն կյանք կար նրա հայացքի մեջ, ո՛րքան պարզություն կար նրա խոսքերի մեջ...

Վերադառնալով քավոր Պետրոսի մոտ, ես չգիտեի ինչ տեսակ հաշիվ և համար տամ իմ անտառում կատարած գործողության մասին։ Նա հեռվից տեսնելով ինձ Նենեի հետ միասին հեգնեց, ասելով.

— Որսորդությունդ հաջողակ է երևում. մենակ գնացիր, զույգով վերադարձար։

Նա նստած էր միևնույն ծառի հովանու ներքո, ուր առաջ թողել էի նրան։ Ես ոչինչ չպատասխանեցի, տարա Նենեին սայլակի մոտ։ Խեղճ աղջիկը այնպես շուտով մտերմացավ ինձ հետ, որ իսկույն հարցրեց.

— Ասեղ ունե՞ս։

— Ի՞նչ ես անում։

— Դրանք պետք է կարկտնեմ։

Նա ցույց տվեց յուր պատառոտված հագուստը։

Ես Նենեին թողեցի սայլակի մոտ և շտապեցի դեպի՞ քավոր Պետրոսը։

— Այդ ի՞նչ բան է,— հարցրեց նա այժմ խիստ սառն կերպով։

Ես առանց մի բան թաքցնելու պատմեցի նրան անտառում պատահած անցքը, պատմեցի բոլորը, ինչ որ լսել էի Նենեից։ Նա հետաքրքրությամբ լսում էր։ Ես կարծում էի, որ նա կհանդիմաներ ինձ իմ գործած աննպատակ սպանության համար, որի մեջ շահական կամ օգտավետ ոչինչ չկար։ Բայց նա գտավ դրա մեջ մի շահ։

— Պետք է օգուտ քաղել այդ դեպքից, —ասաց նա, երբ ես վերջացրի աղետալի պատմությունը։

— Որպե՞ս։

— Այդ մարդիկը մեզ հարկավոր են...

— Ինչո՞վ։

— Աղջիկը չասա՞ց քեզ, թե նրանք շինում են կեղծ թղթադրամներ։

— Ասաց։

— Այդ բավական է։

Նա էլ չխոսեց, հրամայեց իսկույն լծել ձիաները։ Երբ սայլակը պատրաստ էր, ես հարցրի.

— Ի՞նչ պետք է անել այդ աղջկա հետ։

— Վեր ա՜ռ մեզ հետ։ Մենք պետք է առանձնանանք այդ անտառի մեջ մի ապահով տեղում, մինչև կստուգենք, թե ո՛վքեր են այդ մարդիկը։ Քշի՛ր դեպի ձախ։

Արևը արդեն խոնարհվում էր դեպի յուր մուտքը, երբ մենք մտանք մի ձոր, որ գոգավորվելով, կազմում էր մի նեղ ծոց անտառապատ լեռների մեջ։ Այստեղ իջեցանեցինք։

Նենեն լուռ էր և տխուր։ Կարծես թե խեղճ աղջիկը մտածում էր, թե ավազակի ձեռքից ազատվելուց հետո, կրկին ո՛րպիսի վիճակի ենթարկեց նրան դառն ճակատագիրը, կրկին ո՛րպիսի մարդկանց ձեռքը ձգեց։ Բայց նա դրա վրա չէր մտածում. նա

քաղցած էր. նա մի քանի օր ոչինչ չէր կերել և սովից նվաղել էր։ Ես խսկույն տվեցի նրան մի բան ուտելու. նա կազդուրվեցավ և ժպիտը երեսին ասաց.

— Դուք լավ մարդիկ եք, ես ձեզ մոտ կմնամ, դուք ինձ չեք սպանի։

Երբ մութը բոլորովին պատեց, քավոր Պետրոսը ասաց ինձ.

— Մուրադ, այդ աղջիկը ճանաչում է ավազակների բնակարանը, դրան վեր ա՛ռ քեզ հետ, գնացեք, լուր բերեցեք այն մարդերի մասին։

Ես խսկույն համաձայնվեցա։ Ինձ հետաքրքրում էր ավելի այն, որ այնօր իմ սպանած մարդու բերանից լսեցի հայերեն խոսքեր։ Ի՞նչ գործ ուներ հայը այդ վայրենի, անմարդաբնակ լեռների մեջ։ Ես վեր առի բացի տապարից և մի զույգ ատրճանակներ։ Ամեն ինչ պատրաստ էր, միայն դժվար էր համոզել Նենեին, որ նա առաջնորդեր ինձ մինչև ավազակների բնակարանը։

— Ա՜խ, մի տարեք ինձ այնտեղ... նրանք չար մարդիկ են... ես վախենում եմ...— կրկնում էր նա ողորմելի ձայնով։

— Ինչո՞ւ ես վախենում, ես քեզ հետ եմ գալիս։

— Դու կսպանե՞ս նրանց, այդպես չէ՞։

— Կսպանեմ, եթե քեզ դիպչելու լինեն։

— Հա՜, սպանի՛ր նրանց... նրանք աստված չունեն...

Նենեն այսօր յուր աչքով տեսել էր իմ ձեռքի ուժը։ Նա շուտով համոզվեցավ, որ ես կկատարեմ իմ խոստմունքը։ Երևում էր, որ անբախտ աղջկա մանուկ կուրծքի մեջ բորբոքվում էր խիստ դառն վրեժխնդրություն դեպի այդ չարագործները և այդ պատճառով, երբ վերջին խոստումը լսեց, խսկույն հոժարվեցավ ինձ հետ գալու։

Լուսնյակը լուսավորում էր հազիվ նշմարվող շավիղը, որ տանում էր դեպի ավազակների բնակարանը։ Այդ լեռնային շավիղը տեղ-տեղ կորչում էր խտությամբ աճած խոտաբույսերի մեջ և դարձյալ հայտնվում էր։ Նենեն գնում էր իմ մոտով և համարյա կպած էր իմ կողքին։ Նա իմ աջը բռնել էր յուր փոքրիկ ձեռքի մեջ և մի այնպիսի հոգատարությամբ պահում էր, կարծես թե, վախենում էր, չիցե թե թողնեմ նրան մենակ, գիշերային մթության մեջ, ավազակների բնակարանի մերձակայքում, իսկ ես փախչեմ։

Հանկարծ նա կանգ առեց, և ընդհատելով մեր մեջ տիրող լռությունը ասաց.

— Դու լավ մարդ ես։

— Ի՞նչ գիտես։

— Եթե դու չլիներիր, այն ավազակը ինձ կսպաներ։

— Այդ աստված ազատեց քեզ։

— Նա քեզ ուղարկեց, որ դու ինձ ազատես։

Այդ խոսքերի միջոցին նա իմ ձեռքը տարավ և սեղմեց յուր բորբոքված շրթունքի վրա։ Դա նրա լուռ շնորհակալության նշանն էր։ Բայց ո՞վ կարող էր նախագուշակել, որ այդ անմեղ աղջիկը, որը յուր սրտի բոլոր ջերմությամբ երախտամատույց էր լինում ինձ, որպես յուր կյանքի ազատչի, մի օր կլիներ իմ փրկության հրեշտակը...

— Ա՜խ, ո՜րքան հիմար եմ ես,— խոսեց նա հանկարծ մտաբերելով,— ես մինչև հիմա չեմ հարցրել, թե ինչպես է քո անունը։

— Մուրադ։

— Մուրա՜դ, ի՞նչ գեղեցիկ անուն է, ինչպե՜ս հեշտ արտասանվում է։

Մահվան երկյուղը այնքան տիրել էր խեղճ աղջկա սրտին, որ նա ամեն անգամ, երբ մտաբերում էր յուր հետ կատարված անցքը, հարցնում էր.

— Մուրադ, դու ինձ չես սպանի, այդպես չէ՞։

— Ես քեզ իմ հոգու պես կպահեմ։

Նա նայեց իմ երեսին և նրա աչքերը վառվեցան ուրախության բոցով։ Նա գոհ էր. նա ապահով էր։ Անտեր, անխնամ, թափառաշրջիկ, բախտի կամքին թողած որբիկը այժմ մի պաշտպան ուներ։

Անտառի խորքից նշմարվեցավ ճրագի աղոտ լույս։

— Տե՛ս, այնտեղ են...— ցույց տվեց Նենեն։

Շավիղը, որ տանում էր դեպի այդ կողմը, բոլորովին անհայտացավ մացառների մեջ։ Մենք դժվարությամբ կարողանում էինք առաջ գնալ։ Նենեի առանց դրան ևս քրքրված հագուստը, բռնելով փշոտ թփերից, պատառոտվում էր։

— Դու այստեղ կսպասես մինչև ես կվերադառնամ։

— Ո՞ւր ես գնում,— հարցրեց Նենեն դողդոջուն ձայնով։

— Այնտեղ, որտեղից երևում է ճրագի լույսը։

— Ա՜խ, մի՛ գնացեք այնտեղ... մի՛ մտեք նրանց մոտ...։

Նրան միամտացրի, ասելով, թե պետք է հեռվից միայն նայեմ նրանց բնակարանին, և այնքան գաղտնի կերպով, որ ինձ տեսնել չեն կարող։ Նա հանգստացավ։ Երևում էր, որ Նենեն այնքան երկչոտ չէր, որքան ես կարծում էի։ Նա մտածում էր իմ մասին, չիցե թե վտանգի հանդիպեի։ Խե՜ղճ աղջիկ, այն ի՞նչ զգացմունք էր, որ զարթեցրեց նրա մեջ մի այդպիսի կարեկցություն դեպի ինձ։

Նա մնաց թուփերի մեջ, ասելով, թե հեռվից կդիտե ինձ։ Ես ուղղեցի իմ ընթացքը դեպի այն կողմը, ուսկից նշմարվում էր լույսը։ Քառորդ ժամից հետո երևաց մի խրճիթ, որ թաքնված էր ծառերի ու պատատուկների մեջ։ Ամենայն զգուշությամբ, առանց մի թեթև շշուկ անգամ հանելու, մոտեցա։ Նշմարվող լույսը դուրս էր ցոլանում միակ պատուհանից, որ շատ բարձր չէր գետնի մակերևույթից։ Այդ ծակից կարելի էր դյուրությամբ հետազոտել խրճիթի ներսը։ Ի՞նչ եմ տեսնում։— Մի քանի ուրախ դեմքեր բոլորել էին ընթրիքի սեղանի շուրջը, ուտում էին ու խմում էին։ Այդ հարբած, մոլեգնած հասարակության աղմուկն ու աղաղակը չէր թողնում մի բառ անգամ որոշել նրանց խոսակցությունից։ Մի քանի րոպե ես ականջ էի դնում, բայց իմ ականջներին չէի հավատում։ Տեր աստված, այդ ի՞նչ բան է։ Իմ ականջին դիպան Խաչատուր, Համբարձում, Մնացական անունները։ Դրանք հայի անուններ էին։ Ես լսում էի հայոց ձայներ, հայոց խոսքեր, իսկ և իսկ այն բարբառով, որպես խոսում էին իմ հայրենիքում...

Ինձ համար դրանց ինչ տեսակ մարդիկ լինելը արդեն պարզված էր։ Շուտով թողեցի խրճիթը և հեռացա, որովհետև չէի ուզում Նենեին երկար սպասել տալ։ Նրա ուրախությանը չափ չկար, երբ ողջությամբ վերադարձա նրա մոտ։ Նա այժմ միամտաբար սկսեց գովել իմ քաջությունը։

— Դու զոչաղ տղա ես, Մուրադ,— ասաց,— գնացիր նրանց բնակարանի մոտ ու քեզ ոչինչ չկարողացան անել։

Մենք շտապեցինք քավոր Պետրոսի մոտ։ Նա անհամբերությամբ սպասում էր մեզ։ Ես պատմեցի բոլորը, ինչ որ տեսա, ինչ որ լսեցի խրճիթում։ Նրա խոժոռ դեմքի վրա երևացին մի տեսակ ցնցումներ, որ արտահայտություն էին նրա սրտի բերկրությանը։

— Դա խաչագողների մի նշանավոր որջ է,— ասաց նա մի առանձին բավականությամբ։— Ես այդ մարդիկներին որոնում էի...

Թ

ԽԻՂՃՍ ԶԱՐԹՆՈՒՄ Է

Մյուս օրը առավոտյան քավոր Պետրոսը ասաց ինձ հետևյալ խոսքերը.

— Մուրադ, ես տեսնում եմ, որ աստված մեզ հետ է. մեր գործը օրըստօրե հաջողություն է խոստանում։ Ես վաղուց որոնում էի այդ մարդիկներին, վերջապես բախտը մեզ հանդիպեցրեց նրանց։ Նրանք խիստ համարձակ և ընդունակ մարդիկ են։ Նրանց ձեռքով կարելի է միլիոններ դիզել։ Գնանք և միանանք նրանց հետ, մենք սիրով կընդունվենք նրանց ընկերության մեջ։

Երևում էր, խոսակցության առարկան խիստ մոտ էր քավոր Պետրոսի սրտին, այդ պատճառով նա այնպես երկար ձգեց յուր ճառախոսությունը։ Եվ ես, համոզված լինելով, որ նա ամեն բանի մեջ իմ բարին է ցանկանում, ընդունեցի նրա առաջարկությունը։

— Բայց մեկ դժվարություն կա,— ասաց նա։

— Ի՞նչ դժվարություն։

— Այդ աղջիկը...

Նա ցույց տվեց Նենեի վրա, որը դեռ քնած էր։

— Նա ինչո՞վ կարող է արգելք լինել մեզ։

— Ամեն բանով։

— Ես չեմ հասկանում։

— Ուրեմն լսի՛ր։ Այդ աղջկա կյանքը ազատելու համար դու սպանեցիր այն մարդուն, որը հիշյալ ընկերության անդամ էր։ Այժմ մենք ցանկանում ենք նրանց հետ միանալ, մտածի՛ր, նրանք կարո՞ղ են վստահություն ունենալ դեպի մեր հավատարմությունը։

Ես ոչինչ չգտա պատասխանելու։ Նա շարունակեց.

— Մենք ինչպե՞ս կարող ենք այսօր միանալ նրանց հետ, երբ սպանել ենք նրանց ընկերներից մեկին։

— Մենք կարող ենք այդ սպանությունը թաքցնել։

— Այո, կարող ենք այդ սպանությունը թաքցնել։ Բայց քանի որ աղջիկը մեզ հետ կլինի, թաքցնել չենք կարող։ Բացի դրանից, այդ աղջկա մասին նրանք կասկած ունեին, թե կմատնե իրանց և այդ պատճառով վճռեցին նրա մահը։ Աղջիկը դեռ կենդանի է, ուրեմն նրանց կասկածը կմնա դարձյալ կասկած։ Իսկ երբ մենք կմիանանք նրանց ընկերության հետ, և այդ աղջկան մեզ հետ կտեսնեն, արդյոք մեր անձը չե՞նք ենթարկի նույն կասկածանքին, որ նրանք ունեին այդ աղջկա մասին։

— Մենք կարող ենք աղջկան մեզ հետ չունենալ, այլ բաց թողնել, ուր որ ուզում է, թող գնա։

Քավոր Պետրոսը, որ ոչ մեկ խոսքի առջև կանգ չէր առնի, լռեց, մտատանջության մեջ ընկավ։ Ես չէի հասկանում, թե ինչո՞ւ նա այսպես սատանայաբար ոլորում էր յուր բացատրությունները, առանց յուր վերջնական միտքը հայտնելու։ Ի՞նչ երկյուղ ուներ ինձանից։ Վերջապես փոքր առ փոքր հայտնեց նա յուր միտքը։

— Դու ասում ես, որ մենք կարող ենք աղջկան բաց թողնել, ուր որ ուզում է, թող գնա, բայց այդ անկարելի է։ Ծիգանուհին երբեք չի մոռանա վիրավորանքը և իրան հասցրած անպատվությունը։ Այդ մարդիկը, որպես քեզ հայտնի է, անպատվել են այդ աղջկան, և մինչև անգամ պատրաստվել են սպանել նրան։ Այդ բոլորը չի մոռանալ նա, և պետք է վրեժխնդիր լինի, պետք է մատնե նրանց։ Իսկ մատնելով նրանց, կմատնվենք և մենք, որովհետև նրանց խումբի մեջ կլինենք, որովհետև կամենում ենք ընկերանալ նրանց հետ։

— Ուրեմն ի՞նչ պետք է արած։

— Պետք է անել այն, ինչ որ նրանք էին կամենում անել։

— Սպանե՞լ...

— Այո՛, սպանել։

Առաջին անգամն էր, որ քավոր Պետրոսի խոսքը ոչ միայն վատ տպավորություն գործեց իմ վրա, այլ կատաղության չափ գրգռեց իմ բարկությունը։ Ես գոչեցի.

— Սպանել նրա՞ն, որի կյանքը ազատել ես, դա խղճի և ազնվության հակառակ բան է։

Մի դառն, արհամարհական ժպիտ երևաց նրա գերեզմանի պես սառն դեմքի վրա։

— Խղճմտանք... ազնվությո՞ւն...— բացականչեց նա,— ի՞նչ գեղեցիկ խոսքեր են, բայց նույնքան դատարկ, որքան ինքը՝ հիմարությունը...

— Ինչո՞ւ։

Այդ հարցին պատասխանելու ժամանակ նա յուր ձայնը մեղմացրեց.

— Դու դեռ տղա ես, Մուրադ, և աշխարհը չես ճանաչում։ Մարդ չէ կարող խղճմտանք և ազնվություն ունենալ այնպիսի ժամանակներում, երբ ամբողջ մթնոլորտը, որի մեջ ապրում է նա, վարակված է անբարոյականությամբ։ Եթե նա այնքան հիմար կլինի, որ կցանկանա ազնիվ լինել, անտարակույս, ինքը իրան դժբախտության կդատապարտե։ Այսպիսի հանգամանքներում, մարդ պետք է խղճմտանք և ազնվություն ունենա դեպի յուր անձը միայն և դեպի նրա բարօրությունը։ Իսկ երբ մի ուրիշը արգելք է լինում յուր բարօրությանը, պետք է ոչնչացնել նրան, որ ինքը կարողանա ապրել, և լա՛վ ապրել։

Ես պատասխանեցի նրան կրոնական փաստերով.

— Դա աստծուն ընդդեմ է, դա մեղք է, դա քրիստոնյայի գործ չէ։

— Ինչպես կամենում ես համարիր, բայց դժբախտաբար այդպես է։ Ես ճանաչում եմ միայն կյանքը և նրա պայմանները։ Եթե մի ծառ արմատախիլ չանես, նրա տեղը ուրիշը տնկել չես կարող։ Բոլոր աշխարհը այդ բնական օրենքին է հետևում, մինը մյուսին ոչնչացնում է, սպառում է, կլանում է, որ յուր գոյությունը պահպանե։ Դա կյանքի կռիվն է, և երբեք չի դադարի, քանի որ տևում է կյանքը։

Ես չհակառակեցի քավոր Պետրոսի այդ օտարոտի վարդապետություններին, որոնք ինձ բոլորովին անհասկանալի էին. ես միայն ցավում էի Նենեի վրա, այդ պատճառով հարցրի.

— Ինչո՞վ է մեղավոր այդ խեղճ աղջիկը, որ զոհ գնա մեր զանազան սատանայական մեքենայություններին։

—Ոչնչով մեղավոր չէ,— պատասխանեց նա։— Բայց նա պետք է զոհվի, որ մենք ապահով լինենք։

Համոզված լինելով, որ երբեք չէ կարելի փոխել նրա երկաթե կամքը, ես ստիպվեցա կեղծել, ստիպվեցա խաբել նրան։ Իմ ընդդիմադրությունը կարող էր ավելի վատ հետևանքի հասցնել։ Նա պատրաստ էր թե ինձ և թե Նենեին սպա-

նել, որ փարատվի յուր կասկածանքը, որ հաստատ կերպով կարողանա սկսել այն գործը, որից միլիոններ էր սպասում։

Ես համաձայնություն տվի։

— Ուրեմն տար աղջկան և հենց այս առավոտ մի տեղում ամփոփի՛ր...

Արևը դեռ նոր էր արձակել իր առաջին ճառագայթները, թռչունները ուրախ-ուրախ ճկճկում էին. ամեն տեղ զարթնում էր կյանքը յուր նոր, սքանչելի զվարճությամբ։ Իսկ ինձ հրամայում էին կարճել մի անմեղ արարածի կյանքը...

Ես մոտեցա Նենեին։ Նա դեռ քնած էր սայլակի վրա։ Ինչպե՞ս քաղցր և հանդարտ քնել էր նա։ Ինձ խիստ դառն էր խոովել դեռահաս կույսի հանգստությունը։ Ո՞վ գիտե, որպիսի՛ երազներ հրապուրում էին նրան։ Նա ժպտում էր, նրա մարջանի պես կարմիր շրթունքները շարժվում էին։ Գուցե նա այդ րոպեում համբուրում էր մեկին, որին սիրում էր։ Երբեմն արձակում էր ինձ անհասկանալի բառեր։ Մեկի հետ խոսում էր նա։ Ո՞վ գիտե, գուցե խոսում էր հենց յուր ծնողների հետ, որոնց կորցրել էր։ Նա յուր թևիկները տարածեց, երևի գրկում էր նրանց, և ահա նրա դեմքը պայծառացավ ուրախության լուսով։

Երկար զմայլած նայում էի նրա վրա։ Կիսամերկ կուրծքը խիստ մեղմ կերպով բարձրանում և իջնում էր։ Շնչառությունը խաղաղ էր։ Հանկարծ նրան տիրեց մի տեսակ խռովություն։ Երեսի վրա երևացին զայրացած ցնցումներ։ «Հեռո՛ւ, անիծյալ...», գոչեց նա և վեր թռավ տեղից։

— Ա՜խ, դարձյալ այն ավազակը...— բացականչեց նա ցավալի ձայնով, սկսեց երկչոտ աչքերով նայել յուր շուրջը։

Երբ տեսավ ինձ յուր մոտ կանգնած, հանգստացավ։

— Ի՞նչ եղավ այն ավազակը,— հարցրեց ինձանից։

— Ո՞ր ավազակը։

— Ա՛յն, որ սպանում էր ինձ։

— Դու երազի մեջ տեսել ես նրան, Նենե։

Խեղճ աղջկա երևակայությունից չէր հեռանում չարագործի պատկերը, որը մի օր առաջ փորձում էր սպանել նրան։ Բայց նա չգիտեր, որ այժմ կանգնած էր յուր մոտ մի ուրիշ չարագործ, որին պատվիրել էին նույն դահճի դերը կատարել։

— Դու այստեղ ես, ես էլ չեմ վախենա...— ասում էր նա, յուր մտերմությամբ լի աչքերը դարձնելով դեպի ինձ։

Որքա՜ն կրակ կար այդ աչքերի մեջ, որքա՜ն խոր թափանցում էր նրանց փայլը իմ սրտի մեջ։

Մտածելով, որ մեր համեցողությունը կարող էր շարժել քավոր Պետրոսի կասկածը, ես հրավիրեցի Նենեին ինձ հետ գնալ անտառը առավոտյան զբոսանքի համար։ Նա հրաժարվեցավ, ասելով.

— Չէ, անտառ չգնանք։

Նա վախենում էր հանդիպել ավազակներին։ Ես հանգստացրի նրան, ասելով.

— Շատ հեռու չենք գնա և ոչ քեզ այն ավազակների կողմը կտանեմ։

Նա համաձայնվեցավ։

Գեղեցի՜կ էր այն առավոտը։ Որքա՜ն ախորժ ազդում էր հովասուն օդի թարմությունը, խնկարկված բյուրավոր ծաղիկների անուշահոտությամբ։ Ինչպե՞ս ուրախ երգում էին անհոգ թռչունները և որքա՜ն ծիծաղկոտ փայլում էին արեգակի առաջին ճառագայթները ցողազարդ տերևների վրա։ Ամեն ինչ սքանչելի էր, ամեն ինչ խորին, անսահման բերկրությամբ զվարճանում էր բնության սրբազան տաճարի մեջ։ Տխուր էր միայն իմ սիրտը...

Նենեն շուտով նկատեց այդ, և երբ փոքր հեռացանք մեր իջևանից, հարցրեց նա.

— Դու սիրո՞ւմ ես ծաղիկներ։

— Սիրում եմ։

— Ես քեզ համար մի լավ փունջ կպատրաստեմ. ես իմանում եմ գեղեցիկ փունջեր շինել։ Իմ հայրը մի ժամանակ մի պարտիզպանից գնում էր մեծ քանակությամբ զանազան տեսակ ծաղիկներ, ես փունջեր էի պատրաստում, ածում էի զամբյուղի մեջ, և փողոցներում ման ածելով, վաճառում էի։

Ես ժամանակ չունեի պատասխանելու Նենեի այս տեսակ քնքշություններին. ինձ զբաղեցնում էր այն միտքը, թե ի՞նչ պետք է անել խեղճ աղջկա հետ։

— Նենե,— հարցրի նրանից,— այդ անտառում բնակիչներ կա՞ն։

— Այն ավազակները...

— Բացի նրանցից։

— Բավական հեռավորության վրա գտնվում է մի փոքրիկ հյուղ։

— Իսկ մոտի՞կ տեղերում։

— Մի տնակ կա, ուղիղ ծովի ափի մոտ։

— Ովքե՞ր են բնակվում տնակի մեջ։

— Երկու հոգի միայն. մի ալևոր մարդ և մի պառավ կին։

— Ինչպիսի՞ մարդիկ են։

— Բարի ձկնորսներ են։

— Քեզ ճանաչո՞ւմ են։

— Ճանաչում են։ Ամեն անգամ, երբ պատահում էր ինձ մտնել նրանց տնակը, կերակրում էին ինձ, հագուստ էին տալիս։

— Կարող ես ինձ տանել այնտեղ։

— Կարող եմ։

Մինչև ձկնորսի տնակը հասնելը, ես ընկղմված էի խառն մտածությունների մեջ։ Նենեին սպանելու մտքից շատ հեռու էի։ Այժմ նրա կյանքը նույնքան թանկագին էր ինձ համար, որքան իմը։ Բայց ինձ համար անհասկանալի էր մի բան, թե այդ ի՞նչ փոփոխություն էր, որ կատարվեցավ իմ մեջ։ Ինչո՞ւ իմ ձեռքերը այս անգամ դողում էին արյունոտ գործում։ Ո՞վ մեղմացրեց իմ բնավորության վայրենությունը։ Մի՞թե կնոջ շունչը՝ կախարդական ազդեցությունը զարթեցրեց իմ մեջ քնած խիղճը։— Այդ բոլորը դեռ անորոշ մթության մեջ էր ինձ համար։ Միայն ես զգում էի մի բան՝ զգում էի, որ իմ սիրտը կապված էր այդ անբախտ աղջկա հետ։ Արդյոք սիրո՞ւմ էի նրան։ Ո՛չ։ Իմ զգացմունքը ավելի ցավակցական էր, ավելի բխում էր կարեկցությունից դեպի նրա թշվառ վիճակը։ Նենեն որբ էր, Նենեն անտեր էր, Նենեին ես ազատեցի մահից, և մի ներքին ձայն ասում էր ինձ, որ պետք է շարունակեմ նրա պաշտպանը լինել։

Մյուս կողմից, ես այժմ զգում էի մի տեսակ ատելություն դեպի քավոր Պետրոսը։ Կարծես Նենեն խլեց իմ աչքերից այն դյութական քողը, որ մինչև այսօր թույլ չէր տալիս ինձ նկատել այդ հրեշավոր մարդու բարոյական այլանդակությունը։ Ոչինչ չէր կարող այնպես համոզիչ կերպով բացատրել ինձ նրա բարբարոսությունը, որպես այն խոսքը, որով հրամայեց ինձ սպանել Նենեին։ «Դրանից լավ առիթ գտնել չեմ կարող,— մտածում էի ես,— կվեր առնեմ Նենեին, կհեռանամ և կազատվեմ այդ չարագործությունից...»։

Բայց իսկույն երևան էին գալիս՝ աղքատ մայրս, քույրերս և վերջապես իմ նազելի Սառան։ Դրանք սպասում էին իմ լիք քսակով վերադարձին։ Իսկ իմ վաստակած բոլոր արծաթը քավոր Պետրոսի մոտ էր գտնվում։ Բաժանվելով նրանից, պետք է կորցնեի իմ ամբողջ հարստությունը։ Ինչպե՞ս թողնեի, ինչպե՞ս հեռանայի նրանից։ Շահասիրությունը և այդ դեպքում կուրացրեց ինձ... ես մնացի անվճռականության մեջ...

Այդ բոլոր խորհրդածությունների մթությունից իմ մտքում պարզվեցավ մի բան, որ ես որոշեցի անպատճառ բաժանվել քավոր Պետրոսից։ Բայց մտածեցի, թե նախ պետք է Նենեին հանձնել ձկնորսին պահելու համար, եթե կգտնեմ նրան այնպիսի բարի մարդ, որպես պատմում էր Նենեն։ Իսկ հետո կաշխատեմ մի կերպով քավոր Պետրոսի ձեռքից դուրս բերել իմ արծաթը, որ նա ոչինչ չհասկանա։ Երբ այդ կատարված կլինի, այն ժամանակ կառնեմ Նենեին, կհեռանամ մի օտար աշխարհ և այնտեղ նրա կյանքը ապահով վիճակի մեջ կդնեմ։ Բայց ես չգիտեի, արդյոք Նենեն կհամաձայնվե՞ր մնալ ձկնորսի տնակում և սպասել ինձ, մինչև ես քավոր Պետրոսի հետ հաշիվները վերջացնեի։ Նրան փորձելու համար ասացի.

— Նենե, մենք ուրիշ տեղ պիտի գնանք, դու չես կարող միշտ մեզ մոտ մնալ։ Հիմա ես քեզ ազատ եմ թողնում, ուր որ ուզում ես, գնա՛։

— Ես քեզանից չեմ բաժանվի։

— Ինչո՞ւ։

— Ես հիմա շատ եմ վախենում։

— Առաջ չէի՞ր վախենում։

— Չէի վախենում, նրա համար որ, չէի իմանում, որ մարդիկ այդքան վատ են լինում...

Նա ակնարկում էր իրան շարշարող ավազակների վրա։

— Կարելի է ես էլ վատ եմ։

— Դու լավ մարդ ես. ես քեզանից չեմ վախենում։

— Ես հեռու երկիր պիտի գնամ։

— Ուր որ գնաս, կգամ քեզ հետ։

— Բայց եթե մնա՞մ այստեղ։

— Ես էլ կմնամ քեզ մոտ։

— Մենք տուն չունենք։

— Այդ անտառի մեջ մեզ համար մի խրճիթ կշինենք, նրա մեջ կապրենք։

Նա դարձյալ հիշեց ավազակներին և խոսքը փոխեց.

— Չէ՛, հեռու, այստեղից շատ հեռու գնանք։

Խե՜ղճ աղջիկ, ի՞նչ էր, որ նրան այդպես կապեց ինձ հետ. արդյոք սե՞րը, արդյոք երախտագիտական զգացմունքը, որ ես նրա կյանքը ազատեցի մահից։ Այդ հարցերը քննելու համար ես ոչ միջոց ունեի և ոչ ժամանակ։ Ես միայն մտածում էի Նենեի կյանքը գոնե առժամանակ ապահով վիճակի մեջ դնել, մինչև քավոր Պետրոսի հետ գործերս վերջացնեի։ Ինձ հրամայված էր սպանել նրան, եթե ես այդ հրամանը չկատարեի, անտարակույս կկատարեր նա, որ հրամայեց ինձ։ Աղջիկը չէր կարող ազատվել քավոր Պետրոսի գազանությունից, եթե նա հասկանար, որ տակավին կենդանի է մնացել նա։

Մենք այժմ գտնվում էինք լեռնային բարձրության վրա։ Մեր առջև բացվեցավ անսահման մուգ-արծաթափայլ տարածություն՝ ծովը։

— Հիմա մոտեցանք ձկնորսի տնակին,— ասաց Նենեն։

— Քեզ կտանեմ նրա խրճիթը։

— Ես այնտեղ մենակ չեմ մնա։

— Ես շուտ-շուտ քեզ մոտ կգամ։

— Ամեն օր, հա՞։

— Հա՛, ամեն օր։

Մենք պետք է իջնեինք լեռնային զառիվայրը, որ տանում էր դեպի ծովեզրը։ Անտառը այստեղ վերջանում էր, սկսվում էին մանր թուփեր միայն։ Այդ թփերի մեջ թաքնված էր ձկնորսի խրճիթը, ոչ այնքան հեռու ծովի ափից։ Այդ մենավոր խրճիթի մեջ բնակվում էր այն գաղտածածուկ մարդը, որի մասին շրջակայքում ոչինչ տեղեկություն չունեին, թե ո՞վ է նա, որտեղի՞ց է եկել կամ ի՞նչ մարդ է։

Ես գտա նրան յուր պառավի հետ այնպես բարի, որպես պատմել էր Նենեն։ Նրանք խիստ սիրով ընդունեցին իմ առաջարկությունը, մանավանդ երբ պատմեցի անբախտ աղջկա աղետալի անցքը։

— Որդի չունենք, աստված մեզ որդի ուղարկեց,— ասաց ծերունին,— կպահենք մեզ մոտ, կսնուցանենք, գուցե մի ժամանակ բախտավոր կլինի նա։

Ես շտապում էի, գիտեի, որ քավոր Պետրոսը որպիսի անհամբերությամբ սպասելիս կլիներ ինձ։ Ես առաջարկեցի ձկնորսին իմ ոսկով լի քսակը, բայց նա հրաժարվեցավ ընդունելուց։ Երբ պատրաստվում էի հեռանալ, Նենեն հարցրեց.

— Ե՞րբ կգաս։

— Շուտ կգամ։ Բայց դու այդ խրճիթից չպիտի հեռանաս։

— Երբ դու ինձ հետ չես լինի, ես ոչ մի տեղ չեմ գնա։

Բաժանման րոպեն խիստ զգալի եղավ։ Նենեն չկարողացավ զսպել յուր կրքերը։ Նա քարշ ընկավ իմ պարանոցից, արտասուքը հեղեղի նման թափվում էր նրա աչքերից, և սրտաշարժ հեկեկանքով ասում էր. «Մի գնա՛, ինձ մենակ մի՛ թողնիր...»։

Ձկնորսը և նրա պառավը հազիվ կարողացան հանգստացնել նրան։ Ես դարձյալ խոստացա, որ նրան մենակ չեմ թողնի և ամեն օր կայցելեմ ձկնորսի խրճիթը։ Ես բաժանվեցա։

Գալով քավոր Պետրոսի մոտ, նրա առաջին հարցը եղավ.

— Ի՞նչ արեցիր։

— Սպանեցի։

— Իսկ դի՞կը։

— Ձգեցի ծովը։

Մ Ա Ս Ն Ե Ր Ր Ո Ր Դ

Ա

ՆՈՐ ՇՐՋԱՆ

Մի քանի րոպեից հետո սայլակը պատրաստ էր։ Քավոր Պետրոսը հրամայեց քշել դեպի խաչագողների բնակարանը։ Նա լուռ էր, ինչպես առհասարակ լինում էր, երբ պատրաստվում էր սկսել մի նոր ձեռնարկություն։ Ես նույնպես լուռ էի, բայց ես ոչինչ ձեռնարկության մասին չէի մտածում. իմ միտքը գրավել էր գեղեցիկ Նեննն։

Խաչագողների բնակարանը ցերեկով բոլորովին ուրիշ տեսք ուներ։ Թաքնված պատատուկ բույսերի մեջ, հովանավորված դարևոր ծառերով, նա ավելի նմանում էր գազանների որջին, որ գտնվում է ժայռերի խոռոչների մեջ։ Նրա շուրջը ընկած էին քարերի ահագին բեկորներ, որոնք պոկվելով մերձակա լեռնից, ցած էին գլորվել, բոլորովին մերկ թողնելով ծառերի արմատները։ Անծանոթ մարդը հազիվ կարող էր դուշակել, թե այդ գետնափոր որջի մեջ բնակվում էին մարդիկ։ Բայց ծուխը, այդ մարդկային բնակության ազդարար նշանը, միայն խուլ թփերի միջից մխացող ծուխը, հիշեցնում էր, թե այդ ծառախիտ անտառների դարևոր լռության մեջ ևս տիրում էր մարդու շունչը։

Բայց ի՞նչ ծուխ էր այդ։ Ծուխը բարձրանում էր զանազան կետերից։ Ձորի մեջ զանազան տեղերում ինչ-որ այրվում էր։ Եվ բարձրացած ծուխը, միախառնվելով, կազմում էր թանձր, թխագույն մառախուղ ամբողջ ձորի վրա։— Այստեղ ածուխ էին պատրաստում։

Գիշերով ես տեսա խաչագողներին թվով ավելի շատ. իսկ այժմ երեք հոգի միայն գտանք նրանց բնակարանում։ Նրանցից մեկը նստած կարկատում էր ջորիների փալաններ և

ձիաների մաշված սարքը, մյուսը մանր ավազով մաքրում էր մի ժանգոտած հրացան, իսկ երրորդը դեռ քնած էր։

Խրճիթը ներսից բոլորովին նման էր ածխագործների տնակին, որ գտնվում է անտառների մեջ։ Այստեղ և այնտեղ ածած էին մրոտած տոպրակներ, փայտ կտրելու տապարներ, կրակ խառնելու երկաթյա անթրոցներ, հող փորելու բահեր և այլն։ Ածուխի սև փոշին նստած էր թե բնակիչների և թե բնակարանի վրա։ Բոլորը, բոլորը համապատասխանում էր սև արհեստի սև պարապմունքին։

Եվ իրավ, այդ մարդիկը ածխագործներ էին, կապալով վեր էին առել անտառի մի մասը, ածուխ էին պատրաստում։ Ծովի ափի մոտ կանգնած էին նրանց մի քանի նավակները, որոնք տանում էին ածուխը մերձակա քաղաքներում վաճառելու համար։ Մի քանի խումբ ջորիներ տանում էին նույն մթերքը ցամաքի ճանապարհով դեպի շրջակա գյուղերը և փոքրիկ քաղաքները կամ հասցնում էին մինչև ծովեզրը նավակների մեջ դնելու համար։

Մեր անակնկալ հայտնությունը նախ խռովություն պատճառեց նրանց, բայց երբ մեզ ճանաչեցին, էլ չափ չկար նրանց ուրախությանը։ Քավոր Պետրոսի մի քանի կախարդիչ խոսքերը բավական եղան գրավելու նրանց վստահությունը։ Եվ ահա նրանցից մեկի ձայն տալովը խրճիթի մի անկյունում շարժվեցան մերկ հատակի վրա փռած ցամաք տերևները, տախտակամածից բարձրացավ մի դռնակ և ստորերկրյա վիրապի միջից դուրս երևաց մի գլուխ։ Նա մի քննողական հայացք ձգելով մեզ վրա, դուրս եկավ փոսից։ Նրանցից հետո հայտնվեցավ երկրորդը, երրորդը։ Այդ նորերի թե հագուստի գունավոր բծերից և թե ձեռքերի ներկերից երևում էր, որ նրանք այն ստորերկրյա վիրապի մեջ ինչ-որ ներկերով կամ գույներով աշխատում էին։ Դրանք ածխագործներ չէին։

Նրանք ուրախությամբ ընդունեցին քավոր Պետրոսին, համբուրվեցան նրա հետ և խնդրեցին նստել։ Քավոր Պետրոսը ներկայացրեց և ինձ, մի քանի կարմիր խոսքեր ավելացնելով իմ ընդունակությունների մասին։

Ինձ ճանաչեցին իմ հոր անունով, որովհետև ինձ տեսել էին շատ փոքր հասակում։

Դրանք իմ հայրենակիցներն էին։ Նրանց գլխավորը, որ կոչվում էր Նազար, դարձավ դեպի քավոր Պետրոսը, հարցնելով.

— Մենք վաղուց սպասում էինք ձեզ, Պետրոս եղբայր, ինչո՞ւ այդքան ուշացաք։

— Երկար պատմություն է,— պատասխանեց Պետրոսը,— այդ մասին հետո կխոսենք։ Դուք այն ասացեք, ինչպե՞ս են տղերքը, լա՞վ են, առո՞ղջ են։

— Լավ են, բայց...

— Ի՞նչ է պատահել...

Նազարը պատմեց, թե իրանց ընկերներից մեկը մի հանձնարարությամբ ուղարկված էր մի տեղ, հիմա նա անհետացել է, և նրա մասին խիստ անհանգիստ են։

Այդ պատմության միջոցին քավոր Պետրոսը նայեց իմ երեսին, որ տեսնե իմ դեմքի արտահայտությունը։ Իմ մեջ ոչինչ խռովության նշան չգտավ։ Պատմությունը նենեին սպանելու հանձնարարությամբ ուղարկված ավազակի մասին էր, որ հոգին տվեց իմ տապարի հարվածների տակ։ Բայց ես նրա մարմինը մի այնպիսի տեղում էի ամփոփել, որ ինքը սատանան չէր կարող գտնել։

Քավոր Պետրոսը իրան ձևացրեց որպես սաստիկ հետաքրքրված։ Խաչագողի ընկերի անհետանալը, իրավ որ, սաստիկ անհանգստություն էր պատճառում մնացածներին։

— Ո՞վ էր, ի՞նչ հանձնարարությամբ և որտե՞ղ էր ուղարկված։

Նազարը պատմեց, թե նրան տվել էին մի աղչիկ, որ տանե, անտառում «անհետացնե», բայց աղչկա հետ ինքն էլ անհետացավ։

— Աղչիկը գեղեցի՞կ էր,— հարցրեց քավոր Պետրոսը։

— Գեղեցիկ էր։

— Իսկ տղան երիտասա՞րդ էր։

— Երիտասարդ էր։

— Այսպիսի գործը երիտասարդին չեն հանձնում, ջատ հասկանալի է, որ երկուսն էլ հաշտվել են միմյանց հետ և հեռացել են ով գիտե որտեղ։

— Մենք արդեն մարդիկ ուղարկեցինք նրանց որոնելու,— պատասխանեց Նազարը։

— Իզուր, պետք էր նրանց թողնել իրանց քեֆին, ինչ որ ուզում են թող անեն։

Նազարը ասաց կան ուրիշ պատճառներ, որ այդ անցքը խիստ վտանգավոր են դարձնում, և խոստացավ, որ այդ պատճառների մասին հետո կխոսե քավոր Պետրոսի հետ։ Իսկ ճանապարհից նոր եկած լինելով, և մանավանդ ճաշի ժամանակ լինելով, այժմ սկսեցին հոգ տանել մեր հանգստության մասին։

Մեր ձիաները և սայլակը տեղավորեցին՝ ես ինքս էլ չհասկացա թե որտեղ. երևում էր, անտառի մեջ ուրիշ խորշեր ևս ունեին։ Մեր իրեղենները բերեցին խրճիթը։ Ճաշի սեղանն արդեն պատրաստ էր։ Ամենքը բոլորեցին սեղանի շուրջը, մեզ ամենապատվավոր տեղը տալով։ Չնայելով, որ նրանք բնակվում էին մի այնպիսի առանձնացած տեղում, լեռների մեջ, անտառների խորքում, բայց սեղանի վրա հայտնվեցան այնպիսի ուտելիքներ և այնպիսի ըմպելիքներ, որ այդ կողմերում հազվագյուտ էին։ Երևում էր, որ քաղաքների հետ խիստ հաճախ հարաբերություններ ունեին։

Խոսակցությունը սկզբում, ըմպելիքների գավաթների համեմատ, հետզհետե կենդանանում էր զանազան հանաքներով և զվարճախոսություններով։ Բայց գնալով ավելի տխուր կերպարանք ստացավ, երբ նրանք սկսեցին հարցնել իրանց հայրենիքի և ընտանիքների մասին։ Մենք Պարսկաստանից ավելի հետո դուրս եկած լինելով, քան թե նրանք, ունեինք շատ նորություններ նրանց համար։

— Մեր Մկրտիչը մեծացե՞լ է,— հարցնում էր մեկը։ Մկրտիչը հարցնողի որդին էր, որին օրորոցի մեջ թողնելով, հայրը հեռացել էր հայրենի երկրից, և այն օրից ապրում էր պանդխտության մեջ։

— Մկրտիչը այժմ զսակված է, երեխա ունի,— պատասխանում է քավոր Պետրոսը։

Հայրը ուրախանում է։

— Մայրս խո շատ չի՞ պառավել,— հարցնում է մի ուրիշը։

— Մայրդ կյանքը քեզ բախշեց. արդեն յոթերորդ տարին է, որ պառկած է հողի տակ։

Որդին տխրում է։ Մի քանի ձայներ կրկնում են՝ «աստված հոգին լուսավորեսցե...»։

— Մեր Խաչոյի աղջիկը ի՞նչ է անում,— հարցնում էր մի այլը։

Դա յուր կնոջ մասին է հարցնում։

— Խաչոյի աղջիկը հիմա ուրիշ մարդու է գնացել։

— Ինչպե՞ս,— գոչում է զարմացած ամուսինը։

— Չե՞ս հասկանում։ Երկար սպասեց քեզ, ոչ լուր ստացավ, ոչ փող ստացավ, վերջը հուսահատվելով, պսակվեցավ ուրիշ մարդու հետ։

Դժբախտ ամուսինը արձակում է խորին հառաչանք և լռում է...

— Մեր Արևնազը ի՞նչ է անում,— հարցնում է մի ուրիշը յուր դստեր մասին։

— Արևնազին թուրքերը փախցրին։

— Ա՜խ, քոռանամ ես...— բացականչում է հայրը։

— Երևի, շատ գեղեցիկ աղջիկ էր դարձել,— հարցնում են մյուսները։

— Տգեղին չեն փախցնի,— պատասխանեց քավոր Պետրոսը։

— Յուր նմանը չկար մեր գյուղում,— մեջ մտա ես։

— Իսկ մեր Գասպա՞րը,— հարցնում է մեկը յուր եղբոր մասին։

— Նա հիմա գյուղի քահանան է։

— Մեր այգու խնձորենիները լավ բերք տալի՞ս են,— հարցնում է քահանայի եղբայրը։

— Բերքը լավ է, բայց պտուղը օտարն է ուտում։

— Ինչպե՞ս։

— Քո պարտքերի փոխարեն տիրեցին։

— Ափսո՞ս, այն խնձորենիները ես իմ ձեռքով էի տնկել։

Հենց այն տարում, երբ հեռացա մեր երկրից։

Խոսակցությունը ընտանեկան անցքերից անցավ ավելի հասարակական գործերի վրա։

— Գյուղի տանուտերը ո՞վ է հիմա։

— Աղախանը։

— Այն քոռ անիրավը դեռ գյուղը քանդո՞ւմ է։

— Բոլորը տանջված են նրա ձեռքից։

— Երկրի կառավարիչն ո՞վ է։

— Ն... խանը։

— Անիծածը կաշառքից չի կշտանում...

— Մենք էլ նրա համար ենք վաստակում...

— Փողի տոկոսը քանո՞վ էր։

— Թումանին ամիսը մեկ կռան։

Վերջին խոսքը սարսափ ձգեց շատերի վրա։ Նրանք այսպիսի ծանր տոկոսներով պարտքեր ունեին իրանց հայրենիքում։ Ամուսնի պարտամուրհակը կնոջը փոխել էին տալիս, և ամեն տարի տոկոսը բարդվում էր դրամագլխի վրա։ Վաշխառուն հարստահարում էր դրանց, իսկ դրանք հարստահարում էին անմեղ, միամիտ մարդիկներին։

Ընդհատված խոսակցությունը շարունակվեցավ։

— Լուսին ի՞նչ է անում։

Դա մեր գյուղի նշանավոր գեղեցկուհիներից մեկն էր։

— Նա հիմա լավ բազար ունի...— պատասխանեցի ես։

— Ինչպե՞ս։

— Չե՞ս հասկանում...

— Ամո՞թ նրա տղամարդին, մի այնպիսի սիրուն կնոջ կարելի՞ է տասն տարիներով անտեր և քաղցած թողնել,— ասաց նրանցից մեկը։

Կարծես իրանց կնիկները տասն տարիներից ավել չէր, որ անտեր ու քաղցած էին մնացած։

Մի ուրիշը հարցրեց.

— Մեր սև շունը մնո՞ւմ է։

— Չէ, կյանքը տվեց քեզ։

Այդ լուրերը, որ քավոր Պետրոսը հաղորդեց յուր սովորական սառնասրտությամբ, հարուցին ոմանց մեջ ուրախություն, իսկ ոմանց մեջ տրտմություն։ Ինձ խիստ զարմանալի էր թվում, երբ նկատում էի, որ այդ հոգով և սրտով քարացած մարդիկն էլ զգացմունք ունեն, կարող են ուրախանալ և տրտմել։ Բայց շուտով ամեն ինչ մոռացվեցավ, իբր թե ոչինչ չէին լսել։

Ես չէի կարողանում զսպել իմ վրդովմունքը, երբ նայում էի այդ անփույթ, անհոգ մարդկանց վրա, որոնք օտարության մեջ մոռացել էին ամեն ինչ, որ իրանց համար ամենաթանկագինն էր։ Ունենալ կին, որդիներ, ազգականներ, և նրանց երկար տարիներով թողնել անխնամ, գերի թուրքերի և պարսիկների ձեռքում, իսկ ինքը անհետանա պանդխտության մեջ,— դա գեր-

դաստանի հոր ամենասարսափելի անտարբերություններից մեկն է։ Այդ մարդիկը, մտածում էի ես, ամենևին գութ չունեն, նրանց մեջ մեռել է ծնողական սիրտը. նրանց զգալի չէ ոչ երեխայի ժպիտը և ոչ կնոջ արտասուքը,— երկուսն էլ կատարվում են նրանց աչքերից հեռու...

Մի՞թե ես էլ նույն դրության մեջ չէի գտնվում...

Ես շատ լավ էի հասկանում, որ աղքատությունն էր ստիպել դրանց թողնել իրանց հայրենիքը, թողնել իրանց ընտանիքը, և նույն աղքատությունը իմ ձեռքս տվեց պանդխտության գավազանը։ Հայրենի երկրում չկարողանալով հայթայթել իրանց ապրուստը, նրանք հարկադրվել էին օտարության մեջ բախտ որոնել։

Արդար վաստակի նրանք ոչ միայն սովոր չէին, այլև անընդունակ էին. չգիտեին որևիցե արհեստ, չէին վարժված տոկուն աշխատանքի։ Նրանց միտքը, նրանց ընդունակությունները բնականաբար սրվել, կատարելագործվել էին խաբեբայությունների մեջ, այն չափով, ինչ չափով որ զարգացել էր նրանց մեջ արծաթ որսալու անհագ ախորժակը, որի համար ներելի էին համարում ամեն միջոցներ, որքան և անազնիվ լինեին։

Մի անգամ քավոր Պետրոսը խիստ իրավացի կերպով նկատեց, թե «արծաթը աղի ջուր է, որքան խմես, այնքան կծարավես»։ Նույն ծարավը զգում էի և ես։ Ահա, թե ինչ էր, որ ինձ առժամանակ բաժանեց Նենեից և ձգեց այդ անբարոյական հասարակության մեջ։

Ինձ բոլորովին զզվելի էր թվում այդ նոր շրջանը։ Զարմանալի է, թե ո՛րքան վայրենանում է մարդը լեռների և անտառների առանձնության մեջ. կերպարանքը, բնավորությունն անգամ ամենակոպիտ ձևեր են ստանում։ Նրանց կոշտացած դեմքը, խառնված մազերը, երեսների անախորժ արտահայտությունը, ճշմարիտն ասած, ինձ վրա սարսափ էր բերում։ Թեև մեզ, որպես իրանց հայրենակցին, ցույց էին տալիս հյուրասիրության բոլոր պատրաստականությունները։

Ամենագարշելին այն էր, որ այդ մարդիկը ածխագործի սև վոշու տակ ծածկված, կատարում էին մի այլ սև արհեստ...

Ո՞վ մտցրեց իմ մեջ այդ փոփոխությունը։— Ես պարտական էի Նենեին, որ զարթեցրեց իմ մեջ զզվանք դեպի այդ մարդիկը, և ստիպեց սիրել գեղեցիկը ու լավը...

Ը՝

ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիշերը ի պատիվ մեր պատրաստվեցավ ճոխ ընթրիք։ Ըմբիլիքների քանակությունը ավելի շատ էր։ Խաչագողները ավելի խմում էին, քան թե ուտում էին։ Այժմ հավաքվել էին և այն ընկերները, որոնք ցերեկով անտառի զանազան տեղերում ածուխ էին պատրաստում։ Բոլորի թիվը տասնից ավել էր։ Երբ բավականին խմեցին, նրանցից ամեն մեկը սկսեց պատմել յուր կատարած քաջագործություններից մի անցք։ Աստվա՜ծ իմ, ինչե՞ր չէին պատմում նրանք. բոլորը, բոլորը չլսած և չտեսած բաներ էին... Ես, որպես քավոր Պետրոսի հառաջադեմ աշակերտներից մեկը, նույնպես շատ գործեր էի կատարել, բայց նրանց հետ համեմատելով, դեռ կատարյալ համբակ էի։

— Է՜հ,— ասում էր մի ծերունի խաչագող արհամարհական ժպիտով,— այդ ի՞նչ գողություններ են, որոնցով պարծենում եք դուք։ Երբ ես երիտասարդ էի, գողացա հնդկաց աստծու աչքերը։

Ամենքը ծիծաղեցին. ծերունու ասածը շատերին անհավատալի երևաց։

— Երեխաները ու հիմարները ծիծաղում են ամեն բանի վրա, երբ չեն հասկանում,— պատասխանեց ծերունին, որին, ինչպես երևում էր, վիրավորեց ընկերների արհամարհանքը։— Ձեզ անհավատալի է թվում իմ ասածը, ականջ դրեք, ես կպատմեմ։

Նա սկսեց յուր պատմությունը այսպես.

«Հնդկաց աստվածները մեր աստուծո նման չեն. մերը աչքի չէ երևում. իսկ նրանց աստվածները միշտ կանգնած են տաճարների մեջ, ամեն մարդ տեսնում է, հարցմունք է անում և պատասխան է ստանում։ Ես մտա այդ տաճարներից մեկի մեջ, ուր կանգնած էր գլխավոր աստվածներից ամենամեծը ոսկեղեն հագուստով։ Թեև ոսկին շատ սիրուն բան է, բայց ինձ ավելի գրավեցին նրա գեղեցիկ աչքերը։ Գեղեցի՜կ էին, աննման գեղեցիկ, ես խելագարի նման սիրահարվեցա այդ աչքերի վրա։ Նրանք կազմված էին երկու հատ խոշոր ալմաստներից և ճրագի նման վառվում էին։ Ալմաստների յուրաքան-

չյուրը աղավնու ձվի չափ կլիներ։ Այո՛, իմ սիրտը գրավեցին այդ փայլուն աստղերը, և ես կատարելապես սիրահարվեցա նրանց վրա։ Ե՛կ, մտածեցի, քեզ նվիրեմ այդ աստուծո սպասավորությանը, որ այդպիսի գեղեցիկ աչքեր ունի։ Եվ ընդունվեցա այնտեղ, ի՞նչ եք կարծում, ոչ թե իբրև հասարակ սպասավոր, այլ բրամին,— այսպես են կոչվում նրանց քահանաները։ Ես կատարում էի իմ պաշտոնը ամենայն ջերմեռանդությամբ, ամենայն անձնանվիրությամբ, այնպես, որ փոքր ժամանակում գրավեցի ոչ միայն իմ աստուծո շնորհը, այլև ժողովրդի հարգանքը։ Ինձ հանձնեցին տաճարի բանալիները և նրա հսկողությունը։ Այդ տևեց մի քանի ամբողջ տարիներ։ Վերջը բրամինական կյանքը, անընդհատ աղոթքները, խիստ ճգնությունները հանձրացրին ինձ։ Ես վճռեցի վերադառնալ իմ հայրենիքը։ Բայց ցանկալի էր ինձ ունենալ մի հիշատակ այն աստուծուց, որին այնքան տարիներ ծառայել էի։ Ես ընտրեցի աչքերը, որոնց վրա միշտ սիրահարված էի։ Մի բարի գիշերում կատարվեցավ այդ գործը։ Բայց ո՞րտեղ պետք էր պահել խոշոր ալմաստները։ Սրունքներիս կաշին ծակեցի, ալմաստները դրեցի վերքի մեջ, հետո լավ փաթաթեցի։ Այժմ սատանան էլ չէր կարող գտնել։ Մնաք բարյավ ասեցի իմ աստուծուն և հեռացա։ Հնդկաստանի անտառները խիստ հյուրընկալ ծոց ունեն փախստականների համար, եթե առյուծների և վագրերի ճանկը չընկնե մարդ։ Բայց իմ աստուծու օրհնությունը ինձ հետ էր, վտանգ չպատահեց։ Ես իմ բրամինի հագուստը փոխեցի, և հալածված պարիայի հագուստով շարունակեցի իմ փախուստը։ Պարիային ոչ ոք չէ մոտենում...»։

Ներունին վերջացրեց. ամեն կողմից լսելի եղան գովասանական ձայներ. մի քանիսը ծափահարեցին։

Մի այլ խաչագող ասաց.

— Ես մի օր գողացա մի մոխրագույն ավանակ և սև գույնով ներկելով, ծախեցի դարձյալ յուր տիրոջը. նա չկարողացավ ճանաչել յուր ավանակին։

— Կարծեմ ներկը ավելի թանկ արժեց քեզ, քան թե այն փողը, որ դու ստացար,— նկատեց նրան մեկը ծիծաղելով։

— Իրավ է, ներկը ավելի թանկ արժեց,— պատասխանեց նա,— բայց ես ընկերներիս հետ գրազ էի բռնել։

— Եվ դու կնքեցիր մեր ճակատին «էշ ներկող» անունը,— վրա բերեց առաջինը։

Բոլորը ծիծաղեցին։

Մի ուրիշը պատմեց, թե յուր կյանքում փոխել է տասը զանազան կրոնքներ և զանազան դավանություններ։ Շիրազում ընդունել է մահմեդականություն և ամուսնացել է մի սեիդի գեղեցիկ աղջկա հետ։ Կիլիկիայի մեջ ընդունել է կաթոլիկություն և պսակվել է կաթոլիկ աղջկա հետ. հետո մի կաթոլիկ գերապայծառից ստացել է ժողովարարության թուղթ, պտտել է Իտալիայում, Սպանիայում և Ֆրանսիայում, հավաքել է ահագին հարստություն, այլևս չի վերադարձել յուր կնոջ մոտ։ Կիևում ընդունել է օրթոդոքս եկեղեցու դավանությունը, մի գեներալ նրա կնքահայրն է դարձել, և ընծայելով մի նշանավոր գումար, ամուսնացրել է յուր աղախնի հետ։ Իսկ Կ. Պոլսի մեջ ընդունել է բողոքականություն, տեղային միսիոնարների թղթով գնացել է Ամերիկա, փողեր է հավաքել և ամերիկացի կին է ունեցել և այլն։

Այդ մարդուն շվացրին, որովհետև խիստ հասարակ բան էր պատմում, որովհետև նրանց մեջ չկար մեկը, որ տասն անգամ կրոնը փոխած չլիներ։

Մի երիտասարդ խաչագող, բավական գեղեցիկ դեմքով, շնորհալի, և աշխարհային կյանքի սովորած մարդ, պատմեց, թե եվրոպական մի մայրաքաղաքում նա իրան ձևացրեց իշխան Արարատի. ման էր գալիս թանկագին ակներով զարդարված խենչարով և նույնպես գոհարներով զարդարած ոսկյա քամարով. նրա կառապանի մոտ միշտ նստած էր լինում մի սևամորթ արաբ։ Մի պարահանդեսի ժամանակ նրա վրա սիրահարվեցավ մի հարուստ կոմսի աղջիկ. խոստացավ նրա հետ պսակվել, իսկ օրիորդի ծնողները խոստացան մեծ օժիտ տալ։ Օժիտի կեսը նա ստացավ և վատնեց, բայց օրիորդի հետ չամուսնացավ։ Խեղճ աղջիկը մեռավ բարակացավից, երբ տեսավ յուր փեսային անհայտացած։

Այդ պատմությունը, որ շատ հետաքրքրական էր և շատ գեղեցիկ կերպով նկարագրեց երիտասարդը, նույնպես անցավ խիստ աննշան կերպով, իսկ մի քանիսի մեջ առաջացրեց արհամարհանք։ Որովհետև սիրային հարաբերությունները առհասարակ մի տեսակ թուլասրտություն էր համարվում. ամեն մի

խաչագողի համար և մինչև անգամ ամոթ էր բերում նրան։ Խաչագողը կարող էր սեր ընտրել որպես միջոց մեկին կողոպտելու համար, իսկ ճշմարտապես սիրել անվայել էր։ Երիտասարդի պատմությունից երևաց, որ ինքը ևս սիրահարված է եղել կոմսուհի օրիորդի վրա։ Այդ պատճառով մեկը նկատեց նրան.

— Դուք այն ժամանակ արժան կլինեիք գովասանության, երբ փոխանակ շռայլաբար վատնելու այն օրիորդի փողերը և փոխանակ նրա հետ սիլի-բիլի անելու, կպսակվեիք նրա հետ, կստանայիք ամբողջ օժիտը և բաց կթողնեիք, կհեռանայիք։

Այդ նկատողությունը ընդհանուր հավանություն ստացավ։

Մի ողորմելի խաչագող, որին ավել անունով կոչում էին «էշի ականջ», պատմեց, թե յուր ընկերի հետ մի անգամ մտան մի աղքատ գյուղացու տուն։ Երկուսն էլ իրանց ձևացրել էին վանական աբեղա։ Տանը ոչինչ չգտան, բացի մի կացինից, որ դրած էր դռան մոտ։ Սկսեցին մաղթանք կատարել, երգելով հետևյալ երգը.

Աբեղան երգեց.

«Էդա կացին, դրան տակին
Վեր ա՛ռ կոխի մեջ տոպրակին,
Ալելույա, ալելույա՛»։

Ընկերը պատասխանեց.

«Պոչն էրկեն ա անիրավին,
Չի պարտկվի մեջ տոպրակին,
Ալելույա, ալելույա՛»։

Աբեղան շարունակեց.

«Վեր ա՛ռ, զա՛րկ իդա քարին,
Պոչը կոտրե՛ անիրավին,
Որ պարտկվի մեջ տոպրակին։
Ալելույա, ալելույա՛»։

«Էշի ականջի» պատմությունը, թեև մի քանիսի մեջ ծիծաղ շարժեց, բայց շատերին զզվանք պատճառեց, որովհետև խաչագողը չպիտի այն աստիճան ստորացնե իրան, որ աղքատ գյուղացու խրճիթից մի կացին գողանա։ Խաչագողը պետք է մեծ որսերին հետամուտ լինի, ասացին նրան։

Այդ պատմությունները, որքան և անհամակրությամբ լսում էի ես, բայց դարձյալ գրգռեցին իմ ինքնասիրությունը և ես պատմեցի իմ հերոսություններից մեկը, թե որպես քավոր Պետրոսը թաքցրեց ինձ սնդուկի մեջ, և որպես ես կողոպտեցի հրեա սեղանավորի կրպակը։ Ես սպասում էի, որ իմ քաջագործությունը կզարմացներ բոլորին։ Բայց մի խաչագող պատասխանեց ինձ ծիծաղելով.

— Դա մի հասարակ խաղ է, որ ամենքս խաղացել ենք։ Բայց ես կպատմեմ դրա նման մի բան, որ դուք գուցե լսած ևս չեք։ Նա պատմեց.

«Հարավային Ֆրանսիայի քաղաքներից մեկում մենք մտանք մի եկեղեցի։ Այդ քաղաքի կաթոլիկ ժողովուրդը այնքան կրոնամոլ էր, որ կարծես ապրում էին և գործում էին միմիայն եկեղեցու համար։ Քահանաները հոգու փրկության անունով առել էին ժողովրդի հարստությունը և նրանով զարդարել էին իրանց տաճարները։ Արծաթյա խաչերը, աշտանակները և զանազան սուրբ անոթները թիվ և չափ չունեին։ Մենք երեք ընկեր էինք, մտածեցինք, թե ի՞նչ հնար գործ դնենք, որ այդ հարստությունից մի լավ բաժին վեր առնենք։ Մեր ընկերներից մեկին ձևացրինք մեռած, դրեցինք դագաղի մեջ և տարանք եկեղեցին։ Այդ քաղաքում սովորություն կար, որ մի գիշեր մեռելը պետք է մնար եկեղեցում։ Գիշերը մեր մեռելը հարություն է առնում յուր դագաղից և հավաքում է յուր մոտ խաչերից և անոթներից որը ավելի թանկագին էր։ Մյուս օրը մենք վեր առեցինք դագաղը տարանք թաղելու։ Այդ քաղաքում գետնի պակասության պատճառով աղքատ և պանդուխտ ննջեցյալներին տեղ չէին տալիս հասարակաց գերեզմանատնում, այլ դնում էին առանձին դամբարանի մեջ, որ հատկապես աղքատների համար պատրաստված էր։ Ընկերիս դագաղը դրվեցավ նույն տեղը, որ ուրիշ ոչինչ չէր, եթե ոչ մի ստորերկրյա մթին այր։ Բայց նա երկար չմնաց ննջեցյալների ամբարում. հենց առաջին գիշերը դուրս եկավ դագաղից, յուր հետ բերելով և յուր կողոպուտը, հասկանալի է, որ մենք ևս օգնեցինք նրան այդ վերջին հարության մեջ»։

— Երևի, այն օրից սկսեցին մեզ կոչել «խաչագող», որով-

հետև դուք կողոպտեցիք սուրբ տաճարի խաչերը,— նկատեց մեկը։

Բոլորը ծիծաղեցին։

Քավոր Պետրոսը, որպես միշտ սովորություն ուներ, ավելի ուրիշ բաների վրա էր մտածում, քան թե լսում էր։ Նա չէր սիրում, երբ մարդիկ պարծենում էին նրա մոտ։ Նա յուր մեծագործությունների մեջ խիստ համեստ էր...

Ընթրիքը վերջացավ մեր կենաց համար առաջարկված բաժակներով։ Բոլորը հայտնեցին իրանց ուրախությունը, որ բախտ ունեցան ընդունելու մեզ իրանց ընկերության մեջ...

ԺԳ

ԱՆԲԱՑԱՏՐԵԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Երբ առաջ լսում էի այդպիսի խոսակցություններ, ես ոգեվորվում էի, իմ սիրտը լցվում էր կատաղի նախանձով, իմ եռանդն ավելի բորբոքվում էր, և ես մտածում էի. «Ե՞րբ կլինի, որ ես էլ պարծենալով պատմեմ իմ քաջագործությունները...»։ Իսկ այժմ ինչո՞ւ այդպես սառեց իմ սիրտը, ինչո՞ւ այդպես անզգայացավ նա։ Այլևս ինձ չէր գրավում խաչագողի փառքը, այլևս ես չէի հրապուրվում չար գործի քաղցր մոլորությունով։ Կարծես թե, իմ զորությունը թուլացել էր, կարծես թե, իմ մեջ հանգել էր այն կրակը, որի առաջին վառողը եղավ մի երևելի չարագործ... Ինձ տիրել էր մի տեսակ վհատություն, մի տեսակ հիվանդոտ ձանձրույթ։ Ես փախչում էի գործից, փախչում էի աշխատանքից...

Որտեղի՞ց ծագեց այդ փոփոխությունը։

Ես ինքս չգիտեի, բացատրել չէի կարողանում, միայն զգում էի, որ իմ մեջ դեռ մնացել էր աշխույժ եռանդ, բայց ոչ դեպի խաչագողի գործունեությունը։ Ես բոլորովին ոգով ընկած չէի։ Իմ սիրտը լցված էր ինչ-որ ուրիշ բանով, որը հետզհետե այնքան աճում էր, ընդարձակվում էր, որ արտաքսվում էր այնտեղից բոլորը, ինչ որ առաջուց մտցրել էր քավոր Պետրոսի սոսկալի դաստիարակությունը... Բայց ի՞նչ էր այդ,— ինքս էլ չէի հասկանում։

Երբ առաջ ինձ աջողվում էր կատարել մի եղեռնագործություն, որքան սարսափելի լիներ նա, որքան խառնված լիներ արյունով, այնքան ավելի բերկրություն էր բերում ինձ։ Իսկ այն օրից, երբ սպանեցի այն չարագործին և ազատեցի Նեննին, զգում էի, որ այդ սպանությունը այն չէր, ինչ որ ինձ շատ անգամ պատահել էր գործել։ Առաջինների զվարճությունը բոպեական էր, շուտով անցնում էր, իսկ այդ վերջինի ուրախությունը քաղցր էր և տևողական։ Ես սպանելով, ազատել էի մի անմեղի կյանքը...

Առաջ ինչ որ անում էի, դարձյալ ուզում էի անել, չէի կըշտանում, ոչ մի բանի մեջ բավականություն չէի գտնում։ Կարծես թե սիրտս միշտ և միշտ դատարկ էր մնում։ Իսկ այժմ զգում էի, որ ավելի ուրախ եմ, սիրտս հանգիստ էր և գոհ, որպես թե նա լիացած լիներ անսահման երջանկությամբ...

Որտեղի՞ց ծագեց այդ փոփոխությունը։

Երբ խաչագողները քնեցին, ես ամբողջ գիշեր քնել չկարողացա։ Իմ աչքերի առջևն էր Նեննն, նրա պատկերը ինձանից չէր հեռանում, միշտ նրան էի տեսնում և նրա մասին մտածում։ Ի՞նչ էր, որ իմ սիրտը կապեց այդ թշվառ աղջկա հետ։ Մարդու հոգեբանական գաղտնիքները դեռ անհասկանալի էին ինձ։ Ես Նեննի վերաբերմամբ ունեցած իմ զգացմունքը բացատրում էի խիստ պարզ և հասարակ պատճառներով, թե կյանքի մեջ մարդ յուր արդյունաբերությունը ավելի է սիրում, ինչպես նա խիստ ախորժակով է ուտում այն երեի մսից, որ ինքն է որսացել, իսկ բազարից գնածը այն համը չունի։ Մարդ խնայողությամբ է ծախսում այն արծաթը, որ յուր քրտինքի վաստակն է, իսկ ժառանգական հարստության հետ շատ անգամ ջռայլաբար է վարվում։ Այնպես էլ քաղցր է մարդուս համար յուր ձեռքով տնկած, հասցրած ծառի պտուղը։ Արդյոք այդ համեմատությունները ճի՞շտ էին, դրանցով կարելի՞ էր բացատրել Նեննի վերաբերությամբ ունեցած իմ զգացմունքը...

Կյանքը ամեն բան սովորեցնում է մարդուն, իսկ դեպքերը նրա վարժապետն են դառնում։ Քավոր Պետրոսը ինձ սովորեցրեց ատել, ոչնչացնել, կողոպտել, հափշտակել, մի խոսքով, ուրիշին պատկանածը իրան սեփականացնելու համար չխնայել ոչ մի միջոց։ Ավազակությունը ամենամեծ զվարճությունն էր ինձ համար, որի մեջ ես զգում էի բախտի քաղցրությունը։

Ուրախություն էր պատճառում ինձ առանց քրտինքի պարպել ուրիշի քսակը։ Բայց այն օրից, երբ ես իմ քսակը առաջարկեցի ծերունի ձկնորսին, և խնդրեցի նրանից պահել, պահպանել Նենեին,— այդ օրից ես վայելում էի մի ավելի մեծ բավականություն, որ երբեք ճաշակած չէի։

Քավոր Պետրոսը ինձ սովորեցրեց ատել, ոչնչացնել, բայց Նենեն սովորեցրեց սիրել, բարիք գործել։

Որքա՜ն գեղեցիկ բան է սերը։

Ես Սառային էլ էի սիրում. այժմ նույնպես սիրում եմ իմ մանկության բարեկամին։ Բայց հանգամանքները բաժանեցին մեզ, տարիները ահագին անդունդ փորեցին մեր մեջ. մենք անջատվեցինք։ Որքա՜ն ժամանակ էր, որ չէի տեսել նրան. այժմ իմ հիշողության մեջ մնացել էր նրա մռայլ պատկերը միայն, թեև սրտիս մեջ տակավին չէր հանգել նրա սերը։ Սառան ինձ երևում էր այն բանի նման, որպես երեխային երազումը կտային մի խաղալիք, և նա կուրախանար, բայց հենց որ զարթնում է քնից, սկսում է տխրել, որ այն խաղալիքը այլևս չունի...

Առավոտյան խաչագողները զարթնեցան խիստ վաղ։ Որպես գործի մարդիկ, դեռ արևը չծագած, նրանք ոտքի վրա էին։ Մի քանիսը վեր առին կացինները, գնացին անտառը փայտ կտրելու և ածուխ պատրաստելու, իսկ Նազարը, նրանց գլխավորը, մնաց խրճիթում յուր երկու բանվորների հետ։

Ինձ երևում էր, որ նրանք խիստ ուրախ էին քավոր Պետրոսի հայտնվելով, և հարգում էին նրան, որպես իրանց պատրիարքին։ Իսկ ինձ դեռ մարդու տեղ չէին դնում. ինձ վրա նայում էին, որպես մի անփորձ համբակի վրա։ Նազարը մեզ ցույց տվեց իրանց ստորերկրյա վիրապը, այնտեղ էր նրանց գործարանը։ Կեղծ թղթադրամը ահագին կապոցներով դարսված էր զանազան խորշերում։ Մեքենաները, մամուլները, ներկերը բոլորովին շլացրին իմ աչքերը։ Նազարը, գործարանի կառավարիչը, որ երկար ժամանակ Լոնդոնում սովորել էր այդ արհեստը, և այդ բոլոր պարագայքը բերել էր այնտեղից, մի առ մի ցույց էր տալիս մեզ յուր պատրաստությունները և նրանց գործածության ձևերը։ Իսկ այնօր չէին բանում, որովհետև գլխավոր մեքենապետը, որը մի հրեա էր, գնացել էր քաղաքը մի մեքենայի խանգարված մասը շինել տալու համար։ Հրեան

միևնույն ժամանակ փորագրիչ էր. ընկերության մեջ դա էր միայն, որ օտարազգի էր։

Քավոր Պետրոսը արեց մի քանի նկատողություններ, հետո հարցրեց, թե ինչպե՞ս էին ծախսում այդ թղթերը։ Նազարը պատասխանեց, թե թղթերը ծախսելու համար ընտրել են կայսերության ամենախուլ կողմերը, ուր ժողովուրդը դեռ գռեհկության մեջ է, ասաց, որ զանազան տեղերում ունեն գործակատարներ, իրենք փոխարինում են թղթերը գյուղացիների հետ, ստանալով նրանցից հում բերքեր, որպիսի են ալյուր, քաթան կամ տնային անասուններ և այլն։ Այդ մթերքը վաճառվում է քաղաքներում։

— Այդ ես տեսնում եմ, որ դուք գործ ունեք միայն գյուղացիների հետ,— ասաց քավոր Պետրոսը,— դրա համար էլ ձեր թղթերը մանր տեսակներից են։ Բայց պետք է ընդարձակել գործը։

Թե ինչպես պետք էր ընդարձակել, այդ մասին քավոր Պետրոսը ոչինչ չհայտնեց։ Նա առհասարակ սովորություն ուներ իսկույն չհայտնել յուր միտքը։ Բայց նրա նկատողությունը ճիշտ էր. թղթերի տեսակները հասնում էին մինչև տասն ռուբլիանոցի միայն, որովհետև նրանք գործ ունեին մանր առևտրականների հետ։

Խաչագողները հենց նույն օրից ընդունեցին մեզ իրանց ընկերության մեջ։ Եվ որովհետև բոլորի պաշտոնները որոշված էին, քավոր Պետրոսին, որպես հմուտ և փորձված մարդ կարգեցին ընկերության տեսուչ։ Իսկ ինձ, դեռ մանուկ և անվարժ համարելով, պարապմունք տվեցին ածխագործների մասում։ Իմ զորեղ բազուկները ավելի հարմար էին փայտ կտրելու համար։ Ես գոհ եղա այդ պաշտոնով, որովհետև մտածում էի, որ դա միջոց կտա ինձ բացակա լինել նրանց բնակարանից, և անտառը գնալու պատրվակով շուտ-շուտ տեսնվել Նենեի հետ։ Իմանալով, որ ես միևնույն ժամանակ լավ դրսորդ եմ, նրանք հանձնեցին ինձ և այդ պարապմունքը։ Մարդկային բնակություններից հեռու գտնվելով, նրանք խիստ հազիվ անգամ կարողանում էին միս գնել, և ապրում էին ըստ մեծի մասին որսի մսով։

Հետևյալ օրից ես մտա պաշտոնիս մեջ։ Վաղ առավոտյան առա ինձ հետ մի հրացան, մի որսորդական շուն և ճանա-

պարհ ընկա։ Ա՜խ, ո՜րքան ուրախ էի, ո՜րքան շտապում էի։ Երկու օր էր, որ չէի տեսել Նենեին։ Ես խոստացել էի ամեն օր այցելել նրան։ Այժմ ո՜րքան անհանգիստ կլիներ նա, ինձ չտեսնելով, և ո՜րքան կուրախանար, երբ կտեսներ ինձ,— ճանապարհին միշտ այդ էի մտածում։

Դեռ ձկնորսի տնակին չհասած, ծովի ափի մոտ հանդիպեց ինձ պառավը, որը ապրում էր ձկնորսի հետ։

— Որդի,— ասաց նա մի առանձին ցավակցական եղանակով,— այդ ի՞նչ արեցիք մեզ հետ. այն աղջիկը ցավով լցրեց մեր սիրտը...

— Ի՞նչ կա,— հարցրի ես սարսափելով,— հիվա՞նդ է... մեռե՞լ է... ի՞նչ է պատահել։

— Չէ, զավակս, աստված մի աբասցե, որ այդպես բան լինի,— պատասխանեց պառավը այժմ ավելի հանգիստ կերպով։— Նա այնքան լավ աղջիկ է, որ ես կցանկանայի, որ իմ աչքերը կուրանային, բայց նրան մի չար չհանդիպեր։ Նա այնքան բարի է, այնքան սիրուն է։

— Ապա ի՞նչ է պատահել,— հարցրի ես անհամբերությամբ։— Ասացեք, ինչո՞ւ եք ծածկում։

— Հիվանդ ասես, հիվանդ չէ, որդի, բայց ամբողջ գիշերը չէ քնում. հենց ա՜խ ու վա՜խ է քաշում և լաց լինում։ Ինչն է տանջում խեղճ աղջկան, աստված գիտե. բայց միշտ տխուր է և տխուր. պատառ հաց բերանը չէ դնում։ Պատահում է կամ կատուն է անցնում դռան մոտով, կամ թռչունն է թռչում, կամ տերևն է շարժվում, նա իսկույն դուրս է վազում, ժամերով նստում է դռան մոտ, նայում է և նայում դեպի ճանապարհը, կարծես, մեկին սպասում է։

Մինչ ես պառավի հետ խոսում էի, հանկարծ հայտնվեցավ Նենեն. նա երեխայի պես քարշ ընկավ իմ պարանոցից և երկար բաց չէր թողնում։

— Ինչո՞ւ ինձ խաբեցիր,— հարցրեց նա։

— Տեսնում ես, որ եկա,— պատասխանեցի ես։

— Այդպես ուշ։ Ա՜խ, որքան ես լաց եղա...

— Ինչո՞ւ էիր լաց լինում։

— Կարծում էի, որ դու էլ չես գա ինձ մոտ։

Մենք մոտեցանք խրճիթին։ Նենեն նայեց իմ որսորդական հագուստի ու զենքերի վրա և ուրախացավ։

— Դու հրացան էլ ունես, ես էլ չեմ վախենա...

— Ումի՞ց պետք է վախենաս։

— Ա՜խ, այն ավազակները...

Դարձյալ մտաբերեց չարագործներին։

— Մոռացի՛ր նրանց, Նենե, նրանք քեզ էլ ոչինչ չեն կարող անել։

Այդ գազանների վարմունքը այնպիսի վատ տպավորություն էր թողել խեղճ աղջկա վրա, որ նա առանց սարսափելու չէր կարողանում մտաբերել նրանց։ Ես միշտ աշխատում էի հեռացնել նրանից այդ հիշողությունը, մանավանդ երբ տեսնում էի, որ նա ամբողջ մարմնով դողում էր և գունաթափվում էր նրանց միտ բերելու ժամանակ։

Նենեն սկսեց փայփայել իմ որսորդական շանը, որ խիստ մտերմաբար քծնվում էր նրա շորս կողմով։

— Այդ շունը քո՞նն է,— հարցրեց նա։

— Իմն է։

— Որքա՜ն լավ շուն է, նա կծում է, այնպես չէ՞. ումը որ ցույց տալու լինես, կկծե՞։

— Կխեղդե, եթե ես հրամայեմ։

— Նա քեզ սիրում է։ Ասա թող ինձ էլ սիրե։ Դնանք խրճիթը, ես նրան կկերակրեմ։ Ինչպե՞ս է անունը։

— Համիդ։

Նենեն սկսեց կանչել շանը յուր անունով և տարավ դեպի խրճիթը, որը մի քանի քայլով միայն հեռու էր մեզանից։ Մենք ներս մտանք, ծերունի ձկնորսին տանը չգտանք. նա գնացել էր ծովի ափի մոտ ձուկ որսալու։ Ես նստեցի ճյուղերից հյուսած մահճակալի վրա։ Նենեն իմ մոտից չէր հեռանում։ Նա երեխայի նման ձեռքը դրել էր իմ ուսի վրա, նայում էր իմ երեսին և շարունակ խոսում էր առանց լռելու։

— Դու, երևի, նախաճաշիկ չես արել, սոված կլինես,— հարցրեց նա, —ես քեզ համար ուտելու մի բան կպատրաստեմ։ Տես, այդ ելակները ես եմ քաղել անտառից, պահեցի քեզ համար։ Դու խո սիրո՞ւմ ես ելակներ։

— Ես քեզ պատվիրեցի, որ անտառը չգնաս, Նենե։

— Հեռու չեմ գնացել, նայի՛ր, այդ մոտիկ տեղից քաղեցի։— Նա վազեց դեպի լուսամուտը, սկսեց ցույց տալ ինձ։

— Ոչ, այնտեղ էլ չպիտի գնաս։

— Դրանից հետո չեմ գնա։

Նենեն կազմեց մի պարզ նախաճաշիկ, որ պատրաստված էր տապակած ձկներից և անտառային բանջարներից։ Սեղանի վրա նա ասաց ինձ.

— Ա՜խ, որքան լավ մարդիկ են այդ ձկնորսները, ես հիմա շատ եմ սիրում նրանց։ Պառավը ինձ յուր մոտ է պառկեցնում, և գիշերը տասն անգամ նայում է, որ չբացվեմ, չմրսեմ։ Ծովից գիշերը սաստիկ քամի է փչում, ցուրտ է լինում։ Ես հիմա ծերունի ձկնորսին «պապա» եմ կոչում. նա ինձ շատ է սիրում. երեկ համբուրեց ինձ, ասաց «զավակս»։

Նախաճաշիկից հետո ես պատրաստվեցա հեռանալ։ Իմ որսորդության առաջին օրն էր, պետք էր աշխատել մի բան որսալ, որ ընկերներիս մոտ ամոթով չմնայի։ Նենեն հարցրեց.

— Դու էլի՞ գնում ես։ Ո՞ւր ես գնում։

— Անտառը, մի բան որսալու։

— Ես էլ կգամ քեզ հետ։

Հանկարծ մտաբերեց իմ պատվերը և խոսքը փոխեց.

— Չէ, ես չեմ գա. դու ասացիր, որ անտառը չգամ։

— Հա, այսպես, սիրելիս, զգույշ եղի՛ր, որ այն ավազակներին կրկին չհանդիպես, նրանք չպիտի տեսնեն քեզ, հասկանո՞ւմ ես։

— Հասկանում եմ։ Բայց դու շո՞ւտ կվերադառնաս։

— Երեկոյան։ Ամբողջ գիշերը քեզ մոտ կմնամ։

Նա ուրախացավ և մի առանձին զգացմունքով խնդրեց ինձանից։

— Թո՛ւյլ տուր, մինչև այն ծառը գամ քեզ ճանապարհ գցելու, տե՛ս, մինչև այն եղևնին, շատ հեռու չէ։

— Մինչ այն եղևնին, կարող ես գալ։

Նենեն եկավ ինձ հետ քսան քայլ միայն, որովհետև այդքան էր ցույց տված ծառի հեռավորությունը։ Նա փրկեց ինձ և դարձյալ արտասուքը աչքերում աղերսում էր, որ շուտ վերադառնամ նրա մոտ։ Խե՜ղճ աղջիկ, ո՛րքան ջերմ էր նրա մեջ սերը, դեռ մաքուր բարեկամական սերը։ Ես հեռացա։ Պառավը իմ ետևից ձայն տվեց.

— Չթողնես Նենեին մենակ, նա մեզ հանգստություն չի տա...

Դ

ԿՈՐԱԾ ՀԱՅՐ

Իմ այն օրվա որսորդությունը անցավ հաջող կերպով. ես սպանեցի մի նորահաս եղջերու և մի քանի հատ վայրենի աղավնիներ։ Բայց քավոր Պետրոսի մոտ չվերադարձա, որովհետև Նենեին խոստացել էի այն գիշերը անցկացնել ձկնորսի խրճիթում։ Ընկերներս իմ մասին անհանգիստ չէին լինի, որովհետև կմտածեին, թե որս չգտնելու պատճառով ես մնացել էի անտառում։ Բացի դրանից, ընկերության մեջ ես փայտ կըտրողների և ածուխ պատրաստողների բաժնում էի. իմ պաշտոնակիցները ըստ մեծի մասին գիշերները անց էին կացնում բացօթյա, անտառի մեջ, ածուխի խարույկների մոտ, մանավանդ որ ամառ էր, եղանակը տաք էր։

Արեգակը դեռ նոր սկսել էր թեքվել դեպի յուր գիշերային մուտքը, երբ ես վերադարձա ձկնորսի խրճիթը։ Ճանապարհին մտածում էի, թե Նենեն շատ կուրախանա, երբ կտեսնե իմ որսերը։ Նա նստած էր խրճիթի դռանը, սպասում էր ինձ։ Երբ հեռվից տեսավ, մինչև եղևնի ծառի մոտ վազեց իմ առաջը։ Այդ ծառը նրա սահմանն էր։

Նա նկատեց եղջերուին, որ քարշ էր ընկած իմ ուսից և աղավնիները, որ դրած էին իմ որսորդական մախաղի մեջ։

— Ա՜խ, ինչու՞ սպանեցիր դրան,— ասաց նա ցավալի ձայնով.— խե՜ղճ եղջերու, ով գիտե, գուցե մայր ունի... հիմա լաց է լինում դրա մայրը...

— Եղջերուն լաց չէ լինում, Նենե,— պատասխանեցի ես, հանգստացնելով նրան։

— Ինչպե՞ս լաց չէ լինում, չէ որ նա էլ աչքեր ունի,— ասաց նա և սկսեց վեր բարձրացնել իմ սպանած եղջերուի գլուխը և նայել աչքերին։

— Դրա աչքերը խփած են, դա մեռել է...— ասաց նա սոսկալով և ետ քաշվեցավ։— Դրանից հետո էլ չես սպանի, այդպես չէ՞։

— Ապա ի՞նչ որսամ։

— Գայլեր սպանիր, նրանք այնպես չար են, որպես այն

աղջակները... Ա՜խ, էլի մտքիս եկան անիրավները... դու ամ սնցիր, որ մոռանամ նրանց...

— Հա՜, սիրելիս, մոռացիր նրանց...

Մենք մտանք խրճիթը։ Պառավը դեռ նոր էր վառել ճրագը։ Ծերունի ձկնորսը վերադարձել էր ծովի ափից։ Նա այս երեկո ավելի լավ տրամադրության մեջ էր գտնվում, թեք էր ընկած ճյուղերից հյուսած մահճակալի վրա, և մի առանձին բավականությամբ ծխում էր։ Երևում էր, ծովի վրա նրա որսորդությունն էլ հաջող էր անցել։ Երբ տեսավ ինձ, գլուխը վեր բարձրացրեց, և առանց շարժվելու յուր տեղից, խիստ ջերմ բարեսրտությամբ ողջունեց։ Ես նստեցի նրա մոտ, իսկ Նենեն տեղավորվեցավ իմ կողքին։ Նա դարձյալ առանց լռելու խոսում էր, միշտ նոր և նոր հարցեր էր առաջարկում։ Իսկ ծերունին լսելով նրա անմեղ հետաքրքրությունը, ժպտում էր, ուրախանում էր։ Նա ասաց.

— Եթե Նենեի լեզուն կապես, աչքերով կխոսի, եթե աչքերը փակես, ձեռներով կխոսի։ Ամեն ինչ դրա մոտ խոսում է։

— Այսպիսի կրակոտ բնավորությունները չեն կարող լուռ մնալ,— պատասխանեցի ես։

Նենեն գլուխը քարշ գցեց, և իրան վիրավորված ձևացնելով, ասաց.

— Ես էլ չեմ խոսի։

— Լավ, տեսնենք,— ասաց ծերունին,— կարո՞ղ ես համբերել առանց խոսելու։

Նա մի քանի րոպե լուռ մնաց, հետո սկսեց ծիծաղել։

— Չեմ կարող, չեմ կարող,— բացականչեց և վազեց ծերունու մոտ։

Ծերունին գրկեց նրան և սկսեց յուր կոշտացած ձեռքերով փայփայել նրա սև գիսակները։

Պառավը զբաղված էր ընթրիքի պատրաստություններով։ Նենեն թողեց մեզ, գնաց նրան օգնելու։ Նա արդեն այն աստիճան ընտանիացել էր այդ տան մեջ, կարծես թե այնտեղ էր ծնված և այնտեղ էր սնված։ Նա գիտեր ինչ բան ինչ տեղ էր դրած, գիտեր տան բոլոր ծակ ու ծուկը։

Անտառների խուլ առանձնության մեջ, ծովի ափի մոտ, ձկնորսի անշուք խրճիթը լուսավորված յուղային ճրագով, մի գեղեցիկ տեսարան էր ներկայացնում։ Թեև ամեն ինչ նրանում

կրում էր յուր վրա խորին չքավորության կնիքը, բայց գոհությունը և խաղաղությունը թագավորում էր բոլորի վրա։ Այդ բարի ձկնորսները երջանի՞կ էին, երջանի՞կ էին, որովհետև ոչինչ չունեին և ունենալու ցանկություն ևս չունեին։ Ի՞նչ ավելի մեծ հարստություն կարող էր լինել քան թե այն, երբ մարդ յուր ունեցածովը գոհ է։

Այդ մտածությունները զարթեցրին իմ մեջ իմ անցյալի սարսափելի հիշողությունները և երևան հանեցին սոսկալի պատկերներ։ Ես արյունոտ ձեռքերով քանի՞-քանի՞ տարիներ շարունակ, անդադար ոսկու ամբարներ էի դիզում, բայց իմ անհագ սիրտը ոչինչ բանից գոհանալ չէր կարողանում։ Ես մնում էի միշտ աղքատ, միշտ թշվառ, որովհետև ունեցվածքովս չէի բավականանում։

Ծերունին, այն անտառների պատրիարքը, կլիներ ոչ ավելի, քան հիսուն տարեկան, բայց նրա երկաթի կազմվածքը կորցրել էր յուր ամրությունը։ Նա ծերացել էր ավելի վաղ, քան թե ներում էր նրա հասակը։ Երևում էր, որ նա յուր կյանքում շատ դժբախտությունների էր հանդիպել, շատ տանջանքներ էր կրել, որոնց հետքերը դեռ մնում էին նրա տխրամած ճակատի վրա։ Առանձնության մեջ, հեռու աշխարհից, բնակվելով լայնատարած ծովի ափի մոտ, երևի, նրա ալիքների մեջ նա կամեցել էր թափել յուր անցյալ կյանքի դառնությունները։

Բայց ինչ որ ավելի էր ինձ զարմացնում, դա էր նրա արտասանությունը։ Մենք խոսում էինք ռուսաց լեզվով։ Ես այդ լեզվով այնքան վարժ էի խոսում, որ ոչ ոք չէր կարող կասկածել, որ ես ռուս չեմ։ Բայց նրա ինչ ազգից լինելը դեռ ես չգիտեի. նրա արտասանությունը ինձ բոլորովին խորթ էր թվում։ Նույն կասկածը, որպես ես նկատում էի, ուներ ծերունին և իմ վերաբերմամբ։ Իմ վարժ խոսելը չէր կարող նրան համոզել, թե ես ռուս եմ։ Իմ դեմքը, իմ գծագրությունը, իմ սև մազերը բոլորովին հակառակ վկայություն էին տալիս իմ մասին։

Ընթրիքը արդեն պատրաստ էր. մենք բոլորեցինք սեղանի շուրջը. Նենեն նստեց իմ մոտ, իսկ պառավը նստեց ծերունու մոտ։ Իմ որսորդական սրվակի մեջ մնացել էր բավական արաղ, ես տվեցի ծերունուն, նա խմեց։ Սառած ուղեղը տաքացավ. նա սկսեց ավելի և ավելի կենդանանալ։ Բայց բոլորովին

առասպելական մի երևույթ էր ներկայացնում այդ ծածկամիտ ալևորը։ Նա յուր մասին ամենևին չէր խոսում, և երբ յուր վրա խոսք էր լինում, միշտ աշխատում էր խույս տալ կամ հարեվանցիորեն անցնել, առանց մի որոշ միտք հայտնելու։ Բայց ես նրա երեսի խորշոմների մեջ նկատում էի մի գաղտնիք, որ ամենայն զգուշությամբ թաքցնում էր։

Ես խմացրի նրան արաղի մնացորդը ևս։

Սկզբում խոսակցությունը խիստ հասարակ բաների վրա էր. ծերունին խոսում էր ծովի վրա, ձկների տեսակների վրա, խոսում էր, թե որքան յուր «պառավը» օգնում է իրան, շորացնում է, պատրաստում է ձկները, և ինքը տարեները մի քանի անգամ կարողանում է քաղաք գնալ, յուր ձկնեղեղները վաճառելու համար և այլն։ Բայց ո՞վ էր այդ պառավը, արդյոք նրա կի՞նն էր. ազգականն էր,— այդ մասին ոչինչ չէր խոսում։

Նենեն և պառավը շուտով հեռացան ընթրիքի սեղանից. մեր խոսակցությունը նրանց չէր զբաղեցնում։ Պառավը քաշվեցավ մի անկյունում, սկսեց նիրհել, որովհետև շատ հոգնած էր, իսկ Նենեն մոտեցավ ճրագի լույսին, սկսեց մի բան կարել։ Նրան այնոր պառավը ընծայել էր յուր լավ հագուստներից մեկը, որ ինքը չէր գործածում, և Նենեն այդ հագուստը ձևում էր, հարմարեցնում էր յուր հասակին։

Ես և ձկնորսը մնացինք մենակ։

— Շա՞տ ժամանակ է, որ դուք այդ ծովի ափի մոտ եք բնակվում.— հարցրի ես։

— Ավելի քան վեց տարի։

— Միշտ ձո՞ւկ էիք որսում։

— Այո՛։

— Իսկ առա՞ջ։

— Այդ մի հարցրու...

Մեջ մտավ Նենեն, յուր կարը բերելով և ինձ ցույց տալով.

— Տե՛ս, Մուրադ, ինչպես լավ կարեցի. այստեղ շատ լայն էր, նեղացրի. այստեղ երկայն էր, կտրեցի. այդ կոճակներն էլ պիտի փոխեմ. այն ժամանակ ավելի լավ կլինի։

Ես գովեցի նրա աշխատությունը, նա ուրախացավ և դարձյալ գնաց նստեց ճրագի մոտ։

Բայց Նենեի հետ խոսելու ժամանակ ես չէի նկատել, թե

որպիսի խռովության մեջ էր գտնվում ծերունին, երբ նա լսեց իմ անունը, «Մուրադ»։

— Մուրա՛դ...— կրկնեց նա խորհրդավոր ձայնով և դարձավ դեպի ինձ, հարցնելով.

— Դա ռուսի անուն չէ։

— Ապա ի՞նչ ազգի անուն է։

— Այսպիսի անուն կրում են հայերը։

— Ես էլ հայ եմ։

— Մի՞թե...— ասաց նա և խորին մտածության մեջ ընկավ։

Ոչինչ հարկ չկար առաքինի ծերունու մոտ թաքցնել իմ ազգությունը. ես այդ անում էի միայն այն ժամանակ, երբ պետք էր խաբել մեկին։ Բայց այդ խրճիթի մեջ վերին աստիճանի անաղնվություն կլիներ, եթե ես անկեղծ չլինեի։ Ծերունին ավելի հետաքրքրությամբ հարցրեց.

— Ո՞ր երկրից եք։

— Պարսկաստանից։

Նրա հետաքրքրությունը ավելի ևս գրգռվեցավ։

— Ճշմարի՞տ եք ասում։ Ո՞ր գավառից։

— Սալմաստից։

— Ո՞ր գյուղից։

— Սավրա գյուղից։

Այժմ տիրեց նրան մի տեսակ խռովություն, մի տեսակ սոսկում, որպիսին տիրում է այն մարդկանց, որոնք անգիտությամբ ընդունում են իրանց տանը մի անծանոթ հյուր, որին սկզբում լավ մարդ էին համարում, իսկ հետո հայտնվում է, որ նա անպիտանի մեկն է։ Երևում էր, որ ծերունին տեղեկություններ ուներ Պարսկաստանի կամ Սավրայի հասարակության մասին։ Նա հարցրեց.

— Ինչպե՞ս է ձեր հոր անունը։

— Սաֆար։

— Իսկ մո՞ր անունը։

— Նազանի։

— Ո՞ւմ աղջիկն էր ձեր մայրը։

— Նրա հայրը կոչվում էր Բարսեղ, իսկ մոր անունը Եզիսա էր։

Ծերունին բոլորովին գունաթափվեցավ։

— Ինչպե՞ս էր կոչվում ձեր պապը։

— Ալո, և մեր տոհմն նրա անունով կրում էր Ալոյան ազգանունը։

— Որդի՞ս...— գոչեց ծերունին և մարեցավ կուրծքիս վրա։

Վերջին բառը նա արտասանեց հայերեն լեզվով։

Ես բոլորովին ապշած էի, կարծում էի, թե տեսածս երազ էր։ Մի՞թե դա իմ հայրն էր։ Այդ ի՞նչ անակնկալ դեպք էր, մի այնպիսի խուլ, մոռացված տեղում, ձկնորսի մենավոր խրճիթի մեջ, գտնել նրան, որը վաղուց արդեն մեռած կամ կորած էր համարվում յուր ընտանիքի համար։

Իմ առաջին հոգսը եղավ նրան ուշքի բերել։ Խեղճը ամբողջ կես ժամ մնաց իմ գրկում անմռունչ. լեզուն կապվեցավ, միայն աչքերը բաց էր անում, նայում էր իմ վրա, իսկ երբեմն արձակում էր խուլ հառաչանքներ, և դարձյալ ուշաթափ էր լինում։

Պառավը, որ այդ միջոցին նիրհում էր խրճիթի մի անկյունում, զարթնեց, և տեսնելով ծերունուն, սարսափի ճիչ բարձրացրեց և սկսեց լաց լինել։ Ոչ սակավ վախեցավ և Նենեն։ Նա թողեց յուր կարը, վազեց իմ մոտ և անդադար հարցնում էր.— տեր աստված, այդ ի՞նչ պատահեց, ի՞նչ եղավ նրա հետ։

Ես նրանց հանգստացրի, թե վտանգ չկա, թե անվնաս ուշագնացություն է, շուտով կանցնի։

Ես դեռ գրկած ունեի հորս ալևոր գլուխը, և անբախտ որդու ուրախության արտասուքը թրջում էր նրա ճերմակ մազերը։

Հանկարծ նա ուշքի եկավ և սոսկալի կատաղությամբ ինձ մի կողմ հրելով, աղաղակեց.

— Հեռո՜ւ, անզգամ... դու խաբում ես... խաչագողները միշտ խաբում են... ի՞նչ սատանայական նպատակ քեզ իմ խրճիթը բերավ... ես չեմ ուզում տեսնել ձեր գարշելի երեսը... բավակա՞ն է, ո՜րքան տանջվեցա... ո՜րքան չարիքներ կրեցի ձեր ձեռքից... Ես չեմ հավատում... Դու իմ որդին չես... դու սուտ ես խոսում... դու խաբում ես ինձ... հեռո՜ւ այստեղից...

Նա կրկին մոտեցավ, բռնեց իմ օձիքից և աշխատում էր բռնությամբ դուրս ձգել յուր խրճիթից։ Այդ միջոցին մեջ մտան Նենեն և պառավը, և գրկելով ծերունուն, տարան նստեցրին յուր տեղը։

Նա գլուխը քարշ գցեց, երկու ձեռքով բռնեց յուր աչքերը և արտասվախառն հեկեկանքով սկսեց ինքն իրան խոսել.

— Իմ Մուրադին ես չեմ տեսել... ես նրան մոր արգանդում թողեցի... այնուհետև հեռացա հայրենիքից և կրկին չվերադարձա այդ ապականված երկիրը... Երբ իմ Մուրադը ծնվեց. մայրը գրեց ինձ. «Ճիշտ քեզ նման է, քո օրինակն է... աջ թևքի վրա մի սև խալ ունի, ինչպես դու ունես...»։

Վերջին խոսքերը լսելու ժամանակ ես մոտեցա նրան, և աջ թևքս մերկացնելով, ցույց տվի.

— Նայեցեք հայր, տեսեք այն խալը, որի մասին մայրս գրել էր ձեզ։

Նա աչքի լույսից զրկված Իսահակի նման սկսեց շոշափել իմ թևքը. նրա վրա կար մի սև խալ արծաթյա փոքրիկ դրամի մեծությամբ։

— Մուրա՜դ... զավա՜կս... դո՜ւ ես, դու...— ձայն արձակեց նա և գրկեց ինձ։

Երկար նա բաց չէր թողնում ինձ յուր թևքերի միջից, երկար նրա աչքերից հեղեղի նման հոսող արտասուքը թրջում էր իմ գլուխը։ Վերջը, կարծես արյան հետ դուրս բխեցին նրա սրտի հետևյալ բառերը.

— Ա՜խ, ինչպե՞ս խաբեցին ինձ...

Ո՞վ էր խաբել նրան, ո՞ւմն էին վերաբերում նրա խոսքերը, այդ մասին նա ոչինչ չխոսեց։ Ես էլ չկամեցա հարցնել, որ ավելի չգրգռեմ նրա ցավերը։ Մի այնպիսի սարսափելի տանջանքի հազիվ կարող էր դիմանալ նրա զառամյալ սիրտը։ Անցյալի դառն և տխուր հիշողությունները, իսկ ներկայի անակնկալ ուրախությունը միօրինակ տանջում էին նրան։ Ես չկամեցա ավելի վրդովել նրա բորբոքված զգացմունքները։ Թող տվի մինչև առավոտյան ամեն ինչ կպարզվեր։

Նենեն և պառավը զարմացած նայում էին մեզ վրա։ Մեր բոլոր խոսակցությունից նրանք ոչինչ չհասկացան, որովհետև, մենք խոսում էինք մեր մայրենի լեզվով։ Նրանք կամ լաց էին լինում, երբ տեսնում էին մեր արտասուքը, կամ ուրախանում էին, երբ նկատում էին մեր ուրախությունը։

Գիշերից բավական անցել էր, երբ պառավը իմ օգնությամբ ծերունուն իր անկողնի մեջ դրեց։ Բայց նա չկարողացավ հանգիստ քնել։ Ամբողջ գիշերը անցկացրեց զառանցության մեջ. միշտ ա՜խ էր քաշում, արձակում էր դառն հառաչանքներ և

լռում էր։ Իսկ շատ անգամ ես լսում էի միևնույն խոսքերը. «Ա՜խ, ինչպես խաբվեցա ես»։

Ես նստած էի նրա անկողնի մոտ և լի տխուր մտածություններով նայում էի անբախտ հոր տառապանքների վրա։ Արդյոք ի՞նչ մի դժոխային կետ կար այդ ողորմելի մարդու ճակատագրի մեջ, որ այնպես խռովեցնում էր նրան։ Ո՞վ գիտե, ինչեր էին անցել նրա գլխով, ո՞վ գիտե, յուր կյանքում ո՛րպիսի դառն արկածների էր հանդիպել նա, որ այնպիսի սոսկալի կերպով տանջվում էր, երբ հիշում էր դժբախտ անցյալը։

— Երևի, դուք վատ լուրեր հաղորդեցիք նրան,— հարցրեց պառավը։

— Ընդհակառակն, իմ հաղորդած լուրերը խիստ ուրախալի էին։

— Ապա ինչո՞ւ այդպես խռովության մեջ ընկավ նա։

— Չգիտեմ։

— Այդպես շատ անգամ պատահում էր նրա հետ,— խոսեց պառավը։— Երբեմն ամբողջ օրերով պատառ հաց բերանը չէր դնում, և ոչ գնում էր ձուկն որսալու, այլ անշարժ նստած խրճիթի դռանը, ժամերով նայում էր ծովի վրա, նայում էր անցուդարձ անող նավերին ու նավակներին և մտածում էր։ Ի՞նչ էր մտածում նա, ես այդ չգիտեի. նա երբեք յուր սիրտը ինձ մոտ չէր բաց անում. բայց ես շատ անգամ նկատում էի նրա աչքերում արտասուք։ Լինում էին օրեր, որ նա ուրախ էր, խոսում էր, ծիծաղում էր և մինչև անգամ հանաքներ էր սնում։ Բայց հանկարծ, կարծես թե, մի չար ոգի անցավ նրա մոտով, և նա մտաբերեց մի ինչ-որ բան, և կրկին տխուր մռայլը պատում էր նրա դեմքը, սկսում էր հառաչել, սկսում էր անիծել յուր բախտը...

Ամբողջ գիշեր մենք անքուն մնացինք։ Նենեն նույնպես չպառկեց քնելու, երբ տեսավ, որ ես նստած եմ։ Խեղճ աղջիկը չգիտեր ինչո՞վ փարատեր իմ տխրությունը։ Նրան հայտնի չէր դժբախտ հոր և նույնքան դժբախտ որդու ցավալի անցյալը։ Նա չգիտեր, որ մենք աշխարհի ամենաթշվառ արարածներից մեկն էինք, անտուն, անհայրենիք, հալածված դառն հանգամանքների բռնությունից, թափառում էինք երկրե-երկիր։ որպես մի արմատախիլ եղած, չորացած բույս, որին փոթորկա-

յին հողմի անգթությունը տարուբերում է յուր կատաղի հոսանքի հետ...

Այո՛, Նենեն չգիտեր ինչով մխիթարել ինձ։ Որդին հանդիպում էր կորած, մոռացված հորը, և փոխանակ ուրախանալու, տրտմում էր, որովհետև այդ հանդիպումը պիտի բաց աներ նրա առջև կատարված պատահարների մի սոսկալի վիհ, որ մինչև այնօր նրան անհայտ էր...

Նենեն միայն հարցրեց ինձ.

— Դու առաջուց ճանաչո՞ւմ էիր այդ ծերունուն։

— Նա իմ հայրն է,— պատասխանեցի ես։

Ե

ԳԱՂՏՆԻՔԸ ԼՈՒԾՎՈՒՄ Է

Առավոտյան հայրս զարթնեց խիստ վաղ։ Առաջին բառը, որ արտասանեց, էր իմ անունը։ Ես իսկույն մոտեցա նրան։

— Եկ գրկեմ քեզ, որդիս, թույլ տուր արևի լուսով մի լավ ուրախանամ քեզանով,— ասաց նա ծնողական հոգեզմայլությամբ։

Ես ընկա նրա գիրկը։

— Ա՜խ, ինչպես խաբեցին ինձ...— դարձյալ կրկնեց նա գիշերվա խոսքը, խորին կերպով հոգվոց հանելով։

— Դու ամբողջ գիշեր անհանգիստ էիր, հայրիկ, համարյա չքնացիր, շատ անգամ կրկնում էիր այդ խոսքը, պատմիր, ո՞վ խաբեց քեզ և ի՞նչ բանում խաբեցին։

— Անցյալը մի հիշեցրու ինձ, որդի,— պատասխանեց նա տխուր ձայնով,— դու ինձ այն ասա՛, մայրդ կենդանի՞ է։

— Ես նրան բոլորովին առողջ թողեցի տանը և մի քանի անգամ նամակներ եմ ստացել. շատ ժամանակ չէ, որ նոր նամակ ևս ստացա, նա բոլորովին առողջ է։

— Անիծյա՜լ լինես դու... ինչպես խաբեցին ինձ...

Նա դարձյալ հիշեց խաբված դրությունը։

— Իսկ քույրե՞րդ,— հարցրեց նա։

— Նույնպես առողջ են, մեծ քույրս մարդի է գնացել, այժմ երկու երեխա ունի. միջնակ քույրս նշանված է։

Նրա չիջած աչքերի մեջ փայլեց ուրախության մռայլ նշույլը։ Իսկ իմ հետաքրքրությունը ավելի գրավում էր այն գաղտնիքը, թե ո՞ւմն էր անիծում հայրս կամ ո՞վ էր խաբել նրան։ Երկար թախանձելուց հետո վերջապես հոժարեցավ նա պատմել։

— Գուցե մայրդ ասած կլինի, որ դեռ դու չէիր ծնված, երբ ես աղքատությունից ստիպված, թողեցի հայրենի երկիրը և դիմեցի դեպի պանդխտություն, օտար աշխարհներում բախտ որոնելու։ Բացի ծանր պարտքերից, ես ոչինչ չթողեցի իմ ընտանիքի ապրուստի համար։ Մի քանի կտոր կալվածքներ ունեի, նրանք ևս պարտքերիս փոխարեն գրավ էին դրված։ Մի քանի տարի երկրե-երկիր թափառում էի. բայց ոչ մի գործում հաջողություն չէի գտնում։ Հայրենիքից ստացված տեղեկությունները միշտ տխուր էին լինում և անմխիթար։ Վերջապես հասավ Պարսկաստանի սարսափելի ժանտախտի լուր։ Այդ միջոցին հայտնվեցավ ինձ մոտ մի խաչագող, որ նոր էր եկել մեր երկրից և ուներ յուր հետ մի նամակ իմ անունով։ Նա պատմեց, թե որպիսի սոսկալի կոտորած կատարեց ժանտախտը և որպես դատարկվեցավ ամբողջ երկիրը։ Իսկ նամակի մեջ ավելի մանրամասնություններ կային։ Նամակը մեր գյուղի քահանայի գրածն էր։ Նա սկսվում էր մխիթարական խոսքերով, որպես սովորաբար գրում են այն անբախտներին, որոնք կորցրել էին իրանց սիրելիներին։ Նրա մեջ կար մի երկար ցուցակ, թե մեր գյուղացիներից ո՞վ մեռավ կամ ո՞վ ազատվեցավ։ Մեռելների թվումն գրած էր քո մոր, քույրերիդ և քո անունը։ Իմ ամբողջ ընտանիքը ժանտախտի զոհ էր դարձել։ Այդ անիրավը բերանացի էլ պատմեց, թե որպիսի պատուհասի ենթարկեց աստված իմ ընտանիքը, և ավելացրեց, որ իմ թողած բոլոր կայքերը պարտքերիս փոխարեն տիրեցին...

Վերջին խոսքերի ժամանակ ծերունու ձայնը փոքր առ փոքր թուլացավ, և նա դժվարանում էր շարունակել յուր պատմությունը։ Նենեն տվեց մի բաժակ կաթ խմելու։ Նա փոքր-ինչ կազդուրվեցավ և շարունակեց.

— Այլևս ոչինչ չէր մնում, ես կորցրել էի այն բոլոր առարկաները, որ սիրելի էին ինձ, որ կապում էին իմ սիրտը իմ հայրենիքի հետ։ Այդ տեղեկությունները այնքան ծանր և սպանիչ ազդեցություն ունեցան իմ վրա, որ ես մի քանի ամբողջ

ամիսներ հիվանդ պառկեցա։ Նամակաբերը չհեռացավ իմ հիվանդության մահճից և ամենայն հոգատարությամբ խնամք էր տանում իմ վրա։ Մինչև իմ առողջանալը նա բոլորովին գրավեց իմ բարեկամությունը, և ես իմ անձը շատ երախտապարտ էի համարում նրան։ Ես ընդունեցի նրան իմ մոտ, և որպես ընկեր գործում էինք միասին։ Ես վճռեցի այլևս չվերադառնալ իմ հայրենիքը, ուր պիտի գտնեի սիրելի կնոջ, սիրելի զավակներիս գերեզմանները միայն, և իմ դատարկացած տունը, այն ևս պարտատիրոջ ձեռքը անցած։ Ամեն ինչ իմ մեջ պիտի զարթեցներ տխուր հիշողություններ։ Հայրենիքը ատելի էր դարձել ինձ...

Նրա ձայնը դարձյալ սկսեց դողդողալ, դարձյալ դառն զգացմունքները խեղդում էին նրան։ Նենեն տվեց նրան երկրորդ բաժակ կաթը, բայց այս անգամին չընդունեց, և փոքր-ինչ հանգստանալուց հետո շարունակեց.

— Ես այն ժամանակ հարուստ էի, ունեի մի քանի հազար պատրաստի ոսկիներ սնդուկի մեջ, իմ նոր ընկերը այն աստիճան գրավել էր իմ հավատարմությունը, որ ես ամեն ինչ հանձնել էի նրա ձեռքը։ Անցան մի քանի տարիներ, նա ինձանից չէր բաժանվում։ Մեր գործերը օրըստօրե լավանում էին և օրըստօրե այդ մարդը սիրելի էր դառնում ինձ։ Բայց ի՞նչ գիտեի, որ նրա բոլոր մտերմությունը կեղծ էր, խաբեություն էր. մի գիշեր, իմ քնած ժամանակ, նա հարձակվեցավ իմ վրա, և սրի մի քանի հարվածներ տալով, ես անզգա և ուշաթափ մնացի. իսկ նա, ինձ արդեն սպանված համարելով, հափշտակեց իմ ոսկիները և՝ փախավ։ Ահա այն սպիները, որ թողեց իմ վրա այն չարագործը...

Հայրս ցույց տվեց մի քանի խորն ընկած վերքերի նշաններ յուր մարմնի վրա և շարունակեց.

— Այդ պառավը, որ դու տեսնում ես իմ խրճիթի մեջ, ես իմ կյանքով նրան եմ պարտական։ Նա մի անբախտ այրի էր, ինձ վեր առեց յուր մոտ, խնամք տարավ և առողջացրեց։

Հորս ցավալի պատմության ժամանակ ես գտնվում էի մի տեսակ զարհուրանքի մեջ, թե ո՜րքան դժբախտությունների պատճառ է դառնում սուտը, խաբեությունը և նենգավոր մտերմությունը։ Հորս խաբված դրությունից առաջ էր եկել մեր ամբողջ ընտանիքի թշվառությունը։ Եթե նա այդ պատահարներին

չհանդիպեր, եթե նա յուր ժամանակին վերադարձած լիներ յուր հայրենի երկիրը և յուր վրա առներ յուր ընտանիքի խնամատարությունը, ես երբեք ստիպված չէի լինի ոտքս դուրս դնել իմ հոր տնից և անբարոյականության մեջ չէի ընկնի։

— Ինչպե՞ս էր այն չարագործի անունը,— հարցրի ես, երբ հայրս վերջացրեց յուր պատմությունը։

— Օհան, դու կարծեմ կճանաչես նրան։

— Կարապետի որդին, ինչպես չեմ ճանաչում։

— Հենց նա։

Ես սառած մնացի։ Այդ անիրավը ոչ սակավ մոլորության մեջ էր գցել և ինձ և իմ մորը և մեր բարեկամներին։ Ես այդ անցքը պատմեցի հորս։

— Լսիր, հայրիկ, թե ինչպես վարվեց նա մեզ հետ, այնտեղ Պարսկաստանում, երբ վերադարձավ պանդխտությունից։ Նա լուր բերեց, թե դու մեռած ես և յուր հետ ուներ մի քանի խաչագողների նամակներ, որոնք նույնպես հաստատում էին քո մահը։ Նա բերել էր և քո ոսկյա մատանին, որի վրա փորագրված էր քո անվանական կնիքը։ Այդ հիշատակը հանձնեց նա իմ մորը։ Մորս ծանոթ էր այդ մատանին։ Մեր դրացի կնիկները համոզում էին նրան, որ թաղե մեր գերեզմանատանը, և քո անունով մի շիրիմ կանգնեցնե։ Բայց նա չէր հավատում մեզ հասած տեղեկություններին, նրան բավական հայտնի էին խաչագողների խաբեբայությունները։ Հետո Օհանը շատ անգամ գալիս էր մորս մոտ, և իրան ցույց էր տալիս որպես մեր տան ամենալավ բարեկամը։ Վերջը նա առաջարկեց պսակվել մորս հետ, բայց մայրս մերժեց նրա առաջարկությունը։

— Ավազակ,— գոչեց հայրս ատամները կրճտացնելով,— այստեղ հափշտակեց ոսկիներս, իսկ այնտեղ աշխատում էր խլել կնոջս...

Մի քանի րոպե մնաց նա տխուր լռության մեջ, և ապա դարձավ ինձ այդ խոսքերով.

— Ահա այդպես են այդ չարագործները... զգուշացի՛ր որդի, հեռու կացի՛ր այդ մարդերից... Նրանց համար այս աշխարհում ոչ մի սուրբ բան չկա։ Ես էլ մի ժամանակ պատկանում էի այդ փչացած, անբարոյականացած հասարակությանը... ես էլ շատ տներ եմ քանդել, շատ ընտանիքներ եմ անբախտացրել, իմ ձեռքերս էլ մաքուր չեն մնացել անմեղների

արյունից... Թո՛ղ այս խրճիթը, հեռացիր, որդի, չարագործ հորից, որովհետև աստուծո անեծքը կա նրա վրա...

Խե՜ղճ հայր, նա դեռ չգիտեր, որ որդին էլ ընկած է նույն ցեխի մեջ։ Նա հարցրեց.

— Իսկ քեզ, որդի, ո՞ր բախտը ձգեց այս հեռավոր անկյունում։

Ես համառոտ կերպով պատմեցի վարպետիս դարբնոցում պատահած անցքը, մորս ինձ քավոր Պետրոսին հանձնելը, իմ գործունեությունը պանդխտության մեջ, և վերջապես այն դեպքը, որ մեզ դեպի այդ անտառը բերեց և ձգեց դրամանենգների ընկերության մեջ։

Այդ բոլորը լսելու ժամանակ թշվառ ծերունին ավելի և ավելի սարսափում էր, մինչև նա կտրեց իմ պատմությունը, բացականչելով.

— Անբա՜խտ որդի, դու էլ կորա՜ծ ես... —և արտասուքը հեղեղի նման սկսեց թափվել նրա աչքերից։

Փոքր-ինչ հանգստանալուց հետո յուր խռովությունից, շարունակեց նա.

— Լսիր, որդի, ամեն մի ապականված շրջանի ժահահոտությունը այնքան զգալի չէ լինում, երբ մարդ ապրում է նույն շրջանի մեջ, որովհետև նրա զգայարանքները սովորում են, ընտելանում են այն օդին։ Իսկ երբ դրսից, մաքուր օդ շնչելուց հետո մոտենում ես ապականված շրջանին, այն ժամանակ միայն զգում ես նրա թունավոր արտաշնչությունը։ Դու այժմ այդ անմաքուր շրջանի, այդ փչացած հասարակության մեջ ես գտնվում և զգալ չես կարող, թե որպես քո անձը օրըստօրե վարակվում է և բարոյապես փտում է։ Մի օտար ձեռք պետք է, որ քեզ դուրս քաշե նրա միջից, և այդ թող լինի հայրական փորձված ձեռքը։ Աղաչում եմ քեզ, հեռացիր այդ չարագործներից, քանի որ բոլորովին ընկած չես... քանի որ բոլորովին կորած չես...

Նա իմ ձեռքը բռնել էր յուր դողդոջուն ափերի մեջ։ Վերջին խոսքերը արտասանեց արտասուքով և ծնողական սրտի խորին ցավակցությամբ։ Ես խոստացա կատարել նրա պատվերը, բայց մտածում էի, թե ի՞նչ հնարքով պետք է բաժանվել քավոր Պետրոսից։ Այդ սարսափելի մարդը այն աստիճան կաշկան-

դել էր ինձ, որ նրանից անջատվելը շատ հեշտ չէր։ Հայրս պատասխանեց.

— Ես լավ եմ ճանաչում այն անիրավին... նրա մեջ գութ կամ խիղճ կոչված բաները չկան։ Ես գիտեմ նրա բոլոր արարմունքը... աշխարհի ամեն կողմերում եղել է նա, և որտեղից անցել է, թողել է յուր ետևից արտասուք և դժբախտություն...

— Այսուամենայնիվ, նա ինձ հետ միշտ լավ է եղել. նա մինչև անգամ որդու պես սիրում էր ինձ։

— Հավատում եմ։ Բայց ի՞նչ նշանակություն ունի խաչագողի համար սերը, բարեկամությունը։ Լսիր, որդի, իմ ալևոր մազերը այդ չարագործների մեջ ճերմակացան։ Նրանք չգիտեն, թե ինչ է ճշմարիտ բարեկամությունը, որքան սերտ են նրանց ընկերական կապերը, որքան մտերմական են նրանց հարաբերությունները, այնքան զարհուրելի է լինում վրեժխնդրությունը, երբ ընկերը յուր ընկերի մեջ նշմարում է մի ամենափոքր կասկած։ Բայց կասկածել նրանք միշտ կարող են, որովհետև ում խիղճը մաքուր չէ, նա կասկածավոր է լինում։

Այդ բոլորը ուղիղ էր, ես առանց հորս ասելու էլ գիտեի։ Բայց ինչպես հեռանալ քավոր Պետրոսից առանց նրան կասկած պատճառելու,— դրանումն էր գլխավոր հարցը։ Ես հարցրի.

— Ինչպե՞ս թողնեմ նրա մոտ իմ այսքան տարվա վաստակը։ Ես ունեմ մեծ հարստություն, և բոլորը նրա մոտ է։

Նա պատասխանեց վրդովված ձայնով.

— Զգի՛ր այն ապականված արծաթը, նա թույնից ավելի մահաբեր է։ Խաչագողի հարստությունը մի փոսի մեջ քամուց հավաքված ցամաք տերևների նման է. փչեց հակառակ քամին, և ահա նա ցրիվ եկավ։ Ավազակը երբեք չի հարստանա. նա այսօր հարուստ է, վաղը աղքատ։ Այդպես են բոլոր խաչագողները։ Շատ անգամ նրանք մեծ գումարներ են ձեռք բերում, շատ անգամ մի սև փող չունեն ծախսելու։ Որովհետև նրանք ոչ միայն սովոր չեն ազնիվ աշխատանքին, այլ նրանց ծանոթ չէ ոչ փողի կանոնավոր կերպով վաստակելը և ոչ նրա տնտեսաբար սպառելը։ Թե առաջինը և թե երկրորդը նրանց մոտ չափազանցության է հասնում և մեջտեղում մնում է միշտ ոչինչ, այսինքն՝ աղքատություն։

Ես ոչինչ չպատասխանեցի. հայրս շարունակեց.

— Լսի՛ր, որդի, ով որ յուր կյանքում մի որևիցե հիվանդությամբ վարակված է լինում, երկար բժշկվելուց հետո, ինքը նույն հիվանդության բժիշկն է դառնում։ Ես այդ բոլորը փորձել եմ իմ կյանքում, իմ անձի վրա։ Փախի՛ր հեռացի՛ր այդ մարդկանցից, որպես ժանտախտից, ազատության ուրիշ հնար չկա...

Ես հարցրի հորից, երբ նրանք այս աստիճան ատելի էին, ինչու էր նա յուր խրճիթը հիմնել նրանց բնակարանի մոտ։

— Նրանք նոր են եկել, ութ ամիս չկա, որ նրանք բույն են դրել այդ անտառների մեջ։ Իսկ ես բնակվում եմ այդ ծովի ափի մոտ ավելի քան վեց տարի։ Երբ նրանք հայտնվեցան, ես պատրաստվում էի հեռանալ այստեղից, բայց հիվանդությունս արգելք եղավ։ Ես պառկած էի, ես հիվանդ էի, մի քանի շաբաթ հազիվ կլինի, որ փոքր-ինչ հաղիվ կազդուրվել եմ։

— Բայց ի՞նչը ստիպեց քեզ առանձնանալ այդ ծովի ափի մոտ։

— Դու լսեցիր իմ պատմությունը, թե որպես խաբվեցա ես, թե որպես դավաճանեց և կողոպտեց ինձ հավատարիմ ընկերը... Այն օրից ես ատեցի աշխարհը, հեռացա մարդկանցից, և վճռեցի այդ մոռացված խրճիթում, այդ ծովի ափերի մոտ, անցկացնել իմ դժբախտ ծերությունը...

Ես խոստացա բաժանվել քավոր Պետրոսից, խոստացա թողնել այն հարստությունը, որ անարդար միջոցներով էր հավաքված և ասեցի հորս.

— Ես ընդունում եմ քո խորհուրդը, ես այլևս չեմ վերադառնա այն մարդկանց մոտ և կմնամ այստեղ։ Բայց դու ևս, հայր, խոստացիր, որ մոլորված որդու հետ կվերադառնաս մեր հայրենիքը, կուրախացնես կարոտ մորս, կուրախացնես անտեր մնացած զավակներիդ։

— Խոստանում եմ,— պատասխանեց նա։— Ես հենց այս օրից կսկսեմ ճանապարհի պատրաստություն տեսնել։

Այդ միջոցին Նենեն և պառավը մոտեցան մեզ։

Հայրս դարձավ դեպի պառավը, ասելով.

— Գրկիր այդ երիտասարդին, դա իմ որդին է։

Նա ուրախությամբ սկսեց համբուրել ինձ։ Ոչ սակավ ուրախ էր և Նենեն։ Նա երեխայական հրճվանքով պտտվում էր իմ շուրջը, ծիծաղում էր, հանաքներ էր անում հորս հետ, շնոր-

հավորում էր նրան, որ բախտ ունեցավ գտնել յուր որդուն, և ասում էր.

— Տեսա՞ր, պապա, եթե ես չլինեի, եթե Մուրադը ինձ այստեղ չբերեր, դու, կարելի է չտեսնեիր նրան։

Զ

ԸՆԿԱ ԾՈՒՂԱԿԻ ՄԵՋ

Ես վճռեցի երբեք չվերադառնալ քավոր Պետրոսի մոտ։ Երեք օր էր, հորս խրճիթից դուրս չէի եկել։ Ես դատապարտված էի նույն վիճակին, որպես Նենեն,— չերևալ խաչագողներին մինչև այստեղից հեռանալինք։

Բոլոր ժամանակը ես և հայրս զբաղված էինք ճանապարհի պատրաստություններով։ Նենեն շատ ուրախ էր, անդադար շտապեցնում էր մեզ. «Գնա՞նք, գնա՞նք, ասում էր, հեռանանք այստեղից»։ Պառավը նույնպես տխուր չէր երևում. նա շուտով հաշտվեցավ հորս հետ բաժանվելու մտքի հետ, երբ իմացավ, որ նա մի հեռու երկրում կին ունի, զավակներ ունի, և ցանկանում էր, որ ծերունին գնա յուր ընտանիքը ուրախացնե։ Հայրս յուր խրճիթը բոլոր պարագայքով թողնում էր պառավին։

Ամեն ինչ պատրաստ էր ճանապարհի համար, մնում էր գրաստներ վարձել, տեղափոխվել մինչև մերձակա քաղաքը և այնտեղից փոստային սայլակներով առաջ գնալ։ Չորրորդ օրը վաղ-առավոտյան ես ուղևորվեցա դեպի մոտակա գյուղը գրաստներ վարձելու համար։

Դուրս գալով հորս խրճիթից, զգում էի իմ մեջ մի անբացատրելի խաղաղություն. իմ սիրտը լցված էր անսահման ուրախությամբ. ես ինձ բախտավոր էի համարում և զոհ։ Կարծես թե, ես ազատված լինեի խիստ ծանր շղթաներից, որ հարաժամ ճնշում էին, հարաժամ տանջում էին ինձ։ Այո՛. ես ազատված էի քավոր Պետրոսի կապանքներից, ազատված էի անբարոյական շրջանից...

Որպես մի մարդ, որ դեռ հազիվ զգաստացել է յուր կատաղի արբեցողությունից, ես մտաբերում էի իմ սարսափելի անցյալը... տեսնում էի այն խորին անդունդը, լցված ամեն տեսակ ապականություններով, ուր բարոյապես ընկած էի ես... Ո՞վ դուրս հանեց ինձ այնտեղից։— Նենեն և հայրս։ Հայրս սովորեցրեց լինել բարի, իսկ Նենեն սովորեցրեց սիրել...

Նախախնամության մատն էի տեսնում այդ բոլոր դեպքերի մեջ, որ առիթ տվին ինձ ազատելու Նենեի կյանքը և հանդիպելու հորս։ Թե առաջինը և թե վերջինը առաջնորդեցին ինձ դեպի ուղղություն։ Եթե Նենեն չլիներ, ես առիթ չէի ունենա հորս տեսնելու, իսկ եթե հորս չտեսնեի, ես գուցե միշտ կմնայի խաչագողների խումբի մեջ...

Դեռ արևը չէր ծագել, դեռ տիրում էր վաղորդյան մռայլը։ Գնալով դեպի մոտակա գյուղը, ես իմ գլխում կազմում էի մի գեղեցիկ ծրագիր մեր ապագայի մասին։ Ես պատկերացնում էի սիրելի հայրենիքը... իմ և հորս վերադարձը... մորս և քույրերիս ուրախությունը... և մեր խաղաղ ու հանգիստ կյանքը հայրենական օջախի կողքում...

Բայց ինձ տանջում էր մի ամենադժվարին հարց, թե ի՞նչ պետք էր անել Նենեի հետ։ Ես գիտեի, որ նա ինձանից չի բաժանվի, ես զգում էի, որ նրան թողնել չեմ կարող... Այդ հարցը երկար զբաղեցնում էր իմ միտքը, երկար ես տարուբերվում էի զանազան մտածությունների մեջ։ Իմ սիրային ասպարիզում միմյանց հետ մրցում էին երկու էակներ՝ Նենեն և Սառան։ Որի՞ն պետք էր ընտրել...

Ճանապարհը, որ տանում էր դեպի մոտակա գյուղը, պետք է անցներ այն ձորի միջով, ուր գտնվում էր խաչագողների բնակարանը։ Այդ պատճառով ես որոշել էի արևածագից առաջ, առավոտյան մթության պահուն, անցնել այնտեղից, որպեսզի նկատելի չլինեմ։

Դեռ բավական մութն էր, երբ հասա այնտեղ։ Բայց իմ ուշադրությունը գրավեցին որոտման խուլ ձայներ, կարծես թե, արձակում էին ատրճանակներ. ես կանգնեցա։ Ձայները լսվում էին ուղիղ այն կողմից, որտեղ գտնվում էր նրանց բնակարանը։ Հետաքրքրությունը մոլորեցրեց ինձ։ Ես բարձրացա մի բլուրի վրա, սկսեցի այնտեղից նայել։ Իմ առջև բացվեցավ մի հրեղեն լճակ։ Ամբողջ ձորը վառվում էր կրակի մեջ։ Հրդեհը խաչագողների բնակարանից տարածվել էր անտառի մեջ։ Ամառային տոթից ցամաքած ծառերը այրվում էին։

Կրակի բոցերը դուրս էին հոսում խաչագողների բնակարանից և տարածում էին նրա շուրջը սարսափելի լուսավորություն։ Միլիոնները այրվում էին։ Մի կողմում ածած էին թղթերի կիսավառ կապոցները։ Հրդեհը ոչնչացնում էր կեղծ գործի կեղծ արդյունքը...

Հրդեհի լուսավորության միջից երևում էին զինված մարդիկ, որոնք, կարծես թե, խուզարկություններ էին անում։ Ոմանք կալանավորված էին՝ շղթաների մեջ պահված էին, ոմանք փախչում էին։ Անտառի մեջ հետամուտ էին լինում, որոնում էին փախստականներին։ Մթության մեջ ընդդիմադրություններ էին կատարվում, այն ժամանակ լսելի էր լինում ատրճանակների ձայնը։

Ի՞նչ էր պատահել։ Ինչ էլ որ լիներ, այդ սոսկալի տեսարանը մի լավ բան չէր գուշակում։ Ես մտածեցի հեռանալ։ Այդ միջոցին լուսավորությունը ավելի տարածվեցավ, կարծես, ամբողջ հորիզոնը վառվում էր կրակի մեջ։ Այժմ միանգամից բոցավառվելով, այրվում էին չոր խոտի դեզերը, որ խաչագողները հավաքել էին իրանց ջորիների համար։ Լուսավորությունը հասնում էր մինչև այն բլուրը, որի գագաթին կանգնած էի ես, իմ պատկերը մի անշարժ արձանի նման նկատված էր բլուրի բարձրության վրա։ Ստորոտից լսելի եղավ մի ձայն.

— Դա էլ մեր ընկերն է...

Իսկույն վրա հասան մի քանի զինված մարդիկ և կալանավորեցին ինձ։ Եղելությունը արդեն հայտնի եղավ ինձ. ես ընկա ծուղակի մեջ...

Խաչագողը, որ մատնեց ինձ, միևնույն անձն էր, որին կոչում էին «էշի ականջ»։ Նրան փախչելու ժամանակ ճանապարհից բռնել էին և ետ էին բերում։ Այդ մարդը հայտնի էր ամբողջ խումբի մեջ յուր վատություններով։ Ես դարձա նրան, ասելով.

— Չե՞ս ամաչում...

— Դու պիտի ամաչես,— պատասխանեց նա լրբաբար,— դու մատնեցիր մեզ, և կարծում էիր, թե ինքդ ազա՞տ կմնաս...

— Ե՞ս մատնեցի ձեզ...

— Այո՛, դու ապա ո՞վ։ Դու խաբեցիր մեզ, դու հեռացար մեզանից, դու թաքնվեցար ծերունի ձկնորսի խրճիթում, որտեղ թաքցրել էիր և այն աղջկան, որին հանձնել էին քեզ սպանելու համար...

— Այդ դու որտեղի՞ց գիտես։

— Ես երկու ամբողջ գիշերներ խավարի միջից, ձկնորսի խրճիթի լուսամուտներից նայում էի ձեզ վրա... և այդ հրդեհը պիտի կատարվեր այնտեղ... և ձեզ բոլորիդ պիտի այրեինք կրակի մեջ... բայց դու, անպիտան, ավելի ճարպիկ գտնվեցար մեզանից... մի քածի համար մատնեցիր մեզ...

Ես ոչինչ չպատասխանեցի. ինձ ավելի ծանր էր լսել նրա հայհոյանքները և անպատիժ թողնել նրան, քան թե այն կապանքները, որ այդ րոպեում կաշկանդել էին ինձ։ Սկսեցին մեզ տանել դեպի խաչագողների բնակարանի կողմը։

«Էշի ականջի» խոսքերից երևաց, որ իմ բացակայությունը կասկածանքի մեջ էր ձգել ընկերներիս. նրանք սկսել էին որոնել ինձ և գտել էին ձկնորսի խրճիթում։ Նեննին կենդանի տեսնելը ավելի շփոթեցրել էր նրանց, մանավանդ քավոր Պետրոսին, որին ես հավատացրել էի, թե սպանել եմ այդ աղջկան։

«Էշի ականջին» հանձնված էր եղել գաղտնի հսկել իմ գործողությունների վրա, տեղեկություններ հավաքել, մինչև ընկերությունը կպարզեր այդ մթին և կնճռոտ հարցը և կտար յուր վճիռը իմ մասին։ Բայց ես ինչո՞վ էի առիթ տվել նրանց մտածելու, թե ես եմ մատնել նրանց,— այդ ես հասկանալ չկարողացա։

Արեգակը յուր առաջին ճառագայթները խառնեց հրդեհի բոցերի հետ, երբ մեզ հասցրին խաչագողների բնակարանի մոտ։ Երևում էր, որ իրանք, խաչագողները, կրակ էին տվել այդ բնակարանին, որպեսզի մոխրի մեջ անհետացնեն իրանց արհեստի նշանները։

Երբ բոլորովին մոտեցա, տեսնում եմ՝ խաչագողներից մի քանիսը շղթայակապ պահվում են զինվորների ձեռքում։ Ամբողջ ձորը շրջապատված էր բազմաթիվ պահապաններով։ Այսուամենայնիվ, մի քանիսին հաջողվել էր փախչել, թեև ոստիկանությունը վրա էր հասել այն ժամանակ, երբ բոլորը դեռ քնած էին։

Քավոր Պետրոսը նույնպես կալանավորների թվում էր. նա խիստ անխռով կերպով կանգնած էր յուր շղթաների մեջ և նույնպես հպարտ էր, որպես միշտ։ Առաջին անգամ չէր, որ

նրա հետ պատահում էին այսպիսի «խաղեր»։ Նա յուր կյանքում գուցե հարյուր անգամ գործ էր ունեցել ոստիկանության հետ... Երբ տեսավ ինձ, խիստ դաժան կերպով նայեց իմ վրա և ոչինչ չխոսեց. բայց ես նրա թունավոր հայացքի մեջ կարդացի այդ խոսքերը. «Դու էլ, Մուրադ, դավաճանեցիր ինձ...»։

Խուզարկությունը անտառի մեջ տևեց կես օր. խաչագողներից ոմանք, տնակի ստորերկրյա գաղտնի ճանապարհներով դուրս էին եկել և անհետացել էին ծառերի ու թուփերի մեջ։ Նրանց գտնել չկարողացան։ Կալանավորների թիվը, բացի ինձանից, չորս հոգի էին։

Հրդեհը արդեն բոլորովին լափել էր այն բնակարանը, որ մոտ մի տարի եղել էր կենտրոն սարսափելի շարագործությունների։ Երբ ամեն ինչ վերջացած էր, մեզ սկսեցին տանել դեպի մերձակա քաղաքը։ Մի բան, որ իմ կորստյան այն դառն ճգնաժամում մտաբերեցի ես, էր Նենեն։ Խե՜ղճ աղջիկ, դու դարձյալ մնացիր անտեր...

Երկյուղը և հուսահատությունը, որ այսպիսի դեպքերում տիրում են հանցավոր սրտին, ինձ բոլորովին զգալի չեղան։ Կարծես թե ես համոզված էի, թե հարկավոր էր որ այսպես լիներ, թե այն ճանապարհը, որ ես բռնել էի, ինձ պետք է հասցներ մինչև այստեղ, թե ես պետք է պատժվեի և իմ տանջանքներով քավեի իմ գործած մեղքերը...

Երեք օրից հետո մեզ հասցրին մերձակա քաղաքը, և փակեցին բերդի մեջ։ Գիշեր էր։ Բանտի մի անկյունում, թեք ընկած հարդի վրա, հեռու իմ ընկերներից, տխուր մտածմունքների մեջ տանջվում էի ես։ Հազիվհազ ինձ համար ծագեց կյանքի մի նոր առավոտ, հազիվհազ ինձ ազատված էի համարում մի անբարոյական հասարակությունից, հազիվհազ սկըսվում էր ինձ համար արդար ապրուստի մի նոր եղանակ, և ահա տխուր հանգամանքները ինձ ձգեցին մի նոր դժբախտության մեջ։ Ինչո՞վ կվերջանար այդ, ես չգիտեի, բայց համոզված էի, որ ես ընդերկար պիտի բաժանված մնամ սիրելի ծնողներից, սիրելի բարեկամներից, և ես գուցե մյուս անգամ չպիտի կարողանամ տեսնել Նենեին։

Այդ մտածությունների մեջ էի ես, երբ իմ ընկերները, բանտի մի այլ կողմում խումբով նստած, թուղթ էին խաղում, ծիծաղում էին, հանաքներ էին անում, կարծես թե իրանց տանը

լինեին։ Քավոր Պետրոսը նրանց մոտ էր. նա չէր խաղում, բայց նայում էր նրանց խաղի վրա։ Նա բաժանվեցավ խմբից և մոտեցավ ինձ։

Մի մարդու թե բարոյական և թե մարմնական տգեղությունները այնքան նշմարելի չեն լինում, երբ նայում ես նրանց վրա բարեկամի աչքով։ Բայց երբ սկսեցիր ատել նրան, այն ժամանակ միայն հայտնվում է նա յուր բոլոր այլանդակությամբ։ Այսպես ներկայացավ ինձ քավոր Պետրոսը, երբ մոտեցավ յուր սովորական սառնությամբ։

— Դու քեզ վա՞տ ես զգում,— հարցրեց նա։

— Ոչ,— պատասխանեցի ես։

— Ապա ինչո՞ւ ես այդպես տխուր։

— Բանտում ուրախ չեն լինում։

— Այդ իրավ է, բայց տխրելն էլ թուլասրտության նշան է։

Նա նստեց իմ մոտ և սկսեց զանազան խրատներ տալ։

— Չվախենաս, Մուրադ, այդպիսի դեպքեր շատ են պատահում մեզ հետ։ Էգուց, շատ կարելի է սկսվի մեր քննությունը, դու պետք է չհայտնես քո իսկական անունը, քո հայրենիքը և ինչ ազգի կամ ինչ դավանության պատկանելը։ Ընտրիր քեզ համար մի կեղծ անուն, ձևացրու քեզ ուրիշ ազգից և ուրիշ երկրից։ Ուրացի՛ր ինչ մեղադրանք որ կդնեն քեզ վրա. այնուհետև քո ազատվելը դժվար չի լինի։

Ես պատասխանեցի խորին զզվանքով.

— Որքան խաբեցի, որքան սուտ խոսեցի, բավական է։ Ես այսուհետև պետք է ճշմարիտը խոսեմ։

Նա սկսեց զարմացած կերպով նայել իմ երեսին։

— Ի՞նչ է պատահել քեզ հետ, գժվե՞լ ես, ի՞նչ է։

— Ես այժմ ավելի խելացի եմ, քան թե երբեք։

— Դու կամենում ես կորցնե՞լ քեզ։

— Ես այն օրից կորա, երբ սկսեցի հետևել քո խրատներին։

Այժմ նրա դեմքի վրա երևացին բարկության նշաններ։ Բայց շուտով անցավ բարկությունը և ցավակցական եղանակով խոսեց նա.

— Ես չէի հավատում, Մուրադ, և հիմա էլ չեմ հավատում այն կասկածանքին, որ քո ընկերները ունեցան քո մասին, իբր թե դու, առանց որևիցե պատճառի, հեռացար նրանցից և մատ-

նեցիր նրանց։ Բայց ես հավատում եմ մի բան, որ այժմ քո խելքը յուր տեղումը չէ. ես նկատում եմ քո մեջ խելագարության նշաններ։ Դու այլևս այն չես, ինչ որ էիր առաջ։

— Այդ իրավ է, ես այն չեմ, ինչ որ էի առաջ, և այդ ապացույց է, որ այժմ իմ խելքը յուր տեղումն է, իսկ առաջ խելագար էի։

Նա կրկին զայրացավ, ասելով.

— Ողորմելի՜, ո՞վ փչեց հիմա գլխումդ այդ ցնորքները։ Դու կարծում ես, որ ես այժմ չգիտեմ, թե ինչպես մի թափառական աղջկա համար խաբեցիր ինձ։ Նրա սերը խելքից հանեց քեզ, և դու վճռեցիր բաժանվել քո բարերարից, որ այնքան տարի յուր որդու պես սնուցել էր քեզ։ Բայց աստված պատժեց քեզ քո ապերախտության համար. քո ճանապարհը կրկին դարձրեց դեպի մեր կողմը, որ այդ բանտին, այդ շղթաներին մասնակից լինես և դու։

— Այդ բանտը, այդ շղթաները իմ հին մեղքերի համար է,— պատասխանեցի ես։— Բայց եթե ես գործել եմ իմ կյանքում մի բարի գործ, այդ այն է, որ ես խաբեցի քեզ և չկատարեցի քո պատվերը՝ զրկել կյանքից մի անմեղ աղջկա։

— Որին դու սիրեցիր։

— Այո՜։

— Որը մեր բոլորին մատնեց։

— Այդ սուտ է, այդ զրպարտություն է։ Նա չէ մատնել ձեզ։

Նա պատասխանեց ինձ ավելի հանդիմանական-եղանակով.

— Ինչո՞ւ ես խաբում ինձ, դու մի քանի րոպե առաջ ասում էիր, որ այլևս սուտ չի պիտի խոսես։ Միթե քեզ հայտնի չէ՞, որ այն աղջիկը սպառնացել էր մատնել ամբողջ ընկերությունը. այդ պատճառով էլ վճռել էին սպանել տալ նրան։ Մի դիպվածով դու նրա կյանքը ազատեցիր և դրանով միջոց տվեցիր նրան կատարելու յուր վրեժխնդրությունը։

— Բոլորովին սխալ է ձեր ենթադրությունը,— պատասխանեցի ես։— Ձեզանից բաժանվելուց հետո, եթե դուք հանձնել էիք. «էշի ականջին» լրտեսել իմ գործողությունները, այն ևս պետք է լավ հայտնի լինի ձեզ, որ այն աղջիկը ձկնորսի խրճիթից ոչ մի տեղ չի հեռացել, ուրեմն և չէր կարող մատնել ձեզ։

— «Էշի ականջը» գտավ քեզ ձկնորսի խրճիթում քո բացակայությունից երկու օր հետո. նա չէր կարող տեղեկություններ հավաքել, թե մինչև այնօր թե դու և թե այն աղջիկը ինչպես էիք անցուցել։

Մեր վիճաբանությունը քավոր Պետրոսի հետ տևեց երկար, ես դարձյալ չկարողացա համոզել նրան, թե Նենեն մեղավոր չէ մատնության գործի մեջ։ Հանգամանքները ինքնըստինքյան այնպես էին կազմվել, որ Նենեի կարծիքական վարմունքը հավանական էին դարձնում։ Այդ անբախտ աղջիկը ընկել էր խաչագողների ձեռքը. նրան շարշարել էին. նա սպառնացել էր, եթե իրան բաց չթողնեն, կմատնե նրանց. այդ երկյուղը առիթ էր տվել խաչագողներին սպանելու նրան. ես ազատեցի նրա կյանքը. և մի քանի օրից հետո կատարվեցավ մատնությունը, խաչագողներին կալանավորեցին։ Այլևս ո՞ւմ վրա կարող էին նրանք կասկած ունենալ, եթե ոչ կամ իմ, կամ Նենեի վրա։ Քավոր Պետրոսը, թեև չէր հավատում, որ ես կդավաճանեի նրան, այնուամենայնիվ, նա ինձ բոլորովին արդար ևս չէր համարում, հայտնելով նույն միտքը, որ եթե ես նրա հրամանը կատարած լինեի, և Նենեին սպանած լինեի, այնուհետև այդ դժբախտությունը տեղի չէր ունենա։ Նրա բարկությանը չափ չկար, թե ինչպե՞ս ես համարձակվեցա խաբել նրան։ Բայց այդ բարկությունը մասամբ մեղմանում էր, երբ նա ի նկատի էր առնում իմ սիրահարությունը, որը նրա կարծիքով մինչև խելագարության էր հասցրել ինձ։ Բայց նա, որպես երևում էր, դեռ չգիտեր հորս հետ իմ հանդիպելը, եթե հայտնեի, գուցե բոլորովին կփարատեր թե նրա և թե ընկերներիս կասկածը իմ անհավատարմության մասին։ Քավոր Պետրոսը ներող էր, երբ իրավացի փաստեր էին ներկայացնում։ Բայց ես այլևս փույթ չունեի իմ անձը արդարացնելու նրա առջև։ Նա հեռացավ, հետևյալ խոսքերը ասելով.

— Օրենքի դատապարտությունից ավելի հեշտ է ազատել քեզ, բայց ես չգիտեմ, ինչպե՞ս դու պիտի ազատվես քո ընկերների վրեժխնդրությունից...

Այդ խոսքերը սարսափելի էին, սարսափելի էին ավելի այն պատճառով, որ դուրս էին գալիս մի խաչագողի բերանից։ Բայց ես լսեցի խորին արհամարհանքով, և այդ ավելի վիրավորեց նրան։ Այդ անգութ մարդը դեռ սիրում էր ինձ, թեև

թաքցնում էր յուր սերը, դեռ մտածում էր իմ մասին, դեռ հոգ էր տանում իմ վրա։ Ես տեսա, թե ինչպես նա վշտացած կերպով հեռացավ, գնաց նստեց բանտի մթին անկյունում, և գլուխը քարշ գցած, տխուր մտածությունների մեջ ընկավ։ Մի՞թե նա զգում էր, որ ես նրա դաստիարակության թշվառ զոհն էի...

Երբեք չէր պատահել, որ ես այնպիսի համարձակությամբ խոսեի քավոր Պետրոսի հետ, որպես այն գիշեր։ Կարծես թե, հանցավոր կապանքները մի տեսակ ազատություն են շնորհում նրան։ Շղթաների մեջ թե մեծավորը և թե ստորադրյալը հավասար իրավունք են վայելում։ Մեր վիճաբանությունը թեև խիստ տաք էր, բայց անցավ հանդարտ կերպով, այնպես որ, մեր մյուս ընկերները, որոնք զբաղված էին թղթախաղով, ոչինչ չլսեցին։ Այժմ նրանք վերջացրել էին իրանց խաղը և սկսել էին միմյանց հետ զանազան հանաքներ անել։ Ինձ վրա ուշադրություն անգամ չէին դարձնում։ Ես խորին զզվանքով լսում էի նրանց զվարճությունները։

— Էգուց կսկսվի մեր հարսանիքը, —ասում էր մեկը հիշեցնելով քննության սկսվիլը։

— Տո՛, Հարո, այդ քանիե՞րորդ անգամն է, որ ոտներդ հագնում ես այդ զանգակալները,— հարցնում էր մի մանկահասակ խաչագող ծերունի ընկերից, ցույց տալով նրա շղթաները։

— Սատանան գիտե, մոռացել եմ հաշիվը,— պատասխանում էր ծերունին ինքնաբավական ժպիտով։

—Դու նրանից այդ հարցրու, թե քանի անգամ փախել ես «կարմիր տնից»,— մեջ մտավ մի կարճահասակ խաչագող։

«Կարմիր տուն» կոչում էին նրանք Սիբիրը։

— Այդ հարցնելու հարկ չկա,— պատասխանեց առաջինը,— չե՞ս մտածում, հաշիվը ճակատի վրա գրած է, երկու դրոշմ, կնշանակե երկու անգամ։

— Այս անգամ երրորդ դրոշմը կդրվի,— պատասխանեց ծերունի Հարոն, շարունակելով յուր ժպիտը.— երե՞ք դրոշմ վատ չէ, խորհրդավոր թիվ է։

Այդ ժամանակ դեռ գործադրվում էր այն օրենքը, որ աքսորականների ճակատի վրա դրոշմ էին դնում։

— Ապա դու ինչպե՞ս փախար բերդից,— հարցրեց մեկը յուր ընկերից, որին կոչում էին Զաքո։

— Այդ ի՞նչ մի զարմանալու բան է,— պատասխանեց Զաքոն,— շատ հեշտ կերպով։ Ինձ դրեցին բերդը։ Ընկերս, որ ավելի հանցավոր էր, քան թե ես, չբռնվեցավ։ Նա յուր հագուստն ու կերպարանքը փոխեց, և իրան ձևացնելով իմ ազգական, թույլ տված օրերում գալիս էր ինձ տեսության։ Ամեն անգամ բերում էր ինձ համար սպիտակ հաց և այլ ուտելիքներ։ Վերջապես հասավ զատկի տոնը, որ կալանավորների վրա թափում է յուր ողորմությունը։ Բարեպաշտ մարդիկ իրանց տան պատրաստությունից նրանց համար բաժին են ուղարկում։ Այդ տոնին չմոռացվեցա և ես։ Ընկերս բերեց ինձ համար մի ամբողջ հաց և սառը փլավ։ Այդ երկրի հացերը, փառք աստծո, մեր բարակ և թափանցիկ լավաշները չեն, նրանք այնքան ահագին են, որ ամեն բան կարելի է նրանց մեջ թաքցնել։ Հացի մեջ դրած էր փոքրիկ սղոց և աբրեշումի երկայն պարան։ Առաջինը բավական էր բանտի լուսամուտներից մեկի երկաթյա վանդակապատը կտրելու, իսկ երկրորդով այնտեղից ցած իջնելու։

— Իսկ պահապանները չնկատեցի՞ն։

— Զատկի տոնին մի՞թե կարելի է մի պահապան գտնել, որ հարբած չլինի։

Այս տեսակ խոսակցություններ տևեցին մինչև կեսգիշեր։ Ես այլևս լսել չկարողացա։ Մի կողմից հոգնածությունը, մյուս կողմից, հոգեկան տանջանքը այն աստիճան թուլացրել էին ինձ, որ երկար արթուն մնալ չկարողացա։

Է

ՆԱ ԻՆՁ ՁԹՈՂԵՑ

Անցել էր ավելի քան մի տարի այն օրից, որ ես կալանավորվեցա, որ ես բանտում մաշվում էի։

Հենց առաջին անգամ, երբ տարվեցա քննիչի մոտ, ես պարզ կերպով խոստովանվեցա բոլորը, ինչ որ գործել էի։ Ես ոչինչ չթաքցրի, ես մինչև անգամ ցույց տվի այն բաները, որ ինձանից չէին հարցնում։ Ես մի ըստ միոջե պատմեցի թե ինչպես անմեղ սրտով դուրս եկա հայրենիքից, ինչպես ընկա խա-

չագողների հասարակության մեջ, ինչպես հետզհետե ընտելացա չարագործության, ինչեր արեցի, ինչեր կատարեցի, և վերջապես ո՞րպես հորս խրատով բաժանվեցա այդ հասարակությունից, և պատրաստվում էի բոլորովին հեռանալ նրանցից, բայց հանկարծ բռնվեցա։

Ամեն ինչ անկեղծաբար պատմելուց հետո, ես հույս ունեի, որ կարդարացնեն ինձ, տեսնելով, որ ես բոլորովին անդիտակցաբար ընկած էի այդ հանցանքների մեջ, և ի նկատի առնելով, որ ես արդեն զղջացել էի իմ մեղքերը, հասկացել էի իմ մոլորությունները և դարձել էի չար ճանապարհից։

Բայց այնպես չեղավ, ինչպես ես սպասում էի։ Իմ անկեղծ խոստովանությունը ավելի ծանրացրեց իմ վրա իմ մեղքերը։ Ես ինքս ինձ համար վկա դարձա և հաստատեցի իմ հանցանքները։ Իմ զղջման վրա ուշադրություն չդարձրին, մտածեցին միայն ապաշխարության մասին։

Մի քանի ամսից հետո, քաղաքի բարձր դատարանում կարդացին իմ դատապարտության վճիռը։ «Զրկել ամեն իրավունքներից, աքսորել մինչև մահ տաժանական աշխատությունների մեջ»...

Ես շատ տխրեցա, երբ լսեցի այդ վճիռը. չներել հանցավորին, որ արդեն զղջացել էր, որ արդեն ուղղվել էր։ Բայց ո՞վ է քննում մարդու սիրտը։ Նա այնպիսի մի խորության մեջ թաքնված է, որ ամենասրատես դատավորի աչքն այնտեղ թափանցել կարող չէ։

Իմ ընկերները նույնպես աքսորանքի դատապարտվեցան, բայց նրանք այնպես տխուր չէին, որպես ես. նրանք ավելի զայրացած էին երևում, քան թե տրտում։

Շրջապատված զինվորներով, դատարանից կրկին տարան ինձ բանտը։ Երբ հասցրին բերդի դռանը, դեռ ներս չմտած, իմ ետևից մի ճիչ, մի ցավալի աղաղակ բարձրացավ։ «Ես պետք է տեսնեմ նրան... մի՞թե դուք գութ չունեք... մի՞թե դուք աստված չունեք... մարդիկ, ինչո՞ւ եք արգելում ինձ... ես պետք է տեսնեմ նրան... թողե՞ք, որ տեսնեմ նրան...»։

Ես ետ նայեցա։ Այդ խոսքերը լսվում էին մի աղջկա բերնից, որ պատառոտած հագուստով, հերարձակ, այս կողմ և այն կողմ էր ընկնում, աշխատում էր պատառել զինվորների շարքը և մոտենալ ինձ։ Պահապանները հրացանների սվիններով հեռացնում էին նրան, բայց նա դարձյալ առաջ էր մղվում։

Որքան և խռովության մեջ լինեի այն րոպեում, որքան և իմ գլուխը և խելքը ինձ չէին պատկանում, այսուամենայնիվ, այն սրտաշարժ պատկերի մեջ ես ճանաչեցի Նեննին։ Խե՜ղճ աղջիկ, ո՞րտեղից հայտնվեցավ նա...

Նրա աղաղակից դուրս եկավ բանտապահը։

— Դարձյալ այն ցնորված աղջիկն է,— ասաց նա և հրամայեց հեռացնել։

Երևում էր, որ Նեննեն առաջին անգամը չէր, որ խնդրում էր՝ իրան թույլ տան բանտը մտնելու։ Նրան արդեն ճանաչում էին։ Նա խիստ ողորմելի ձայնով պատասխանեց.

— Պարոն բանտապահ, ես ցնորված չեմ... ի սեր աստուծո, զթացեք իմ վրա, թույլ տվեցեք, որ տեսնեմ նրան...

— Ո՞ւմ տեսնես։

— Այն կալանավորին, որ տանում են...

— Դու ո՞վ ես։

— Ես նրա բարեկամն եմ... թողեք տեսնեմ նրան... մի՞թե դուք աստված չունեք... եթե չթողնեք, ես դատավորի մոտ կգնամ... թագավորի մոտ կգնամ...

— Ավելի լավ կլինի, եթե գժատունը գնաս,— հեգնությամբ պատասխանեց բանտապահը և հրամայեց հեռացնել։

Նրա անգթությունը ավելի վշտացրեց ինձ, քան իմ դատապարտության վճիռը, որ այնօր կարդացին դատարանում։ Ինձ ներս տարան, դռները փակվեցան իմ ետևից, ես այլև ոչինչ չսեցի...

Ամբողջ օրը խելագարի նման էի։ Ես բոլորովին մոռացել էի իմ թշվառ դրությունը, մոռացել էի, թե ո՜րպիսի սարսափելի ապագա էր սպասում ինձ,— ես միայն մտածում էի անբախտ Նեննի մասին։ Միշտ իմ աչքերի առջևն էր այն վրդովմունքով լի աղջիկը, տեսնում էի այն հերարձակ կույսի վշտալի պատկերը, լսում էի նրա սգավոր ձայնը... Արևը մտավ, մութը պատեց, բանտի մեջ տիրում էր գիշերային խավարը։ Այդ մթության մեջ դարձյալ տեսնում էի նրան, լսում էի նրա ձայնը...

Առաջին անգամ ես զգացի շղթաներիս ծանրությունը, առաջին անգամ բանտը ներկայացավ ինձ յուր սոսկալի կերպարանքով։ Մինչև այսօր ինձ տանելի էր բոլորը։ Իսկ երբ տե-

սա, թե իմ պատճառով տանջվում է մի անմեղ հոգի, այն ժամանակ միայն հասկանալի եղավ բոլոր զարհուրանքը իմ թշվառ դրության...

Ամենքը թողեցին ինձ. իմ հավատարիմ ընկերները ինձ մատնեցին. ես կտրվեցա լույս աշխարհից... բայց նա ինձ չթողեց... Նա եկավ իմ եռևից, նա որոնում էր ինձ, հրևի երկար որոնում էր և գտավ։ Բայց գտավ բանտի մեջ, դատապարտյալների մռայլ գերեզմանի մեջ...

Այդ գերեզմանի շուրջը պտտվում էր նա, գիշերային մենավոր ուրվականի պես պտտվում էր նա, և խավարի միջից մի մարգարեուհի մեռելահարցուկի նման կամենում էր դուրս կոչել յուր սիրելիին...

Դա իրողություն էր, դա ցնորք չէր, և լսում էի նրա ձայնը, նույն սրտաշարժ, ողբալի ձայնը, որպես լսել էի ցերեկով։ Գիշերը խաղաղ էր. մարդիկ քնած էին. դրսում ամեն ինչ գտնվում էր խորին լռության մեջ։ «Թողե՛ք, տեսնեմ նրան...», այդ խոսքերը միայն հնչվում էին գիշերային լռության մեջ...

Բանտի պահապան զինվորը, հրացանը ուսին դրած, չափավոր քայլերով անցուդարձ էր անում յուր պահականոցի մոտ։ Նա նույնպես լսում էր ողբալի ձայնը, և անհետաքրքրությամբ ասում էր. «Դա այն ցնորված աղջկա ձայնն է...»։

Գիշերը ես անցուցի տենդային անհանգստության մեջ. ոչ քնած էի և ոչ արթուն։ Առավոտյան, երբ արեգակի առաջին ճառագայթները ներս ցոլացին բանտի նեղ լուսամուտներից, և ինձ համար ծագեց ուրախության լույսը, դուռը բացվեցավ, խելագարի նման ներս վազեց Նենեն։ Նրա առաջին խոսքերը կցկտուր էին և անհասկանալի։ Նա մոտեցավ, գրկեց ինձ, և երկար մնաց իմ կուրծքի վրա անխոս։ Նա նման էր մի սպանվածի որ երեսի վրա բնավ գույն չկար։ Կենդանի մնացել էին դեռ չմարած աչքերը միայն, այն լի կատաղությամբ աչքերը, որոնք իրանց խռովության մեջ ևս գեղեցիկ էին։

Նրա խռովությունը շուտով անցավ, անցավ, որովհետև գտնվում էր ինձ մոտ, որովհետև տեսնում էր ինձ։ Նա սկսեց խոսել.

— Ա՜խ, սիրելիս, եթե գիտենայիր ո՞րքան որոնել եմ քեզ... ո՞րքան ման եմ եկել...

Նրա ձայնը սկսեց խեղդվել. փոքր-ինչ հանգստացավ և ապա շարունակեց.

— Անցնում էի քաղաքից քաղաք, գյուղից գյուղ, ամեն տեղ հարցնում էի քեզ... Ա՜խ, ինչո՞ւ մարդիկ այդքան վատացել են... ամեն տեղ հալածում էին ինձ... ամեն տեղ հեռացնում էին ինձ... չէին թողնում, որ բնակարանների մեջ մտնեմ... ասում էին՝ դա ցնորված աղջիկ է...

— Ապա որտե՞ղ էիր անցկացնում դու։

— Փողոցների վրա, բաց երկնքի տակ... և ավելի հանգիստ էի, երբ գտնվում էի անապատում, կամ թաքնվում էի անտառների ծառերի մեջ... Այնտեղ լավ էր, այնտեղ մարդիկ չկային...

— Ապա ինչո՞վ էիր կերակրվում դու։

— Շատ անգամ օրերով քաղցած էի մնում... շատ անգամ ուտում էի դաշտային բանջարներ կամ կերակրվում էի վայրենի պտուղներով... Երբեմն գտնվում էին բարի մարդիկ, որոնք ինձ հաց էին տալիս։

Եվ այդ բոլորը ո՞ւմ համար, ի՞նչի համար,— մի դատապարտյալ աքսորականի համար, որ պիտի մաշվեր, պիտի ոչնչանար հանքերում...

Բայց ինձ ավելի զարմացնում էր այն, թե ինչպե՞ս թույլ տվին «խելագար աղջկան» մտնել բանտը, որի մեջ ես ամենևին խելագարության նշան չէի նկատում, միայն վերին աստիճանի անձնազոհությունը և թշվառության սաստիկ կատաղությունը նրան բախտավոր մահկանացուների աչքում խելագար էին ներկայացնում։

Նա պատմեց, թե այն օրից, որ եկել էր այդ քաղաքը և տեղեկացել էր, որ ես այն բանտումն եմ գտնվում, բանտի շրջակայքից չէր հեռանում. գիշերները անց էր կացնում նրա պատերի մոտ, իսկ ցերեկով կանգնում էր փողոցների վրա, ազաչում էր, պաղատում էր անցորդներին, պատմում էր նրանց իմ անմեղությունը, խնդրում էր, որ օգնեն ինձ։ Նա դեռ այնքան միամիտ էր, որ կարծում էր, թե ամեն մարդ իրավունք ուներ ինձ դատավոր լինելու։ Իսկ այն առավոտ, երբ բանտը մտնում էր մի երիտասարդ ակնոցավոր պարոն, նա վազեց, մոտեցավ, և գրկելով նրա ոտները, խնդրեց, որ իրան էլ թույլ տան բանտը մտնելու և յուր «սիրելիին» տեսնելու։ Ակնոցավոր պարոնը գթացավ նրա վրա, խոստացավ, որ իսկույն հրա-

ման կառնե բանտապահից։ Նա կատարեց յուր խոստմունքը, քանի որպեսից հետո նրան ներս թողեցին։

Որքան մխիթարական լիներ իմ դժբախտության տխուր ժամերում տեսնել իմ մոտ Նենեին, որքան սիրարժան լիներ նրա ծայրահեղ անձնազոհությունը, այսուամենայնիվ, ես մտածում էի. «Մի՞թե ես արժեմ դրան... ինչո՞վ է մեղավոր այն անմեղ աղջիկը, որ տանջվում է մի չարագործի համար... ինչո՞ւ ես ձգեցի նրա սրտում այն սրբազան կայծը, որ այնքան բոցավառվեցավ, որ այնքան բորբոքվեցավ, մինչև խելքից հանեց նրան... ինչո՞ւ ես խլեցի նրա հանգստությունը... Այդ բնության ազատ որդին, որի ցեղին վիճակված է կյանքի անհոգ և ավելի ուրախ բաժինը, գուցե ավելի բախտավոր կլիներ, եթե չհանդիպեր ինձ.. ինչո՞ւ ես թշվառացրի նրան... Ավելի լավ չէ՞ր լինի, որ հենց այն օրը, երբ ես նրա կյանքը ազատեցի եղեռնագործի ձեռքից, բաց թողնեի նրան։ Նա կգնար, աշխարհը լայն ու արձակ է ցիգանուհու համար,— կգնար և յուր համար նոր բախտ կորոներ...»։

Արդեն ուշ էր... այդ բոլորը պետք էր անցած համարել... ես միայն հարցրի.

— Ինչո՞ւ եկար դու, ինչո՞ւ չմնացիր հորս մոտ. նա բարի մարդ էր, կպահեր, կպահպաներ քեզ։

Դժբախտները ամեն մի դժբախտության դեպքերում այն քաղաքավարական ձևերը չգիտեն, որ պահպանում են բախտավորները միայն։ Նենեն բոլորովին պարզ կերպով պատասխանեց.

— Հայրդ մեռավ, նա մեռավ հենց այն օրը, երբ իմացավ, որ դու կալանավորված ես։

Այդ բոթը սարսափելի ներգործություն ունեցավ իմ վրա։ Նա մեռավ իմ պատճառով, մոլորյալ որդու պատճառով, ես նրա մահվանը պարտական էի...

Նենեն չկատեց իմ խռովությունը, շարունակեց պատմել։

— Այն առավոտը, երբ դու հեռացար խրճիթից և խոստացար թե երեկոյան կվերադառնաս, մենք անհամբեր սպասում էինք քեզ։ Արևը մտավ, օրը մթնեց, բայց դու չվերադարձար։ Ամբողջ գիշերը չքնեցինք, հենց նստած սպասում էինք քեզ։ Հայրդ մեր բոլորից ավելի անհանգիստ էր։ Մյուս առավոտը մինչև ճաշ դարձյալ սպասում էինք քեզ։ Հետո հայրդ ինձ յուր

հետ առնելով, գնացինք այն «ավազակների» բնակարանի մոտ, տեսնենք՝ նրանց տնակը այրված էր, ոչ ոք չկար այնտեղ։ Երբ ետ դարձանք, անտառում պատահեց մեզ մի խոզարած. նա պատմեց, թե ինչ էր պատահել։ Երբ հայրդ լսեց նրա պատմությունը, իսկույն թուլացավ և ցած ընկավ։ Ես և խոզարածը հազիվ կարողացանք նրան ուշքի բերել և հասցրինք մինչև խրճիթը։ Նույն գիշերը նա սաստիկ ջերմի մեջ էր. առավոտյան նրա մարմինը գտանք բոլորովին սառած։ Ես և պառավը թաղեցինք նրա մարմինը խրճիթից ոչ այնքան հեռու մի ծառի տակ։ Հիշո՞ւմ ես այն եղևնին, որ դու մինչև նրա մոտ էիր թույլ տվել ինձ հեռանալ խրճիթից։

— Հիշում եմ...— պատասխանեցի ես բոլորովին մեքենաբար։

— Այնուհետև ես վճռեցի գալ քո ետևից և որոնել քեզ։ Ես հիմա ամեն տեղ կգնամ. ես հիմա էլ չեմ վախենում։ Պառավը ինձ չէր ուզում թողնել, ասում էր՝ մնա ինձ մոտ, աչքիս լույսի նման կպահեմ քեզ։ Նա ինձ շատ էր սիրում. նա քեզ էլ շատ էր սիրում, այնքա՜ն լաց եղավ որ...

— Ինչո՞ւ չմնացիր նրա մոտ։

— Քեզ ինչպե՞ս թողնեի...

— Ես մի օր կվերադառնայի, քեզ դարձյալ կգտնեի... մենք դարձյալ միասին կլինեինք...

— Չէ, ես գիտեմ, ես բոլորը գիտեմ... այնտեղից, ուր քեզ պիտի ուղարկեն, մարդիկ էլ չեն վերադառնում...

— Այդ դու որտեղի՞ց գիտես։

— Ես երեկ դատարանի դռանը կանգնած էի. ինձ չթողեցին, որ ներս մտնեի, այնտեղ էլ ասում էին, թե ես խելագար աղջիկ եմ... Դրսում հարցրի, ինձ պատմեցին բոլորը...

Ես չգիտեի ի՞նչ անել նրա հետ, ի՞նչ խորհուրդ տալ, ես չունեի այս աշխարհում մի բարեկամ անգամ, որի պաշտպանությանը հանձնեի այդ անբախտ աղջկան։ Ես առանց երկար մտածելու կրկին ասացի նրան.

— Դու դարձյալ գնա պառավի մոտ, այնտեղ սպասիր ինձ։ Նա բարի կին է. նա կպահե քեզ։ Ո՞վ է իմանում, գուցե աստված կհաջողի, մի օր վերադառնամ քեզ մոտ...

— Ես քեզանից չեմ բաժանվի։

— Դու խո գիտես, թե ինձ որտեղ պիտի ուղարկեն։

— Գիտեմ։ Ես էլ կգամ քեզ հետ։

Սույն միջոցին բանտի վերակացուներից մեկը ներս մտավ, հրամայեց Նենեին հեռանալ։

— Ես այստեղ պետք է մնամ։

— Այստեղ հյուրանոց չէ, օրիորդ,— պատասխանեց վերակացուն դառն ժպիտով։

— Ես դրան մենակ չեմ թողնի։

— Բավական է, որքան միասին եք եղել...

— Մի տարուց ավել չէ, որ մենք ճանաչում ենք միմյանց։

— Ցավում եմ, որ այդքան կարճատև է եղել ձեր սերը... Այսուամենայնիվ, պետք է հեռանաք, նազելի օրիորդ։

Լսելով վերակացուի վերջին հեգնությունը, արյունս բորբոքվեցավ։

— Եթե դու կշարունակես այդպես վիրավորել մի պատվավոր աղջկա, ես քո գլուխը կջարդեմ։

— Մտածի՛ր, թե որտեղ ես գտնվում... այստեղ քո բնակած անտառները չեն...— պատասխանեց նա սառնությամբ։

— Պարոն վերակացու,— մեջ մտավ Նենեն,— մի՞թե դու քույր չունես, մայր չունես, միթե դու չե՞ս հասկանում կնոջ սիրտը։ Ինչո՞ւ ես հալածում ինձ։ Իմ Մուրադը վատ մարդ չէ, նա իմ կյանքը ազատեց մի եղեռնագործի ձեռքից... այն օրից ես սիրում եմ նրան...

— Ես այդ հասկանում եմ...— պատասխանեց վերակացուն ավելի կոպտությամբ։— Բայց բանտի մեջ չեն սիրում... Ձեզ թույլ տվեցին մտնել այստեղ պարոն բժշկապետի խնդրելով։ Բավական է, որքան տեսնվեցաք, որքան խոսեցիք։ Ասում են ձեզ, որ հեռանաք այստեղից, եթե չկամիք, որ ձեզ դուրս քաշեին։

Նենեն ավելի կամակորվեցավ։

— Ես կմնամ այս բանտում։

— Ես ձեզ խրատ կտայի, որ գժատանը մնայիք։

— Անզգութնե՛ր... բոլորը այդպես են խոսում... ես ինչո՞վ եմ գիժ...— բացականչեց Նենեն արտասուքը սրբելով։

Վերակացուն ուշադրություն չդարձրեց, կանչեց մի զինվոր, նրան դուրս քաշեցին և բանտի դռները կրկին կողպվեցան։ Ես մնացի մենակ։ Մի քանի բոպե լսելի էր լինում նրա ճիչը, աղաղակը, և շուտով նրա ձայնը անհետացավ բանտի խուլ գերեզմանական լռության մեջ։

Սարսափելի՜ դրություն։ Քո սիրած էակին հալածում են, վիրավորում են, և դու սառն աչքով պիտի նայես այդ անիրավության վրա և լռես։ Միթե ա՞յդ է նշանակությունը այն խոսքերի, որ կարդացին ինձ դատարանում. «Զրկել ամեն իրավունքներից...»։

Ի՞նչ պետք է լինի խեղճ աղջկա վերջը,— ահա այդ էր ինձ տանջող միտքը, երբ դարձյալ մնացի մենակ, երբ սպանվածի նման տարածվեցա իմ կալարանի խոնավ հատակի վրա։

Ը

ԳԱՆԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Լինում են այնպիսի բոպեներ, որ մարդ իրան բոլորովին մոռանում է։ Ես մինչ այն աստիճան զբաղված էի Նենեի վիճակով, որ ամենևին չէի հիշում, որ մոտենում է այն սարսափելի օրը, երբ ես պետք է կրեի մահվան տանջանքների առաջին փորձը։— Ինձ, բացի մշտական աքսորից, վճռել էին երկու հարյուր մտրակի հարվածներ։

Այն ժամանակ դեռ տիրում էր այդ օրենքը, որ դատապարտյալին նախքան աքսորելը, ենթարկում էին մարմնական գանահարության։ Ի՞նչ սոսկալի բան է դահճի մտրակը։ Կարծես թե ֆուրիաները առաջին անգամ դժոխքից դուրս գալով, սովորեցրին մարդիկներին այնպես տանջել իրանց նմաններին։ Ջարդել, խեղաթյուրել, անգամալուծել և ամեն զորությունից զրկել մարմինը մի թշվառականի,— ահա այդ է այն մտրակի նպատակը, որպեսզի նրան սպասող դառն աշխատությունները հանքերի մեջ ավելի սպանիչ լինեն։ Եվ այդ բոլորը կատարվում էր չարագործներին ուղղելու նպատակով։

Բայց չարագործները չէին ուղղվում։ Ես տեսնում էի որքան խիստ էր լինում նրանց պատիժը, որքան չարաչար կերպով վիրավորվում էր նրանց անձնասիրությունը, այնքան ավելի համառ էին դառնում նրանք, այնքան ավելի կամակորվում էին իրանց մոլորությունների մեջ։ Եվ այդ շատ բնական էր։

Հանցավորը մտրակների հարվածների ներքո, փոխանակ զղջալու, արձակում էր կծու հայհոյանքներ, անեծք և ավելի ոչինչ։

Կյանքի մեջ, իմ անձնական փորձերով, ես հասա այն համոզմունքին, որ ամենավայրենի գազանը անգամ ազնվանում է, ընտելանում է ավելի խաղաղ կյանքի այն ժամանակ միայն, երբ նրան սիրում ես, փայփայում ես, երբ նրան չես վիրավորում։

Իմ ընկերների մասին նույնպես վճռել էին աքսոր և գանահարություն։ Բայց նրանց պատիժը ավելի թեթև էր, քան թե իմը, երևի նրա համար, որ նրանք ամեն ինչ ուրացան, ճշմարտապես չխոստովանվեցան իրանց մեղքերը, բայց ես ոչինչ չծածկեցի, բոլորը հայտնեցի։

Այդ նախատեսեց քավոր Պետրոսը. նա ավելի փորձված մարդ էր, քան թե ես։ Եվ զգուշացնում էր ինձ ուրանալ, ոչինչ չխոստովանվել, որովհետև դրանով ավելի կհեշտացնեի դատավորների գործը, իմ մասին սաստիկ վճիռ տալու։ Այնպես էլ եղավ։ Բայց իմ խիղճը հանգիստ էր, որ գոնե իմ դատապարտության րոպեում սուտ չխոսեցի։

Վերջապես հասավ սարսափելի ճգնաժամը։

Քաղաքի բազմությունը խումբերով դիմում էր դեպի պատժարանը։ Նրանք շտապում էին հանդիսատես լինելու մի սոսկալի գործողության։ Զարմանալի հետաքրքրություն ունի ամբոխը. նրան միօրինակ զվարճություն է պատճառում թե քաղցր երաժշտության ներդաշնակությունը և թե դատապարտյալի դառն հառաչանքները, դահճի գանահարության ներքո։

Ամեն ինչ պատրաստ էր սոսկալի հանդեսը սկսելու համար։

Իմ ընկերները բավական քաջությամբ տարան իրանց փորձությունը, կարծես, թե նրանց համար շատ սովորական լիներ այդ։ Ես մինչև հիսուներորդ զարկը անցա առանց մի ձայն հանելու, առանց իմ դեմքն անգամ այլայլելու։ Մի այսպիսի արհամարհական վարմունք իմ կողմից, վիրավորեց դահիճների անձնասիրությունը, գրգռեց նրանց բարկությունը, և նրանք խստացրին հարվածների սաստկությունը։ Նույն րոպեում նրանց անգութ երեսները, կարծես ասում լինեին ինձ. «Մենք ծեծում ենք, որ ցավեցնենք քեզ, երբ դու ցավ չես զգում, դրանով վիրավորում ես մեր կատաղությունը»։

Բազմությունը վայրենի ոգևորությամբ նայում էր։ Հանկարծ նրանց ուշադրությունը դարձավ մի այլ առարկայի վրա։ Ամբոխի միջից լսելի էր լինում մի ցավալի հառաչանք։ «Մարդիկ, ինչո՞ւ եք կանգնած... մի՞թե դուք աստված չունեք... սպանո՞ւմ են... սպանո՞ւմ են... ազատեցե՞ք... աղաչո՞ւմ եմ... սպանո՞ւմ են... ազատեցե՞ք... աղաչո՞ւմ եմ... ազատեցե՞ք... Մուրադ, սիրելիս... ա՜խ, սպանում են... մարդի՜կ, դուք չե՞ք տեսնում... դուք չե՞ք լսում... սպանում են... ազատեցե՞ք... Ինչո՞ւ են սպանում... նա ավազակ չէ... նա բարի մարդ է... նա ինձ սիրում էր... նա իմ կյանքը ազատեց... մարդիկ, ինչո՞ւ չեք լսում... Ա՜խ, աստված... չեն լսո՞ւմ... ամենքը խլացել են...»։

Այն սարսափելի րոպեում, երբ մինը մյուսի ետևից հաջորդաբար շառաչում էին մտրակների զարկերը, երբ արյան կաթիլները դուրս էին ցայտում իմ մերկ մարմնից՝ այդ մահվան տագնապի րոպեում իմ ականջներին հասնում էր դժբախտ աղջկա ձայնը... Այդ ողբալի ձայնը այնքան մխիթարական էր, որ ես այլևս չէի զգում հարվածների սաստկությունը։ Ես երջանիկ էի, որ այս աշխարհում գոնե կար մեկը, որ սիրում էր դատապարտյալին, որ գիտեր, թե նա անմեղ է...

Բայց ամբոխը ծաղրեց նրան։ Ամեն կողմից լսելի էր լինում. «Դա այն խելագար աղջիկն է...»։

Թե ինչով վերջացավ իմ փորձությունը, թե ի՞նչ դրության մեջ ինձ ետ բերեցին պատժարանից, ես չեմ հիշում, միայն այսքանը գիտեմ, երբ առաջին անգամ աչքերս բաց արի, ինձ քաղաքի հիվանդանոցի մեջ գտա։ Իմ մահճակալի մոտ կանգնած էր բավական մաքուր հագնված, ակնոցավոր երիտասարդ, որի խելացի դեմքի յուրաքանչյուր գծերից արտափայլում էր բարություն և ազնվություն։ Նա ժամացույցը ձեռին բռնած հաշվում էր իմ երակի զարկը։

— Այժմ հույս կա... Ճգնաժամը անցած պետք է համարել...— ասաց նա ինքը իրան մի առանձին բավականությամբ։

Երիտասարդը բժիշկ էր. նա մի քանի պատվերներ տվեց յուր օգնականին և հեռացավ։

Մի քանի շաբաթից հետո բժիշկը գտավ ինձ ավելի առողջ։ Մտրակների հարվածներից գիշատված մարմնիս վերքերը այնքան բարվոքվել էին, որ ես կարողանում էի առանց ցավ զգալու մի կողմից մյուսի վրա շուռ գալ։ Իսկ ջերմը դեռ չէր անցել։ Իմ երևակայությունը թեև արթուն էր, բայց գտնվում էր դեռ գրգռված դրության մեջ։

Գեղեցի՜կ բան է ուղեղի այդ դրությունը։ Կյանքի բոլոր չավ և վատ տպավորությունները, որոնք նրա ծալքերի վրա մնացել էին անջնջելի, բայց որոնք բոլորովին ջնջված, անհետացած էին համարվում, հանկարծ կենդանանում են, կերպարանագործվում են և երևան հանում վաղեմի մոռացված պատկերները...

Ես ինձ տեսնում էի իմ հայրենիքում, այն հասակում, երբ դեռ պատանի էի, մի անմեղ և բախտավոր պատանի, որի օրերը անցնում էին անհոգ դատարկությամբ։ Բախտավոր էի նրա համար, որ դեռ միամիտ էի, դեռ չէի հասկանում աշխարհի չարն ու բարին։ Մայրս խրատում էր ինձ, ցույց էր տալիս կյանքի ավելի ուղիղ ճանապարհը։ Բարեսի՜րտ մայր, և այս րոպեիս տեսնում եմ քո միշտ արտասուքով լի աչքերը, քո միշտ տխուր դեմքը, որ երբեք չէր ժպտում։ Աղքատությունից սպանված, ամուսնուց զրկված, ընտանիքի հոգսերի տակ ճընշված, այդ դժբախտ կինը դարձյալ չէր մոռանում յուր զավակների օրինավոր դաստիարակությունը։

Հետո տեսնում էի ինձ վարպետիս դարբնոցում։ Դատարկամոլ պատանին սովորում է աշխատանքի։ Գործը հաջողություն է գտնում իմ ձեռքում։ Աշխատանքը, երեսի քրտինքը օրըստօրե ավելի կազդուրում են իմ ջղերը, ավելի բորբոքում են իմ եռանդը։ Սիրտս ուրախ է, խիղճս հանգիստ է, որովհետև ես կարողանում եմ իմ արդար վաստակով օգնել ոչ միայն ինձ, այլև այն անձինքներին, որոնք իմ օգնությանը կարոտ էին։ Մայրս, քույրերս ապրում են իմ ձեռքի արդյունքով։

Այնտեղ, այն դարբնոցի մուխի և սև փոշու մեջ ծագում է ինձ երանության առավոտը... յուր բոլոր վարդակարմիր գեղեցկությամբ երևան է գալիս սիրո արեգակը... նա սփռում է իմ հոգու մեջ լույս և ջերմություն... Մի նազելի օրիորդ հպեցնում է իմ սրտին յուր կախարդական մատը, և իսկույն նրա մեջ

բոցավառվում են սիրո սրբազան կայծերը... Այդ ժամանակ երջանի՜կ էի ես, երջանի՜կ էի, որովհետև գործում էի, աշխատում էի և սիրում էի...

Հանկարծ երջանկության արեգակը սկսում է խավարել... չար դևը բարեպաշտ մարդու կերպարանքով մոտենում է ինձ, խելքից հանում է, մոլորեցնում է... ես շինում եմ աղետալի բանալին... այդ բանալին բաց է անում իմ առջև կորստյան ճանապարհը... Վարպետիս դարբնոցում կատարվում է սարսափելի բարբարոսությունը... ես փախստական եմ լինում...

Մի խումբ գլխից ձեռք վեր առած պատանիներ, թաքնված անտառի անհայտության մեջ, ընդունում են ինձ իրանց գաղտնի ընկերության մեջ։ Այստեղ, մարդկային բնակությունից հեռու, ծառերի և թուփերի ամայության մեջ, ես առաջին անգամ սկսում եմ ճանաչել և սիրել հրաշալի բնությունը։ Առաջին անգամ հրապուրում է ինձ սոխակի քաղցրիկ ձայնը, առաջին անգամ ծաղիկները գրավում են ինձ իրանց անմեղ-ողջախոհական գեղեցկությամբ։ Իմ մանկահասակ ընկերների ուրախ և մշտազվարթ հասարակությունը, նրանց անկեղծ բարեկամությունը, նրանց անձնվեր մտերմությունը, առժամանակ հանգստացնում են սրտիս ցավերը, առժամանակ մոռանալ են տալիս ինձ այն սարսափելի դժբախտությունը, որին ենթարկված էի ես, և իմ պատճառով շատերը... Սիրելի ընկերներ, որտե՞ղ եք այժմ դուք, երանի՜ թե, բաժանված չլինեի ձեզանից, երանի՜ թե, միշտ ձեր հասարակության մեջ մնայի։ Դուք այնքան բարի էիք և ազնիվ, ես ցավում եմ, որ կորցրի ձեզ, որ զրկվեցա ձեզանից...

Մորս վիճակը, վարպետիս թշվառությունը, ազգականներիս հալածանքը, որոնք բոլորը շարշարվում էին տեղային զանազան օրինազանցությունների պատճառով, բաժանեցին ինձ իմ մանկահասակ ընկերների հասարակությունից։ Ես վերադարձա դեպի իմ հայրենական օջախը, օգնելու նրանց, որոնք իմ պատճառով հալածանքի էին ենթարկված...

Այդ ժամանակ կրկին դուրս է գալիս իմ առջև չար դևը բարեպաշտ մարդու կերպարանքով, առաջարկում է ինձ յուր հովանավորության ձեռքը։ Ես կրկին խաբվում եմ... կրկին մոլորության մեջ եմ ընկնում...

Նա համոզում է ինձ, թե հայրենիքի համար ես մի խորթ որդի էի դարձել, թե պետք է թողնել հայրենիքը և օտար երկրներում բախտ որոնել։ Նա խոստանում է և առաջնորդել ինձ...

Հայրս, տխուր հանգամանքներից ստիպված, հանձնում է ինձ իմ նենգավոր մենտորի ձեռքը։ Ես թողնում եմ իմ հայրենի երկիրը, որը այնքան լավ և վատ հիշատակներով կապված էր իմ սրտի և հոգու հետ։ Ձեռք եմ առնում պանդխտության գավազանը։ Այդ տխուր, ցավալի զգացմունքներով լի անջատման րոպեում, որպես մխիթարիչ հրեշտակ, հայտնվում է իմ սիրո առարկան՝ Սառան։ Նա յուր կուսական համբույրներով կնքում է մեր ուխտը, խոստանում է մինչև իմ վերադարձը սիրել և սպասել ինձ...

Աղքատությունը մղում է ինձ հեռու և հեռու, դեպի անծանոթ երկրներ։ Ինձ, բոլորովին անփորձ և միամիտ պատանիս, առաջնորդում է մի հոյակապ մարդ, մի վիթխարի չարագործ, եփված և թրծված կյանքի քուրայի ամեն փորձությունների մեջ։ Իմ բնական ձիրքերով հարուստ ընդունակությունը խիստ պըտղաբեր է դառնում իմ առաջնորդի ձեռքում։ Շուտով նրա ցանքը ընծայում է առատ և արդյունավոր հունձք, մի հունձք, որոգված բազմաթիվ զոհերի արյունով և արտասուքով... Բոլորովին անմեղ և բարեսիրտ պատանին, դա՜ռն հանգամանքների շնորհիվ, վերջապես դառնում է մի սարսափելի եղեռնագործ...

Եվ ես տեսնում էի ինձ, որպես մի քարաժայռ, դուրս կտրրված ահագին լեռան բարձրությունից, գլորվում է, գլորվում է դեպի ցած, դեպի անդունդը... Հանկարծ մթին անհայտությունից երևան են գալիս երկու ձեռքեր, աշխատում են կանգնեցնել գլորման արագ և ուժգին ընթացքը... բայց իզուր, ես արդեն հասած էի մինչև անդունդի հատակը...

Այդ հոր փրկարար ձեռքն էր, որ աշխատում էր ազատել ընկած որդուն... այդ Նենեի կախարդական ձեռքն էր, որ աշխատում էր սովորեցնել նրան սիրել բարին և գեղեցիկը...

Իմ կորստյան խորին անդունդի մեջ հայտնվում է մխիթարական ոգին՝ մի անարգված և հալածված ցեղի անմեղ դուստրը։ Սիրո հրեղեն կայծակը փայլատակում է իմ սրտի խավարի մեջ, և կարծես, երկնային կրակով զտվում, մաքրվում են

իմ վատ կրքերը ամեն ախտերից։ Ես սկսում եմ դարձյալ սիրել... սիրել այն ժամանակ, երբ իմ ոտներին կրում էի դատապարտյալի ծանր շղթաները, երբ իմ ճակատի վրա գրած էր աքսորականի սև կնիքը...

Ո՜վ սեր, ո՜վ դու երկնային զորություն, որ ծավալում ես թշվառականի հոգում կյանք և խաղաղություն, որ ամրացնում ես նրա կամքը, և լեցնում ես նրա սիրտը պայծառ հույսերով, — և այնուհետև բանտի խավարը, երկաթի կապանքների ծանրությունը այլևս զգալի չէ լինում նրան...

Աշխարհից կտրված, որպես մի անպետք մարմին ձգված եմ այդ գերեզմանի մեջ։ Ինձ չէ տաքացնում արևը յուր ջերմությունով. ինձ համար փակված է արտաքին կյանքը։ Բայց մի արարած, անմարմին ուրվականի պես, հետևում է ինձ... և այս րոպեիս նա կանգնած է իմ առջև յուր գեղեցիկ, արտասվալի աչքերով... Ա՜խ, որքան մխիթարական է այդ արտասուքը... նա թափվում է մի թշվառականի համար, որին ամենքը ատում են...

«Նենե՜, նազելի Նենե՜, հեռացի՛ր, մի՛ մոտենար ինձ... իմ շունչը կարող է թունավորել քեզ... մի՜ մոտենար ինձ... ես չեմ կարող գրկել քեզ... իմ ձեռքերը արյունոտ են... Անմե՜ղ երեխա, ի՞նչ է ստիպում քեզ կապվել մի թշվառականի հետ, որ արժան չէ ոչ քո սերին և ոչ քո արտասուքին... Գնա՜, հեռացի՛ր, թող տուր ինձ... մեր բոլոր կապերը կտրվեցան այն րոպեից, երբ կարդացին իմ դատապարտության վճիռը...»։

«Գնա՜, ո՜վ դու բնության ազատ դուստր, բաց աշխարհում լայն է քո ասպարեզը... գնա՜, թափառի՛ր երկրե երկիր, գուշակի՛ր մարդիկների բախտը, ցույց տուր նրանց չարն ու բարին, նրանք գուցե հաց կտան քեզ...»։

Մինչ ես այդ զառանցությունների մեջ էի, մի ձեռք դիպավ ճակատիս։ Աչքերս բացի արի տեսա՝ մահճակալիս մոտ կանգնած էր ակնոցավոր երիտասարդը։ Ես ճանաչեցի, դա բժիշկն էր։ Երևում էր, նա երկար լսում էր իմ բացականչությունները։

— Ի՞նչ եղավ նա...— հարցրի ես, դեռ ոչ բոլորովին սթափվելով իմ խռովությունից։

— Ո՞վ,— հարցրեց երիտասարդը ժպտելով։

— Նա... այն աղջիկը... Նենեն... որ հիմա այստեղ էր...

— Հա՜, իմանում եմ...— պատասխանեց նա խորհրդավոր

ձայնով.— Նա գնաց, խոստացավ, որ շուտով կվերադառնա...

— Այո՛, նա կվերադառնա, նա ինձ չի թողնի...— կրկնեցի ես ուրախանալով։

Երիտասարդ բժիշկը, որ մինչև այժմ ոտքի վրա էր, նստեց իմ մահճակալի մոտ և կարեկցաբար նայում էր իմ վրա։ Երբ նկատեց, որ ես փոքր-ինչ հանգստացա, հարցրեց.

— Ո՞վ է այն աղջիկը։

Ես պատմեցի, թե նա որբ ցիգանուհի է, պատմեցի, թե ինչպես ընկած էր չարագործների ձեռքը, որոնք վճռել էին սպանել նրան, պատմեցի, թե որպես ինձ հանդիպեց նա անտառում, որպես ազատեցի նրա կյանքը և այնուհետև կապվեցավ ինձ հետ։

Երիտասարդ բժիշկը հետաքրքրությամբ լսում էր։ Ես նկատեցի նրա դեմքի վրա և ցավակցության նշաններ։ Մխիթարվեցա, տեսնելով, որ աշխարհում կան մարդիկ, որոնց մեջ չեն մեռած ազնիվ զգացմունքները, որոնք կարող են խղճալ անբախտության վրա։

Բժիշկը, այդ մարմնավոր խոստովանահայրը, միակ մարդն է, որ նայում է դատապարտյալի վրա, որպես մարդու վրա։ Նա միակ մարդն է, որի հետ կարելի է անկեղծ կերպով խոսել։ Այդ պատճառով ես պատմեցի նրան բոլորը, ինչ որ ծանրացած էր իմ սրտի վրա, ինչ որ տանջում էր ինձ։ Պատմեցի այն երազը, որ մի քանի րոպե առաջ պատկերանում էր ինձ, և ներկայացնում էր իմ կյանքի ճիշտ նկարագիրը, յուր բոլոր պայծառ և մռայլ գույներով։ Պատմեցի, թե՛ որպես անգիտակցաբար, փոքր առ փոքր շեղվելով ուղիղ ճանապարհից, անմեղությունից վերջապես ընկա անբարոյականության մեջ։ Նա ցլուխը խոնարհեցրած լսում էր։ Հետո իմ խոսքը կտրեց, ասելով.

— Այդ բոլորը ես գիտեմ...

— Որտեղի՞ց գիտեք։

— Նայեցեք իմ վրա, ծանո՞թ է ձեզ իմ դեմքը։

— Կարծես մի տեղ տեսած լինեմ ձեզ։

— Քննիչի մոտ։ Ես այն օրը ներկա էի, երբ դատարանում ձեզանից հարցուփորձ էին անում։ Դուք խոստովանեցաք ձեր բոլոր հանցանքները։ Դուք նկարագրեցիք ձեր կյանքի պատմությունը սկսյալ ձեր մանկությունից մինչև ձեր կալանավորության բոպեն։ Այդ պատմությունը սաստիկ հետաքրքրեց ինձ, որովհետև նրա մեջ գտնում էի այն բոլոր պատճառները, որոնք ստիպում են մարդուն հակառակ յուր կամքի հանցավոր լինել։

Բժշկի կարեկցությունը ոչ միայն շատ մխիթարական էր ինձ համար, այլ նա առիթ տվեց իմ վստահությանը դեպի այդ ազնիվ երիտասարդը, ես հարցրի.

— Ուղիղն ասացեք, պարոն բժշկապետ, իրա՞վ նա խոստացավ, որ շուտով կվերադառնա։

— Ո՞վ։ Հա՜... դուք, երևի, դարձյալ այն աղջկա մասին եք հարցնում,— մտաբերեց նա ընդհատված խոսակցությունը Նեննի մասին։

— Այո՛, այն աղջկա մասին։

— Դուք ձեր երազների մեջ եք տեսել նրան, նա այստեղ չի եղել։

Ես հասկացա, որ գրգռված երևակայությունը խաբել էր ինձ։ Նայեցա շուրջս, կրկին նկարվեցան տխուր պատկերները իմ պատժական կյանքի և բանտային հիվանդանոցի մռայլոտ կամերաները հիշեցրին ինձ իմ դրությունը...

— Ուրեմն ես բոլորովին զրկված եմ նրանից... էլ չե՞մ տեսնի նրան...

— Զրկված չեք լինի... հույս ունեցեք, որ մի ժամանակ կտեսնեք նրան...— պատասխանեց երիտասարդը խորհրդավոր ձայնով։

«Մի ժամանակ...» —արդյոք երկա՞ր պիտի տևեր այդ ժամանակը, մտածեցի ես։

— Մի անգամ նրան թույլ տվին մտնելու բանտը, ինձ մոտ, — ասեցի ես։

— Գիտեմ, այդ ես խնդրեցի բանտապետից, որ թույլ տան։

Նեննեն ինձ ասել էր, որ մի ակնոցավոր երիտասարդ միջնորդեց նրա համար և թույլտվություն ստացավ բանտը մտնելու։ Ո՞վ կմտածեր, որ այդ բարեսիրտ երիտասարդը լիներ նա։

Նրա բարեսրտությունը մի այնպիսի համակրություն ազդեց իմ մեջ, մինչ ես վստահեցա ասել նրան.

— Ես գիտեմ, պարոն բժշկապետ, որ հավիտյան զրկված եմ նրանից։ Բայց դուք այնքան բարի եք և ազնիվ, որ կգթաք մի որբ, անտեր, անօգնական աղջկա վրա, որը այս աշխարհում ոչ մի խնամատար չունի։ Ամեն տեղ հալածում են նրան,

ամեն մարդ խելագար է համարում նրան, և ոչ ոք չի խղճում անբախտին...

— Նա խելագար չէ,— ընդմիջեց բժիշկը։

— Աղաչում եմ, խղճացեք նրա վրա, ընդունեցեք ձեր պաշտպանության ներքո, նա շատ լավ աղջիկ է։

— Ես առանց ձեր խնդրելու ևս այդ պիտի անեմ,— պատասխանեց երիտասարդը և վեր կացավ։

Ես պատրաստվում էի բռնել նրա ձեռքը, հայտնել իմ անչափ, անսահման շնորհակալությունը, բայց նա ուշադրություն չդարձրեց և շտապով հեռացավ։

Թ

ԱՔՍՈՐ

Անցան մի քանի ամիսներ ևս։ Մենք բոլորովին առողջ էինք, առողջ այն չափով, որ կարող էինք դիմանալ ճանապարհի ծանրությանը և ուղևորվել դեպի հեռավոր հյուսիս։

Առավոտ էր։ Մի խումբ դատապարտյալների հետ, շրջապատված զինվորներով, մեզ դուրս էին տանում քաղաքից։

Այդ տխուր տեսարանը շատ նման էր դագաղների հուղարկավորությանը դեպի գերեզմանների լռությունը։ Ծնողների, քույրերի, եղբայրների լացը, նրանց հառաչանքը միախառնվում էր իրանց կորցրած բարեկամների շղթաների հնչյունների հետ։

Այո՛, տխո՞ւր տեսարան էր և ավելի տխո՞ւր, քան թե մահը։ Այդ դեպքում մարդը կենդանի է մեռնում, և դեռ կենդանի կտրվում են նրա հարաբերությունները աշխարհի և բարեկամների հետ։ Բայց նրա զգացմունքները դեռ մեռած չեն. նրա վրա ազդում են շրջապատող երևույթները։ Իսկ դագաղի մեջ դրած մարմինը ավելի բախտավոր է. նա չէ զգում, չէ հասկանում, թե ինչ է կորցնում։ Մի փոս և սառ հողը պարգևում են նրան հավիտենական խաղաղություն։

Աքսո՞ր, ի՞նչ սոսկալի միտք է բովանդակում յուր մեջ այդ բառը։ Հազարավոր մղոններ չափել շղթայակապ ոտներով, պատերազմել դառնաշունչ մրրիկների դեմ, որոնք հսկա եղևնիները խլում են արմատից, պատերազմել ցրտի հետ, որի սաստկությունից ահագին ժայռերը ճաքճքում են, պատառպատառ են լինում, մաշվել, ուժաթափ լինել հանքերում տաժանական աշխատություններով,— այդ բոլորը այնպիսի տանջանքներ են, որոնց մարդ, միայն դատապարտված մարդը կարող է դիմանալ։

Բայց մի բան, որին չէ դիմանում նա, որի առջև փշրվում են նրա բոլոր զորությունները,— դա է սիրած աղջկա արտասուքը...

Ահա դարձյալ հայտնվեցավ նա... Մաղերը խառնված, լի կատաղի վրդովմունքով, որպես մի խելագար հրեշտակ հայտնվեցավ նա... Ա՜խ, ո՜րքան սարսափելի է նրա զայրացած դեմքը...

Նա աշխատում է մոտենալ ինձ... զինվորները հեռացնում են... նա դարձյալ առաջ է նետվում... նա չէ վախենում սվիններից... Ահա բռնեցին նրան... նա կրկին դուրս պրծավ նրանց ձեռքից... վազում է դեպի ինձ... արգելում են... Ահա նա խլեց զինվորներից մեկի հրացանը... մուխը բարձրացավ... հրացանը գոռաց... Բայց զարկեցին նրան... նա ընկավ... էլ չէ վեր կենում...

«Դա այն ցնորված աղջիկն է»,— լսելի եղավ ամեն կողմից։

Իմ աչքերի առջև մթնեց, ես այլևս ոչինչ տեսնել չկարողացա, միայն զգում էի հրացանների կոթերի հարվածը, որով քշում էին ինձ դեպի իմ դատապարտության օթևանը...

Ժ

ՆՐԱՆ ԳՐԵՑԻՆ ՄԵՌԱԾՆԵՐԻ ԹՎՈՒՄ

Աքսորականների խումբը, որոնց հետ ես ուղևորվեցա, բաղկացած էր տասն և երեք հոգուց, նրանց մեջ էին և իմ ընկերները։

Մինչև վերջին իջևանը հասնելը ես մինչ այն աստիճան խռովության մեջ էի, որ ամենևին չնկատեցի, թե մեր ընկերներից մեկը պակաս էր, այն ևս մեր գլխավորը՝ քավոր Պետրոսը։

Մենք հասանք իշևանը, երբ դեռ նոր էր մտնում արևը։ Այդ մի արքունի շինվածք էր փոստային կայարանի մոտ, մարդկային բնակությունից հեռու, առանձնացած անապատի մեջ։ Այնտեղից դուրս եկավ մի ստոր աստիճանավոր և ընդունեց մեզ։ Մենք այժմ մարդ լինելուց դարձել էինք իրեր, նշանակված նոմերներով։ Նայեցին մեր նոմերներին, ստուգեցին թվերը, և ապա ածեցին մի նեղ նկուղի մեջ։

Գիշերը մեզ բաժանեցին մի-մի կտոր սև հաց և խմելու ջուր տվեցին։ Ընկերներս սկսեցին ընթրիք անել, բայց ես ոչինչ ուտել չկարողացա։ Դա այն տխուր և ծանր գիշերներից մեկն էր, երբ ամեն հույս կորած էր, երբ ամեն ինչ վերջացած էր և մեզ, ամեն մեկիս, հայտնի էր յուր թշվառ վիճակը։

Շուտով դատապարտյալներից ոմանք սկսեցին նիրհել. ոմանք տարածվեցան մերկ հատակի վրա, փորձում էին քնել, ոմանք դեռ նստած, խորին ինքնամոռացության մեջ մտածում էին։ Նկուղի մեջ տիրում էր գերեզմանական լռություն։ Միայն յուղային ճրագը ճրթճրթալով մի առանձին շարագուշակ ձայն էր արձակում և յուր շուրջը տարածում էր աղոտ լուսավորություն։ Սենյակի օդը տոգորված բորբոսային խոնավությամբ, անկարելի էր շնչել։ Ճրագն անգամ դժվարանում էր վառվել նրա մեջ։ Դրսում անցուդարձ էր անում պահապան զինվորը, և մենք լսում էինք նրա քայլերի ձայնը։

Իմ ընկերները այժմ հաշտվել էին ինձ հետ։ Նրանց կասկածը թե իմ և թե Նենեի վերաբերությամբ բոլորովին փարատված էր։ Որովհետև քննությունների ժամանակ գործերից երևվաց, որ ոչ ես և ոչ Նենեն չէինք մատնել նրանց, որպես կարծում էին, այլ մատնել էր մի հրեա, որ նրանց փոստագրիչն էր։ Հրեան նույնպես դատապարտության ենթարկվեցավ։

Բայց ինձ գրավել էր այն միտքը, թե որտե՞ղ մնաց քավոր Պետրոսը, ո՞ւր կորավ այդ սատանան։ Այդ միջոցին մոտեցավ ինձ ընկերներից մեկը, որը հասակակից էր ինձ հետ։ Այդ երիտասարդը հայտնի էր մեր մեջ յուր դուրեկան և ուրախ բնավորությամբ։ Նա նստեց ինձ մոտ։

— Ո՞ւր մնաց քավոր Պետրոսը, —հարցրեցի նրանից։

— Նրան գրեցին մեռածների թվում...— պատասխանեց նա։

— Ինչպե՞ս։

— Այնպես։

— Ես ոչինչ չեմ հասկանում։

Երիտասարդը սկսեց ծիծաղել իմ միամտության վրա։ Գանահարությունից հետո, պատմեց նա, քավոր Պետրոսը, ինչպես մեզանից ամեն մեկը, բանտի հիվանդանոցը տարվեցավ։ Այստեղ նա դիտմամբ սկսեց երկարաձգել յուր հիվանդությունը, մինչև առիթ ունեցավ ծանոթանալու բանտապահի հետ։ Շուտով կարողացավ նա շոշափել այդ մարդու թույլ կողմերը, և մանավանդ մի դեպք հեշտացրեց նրան օգուտ քաղել նրա թույլ կողմերից։ Բանտապահը ծախսել էր արքունի փողեր և այդ պատճառով ոչ միայն դատի պիտի ենթարկվեր, այլ կկորցներ և յուր պաշտոնը, եթե մի տեղից փողի պակասը չլրացներ։ Քավոր Պետրոսը հասկանում էր նրա անել դրությունը և մի օր ասում է նրան.— «Պարոն բանտապահ, ես ցանկանում եմ մի փոքրիկ ծառայություն անել ձեզ»։— Ի՞նչ ծառայություն,— հարցնում է բանտապահը։— «Դուք կարծեմ, փողի դժվարության մեջ եք, ես, կարող եմ օգնել ձեզ»։

Այս տեսակ սիրախոսություններ կալանավորների և բանտապահի մեջ այնքան սովորական են, որ վերջինս ոչ միայն չի վիրավորվում, այլ շատ հետաքրքրվում է, թե քավոր Պետրոսը որքանով կարող է օգնել իրան։— Որքա՞ն է ձեզ հարկավոր, հարցնում է քավոր Պետրոսը։— «Երկու հազար ռուբլի», պատասխանում է բանտապահը։ Քավոր Պետրոսը խոստանում է վճարել նրան այդ գումարը։

— Ինչո՞վ կարող եմ երախտահատույց լինել ձեր այդ օգնության համար,— հարցնում է բանտապահը։

— Ինձ ազատելով բանտից,— պատասխանում է քավոր Պետրոսը։

— Ձեզ համար վճռված է ցմահ աքսոր։

— Այդ ես գիտեմ։

— Ձեզ կպահանջեն ինձանից։

— Այդ էլ գիտեմ։

— Ի՞նչ կարող եմ պատասխանել։

— Ձեր պատասխանը ես մտածել եմ, մի շատ հասարակ բան է։

— Որպե՞ս։

— Ինձ կգրեք մեռածների ցուցակի մեջ, կասեք՝ հիվանդանոցում մեռավ, տարան թաղեցին։

— Դրա համար զանազան պաշտոնական ձևեր են պահանջվում։

— Մատյանների մեջ հեշտ է չինել այդ ձևերը։ Միթե սակա՞վ մարդիկ անհետանում են հիվանդանոցներում, և նրանց մասին բնավ հարցուփորձ չէ լինում։ «Մեռա՞վ»... և դրանով վերջանում է ամեն բան։

— Այսուամենայնիվ, մի դիակ պետք է դնել ձեր տեղը։

— Հիվանդանոցի մառանի մեջ անտեր դիակներ խո շատ կան, ընտրեցեք նրանցից մեկը։

Երիտասարդի պատմությունը խիստ հետաքրքրական էր ինձ համար։ Իրավ, շատերը կորչում էին այդ հիմնարկության մեջ։ Մեռածների դիակները չէին արժանանում մինչև անգամ թաղման. նրանց կտրատում էին, այլանդակում էին և ձգում էին մեծ գետի մեջ, որ հոսում էր հիվանդանոցի մոտով։ Բանտը և հիվանդանոցը միևնույն շինվածքի մեջ էին։

Դատաստանական վերանորոգություններից առաջ սարսափելի զեղումներ էին կատարվում բանտերում, և շատ զարմանալի չէր, որ քավոր Պետրոսի նման մի մարդ կարողացել էր այդ խորամանկությամբ դուրս պրծնել բանտից։ Իմ երիտասարդ ընկերը պատմեց ինձ մի ուրիշ դեպք, որ ոչ սակավ հետաքրքրական էր։

— Տեսնո՞ւմ ես այդ մարդուն,— ասաց նա,— որ կծկված, կոլորված, նիրհում է այն անկյունում,— այդ ողորմելին նույնպես զեղումների մի անմեղ զոհ է։

Ես նայեցի դեպի այն կողմը, տեսա մի նիհար մարդ, գունաթափ դեմքով, խորին թմրության մեջ նստած էր անկյունում։ Գիշերվա տխրությունը փարատելու համար ես մեծ հոժարությամբ սկսեցի լսել երիտասարդի տեղեկությունները այդ թշվառ աքսորականի մասին։ Նա գիտեր բավական ճշտությամբ նկարել մարդկանց պատկերը։

— Այդ ողորմելի արարածը,— ասաց նա,— որին կոչում են Սիդոր Սիդորիչ, որի հետ ես խիստ մոտ ծանոթացա, այն տեսակներից է, որոնք ոչ միայն զրկված են մարդկային ընդունակություններից, այլ կյանքի տխուր պայմանները խլել են նրանից և այն սակավ ընդունակությունները, որ ստացել են բնությունից։ Դա մի ատենական տեղի ստոր ծառայող է եղել, գրագրի պաշտոն է կատարել։ Հարատև կյանքը գրասեղանի

մոտ բոլորովին բթամտացրել է դրան, իսկ արաղի անչափ գործածությունը լրացրել է պակասը։ Նրան արտաքսել են ծառայությունից և չձանձրանալու համար սկսել է ավելի անձնատուր լինել արաղին։ Բայց Սիդոր Սիդորիչը խիստ խաղաղ և հանգիստ արբեցող է եղել։ Գինետնից դուրս գալուց հետո փողոցներում շրջելու և մարդկանց անհանգստացնելու սովորություն չէ ունեցել Սիդոր Սիդորիչը։ Նա ուղիղ կդիմեր դեպի յուր տունը, և ամբողջ օրը կներկայացներ մեկը այն անշարժ կարասիներից, որ վառարանի մոտ անպակաս են լինում։ Նա կնստեր այնտեղ կամ կնիրհեր, կամ կհորանջեր, մոռանալով իրան մի առանձին անհոգ, անզբաղ ապշության մեջ։ Կինը նրան հանդիմանում է, հայհոյում է, բայց Սիդոր Սիդորիչը դշինչ չէ պատասխանում։ Միայն հիմար կերպով ժպտում է, գլուխը քարշ է գցում և խուլ կերպով մրթմրթում է մի քանի անորոշ խոսքեր։ Կինը այն ժամանակ միայն կարող էր նրան դուրս գցել, երբ պետք էր սենյակը մաքրել և փոքր-ինչ կարգի բերել։ Այդ միջոցին Սիդոր Սիդորիչը կնստեր դռան մոտ, արևի ճառագայթներով կտաքանար։ Իսկ երբ սենյակը մաքրեցին, նա դարձյալ վառարանի մոտ էր։

Բայց լինում են բոպեներ, երբ Սիդոր Սիդորիչը դառնում էր և ժիր, և աշխույժ։ Դա այն ժամանակ էր լինում, երբ նրա կինը ընդունում էր մի հարգելի հյուր։ Հարգելի հյուրը նրա նախկին մեծավորն էր։ Երբ այդ մարդը հայտնվում էր, այն օրը Սիդոր Սիդորիչի համար տոն էր։ Նա խիստ եռանդով հեռանում էր յուր նվիրական անկյունից, երբ նրան փող էին տալիս, ուղարկում էին փողոցը, որ ուտելիքներ և խմելիքներ գնե։ Ո՞րքան ուրախ էր լինում նա։ Դեռ ճանապարհին, դեռ ըմպելիքները տուն չհասցրած, Սիդոր Սիդորիչը յուր կոկորդը ըստ կարգին փափկացնում էր։ Սեղանը պատրաստվեցավ։ Տիկինը հարգելի հյուրի հետ ուտում են, խմում են, զվարճանում են։ Սիդոր Սիդորիչը խիստ եռանդով պտտվում է սեղանի շուրջը, աշխատում է ամեն տեսակ սպասավորություն ցույց տալ։ Նա մեծ բավականությամբ խմում է հարգելի հյուրի կենացը, երբ բաժակը նրա ձեռքն է հասնում։ Կերուխումը տևում է երկար։ Բայց Սիդոր Սիդորիչը մինչև ընթրիքի վերջը սպասելու համբերություն չունի։ Նա օրորվում է, գլուխը լավ դրության մեջ չէ, կինը նրա ձեռքից բռնելով նստեցնում է հնոցի մոտ,

այնտեղ սկսում է մրափել։ Տիկինը շարունակում է հարգելի հյուրի հետ ժամանակ անցկացնել։

Սիդոր Սիդորիչը թեև ապրում էր կնոջ ողորմությունով, նրա կոշիկների տակ, և մոռացած յուր բոլոր արժանապատվությունները, բայց մի բանով միշտ պարծենում էր նա, որ ինքը այր է, իսկ նա կին։ Այդ ինքնաճանաչությունը ավելի հայտնվում էր նրա մեջ այն ժամանակ, երբ կինը շարժում էր նրա բարկությունը։ Եվ այդ պատահում էր խիստ հաճախ, երբ Սիդոր Սիդորիչը տանից մի բան էր գողանում և տանում էր գինետունը։ Կինը սկսում էր նախատել, հայհոյել նրան։ Իսկ Սիդոր Սիդորիչը հիշելով, որ ինքը այր է, խլում էր պատահած առարկան և զարկում էր կնոջ գլխին։ Երբեմն դրաման վերջանում էր արյունով։ Այսպիսի դեպքերից մեկն էր, որ առիթ տվեց Սիդոր Սիդորիչին բանտի մեջ ընկնել։ Կինը ուրախ էր, որ ազատվեցավ յուր անախորժ բեռից, իսկ Սիդոր Սիդորիչը շատ չտխրեց, որ նրան մի այլ տան մեջ փոխադրեցին։

Այստեղ նա բոլորովին մոռացվեցավ, թե ինքը յուր համար, և թե յուր ընտանիքի համար։ Նա մոռացել էր մինչև անգամ, թե որքան ժամանակով բանտարկել էին իրան։ Հիմա նրան աքսոր են ուղարկում. դարձյալ չգիտե, թե ինչո՞ւ համար են ուղարկում. և զարմանալին այն է, որ հետաքրքրություն ևս չունի գիտենալու, հրամայում են, նա խոնարհվում է։ Խոնարհվելու ընդունակությունը սաստիկ զարգացած էր նրա մեջ։ Նա երբեմն-հանդուգն է միայն դեպի յուր կինը, բայց հլու է դեպի ամեն մի օտար մարդ։

Իմ երիտասարդ ընկերոջ նկարագրությունը Սիդոր Սիդորիչի մասին այն աստիճան գրավեց իմ ցավակցությունը դեպի այդ թշվառը, որ ես հարցրի նրանից.

— Ուրեմն դու որևիցե զեղծում ես գտնում այդ մարդու դատապարտության գործում։

— Այո՛, նույնպիսի մի զեղծում, և նույն մարդու ձեռքով կատարված, որ քավոր Պետրոսի անունը արձանագրեց մեռածների ցուցակի մեջ։ Սիդոր Սիդորիչը աքսորվում է մի ուրիշ հանցավորի փոխարեն, որին վաղուց բաց են թողել։

— Իսկ եթե մի օր նրա կինը կմտածե որոնել յուր ամուսնուն։

Դատաստանական վերանորոգություններից առաջ այս տեսակ զեղծումներ շատ էին պատահում, և ես զարմանում էի, թե ինչո՞ւ քավոր Պետրոսը մտածեց միայն յուր ազատության համար, իսկ յուր ընկերների մասին հոգս չտարավ։

— Նա իրան ազատեց, որ ավելի դյուրություններ ունենա մեր մասին հոգ տանելու,— պատասխանեց երիտասարդը։— Նա կգա մեր ետևից և մինչև մեզ չազատե, չի հանգստանա։

Երիտասարդը չծածկեց ինձանից, հայտնեց այն ամբողջ ծրագիրը, որ խաչագողները կազմել էին իրանց մեջ, թե ի՞նչ միջոցներով պետք է փախչեն կես ճանապարհից, ապա հարցրեց.

— Կմիանա՞ս մեզ հետ։

— Ո՛չ,— պատասխանեցի ես։

Նա սկսեց զարմացած նայել իմ երեսին։

— Ուրեմն դու քեզ կորցնե՞լ ես ուզում։

— Ավելի լավ է մաշվել հանքերում, քան թե կրկին միանալ ձեզ հետ։

— Շատ կփոշմանես...— ասաց նա և վշտացած հեռացավ ինձանից։

Մենք բոլոր ժամանակ խոսում էինք հայերեն, այն ևս խաչագողի բարբառով, և կասկած չունեինք, որ կհասկանան մեզ։

Գիշերից բավական անցել էր. հոգնած դատապարտյալները բոլորը խորին քնի մեջ էին։ Բայց քունը, տխուր սրտի միակ մխիթարությունը, ինձ մոտ չէր գալիս։ Դարձյալ ինձ երևում էր Նենեն, ինձանից չէր հեռանում անբախտ աղջկա սգավոր պատկերը...

ԺԱ.

ՓԱԽՈՒՍՏ

Սիբի՛ր...

Սարսափելի ճանապարհորդություն է հարյուրավոր մղոններ անցնել շղթայակապ ոտներով։ Որքան հեռանում ես դեպի հյուսիս, ազգաբնակությունները հետզհետե նոսրանում են, և այնուհետև դատարկ և ձյունապատ անապատներին վերջ ու

սահման չկա։ Խիստ հազիվ են պատահում փոքրիկ քաղաքներ, որոնք ավելի նման են մեծ գյուղերի։ Նրանց բնակիչները այն աստիճան սովորած են հաճախ աքսորականների խումբեր տեսնել, որ հենց լսում են շղթաների հնչյուններ, տներից դուրս են թափվում, սառնասրտությամբ նայում են նրանց վրա և ցույց են տալիս իրանց երեխաներին։ Ոմանք տալիս են թշվառներին մի կտոր հաց կամ մի քանի գրոշներ։

Միշտ տխուր և միատեսակ է շրջապատը։ Նույն անվերջ անապատները ամեն օր տարածվում են քո առջև, նույն մառախլապատ հորիզոնը ամեն տեղ միախառնվում է սպիտակ սավանով պատած տափարակների հետ, նույն ցուրտ, խոնավ և մթին իջևանները սպասում են քեզ ճանապարհների վրա, և շատ տեղ հանդիպում ես պաշտոնակատարների կոպիտ, անխիղճ վարմունքին։ Ամեն տեղ, կայարաններում նույնպես համբարքով ստանում են, ճանապարհ են դնում թշվառականների խումբը։ Գնում ես, գնում ես... անցնում են օրեր, շաբաթներ, ամիսներ... օրըստօրե ուժաթափ ես լինում։ Նվազում ես, թուլանում ես, բայց չգիտես, թե ե՞րբ պետք է տեղ հասնես...

Երբեմն երևում են քեզ մարդիկների երեսներ, սառն և անմիտ, որպես ինքը եղանակը։ Ոտքից ցգլուխ հագնված մորթիների և մուշտակների մեջ, այդ գոռհիկները հազիվ որոշվում են թավամազ արջերից, որոնք շատ անգամ ծույլ և դանդաղ կերպով անցնում են դատապարտյալների խումբի մոտով, և մի առանձին հեգնական հայացք ձգելով նրանց վրա, կարծես, ուզում են ասել՝ «Մենք ավելի բախտավոր ենք, քան թե դուք»։

Ցո՜ւրտ է։ Ամեն արարած այստեղ մրսում է, սառչում է, քարանում է։ Երկիրը զուրկ է լույսից և ջերմությունից։ Կարծես, արևն էլ այստեղ մրսում է, կարծես, նա էլ մուշտակ ունի հագած։ Նրա գունաթափ դեմքը շատ չէ որոշվում նույն գոռհիկների, նույն արջերի երեսներից։ Նրա ճառագայթները կորցնում են իրանց զորությունը ընդհանուր սառնության մեջ։

Մեռած բնությունը բոլորովին ուրիշ կերպարանք է ստանում, երբ հանդիպում ես անտառների։ Այստեղ երևում է կյանք, բուսական թշվառ կյանք։ Տարվա այն եղանակում, երբ մեզ մոտ ծառերը բեռնավորված են զանազան տեսակ անուշ պտուղներով, երբ խաղողը մեղրի համ է ստանում մեր այգիներում,— այստեղ սառը քամին փչում է, ծառերի ճյուղերը սարսափելով տատանվում են, ցած են խոնարհվում, դալկացած տերևները խշխշալով թափվում են, և նրանց տխուր հառաչանքներից դու որոշում ես այս խոսքերը. «Տե՜ս, մենք էլ աքսորված ենք այդ երկրում»։ Եվ իրավ, բնության խստությունը մինչև այն աստիճանի ճնշել է այդ ողորմելի արարածներին, որ նրանք ազատ կերպով աճել և զարգանալ կարող չեն։ Որքան առաջ ես գնում, ծառերի աճելության ուժը պակասում է, պակասում է, և նրանք հետզհետե փոքրանալով, բոլորովին մանրանում են, մինչև թզուկ թուփերի կերպարանք են ստանում։

Ամեն ինչ այստեղ մոտ է երկրին, ամեն ինչ թեքված, խոնարհված է դեպի ցած։ Լեռները և բլուրներն անգամ չեն համարձակվում իրանց գագաթները շատ վեր բարձրացնել, կարծես նրանց վրա ևս մի բան ճնշում է։ Եվ երկրի ընդարձակ տարածությունը ստանում է տափակ, հարթ-հավասար կերպարանք,— ձևացնում է մի անսահման անապատ։

Չնայելով եղանակների խստությանը, չնայելով մեր ուղեվորության սպանիչ ազդեցությանը, իմ ընկերները դարձյալ չէին կորցնում իրանց զվարթությունը։ Նրանք իրանց սովորության համեմատ հանաքներ էին անում, ծիծաղում էին և շատ տեղ իջևաններում անձնատուր էին լինում արբեցության։

Այդ երկրում լույսի և ջերմության պակասությունից մարդը միշտ ցուրտ է զգում և ցո՜ւրտ։ Պետք է մի բանով տաքացնել սառած մարմինը, և արաղը հանդիսանում է որպես փրկարար դարման։ Նա թմրեցնում է ուղեղը, բթացնում է զգայարանները, և դու բնության խստությունը այլևս չես զգում։ Եվ այդ է պատճառը, որ ոչ մի հիմնարկության այնքան չես հանդիպում, որքան գինետների։ Նրանց թիվը հազարապատիկ ավել է եկեղեցիների, դպրոցների և այլ կրթական հիմնարկությունների թվից։ Համարյա բոլոր իջևաններում կարելի էր գտնել արաղ։

Թեև արբեցությունը սաստիկ արգելված էր կալանավորներին, բայց պահապանները այնքան բարի են գտնվում, որ չեն արգելում նրանց այդ միակ մխիթարությունից, մանավանդ երբ նրանց էլ հրավիրում են խմել իրանց հետ։

Իսկ այդ զվարճությունները այն աքսորականների համար

են միայն, որոնք ունեն իրանց հետ փոքրիշատե արծաթ։ Երևվում էր, որ իմ ընկեր խաչագողները զուրկ չէին արծաթից. ամեն տեղ գնում էին ծխախոտ, սպիտակ հաց, ուտելիքներ և արաղ։ Այդ բարիքներից նրանք մասն էին հանում մյուս աղքատ դատապարտյալներին, և այդ պատճառով խումբի մեջ խաչագողները վայելում էին մի առանձին հարգանք։

Բայց ինձ խիստ անհաճո էր թվում նրանց մինչև հանդգնության հասցրած անհոգությունը։ Ես զայրանում էի, երբ նկատում էի, որ նրանք առ ոչինչ էին համարում իրանց դրության բոլոր զարհուրանքը։ Մարդիկ, որ կորցնում էին հայրենիք և ընտանիք, մարդիկ, որ իրանց տների մեջ անբախտ կին և անտեր զավակներ ունեին, մարդիկ, որ հավիտյան զրկվում էին այն բոլորից, որ միշտ սիրելի էր եղել իրանց,— այդպիսի թշվառ մարդիկ, դեռևս սիրտ ունեին զվարճանալու, դեռևս նրանց երեսը ծիծաղում էր։

Մենք գիշերները ավելի ազատ էինք լինում միմյանց հետ խոսելու և խորհրդակցելու, երբ անասունների նման ածում էին մեզ մի սենյակի մեջ և դռները կողպում էին։ Բայց իմ ընկեր խաչագողները վաղուց արդեն սկսել էին ինձ հետ բավական սառն կերպով վարվել, երևում էր, որ վստահություն չունեին դեպի ինձ և ամենայն ծածկամտությամբ աշխատում էին թաքցնել ինձանից մի գաղտնիք։ Ես էլ իմ կողմից ամենևին հետաքրքիր չէի լինում խորամուխ լինել նրանց խորհուրդների մեջ։

Այդ սառնությունը սկսվեցավ մեր մեջ այն օրից, երբ իմ երիտասարդ ընկերներից մեկը հայտնեց ինձ քավոր Պետրոսի ամբողջ ծրագիրը, թե ո՛րպիսի հնարներ էր նախապատրաստել նա, որ կես ճանապարհից փախցներ յուր աքսորական ընկերներին։ Ես այն ժամանակ մերժեցի երիտասարդի առաջարկությունը, վճռական կերպով պատասխանելով, թե ամենևին չի պիտի մասնակցեմ նրանց ձեռնարկության մեջ, և ավելացրի, թե լավ է ինձ հանքերում մաշվել և համբերությամբ սպասել իմ ճակատագրի վախճանին, քան թե ազատություն գտնել քավոր Պետրոսի ձեռքով։

Այն օրից անցել էին երկու ամբողջ ամիսներ։

Մի գիշեր նույն երիտասարդը մոտեցավ ինձ։

— Մուրադ,— ասաց նա,— դու դարձյա՞լ միտքդ չես փոխել։

— Ի՞նչ բանի համար,— հարցրի ես։

— Հիշո՞ւմ ես մեր մեջ մի քանի ամիս առաջ տեղի ունեցած խոսակցությունը։

— Հիշում եմ։

— Էգուց երեկոյան պահուն պիտի կատարվի գործողությունը...

— Ինչ-որ ուզում եք կատարեցեք։ Ես չեմ փոխել իմ միտքը, ես ամենևին չեմ մասնակցելու ձեր ձեռնարկությանը...

Նա բռնեց իմ աջը և աղաչավոր դեմքով աչքերը դարձրեց դեպի իմ երեսը։

— Լսի՛ր, Մուրադ, համառության ժամանակ չէ, քո կամակորությունը կկորցնե քեզ։ Մտածիր, որ դու դեռ երիտասարդ ես, քո առջև դեռ ընդարձակ ասպարեզ կա գործելու և բախտավոր լինելու։ Քավոր Պետրոսը յուր որդու նման սիրել է քեզ, այժմ նույնպես սիրում է։ Նա քեզանից ձեռք չի վեր առնի, նա կգա քո ետևից, ուր որ տանում են քեզ, և մինչև չազատե քեզ, չի հանգստանա։ Եթե չես հավատում, քեզ ցույց կտամ նրա նամակը։

Նա տվեց ինձ մի թղթի կտոր, որի վրա գրված էին մի քանի տողեր միայն. ստորագրությունը և ձեռագիրը քավոր Պետրոսինն էր։ Ահա նրա բովանդակությունը. «Սիրելի Մուրադ, հնազանդվի՛ր, ինչ որ քո ընկերները կառաջարկեն քեզ, մոտ է փրկության ժամը...»։

Թե ի՞նչպես էր հասել այդ թուղթը նրա ձեռքը, ես չգիտեմ, բայց ես զզվանքով ետ տվի, ասելով.

— Եթե հազար այս տեսակ նամակ գրելու լինի նա, ես դարձյալ իմ միտքը չեմ փոխի։ Ես վճռել եմ, վաղուց վճռել եմ բնավ հարաբերություններ չունենալ խաչագողների հետ։ Ես նրանց մատնությամբ Սիբիր եմ գնում, բայց չէի ցանկանա նրանց ձեռքով ազատված լինեմ։

— Այդ ես հավատում եմ,— պատասխանեց երիտասարդը,— և մասամբ իրավունք եմ տալիս քո դժգոհությանը։ Բայց ոչինչ չէ արգելում քեզ այդ դրությունից ազատվելուց հետո կտրել քո հարաբերությունները խաչագողների հետ։

— Բանը նրանումն է, որ նրանց ձեռքով ազատվելը ինձ համար անարգանք եմ համարում։

— Այդ խոսքը շատ վիրավորական է, Մուրադ,— ասաց երիտասարդը փոքր-ինչ վրդովված ձայնով,— բայց ես ուշադրություն չեմ դարձնի և կհիշեցնեմ քեզ մի ուրիշ բան, որը, որպես երևում է, մոռացել ես դու։ Դու հիշում ես այն անբախտ աղջկան, որը սիրում էր քեզ, որին սիրում էիր և դու։ Արդյոք չե՞ս մտածում վերադառնալ նրա մոտ, գտնել նրան։ Գիտե՞ս ինչ դրության մեջ թողեցիր նրան։

— Գիտեմ... Բայց հայտնի չէ, արդյոք ո՞ղջ է նա, թե...

Վերջին խոսքը ես չկարողացա արտասանել, դա դանակի պես կտրատում էր իմ սիրտը։ Երիտասարդը հանդստացրեց ինձ, ասելով.

— Ողջ է։ Նրա վերքը մահացու չէր։ Մենք այդ մասին ճիշտ տեղեկություն ունենք։

Ընթերցողը հիշում է, որ ինձ դեպի աքսոր ճանապարհ դնելու առավոտը հանկարծ հայտնվեցավ Նենեն և յուր բարկության խռովության մեջ խլեց զինվորներից մեկի ձեռքից հրացանը և արձակեց։ Թեև ոչ ոքին չվնասեց նա, բայց նրա վարմունքը այն աստիճան հակառակ էր օրենքի, որ մի զինվոր հրացանի սվինով վիրավորեց նրան, և նա ընկավ։ «Խելագար աղջկա» համարումը և հոգեկան հիվանդության ապառույցները միայն կարողացան ազատել նրան օրենքի խիստ դատապարտությունից։

Նենեի անունը հիշեցնելով, երիտասարդը շոշափեց սրտիս ամենազգայուն լարերը, իմ համառությունը մեղմացավ, իմ կամակորությունը միանգամից փշրվեցավ, և ես պատրաստ էի ասել նրան. «Լավ, համաձայն եմ, կմիանամ ձեզ հետ», բայց դարձյալ շուտով ես տիրապետեցի ինձ. կարծես, իմ մտքի կամքի զորությունը կրկին վերադարձավ, երբ մտաբերեցի, թե ի՞նչ բան է խաչագողը կամ ի՞նչ է նշանակում միանալ նրանց հետ։

— Ոչ,— պատասխանեցի նրան,— երբեք, երբեք ձեզ հետ գործ ունենալ չեմ կարող։

Երիտասարդի դրությունը անտանելի դարձավ։ Նա գործ դրեց յուր վերջին ուժը, աշխատելով Նենեի հիշատակով գրավել ինձ։ Այդ փորձ անցավ ապարդյուն։ Այժմ ի՞նչ պիտի աներ նա։ Նա հայտնեց ինձ մի գաղտնիք, հաստատ հույս ունենալով, որ կհամոզե ինձ, որ ես կմասնակցեմ նրանց ձեռնարկության մեջ։ Ես մերժեցի։ Բայց գաղտնիքը մնաց ինձ մոտ։ Այժմ կարո՞ղ էր նա ապահով մնալ, որ ես նրանց գաղտնիքը չէի հայտնի ում որ հարկն էր և արգելք չէի դնի նրանց դիտավորության կատարվելուն։ Խաչագողները սաստիկ կասկածավոր մարդիկ են։ Ես նկատեցի այդ և բոլորովին անկեղծությամբ միամտացրի նրան, ասելով.

— Դուք ինչ որ ցանկանում եք արեցեք, ես ոչ մի կերպով չեմ խանգարի ձեզ, միայն ինձ հանգիստ թողեցեք։

— Ազնիվ խո՞սք ես տալիս։

— Ազնիվ խոսք եմ տալիս։

Նա սեղմեց իմ ձեռքը և հեռացավ։

Ես մնացի միայնակ, մեր կալարանի մի անկյունում նըստած։ «Այն մարդիկը պիտի փախչեն, մտածում էի ես, նրանց դեռ չբռնված, ազատ մնացած ընկերները դրսից կօգնեն նրանց և անպատճառ կհաջողացնեն գործը, իսկ ես կմնամ իմ կապանքների մեջ։ Ինձ կտանեն այնտեղ, ուր մարդիկ կենդանի թաղվում են հանքերի անձավներում և խլուրդների նման աշխատում են ստորերկրյա մթության մեջ»։ Չնայելով այդ բոլորին, իմ սիրտը հանգիստ էր. ես հավատացած էի, որ վերջ ի վերջո ինձ համար էլ կբացվեր ազատության դուռը, բայց ավելի արդար, ավելի օրինավոր ճանապարհով։ Ցուր մեղքերը ղղջացած, ճշմարտության շավղի վրա՞ կանգնած հանցավորին պետք է ներվեր, պետք է նրա համար փրկություն լիներ։ Եվ եթե մարդիկ այնքան սրատեսություն չունեն, որ քննեն սրտերի բոլոր խոսքերը և որոշեն համառ հանցավորը ղղջացածից, արդարը մեղավորից,— բայց աստված, որի համար ոչինչ գաղտնիք չկա, որ գիտե բոլորը, ինչ որ հասարակ մահկանացուին անհասկանալի և մութն է,— մի՞թե ամենաբարի աստվածը չէր օգնի ինձ։ Իմ հավատը այժմ այնքան ջերմ էր և իմ հույսը այնքան հաստատուն էր, որ ես նրա օգնությանը հավատում էի և սպասում էի։

Գիշերը անցավ առանց որևիցե աղմուկի։ Ամեն ինչ խաղաղ էր, ամեն ինչ յուր սովորական դրության մեջն էր։ Առավոտյան մեզ զարթեցրին խիստ վաղ։ Օրը բավական ցուրտ էր։ Իմ ընկերները ջերմացրին իրանց մարմինը արաղով և չմոռացան մեր պահապան զինվորներին նույնպես խմացնել։ Մենք ճա-

նապարհ ընկանք, մեզանից յուրաքանչյուրը յուր ծանրությունները յուր մեջքի վրա կրելով։ Մեր ետևից գալիս էր մի սայլակ, լծած միայն մի ձիով, որ բերում էր ծեր և զինվորների ավելորդ ծանրությունները։ Նրա վրա երբեմն նստեցնում էին աքսորյալներից նրանց միայն, երբ հիվանդանում էին և չէին կարող ճանապարհը շարունակել։ Իմ ընկերներից երկուսը, այն առավոտ իրանց հիվանդ ձևացնելով, պառկած էին սայլակի վրա։ Պահապանները հիվանդների վրա շատ ուշադրություն չէին դարձնում. ինքը հիվանդությունը հսկում էր նրանց վրա։

Երբ արեգակը բավական վեր բարձրացավ հորիզոնից, օրը սկսեց տաքանալ։ Աքսորականների խումբը առաջ էր ընթանում դանդաղ և ծանր քայլերով։ Նրանց ոտնակապերի երկաթները աններդաշնակ կերպով ձայն էին հանում։

Պահապանների և աքսորականների ուշադրությունը դարձրած էր մի ծերունի հրեայի վրա, որը զանազան ծիծաղելի առակներով զվարճացնում էր նրանց։ Հրեան մի փոքրիկ մարդ էր, որին կոչում էին Ժոզեֆ։ Այդ խեղկատակը կատվի դեմքով, նեղ և խորամանկ աչքերով, բնիկ օդեսացի էր, որը սկզբում պարապում էր մաքսանենգությամբ, իսկ հետո մտնելով խաչագողների ընկերության մեջ, փորագրիչի պաշտոն էր կատարում և նրանց հետ կեղծ թղթադրամներ էր շինում։ Դա միևնույն անձն էր, որ մատնեց ամբողջ ընկերությունը։

Ժոզեֆը ամբողջ խմբի զվարճությունն էր. նրա սրախոսությունները, հանաքները և հրեական թլվատ լեզվով խոսակցությունը թուլացնելու չափ ծիծաղելի էին։ Կարծես թե, այդ բոլորը նրա մեջ մի տեսակ կենսական պահանջ էր դարձել, և այդ պատճառով խեղկատակության ձիրքը ավելի զարգացել էր։ Նայելով նրա վրա, ես բացատրում էի նրա ցեղի մի քանի ընդհանուր գծերը, որոնք առաջ էին եկել կյանքի զանազան պայմաններից։ Խեղկատակությունը ծնունդ է հաճոյամոլության. դրանք երկուսն էլ ճնշված, հալածված ցեղերի հատկություններ են։ Պատմական հանգամանքների խստությունից հրեան այնքան ստոր ընկած է հասարակաց կարծիքից, որ մի շրջանի մեջ գտնվելու ժամանակ ուրիշ բանով չէ կարողանում գրավել նրանց ուշադրությունը, բայց միայն ծաղրածություններով։ Այդ մնում է նրա բնավորության մեջ և այն աստիճան ընտելանում է, որ մինչև անգամ առանց վիրավորվելու թույլ է տալիս ուրիշներին ծաղրել իրան։ Այսպես էր Ժոզեֆը։

Օրը սկսել էր երեկոյանալ։ Դեռ տասն վերստից ավել էր մնում մինչև առաջիկա իշևանը։ Ճանապարհը ձգվում էր անտառի միջով, ուր ասեղնավոր տերևներով պատած ծառերը այնպես խիտ գրկած էին միմյանց, որ մի քանի քայլ հեռվից ուրիշ ոչինչ չէր երևում, բացի ծառերից։ Ճանապարհը նեղ էր, ծառերի ոստերը անդադար դիպչում էին մարդու երեսին և ծակոտում էին։ Բայց այդ չէր արգելում լսել Ժոզեֆի մի հետաքրքիր պատմությունը, որը կեսօրից հետո սկսելով, դեռ չէր ավարտել։ Պատմությունը հետզհետե ավելի ծիծաղաշարժ էր դառնում. բոլորի ուշադրությունը լարված էր դեպի հրեան։ Դա ամոքում էր և մեր հոգնածությունը։ Խումբը դանդաղ կերպով առաջ էր գնում։

Մի տեղ ճանապարհը ավելի նեղ ձև ստացավ. մի կողմից բարձրանում էր փոքրիկ բլուր, իսկ մյուս կողմից, մի ուղղաձիգ զառիվայր իջնում էր դեպի անտառախիտ ձորը և կորչում էր ծառերի մեջ։ Ես լսեցի մի ձայն, որ շատ նման էր սև ագռավի կռնչյունին։ Որքան և բնական կերպով հնչվեցավ այդ ձայնը, դարձյալ ես չէի կարող չհասկանալ, թե դա խաչագողների սովորական նշանախոսություններից մեկն էր, որ նշանակում էր՝ «պատրաստ եղեք»։ Ձայնը կրկնվեցավ, բայց ոչ ոք ուշադրություն չդարձրեց, միայն իմ ընկերները խորհրդավոր կերպով նայեցին միմյանց երեսին։ Ժոզեֆի պատմությունը այդ միջոցին ավելի հետաքրքրական էր դարձել։

Փոքր-ինչ առաջ գնալուց հետո ձայնը երրորդ անգամ կրկնվեցավ։ Այդ միջոցին մեր խումբի մեջ գտնված խաչագողները արագությամբ դուրս եկան ճանապարհից, մտան անտառի մեջ և շուտով ծածկվեցան ժայռերի ետևում։ Պահապաններից մի քանիսը փորձեցին հետամուտ լինել, բայց ժայռերի ետևից և ծառերի միջից սլացող գնդակները երկուսին գետին գլորեցին։ Նրանք ետ դարձան, որ պահեն մնացածներին, որպեսզի չփախչեն։

Այդ բոլորը կատարվեցավ մի քանի րոպեի մեջ։ Ամբողջ խումբին տիրել էր երկյուղ և խորին ապշություն։ Հրացանները դեռ երկու կողմից ևս արձակվում էին, գնդակները սուլելով անցնում էին ծառերի միջից։ Հետո ամեն ինչ լռեց, միայն

անտառի խորքից լսելի էին լինում մուրճերի շտապ-շտապ զարկերը։ Երևում էր, խորտակում էին փախստականների երկաթյա ոտնակապերը։

Կռվի խռովության ժամանակ հափշտակողներից ոչ ոք չերևվեցավ անտառի խորքից։ Նրանք գործում էին իրանց թաքստի տեղից։ Միայն վառոդի ծուխի մեջ ես նշմարեցի մի աղոտ պատկեր։ Որքան էլ կերպարանափոխված լիներ նա, այնուամենայնիվ ես չէի կարող չճանաչել քավոր Պետրոսին։ Նա խորհրդավոր կերպով շարժեց դեպի ինձ յուր մատը և դևի նման կրկին անհայտացավ։ Կարծես, դրանով ասել էր ուզում. «Հիմար, ինչո՞ւ չհետևեցիր իմ խրատներին...»։

Երբ ամեն ինչ լռեց, հանգստացավ, մենք դեռ նոր նկատեցինք, որ խեղճ Ժոզեֆը դիակների թվումն էր։ Գնդակը, որ դիպել էր նրա գլխին, պատահական չէր, այլ նպատակով ուղղված։ Այդ անպիտանը մատնել էր խաչագողներին, ոչնչացրել էր մի ամբողջ հիմնարկություն, որով նրանք միլիոններ վաստակելու հույսեր ունեին։ Խաչագողը մինչև մահ չէ մոռանում յուր ընկերների անհավատարմությունը, և աշխատում է մի օր վրեժխնդիր լինել։ Եվ այժմ Ժոզեֆը ստացավ յուր վարձը։

Սարսափած և երկյուղից խռովության մեջ ընկած պահապանները հրեայի և իրանց երկու ընկերների դիակները դրեցին սայլակի վրա, և մենք շարունակեցինք մեր ճանապարհը։ Իշևանը բավական հեռու էր, մենք հասանք այնտեղ, երբ արևը վաղուց մայր էր մտել, և մութը բոլորովին պատել էր։

Մյուս օրը մենք մնացինք նույն իշևանում։ Պահապանները երկյուղ կրելով, միգուցե մնացած աքսորականների հետ պատահեր միևնույնը, այնօր մեր գնացքը ետ ձգեցին, մինչև պատահած անցքի մասին տեղեկություն կտային մերձակա փոքրիկ քաղաքի կառավարությանը, և մինչև փախստականներին գտնելու միջոցներ գործ կդրվեին։ Ես շատ ուրախ էի, որ մեր ուղևորությունը ընդհատվեց, որովհետև փոքր-ինչ կհանգստանայի, փոքր-ինչ կկազդուրեի իմ սպառված ուժերը։

ԺՌ

ՍԵՐԸ ՉԷ ՀԱՄԲԵՐՈՒՄ

Խաչագողների փախուստից հետո մեր խումբի մեջ մնաց մեկ քրիստոնյա միայն, ազգով վրացի։ Մյուսները Թուրք, Թաթար և այլազգիներ էին։ Ազատվելով խաչագողների անտանելի հասարակությունից, ես սկսեցի որոնել հիշյալ վրացու բարեկամությունը։ Նա մի ուրախ, պարզամիտ և բավական շնորհալի դեմքով երիտասարդ էր Իմերեթիայի կողմերից։ Նա խիստ շուտով մտերմացավ ինձ հետ։ Նրան աքսորել էին սպանության համար։ Ես զարմանում էի, թե ինչպե՞ս մի այնպիսի բարեսիրտ տղան կարող էր սպանություն գործել։

Այդ երիտասարդը օրըստօրե ավելի և ավելի համակրական էր դառնում ինձ։ Նրա բնավորության մեջ այնքան պարզություն կար, որ չէր կարելի չսիրել նրան։

Մեզ արդեն տեղափոխել էին մերձակա փոքրիկ քաղաքը։ Այստեղ ևս մի քանի օր պահեցին մեզ, որովհետև մեր խումբի հետ պիտի միացնեին մի քանի ուրիշ աքսորականներ, որոնց նույնպես Սիբիր էին ուղարկում։

Վասոն— այսպես էր վրացի երիտասարդի անունը— այնքան ընտելացավ ինձ հետ, որ ինձանից չէր հեռանում։ Գիշերները քնում էր իմ կողքին, և շատ անգամ, երբ քունը չէր տանում, ժամերով պատմում էր յուր կյանքի այս և այն արկածները։

Մի գիշեր, նստած իմ մոտ, կարկատում էր յուր մաշված կոշիկները և տխուր, հազիվ լսելի ձայնով շշնջում էր մի երգ։ Երիտասարդը բոլորովին հափշտակված էր յուր զգացմունքների մեջ և գործը համարյա մեքենաբար էր կատարվում նրա ձեռքում։

— Վասո, չե՞ս պրծնում,— հարցրի նրանից։

— Է՜հ, թող անիծե՜ աստված այդ անպիտանները, սաղ տեղ չէ մնացել, կարում ես, կարում, էլի էն է ու էն։

— Մեկ հատը ինձ տուր, ես կօգնեմ քեզ։

— Շնորհակալ եմ, դու միայն ճրագը մոտ բռնիր, ես կկարեմ։

Ես նկատեցի, որ Վասոյի խնդիրը խիստ կարևոր էր. ճրա-

գի մոմը, որ նա կպցրել էր հատակի աղյուսի վրա, այնքան սպառվել և կարճացել էր, որ լույսը կոշիկների վրա չէր տարածում և այսպիսով դժվարացնում էր նրան աշխատել։ Ես վեր առի մոմը, բարձր բռնեցի, նա շարունակեց կարել։

Բայց ինձ հետաքրքրում էր այն, թե ի՞նչ պատճառով աքսորեցին նրան։

— Ես սպանեցի իմ պարոնին, —պատասխանեց նա։

— Ինչո՞ւ համար։

— Երկար է, շատ երկար, եթե պատմելու լինեմ, մինչև լույս չի պրծնի։

— Միևնույն է։ Դու խո չես քնում, իմ քունն էլ չէ տանում, դու պատմիր, ես կլսեմ, այսպիսով ավելի կարճ կլինի գիշերը։

Նա սկսեց պատմել.

«Ես է... իշխանի ճորտերից էի։ Նա շատ վատ մարդ էր, օրինակ քեզ՝ մի գազան։ Պատահում էր կամ տանը կնոջ հետ կռված է, կամ մի ուրիշը բարկացրել է նրան և կամ հարբած է, նա կատաղած գուրս է գալիս տնից վա՛յ այն գյուղացուն, որ կհանդիպի նրան։ Նա իսկույն մի առիթ կգտներ գյուղացուն ծեծելու, հայհոյելու և յուր սիրտը հանգստացնելու։ Օրինակ, պատահում էին այսպիսի դեպքեր. գյուղացին մի զույգ նոր տրեխներ է հագել։ (Նա համբերել չէր կարող, երբ գյուղացին նոր բան էր հագնում և պարոնի նմանություն էր ստանում)։ Տեսար, կանչում է՝ «էյ, մարդ»։ Գյուղացին մոտենում է, գլուխ է տալիս, կանգնում է։— «Այդ ի՞նչ է», ցույց է տալիս նա տրեխները։— «Աղա ջան, ցավդ տանեմ, գնում եմ անտառը»,— պատասխանում է գյուղացին դողալով։— «Տո, անպիտան, եթե առանց տրեխների գնալու լինես, ոտներդ կմաշվե՞ն»,— և հրամայում է խսկույն խլել նրանից տրեխները։ Մի անգամ գյուղացու մեկը փոթկաց նրա մոտ։— «Տո, անշնորհք ավանակ, համարձակվում ես փոթկա՞լ քո պարոնի առջև», ասաց նա և հրամայեց ծեծել խեղճին։

Մեր հարևան Գիորգին մի աղջիկ ուներ,— շարունակեց նա, — նրա անունը Կեկելո էր։ Բայց ի՞նչ աղջիկ, այնքան սիրուն էր, որ կարծես գյուղացու աղջիկ չլիներ, այլ ուղիղ պարոնի տնից գուրս եկած լիներ։ Մի անգամ նա հանդիպեց ինձ դաշտումը, գալիս էր անտառից, շալակած փայտ էր բերում իրանց համար։ Քրտինքը թափվում էր նրա երեսից, թշերը խնձորի

նման կարմրել էին։ Հենց որ տեսա, իմ խելքը գնաց։— «Տուր, Կեկելո, ես կտանեմ շալակդ»,— ասացի նրան։— «Շատ ծանր չէ, ես կարող եմ տանել»,— ասաց նա, ավելի կարմրելով։ Մենք սկսեցինք խոսելով կամաց-կամաց դիմել դեպի գյուղը, երբ մոտեցանք, բաժանվեցանք միմյանցից, որ մեզ միասին չտեսնեն»։

Այդ միջոցին Վասոն այն աստիճան հափշտակված էր յուր պատմությունով, որ ամենևին չէր նկատում, թե ասեղը ընկել էր նրա ձեռքից և կոշիկները նույնպես ընկած էին նրա կողքին։ Նա շարունակեց.

«Ես մորս հայտնեցի, որ Կեկելին նշան դնե ինձ համար. նա էլ հորս հայտնեց։ Հայրս գնաց Գիորգիի տունը. խոստացավ տալ մի այծ, հինգ թունգի գինի, մի քանի սոմար սիմինդր, կարճ ասած, խոսեցին, բարիշեցան, նշանը դրեցին։ Սպասում էինք, որ աշունքը գա, գինին պատրաստվի, որ հարսանիք անենք։ Այդ միջոցին, չեմ իմանում, ի՞նչ սատանա մտավ իմ պարոնի գլխում։ Նա հրամայեց, որ Կեկելոյին վեր առնեն յուր տանը որպես աղախին։

Աշունքը եկավ, գինիները հասան, բայց հարսանիքը չկատարվեցավ։— «Այս տարի չի լինի»,— ասում էր մեր պարոնը։ Իմ սիրտը տրաքվում էր անհամբերությունից։ Բայց ի՞նչ կարող էի անել. երբ պարոնը այսպես էր հրամայում։

Մի անգամ Կեկելոն գտավ ինձ անտառում,. տեսնում եմ, երեսին գույն չէ մնացել։ կարծես թե, սպանված լիներ։ Հարցնում եմ.— «Կեկելո, ի՞նչ է պատահել քեզ հետ»։ Նա ոչինչ չէ ասում. հենց լաց է լինում։ Գրկում եմ նրան. դարձյալ հարցնում եմ,— «Կեկելո, ինչո՞ւ ես լաց լինում»։ Նա արտասուքի միջից ինձ պատասխանում է.— «Ա՜խ, վատ մարդ է... նա շատ վատ մարդ է... նա աստված չունի... նա...»։ Խեղճ աղջիկը չկարողացավ վերջացնել յուր խոսքը, բայց ես հասկացա բոլորը...

Արյունը թռավ գլուխս, ես իստակ կատաղեցա։ Հենց էն սհաթին վազեցի դեպի մեր տունը, խենջալս վեր առի, թաքցրի շերքեզիիս տակ, տնից դուրս եկա։ Առաջ մտա գինետունը, լավ խմեցի, սիրտս պնդացրի, հետո գնացի պարոնի դռանը կանգնեցա, սպասում էի, որ նա դուրս գա։ Տեսա, նա դուրս եկավ, պատրաստվում էր որսի գնալ։ Առաջը կտրեցի, ասելով.— «Ինչո՞ւ ես պահել իմ նշանածին»։ Նա բարկացավ, սկսեց հայհոյել

և չորս կողմն էր նայում, աչքերով որոնում էր յուր սպասավորներին, որ հրամայե ինձ բռնեն։— «Տո՛ւր իմ նշանածը», կրկնում եմ ես, հենց մոտ ու մոտ եմ գնում։ Նա դարձյալ գոռում է.— «Դու, լի՛ր, անզգամ, համարձակվում ես... բռնեցեք այդ անիրավին»։ Ես ուշադրություն չեմ դարձնում, հենց մոտ ու մոտ եմ գնում։— «Հիմա քեզ խեղդել կտամ»,— ասում է ավելի կատաղելով։ Իսկ ես հենց մոտ ու մոտ եմ գնում։— «Տո՛ւր նշանածս, ասում եմ քեզ»։ Նա էլ չհամբերեց մինչև ծառաները հավաքվեին, հարձակվեցավ իմ վրա։ Ես խենջալը խրեցի նրա կողքը...»։

Այդ միջոցին ես նայեցի Վասոյի երեսին, նա այնպես գունատված էր, նրա շրթունքը այնպես դողդողում էին, որ կարծես, հենց այն րոպեում նա յուր արյունոտ խենջալը դուրս էր քաշում բռնակալ պարոնի կողքից։ Երբ նա փոքր-ինչ հանգըստացավ, հարցրի.

— Իսկ դու չփախա՞ր։

— Փախա, բայց երբեմն գիշերով հայտնվում էի մեր գյուղում, որ Կեկելոյին էլ կարողանամ փախցնել։ Աստված չհաջողեց, մի գիշեր բռնվեցա։

Վասոյին ես ավելի սկսեցի սիրել, երբ իմացա նրա կյանքի պատմությունը։ Խեղճ տղան սիրո զոհ էր դարձել։ Սե՛ր... ի՞նչ բան ես դու, ես մինչև այսօր չեմ կարողացել հասկանալ քեզ, թեև ինքս սիրել եմ... և այժմ սիրում եմ...

Վասոն և Կեկելոն, որպես ճորտեր, որպես սեփականություն մի անգութ պարոնի, հոժարությամբ նվիրում են նրան իրանց աշխատանքը, իրանց վաստակը։ Բայց երբ պարոնը դիպչում է այն զգացմունքին, որը սուրբ է յուրաքանչյուր անհատի համար, այն ժամանակ ճնշված, հլու ստրուկն անգամ այլևս չէ համբերում...

Իսկ ե՞ս, ես թշվառականս, ի՞նչ արեցի Նենեի համար, ինչո՞վ ապացուցեցի, որ ճշմարիտ սիրում եմ նրան...

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

Ա

ԱՎԱԶԱԿԱՊԵՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ։ ԱՌԱՋԻՆ ԳԻՇԵՐ

Անցել էր երեք տարի այն օրից, որ ես աքսորվեցա։ Այժմ բավական ընտելացել էի դատապարտյալի տաժանական կյանքին, բավական տանելի էր դարձել ինձ ծանր աշխատությունը հանքերի մեջ, բավական սովորել էի այնտեղի կերակրին և կեցությանը՝ խոնավ, մթին կացարանների մեջ։

Աշխարհից կտրված, կյանքի վայելչություններից զրկված դատապարտյալը յուր շրջանի մեջ ոչինչ բավականություն չէ գտնում։ Այստեղ ամեն մարդ հակամայից է գործում, որովհետև յուր համար չէ գործում։ Ուր չկա շահ և շահերի միություն, շատ բնական է, որ այնտեղ չէ կարող կազմվել ընկերական կյանք, սեր և միաբանություն։ Եվ գուցե այդ է պատճառը, որ այն ահագին խառնիճաղանջ բազմության մեջ մարդ չէ կարող գտնել մի լավ բարեկամ, մի լավ ընկեր։

Միակ բանը, որ երբեմն մոտեցնում է այդ թշվառներին և կապում է միմյանց հետ, է նրանց վիճակի միանմանությունը։ Դժբախտության մեջ մարդը յուր նման ընկեր է գտնում։ Ես գտա մի այսպիսի ընկեր, որի հետ բաժանում էինք մեր վշտերը։

Այդ երիտասարդը հենց առաջին անգամից գրավեց իմ ուշադրությունը, քանի դեռ նրա հետ ծանոթացած չէի։ Նա մի բարեկազմ տղամարդ էր, բարձրահասակ, որի երեսի փոքրինչ խոշոր գծագրությունը տալիս էր դեմքին խիստ այրական բնավորություն։

Ես շատ էի հետաքրքրվում, թե ինչ հանցանքի համար աքսորված էր նա։ Բայց նա յուր մասին ոչինչ չէր խոսում, և

միշտ տխրությունը պատում էր նրա դեմքը, երբ խոսքը վերաբերում էր յուր անձին։ Ինձ ասացին, թե նա եղել է մի նշանավոր ավազակապետ։ Հենց որ այդ իմացա, սկզբում իմ մեջ ծագեց սաստիկ հակակրություն դեպի այդ մարդը։ Ավազակը յուր գործունեությամբ շատ չէ զանազանվում խաշագողներից։ Իսկ խաշագողներին ես ատում էի։ Բայց իմ հակակրությունը հետզհետե անհետացավ, երբ ավելի մոտ ծանոթացա նրա հետ։

Ավազակապետը բնիկ պարսկաստանցի էր, Ատրպատականի կողմերից։ Հայրենակցությունը առաջին բարեկամական կապը եղավ իմ և նրա մեջ։ Բայց երբ իմացա, որ նա ազգով հայ էր, բոլորովին կապվեցա նրա հետ։

Մի գիշեր, երբ երկար թախանձեցի նրան, հոժարեցավ հաղորդել ինձ յուր կյանքի պատմությունը։ Նա սկսեց այսպես.

«Ինձ կոչում են Ջալլադ. դա իմ իսկական անունը չէ. դա իմ մականունն է, որ նշանակում է դահիճ։ Այդ մականունը ստացա ես ոչ թե նրա համար, որ դահճի պաշտոն եմ կատարել, այլ նրա համար, որ շատ արյուն եմ թափել, բայց ոչ անմեղ արյուն... Իմ հայրը Ղարադաղ գավառի հայ մելիքի տընտեսն էր։ Մելիքը չափազանց հավատարմություն ուներ դեպի նա և համարյա յուր տնտեսական բոլոր գործերը հանձնել էր նրան։ Մելիքը միշտ պարսից խաների հետ կյանք վարելով, ընդունել էր նրանց շատ սովորությունները։ Նրա ընտանեկան կյանքը, բարքը, վարքը, կատարյալ պարսկական էր, պակաս էր հարեմը միայն, պակաս էին սեամորթ ստրուկներ և ներքին ծառաներ, որ նրա տունը մահմեդական ընտանիքի ճիշտ կերպարանքը տանար։

Շատ անգամ պատահում էր, որ հայրս մի որևիցե բան էր գնում մելիքի տան համար, և տալիս էր ինձ տանել այնտեղ։ Ես ավելի ուրախությամբ էի կատարում հորս պատվերը, երբ մի բան պետք էր տանել մելիքի կանանոցը։ Ամեն անգամ, այնտեղ մտնելու ժամանակ, մելիքի աղջիկները, աղախինները շրջապատում էին ինձ, «ի՞նչ ես բերել» հարցնում էին, և ամեն կողմից վրա պրծնելով, սկսում էին խլելել իմ տարած փարչաները։ Իսկ երբ իմ տարած բաները աղջիկներին չէին պատկանում, նրանք հանաքներ էին անում, ծիծաղում էին իմ վրա, ջիգրացնում էին ինձ, իսկ ես ամոթից քրտնած, կարմրած, հեռանում էի նրանցից։ Ես թեև արդեն հասակ առած պատանի էի,

բայց ինձանից չէին քաշվում, ինձ վրա նայում էին որպես տաղ տղայի վրա։

Մելիքը, մահմեդականների սովորությանը հետևելով, ուներ մի քանի կնիկներ։ Նրա առաջին կնիկը մեռած էր, որից մնացել էր մի աղջիկ միայն, որին կոչում էին Սանամ։ Խորթ մայրերը, որպես սովորաբար լինում է, վատ էին վարվում Սանամի հետ և շատ բաներում խտրություն էին դնում նրա և իրանց զավակների մեջ։ Սանամը զրկված էր մայրական սերից, զրկված էր առհասարակ ընտանեկան քաղցրությունից։ Ես շատ անգամ հանդիպում էի նրան արտասուքը աչքերում, բայց նա ինձ ոչինչ չէր ասում, նա վաղուց սովորել էր յուր վշտերը թաքցընել յուր սրտում։ Հայրը զբաղված լինելով յուր գործերով, նրա վրա ուշադրություն չէր դարձնում։ Պատահում էր, երբ աղջիկների հագուստի համար զանազան թանկագին իրեր էի տանում ես, երբ Սանամը բաժին չէր ստանում, նա իսկույն լությամբ հեռանում էր, առանձնանում էր մի տեղ, և անձնատուր էր լինում խորին տխրության։

Այսպիսի դեպքերը, որ պատահում էին ոչ սակավ անգամ, վիրավորում էին Սանամի սիրտը, նա վշտանում էր, ոչ թե այն պատճառով, որ նա զրկվում էր այն զվարճություններից, որ վայելում էին նրա մյուս քույրերը, ո՛չ,— Սանամը այդ մասին շատ հպարտ էր,— այլ նա վիրավորվում էր գլխավորապես նրա համար, որ խտրություն էին դնում նրա և մյուսների մեջ և անդադար հիշեցնում էին, թե «դու անբախտ ես, որովհետև մայր չունես»։

Այդ հանգամանքները ծնեցին իմ մեջ մի ջերմ կարեկցություն դեպի դժբախտ աղջկա վիճակը։

Անցան տարիներ, Սանամը արդեն հասունացած օրիորդ էր դարձել, իսկ ես նորահաս երիտասարդ էի։ Այդ հասակում մարդիկ ամեն բան հասկանում են։

Մի անգամ, երբ մոտենում էր զատկի տոնը, մելիքի աղջիկները կարել էին տալիս իրանց համար նոր հագուստներ։ Սանամի համար նույնպես ձևել էին տվել, բայց նա ամենևին չէր ջանում, որ շուտով կարվեն և զատկվա համար պատրաստ լինեն։ Ես հարցրի պատճառը, նա պատասխանեց.

— Ի՞նչ կանեմ կարմիր շապիկը, երբ սիրտս միշտ սև ու սև է հագած...

Նա այլևս չխոսեց և հեռացավ։

Ես նկատեցի, որ Սանամը այժմ չէր տանջվում այն ցավով, որ երեխայության ժամանակ շատ անգամ արտասուք էին թորեցնում նրա աչքերից։— Այժմ նրա տանջանքը բոլորովին հոգեկան էր...

Սանամը մի առանձին մտերմություն չուներ դեպի ինձ, նա նայում էր ինձ վրա, որպես յուր հոր տանը մեծացած սպասավորի վրա։ Որքան էլ ճնշված լիներ նրա դրությունը, այսուամենայնիվ, նա մելիքի աղջիկն էր, իսկ ես՝ նրա հոր մոտ ծառայողի որդին։ Ես շատ էի աշխատում շոշափել նրա սրտի խորքերը, բայց նա այնքան ծածկամիտ էր, որ երբեք յուր սիրտը չէր բաց անում ինձ մոտ։ Նա միայն համարում էր ինձ մի երիտասարդ, որ յուր բոլոր շրջապատողներից ավելի համակրություն ուներ դեպի նա, և որին պատահած ժամանակ կարող էր հավատալ և ասել նրան մի քանի խոսքեր։

Մի անգամ գտա նրան սարսափելի խռովության մեջ, կարծես թե, սպանված լիներ հուսահատությունից։ Նա դարձավ դեպի ինձ այդ խոսքերով.

— Աղաչում եմ քեզ, գնի՛ր ինձ համար մի կտոր աֆիոն, որ կլինի իմ առաջին և վերջին խնդիրը քեզանից։

Իսկույն հասկացա նրա միտքը։

— Ի՞նչ կա, ի՞նչ է պատահել,— հարցրի ես ոչ սակավ զարհուրելով։

Նա ուշադրություն չդարձրեց իմ հարցերի վրա, և կրկնեց յուր խնդիրը ավելի հրամայական ձայնով.

— Քո գիտնալու բան չէ... գնա՛ գնի՛ր, ինչ որ ասում են քեզ... հենց այսօր, հենց այս րոպեիս... գնա՛, մի ուշացի՛ր...

Ես դուրս եկա Սանամի սենյակից, նրան այն հույսի մեջ թողնելով, թե կկատարեմ նրա խնդիրքը։ Բակում ինձ հանդիպեց մելիքի վաղեմի ձիապանը, մի ծերունի, որ ծառայում էր այդ տան մեջ նրա հոր ժամանակներից։ Ծերունին լսելով, որ ես կանչեցի նրան, շարունակեց յուր դանդաղ քայլերը և մտավ ախոռատունը։ Ես հետևեցի նրան, պատմեցի, թե ինչ դրության մեջ գտա Սանամին։

— Ամեն բան տակնուվրա եղավ...— ասաց նա ինքն իրան խոսելով,— էլ ի՞նչ մնաց... ամեն բան կորավ... մնացել էր մեր սուրբ հավատը, այն էլ կորավ...

— Ի՞նչ է պատահել,— հարցրի ես,— ոչինչ չհասկանալով նրա մթին խոսքերից։

— Ի՞նչ է պատահել...— կրկնեց նա գլուխը շարժելով, բայց այդ միջոցին ոսկեգույն նժույգներից մեկը, տեսնելով յուր ծերունի խնամատարին, սկսեց ուրախությամբ խրխնջալ և առջևի սմբակները հատակին զարկել։ Նա դարձավ դեպի նժույգը, ասելով.— «Սարի, խելոք կաց»։ Սարին փոքր-ինչ հանգստացավ, և նա կրկին դիմեց ինձ դարձյալ նժույգի վրա խոսելով.

— Հինգ տարուց ավել է, որ աշխատում եմ այդ անզգամին խելքի բերել, բայց դա հենց էն գիժն է ու էն գիժը։

Ծերունի Թունին սաստիկ սիրում էր յուր ձիաների մեջ կարգ պահպանել, և մանավանդ ներել չէր կարող, երբ նրանք մի այլ մարդու ներկայությամբ, չէին հետևում համեստության կանոններին։ Նա պատրաստվում էր ավելի երկար բացատրություններ տալ յուր կարգապահության մասին, բայց իմ համբերությունը հատավ, ես կրկին հարցրի.

— Դու այն ասա՛, ի՞նչ է պատահել։

— Էլ ի՞նչ լինի... ամեն բան փչացավ... ամեն բան ծուռն է գնում...— Նժույգը դարձյալ ընդհատեց նրա խոսքը։— «Սարի, սատանայի ծնունդ, քեզ են ասում, խելոք կաց»։

Նա մոռանալով իմ հարցմունքը, մոտեցավ Սարիին, սկսեց հայրաբար փայփայել նրա գեղեցիկ բաշը և նորից խրատներ կարդալ։ Նժույգը լսեց նրա խրատները, հանգստացավ, իսկ ծերունին եկավ, կրկին նստեց իմ մոտ։

— Անցա՜ն, գնացին հին ժամանակները... խոսեց նա խորին հոգվոց հանելով.— լինում էր, շատ անգամ հանգուցյալ մելիքը մտնում էր այստեղ. ձիաները մեկը մյուսի կողքին շարված էին հիսունի չափ, շաղ, սիրուն, կասես թե, ամեն մեկը մի ռաշխ լիներ։ Հանգուցյալի սիրտը փառավորվում էր, ձեռքով զարկում էր իմ քամակին, «շա՜տ ապրես, ասում էր, Թունի, ձիաները լավ ես պահել»... ու այն րոպեում հանում էր յուր հագիցը կաբան, ինձ խալաթ էր տալիս։ Բայց հիմա... ոչ այն մելիքը կա, և ոչ այն ձիաները... Բոլորը պստիկ մելիքը ընծայեց պարսիկ խաներին... Բայց առա՞ջ... պարսիկ խաներն էին մեզ ձիաներ փեշքաշ անում, որ հանգուցյալ մելիքը նրանց հոգին չհաներ... տերևի նման դողդողում էին, երբ նրա շվաքն էին տեսնում...

Մելիքների տան վաղեմի փառքի հիշատակը և նրա թուլանալը ներկա մելիքի օրերում այն աստիճան ցավերով լցրած էին բարեսիրտ ծերունու սիրտը, որ նա, կարծես, բոլորովին չէր նկատում իմ ներկայությունը, և իսպառ մոռացավ այն հարցը, որով ես մի քանի անգամ դիմեցի նրան։ Ես դարձյալ հարցրի.

— Ես այդ բոլորը գիտեմ, դու այն ասա՛, ի՞նչ է պատահել Սանամի հետ։

Նա դարձյալ ինձ համբերությունից հանեց յուր երկարաբանությամբ։

— Խե՜ղճ աղջիկ, երանի՜ թե, բնավ ծնված չլիներիր... երանի քո մորը, որ շուտ մեռավ և աչքերով չտեսավ այդ նախատինքը... Բայց այնոր Թունին մեղավոր էր, նա մնաց, չմեռավ և չտեսած բաներ տեսավ... Մի այդպիսի բան կարո՞ղ էր պատահել հանգուցյալ մելիքի օրերում։ Նրա ժամանակում աստուծո բարությունով լցված էր մեր երկիրը. գայլն ու գառը միասին էին ապրում. մարդիկ խաղաղությամբ ցանում էին, հնձում էին, ուտում էին, ուրախանում էին... Բայց հիմա՞, հիմա մարդ ոչ յուր գլխի տերն է և ոչ յուր ապրանքի տերն է... ամեն բան փչացավ... ոչ կարգ կա, ոչ կանոն... ամեն մարդ յուր սրտի ուզածն է անում... Իսկ մեր մելիքը յուր քեֆերից չէ արթնանում... Բայց այդ վերջինը... նրա այդ վերջին արարմունքը... ա՜խ, աստված, այդ ի՞նչ բան է...

— Ի՞նչ արարմունք,— կոչեցի ես բարկությամբ,— դե՛ ասա՛։ Ի՞նչ ես սիրտս տրաքեցնում։

— Ի՞նչ արարմունք... դու դեռ չե՞ս լսել,— հարցրեց նա զարմանալով։

— Ես ոչինչ չեմ լսել։

— Մեր մելիքը (ա՜խ, տեր աստված, նրան մեքիչ խելք տուր) հա՛, մեր մելիքը ամեն բան ոտքի տակ տվեց, ամեն բան տակնուվրա արեց... Խաները նրա հորից տերևի նման դողում էին, երբ գալիս էին նրա սալամին, ժամերով կանգնում էին դռանը, մինչև հրաման չէին ստանում, չէին համարձակվում ներս մտնել։ Բայց թուլասիրտ որդին հիմա խաների ոտքերն է լիզում, խոնարհվում է նրանց առջև... Այդ բավական չէ՛, յուր հարազատ աղջիկը նրանց կնության է տալիս... մի լույս հոգի է կորցնում...

— Սանամի՞ն է տալիս,— հարցրի ես սարսափելով...

— Սանամին, ապա ո՞ւմը,— պատասխանեց նա, յուր մաքրած աչքերից արտասուքը սրբելով։

Ես հասկացա դժբախտ աղջկա խռովության պատճառը և իսկույն դուրս եկա ախոռատնից։ Արևը արդեն մայր մտնելու մոտ էր։ Ես սպասում էի, մինչև բոլորովին մթնի, որ հարմար ժամանակ գտնեմ Սանամի հետ տեսնվելու։

Բայց մինչև մեր տեսնվելը, հարկավոր է ձեզ տեղեկացնել, որ այն ժամանակ Ղարադաղի գավառում կային հայոց երկու նշանավոր մելիքներ. մեկը մեր մելիքն էր, իսկ մյուսը, նույնպես հին տոհմից, ավելի զորավոր էր, քան թե մերը։ Ղարադաղի հայերի իշխանությունը բաժանված էր այդ երկուսի մեջ։ Երկուսն էլ անմիաբան, հակառակ միմյանց, միշտ աշխատում էին ստորացնել միմյանց, վնասել միմյանց, և այդ պատճառով ներքին երկպառակությունը երկրից անպակաս էր լինում։ Պարսիկ խաները, օգուտ քաղելով դրանց թշնամությունից, ավելի բորբոքում էին կռիվը։ Եվ այդ, իհարկե, ավելի ձեռնտու էր նրանց, երբ հայոց գլխավորները չէին կարող միանալ, որ ընդհանուր ուժերով պատերազմեին երկրի արտաքին թշնամու դեմ։

Վերջին ժամանակներում մեր մելիքը մտածում է բոլորովին ոչնչացնել յուր հակառակորդին, և այդ նպատակին հասնելու համար, աշխատում է դեպի ինքը գրավել Քուրդաշտի խանին, խոստանալով որպես բարեկամության առհավատչյա գեղեցիկ Սանամին նրան կնության տալ։

Մի այնպիսի մարդ, որպես մեր մելիքն էր, պատրաստ էր յուր փառասիրության համար զոհել ամեն ինչ։ Նա նայում էր յուր աղջկա վրա, որպես յուր նժույգներից մեկի վրա, որ շատ անգամ ընծայում էր այս և այն խանին, նրանց բարեկամությունը գրավելու համար։

Պարզ, մաքուր, անարատ մնացած ժողովրդի կրոնական զգացմունքը վիրավորվում էր, տեսնելով, որ յուր մելիքը մահմեդական սովորություններին է հետևում, բայց նրա խուլ բողոքը լսել չի լինում։

Դուք մի փոքր տեղեկություն ստացաք մեր երկրի այն ժամանակվա դրության մասին,— շարունակեց ավազակապետը,— հիմա դառնանք դեպի օրիորդ Սանամը։

Ախոռատան բակից մի փոքր դուռ տանում էր դեպի պարտեզը, որ կպած էր մելիքի ամրոցին։ Սանամը սովորություն ուներ երեկոյան պահուն պարտեզում պտտելու։ Ես մտա այնտեղ, հուսալով, թե կգտնեմ նրան։ Երկար անհանգիստ կերպով թափառում էի, բայց ոչ ոքին չտեսա։ Արևը մտավ, մութը սկսեց հետզհետե թանձրանալ։ Ես մտա ամրոցը այն դռնով, որ ուղղակի տանում էր դեպի Սանամի սենյակը։ Նախասենյակում ճրագ չկար։ Մոտեցա նրա կացարանի դռանը, ներսից լսվում էր մի այսպիսի սոսկալի խոսակցություն.

— Լո՛ւռ կաց, անզգամ... ինչպե՞ս ես համարձակվում... քեզ մորթել կտամ... ինչ որ ասում եմ, պետք է հնազանդվես...

Այդ նրա հոր ձայնն էր։

— Հողե՞մ քո սարսաղ գլուխը... էլ ի՞նչ ես ուզում... կգնաս խանի տանը, խանում կդառնաս... միշտ զառ ու ղումաշ կհագնես...

Այդ նրա խորթ մոր ձայնն էր։

— Թե որ սպանեք, թե որ կտրատեք ինձ, էլի այն կասեմ՝ պարսիկի կին չեմ դառնա, Հոգիս չեմ կորցնի...

Այդ Սանամի պատասխանն էր։

Ես ետ քաշվեցա, մի անկյունում կծկվեցա, երբ լսեցի մելիքի քայլերի ձայնը։ Նա յուր կնոջ հետ դուրս եկավ, անցավ իմ մոտից, բայց մութի մեջ չկարողացավ նկատել ինձ։ Ես լսեցի հետևյալ խոսակցությունը.

— Ա՛յ, մարդ,— ասաց կինը.— դու ինչո՞ւ ես մտիկ անում այն քածի ասածներին, ինչ որ ուզում է, թող անե. դու խանին խոսք ես տվել, խո չե՞ս կարող խոսքից ետ կանգնել։

— Ես նրա լաց ու սուգին մտիկ չեմ տա,— պատասխանեց մելիքը,— ես տղամարդ եմ, իմ թքածը չեմ լիզի...

Սանամի վիճակը արդեն վճռված էր։ Այր ու կին համաձայն էին։ Դժ-ախտ օրիորդի ընդդիմադրությունը կմնար ապարդյուն, եթե մեկը նրան օգնության չհասներ։

Մինչև ես այն մտածության մեջ էի, թե ի՞նչ ելք պետք է գտնել, նախասենյակ մտավ օրիորդի դայակը, ճրագը ձեռքին։ Պառավը տեսնելով ինձ, կանգնեց.

— Ախար այդ լավ բան չէ...— ասաց նա ցավալի ձայնով, — ախար այդ ընդդեմ է մեր տեր աստծուն... ո՞վ է տեսել մի

այդպիսի բան... ա՜խ, այդ ի՞նչ են ուզում անել, սուրբ աստվածածին... Քանի՜, քանի տարիներ կուրծքիս վրա պահել, մեծացրել եմ նրան... իմ աչքի լույսի պես պահել եմ... հիմա ուզում են տալ անօրենին... ուզում են հոգին, հավատը կորցնել...

Պառավը նկատեց, որ ես համբերություն չունեմ նրան լսելու, հարցրեց.

— Ո՞ւր ես գնում։

— Սանամի մոտ։

Նա էլ էր ցանկանում մտնել օրիորդի մոտ, բայց երբ տեսավ, որ ես այնտեղ եմ գնում, չկամեցավ խանգարել մեր տեսությունը, ետ դարձավ, ասելով.

— Գնա, մի ուշացիր, նա քեզանից խոսք կլսե, ասա՛, թող ականջ չդնե հորն ու մոր խոսքին, ասա՛, թող չկորցնե լույս հավատն ու հոգին...

Ես հակառակ իմ սպասածին, գտա Սանամին բավական խաղաղ դրության մեջ։ Բոցավառված աչքերի կրակը, որ տեսել էի այնօր առավոտյան, կարծես թե հանգել էր, միայն գուսնաթափ դեմքի վրա երևում էին խորին հուսահատության նշաններ։

— Բերեցի՞ր, —հարցրեց նա անհամբերությամբ։

— Ի՞նչը,— հարցրի ես։

— Այն, որ առավոտյան խնդրեցի քեզանից։

— Այն, որ դու պահանջեցիր, այլևս պետք չի լինի...— պատասխանեցի ես։

Նա երեսը շուռ տվեց ասելով.

— Լավ, հեռացիր, էլ չեմ ուզում...

Ես անշարժ մնացի։ Նա շարունակեց.

— Ի՞նչ մարդիկ են... չեն օգնում գոնե մեռնել ինձ...

Նա կրկին նայեց ինձ վրա, և տեսնելով, որ դեռ կանգնած եմ, ասաց փոքր-ինչ հրամայական ձայնով.

— Խնդրում եմ ինձ մենակ թողնել։

Ինձ հայտնի էր օրիորդի հաստատամտությունը, ես չհեռացա, ես գիտեի, թեև ես աֆիոն չդնեցի նրա համար, բայց իմ հեռանալուց հետո նա այլ միջոցով անձնասպանություն կգործեր։ Ես մոտեցա, ասելով.

— Թեև աֆիոն չգնեցի, բայց բերել եմ ձեզ համար մի այլ դարման...

— Ի՞նչ դարման,— հարցրեց նա հանգստանալով։

— Ես ձեզ պետք է ազատեմ...

— Շնորհակալ եմ...— պատասխանեց նա արհամարհական եղանակով.— դու ինձ կազատեիր, եթե կբերեիր իմ խնդրածը...

— Ես ցանկանում եմ, որ դուք կենդանի մնաք և միևնույն ժամանակ ազատված լինեք։

— Դա անկարելի բան է... ես ճանաչում եմ իմ հորն ու մորը...

— Կարելի է, եթե դուք կընդունեք իմ առաջարկությունը...

— Ի՞նչ եք ուզում ասել։

— Փախչենք, հեռանանք այստեղից, եթե ոչ, առավոտյան ձեզ բռնությամբ խանի ամրոցը կուղարկեն։ Ամեն ինչ պատրաստված է ձեզ ճանապարհ դնելու համար։ Փախչենք, քանի որ դեռ ժամանակը կորած չէ։ Հենց այս գիշեր ես կտանեմ ձեզ մի ապահով տեղ, ուր ոչ ոք չէ կարող գտնել ձեզ։

Մի քանի վայրկյան մտածելուց հետո պատասխանեց նա.

— Ոչ։ Թող ես մեռնեմ. այդ ավելի լավ է...

Նա վախենում էր հասարակաց կարծիքից, հիմար ամբոխի դատապարտությունից։ Մարդիկ կծաղրեին նրան, ասելով, թե փախավ յուր հոր սպասավորի հետ։ Ես չոքեցի նրա առջև, աղաչելով.

— Սանամ, այս տան մեջ ես եմ եղել ձեր ամենահավատարիմ սպասավորը, նույնպես և կմնամ այսուհետև։ Մենք համարյա թե միասին ենք մեծացել և ձեզ՝ պետք է հայտնի լինի, թե ո՞ր աստիճան հարգում եմ ձեզ։ Ապավինեցեք ձեր ծառայի օգնության վրա, որ հանձն է առել ամեն ինչ ձեր կյանքը և պատիվը պաշտպանելու համար։

Երկար ես բաց չէի թողնում նրա ձեռքը, մինչև պատասխան չստանամ, երկար իմ արտասուքով լի աչքերը հառած էին դեպի նրա գունաթափ դեմքը։ Նա տարուբերվում էր սարսափելի անվճռականության մեջ։ Նա այնքան կամքի զորություն չուներ, որ մաքառեր ընդունված նախապաշարմունքների դեմ։ Ես սկսեցի ավելի ու ավելի թախանձել նրան, մինչև լսեցի նրա բերանից այդ ուրախալի խոսքը.

— Համաձայն եմ...

Ես կանգնեցի ասելով.

— Գնում եմ պատրաստելու, ինչ որ պետք է մեզ ճանապարհի համար։ Դուք պարտեզում կսպասեք ինձ։

Իմ ուրախությանը չափ չկար։ Օրիորդի սենյակից դուրս գալը և ծերունի Թունիի մոտ մտնելը մի քանի րոպեի գործ եղավ։ Զիապանը դեռ քնած չէր։ Ես գտա նրան խորին տխրության մեջ, երևի, նա էլ Սանամի վրա էր մտածում։ Բոլորովին վստահ լինելով ծերունու բարեսրտության վրա, հայտնեցի նրան իմ դիտավորությունը։ Նրա խորշոմած դեմքի վրա երևաց ուրախության նման մի բան, և ինձ գրկելով ասաց.

— Օրհնյալ լինիս, աստված զորացնե քեզ։ Եթե չլիներ Թունին վաթսուն տարեկան, նա ինքը կաներ այդ բանը, նա չէր թող տա, որ մեր լուսավորիչ հոր գառը գայլերին տային... Բայց Թունիի մեջ այժմ առաջվա ուժը չէ մնացել։ Կար ժամանակ, որ ալևոր Թունին էլ մի տղամարդ էր, տասն, քսան պարսիկին մարդ չէր ասի... Գնա՛ց էն ժամանակը... Բայց դու դեռ ջահել ես. քեզանում արյունը դեռ եռի է գալիս. դու կարող ես շատ բան անել...

Ես ընդհատեցի նրան ասելով.

— Դե՛, շուտ, Թունի ապեր, երկար խոսելու ժամանակ չէ. պետք է թամքել ձիաներից երկուսը։

— Հա՛, պետք է թամքել, իհարկե, պետք է թամքել, երկու ամենալավը մեր ձիաներից։ Թող առավոտյան մելիքը ջարդել տա Թունիի ալևոր գլուխը, այդ ոչինչ, միայն թե նա ազատված լինի... Թող ազատվի իմ հրեշտակը, նա յուր հանգուցյալ մոր կտորն է, նրա նման բարի է... աստված հանգիստ, արքայություն պարգևե նրան։ Հանգուցյալի պես կնիկ չկար մեր երկրում, այնպիսի լավ սիրտ ուներ, որ ճանճի էլ չէր նեղացնի... Շատ անգամ մտնում էր նա աղքատ Թունիի խրճիթը, և երբ երեխաներից մեկին մերկ էր տեսնում, հագցնում էր, երբ մեկին հիվանդ էր տեսնում, օգնում էր... Ոչ մի օր դատարկ ձեռքով նա իմ շեմքի վրա ոտք չէր կոխում, ամեն տնգամ մի բան կբերեր իմ երեխաների համար, կասեր, «Թունի, դու էլն չունես, ես սիրտք է պահպանեմ նրանց...»։ Այդ բոլորը այևոր Թունին չի մոռանա... Թեկուզ մեռնի, թեկուզ նրա գերեզմանի վրա խոտեր բուսնեն, դարձյալ չի մոռանա...

Մինչև ծերունին կվերջացներ յուր հին հիշողությունները,

ես ձիաներից երկուսը թամքեցի։ Հետո նշանակեցի մի տեղ, խնդրելով նրան, որ ձիաները տանե այնտեղ և սպասե մեզ։ Իսկ ես վազեցի դեպի մեր տունը, որ զենքերս վեր առնեմ։ Գիշերը խիստ մութն էր։ Մարդիկ քնած էին։ Փողոցներում ոչ ոք չէր երևում։

Վերադառնալով մեր տնից, մտա պարտեզ, ուղիղ դիմեցի դեպի այն կողմը, ուր պատվիրել էի օրիորդին սպասել ինձ։ Ես գտա նրան յուր ծառայի հագուստով։ Հազիվ կարելի էր ճանաչել նրան, եթե չասեր նա «այդ ես եմ»։

Մելիքի ամրոցի մեջ տիրում էր խորին լռություն։ Լուսամուտներից ոչ մի ճրագ չէր երևում։ Բոլորովին աննկատելի կերպով դուրս եկանք պարտեզից, և սկսեցինք դիմել դեպի այն կողմը, ուր Թունին յուր ձիաներով սպասում էր մեզ։ Օրիորդը շնորհակալությամբ համբուրեց ծերունու աջը և առեց նրա օրհնությունը։ Ես օգնեցի նրան նստել ձի։ Մենք հեռացանք։

Ամեն ինչ խաղաղ հանգստության մեջ էր։ Ոչ մի շնչավոր արարած չէր երևում։ Ես ետ նայեցի, ծերունին դեռ անշարժ կանգնած էր յուր տեղում, և որպես մարմնացած բարեսրտություն, ձեռքերը բարձրացրել էր դեպի երկինք, մեզ համար հաջողություն էր բարեմաղթում...»։

Բ

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՇԵՐ

Ավազակապետի պատմությունը այնքան գրավել էր իմ ուշադրությունը, որ ամենևին չէի նկատել, թե գիշերը աննկատելի կերպով անցել էր։ Երբ արեգակի առաջին շավիղները ներս ցոլացին մեր արգելանոցի նեղ լուսամուտներից, այդ ժամանակ դռները բացվեցան, և պահապանների կոպիտ ձայնը ընդհատեց հետաքրքիր պատմությունը։ Մեզ խումբով դուրս քշեցին դեպի հանքերը աշխատելու։

Ավազակապետը ամբողջ օրը լուռ էր, նրա քաջազնական դեմքը պատած էր մի խորհրդավոր մռայլով։ Ես անհամբերությամբ սպասում էի գիշերին, որ լսեմ նրա պատմության շարունակությունը։

Բայց ինձ ավելի զարմացնում էր նրա անձնավորությունը. այդ անունը «ավազակապետ» ամենևին սազ չէր գալիս նրան. նրա մեջ կային շատ գեղեցիկ հատկություններ. նա ուժեղ էր, որպես Հերկուլես, և մեծահոգի ու բարի էր, որպես մի ազնիվ հերոս։ Նա ոչ միայն ուներ մի առանձին սեր դեպի ինձ, այլ թշվառականների ամբողջ հասարակության վրա նայում էր խորին ցավակցությամբ։ Այդ պատճառով բոլորը հարգում էին նրան։

Ավազակապետը անկիրթ ևս չէր. նրա բավական մշակված լեզուն և առողջ դատողությունները ցույց էին տալիս, թե ինքը գրագետ ոմն էր։ Որտեղի՞ց պետք է ուսած լիներ, երբ նրա ժամանակ Ղարադաղում չկար ոչ մի դպրոց։ Այդ հարցին պատասխանեց նա, թե յուր պատանեկության ժամանակ հայրը ուղարկեց նրան Տաթևի վանքը, ուր մնաց նա ամբողջ վեց տարի։ Այդ վանքում մեծ հռչակ էր ստացել մի վարդապետ որպես քաջ հայկաբան, ճարտասան և աստվածաբան։ Նրա մոտ ուղարկում էին ղարադաղցիք իրանց զավակներին։ Նրա աշակերտների թվում ուսանում էր և ինքը։

Այնօր աշխատությունից արձակեցին մեզ սովորականից խիստ վաղ, որովհետև հետևյալ օրը տոն էր։ Մենք խումբով անցնում էինք մեծ փողոցի միջով, որի երկու կողմերում միմյանց մոտ շարված էին փոքրիկ խանութներ։ Այդ խանութներում ծախվում էին ըստ մեծի մասին այնպիսի վաճառքներ, որ պետք էին աքսորականներին, զինվորներին, տեղային պաշտոնատարներին, հանքային արհեստավորներին, վարպետներին և այլ ծառայողներին։ Մանրավաճառների խանութների շարքում կային դարբնոցներ, հացթուխներ, դերձակներ, գինետներ, խոհարարներ և ուրիշ պիտույքների կրպակներ։

Փողոցը լիքն էր մարդիկներով։ Հետևյալ օրվա տոնի համար ամեն ոք գնում էր ինչ որ իրան պետք էր։ Բայց իմ ուշադրությունը գրավեց մի մուրացկան, որ մի խանութից մյուսը անցնելով, ողորմություն էր խնդրում։ Հնացած, պատառոտած, կիսակարկատ ցնցոտիներից շատ տեղ երևում էր նրա մարմնի մերկությունը։ Մի նույնպիսի հնամաշ տոպրակ ուսից քարշ էր ընկած։ Գլուխը կռացած մինչև գետին, իսկ քամակից բարձրացել էր մեջքի ահագին կուզը։ Յուր դողդոջուն մարմինը հազիվհազ կարողանում էր ոտքի վրա պահել, նեցուկ տալով կուրծ-

քին ձեռքի ցուպը։ Նա կաղկաղալով քարշ էր գալիս մի խանութի դռնից դեպի մյուսը և ցավալի ձայնով մրմնջում էր. «Ողորմություն արեք, պարոններ, հիվանդ, սոված աղքատին»։ Ամեն մի անգութ սրտի վրա կարող էր ազդել նրա դառն հառաչանքը։

Երբ նա տեսավ աքսորականների խումբը, մոտեցավ։ «Դուք ավելի թշվառ եք, քան թե ես» ասելով, սկսեց յուր հավաքած գրոշները բաժանել նրանց։ Նա դրեց և իմ ափի մեջ երկու հատ հինգկոպեկանոց։ Այդ ժամանակվա հինգ կոպեկանոցները այնքան մեծ էին, որ կարող էին իշի նալի հետ մրցել։ Ես նայեցա մուրացկանի երեսին և շվարած մնացի... Ավազակապետը իմ կողքին կանգնած էր։ Երբ մուրացկանը հեռացավ, նա ասաց.

— Այդ դեմքը ծանոթ է ինձ...

Ես ոչինչ չպատասխանեցի։

— Մի՞թե նա այժմ կաղ է դարձել և մեջքին կուզ ունի...— ասաց նա ինքն իրան։

Տեսնելով, որ ավազակապետը ճանաչեց մուրացկանին, ես այլևս չթաքցրի նրանից, պատասխանեցի.

— Նրա ոտները քո և իմ ոտներից ավելի ուղիղ են, մեջքն էլ նույնպես, միայն նա այնպես ձևացրել է իրան։ Այդ մարդիկը հարկավորած ժամանակ գիտեն իրանց կույր, կաղ, սապատավոր ձևացնել։ Տեսա՞ր նրա խառնված մազերը, խճճված մորուքը, ողորմելի երեսը, բոլորը շինծու էր։

— Այդ երեսը ծանոթ է ինձ...— դարձյալ կրկնեց ավազակապետը։

— Որտե՞ղ ես տեսել նրան։

— Հետո կպատմեմ...

Խումբը անցավ։ Ես մուրացկանից ստացած երկու հատ հինգկոպեկանոցները դրեցի գրպանս, այնտեղ մատներով շոշափեցի, հայտնվեցավ, որ հինգկոպեկանոցների մեջտեղում գրած էր բոլորակ ձևով ծալած թղթի կտոր։ Առանց կարդալու, արդեն երևակայում էի, թե ինչ պետք է գրված լիներ այն թղթի վրա, որ խորհրդավոր ծրարի մեջ հասցրեց ինձ մուրացկանը։ Այսուամենայնիվ, մի պատեհ ժամանակ էի որոնում, որ կարդամ թուղթը։

Երբ հասանք մեր արգելանոցը, արդեն մութն էր, ճրագները վառվում էին։ Ես առիթ գտա թուղթը կարդալու։ Նրա մեջ

գրված էին հետևյալ տողերը. «Մուրադ, ամեն ինչ կարգադրված է քո փախուստի համար։ Հուսով եմ, որ դու այժմ կհետևես իմ խորհուրդներին։ Դու երկրորդ անգամ ինձանից նամակ կստանաս և նրա համեմատ կվարվես։ Պետրոս»։

Նամակը կարդացի ես մի այնպիսի տեղում, ուր թույլ են տալիս կալանավորներին մենակ մտնել։ Պատին կպցրած էր մի ճրագ. թուղթը բռնեցի ճրագի վրա և քավոր Պետրոսի խորհրդավոր ազդարարությունը մի վայրկյանում ոչնչացավ։

Ինձ հետաքրքրում էր ավազակապետի այն խոսքը, թե մուրացկանի դեմքը նրան ծանոթ էր։ Ես համոզված էի, որ անպատճառ այդ ծանոթության հետ կապված կլիներ մի ամբողջ պատմություն։ Որովհետև քավոր Պետրոսը այն պտուղներից չէր, որ նրա ճաշակելը մնար առանց հետևանքի։

Գիշերը, երբ մեզ տեղավորեցին մեր կացարաններում, ես խնդրեցի ավազակապետից, որ պատմե, թե ինչ առիթով ծանոթ է եղել ծպտյալ մուրացկանի հետ։ Նա հաճությամբ կատարեց իմ խնդիրքը։

«Դու հիշո՞ւմ ես, մի անգամ պատմեցի քեզ, որ իմ պատանեկության հասակում հայրս ուղարկեց ինձ Տաթևի վանքը ուսում առնելու։ Այդ միջոցներում լուր տարածվեց, թե Որոտնա վանքում հայտնվել է մի հրաշագործ ճգնավոր։ (Որոտնա վանքը հեռու է Տաթևի վանքից կես օրվա ճանապարհով միայն)։ Ճգնավորի մասին խոսում էին, թե նա ոչ ուտում է, ոչ խմում է, այլ լիացած է սուրբ հոգու շնորհիվ, թե նրա կերակուրը մշտական աղոթքներն են։ Նրա մասին պատմում էին զանազան հրաշքներ, այդ պատճառով ամեն կողմից կույրեր, կաղեր և զանազան տեսակ հիվանդներ դիմում էին վանքը ճգնավորից բժշկություն գտնելու համար։

Լսելով ճգնավորի համբավը, իմ հինգ տարի շարունակ անդամալույծ մայրս հանգստություն չէր տալիս ինձ։ Անդադար տնից նամակ էի ստանում, որ գնամ մորս բերեմ ճգնավորի մոտ։ Նա էլ ցանկանում էր առողջանալ և ամուր ոտների վրա ման գալ։ Հայրս էլ նույնն էր ցանկանում։ Ես ստիպվեցի առժամանակ ընդհատել իմ ուսումը, Տաթևի վանքից գնացի մեր տունը մորս բերելու համար։ Հայրս դրեց մեզ հետ ամեն բան, ինչ որ արժան էր վանքին ընծա տանելու համար։

Որոտնա վանքը հասնելուց երկու օրից հետո մեզ թույլ

տվեցին այցելել ճգնավորի մոտ։ Մենք գտանք նրան յուր ձեռքով ապառաժի մեջ փորած մի քարանձավում, ուր նա ապրում էր. ուր սովորություն ուներ աղոթելու և յուր անձը զանազան ճգնություններով տանջելու։ Այնտեղ տարավ մեզ վանքի աբեղաներից մեկը։ Ճգնավորը այդ միջոցին աղոթքով զբաղված չէր, այլ նստած էր յուր խուցի մեջ, բոլորովին մերկ քարահատակի վրա, և թևքի արմունկը դնելով մի քարի կտորի վրա, որ նրան բարձի տեղ էր ծառայում, ձեռքը նեցուկ էր տված գլխին, և կիսաթեք դրության մեջ, նրա բաց աչքերը անշարժ հառած էին դեպի քարանձավի առաստաղը։ Այդ դրության մեջ, կարծես նրա միտքը վերասլացել էր դեպի երկինքը և տիրել էր նրան խորին, սրբազան հափշտակություն։ Այնպես որ, նա ամենևին չզգաց, երբ մայրս մոտեցավ և համբուրեց նրա հագուստի քղանցքը։

Հագուստը խիստ պարզ էր. կոշտ մազից գործված սև բաճկոնը իջնում էր մինչև ոտները, մեջքը պնդած էր նույնպես մազե սև չվանով։ Տրեխներ կամ հողաթափներ չէր հագնում, բոբիկ ոտներով էր ման գալիս։ Գլուխը բաց էր, բայց չկտրված և չսանրված մազերը այնքան երկարացել և աճել էին, որ պահպանում էին նրա գագաթը, թե ցրտից և թե արևի տոթից։ Խճճված մորուքը խառնվել էր գլխի մազերի հետ և տալիս էր նրա դեմքին ահռելի կերպարանք։ Երեսը գունաթափ և հիվանդոտ էր։

Տեսնելով, որ ճգնավորը ոչ շարժվում է, ոչ խոսում է, ոչ փոխում է յուր նստվածքի ձևը, մենք կարծեցինք, թե նա քնած է։ Բայց աբեղան ասաց.

— Նա քնած չէ, տեսնո՞ւմ եք, աչքերը բաց են, միայն հոգով բարձրացել է երկինքը։

Մայրս խնդրեց, թե կցանկանար, որ ճգնավորը տեսներ նրան։ Աբեղան պատասխանեց.

— Մենք, մեղավոր ադամորդիներս տեսնում ենք աչքերով, բայց նա տեսնում է հոգով։

Հետո աբեղան խորհուրդ տվեց մորս, որ մոտենա ճգնավորին, բռնե միայն նրա հագուստի դրոշակը, և նա կասե, ինչ որ ոգիները կներշնչեն նրան։

Ես օգնեցի մորս մոտենալ. նա կուստարեց աբեղայի պատ-

վերը։ Նույն րոպեում ճգնավորը մի անսովոր շարժում գործեց, և չփոխելով յուր առաջվա դրությունը, արտասանեց մի քանի անկապ խոսքեր.

«Խնկի ծառը բուսել է... գլխին պսակ հյուսել է... տասներկու ճյուղ արձակած... ամեն մի ճյուղի վրա... մի մի հրեշտակ է նստած... բայց բոլորից վերևը... սուրբ տիրամայրն է նստած... գրկին մանուկ է բռնած... լույս մազերով զարդարած... Մոր աչքերում արտասուք... սիրտը վշտերով լցված... մանկան ձեռին է մի խաչ... դեմքը պայծառ է դարձած... արտասուքը սրբություն... իսկ խաչը մեզ փրկություն... Մայր ու որդին խոստանում...»։

Ճգնավորը լռեց։ Աբեղան բացատրեց մեզ նրա պատգամախոսության իմաստը, թե սուրբ տիրամայրը և որդին «փրկություն» են խոստանում։ Մայրս ուրախացավ, կրկին համբուրեց ճգնավորի հագուստի դրոշակները, և մենք երկյուղածությամբ հեռացանք։

Այնուհետև անցան մի քանի ամիսներ, ճգնավորի մասին շատ անգամ լսվում էին այսպիսի խոսքեր, թե նրա ժամանակը մոտեցել է, թե նա երկար չէ մնալու երկրի վրա։ Թե հրեշտակները նրան իրանց մոտ են կանչում, թե նա մի օր կանհայտանա, թե նրա վախճանը Մովսեսի և սուրբ լուսավորչի նման կլինի, որ ժողովուրդը նրա մարմինը չգտնե, և պաշտելու առարկա չդարձնե։

Եվ իրավ, ճգնավորը անհայտացավ։ Ո՞ւր գնաց,— ոչ ոք չգիտեր։ Միայն ժողովրդի մեջ տարածվեցան զանազան կարծիքներ. ոմանք համարում էին նրան Ենովքի և Եղիայի նման երկինքը բարձրացած, ոմանք ասում էին, թե նա առանձնացել է մի սարում, յուր կյանքի վերջին օրերը խստակեցությամբ անցկացնելու և յուր անձը բոլորովին աստծուն նվիրելու համար։ Ոմանք պատմում էին, թե նրան տեսել են այս ինչ տեղում, լույսի ճաճանչներով պատած, երբ մոտեցել են, նա անհետացել է։ Վերջապես, շատ այսպիսի խոսքեր էին ասում, իսկ նրանցից ո՞րն էր ճշմարիտ,— աստված գիտե»։

Ավազակապետի պատմությունը թեև շատ հետաքրքրական էր, բայց ինձ ամենևին չէր զարմացնում։ Ես քավոր Պետրոսին լավ էի ճանաչում. նրա համար այս և այն կերպարանք ընդունելը, այս և այն ձևի մեջ մտնելը խիստ սովորական բան

էր։ Միայն ինձ անհավատալի էր թվում մի բան, արդյո՞ք քավոր Պետրոսը միևնույն անձնավորությունն էր, որին տեսել էր ավազակապետը ճգնավորի քարանձավի մեջ և ի՞նչ ապացույց ուներ այսպես կարծելու։ Դեմքի նմանությունը բավական չէր. մանավանդ քավոր Պետրոսի դեմքը այն ժամանակից հետո պետք է բավական փոխված լիներ։ Ես այդ հարցերը առաջարկեցի, ավազակապետը պատասխանեց.

— Նրան կոչում էին «կանջը կտրած» ճգնավոր, պատմում էին, թե նա մի անգամ գերի է ընկել անօրենների ձեռքը, նրան տանջել են, ստիպել են հավատը ուրանալ, նա մերժել է, և այդ պատճառով ականջները կտրել են։ Այդ չարչարանքի համար նրան համարում էին մի տեսակ նահատակ։ Եվ ես նկատեցի, որ մեր տեսած մուրացկանի երկու ականջների ծայրերը կտրված էին։ Բացի դրանից, ճգնավորի բազուկների և ձեռքերի վրա Երուսաղեմի ուխտավորների դրոշմը կար։ Նույնը ես նկատեցի մեր տեսած մուրացկանի ձեռքերի և բազուկների վրա։

Նշանները ուղիղ էին։ Իրավ է, Պարսկաստանում մի փոքրիկ գողության համար քավոր Պետրոսի երկու ականջների ծայրերը կտրել էին։ Այդ պատիժը ստացել էր նա յուր երիտասարդ հասակում։ Եվ թե նա Երուսաղեմի ուխտավոր է եղել,— այդ նույնպես ուղիղ էր։

— Բայց ի՞նչ նպատակով թափառում է այդ մարդը հեռավոր հյուսիսում,— խոսեց ավազակապետը,— և ի՞նչ սղորմելի դրության մեջ էր նա։

Ես չգիտեի ինչ պատասխանել. ես դժվարանում էի հայտնել ավազակապետին, թե ճանաչում եմ նրան, թե մեր մեջ եղել են երկար տարիների հարաբերություններ և թե նույն ճգնավորի առաջնորդությամբ ես մի այնպիսի ծուռ ճանապարհի վրա դրվեցա, որ վերջը բերեց, հասցրեց ինձ այնտեղ, ուր տանջվում են հանցավորները միայն։ Ես չհայտնեցի նաև, թե նա ինձ համար էր մտել այն սղորմելի կերպարանքի մեջ և ինձ համար է թափառում դատապարտյալների բնակության մերձակայքում։ Ես ծածկեցի նրանից և այն, որ խորհրդավոր մուրացկանը, մոտենալով մեզ, հինգկոպեկանոցների հետ տվեց ինձ մի թուղթ։ Այդ բոլորը ծածկեցի իմ ամենալավ ընկերից, որովհետև դեռ մտատանջության մեջ էի, դեռ չգիտեի, թե ի՞նչ պիտի պատասխանեմ քավոր Պետրոսի առաջարկությանը։

Ի՞նչ պետք է պատասխանեի։ Մերժեի՞, ընդունեի՞,— ոչ մեկը վճռել չէի կարողանում։ Նա եկել էր ինձ ազատելու, նա անցել էր հարյուրավոր մղոններ, հազարավոր վերստեր նա դեռ չէր մոռացել ինձ, դեռ մտածում էր ինձ համար։ Բայց ի՞նչ նպատակով։ Արդյո՞ք աշխատում էր հանգստացնել խղճի խայթը, որ ինձ մոլորության և դատապարտության մեջ ձգեց, թե կամենում էր ինձ նորից ձեռք առնել, որպես մի գործիք, որ նրան պակասում էր։ Մինչ ես այն մտատանջությունների մեջ էի, ավազակապետը ասաց.

— Ես նրան երրորդ անգամն է, որ հանդիպում եմ։

—Առաջին անգամն որպես ճգնավոր, վերջին անգամ որպես մուրացկան, իսկ մյո՞ւսը,— հարցրի ես։

— Դա կապ ունի Սանամի անցքի հետ, հետո կպատմեմ քեզ։

Գ

ԵՐՐՈՐԴ ԳԻՇԵՐ

Երրորդ գիշերը ավազակապետը այսպես սկսեց Սանամի ընդհատված պատմությունը.

«Դու հիշում ես, որ գիշեր էր, երբ ես և Սանամը հեռացանք մելիքի ամրոցից, մի մթին և խուլ գիշեր, որ բնությունը ինքն էր նպաստում մեր փախուստին։ Անցանք մի քանի մղոններ, գիշերային խավարը սկսեց փոքր առ փոքր պարզվել։ Ճանապարհին օրիորդը մի խոսք անգամ չխոսեց ինձ հետ։ Նա լուռ էր, որպես երևում էր, ծանր մտախոհություններ տանջում էին նրան։ Նա ուներ հայ օրիորդի թե՛ հնազանդությունը և թե՛ նախապաշարմունքները։ Առաջինի դեմ բողոքեց նա, ընդդիմացավ ծնողների բռնությանը և չկամեցավ մահմեդականի կին գառնալ. իսկ երկրորդը, նախապաշարմունքը, մնաց։ Նա մի նախատինքից ազատվեցավ, բայց մի այլ նախատինքի ենթարկեց յուր անձը։ Նա փախավ ծնողների տնից մի երիտասարդի հետ, որ ոչ նրա ազգականն էր և ոչ նրա բարեկամը։— Երևի, այդ մտածություններն էին տանջում նրան։

Իմ ձին ընթանում էր առաջ, իսկ նա հետևում էր ինձ։ Ես

էլ իմ կողմից չէի խոսեցնում նրան, որովհետև չէի ցանկանում ավելի վրդովել նրա հոգեկան խռովությունը։ Ես միայն հիացած էի նրա կերպարանքի բարեկազմությամբ, թե ո՛րքան գեղեցիկ էր նա տղամարդի հագուստով, և որքա՜ն քաջազնաբար ձիավարում էր նա, նստած յուր սիրուն նժույգի վրա։ Նա ներկայացնում էր մի շնորհալի ձիավոր, որի նմանը կարելի էր տեսնել պարսից բարձր ազնվականների որդիների մեջ։

Բայց նրա հայրը յուր կեցությամբ, յուր սովորություններով, յուր բարքով ու վարքով նույնպես ներկայացուցիչ էր պարսից բարձր ազնվականության։ Շրջապատված բազմաթիվ նոքարներով, որսորդական շներով ու բազեներով, վատնում էր նա յուր ժամանակի մեծ մասը զանազան զբոսանքների ու զվարճությունների մեջ, որոնք կատարվում էին ըստ մեծի մասին ձիաների վրա։ Խիստ սակավ անգամ էր պատահում, որ նրա ընտանիքը չմասնակցեր այն զբոսանքներին, և այդ պատճառով Մանամը մանկությունից վարժված էր ձիավարելու մեջ։

Մելիքը, ինչպես Ղարադաղի բոլոր խաները, ուներ բազմաթիվ անասուններ, որոնց ամառը տանում էին լեռնային հովասուն տեղերում արածացնելու։ Շատ անգամ մելիքի ընտանիքը ամբողջ ամիսներ անց էր կացնում ամառանոցում, իրանց հոտերի մոտ, հովիվների վրաններում։ Սանամին ավելի էր զվարճացնում լեռնային կյանքը։ Ղարադաղը սարոտ և անտառապատ երկիր է։ Երբեմն ձի նստած, ամբողջ ժամերով թափառում էր նա ձորերի, անտառների և լեռների մեջ։ Այստեղ ավելի ազատ էր շնչում, քան թե հոր փակված տնում, ուր ամեն ինչ ճնշում էր նրան։ Շատ անգամ ես լսել էի նրանից այդ խոսքերը. «Ես չեմ սիրում ձմեռը»։ Երբ հարցնում էի պատճառը, պատասխանում էր. «Նրա համար, որ ձմեռը միշտ տան ծածկի տակ եմ մնում»։

Երբ արևը ծագեց, չգիտեմ ի՞նչ զգացմունքից դրդված, նա կանգնեցրեց յուր ձին, և մի քանի րոպե լուռ նայում էր դեպի այն կողմը, ուր նրա հոր լայնատարած կալվածների սահմանները հետզհետե անհայտանում էին մեր տեսողությունից։ Նա իսկույն երեսը շուռ տվեց, որ ես չնկատեմ նրա արտասուքը։ Նա գնում էր, հեռանում էր այն երկրից, ուր ծնվել, սնվել ու մեծացել էր։ Բայց ո՞ւր էր գնում,— ինքն էլ չգիտեր։ Բայց ինչո՞ւ էր թաքցնում ինձանից յուր արտասուքը։ Նա այնքան հպարտ էր, որ չէր արժանացնում ինձ տեսնել՝ ոչ նրա ուրախությունը և ոչ տրտմությունը։

Ես մոտեցա, երբ նկատեցի, որ ուզում էր խոսել ինձ հետ։

— Մենք լավ չարեցինք,— ասաց նա,— որ այդ ձիաները վեր առինք հորս ախոռատնից։

— Ինչո՞ւ լավ չարինք,— հարցրի ես։

— Դու գիտես հորս բնավորությունը, նա այսօր այն խելքն թունիին սպանել կտա, որ մեզ ձիաներ տվեց։

— Ուրիշ ճար չկար, ո՞րտեղից կարող էինք գտնել ուրիշ ձիաներ։

— Կարող էինք ոտքով փախչել։

— Դա կհոգնեցներ ձեզ։ Իսկ մեզ պետք է, որքան կարելի է, շուտով հեռանալ այդ կողմերից։

— Ինչո՞ւ։

— Մի՞թե դուք չգիտեք, որ հետամուտ կլինեն մեզ։ Մի՞թե դուք չեք իմանում, որ հենց այս առավոտ, երբ կնկատեն, որ դուք տանը չեք, ամեն ինչ կհայտնվի, և ձեր հայրը դեպի ամեն կողմեր մարդ կուղարկեն, որ ձեզ որոնեն։

— Թող ուղարկե։ Այդ մթին ձորերը, այդ անտառները, այդ լեռները կարող են տարիներով պահել մեզ իրանց ծոցում, և ոչ ոք գտնել չէ կարող մեզ։ Այդպես չէ՞։

— Այդպես է, բայց զգուշությունը ևս հարկավոր է։

Ես չկամեցա օրիորդի վստահությունը թուլացնել, թեև մեր ձեռնարկությունը սաստիկ վտանգավոր էր։ Մենք կարող էինք և խանի մարդիկներին հանդիպել, որոնք իմանալով օրիորդի փախուստը, նույնպես հետամուտ կլինեին։ Այդ պատճառով շտապում էի, որպե անգամ չկորցնել, և այնքան որքան կարելի էր, երկար ճանապարհ կտրել։

Գիշերը մենք մնացինք անտառում, իսկ երկրորդ օրվա երեկոյան պահուն հասանք Երասխ գետի ափի մոտ։ Երասխը այդ կողմերում ռուսաց և պարսից հողերի սահմանագլուխն է։ Ես մտածում էի անցնել գետը և ռուսաց հողի վրա ապաստան գտնել։ Այդ կողմերում միակ անցքը Խուդա-աֆերինի կամուրջն էր։ Բայց կամուրջով անցնել անկարելի էր, նախ, այն պատճառով, որ այնտեղ կարող էին մարդիկ դրած լինել մեզ բռնելու

լու համար, երկրորդ, մեզանից անցաթղթեր կպահանջեին։ Իսկ մենք, փախստականներս, անցաթղթեր չունեինք։

Դժվարությունը մեծ էր։ Ինչպե՞ս պետք էր անցնել գետը։ Ուրիշ հնար չկար, պետք էր որոնել գետի ծանծաղուտներում մի ոչ այնքան խորին տեղ և մաքսախույսների նման անցնել ջրի միջով։ Բայց Սանամը կարո՞ղ էր կատարել մի այսպիսի հանդուգն ձեռնարկություն։ Ես մնացել էի շվարած, չգիտեի, թե ինչ պիտի անեմ։ Երբ օրիորդը նկատեց իմ հուսահատությունը, հարցրեց.

— Ինչո՞ւ եք կանգնած։

Ես բացատրեցի նրան, թե ավելի ապահով դրության մեջ լինելու համար պետք է անցնել ռուսաց հողի վրա։

— Անցնենք, էլ ի՞նչ բանի ենք սպասում,— պատասխանեց նա։

Ես ցույց տվեցի ահարկու գետը։

— Անցնենք գետը, —կրկնեց նա մի առանձին վստահությամբ։

— Դուք չե՞ք վախենում։

— Ինչի՞ց պետք է վախենամ։

Ես հայտնեցի նրան, թե այն տեղը, թեև գետի ծանծաղ տեղերից մեկն է, այսուամենայնիվ բավական խորն է։

— Ես, ճշմարիտ է, լողալ չեմ իմանում,— ասաց նա,— բայց ձին խո իմանում է, լողալով կտանե և կհանե ինձ մյուս ափի վրա։

— Բայց դրա համար պետք է բավական քաջություն ունենալ, պետք է սրտի և հոգու քաջություն ունենալ, չշփոթվել, չմոլորվել և կարենալ իրան ձիու վրա պահել։

— Կարող եմ,— ասաց նա։ Հետո ավելացրեց,— միևնույն չէ՞, ես ուզում էի սպանել ինձ։ Եթե աստված կամենում է, որ ես կենդանի մնամ, նա ինձ կօգնե և ոչ մի վտանգ չի պատահի։ Իսկ եթե հասել է իմ կյանքի վախճանը, ավելի լավ է, որ այդ մաքուր գետը լինի իմ գերեզմանը։

Հավատը, մի այսպիսի ջերմ հավատը՝ նախախնամության տնօրինության վրա, միակ և ամենահաստատ գրավականն էր, որ ինձ ուժեղ տվեց մտածելու, թե օրիորդը չի կորցնի յուր հոգու քաջությունը և երկյուղից չի շփոթվի։ Եվ այդքանը բավական էր, կատարյալ հաջողություն սպասելու համար։ Բավական էր, ասում եմ, այն պատճառով, որ եթե նա կկարողանար իրան ձիու վրա պահել, ձին այնքան ուժեղ էր և վարժված, որ առանց դժվարության կարող էր լողալով դուրս տանել նրան մյուս ափի վրա։

Այսուամենայնիվ, սպասելիք վտանգը մեծ էր։ Ես բռնեցի օրիորդի ձիու սանձը իմ ձեռքում և պատվիրեցի նրան, որ յուր ձին կառավարելու համար ամենևին հոգ չտանե, միայն երկու ձեռքով պինդ բռնե թամքից և աշխատե, որ ոտները դուրս չպրծնեն ասպանդակներից։ Իսկ ես իմ ձին առաջ քշեցի, նրա ձիուն իմ ետևից քարշ տալով։ Երբ նրա ձին առաջին ոտները դրեց ջրի մեջ, ես նկատեցի, որ օրիորդը խաչակնքեց յուր դեմքը և լուռ աղոթում էր։ Մենք սկսեցինք առաջ գնալ։ Ջուրը հազիվ հասնում էր մինչև ձիաների կուրծքը։ Օրիորդը սկսեց մինչև անգամ ծիծաղել իմ վրա, թե ինչո՞ւ ես այնքան չափազանցորեն նկարագրեցի գետի ահավորությունը։ Բայց ես զգուշացնում էի նրան, թե կարող են պատահել և ավելի խոր տեղեր։

Երասխի ծանծաղուտները այնքան վտանգավոր չեն, մանավանդ ամառը, երբ ջուրը փոքրանում է։ Դյուղացիները մինչև անգամ ոչխարների հոտեր են անցկացնում։ Միայն պետք է ճանաչել այն տեղերը, ուր նշանավոր խորություններ չեն պատահում։ Իմ ընտրած տեղը ամենասովորական տեղն էր, ուսկից անց էին կենում այն տեսակ մարդիկ, որ չէին ցանկանում սահմանապահ զարավուլների հանդիպել։ Բայց ո՞վ կարող է նախագուշակել, թե գետը ամեն ժամ, ամեն օր ինչ հեղափոխություններ է կատարում յուր հատակում։ Այնտեղ, ուր երեկ ծանծաղ էր, այսօր բացվում է մի ահագին խորություն։ Իսկ ջրի խաբուսիկ մակերևույթը դարձյալ հարթ-հավասար է մնում։

Մինչև գետի լայնության կեսը անցանք առանց որևէ դժվարության։ Ես խորհուրդ էի տալիս օրիորդին, որ երբեմն աչքերը խփե, շատ չնայի ջրին։ Ձիաները ջրի սրընթացության հետ կռվելով, փռնչալով առաջ էին գնում։ Դեռ նրանց ոտները հասնում էին հատակին և այդ օգնում էր իրանց պինդ պահել և չգնալ հոսանքի հետ։ Բայց երբ հասանք խորություններին, նրանք սկսեցին լողալ։ Այդ ժամանակ ամենավտանգավոր րոպեն էր։ Ես անդադար ձայն էի տալիս օրիորդին, որ չվախենա,

և իրան ամուր պահե թամքի վրա։ Բայց ջուրը արդեն հասել էր մինչև թամքը։ Ձիաները վեր բարձրացրած գլուխներն էին միայն երևում։ Այդ միջոցին գետի սրընթաց հոսանքը սկսեց յուր հետ տանել օրիորդի ձիուն։ Ես աշխատում էի կանգնեցնել նրան, ձիգ տալով սանձից, որ իմ ձեռքում բռնած ունեի։ Բայց հնար չեղավ, սանձը կտրվեցավ, և նրա ձին բավական հեռացավ ինձանից։ Վտանգը ակներև էր։ Օրիորդը այսուամենայնիվ, չկորցրեց սրտի ամրությունը և քաջությամբ պահում էր իրան ձիու վրա։ Ես փութացնում էի իմ ձիուն, որ առաջանամ և բռնեմ նրան։ Բայց իսկույն սարսափը տիրեց ինձ, երբ տեսա, որ օրիորդը յուր ձիու հետ խորասուզվեցան ջրի տակ։ Ուրիշ հնար չկար, պետք էր թողնել իմ ձին, և լողալով որոնել նրան ալիքների մեջ։ Նրա ձիու գլուխը կրկին հայտնվեցավ ջրի տակից, օրիորդը դեռ նրա վրա էր գտնվում, երկու ձեռքով պինդ բռնած ունենալով նրա բաշից։ Ես լողալով մոտենում էի։ Մենք արդեն շեղվել էինք ծանծաղուտներից և ընկել էինք սարսափելի խորությունների մեջ։ Ես չեմ կարող նկարագրել այն բոլոր զարհուրանքը, որ այս րոպեիս էլ տիրում է իմ սրտին, երբ մտաբերում եմ իմ անխոհեմությունը, թե որպիսի հիմարությամբ ես թույլ տվեցի ինձ այնպես անհոգությամբ վերաբերվել դեպի կատաղի Երասխը։ Ես թե այն ժամանակ և թե այժմ դեռ չեմ կարողացել պարզ հասկանալ, թե ի՞նչ կատարվեցավ, և ինչպե՞ս եղավ, որ երբ աչքերս բաց արի, ինձ ջրի խորության մեջ գտա։ Երևի, մի ուժգին պտույտ, մի կատաղի հորձանք ինձ ևս տարել էր ջրի տակ։ Բայց երբ կրկին բարձրացա ջրի մակերևույթի վրա, նայեցի, օրիորդը այլևս չէր երևում։ Երկար ես լողում էի այս կողմ և այն կողմ, երկար որոնում էի նրան, բայց նա չկար ու չկար...

Մի ձայն գետի հակառակ ափից վաղուց կանչում էր ինձ։ Բայց ես իմ խռովության խորին տագնապի մեջ սկզբում ոչինչ չէի լսում։ Նա կանչում էր։ Նա կանչում էր. «Դուրս եկե՛ք, դուրս եկե՛ք... դեպի այս կողմը»։

Իմ ուժերը բոլորովին սպառված չէին, միայն օրիորդի կորուստը մահվան չափ տանջում էր ինձ։ Ես սկսեցի ալիքները պատառելով լողալ դեպի կոչվող ձայնը։ Երբ դուրս եկա ափի վրա, իմ ուրախությանը չափ չկար։ Օրիորդը այնտեղ նստած էր և կոչող մարդը կանգնած էր նրա մոտ։— «Դու այժմ փրկ-

ված ես»... մի առանձին բերկրությամբ ասում էր նրան, որպես մի մարդ, որ խորին բավականություն էր զգում, որ ազատել էր մի կյանք։ Հետո դարձավ նա դեպի ինձ, ասելով.

— Դու բավական քաջությամբ կռվում էիր ջրի հետ, ես համոզված էի, որ դու դուրս կգաս, այդ պատճառով քո մասին հոգ չտարա։

Արևը դեռ նոր մայր էր մտել, դեռ բավական լույս կար. Երասխի գետաձորի մեջ մշտական քամին սաստիկ սառն է լինում, մանավանդ երեկոյան պահուն։ Օրիորդը թրջված հագուստի մեջ ամբողջ մարմնով դողդողում էր։ Անծանոթ բարերարը առաջարկեց ինձ՝ տանել նրան մերձակա գյուղը տաքացնելու և հագուստները չորացնելու համար։ Սանամը ոչինչ չէր խոսում, նա գտնվում էր մի տեսակ տենդային դրության մեջ։ Բայց անծանոթի առաջարկությունը ինձ անգործնական երևաց։ Մենք փախստականներ էինք, անխոհեմություն կլիներ մեր կողմից մտնել բնակությունների մեջ։ Թեև այդ մասին ես ոչինչ չհայտնեցի անծանոթին, բայց, կարծես, թե նա մի բան նշմարում էր։ Օրիորդը, թեև ծածկված էր տղամարդի հագուստի մեջ, բայց նրա գդակը ջրի հոսանքի հետ գնալով, գլուխը մնացել էր բաց, և մազերի երկայն հյուսերը թափվել էին թիկունքի ու կուրծքի վրա։ Այդ կասկածանքի մեջ ձգեց անծանոթին։ Ես աշխատեցի փարատել նրա կասկածը, ասելով, որ «նա այս ինչ խաչի «ղուլն է», մայրը ուխտել է, որ մինչև քսան տարեկան հասակը մազերը չկտրվեն»։

— Այդ ինձ շատ չէ հետաքրքրում...— պատասխանեց նա,— բայց դրան հարկավոր է շուտով մի տաք տեղ, եթե ոչ իսկույն տենդ կստանա։

— Ի՞նչ ազգից են այն գյուղացիները,— հարցրի ես։

— Հայեր են,— պատասխանեց նա։

Երբ պատրաստվեցանք գնալ դեպի գյուղը, ես նոր նկատեցի, որ մեր ձիաները կորած էին։ Անծանոթը ասաց, որ նրանք դուրս եկան գետի մյուս ափի վրա։ Կորուստը շատ զգալի էր։ Փախստականը առանց ձիաների ո՞ւր կարող էր գնալ։ Կրկին լողալով անցնել գետը և որոնել ձիաներին շատ դժվար էր. նախ, այն պատճառով, որ ես չէի կարող մենակ թողնել օրիորդին, երկրորդ, ոչինչ հավանականություն չկար, թե կարելի կլիներ գտնել նրանց։ Ձիաները այնքան սովորած էին հկած

ճանապարհին, եթե մի օտար մարդ չբռներ նրանց, ուղղակի կդիմեին իրենց տիրոջ տունը։

Երբ անծանոթը նկատեց իմ շվարած դրությունը, ասաց.

— Գնանք, ձիաների մասին կմտածենք հետո։

— Ի՞նչ կարող ենք մտածել,— հարցրի ես։

— Գյուղից ուրիշ մարդիկ կուղարկենք, որ որոնեն նրանց։

Գյուղը շատ հեռու չէ. մութը դեռ նոր էր պատել, երբ հասանք այնտեղ։ Անծանոթը չբաժանվեցավ մեզանից, որպես երևում էր, նա յուր առաքինությունը կամենում էր մինչև ծայրը հասցնել։ Իմանալով, որ մենք օտարականներ ենք, նա հոգ տարավ մեզ համար գիշերելու օթևան ևս գտնել։

— Ես էլ այստեղ օտար եմ,— ասաց նա,— ձեզ կտանեմ միևնույն տունը, ուր ես մի քանի օր կացել եմ։ Նրանք բարի և հյուրասեր մարդիկ են։

Օրիորդը հազիվ էր շարժվում. սոսկալի դեպքը խլել էր նրանից ամեն զորություն։ Հենած իմ թևքի վրա, դժվարությամբ փոխում էր նա յուր դողդոջուն քայլերը։

Տունը, ուր տարավ մեզ անծանոթը, գյուղի նշանավոր անձինքներից մեկի տունն էր։ Մեզ պատահած դժբախտության տեղեկությունը բավական էր, որ հրավիրեր բոլորի կարեկցությունը մեզ վրա։ Այդ պատճառով մեր փախուստի մասին ոչինչ չխոսեցինք։

Օրիորդին պետք էր հանգստություն, պետք էր ջերմացնել սառած մարմինը։ Իսկույն մի առանձին սենյակում տաք անկողին պատրաստեցին։ Նա խնդրեց ինձ օգնել իրան, որ հանեի թրջված հագուստը։ Ես մյուսներին հեռացրի, որպեսզի չնկատեն, թե նա աղջիկ է և ոչ տղա։ Վիշտը, ցավը, հիվանդոտ դրությունը խլել էին նրանից կանացի պարկեշտության այն զգուշությունները, որով կինը չէր ներում մի օտար տղամարդին շոշափել յուր մարմինը։ Բայց այն դրության մեջ նա նայում էր իմ վրա, որպես յուր աղախիններից մեկի վրա։ Եվ իմ զգացմունքները այնքան մաքուր էին, որ օրիորդը չէր սխալվում յուր մտերմության մեջ։

Նա անկողին մտնելուց հետո ես չհեռացա նրա կշտից, մինչև տաքացավ և ջերմ քրտինքը պատեց ճակատը։ Քունը շուտով տիրեց նրան, բայց տենդային և անհանգիստ էր քունը։ Բորբոքված երևակայությունը դեռ արթուն էր։ Երկար նա տանջվում էր սոսկալի երազներով, և երբեմն խոսում էր խառն զառանցությունների մեջ։ «Թեկուզ սպանեք, թեկուզ կտրատեք, պարսկի կին չեմ դառնա»... այդ խոսքերը մի քանի անգամ լսելի եղան նրա բերնից։

Գիշերը ես մնացի նույն սենյակում, ուր պառկել էր օրիորդը։ Մի անգամ միայն մտավ ինձ մոտ անծանոթը և հարցրեց օրիորդի դրությունը։ Տանեցիներից ուրիշ ոչ ոք չխանգարեց նրա հանգստությունը։

Առավոտյան օրիորդը իրան լավ էր զգում. վեր կացավ և առանց իմ օգնության հագնվեցավ։ Ես միայն ջուր տվի լվացվելու։ Նրա վիճակը ինձ այն աստիճան զբաղեցրել էր, որ դեռ ուշադրություն չէի դարձրել, թե որտե՞ղ ենք գտնվում, կամ ո՞վ է մեր հյուրընկալը։ Ես մինչև անգամ իմ շնորհակալությունը դեռ չէի հայտնել անծանոթին, որ օրիորդի կյանքը ազատեց խեղդվելուց, և դեռ չգիտեի թե ի՞նչ դիպվածով պատահեց նա գետի ափի մոտ, երբ մենք ենթարկվեցանք սոսկալի վտանգին։

Առավոտյան անծանոթը կրկին մտավ մեզ մոտ։ Մեծ եղավ իմ զարմանքը, երբ նկատեցի, որ այդ մարդը ծանոթ էր ինձ։ Դա միևնույն ճգնավորն էր, որին իմ պատանեկության հասակում տեսել էի Որոտնա վանքում։ Այո՛, նույն ճգնավորը, երկու ականջների ծայրերը կտրած, բազուկները և ձեռքի երեսը դրոշմված Երուսաղեմի ուխտավորի նշաններով։ Իսկ այժմ նա աշխարհականի հագուստ ուներ։ Թեև այդ հագուստի մեջ ևս պահպանել էր յուր բարձր առաքինությունը։

Տեսնելով օրիորդին առողջ, չափազանց ուրախացավ նա, և մի առանձին կարեկցությամբ մոտեցավ, նստեց մեզ մոտ։ Երևում էր, մեզ հետ առանձին խոսելիք ուներ, այդ պատճառով պատվիրեց ինձ սենյակի դուռը փակել և ոչ ոքի ներս չընդունել։

— Ես այստեղացի չեմ,— ասաց նա,— ես էլ ձեզ նման օտարական մարդ եմ այս գյուղում։ Այսօր պետք է հեռանամ այստեղից։ Ես եկա ձեզ մոտ հարցնելու, արդյոք այլևս հարկավոր չեմ լինի ձեզ։

— Ձեր կատարած գործը այնքան մեծ է, որ մենք իրավունք չունենք ավելին պահանջել ձեզանից,— պատասխանեցի ես։— Մեզ մնում է միայն շնորհակալ լինել ձեր առաքինության համար։

— Այդ ավելորդ է,— ասաց նա համեստությամբ։— Ես արել եմ այն, ինչ որ ամեն մարդու պարտքն էր անել, երբ տեսնում է դժբախտություն։ Բայց դուք այն ասացեք, արդյոք մի որևիցե այլ բանում պե՞տք եմ ձեզ, թե ոչ։ Ես սիրում եմ պարզ խոսել. ավելի լավ կլինի, որ դուք ևս բոլորովին անկեղծ լինեք ինձ հետ...

Վերջին խոսքերը ինձ կասկած պատճառեցին, երևում էր, որ նա փոքրիշատե տեղեկություն ուներ մեր գաղտնիքի մասին։ Ես պատասխանեցի.

— Մենք չենք կարող անկեղծ չլինել դեպի մի բարերար, որ այնքան մեծ զոհաբերություն հանձն առեց ազատելու մի կյանք։

— Մի օրիորդի կյանք...— կրկնեց նա խորհրդավոր ձայնով։

Ես մնացի շվարած։ Ո՞րտեղից գիտեր նա, որ տղամարդի հագուստով ծպտյալ պատանին օրիորդ էր։ Նա պատասխանեց.

— Օրիորդին ջրից հանելու ժամանակ ես արդեն հասկացա, որ նա տղամարդ չէ։ Նրա մի այսպիսի ծպտյալ դրությունը առիթ է տալիս ինձ մտածելու, որ ձեր վարմունքի մեջ թաքնված է մի գաղտնիք։ Դուք չեք սխալվի, եթե այդ գաղտնիքը կհայտնեք ինձ։ Գուցե ես կարող կլինեմ դարձյալ օգնել ձեզ։

Օրիորդը, որ բոլոր ժամանակը լուռ լսում էր, ընդհատեց մեր խոսակցությունը, ասելով.

— Ես գաղտնիք չեմ պահի մի մարդուց, որը ազատեց իմ կյանքը։ Եվ սկսեց նա մի ըստ միոջե պատմել, թե ինքը ո՛ւմ աղջիկն է, պատմեց յուր հոր անգութ վարմունքը, որ իրան ուզում էր բռնությամբ մահմեդական խանին տալ, և ինքը այդ բարբարոսությունից ազատվելու համար, ստիպվեցավ փախուստի մեջ փրկություն որոնել և այլն։

Անծանոթը խորին ցավակցությամբ լսում էր։ Երբ օրիորդը ավարտեց, ասաց նա.

— Որքան ցավալի է ձեր պատմությունը, հարգելի օրիորդ, այնքան գովելի է ձեր արիությունը, որով պատերազմեցիք կոպիտ բռնության դեմ և բարի օրինակ դարձաք շատերի համար։ Հիմա աղջիկներ մահմեդականների խաներին տալը այն սովորական կաշառքներից մեկն է համարվում, որով շարամիտ մարդիկ ձգտում են այս և այն նպատակին հասնել։ Դա վատ է, դա շատ վնասակար է։ Ձեր պատմությունը ավելի և ավելի

գրավեց իմ կարեկցությունը։ Ես ուրախ եմ, որ դեռևս մի փոքրիկ ծառայություն կարող եմ անել ձեզ։

— Բավական է, ինչ որ արեցիք,— պատասխանեց օրիորդը։

— Ոչ, բավական չէ,— պատասխանեց նա հանդարտությամբ։— Դուք այժմ գտնվում եք ռուսաց հողի վրա, դուք փախստական եք պարսից երկրից, դուք անցել եք այս կողմը առանց անցագրի, այդ բոլորը ձեզ խիստ դժվարին դրության մեջ է դնում։ Ձեր հայրը այնքան ազդեցության տեր մարդ է, բավական է, որ նա գրե այստեղի կառավարությանը, ձեզ իսկույն կբռնեն և ետ կուղարկեն, որովհետև դուք փախստական եք, դուք անցագիր չունեք։ Այդ լավ է, որ դուք տղամարդի կերպարանքի մեջ եք մտել, բայց այդ բավական չէ ձեր ապահովության համար։ Դուք դեռ գտնվում եք պարսից սահմանի մոտ, պետք է հեռանալ այստեղից և շուտով հեռանալ։ Բայց այդ դժվար կլինի ձեզ, որովհետև դուք կորցրիք ձեր ամենակարևոր դյուրությունները՝ ձեր ձիաները։ Ես գիշերը այդ մասին մտածում էի, մի քանի լավ լողացողներ ուղարկեցի, անցան գետը որոնելու ձեր ձիաները, բայց առավոտյան լուր բերեցին որ չգտան նրանց։ Դուք առանց ձիաների ոչ մի տեղ գնալ չեք կարող։ Ձեզ պետք է շուտափույթ կերպով տեղափոխվել մի տեղից մյուս տեղ, իսկ այդ առանց ձիաների անկարելի է։

Նրա նկատողությունները ուղիղ էին։ Մեր դրությունը խիստ դժվարին էր։ Մենք զուրկ էինք ամեն միջոցներից, որ մեր պետքերը հոգայինք։ Մեր փախուստը այնքան անակնկալ և անպատրաստ կերպով կատարվեցավ, որ ապագա պետքերի մասին ամենևին չմտածեցինք։ Մենք մինչև անգամ այնքան փող չունեինք, որ մեզ համար հաց գնեինք ուտելու։

— Ես,— շարունակեց նա,— բոլորը հոգացել եմ։ Ես վարձեցի ձեզ համար երկու ձիաներ, որոնց տերը կտանե ձեզ ուր որ կկամենաք։ Միայն խորհուրդ կտայի, որ անցնեիք Ղափանի կողմերը. այնտեղ ժողովուրդը բարի է, ամեն տեղ կընդունեն, ամեն տեղ կպահպանեն ձեզ։ Դուք ժամանակ չի պիտի կորցնեք, հենց այսօր, հենց այս առավոտ պետք է ճանապարհ ընկնեք։ Օրիորդը այնքան առողջ է, որ կարող է շարունակել ճանապարհորդությունը։ Ես հոգացել եմ ինչ որ պետք է ճանապարհի համար։ Ձեզ պակաս է մի բան, որ ամեն տեղ կպահանջեն ձեզանից։ Ես անցագրի մասին եմ խոսում։ Ես կտամ

ձեզ երկու անցագրեր։ Օրիորդը թող մնա յուր ծպտյալ կերպարանքի մեջ, որպես և է, միայն տղամարդ ձևանալով, պետք է ընդունե մի տղամարդի անուն։ Իսկ դուք, դարձավ դեպի ինձ, նույնպես պետք է փոխեք ձեր անունը։

Վերջացնելով յուր պատվիրները, հանեց նա յուր ծոցից երկու պարսկերին անցագրեր, մեկը տվեց ինձ, մյուսը օրիորդին, հայտնելով, որ մենք կրենք այնուհետև նրանց մեջ նշանակված անունները։

Բոլոր ժամանակը խոսում էր նա մի այնպիսի եղանակով, կարծես, մեր վաղեմի բարեկամը կամ մտերիմ խորհրդակիցը լիներ։ Գլուխը դեպի ցած խոնարհած, կիսաբաց աչքերով խիստ հազիվ անգամ նայում էր մեր երեսին։ Բայց մի խորհրդավոր վեհություն, առաքինական խիստ ազդու արտահայտություն նշմարվում էր նրա պատկառելի դեմքի վրա։ Ես աստուծո մի առանձին ողորմությունն էի համարում, որ մեր նեղ դրության մեջ ուղարկեց մի այնպիսի օգնական։ Բայց օրիորդը այնքան հպարտ էր, որ շատ դժվար եղավ համոզել նրան, որ ընդունե մի օտար և անծանոթ անձից այս տեսակ բարերարություններ։ Բայց անհրաժեշտ կարիքը նրան ևս ստիպեց հաշտվել հանգամանքների հետ։

Երբ ամեն ինչ պատրաստ էր, մենք սենյակից դուրս եկանք։ Մեր հյուրընկալը բարեմաղթությամբ ճանապարհ դրեց մեզ, իսկ անծանոթը բավական տեղ եկավ մեզ հետ։ Օրիորդը նստած էր ձիու վրա, իսկ անծանոթի հետ գնում էինք ոտով։ Իմ ձին բերում էր մեր հետևից չարվադարը։

Ինձ բոլորովին չէր զարմացնում այն միտքը, թե ինչո՞ւ կամ ինչ պատճառներից դրդված, այդ մարդը ընդունում էր այնքան խորին կարեկցություն մեր դրության մեջ։ Բավական էր, որ ես գիտեի, թե նա մի ժամանակ ճգնավոր է եղել, թե աստծուն նվիրված մարդիկ միշտ պատրաստ են օգնել, բարիք գործել, երբ տեսնում են թշվառությունը, երբ տեսնում են կարոտություն։

Բայց ես տակավին տարակուսության մեջ էի գտնվում, իմ կասկածը բոլորովին փարատված չէր, թե արդյո՞ք դա միևնույն անձնավորությունն էր, որին իբրև ճգնավոր մի ժամանակ տեսել էի Որոտնա վանքում, թե ես սխալվում էի չափազանց ճիշտ նմանությունների մեջ։

Բավական տեղ մեզ ճանապարհ դնելուց հետո, երբ կամենում էր նա բաժանվել մեզանից, ես հարցրի.

— Մենք չի՞ պիտի գիտենանք, թե ումից պետք է շնորհակալ լինենք այսքան բարությունների համար։

Նա սառնությամբ պատասխանեց.

— Կարծեմ, մի առանձին հարկավորություն չկա այդ գիտենալու։

— Այսուամենայնիվ, ինձ շատ ցանկալի էր գիտենալ, թե դուք ո՞վ եք։

— Եթե այդ ձեզ որևիցե օգուտ կբերեր, ես կասեի ձեզ։

Ես ուղիղ նայեցի նրա երեսին, ասելով.

— Եթե իմ հիշողությունը ինձ չէ խաբում, կարծեմ, ես տեսել եմ ձեզ մի ժամանակ մի վանքում... մի քարանձավի մեջ... դուք ճգնավոր էիք...

Նրան տիրեց մի վայրկենական խռովություն, բայց իսկույն ծածկելով յուր շփոթությունը, պատասխանեց.

— Դուք չեք սխալվում... այն ժամանակ ճգնում էի մի լեռան քարանձավի մեջ, հեռացած մարդիկներից... իսկ այժմ ճգնում եմ կյանքի մեջ...

Այս ասելով, նա տվեց ինձ յուր քսակը։— «Ա՛ռ,— ասաց,— ճանապարհին ձեզ պետք կլինի» և իսկույն բաժանվեցավ մեզանից։

Ես ապշած մնացի, մի խոսք անգամ չգտա նրան ասելու, միայն քարացածի պես կանգնած, նայում էի նրա ետևից։ Նա էլ ճանապարհորդ էր, նա էլ մի տեղ էր գնում, բայց ո՞ւր էր գնում,— աստված գիտե։ Նա յուր քսակը տվեց ինձ. ես հավատացած էի, որ դա նրա վերջին արծաթն էր։ Իսկ ինքը գնում էր միայնակ, ոտքով, մի երկայն ցուպ ձեռին բռնած, աղքատ ուղևորի պարկը ուսին կապած»։

Երբ ավազակապետը վերջացրեց, հարցրի նրանից.

— Այնուհետև մյուս անգամ չհանդիպեցի՞ք նրան։

— Ոչ։ Այն օրից անցել են շատ տարիներ, կրկին հանդիպեցի նրան միայն այստեղ՝ քեզ հետ միասին, մուրացկանի կերպարանքով, և այդ խիստ զարմացնում է ինձ։ Այդ մարդը մի տեսակ հանելուկ է ինձ համար։ Ես շատ կցանկանայի, որ մեկ անգամ ևս տեսնեի և խոսեի նրա հետ։ Իբր մուրացկան նա նույն բարի և առաքինի մարդը երևաց ինձ, որպես էր ա-

ռաջ։ Դու տեսար, ինչպե՞ս կարեկցությամբ մոտեցավ նա դատապարտյալների խումբին, ինչպե՞ս բաժանեց մեզ յուր հավաքած գրոշները, ասելով. «Դուք ավելի թշվառ եք, քան թե ես...»։

Ես դարձյալ գաղտնիք պահեցի խորհրդավոր մուրացկանի մասին, այսքանը միայն ասելով իմ լավ ընկերին.

— Գուցե մյուս անգամ ևս կտեսնեք... այդ մարդը շուտով չի հեռանա այստեղից...

Ես հավատում էի, բոլորը հավատում էի, ինչ որ պատմում էր ավազակապետը։ Քավոր Պետրոսը այն տեսակ առասպելական արարածներից էր, որ ընդունակ էր հրեշտակից սատանա լինել, իսկ սատանայից հրեշտակ։ Թե բարին և թե չարը նրա մեջ միևնույն ուժով էին գործում։ Միայն հանգամանքներից էր կախված, թե ե՞րբ կամ ի՞նչ դեպքերում պետք էր ո՛րը գործ դնել։ Նա աշխարհի մարդ էր, գիտեր, թե ինչպես պետք էր վարվել աշխարհի հետ։ Ես ինքս վկա էի եղել շատ գործերի, որոնց մեջ նա ցույց էր տվել թե յուր վերին աստիճանի առաքինությունը և թե յուր վերին աստիճանի անգթությունը։ Ես տեսել էի նրան բարեսիրտ, որպես աղավնի, և նենգավոր, որպես օձ։ Այդ մարդը, որի հետ տարիներով ապրել էի, գործել էի, ինձ համար ևս մնացել էր որպես մի մթին հանելուկ։ Ես հասկանալ չէի կարողանում, թե ինչպես չարն ու բարին, առանց միմյանց հետ հակառակելու, հաշտվում էին նրա մեջ։ Բայց հավատացած էի, որ նա ամենայն անկեղծությամբ, ամեն տեսակ զոհաբերություններ հանձն առնելով, եկել էր ինձ ազատելու իմ թշվառ դրությունից։ Բայց ես կարո՞ղ էի կրկին անձնատուր լինել մի մարդու, որը որքան բարի էր, նույնքան ևս չար էր։ Այդ հարցը դարձյալ մնաց իմ սրտում անվճիռ...

Դ

ՉՈՐՐՈՐԴ ԳԻՇԵՐ

— Դու այն պատմիր, թե ինչո՞ւ են կոչում քեզ ավազակապետ և որպե՞ս ընկար դատապարտյալների հասարակության մեջ,— հարցրի ես չորրորդ գիշերը, երբ բավական հանգստացել էինք ցերեկվա ծանր աշխատությունից։

Ավազակապետը շարունակեց.

«Մեր անծանոթ բարերարի վարձած ձիաներով անցանք Մեղրիի գավառը։ Այստեղ ճանապարհները այն աստիճան քարքարոտ են և լեռնային ելևէջները այն աստիճան սարսափելի են, որ անկարելի է ձիով մանգալ։ Մենք ստիպված էինք մեր ձիաները փոխել և վարձել ջորիներ։ Այդ խորամանկ անասունները սովոր են լեռնային քարքարոտներում մանգալ։

Սկզբում Սանամը դժվարությամբ հոժարեցավ ջորիի վրա նստել։ Ղարադաղի մելիքի աղջիկը, որ սովորած էր սիգապանծ նժույգների, կարծես, ամաչում էր, որ ստոր անասունների վրա հեծած տեսնեն նրան։ «Ինձ այլևս ով է ճանաչում...», ասաց նա և մի առանձին մտերմությամբ խնդրեց ինձանից օգնել իրան, որ հեծնեւ։ Ես զարմացա։ Սանամը, որ ծտի նման ձիաների վրա թռչել գիտեր, ինձանից օգնություն էր խնդրում։ Երբ փոքր-ինչ առաջ գնացինք, ասաց նա.

— Վերջին ժամանակներում շատ ուժաթափ եղա...

Նրա ձայնի մեջ լսվում էր խորին տխրություն և սրտի դառն կսկիծ։

— Դուք այս առավոտ ոչինչ չկերաք,— ասացի նրան,— կարելի է քաղցածությունից լինի։

— Ոչ,— պատասխանեց նա։— Շատ անգամ սուրբ Սարգսի պասին, երկու կամ երեք օրով ծոմ էի պահում, ոչինչ չէի ուտում, բայց երբեք ուժաթափ չէի լինում։

— Երևի, գետը ձեզ վրա վատ տպավորություն գործեց,— նկատեցի ես։

— Ոչ։ Այն մարդը շուտ վրա հասավ, ես դեռ բոլորովին ջրի տակ չէի գնացել, որ ազատեց ինձ։ Ա՜խ, երանի թե գիտենայի՝ ով էր այդ մարդը։ Երևում է՝ որ աստված մեզ հետ է։ Նա ուղարկեց այդ մարդուն մեզ օգնելու համար։

Վերջին խոսքերը մխիթարում էին նրան և ավելի ամրացնում էին նրա հավատը, որը խիստ վառ էր օրիորդի մեջ։

Զնայելով, որ ջորիները դանդաղ էին ընթանում, դարձյալ մենք այն օրը անցանք բավական ճանապարհ։ Գնալով լեռների միջով, շատ անգամ ստիպված էինք անցնել այնպիսի վտանգավոր տեղերից, ուր անձնավստահ որսորդները միայն ոտք են կոխում, այն ևս խիստ հազիվ անգամ։ Զառիվայրների

դժվարությունը երբեմն ստիպում էին մեզ ցած իջնել ջորիներից, և ապառաժների վրայով մագլցելով, առաջ գնալ։ Սանամը բոլորովին հոգնած էր, հազիվհազ կարողանում էր իրան ոտքերի վրա պահել։ Ես մի քանի անգամ առաջարկեցի բռնել նրա ձեռքից, օգնել նրան, բայց ամեն անգամ մերժում ստացա։ Նա դեռ խորշում էր ինձանից, նա այնքան հպարտ էր, որ դեռ նայում էր իմ վրա, որպես յուր հոր տան ծառաներից մեկի վրա։ Ես դեռ նրա մտերիմ, անձնվեր բարեկամը չէի։

Երբ բարձրացանք սարերի վրա, արևը արդեն սկսել էր թեքվել դեպի յուր երեկոյան մուտքը։ Ստորոտներում տոթը խեղդում էր, իսկ այստեղ ցուրտը մրսեցնելու չափ զգալի էր։ Ջորիներից ցած իջանք, նստեցինք փոքր-ինչ հանգստանալու։ Ես առաջարկեցի օրիորդին փաթաթվել իմ վերարկուի մեջ. նա հոժարությամբ ընդունեց, որովհետև վերարկու չէր առած յուր հետ։ Հետո տվեցի նրան մի բան ուտելու. նա բոլորովին կազդուրվեցավ և գտնվում էր բավական խաղաղ տրամադրության մեջ։

Արևը մտավ։ Երեկոյան վերջալույսը հետզհետե զրկվում էր յուր պարզ-ծիրանի շավիղներից։ Սարերի գագաթները պատած էին սպիտակ ձյունափայլ մշուշով, որը միախառնվելով երկնքի կապուտակության հետ, ներկայացնում էր անսահման մանիշակագույն օվկիանոս, որի մեջ լեռների ալիքավոր բարձրությունները ձևացնում էին սքանչելի տեսարան։ Օրիորդը բնություն սիրող էր։ Ես նկատեցի նույն ժամուն հափշտակված էր նա խորին հիացմունքով և նրա խոշոր աչքերը մի առանձին ոգևորությամբ նայում էին դեպի գեղեցիկ լեռնային տարածությունը։ Ես նստած էի նրա մոտ։ Նա դարձավ ինձ այս խոսքերով։

— Նայի՞ր այն նեղ հովտին, որ հազիվ երևում է թափանցիկ մառախուղի միջից. նայի՞ր այն բաց-կանաչազարդ խոտերին, որ պատել են նրա սիրուն տափարակը. տե՛ս այն վտակը, ինչպես շուտով վազում է դեպի ձորը, ականջ դիր, ո՞րքան քաղցր է լսվում նորա ձայնը։ Ա՜խ, որքան գեղեցիկ է այդ բոլորը։ Այնտեղ երևում են հովիվների տաղավարներ։ Տես, ոչխարները վերադառնում են արոտից. ես լսում եմ նրանց ձայնը։ Ահա խմբվեցան նրանք տաղավարների շուրջը։ Կնիկները դուրս եկան կթելու նրանց, փոքրիկ գառները, փոքրիկ ուլերը

կռվում են կթողների հետ, թե ինչո՞ւ են խլում իրանց սնունդը։ Բայց նրանց մայրերը այնքան առատ են, որ բավականություն են տալիս՝ թե նրանց տերերին և թե իրանց ձագերին։ Գնանք այդ հովիվների մոտ և վայելենք նրանց հյուրասիրությունը։

Հովիտը, որ այնքան ոգևորությամբ նկարագրում էր օրիորդը, շատ հեռու չէր մեր նստած տեղից։ Երեկոյան մթությունը սկսել էր թանձրանալ։ Շարունակել մեր ճանապարհորդությունը չէինք կարող, որովհետև թե մենք և թե մեր անասունները սաստիկ հոգնած էինք։ Պետք էր մի օթևան գիշերելու համար։ Բայց նախքան այդ հովիվների մոտ հյուրասիրություն խնդրելը, հարկավոր էր տեղեկանալ, թե նրանք ինչ տեսակ մարդիկ են։ Այդ մտքով ես մոտեցա մեր ջորեպանին, որ մեզանից փոքր-ինչ հեռու արածացնում էր յուր անասունները։

Ջորեպանի տված տեղեկությունները հովիվների մասին խիստ նպաստավոր էին։ Այդ խաշնարածները եկած էին Ղափանի կողմերից, ազգով հայ էին և հայտնի էին իրանց քաջությամբ։ Այստեղ ժամանակավորապես զետեղվել էին նրանք՝ ամառը անցկացնելու և իրանց անասունները արածացնելու համար։ Վերջացնելով յուր խոսքերը, ջորեպանը խորհուրդ տվեց նրանց մոտ գնալ և ավելի բարվոք էր համարում գիշերը անցկացնել նրանց տաղավարների մեջ, քան թե բացօթյա մնալ։ Բայց միևնույն ժամանակ ակնարկեց նա, որ այդ հովիվները փոքր-ինչ կասկածավոր մարդիկ են, ավազակներ են։

— Եթե ուզում ես ավազակից անվնաս մնալ, պետք է ավազակի տունը գնալ,— պատասխանեցի ես։

Ուրիշ հնար չկար. գիշերը բացօթյա դրսում մնալը կարող էր վնասակար ազդեցություն ունենալ օրիորդի առողջության վրա։ Մենք ոչինչ պատրաստություն չունեինք մեզ հետ, ինչ էլ որ ունեինք, կապած էին մեր ձիաների վրա, բայց Երասխից անցկացնելու միջոցին պատահած վտանգի ժամանակ, ձիաները իրանց հետ տարան։ Ես վճռեցի գնալ հովիվների մոտ, մանավանդ որ օրիորդի ցանկությունն էլ հենց այդ էր։

Մութը բոլորովին պատել էր, երբ հասանք նրանց ամառանոցին։ Ոչխարները մակաղել էին բնակությունից հեռու, առանձին հանգրվաններում, իսկ տաղավարների մոտ խմբվել էին ավելի խոշոր անասունները՝ ձիաներ, կովեր, եզներ և այլն։ Տեղ-տեղ վառվում էին խարույկներ, որոնց շուրջը խոտերի

վրա՝ նստած էին ալևոր մարդիկ, ծխում էին, խոսում էին, իսկ կնիկները մի բան էին եփում ընթրիքի համար։ Խարույկների աղոտ լուսով այդ լեռնականների կերպարանքները ավելի մռայլ կերպով նշմարվում էին գիշերային մթության մեջ։ Երիտասարդները զբաղված էին իրանց նժույգներով, քորում էին, մաքրում էին նրանց մարմինը և ծածկում էին թաղիքներով, որ գիշերը չմրսեն։ Իսկ նրանց ծերունի հայրերը դեռ չէին ավարտել իրենց երեկոյան աղոթքը, բաց երկնքի տակ, մերկ գետնի վրա չոքած, լուռ աղոթում էին։ Տիրում էր ընդհանուր լռություն, երբեմն հեռվից լսելի էին լինում խուլ ձայներ, որոնում էին որևիցե կորած անասուն։

Շները ահագին աղմուկ բարձրացրին, երբ մոտեցանք նրանց տաղավարներին։ Հովիվները խռովության մեջ ընկան, ամեն կողմից վազեցին, որ տեսնեն թե ինչ մարդիկ ենք։ Մեր ջորեպանը, որ ծանոթ էր նրանց սովորություններին, առաջ գնաց, հայտնեց, որ ճանապարհորդներ ենք, գիշերելու օթևան ենք խնդրում։ Նրանք հանգստացան և ամեն կողմից սկսեցին հրավիրել մեզ իրանց տաղավարները։ Որպեսզի ոչ ոքին վիրավորած չլինենք, մենք իջանք առաջին հանդիպած տաղավարի առջև։ Այստեղ, կարծես, վաղուց սպասում էին մեզ, երկու պատանիներ դուրս վազեցին, բռնեցին մեր ջորիները և մեզ ներս տարան։

Մեր բախտից տաղավարը, որ վիճակվեցավ մեզ, պատկանում էր խաշնարածների բավական նշանավոր և հարուստ ընտանիքներից մեկին։ Ընտանիքի հայրը մի ծերունի էր, բայց դեռ ժիր և աշխույժ, կարծես տարիների բոլոր ջանքերը իզուր էին անցել խլելու նրա մարմնի ամրությունը և սրտի զվարթությունը։ Նա խիստ սիրով ընդունեց մեզ, հայտնեց յուր ուրախությունը և հրավիրեց նստել յուր մոտ։ Նա բնավ հարցուփորձ չարեց, թե ով էինք մենք, որտեղից էինք գալիս կամ ուր էինք գնում։ Դա նրանց սովորությամբ մի տեսակ վիրավորանք էր հյուրի համար։ Բավական էր, որ մենք նրա տաղավարի ծածկի տակ էինք գտնվում, և այդ բոլորից նրա գերդաստանի անդամներից մեկն էինք համարվում։

Այդ լեռնականները, դեռ պահպանված լինելով նահապետական պարզության մեջ, աղատ էին մնացել կրթված աշխարհի կեղծ քաղաքավարության ձևերից։ Երբ իմացան մեր հայ-

քրիստոնյա լինելը, ավելի մտերմացան մեզ հետ։ Ամենայն բարեսրտությամբ խոսում էին, ծիծաղում էին, և ամեն կերպով աշխատում էին գոհացնել մեզ, որ ոչինչ պակաս չլինի մեզ համար։

Մեր հյուրընկալը առանձին ուշադրություն էր դարձնում մեր զենքերի վրա. մեկ-մեկ վեր էր առնում, ճրագի լույսի առջև զննում էր, և յուր հմտությունը զենքերի ճանաչելու մեջ ցույց տալու համար, ասում էր, թե որը ինչ գործարանի կամ ինչ ժամանակի գործ էր։ Հին զենքերը հարգի էին դրանց մոտ։ Զենքերից նա գաղափար կազմեց մեր ինչ դրության կամ ինչ աստիճանի մարդիկ լինելու մասին։ Հասարակ մարդիկ չէին կարող ունենալ այս տեսակ հարուստ զենքեր։ Այդ բոլորից նրա հարգանքը ավելի ևս բազմացավ մեր վերաբերությամբ։

Ընթրիքը երկար չտևեց։ Լեռնականները շուտ են ուտում, և կերակուրների տեսակները այնքան առատ չեն, որ շատ ժամանակ պահանջեն։ Ես մտածում էի օրիորդի հանգստության մասին. նա սաստիկ հոգնած էր։ Ծերունին նույնպես նկատեց, որ մեր խոսակցության միջոցին, նստած տեղում, նիրհում էր նա։ Բայց գերդաստանի հայրը երևակայել անգամ չէր կարող, թե մի ուրիշ արարած, որը հասակով փոքր էր իրանից, կարող էր հանգստության վրա մտածել, քանի որ ինքը տակավին նստած էր, քանի որ ինքը դեռ քնելու ախորժակ չուներ։ Ամեն մարդ քնելու իրավունք ուներ, երբ նա արդեն քնած էր. ամեն մարդ ուտելու իրավունք ուներ, երբ նա արդեն կերած էր։ Ամեն բանի մեջ պետք է նա առաջինը լիներ, իսկ մյուսները հետևողներ։

Եվ ես տեսնում էի՝ ընթրիքի ժամանակ ծերունու բոլոր որդիքը ոտքի վրա սպասավորություն էին անում կամ մի բան ներս էին բերում և կամ դուրս էին տանում։ Նրանցից մեկը միայն, երեց որդին, հորից թույլտվություն ստացավ մեզ հետ սեղանակից լինելու։ Կնիկները ամենևին չէին երևում, նրանք փակված էին տաղավարի առանձին բաժնում։ Երբ սեղանը հավաքեցին, որդիները հեռացան, որ իրանք էլ մի բան ուտեն։ Մենք ծերունու հետ մնացինք տաղավարում միայնակ։

Որդիների թիվը հասնում էր չորս հոգու, բոլորը կարծես թե տիտանների սերունդից լինեին, առողջ և ամուր կազմվածքով։ Ամենքը ամուսնացած էին, ունեին բազմաթիվ զավակներ, ո-

ռոնցից շատերը նույնպես ամուսնացած էին։ Տունը լիքն էր ամեն հասակի երեխաներով։ Այստեղ ապրում էին մի քանի սերունդներ, որոնք սերտ կերպով միացած էին միմյանց հետ, որոնց գլխին կանգնած էր ալևոր պապը յուր նահապետական մեծությամբ»։

Ե

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԻՇԵՐ

«Սանամի տկարությունը ստիպեց մեզ երկար մնալ մեր հյուրընկալի տաղավարում,— շարունակեց ավազակապետը յուր ընդհատված պատմությունը։— Օրիորդի լարված ուժերը հետզհետե թուլացան, և նա վերջապես չկարողացավ տանել այն բոլոր տանջանքները, որ կրել էր յուր հոր տնից բաժանվելուց հետո։ Երասխ գետի մեջ պատահած սարսափելի անցքից հետո, նա արդեն իրան ոչ բոլորովին առողջ էր զգում։ Բայց նա թաքցնում էր ինձանից յուր դրությունը, մինչև հիվանդությունը խիստ ծանր կերպարանք ստացավ։ Հիվանդի համար որոշել էին մի առանձին տաղավար և ոչ ոք չէր խանգարում նրա հանգստությունը։ Բժիշկ չկար, նրան թողել էինք բնության կամքին։ Միայն երբեմն նրա մոտ մտնում էին զանազան պառավներ, ի՞նչ դեղ ու դարմաններ էին անում,— ոչ իրանք էին հասկանում և ոչ ես։ Ես նրա մահճի մոտից չէի հեռանում. ամբողջ գիշերը անքուն նստած, լսում էի նրա խուլ հառաչանքները. ականջ էի դնում նրա ծանր շնչառությանը, իսկ ցերեկով նայում էի նրա գունաթափ դեմքին։ Մի առավոտ նստած էի նրա մոտ, և լի տխուր մտածություններով նայում էի նրա վրա։ Այդ միջոցին քնած էր նա և, ավելի ճիշտ ասած, գտնվում էր մի այնպիսի ինքնամոռացության մեջ, որ չէր զգում իմ ներկայությունը։ Այն զվարթ դեմքը, որ մի ժամանակ յուր կանացի քնքշության հետ արտահայտում էր այրական վեհություն, այժմ թառամած էր, այժմ չուներ առաջվա կենդանությունը։ Այն խորախորհուրդ աչքերը, որոնց մթության մեջ մի ժամանակ այնքան կյանք, այնքան գորով և այնքան հոգեկան ջերմ զգացմունքներ կային,— այժմ այդ աչքերը չունեին առաջվա կրակը։ Այն ողջախոհական շրթունքները, որոնցից լսել էի այնքան քաղցր, այնքան բարեկամական խոսքեր, որոնք միշտ մխիթարել և խրախուսել էին ինձ,— այժմ այդ շրթունքները թրթռում էին տենդային ցնցումներով և իմ մեջ ազդում էին սոսկում ու զարհուրանք միայն։ Հուսահատական խառն մտածություններ տանջում էին ինձ։ Ի՞նչ կլինի մեր վերջը, եթե երկար կտևե նրա հիվանդությունը, ասում էի ես։ Եթե նա առողջ լիներ, նա այնքան ուժ և տոկունություն ուներ, որ ամեն տեղ կարող էր գալ ինձ հետ, և ես ամեն տեղ կարող էի տանել նրան։ Կգնայինք, կհեռանայինք մի անծանոթ աշխարհ և ոչ ոք չէր գտնի մեզ։ Բայց ինչ կարելի էր անել հիվանդի հետ, ո՞ւր տանել նրան, որտե՞ղ թաքցնել,— այդ մըտքերը սաստիկ խռովեցնում էին ինձ։ Մենք դեռ պարսից սահմանից շատ չէինք հեռացել, մենք դեռ բավական մոտ էինք գտնվում այն երկրին, որտեղ բնակվում էր նրա հայրը։ Իսկ այդ անգութ հոր սատանայական հետախուզություններից անհայտ մնալը՝ հեշտ բան չէր։ Անկարելի էր, որ նա ստուգած չլիներ, թե մենք որ կողմը կամ ուր էինք գնացել։— Օրիորդը ընդհատեց իմ մտածությունները։ Նա այժմ զառանցության մեջ արտասանում էր զանազան անկապ խոսքեր։ Մի քանի անգամ պարզ լսեցի իմ անունը։ Նա խոսում էր ինձ հետ, երազների և ցնորքների աշխարհում խոսում էր ինձ հետ։ Քնած դրության մեջ մարդը գաղտնիք պահել չէ կարող, որովհետև աշխարհի պայմանները զգուշության մեջ չեն դնում նրան։ Նա խոսում է, նա դատում է, որպես մտածում է։ Նրա զգացմունքները նույնքան անկեղծ են լինում, որքան անկեղծ է նրա դրությունը։— «Սիրում եմ քեզ...— ասաց նա հեզությամբ լի ձայնով,— քո զոհաբերությունը ուրիշ ոչնչով չեմ կարող վարձատրել, բայց միայն իմ սիրով...»։ Այդ խոսքերը արտասանելու միջոցին նա յուր տկարացած թևքերը տարածեց, երևի ինձ գրկելու համար։ Բայց իմ շրթունքները արդեն սեղմված էին նրա տաքացած երեսի վրա, և նրա բազուկները անգիտակցաբար փաթաթվել էին իմ պարանոցին։ Երազների աշխարհում նա գրկած ուներ իմ ուրվականը, բայց իսկության մեջ ես գրկել էի հիվանդ մարմինը։ Իմ արտասուքը թրջում էր նրա բորբոքված դեմքը։ Որքա՜ն բարություն, որքա՜ն առաքինություն կար նրա անմեղ

խոստովանության մեջ։ Մի՞թե ես կարող էի ընդունել նրանից մի այսպիսի զոհաբերություն։ Ես երևակայել անգամ չէի համարձակվում, որ նա իմ կինը լիներ։ Մի՞թե յուր սիրով պետք է վարձատրեր նա իմ մատուցած ծառայությունները, ու այն սիրով, որ ավելի բարձր, ավելի արժանավոր արարածների համար էր պահված։ Ես ուրախ էի, որ այդ բոլորը կատարվեցավ նրա քնած ժամանակ։ Բայց իմ հպավորությունը արթնացրեց նրան. մոայլոտ աչքերը բաց արեց, նայեց իմ վրա։— «Դու այստե՞ղ էիր»— եղավ նրա առաջին հարցմունքը, հետո երեսը շուռ տվեց մյուս կողմը, սկսեց դառն կերպով հոգվոց հանել։ Այդ ի՞նչ տանջանք էր։ Անտարակույս, հիվանդության տանջանքը չի պիտի լիներ։ Երևի, նրա աղնվական արյունը հուզվում էր, որ երազի մեջ անգամ ինձ նման ռամկին արժանացրել էր յուր սիրույն։ Քանի րոպեից հետո նա կրկին երեսը շուռ տվեց դեպի իմ կողմը։ Արևը այդ ժամանակ դեռ նոր էր սկսել ծագել և նրա առաջին ճառագայթները շողշողում էին նրա վհատած դեմքի վրա։ Նա հրամայեց ցած թողնել տաղավարի մուտքի վարագույրը, որ ազատվի ճառագայթներից։— «Ուզում եմ մութ լինի... միշտ մութ, որ ինձ ոչ ոք չտեսնի...»։ Ես զարմացա, թե ինչն էր ստիպում նրան փախչել լույսից, արդյոք ամոթը, որ նա քնի մեջ արել էր մի անմեղ խոստովանություն։ Այդ ենթադրությունը ավելի հավանական երևաց ինձ, երբ հարցրեց նա.— «Շա՞տ ժամանակ է, որ դու այստեղ ես»։— «Շատ ժամանակ չէ, կես ժամ հազիվ կլինի, լսեցի, որ քո քունը անհանգիստ է, ներս մտա»։— «Այո՛, ես անհանգիստ էի...», ասաց նա և հրամայեց, որ իրեն միայնակ թողնեմ։ Ես դուրս եկա, նստեցի տաղավարի մուտքի մոտ։ Այնտեղ քնում էի ամեն գիշեր, այնտեղ ամբողջ գիշեր հսկում էի նրա վրա, այնտեղից լսում էի նրա դառն հառաչանքները և իմ սիրտը լցվում էր կրակով։ Բայց այն առավոտ որքա՜ն երջանիկ էի զգում ինձ, ո՜րքան ուրախ էի ես, իմ հոգին վայելում էր անսահման բերկրություն։ Այն մի քանի խոսքերը, որ արտասանեց նա անգիտակցության մեջ, ինձ բաշխում էին աշխարհի բոլոր փառքերը։ «Երևի, նա մտածում է իմ վրա, որ ես նրա երազների առարկան եմ դարձել», ասում էի ես, և այսքանով միայն ինձ բոլորովին բախտավոր էի համարում։ Բայց ո՞վ կմտածեր, որ այդ բախտավորությունը երկար չէր տևի...

Այդ հոգեկան բերկրության մեջ էի ես, երբ մեր հյուրընկալի կրտսեր որդին մոտեցավ, հայտնեց, որ յուր հայրը կանչում է ինձ։ Ես գնացի։ Ներունին առանձնացած էր և, որպես երևում էր, պատվիրել էր՞ յուր մոտ ոչ ոքի չթողնեն։ Նա հարցրեց օրիորդի առողջությունը, հետո խնդրեց, որ նստեմ յուր մոտ։ Նա տխուր, միևնույն ժամանակ վրդովված էր երևում. կամենում էր մի բան խոսել, բայց դժվարանում էր։ Վերջապես, ասաց նա.

— Այն օրից, որ դուք ոտք եք կոխել իմ տան շեմքի վրա, ես ամենևին չեմ հարցրել ձեզ, թե ո՞վ եք դուք, որտեղի՞ց եք գալիս կամ ո՞ւր եք գնում։ Ես այսքանով միայն ուրախ էի, որ իմ հացը բաժանում եմ աստուծո հյուրերի հետ։ Բայց այժմ առանց հարցնելու ևս, ես գիտեմ, թե դուք ով եք, և ում որդին է ձեր մանկահասակ ընկերը, որի հիվանդությունը նույնքան ցավ է պատճառում ինձ, որքան ձեզ։ Մենք, այս լեռների բնակիչներս, սովորություն ունենք, ոչ միայն հյուրասիրելու մի օտարականին, որ մեր տան ծածկի տակ օթևան է խնդրում, այլ վտանգի ժամանակ մեր պարտքն ենք համարում և պաշտպանել նրան ամեն չար պատահարներից։ Մեր տունը մտնողը, ինչ մարդ էլ և լիներ նա, ինչ հանցանք էլ որ գործած լիներ, դարձյալ մեր օգնությունն է վայելում։ Այդ մասին կարող եք բոլորովին ապահով լինել...

Վերջին խոսքերի միջոցին ծերունին ղդուշությամբ նայեց յուր շուրջը, միգուցե մի ուրիշը լսեր նրան։ Ես արդեն նախագուշակում էի, թե նրա հառաջաբանը ինչով պետք է վերջանար, և չսխալվեցա։ Մեզ որոնում էին...

— Այս րոպեիս ես վերադարձա մեր տանուտերի մոտից,— շարունակեց նա։— Տանուտերը հավաքել էր յուր մոտ մեր շենի բոլոր ծերերին և կարդաց գավառապետի հրամանը։ Նրա մեջ գրված էր, թե Ղարադաղի մելիքի աղջիկը փախել է յուր ծառայի հետ և անցել են մեր կողմերը։ Հրամայված էր՝ որտեղ և գտնելու լինեն նրանց, հանձնեն կառավարության ձեռքը, որ ետ ուղարկեն Պարսկաստան։ Հրամանի մեջ ծանր պատիժ և տուգանք էր նշանակված, եթե մեկը կհամարձակվի թաքցնել նրանց յուր մոտ։ Ես տարակույս չունեմ, որ դուք և ձեր ուղեկիցը միևնույն անձնավորություններն եք, որ ցույց է տված հրամանի մեջ։

— Այո՛, մենք ենք,— պատասխանեցի ես, առանց որևիցե կասկածանքի, առանց թաքցնելու։

— Շնորհակալ եմ ձեր մտերմության համար,— ասաց ծերունին,— հիմա պատմեցեք, այդ տնցքը ինչպե՞ս է պատահել։

Ես ծերունու անկեղծության վրա կասկած չունեի։ Յուր բարեսրտությամբ նա այն աստիճան գրավել էր իմ վստահությունը, որ ես պատմեցի բոլորը, ինչ որ գիտեի օրիորդի մասին,— պատմեցի նրա հոր փառասիրության մասին, թե որպես պարսիկ խանի բարեկամությունը գրավելու համար՝ կամենում էր յուր աղջկան կնության տալ նրան, պատմեցի օրիորդի ընդդիմադրության մասին, որ չցանկացավ մահմեդականի կին դառնալ, պատմեցի մեր փախուստը և այն բոլոր դժբախտ անցքերը, որ պատահել էին մեզ հետ ճանապարհին։ Ծերունին խորին ցավակցությամբ լսում էր։ Նրա խորշոմած դեմքի վրա նշմարվում էին բարկության և դառն ատելության ցնցումներ։

— Ես չեմ զարմանում խեղճ աղջկա հոր անգթության վրա, — ասաց նա, երբ ես վերջացրի,— ես ճանաչում եմ նրա հորը. նա յուր փառասիրության համար ամեն բան կանե, ամեն բան կզոհե։ Ես գովում եմ օրիորդի քաջությունը և ձեր անձնվիրությունը, որ հանձն եք_առել ազատել նրան։ Բայց այդ թողնենք, խոսենք գավառապետի հրամանի վրա։

Ծերունու խոսքերից երևաց, որ իրանց տանուտերը, որին հրամայված էր որոնել մեզ, եթե տեղեկություն ստանար իմ և օրիորդի մասին, իսկույն կմատներ կառավարության ձեռքը։

Իմ հուսահատությանը չափ չկար. ես գտնվում էի ամենաանտանելի դրության մեջ. չգիտեի՝ ինչ հնար գտնել վտանգից ազատվելու համար. այդ պատճառով, երբ ծերունին հարցրեց, թե ի՞նչ պետք է անել, ես ոչինչ պատասխանել չկարողացա։

— Եթե օրիորդը հիվանդ չլիներ, գործը շատ հեշտ էր,— ասաց նա փոքր-ինչ մտածելուց հետո։— Ես ձեզ՝ երկուսիդ ևս կուղարկեի Սիսիանի կողմերը, իմ բարեկամի մոտ, նա կպահեր ձեզ, մինչև հրամանը կհնանար և ամեն բան կմոռացվեր։ Բայց օրիորդի հիվանդությունը ինձ դժվարության մեջ է դնում...

Նա դարձյալ մտածության մեջ ընկավ և ապա շարունակեց.

— Ռուսաց տիրապետությունից առաջ մեր կողմերի հայերը ևս միևնույն դրության մեջ էին, ինչ դրության մեջ գտնվում են այժմ Պարսկաստանի հայերը։ Պատահում էր այս և այն խանը, այս և այն բեկը մի գեղեցիկ հայ աղջիկ էր տեսնում, իսկույն յուր ծառաներին ուղարկում էր և բռնությամբ տանում էր յուր տունը։ Ոչ մի ծնող համարձակություն չուներ հակառակելու։ Մի անգամ մահմեդականի տունը մտած աղջիկը, այլևս այնտեղից դուրս չէր գալիս։ Նրան կամ աղախին էին դարձնում, կամ հարճ և կամ կին։ Ծնողները աշխատում էին տգեղացնել իրանց աղջիկներին, որ մահմեդականների աչքին հաճելի չթվին։ Այստեղից սովորական դարձան գլխի և երեսի այն այլանդակ փաթոթները, որ այժմ կրում են մեր կանայքը։ Բայց մի այլ հնար ևս երբեմն ազատում էր մեր աղջիկներին։ Երբ ծնողները հասկանում էին, որ մահմեդականը աչք ունի մեկի վրա, իսկույն վեր էին առնում աղջկան և պսակում էին պատահած հայ տղայի հետ։ Ամուսնացած կնոջը շատ չէին դիպչում, նրան անպտղանում էին և բաց թողնում, որովհետև կին դարձնելու համար բավական դժվարություններ կային։ Մահմեդական օրենքը արգելում է՝ ամուսին ունեցող կնոջը, ինչ ազգից և կրոնքից լիներ նա, իրա կին դարձնել, քանի որ նա չէր բաժանված յուր ամուսնից և մահմեդականություն չէր ընդունած։ Բայց ազաբ աղջիկների վերաբերությամբ այդ տեսակ պայմաններ չէին պահանջվում։ Ազաբ աղջիկը մի անգամ մահմեդականի ձեռքը ընկնելուց հետո դառնում էր կոտրած ման, նրան այլևս ոչ ոք չէր առնում. մինչև անգամ գտնվում էին այնպիսի սնահավատ ծնողներ, որ հրաժարվում էին իրանց տունը ընդունել «պղծած» աղջկան։ Պատահում էր, որ նշանած աղջիկներին ևս ուզում էին քաշել, տանել. այսպիսիներին իսկույն պսակում էին նշանած տղայի հետ, բայց պատահում էր, որ տղան. բացակա էր լինում, մի ուրիշ երկիր գնացած էր լինում։ Այսպիսի դեպքերում պսակը կատարում էին մի առարկայի հետ, որ մնացել էր այն տղայից։ Ես դեռ չեմ մոռացել մի այսպիսի դեպք. տղան գտնվում էր հեռու երկրում, իսկ նրա նշանածին ուզում էին հափշտակել։ Ժամանակ չկար տղային կանչելու։ Ծնողները աղջկան ծածուկ տարան եկեղեցի, կանգնացրին սեղանի առջև, իսկ խաչեղբայրը նրա մոտ կանգնած, ձեռին բռնած ուներ փեսայի հին գդակը։ Քահանան անդադար

դիմում էր այդ գդակին հարցնելով. «Տե՞ր ես», «սիրո՞ւմ ես», և կատարում էր պսակի խորհուրդը։

Ես թեև հետաքրքրությամբ լսում էի ծերունու խոսքերը, բայց չգիտեի, ինչո՞ւ համար էր այդ երկար պատմությունը։ Նրա միտքը հասկացա այն ժամանակ, երբ դարձավ դեպի ինձ հետևյալ հարցով.

— Օրիորդը նշանած ունի՞։

— Դեռ ոչ ոք նշան չէ դրել նրան,— պատասխանեցի ես։

— Նա որևիցե մեկին սիրո՞ւմ է։

— Չգիտեմ...

— Այդ միևնույն է, սիրում է, թե չէ սիրում,— ասաց նա, — բայց պետք է, անպատճառ սուսակել մեկի հետ, ուրիշ հնար չկա ազատելու նրան։

— Ո՞ւմ հետ։

— Հենց ձեզ հետ, —ասաց ծերունին ուրախ դեմքով։— Ձեր անձնազոհությունը օրիորդի վերաբերությամբ այնքան նշանավոր է, որ դուք արժանի եք նրա ամուսինը լինելու։

— Դա անկարելի բան է, —պատասխանեցի ես,— այդ մասին խոսելն անգամ ավելորդ է։ Դուք չեք ճանաչում օրիորդին, նա ուրիշ աղջիկների նման չէ, նա սեփական կամքի և խելքի տեր աղջիկ է, նրան չէ կարելի զորով եկեղեցի տանել։ Մտածենք ուրիշ հնարների վրա։

Իմ խոսքերը շատ օտարոտի թվեցան ծերունուն, աղջիկը ևս կարող էր յուր սեփական կամքը և խելքը ունենալ, բայց, թեև շատ դժվարությամբ, այսուամենայնիվ, նա համաձայնվեցավ ինձ հետ չբռնադատել օրիորդին ամուսնության մասին և ուրիշ հնարների վրա մտածել։ Մենք երկար խորհեցինք, վերջապես ծերունին այն եզրակացության հասավ, որ օրիորդը պահվի յուր տանը, իսկ ես առժամանակ հեռանամ։— «Հիվանդին իմ տան ծածկի տակ թաքցնելը հեշտ է, բայց ձեզ կարող են նկատել...», ասաց նա։

Բայց ես որպե՞ս կարող էի բաժանվել օրիորդից, ո՞ւմ հոգաբարձությանը հանձնեի նրան, միթե կարո՞ղ էի հանգիստ լինել, եթե մի օր, մի ժամ, մի րոպե նրան չտեսնեի, կամ ի՞նչ ազդեցություն կաներ նրա հիվանդության վրա, եթե այդ բոլորը հայտնվեր նրան։

— Ուրիշ հնար չկա,— կրկնեց ծերունին։— Եթե օրիորդը

առողջ ես լիներ, ձեզ դարձյալ հարկավոր էր բաժանվել միմյանցից, որովհետև ձեզ երկուսիդ միասին տեսնելով, ավելի հեշտ կարող էին ճանաչել։

Ես իմ սրտի և զգացմունքների հետ կարող էի հաշտվել, բայց իմ բոլոր մտատանջությունը նրանումն էր, թե ինչպե՞ս հայտնեմ օրիորդին, որ նրան միայնակ եմ թողնում։ Բայց մեծ եղավ իմ զարմանքը, երբ նրան հաղորդեցի մեր աննախանձելի վիճակը, նա խիստ սառնասրտությամբ ասաց ինձ.

— Դու շատ բան արեցիր ինձ համար, ավելին պահանջել քեզանից իրավունք չունեմ։ Դու, ուր որ կամենում ես, գնա, հեռացիր, գլուխդ ազատիր, ես կմնամ այստեղ։ Այժմ ինձ համար միևնույն է... կյանքը զզվացրել է ինձ... Եթե ինձ գտնելու և տանելու ես լինեն հորս տունը, դարձյալ չեմ վախենա, որովհետև գիտեմ, որ մինչև այնտեղ հասցնելը կենդանի չեմ մնա։ Այնուհետև իմ դիակի հետ ինչ որ ուզում են, թող անեն...

Օրիորդի հուսահատական խոսքերը կրակի նման այրում էին իմ սիրտը. իմ լեզուն կապվեցավ, ես մի բառ անգամ չկարողացա գտնել նրան մխիթարելու։ Ես ցանկանում էի գրկել նրա ոտները, համբուրել և ասել, որ մինչև մահ քո ծառան, քո ստրուկը կդառնամ, քո ոտքերի տակի հողը կլինեմ, և քեզանից չեմ բաժանվի։ Բայց նա չթողեց ինձ խոսել, ասելով.

— Իմ բանը պրծած է... ես շատ չեմ ապրի... դու քո գլուխը ազատիր և իմ վրա մի մտածիր...

Իմ աչքերը լցվեցան արտասուքով։ Նա ափսոսում էր ինձ... արդյո՞ք իմ մատուցած ծառայությունների համար, արդյոք երախտագիտության զգացմունքի՞ց դրդված, թե մի այլ կիրք թելադրում էր այդպես խոսել։ Ես այդ հասկանալ չկարողացա, միայն նկատում էի, կարծես թե, նա մինչև անգամ ուրախ էր, որ հանգամանքները փոխվեցան, կարծես թե, ցանկանում էր առանձնանալ և առժամանակ անջատված լինել ինձանից։ Ի՞նչ էր պատճառը։ Ես այդ հասկացա, բայց շատ ուշ հասկացա, երբ նա արդեն այս աշխարհից հրաժարվել էր, և յուր վշտերը յուր հետ գերեզման էր տարել... Հիվանդության մահճի մեջ երկու զգացմունքներ կռվում էին նրա սրտում, մեկը՝ սերը, որ դեռ նոր բոցավառվում էր նրա մեջ, մյուսը՝ ազնվատոհմական հպարտությունը, թե ինչպե՞ս կարող էր կին լինել մի ռամկի՝ յուր հոր տան ծառայի որդուն։ Նա վախենում էր աշխարհի

նախատինքից և ցանկանում էր օգուտ քաղել իմ բացակայությունից և խեղդել յուր սրտի մեջ իրան տանջող զգացմունքը...»։

Ավազակապետը կանգ առեց։ Վաղեմի հիշողությունները շոշափեցին նրա սրտի դեռ ոչ բոլորովին բուժված վերքերը։ Նա երեսը մի կողմ շուռ տվեց, որ ես չտեսնեմ նրա արտասուքը։

«Ես բոլորովին չանջատվեցա նրանից,— շարունակեց դրժբախտը ցավալի ձայնով։— Ես հեռացա, բայց շատ հեռու չգնացի։ Ցերեկով անհետանում էի մերձակա անտառներում, թափառում էի մթին ծմակների մեջ, կենակցում էի ծառերի, ժայռերի և գազանների հետ, և իմ վշտերը ցրվում էի որսորդությամբ։ Իսկ գիշերը մոտենում էի մեր հյուրընկալի տաղավարներին, և եթե միջոց էի գտնում, մտնում էի հիվանդին տեսնելու։ Երբ նա յուր պղտորված աչքերը բաց էր անում, տեսնում էր ինձ յուր մահճի մոտ նստած, միշտ կրկնում էր միևնույն խոսքերը.— «Ինչո՞ւ եկար, կարող են կալանավորել քեզ...»։ Անցան օրեր, անցան շաբաթներ, անցավ մի ամիս։ Օրըստօրե նրա հիվանդությունը ավելի վտանգավոր կերպարանք էր ստանում։ Մի գիշեր, երբ մոտեցա մեր հյուրընկալի տաղավարին, նա արտասուքը աչքերում դուրս եկավ իմ առջև և խորին ցավակցությամբ հայտնեց.— «Նա մեռավ...»։ Ես սարսափեցա, որպես մի եղեռնագործ։ Ինձ այնպես թվեցավ, թե ես եմ եղել նրա մահվան պատճառը։ Խղճի զարհուրանքը շանթահարեց ինձ...»։

Ավազակապետը կրկին կանգ առեց, ձեռքը տարավ դեպի հանգած չիբուխը, որ դրած էր նրա մոտ, կրկին վառեց և սկսեց ծխել։ Ծուխը թանձր մեգի նման դուրս էր հոսում նրա բերանից, նրա պնչերից, կարծես թե նրա սիրտը ճարակում էր մի սարսափելի հրդեհ։

«Ոչինչ հայտնել չկարողացան ինձ նրա մահվան մասին,— առաջ տարավ նա,— թե նա յուր կյանքի վերջին րոպեներում ի՞նչ դրության մեջ է եղել կամ ի՞նչ է խոսացել։ Նրա մոտ ոչ ոք չէր եղել, որ գոնե վկա լիներ անբախտ հանգուցյալի վերջին խոսքերին։ Երկու օր էր, որ նա մեռած էր, երկու օր նրա մարմինը պահել էին, որ ես տեսնեի։ Առավոտյան պետք է կատարվեր նրա թաղումը։ Ես այլևս չգնացի անտառ, մնացի, որ կատարեմ իմ վերջին պարտքը։ Իմ մասին այլևս չէի մտածում,

թե ինչ կարող էր պատահել ինձ հետ։ Նրան կորցնելուց հետո, այլևս կյանքը իմ աչքում արժեք չուներ։ Ես իմ ձեռքով պատրաստ է գերեզման իջեցնեի այն նազելի արարածին, որին իմ կյանքում միայն սիրել էի, և որը նույնպես սիրում էր ինձ։ Նրա գերեզմանը փորվեցավ հենց նույն լեռան վրա, հեռու մարդկային բնակությունից, ուր երբեմն հանդիպում են հովիվները միայն։ Նրա դագաղը հազիվ ծածկված էր հողով, խաշնարածների քահանան կարդում էր վերջին աղոթքը։ Ես սպանվածի նման կանգնած էի և լաց էի լինում։ Այդ միջոցին երկու յասավուլներ մոտեցան և ինձ կալանավորեցին։— «Նա մեռավ և ազատվեցավ, բայց դու ազատվել չես կարող...», լսելի եղան տանուտերի խոսքերը։ Ինձ տարան, բանտարկեցին տանուտերի տաղավարում, որ մյուս օրը ուղարկեն գավառապետի մոտ։ Օրիորդի կորուստը ինձ այն աստիճան ապշած և խելագարված դրության մեջ էր գրել, որ ես համարյա չէի զգում, թե ինձ հետ ինչ է կատարվում։ Այսուամենայնիվ, հենց նույն գիշերը ինձ հաջողվեցավ՝ իմ մոտ դրած պահապաններից մեկին սպանել, մյուսին սաստիկ վիրավորել և փախչել իմ բանտից։ Այնուհետև այլևս ի՞նչ էր մնում ինձ անել։ Իմ հանցանքները կրկնապատկվեցան. այստեղ դարձա մարդասպան, իսկ իմ հայրենիքից փախցրել էի իմ մեծավորի աղջիկը։ Իմ հայրենի երկիրը վերադառնալ չէի կարող, իսկ իմ գտնված երկրում դարձա փախստական և միացա փախստականների խումբի հետ։ Ուխտեցի այնուհետև վրեժխնդիր լինել բոլոր այն մարդկանցից, որ կրում են խան, բեկ, մելիք և տանուտեր անուններ։ Իմ նպատակին մասամբ հասա... Բայց իմ ձեռնարկությունը այնքան սարսափելի էր և արյունոտ, որ վերջը բերեց ինձ այստեղ»...

Զ

ՀԱՄՐԸ

Ավազակապետը ծանոթացրեց ինձ մի այլ երիտասարդի հետ, որին կոչում էին Համր։ Նրա իսկական անունը ոչ ոք չգիտեր։ Զգիտեին նաև, թե ինչ ազգից էր նա։ Նա միշտ լուռ

էր և մտախոհ. մի անգամ գոնե չէին տեսել նրան խոսելիս, և այդ էր պատճառը, որ ընկերները նրան Համր էին կոչում։ Այդ օտարոտի խուլ ու մունջը վաղուց գրավել էր իմ ուշադրությունը։ Նրանում կար մի խորհրդավոր բան, որ յուր լռության մեջ ևս աչքի էր զարկում։ Բավական բարձրահասակ էր նա, նիհար և ցամաք կազմվածքով. դեղնած դեմքը գունաթափվելով, ստացել էր թառամած տերևի գույն, իսկ արագաշարժ աչքերը վառվում էին տենդային բոցով։ Զնայելով յուր տկար, հիվանդոտ կազմվածքին, աշխատում էր նա չափազանց եռանդով, և այդ առիթ էր տվել վերակացուներին բավական մեղմ վարվել նրա հետ, թեև նրա հսկողության վրա դարձնում էին առանձին ուշադրություն։

Գիշեր էր, երբ առաջին անգամ առիթ ունեցա խոսելու նրա հետ։ Խոնավ պատերին կպցրած ճրագվի մոմերը հազիվ լուսավորում էին դատապարտյալների մռայլոտ ու սառն օթևանը։ Մերկ հատակի վրա, այստեղ ու այնտեղ, անկարգ կերպով պառկած էին ցերեկվա տաժանական աշխատությունից հոգնած թշվառները։ Քունը միակ մխիթարությունն է այդ ողորմելիների, նա կազդուրում է նրանց ջարդված անդամները և մոռանալ է տալիս սրտի դառն վշտերը։

Արթուն էր Համրը միայն։ Նա մտքով, կարծես թե վերապրացել էր երկինքը, իսկ նրա խորախորհուրդ աչքերը մի առանձին կարեկցությամբ նայում էին քնած թշվառների վրա։ Ես նրանից ոչ այնքան հեռու պառկած էի իմ հարդյա անկողնի վրա, և իմ աչքերը հառած էին դեպի երիտասարդի տխրամած դեմքը, որ կրում էր յուր վրա հետքերը մի դժբախտ անցյալի...

Նա լուռ էր, որպես միշտ։ Իսկ այն գիշեր մեծ եղավ իմ զարմանքը, երբ նրա ցամաք ու փակված շրթունքներից դուրս հնչեց մի խուլ հառաչանք այդ երկու բառի հետ՝ «աստված իմ...»։ Ես մինչև այնօր չգիտեի նրա ինչ ազգից լինելը, բայց հանկարծ լսեցի նրանից հայկական բառեր։ Ես չկարողացա զսպել իմ սրտի զեղմունքը։

— Դարձյա՞լ մի հայ...— բացականչեցի ես այնքան լսելի ձայնով, որ դեպի ինձ գրավեցի Համրի ուշադրությունը։ Նրա փակված լեզուն բացվեցավ և պատասխանեց ինձ հետևյալ խոսքերով.

— Ինչո՞ւ եք զարմանում, աշխարհի ո՛ր անկյունում չկա

հայ։ Արմատից խլված և ցամաքած բույսը տանում է քամին դեպի ամեն կողմ...

Նա կրկին լռեց։

Կան անձնավորություններ, որոնց մի բառը, մի խոսքը բավական է, որ մարդ նրանց մասին գաղափար կազմե. Համրի՝ ասածը թեև շատ պարզ չէր։ բայց բավական հատկանիշ էր նրա մթին ծածկամիտ բնավորությանը։ Ես մոտեցա, նստեցի նրա մոտ։

— Ուրեմն դուք հա՞յ եք,— հարցրի նրանից։

Ես այն աստիճան զգացվեցա, որ ձեռքերս տարածելով խնդրեցի նրանից.

— Թույլ տվեցեք ձեր ազգակցին գրկել ձեզ։

— Կարծեմ, մեր դրության մեջ ավելորդ են այս տեսակ քնքշություններ,— ասաց նա հրաժարվելով։

Նրա խոսքերը նույնքան սառն էին, որքան նրա դեմքը, բայց ինչո՞ւ այնքան ջերմ կերպով ազդում էին իմ սրտին։ Ես աշխատում էի շարունակել նրա հետ խոսակցությունը, բայց դժվարանում էի կապը պահպանել։

— Դուք այս գիշեր չեք քնում,— ասացի ես,— համարյա ամեն գիշեր նկատում եմ, որ դուք խիստ սակավ եք քնում։

— Այդ իմ սովորությունն է։

— Երևի, մի բան տանջում է ձեզ։

— Մեզ ուղարկել են այստեղ հենց տանջվելու համար։

— Այդ չեմ հարցնում, երևի մի ուրի՞շ բան կա։

— Խնդրեմ չմտնել իմ սրտի խորքը,— ասաց նա և երեսը շուռ տվեց։

Ես փոշմանեցա, որ թույլ տվի ինձ մի դեռևս անծանոթ մարդու գաղտնիքները շոշափել։

— Ներեցեք, խնդրեմ, իմ անհամեստ հարցմունքի մասին։

Նա պատասխանեց ժպտալով.

— Հանցանքների այս քավարանում իմ ներողությունը ավելորդ է։

Ես չկամեցա այլևս ձանձրացնել նրան, բարի գիշեր ասելով, հեռացա և կրկին պառկեցի իմ հարդյա անկողնի վրա։ Իմ աչքերը դեռ երկար նայում էին նրա վրա, իմ միտքը դեռ երկար զբաղված էր նրանով։ Ո՞վ էր դա, ո՞ր երկրից և ի՞նչ հանցանքի համար էր դատապարտված,— այդ հարցերը հե-

տաքրքրում էին ինձ։ Ամեն մի դատապարտյալ սովորություն ուներ անամոթաբար և մինչև անգամ պարծենալով պատմել յուր գործած հանցանքները, բայց Համրը յուր մասին խոսելու սովորություն չուներ։

Երբ առավոտյան կրկին քշեցին մեզ հանքերի մեջ աշխատելու, ճանապարհին ես պատմեցի ավազակապետին իմ զրուցավա խոսակցությունը Համրի հետ։

— Նա շատ հետաքրքիր մարդ է,— ասաց ավազակապետը,— ես քեզ կբարեկամացնեմ նրա հետ։

Մենք հասանք հանքը, կրկին խլուրդների նման ներս սողացինք մթին խորշերի և խոռոչների մեջ, կրկին մեր բահերը, բրիչները և մուրճերը սկսեցին գործել։ Այն քարանձավի մեջ, ուր մեր խումբը աշխատում էր, պատահեց մի ցավալի անցք։ Հանկարծ ժայռի մի բավական մեծ կտոր, դուրս պոկվելով անձավի պատից, ցած գլորվեցավ և բանվորներից մեկին տակով արեց։ Թվով չորս հոգի էինք այնտեղ՝ ես, Համրը և մի այլ տաժանակիր, իսկ չորրորդը հեծում և հառաչում էր ժայռի տակ։ Համրը մեզանից փոքր-ինչ հեռու էր. նա չնկատեց անցքը, բայց լսեց դղրդյունի ձայնը։ Մինչև նրա մեզ մոտ վազելը, ես և իմ մյուս ընկերը ամեն ճիգ թափում էինք, որ ետ մղենք ժայռը և նրա տակից դուրս բերենք թշվառին։ Բայց անգութ ժայռը ամենայն ծանրությամբ նստած էր նրա ոտների ու ծնկների վրա, և չէր շարժվում տեղից։ Վրա հասավ Համրը։ Ես և իմ մյուս ընկերը չկարողացանք զսպել մեր ծիծաղը։ Նա ուշադրություն չդարձրեց մեզ վրա, վեր առեց երկաթե մեծ ձողը, նրա ծայրը դրեց քարի տակին, և այնպիսի մի ուժով շարժեց, որ քարը իսկույն առաջ մղվեցավ, և թշվառ դատապարտյալի ջարդված սրունքները դուրս եկան նրա տակից։ Այդ գործողությունը, որ ավելի հնարագիտության արդյունք էր, քան թե մարմնական ուժի, զարմացրեց մեզ։ Իսկ Համրը պարծենկոտության մի նշան անգամ չցույց տալով մնաց լուռ և սառն, որպես մեր շրջապատող քարանձավը։ Այդ դեպքը ազդեց իմ մեջ մի առանձին հարգանք դեպի համեստ և միևնույն ժամանակ վերին աստիճանի բարի երիտասարդը։

Երեկոյան, մեր օթևանը վերադառնալու ժամանակ, ճանապարհին ես մի քանի անգամ փորձեցի խոսակցել նրա հետ, բայց միշտ ստանում էի այնպիսի կտրուկ պատասխաններ, որ

դժվարանում էի խոսակցությունը շարունակել։ Այսպես մոտեցանք այն փողոցին, ուր գտնվում էին մեր ֆերմայի կրպակները։ Հեռվից նկատեցինք, մի տեղ խմբված մարդիկ և բազմությունը դեպի այն կողմն էր վազում։ Մենք մտածեցինք, որ մի տարօրինակ բան պետք է պատահած լինի, և շտապեցրինք մեր քայլերը։ Երբ հասանք, անցքը շատ սովորական երևաց. երկու մարդիկ կռվում էին, և բազմությունը նրանց շուրջը հավաքված զվարճանում էր, թե որպես նրանք վայրենի կերպով ջարդում էին միմյանց կողքերը։ Ոմանք աշխատում էին բաժանել։ Մեկին, որ ավելի ուժեղ էր երևում, բռնեցին, իսկ մյուսը դուրս պրծավ նրա ճանկերից, «ազատեցե՞ք... օգնեցե՞ք»... գոչելով, փախավ և մոլորվածի նման մտավ մեր խումբի մեջ ապաստան որոնելու։ Մեր պահապանները մոտ վազեցին, որ սվիններով հեռացնեն նրան։ Բայց նա արդեն կպած էր իմ կուրծքին, ինձ պինդ գրկած ուներ, այնպես ձևացնելով, որ վախենում է յուր հակառակորդից։ «Նա ինձ կսպանե, նա աստված չունի...», ասում էր անդադար։ Այդ հանկարծակի դեպքից ես այն աստիճան շփոթվեցա, որ ամենևին չհասկացա, թե ինչ փսփսաց նա իմ ականջին, միայն զգացի, որ նրա ձեռքը խիստ ճարպիկ կերպով սողաց իմ գրպանի մեջ։ Մեր պահապանները հեռացրին նրան, նրա վարմունքը շատ բնական համարելով, որովհետև խեղճի հակառակորդը այնքան ուժեղ էր, որ կարող էր բոլորովին խեղդել նրան։ Տեղային ոստիկանությունը վրա հասավ, խռովությունը հանդարտվեց. ամբոխը ցրիվ եկավ, իսկ մեր խումբը անցավ։

Ամբոխի համար դա փողոցային սովորական անցքերից մեկն էր, իսկ խաչագողի համար դա նոր բան չէր։ Ես ճանաչեցի, թե ով է այն մարդը, ես հասկացա, թե ինչ նպատակով էր սարքել այդ կռիվը, և վերջապես ես գիտեի, թե ինչու մեր խումբի մեջ մտնելու միջոցին՝ ինձ միայն ընտրեց յուր պաշտպան և ուղղակի ինձ մոտեցավ։ Խաչագողները շատ անգամ փողոցներում, հրապարակների վրա, սարքում են այս տեսակ կռիվներ։ Բազմությունը հավաքվում է, մարդիկ խառնվում են միմյանց, իսկ նրանք, օգուտ քաղելով ընդհանուր շփոթությունից, գողանում են սրա ու նրա ժամացույցը կամ շատ անգամ կողոպտում են հենց իրանց բաժանողների գրպանները։ Այդ մարդը նույնպես

ձեռքը տարավ իմ գրպանը, բայց այնտեղից ոչինչ չգտաղացավ, և գողանալու բան էլ չկար, բայց զգացի, որ մի բան դրեց այնտեղ։ Առանց նայելու, ես գիտեի, թե ինչ պետք է լիներ այդ։ Դա միևնույն անձնավորությունն էր, որ մի քանի շաբաթ առաջ մուրացկանի կերպարանքով մոտեցավ մեր խումբին և բաժանեց մեզ յուր հավաքած դրոշները։ Այն ժամանակ, երկու հինգկոպեկանոցների մեջ թաքցրած, տվեց ինձ յուր խորհրդավոր տոմսակը։ Այժմ միևնույն անձնավորությունը այդ հնարանքով մոտենալով ինձ, դրեց իմ գրպանում մի այլ տոմսակ։ Իհարկե, ոչ ոք չհասկացավ նրա խորամանկությունը, և նա այն ստիճան կերպարանափոխ էր եղած, որ մինչև անգամ ավազակապետը չճանաչեց, - որ այդ մարդը միևնույն ծպտյալ մուրացկանն էր։

Երբ հեռացանք, ձեռքս տարա գրպանս, տեսա, որ իմ ենթադրությունս սխալ չէր. այնտեղ կար մի թղթի կտոր։ Առանց կարդալու, արդեն ինձ հայտնի էր նրա բովանդակությունը, այսուամենայնիվ, գիշերը միջոց գտա ծածուկ կարդալու։ Նրա մեջ շտապ ձեռքով գրված էին հետևյալ տողերը.

«Մուրա՛դ, մի շաբաթից հետո զատկի տոնն է։ Դու գիտես, ինչ դրության մեջ են լինում մարդիկ այդ տոնի օրերին։ Արաղը կհաջողեցնե մեր դիտավորությունը։ Ում հետ որ հարկավոր էր, ես կարգադրել եմ։ Քեզ բաց կթողնեն։ Դու կգտնես ինձ եղնիների փոքրիկ անտառում, Կարմիր բլուրի մոտ։ Այնտեղ ամեն ինչ պատրաստ կգտնես քո փախուստի համար։

Է

ԻՄ ՆՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿԸ

Մոտեցան զատկի տոները։ Մեզ այլևս չէին աշխատեցնում, մեզ թույլ էին տալիս փոքրիկ զվարճություններ անել, մեզ թույլ էին տալիս և մեր հոգիների մասին մտածել, աղոթք կարդալ, խոստովանվել, հաղորդվել և այլն։ Իհարկե, այդ բոլորը կատարվում էր զինվորների հսկողության ներքո։

Այդ օրերում ես ավելի ընտելացա Համրի հետ, մանավանդ, երբ ավազակապետը իմ մասին նրա ականջում մի քանի բաներ փսփսաց։ Տարակույս չունեի, որ վատ բան չէր խոսի իմ մասին։ Այնուհետև այդ երիտասարդը, որ առաջ խորշում էր ինձանից, բավական մտերմացավ ինձ հետ։

Մի օր միասին նստած էինք մեր արգելանոցի բակում, տաքանում էինք արեգակի ճառագայթներով։ Մեր առջև դատապարտյալները զանազան խաղեր էին անում, ծիծաղում էին, աղաղակում էին, հռհռում էին և լրբաբար բոթբթում էին միմյանց։ Տաժանակիրը յուր թշվառության մեջ դառնում է կատարյալ ստահակ։ Ամոթը, պատկառանքը և մարդկային բոլոր արժանապատվությունները կորցնում է նա։ Օրենքը զրկում է նրան ամեն իրավունքներից, բայց նա ինքը զրկում է իրան բարոյական և հոգեկան բոլոր լավ հատկություններից։ Կարծես նա հետզհետե հաշտվում է այդ մտքի հետ՝ «ինձ համար վճռեցին, որ ես վատ եմ, անպիտան եմ, և կշարունակեմ մնալ անպիտան, որովհետև իմ ուղղվելը կամ լավանալը երբեք չեն փոխի այն վիճակը, որին դատապարտված եմ...»։

Ես նայում էի այդ մոլեգնած ստահակների վրա։ Համրը ընկղմված էր մտածությունների մեջ. նա տխուր էր, որպես միշտ, տոները չէին ուրախացնում նրան։ Ես չգիտեի ինչ առարկայի վրա խոսել նրա հետ։ Այդ մարդուն հանդիպելիս, իմ լեզուն կապվում էր, ես նույնպես համր էի դառնում։ Ես ուրիշ խոսք չգտա և հիշեցի նրա մի քանի օր առաջ կատարած քաջագործությունը քարանձավի մեջ։

— Ձեր արածը կատարյալ հրաշք էր,— ասեցի նրան։

— Միթե դուք հավատո՞ւմ եք հրաշքներին,— ժպտալով հարցրեց նա։

— Հավատում եմ։ Բայց ձեր գործը մարդկային ուժից բարձր էր։

— Մարդկային ուժը շատ և շատ բարձր է, քան ձեր տեսածը։

Նրա համեստությունը վիրավորվեցավ։ Ես տեսա, որ իմ նկատողությունները հաճելի չեն նրան, այդ պատճառով խոսքս փոխեցի, նրա ուշադրությունը դարձնելով մեր առջևում զվարճացող թշվառների վրա։

— Նայեցեք, ինչպե՞ս են զվարճանում դրանք, կարծես թե խելագարներ լինեն, բոլորովին մոռացել են իրանց դրությունը։

— Ինչո՞ւ չզվարճանան, երբ թույլ են տալիս նրանց վայելել այդ փոքրիկ մխիթարությունը։

— Մի քաղցր կաթի՞լ դժբախտության անսահման ծովի մեջ, ի՞նչ նշանակություն ունի այդ մի կաթիլը։

Նա ուղիղ նայեց իմ երեսին, կարծես, զարմանում էր, որ ես էլ դատել գիտեմ, որ ես էլ իմ առանձին համոզմունքներն ունեմ։

Բակը ընդարձակ էր։ Մենք բավական հեռու նստած էինք խաղացողներից։ Մեր խոսակցությունը ոչ ոք չէր խանգարում։

— Մի՞թե նրանք մեղավոր են, որ դժբախտ են,— հարցրեց նա։

— Իհարկե, մեղավոր են,— պատասխանեցի ես։

— Այդ դժբախտներից մեկն էլ դուք եք. ասացեք խնդրեմ, դո՞ւք եք մեղավոր, որ ձեզ այստեղ ուղարկեցին։

— Ապա ո՞վ է մեղավոր. ես հանցանք գործեցի, դրա համար էլ ուղարկեցին ինձ այստեղ պատժվելու։

Նա ոչինչ չպատասխանեց, միայն հետաքրքրվեցավ իմ անցյալով, խնդրեց՝ մանրամասնաբար պատմել իմ կյանքի պատմությունը։ Ավազակապետից լսել էի, որ նա սովորություն ունի յուր բոլոր ծանոթների կյանքը ուսումնասիրելու, այդ պատճառով ես ամեն ինչ պատմեցի նրան։ Ես պատմեցի, թե որպես երեխա ժամանակ հորից զրկվելով, մնացի աղքատ մոր խնամատարության ներքո, թե որպես նա հանձնեց ինձ դարբնոցում արհեստ սովորելու, և միշտ խրատում էր, որ խաչագողների ճանապարհով չգնամ, մի բան սովորեմ և իմ արդար աշխատանքով ապրեմ։ Պատմեցի աղետավոր բանալիի անցքը, իմ վարպետի դարբնոցի հետ պատահած դժբախտությունը և իմ փախուստը այնտեղից։ Պատմեցի, թե որպես այնուհետև թափառական կյանք էի վարում, և որպես միացա մի խումբ մանկահասակ սրիկաների հետ, որոնք ինձ պես փախստականներ էին, և սկսեցի նրանց հետ մանր գողություններ անել։ Պատմեցի, որ իմ երկրում ես հալածվեցա, տանջվեցա, փախըստական եղա օրենքի և դատաստանի երեսից,— և այն մարդը, որ խաբել էր ինձ՝ անմեղիս, և ես նրա թելադրությամբ ակամա ու անգիտակցաբար հանցանք էի գործել,— կրկին նույն մարդը

մոտեցավ ինձ, և ես նրա առաջնորդությամբ թողեցի իմ հայրենիքը, հեռացա դեպի օտար աշխարհներ և մտա խաչագողների հասարակության մեջ։ Այստեղ ես դարձա մի կատարյալ եղեռնագործ, սովորեցի ամեն չարիքներ գործել՝ սպանություն, գողություն, բազմատեսակ խաբեբայություններ, որոնցով ահագին գումարներ էինք ձեռք բերում, սովորեցի ուրիշի վաստակով ապրել։ Վերջապես, բռնվեցա և աքսորի դատապարտվեցա։

— Այդ բոլորը շատ հետաքրքրական է,— ասաց նա, երբ ես վերջացրի։— Հիմա տեսնո՞ւմ եք, որ դուք սկզբից անմեղ եք եղել և արդար, բայց ձեզ հանցանքի մեջ ձգեցին այն հանգամանքները և այն կենսական պայմանները, որոնցով, սկսյալ մանկությունից, շրջապատված եք եղել։ Եթե այն հանգամանքները և այն պայմանները ձեզանից հեռացնեին կամ իսպառ չլինեին, դուք, անտարակույս կմնայիք ձեր անմեղության մեջ, և գուցե շատ օրինավոր մարդ կդառնայիք։ Ընտանիքի մեջ ոչինչ չսովորեցաք, ընտանիքը լավ չկրթեց ձեզ։ Ձեր վարպետի դարբնոցում կարող էիք արհեստ սովորել, և դա ձեր արդար ապրուստի հիմքը կլիներ, բայց անիրավացի պատճառներ այնտեղից ևս հալածեցին ձեզ։ Ձեր պատանեկության փոքրիկ, սրիկա ընկերները սովորեցրին ձեզ գողությամբ ապրելու։ Նախակրթությունը, իսկ խաչագողների ընկերությունը բոլորովին կատարելագործեց ձեր մեջ այդ արհեստը և դարձրեց ապրուստի միակ միջոց։ Այդ բոլորը՝ ընտանիքը, սրիկա ընկերները, խաչագողները, մի խոսքով, այն ամբողջ մթնոլորտը, որի մեջ ծնեցին, աճեցին և հասունացան ձեր ընդունակությունները,— կոչվում է հասարակություն։ Եթե այդ հասարակությունը, կամ, որպես ասեցի, այդ մթնոլորտը, մաքուր լիներ, առողջարար լիներ և ձեզ վրա բարերար ազդեցություն գործեր, տարակույս չկա, որ ձեր ընդունակությունները կզարգանային դեպի բարին, դեպի լավը և դեպի օգտավետը։ Բայց եթե դուք դարձաք մի չարագործ, դուք ծնունդ եք նույն մթնոլորտի, այլ խոսքով, նույն հասարակության, որը յուր միջից արտադրել է ձեզ։

Ես նրա բացատրությունները հասկանալ չէի կարողանում։ Նա շարունակեց, ձեռքը մեկնելով դեպի զվարճացող բազմությունը, որ խաղում էր բակի մեջ։

— Տեսնո՞ւմ եք այդ թշվառներին, դրանք նույնպես՝ հասա-

բակությանն հիվանդոտ կազմվածքի արտադրած վերքերն ու պալարներն են, որ կտրել և այստեղ են ձգել, այն մաքով, որ կազմվածքը բոլորովին չվարակվի։ Բայց ո՞րտեղից առաջ եկան այդ վերքերը, այդ թարախալից պալարները՝ հայտնի բան է, նույն կազմվածքի հիվանդոտ դրությունից։ Եթե մարմինը առողջ լիներ, դրանք չէին լինի։ Քննեցեք դրանց յուրաքանչյուրի կյանքի պատմությունը և դուք կտեսնեք, որ դրանց գործած հանցանքների արմատը դրած է եղել այն հողի մեջ, որից դրանք բուսել են, աճել և զարգացել են։ Յուրաքանչյուրի հանցանքի ձևը, տեսակը, որպիսությունը տեղային բնավորություն ունի։ Եվ այդ կետից նայելով, այդ թշվառների ամեն մեկի կյանքի պատմությունը՝ նույն հասարակությունների մտավոր, բարոյական և հոգեկան հիվանդության պատմությունն է, որոնց միջից դուրս են եկել դրանք։ Այստեղ, այդ արգելանոցի մեջ, կարելի է ուսումնասիրել այն բոլոր կրթական, տնտեսական և հասարակական պայմանները, որ առաջ են բերել այս տեսակ հրեշներ։

Վերջացնելով յուր խոսքը, նա կրկին դարձավ դեպի ինձ, հարցրեց.

— Հիմա հասկացա՞ք, թե ով է մեղավորը, որ դուք, ես և այդ բոլոր թշվառները այստեղ բերվեցան։

— Ճշմարիտն ասած, շատ փոքր հասկացա,— պատասխանեցի ես, ամաչելով իմ տգիտության վրա։— Դուք բոլորովին նոր բաներ եք խոսում։

Նրա սառն դեմքի վրա երևաց մի թեթև ժպիտ։

— Ձեզ այդպես է թվում,— ասաց նա,— բայց իմ խոսքերը նոր չեն, խելացի մարդիկ այսպես են մտածում։ Հիմա ես կխոսեմ ձեզ հետ ավելի պարզ կերպով, հենց ձեր լեզվով, որ դուք հասկանաք։ Ես իբրև օրինակ կվեր առնեմ հենց ձեր անձնավորությունը, որովհետև դա ավելի մոտիկ և ավելի ծանոթ է ձեզ։ Ասացեք, խնդրեմ, դուք ինչո՞ւ սկսեցիք գողանալ, երբ ձեր պատանեկության հասակում ընկերացաք այն մանկահասակ սրիկաների հետ։

— Մենք քաղցած էինք մնում, այդ պատճառով գողանում էինք, որ սովից չմեռնենք։

— Շատ լավ։ Բայց մի՞թե չէիք կարող դուք կամ այն մանկահասակ սրիկաները, ձեր աշխատանքով հաց վաստակել և չգողանալ։

— Մենք ոչինչ չէինք սովորած։

— Տեսնո՞ւմ եք, այստեղ կան պատճառներ, որ մարդուն անբարոյական են դարձնում, այն է՝ աշխատանքին անսովոր և անընդունակ լինելը։

Եվ նա սկսեց երկար բացատրել, թե ինչ բան է հացի խնդիրը մարդկային հասարակության մեջ, թե ինչո՞ւ մարդիկ հացի համար անբարոյական են դառնում, ասաց, որ ոչ միայն մի անհատը, գործելու անընդունակ լինելով և արդար աշխատանքի սովորած չլինելով, դառնում է գող, ավազակ, խաբեբա, այլ մի ամբողջ ժողովուրդ կարող է այդպես դառնալ, եթե աշխատանքի սովորած չէ։ Նա օրինակ բերեց մի քանի ցեղեր, որ պարապում են ավազակությամբ և կողոպտում են իրանց հարևաններին։ Ես հարցրի.

— Կան մարդիկ, որոնք աշխատանքի սովոր են, որոնք ընդունակ են գործելու, բայց դարձյալ գողանում են, խաբում են և իրանց վաստակի մեջ անազնիվ միջոցների են դիմում, օրինակ Պարսկաստանի խաչագողները և հրեաները։

Նա պատասխանեց.

— Ասացեք խնդրեմ, ինչո՞ւ ոչ մի բարեկարգ երկիր, այլ միայն Պարսկաստանը արտադրեց խաչագողներ։ Այդ խաբեբաները ուրիշ ոչինչ չեն, եթե ոչ պարսիկների բռնակալության բնական արդյունք։ Մահմեդական կրոնը պիղծ է համարում նրանց. օրենքի առջև հավասար իրավունքներ չեն վայելում. նրանց կայքը, նրանց կյանքը ապահով դրության մեջ չէ դտնըվում. նրանց մշակության պտուղները, մահմեդականներից պիղծ համարվելով, չեն վաճառվում, և այսպիսով զրկվում են ապրուստի ամենահաստատ միջոցներից մեկից, որ մատակարարում է նրանց հողը, ավելացրեք դրանց վրա պարսիկների ճնշումը, հալածումը, կամայականությունը, հարստահարությունը և ձեզ հասկանալի կլինեն խաչագողների գոյության բուն պատճառները։ Ստրկությունը խաչագողների մեջ զարգացրեց նենգավորություն, իսկ ճնշված, հալածված և հարստահարված դրությունը նրանց անբարոյական դարձրեց։ Հալածանքը զարգացրեց այդ հալածյալների մեջ նույնպես հալածասիրության ոգի, իսկ հարստահարությունը աճեցրեց նրանց մեջ անբարոյա-

կան բնազդումներ։ Վերևից, այսինքն իրանից ավելի զորավորից, հարստահարվելով, սովորեցին նրանք հարստահարել իրանցից ավելի տկարներին։ Այսպիսի ճնշումը արտադրեց խաշագողներին։ Պարսիկները հարստահարում էին նրանց կոպիտ ուժով, իսկ նրանք սովորեցին հարստահարել պարսիկներին՝ կամ իրանցից ավելի տգետ մարդկանց մեղմ խորամանկությամբ և զանազան սատանայական խաբեբայություններով։ Ազատ մրցության մեջ, իրավունքների հավասարության մեջ նրանք կարող էին ազնիվ կերպով մաքառել։ Բայց որովհետև իրավունքները անհավասար էին՝ մի կողմում կանգնած էր բրոնությունը, կոպիտ ուժը, իսկ մյուս կողմում՝ անձայն հնազանդությունը, այսպիսի հարաբերությանց մեջ, շատ բնական է, որ մրցության համար նրանք կընտրեին անազնիվ միջոցներ։ Միշտ այդ դրության մեջ են եղել և Պարսկաստանի խաշագողները։ Այլևս ինչո՞ւ ենք մեղադրում խաշագողներին, որ նրանք անբարոյական դարձան, չէ՞ որ մահմեդական աշխարհը փչացրեց նրանց։

Դուք օրինակ բերեցիք և Պարսկաստանի հրեաներին,— առաջ տարավ նա։— Չէ՞ կարելի այդ ազգը անբարոյական կոչել, որ տվել էր մարդկությանը երկու ամենավսեմ և ամենաբարձր կյանքեր, որոնք բարոյականության հիմունքն են կազմում։ Բայց ինչո՞ւ բարոյապես փչացան հրեաները։ Եթե նրանց ազատ ասպարեզ տային գործելու, եթե նրանց չհալածեին, նրանք երբեք ստիպված չէին լինի խաբեբայությամբ ապրել։ Հրեան ցեղական հարուստ ձիրքեր ունի. նա խելքի, իմաստության, գիտության, ճարտարության և գեղարվեստի ասպարեզում հանդես է բերել ամենանշանավոր հանճարներ։ Օրինակ, Գերմանիայում նրա դրությունը փոքրիշատե ապահով է եղել, և նա միշտ նշանավոր և օգտավետ է հայտնվել մարդկային գործունեության ամեն ճյուղերում։ Իսկ մահմեդական աշխարհում նրան ճնշել են, նա դարձել է վնասակար։ Սկսյալ Եգիպտոսի փարավոնների օրերից, աշխարհի երեսին ցիրուցան եղած այդ ազգը հալածվում է։ Հալածանքը սովորեցրեց նրան խաբեբա լինել, խորամանկ լինել, նենգավոր լինել։ Այդ հատկությունները, որ առաջ եկան նեղված կյանքի անխուսափելի անհրաժեշտությունից, դարձան բնավորություն և ժառանգաբար անցան սերունդից սերունդ։ Միայն դժբախտ դրության

բարեփոխությունը կարող էր մաքրել այդ վատ հատկությունները։ Եվ որտեղ նրանց դրությունը բարեփոխվեցավ, այնտեղ նրանք լավացան։ Իսկ Պարսկաստանում և առհասարակ մահմեդական աշխարհներում նրանց դրությունը դեռ յուր աննախանձելի պայմանների մեջ է գտնվում։ Նրանց կայքը հափշտակում են, նրանց բարբարոսաբար չարչարում են, նրանց ամեն կերպ հարստահարում են, նրանք էլ սովորեցին իրանց զենքով՝ խելքով հարստահարել իրանցից ավելի միամիտներին։ Այդ դեպքում խաշագողի նշանակությունը հրեայից ոչնչով չէ զանազանվում, տարբերությունը միայն նրանց գործունեության եղանակի մեջն է։

Հիմա հասկացա՞ք,— շարունակեց նա,— որ մահմեդականությունը ինքն է մեղավոր, որ պատրաստում է յուր միջից անպիտան մարդիկ։ Եվ Պարսկաստանի նման երկիրը միայն կարող էր արտադրել խաշագողներ։ Որպես չէ կարելի մի վատ, անարգավանդ հողից առողջ և պտղաբեր բույսեր սպասել, այնպես էլ չէ կարելի մի անբարեկարգ երկրից սպասել լավ մարդիկ։ Վատ հողը կարելի է մշակել և պտղաբեր դառնել, նույնպես և մի անբարեկարգ երկիր, որպիսին է Պարսկաստանը, հասարակական կազմակերպությունը կարելի է այնպիսի պայմանների մեջ դնել, որ եթե վատերը, անբարոյականները բոլորովին չսպառվեին, գոնե նրանց թիվը համեմատաբար շատ փոքր լիներ։

Եվ նա երկար խոսում էր այն մասին, թե ինչ միջոցներ է հարկավոր գործ դնել, որ աղքատությունը և մարդկանց շարությունը վերացվի, որ բոլոր մարդիկ լինեն կրթված, բարի, գոհ և բախտավոր։ Այդ ամենը բացատրում էր նա այնքան պարզ լեզվով, որ ես այժմ բոլորը հասկանում էի։

Այնուհետև ես համարյա ամեն գիշեր խոսում էի նրա հետ և շատ բաներ էի սովորում։ Նրա հայացքները, նրա կարծիքները բոլորովին տարբեր էին իմ մինչև այն օր լսածներից և սովորածներից։ Օրինակ, մեր տերտերից շատ անգամ լսել էի, թե գողությունը մեղք է, եթե գողանալու լինես, մեռնելուց հետո հոգիդ կտանեն դժոխքի կրակի մեջ կայրեն։ Բայց ես դժոխքի կրակից շատ չէի վախենում, որովհետև դեռ նորահաս երիտասարդ էի, մինչև մեռնելը շատ ժամանակ ունեի, կարող էի հազար անգամ գողանալ, և նույն տերտերի մոտ մեղքս խոս-

տովանվելով, նրանից թողություն ստանալ։ Եվ այսպես, իմ գործը հեշտացրած էր։ Բայց թե այս աշխարհի, ներկա կյանքի համար գողությունը ի՞նչ վնաս ուներ,— տերտերը այդ մասին ոչինչ չէր խոսում, նա միայն ուպատնում էր դժոխքի կրակով։ Բայց Համբը, բացի դժոխքից, նաև ասում էր, որ գողի համար հենց այդ աշխարհը նմանապես դժոխք է, եթե ես առաջուց գիտենայի, երբեք չէի գողանալ։ Ես շատ էի գողացել, շատ էի խաբել, ահագին գումարներ էի ձեռք բերել, բայց երբեք բախտավոր չէի եղել։

«Քո անձնական բարիքը պետք է որոնես ուրիշի բարիքի մեջ,— ասում էր նա, —կցանկանայիր, որ ուրիշը անե քեզ այն բանը, ինչ որ քեզ ախորժելի չէ, օրինակ, գողանա քեզանից, խաբե, հարստահարե քեզ, անպատվե քեզ, ճնշում գործ դնե քեզ վրա և այլն»։— «Չէի ցանկանա»,— պատասխանում էի ես։— «Ուրեմն դու էլ չպիտի անես ուրիշներին»։— Հետո հարցնում էր.— «Դու կցանկանայի՞ր, որ ուրիշները սիրեին քեզ, օգնեին քեզ, հարգեին քո մարդկային իրավունքները, չհարստահարեին քեզ»։— «Կցանկանայի»։— «Ուրեմն դու էլ և միևնույն կերպով պետք է վարվես ուրիշների հետ»։ Նա ասում էր.— «Մեր օգուտը ուրիշի օգտի մեջ է. վնասելով նրան, վնասում ենք մեզ»։

Բայց քավոր Պետրոսը, իմ նախկին դաստիարակը, բոլորովին հակառակն էր խոսում. նա ասում էր.— «Մենք մեր անձի համար ենք ապրում. մարդը պետք է հոգ տանի յուր անձի և յուր բարօրության համար միայն, բայց երբ մի ուրիշը արգելք է լինում իմ բարօրությանը, ես պետք է աշխատեմ նրան ոչընչացնել, որ իմ անձը լավ ապրի»։ Ես այժմ հասկանում էի, թե ո՛ր աստիճան անբարոյական նշանակություն ունեին այդ խոսքերը, թե ո՛րքան վնասակար էին նրանք։ Դիցուք թե ես իմ անձի բարօրության համար ոչնչացնեի մի ուրիշին, ինձանից ավելի տկարին. չէ՞ որ կգտնվեր մեկը, ինձանից ավելի զորեղը, նա էլ յուր բարօրության համար ինձ կոչնչացներ, և այսպես, զորեղը անզորին սպառելով, մարդկային հասարակության մեջ կտիրեր ընդհանուր ամայություն, ընդհանուր դժբախտություն։

Համբը միշտ յուր խոսքերի մեջ օրինակ էր առնում իմ անձը, կարծես, ես ամբողջ մարդկության ներկայացուցիչը լինեի։

Ասում էր, քո անձը քեզ ավելի մոտ է, դու նրա հետ ավելի ծանոթ ես, և քո անձի օրինակով կարող ես դատել բոլոր մարդերի վրա։ Ինձ երևում էր, որ ես գրավել էի նրա ուշադրությունը։ Նա որքան սառն էր, որքան ծածկամիտ էր դեպի յուր ընկերները, այնքան եռանդոտ կերպով սկսեց հոգ տանել իմ զարգացման վրա։ Մի անգամ ասաց ինձ.

— Մուրադ, դու այժմ գիտես (նա հիմա ինձ հետ դու-ով էր խոսում), թե ինչ է պատճառը, որ մարդիկ անբարոյական և միևնույն ժամանակ անբախտ են դառնում. դու գիտես նաև, որ մի մարդու անբախտության պատճառները հասկանալու համար, պետք է ծանոթանաս նրա կյանքի պատմության հետ։ Եվ այսպես, մի ամբողջ ազգի անբախտության պատճառները հասկանալու համար պետք է նույնպես ծանոթանալ նրա պատմության հետ։ Որովհետև մի ազգ մարդկության մեջ նույն տեղն է բռնում, ինչ որ անհատը հասարակության մեջ։ Եվ նա ազգերի պատմությունից բացատրեց ինձ շատ կրթիչ բաներ։

Երկար նա խոսում էր կրոնքի, լեզվի և գրականության մասին, բացատրում էր, թե մի ազգի գրականությունը ինչ ուղղություն կարող է տալ նրա կյանքին և գործունեությանը, բացատրում էր մեր նոր գրականության սխալ ընթացքը և նրա վնասակար ազդեցությունը ժողովրդի վրա։ Նրա ասածները ինձ այն աստիճան գրավեցին, որ ես վճռեցի, որքան կարելի է, լավ սովորել հայոց լեզուն։ Իմ լեզուն առաջ շատ կոշտ և ռամկական էր։ Թուրքերեն և պարսկերեն բառերով լի էր իմ խոսակցությունը։ Ես աշխատում էի այնուհետև բուն հայկական բառեր գործածել։ Ես շատ շուտ սովորեցի բառերը, օրինակ, մի գիշերվա մեջ սովորեցի այդ բոլոր բառերի նշանակությունը. անհատ, ընտանիք, ցեղ, ազգ, հայրենիք, պետություն, քաղաքակրթություն, լուսավորություն և ուրիշ շատ բառեր։ Նա ասում էր, որ այդ բառերի վրա ամբողջ գրքեր են գրված. բայց նա մի քանի խոսքերով բացատրում էր ինձ դրանց իմաստը։ Ափսո՜ս, որ թույլ չէր տրված մեզ մոտ գիրք, թուղթ, գրիչ ունենալ, թե չէ, ես շատ բան կսովորեի նրանից։

«Գիտությունը և ուսումը միայն միջոցներ են մի ժողովրդի համար հասնել բարօրության, բայց ոչ բարօրության առարկան», ասում էր նա, և սկսում էր բացատրել, թե ուրիշ ինչ պայմանների մեջ պետք է դրված լինի ժողովրդի կյանքը, որ

կարողանա լինել նա թախտավոր։ Երկար ու երկար խոսում էր հողի ու երա մշակության պայմանների մասին, արհեստների կատարելագործության մասին, դրամատերերի գործունեության մասին և այլն։ Աշխատանքը նա ավելի բարձր էր դասում, քան ամեն ինչ։ «Աշխատանքը կյանք է, ասում էր նա, իսկ անգործությունը՝ մեռելություն»։

Նրա խոսակցությունը այնքան հաճելի էր, որ ես ժամերով լսում էի նրան և չէի կշտանում։ Ոչ մի անմիտ բառ չէր դուրս թռչում նրա բերանից։ Նա գիտեր խիստ լուրջ և խորին կերպով վերաբերվել դեպի ամեն մի հարց։ Ես իմ կյանքում առաջին անգամ տեսնում էի մի այնպիսի երիտասարդ, որը անսահման բարության հետ ուներ և հմտությունների մեծ պաշար։ Նա գիտեր մի քանի եվրոպական և ասիական լեզուներ և, որքան ասես, խելացի մարդ էր։

Իր մասին նա ոչինչ չէր խոսում։ Մի քանի անգամ հետաքրքրվեցա նրա անցյալով, բայց ստանում էի միշտ անորոշ պատասխաններ։

— Դուք բարի և ազնիվ մարդ եք,— մի օր ասեցի նրան,— դուք չէիք կարող ինձ նման եղծանագործ լինել, պատմեցեք, խնդրեմ, ի՞նչ հանցանքի համար աքսորեցին ձեզ։

— Այդ մի հարցրեք...— պատասխանեց նա ոչ սակավ հուզված կերպով։

— Գոնե ասացեք, դուք ո՞վ եք և որտեղացի՞։

— Այդ ևս մի հարցրեք...

Որպիսի՞ տխուր գաղտնիք էր թաքնված այն անբախտ երիտասարդի ճակատագրի մեջ։ Ինչ էլ որ լիներ, ես համոզված էի, որ նա ազնիվ մարդ էր, և նրա բարեկամությունը ինձ համար մեծ մխիթարություն էի համարում։ Այդ էր պատճառը, որ քավոր Պետրոսի երկրորդ նամակը ստանալուց հետո ես ամենևին չէի մտածում օգուտ քաղել նրա օգնությունից և նրա ձեռքով ազատություն գտնել։ Եկավ զատիկը, անցան զատկի տոները, բայց ես ամենևին չգնացի եղևնիների անտառը, Կարմիր բլուրի մոտ։ Նա, որ ինձ մոլորեցրել էր, նա, որ ինձ ցույց էր տվել շար գործի շար ճանապարհները, այժմ աշխատում էր փրկել ինձ։ Բայց ինձ պետք չէ փրկությունը նրա ձեռքից ընդունել։ Ես արդեն բարոյապես ինձ փրկված էի համարում, սկսյալ այն օրից, որ իմ նոր դաստիարակի շնորհիվ մկրտվեցա կրթության նոր ավազանի մեջ։ Ես իմ շղթաների մեջ իմ անձը բախտավոր էի համարում, որ միշտ կարող էի տեսնել նրան, միշտ կարող էի վայելել նրա բարեկամությունը և լսել նրա խմաստալից խրատները։

Ավազակապետի պատմությունը ինձ վրա խիստ տխուր տպավորություն թողեց։ Նա սիրել էր մեկին, նրան նվիրել էր յուր անձը, յուր հոգեկան բոլոր քաղցր զգացմունքները։ Նրա սիրո առարկան այլևս չկար. բնակվում էր շատ հեռու, ոգիների աշխարհում։ Բայց այդ դժբախտ մարդը դեռ շարունակում էր սիրել նրան, դեռ նրան հիշելիս, նրա այրական դեմքը մռայլվում էր տխրության թախիծներում։ Ես նույնպես սիրում էի մեկին, բայց իմ սիրո առարկան դուցե դեռ կենդանի էր, դուցե դեռ մտածում էր իմ վրա։ Այժմ որտե՞ղ էր անհայրանմայր, անտուն, անտեղ և անօգնական որբիկը... Ես շատ անգամ մտաբերում էի նրան և իմ սիրտը լցվում էր անշիջանելի կրակով։ Աչքերիս արտասուքը չէր զորում հանգցնելու այդ կրակը։ Դատապարտյալը մոռանում է ծնողներ, ազգականներ, բարեկամներ, մոռանում է յուր հայրենիքը, բայց սիրած կնոջ հիշատակը մնում է նրանից անբաժան։ Սիրած կնոջ կորուստը ավելի ծանրացնում է նրա շղթաները, ավելի զգալ է տալիս յուր թշվառ դրությունը...

Առժամանակ Համրի բարեկամությունը ինձ մոռանալ տվեց Նենեին, և սիրելի աղջկա հիշատակը խիստ սակավ էր խավարեցնում իմ դժբախտ դրության բոպեները։ Բայց դա երկար չտևեց, ես կրկին անձնատուր եղա այն սովորական հոգեմաշ թախծությանը, որ Նենեից բաժանվելուց հետո մշտապես տանջում էր ինձ։ Մի անգամ Համրը գտավ ինձ այսպիսի տրամադրության մեջ։

— Ի՞նչ է պատահել քեզ հետ,— կարեկցությամբ հարցրեց նա։

Ես նրանից թեև ծածուկ ոչինչ չունեի, բայց իմ կյանքի բոլոր անցքերը նրան պատմելու ժամանակ ոչինչ չէի հիշել Նենեի մասին։ Այժմ ինչպես կարող էի թաքցնել նրանից իմ սիրտը և նրան մաշող ցավերը։ Ես պատմեցի նրան բոլորը, ինչ որ հայտ-

նի է ձեզ Նենեի մասին, թե որպես գտա նրան անտառում, այն րոպեում, երբ մի չարագործ պատրաստվում էր սպանել նրան. որպես ազատեցի նրա կյանքը և բերեցի քավոր Պետրոսի մոտ, թե որպես այդ վերջին չարագործը նույնպես հրամայեց ինձ սպանել նրան, և որպես ես խաբեցի նրան, հայտնելով, թե հրամանը կատարված է, բայց աղջկան թաքցրի իմ հոր խրճիթում,— և վերջապես, որպես իմ վարմունքը ծնեցրեց անմեղ աղջկա սրտում սեր դեպի ինձ. և այնուհետև նա չբաժանվեցավ ինձանից և այն ժամանակ, երբ ես կալանավորվեցա, բանտարկվեցա և դատապարտվեցա մշտական աքսորի։

Կնոջ սերը, որպես երևում էր, շատ զգալի չէր Համրին, նա յուր կյանքում կամ երբեք չէր սիրել, կամ եթե սիրել էր, կրակը վաղուց արդեն հանգել էր նրա սրտում։ Այդ էր պատճառը, որ նա խիստ սառնությամբ լսեց իմ պատմությունը, վերջը նկատելով.

— Այդ պատմության մեջ ես գովում եմ ձեր առաքինությունը, դուք ազատել եք մի թշվառի կյանք։

— Բայց նրան կորցնելը այժմ իմ կյանքը անտանելի է դարձրել։

— Այդ ես հասկանում եմ... այդպիսի հանգամանքներում մարդուն փրկում է մի բան միայն՝ աշխատանքը։ Աշխատանքը մոռանալ է տալիս սրտի կսկիծները, որ առաջ էին եկել սիրոսլաքներից։

Նրա սառն փիլիսոփայությունը այժմ ինձ չէր դրավում։ Ես տվեցի խիստ հուսահատական պատասխան.

— Այժմ մահը, միայն մահը կարող է հանգստացնել ինձ, աշխատանքից ես ձանձրացել եմ, մանավանդ այսպիսի ապարդյուն աշխատանքից։

— Ոչինչ աշխատանք ապարդյուն չէ, երբ մարդկությանը որևիցե օգուտ է բերում։

— Մեր աշխատանքը ի՞նչ օգուտ է բերում։

— Երևի դու մոռացել ես, որ մի անգամ ես քեզ ասացի, որ մեր օգուտը ուրիշի օգտի մեջ է, և նույնը փոխադարձաբար։ Եվ եթե մենք ուղղակի կերպով չենք շահվում մեր աշխատանքից, կշահվին, անտարակույս մեզ նմանները, այսինքն՝ ուրիշ մարդիկ։ Մենք փորում ենք լեռների սիրտը և այնտեղից դուրս ենք բերում պղինձ, երկաթ, ոսկի և արծաթ։ Այդ մետաղներով

բացվում են դպրոցներ, կառուցանում են արհեստանոցներ և այլ բարեգործական հիմնարկություններ։ Նրանց մեջ ուսում են առնում, կրթվում են և լավ մարդիկ են դառնում։

Ես այնքան գրավվեցա այդ վիճաբանությամբ, որ մոռացա Նենեին, մոռացա և նրա սերը, որի առիթով սկսվել էր վիճաբանությունը։ Համրը, յուր սառնասրտության հակառակ, ավելի տաքացած էր։ Նա ուղիղ իմ աչքերի մեջ նայելով, ասաց.

— Դուք (երբ բարկանում էր նա, սկսում էր դուք-ով խոսել) միշտ մոռանում եք մեր անցյալ խոսակցությունները, որոնց մեջ մենք միշտ համաձայնվել ենք միմյանց հետ։ Ես կրկին կդառնամ դեպի ձեր անձնավորությունը, և ձեր անձի օրինակով կբացատրեմ իմ մտքերը։ Ասացեք խնդրեմ, եթե ես այժմ մոռացմամբ իմ քսակը ձեզ մոտ թողնեի, դուք ինչպե՞ս կվարվեիք նրա հետ։

— Ես կվեր առնեի, կպահեի և կրկին ձեզ կվերադարձնեի։

— Իսկ եթե այդ պատահելու լիներ մի քանի տարի առա՞ջ։

— Ձեզ կսպանեի և կխլեի ձեր քսակը։

— Այդ փոփոխությունը ո՞րտեղից ծագեց ձեր մեջ։

— Դուք ինձ սովորեցրիք, որ գողությունը վատ բան է։

— Հիմա տեսնո՞ւմ եք, ես ձեզ սովորեցրի, թե գողությունը վատ բան է, չէ որ այդ իմ օգուտի համար արեցի, որովհետև դրանով ես ապահովացրի իմ քսակի դրությունը։ Չէ՞ որ բոլոր վատ մարդիկ ձեզ նման են. նրանք էլ միևնույն ուղեղը, միևնույն նյարդային կազմվածքն ունեն, որպես դուք։ Եթե մենք կսովորեցնենք նրանց լավ մարդիկ լինել, դրանով օգուտ կբերենք մեզ՝ ինքներիս, որովհետև նրանք կդադարեն մեզ չար գործելուց։ Հիմա հասկանո՞ւմ ես, թե ի՞նչ եղանակով ենք օգտվում մենք մեր դուրս փորած ոսկուց և արծաթից։

— Հասկանում եմ. նրանցով մարդիկ կրթություն են ստանում և դադարում են իրանց նման մարդկանց կողոպտել։

— Միայն կրթությունը չէ, ուրիշ շատ լավ բաներ են կատարվում մեր աշխատանքի արդյունքով։— Եվ նա սկսեց երկար խոսել այդ առարկայի վրա և յուր դատողությունները վերջացրեց հետևյալ ասացվածքով. «Մեկը ամենքի համար, ամենքը մեկի համար»։

— Այժմ հասկացա,— պատասխանեցի ես,— բայց ինչո՞ւ

գու մեր ընկերներին ևս չես սովորեցնում ինձ նման բարի լինել։

Նա դժվարացավ պատասխանել, և որպեսզի շփոթությունից հետո՝

— Այդ թողնենք...— ասաց նա, խոսքը փոխելով,— լսիր, Մուրադ, միայն բարի լինելով չէ, որ մարդը կարող է ուրիշներին օգուտ բերել և ինքը բախտավոր լինել։ Մարդիկ հրեշտակներ չեն, որ միայն բարի լինելով կարողանան լավ ապրել։ Մարդը պետք է գործե, իսկ գործելու համար պետք է մի բան սովորած լինի։ Այդ մարդիկը,— նա ցույց տվեց դատապարտյալներին,— եթե անբարոյականացան, եթե դժբախտացան, գլխավոր պատճառն այն էր, որ ոչինչ հիմնավոր բան սովորած չէին։ Գոնե այժմ սովորեցնեին...

Ը

ՍՊԻՏԱԿ ՏՆԱԿԸ

Դատապարտյալների ֆերմայի վրա, զինվորանոցից և զանազան արքունի շինվածքներից հետո, ավելի աչքի էր զարկում մի սպիտակ տնակ, որը շատ մոտ էր հիվանդանոցին։ Այդ առանձնացած բնակարանը միայն երեք սենյակներ ուներ, փոքրիկ լուսամուտներով և լերդագույն ներկած կտուրով։ Մի կողմում գտնվում էր ծառաների կացարանը, որի մոտ էր խոհանոցը։

Երևում էր, որ վաղուց մարդիկ չէին բնակվել այստեղ։ Բակի փոքրիկ պարտեզը, որ զարդարված էր մրգաբեր ծառերով, մնացել էր անմշակ, հովանոցը քայքայվել էր, փայտյա վանդակապատը շատ տեղ կոտրատված էր, փտած սանդուղքից ցած էին թափվել մի քանի տախտակներ։

Սենյակների ներքին դրությունը շատ նման էր փոստային կայարանի, ուր ուշ գիշերով եկած ճանապարհորդը յուր բոլոր ծանրությունները խառնիխուռն ածած է լինում այս կողմ և այն կողմ, ուշադրություն չդարձնելով նրանց կարգի դնել, որովհետև առավոտյան կրկին պետք է ճանապարհ ընկնի, կրկին պետք է նրանց կարգը խանգարվի։

Այժմյան բնակիչները նույնպես նորեկներ էին, նրանք իջևանել էին այստեղ հենց նույն գիշերը։ Նրանց ծանրությունները նույնպես խառնիխուռն ածած էին այս կողմ և այն կողմ, ճանապարհի փոշին դեռ նստած էր նրանց վրա։ Բայց դրանք գնալու չէին, դրանք պետք է մնային այդ բնակարանի մեջ։

Առավոտ էր, խոնավ, մառախլապատ առավոտներից մեկը։ Փոքրիկ բնակարանում դեռ քնած էին։ Միայն սենյակներից մեկի դուռը կամաց բացվեցավ և շեմքի վրա հայտնվեցավ մի բարձրահասակ օրիորդ։ Նա նայեց յուր շուրջը, հանդարտ քայլերով ցած իջավ սանդուղքներից, անցավ պարտիզի տատասկներով պատած ճեմելիքը, անցավ կիսավեր հովանոցի մոտից և մերձեցավ փայտյա վանդակապատին։ Այստեղից սկսեց նայել դեպի շրջակայքը։ Գիշերով եկած լինելով, նա դեռ ոչինչ չէր տեսել. այժմ առավոտյան լուսով ցանկանում էր լավ նայել այն աշխարհի վրա, ուր գուցե ընդերկար ստիպված կլիներ մնալ։

Առավոտյան թանձր մառախուղը հետզհետե նոսրանում էր, բայց դեռևս աղոտ կերպով նկարվում էին հեռավոր առարկաները։ Օրիորդը նայում էր, խորին անձկանոք նայում էր և, կարծես, զայրանում էր, որ ոչինչ չէր տեսնում։

Նրան կարելի էր ոչ աղախին համարել և ոչ տան աղջիկ։ Նա ոչ աղախնի անվստահ կայտառությունն ուներ և ոչ տան աղջկա նազելի վստահությունը։ Նա ավելի նման էր տանտիկնոջ մի հեռավոր ազգականին, որ զրկված էր ծնողներից, որին թեև սիրում են, փայփայում են, բայց դարձյալ զգում է, որ ինքը որբ է, որ իրան հոգու համար են պահում։ Նրա թուխ դեմքը, սև, կրակոտ աչքերը, հարուստ, մթնագույն գիսակները ամենևին չէին համապատասխանում հեռավոր հյուսիսին։ Նա եկած էր հարավից, ջերմ, արեգակնավետ հարավից, ուր արյունը մշտապես եռ է գալիս, ուր դեմքերը ստանում են մուգ վարդի գույն։ Բայց որքա՞ն լույս և կյանք կար այն մթին աչքերի մեջ, որքա՞ն հրապուրանք այն թախծալի դեմքի վրա։ Նա ներկայացնում էր մի աշխույժ, անսանձ բնավորություն, սքողած տխրության ամպերով, թառամած դառն հուսահատության մեջ։

Նա շարունակում էր նայել։

Վերջապես շողացին արեգակի առաջին ճառագայթները, և

երևան հանեցին շրջակա տեսարանները։ Ահա այնտեղ հալոց-
ների բարձր ծխանոցներից, թուխ ամպերի նման, դուրս էր հո-
սում թանձր մուխը և նսեմացնում էր դեռ նոր լուսավորված
հորիզոնը։ Մարդիկ մրոտած հագուստով, մրոտած դեմքով, սև,
որպես ուրվական, թափառում էին ծխային մթնոլորտի մեջ։
Այդ տեսարանը սարսափ ազդեց օրիորդի վրա։ Հալոցներից ոչ
այնքան հեռու, հանքային քարերի կույտերի մոտ, գետնի վրա
նստած էին նույնպես մռայլոտ դեմքեր։ Դրանք ծանր մուրճե-
րով չարդում էին, մանրում էին քարի մեջ թաքնված մետաղը,
և պատրաստում էին հալելու համար։ Օդը թնդում էր հարյու-
րավոր կոտոնների հարվածներից։ Ոմանք փոքրիկ սայլակներով
մանրած մետաղը քարշ էին տալիս, տանում էին ու ածում ա-
ռանձին կույտերի վրա, որոնք բազմաթիվ բլրակների ձև էին
ստացել։ Այդ բլրակներից մի քանիսը ծխում էին։ Ածուխը և
ծծումբը այրվում էր նրանց մեջ, և ուտում, մաշվում էր հան-
քային ավելորդ մասերը։ Օդը այստեղ խեղդում էր ծծումբի
կծու հոտով։

Այդ կողմում ամեն առարկա սև գույն ուներ, կարծես, ամեն
ինչ սուդ էր զգեցած։ Մետաղի սև կղկղանքով պատած էին
ճանապարհները, սև փոշին ծածկել էր գործարանների կտուր-
ները, սևացած էին և ճնճղուկները, որ բույն էին դրել այն շին-
վածքների ծածկի տակ։

Ամեն ինչ սև էր, ամեն ինչ մրոտած էր։ Միայն կրակն ու
բոցը, որ բորբոքվում էր հալոցների մեջ, ներկայացնում էր
մի սոսկալի հակապատկեր ընդհանուր նսեմության մեջ։ Այդ
դժոխքում մարդիկ այրվում էին, բայց չէին խորովվում։ Հա-
լած մետաղը ծփում էր բոցերի մեջ, որպես հրեղեն լճակ։ Եր-
կաթյա երկայն շերեփներով վեր էին առնում բաց-դեղնագույն
հեղուկը և ածում էին արույրյա կաղապարների մեջ։ Քրտինքը
հորդ վտակներով հոսում էր գործավորների սարսափած դեմ-
քից, բոցը խանձում էր նրանց կիսախարշ երեսները։

Օրիորդը դեմքը շուռ տվեց զարհուրելի տեսարանից։

Մյուս առարկաները չէին հետաքրքրում նրան։ Ահա այն-
տեղ, պաշտոնավոր զինվորի հաստլիկ կինը, փեշերը վեր քա-
շած, բոբիկ ոտներով, ցեխը կոխ տալով վերադառնում էր
մերձակա վտակից, և ուսի վրա դրված լծակի երկու ծայրերից
թիթեղյա սաթլները քարշ տված, ջուր էր բերում։ Այնտեղ պա-

ռավը մրթմրթալով քշում էր դեպի դուշտը յուր մի հատիկ կո-
վը։ Փոքր-ինչ հեռու, մի ստահակ տղա, առանց ենդրավարտի-
քի, միայն շապիկը հագին, նստած էր մերկ ձիու վրա, և
նույնպես մերկ ոտներով նրա կողքերը ծծծելով, բոլոր ուժով
վազեցնում էր յուր նիհար յաբուն, աստված ոչ գիտե, թե դեպի
ուր։ Բայց գլխի մազերը ծածանվում էին, սաստիկ շփվելով
օդի հետ։ Մի կողմում սագերի սպիտակ երամը, իրանց լայն
թաթիկների վրա օրորվելով, և մի առանձին բավականությամբ
կչկչալով, դիմում էր դեպի մերձակա ճահիճը։ Փողոցում գյու-
ղացու մանկահասակ աղջիկը, մի քանի գրոշներ ափի մեջ պինդ
բռնած, վազ էր տալիս դեպի մերձակա դուքանը քառորդ ֆունտ
շաքար գնելու։ Նրան հանդիպեց մի դրագիր դեղին կոճակնե-
րով, ինչ-որ ասաց, աղջիկը հայհոյեց նրան և փախավ։

Ուրիշ ոչինչ չէր տեսնում օրիորդը. միայն այստեղ ու այն-
տեղ երևում էին մռայլոտ շինվածքներ հազիվ նշմարելի լու-
սամուտներով, որոնք այնքան առանձնացած էին, կարծես, վա-
խենում էին մոտենալ միմյանց։ Պահապան զինվորները, շա-
փավոր քայլերով, անցուդարձ էին անում դռների առջև։ Օրիոր-
դի արտասուքով լցված աչքերը հառած էին դեպի այդ կողմը։
Երկար նայում էր նա և, կարծես, աչքերով աշխատում էր ներս
թափանցել այդ մռայլոտ շինվածքների հաստ պատերից։ Մանր,
երկաթապատ դռներից մեկը բացվեցավ և դրսում հայտնվեցավ
մի մոխրագույն խումբ։ Շրջապատված զինվորներով, խումբը
շարժվեցավ դեպի այն կողմը, ուր կանգնած էր սպիտակ տնա-
կը։ Նրանք կրում էին բահեր, բրիչներ և փորելու զանազան
գործիքներ։ Բայց ինչո՞ւ հսկողության ներքո էին տանում այդ
թշվառ բանվորներին։ Օրիորդի սիրտը սկսեց բաբախել։ Նա
պատրաստ էր վազել, գնալ, մերձենալ նրանց և մոտից, շատ
մոտից նայել նրանց վրա։ Բայց նրա ոտները չհնազանդվեցան,
ծնկները դողացին, գլուխը պտտվեցավ, աչքերի առջև մթնեց.
նա թուլացավ, ընկավ պարտիզի վանդակապատի վրա։ Մոխ-
րագույն խումբը հեռվից անցավ։ Ուշաթափ օրիորդը ոչինչ չտե-

սավ, միայն նրա ականջներին, որպես երազի մեջ, զարկում էին ծանր շղթաների աննկարագրելի հնչյունները...

Խորին ապշության մեջ նա ուշի եկավ։ Անրջային տեսիլքը անցել էր։ Նրա առջև նկարվեցան միևնույն տխուր, արտաբեկ տեսարանները։ Նա դանդաղ, դողդոջուն քայլերով սկսեց դիմել դեպի այն սենյակը, որտեղից դուրս էր եկել։ Պարտիզի միջով անցնելու ժամանակ նրա շրջազգեստի ներքին եզրը բռնվեցավ վարդենու փշից և պատռվեցավ։ Նա այն աստիճան հուզված էր, որ ոչինչ չզգաց։ Սենյակի դռան մոտ հանդիպեց նրան սպասավորը, հարցնելով.

— Պարոնները վե՞ր են կացել։

— Չգիտեմ։

— Սամովարը եփ է գալիս։

— Բերեցեք։

Նա մտավ սենյակը։

Սպասավորը մի քանի րոպեից հետո սամովարը ներս բերեց, դրեց սեղանի վրա և լուռ դուրս գնաց։ Օրիորդի տրամադրությունը, կարծես, նրա վրա ևս ճնշում էր գործում։

Նա բաց արեց հատակի վրա ընկած սնդուկներից մեկը, մյուսը, նայեց չամադանի մեջ, նայեց ճանապարհորդական զամբյուղի մեջ, որոնում էր, թե որտեղ է դրած թեյը։ Շաքարն էլ անհետացել էր նրա աչքերից։ Հիշողությունը դավաճանում էր նրան։ Վերջապես գտավ միևնույն փոքրիկ սնդուկի մեջ, ուր տասն անգամ նայել էր։ Սկսեց թեյ պատրաստել։ Գործը փախչում էր նրանից, ձեռքերը չէին խոնարհվում, ջուրը վիթվում էր, բաժակը ցած էր ընկնում, աղմուկ էր բարձրացնում, հազիվհազ կարողացավ նա տաք ջրով լցրած թեյամանը սամովարի վրա դնել։ Գլուխը դարձյալ պտտվում էր։ Նա հեռացավ, նստեց լուսամուտի պատուհանում, և ձեռքը նեցուկ տալով գլխին, սկսեց անխորհուրդ կերպով նայել դեպի պարտեզը։ Արտասուքը հեղեղի նման թափվում էր նրա խոշոր աչքերից և զովացնում էր բորբոքված երեսը և ավելի ևս բորբոքված սիրտը...

Կից սենյակում արդեն զարթնել էին։ Մանկահասակ տիկինը վեր էր կացել, իսկ նրա երիտասարդ ամուսինը դեռ պառկած էր մահճակալի վրա։

— Դե՛, վեր կաց,— շտապեցնում էր նրան տիկինը,— վեր կաց, լվացվիր, հագնվիր, դու այս առավոտ պետք է ներկայանաս քո մեծավորին։

— Դա մի այնքան շտապելու գործ չէ,— պատասխանեց երիտասարդը, ավելի ամուր կերպով փաթաթվելով ամառվա վերմակի մեջ։— Էգուց էլ կարող եմ ներկայանալ։

— Այստեղ մեծավորները, երևի, խիստ պահանջողներ են,— նկատեց տիկինը։

— Իսկ ես խիստ պահանջը հեշտությամբ չեմ վճարում,— ասաց ամուսինը։

Տիկինը, կարծես, ամուսնի համառությունը պատժելու համար, վառեց մի բարակ պապիրոս, սկսեց ծխել։ Ամուսինը, այդ նկատելով, սկսեց աղաչել նրան.

— Թո՛ղ տուր, ի սեր աստուծո, քանի՛ անգամ ասել եմ քեզ, որ թեյից առաջ չծխես։ Դու ամբողջ գիշերը անհանգիստ էիր, դարձյալ հազում էիր։

Տիկինը ուշադրություն չդարձրեց և, ամուսնուն ավելի ջիգրնացնելու համար, մոտեցավ նրա մահճակալին, ընկավ նրա կուրծքի վրա, ասելով.

— Ես քո բժշկությանը չե՞մ հավատում, չե՞մ հավատում։

Այդ միջոցին նա սվելի սաստկությամբ ներս քաշեց պապիրոսի ծուխը և ապա յուր գունատ շրթունքների միջից փչեց երիտասարդի խիստ մազերի վրա, որոնք կորան մուխի մեջ։

— Այդ ի՞նչ երեխայություն է, —ասաց երիտասարդը,— և գլուխը վեր բարձրացնելով, յուր մանկահասակ կնոջ անմեղ չարությունը վարձատրեց ջերմ համբույրներով։

Դրանք այն ամուսիններից էին, որ մինչև մահ, մինչև խորին ծերություն ապրում են իրանց ամուսնության մեղրամիսի մեջ։ Արդեն հինգ տարի է, որ միասին էին ապրում, իսկ այսօր,

կարծես, առագաստի առաջին գիշերվա առավոտը լիներ նրանց համար։

Երիտասարդը բժիշկ էր։ Նա ընտրել էր ծառայություն կայսրության այդ հեռավոր անկյունում ոչ թե այն նպատակով, որ ծառայությունը այսպիսի խուլ տեղերում առավելությամբ էր վարձատրվում, ոչ, այլ նա ավելի բարոյական վարձատրություն էր սպասում այստեղ։ Նրան մի առանձին բավականություն էր պատճառում բժշկել դատապարտյալներին՝ այդ հորմոր, բարեկամների խնամատարությունից զրկված թշվառներին։

Նրա մանկահասակ կինը նույն մարդասիրական շգացմունքն ուներ։ Նա այն բարեսիրտ և խելացի կնիկներից էր, որոնց նմանները խիստ հազվագյուտ են լինում ամուսնական կյանքում, որոնք չեն ձգտում հաճոյանալ տղամարդին միմիայն կանացիությամբ, որոնք չեն բավականանում օգնել նրան, բաժանել նրա հոգսերը, միմիայն խնայող տնտես և լավ տանտիկին լինելով, այլ որոնք պաշտում են տղամարդի իդեալները, նպաստում են նրանց իրագործվելուն, վառ և մշտաբորբոք գրության մեջ են պահում նրա հոգին յուր բարձր, մարդասիրական գաղափարներով։ Այսպիսի լծորդության մեջ կինը գտնում է այն գերագույն ոգին, որից միշտ ներշնչված է լինում տղամարդը, այսպիսի լծորդության մեջ տղամարդի եռանդը երբեք չէ մեռնում։

Դեռևս օրիորդ էր նա, դեռևս նոր էր ծանոթացել յուր ապագա ամուսնացուի հետ, սկսեց բժշկական գրքեր կարդալ, հաճախել հիվանդանոցները և ներկա գտնվել անդամահատական գործողությունների։ Պատերազմի ժամանակ մտավ նա «գթության քույրերի» հասարակության մեջ, և գնդակների ու ռումբերի տարափի ներքո՝ փաթաթում էր վիրավոր զինվորների վերքերը։ Այստեղ նա նորից հանդիպեց յուր ամուսնացուին, այստեղ սիրեց նրան և սիրվեցավ։

Ոչ եկեղեցական և ոչ քաղաքական ամուսնությամբ կապված չէին նրանք։ Նրանց կապում էր մտքերի, ձգտումների և գաղափարների համերաշխությունը։ Բնությունը նույնպես զլացավ օրհնել նրանց ամուսնությունը այն շաղկապով, որ կոչվում է բնական կապ.— զավակներ չունեցան նրանք։ Զավակը սիրո ավելի հաստատ գրավականն է ամուսինների մեջ, մանավանդ այն դեպքում, երբ օրենքը չէ կապում նրանց։

Հետաքրքիր պատահարները պարգևեցին նրանց մի զավակ, թեև իրենց արյունից չէր։ Դա այն օրիորդն էր, որ մյուս սենյակում նստած լաց էր լինում։ Օրիորդը պատկանում էր այն ցեղին, որ տուն, տեղ, հայրենիք չունի, որի հայրենիքը ամբողջ աշխարհն է, որը թափառում է ամեն տեղ։ Նա գնչու (ցիգան) էր. նա բնության որդի էր։ Որպիսի՞ ջերմ սիրով տիկինը ընդունեց յուր մոտ այդ վայրենի այծյամին, որպիսի՞ եռանդոտ հոգատարությամբ սկսեց նա կրթել նրան, ուղղել նրա վատ սովորությունները։ Ամեն անգամ, երբ մի նոր փոփոխություն էր նկատում նրա մեջ դեպի լավը, դեպի ազնիվը և մարդավայելը, առաքինի կնոջ սիրտը լցվում էր անսահման բերկրությամբ։ Նա իսկույն վազում էր ամուսնու մոտ և պատմում էր յուր որդեգրուհու նոր հառաջադիմությունը։ «Նրա մեջ թաքնված ձիրքեր և գեղեցիկ հատկություններ շատ կան», ասում էր ամուսինը, ոչ սակավ ուրախանալով, և տիկնոջ հույսերը ավելի հավանականություն էին ստանում։ Շատ օրհր, ժամերով նստած, պարապում էր նրա հետ, սովորեցնում էր. գրել, կարդալ և զանազան ձեռագործներ։ Շատ անգամ ինքը պառկած էր լինում դիվանի վրա, նրան նստեցնում էր յուր մոտ, բարձր ձայնով կարդալ էր տալիս և մեծ բավականությամբ լսում էր։ Վերջին ժամանակներում սկսեց պարապել նրա հետ մուզիկայով և նկարչությամբ. վերջինի մեջ թեև մի առանձին ընդունակություն չէր ցույց տալիս, բայց երաժշտության մեջ չափազանց ընդունակ գտնվեցավ։ Նրա բնականից գեղեցիկ ձայնը, մշակվելով, զարգանալով, սքանչացնում էր լսողներին։

Տիկնոջ գաստիարակության ոգին արտափայլվեցավ նրա աշխատասեր աշակերտուհու ոչ միայն մտավոր և հոգեկան զարգացման վրա, այլև նրա բնավորության և բարոյական հատկությունների վրա։ Օրիորդը նույնպես սիրում էր յուր բարեկամների հետ այցելել հիվանդներին. մտնել աղքատ շինականների խրճիթը և յուր հացի վերջին պատառը բաժանել կարոտյալների հետ։

Նա մնաց անբաժան յուր խնամակալներից և այն բոլոր ժամանակներում, երբ նրանք պաշտոնի առիթով ստիպված էին մի քաղաքից մյուս քաղաք, մի գավառից մյուս գավառ անցնել։ Իսկ երբ նրանք վճռեցին Սիբիր տեղափոխվել, այդ միջոցին նա ավելի ուրախ էր, ավելի բախտավոր էր համարում իրան։ Ի՞նչ էր, որ կապում էր խեղճ աղջկա սիրտը հեռավոր հյուսիսի հետ. ի՞նչ էր, որ քաշում էր նրան այդ կողմը։ Այդ գաղտնիքը հայտնի էր տիկնոջը, հայտնի էր և նրա ամուսնուն։ Ամեն անգամ, երբ ասում էին նրան. «Գնանք Սիբիր, կտեսնենք նրան»,— խեղճ աղջիկը հրճվանքից սքանչանում էր, և ուրախության արտասուքը աչքերում, գրկում էր թե տիկնոջը և թե նրա ամուսնուն, համբուրում էր, անվերջ կերպով համբուրում էր, և թափում էր նրանց առջև յուր հոգու բոլոր շնորհակալությունները։ Թե տիկինը և թե նրա ամուսինը՝ երկուսն էլ սիրում էին նրան, սիրում էին հարազատ զավակի նման։ Տիկինը սովորություն ուներ ասել. «Դա առաջ մի թանկագին, բայց անտաշ քար էր. ես ուրախ եմ, որ այդ դրության մեջ գտա դրան, որովհետև իմ ցանկացած թրաշը (դրան) և փայլը կարողացա տալ»։

Իսկ այն առավոտ ոչ սակավ վշտացավ նա, երբ դուրս գալով մյուս սենյակը, գտավ օրիորդին պատուհանում նստած և լաց լինելիս։ Նա մոտեցավ և, փայփայելով նրա գեղեցիկ գլուխը, հարցրեց.

— Ի՞նչ է պատահել քեզ հետ, սիրելիս։

— Ոչինչ...— պատասխանեց օրիորդը, վեր կացավ տեղից և սկսեց սրբել աչքերի արտասուքը։

— Դու քեզ վա՞տ ես զգում։

— Ոչ... գլուխս փոքր-ինչ ցավում է...

Տիկինը գրկեց նրան ասելով.

— Հասկանում եմ... խե՜ղճ աղջիկ, դու շա՜տ տանջվեցար, երկա՜ր համբերեցիր... մի փոքր ևս համբերիր, այնուհետև վերջ կդրվի քո արտասուքին...

ՀԻՎԱՆԴԱՆՈՑ

Ավելի քան մի ամբողջ տարի անցել էր այն օրից, որ ես ծանոթացա Համրի հետ։ Այդ ժամանակամիջոցը պետք է իմ կյանքի ամենագեղեցիկ և ամենաբախտավոր մասը համարել։ Ես նրանից շատ բան սովորեցա. նրա ազդեցության ներքո ես բոլորովին ուրիշ մարդ դարձա։

Ես թեև բարոյապես և մտավորապես զարգանում էի, բայց իմ մարմնական զորությունները օրըստօրե թուլանում էին։ Տաժանական աշխատանքը հանքերի մեջ՝ խսպառ մաշել էր ինձ։ Ինձ տարան հիվանդանոց։

Հիվանդանոցը աքսորականի համար մի դուռն է, որտեղից բացվում է ճանապարհ դեպի գերեզման։ Եվ ես ուրախ կլինեի, եթե ինձ կվիճակվեր այն ճանապարհով գնալ։ Կյանքը ձանձրացրել էր ինձ։

Կյանքը ձանձրալի է դառնում ավելի այն ժամանակ, երբ հասկանում ես նրա նպատակը և չես կարողանում ցանկացածդ կատարել։ Մինչև այնօր ես ոգեւ էի, ոչինչ չէի հասկանում, այդ պատճառով էլ հանգիստ էի։ Բայց երբ շատ բան սովորեցա, սկսեցի ավելի տանջվել։ Եթե անասուններին բնու-

թյունը շատ խելք տված լիներ, եթե նրանք դպրոց մտնեին, ավելի պահանջող կլինեին և երբեք չէին հոժարվի կատարել այն բարբարոսական ծառայությունները, որ մարդիկ նրանց անել են տալիս։

Հիվանդանոցը դատապարտյալի ամենասիրելի օթևանն է։ Այստեղ նա ավելի հանգիստ է, այստեղ նրա հետ գոնե մարդի պես են վարվում։ Այստեղ նրան մշտապես չեն մտրակում, թեև երբեմն չարացած ֆելդշերը ծեծում է նրան, թե ինչո՞ւ չէր կատարել յուր այս և այն պատվերը, ինչո՞ւ դեղը յուր ժամանակին գործ չէր ածել, այսուամենայնիվ, կրկնում եմ, հիվանդանոցը դատապարտյալի հանգստության տեղն է, և այդ է պատճառը, որ նա փափագում է, որ յուր հիվանդությունը երկարատև լինի, և ավելի բախտավոր է համարում իրան, եթե հիվանդության մահիճը բոլորովին գերեզմանի կփոխվի։

Բայց մեռնելը հեշտ բան չէ դատապարտյալի համար։ Օրենքը մարդասիրական գեղեցիկ տկզբունքներ ունի։ Կախաղանի դատապարտված թշվառականն անգամ, երբ պատժի նշանակած օրը հիվանդանում է, այդ դեպքում պատիժը հետաձգում են, նրան առողջացնում են, հետո են կախաղան բարձրացնում։ Աքսորականը նույնպես մի հայտնի ժամանակամիջոց ունի տաժանական աշխատանքների մեջ ճգնելու, ապաշխարելու և յուր մեղքերը քավելու։ Այդ ժամանակամիջոցը պետք է լրացնե նա։ Եվ եթե պատահում է նրան հիվանդանալ, աշխատում են առողջացնել, որ յուր ապաշխարանքը վերջացնե։

Ես տարվեցա հիվանդանոց։ Որքա՞ն ժամանակ մնացի այնտեղ, ի՞նչ էր իմ հիվանդությունը, չեմ հիշում, այսքան միայն չեմ մոռացել, որ ինձ առանձնացրել էին մյուս հիվանդներից և գտնվում էի տիֆով հիվանդների բաժնում։ Առաջին անգամ, երբ աչքս բաց արի, երբ փոքր-ինչ ուշի եկա, ինձ մոտ գտա հիվանդանոցի ծերունի սպասավորներից մեկին, որը կանգնած, ինքն իրան մրթմրթում էր.

— Ինչպես ամուսինն է, այնպես էլ տիկինն է, ինչպես տիկինն է, այնպես էլ աղախինն է։ Աստված է վկա, լա՜վ մարդիկ են, այսպիսի մարդիկ մինչև այսօր չէ տեսել մեր հիվանդանոցը։

Արդյոք ո՞ւմն էին վերաբերում այդ խոսքերը,— ես ոչ հետաքրքրվեցա և ոչ էլ հասկանալ կարողացա, իսկ նա դեռ շարունակում էր մրթմրթալ։

— Ի՞նչ բարի աղջիկ է, որքա՜ն խնամքով նայում է հիվանդներին, կարծես, յուր եղբայրները և հորեղբայրները լինեն։

— Ի՞նչ աղջիկ, —մեքենայաբար հարցրի ես։

— Այն աղջիկը, որ հիմա այստեղ էր. չտեսա՞ր,— զարմանալով հարցրեց նա։— Այն օրից, որ դու պառկած ես, ճակատիդ թրջած քաթան ու սառույց էր դնում։ Ինչպե՞ս չտեսար։

Այդ միջոցին մի օրիորդ դանդաղ քայլերով անցավ կորիդորից և անհետացավ մթության մեջ։

—Ահա այն աղջիկը,— ասաց ծերունին։— Ոմանք ասում են՝ մեր նոր բժշկապետի աղախինն է, ոմանք ասում են՝ նրա կնոջ ազգականն է։ Ով որ էլ լինի, աստված է վկա, լավ աղջիկ է։ Իսկ բժշկապե՜տը, կատարյալ հրեշտակ է, մեղք է նրան մարդ ասել։ Կմտնե հիվանդանոցը, կնստե ամեն մի հիվանդի մոտ, կխոսե, կհարցնե, հանաքներ կանե, սիրտ կտա, կմխիթարե։ Հետո կվերկենա, ամեն բանի վրա կնայե, կմտնե խոհանոց, կմտնե և այնտեղ, ուր մենք զզվանքով ենք մտնում։ Իսկ տիկինը, կատարյալ հոգի է. օր չի լինի, որ հիվանդների համար թեյ, շաքար, սպիտակ պաքսիմատ և զանազան քաղցրավենիք չբերե։ Կնայե նրանց անկողիններին, կնայե սպիտակեղեններին, և վա՜յ այն սպասավորներին, եթե մի փոքր անմաքրություն տեսնե։ Բայց առաջվա բժիշկները, ու նրանց տիկինները, աստվա՜ծ ազատե, այսպես չէին. շատ սակավ անգամ էր պատահում, որ հիվանդանոցը ոտք կոխեին։ Պատահում էր, գնում ես պարոն բժշկապետի մոտ, ասում ես. «Պարոն բժշկա-

պետ, խեղճը մեռնելու վրա է»... կամ կոպիտ կերպով կպատասխաներ, թե ժամանակ չունի, կամ եթե չուզեր վշտացնել քեզ, ծիծաղելով կասեր. «թող հանգստանա...»։

Ներունի սպասավորի շատախոսությունը վերջ չուներ։ Ես ձանձրացա լսել նրան, թեև նրա խոսքերը զուրկ չէին չափազանց ջերմ և բարի զգացմունքներից։ Բնության մի առանձին խաղը պետք է համարել, որ երբեմն այսպիսի կոշտ, կոպիտ, անկիրթ ռամիկների մեջ դնում է քնքուշ սիրտ։ Նա հին զինվոր էր։ Դրանք են թշվառ հիվանդների մխիթարիչները, դրանք են ազատում նրանց սովից և ծարավից. դրանք են փակում նրանց աչքերը մահվան վերջին րոպեներում։ Պատահել են շատ դեպքեր, որ հիվանդը բոլորովին մոռացվել է և մեռել է ոչ թե հիվանդությունից, այլ քաղցից և ծարավից։

Մի շաբաթ անցել էր վերոհիշյալ խոսակցությունից։ Իմ առողջությունը օրըստօրե դեպի լավն էր գնում, ուշք ու միտքս համարյա վերադարձել էր, աչքերս այժմ համեմատաբար ավելի պարզ էին տեսնում, թեև դեռ սաստիկ թույլ էի զգում ինձ։ Մի օր նույն օրիորդը ծերունի սպասավորի հետ մտավ ինձ մոտ։ Նա անցավ, վեր առեց իմ հիվանդության օրագրության թերթը, ուշադրությամբ կարդաց, որ տեսնի՝ ինչ փոփոխություն է արել իմ դրությունը։ Քանի օր էր, որ նա ինձ մոտ չէր եղել։ Ես նայում էի նրա վրա, զննում էի հասակը, գեմքը, աչքերը, ձայնը, և մի զարմանալի նմանություն էի գտնում... Կարծես, հասկանալով այդ, նա երեսը շուռ տվեց, սկսեց խոսել սպասավորի հետ։ Որքան էլ նսեմացած լիներ իմ տեսությունը, դարձյալ ես նրա երեսի վրա նկատեցի մի նշան, որ ինձ շատ ծանոթ էր։ Դա մի խալ էր, ուղիղ այն տեղում, ուր երկու հոնքերը ազատանում գալով, միանում էին միմյանց հետ։ Դա բնության մի առանձին հրաշալիքն էր, որ փոքր հարվով է գտնվում կանանց դեմքի վրա։ Դա այն միջնակետն էր, որ կենտրոնացնում է յուր մեջ գեմքի բոլոր գեղեցկությունը։ Նենեն միայն ուներ տարբերի այդ հարուստ զարդը։

Նա կրկին երեսը դարձրեց դեպի ինձ, նայեց իմ վրա և, մի քանի պատվերներ տալով սպասավորին, պատրաստվում էր հեռանալ։ Այո՛, նա էր, իմ սիրելի Նենեն էր։ Իմ մաշված կուրծքից դուրս պրծավ մի խուլ հառաչանք, ես խելագարի նման նետվեցա և փորձ փորձեցի գրկել նրան։ Ներունի սպասավորը բռնեց ինձ։ Նա իսկույն հեռացավ, ասելով.

— Այդ հիվանդը յուր խելքի առողջ դրության մեջ չէ...

Ես մնացի խորին ապշության մեջ։ Ի՞նչ էր այդ, երազ էր, ցնորք էր, թե խանգարված երևակայության պատրանք։ Ի՞նչ էր այդ։ Նենեի գեղեցիկ դեմքն էր, նրա վառվռուն աչքերն էին, նրա նուրբ, բարձր հասակն էր, նրա արծաթի հնչյուններով ձայնն էր։ Բայց մի՞թե կրակոտ, պարզամիտ, աներկյուղ Նենեն կարող էր իրան այնպես զգույշ և սառնասիրտ պահել։ Որտեղի՞ց հայտնվեցավ նա։ Եթե նա լիներ, չէր կարող զսպել իրան, անպատճառ կնետվեր, կգրկեր ինձ և կասեր. «Ահա ես գտա քեզ, ես այստեղ կմնամ, էլ քեզանից չեմ բաժանվի»։ Նա այսպես կվարվեր։ Այսպես վարվեցավ նա, երբ մի անգամ մտավ ինձ մոտ բանտը։ Այսպես վարվեցավ նա և այն օրը, երբ ինձ վարում էին դեպի աքսոր։ Նա չէր ուզում բաժանվել ինձանից. նրան բռնությամբ բաժանեցին...

Ահա այդ մտածությունները պաշարեցին ինձ, գեղեցիկ տեսիլքը անցնելուց հետո։

Բայց միթե չէ՞ր կարող պատահել, որ Նենեն այնքան տարվա մեջ փոխված լիներ։ Բավական տարիներ էին անցել այն օրից, որ անջատված էինք միմյանցից։ Միթե չէ՞ր կարող պատահել, որ այն, թեև կիսավայրենի, բայց աշխույժ և ձիրքերով հարուստ բնավորությունը, մի առաքինի հոգու ազդեցության ներքո, մեղմանար, ազնվանար և բարի կրթություն ստանար։ Ես նույնպես մի վայրագ եղեռնագործ էի։ Բայց ինչպե՞ս փոխվեցա։ Համբը ինձ բոլորովին այլ մարդ դարձրեց։ Միթե միևնույնը չէ՞ր կարող պատահել և Նենեի հետ։ Ներունի սպասավորի ասելով, նա գտնվում էր բժշկապետի ընտանիքի մեջ։

Գուցե այդ ընտանիքը ազդել է նրա վրա, գուցե հենց նրանց հետ էր եկել, եթե ոչ, ո՞վ կբերեր նրան Սիբիր։

Վերջին ենթադրությունը ինձ ավելի հավանական էր թվում։ Բայց ես դեռ չէի տեսել այդ բժշկապետին և ոչ նրա կնոջը, թեև շատ անգամ այցելել էին ինձ մոտ։ Ես այդ միջոցներում հիշողությունս կորցրած եմ եղել։

Խաչագողի արհեստը թողել էր իմ մեջ մի առանձին սրամտություն, այն է՝ շուտով ըմբռնել ամենանուրբ ակնարկությունները և իսկույն հարմարվել հանգամանքների հետ։ Ես հիշեցի այն խորհրդավոր խոսքերը, որ նա հեռանալու ժամանակ ասաց. «Այդ հիվանդը յուր խելքի առողջ դրության մեջ չէ...»։ Այդ խոսքերով կամեցավ ծածկել նա, որ ես ճանաչեցի նրան, որ իմ և նրա մեջ եղել են հին հարաբերություններ։ Այդ խոսքերով կամեցավ արագացնել իմ հոգու սաստիկ հուզմունքը, որը համարեց նա՝ իբր իմ ուղեղի անառողջ դրության արտահայտություն։

Ես տարակույս չունեի, որ նա դարձյալ կայցելի ինձ, և մի քանի օր շարունակ սպասում էի նրան։ Մի անգամ նախասենյակում լսում եմ հետևյալ խոսակցությունը.

— Այժմ ի՞նչ դրության մեջ է խելագարը։

— Բավական հանգիստ է.

— Խե՜ղճ տղա... նա դեռ շատ ջահիլ է...

— Եվ պատվական մարդ է։

— Երկյուղ չկա՞ նրա մոտ մտնելու։

— Զգուշությունը վատ բան չէ։

— Ուրեմն կապեցեք նրան։

Մերունի սպասավորը ներս մտավ, ինձ կաշկանդեց։ Քանի րոպեից հետո ներս մտավ և նույն օրիորդը։ Այդ Նենեն էր, իսկ և իսկ Նենեն։

Այժմ ես իմ կատարյալ դերի մեջն էի, ոչ իբրև կեղծ խելագար, այլ իսկապես ինձ տիրեց մի տեսակ խելագարություն։ Ես մոռացա բոլոր պայմանները, որով նա սկզբից նախազգուշացրել էր ինձ։ Ես ամեն բան մոռացա և միայն տեսնում եմ իմ առջև սիրելի աղջկան, որին նվիրել էի իմ ամենաջերմ զգացմունքները, տեսնում էի, և կատաղությունը տիրում էր ինձ, ինչո՞ւ ես չէի կարող գրկել նրան, ինչո՞ւ չէի կարող ասել. «Ահա մենք դարձյալ գտանք միմյանց, ապրե՜նք միասին և կյանք վայելենք...»։ Եթե առաջվա ուժս կորցրած չլինեի, ես անպատճառ կկտրատեի այն շղթաները, որոնցով կապված էին իմ ձեռքերն ու ոտները, և նրան կսեղմեի իմ կուրծքին, ասելով. «Մենք այլևս չենք բաժանվի միմյանցից...»։ Բայց ես միայն զոռում էի, գոչում էի, աղաչում էի արձակել ինձ, սպառնալիքներ էի կարդում, այս կողմ ու այն կողմ էի նետվում, խնդրում էի Նենեից, որ գոնե ինքը մոտենա ինձ։ Նա քաշվեցավ դեպի դուռը, ասելով.

— Խղճալիի դրությունը ամենևին չէ փոխվել...

— Նա միայն ձեզ տեսնելու ժամանակ այսպես անհանգիստ է լինում...— նկատեց ծերունի սպասավորը։

— Այդ իրավ է...— պատասխանեց օրիորդը առանց շփոթվելու։— Խելագարները զանազան տեսակ ցնորքներ ունեն. դա երևի, իմ մեջ գտնում է նմանություն մի որևիցե կնոջ, որի հետ կապեր է ունեցել։

— Ճշմարիտ է, խելագարները զանազան տեսակ ցնորքներ ունեն,— համաձայնվեցավ ծերունի սպասավորը։— Մենք ունենք մեկը, որը ամեն անգամ ինձ տեսնելիս, հարձակվում է իմ վրա, որ կտրատե ինձ։ Մյուս սպասավորները նրա մոտ մտնելու ժամանակ հանգիստ է։ Նա միշտ երևակայում է մի ինչ-որ ընկերին, որ նրան մատնել է, և իմ մեջ նրա նմանությունն է գտնում։

Օրիորդը կռացավ և հազիվ լսելի ձայնով ասաց ծերունու ականջին.

— Տեսեք, եթե ես երեսս ծածկեմ և մոտենամ նրան, նա այլևս ոչինչ չի անի։

Ես, իրավ, որ, այժմ հանգիստ էի, հասկանում էի նրա դիտավորությունը, հասկանում էի, որ անխոհեմ վարմունքով մատնում էի նրան։ Նա երեսի քողը ցած ձգեց և կամաց մոտեցավ փոքրիկ սեղանին, որ դրած էր իմ գլխի մոտ։ Նրա վրա մի ամանի մեջ ջուր էր դրած և մի կտոր հաց։ Նա վեր առեց ջրի ամանը, հոտոտեց և, դառնալով դեպի սպասավորը, ասաց.

— Այդ ջուրը բոլորովին թարմ չէ, պետք է փոխել։

— Կփոխեմ, օրիորդ,— պատասխանեց ծերունին։

— Այս բոպեիս փոխեցեք։

Ծերունին վեր առեց ամանը և հեռացավ։

Նա շրթունքը մոտեցրեց իմ շրթունքներին և հազիվ լսելի ձայնով ասաց.

— Կարդա այդ տոմսակը և սպասիր ինձ...

Նա դրեց իմ բարձի տակին մի թղթի կտոր։ Կորիդորից լսելի եղավ ծերունի սպասավորի ծանր քայլերի ձայնը։ Նեննն հեռացավ ինձանից և մոտեցավ դռանը։ Ծերունին բերեց ջուրը, դրեց յուր տեղում։

Նա կրկին անգամ նայեց իմ երեսին և հեռացավ։ Ա՜խ, ո՞րքան սրտաշարժ խոսքեր կային այդ լուռ նայվածքի մեջ... Դրսից լսելի եղավ նրա պատվերը սպասավորին.

— Ձիմա վազող եք ուղարկել նրան, միայն դռները փակած պահեցեք։

Ծերունին ներս մտավ, բաց արեց իմ ձեռքերն ու ոտները, և դուրս գնաց, յուր ետևից դուռը կողպելով։ Ես իսկույն վեր առի բարձի տակում թողած տոմսակը և սկսեցի կարդալ։ Նրա բովանդակությունը խիստ կարճ էր, երկու տող միայն, բայց այդ երկու տողը պարունակում էր յուր մեջ ինձ համար անսահման բախտավորություն։

«Մուրադ, կյուրակի գիշերը, երկու ժամին, սպասիր ինձ, ես քեզ մոտ կլինեմ։ Նեննն»։

Հարյուր անգամ կարդացի այդ երկու տողը, հարյուր անգամ շրթունքիս վրա սեղմեցի, բայց դարձյալ չէի կշտանում։ Նրանից, այդ անշունչ թղթի կտորից, փափագում էի առնել սրտիս կարոտը։ Նրա մատներն էին գրել, նրա սիրտն էր դրած նրա մեջ։ Բայց ո՞վ սովորեցրեց նրան գրելը...

Հիվանդանոցի այն մասը, ուր այժմ զետեղված էի ես, բաժանված էր մյուս մասերից, այստեղ պահվում էին միայն խելագարները և վարակիչ ախտերով հիվանդները։

Նեննն այլևս չհայտնվեցավ։ Մինչև կյուրակի դեռ չորս օր կար։ Այդ չորս օրը ավելի երկարաձիգ էր թվում ինձ, քան թե չորս տարի։ Բայց աքսորականը սովորում է սպասել։ Ես խորին անձկանոք սպասում էի։

Բժշկապետը նույնպես չէր հայտնվում, երևի նա ինձ բոլորովին առողջացած էր համարում։ Միայն երբեմն մտնում էր ծերունի սպասավորը և յուր շատախոսություններով զբաղեցնում էր ինձ։ Այդ բարեսիրտ ծերունին այնքան երկար ծառայել էր հիվանդանոցում, որ համարյա կես-բժիշկ էր դարձել։ Նա ծաղրում էր ֆելդշերների կատարած հիմարությունները, ծաղրում էր դեղարարի տգիտությունը, թե ինչպես նա շատ անգամ խառնում է դեղերը և թույնը հասարակ քինայի փոխարեն է տալիս։ Պատմում էր զանազան դեպքեր, որ առաջ էին եկել՝ կամ դեղերը խառնվելուց, կամ նրանց չափն ու կշիռը չհասկանալուց։ Ուրախանում էր, որ բժշկապետը առաջարկել է փոխել այդ բոլոր «անպիտաններին» և դիտավորություն ունի նոր կարգեր մտցնել հիվանդանոցի մեջ։ Նա հիացած էր նոր բժշկապետով և միշտ կրկնում էր միևնույն խոսքերը նրա տիկնոջ և մանկահասակ օրիորդի մասին։

Վերջապես, եկավ կյուրակին։ Ես սարսափելով մտածում էի, թե ինչպե՞ս պետք է անցկացնեմ այդ օրը, թե ինչպե՞ս պետք է սպասեմ մինչև գիշերվա ժամի երկուսը։ Իսկ այնօր, որպես կարծում էի, ինձ համար այնքան ծանր չանցավ։ Համրը թույլավորություն էր խնդրել ինձ տեսնելու, եկավ և ժամերով մնաց

ինձ մոտ։ Թեև այժմ նրա փիլիսոփայությունները շատ հետաքրքրական չէին ինձ համար, բայց այնուամենայնիվ, նրա այցելությունը բավական մխիթարեց ինձ։

Համրը ինձ մոտ եղած միջոցին ներս մտավ բժշկապետը։ Նրան ես ճանաչեցի, թեև այժմ փոքրիկ մորուք ուներ։ Զարմանալի բան է կյանքի մեջ դեպքերի հանդիպումը։ Այդ երիտասարդին ես պատահել էի իմ կյանքում մի քանի անգամ։ Երբ ես կալանավորվեցա, երբ ինձ տարան քննիչի մոտ հարցուփորձ անելու, այդ երիտասարդը, իբրև քաղաքային բժիշկ, այնտեղ ներկա էր։ Երբ դատարանում քննում էին իմ գործը, և ես մանրամասնաբար պատմում էի դատավորներին իմ կյանքի պատմությունը, որպեսզի նրանց կարեկցությունը և բարոյական համոզմունքը շարժեմ իմ անմեղության վրա, այդ երիտասարդը դարձյալ այնտեղ էր։ Երբ ինձ աքսորի դատապարտեցին, և սարսափելի գանահարությունից հետո գիշատված մարմնով ընկած էի բերդի հիվանդանոցում, այդ երիտասարդն էր ինձ բժշկում։ Նա գիտեր իմ կյանքի բոլոր պատմությունը, նա հետաքրքրված էր այդ դժբախտ պատմությունով։ Նա գիտեր, թե որպես հակառակ իմ կամքի, անխուսափելի հանգամանքները ձգեցին ինձ չարագործության մեջ։ Եվ այդ գրավել էր նրա կարեկցությունը դեպի իմ թշվառությունը։

Նա նախածանոթ էր և Նեննի հետ։ Նա գիտեր այդ անբախտ աղջկա պատմությունը յուր բոլոր մանրամասնություններով։ Նրա միջնորդությամբ Նեննն առաջին անգամ մտավ ինձ մոտ բանտը։ Նրա բարերարությանը հանձնեցի ես անտեր, անօգնական աղջկան, այն ժամանակ, երբ մի քանի օրից հետո ինձ պետք է վարեին դեպի աքսորը։ Նա էր, որ բանտում մխիթարեց ինձ այդ խոսքերով. «Հույս ունեցեք, որ մի ժամանակ կտեսնեք նրան...»։

Այժմ ամեն ինչ ինձ համար պարզ էր։ Հիշյալ խոսքերը ասաց նա մի քանի տարի առաջ, և ես այս գիշեր պիտի տեսնեի Նեննին։ Այժմ ես գիտեի, որ երիտասարդը հենց այն ժամանակ, երբ ես անջատվեցա Նեննից, առել էր նրան յուր խնամակալության ներքո, և հետո, պաշտոնով այստեղ գալով բերել էր յուր հետ։

Զնայելով այդ բոլոր հին հարաբերություններին, բժշկապետը ծանոթություն չտվեց ինձ։ Նա երկար խոսում էր Համրի հետ, առանց ինձ վրա ուշադրություն դարձնելու։ Նրանց խոսակցությունը ես չէի հասկանում, որովհետև խոսում էին գերմաներեն լեզվով։ Այդ լեզուն ես չգիտեի։

Բժշկապետի գնալուց հետո Համրը ավելի ուրախ տրամադրության մեջ էր գտնվում։ Այդ մարդը այն բնավորություններից էր, որ հազիվ կուրախանար, և եթե ուրախ էր, կնշանակեր, որ մի նշանավոր բան կա։ Ի՞նչ կար, ի՞նչ խոսեցին, ի՞նչ էր, որ ուրախացնում էր այդ մշտատխուր երիտասարդին, այդ մասին նա ոչինչ չհայտնեց։ Ես էլ իմ կողմից չհարցրի պատճառը։ Նրա ներկայությունը, որ սկզբում այնքան մխիթարում էր ինձ, այժմ ձանձրալի դարձավ։ Ես ցանկանում էի միայնակ մնալ և հագենալու չափ մտածել Նեննի վրա։ Ես չէի ներում, որ մի ուրիշի ներկայությունը խանգարեր այդ գեղեցիկ մտածությունները։

Համրը երկար չնստեց, նա գնաց, և ինձ ձեռք տալու միջոցին՝ ասաց այդ մթին խոսքերը.

— Հանգիստ կացեք, շուտով ձեզ փրկություն կլինի...

Ես ուշադրություն չդարձրի այդ խոսքերի նշանակության վրա, կարծեցի, թե իմ հիվանդությունից փրկվելու մասին էր խոսքը։ Բայց այժմ ես չէի ցանկանում առողջանալ հիվանդությունից. այժմ ինձ խիստ ծանր էր թողնել հիվանդանոցը։ Ես կամենում էի միշտ այնտեղ մնալ և առիթ ունենալ տեսնելու Նեննին։

Ժ

ՆԵՆՆԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Կան այնպիսի գրություններ, որ մարդ բոպեական զվարճության համար կորցնում է յուր ամբողջ ապագան և մինչև անգամ կյանքը, բայց դարձյալ չէ հրաժարվում իրան զրկել ցանկացած վայելքից։ Այսպիսի վտանգավոր ձեռնարկություններից մեկն էր Նեննի գիշերային այցելությունը։ Ես անհամբերությամբ սպասում էի նրան, սպասում էի, թե ե՞րբ կզարկե գիշերվա երկու ժամը։

Վերջապես, իմ օթյակի դուռը կամաց բացվեցավ, ծերունի սպասավորը նրան ներս հրեց և հեռացավ ասելով.

— Որքան կամենում եք, խոսեցեք, բայց ձայն չբարձրացնեք։

Ինձ դժվար է նկարագրել այն սրտաշարժ տեսարանը, որ տեղի ունեցավ մեր տեսակցության առաջին բոպեներում։ Այո՛, դժվար է նկարագրել այն բոլոր լացը, արտասուքը, այն անսահման ուրախությունը, այն հոգեկան սաստիկ մրրիկը, որ փոթորկում էր մեր սրտերը՝ մեր գրկախառնության լուռ ցնծության մեջ։ Մեր մեջ խոսում էր հոգին, սիրտը, որ ճաթրում էին և թրթռում էին վաղուց նիրհած, թանձրալի զգացմունքները։ Իսկ լեզուն բառեր չէր գտնում սրտի թարգման լինելու։

Դատապարտյալի սերն անգամ յուր ոտներին շղթա էր կրում։ Նա սիրում է՝ արտասվելով, նա սիրած կնոջը գրկում է սարսափելով։ Նա սիրում է առանց սիրելու իրավունք ունենալու։ Սերը նրա համար մի հանցանք է։ Նույն հանցանքի մեջ էինք գտնվում ես և Նեննն։

— Ինչպե՞ս հայտնվեցար այստեղ, ինչպե՞ս եկար,— եղավ իմ առաջին հարցմունքը, երբ Նեննն, իմ ձեռքը առնելով յուր ափի մեջ, նստեց իմ մահճակալի վրա, իմ կշտին։

— Ես քեզ այն ժամանակ ասատ, որ կգամ, և որտեղ էլ

որ լինես դու, կգտնեմ քեզ, —ասաց նա, սեղմվելով իմ կուրծքի վրա։— Տեսնո՞ւմ ես, եկա ու գտա քեզ։

— Ա՜խ, որքան տանջված կլինես, ո՞րքան նեղություններ կրած կլինես, Նեննե։

— Այդ բոլորը ես մոռանում եմ քո գրկի մեջ։ Իմ կրած չարչարանքները ոչինչ են այդ մխիթարության առջև, որ այժմ վայելում եմ։

Ես հիացման մեջ էի գտնվում։ Մի՞թե այդ բարեսիրտ, նազելի արարածը առաջվա կիսավայրենի Նեննն էր։ Ո՞ր աստվածային շունչը այսպես մեղմացրեց, այսպես ազնվացրեց նրա բնավորությունը։

— Դու ո՞ւմ մոտ ես ապրում,— հարցրի նրանից։

— Բժշկապետի տանը։ Նրա ամուսինը մի պատվական կին է, սաստիկ սիրում է ինձ։ Գիտե՞ս Մուրադ, նա ինձ սովորեցրեց գրել, կարդալ, ես շատ գրքեր եմ կարդացել։

— Նրանք գիտե՞ն, որ դու հիմա այստեղ ես։

— Գիտեն։ Բժշկապետը ինքը պատվիրել էր ծերունի սպասավորին, որ ինձ ներս թողնե։ Ես նրան շատ խնդրեցի, սկզբում չէր հոժարվում, ասում էր քո այցելությունը վատ ազդեցություն կանե հիվանդի առողջության վրա, բայց երբ երկար աղաչեցի, հոժարվեցավ։

Ինձ ավելի հետաքրքրում էին Նեննի հետ պատահած անցքերը, սկսյալ այն օրից, որ ես անջատվեցա նրանից։ Ես խընդրեցի պատմել բոլորը։ Նա խիստ դժվարությամբ հանձն առնց պատմել, ասելով, որ յուր հետ պատահած արկածների մեջ կային այնքան դա՞ռն, այնքան տխո՞ւր դեպքեր, որ չէր ցանկանա ես լսեի։

— Այսուամենայնիվ, ես պետք է գիտենամ բոլորը։

— Ուրեմն կպատմեմ։

Նա այսպես սկսեց յուր պատմությունը.

— Դու հիշո՞ւմ ես, Մուրադ, քո կալանավորվելուց հետո ես մի անգամ միայն փարոսցա տեսնվել քեզ հետ, այն ես

բերդի մեջ։ Այնուհետև ես ամեն օր գալիս էի, կանգնում էի բերդի դռան մոտ, լաց էի լինում, աղաչում էի, բայց ինձ ներս չէին թողնում.— «Գի՜ժ աղջիկը... տեսեք գի՜ժ աղջիկը»...— ասում էին ու ինձ հալածում էին։ Երբ խավարը պատում էր, երբ չար մարդիկ այլևս չէին երևում, ես դարձյալ մոտենում էի բերդին, պտտում էի նրա շուրջը, և գիշերային լռությունը աղմկում էր իմ հառաչանքներով։ Միայն առավոտյան լույսը ինձ հեռացնում էր այնտեղից։ Անցա՜ն օրեր, անցա՜ն շաբաթներ, անցա՜ն ամիսներ։ Մի առավոտ բերդի դռան պահապան զինվորը ասաց ինձ.— «Խե՜ղճ աղջիկ, այն որ դու պտտում ես, էլ այստեղ չէ»...— «Ապա ո՞րտեղ է», հարցրի ես սարսափելով.— «Տարան»...— պատասխանեց նա, կարծես, ինքն ևս տխրելով, չգիտեմ իմ վրա, թե քեզ վրա։— «Որտե՞ղ տարան», հարցրի ես, ավելի մոտենալով նրան։— «Սիբի՜ր»... Ես խելագարի նման սկսեցի վազ տալ։ Չգիտեի, թե ո՞ր կողմը գնամ։ Նույն զինվորը ետևիցս ձայն տվեց.— «Բռնեցեք փոստային մեծ ճանապարհը»։

Վերջապես ես հասա։ Մի խումբ աքսորյալների հետ քեզ վարում էին։ Ինձ թույլ չտվին մոտենալ քեզ։ Որքան խնդրեցի, որքան աղաչեցի, դարձյալ թույլ չտվին։ Ես կատաղեցա, խելքս գլխիցս թռավ, աչքերիս առջև մթնեց... Չգիտեմ այլևս ի՞նչ արեցի, ի՞նչ պատահեց ինձ հետ, միայն այսքան հիշում եմ, երբ աչքերս բաց արի, ինձ գտա քաղաքային գժատան մեջ։ Երբ խելքս գլուխս եկավ, ես տեսա միևնույն բժշկապետին, որի տանը այժմ ապրում եմ։ Նա եկել էր ինձ նայելու։ Ես բռնեցի նրա ձեռքից և արտասվալի աչքերով ասացի նրան.— «Պարոն բժշկապետ, ես գիժ չեմ, իզուր են չար մարդիկ ինձ գիժ կոչում։ Ինչո՞ւ են բերել ինձ գժատունը»։ Բժշկապետը կարեկցությամբ ասաց ինձ. «Խե՜ղճ աղջիկ, ես գիտեմ, որ դու գիժ չես. միայն խորհուրդ եմ տալիս, որ առժամանակ գժատանը մնաս»։— «Ինչո՞ւ»,— հարցրի ես զայրացած կերպով։— «Այդ միայն կարող է ազատել քեզ»,— պատասխանեց նա հազիվ լսելի

ձայնով։— «Ի՞նչ բանից», հարցրի ես ավելի վրդովվելով։— «Սիբիրից»... Ես սկսեցի ծիծաղել։— «Ես էլ այդ եմ ուզում, որ ինձ ուղարկեն Սիբիր... այնտեղ կտեսնեմ նրան...»։ «Ո՞մը», հարցրեց նա։— «Այն աքսորյալին, որ մի քանի օր առաջ տարան», պատասխանեցի ես։— «Դուք, պարոն բժշկապետ, կարծեմ, ճանաչում եք նրան, դուք բժշկում էիք նրան»։— «Այո՛, ճանաչում եմ»...— պատասխանեց նա, «ես մի անգամ խնդրեցի բերդապահից, քեզ թույլ տվին նրա մոտ բանտը մտնել, հիշո՞ւմ ես»,— հարցրեց նա։— «Այո, հիշում եմ, ես մինչև այսօր դեռ չեմ հայտնել ձեզ իմ շնորհակալությունը»։ Այդ խոսքերի հետ բռնեցի նրա ձեռքը և ամուր կերպով սեղմեցի։— «Ես այն աքսորյալին սիրում եմ, ես անկարող եմ չսիրել նրան»,— ասեցի ես, չթողնելով բժշկապետի ձեռքը։— «Նա իմ կյանքը ազատել է մի սարսափելի սպանությունից, ինչպե՞ս չսիրել նրան»։— Հետո պատմեցի, թե ո՞րպես ծնողներից որբ մնալով, իբրև անտեր, անպաշտպան մի աղջիկ, սկսեցի թափառական կյանք վարել. միակ արհեստը, որ ուսուցել էր ինձ իմ մայրը, էր կախարդությունը. ես մարդկանց բախտը գուշակում էի, նրանք ինձ հաց ու մի քանի գրոշներ էին տալիս։ Պատմեցի, թե ո՛րպես հափշտակվեցա ավազակներից, և ո՛րպես նրանք ինձ երկար չարչարելուց հետո, վերջը կամենում էին սպանել, իսկ դու ազատեցիր ինձ։ Մի խոսքով, պատմեցի բոլորը, ինչ որ մինչև այն օրը պատահել էր ինձ հետ։ Բժշկապետը հետաքրքրությամբ լսելուց հետո, ասաց ինձ.— «Այդ բոլորը ես գիտեմ, այն աքսորյալը պատմել է ինձ»։

— Դու պատմե՞լ էիր նրան, Մուրադ,— հարցրեց Նենեն, կտրելով յուր խոսքի թելը և դիմելով ինձ։

— Այո՛, պատմել էի, պատմել էի այն ժամանակ, երբ ես բանտումն էի։ Ես խնդրեցի նրանից, որ քեզ առնե յուր պաշտպանության ներքո, և նա խոստացավ իմ խնդիրքը, և, որպես երևում է, կատարեց բարի մարդը։

— Այո՛, կատարե՛ց,— կրկնեց Նենեն մի առանձին զգացմունքով։— Ա՜խ, ինչո՞վ կարող ենք փոխարինել այդ ազնիվ երիտասարդի երախտիքը... Նա դիտավորություններ ունի դեռևս շատ լավություններ անելու մեզ...

Նենեն ուրախության արտասուքը սրբելով յուր աչքերից, շարունակեց.

— Ես հարցրի բժշկապետից, թե ի՞նչ էր պատճառը, որ ինձ բերել էին գժատուն։ Նա ասաց, որ այն դատապարտյալին, այսինքն քեզ, դեպի աքսոր վարելու ժամանակ, ես խելագարվելման հարձակվել էի պահապան զինվորների վրա, խլել էի մեկի հրացանը և արձակել էի։ Թեև ոչ ոքին վնաս չէի հասցրել, բայց իմ վարմունքը օրենքով համարվում էր ծանր հանցանք։ Այդ հանցանքը ավելի խստությամբ էր պատժվում գլխավորապես այն պատճառով, որ կատարվել էր քեզ հափշտակելու նպատակով։— «Իսկ երբ գործողությունը կատարված է ուղեղի անառողջ դրության մեջ»— ավելացրեց բժշկապետը,— «պատիժը մեղմացնում են»։ Ես պատասխանեցի.— «Ամենևին չեմ ցանկանում, որ իմ պատիժը մեղմացնեն։ Ես շատ ուրախ կլինեմ, եթե ինձ կուղարկեն Սիբիր։ Այնտեղ կտեսնեմ նրան. անտեղ տարան նրան, թող ես էլ նրա մոտ լինեմ».— «Խե՜ղճ աղջիկ,— ասաց բժշկապետը,— դու դեռ այնքան անփորձ ես, որ չգիտես, թե ինչպե՞ս են վարվում աքսորյալների հետ։ Խելագարությունը միայն կարող է փրկել քեզ...»։ Ես դարձյալ պընդեցի, թե երբեք չեմ ասի, որ ցնորված եմ եղել, այլ պարզ կխոստովանվեմ, որ կամենում էի ազատել սիրելիիս, և այդ նպատակով հարձակում գործեցի։ Բժշկապետը, թեև չկարողացավ ինձ համոզել, բայց դարձյալ ուրիշ խրատներ տալով, ավելացրեց, որ իմ վարմունքը իսկապես «մինչև խելագարության հասած» սիրո ցնորք է եղել և ավելի ոչինչ։

— Բայց ես բժշկապետին չհավատացի, թեև, նա ինձ զանազան խոստմունքներ արեց և զանազան հույսեր տվեց։ Ես հաստատ մնացի իմ կամքի մեջ, և երբ առաջին անգամ տարան ինձ դատարանը, ես պարզ ասեցի դատավորներին.— «Պարոն դատավորներ, ես խելագար աղջիկ չեմ, ես շատ խելացի աղջիկ եմ։ Խելագարությունը չէր, որի պատճառով ես հարձակում գործեցի զինվորների վրա։ Ես սիրում էի նրան, այն երիտասարդին, որին դուք Սիբիր ուղարկեցիք։ Ես կամենում էի ազատել իմ սիրելիին։ Ո՛չ, պարոն դատավորներ, դուք մի հավատացեք, որ ես խելագարված եմ եղել։ Ես միշտ խելացի էի, ինչպես այժմ։ Այդ հանցանքները ես գործել եմ իմ առողջ դատողությունով։ Ինձ ևս աքսորեցեք Սիբիր, ես ցանկանում եմ սիրելիիս հետ միասին լինել»։— Բայց դատավորները ինձ չհավատացին։ Ես շատ բարկացա, երբ իմ վճիռը կարդացին։ Փոխանակ Սիբիր ուղարկելու, վճռել էին՝ երեք ամիս նստացնել ապաշխարության տան մեջ։ Թեև ես վճռից գոհ չմնացի, այնուամենայնիվ, ինձ տարան այնտեղ։

— Բայց գիտե՞ս, Մուրադ, իմ սխալն ինչումն էր,— հարցրեց Նենեն, դառնալով դեպի ինձ։— Ես չպետք է ասեի, թե խելացի աղջիկ եմ և ամեն ինչ գործել եմ իմ կամքով, իմ հոժարությամբ։ Ես պետք է ասեի, թե խելագարված եմ եղել, չեմ հասկացել, թե ինչ եմ գործել։ Ես պետք է աշխատեի արդարացնել իմ վարմունքը և խնդրել, որ չպատժեն։ Այն ժամանակ կմտածեին, որ ես գիտությամբ եմ գործել և ցանկացած պատիժը կնշանակեին։ Ինձ կուղարկեին Սիբիր։ Բայց դատարանի մեջ, երբ աշխատում ես քեզ արդար ցույց տալ, մեղավոր են համարում։ Իսկ երբ ուզում ես քեզ գիժ ցույց տալ, խելացի են համարում, և ընդհակառակն։

— Ապաշխարության տան մեջ եղած ժամանակս,— շարունակեց Նենեն,— բժշկապետը մի քանի անգամ այցելեց ինձ։ Այնտեղ ես առաջին անգամ ծանոթացա նրա կնոջ հետ։ Նա ինձ համար զանազան բաներ էր բերում և ամեն կերպով հոգ էր տանում, որ ես հանգիստ լինեմ։ Թե այր և թե կին խոստանում էին, որ իմ ապաշխարության ամիսները վերջացնելուց հետո ինձ կընդունեն իրանց տանը և կպահեն ու կպահ-

պանեն իրանց զավակի նման։ Բայց ես իմ վրա չէի մտածում, ես միշտ քեզ վրա էի մտածում։ Այդ էր պատճառը, հենց որ վերջացավ երեք ամիսը, ես փախա այնտեղից, որ բժշկապետի տնից ազատվեմ։ Առանց որևիցե պատրաստության, ես ճանապարհ ընկա քեզ մոտ գալու համար։ Սիբի՜ր, Սիբի՜ր. այդ անունը կրկնելով, շարունակում էի իմ ճանապարհը։ Խիստ սակավ էր պատահում, որ ես մի որևիցե բնակության հասնեի։ Ըստ մեծի մասին անց էի կացնում բացօթյա։ Մարդիկ, տեսնելով իմ պատառոտած հագուստը, խառնված ծամերը, ցրտից և արևից սպիացած դեմքը, ասում էին՝ «դա ջադուկ է», և ինձ օթևան չէին տալիս։

Նենեի նկարագրությունները ինձ սարսափեցնում էին։ Որքա՜ն տանջվել էր, որքա՜ն շարչարվել էր խեղճ աղջիկը մի կորած, աշխարհից կտրված դատապարտյալի համար։ Մի՞թե ես արժանի էի այսքան զոհաբերությանց։ Ես խնդրեցի նրանից՝ համառոտել յուր պատմությունը և միայն այն ասել, թե ինչպե՞ս կրկին հանդիպեց բժշկապետին։

— Ես շուտով այդ տեղը կհասնեմ,— պատասխանեց նա,— մի փոքր ևս լսիր, եթե չես ձանձրանում։

— Ես չեմ ձանձրանում, այլ տխրում եմ... իմ սիրտը լցվում է ցավերով...

— Շուտով կուրախացնեմ քեզ...— ասաց նա և շարունակեց.

— Մի անգամ, երեկոյան պահուն, հասնում եմ մի գյուղ։ Գյուղացիները հավաքված էին գինետան առջև, զանազան դատարկախոսություններ էին անում։ Ես հարցրի նրանցից.

— Ո՞ր ճանապարհն է տանում դեպի Սիբիր։

Նրանք զարմացած նայեցին իմ վրա։

— Սիբի՞ր,— հարցրեց մեկը ծիծաղելով։

— Այո՛, Սիբիր։ Հեռո՞ւ է։

— Այդ սատանայական սև մազերդ կսպիտակի մինչև այնտեղ կհասնես։

— Ցույց տվեցեք ինձ ճանապարհը,— կրկնեցի ես։

— Ահա՛ ճանապարհը, գնա՛, գուցե առավոտյան կհասնես,— ասաց մի ուրիշը, ավելի լրբաբար ծիծաղելով։

— Եթե գայլերը չպատառոտեն,— նկատեց մի այլը։

— Մի ծաղրեք ինձ, բարի մարդիկ, ես Սիբիր եմ գնում,— աղաչեցի նրանց։

— Դա խելագար է,— ասաց մեկը։

— Չէ, անպատճառ անտառի դևերից մեկը կլինի. տեսեք, ինչպե՞ս վառվում են աչքերը,— ասաց մյուսը։— Նայեցեք մազերին։

Բոլորը խաչակնքեցին։

— Ոտքերիցը արյուն է հոսում, խե՜ղճ աղջիկ,— նկատեց մի պառավ կին։— Երևի, փուշերը ծակոտել են։

— Դուք չե՞ք հասկանում, ես Սիբիր եմ գնում,— զայրացած կերպով ձայն տվի ես։— Ցույց տվեցեք ինձ ճանապարհը։

— Կորե՛ք, թող սատանան տանի ձեզ,— ասեցին ինձ և երեսները շուռ տվին։

Ես բռնեցի առաջին պատահած ճանապարհը և հեռացա։ Դեռ գյուղից չէի դուրս եկել։

— Մուրացկա՛ն, մուրացկա՛ն,— ձայն տվեց մի երեխա։

— Ես Սիբիր եմ գնում...— պատասխանեցի նրան։

Ես անցնում էի փոստային իջևանի առջևից։ Այդ միջոցին ուղևորի սայլակը, փոշու ամպերի մեջ ծածկված, փոթորկի նման հասավ իջևանը։ Սայլակի միջից դուրս նետվեցավ մի պարոն, վազեց իմ ետևից, և, իմ թևքից բռնելով, ասաց.

— Վերջապես գտա քեզ...

— Այդ պարոնը բժշկապետն էր։ Ես խսկույն նկատեցի նրա բարի դեմքի վրա այն մեծ ուրախությունը, որ պատճառեց ինձ գտնելը։— «Ո՞ւր ես գնում»,— հարցրեց նա, չթողնելով իմ ձեռքը։— «Սիբի՜ր»,— պատասխանեցի ես, աշխատելով դուրս պրծնել նրա ձեռքից։— «Այժմ ուշ է,— ասաց նա,— տեսնո՞ւմ ես, արեգակը մտնելու մոտ է, տեղ չես հասնի, անապատումը

կմնաս»։— «Ես միշտ անապատումն եմ գիշերում, մարդիկ ինձ տեղ չեն տալիս»։— «Մնա ինձ մոտ, այս գիշեր հանգստացիր, առավոտյան կշարունակես քո ճանապարհը»։— «Ես դեռ ոչ բոլորովին հոգնած եմ, կարող եմ անցնել մի քանի վերստ ևս, մինչև արեգակը կմտներ»։

— Վերջապես նա համոզեց ինձ մնալ և տարավ փոստայի կայարանը,— շարունակեց Նենեն։— Աշնան սաստիկ ցրտերի ժամանակն էր։ Իսկ իմ հնամաշ հագուստը հազիվ ծածկում էր իմ մարմինը։ Ես նոր էի զգում, թե որքան մրսել էի։ Երբ մտա սենյակը, իմ ատամները սկսեցին բաբախել։ Իմ լեզուն դժվարանում էր շարժվել։ Նա իսկույն փաթաթեց ինձ յուր մուշտակի մեջ և նստեցրեց մահճակալի վրա։ Տաք թեյը կյանք տվեց ինձ, իսկ սպիտակ հացը կարագի հետ զորացրին իմ սպառված ուժերը։ Ես ա՛յժմ միայն հասկանում եմ, եթե այն դրության մեջ անապատում մնայի, անպատճառ կսառչեի։ Երբ ես բավական հանգստացա, երբ իմ գրգռված դրությունը մեղմացավ, բժշկապետը ասաց ինձ, որ ինքը հատկապես ինձ համար եկած էր։ Նա պատմեց, թե այն առավոտը, երբ ինձ պետք է արձակեին ապաշխարության տնից, ինքը և յուր կինը կառքով եկան այնտեղ, որ ինձ առնեն և իրանց տունը տանեն։ Բայց մինչև իրանց գալը, ես անհայտացած էի։ Հետո հարցուփորձ անելով, տեղեկացան, թե ես որ կողմն էի գնացել։ Բժշկապետը առանց ժամանակ կորցնելու հետամուտ եղավ և գտավ ինձ։

— Առավոտյան,— շարունակեց Նենեն— բժշկապետը հայտնեց, թե ինքը նույնպես Սիբիր գնալու դիտավորություն ունի և խոստացավ, որ ինձ ևս կվերառնի յուր հետ։ Կարծես, ամբողջ աշխարհը ինձ տվեցին, ուրախությունիցս չգիտեի թե ինչ անեմ։ Երեխայի նման քարշ եկա իմ բարերարի պարանոցից և սկսեցի համբուրել նրա աչքերը, երեսը, ճակատը, բոլորը։— «Կտանե՞ք, կտանե՞ք»,— անդադար հարցնում էի ես։— «Անպատճառ կտանեմ»,— պատասխանեց նա և ավելացրեց, թե ինքը պետք է պաշտոնով գնա այնտեղ, և այդ մասին արդեն առաջարկել են իրան, և ինքը ընդունել է։— «Եվ ես կտեսնե՞մ նրան»...— «Կտեսնես, շատ անգամ կտեսնես», պատասխանեց նա։ Ես կրկին գրկեցի նրա պարանոցը։

— Բժշկապետը,— առաջ տարավ Նենեն,— ինձ շատ խրատներ էր տվել, ինձ շատ խորհուրդներ էր տվել, բայց առաջ ես չէի հավատում նրան։ Մարդիկ ինձ այնքան շատ խաբել էին, որ ես կորցրել էի իմ հավատը դեպի ամեն մարդ։ Բայց երբ նա խոստացավ, որ ինձ կտանի Սիբիր, ես բոլորովին հավատացի։ Այդ էր պատճառը, որ ես իսկույն հնազանդվեցա, երբ առավոտյան առաջարկեց ինձ նստել ճանապարհորդական սայլակի վրա և վերադառնալ տուն։ Չնայելով, որ ես մինչև այն գյուղը հասել էի երեք օրվա մեջ, բայց նույն օրվա երեկոյան պահուն մենք հասանք քաղաքը։ Բժշկապետի բնակարանը բավական ընդարձակ էր. իսկույն ինձ համար որոշեցին մի առանձին սենյակ։ Նրա մանկահասակ կինը ավելի բարեսիրտ երևաց ինձ, քան թե ամուսինը։ Նրա առաջին հոգսը եղավ լվանալ իմ գլուխը, սանդրել և փոխել իմ հագուստը։ Երբ ոտքից ցգլուխ հագնվեցա, նա մի առանձին ուրախությամբ նայեց իմ վրա, գրկեց և համբուրելով, ասաց.— «Հիմա դու շատ սիրուն աղջիկ դարձար»։ Եվ որպեսզի ես մի նոր ծանրություն չդառնամ այդ ոչ այնքան միջոցներ ունեցող ընտանիքի վրա, հենց երկրորդ օրը ես խնդրեցի տիկինից, որ ինձ ցույց տա մի քանի գործեր, թե ինչով կարող էի ծառայել նրանց։ Տիկինը ժպտաց և ինձ հանձնեց մի քանի թեթև գործեր։ Ես իմ պարտավորությունները այնքան ճշտությամբ կատարում էի, որ նրանք, որ առաջ միայն խղճում էին ինձ, սկսեցին այնուհետև սիրել։ Տիկինը չափազանց գութ ուներ ինձ վրա։ Նա մի առանձին եռանդով սկսեց զբաղվել իմ դաստիարակությամբ. ամեն օր մի քանի ժամ պարապում էր ինձ հետ։ Ես սովորեցի գրել, հաշվել և գրքեր կարդալ։ Ա՜խ, որքան լավ բան են այդ գրքերը։ Նրանց մեջ խոսում են խելացի մարդիկ, նրանք այն չեն ասում, ինչ որ մենք սովորաբար լսում ենք կամ տեսնում

ենք կյանքի մեջ։ Նրանք պախարակում են այդ մեր ծեսածները, և ասում են, որ լավ բաներ չեն, և ցույց են տալիս, թե ինչպե՞ս մարդիկ կարող էին ավելի լավ լինել։

— Եվ դու լավացար,— կտրեցի ես Նեննի խոսքը։

— Այո՛, լավացա,— պատասխանեց նա մի առանձին բավականությամբ։

— Դու հենց սկզբից բարի էիր, Նեննի։

— Իմ առաջվա բարության և այժմյան բարության մեջ մեծ զանազանություն կա։ Աղավնին էլ բարի է, բայց եթե նրան հարցնելու լինես, թե ինչու համար է բարի, նա քեզ չէ կարող բացատրել պատճառը։ Նա բարի է, ինքն էլ չգիտե, թե ինչի համար։ Այդպես էր և իմ բարի լինելը։ Ոչխարի բարություն և ուրիշ ոչինչ։ Բայց ես հիմա գիտեմ, թե ինչո՞ւ լավ է բարին և ինչո՞ւ վատ է չարը։ Չէ՞ որ ես առաջ սուտեր էի խոսում, խաբում էի մարդկանց, բայց չէի հասկանում, որ դա վատ է։ Ես մի բոշա աղջիկ էի, և մորիցս սովորած կախարդությանը ինքս էլ հավատում էի։ Բայց հիմա գիտեմ, որ այն բոլորը խաբեբայություն էր։— Այդ թողնենք,— խոսքը փոխեց Նեննն,— բժշկապետը և նրա կինը կատարեցին իրանց խոստմունքը։ Երբ նրանք պաշտոն ստացան Սիբիրում, ինձ ևս բերեցին իրանց հետ։ Իմ հարաբերությունը քեզ հետ նրանք գիտեին, նրանց հայտնի էր և այն, թե որ աստիճան ես սիրում եմ քեզ։ Հետո, թեև ինձանից գաղտնի, նրանք աշխատում էին, որ դու ազատված լինես քո դատապարտությունից, և մեզ բախտավորացնեն ամուսնական կյանքով։ Այդ մասին ինձ հետ չէին խոսում, բայց ես նրանց ակնարկություններից և առանձին խոսակցություններից շատ բան էի հասկանում։

— Ի՞նչ միջոցներով էին աշխատում,— հարցրի ես անհամբերությամբ։— Արդյոք հույս կա՞... կարելի՞ է...— և բազմաթիվ հարցերով շփոթեցրի Նեննին։

Կարծես, նա վախենում էր, որ միանգամից հաղորդած ուրախալի տեղեկությունը կարող էր վատ ազդել իմ առողջության

վրա և, երևի այդ մտքով բավական հեռվից սկսեց յուր պատասխանը։

— Դու պետք է գիտենաս,— ասաց նա,— որ բժշկապետը աղքատ և շատ աղքատ ծնողների որդի է եղել, ժողովրդի ստոր դասակարգից։ Նրա հայրը փողոցներում կոշկաներկ վաճառող է եղել, իսկ մայրը՝ մի լվացարար կին։ Բայց տիկինը բարձր շրջաններից է, Ս. Պետերբուրգում նշանավոր ազգականներ ու բարեկամներ ունի, որոնք նույնպես նշանավոր պաշտոններ են վարում։ Բժշկապետը, որպես աղքատ ուսանող, նրա հոր տանը մասնավոր դասեր էր տալիս։ Այստեղից սկսվեց նրանց ծանոթությունը, որը հետո սիրո փոխվեցավ։ Օրիորդի ծնողները, իհարկե, հակառակեցին նրա ամուսնանալուն մի բժշկի հետ, որ թե յուր դիրքով և թե ծագումով չէր համապատասխանում նրանց կոչմանը։ Բայց օրիորդը այնքան բնավորության զորություն ուներ, որ, հակառակ ծնողների կամքի, թողեց հայրենական տունը, և սկսեց սիրած երիտասարդի հետ ապօրինի ամուսնությամբ ապրել։ Այնուհետև ծնողները բոլորովին մերժեցին նրան, և միշտ անհաշտ մնացին նրա հետ։ Բայց տիկինը ուներ մի ազգական, որ ծառայում էր մինիստրության մեջ։ Այդ բարձր աստիճանավորը սաստիկ սիրում էր տիկնոջը և գնահատում էր նրա արժանավորությունները։ Նա մինչև անգամ մեղադրում էր տիկնոջ ծնողներին, որ այնպես անգթաբար վարվեցան նրա հետ։ Ահա այդ ազգականի հետ տիկինը սկսեց բանակցություններ անել քո ազատության մասին և, կարծեմ հաջողված է...

— Այդ դու որտեղի՞ց գիտես, իմ ավետաբեր հրեշտակ,— բացականչեցի ես և սկսեցի անհագաբար համբուրել նրա ձեռքերը։

— Գիտեմ, մի քանի օր առաջ տիկինը ցույց տվեց ինձ մի նամակ, որ նոր էր ստացել Ս. Պետերբուրգից ու ասաց.— «Ննեն, քո բախտը վճռված է...»։

— Բարերա՜ր աստված, փառք լինի քո գթությանը,— կրկին բացականչեցի ես, հետո դառնալով դեպի իմ ազատիչը, ասեցի նրան.— այդ բոլորը քեզ եմ պարտական. քի՛զ, եթե դու չլիներիր, եթե դու չգտնվեիր բժշկապետի ընտանիքի մեջ, ո՞վ կդարձներ նրանց բարի ուշադրությունը ինձ վրա։ Դու, միայն դու քո հրեշտակային բնավորությամբ գրավեցիր քո տիկնոջ սիրտը և նրա ամուսնու ցավակցությունը դեպի մեր թշվառ վիճակը։ Եթե դու չլիներիր, ես հավիտյան կորած էի, թե աշխարհի և թե քեզ համար...

Այդ միջոցին դուռը բացվեցավ և ծերունի սպասավորի երկայն կերպարանքը հայտնվեցավ շեմքի վրա։

— Օրիորդ,— դարձավ նա դեպի Նենեն,— օրը լուսանում է, լավ չի լինի, եթե քեզ տեսնեն այստեղ։

Նենեն վեր կացավ և, ինձ հետ կրկին և կրկին համբուրվելով, հեռացավ, ասելով

— Շուտով դարձյալ կտեսնվենք...

ԺԱ

ՆԵՐՈՒՄՆ

Սպիտակ տնակը այժմ բոլորովին ուրիշ տեսք էր ստացել։ Պատշգամբի կոտրատված վանդակապատը նորոգվել էր և փայլում էր ձյունի պես սպիտակ գույնով։ Փտած սանդուղքները նույնպես նորոգված էին, և աջ ու ձախ կողմից շարած էին ծաղիկների թաղարներ։ Պարտիզի ճեմելիքները պատած էին մանրած աղյուսի ծիրանագույն փոշիով։ Հովանոցը կանաչազարդ վրանի էր նմանում. արեգակի ճառագայթները անկարող էին թափանցել պատատուկ բույսերի սաղարթախիտ հյուսվածքի միջից։ Պարտիզի ցանկապատը, բոլորած կենդանի բույսերով, ներկայացնում էր մի ծաղկազարդ պատնեշ։ Ծառերը մանկացել էին, գեղեցկացել էին և տարածում էին իրանց ջուրջը խիստ զովարար ստվեր։ Ծաղիկները քաղցրացնում էին ամառային առավոտները ախորժելի անուշահոտությամբ։ Հին, ավերակ դարձած տնակը այժմ փոքրիկ դրախտ էր դարձել։ Նա ներկայացնում էր խիստ աչքի զարկող հակապատկեր յուր տխուր, միօրինակ շրջակայքի մեջ։ Նենեի և նրա աշխատասեր տիկնոջ ջանքերին էին պարտական այդ բոլոր նորոգությունները։

Երեկոյան պահուն, երբ արևը խոնարհվում էր դեպի յուր գիշերային մուտքը, Նենեն, ցնցուղը ձեռին, սառն ջրով սրսկում էր ցերեկվա տոթից թառամած ծաղիկները։ Նրա ժրաջան տիկինը, կարճ շրջազգեստով, գոգնոցը կապած կամ փոքրիկ բահը ձեռքին փորում էր ածուները, կամ մկրատով կտրատում էր թուփերի ավելորդ ճյուղերը։ Նրա ամուսինը, հովանոցում նստած գիրք էր կարդում և երբեմն, աչքերը բարձրացնելով, նայում էր գեղեցիկ կնոջ վրա և սքանչանում էր։

Այդ պարտիզում առավոտները և երեկոները հավաքվում էին մի խումբ երեխաներ, տղա, աղջիկ, զանազան հասակների։ Այդ փոքրիկ շարաճճիները, ավելի քան երգեցիկ թռչունները, կենդանացնում էին գեղեցիկ դրախտը իրանց ուրախ ճչվլոցով։ Քրտնած, փթթած, կարմրած թշերով, վազվզում էին նրանք ճեմելիքներում, ընկնում էին փափուկ ավազի վրա, վեր էին կենում, և կայտառ, անվաստակելի բնավորությունները դարձյալ շարունակում էին վազվզել։ Նենեի տիկինը գրկում էր նրանց, համբուրում էր, թափ էր տալիս փոշոտված հագուստները, պատվիրում էր զգույշ լինել։ Նույն պարտիզում տիկինը շինել էր տվել փոքրիկ մանուկների համար զանազան մարմնամարզական գործիքներ, սովորեցրել էր նրանց մի քանի կանոնավոր խաղեր, կրթություններ, և շատ անգամ ինքն ևս մասնակցում էր նրանց զվարճությունների մեջ։ Դրանք տիկնոջ աշակերտներն ու աշակերտուհիներն էին, որոնց հետ որոշյալ ժամերում պարապում էր նա։ Դրանք թշվառ աքսորյալների դա-

վակներն էին, որոնց ընտանիքով ուղարկել էին այնտեղ բնակության համար։ Տարվա բարեխառն ամիսներում տիկինը պարապում էր նրանց հետ պարտիզում, իսկ երբ սկսվում էին ցրտերը, նրանց համար մի առանձին սենյակ էր որոշել յուր տան մեջ։ Նրա դպրոցը փոքրիկ էր, աշակերտների ու աշակերտուհիների թիվը հասնում էր ութն հոգու, որոնք սովորում էին ձրի և նույնպես ձրի ստանում էին թե գրքեր և թե դասական այլ առարկաներ։ Տիկինը յուր ծանոթներից կազմել էր բարերարների մի շրջան, որոնք մատակարարում էին բոլոր ծախքերը։

Իսկ այնօր սպիտակ տնակում ինչ-որ անսովոր շարժում կար, ինչ-որ պատրաստություններ էին լինում։ Փոքրիկ շարաճրմփիները այլևս չէին վազվզում. նրանք, դարան մտած կատուների նման, հավաքվել էին հովանոցի շուրջը և պլշած աչքերով նայում էին դեպի սենյակների լուսամուտները։ Տիկինը այնօր խոստացել էր նրանց քաղցրավենիք բաժանել։ Նոր բոված ղահվեի ախորժելի հոտը դեռ բուրում էր օդի մեջ։ Սպասավորը հագել էր յուր սև սերթուկը, որ խիստ հազիվ անգամ էր հագնում, և կրում էր սպիտակ ձեռնոցներ ու սպիտակ փողպատ։ Նենեն նույնպես հագել էր յուր տոնական հագուստները և պարտիզում ծաղիկներ էր փնջում սեղանի համար։ Բացված լուսամուտներից երևում էին սենյակներում անցուդարձ անող հյուրերի ուրախ դեմքերը։ Ինքը բժշկապետը այնօր կտրել էր գլխի մազերն ու եղունգները, որ տարվա մեջ հազիվ մի քանի անգամ էր պատահում, ժամանակ չգտնելու պատճառով։ Իսկ նրա մանկահասակ կինը հագել էր մետաքսյա սև հագուստ, և գլխի շիկագույն խիտ գիսակների մեջ երևում էր մի մեծ, սպիտակ վարդ։

Հյուրերի թվում գտնվում էին տեղային ծառայողներից մեծ և փոքր աստիճանավորներ իրանց կանանց հետ։ Սեղանի վրա պատրաստված էր նախաճաշիկ, դրած էին զանազան ըմպելիքներ։ Հյուրերը ոտքի վրա ուտում էին, խմում էին, ծխում էին

և շատախոսում էին։ Տանտիկինը անդադար դիմում էր մեկից դեպի մյուսը և ամենի համար նա պատրաստ ուներ մի քաղցր խոսքեր։ Բժշկապետը ուշադրություն չէր դարձնում նրանց վրա, այլ մի անկյունում առանձնացած, տաք վիճաբանության մեջ էր մի լեռնային ինժեների հետ։ Նա պնդում էր, թե տեղային հանքային բովագործության եղանակը խիստ ապարդյուն է, և աշխատում էր ապացուցանել, որ արտասահմանում այժմ բոլորովին ուրիշ սիստեմներ են ընդունված։ Վիճաբանությանը վերջ դրվեցավ, երբ հյուրերի մեջ լսելի եղավ. «Կամենդանտը գալիս է»։ Այդ ժամանակ միայն բժշկապետը բաց թողեց տգետ ինժեների օձիքը, դուրս եկավ յուր անկյունից և դիմեց դեպի սանդուղքները՝ հարգելի հյուրին ընդունելու համար։ Տիկինը նույնպես մոտեցավ դռանը։

Կամենդանտի գալուց հետո ներս բերեցին սկուտեղների վրա շարած շամպանիայի գինու երկայն գավաթներ։ Սառույցի մեջ դրած շիշերը վաղուց սպասում էին այդ հանդիսավոր րոպեին։

Կամենդանտը, բոլորի հետ բարևելուց հետո, անցավ սենյակի վերևի կողմը և ոտքի վրա մնաց։ Նրա կշտին կանգնած էր մի երիտասարդ, որին յուր հետ էր բերել։ Գունաթափ, մաշված դեմքով այդ երիտասարդը այնպիսի տխուր տպավորություն էր գործում, որ կամ նոր էր դուրս եկել հիվանդանոցից, կամ նոր էին բաց թողել նրան երկար տարիների բանտարկությունից։ Այդ թառամած դեմքը, որը, երևի, շատ ժամանակ չէր ծիծաղել, այժմ փոքր-ինչ զվարթացել էր, և նրա մռայլված աչքերում երևում էին ուրախության նշույլներ։

Սենյակի մեջ տիրեց լռություն։ Հյուրերը ոտքի վրա սպասում էին. բոլորի աչքերը դարձած էին դեպի կամենդանտը։ Նա մի համառոտ հառաջաբանից հետո հանեց ծոցից մի թուղթ, սկսեց կարդալ։ Երբ վերջացրեց ընթերցումը, ամբողջ սենյակը թնդաց ուռաների. աղաղակներով. «Կեցցե կայսրը» մի քանի անգամ լսելի եղավ բոլորի բերանից։ Հետո ամենքը, շամպա-

նիայի գավաթները ձեռներին, մոտեցան գունաթափ երիտասարդին և շնորհավորեցին նրան։

Երիտասարդը Մուրադն էր. կարդացին նրան ներում շնորհելու թուղթը։ Նա ազատված էր աքսորանքից։

Շամպանիայի գավաթները դատարկվեցան. ամենքը խմեցին կայսրի կենացը։ Այդ ժամանակ առաջ անցավ բժշկապետը և, առաջարկելով խմել մի նոր կենաց, խնդրեց նախապես լսել իրան։ Նա սկսեց մի փոքրիկ ճառ. խոսում էր հանդարտ, սահուն և առանց պաճուճանքների։ Ճառախոսը, որ բավական ծանոթ էր դատապարտյալի անցյալի հետ, նկարագրեց նրա կյանքի նշանավոր գծերը, և գլխավորապես շեշտում էր այն կենսական պայմանների վրա, որոնց անխուսափելի ազդեցության ներքո, այդ բնականից բարի և տաղանդավոր երիտասարդը դարձավ մի տաղանդավոր չարագործ։ Եվ հետո ավելացրեց, թե ինչպես նա, հանդիպելով մի օրինավոր ընկերի, նրա ազդեցության ներքո ուղղվեցավ, զարգացավ և բարոյական մարդ դարձավ։ Նա վերջացրեց յուր ճառը այդ խոսքերով. «Եթե ցանկանում եք, որ մեր բանտերը, որ մեր աքսորատեղերը չլցվեն հանցավորների ահագին բազմությամբ, պետք է աշխատենք անհետացնել հանցանքների պատճառները իրանց բուն արմատի մեջ»։

Բոլորը ծափահարեցին։ Գավաթները դատարկվեցան, խմեցին ուղղված և ներումն ստացած դատապարտյալի կենացը։

ԺԲ

ՎԵՐՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆ

Մի ամիս անցել էր այդ օրից։ Մի կառք սահում էր հարթ, կոստային ճանապարհով։ Նրա մեջ նստած էին Նենեն և Մուրադը։ Երկուսն էլ ուրախ, երկուսն էլ բախտավոր։ Կառապանը սուլելով քշում էր ձիաները, կարծես, նա ևս ուրախ էր, որ տանում է մի զույգ նորապսակ ամուսիններ։

Առջևում, երկայն կոշիկները հագին, ցուպը ձեռին, ուղևորի պարկը ուսին, դանդաղ քայլերով գնում էր մի ճանապարհորդ։ Երբ նա հեռվից նշմարեց կառքի մոտենալը, կանգնեց։

Կառքը հասավ ճանապարհորդին։

— Ձեր անունով նամակ ունեմ, պարոն,— ասաց նա և մի ծրար մեկնեց դեպի կառքը։

Մուրադը նայեց օտարականի երեսին և սոսկաց։ Նա ձեռքը տարավ դեպի ատրճանակը և, ուղիղ բռնելով դեպի օտարոտի նամակաբերը, ասաց.

— Հեռացե՛ք, եթե չեք ցանկանում մեռնել։

— Երդվում եմ երկնքի և երկրի բոլոր սրբություններով, որ դեպի ձեզ ոչ մի չար նպատակ չունեմ,— ասաց նա համոզիչ ձայնով։— Ընդունեցեք այդ նամակը։

— Միթե կարելի՞ է հավատալ ձեր երդումներին։

— Ես կամենում եմ ապացուցել, որ ես այնքան վատ չեմ, որքան դուք կարծում եք։

Այդ խոսակցության բոլոր ժամանակը Նենեն կպած էր յուր սիրելի ամուսնու կողքին և անդադար հարցնում էր։— Ի՞նչ է ասում, ի՞նչ է ուզում այդ մուրացկանը։

Մուրադը հրամայեց կառքը կանգնեցնել, ձեռքը մեկնեց և առեց ծրարը։ Նա իսկույն բաց արեց նամակը, որ սկսվում էր այդ խոսքերով.

«Մուրադ, կարդացեք, հետո ոչնչացրեք այդ նամակը։ Մեզ հաջողվեցավ ազատվել դատապարտյալների տնից։ Մենք կսպասենք քեզ Ο... քաղաքում։ Ներեցեք նամակաբերին և մոռացեք անցյալը։ Մեր ազատությամբ նրան ենք պարտական»։

Ստորագրված էին նրա երկու բարեկամների՝ Համրի և Ավազակապետի անունները։

Մի քանի անգամ Մուրադը կարդաց այդ տողերը։ Նրա սրտին տիրեց անչափ ուրախություն և միևնույն ժամանակ կաս-

կած։ Մի՞թե այդ բոլորը կեղծ չէր։ Երևի, նամակարևորը նկատեց նրա տարակուսությունը և խիստ սրտաշարժ ձայնով ասաց.

— Երդվում եմ այն աղ ու հացով, որ շարունակ տասնյակ տարիներ միասին կերել ենք, և հավատացնում եմ ձեզ, որ այդ նամակի մեջ կեղծ ոչինչ չկա։

Մուրադը կրկին ուշադրությամբ նայեց նամակի վրա։ Նրա մի անկյունում հազիվ նշմարվում էր մի խորհրդավոր էմբլեմա, որ կազմված էր հայոց այբուբենի առաջին և վերջին տառերից՝ Ա և Ք, իսկ այդ երկու տառերի մեջտեղում զետեղված էր մի խարիսխ, որ հովանավորված էր սև ձեռքով։ Դա նրա և յուր երկու ընկերների մեջ մի պայմանական նշանաբան էր։

— Հավատում եմ,— ասաց Մուրադը և, նամակը բռնելով վառած լուցկիի վրա, այրեց։

Նամակաբերը խոսեց.

— Իմ ձեռքով կատարվեցավ քո անկումը, Մուրադ, ես ինձ բախտավոր կհամարեի, եթե քո ազատությունը նույնպես իմ ձեռքով կատարվեր։ Դրանով ես իմ խիղճը հանգստացրած կլինեի։ Բայց դարձյալ ուրախ եմ, որ քեզ ազատված եմ տեսնում և բախտավոր։ Իսկ այն ծառայությունը, որ պատրաստել էի կատարել քո փրկության համար, և որի մասին մի քանի անգամ դիմեցի քեզ, այն ծառայությունը ես մատուցի քո երկու բարեկամներին։ Հուսով եմ, որ այդ էլ բավական կլինի, որ դու ներես ինձ և չհիշես մեր անցյալը...

Մուրադը, ձեռքը տալով նրան, ասաց.

— Շնորհակալ եմ, մոռանում եմ բոլոր անցյալը...

Փոստային իջևանը շատ հեռու չէր։ Մուրադը իջավ կառքից, սկսեց նրա հետ ոտքով գնալ։ Նենեն մնաց կառքի մեջ, որը կամաց կամաց քշում էին դեպի իջևանը։

Այդ մարդը քավոր Պետրոսն էր։ Մինչև իջևան հասնելը, նա պատմեց, թե ինչ հնարքով կարողացավ փախցնել Համրին և Ավազակապետին։

— Բայց դու ինչպե՞ս կարողացար այդքան մոտիկ հարաբերություններ ունենալ դատապարտյալների հետ,— հարցրեց Մուրադը։

— Քեզ հայտնի է, որ վերջին օրերում տիֆով հիվանդների թիվը սաստիկ բազմացավ, օր չէր անցնում, որ մի քանի հոգի չմեռնեին։ Տեղային միակ քահանան նույնպես հիվանդացավ, այդ պատճառով քահանայի մեծ պահանջ կար։ Ես, իբրև պատահական հույն աբեղա, առաջարկեցի իմ ձրի ծառայությունը։ «Փեշքեշ ձիու ատամներին չեն մտիկ անում»։ Ինձ նույնպես չքննեցին։ Ես ազատ մուտք ունեի թե բերդում և թե հիվանդանոցում։ Այդ բավական էր իմ նպատակին հասնելու համար։

— Դու նախածանո՞թ էիր Համրի և Ավազակապետի հետ։

— Ոչ։ Այսքանը միայն գիտեի, որ նրանք քո բարեկամներն են։ Բացի դրանից, այդ մարդկանց ես շատ հավանեցի։ Նրանք սովորական մարդկանց տեսակից չէին։

Կառքը հասավ իջևանին։ Մուրադը մոտեցավ, վեր բերեց Նենեին։ Այստեղ պետք է մի փոքր ճաշեին, հետո ճանապարհ ընկնեին։ Նենեն հայտնեց, թե ուտելու ախորժակ չունի. նա մոտեցավ, թեք ընկավ դիվանի վրա և մի քանի րոպեից հետո նրա քունը տարավ։ Նա սաստիկ հոգնած էր։ Ամուսինը ծածկեց նրան և թողեց հանգստանալ։

Մուրադը և քավոր Պետրոսը դուրս եկան մյուս սենյակը և պահանջեցին նախաճաշիկ։ Հասարակ կաղնյա փայտից շինած սեղանի վրա, որի մակերևույթը պատած էր բազմաթիվ սև խորշիկներով, որոնք գոյացել էին ծակ սամովարի տակից թափված կրակներից, դրվեցավ մի շիշ գինի, պանիր, հաց և մի ամբողջ խաշած հավ։ Մուրադը յուր հին դաստիարակի հետ նստեց այդ սեղանի մոտ։

Քավոր Պետրոսը տխուր էր. նրա թախծալի դեմքը ցույց էր տալիս ներքին խռովություն։ Մուրադը այժմ միայն ուշադրությամբ նայեց այդ երկաթի մարդու վրա։ Նա բավական փոխ-

վել էր։ Նրա մորուքի և գլխի մազերը բոլորովին ճերմակացել էին։ Նրա ճակատի վրա առաջ կար մի մռայլ դրոշմ, որը դրված էր այն ժամանակ, երբ առաջին անգամ մի մեծ հանցանքի համար նրան Սիբիր աքսորեցին։ Հետո փախչելով այնտեղից, այդ ամոթալի նշանը նա ամենայն զգուշությամբ միշտ ծածկում էր, որ չճանաչվի։ Երբ նա յուր մորթյա թանձր գլխարկը մի կողմ դրեց, այժմ միայն Մուրադը նկատեց, որ այն դրոշմի հետքերը բոլորովին եղծված էին, իսկ նրա փոխարեն տարածվել էր լայն ճակատի վրա մի սարսափելի սպի։ Երևում էր, որ շիկացրած երկաթով ամբողջ ճակատը այրել ու խարել էին։

— Քո ճակատի վրա ես մի փոփոխություն եմ նկատում,— հարցրեց Մուրադը։

— Այդ ես արեցի քեզ համար,— պատասխանեց նա, գլուխը վեր բարձրացնելով։— Ես կորցրի այն սև դրոշմի հետքերը, որպեսզի չճանաչվեմ և ավելի վստահությամբ կարողանամ մոտենալ այն բնակարանին, որտեղից մտածում էի ազատել քեզ։

Այդ վերին աստիճանի զոհաբերությունը մի պարզ ապացույց էր այդ հին չարագործի անկեղծությանը դեպի յուր սիրելի սանիկը, որը սաստիկ զգացվեցավ և, լցնելով բաժակը, մեկնեց նրան ու ասաց.

— Խմի՛ր, հագեցրու քաղցդ։ Ես քեզ կառնեմ իմ կառքի մեջ և կտանեմ մեր հայրենիքը։ Բավակա՞ն է, որքան թափառեցիր, բավական է, որքան աշխարհից աշխարհ պտտեցար։ Թո՛ղ այժմ գոնե ծերությունը բտիպեցնե քեզ հայրենի տնակի տակ անցկացնել կյանքի վերջին օրերը։

Նա խմեց բաժակը պատասխանելով.

— Ոչ, ես չեմ ների ինձ նստել այն կառքի մեջ, այն կնոջ մոտ, որին մի ժամանակ ես հրամայեցի սպանել և դահճի պաշտոնը քեզ հանձնեցի, Մուրադ։ Դու ավելի բարեխիղճ գտնվեցար, քան թե ես, և խնայեցիր անմեղ կյանքը, քո բարությունը վարձատրվեցավ... Այդ նազելի հրեշտակը, երևի, չէ

ճանաչում ինձ, եթե ճանաչեր, անպատճառ կզզվեր ինձանից։ Ոչ, ես իմ ներկայությամբ չեմ պղծի մի սուրբ ամուսնություն։ Գնացե՛ք, տեր ընդ ձեզ, և տարեք ձեզ հետ իմ օրհնությունը, եթե աստված կընդունե օրհնությունը իմ եղեռնագործի շրթունքներից։ Իսկ ես Կայենի նման կթափառեմ աշխարհից աշխարհ՝ մինչև դժոխքը կխղճա իմ վրա և իմ առջև բաց կանե յուր դռները...

Նա գլուխը քարշ գցեց և նրա խիտ, ճերմակ ծամերը թափվեցան սոսկալի ճակատի վրա, ծածկեցին արտասուքը, որ գետի նման հոսում էր այն աչքերից, որոնք երբեք արտասվելու սովոր չեն եղել։

— Դու կարծո՞ւմ ես, որ քեզ համար փրկություն չկա, դու կարծում ես, որ չե՞ս կարող մաքրել քո խիղճը,— հարցրեց Մուրադը խորին ցավակցությամբ։— Ապա ինչո՞ւ համար է քրիստոնեական ներողամտությունը, որ հաշտեցնում է մեղավորին սիրո և խաղաղության աստուծո հետ։

— Շատ անգամ փորձել եմ, բայց չէ հաջողվել...— պատասխանեց նա առանց գլուխը վեր բարձրացնելու։— Մեղքը միացել է իմ հոգու, սրտի և ամբողջ մարմնի հետ։ Նա ամենրոպե սնունդ է պահանջում։ Չեմ կարող չկերակրել նրան։ Նա ինձ հետ պետք է ապրե, որպես չարություն, միայն չար գործելու համար։ Չեմ կարող բաժանվել նրանից։ Միթե կարելի՞ է օձից խլել թույնը և կարիճին այնպես դաստիարակել, որ չխայթե...

Նա գլուխը վեր բարձրացրեց և ճակատի վրա թափված մազերը մի կողմ ձգեց։ Այժմ նրա ահռելի աչքերում, փոխանակ արտասուքի, նկատվում էր բարկության կրակը։

— Այո՛, չեմ կարող...— կրկնեց նա։— Ես մի չար դևի նման պետք է պատժեմ մարդկանց անիրավությունները միայն անիրավություններով... Մարդիկ իրանք են ստեղծել ինձ նման պատիժը իրանց համար... Ես նրանց մեղքերի հրեշավոր ծընունդն եմ... Նրանց վատ օրինակներով ես էլ մոլորվեցա։

— Հենց այդ գիտակցությունը բավական է, որ ուղղե և փրկե քեզ,— կտրեց նրա խոսքը Մուրադը։— Ես էլ այդ գիտակցությանը հասա և փրկվեցա։

— Հասկանում եմ... Բայց այդ փրկության մեջ կլինի և իմ մահը... Իսկ ես դեռ մեռնել չեմ ուզում... Սատանան պետք է անմահ մնա...

Նա միայն խմում էր, բայց ոչինչ չէր ուտում։ Մուրադը պատվիրեց մի նոր շիշ գինի ևս դնել սեղանի վրա։

— Երբեմն բարություն եմ գործում,— ասաց նա,— ինչպես միդապատ երկնքի կամարի վրա ճեղքվում են թանձր ամպերը և բոցնապես գուրս են ցոլացնում արեգակի կենսատու ճառագայթները։ Բայց այդ երկար չէ տևում. կրկին անցնում են սև ամպերը, և ամեն ինչ կրկին նսեմանում է, մթնում է... Ես ուրախ կլինեի, որ կատարյալ չարագործ լինեի և իմ մեջ բնավ բարության սերմեր չլինեին։ Այն ժամանակ գուցե ամենևին չէի զգա, որ ես չար եմ։ Որովհետև բարությունն է միայն զգալ տալիս մեր չարությունը, ինչպես սպիտակի վրա ավելի պարզ կերպով նշմարվում էր սևը։ Կցանկանայի, որ իմ սրտի մեջ ամեն ինչ միագույն լիներ կամ սև, կամ սպիտակ, կամ բարի, կամ չար։ Սատանաները նրա համար միայն բախտավոր են, որ շատ չար են։ Այնպես էլ բախտավոր են հրեշտակները, որ զուտ բարի են։ Իսկ ի՞նչ եմ ես։ Մի այլանդակ խառնուրդ։ Ինչո՞վ կարող եմ ես բախտավոր լինել, երբ իմ սրտի մեջ միշտ պատերազմ կա, և մանավանդ, չարը ավելի զորեղ է, քան թե բարին...

Նա վեր կացավ, ասելով.

— Ա՜խ, ինչո՞ւ եմ այդքան երկար խոսում։ Դուք պետք է ճանապարհ գնաք, իսկ ես ուշացնում եմ ձեզ։

Նա մոտեցավ յուր ճանապարհորդական պարկին, և հանելով նրա միջից մի ծանր քսակ, մեկնեց Մուրադին ասելով.

— Ես կխնդրեի քեզանից, որ թեթևացնեիր իմ բեռը և ընդունեիր այդ, գուցե քեզ հարկավոր կլիներ։

— Շնորհակալ եմ,— ասաց Մուրադը հրաժարվելով։— Բժշկապետը հոգացել է մեր ճանապարհի ծախքը։

— Գիտեմ... դու խորշում ես այդ ոսկիներից, որովհետև նրանք շաղախված են արյունով... Բայց գիտե՞ս հին առակը։ Հուդայի ստացած երեսուն արծաթի մեջ նույնպես արյուն կար։ Այդ երեսուն արծաթով գնեցին մի ագարակ, որ կոչվեցավ «Ագեղտամա», որ նշանակում է արյան ագարակ։ Ավանդությունն ասում է, որ այդ ագարակի վրա մշակվում էին Երուսաղեմի ամենապտղաբեր ձիթենիները։ Երբ դու կհասնես քո հայրենիքը, այնտեղ քեզ մեծ աշխատություններ են սպասում։ Այդ ոսկիներով կգնես մի ագարակ և կսկսես նրա վրա մշակություններ անել։ Թող այդ ագարակը կոչվի «արյան ագարակ», փույթ չէ, բայց քո աշխատությունը կբուսեցնե նրա վրա հայրենիքի ամենապտղաբեր տունկերը։ Ես իմ բոլոր արժեթղթերը նվիրեցի Համրին և Ավազակապետին։ Այդ քո բաժինն էր, որ պահել էի քեզ համար։ Այն թղթերը նույնպես մաքուր վաստակ չէին։ Բայց նրանք ընդունեցին, ասելով. «Հացը թող համեղ լինի, ի՞նչ փույթ, որ ջհուդի թխած կլինի...»։

Մուրադը ընդունեց ոսկիները։ Քավոր Պետրոսը շարունակեց.

— Դու կհանդիպես Համրի և Ավազակապետի հետ Օ... քաղաքում։ Նրանք այնտեղ կսպասեն քեզ։ Հետո միասին կգնաք մեր հայրենիքը։ Նրանք երկուսն էլ լավ մարդիկ են։ Խորհուրդ եմ տալիս քեզ՝ չբաժանվել նրանցից, միասին կսկսեք գործել ու աշխատել։ Քաղցր է աշխատանքը հայրենի հողի վրա...

Բոլոր այդ խոսակցության ժամանակ Մուրադը նկատում էր և մի ավելի մեծ փոփոխություն քավոր Պետրոսի բնավորության, հայացքների և բարոյական հատկությունների մեջ։ Առաջ նա գործում էր չարը միայն չարության համար, թեև նրա գործողությունները կատարվում էին որոշված, հաստատ և գիտակցական նպատակներով։ Իսկ այժմ նա, կարծես, օրորվում է այդ երկու մտքերի մեջ. մի՞թե ավելի լավ չէ՞ր լինի, որ չարությունը բառնային բարությամբ, մի՞թե չարությունը չարու-

թյամբ արմատախիլ անելը՝ դաստիարակության նույն եղանակը չէ՞ր լինի, երբ վարժապետը աշխատում է կրթել և բան սովորեցնել անպիտան աշակերտին ծեծի և պատիժների ուժով։ Քավոր Պետրոսը հակված էր երևում դեպի զղջում, դեպի ուղղություն, բայց նրան կատաղեցնում էր այն միտքը, թե ինչո՞ւ ինքը առաջին քայլն անե և ուղղվի, թե ինչո՞ւ ինքը զիջումն անե ուրիշների շարության դեմ, միթե դրանով իրան մի անբախտ զոհի վիճակի մեջ չի՞ դնի։ Երբ մարդիկ խաբում են, նա էլ պետք է խաբե, երբ մարդիկ հարստահարում են, նա էլ պետք է հարստահարե։

Կառքի ձիաները փոխել էին, անիվները ձյութով օծել էին, և պատրաստ էր իշևանի բակում։ Նենեն զարթնել էր, և հոգնածությունից կազդուրված վազեց նա կառքի մոտ, և առանց Մուրադի օգնության, ինքը ցատկեց, նստեց նրա մեջ։

— Նենե, ձեռք տուր այդ օտարականին, դա իմ վաղեմի բարեկամն է,— ասաց Մուրադը։

Նենեն մեկնեց ձեռքը։ Քավոր Պետրոսը բռնելով ասաց.

— Դուք երկուսդ էլ արժանի եք միմյանց։ Նախախնամությունը, զանազան փորձանքների միջից անցկացնելով ձեզ, կրկին հանդիպեցրեց միմյանց։ Օրհնում եմ ձեր ամուսնությունը և բախտավորություն եմ ցանկանում։

Մուրադը ընկավ նրա գիրկը, և արտասուքը աչքերում երկար աղաչում էր, խնդրում էր նրան, որ նստե իրանց հետ կառքը և միասին վերադառնան իրանց հայրենիքը՝ Պարսկաստան։ Բայց քավոր Պետրոսը դարձյալ մերժեց, ասելով.

— Դուք գնացեք, տեր ընդ ձեզ, ես դեռ բոլորովին չեմ վերջացրել իմ գործը... գուցե հեռվից ավելի պիտանի կլինեմ ձեզ...

Մուրադը նստեց։ Կառքը շարժվեցավ։ Քավոր Պետրոսը բավական տեղ ոտքով գնաց նրանց հետ։ Հետո կրկին ձեռք տալով Նենեին, կրկին համբուրվելով Մուրադի հետ, բաժանվեցավ։ Նա երկար կանգնած նայում էր նրանց ետևից, - մինչև կառքը

բոլորովին անհետացավ նրա աչքերից։ Այդ ժամանակ միայն դժբախտ թափառականը ճանապարհը ծռեց և սկսեց դիմել մի այլ կողմ...

Երեք ամիս անցել էր այն օրից։

Պարսկաստանի Սալմաստ գավառում, Սավրա գյուղից ոչ այնքան հեռու (որը Մուրադի հայրենի գյուղն էր) տարածված էին հին ավերակներ։ Արաբական ճաշակով կառուցված մի հոյակապ մինարեթ միայն կանգուն էր մնացել այդ տխուր ավերակների մեջ։ Նրա բարձր կամարների ներքո թագավորում էր մշտական ամայություն և խավար։ Զղջիկները և վայրենի աղավնիները միայն երբեմն աղմկում էին այդ անբնակ մինարեթի գերեզմանական լռությունը։ Բայց մի գիշեր այնտեղ լույս էր երևում։ Հատակի վրա վառվում էր խարույկ և նրա լուսավորության մեջ շարժվում էին անորոշ ստվերներ։ Եթե մեր ընթերցողը համարձակություն ունենար և, գաղտնի կերպով մոտենալով մինարեթին, նրա կիսավեր դռնից նայեր ներսը, անպատճառ կտեսներ նույն դեմքերը, որոնք ծանոթ են նրան, որոնց ճանաչում է նա, սկսյալ նրանց պատանեկության հասակից։ Այնտեղ էին Մուրադը և Ջալլադը (ավազակապետը) երկուսն էլ զեյթունցու հագուստի մեջ կերպարանափոխ եղած։ Այնտեղ էին Մուրադի մանկության երեք ընկերները՝ Կարոն, Ասլանը և Սագոն, մշեցոց ծպտյալ հագուստով։ Այնտեղ էր պատանի Ֆարհադը, որ նոր էր ընկել այդ շրջանի մեջ։ Այնտեղ չէր միայն Համրը։

Մինարեթը շատ հեռու չէր այն վայրերից, այն այգիներից և այն ձեռնատունկ անտառներից, որոնց մեջ Մուրադը յուր պատանեկության հասակում, իբրև փախստական ապաստան գտավ։ Որպես տեսանք այդ, հիշատակարանի սկզբում, այն ժա-

Մանակ նա վարում էր բավական կասկածավոր կյանք յուր երեք ընկերների՝ Կարոյի, Ասլանի և Սագոյի հետ։ Այնուհետև աղետավոր հանգամանքները բաժանեցին այդ փոքրիկ սրիկաներին և ձգեցին կյանքի տարբեր ճանապարհների վրա։ Թափառելով աշխարհից աշխարհ, երկրից երկիր, և անցնելով դառն փորձերի միջից, տասներկու տարվա անջատումից հետո, վաղեմի ընկերները կրկին հանդիպում են միմյանց միևնույն մինարեթի մեջ, որ մանկության հասակում նրանց թաքստի տեղն էր, նրանց սիրելի որջն էր։ Երկու օր մնացին այնտեղ, իսկ երրորդ օրը մինարեթը դարձյալ դատարկ էր, դարձյալ ամայի էր։ Ի՞նչ եղան նրանք, ո՞ւր գնացին, այդ կտեսնե ընթերցողը մեր մի այլ աշխատության՝ «Կայծերի» մեջ...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Լեռը 3

Խաչագողի հիշատակարանը 319

Ռաֆֆի

Խենթը
Խաչագողի հիշատակարանը

Раффи
Хент
Дневник хачагоха
(На армянском языке)
Издательство «Советакан грох», Теряна 91
Ереван—1978

Խմբագիր՝ Ռ. Մ. Մուրադյան
Նկարիչ՝ Մ. Ռ. Սոսոյան
Գեղ. խմբագիր՝ Ան. Վ. Գասպարյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Վ. Սահակյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ռ. Հ. Թորոսյան

ИБ—219.

Հանձնված է շարվածքի 19/XII 1977 թ.։ Ստորագրված է տպագրության 15/II 1978 թ.։ Թուղթ՝ տպագր. № 2, 84×108¹/₃₂, տպագր. 21,5 մամ.=36,12 պայմ. մամ., հրատ. 31,5 մամ.։ Պատվեր 2981։ Տպաքանակ 60.000։ Գինը 2 ռ. 70 կ.։
ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող: № 65։

Типография № 1 Госкомитета Совета Министров Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли. Ереван, ул. Алавердяна, № 65.